
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ





ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
VIII ՀԱՏՈՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ
ՄԻՔԱՅԵԼ ԵՎ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍՆՋՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ԱՐԿԱՎՈՒՄ Է

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ)

ԳԻՐՔ Ա.

ԵՐԵՎԱՆ
«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 821.19-31 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ի 756

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ա. Վ. Իսահակյան (գլխավոր խմբագիր), Գ. Է. Գասպարյան,
Վ. Գ. Դևրիկյան, Ա. Լ. Մանուկյան, Է. Գ. Միլիտոնյան,
Ա. Վ. Մուշեղյան, Ս. Պ. Մուրադյան, Մ. Հ. Սարգսյան, Լ. Կ. Վիրաբյան

Բնագրերը հրատարակության պատրաստեցին
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ և ԼԱՐՈՒԲԱ ՎԻՐԱԲՅԱՆԸ

Առաջաբանը գրեց և ծանոթագրեց
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Հատորի խմբագիրներ՝
Վ. Գ. Դևրիկյան, Ա. Վ. Իսահակյան

Իսահակյան Ավետիք
Ի 756 Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով: Հատոր ուրերորդ: Ուստա Կարո և Օրթե Հարուրթ (Երկրորդ տարբերակ: Գիրք Ա)/ Ավ. Իսահակյան.– Եր.: «Էդիթ Պրինտ» Հրատ., 2022, 950 էջ:

ՀՏԴ 821.19-31 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-75-761-2

© «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2022
© Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2022
© ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔ, 2022



Ավետիք Իսահակյան, Վենետիկ, 1924 թ.
(լուսանկարը՝ Տ. Սալվանոյի)

«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ» ՎԵՊԻ ԵՐԿՐՈՐԴ ՄՇԱԿՈՒՄԸ

Ա. ՎԵՊԻ ԿԱԶՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

«Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակի գրությունը, ըստ Իսահակյանի մի գրառման. «Վերջացավ 19ին հունվարի, գիշերվա ժամը 2½-ին, Իզմիթ, 1912 թվին»[1]: Այս գրառումից ընդամենը երկու օր հետո՝ 1912 թ. հունվարի 21-ին գրողը «Գրելիք կա» վերնագրով ծրագրային մի գրառում է կատարում, ըստ որի վեպի առաջին տարբերակի բնագիրը[2] ոչ միայն լեզվաոճական խմբագրումների պիտի ենթարկվեր, այլ առաջին հերթին բազմաթիվ թեմատիկ լրացումներ, կառուցվածքային հավելումներ և վերադասավորումներ պետք է ունենար: Մի կողմ թողնելով այս գրառման մեջ Իսահակյանի թվարկած որոշակի թեմաները, որոնք պիտի մշակվեին կամ նորից գրվեին, նշենք միայն, որ փաստորեն գրողը վեպի առաջին գրության բնագիրը ավարտելուց անմիջապես հետո վերջնական չի համարել թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային և թե՛ լեզվաոճական առումներով: Հենց գրառման վերնագիրը՝ «Գրելիք կա» դրա վառ ապացույցն է.

---

1 Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 295-II, էջ 356, նաև՝ ԳԱԹ, ԻՖ, 294-II, թերթ 3:

2 Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 295-II, նաև՝ ԵԺ 14 հատորով, հ. 7, «Ուստա Կարո», բնագիրը հրատարակության պատրաստեց և վերջաբանը գրեց Ավիկ Իսահակյանը, հատորը կազմեցին Ավիկ Իսահակյանը և Անահիտ Վարդանյանը, էջ 31-606:

Երեա
3 - ՌԵՍ ՀՈՍԵՆ. ՀԱՄԱՌՈՏ:
- ՀԵՂԻՆԱԿԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ. ՀԱՄԱՌՈՏ:
2 - ԿԱՅԾԱԿԻ ՃԱՌԵՐԸ. ՀԱՄԱՌՈՏ:
2 - ԹՈՒՄԱՆԻ ԽՄԲԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ: ?
2 - ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ. ԱՌՀԱՍԱՐԱԿ ԿԱՋՄԸ, ՏԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԱՌՈՏ:
1 - ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՀԱՄԱՌՈՏ, ՀԱՐԵՎԱՆՑԻ:
40 - ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ:
- ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ (ՆՈՐԻՑ ԳՐԵԼ):
4 - ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ՍԱՆԱՄԻ ՄՈՏ:

Առհասարակ գրել սեղմ, կարճ, կրկնություններից ազատ, զերծ, միևնույն բանը չասել, նույն միտքը չկրկնել, նկարագրությունները սեղմ, հեքիաթները սեղմ, սրախոսությունների թիվը պակասեցնել, դատերը սեղմ. Անի, Ալեքսանդրապոլ, Նշանդրեք, Բագրան... Հարութի մոտ՝ սեղմել, թարմը, արժեքավորը պահել... Այնպես անել որ, 400-ից կամ 450 (400-450) հազիվ հասնի վեպը: Զցավել ջնջումի վրա, խոսակցությունները՝ կարճ, մտքերը ամփոփ, նպատակը պարզ ու վճիտ, ոճը՝ պարզ ու վճիտ, նաիվ, մանկունակ:

21 Հունվարի, 1912, Իզմիթ»[3]:

---

[3] ԴԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 19:

Այս գրառումից երևում է, որ ստեղծագործական հղացման նոր տեսլականներ մղել են գրողին կառուցվածքային և բովանդակային նոր փոփոխությունների: Արդեն իսկ առաջին տարբերակից Իսահակյանը դուրս էր թողել մի շարք հատվածներ և գլուխներ[4], որոնք սակայն գրողի մտապատկերում պետք է որ մաս կազմեին վեպին, սակայն կառուցման դասական ձևի հետ անհամատեղելի էին: Այդ հատվածները «սյուժետային» շեղումների կարգավիճակ ունեցող բնագրերն են («Աշխարքի տեսիլը», «Հարութի հեքիաթը» և այլն), որոնք «Ուստա Կարոյի» արխիվային գրառումներում հանդես են գալիս «Հեղինակը», «Հեղինակի կողմից» հղումներով: Այս գրառման մեջ Իսահակյանը դրանք անվանում է «Հեղինակի դիմումները» արտահայտությամբ:

Մի քանի ամիս հետո Վիկտորյա Աբովյանին 1912 թ. ապրիլի 24-ին գրած նամակում Իսահակյանը հայտնում է, որ «Ուստա Կարոն վերջացած է, բայց մի 2-3 ամսվա աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեմ, հղկեմ, կոկեմ. երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեմ, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի»[5]:

Վեպի երկրորդ տարբերակի մշակման համար Իսահակյանի նախատեսած 2-3 ամիսը սակայն տևում է մինչև գրողի մահը՝ շուրջ 45 տարի:

Մեկ տարի հետո՝ 1913 թվականի ապրիլի 23-ին Գարեգին Լևոնյանին գրած նամակում գրողը խոսում է ոչ թե ավարտված վեպի լեզուն կոկելու, այլ վեպը ամբողջությամբ մշակելու մասին. ««Ուստա Կարոն»... համարյա անմշակ ընկած է պորտֆելիս մեջ. և չեմ ձեռք զարկում մշակելու.

---

[4] Տե՛ս ԳԱԹ, Իֆ, 296-II:

[5] Նժ 14 հատորով, հ. 13, էջ 198:

ո՞ւմ համար, ինչո՞ւ համար գրեմ.- հայ հասարակության համար, որը կարիք չի զգում գրականության, փառքի համար - այդ ինձ երբեք չի հետաքրքրել. ուրեմն գրել խմբագիրների համար.- դրա համար էլ այնքան հիմար չեմ»[6]:

Մեկ ամիս հետո՝ 1913 թվականի մայիսի 30-ին Գարեգին Լևոնյանին գրած նամակում գրողը հաստատում է վեպը նորից գրելու իր ծրագիրը. ««Ուստա Կարոն» երկուշաբթի օրվանից սկսում եմ ամբողջը նորից գրել, մշակել, և չգիտեմ - քեզ երբ հարկավոր կլինի, որ մի գլուխ, մի լավ գլուխ հասցնեմ. ուզում ես շուտով գրիր, հենց ամենից առաջ այդ գլուխը պատրաստեմ: Շատ ծանր աշխատանք է այդ Ուստա Կարոն. 500 երես նորից գրել, անթիվ նյութերս նորից քրքրել, տող-տող սրբագրել, ուղղել, հղկել, մշակել: Ես վերջերս այն մտքին եմ հասել, որ քիչ գործ տալ, բայց անթերի գործ տալ»[7]: Վեպի 500 երես ծավալ ասելով Իսահակյանը նկատի ուներ առաջին տարբերակի 356 մեծադիր էջերը, ինչպես նաև առաջին տարբերակից դուրս թողած 60 մեծադիր էջերը և մի քանի գլուխներ, բազմաթիվ ծրագրային գրառումներ, որոնք դեռևս մշակված չէին:

Այդուամենայնիվ, Իսահակյանը որոշակի խմբագրական և լեզվաոճական փոփոխություններ կատարելով՝ առաջին տարբերակի մաս կազմող «Ուստա Կարոն հովիվների մոտ» գլուխը՝ 1913 թ. հունիսի երկրորդ կեսին (հավանաբար 20-ին) ուղարկում է Գարեգին Լևոնյանին «Գեղարվեստում» հրատարակելու համար: «Ավելի հարմարը չկարողացա ընտրել,- գրում է Իսահակյանը,- որովհետև մյուսները - մի քանիսը երկար էին, մի քանիսը՝ կապված ուրիշների հետ, մի քանիսն էլ՝ անհամապատասխան

---

[6] Նույն տեղում, էջ 219:

[7] Նույն տեղում, էջ 222:

ի<այր> Երեմյանի պահանջներին: Իսկ այս գլուխը ինքնամփոփ մի բան է, մյուսների հետ կապ չունի, մի որոշ բան է ինքնին, և կարծում եմ՝ լավն էլ է: Մի ճաշակ կտա վեպիս, որ Աստված գիտե երբ պատրաստ կլինի, քանի որ հանգամանքներս չեն ներում ամբողջապես դրան նվիրվել»[8]: Այս նամակում արդեն գրողը հավաստում է, որ վեպի գրության ավարտն անորոշ է, ասել է թե՝ վերամշակման փուլն իր բոլոր դժվարություններով արդեն զգացնել է տվել: Գարեգին Լևոնյանը «Մի գլուխ «Ուստա Կարո» անտիպ վեպից» ենթավերնագրով «Գեղարվեստ»-ի 5-րդ համարում տպագրում է այդ գլուխը (1913, թիվ 5, էջ 75-82): Համեմատությունը ցույց է տալիս, որ «Գեղարվեստ»-ի տեքստը վեպի առաջին տարբերակի նույն վերնագրով ԺԲ գլխի[9] վերամշակումն է:

Այս շրջանում վեպը մշակելիս գրողին հատկապես մտահոգել է վեպի վերջաբանը: 1913 թ. հուլիսի 29-ին Իսահակ Իսահակյանին Կոլլոնժից գրած նամակում, Իսահակյանը գրում է. «Ու<ստա> Կարոյի վերջի մասին էլ շա՛տ եմ տատանվում. տեսնենք ի՛նչ կլինի»[10]: Իսահակյանի այս մտահոգության արդյունքն են վեպի վերջին գլխի 6 տարբեր մշակումներ, որոնք պահպանված են նրա արխիվում «Վերջի գլուխ», «Վերջ», «Մի՛ ուրիշ վերջ» վերնագրերով[11], որոնցից մեկը բովանդակային միանգամայն այլ տարբերակ է[12] («Ուստայի նահատակությունը»):

---

8 Եժ 14 հատորով, հ. 13, էջ 224:

9 Տե՛ս Եժ 14 հատորով, հ. 7, էջ 228-245:

10 Եժ 14 հատորով, հ. 13, էջ 229-230:

11 Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 294-II, թերթ 1-3:

12 Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 292-II, թերթ 1-3, արտագրությունը՝ ԳԱԹ, 289-II, թերթ 8բ-11բ:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց մեկ ամիս առաջ Իսահակյանը 1914 թ. ապրիլի 23-ին Սիմոն Վրացյանին գրած նամակում տեղեկացնում է, որ «Ուստա Կարոն և՛ պատրաստ է, և պատրաստ չէ. հենց որ մի քիչ ժամանակ ունենամ, պիտի աշխատեմ վերջացնել. մահ կա, մի բան թողնենք»[13]:

Սակայն պատերազմը խափանում է գրողի ստեղծագործական աշխատանքի բնականոն ընթացքը: Բանն այն է, որ Իսահակյանը հեռանում է Բեռլինից, սակայն իշխանությունները, պատերազմական իրավիճակով պայմանավորված, արգելում են գրողին ձեռագրերը դուրս հանել երկրից: Այս մասին գրողը հայտնում է նախ Գարեգին Լևոնյանին 1916 թ. ապրիլի 2-ին Ժնևից գրած նամակում. «Սիրելիս, լավ չեմ կարող պարապել, տրամադրությունս շա՛տ և շա՛տ վատ է. իսկ ձեռագրերս բոլորը գտնվում են այն երկրում, ուր էի պատերազմը սկսվելուս. չկարողացա դուրս բերել, պահ տվի. չգիտեմ, ի՞նչ է լինելու. «Ուստա Կարոս» էլ այնտեղ է»[14], այնուհետև՝ Կարեն Միքայելյանին 1916 թ. օգոստոսի 12-ին Ժնևից գրած նամակում. «այս էլ իմացիր, որ բոլոր ձեռագրերս մնացին Բեռլին, իրավունք չկար դուրս բերել. շատ նոր բաներ ունեի, կմշակեի, մանավանդ վեպս (Ուստա Կարոն) կարող էի վերջնականապես գրած համարել, բայց գերի մնացին. պահ տվի մի բարեկամի մոտ և եկա»[15]: Հետագայում՝ Իսահակյանը 1922 թ. օգոստոսի 22-ին Ռուբեն Դարբինյանին գրած նամակում այս ընթացքի մասին հայտնում է, «որ պատերազմի ընթացքին նա («Ուստա Կարո» վեպի ձեռա-

---

[13] Ե՛ր 14 հատորով, հ. 13, էջ 250:

[14] Նույն տեղում, էջ 266:

[15] Նույն տեղում, էջ 277:

գիրը - Գ.Գ.) մնաց Գերմանիա: Ուրեմն, 4-5 տարի մի տող չեմ գրած ու ջնջած նրա մասին»[16]:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո (1918, նոյեմբերի 11) Իսահակյանը կարողանում է իր ձեռագրերը Բեռլինից վերցնել, ինչի մասին հայտնում է Սարգիս Ա-թայանցին 1918 թ. դեկտեմբերի 5-ին Ժնևից գրած նամակում. «Հա՛, Ուստա Կարոս հետս ողջ-առողջ բերեցի, պատրաստվում եմ գրելու, որ հետս Հայաստան տանեմ»[17]:

1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. մայիսը գրողը մշակում է առաջին տարբերակի գլուխները միանգամայն նոր մոտեցումով՝ կատարելով բազմաթիվ բովանդակային, կառուցվածքային, լեզվաոճական փոփոխություններ: Իսահակյանի արխիվում պահպանվել է այդ երկրորդ մշակման առաջին տարբերակը՝ 287ա-II գույքահամարի տակ[18]: Այս ինքնագիրը պարունակում է «Ուստա Կարո» վեպի նոր մշակված 7 գլուխ[19] և հեղինակային 4 շեղում[20], որոնք, ըստ հեղինակի մտահղացման, պետք է դրվեին պատումի զանազան հատվածներում՝ որպես ընդմիջարկություններ «հեղինակի կողմից» (Իսահակյանի բնորոշումն է):

Այս սևագիր ինքնագրում գլուխները վերնագրված չեն, այլ միայն գլխակարգված (Ա-Զ): Հետագայում հրա-

---

[16] Նույն տեղում, էջ 457-458:

[17] Նույն տեղում, էջ 309:

[18] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 1-31:

[19] «Ուստա Կարոյի և Չավուշի դարձը Նախճըվան» և «Շեկոյենց Օսկանի տունը» գլուխները ինքնագրում գլխաբաժանված չեն: Հեղինակը դրանք տրոհել է «Հայրենիքում» տպագրված բնագրում:

[20] «Անիի Աղջկա բերդը», «Վարդավառի տոնը», «Ռագարանը», «Աշուղ Պապոյի երգը» (ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 27-31):

տարակելով այս գլուխները՝ հեղինակը դրանք վերնագրել է.

Ա. «ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ՊԱՏՎԻՆ»,
Բ. «ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՉԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ»,
Գ. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՉԱՎՈՒՇԻ ԴԱՐՁԸ ՆԱԽՃԸՎԱՆ»,
Դ. «ՇԵԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ»
Ե. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ»,
Զ. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐԵՐԻՆ»,
Է. «ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ»:

1919 թ. մայիսի 1-ից[21] Իսահակյանն սկսում է վեպի երկրորդ մշակման մաքրագրության աշխատանքը, որը ամփոփված է ԳԱԹ, ԻՖ, 291-II գույքահամարի տակ պահվող ինքնագրում: Ինքնագրի անվանաթերթը հետևյալն է.

«ԵՐԱԶԻ ԱՇԽԱՐՀ.
ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ-ՀԱՐՈՒԹ
ՎԵՊ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆՑ»

Վեպի առաջին տարբերակի վերնագրի համեմատ այստեղ ավելացել է «Երազի աշխարհ» արտահայտությունը, որը Իսահակյանի վեպը մշակելու նոր հայեցա-

[21] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 291-II, էջ 1:

կարգի բանալին է: Ծրագրային մի գրառման մեջ գրողը հանգամանալից ներկայացնում է իր նոր մոտեցումները վիպական պատումի ստեղծաբանության, ենթաբնագրային իմաստների ձևավորման մասին, ինչպես նաև իր կերպարների՝ Ուստա Կարոյի և Օրթե Հարութի ստանձնած դերակատարությունը այդ ծրագիրն իրականացնելու գործում: Նկատի ունենալով այս գրառման կարևորությունը՝ այն մեջբերում ենք ամբողջությամբ.

«ՄԱՀԻՑ ՀԶՈՐԸ ԿԱՄ ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ ՎԵՊԸ

Վեպի էությունն է՝ երազի դերը մարդու հոգեկան կյանքում: Առանց երազի կյանքը մեռնում է. երազ՝ այսինքն՝ հույս, հավատ, սեր, տենչանք, նույն բաներն են:

Կայծակն ասում է Անի գնալուս - առանց երազի կյանք չկա. երբ երազը կմեռնի՝ կյանքն էլ կվերջանա. երազ՝ այսինքն՝ վերոհիշյալները...

Հայաստանը հայ ժողովրդի դարևոր երազն է. նա ազատվի էլ, նորից գալիք սերունդների համար նա հավիտենապես երազ պիտի լինի - ստեղծելու կատարյալ Հայաստան՝ աստվածային Հայաստան, ազնվության, մաքրության, սիրո, հանճարի, գեղեցկության, արդարության, բարության վայր, պլատոնական իդեալը երկրագնդի վրա մարմնացած...

Այդպես, երբ Հարութը խորտակում է Ուստայի երազները, Ուստան՝ սասանած, զարթնում է հանկարծ և ասում. ոչինչը դու ես, ոչինչը՝ Սոնան է, Պլոն է, բյուրոն է. Հայաստանը ոչինչ չէ. նա է գլխավորը, ամենեն հաստատ բանը. Հայաստանը կա ու կմնա, Հայաստանը էն-տեղ է՝ սուլթանը վրեն՝ գնամ սուլթանին ոչինչ անեմ...

Ուրեմն Հայաստանի երազը հաղթեց մահին. մահից հզորը Հայաստանն է, կամ ուրիշ խոսքով ասած՝ նորից երազն է՝ մարդու հոգեկան մեծ պահանջը, մեծ կարիքը, որ չի մեռնի:

Կայծակն ասում է. երազը չի մեռնում, նա մահից հզոր է. մահից հետո էլ նա ապրում է. երազն է ստեղծել հոգու անմահությունը, հարության գաղափարը, և դրախտը՝ հանդերձյալ կյանքով:

Երազ չունին միայն ինքնասպանները, երազ ունեցողը անմահ է.

Օ, երա՛զ, երա՛զ... և զեղում:

Որովհետև վեպի փիլիսոփայական հիմքը սա է - լավ մշակել և պարզ ու կարկառուն ներկայացնել այս»[22]:

Ինքնագրի երկրորդ անվանաթերթն ունի հետևյալ գրառումները.

«Երկրորդ մշակում
1919, Ժնև
Ուստա Կարո»

Համեմատությունը ցույց տվեց, որ այս երկրորդ մշակման առաջին 6 գլուխների վերամշակումը հիմնված է ԳԱԹ, ԻՖ, 287ա ինքնագրի վրա: Մնացած գլուխների վերամշակման հիմք-ինքնագրերն անհայտ են: Ընդ որում այս ինքնագիրը պարունակում է վեպի ոչ թե 10, այլ 13 գլուխ, որոնց մեծ մասը հետագայում գրողը հրատարակեց «Հայրենիքում» և «Արեգում»: Այս ինքնագիրը Իսահակյանի արխիվում միակն է, որ վեպի երկրորդ տարբե-

---

[22] ԳԱԹ, ԻՖ, 431-II, թերթ 19-20:

րակի համակարգված շարադրանք է պարունակում: Եվ չնայած ինքնագիրը մաքրագրություն է, սակայն «Հայրենիքում» կամ «Արեգում» հրատարակելիս գրողը բազմաթիվ լեզվաոճական, խմբագրական, հաճախ էլ կառուցվածքային, բովանդակային ուղղումներ և շտկումներ է կատարել գլուխների բնագրերում:

Այս գլուխների շարադրանքից ակնհայտ է դառնում, որ Իսահակյանը արմատապես փոխել է վեպի հղացման ողջ հայեցակարգը, որն արդեն միայն խմբագրական շտկումներով և լեզվաոճական խմբագրումներով չի սահմանափակվում: Գրողը հրաժարվում է առաջին տարբերակի պյուժետային միագիծ պատում ստեղծելու տարբերակից և վեպը կառուցում է զանազան թեմաների ինքնաբավ մշակումներով, որոնց իրար կապողը գլխավոր հերոսների տեղափոխություններն են մեկ միջավայրից մյուսը: Սա կառուցվածքային և իմաստաբանական նոր մոտեցում էր, ինչը ենթադրում էր, որ բազմաթիվ թեմաներ պետք է մշակվեն առանձին-առանձին՝ կամ դրվագների, կամ կերպարների՝ որպես թեման ներկայացնողների, ներփակ նկարագրություններով: Հետևաբար աճչափ մեծանալու էր վեպի ծավալը և համապատասխանաբար՝ վեպի գլուխների թիվը: Պատահական չէ, որ վեպի առաջին տարբերակից դուրս թողնված մի ծավալուն հատվածի[23] ինքնագրի լուսանցքներում հեղի-

---

[23] ԴԱԹ, Ի Ֆ, 286-II: Այս ինքնագիրը, որ գրված է 60 մեծադիր էջերի վրա, երկու էջակալում ունի՝ 1-30 (թերթ) և 106-165 (էջ): Այս երկրորդ էջակալումը համապատասխանում է առաջին տարբերակի ինքնագրի էջակալմանը, ուր 106-րդ էջից հետո տետրի մեջ դրված են այլասեռ թղթեր և ինքնագիրը շարունակվել է դրանց վրա: Սա նշանակում է, որ հեղինակը հրաժարվել է այդ 30 թերթ (60 էջ) ծավալ ունեցող շարունակությունից, առանձնացրել է, և պատումը շարունակել է բովանդակային այլ ուղղությամբ:

ևակը հաջորդական պարբերությունների կողքին թեմատիկ նշումներ է արել՝ դրանք հետագայում օգտագործելու նպատակով[24]:

Այս նոր հայեցակարգը, անշուշտ, հայ գրականության մեջ նորույթ էր, նորույթ էր հայ վիպասանության ավանդույթների մեջ, նոր սկիզբ, որ սակայն և՛ ավարտվեց, և՛ չավարտվեց: Ժամանակակից եզրույթով՝ Իսահակյանը դեռևս անցյալ դարի 20-30-ական թթ. «համայնապատկերային» վեպի ծրագիր էր մշակել, ուր ամեն ինչ թեմատիկ առումով կար՝ թե՛ կենցաղ, թե՛ գյուղ, թե՛ քաղաք, թե՛ զանազան մարդկային տիպեր, թե՛ տարբեր ծագումնաբանական, բարոյական, հասարակական, ազգային խնդիրներ, թե՛ հայկական հարց և այլն: Բոլոր այս թեմաները մեծ կամ փոքր հատվածական բնագրերով և ծրագրային գրառումներով արձանագրել է գրողը՝ իր արխիվում պահվող շուրջ 7000 թերթիկների վրա, իսկ էջերի թիվը հասնում է շուրջ 8000-ի: Ըստ նոր հղացման՝ վեպը, գլուխներից բացի, պիտի ունենար ընդմիջարկող արձակ և չափածո տեքստեր, այսպես կոչված «հեղինակային շեղումներ», որոնք արխիվային գրառումներում հեղինակը ձևակերպել է «Հեղինակի կողմից» արտահայտությամբ, «Հավելված գլուխներ» և «Կիսագլուխներ», որոնք պատումի մեջ կառուցվածքային ընդմիջարկություններ էին լինելու, որոնցից մի քանիսը Իսահակյանը հրատարակեց ժամանակի մամուլում[25]: Այս հսկայածավալ՝ բազմաբարդ շավիղներ ու ոլորաններ ունեցող շինության աղյուսները՝

---

[24] Օրինակներ. «Սանամորների մասին», «Տրնկի պար», «Մահը», «Քամու մասին» և այլն:

[25] Տե՛ս Աշուղ Վշտալիի զրույցը (հատված «Ուստա Կարոյից»), («Արեգ», 1922, թիվ 2, էջ 69-71):

գրողը առանձին-առանձին, հստակ և ավարտուն ստեղծեց իր հազարավոր գրառումներում, ուր ամեն թեմա մեկից ավելի, երբեմն տասնյակ մշակում ու լուծում ունի՝ հաճախ իրար հակադիր, երբեմն էլ միանգամայն այլ բովանդակային դաշտում: Եվ քանի որ վեպը չունեցավ վերջնական շարադրանք, ապա մեզ հասած հատվածական գրառումներով վեպը ընկալվում է որպես ավարտուն «ինտերակտիվ» բնագիր, ուր ընթերցողն ինքը կարող է ընտրել առաջարկված բազմաթիվ լուծումներից մեկը: Գրողն ինքը ստեղծել է նույն թեմայի թե՛ սյուժետային, թե՛ կառուցվածքային, թե՛ լեզվաոճական բազմաթիվ տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը ինքնաբավ է՝ որպես պատում, բայց և միջնբնագրային տարածքում վիճարկում է նախորդ կամ հաջորդ տարբերակներից յուրաքանչյուրի գոյության իրավունքը:

Այս հսկայածավալ նյութի հետ աշխատելը լուրջ դժվարություններ էր ստեղծում ստեղծագործական պրոցեսը կանոնակարգելու տեսակետից, և Իսահակյանը փորձում է թեմատիկ համակարգման ենթարկել իր գրառումները՝ աշխատանքը դյուրացնելու համար:

Թեմատիկ համակարգման նման մի ցանկ պահպանվել է գրողի արխիվում, որը վեպի՝ գրված կամ գրվելիք գլուխների ցանկը չէ[26]: Բանն այն է, որ բոլոր այս՝ ստորև ներկայացվող 59 վերնագրերով ցանկը Իսահակյանի պատրաստած թղթապանակների վերնագրերն են, ուր խմբավորված են գրառումները ըստ թեմաների: Թղթապանակների մի մասը դատարկ է[27]. ըստ երևույթին դրանց

---

[26] ԳԱԹ, ԻՖ, 295-II:

[27] Դատարկ են «Հարութի հետ յայլաև» (ԳԱԹ, ԻՖ, 320-II), «Կարոն Մարուքի բոստանում» (ԳԱԹ, ԻՖ, 323-II), «Գյումրիից վերա-

պարունակությունը կամ կորել է, կամ հեղինակը դեռևս դրանք չի համակարգել, քանի որ նմանատիպ թեմաներով գրառումներ կան արխիվի այլ գրանցման միավորներում: Գրառումների թեմատիկ խմբավորումներով թղթապանակները գրողը վերնագրել է այսպես.

1. ԲԱԳՐԱՆԻ ՔԵՖԸ
2. ԲԱԳՐԱՆԻՑ ՆԱԽՃԱՎԱՆ
3. ՈՎՔԵՐ ԵՆ ԿԱՐՈՆ-ՉԱՎՈՒԾԸ
4. ՔԱՐՎԱՆԻ ՄԱՍԻՆ
5. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼԸ
6. ԱԾԽԱՏԱՆՔ ՆԱԽՃՎԱՆՈՒՄ
7. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ
8. ԱՅՑ ՍԱՆԱՄԵՐՆԵՐԻՆ
9. ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ
10. ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ
11. ԾՐՋԻԿ ԿԱՅԾԱԿԸ. ԺՈՂՈՎ. ՂՈՒԿԱՍ ԱՂԱՆ
12. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՌՕՐՅԱՆ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕԹԱԽԸ
13. ԾՊՆՈՒՄ
14. ՏԻԿՈՐ. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ
15. ՏԻԿՈՐՈՒՄ ԱԾԽԱՏԱՆՔ. Բ. ԱՆԳԱՄ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ
16. ՀԱՐՈՒԹԸ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵՏ
17. ՀԱՐՈՒԹԻ ԱՌՕՐՅԱՆ
18. ՀԱՐՈՒԹԻ ԿՅԱՆՔԸ, ՍԵՐԸ, ԱՆՑՅԱԼԸ

դարձ» (ԳԱԹ, ԻՖ, 328-II), «Կարսից վերադարձ. Նախճավանում» (ԳԱԹ, ԻՖ, 335-II), «Ուստաև արտաքսված է. գիշերը Ղարսում» (ԳԱԹ, ԻՖ, 337-II), «Հայաստան, Հայկական հարց» (ԳԱԹ, ԻՖ, 350-II) թղթապանակները:

19. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ II-III ԱՆԳԱՄ. ՀՐԵՂԵՆԻ ՄԱՍԻՆ

20. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ ԵՎ ԱՍՈՑԻ ՄԱՀԸ

21. ՀԱՐՈՒԹԸ ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՄՈՏ

22. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՑ ԱՌԱՋ

23. ՀԱՐՈՒԹԻ ՏԵՍԻԼՔԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

24. ՀԱՐՈՒԹԻ ՀԵՏ ՅԱՅԼԱՆ

25. ԱՐՏԱՇԻ ՆՇԱՆԴՐԵՔԸ

26. ԿԱՐՈՑԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԼՈՐԻԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱՂՈՒՄ

27. ԿԱՐՈՆ ՄԱՐՈՒՔԻ ԲՈՍՏԱՆՈՒՄ

28. ՔՈՒՐԴ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ

29. ԱՋՔԱԼՈՒՅՍԻ ԽՆՃՈՒՅՔԸ. ՇՐՋԻԿ ԿԱՅՃԱԿԸ

30. ԱՆԻ ԳՆԱԼԸ. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

31. ԱՆԻ

32. ԳՅՈՒՄՐԻ

33. ԳՅՈՒՄՐԻՒՑ ՎԵՐԱԴԱՐՁ

34. ՈՒՍՏԱՆ ԴԱՏԱՎՈՐ

35. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

36. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՑ ՀԵՏՈ. ՍԱՆԱՄ. ՔԻՐՍ. ՄԵՐԺՈՒՄ

37. ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

38. ԳՆՈՒՄ Է ԿԱՐՍ. ՃԱՄԲՈՒ ԴՆԵԼԸ

39. ԿԱՐՍ. ՊԼՈ...

40. ԿԱՐՍԻՑ ՎԵՐԱԴԱՐՁ. ՆԱԽՃԱՎԱՆՈՒՄ

41. ՊԼՈՑԻ ՆԱՄԱԿԸ. ՀՈՒՋՄՈՒՆՔ. ՂՈՒԿԱՍԻ ԻՆՏՐԻԳԸ

42. ՈՒՍՏԱՆ ԱՐՏԱՔՍՎԱԾ Է. ԳԻՇԵՐԸ ՂԱՐՍՈՒՄ

43. ՈՒՍՏԱՆ ՄՐԵՆՈՒՄ

44. ՄՐԵՆ ՀԱՐՈՒԹԻ ԳԱԼԸ
45. ՄՐԵՆՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽԸ. ԱՂՋԿԱ ԲԵՐԴԻ ՎՐԱ
46. ՎԵՐՋԱԲԱՆ
47. ԵՐԳՎԵԼԻՔ ԵՐԳԵՐ. ՍԻՐՈ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՖԻԴԱՅԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ
48. ՄԱՆՐ ՆՅՈՒԹԵՐ. ԱԿՆԱՐԿՆԵՐ. ՈՃԵՐ.- ՎԵՊԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ
49. ԱՍՏՂՈՒ ՄԱՍԻՆ. ԲՆՈՒԹՅՈՒՆ. ՉԱՐԻ ԵՎ ԲԱՐԻԻ ՄԱՍԻՆ
50. ՈՒՍՏԱՅԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
51. ՀԱՐՈՒԹԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
52. ԿԱՐՈՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ
53. ՀԱՐՈՒԹԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ
54. ԿԱՐՈ - ՀԱՐՈՒԹ ԽՈՍՈՒՄ ԵՆ
55. ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
56. ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ
57. ՎԵՊԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ
58. ՈՃԵՐ. ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ
59. ԲՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս թղթապանակներից բացի Իսահակյանը կատարել է այլ թեմատիկ խմբավորումներ, որոնք նույնպես մեզ են հասել գրողի կազմած թղթապանակներով և համապատասխան վերնագրերով: Կարող է տպավորություն ստեղծվել, որ այս՝ մեծ կամ փոքր թերթիկների վրա կատարված գրառումների պատճառը թուղթ չունենալն է եղել կամ արտաքո կարգի այլ հանգամանքներ: Իրականում նման կերպ գրառումների ստեղծումը մեծ հարմարություն ուներ դրանք խմբավորելու, մեկտեղելու և ստեղ-

ծագործական պրոցեսում օգտագործելու տեսակետից: Այն, որ Իսահակյանը միտումնավոր է աշխատանքի այդ կերպը որդեգրել, ապացուցվում է նրանով, որ այդ թերթիկների մեջ զգալի թիվ են կազմում առանձին տետրերից, ծոցատետրերից մկրատված հատվածներն ու առանձնացված էջերը: Մեկ ամբողջական տետրում կամ ծոցատետրում կատարված հաջորդական գրառումներից օգտվելը բնականաբար ավելի մեծ ջանք ու աշխատանք էր պահանջում, եթե նկատի ունենանք նաև դրանց ծավալի մեծությունը:

1919 թ. մայիսից սկսած վեպի երկրորդ մշակումը կամ մշակված գլուխների արտագրությունը գրողն հավանաբար ավարտել է հենց 1920 թվականին: Այս տետրում (ԻՖ, 291-II) մաքրագրված գլուխները նույնպես վերնագրված չեն, և, ինչպես նշեցինք, այստեղ մշակված է ոչ 10, այլ 13 գլուխ, թեև, ըստ հեղինակային գլխակարգման, գլուխների թիվը 10-ն է (Ժ): Այս երեք գլխի տարբերությունը առաջացել է այն պատճառով, որ հեղինակը մի դեպքում՝ վերջին Ժ գլխի բնագրի մի հատվածում նշել է, որ այդտեղից նոր գլուխ է սկսվում, մյուս դեպքում, նկատի առնելով ինքնագրում «Ծերերը» գլխի վերջին էջում հեղինակի թողած մեծ բացատը (5 տող), ինչպես նաև բնագրի այս հատվածի նոր էջից սկսելը, այն առանձնացվել է որպես առանձին գլուխ: Նկատի ենք ունեցել նաև, որ այս հատվածում պատումի թեման փոխված է և չի առնչվում «ծերերի» թեմային, ինչպես նաև այն, որ «Հայրենիքում» «Ծերերը» վերնագրված գլուխը տպագրված է առանց բնագրում առկա շարունակության («Ռես Հոսեի երևումը»): Եվ վերջապես «Ուստա Կարոյի և Զավուշի դարձը Նախճըվան» և «Ծեկոյենց Օսկանի տունը» գլուխները ինքնագրում գլխաբաժանված չեն: Հեղինակը

դրանք տրոհել է «Հայրենիքում» տպագրված բնագրում: ԻՖ, 291-II ինքնագրի այս տասներեք գլուխները ըստ գլխակարգության հետևյալներն են.

Ա. «ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՊԱՏՎԻՆ»,

Բ. «ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՉԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ»,

Գ. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԵՎ ՉԱՎՈՒՇԻ ՆԱԽՃԸՎԱՆ ԴԱՐՁԸ»,

Դ. «ՇԵԿՈՑԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ»

Ե. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՑՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ»,

Զ. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑՑԸ ՍԱՆԱՄԱՅՐԵՐԻՆ»,

Է. «ԾԵՐԵՐԸ»

Ը. <«ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ»>

Թ. <«ԶՐՈՒՑՑ ՋԱՐԴԱՐ ԱՆԱՑԻ ՀԵՏ»>

Ժ. <ՍՏԻ ՄԱՍԻՆ>

ԺԱ. «ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ Ա-ԴԱՄ ԱՄԻՆ»

ԺԲ. <«ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԾՊՆԻ ԳՆԱԼԸ»>

ԺԳ. <ԾՊՆԻՈՒՄ>

Այս ինքնագրի 13 գլուխներից 7-ը նույն հերթականությամբ առկա են նաև ԻՖ, 287ա ինքնագրում (Ա-Զ, ԺԱ): 1925 թ. Իսահակյանը «Հայրենիքին» «Ուստա Կարո և Օրթե Հարութ» ընդհանուր վերնագրով տպագրության հանձնեց այս 13 գլուխներից 7-ը (Ա-Զ, ԺԱ):

1921 թ. աշնանը Իսահակյանը ամբողջովին նվիրվում է «Ուստա Կարո» վեպի մշակման՝ իր եզրույթով՝ վեպը «կաղապարելու», ավարտելու աշխատանքին և արդեն ծրագրում է այն տպագրության հանձնել: Վարդգես Ահա-

րոնյանին 1921 թ սեպտեմբերի 14-ին Ազոլոյից գրած նամակում գրողը հայտնում է, որ «Միակ մխիթարանքս այն է, որ լծվել եմ «Ուստա Կարոն» վերջնականապես ավարտելուն, իսկ տպել... անկարելի է. այդքան փող ո՞րտեղից... երևի մոտ 10.000 ֆրանկ պետք կլինի, կամ մի 8000 ֆրանկ: Թերևս «Ճակատամարտ»-ը իբրև թերթոն տպե, բայց մի ողջ տարի պիտի զբաղեցնե հասարակությունը, որը երևի չպիտի սիրե, իբրև շատ կոլորիտային գործ և ո՛չ գաղութահայերին մատչելի կամ հարազատ»[28]: Նույն թվականի նոյեմբերի 3-ին Վահան Զաքարյանին Վենետիկից գրած նամակում Իսահակյանը տեղեկացնում է, որ «Այս տարի ուզում էին Ամերիկայում «Ուստա Կարոս» տպել, չեղավ. գտան, որ շա՛տ մեծ է, սուղ կնստի. մնաց մյուս տարի»[29]:

1921 թ. դեկտեմբերին Սիմյոն Հակոբյանը դիմում է Իսահակյանին 1922 թ. հրատարակելիք «Արեգ» ամսագրին թղթակցելու համար: Իսահակյանը համաձայնում է և նյութեր է ուղարկում Սիմյոն Հակոբյանին, և 1922 թ. «Արեգի» բոլոր 12 համարներում գրողից մեկական երկ է տպագրվում: Պատասխան նամակում Իսահակյանը գրում է. «Սիրելի Սիմոն, ներողություն, որ ուշ եմ ուղարկում նյութերը. այս չորս օր է սաստիկ հարբուխ ունեի, թղթի չէի կարող նայել: Հետո, հազիվ կարողացա այս 2 կտորը ուղարկել քեզ. ժամանակս ամբողջովին կլանված է «Ուստա Կարո» վեպի լրացնելով, որ մղձավանջի պես նստել է վրաս. շա՛տ նյութեր ունիմ, բայց ժամանակ չունիմ հրանցով զբաղվելու. ուզում եմ «Ուստա Կարոն» մի կողմ դնել, որ անցնեմ մյուս նյութերիս, որոնք կարճ են,

---

[28] Նի՛ 14 հատորով, հ. 13, էջ 373:

[29] Նույն տեղում, էջ 376:

բայց շա՛տ լավ,- պոեմներ, պատմվածքներ»[30]: Այդ տասներկու հրապարակումներից երեքը «Ուստա Կարո» վեպի հատվածներից էին: Առաջինը «Աշուղ Վշտալիի զրույցը» ավանդազրույցի չափածո մշակումն էր[31], երկրորդը՝ «Աղջկա ամրոցը» ավանդազրույցը, որը, ըստ հեղինակի հղման, վեպի «հեղինակային շեղումներից» է. այդ է վկայում «հեղինակի կողմից» ենթավերնագիրը ինքնագրում[32], երրորդ բնագիրը «Ուստա Կարոն և գյումրեցի վաճառականները» գլխի համառոտված տարբերակն է[33]:

Պետք է նշել, որ Ս. Հակոբյանը խուսափել է ծավալուն բնագրեր հրատարակել իր ամսագրում և ցանկացել է պարզել վեպի ծավալը, որպես թերթոն «Արեգում» տպագրելու համար, ինչին ի պատասխան 1922 թ. հունվարի սկզբին գրած նամակում Իսահակյանը գրում է, թե ««Ուստա Կարոն» անհաղթելի դժվարություններ ունի. մեծ է, էպոպեա, համայնապարփակ... 700-800 երես... թեև ավարտած եմ, բայց անվերջ սրբագրում եմ, գրում, ջնջում, ավելցնում, պակսեցնում...»[34], իսկ նույն թվականի ապրիլի 16-ի նամակում հայտնում է, որ ««Ուստա Կարոս» թեև վերջացած է, բայց նորեն վերջացած չէ, մի քանի ամսվա դեռ կարոտ է»[35], և վերջապես ապրիլի 28-ի նամակում այդ «մի քանի ամիսը» փոխվում է ավելի անորոշ՝ «այս տարի» արտահայտությամբ. «Ուզում եմ «Ուստա Կարոն» վերջնականապես կաղապարել, որ այս տարի վերջակետ

---

30 Նույն տեղում, էջ 383:

31 «Արեգ», 1922, թիվ 2, էջ 69-71:

32 Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 27-28:

33 «Արեգ», 1922, թիվ 8, էջ 469-475:

34 ԵԺ 14 հատորով, հ. 13, էջ 394:

35 Նույն տեղում, էջ 433:

դնեմ»[36]: Սիմյոն Հակոբյանի պնդումներից հետո Իսահակյանը ավելի որոշակի պատասխան է տալիս՝ ըստ էության հրաժարվելով «Արեգում» որպես թերթոն վեպը տպագրելու գաղափարից: 1922 թ. մայիսի 14-ին Վենետիկից գրած նամակում Իսահակյանը գրում է. «Հարցնում ես, թե «Ուստա Կարոս» մինչև տարվա վերջը «Արեգի» մեջ դնելով կսպառվի՞. տո, տունդ չքանդվի, որ խեղճ ես. «Ուստա Կարոն» 1000 երեսանոց մի բան է, որ սեղմելով, սեղմելով, նորից 700-800 էջ է դուրս գալու. թերևս մի-երկու գլուխ տամ նմուշի համար, ինչպես ժամանակին տվել էի «Գեղարվեստին» Լևոնյանի: «Ուստա Կարոն» իր ողջ ծանրությամբ նստել է վրաս, չեմ վերջնականապես ազատվում, որ նվիրվիմ ուրիշ գրություններին: <...> հույս ունիմ, որ այս տարի «Ուստա Կարոյիս» վրա վերջնական կնիքը դնեմ»[37]: Հավանաբար այս նամակից հետո է Իսահակյանը Ս. Հակոբյանին ուղարկում «Գյումրեցի վաճառականները...» գլուխը, և 1923 թ. ընթացքում այնտեղ ընդամենը մի քանի հրապարակումներ անելով[38], մինչև «Արեգի» փակվելը[39],

---

[36] Նույն տեղում, էջ 435:

[37] Նույն տեղում, էջ 439:

[38] 1923 թ. «Արեգի» համարներում Իսահակյանը հրատարակել է «Ինչպես եկավ մահը» (թիվ 1, էջ 18-19), «Պոմպեյի մեջ» (թիվ 3, էջ 136), «Լուսնյակ գիշերին...» (թիվ 3, էջ 137) բանաստեղծությունները, «Հույսը» (թիվ 4, էջ 193) արձակ բանաստեղծությունը, «Հովհաննես Թումանյան» (թիվ 5, էջ 298-300), «Ծառերի վրա» (թիվ 8, էջ 468) բանաստեղծությունը, «Ասում են թե» (թիվ 9, էջ 529) բանաստեղծությունը:

[39] 1924 թ. «Արեգի» թիվ 17 համարում խմբագրությունը հայտնում է իր բաժանորդներին, որ «1925 թվին դադարում է «Արեգ»ի հրատարակությունը» (էջ 1152):

1924 թ. ընդհատում է աշխատակցությունը այդ պարբերականին[40]:

1922 թ. օգոստոսի սկզբներին Ռուբեն Դարբինյանը, որը մտադիր էր ամսագիր և օրաթերթ հրատարակել տարեվերջին՝ Բոստոնում, դիմել է Իսահակյանին աշխատակցելու առաջարկով[41]: Իսահակյանը 1922 թ. օգոստոսի 22-ին Ռուբեն Դարբինյանին գրած նամակում, ընդունում է առաջարկը և հետաքրքիր մանրամասներ է հաղորդում խմբագրի հետ բանակցությունների մասին. «Դառնանք «Հայրենիք»ին աշխատակցելու հարցին,- գրում է Իսահակյանը:- Այդեն մի քանի օր առաջ մի պատմվածք ղրկեցի՝ «Պարունակի քարվան կտրելը»: Եթե տպես, թերթերից ինձ ուղարկիր, որ պահեմ: Ձեռքիս տակ ունիմ բաներ, որ գրում եմ կամաց-կամաց: Բայց ուզում եմ բոլորը կիսատ թողնել և ձեռք զարնել «Ուստա Կարո» վեպիս ավարտելուն: <...> Ջինջադադարից հետո գնացի Բերլին, բայց այդ շրջանում էլ միայն 300 երես եմ ուղղել: Իսկ վեպս լինելու է առնվազը 700 երես, մոտ Րաֆֆիի «Սամվել»ի չափ, նույն դիրքով: Ուզում եմ այս տարի ա-

---

[40] 1924 թ. «Արեգի» համարներում Իսահակյանը որևէ հրապարակում չունի: Աշխատակցության ընդհատումը պայմանավորված էր «Արեգի» գաղափարական ուղղվածության հետ, որը 1924 թ. դառնալով նաև «քաղաքական» պարբերական, իր համարներում հրապարակած նյութերում մեծ տեղ էր հատկացնում բոլշևիկների, Լենինի, խորհրդային կարգերի, ժողովուրդների եղբայրությանն ու բարեկամությանը առնչվող խնդիրներին և հիմնականում դրական լույսի ներքո էր մեկնաբանում դրանք: 1924 թ. Սիմոն Հակոբյանը ընդհատեց «Արեգի» հրատարակությունը Խորհրդային Հայաստան տեղափոխվելու պատճառով:

[41] Ռուբեն Դարբինյանի՝ Իսահակյանին գրած նամակները չեն պահպանվել:

շունքից՝ սեպտեմբերի վերջերից դրանով զբաղվել և վերջացնել: Ծանր կոշմարի պես ճնշել է վրաս. պրծնեմ, որ մյուս գործերիս էլ վերջ տամ, որոնք ծավալով մեծ չեն: 100-150 երեսից մեծ բան չունեմ: <...> Արդ՝ եթե կարող է «Հայրենիք»ը իբրև թերթոն «Ուստա Կարո»ս տպել, այն ժամանակ նոյեմբերից սկսած կարող ենք հրատարակել: Իսկ եթե ուզում ես առանց «Հայրենիք»ի մեջ տպելու գիրք անել, այն ժամանակ հունվարին կուղարկեմ քեզ գրքի առաջին մասը, 350 երես: Մինչև սա տպվի, մյուս մասն էլ կհասցնեմ: Ինձ համար ավելի երկրորդ ձևն է հարմար, երկու հատորով գիրք, որ մինչև մեկ տարի պատրաստ կլինի և չի կորչի թերթերի մեջ: Այդ դեպքում ես թերթին շատ ավազ կերպով կարող եմ աշխատակցել, ամսական հազիվ մի բան: Իսկ եթե վեպս թերթոն չինես, գրեթե ամբողջ մեկ տարի պիտի հրատարակես, որ տաղտկալի կլինի, կցկտուր: Ես կխնդրեի, որ իբրև գիրք համաձայնիս...»[42]: Վեպը թերթոնի ձևաչափով կամ առանձին գրքով տպագրելու մասին բանակցությունները Ռ. Դարբինյանի հետ շարունակվում են և տևում են մի ամբողջ տարի՝ մինչև 1923 թ. նոյեմբեր ամիսը: Բանակցությունների ընթացքի մասին Իսահակյանը տեղեկացնում է Վարդգես Ահարոնյանին 1922 թ. սեպտեմբերի 1-ին գրած նամակում. «Երևի «Ուստա Կարոն» կամ իբրև թերթոն կտպվի «Հայրենիք»ում կամ առանձին գիրք, տեսնենք ինչպես կհամաձայնենք»,- գրում է նա[43]:

Ռ. Դարբինյանը հավանաբար լրացուցիչ տեղեկություններ է ցանկացել ստանալ վեպի ծավալի և բովանդակության մասին՝ վերջնական որոշում կայացնելու հա-

---

[42] Եփ 14 հատորով, հ. 13, էջ 457-458:

[43] Նույն տեղում, էջ 461:

մար: Դա հստակ երևում է 1922 թ. սեպտեմբերի 22-ին Իսահակյանի գրած նամակից. «Անցյալ օրը քեզ նամակ գրեցի վեպիս «Ուստա Կարոյի» հրատարակության մասին: Երևի ստացար: Հիմա գրում եմ մի քանի գործնական մանրամասներ: Վեպս ունի մոտավորապես մեկ միլիոն տառ: Եթե գիրք անենք, մեծադիր էջով կբռնե մոտ 750-800 էջ, ավելի փոքր գիրքով՝ 1000 էջ, տառերն էլ կարծեմ ոչ մեծ: Մտածի՛ր, թե կարո՞ղ եք այդպիսի մի մեծ վեպ մի տարվա մեջ տպել, երկու հատորով: Նյութը շատ հետաքրքրական է. Շիրակի կյանքից. գյուղ ու քաղաք, շատ տիպեր, Դաշնակցության գործունեություն, իբրև ֆոն, բայց բարդ կազմվածքով և, հավատացած եմ, լավ գրված: Կծախվի, մնայուն գործ է: Իսկ եթե թերթոն անես, այս պատկերը կներկայացնե: Առնում եմ հիմք «Հայրենիք»ի Հունիսի 17 թիվը, 1922 տարի, թիվ 3080, թերթոն՝ «Աստղկան սայլը»: Սրա հիմքի վրա վեպս կբռնե 100 թերթոն, բայց 10 սյունակից կազմված, սյունակը՝ 36 տողից: Հաշվել եմ, որ վեպս կբռնե 1000 սյունակ: Ուրեմն, եթե մի ամբողջ տարի տեղ տաս ինձ, շաբաթը երկու թերթոն պիտի գրավեմ, ամսական՝ 8: Ավելին չեմ կարող հասցնել: Սա էլ պիտի շատ աշխատեմ, որովհետև առնվազը պետք է գրեմ 60 կամ 80 էջ, նույնչափ էլ արտագրեմ, որ դժվար բան է, մանավանդ որ ես ծանր եմ գրում, մտածելով, խնամքով (գոնե այդպես եմ ուզում անել): Ինձ համար ավելի հարմար է առանձին տպելը, որովհետև չեմ շտապի և, վերջապես, գիրք կունենամ, ոչ թե լրագրի թերթոններ...»[44]:

Իսահակյանի նշած վեպի ծավալը «վեպս լինելու է առնվազը 700 երես, մոտ Րաֆֆիի «Սամվել»ի չափ, նույն

---

[44] Նույն տեղում, էջ 463-464:

դիրքով», «մոտավորապես մեկ միլիոն տառ» վկայում է, որ գրողը հաշվել է 1888 թ. «Սամվել» պատմավեպի հրատարակության նիշերի թիվը, որը կազմում է 965880: Ինչ վերաբերում է «երեսներին» կամ էջերին, ապա, ըստ Իսահակյանի հաշվարկների, դրանք նույնպես պիտի մոտավորապես հավասարվեին «Սամվելի» նշված հրատարակության էջերի թվին (750) («վեպս լինելու է առնվազը 700 երես», «Եթե գիրք անենք, մեծադիր էջով կբռնե մոտ 750-800 էջ»):

Այս բանակցությունների արդյունքում Իսահակյանը շարունակում է 291-ԻՅ ինքնագրի վերամշակումը՝ մասնավորապես «լեզվական առումով»: Թրքա-Հայաստանի ոչնչացումը հարկադրում է նրան փոխել վեպի լեզվական ձևերը. ««Ուստա Կարոն» լեզվական մեծ փոփոխության եմ ենթարկում, հերոսների խոսակցությունը վերածելով Արարատյան բարբառին, որովհետև զգում եմ, որ Թրքա-Հայաստանի ոչնչացումով մեր բարբառն է ապագա ունեցողը, և պետականը, և միացնողը, ուր պիտի ձուլվին մյուսները. պատմական իրերի ընթացքն այս է. անհեղլի օր ենք... Եվ վերջապես մի լեզու պիտի ունենանք մի ազգ դառնալու համար»[45],- հայտնում է նա 1923 թ. հունիսի 21-ին Սիմյոն Հակոբյանին գրած նամակում: Հետագայում «Հայրենիքում» տպված գրեթե բոլոր բնագրերում կը եղանակիչով կազմված ձևերը գրողը փոխել է -ում վերջավորությամբ ներկայի ձևերի (կուգան - գալում են, կհանեն - հանում են, կընկնի - ընկնում է, կգտնվեին - գտնվում էին և այլն):

1923 թ. «Հայրենիքի» համարներում Իսահակյանը երկու բնագիր է հրատարակում՝ առանց նշելու, որ դրանք «Ուստա Կարո» վեպի գլուխներ են: Առաջինը «Կապիտան

---

[45] Նույն տեղում, էջ 500:

Ղազարը»[46] գլուխն է, երկրորդը՝ «Մելքոն վարժապետը»[47]: Այս երկու գլուխներում էլ Ուստա Կարոն չի երևում: Հետագայում վերաիրատարակելով «Կապիտան Ղազարը» գլուխը[48] Իսահակյանը ընդմիջարկված ավելացրել է Ուստա Կարոյի ներկայությունը Կապիտան Ղազարի պատմությանը և այս բնագիրը, ըստ ծրագրային մի գրառման, ներառել է Ուստա Կարոյի Գյումրի կատարած այցելությունը ներկայացնող գլուխների մեջ: Ինչ վերաբերում է «Մելքոն վարժապետը» գլխին, ապա 1925 թ. Վահան Նավասարդյանին Վենետիկից գրած հուլիսի 21-ի նամակում Իսահակյանը հավաստել է. «իմացած եղիր, որ «Կապիտան Ղազար», «Մելքոն վարժապետ» չմշակված գլուխներ են «Ուստա Կարո»ից»[49]:

Ի դեպ, ըստ Իսահակյանի ծրագրային գրառումների, այս երկու գլուխներն էլ մաս են կազմում Ուստա Կարոյի Գյումրի կատարած այցելությունը ներկայացնող պատումի, 11 առանձին գլուխներով, որոնց ցանկը գրողը զետեղել է ԻՖ, 327-II ինքնագրում.

«ԳՅՈՒՄՐՎԱ ԳԼՈՒԽՆԵՐԸ.

= **ՈՒՍՏԱՆ և ՉԱՎՈՒՇԸ ԳՅՈՒՄՐՎԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ**, մթնոլորտը ներկայացնել, երկաթուղին, խանութներ, բազարներ...

= **ՈՒՍՏԱՆ ԲԱՂՆԻՔ, ՍԱՓՐՎԵԼ, ՆԿԱՐՎԵԼ, ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱ, ԹԱՏՐՈՆ, ՑԻՐԿ:**

---

[46] «Հայրենիք», 1923, թիվ 6, ապրիլ, էջ 4-19:

[47] «Հայրենիք», 1923, թիվ 11, նոյեմբեր, էջ 3-7:

[48] Ընտիր երկեր, 1940, էջ 182-201, նոր, 1951, հ. 3, էջ 303-323:

[49] Նոր 14 հատորով, հ. 14, էջ 111:

= ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ:
= ՏԵՌՈՐ:
= ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹ, ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵՆ:
= ՔԵՖ:
= ՀՆԶԱԿՑԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ:
= ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ:
= ՄԱՍԸՍԱ ՔԱՋԵՐՆ ՈՒ ԴԵՎ ՍՈՒԼԹԱՆԸ:
= ՏԵՐ ՄԼԵ:
= ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏ»[50]:

Այս ցանկից Իսահակյանը մշակել է ընդամենը երեք գլուխ՝ «Կապիտան Ղազարը», «Մելքոն վարժապետը» և «Տեր Մլե»-ն: Ընդ որում վերջինը՝ «Տեր Մլե»-ն, մշակել է որպես առանձին պատմվածք՝ «Ուստա Կարոյից» դուրս, և հետագայում՝ «Տեր Մլեհը» վերնագրով 1935 թ. հրատարակել է Փարիզի «Ապագա» օրաթերթում[51], չնայած որ «Ուստա Կարոյի» արխիվում հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ կան Տեր Մլեհի մասին: Այն, որ «Տեր Մլեհը» «Ուստա Կարո» վեպի գլուխներից պետք է լիներ, հավաստվում է նաև գրողի հետևյալ ծրագրային գրառմամբ. «Բացի նշանավոր խմբապետներից Ուստան ուզում էր Գյումրի տեսնել երեք հայտնի մարդկանց և ծանոթանալ հետները, որոնց անունները մինչև Նախճվան հասել էին.- Կապիտան Ղազարը, Մելքոն վարժապետը և Ջաջուռցի Տեր-Մլեհն: Ծանոթացավ երկուսի հետ. Տեր-Մլեհին իր գյուղումն էր, Ուստան ժամանակ չունեցավ նրան տեսնել»[52]:

---

50 ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր, «Ուստա Կարոն Գյումրիում», էջ 3:
51 Տե՛ս «Ապագա», 1935, թիվ 110-115:
52 ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 37:

1924 թ. ընթացքում Իսահակյանը շարունակում է մշակել վեպի գլուխները՝ մինչև աշուն այն ավարտելու մտադրությամբ: Այդ մասին նա հայտնում է Երվանդ Քոչարին 1924 թ. փետրվարի 12-ին Վենետիկից գրած նամակում. «Գալով ինձ, ինչպես թողել ես, այնպես եմ. միայն այն տարբերությամբ, որ սկսել եմ «Ուստա Կարոն» գրել. ամբողջ ժամանակս նրան եմ տված, բառացի գրում եմ, գրում եմ, ջնջում եմ, գրում եմ, գրում եմ, ջնջում եմ, բայց գրում եմ... Մինչև չվերջացնեմ, Վենետիկից դուրս գալու չեմ»[53]:

Մինչև 1924 թ. օգոստոսին Իսահակյանը վեպը մշակելուն զուգահեռ հույս էր տածում, որ այն կարող է առանձին գրքով Եվրոպայում իր վերահսկողությամբ տպագրել՝ համապատասխան ֆինանսական աջակցություն ստանալու դեպքում: Այս խնդիրը նա ներկայացնում է Վարդգես Ահարոնյանին և Ռուբեն Դարբինյանին ուղղված նամակներում: «Ծանրհակալ եմ, որ մտածում ես հոգալ Ուստա Կարոյի հրատարակության մասին:- Գրում է նա Վարդգես Ահարոնյանին հասցեագրված 1924 թ. փետրվարի 21-ի նամակում:- Այս վեպը ուղղակի պատիժ դարձավ գլխիս. գրել էի, վերջացրել, նորից փոխում եմ, ո՛չ էապես, բայց շա՛տ բաների մեջ. մի տեսակ վերագնահատում ի տես բոլոր սնանկությանց, որոնք եղան մեծ պատերազմի ընթացքին, և հետ-պատերազմի շրջանում - սնանկություն պետությունների, դեմոկրատիայի, սոցիալիզմի, կոմունիզմի, հումանիտեի և այլն - այն բոլոր ապրումները, որ ունեցա՝ պիտի բյուրեղանան Ուստա Կարոյի և Օրթե Հարութի մեջ. դա է վեպս, որ հիմքում փիլիսոփայական է և գերազանցապես ազգային-հայկական: Հիմա

---

[53] ԵԺ 14 հատորով, հ. 14, էջ 12:

երկու ամիս է լուրջ և անընդհատ աշխատում եմ, ուզում եմ մինչև աշուն վերջացնել վերջնականապես. հետո կմտածեմ տպել. կարծում եմ որ այդտեղ չի լինի, որովհետև իմ ներկայությունը անհրաժեշտ է արբագրելու, քանի որ ոճերի մի ծով է վեպը, և այդտեղ շա՛տ հասկացող չկա ժողովրդական ոճից: Երևի Վիեննայում պիտի տպեմ, դա էլ փողի խնդիր է, փող ձեռք բերելու մասին տակավին չեմ մտածել. և բավական մեծ գումար է պետք. վեպը լինում է մոտ 7-800 էջ: Իսկ եթե Ամերիկա տպեն, ի՞նչ կարող են տալ ինձ, բայց իրապես տան և ոչ թե խաբեն, ինչպես խաբում են Կ. Պոլիս «Արձակ էջերը»... գնեց 1000 ֆրանկի-լիրեթ և սանտիմ չտվեց: Եթե կարող ես մարդ գտնել, որ վճարե և խնամքով տպե, կարելի է երկու հատորի բաժնել, 350-400 էջանոց: Ուրիշ ի՞նչ գրեմ. այդ էլ հազիվ մի չորս ամսվա մեջ պատրաստեմ, որովհետև արտագրությունը շատ ժամանակ է խլում, գրելուց ոչ նվազ. քանի որ պիտի խնամքով, վճիտ, որոշ գրել, իսկ Վիեննայում՝ ես գլխին կանգնած՝ դյուրին կլիներ տպելը: Չգիտեմ ինչքա՞ն գնահատեմ. դու այդտեղի շուկան և գները գիտես, մոտավորապես մի նախահաշիվ տուր. սխալ ասացի, այլ՝ թե ի՞նչ են վճարում առհասարակ»[54]:

Այս նամակից պարզ է դառնում, որ Իսահակյանին ոչ միայն լեզվաոճական խնդիրներն էին մտահոգում, ինչպես որ բազմիցս նշել էր նախորդ նամակներում, այլ առաջնահերթություն էր դարձել՝ վեպի առաջին տարբերակի համեմատությամբ՝ հայեցակարգի և հղացման արմատական փոփոխությունը, իր բառով ասած՝ «վերագնահատում»-ը «ի տես բոլոր սնանկությանց», որ տեղի էին ունեցել առաջին աշխարհամարտի տարիներին և դրանից հե-

[54] Նույն տեղում, էջ 13-14:

տո հայ ժողովրդի ճակատագրում: Ահա այդ վերագնահատումներից մեկն էլ վեպի երկրորդ տարբերակում Մահմուդի Չավուշի՝ Կարոյի անբաժան ընկերոջ ազգության փոփոխությունն էր, որը առաջին տարբերակում ազգությամբ թուրք էր: Բանն այն է, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո (1908 թ.) մինչև առաջին աշխարհամարտը (1914 թ.) հայ քաղաքական շրջանակներում շրջանառվում էր հայերի և թուրքերի եղբայրության և խաղաղ համակեցության գաղափարը: Հայոց ցեղասպանությունից հետո այդ գաղափարը վերջնականապես մեռավ: Հետաքրքիրն այն է, որ Իսահակյանի ստեղծագործությունը ցեղասպան թուրքի հանդեպ փոխանցվում է իր իսկ ստեղծած կերպարին: Ծրագրային մի գրառման մեջ նա գրում է. «Կարծում եմ, որ Մահմուդի Չավուշը պիտի դեն ձգել, այլևս անհնար է թուրքի հետ ախպերանալ. բացի դրանից, Ուստան միշտ զզվանքով, զայրույթով է խոսում թուրքերի մասին»[55]: Իհարկե, գրողը «դեն չձգեց» Չավուշին, այլ փոխեց նրա ազգությունը:

Այս նամակից պարզ է դառնում նաև, որ Իսահակյանի և Դարբինյանի բանակցությունները վեպը տպագրելու ձևաչափի մասին դեռևս ավարտված չէին, հստակ համաձայնություն չկար՝ վեպը թերթո՞ն, թե՞ առանձին գրքով տպագրելու մասին:

Այդուամենայնիվ, 1924 թ. ապրիլին Իսահակյանը «Հայրենիք»-ին է ուղարկում մեկ հատվածական բնագիր՝ ««Ուստա Կարո» անտիպ վեպից (Մի հատված «Բագրատի ուխտը» գլխից»[56] վերնագրով: Կից նամակում Իսահակյանը գրում է. «Ես ոչ մի դպրոցի չեմ հետևում. ինչ որ ինձ

---

[55] ԳԱԹ, ԻՖ, 431-II, թերթ 12:

[56] «Հայրենիք», 1924, թիվ 7, էջ 2-9:

լավ է թվում, այն եմ անում: Բայց այդ չի նշանակում, որ կատարյալ եմ. բնավ, երբեք: Ես շա՛տ եմ դժգոհ ինձնից, և դրա համար էլ «Ուստա Կարոն» չի վերջանում: Խոսքս ոճի մասին է, ոչ թե նյութի: Ոճ, ձև - սա է ինձ զբաղեցնողը: Բայց ոչ պետք է ֆուտուրիստ դառնալ, ոչ էլ շաբլոնիստ. պետք է գտնել իրենը, իր ոճը: Երկարացրի: Վ. Ահարոնյանը ինձ գրել էր մի-երկու շաբաթ առաջ, որ դրամ է հավաքել Ա. Ջամալյանի հետ «Ուստա Կարոս» հրատարակելու համար: Մի՞թե այդպես լավ չէ: Եթե ծախսերը տան (և նվեր է ծախսը), ուրեմն՝ ինչ որ ծախեմ, իմս կլինի և կշահիմ: Փող. հենց այդ է, որ ինձ հիմա պակասում է, փող: Եթե չեղավ, ուրիշ բան: Շնորհակալ եմ հոգացողությանդ համար: Բայց չե՞ս գտնում, որ քիչ է 400 տոլարը ավելի քան 700 էջի համար: Հարկավ, քանակը չէ բանը, բայց և այնպես, քիչ է: Հետո կխոսինք դրա մասին: «Ուստա Կարո»ից ղրկածս կտորը դեռ լավ մշակվածներից չէ, շատախոսություն կա. պետք չէր դնել ժողովրդական երգերը, բացի «Լաչիմ-Նանայից», որի մեծ մասը իմ շինածն է: Բայց թո՛ղ տպվի, վնաս չունի»[57]:

««Ուստա Կարո»ից ղրկածս կտորը» «Բագրանի ուխտը» գլխի վերջին հատվածն է, որի մեկ ինքնագիր տարբերակ պահվում է ԳԱԹ, ԻՖ, 330-II (էջ 1-40) գույքահամարի տակ: Այս հատվածը մեծ հետաքրքրություն է առաջացնում ընթերցողների շրջանում: Իսահակյանը, գնահատելով այդ արձագանքը, 1924 թ. օգոստոսի 9-ին Ռ. Դարբինյանին ուղղված նամակում գրում է. «Ուրախ եմ, որ «Ուստա Կարոյի» հատվածը այդտեղ հետաքրքրություն է առաջ բերել: <...> Երբեմն գլուխներ կուղարկեմ, որ տպես: Թերևս այս տարի առաջին կեսը, մոտ 300 էջ,

[57] ՆԻ 14 հատորով, հ. 14, էջ 26-27:

լույս տեսնի»[58]: Գրողի նշած այս 300 էջերը ներառում էին արդեն առկա, ամբողջապես գրված, սակայն մշակման ընթացքի մեջ գտնվող ԻՖ, 291-II ինքնագրի 164 էջերը, ԻՖ, 365-II ինքնագրի 30 էջերը («Ուստաճ Տիկորում»), ԻՖ, 379-II ինքնագրի 36 էջերը («Հարութի կենսագրությունը»), ԻՖ, 293-II ինքնագրի 23 էջերը («Ասոյի մահից հետո») և ԻՖ, 330-II ինքնագրի 40 էջերը («Բագրաճի ուխտը»): Ընդհանուր հաշվարկով 293 տարբեր չափերի էջեր, որոնք 300 էջից ավելի հատոր կկազմեին:

Վեպը առանձին գրքով տպագրելու ծրագրից Իսահակյանը վերջնականապես հրաժարվում է 1924 թ. օգոստոսին հովանավորներ չգտնելու պատճառով, և որոշում է վեպը «մաս-մաս տպել ամսագրում, մինչև մի լույս ծագի», ինչի մասին հայտնում է Վարդգես Սհարոնյանին 1924 թ. օգոստոսի 9-ին գրած նամակում. «Գիրք հրատարակելու պայմանները Եվրոպայում շա՛տ ծանր են: Վեճետիկ բան չի կարելի անել. համ սուղ է, համ վաճքը ցեղզուրա ուճի՝ աշխարհիկ գրվածքներ չեն տպում: Վիեննայի պայմանները առասպելական են: Թուղթը իրենց վրա, Րաֆֆիի «Սամվելի» դիրքով, (միջակ թուղթ), 1000 օրինակի համար, տպագրական բոլոր ծախսերով միասին, 16 էջը (մի <մամուլ>) կարժենա 24 դոլլար: Այսպես ուրեմն, «Ուստա Կարոս» որ մոտ 700 էջ է, կբռնե 1000 դոլլար, մի լեռնաչափ գումար: Գրել եմ Փարիզ՝ իմանամ պայմանները. եթե հարմար լինի, թերևս մի բան տպեմ: Ուրեմն, կարծիքովս, անկարելի է այդտեղ 1000 դոլլար հայթայթել. մնում է, վեպս մաս-մաս տպել ամսագրում, մինչև մի լույս ծագի, բայց մի բան ինձ համար անհրաժեշտ է, որ մոռացա Դարբինյանին գրել. եթե պետք եղավ՝ կգրեմ. իմ բյու-

[58] Նույն տեղում, էջ 44:

ճեն լրացնելու համար, այսինքն ապրելու համար, իմ ստիպենդիայից և երբեմնական հոնորարներից դուրս, պետք է ամսական 20 դոլլար. դա պետք է գտնել, որ է ամսական 400 լիրեթ, գոնե մի-երկու տարի, մի կամ երկու տարի, մինչև հայկական իրերի դրությունը պարզվի. չորս կողմից Հայաստանից եկողները ասում են թե, Ռուսները բախվելու են սրիկա թուրքերի հետ, Կարսը հետ են գրավելու»[59]:

Վեպը ոչ թե առանձին գրքով, այլ թերթոնով տպագրելու որոշումը ընդունելու մեջ, կարծում ենք, վճռորոշ դեր է ունեցել Համաստեղի բարձր գնահատանքը վեպին: Իսահակյանը այդ մասին ակնարկում է դեռևս 1924 թ. մայիսի 20-ին Ռ. Դարբինյանին գրած նամակում. «Քեզ շատ սիրելուցս է, որ վճիռս լուծեցի, և նույնպես Համաստեղի խաթերը, որ այդպես գնահատում է գործս: Այլապես ի՞նչ միտք ուներ գրել այս հասարակության համար, որ մեռած սիմվոլիզմով է տարվում և ֆուտուրիզմով ոգևորվում»[60]:

Այս որոշումը կայացնելուց Իսահակյանը հոկտեմբերի 14-ին տեղեկացնում է Դարբինյանին, թե «Մյուս թվերի համար կուղարկեմ «Ուստա Կարոյից»: Ինչքան տպվի՝ թող տպվի: Ուրիշ բան չեմ կարող ղրկել, ամբողջապես նրանով եմ զբաղված»[61], իսկ 1924 թ. նոյեմբերի 8-ին Ռուբեն Դարբինյանին գրած նամակում հայտնում է, որ «Հայրենիքին» է ուղարկել վեպի առաջին գլուխը («Սեղան Ուստա Կարոյի պատվին»): Սա վկայում է, որ բանակցություններն ավարտվել էին վեպը ոչ թե առանձին գրքով, այլ թերթոնով տպագրելու որոշմամբ. «...ուղարկում եմ

---

[59] Նույն տեղում, էջ 42:

[60] Նույն տեղում, էջ 107:

[61] Նույն տեղում, էջ 62:

«Ուստա Կարոյի և Օրթե Հարութի» առաջին գլուխը: Իրար հետևից կղրկեմ. ինչքան տպվեց, տպվեց: Ամբողջը չեք կարող տպել. ափսո՜ս: Առաջին գլուխները այնքան հետաքրքրական չեն, անշուշտ, ինչպես հետևողները, ուր զարգանում են դեմքերն ու դեպքերը: Առաջին գլխից եմ սկսում, որովհետև վերջնականապես արտագրում եմ և չեմ ուզում զանազան տեղերից տալ, այսինքն՝ ավելի հետաքրքրականները, որովհետև շատ է խանգարում այդ՝ աշխատանքներիս. իսկ ես ուզում եմ օր առաջ պրծնել այդ բեռից՝ այս վեպից, որ մյուս գրություններիս շատ է խանգարում: Դեպի Դաշնակցությունը, որ վեպի մթնոլորտն է, հեղինակի կողմից անաչառ, օբյեկտիվ վերաբերմունք կա: Մի խոսքով՝ կտեսնեք»[62]: Վեպը մաս-մաս տպագրելու որոշումը գրողը վերահաստատում է Վարդգես Ահարոնյանին 1924 թ. հունվարի 18-ին գրած նամակում[63]:

««Ուստա Կարոյի» առաջին գլուխը գնաց. երևի «Հայրենիք»ի Դեկտեմբերի կամ Հունվարի թվին մեջ կլինի»[64],- գրում է Իսահակյանը Երվանդ և Վերժինե Խաթանասյաններին 1924 թ. դեկտեմբերի 3-ի նամակում: Այս գլուխը Դարբինյանը հրատարակում է «Հայրենիքի» 1925 թ. հունվարյան համարում[65]:

1924 թ. դեկտեմբերի 10-ին Ռ. Դարբինյանին գրած նամակից հայտնի է դառնում, որ Իսահակյանը «Հայրենիքին» է ուղարկել վեպի երկրորդ («Ուստա Կարոյի և Զա-

---

62 Նժ 14 հատորով, հ. 13, էջ 515-516: Հատորում նամակը թվագրված է 1923 թ., սակայն, ըստ բովանդակության, այն գրվել է 1924 թվականին:

63 Նժ 14 հատորով, հ. 14, էջ 84

64 Նույն տեղում, էջ 59:

65 «Հայրենիք», 1925, թիվ 3, հունվար, էջ 1-8:

վուշի Նախճըվան դարձը»[66]) և երրորդ («Շեկոյենց Օսկանի տունը»[67]) գլուխները, իսկ չորրորդ գլուխը («Ուստա Կարոյի ժամացույցը և վեճը գյումրեցի վաճառականների հետ»[68]) պատրաստ է[69]: 1925 թ. փետրվարի 2-ին Իսահակյանը «Հայրենիքին» է ուղարկում վեպի հինգերորդ («Ովքեր էին Ուստա Կարոն և Չավուշենց Փիլոսը»[70]) գլուխը[71], իսկ մայիսի 6-ին վեցերորդ («Ուստա Կարոյի այցը սանամայրերին»[72]) գլուխը[73]: Եվս երեք գլուխ նույն տարվա ընթացքում տպագրվեց «Հայրենիքում»՝ «Ծերերը»[74], «Բուլիկենց ամբարը և Ղանդահարի բազարը»[75] և «Ակոռա Տեր Մաթոսը և Խաչավոր Ադամ ամին»[76]:

Մինչ Իսահակյանը, ըստ պայմանավորվածության, Դարբինյանին էր ուղարկում վեպի մշակված գլուխները, «Հայրենիք» օրաթերթի[77] հունվարի 28-ի համարում, դեռ վեպի տպագրությունը չսկսած, լույս է տեսնում Մերուժան Պարսամյանի ակնարկը ամսագրում մեկ տարվա կտրվածքով տպագրված նյութերի մասին: Պարսամյանը ոչ միայն թերագնահատում է Իսահակյանի հրապարակումները, այլև գրողին ընդհանրապես. «Ա. Իսահակյանի

---

66 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 4, փետրվար, էջ 22-19:

67 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 4, փետրվար, էջ 26-99:

68 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 5, մարտ, էջ 22-19:

69 Եժ 14 հատորով, հ. 14, էջ 76:

70 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 6, ապրիլ, էջ 27-42:

71 Տե՛ս Եժ 14 հատորով, հ. 14, էջ 88:

72 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 9, հուլիս, էջ 15-29:

73 Տե՛ս Եժ 14 հատորով, հ. 14, էջ 107:

74 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 10, օգոստոս, էջ 19-22:

75 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 10, օգոստոս, էջ 22-29:

76 Լույս է տեսել «Հայրենիք», 1925, թիվ 11, սեպտեմբեր, էջ 16-28:

77 «Հայրենիք» օրաթերթի խմբագիրը նույնպես Ռ.Դարբինյանն էր:

Մելքոն Վարժապետը այս տեսակի փորձ մըն է, քաղաքներեն ավելի գյուղերու հատուկ դեմք մըն է վարժապետը, այդ աշխարհին հեղինակությունն իսկ: Թլկատինցիին սիրած թիփն է վարժապետը, միշտ հիշատակված իր գործերու մեջ անմոռանալի հաջողությամբ մը:

Սակայն, Իսահակյան իր արձակին մեջ չի դներ այն խնամքը, ոգին ու խորքը, զոր իր ժամանակին դրավ ան իր բանաստեղծություններուն մեջ: Նույնիսկ վերջին տարիներուն մեջ մամուլին հանձնած բանաստեղծական էջերն ալ ավելի իմաստասիրական քաղյակներ ու տողեր են:

Լիլիթը, որ երկրորդ անգամ ըլլալով լույս կտեսնե, անհաջող մեկ նմանությունը ըլլալ կթվի Ռուս գրագետ, Ալեքսանդր Կուպրինի Սուլամիթին, պահելով համեմատություններն ու բովանդակության տարբերությունները: Մարդը չի պիտի տիրանա կատարյալ գեղեցկության, Լիլիթին, անա ինչ որ ըսել կուզե Իսահակյան:

Իսահակյան ունի նաև հատված մը Ուստա Կարո իր անտիպ վեպեն, մեկ գլուխը «Բագրանի ուխտ»են: Ուստա Կարոյի ու Սոնայի, երկու գյուղացիներու, սերը կներկայացնե այդ հատվածը: Դժվար է անշուշտ կարծիք հայտնել վեպի մը մասին, որուն մեկ հատվածը ունինք միայն մեր աչքին առջև»[78],- գրում է Պարսամյանը:

Այս հրապարակումը վշտացնում և զայրացնում է Իսահակյանին միտումնավոր բնութագրումների պատճառով այն աստիճան, որ նա որոշում է այլևս չաշխատակցել «Հայրենիքին», քանի որ Հակոբ Օշականի շուրջ համախմբված գրողներն ու գրագետները, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա շարունակում են իրենց արշավը թե՛

---

[78] Մկրտիչ Պարսամյան, ««Հայրենիք» ամսագիրը, Բ. տարի (թիվ 1-12)», «Հայրենիք» օրաթերթ, 1925, հունվար 28, թիվ 3874, էջ 3:

իր, թե՛ արևելահայ գրողների դեմ: 1925 թ. փետրվարի 12-ին Ռ. Դարբինյանին հասցեագրված նամակում Իսահակյանը գրում է. «Այս նամակը պիտի չգրեի, եթե Մ. Պարսամյանի գրախոսականը («Հայրենիք» ամսագրի մեջ) ոտիթ չտար: Ես առհասարակ ուշք չեմ դարձնում իմ մասին եղած գրախոսականների վրա: Ամենալավ քննադատը ես ինքս եմ իմ գրվածքների մասին: Դրա համար էլ, օրինակ, երբեք ականջ չեմ կախում Օշականի տարիներից ի վեր իմ մասին գրածներին: Նախ և առաջ՝ գիտեմ թրքահայ գրողների փչացած, ֆրանսացած ճաշակը: Գիտեմ Օշականի ամբարտավան բնավորությունը, նրա հատվածական աչառությունը և իմ դեմ ունեցած թշնամությունը, որ վաղուց է, այն օրվանից, երբ Պոլիս էի և քննադատում էի նրանց սիմբոլիզմն ու ֆրանսական գրականության կողոպուտը՝ նրանց մեծ ու փոքր գրողների կողմից: Ճշմարտությունն այն է, որ եթե ես, Հ. Թումանյանը կամ Հ. Հովհաննիսյանը օգտվում ենք հայ ժողովրդի ոճերից, ձևերից, այն մտածումով թե՝ հայ տոհմիկ գրականություն ենք մշակում, իսկ թրքահայ գրողները նույնը անում են ֆրանսական և օտար գրականություններից: Եթե ժամանակ ունենամ, ցույց կտամ, թե Վարուժանը, Սիամանթոն, Մեծարենցը և մյուսները, նրանց մեջ էլ մեր սիրելի Վ. Տերյանը, ի՛նչքան են կողոպտել Վերհարնին, Վերլենին, Բոդլերին, Կարդուչիին, Լեոպարդիին, իսկ Վահան Տերյանը, բացի այդ, նաև ռուս Բալմոնտին, Բրյուսովին, Մերեժկովսկիին և.: Չարժե այդ մասին խոսել: Թո՛ղ հրճվեն, ճաշակի հարց է»[79]:

Իսահակյանին հատկապես վիրավորել էր Դարբինյանի պահվածքը՝ որպես խմբագրի. «եթե դու համամիտ ես նրանց հետ, իբրև խմբագիր «Հայրենիք» թերթերի, ուր

---

[79] Նժ 14 հատորով, հ. 14, էջ 97-98:

արդար վերաբերում չկա իմ դեմ ազատ կարծիքի դիմակի տակ, ստիպված եմ իմ աճումը հաճել նրանց էջերից, որքան էլ որ դա ցավ պատճառե քեզ: Եվ, վերջապես, քեզ համար էլ, իբրև խմբագրի վիրավորական է, որ դու առաջնակարգ տեղ ես տալիս մի գրողի, որի գրվածքները մյուս էջերում ժխտվում են: Ո՞ւր է մնում խմբագրի աչքը, ճաշակը, գիտությունը: Խմբագիրը ո՞րի հետ է համաձայն, ի՞նչ է նրա կարծիքը: Վերջապես, Աստված բոլորիդ բարի տա: Հայությունը երկու ազգից է կազմված՝ իրար ատող, իրար չհասկացող: Սա գալիս է միանգամայն ինձ համոզելու, որ իմ տեղը Արագածի լանջերի վրա է, ինձ ծնող ու ինձ հասկացող ժողովրդի մոտ...»[80]:

Այսուամենայնիվ, վեպի գլուխները շարունակաբար տպագրվում են «Հայրենիքում», թեև, կարծում ենք, այս անբարեհաճ վերաբերմունքն էր պատճառներից մեկը, որ Իսահակյանը տարեվերջին, ուղարկած գլուխների տպագրությունից հետո դադարեցրեց աշխատակցել «Հայրենիքին»:

Այսպես ավարտվեց «Ուստա Կարո» վեպի գլուխների տպագրության ընթացքը:

Այսպիսով 1913-1925 թթ. հեղինակը հրատարակել է «Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակից 12 ամբողջական և մեկ հատվածական գլուխ և երկու «հեղինակային շեղում», ընդամենը 16 հրապարակում, քանի որ գյումրեցի վաճառականների մասին գլուխը հրատարակել է երկու անգամ՝ «Արեգում» (1922) և «Հայրենիքում» (1925): Ստորև ներկայացնում ենք այդ հրապարակումների ցանկը ժամանակագրական կարգով.

---

[80] Նույն տեղում, էջ 99-100:

1. **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ** (Մի գլուխ «Ուստա Կարո» ամտիպ վեպից) («Գեղարվեստ», 1913, թիվ 5, արտասահմանյան բացառիկ թիվ 1, էջ 75-82): Այնուհետև՝ ԱԷ, 1963:

2. **ԱԾՈՒՂ ՎԾՏԱԼԻԻ ԶՐՈՒՅՑԸ** (հատված «Ուստա Կարոյից»), («Արեգ», 1922, թիվ 2, էջ 69-71):

3. **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ** (Մի գլուխ «Ուստա Կարո» ամտիպ վեպից («Արեգ», 1922, թիվ 8, օգոստոս, էջ 469-475): Այնուհետև՝ ԸԵ, 1948 և ԵԺ 1951, հ. 3):

4. **ԱՂՋԿԱ ԱՄՐՈՑԸ** («Արեգ», 1922, թիվ 10, էջ 589-590):

5. **ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ** («Հայրենիք», 1923, թիվ 6, ապրիլ, էջ 4-19) - այս հրապարակման մեջ հեղինակը չի նշում, որ բնագիրը «Ուստա Կարո» վեպից է: Հետագայում վերահրատարակելով այս գլուխը (ԵԺ, հ. 3, 1951 թ.)՝ Իսահակյանը ընդմիջարկված ավելացրել է Ուստա Կարոյի ներկայությունը Կապիտան Ղազարի պատմությանը, և այս բնագիրը, ըստ ծրագրային մի գրառման, ներառել է Ուստա Կարոյի Գյումրի կատարած այցելությունը նկարագրող գլուխների մեջ: Այնուհետև՝ ԸԵ 1940, ԸԵ 1948, ԵԺ 1951, հ. 3:

6. **ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ** («Հայրենիք», 1923, թիվ 11, նոյեմբեր, էջ 3-7):

7. **«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ԱՆՏԻՊ ՎԵՊԻՑ (ՄԻ ՀԱՏՎԱԾ «ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ» ԳԼՈՒԽԻՑ)** («Հայրենիք», 1924, թիվ 7, մայիս, էջ 2-9) - այս բնագիրը «Բագրանի ուխտը» գլխի վերջին հատվածն է: «Բագրանի ուխտը» գլխի մի ամբողջական տարբերակ, որը կրճատումներով հրատարակել է Ա. Ինճիկյանը, պահվում է ԳԱԹ, ԻՖ, 330-II, էջ 1-40: Այնուհետև՝ ԵԺ 1951, հ. 3:

8. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Ա. Գլուխ / **ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ՊԱՏՎԻՆ** («Հայրենիք», 1925, թիվ 3, հունվար, էջ 1-8):

9. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Բ. Գլուխ / **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ և ՉԱՎՈՒՇԻ ՆԱԽՃԸՎԱՆ ԴԱՐՁԸ** («Հայրենիք», 1925, թիվ 4, փետրվար, էջ 22-19):

10. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Գ. Գլուխ / **ՇԵԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ** («Հայրենիք», 1925, թիվ 4, փետրվար, էջ 26-99):

11. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Դ. Գլուխ[81]/ **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԺԱՄԱՅՈՒՅՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ** («Հայրենիք», 1925, թիվ 5, մարտ, էջ 22-19): Այնուհետև՝ ԵԺ 1951, հ. 3:

12. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Ե. Գլուխ / **ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՉԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ** (Հայրենիք, 1925, թիվ 6, ապրիլ, էջ 27-42):

13. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Զ. Գլուխ / **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ** (Հայրենիք, 1925, թիվ 9, հուլիս, էջ 15-29): Այնուհետև՝ «Երևան» օրաթերթ, ԱԷ, 1963:

---

[81] Ինքնագրերում սա վեպի Դ. գլուխն է, իսկ «Հայրենիքում» Բ. գլուխը: Պատճառն այն է, որ Իսահակյանին չի բավարարել ինքնագրերում եղած Բ. գլուխը («Թե ովքեր էին Ուստա Կարոն և Չավուշենց Փիլոսը»), որը հետագայում նա հիմնովին վերաշարադրել և «Հայրենիքում» տպագրել է՝ որպես վեպի Ե. գլուխ («Հայրենիք», 1925, N 6, էջ 27-42): Այս տեղափոխության հետևանքով «Հայրենիքում» թյուրիմացաբար չեն փոխել ինքնագրի գլխակարգությունը և Բ. գլխից հետո տպագրված հաջորդ գլուխը թողել են ըստ ինքնագրի (գլխակարգված է «Դ. գլուխ» «Գ գլուխ»-ի փոխարեն) և այդպես շարունակել տպագրությունը:

14. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Գլուխ Զ. (շարունակություն) / **ԾԵՐԵՐԸ** («Հայրենիք», 1925, թիվ 10, օգոստոս, էջ 19-22): Այնուհետև՝ ԱԷ, 1963:

15. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Է. գլուխ / **ԲՈՒԼԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ** («Հայրենիք», 1925, թիվ 10, օգոստոս, էջ 22-29): Այնուհետև՝ ԱԷ, 1963:

16. Ուստա Կարո և Օրթե Հարութ / Գլուխ Ը. / **ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ** («Հայրենիք», 1925, թիվ 11, սեպտեմբեր, էջ 16-28): Այնուհետև՝ ԱԷ, 1963:

«Հայրենիքի» սեպտեմբերյան համարից հետո Իսահակյանը ընդհատում է վեպի տպագրությունը: Գրողի ուժերը ջլատվել էին լարված աշխատանքից, ինչի մասին նա 1924-1925 թթ. նամակներում անընդհատ հայտնում էր իր ընկերներին և բարեկամներին[82]: Մյուս կողմից՝ Իսահակյանին չէր բավարարում անգամ տպագրված գլուխների որակը՝ թե՛ լեզվաոճական, թե՛ կառուցվածքային և թե բովանդակային առումներով: Բացի այդ՝ գնալով ծանրանում էր Իսահակյանի ֆիզիկական վիճակը: Խմբագիրների հոնորարները ծայրը ծայրին հասցնելուն հազիվ էին բավականացնում: Իր մեծածավալ վեպը, որ նա ցան-

---

[82] «Հազիվ կարողանում եմ «Ուստա Կարոյի» տակից դուրս գալ, ամսե ամիս մի-մի գլուխ հասցնելով «Հայրենիք»ին» (Վահան Նավասարդյանին, 1925, 21 հուլիսի) (ԵԺ 14 հատորով, հ. 14, էջ 110): «Ռոնի, զորով եմ պարապում, այսինքն «Ուստա Կարոն» գրում, այնքան ստվար գործ է», «Ուստա Կարոն» խեղդում է ինձ, ամեն բան ես եմ անում, և արտագրությունը, որ սպանիչ է» (Երվանդ Ռոչարին, 1925, 31 հուլիսի) (ԵԺ 14 հատորով, հ. 14, էջ 116-117):

կաՆում էր գրքով տպագրել, չիրականացավ: Վեպին առնչվող գրառումների հազարավոր էջերը և դրանք գեղարվեստական տեքստ դարձնելու աշխատանքի մեծությունը հուսահատեցնում էին գրողին: Եվ ամենակարևորը՝ Իսահակյանը քաջ գիտակցում էր, որ այն միջավայրը և մարդիկ, որոնք իր վեպի ատաղձն էին, 1915-1922 թթ. ցեղասպանության հետևանքով բնաջնջվել էին, հայրենիքը բզկտվել էր բոլշևիկների և թուրքերի դաշինքի հետևանքով՝ աշխարհի անտարբեր հայացքի ներքո: Հուսահատական այս ալիքի վրա Իսահակյանը արժեզրկված և անիմաստ է համարում գրողի աշխատանքը: 1925 թ. հոկտեմբերի 17-ի Ռ.Դարբինյանին Վենետիկից ուղարկված նամակում նա գրում է. «Բացարձակ մենակ եմ այստեղ, ընկեր չունեմ, բարեկամ չունեմ, խոսակից չունեմ: Օրերով մարդու հետ չեմ խոսում, օրերով մոայլ եմ, լուռ, անքուն, ջղային: Պառկում եմ անկողնուս վրա և ծխում, միայն ծխում: Ամիսներից ի վեր ընդհատել եմ իմ «Ուստա Կարոն»: Աչքիս բան չի երևում: Զզվել եմ կարդալուց էլ, գրելուց էլ, ամեն բանից... Մտքիս մեջ մահվան գաղափարն է սևեռված, զգացումներիս կեդրոն է դարձել նա՝ մահը»[83]:

Նույն թվականի դեկտեմբերին վիճակն ավելի է ծանրանում. «Թերթիդ համար մի մեծ բան էի պատրաստում, չկարողացա տակից ելնել. ինչպես և «Ուստա Կարոյի» մշակումը երեսի վրա թողի: Իմպուլս չկա, ոգևորություն չկա, ո՞ւմ համար ես գրում, շուրջս մարդ չկա, հետը խոսեմ»,- գրում է Իսահակյանը Վահան Նավասարդյանին[84]:

Հոգեկան ճգնաժամը հաղթահարելու համար Իսահակյանը արդեն 1925 թ. կեսերից որոշում է վերադառնալ

---

[83] Նշ 14 հատորով, հ. 14, էջ 120:

[84] Նույն տեղում, էջ 129:

հայրենիք՝ հայրենի ավիշը ստանալու, տպավորությունները թարմացնելու նպատակով: Ի դեպ, Եղիշե Չարենցը, որը 1925 թ. Վենետիկում հանդիպումներ է ունենում Իսահակյանի հետ, «Էլեգիա գրված Վենետիկում» բանաստեղծության առաջին հատվածում գրեթե բառացի ներկայացնում է Իսահակյանի մտքերն ու տեսակետները, որոնք առկա են նաև այդ թվականների Իսահակյանի գրառումներում: Չարենցի՝ Իսահակյանի ծանր վիճակին տրված բանաստեղծական ձևակերպումները նույնպես միանգամայն համահունչ են Իսահակյանի՝ իր մասին նամակներում տրված բնութագրումներին.

Եվ հուսահատ ու որբ կլինես
Ինչպես հեռու այս Վենետիկում... [85]

Այս հանդիպումների ընթացքում Իսահակյանը Չարենցի համար կարդում է «Ուստա Կարո» վեպի այն հատվածները, որտեղ չի երևում վեպի «անտիբոլշևիզմը»: «Վեպիս համար պետք է մի 6 ամսով լինեմ Հայրենիք, և դրա համար բոլշևիկների հետ կապեր եմ պահում, իսկ վեպիցս հետո նրանք գլուխս կտրելու հրաման պիտի արձակեն, որովհետև անտիբոլշևիկ վեպ է (այս չասացի Չարենցին, մյուս կտորները կարդացի)»,- գրում է նա Վահան Նավասարդյանին[86]:

Չարենցին շատ են ոգևորում և հիացնում վեպի այդ հատվածները. «Չարենցը հիացավ, զարմացավ, և դասեց հավասար Դոն-Քիշոթի, «Война и мир», Հոմերոսի

---

[85] Եղիշե Չարենց, Երկեր. Եր. , 1983, էջ 296:

[86] Նժ 14 հատորով, հ. 14, էջ 112:

հետ»[87]: «Չարենցը անկեղծ ոգևորված էր «Ուստա Կարոյով».- գրում է Իսահակյանը 1925 թ. հուլիսի 31-ին Երվանդ Քոչարին հասցեագրված նամակում,- նա ճիշտ ըմբռնեց իմ հղացումը - տալ էպոս, ուր ամեն բան կա մեջը և պիտի լինի ամեն բան, ողջ դարը, մտայնությունը, դասակարգեր, մարդիկ՝ կենդանի, ոեալ և մտքերի, գաղափարների հորդ ծով... <...> Չարենցը հետաքրքիր տղա է, և տաղանդավոր է, և զարգացած է, և լավ ընկեր է: Սիրեցի նրան»[88]:

Չարենցի հետ այս հանդիպումներն ու զրույցները, կարծում ենք, ինչ-որ չափով նպաստեցին, որ Իսահակյանի հայրենիք վերադառնալու որոշումն ամրապնդվի: Այդ մասին վկայում է նաև Վիգեն Իսահակյանը. «Սարյանի, Չարենցի և Մակինցյանի՝ Վենետիկ գալը հորս սրտում արթնացրել էր հայրենիքի կարոտը և նրա մտքում ամրացել էր վերադառնալու գաղափարը, որ

---

87 Եժ 14 հատորով, հ. 14, էջ 111: Իսահակյանի «Ուստա Կարո» և Չարենցի «Երկիր Նաիրի» վեպերի միջև հղացման և կառուցվածքի որոշակի նմանություն կա այն իմաստով, որ Չարենցը ևս փոքր ծավալ և ընդգրկում ունեցող համայնապետկերային վեպ է գրել, ուր դրվագային հաջորդականությամբ ստեղծվում է Կարսի ընդհանուր պատկերը: «Ուստա Կարո» վեպի Գյումրին նկարագրող մեծածավալ հատվածում հատկապես, ուր Իսահակյանը պատումը կառուցել է հիմնականում տիպաժների շարքով (Կապիտան Ղազար, Մելքոն վարժապետ, Տեր-Մլեհ, Բուլուլ Մարգարե, Կենդանի Գազեթ, Խելառ Տիգրան, Ուստա Սհակ և այլն) հղացման և կառուցվածքի նմանությունն առավել քան ակնհայտ է: Հավանական է, որ Իսահակյանի այս հայեցակարգն է նաև հիացրել, զարմացրել և ոգևորել Չարենցին:

88 Եժ 14 հատորով, հ. 14, էջ 116:

արդեն իրական ձև էր ստանում»[89]: Արդեն 1926 թ. հունվարին Իսահակյանը որոշակիորեն սահմանում է հայրենիք վերադառնալու պատճառն ու նպատակը. «Ուժերս կեդրոնացած են «Ուստա Կարոյի» վրա, որ նորից եմ գրում և պիտի անպատճառ իրական միջավայրով ներշնչվիմ - Հայաստանում. տեսնեմ ցորենի արտերը, մեր ոչխարները, աշըղները, գեղացիները, մեր մեծաքանչ լեզուն լսեմ, փոշոտ ուղիներով ոտքով քայլելով գյուղե գյուղ... ինձ թվում է, հավատում եմ, թե Հայաստան գնալով, կուժեղանամ, կլցվեմ, կկրկնապատկվեմ»[90]: Իսկ նույն թվականի ապրիլին հաստատում է իր որոշումը. «Որոշել եմ գնալ, մի 6 ամիս թափառել Հայաստանում, տեսնել իրերն ու մարդիկ, վերջացնել տնտեսական հարցերս, առկախ խնդիրները եղբայրներիս հետ, և «Ուստա Կարոյիս» համար վերջնականապես ստուգել պատկերներն ու տիպերը, և բարբառները»[91]: Եվ վերջապես 1926 թ. օգոստոսին Իսահակյանը Ռուբեն Դարբինյանին նույն հիմնավորումներով է պատճառաբանում Հայաստան մեկնելը. «Ես գնում եմ: Նպատակներ ունեմ: «Ուստա Կարոյի» համար վերստուգել միջավայրը, իրերը, մարդիկ, լեզուն: Եվ աչքովս տեսնել՝ ո՞ւր է գնում հայ ժողովուրդը, ո՞ւր են տանում նրան: Ի՞նչ է սպասում, ի՞նչ է լինելու: Ես հին հայրենասեր եմ, համառ, անվերապահ: Սոցիալիզմը այնչափով եմ ընդունում, ինչ չափով որ նա չի վնասելու ազգային իդեալներին: Դու խելացի տղա ես, կհասկանաս ինձ»[92]:

---

[89] **Վիգեն Իսահակյան**, Հայրս, Եր., 2011, էջ 223:

[90] Նժ 14 հատորով, հ. 14, էջ 139:

[91] Նույն տեղում, էջ 156:

[92] Նույն տեղում, էջ 168:

Այսպիսով, Հայաստան վերադառնալու պատճառներից մեկը «Ուստա Կարո» վեպը ավարտելու համար ստեղծագործական նոր լիցքեր ստանալն էր:

1926 թ. աշնանը մեկնելով Խորհրդային Հայաստան՝ Իսահակյանը իր հետ չի տանում «Ուստա Կարո» վեպի ձեռագրերը, և այնտեղ մնալով ավելի քան երեք և կես տարի, չի զբաղվում վեպի գլուխներ գրելով կամ մշակելով:

Բոլշևիկյան Հայաստանում Իսահակյանը հստակորեն գիտակցում է, որ «Ուստա Կարո» վեպը ոչ միայն չի համապատասխանում, այլև ամբողջությամբ դեմ է խորհրդային գաղափարախոսությանը: Այն թեմաները, որ գրողը մշակել էր վեպում, այն վերլուծությունները, տիպերն ու կերպարները, որ ստեղծել էր, ի վերջո վեպի իմաստաբանությունն ամբողջությամբ փակուղի տակ էին, չէին խրախուսվում, ավելին՝ մերժվում էին և պիտակավորվում: «Գրելիքներ ունիմ, նոր և հին, «Ուստա Կարոն» մնաց անկատար, բայց ո՞ւր պիտի ավարտեմ, Հայաստանում կարելի չէ - չեն հրատարակի այնտեղ»[93],- գրում է Իսահակյանը 1930 թ. օգոստոսի 30-ին Փարիզից: Վեպը Խորհրդային Հայաստանում հրատարակելու միակ ելքը գրողի ողջ հղացման, գաղափարների, կերպարների փոփոխությունն էր ըստ ռեժիմի պահանջների, ինչը Իսահակյանը չընդունեց. «Բարոյական սահմանագծեր կան, որոնցից չեմ կարող անցնել, կան պատասխանատվություններ - ժողովրդի առջև, իտեալների առջև, խղճմտանքի առջև: Այսպիսի ծանր հարցերի տակ ճզմված եմ և տակավին ելք չեմ գտնում: Նույն դրության մեջ էի և Հայաստանում»[94]:

---

[93] Նույն տեղում, էջ 288:

[94] Նույն տեղում:

Իսահակյանը վերջնականապես Հայաստանում հաստատվելուց հետո այս թնջուկին շատ պարզ լուծում տվեց: Նա պարզապես ոչ մի նոր գլուխ չհրատարակեց վեպից, թեև ուներ պատրաստի՝ թեկուզև ամբողջապես չմշակված գլուխներ: Եվ պատահական չէ, որ այս շրջանում գրողն իր ժողովածուներում որոշակի հեղինակային խմբագրումներով և «վտանգավոր» տողերի և հատվածների կրճատումով վերատպեց նախկինում տպագրած 14 գլուխներից երեքը միայն, որոնք իրենց բովանդակությամբ չեզոք էին և չէին կարող միտումնավոր մեկնություններ առիթ տալ: Դրանք են.

1. **ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ** (Մի գլուխ «Ուստա Կարո» անտիպ վեպից («Արեգ», 1922, թիվ 8, օգոստոս, էջ 469-475): Այնուհետև՝ ԸԵ, 1948 և ԵԺ 1951, հ. 3):

2. **ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ** («Հայրենիք», 1923, թիվ 6, ապրիլ, էջ 4-19): Այնուհետև՝ ԸԵ 1940, ԸԵ 1948, ԵԺ 1951, հ. 3:

3. **«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ԱՆՏԻՊ ՎԵՊԻՑ (ՄԻ ՀԱՏՎԱԾ «ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ» ԳԼՈՒԽԻՑ)** («Հայրենիք», 1924, թիվ 7, մայիս, էջ 2-9): Այնուհետև՝ ԵԺ 1951, հ. 3:

Այստեղ հարկ է խոսել այն հեղինակային կրճատումների մասին, որոնք կատարել է գրողը այս երեք և մնացած ինը գլուխներում՝ խորհրդային կարգերում հրատարակելու հեռանկարով: Դրանք կարելի է ըստ բովանդակության բաժանել երեք խմբի.

1. Իսահակյանը կրճատել է բոլոր այն դրվագներն ու բնութագրումները, որտեղ հանդիպում են **թուրք, քուրդ, վրացի** բառերը:

2. Խսահիակյանը կրճատել է բոլոր այն դրվագներն ու բնութագրումները, որտեղ հանդիպում են **դաշնակ, դաշնակցություն, դաշնակցական, ենթակոմիտե** բառերը:

3. Խսահիակյանը կրճատել է բոլոր այն հատվածները, որոնք, այսպես կոչված, «բաց տեսարաններ» են պարունակում (օրինակ Ուստա Կարոյի և Սոնայի հանդիպումը նկարագրող որոշ հատվածներ):

Պարզ է, որ սրանք հարկադրական խմբագրումներ և կրճատումներ էին՝ պայմանավորված հայկական հարցի արգելափակմամբ և ժողովուրդների բարեկամության մասին գաղափարների բոլշևիկյան քարոզով: Բոլոր նման կրճատումները այս հրատարակության մեջ վերականգնված են:

Այդուամենայնիվ, Խորհրդային Հայաստան վերադառնալով, Խսահիակյանը, վեպը չկորցնելու համար, ծրագրում է գրել «Ուստա Կարոյի» Բ. հատորը, որը պետք է սկսվեր առաջին հատորի վերջին՝ «Հեչը» գլխից հետո: Այս հատորում Ուստան և Զավուշը ընդունում են բոլշևիզմը և աշխատում Հայաստանի վերածնման համար.

«Նրանք ընդունում են բոլշևիզմը, հավանում գաղափարախոսությունը, ոգևորվում Հայաստանի իրականացման փաստով:

Լսում են ճառեր, ժողովներ, լսում են և դժգոհ ձայներ, քննադատումներ:

Աշխատում են 1922 թվին, երբ Ուստան 55 տարեկան էր, իսկ Զավուշը՝ 52, Սարդարապատում, ճամբա են շինում, առու փորում, կամուրջ կապում:

Զավուշն ասում է, որ Հայաստանը պստիկ է, մեծ մասը տարած, Հայը չի հավքի էս կտոր հողի վրա:

Ուստան ասում է.

- Սո՛ւս. գլուխդ կախե, աշխատե: Ամեն բան - կամաց-կամաց: Ամեն քար որ կդնենք՝ Հայաստանը կմեծնա. ամեն բան որ կզարկենք, Հայաստանը կխոշորնա. ամեն ճամբա որ կբանանք՝ Հայաստանը առաջ կերթա. ամեն աղբյուր որ կբերենք՝ Հայաստանը կամրանա. ամեն ծառ որ կտնկենք՝ Հայաստանը կշատնա: Ամեն օր կաճենք, կմեծնանք, նպատակին կմոտենանք...

Այս հատորի մեջ կգրվեն պատերազմի արհավիրքները, սարսափները, աշխարհի գազանությունները, պետությունների խոստումներն ու դրժումները, Եվրոպայի դեմքը, կապիտալիզմի չարիքները, սոցիալիզմի անհրաժեշտությունը... և այլն, և այլն...»[95],- գրում է Իսահակյանը:

Կարծում ենք, սա վեպը փրկելու արհեստածին ծրագիր էր, որը չիրականացավ. համենայն դեպս, «Ուստա Կարոյի» արխիվում այս ծրագրին առնչվող ոչ մի գրառում չկա: Խորհրդային միջավայրը չէր հանդուրժի կամ պարզապես կարգելեր այնպիսի մի բնագրի լույսընծայումը, ուր մի կողմից տրվում էր «թալան, ավեր, ջարդ, կոտորած, թուրքերի ներխուժում, պատերազմ, փախուստ», մյուս կողմից՝ «Հայաստանի հաստատում, քաղաքացիական կռիվներ և բանվորա-գյուղացիական պետություն, բոլշևիզմ»[96]:

Գրողի մահից հետո «Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակի բոլոր տասներեք տպագրված գլուխները 1975 թ. Ա. Ինճիկյանը «Գլուխներ «Ուստա Կարո» վեպից» ընդհանուր վերնագրով և կարճառոտ մատենագիտական տեղեկանքներով մեկտեղել է Իսահակյանի երկերի ժողո-

---

[95] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 22-24:

[96] Նույն տեղում:

վածուի վեցհատորյակի չորրորդ հատորում[97]: Այս գլուխներից մեկը՝ «Բագրաևի ուխտը», Ինճիկյանը հրատարակել է ինքնագրից, նշելով, որ ««Հայրենիքի» տեքստի հիմնովին վերամշակած տարբերակն» է: Իրականում «Հայրենիքում» տպագրվել է, ինչպես Իսահակյանն է նշել ենթավերնագրում, «Մի հատված «Բագրաևի ուխտը» գլխից»: Եվ իրոք, ԳԱԹ, ԻՖ, 330-II գույքահամարով ինքնագրում «Ուստա Կարոն Բագրաևի ուխտին» վերնագրված հատվածը «Բագրաևի ուխտը» գլխի վերջին մասն է: Ինճիկյանը բաց է թողել ԻՖ, 330-II ինքնագրի այդ հատվածը և հաջորդիվ դրել է նույն այդ հատվածի «Հայրենիքում» տպագրված բնագիրը՝ որպես առանձին գլուխ: Այդպիսով, վեպի մեկ գլուխը տրոհվել է երկու մասի: Այնինչ «Հայրենիքում» տպագրված հատվածը նույն այս գլխի վերջին հատվածի վերամշակումն է: Հետևաբար այս գլուխը չի կարելի համարել վերամշակում: Ինքնագրի այդ վերջին հատվածը, որ Ինճիկյանը բաց է թողել, այդ հատվածի նախնական տարբերակն է, իսկ վերամշակվածը «Հայրենիքում» տպվածն է: Այս առաջին հատվածը հրատարակելով՝ Ա.Ինճիկյանը կրճատել է նաև բնագրի գրեթե մեկ քառորդը, հատկապես դժվարընթեռնելի հատվածները: Հետևաբար, «Հայրենիքում» տպված «Մի հատված «Բագրաևի ուխտը» գլխից» բնագիրը «Բագրաևի ուխտը» գլխի վերջին հատվածի վերամշակված տարբերակն է և ոչ թե առանձին գլուխ:

Ինճիկյանն այս հրատարակության մեջ ավելացրել է ևս երեք անտիպ գլուխ՝ «Ուստան Տիկորում»[98], «Հարութը»[99] և «Հարութը Հրեղենի մոտ (երազ)»[100]:

---

[97] **Ավետիք Իսահակյան**, Եժ 6 հատորով, հ. 4, էջ 175-482:

[98] Նույն տեղում, էջ 416-446:

2000 թ. «Ուստա Կարոյի»՝ Ա.Ինճիկյանի կազմած այս հրատարակությունը նույնությամբ արտատպվել է[101], ուր կազմողները ավելացրել են ևս երեք անտիպ գլուխ՝ «Զրույց Զարդար անայի հետ»[102], «Ասոյի մահից հետո»[103] և «Սարը գնալը»[104]: Թե՛ Ինճիկյանի և թե՛ 2000 թ. հրատարակության բոլոր բնագրերում տեղ գտած սխալ ընթերցումներից և բացթողումներից տողատակերում ներկայացրել ենք միայն բովանդակային խաթարումներ առաջացնողները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սկսած 1975 թ. այդ հրատարակություններն են գիտական շրջանառության մեջ եղել և այդ հրատարակությունների բնագրերն են դարձել ուսումնասիրության առարկա:

Ընդհանուր հաշվարկով մինչև այժմ տպագրվել է «Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակի 20 գլուխ, որոնցից միայն 14-ն է[105] հրատարակվել հեղինակի կենդանության օրոք: Մնացած վեց գլուխները հեղինակը չի զետեղել իր կենդանության օրոք հրատարակած ժողովածուներում:

---

[99] Նույն տեղում, էջ 447-474:

[100] Նույն տեղում, էջ 475-482:

[101] **Ավետիք Իսահակյան**, Ուստա Կարո, բնագիրը հրատարակության պատրաստեցին Աբաս Իսահակյանը և Սվիկ Իսահակյանը, Եր., «Ապոլլոն», 2000, 296 էջ:

[102] Նույն տեղում, էջ 241-248:

[103] Նույն տեղում, էջ 249-265:

[104] Նույն տեղում, էջ 265-283:

[105] Այս հաշվարկին ավելացրել ենք նաև 1935 թ. Փարիզի «Ապագա» թերթում Իսահակյանի հրատարակած «Տեր Մլեհ» պատմվածքը, որը նախապես եղել է «Ուստա Կարո» վեպի գլուխներից մեկը Գյումրին նկարագրող հատվածում:

Բ. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ԱՐԽԻՎԸ

«Ուստա Կարո» վեպի արխիվը պահվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում և իր ծավալով կազմում է Իսահակյանի արխիվի շուրջ 30 տոկոսը: Այն գրանցված է 172 թղթածրարներում ԻՖ, 285-II գույքահամարից մինչև ԻՖ, 447-II գույքահամարը, 5 գրանցման միավոր արձանագրված է արխիվի մշակման այլ բաժիններում և 8 գրանցման միավոր՝ Իսահակյանի արխիվի լրացուցիչ նյութերի գույքամատյանում: Ընդհանուր հաշվարկով ինքնագրերի ծավալը կազմում է շուրջ 8000 մեծադիր և փոքրադիր էջ: Բացի այդ, վեպին առնչվող բազմաթիվ հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ կան Իսահակյանի ծոցատետրերում: Այս գրառումների մի փոքր խմբաքանակ էլ պահվում է Իսահակյանի տուն-թանգարանի արխիվում: Գրառումներն արված են առանձին փոքր ու մեծ թերթիկների, մեծադիր էջերի և տետրերի, ծոցատետրերի մեջ՝ մատիտով, սև, կարմիր կամ կապույտ մելանով: Ինչպես նշել ենք, Իսահակյանը այդ գրառումների մի մասը խմբավորել է առանձին թղթապանակներում՝ ըստ թեմաների: Մնացած մասը խմբավորում չունի և վերնագրված է «Նյութեր «Ուստա Կարո» վեպի համար»:

Գրառումների մի մասն առնչվում է վեպի առաջին տարբերակին, իսկ մյուս՝ մեծագույն մասը՝ երկրորդ տարբերակին: Այս հսկայածավալ ինքնագրերի հրատարակությունը սկսելուց առաջ նախ ուսումնասիրել ենք բոլոր այդ գրառումները՝ խմբավորելու, դասակարգելու և հաջորդական հատորներով ներկայացնելու համար, քանի որ վեպն, իհարկե, ավարտված չէ համակարգված շարադրանքի և վերջնական բնագրի ստեղծման առումով,

սակայն այն ավարտված է գրառումների մեջ: Ընդ որում ավարտված է մի քանի տարբերակով:

Խնդիրն այն է, որ Իսահակյանի յուրաքանչյուր առանձին գրառում ստեղծագործական ընթացքի առումով ավարտուն բնագիր է, և երբ համեմատում ես նույն թեմայի առանձին գրառում-շարադրանքները, ապա պարզ է դառնում, որ տարբերությունները կամ լեզվաոճական են, կամ մանրամասների մեջ հավելումներ են կատարվել, կամ էլ ծրագրային գրառումների ոճը փոխակերպվել է գեղարվեստական շարադրանքի, այսինքն՝ հղացման արձանագրությունները վերածվել են պատումի կամ պատումի հատվածական աղյուսների, որոնք, որպես ավարտուն բնագրային դրվագներ, կարելի է դյուրությամբ զոդել իրար՝ կառուցվածք ստանալու համար: Եվ քանի որ Իսահակյանը վեպի երկրորդ տարբերակը գրելիս փոխել էր հղացման ողջ հայեցակարգը, ապա կառուցվածքային հստակ կաղապար էր ձևավորել վեպը ամբողջացնելու համար: Այդ կաղապարը, ի տարբերություն առաջին տարբերակի, հետևյալն էր. նախ ներկայացնել թեման առանձին գլխով, այնուհետև ներկայացնել այդ թեմայի մեկնությունը՝ նույնպես առանձին գլխով:

Թեմաներն իհարկե շատ էին՝ գյուղի կենցաղն ու բարքերը՝ ծնունդից սկսած մինչև մահ՝ կնունք, հարսանիք, թաղում, սանամայրեր, քավորություն, «Դաշնակցություն, ռուս հեղափոխություն, թրքահայ ժողովրդի ջարդն ու փչացումը, տեղահանություն, բոլշևիզմ»[106], քաղաքային կյանքը, որ Իսահակյանը ներկայացնում է տիպաժների շարքով, հայկական հարց, թուրքեր, քրդեր, վրացիներ և այլն:

---

[106] Եժ 14 հատորով, հ. 14, էջ 111:

Այս բոլոր թեմաները մշակելիս Իսահակյանը ձգտում էր հասնել, իր բառով ասած, «ֆոտոգրաֆիկ» ճշգրտության ոչ միայն նկարագրական հատվածներում, այլև հերոսների խոսքում՝ որոշակի սկզբունքով կիրառելով բարբառների ճշգրիտ լեզվական ձևերը, արտահայտությունները, դարձվածներ, շրջասություններ, առածներն ու ասացվածքները: Սրանով է պայմանավորված բառերի, դարձվածների, խոսակցական ձևերի այն բազմաթիվ ցանկերի արձանագրումները, որ առկա են «Ուստա Կարոյի» արխիվում: Իսահակյանը դրանք հավաքել էր ոչ միայն ժամանակի գրականությունից, այլև, բանահավաքի նման, գրի էր առել ժողովրդի բերանից: Ըստ ծրագրային գրառումների, գրողը մտադիր էր «անհատականացնել» իր հերոսների և գործող անձանց խոսքը՝ յուրաքանչյուրին խոսեցնելով համաձայն իր բարբառի, միջավայրի և զարգացման աստիճանի: Այս առումով Իսահակյանը «Լեզվական հարցեր» վերտառությամբ հերոսների խոսքը «կարգավորող» մի մեծ ցանկ է կազմել՝ պատումնաստեղծության ընթացքում օգտագործելու համար.

«- Ձավուշի բարբառը արդեն քիչ է զանազանվում Ծիրակից, սակայն Ձավուշն էլ ենթարկված էր տեղական ազդեցությանը և Ուստային:

- Պոտոս Տացուն խոսում էր բարբառով. բայց Ծրջիկի հետ իր գիտցած գրական ձևով:

- Նույնը տիրացուն, որ ավելի գրագետ էր - և գրական աշխարհաբարով ավելի լավ է խոսում, քան Տացուն:

- Ուստան Ծրջիկի հետ աշխատում էր, ինչպես և Գյումրի, ավելի բարձր ոճով խոսել, եղնել բայի տեղ ընել ձևն էր գործածում:

- Թաթոսը գրական լեզվով էր խոսում, երբեմն խառնելով բարբառը:

- Շրջիկը մաքուր գրական:

- Գյումրեցիները ըստ տիպի:

- Հարութը կարող էր շատ լավ խոսել, չէր խոսում. միշտ բարբառով, միայն գործ էր ածում շատ գրքի բառեր, Ուստայի համար հաճախ շատ խրթին:

- Նոր տերտերները գրական-գրաբար:

- Հովիվները բարբառով:

- Գյուղացիները բարբառով:

Եվ այսպես՝ նայելով անձը, դիրքը, նրա զարգացման աստիճանին համապատասխան խոսցնել:

- Ռես Հոսեն, Պոլիս եղած, կրել էր Պոլսի ազդեցությունը:

Իսկ կինը խոսում էր զուտ մշեցիերեն:

Նույնպես զինվորները: Հլղաթը և Սաֆոն:

- Մելքոն վարժապետը՝ գրական:

- Ղազար-աղան՝ բարբառ ու գրական:

- Տեր Մլեն՝ բարբառ ու գրաբար:

- Ավագ-Սարկավագը՝ Պոլսի բարբառ և գրաբար:

- Կենդանի Գազեթը՝ բարբառ և գրական:

- Անիի վարդապետը՝ բարբառ և գրական:

- Բոշաները՝ Ախալքալակի բարբառ»[107]:

Այս ցանկը վկայում է, որ Իսահակյանը մտադրվել էր նաև «լեզվական համայնապատկեր» ստեղծել վեպում, ինչը, իհարկե, աննպատակ բարդ խնդիր էր, քանի որ ստեղծագործական ընթացքի տեսակետից հեղինակը պիտի լարված վերահսկողություն սահմաներ՝ յուրաքանչյուր

---

[107] ԳԱԹ, ԻՖ, 400-II, թերթ 5-6:

հերոսի և գործող անձի խոսքը, ըստ իր ընդունած սկզբունքի, կառավարելու համար: Դա է պատճառը, որ գրողը պատումի մի տարբերակ ստեղծելուց հետո հենց «լեզվական տեսակետից» անվերջ վերաձևում էր այն, խմբագրում, շտկում այն աստիճանի, որ, ի վերջո, բնագրային տվյալ միավորը վերածում էր նոր տարբերակի: Իհարկե, ոճավորման նպատակով կիրառվող այս հնարքը (բարբառների կիրառումը՝ որպես կերպարի անհատականացման միջոց), լրացուցիչ բարդություններ էր ստեղծում վեպի պատումը կառուցելու տեսակետից, քանի որ զուտ բարբառի կիրառումը կարող էր վնասել բնագրի մատչելիությանը, մյուս կողմից՝ գրողին մտահոգել է հեղինակային խոսքի և հերոսների երկխոսությունների լեզվի համատեղելիության խնդիրը այն առումով, որ բարբառը կամ տարբեր բարբառների ու գրական լեզվի համաժամանակյա կիրառությունը նույն պատումի մեջ նույնպես կարող է պարզապես անհասկանալի դարձնել պատումն ընդհանրապես: Անդրադառնալով այս խնդրին՝ Իսահակյանը Ռուբեն Դարբինյանին 1925 թ. մայիսի 20-ին գրած նամակում նշում է. «Անթիվ մտքեր, անթիվ գաղափարներ, հոսանքներ կան այնտեղ - Դաշնակցությունը, Հնչակը, Սոցիալ-Դեմոկրատը, կղերականը, պեսիմիզմ, օպտիմիզմ, քահանա, վարդապետ, ինժեներ, վարժապետներ, քուրտեր - մի խոսքով՝ մի քաոս, բայց ներքին մի հզոր կապով կապված: Հաջող է: Ում մոտ որ կարդացել եմ, հավանել եմ: **Միակ պակասությունը լեզուն է, հեղինակի պատմած մասը, ոչ թե հերոսների դիալոգը** (ընդգծումը մերն է - Գ.Գ.): Հեղինակի լեզուն պետք է մշակեմ, որովհետև վեպս էպոս է, լեզուն պետք է լինի օբիեկտիվ, իսկ ես շատ եմ սուբիեկտիվ: Բայց դրան էլ կհաղթեմ. քանի առաջ է գնում վեպս, այնքան լեզուն

կաղապարվում է: Համենայն դեպս մի տարվա չափ շա՛տ ծանր աշխատանք ունեմ»[108]: Նկատի առնելով հեղինակային լեզվին՝ գրողի տված «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» սահմանումները, որ ըստ էության վեպի ընդհանուր լեզվական ատաղձի համատեքստային օրգանականության հասնելու ձգտման հետևանք էր, Իսահակյանը որոշում է ոչ այնքան հեղինակային խոսքը (գրական լեզուն) հարմարեցնել երկխոսությունների լեզվին (բարբառներ), այլ բարբառները ոճավորել՝ հնարավորինս մատչելի և հասկանալի դարձնելու համար. «Կարծեմ, բոլորովին պետք չէ բարբառներով խոսողների բերանը դնել զուտ, իսկական բարբառը. շա՛տ կոպիտ կլինի, և անհասկանալի, և խուժական: Պետք է ոճավորել, տպավորություն տալ բարբառի և ոչ կույր արձանագրություն բարբառի:

Թող որ մաքուր բարբառ գոյություն չունի:

Ուստաև խառն է խոսում. նշան, որ նա շա՛տ գավառներ է եղել և շատ մարդկանց հետ է շփվել, գրագետ և անգրագետ: Հարութը - կարդացող է, Ռեսը՝ Պոլիս եղած...

- Ավելի լավ կլինի, որ Ուստաև և Հարութը երբեմն «կեղնի» գործածեն, բայց սովորաբար «կըլնի»»,- գրում է նա[109]:

Գրողը նպատակադրել էր ներկայացնել ժողովրդի կենցաղավարության գրեթե բոլոր շերտերը՝ ներփակ նկարագրություններով, և Ուստա Կարոն այս կենցաղավարության, ժողովրդական ավանդույթների կրողն է ու խոսափողը, իսկ Օրթե Հարութը դրանց մեկնաբանն ու վերլուծողը: Այս երկու հերոսների երկխոսութ-

---

[108] Եժ 14 հատորով, հ. 14, էջ 108:

[109] ԳԱԹ, ԻՖ, 399-II, տետր, թերթ 7:

յուններում ձևավորվում է վեպի մեկնողական, Իսահակյանի բնութագրմամբ «փիլիսոփայական» շերտը: Ըստ էության, Հարութի տեսիլներն ու երազները, նրա պատկերացումներն ու գաղափարները նկարագրող բնագրային հատվածներն ու գլուխները խորհրդանշական այլաբանություններ են, որոնք արտաքնապես ոչ մի կերպ չեն առնչվում վեպի «կենցաղավարական» գլուխներին: Չեն առնչվում, քանի որ դրանք կենցաղին հակադիր, երևակայական աշխարհների նկարագիրներ են, ունայնության և երջանկության սահմանագծին կանգնածի անելանելի վիճակի հետևանքներ: Իսահակյանը կարծես երկու վեպ զոդել է իրար, և նման հղացմամբ կառուցվածք ստեղծելն իհարկե ստեղծագործական առումով եթե չասենք բարդ, ապա գրեթե անլուծելի խնդիր էր:

Հետաքրքիրն այն է, որ չավարտելով վեպը՝ որպես ավարտուն շարադրանք, և շարունակելով որոնումները այդ ուղղությամբ, գրողը հատվածական գրառումներով օրեցօր, տարեցտարի ընդլայնում էր իր «Էպոսի», իր ստեղծած համայնապատկերի, իր կերտած հորիզոնի սահմանները, և նույնիսկ քաջ գիտակցելով, որ անգամ եթե ավարտի վեպը, ապա այն մերժվելու է և չի հրատարակվելու խորհրդային միջավայրում, նաև, իր հիշատակարանից և օրագրային գրառումներից զատ, մինչև իր կյանքի վերջը, օրագրի նման գրում էր «Ուստա Կարո» վեպը: Սա բացառիկ երևույթ է այն առումով, որ գրողը, ըստ էության, չի ցանկացել բաժանվել, օտարվել իր երկից ու հերոսից, քանի որ այն երևակայական աշխարհից տեղափոխվել էր իրական աշխարհ և դարձել էր գրողի երկրային կյանքի անքակտելի մասը: Եվ գուցե, սա էր վեպը չավարտելու պատճառներից մեկը:

Գ. ՎԵՊԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ

«Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակը բաժանված է 23 գլուխների, ընդ որում բոլոր գլուխները, բացի գլխակարգման համարակալումից (Ա-ԻԳ), ունեն նաև նկարագրական-տեղեկատվական վերնագրեր, ուր համառոտված է գլխի բովանդակությունը կամ թեման: Հեղինակը կիրառել է գլխակարգման և վերնագրման դասական ձևը, որը բազմաթիվ դրսևորումներ ունի համաշխարհային գրականության մեջ (օրինակ, Սերվանտեսի «Դոն-Կիխոտը», Շարլ Կոստերի «Թիլ Ուլենշպիգելը» և այլն): Վեպի երկրորդ տարբերակը մշակելիս Իսահակյանը մասնակիորեն հրաժարվում է նկարագրական-տեղեկատվական վերնագրերից, և կիրառում է նաև անվանական («Կապիտան Ղազարը», «Մելքոն վարժապետը», «Բագրանի ուխտը») և հետահայաց վերնագրեր («Ճարտարապետը», «Հարութի երազը», «Աշխարհը հեքիաթ է»): Իսահակյանը գլուխների վերնագրերի մի քանի ցանկեր է գրառել՝ վեպը ընդարձակելու և նոր գլուխներ ավելացնելու համար: Ցանկերից մեկը նաև գլուխների խմբավորում է ներկայացնում՝ պատումը բաժանելով երեք գրքի: Այս ցանկը գրողը վերնագրել է «Կոնսպեկտ».

«Ա. ԳԻՐՔ

ԲԱԳՐԱՆԻ ՔԵՖԸ
ԿԱՐՈՅԻ ԵՎ ՉԱՎՈՒԾԻ ԾԱԳՈՒՄԸ
ԲԱԳՐԱՆԻՑ - ՆԱԽՃՎԱՆ
ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԸ
ՍԱՆԱՄՈՐՆԵՐԻՆ ԱՑՑԻ

ԿԱՐՈՆ՝ ԿՆՔԱՀԱՅՐ. հեչը չըլներ, ղորթը տուևս քաևդել էր:

ԿԱՐՈՆ ԾՊՆԻՈՒՄ. էշս երեցփոխի հերև էր.

ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ. Ա. ԱՆԳԱՄ:- Քամին պաչում է: Աշխարքի, կևոջ, սիրո, հրաշքի, երազի, հեքիաթի, մարդու մասին:

Բ. ՕՐ ՈՒ ԳԻՇԵՐ

ՏԻԿՈՌՈՒՄ ԱԾԽԱՏԱՆՔ

ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ Գ. ԱՆԳԱՄ. մահի մասին, դիպվածի, բախտի, չարի, բարու, Աստծու և մահի մասին:

ՀԱՐՈՒԹԻ ԱԾԽԱՐՔԻ ՏԵՍԻԼԸ

Բ. ԳԻՐՔ

ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎ, ԿԱՅԾԱԿ, ՂՈՒԿԱՍ ԱՂԱ

ՀՈՐ ՇԻՆԵԼՈՒ ԱԾԽԱՏԱՆՔ: ՕՋԵՐԻ ԿՌԻՎԸ

ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎԱԼԸ

ԱՐՏԱՇԻ ՆԾԱՆՎԻԼԸ

ԱՋՔԱԼՈՒՍԱՆՔԻ ԸՆԹՐԻՔԸ

ՈՒՍՏԵՆ ՔԻՐՍՈՒՄ ՍԱՆԱՄԻՆ ՏԵՍՆՈՒՄ Է

ՄԵՍՐՈՎԲԻ ՄՈՏ, ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ

ՆՈՐԻՑ ՌԵՍ ՀՈՍԵՆ

ԿԱՅԾԱԿԻ ՃԱՌԸ ԹՈՒՄԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻՆ

ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ. ԱԼԱՃԱ ԵՐԹԸ

և «ՀԵՁԸ»:

Գ. ԳԻՐՔ

ԱՆԻ ԳՆԱԼԸ (ԾԵՐՈՒԿԸ)

ԳՅՈՒՄՐԻ ԳՆԱԼԸ

ԴԱՐՁԸ և
ԴԱՏԵՐԸ: ԵՎ ԴԱՏԵՐԻՑ ԱՋԱՏ ՕՐԵՐԸ. ՍԱՆԱՄԻՆ ԱՅՑ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ (ԿԱՅԾԱԿԻ ՃԱՌԸ)
ՍԱՆԱՄԻ ՈՒՋԵԼԸ, ՄԵՐԺՈՒՄԸ
ՈՒՏԻ ԱՆՁԱՄԲ ՔԻՐՍ ԳՆԱԼԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ
և
ԳՆԱԼԸ
ՈՒՏԵՆ ՂԱՐՍՈՒՄ
ՎԵՐԱԴԱՐՁ
ԱՆԿՈՒՄ
ԱՐՏԱՔՍՈՒՄ
ԵՐԱՋԸ՝ ՆԱՀԱՏԱԿՎԵԼԸ:
Հարութի կենսագրության մեջ մի գլուխ կունենա ԻՆԺԵՆԵՐԸ վերնագիրը»[110]:

Ինչպես տեսնում ենք, Իսահակյանը վեպի երկրորդ տարբերակը ծրագրել էր գրել 38 գլխով, 12-ով ավելի, քան առաջին տարբերակն է: Այդուամենայնիվ, այս ցանկը ձևված է առաջին տարբերակի բովանդակության վրա և միայն պատումի ընդարձակում էր ենթադրում՝ այուժեի և թեմաների առումով: Ցանկում նշված են ոչ թե վերջնական վերնագրերը, այլ գլուխներում մշակվելիք թեմաները: Մի այլ գրառման մեջ, որ, ամենայն հավանականությամբ առնչվում է այս ցանկին, Իսահակյանը ծրագրում է վերնագրերը փոխարինել համարակալմամբ.

---

[110] ԳԱԹ, ԻՖ, 396-II, էջ 1-2:

«Վեպը կունենա մոտ 35-40 գլուխ: Ամեն մեկը միջին թվով 15 երես, 16 երես. ուրեմն 600-650 երես տպագրական:

Գլուխները վերնագիր չեն ունենա, այլ այսպես՝ Առաջին գլուխ, Տասնչորսերորդ գլուխ, Երեսուն և վեցերորդ գլուխ (տասերով գրած): Հետո, երբ մի գլուխ երկար կլինի, օրինակ՝ Անի կամ Բագրաև, այսպես դնել.

Քսաներիներորդ գլուխ
Առաջին մաս
Քսաներիներորդ գլուխ
Երկրորդ մաս»[111]:

Վեպի երկրորդ մշակման գլուխների մի այլ ցանկ վկայում է, որ հեղինակը ծրագրել էր վեպը ամփոփել 35 գլուխներում, որոնք իրենց դասավորությամբ տարբերվում են նախկին կառուցվածքային հղացումներից, չնայած որ թեմատիկ առումով մեծ փոփոխություններ չեն եղթադրում:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԳԼՈՒԽՆԵՐԸ

1) ԲԱԳՐԱՆՈՒՄ
2) ՃԱՆԱՊԱՐՀԻՆ՝ ԲԱԳՐԱՆԻՑ - ՆԱԽՃՎԱՆ
3) ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ-ՉԱՎՈՒՇԻ ԾԱԳՈՒՄԸ
4) ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՌՕՐՅԱՆ: ԸՆԹԱՑԻԿ ԿՅԱՆՔԸ
4բ) ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
5) ՔԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ
6) ՌԵՍ-ՀՈՍԵԻ ԳԱԼԸ

---

[111] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 26:

7) ՂՈՒԿԱՍ-ԱՂԻ ԴԱՏԸ, ՀԱՐՑԸ. ԾՐՋԻԿ ԿԱՅԾԱԿԻ ԺՈՂՈՎԸ

8) ԾՊՆԻՈՒՄ.- ՏԻԿՈՐ ԳՆԱԼԸ, ԴԵՊԻ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ

9) ՀԱՐՈՒԹԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

10) ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐԸ

11) ԿԱՐՈՆ ՏԻԿՈՐՈՒՄ ԱԾՈՒԱՏՈՒՄ Է: ԱՍՈՑԻ ՄԱՀԸ

12) ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ II ԳԻՇԵՐԸ

13) ԱՐՏԱՇԻ ՆՇԱՆՎԵԼՈՒ ՀԱՐՑԸ

14) ԱՐՏԱՇԻ ՆՇԱՆՎԵԼԸ, ՔԻՐՍՈՒՄ

15) ԱԶՔԱԼՈՒՅՍԻ ՔԵՖԸ

16) ՈՒՍՏԱՆ ՆՍՏԵՑ ՔԻՐՍ՝ ՍԱՆԱՄԻՆ ՍԵՐ ՀԱՅՏՆԵԼԸ

17) ՄԱՐՈՒՔԻ ՄՈՏ

18) ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ

19) ՀԱՐՈՒԹՆ ԻՆՔՆ ԻՐ ՀԵՏ

20) ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ, ՍԱՐ ԳՆԱԼԸ

21) ԱՆԻ ԳՆԱԼԸ

22) ԱՆԻՈՒՄ

23) ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

24) ԳՅՈՒՄՐԻԻՑ ԴԱՐՁԸ

25) ԴԱՏԵՐԸ

26) ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ

27) ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

28) ՍԱՆԱՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ

29) ՈՒՍՏԱՆ ԿԱՅԱՐԱՆ Է ԳՆՈՒՄ

30) ՂԱՐՍՈՒՄ

31) ՂԱՐՍԻՑ ԴԱՌՆԱԼԸ

32) ԱՆԿՈՒՄԸ, ԱՐՏԱՔՍՎԵԼԸ

33) ՄՐԵՆՈՒՄ

34) ՀԱՐՈՒԹԻ ՀԵՏ, ՀԵՉԻ ԳԼՈՒԽԸ[112]:

Վեպի երկրորդ մշակման գլուխների մի այլ ցանկ, որ Իսահակյանը կազմել է հավանաբար 1920-21 թթ., վերնագրված թեմաների բովանդակությունից դատելով, ընդգրկում են այն գլուխները, որոնք պետք է շարունակեին վեպը «Հայրենիքում» տպագրված գլուխներից հետո: Նշենք, որ «Հայրենիքում» վեպը վերնագրված է «Ուստա Կարո և Օրթե Հարութ», սակայն Հարութին վերաբերող ոչ մի գլուխ չի տպագրվել: Իսկ այս ցանկը սկսվում է «Հարութի մոտ» պայմանական վերնագիր ունեցող գլխով.

«ԳՐՎԵԼԻՔ ԳԼՈՒԽՆԵՐ

ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹԻ
ԱՍՈՅԻ ՄԱՀԸ
ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ:
ԿԱՅԾԱԿԻ ՃԱՌԸ. ՂՈՒԿԱՍԻ ԴԱՏԸ
ՆՇԱՆԵԼՈՒ ԽՈՍՔ
ԳՆՈՒՄ ԵՆ ՆՇԱՆԻ
ՆՇԱՆԴՐԵՔ
ՎԵՐԱԴԱՐՁ
ԱՁՔԱԼՈՒՍԱՆՔ
ՍԱՆԱՄԻ ՄՈՏ
ՄԱՐՈՒՔԻ ՄՈՏ
ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ
ԱՆԻ ԳՆԱԼ
ԱՆԻՈՒՄ

[112] ԳԱԹ, Իֆ, 424-II, թերթ 10:

ԳՅՈՒՄՐԻ
ՎԵՐԱԴԱՐՁ
ՀԱՐՈՒԹԻ ԵՐԱՋԸ ՀՐԵՂԵՆԻՆ
ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ
ԼԵՌ ԵԼՆԵԼԸ
ԴԱՏԵՐ
ԴԱՏԵՐԻ ՄԻՋՈՑԻՆ
ՈՒԽՏ
ՍԱՆԱՄԻ ԴՐԺՈՒՄԸ
ՕՍԿԱՆԻ ՀԵՏ ԿՌՎԵԼ
ԴԱՏԸ
ՄՐԵՆՈՒՄ
ՀԱՐՈՒԹԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱԼԸ
ՎԵՐՋԸ»[113]:

Այս 30 գրվելիք գլուխներից «Ուստա Կարոյի» արխիվում ամբողջապես շարադրված է 5-ը՝ «Կենսագրություն Հարութի», «Հարութի մոտ» («Ասոյի մահից հետո»), «Հարութի երազը», «Լեռ ելնելը» («Սար գնալը» և «Ուխտը»՝ «Բագրանի ուխտը»), մնացած 25 գլուխներին առնչվող բազմաթիվ բնագրային հատվածական գրառումներ են պահպանվել: Այսպիսով, եթե այս ցանկի 30 գլուխներին ավելացնում ենք «Հայրենիքում» տպագրված 12 գլուխները (չհաշված «Բագրանի ուխտը» գլխից տպագրված հատվածը), ապա, ըստ այս ցանկի, վեպը ունենալու էր 42 գլուխ, իսկ եթե սրան գումարենք այս ցանկում բացակա ևս 10 անտիպ գլուխները, ինչպես նաև Գյումրին ներկա-

---

[113] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 7:

յացնող 12 գրվելիք գլուխներից 9-ը[114], ապա վեպը ունենալու էր ընդհանուր 61 գլուխ:

Մի այլ ծրագրային գրառում ևս 9 գլուխ է ավելացնում այս հաշվարկին: Դրանք վեպում դաշնակցության գործունեությունն ու ներկայությունը ապահովող գլուխներն էին լինելու, որոնցից միայն մեկի համառոտ շարադրանք է պահպանվել գրողի արխիվում («Դաշնակցությունը գյուղերում»[115]), ինչպես նաև ըստ ուխտագնացության օրերի չորս գլուխների բաժանված «Բագրանի ուխտը» գլուխ: Ցանկում ներկայացված վերջին՝ «Հարութի տեսիլքը» («Աշխարքի տեսիլը») նախորդ ցանկերում առկա չէ, չնայած որ գրողի արխիվում այս գլխի երեք տարբերակային շարադրանք կա: Այդ ցանկում ներկայացած գլուխներն են.

- Հ.Յ.ԴԱԾՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ. I
- ՈՒՏԱ ԿԱՐՈՑԻ ԾՐԱՊԱՏԸ. II
- ՈՒՏԱ ԿԱՐՈՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԹԵՐ ՈՒ ԴԵՄ. III
- ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ. IV
- ԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ. V
- ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՀԱՐՈՒԹԻ ՏԵՍԻԼՔԸ»[116]:

---

[114] Գյումրիում ներկայացնող 12 գրվելիք գլուխներից 3-ը Իսահակյանը հրատարակել էր:

[115] ԳԱԹ, ԻՖ, 292-II, էջ 1-2:

[116] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 13:

Այս ցանկը վեպի գլուխների թիվը ավելացնում է ևս 8-ով՝ հասցնելով 69-ի: Սրանցից բացի, վեպը, ըստ Իսահակյանի ծրագրային մի գրառման, պետք է ունենար 3 կիսագլուխներ.

«ՎԵՊԻ ԿԻՍԱԳԼՈՒԽՆԵՐ

- ՈՒՏԱՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵՏ: Խոհեր, հուշեր:
- ՀԱՐՈՒԹԸ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵՏ: Խոհեր, երազներ:
- ՈՒՏԱ ԿԱՐՈՅԻ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ»[117]:

«Կիսագլուխ» եզրույթը, ըստ գրողի ներկայացրած վերնագրերի, ինչպես նաև նույն այս վերնագրերով արխիվում առկա գրառումների, հստակ սահմանված չէ՝ որպես պատումի կառուցվածքային միավոր: Դրանք պիտի առանձին գլուխնե՞ր լինեին, թե՞ որևէ գլխի շարունակություն կամ ընդմիջարկված հատված՝ թեմայի միօրինակությունը կոտրելու համար, առավել ևս, որ վեպի պատումի մեջ հեղինակը տեղ էր հատկացնում գործառնական նույն նպատակն հետապնդող «հեղինակային դիմումներին» կամ «շեղումներին»: «Խոհեր, հուշեր», «խոհեր, երազներ» շարույթների հոգնակիակերտությունը ակնարկում է, որ այդ կիսագլուխները, մեր կարծիքով, և՛ ընդմիջարկող հատվածներ էին լինելու տարբեր գլուխներում, և՛, հարկ եղած դեպքում՝ առանձին գլուխներ: Իսահակյանը «Ուստա Կարոյի» արխիվում այս վերնագրերը կրող մի քանի թղթապանակներում առանձնացրել և խմբավորել է այս թեմաներին առնչվող իր գրառումները: Պայմանականորեն այս կիսագլուխների թիվը

---

[117] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 10:

համարելով երեք՝ վեպի գլուխների թիվը, ըստ գրողի ծրագրի, հասնում է 72-ի:

Մյուս հավելումները, որ գրողը մտադիր էր կատարել, ամփոփված են «Հավելված գլուխներ» ծրագրային գրառման մեջ[118]: Դրանցից առաջինը «Ուստաս սափրվում է» վերնագրով գլուխը պետք է լիներ, որը, սակայն, որպես դրվագ, հեղինակը մշակել է «Ուստա Կարոյի այցը սանամայրներին» գլխում: Մյուսը «Ասոյի մահը» գլուխն է, որ պահպանվել է միայն գրառումներով: Եվս 5 գլխի վերնագրի ենք հանդիպում գրողի ծրագրային գրառումներում, որոնք արտացոլված չեն վերոնշյալ ցանկերում, և այդպիսով, ընդհանուր առմամբ վեպի երկրորդ մշակման գլուխների թիվը հասնում է 77-ի՝ չհաշված Իսահակյանի ծրագրած վեպի երկրորդ հատորի գլուխները, որոնց մասին ոչ մի գրառում չի պահպանվել:

Այս հաշվարկը միանգամայն հակասում է և հակադիր է Իսահակյանի՝ վեպը սեղմելու, փոքրացնելու, 400-500-600 երեսի հասցնելու մտադրությանը, և ինչքան էլ նա փորձում էր դա անել, վեպը չէր սեղմվում, վեպը դիմադրում էր գրողին, և ընդհակառակը՝ ընդարձակվում էր, տարածվում, ընդգրկում նորանոր ոլորտներ, մեծացնում էր իր սահմանները, համայնապատկերը ձգտում էր համապարփակության, իսկ գրողը գնում էր և միևչև վերջ գնաց այդ ճանապարհով՝ իր վեպի ետևից: Իսահակյանն ինքը՝ հատկապես Հայոց ցեղասպանությունից հետո, չէր կարողանում օտարվել իր ընդարձակ երկից, քանի որ չէր կարողանում վերջակետ դնել այն համայնապատկերի ստեղծմանը, որը արդեն չկար, ոչնչացվել էր, բնաջնջվել, կողոպտվել, անհետացել: Եվ վեպը փշրվեց,

---

[118] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 9:

բաժանվեց հազարավոր մասերի՝ տասնյակ հազարավոր գրառումների տեսքով, վեպը իր այդ մասնատվածությամբ դարձավ իր ժողովրդի խորտակված, աշխարհով մեկ սփռված պատկերի խորհրդանիշը:

Եվ ոչ թե փոխաբերաբար, այլ ուղղակիորեն կարող ենք ասել, որ «Ուստա Կարո» վեպը դարձավ Հայոց ցեղասպանության զոհերից մեկը:

Իսահակյանի հոգում բացված վերքը այդպես էլ չսպիացավ, Ուստա Կարոն կերպարից վերածվեց մտասևեռման, որը գեղարվեստական բնագրի, գրականության մեջ իր տեղը չէր գտնում՝ միշտ մնալով անավարտ, բայց և միշտ ձգտելով հասնել մի հանգրվանի, որը գրողը չէր տեսնում: Գրական երկի, գրողի մտահղացման և իրականության անհամատեղելիությունը, որ Իսահակյանին հանապազօրյա տառապանք ու անհաղթահարելի վիշտ էր բերում, վեպի կազմաբանությունը վերածեց հավերժական ստեղծագործական ընթացքի, և այս առումով Իսահակյանը իր յուրաքանչյուր գրառումով ավարտում էր վեպը և նույն այդ գրառումով նորից սկսում:

Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի սույն հրատարակությունը սկսում ենք գրողի տպագրած և անտիպ գլուխների, այդ գլուխների տարբերակների և որոշ գլուխներին առնչվող բնագրային հատվածների և ծրագրային գրառումների, հեղինակային շեղումների բնագրերի հրապարակմամբ: Արխիվում պահվող շուրջ 8000 էջից այս՝ առաջին գրքում, ներկայացված է 199 բնագրային միավոր: 1925 թ. հուլիսի 21-ին Իսահակյանը Վահան Նավասարդյանին տեղեկացնում է, որ ««Ուստա Կարոն» բռնում է մոտ 1700-2000 էջ, սակայն այդ 2000 էջը գրել եմ 5-6000 էջերի մեջ, ու այդ քառսից ու ծովից կազմում եմ գլուխնե-

րը»[119]: Մեզ հասած արխիվային միավորների թվի հետ համեմատելով՝ պարզ է դառնում, որ հետագա տարիներին գրողը վեպին շատ ավելի քիչ է անդրադարձել, քան մինչև 1925 թվականը:

Հետագա հատորներում շարունակաբար թեմատիկ խմբավորումներով կզետեղվեն վեպին առնչվող հատվածական բնագրերը, ծրագրային գրառումները, ցանկերն ու վեպի համար տարբեր աղբյուրներից կատարված գրառումները:

Սույն հրատարակության մեջ առաջին անգամ տպագրվում է վեպի 10 ավարտուն գլուխ և 10 «հեղինակային շեղում» և դրանց կից բազմաթիվ հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ: Դրանք են.

Գլուխներ.

1. <ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ>
2. <ՍՏԻ ՄԱՍԻՆ>
3. <ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԾՊՆԻ ԳՆԱԼԸ>
4. <ԾՊՆԻՈՒՄ>
5. ՀԱՐՈՒԹԻ ԵՐԱԶԸ (ԱՃԽԱՐՔԻ ՏԵՍԻԼԸ)
6. ՀԱՐՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԸ
7. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ
8. ԱՎԱԳ-ՍԱՐԿԱՎԱԳԸ
9. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
10. ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՃԽԱՐՀԸ, ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԲԵՐԴԻ ՎՐԱ, ՈՒՍՏԱՅԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՎՈՏԸ

---

[119] Նժ 14 հատորով, հ. 14, էջ 111:

Հեղինակային շեղումներ.

1. ԿՆՈՋԸ
2. ՇԻՐԱԿԻ ՍԱԼԱՀԱՐԿ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ
3. ԵՐԲ ՈՒՍՏԵՆ ՂԱՐՍ Է ԳՆՈՒՄ
4. ԱՃԽԱՐՔԸ ՀԵՔԻԱԹ Է
5. ԿԱՅԾԱԿԻ ԿԱՄ ԹԱԹՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՈՂՋԵՐԹԻ ՈՏԱՆԱՎՈՐԸ ՈՒՍՏԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ
6. <ԻՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՀՈՌ ԵՐԱՆԵԼՈՒ ՆՄԱՆ...>
7. ԱՆԻՒ ԱՂՋԿԱ ԲԵՐԴԸ
8. ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ
9. ԲԱԳԱՐԱՆԸ
10. ԱԾՈՒՂ ՊԱՊՈՅԻ (ՎԾՏԱԼԻԻ) ԵՐԳԸ

Հատորներում զետեղված բնագրերը և բնագրային տարբերակները ներկայացվում ենք հաջորդաբար, քանի որ նույնիսկ տպագրված գլուխները չենք կարող վերջնական համարել: Քանի որ վեպն անավարտ է, ուստի տպագիր գլուխները նույնպես տարբերակներ են: Սա հավաստում է նաև Իսահակյանը՝ գրելով. «Նույնիսկ «Հայրենիքում» տպված գլուխները դեռ վերջնականապես չեն մշակված. տպվելուց հետո եմ մշակում, մշակված գիրք պիտի դառնա, երկու հատոր»[120]:

Քանի որ թեմատիկ հատվածական բնագրերն ու ծրագրային գրառումները Իսահակյանը հիմնականում նույն վերնագրով է զատել իրարից՝ դրանք համարակալել ենք հետագա ուսումնասիրություններում հղումները դյուրացնելու և խառնաշփոթից խուսափելու համար:

---

[120] Նժ 14 հատորով, հ. 14, էջ 111:

Իսահակյանի ինքնագրերի կետադրությունը հիմնականում հնչերանգային է և չի համապատասխանում կետադրության արդի կանոններին: Իսահակյանն իր արձակում կիրառում է այսպես կոչված «բանաստեղծական» կետադրություն, շարույթները տրոհվում են ըստ խոսքային միավորների տրամաբանական շեշտերի՝ հիմնականում կետով (.): Ինքնագրերի և տպագրված բնագրերի համեմատությունը պարզում է, որ այդ բազմաթիվ կետերը գրողը հաճախ փոխարինել է ստորակետով կամ վերջակետով: Ինչ վերաբերում է խոսակցական ոճերին և դարձվածներին, ապա այստեղ գրողն ավելի շատ հետևել է ուղղախոսական դադարներին և ըստ այդմ կետադրել է բնագիրը:

Իսահակյանը հատկապես երկխոսություններում առատորեն կիրառել է բարբառների և խոսվածքների քերականական ձևերը: Բնագրերում պահպանել ենք ուղղագրական բոլոր երկձևություններն ու բարբառային ուղղախոսական ձևերը:

Բնագրային տարբերությունները ներկայացված են տողատակերում:

Ինքնագրերում առկա հեղինակային ջնջումները թողնված են բնագրում՝ առնելով ուղղանկյուն փակագծերի մեջ՝ [ ]:

Բնագրերում կազմողի հավելումները դրված են սուրանկյուն փակագծերում՝ < >:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

(Երկրորդ մշակում)

Ա. ԳԼՈՒԽ[1]

ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՊԱՏՎԻՆ[2]

Պայծառ և ուրախ արևի տակ[3] երկրի մի կտոր է ապրում[4] – հինավուրց Շիրակը, չատակեր Շարայի արտն ու կալը:

Ավերակ[5] Մրենի տակ խորանում է մի գահավեժ անդունդ, որի հատակին[6], բարձրուղեչ[7] եղեգների միջով, փոքրիկ[8] ջրընկեցներով[9], հոսում է Ախուրյանը մերթ որոտուն, մերթ անշշուկ[10]:

Համեմատվող բնագրային միավորներ.

A = «Հայրենիքի» տեքստը՝ հեղինակային ուղղումներով:

B = ԳԱԹ, ԻՖ 287ա-II, էջ 1-13:

C = ԳԱԹ, ԻՖ 291-II, էջ 1-15:

D = «Հայրենիք», 1925, Հունվար, N 3, էջ 1-8:

1 B *չիք*

2 BC *չիք* ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՊԱՏՎԻՆ

3 B տակ[ը]

4 B + Կամսարականների Շիրակ պատմական աշխարհը, [Բագրատունիների Շիրակի հարավային մասը]

5 BC Հին, ավերակ

6 B Հատակ[ում]ին

7 B բարձր

8 B *չիք*

9 B [քար]ջրընկեցներով

10 B լուռ, անձայն

Գետի երկու կողմերից հսկա թռիչքով բարձրանում են վիթխարի ժայռեր — մութ-կապույտ սյունաձև[1] ապառաժներ, որոնց ծերպերում վայրի աղավնիներն ու մեղուները իրենց բույնն ու փեթակն են հյուսել[2]:

«Աղջկա[3] ձոր» է կոչվում այդ վայրը. առասպելը պատմում է, որ այնտեղ ջրերի խորքում մի հրաշք-աղջիկ է ապրում: Աղջիկը[4] անուշ երգով և ալիքների վրա տարածած իր՝ ջրի պես երկայն մազերով հրապուրում է սրտի տեր մարդկանց, քաշում հատակը և բանտում նրանց ջրով լցված մութ անձավներում[5]:

Այդ ձորում[6], գարնան[7] մի առավոտ[8], ծառերի ստվերների[9] տակ նստել էին մի խումբ[10] մարդիկ:

Դալար սեզերի վրա փռված[11] կար[12] մի կապույտ[13] սփռոց՝ նկարուն եզրներով:

---

1 BC սյունեղեն

2 B + Գետի [արևմտյան] ալ եզերքին կան մի քանի փոքրիկ, սիրուն այգիներ:

3 D Ողջկա

4 D Այդ աղջիկը

5 BC չ/ք «Աղջկա ձոր» է կոչվում ... մութ անձավներում:

6 BC չ/ք Այդ ձորում

7 B [մայիսյան]

8 B [+ սաղարթաչատ] C + «Աղջկա ձոր» սաված տեղում

9 BCD ստվերի

10 BC քանի

11 BC փռած

12 B կար C կար + ճաշի

13 B նշխուն [սուրբա] սփռոց հացերի և կերակուրների ամաններով C [նշխուն] նկարուն սփռոց [հացերի և ամաններով] նկարուն, նշխուն եզրներով

Սեղանի[1] *գլխին*[2] *ծալապատիկ նստել էր Բագրան գյուղի առաջին Հարուստը, երեցփոխ Տոնոն, պատվով ու հացով մի մարդ, նոր սպիտակած մազ-մորուքով:*

Նրա աջ կողքին[3] *նստել էր հարսանիքների ու խնճույքների աղն*[4] *ու ծաղիկը*[5]*, բոլոր գյուղերի ընտիր քավոր, երևելի վարպետ, աշխարհատես Ուստա Կարոն, մոտ 38*[6] *տարեկան մի*[7] *առողջ, սիրուն տղամարդ: Փոքրիկ*[8] *փափախը չուռ էր տված դեպի ծոծրակը, սև մահուդ չուխայի թևերը վեր ծալած: Ձախ ուսին ձգած կարմիր ու նշխուն*[9] *մեծ թաշկինակը, որի ծոպերը հասնում էին գինու գավին, որ վիզն երկնցրած պառկել էր նրա կողքին, թևի տակ:*

Ուստա Կարոյի փայլուն սև լաստիկ[10] *արխալուղի վրա ծփծփում էր մի մեծ*[11] *արծաթե*[12] *շղթա, որից կախված կար*[13] *նրա նշանավոր ժամացույցը, ա՛յնպես հաստ էր այդ շղթան, ա՛յնպես հաստ, որից վստահ կարելի էր կապել մի գամփռ, քան թե մի ժամացույց, ինչքան էլ որ այդ նշանավոր լիներ:*

Ուստա Կարոյի քեֆը այսօր չա՛տ տեղն էր. նոր սափրված, պայծառերես, աչքերը խնդումով լի:

---

1 B [Սուփրի] Սփռոցի

2 BC վերի պլուխը

3 BC *չիք* Բագրան գյուղի առաջին Հարուստը ... Նրա աջ կողքին

4 BC *չիք*

5 BC ծաղիկ

6 B 36-37 CD 37-38

7 B *չիք*

8 BC *չիք*

9 B *չիք* ու նշխուն

10 B լաստիկե

11 B + սպիտակ

12 BCD արծաթաջուր

13 B էր

Երկու[1] *շաբաթ է, որ նա աշխատել էր Բագրանում, գյուղական աղբյուրի խողովակներն էր մաքրել ու կարկատել. Սուրբ Գեորգա մատուռը տանող քարաբլուրի սանդուխի*[2] *մատներն*[3] *էր նորոգել:*

Եվ երեկ ավարտել[4] *էր գործը ու այսօր, կիրակի*[5]*, Բագրանի ջոջերը*[6] *գյուղի իշխանները*[7]*, իրենց հին բարեկամի*[8] *պատվին սեղան էին սարքել վաղ առավոտից*[9]*:*

Տոնոյի ձախ կողմը, ծալապատիկ չկարողանալով նստել, քարի վրա տեղավորվել էր Դաշնակցական քարոզիչ չրջիկ պարոն Կայծակը, մի երիտասարդ տղա. կարսա կոմիտեն ուղարկել էր նրան գյուղերը կազմակերպելու համար: Շրջիկը ժողովրդի հետ անմիջական չփման մեջ լինելու համար, առիթը չէր վրիպում գտնվելու դրեթե ամեն տեսակի հավաքումների մեջ, որպեսզի կարողանար իր առաքելությունը ավելի արդյունավոր կատարել:

Ապա հերթով իրար կողքի նստոտել էին գյուղի տանուտերը, մի-երկու առաջավոր մարդիկ եւ Դաշնակցական եննթակոմիտեի անդամները[10]*:*

---

1 B [Մի] 2

2 B սանդուխքի

3 BC աստիճաններն

4 B վերջացրել

5 B + [օրը]

6 BC իշխանները D մնծերը

7 BC չիք գյուղի իշխանները

8 BCD նրա *փի* իրենց հին բարեկամի

9 BC առավոտուց

10 B Տոնոյի ձախ ... եննթակոմիտեի անդամները *փի* Նրա աջ ու ձախ կողմը նստել էին երեցփոխ Տոնոն – մի հասուն, [բավական] մի քիչ սպիտակած [ծերուկ] մարդ, գյուղի առաջին հարուստը ու [պա-

Սեղանի մյուս ծայրին, երեցփոխի[1] դեմուդեմը, ծնկների վրա չոքել էր[2] Ուստայի[3] անբաժան ընկեր ու[4] աշխատակից[5] Փիլոս[6] ախբարը, Զավուշենց Փիլոսը, կամ հակիրճ խոսքով – Զավուշը[7]:

Սեղանի քովնտի[8] տեղ էր բռնել աշուղ Փելեշը՝ ցավկոտոր աչքերով, գլուխը թեթև ճերմակած[9]: Սազը՝ սեղմած կրծքին, խաղում էր լարերի հետ:

Յուրաքանչյուր սեղանակից ուներ գինով լեցուն մի գավ[10], ամենի առջև գինու[11] գավաթներ. միայն պարոն Կայծակի առջևը գինին ճերմակ չիշով էր. ամենքը սեղա-

---

տուատուր մարդը] պատվով ու հացով մինակը և Ուստայի լավ բարեկամը և Ներսես քեհին, ապա Դաշնակցության շրջիկ պ. Կայծակը, նոր ծլած բեխերով մի վաուվուն երիտասարդ, հետո նորից մի քանի գյուղական մեծեր և ենթակոմիտեի անդամները: C Տոնոյի ձախ ... ենթակոմիտեի անդամները *փխ* Նրա աջ կողմը նստել էր երեցփոխ Տոնոն, նոր սպիտակած մի մարդ, գյուղի առաջին հարուստը՝ պատվով ու հացով, և Ուստայի լավ բարեկամը, ձախ կողմը Ներսես քեհին, գյուղի տանուտերը, ապա Դաշնակցության քարոզիչ-կազմակերպիչ, շրջիկ պարոն Կայծակը, նոր ծլած բեխերով մի վաու երիտասարդ, հետո մի քանի գյուղական մեծեր և գյուղական դաշնակցության ենթակոմիտեի անդամները:

1 BC ուղղակի Ուստա Կարոյի

2 BC նստել էր *փխ* ծնկների վրա չոքել էր

3 BC իր

4 BC *չիք*

5 B ու հասակակից C ու դրեթե հասակակից

6 C Քերոբ

7 BC *չիք* Զավուշենց Փիլոսը, կամ հակիրճ խոսքով – Զավուշը

8 B Սուփրի կողքին C Սեղանի ծայրին

9 BC գլուխը թեթև ճերմակած *փխ* թեթև սպիտակած մազ-մորուքով

10 BC Յուրաքանչյուր ... գինով լեցուն մի գավ *փխ* Ամեն մի սեղանակիցի ձախ կողքին դրած կար գինով լեցուն մի-մի գավ

11 BC առջև գինու *փխ* առաջը կավե

նի օրենքով պարտական էին լցրածը խմել մինչև հատակը, եթե ոչ՝ կպատժվեն կրկնակի խմելով. միայն նա զերծ էր օրենքից ու պատժից: Եվ խմում էր նա զգուշ, չափով, որ չհարբեր և վարկը չկորցներ[1]:

Մի քանի երիտասարդ տղերք, իշխանների որդիները[2], ծառայում էին ոտքի վրա կանգնած:

Հեռվում[3] երեքական քարերի մեջ[4] չինած երկու[5] օճախ բոցկլտում էին[6]. մեկի վրա թարմ ձուկեր էին խաշվում ու խորովածի չամփուրը դառնում, մյուսի վրա հավով փլավն էր հասունանում[7]:

Մեծ ատրճանակը աջ[8] կողքին, փամփուշտակալը գոտու պես մեջքին փաթ տված[9] պ. Կայծակի թիկնապահ գինվորը[10] Հլդաթն[11] էր դարձնում չամփուրները[12], իբրև հմուտ[13] խորոված պատրաստող[14]:

---

1 BC *չի՛ք* միայն պարոն Կայծակի ... որ չհարբեր և վարկը չկորցներ

2 B *չի՛ք* իշխանների որդիները

3 BC + ծառների տակ

4 C վրա

5 B *չի՛ք* երեքական ... երկու

6 B օճախ բոցկլտում էին *փխ* օճախն էր բոցկլտում

7 B մեկի վրա թարմ ... փլավն էր հասունանում *փխ* եփվում էր բուղբաշն ու փլավը C մեկի վրա թարմ ... փլավն էր հասունանում *փխ* մեկի վրա բուղբաշն էր եփվում, մյուսի վրայ հավով փլավը. մեկի վրայ թարմ ձուկերն էին խաշում, մյուսի վրա խորովում:

8 BC ձախ

9 B կապած

10 B գինվոր

11 B Ասլանբալասի

12 BC էր ... չամփուրները *փխ* խորովածի չամփուրներ էր շարում

13 BC վարպետ

14 B + [Առավոտ դեռ վաղ էր. արևը հազիվ նկատվում էր սաղարթների ցանցից: Ձորերի արևելյան ժայռեղեն պատնեշները իրենց

Բեֆ անողները արդեն ակրատը արել էին ու մի-երկու բաժակ օղի[1] խմել, երբ լավաշ հացերի[2] վրա թշթշալով տեղաց խորովածը:

Երեցփոխը, որ խնճույքի պետն էր, լցրեց գավաթը գինով, բոլորը հետևեցին նրան, ապա գավաթը վեր առնելով դարձավ դեպի աչուղը[3].

– Էդպե՛ս, Փելե՛չ ջան, մատներդ ուտեմ, էդտեղ կա՛նգ առ[4]:

Աչուղը քըռթ կտրեց նվագը. ամենքը ուշադիր դարձան գյուղի առաջին մարդուն:

– Ախպրտիք, պարոն Կայծակ[5],– աչքերը փռելով բոլորի վրա հանդիսավոր ու ծանր ասաց Տոնոն.– մեր նախնյաց, մեր հին ու նոր մեռելի հոգին լուս դառնա, ամեն: Խմենք մեր հայոց ազգի, մեր էջմիածնի, մեր Հայաստանի կենացը և նրանց զինավոր պաշտպան Դաշնակցության կենացը. Տեր Աստված, փառքդ չա՛տ: Ես կարճ ասի, դուք չատ հասկացեք:

Բոլորը լուռ դատարկեցին գավաթները:

ատվերների տակ ծածկել էին գետը: Թռչուններն ուրախ ծլվլում էին ծառների վրա:] C + Սեղանը ծածկված էր լավաշ հացի ծալ-ծալ բեռներով, բազմատեսակ բանջարեղեններով, պանիրների մի քանի տեսակներով, խաշած հավկիթներով, որոնք ամենքը ակրատի համար էին՝ արաղի հետ:

1 C արաղ

2 C լավաշների

3 B *չիք* Բեֆ անողները արդեն ... դարձավ դեպի աչուղը:

4 B Էդպե՛ս, Փելե՛չ ջան ... էդտեղ կա՛նգ առ *փխ Է՛ վալլա՛, Փելեչ ջան* [մատներդ ուտեմ ծնկի գալով] նստած տեղից ասաց [Ներսես քհՀեն] երեցփոխ Տոնոն [Հրամանք տվեք մի խոսք ասեմ: Ասա՛, ասա, Ներսես ջան, ամեն կողմից ձայնեցին սեղանակիցները]

5 B *չիք* պարոն Կայծակ

Ապա նորից գավաթը լցնելով, Տոնոն ժպտուն երեսով դիմաց սեղանին[1]*:*

– Ուսաա Կարոն էսօր մեր թանկագին հյուրն է. բանիք[2]*, միշտ էլ մեր գլխու վրեն*[3] *տեղ ունի, բայց էսօրվա սեղանը իրան ննք պարտական: Կարո*[4] *ջան, քո անգին կենացը, ողջ էղնիս*[5]*, դեչ օրդ էսպես էղնի*[6]*. Աստծու աչքը վրեդ էղնի*[7]*:*

Ու[8] *գավաթը զարկեց Ուսոայի գավաթին: Ուսոան էլ*[9] *թևքվեց*[10] *դեպի նա՝ գլուխը բռնելով:*

– Շնորհակալ եմ, Տոնո՛ ամի,– մրմնջաց հարգանքով[11]*:*

– Ուսոա՛ ջան, պայծա՛ռ մնաս:

– Ուսոա՛ ջան, Աստված քո սրտով[12] *քեզ*[13] *տա:*

– Ուսոա՛ ջան, երկեն արև էղնիս[14]*...*

---

1 BC *չիք* մեր նախնյայց, մեր հին ու նոր ... ժպտուն երեսով դիմաց սեղանին

2 BCD ասենք

3 BCD գլխի վրա

4 BC Ուսոա

5 B լինես CD ըլնես

6 BCD ըլնի

7 D վրադ ըլնի B Աստծու աչքը վրեդ էղնի *փխ* Տեր Աստված քեզ փառք C Աստծու աչքը վրեդ էղնի *փխ* Տեր Աստված, փառքդ չատ

8 BC + պինով լիքը

9 C + թեթևակի

10 B Ուսոան էլ թևքվեց *փխ* Ուսոան [համբուրելու չափ / համբուրեց երեցփոխի ձեռքը] թեթև թևքվեց

11 B *չիք* Շնորհակալ եմ ... հարգանքով

12 B սրտովը C սրտովդ

13 BCD քեզի

14 B *չիք* երկեն արև էղնիս + էվել-պակաս հալալ արա, մենք էլ քուվդ ննք, ես քու պատվին արժան չէր D ըլնիս + էվել-պակաս հալալ արա, մենք էլ քուվդ ննք, ես քու պատվին արժան չէր

Այսպես յուրաքանչյուրը իր հերթին մի-մի[1] խոսք ասին[2] նրա կենացին[3]: Միայն պ. Կայծակն էր, որ թեթև գլուխ տվավ Ուստային և լռիկ խմեց[4]:

– Փելե՛չ ջան, դիտե՞ս էլի, ում թասն է[5],– ակնարկեց երեցփոխը[6]:

Աչուղը աչխույժով[7] զարկեց լարերին, լարերը միաբերան լեզու առան ու անուշ-անուշ խոսեցին[8]:

Երբ երգը վերջացավ, իջավ մի կարճատև լռություն: Ապա Ուստան[9] ծանր ու մեծ՝ ծնկի գալով, ընչացքը[10] ոլորեց և հատ-հատ[11] ասաց.

---

1 C մի

2 C ասացին + ու խմեցին

3 C կենացը

4 B չիք Այսպես յուրաքանչյուրը ... և լռիկ խմեց:

5 B + զարկ սազիդ

6 B չիք ակնարկեց երեցփոխը

7 B [սրտանց]

8 B լարերը միաբերան ... խոսեցին *փխ* մելամաղձիկ լարերը դողդողացին, հառաչեցին և անուշ-անուշ մրմնջացին: Ապա երգեց սրտալի ձայնով:

– Հովերն եկան չաղով-չողով.
Յար ջան, դու ես իմ գյուլը:
Լուսնակն ելավ սարի [ծերով] կողով
Ես քո էրված բլբուլը:
[Ժեռ ու առու ափին կուտան]
Լուսնակ դու ցած գնա՛,
[Միլ ու ծաղիկ ծաղին կուտան]
Լուս տուր ու ցածանց գնա՛,
Հեռու տեղից մի յար ունիմ,
Բարև տուր, անց ու գնա՛:

9 BC Ուստա + Կարոն

10 BC բեխերն

11 BC չիք

– Իմ աչքի լուս ախպրտիք, չնն մնաք, երկնուց-պնտինք գոհ եմ ձեզնեն[1], արժանի չեմ էս ամեն հարկին. Տոնո ամի, Ներսես քհա[2], ես ձեր[3] պզտիկ ախրեն եմ:

Եվ գավաթը չուռ տվից բերնին ու կարմիր թաշկինակով սրբից կարմիր ու թաց շրթունքները[4]:

– Անուշնե՛ր, անուշնե՛ր, Ուսաս ջան[5],– ձայնեցին ամեն կողմից[6]:

Ուսասն[7] նորից[8] գլուխ տվից ու նստից[9]:

Խոսքը տանուտեր Ներսեսինն էր[10]:

– Իշխաննե՛ր[11], էսօր մեր սեղանը պատվել եկել է մեր հայոց[12] սուրբ ծրագրի պարոն շրջիկը, պարոն Կայծակը: Կես տարի է՝ նա մեր մեջն է, մեզ քարոզում է[13], մեր պարաքը մեզ սովորեցնում[14], մեր ազգին պետքական մարդ է դարձնում[15]: Համենք նրա[16] պատվական կյանքի

---

1 D ձեզնից

2 B *չիք* Ներսես քհա

3 B քո

4 B *չիք* ու կարմիր ... շրթունքները

5 B + [ամեն, ամեն... ձայնեցին ամեն կողմ բոլորը]

6 C ամեն կողմից *փխ* բոլորը

7 B Ուսասն

8 B *չիք*

9 C + Արդեն բողբաշը, մի քիչ էլ խաշած ու խորոված ձկները սեղանի վրա էին:

10 B [երեցփոխ Տոնոյինն էր] C Ներսես քհինն էր

11 B + [աչքերը փոխելով բոլորի վրա հանդիսավոր ձայնով ասաց]

12 B *չիք*

13 C կքարոզի

14 C կսորվեցնեն

15 B *չիք* Կես տարի է ...մարդ է դարձնում C կդարձնի

16 BC էնոր

Համար. մեռնիմ քո նպատակին[1], քո ճամբուդ ընկերներին[2]. պարոն Կայծակ ջան, ուխտդ կատար ըլնի[3]:

— Ամե՛ն, ամե՛ն,— կարկուտի պես վրա տվին[4] բոլորը. և[5] «Հայաստանը ազատ տեսնինք ու մեռնինք» երգելով[6] դավաթները մեկնեցին դեպի պարոն Կայծակը[7]:

Ընդհանուր աղմուկը կրկնապատկեց ատրճանակների պայթումը, որ դինվոր Հլդաթը և մի-երկու երիտասարդ կրակեցին նրա պատվին: Ջորը լցվեց արձագանգով, և վայրի աղավնիները իրենց անտես ծերպերից վախեցած թռան դեպի ծայռերի կատարները:

Ուստային հաճելի չեկավ հարգանքի այս նախանձելի արտահայտումը պ. Կայծակի անվանը[8]: Թեև ինքը[9], իբրև Դաշնակցական խմբերի անդամ, մի քանի անգամ[10] ներկա էր եղել պ. Շրջիկի[11] խոսքին ու քարոզին[12], և շատ[13] հարդում էր նրան. բայց թե՛ այս և թե՛ այն, որ նա Ուստայի թասի վրա բերան չբացեց, ինքն էլ հիմա չուզեցավ առանձին մաղթանքներ ու գովեստներ անել նրա կենացին[14]:

---

1 BC քու մուրազին C + մեռնիմ քու էդ

2 B *չիք* քո ճամբուդ ընկերներին

3 BC ուխտդ կատար ըլնի *փխ* բարով նպատակիդ հասնիս

4 B ուվեցին

5 C *չիք*

6 B *չիք* «Հայաստանը ազատ տեսնինք ու մեռնինք» երգելով

7 BC *չիք* դեպի պարոն Կայծակը

8 BC *չիք* Ընդհանուր աղմուկը ... նախանձելի արտահայտումը պ. Կայծակի անվանը:

9 C Թեև ինքը *փխ* Ուստան թեև վաղուց էր ճանաչում պ. Կայծակին և

10 C [լսել էր]

11 C պ. Շրջիկի *փխ* նրա

12 C խոսքին ու քարոզին *փխ* քարոզներին ու ղրույցներին

13 C + էլ

14 C բայց թե՛ այս և թե՛ այն ... անել նրա կենացին *փխ* սակայն [այսօր] այժմ չուզեցավ առանձին բարեմաղթություններ կամ գո-

Ուստան միշտ իր[1] դիմը ճանաչում էր և գիտեր, հարկը եղած տեղը, իրեն ծանր ու հարգևոր պահել[2]:

Աչուղը[3] ըմբռնելով վայրկյանը[4], ուժգին խփեց յարևրին ու որոտալից երգեց.

«Հայը բանտին չի վախենար,
Հայը մահին չի վախենար»...

Պարոն Կայծակը[5] ուղղվեց իր[6] տեղում[7], և փոքր[8] առճանակը առջևից տանելով դեպի կողքը, գլուխ տվեց և ցած ու լուրջ[9] ձայնով ասաց.

— Շնորհակալություններս[10], հայրենակիցնե՛ր...

վնասներ աներ նրա կենսային, որովհետև Կայծակը իր թասի վրա բնության չէր ցնցել:

1 D իրեն

2 B Թեև ինքը, իբրև Դաշնակցական ... իրեն ծանր ու հարգևոր պահել *փխ* Ուստան միայն նրանով էր հարևանցիորեն ծանոթացել պարոն Կայծակի հետ և [դեռ չէր մտերմացել] համարյա դեռ խոսք չէր փոխել հետը, դրա համար էլ ավելորդ համարից առանձին բարեմասլթություն անել. նա միշտ իրան պատիվը ճանաչում էր և գիտեր, հարկը եղած տեղը՝ [ծանր] իրան ծանր պահելու, մանավանդ որ իր թասի վրա Կայծակը բնության չէր ցնցել:

3 B Աչղ Փելեշը

4 B + խալուչն

5 BC + որ անվարժ էր ծալապատիկ նստելուն, և միշտ ծնկաչոք դիրք ուներ, ավելի

6 C *չիք*

7 B *չիք* իր տեղում

8 BC *չիք*

9 B *չիք* ու լուրջ

10 BC շնորհակալություն

Բերին հավով փլավը. աչուղն էլ[1] մասնակից էր հացկերույթին, մեջմեջ երգելով[2] սեղանակիցների կենացները, որ հերթով տեղի էին[3] ունենում:

– Ներո՛ղ եղնք, մի խոսք էլ ես ասեմ,– բարձր գոչեց ենթակոմիտեի եռանդուն անդամ Մացակը[4].– Էս թասն էլ խմենք մեր Փիլոս[5] ախպարի կյանքի համար[6]. խնդրենք ԱստվածուԹյունից[7], որ էս էրկու[8] հոգով[9] ընկերներուն[10] էն սերը տա մշտական[11], ինչ որ ունեցեր[12] են մինչի[13] օրս. իրարով ապրին, իրարով մխիԹարվին, ջան ասին, ջան լսին:

Եվ Թևը փարելով Ջավուշի[14] վզովը[15], գավաթը չրխկացրեց[16] նրա գավաթին[17]:

– Ապրի՛ս, Սանհեր Մացակ, լավ Թաս էր:

---

1 B Բերին հավով փլավը *փխ* Բերեցին հավով փլավը խորոված֊ի հետ մեկտեղ [և ուտում էին և կենացներ խմում, իսկ Փելեչը որ նուչնպես] C Փելեչն էլ

2 B երգելով *փխ* երգում էր և նվագում: + Գինու կարմիր ժպիտը փայլում էր ամենքի աչքերի մեջ: C + ու նվագելով

3 C էր

4 B անդամ Մացակը *փխ* մի անդամ: – Ներող ենք, Մացակ ջան, ասա՛, ասա՛: [Մացակը ասելուց առաջ հազաց և սկսեց:]

5 C Քերոբ

6 B Փիլոս ախպարի կյանքի համար *փխ* ախբեր Փիլոսի կենացը

7 BC աստվածուԹյունից

8 BCD երկու

9 B *չիք*

10 BCD ընկերներին

11 B *չիք*

12 BCD ունեցել

13 BC մինչև

14 BD Փիլոսի C Քերոբի

15 B [վզով] վզին

16 BC չրխկացրեց

17 BC դավաթին

– Փիլո՛ս[1] ջան, փնջփնջոտիս[2]:

– Ըսեր է ըսողը[3],– ընդհատեց սեղանակիցների բացականչումները Տոնոն[4],– նմանը որ նմանին չպատահի, օրն ախ ու վախով կանցնի: Ինքը[5] Տերը[6] երկար կյանք տա Փիլոս[7] ախպարիս իմ լավ Ուստա Կարոյի[8] համար[9]:

Մինչդեռ[10] Ջավուշ[11] Փիլոսը[12] ծնկների վրա հենված[13] ձախ ձեռքը կրծքին տված[14] աջով չնորհակալություն էր հայտնում[15], ձեռքը մեկ ճակատին դնելով, մեկ ծնկներին՝ լուրջ և հարգալից կերպով[16] Ուստան սրտից բխած ձայնով ասաց[17].

– Ջավո՛ւշ[18] ջան ու ջան, իմ անգին[19] ախբեր[20], ամեն բան սուտ, իմ ու քու[21] սերը՝ ղորթ[22]: Աստված է վկա, որ ես

---

1 C Քերոբ
2 B փնջփնջոտիս *փխ* մեկ ասես, տասը խնդաս
3 BCD Ասել է ասողը
4 B *չիք* ընդհատեց ... Տոնոն
5 B Հախ մլայն
6 B + քեզ
7 C Քերոբ
8 C Կարոյիս
9 B Ուստիս համար *փխ* Փիլոս ... համար
10 B Այնինչ
11 B *չիք*
12 C Այնինչ Քերոբը *փխ* Մինչդեռ Ջավուշ Փիլոսը
13 B Հենած
14 BC դրած
15 BC + բարեմաղթողներին
16 B դեմքով C [կերպով] + դեմքով
17 BC *չիք* Ուստան ... ասաց
18 B Փիլոս C Քերոբ
19 BC ազիզ
20 BC + չնշտելով ամեն մի բառը ասաց Ուստա Կարոն
21 D քո
22 B օղորթ

առանց քեզի օր չունիմ, դուն էլ առանց ընձի[1]. աչխարքը աչխարքի համար, Զավուչա[2] էլ ընձի[3] համար. իչխաննե՛ր, ողջ[4] ըլնիք, մենք էլ ողջ ըլնինք, Աստված լսող-կատարող ըլնի. Զավուշ[5] ջան, հոգիդ ուտեմ, արի մեկ[6] պռոշտի էննենք[7]:

Զավուշը[8] թռավ տեղից, մոտեցավ Ուստային[9], դրկեցին իրար ու կսկուծ համբուրվեցին:

– Օխա՛յ, օխա՛յ, մեկ է՛լ, մեկ է՛լ,– վրա տվին չորս կողմից[10]:

Նրանք[11] նորից համբուրվեցին:

Բոլորը զվարթ ծիծաղում էին ու ծափ տալիս[12]:

Ապա Զավուշը[13] ոտքի վրա կանգնած, գլուխը կախ[14] մեղմով[15] ասաց.

– Իչխաննե՛ր[16], Աստված ձեր բանն աջողի, ձեզ[17] ողջուԹյուն ու կյանք տա[18]. վարպե՛տ[19] ջան, քո չվաքդ

---

1 BC ինձի D ինձ
2 B Փիլոսն C Քերոբն
3 BC ինձ
4 B + [լինեք]
5 B Փիլոս C Քերոբ
6 BC մի
7 BCD աննենք
8 B Փիլոսը C Քերոբը D Փիլոս ախպարը
9 B Ուստին
10 B *չիք* վրա տվին չորս կողմից
11 B *չիք*
12 B ծիծաղեցին ու ծափ տվին *փխ* ծիծաղում էին ու ծափ տալիս
13 C Քերոբը BD Փիլոսը
14 B + աչքերը սուփրին բռած
15 BC մեղմ ձայնով
16 BC *չիք*
17 BC ձեզի
18 B + [էսպես] (ձեր երկեն ձեռքը չկարճեցնես)
19 B Ուստա Կարո C Ուստա

վրայես անպակաս ըլնի[1]*, դու ինձ*[2] *համար սարը Մասիս ես:*

Ու այս խոսքերի վրա[3] *մի խումով պարպեց գավաթը*[4]*:*

Օրը կիսվել էր[5] *արդեն*[6]*, գինու*[7] *գավն էլ կես էր դարձել*[8]*, ու*[9] *ամենքի աչքերի մեջ փայլում էր գինու կարմիր*

---

1 C [լինի]

2 B ինձի

3 B *չիք* այս խոսքերի վրա

4 B + ու նստեց: +

– Անուշներ, Փիլոս ջան,– ձայնեց Ուստան,– մի խաղ ասա, ախոռս չոնգուռս հետս չէ՝ ձեն բռնեի:

Փիլոսը [անուշ] գոված խաղ ասող էր [մանավանդ լավ բայաթիներ գիտեր:] Իշխաններն էլ միացան Ուստի առաջարկին:

Փիլոսը նազ չարեց, իսկույն շիտկվեց և միանգամից սկսեց.–

Սիրելիս, մի հատիկ ես,
Աշխարհի մեջ մի հատիկ ես,
Ես մեռնիմ – քեզի մատաղ,
Դու մի մեռիր, մի հատիկ ես:

Սիրելիս, երկրե երկիր,
Խալիդ գովքը երկրե երկիր,
Ինձի դրիր սապանի մեջ,
Ու քցեցիր երկրե-երկիր...

– Ապրի՛ս, ապրի՛ս, Փիլոս, յաշտ ապրիս,– գոչեցին, ասես, բոլորը մի բերանով:

5 BC կեսօր էր + եղել

6 B *չիք*

7 BC + երկրորդ

8 BC դառել

9 B և

ժպիտը[1]. *ծափ էին զարկում ու*[2] *բղավում*[3]: *Այս քանիերորդ անգամ էր*[4] *Հլղաթին*[5] *տրնկի*[6] *խաղալու*[7] *էին հանել, որ գետինը դոփում էր ու կրակված պարում*[8]:

Բոլորով[9], *բացի պարոն Կայծակից, կլոր պարի ելան: Սազը ճնկճնկում էր ու չափ*[10] *տալիս*[11], *իսկ Ուստան*[12] *ոգևորված*[13] *քաշում էր պարը իր ետևից*[14] *ու թև առած թռչում*[15]:

Թեև[16] *նա*[17] *ամենից շատ էր խմել, քանի որ, երեկ երեկո էլ, գործը ավարտելուց հետո, կարգին*[18] *կոնծել էր, և*[19]

---

1 B աչքին տալիքը առնելիք էր դարձել [այլևս իրար չէին հասկանում] *փխ* աչքերի մեջ ... կարմիր ժպիտը

2 B *չիք*

3 B + ու իրար համբուրում

4 C + որ գինովոր

5 B որ Ասլան Բալասուն

6 B տրինկի

7 B *չիք*

8 B որը խանչալը մի ձեռքին, տրճանակը – մյուս, կատաղի պարում էր, գետինը դոփում ու գլխի վերևից տրճանակը ժայռերն ի վեր կրակում *փխ* որ գետինը ... կրակված պարում

9 B [Ուստա Կարոն էլ պար...] Բոլորով

10 C չափը

11 B ճնկճնկում էր սազը Սազը ճնկճնկում էր ու չափ տալիս

12 BC Կարոն + (կարմիր (B + մեծ) թաշկինակը ձեռքում բռնած)

13 BC *չիք*

14 BC (ու իր բոլոր շնորհքը թափում) *փխ* իր ետևից

15 BC *չիք* ու թևատած թռչում

16 B + [Այնինչ]

17 B Ուստան

18 B լավ C մի լավ

19 C *չիք*

այսօր էլ, առավոտ չա՛տ վաղ[1], մի-երկու[2] բաժակ օղիով[3] բարի լույս[4] էր ողջունել[5], սակայն[6] դարձյալ[7] ամենից կանոնավոր ու գեղեցիկ պարոդն էր[8], մինչդեռ մյուսները ոտները իրար էին մճճում ու կանգնած տեղերը գլորվում:

Դե՛հ, Ուստային ո՞րտեղից կարող էին հասնել նրանք, գինու գեղված կարաս էր Ուստան[9]:

Պ. Կայծակը, նստած քարի վրա, դոհ ժպիտով դիտում էր պարը, բարակ ընչացքը անվերջ ոլորելով և ծխելով գլանիկը: Երբեմն էլ ծոցից հուշատետրը հանելով արագ-արագ մի բան էր գրում[10]:

Պարից հետո, երբ բոլորը հոգնած եկան[11] նստեցին իրենց տեղերը, Ուստան, քրտինքը սրբելով ճակատից[12], մոտեցավ Ախուրյանին, կռացավ և ջուրը բուռ-բուռ[13] խփեց ճակատին ու աչքերին, հետո[14] խմելով մի-երկու կում[15], ասաց.

---

1 B վաղ էլ *փխ* չա՛տ վաղ

2 BC քանի

3 B օղի

4 C լույսն

5 B արել *փխ* էր ողջունել

6 B բայց

7 BC նորից

8 B դեղեցիկ էր պարում *փխ* գեղեցիկ պարոդն էր

9 BC Ուստան գինու գեղված կարաս էր *փխ* գինու ... Ուստան

10 BC *չխք* Պ. Կայծակը ... բան էր գրում:

11 B *չխք* Հոգնած եկան

12 B *չխք* քրտինքը ... ճակատից

13 B բուռ-բուռ ջուրը վերցնելով *փխ* ջուրը բուռ-բուռ

14 B ապա

15 B *չխք* մի-երկու կում

– Է՛յ[1] մանկուլթ ճանանչ ու խմած ջուր, ակդ անսպառ. քեզ պես անուշ ջուր չեմ տեսել ո՛չ Հապաշ, ո՛չ Հալապ[2]...

Եվ նստեց մի քարի վրա[3] աչքերը[4] լարելով[5] գետին[6]:

Ախուրյանը այդ կետում, ուր կանգնել էր Ուստայի հայացքը, հոսում էր հարհանդ ու անխոս, ոտքը զգույշ փոխելով[7]:

– Ուստա, ի՞նչ ես ծովացել[8], ի՞նչ ես մտքում[9],– մոտենալով նրան[10], ականջի տակից փսփսաց[11] Մացակը[12]:

– Ոչինչ[13], Մացակ ջան, ոչինչ[14],– երեսը[15] չփելով մտազբաղ պատասխանեց[16] Ուստան.– աչքս էն հրաշքաղջկա վրեն է, որ մարմար մարմինը[17] հանում է ջրից, ա-

---

1 BC + գիտի

2 B Հնդստան C Հալեպ

3 C + ու

4 B լարած նայում էր C + [լարում էր]

5 C լարած նայում էր *փխ* լարելով

6 B + Լռություն տիրեց: Ուստեն աչքերը լարած նայում էր գետին:

7 B + (որ չսայթի, թե չէ շա՛տ խորն է այդտեղ ու տակետակ, որ սայթի բանը բուրդ է:)

8 BC ես ծովացել *փխ* կնայես

9 BC կմտքես

10 B *չիք* D նրա

11 B ձեննեց + [երեցփոխ Տոնոն]

12 BC Նորսեսը

13 B Հեչ D ոնչինչ

14 BC *չիք* Մացակ ջան, ոչինչ D ոնչինչ

15 BC աչքերը

16 C պատասխաննեց մտազբաղ *փխ* մտազբաղ պատասխաննեց

17 D ծծերը

նուշ երգով մարդու խելքն է թոցնում. դիտե՞ս, լսե՞լ ես էս բանը[1]:

– Մանկուց[2] լսողաց եմ[3], գիտեմ, ընչի՞[4] չէ[5]. բայց էդպես բան չկա[6], սուտ, պառավական զրույցք[7] է[8], առասպել[9]:

– Սո՛ւտ, առասպե՛լ[10],– հեգնանքով բարձր[11] կրկնեց Ուստան,– սուտ բանը չի խոսվի հարյուր տարիներով[12],

---

1 BC չէ՞ր, Նորսես ջան, մենք Աղջկա ձորումն ենք (B *չիք* մենք Աղջկա ձորում ենք), ախր էստեղ.– ջրի պես երկնեն մազերով մի [հրեղեն] հրաշք-աղջիկ (B *չիք* հրաշք) կապրի անմեռ ու անթառամ. էն ջրի մեջեն դուրս կհանեն մարմար ծծերը ու անուշ կերգե, էնպես որ լսողի խելքը կերթա, ու լսողը իրեն ջուրը կձգե՝ էնոր հասնելու, գրկելու. կասեն (B կըսեն), չա՛տ կտրիճների էն էսպես քաշել է ու էս քարափների մեջ վակել-բանդել... [ձեղնից տեսնող չի եղել էդ աղջկան] էն կնայիմ, կարելի է թե հանկարծ իրեն ցուց տա (B *չիք* էն կնայիմ ... ցուց տա + ականջս ձենի է՝ որ կանչե, Ասաված վկա, երթալու եմ,– կրակված վերջացրեց նա:
(Նորսեսը անդիտակ (B զարմացած), գլուխը շարժեց, ու դիմեց համապյուղացիներին (B *չիք* ու դիմեց համագյուղացիներին).
– Տղերք ջան, լսած կա՞ք (B չկաք) էս խոսքը *փխ* աչքս էն հրաշք-աղջկա ... լսե՞լ ես էս բանը: (C *պարբերության կողքին, ձախ լուսանցքում.* «Ուստային է ասում»:)

2 BC *չիք*

3 BC ենք

4 D ինչո՞ւ

5 BC *չիք* գիտեմ, ընչի չէ

6 BC + էդ առասպել է

7 D զրույց

8 B բաներ են *փխ* զրուցք է C զրույցներ են *փխ* զրույցք է

9 BC *չիք* + պատասխաննեցին մոտիկ եղողները:

10 BC Առասպել, սուտ (B + պառավական) բաներ *փխ* սուտ, առասպել

11 B *չիք*

12 BC *չիք* հարյուր տարիներով

Թե որ խոսվում է[1]*, ասել է*[2] *եղել է ու կա, թե որ*[3] *տեսնողաց չըլներ, լսողաց էլ չէր ըլնի:*

– Լա՛վ, թե որ էդ աղջիկը ցուց տա իրեն, ի՞նչ է, երթալո՞ց ես ետևից:

– Բա՛, խելառ եմ, որ մնամ,– կարճ կտրեց Ուստան:

Մացակը ծափ տվեց ծիծաղելով և, Ուստայի թևից քաշելով՝ ուժով բերեց սեղանին, և ծիծաղի միջից ասում էր անընդհատ.

– Տեղդ ամուր նստե, չարոցի չգաս, ափսո՛ս ես[4]*:*

– Էդ ի՞նչ է[5]*, իրար անցաք,– հարցրեց երեցփոխը*[6]*:*

Մացակը պատմեց եղածը[7]*:*

– Հա՛, Տոնո ամի,– հաստատեց Ուստան[8]*,– ականջս*[9] *ձենի է՝ հենց*[10] *որ կանչե, Աստված է*[11] *վկա, երթալու եմ. մի ժամվա լավ ապրելը հազար տարվա դատարկ*[12] *ապրելուց վեր է*[13]*:*

– Տո՛, խելառ,– դոչեց Տոնոն[14]*, ու ձայնին հայրական*

---

1 BC օրթե կխոսվի *փխ* թե որ խոսվում է

2 B ըսել է թե C + թե

3 BC օրթե *փխ* թե որ

4 BC *չիք* Լավ, թե որ էդ ... չգաս, ափսոս ես:

5 BC էլի

6 BC Տոնոն

7 BC Նորսեսը պատմեց Ուստայի ասածը *փխ* Մացակը պատմեց եղածը

8 B *չիք* Տոնո ամի ... Ուստան C *չիք* Հաստատեց Ուստան + կնայիմ

9 C + էլ

10 BC *չիք*

11 BC *չիք*

12 C դարդակ D դարտակ

13 B ավելի խանդավառ Հաստատեց Ուստեն իր տենչանքը *փխ* մի ժամվա ... ապրելուց վեր է

14 B + [Նորսեսը]

չեչտ տալով[1]*,– մեղք չե՞ս, քեզի*[2] *նման կտրիճ*[3] *տղամարդը կնիկ արմատի*[4] *կուլ երթա:*

– Ինչո՞ւ եմ մեղք[5]*, ինձ*[6] *կնիկ է ծնել, կնիկն էլ իրավունք ունի մեռցնելու. ուրիշի ձեռքից*[7] *ինձ մահ չկա*[8] *ու չեմ էլ ուզենա, ու ես էլ գերեզմանիս գիրը էսպես եմ ուզում ըլնի*[9]*:*

– Ինչպե՞ս, ինչպե՞ս[10]*,– հարցրին մի քանիսը*[11]*:*

Ուստան[12] *մտաբերելով իր մահկանացու լինելը*[13] *աչքերի վրա մի մեղմ տխրություն իջավ և, ամեն մի բառը չեչտելով*[14]*, ասաց*[15]*.*

---

1 BC *չիք* ու ձայնին ... չեչտ տալով

2 BC ափսոս չէ քեզ *փխ* մեղք չե՞ս, քեզի

3 BC *չիք*

4 BC աղջկա *փխ* կնիկ արմատի

5 BC Ի՞նչ ափսոս *փխ* Ինչո՞ւ եմ մեղք

6 BC ինձի

7 BC ձեռքեն

8 BC մահ չկա ինձի *փխ* ինձ մահ չկա

9 B մանկուքի ինձի հայտնի է, որ վերջս [կնկա] էդպես է ըլնելու ու ես էլ գերեզմանի գիրը ինձի համար, Ջավուշն էլ գիտե, ասել-պատրաստել եմ *փխ* ու ես էլ ... ուզում ըլնի C ինձի համար էսպես եմ ուզում [ասել ու պատրաստի կոտակել եմ Քերոբին] *փխ* էսպես եմ ուզում ըլնի

10 D *չիք*

11 BC – Հաստա՛տ (B + կըսես), Ուստա, կրակ չուտես (B *չիք* կրակ չուտես),– ձայնեց Մացակը,– ասա տեսնենք ի՞նչ է դերեզմանիդ գիրը: *փխ* – Ինչպե՞ս ... մի քանիսը:

12 B Ուստի CD Ուստայի

13 BCD *չիք* մտաբերելով իր մահկանացու լինելը

14 C ու մոտենալով սեղանին, հատ-հատ *փխ* և, ամեն մի բառը չեչտելով

15 BC + – ես կուզեի, (B + ասաց Ուստան) օրթն մեռնիմ էսպես գրեք տապանիս (B քարիս) վրա: B *չիք* և ամեն մի ... ասաց

Ուստա Կարոն ծնավ կնկա մեջքից,
Մեռավ կնկա անուշ ձեռքից[1].
Ջեմ անիծե[2] ես իմ բախտը,
Ապրի կնկա ոսկի թախթը[3]:

– Վա՛հ, պարոն Ուստա Կարոն բանաստեղծ է եղել,– լուրջ[4] և միաժամանակ զարմացած գոչեց[5] կայծակը:

– Գլխիդ մատաղ,– դարձավ Ուստան նրան,– հըպա[6], ո՞ր օրվա Ուստան[7] եմ եղել[8], որ բան չստեղծեմ:

Եվ հոգին լցվեց անուշ, հպարտ զգացումով[9]:

---

1 C Ուստա Կարոն սիրու վերքեն,
Մեռավ կնկա անուշ ձեռքեն (*այլ լուսանցքում.* «Ուստա Կարոն մեռավ սիրու ձեռքեն, չեմ...). *փխ* Ուստա Կարոն ... ձեռքից

2 CD անիծի

3 B [Ուստա Կարոն սիրո վերքեն
Մեռավ կնկա անուշ ձեռքեն]
Կնիկն ինձի արև տվավ,
Կնիկն ինձեն արևն առավ.
Ջեմ անիծի ես իմ բախտը,
Ապրի կնկա ոսկի թախթը: *փխ* Ուստա Կարոն ... ոսկի թախթը:
C [Աստ հանգչի Ուստա Կարոն,
Որ մեռավ կնկա անուշ ձեռքեն.
Ջեմ անիծի ես իմ բախտը,
Ապրած կենա կնկա ոսկի թախթը:] *փխ* Ուստա Կարոն ... ոսկի թախթը:

4 C ծիծաղուն

5 B ծիծաղուն աչքերով ասաց պարոն *փխ* լուրջ և ... գոչեց

6 CD բա

7 B Ուստեն

8 B *չիք*

9 BC *չիք* Եվ հոգին ... զգացումով:

– Կարո, ինձի նայե, քեզ[1] հետ եմ[2],– խոսեց[3] երեցփոխը,– լավ խոսքեր ես հնարե[4], բայց ասում եմ[5] նորեն[6]. կնկա համար մեռնելը ամոթ բան է:

– Ի՛նչ ամոթ կա,– տաքացած վրա պրծավ Ուստան[7],– Տոնո ամի, ներո՛ղ եղիր, ես քո տղադ[8] եմ, բայց թո՛ղ էսօր քովդ լեզու առնեմ[9]:– Ուստան միշտ ակնածում էր նրանից, թեև միշտ էլ[10] ազատ-համարձակ խոսում էր մոտը[11].– ամոթ է՝ փորի ցավից[12], եզան[13] քացուց մեռնելը, կամ թե մեր գեղացոց պես մեկ[14] խորոմ խոտի համար իրար[15] աղիք[16] թափելը: Պատվով մարդը[17] սիրած կնկա համար պիտի մեռնի: Երևելի խոսք է ասված ժամանակով[18],

---

1 C քեզի

2 B *չիք* քեզ հետ եմ

3 B ասայ

4 BCD հնարել

5 B կըսեմ ես C կասեմ

6 B *չիք* + որ

7 B Ուստեն

8 B տղեդ

9 B առնիմ

10 C *չիք*

11 B թեև հասակով տարբեր էին իրարուց, սակայն քեֆի ու զրույցի մշտական ընկեր էին,– տերտերի քարոզ կկարդաս *փխ* թեև միշտ էլ ... խոսում էր մոտը

12 BC ցավեն + [խոլերեն]

13 BC իշու

14 BC մի

15 B *չիք* C [իրար]

16 BC փոր

17 B տղամարդը C [մարդը] տղամարդը

18 B *չիք* Երևելի ... ժամանակով

Թե սեր չքաշած մարդը տխմար ռամիկ[1] է, թեկուզ թագը գլխին[2] թագավոր ըլնի[3]:

Ու ինքնավստահ չեչտով դիմեց պարոն Կայծակին.

– Ա՛յ, թող ինքը պարոն Կայծակը ասե, գիտակ մարդ է[4]:

Պարոն Կայծակը այս խոսակցության և այս դիմումի վրա սրտի մեջ ժպտաց. բայց ոչ մի նշանով չարտաբերեց դեմքի վրա, որ չվիրավորեր ոչ ոքի: Նա ներքին կրակով վառված և գաղափարով ներշնչված մի հոգի էր, որ սիրում էր ժողովրդին, որի համար և որի ծոցում գործում էր. բարձրից չէր նայում գյուղացիների վրա. բնավ ծաղր չուներ նրանց մտքերի և դատողությունների հանդեպ. նրանց[5] հետ այնպիսի նյութերի մասին էր խոսում, որոնց հասկանալու համար մարդ մշակույթ պիտի ուներ:

Նա այն կարծիքին էր, թե անուս գյուղացիները իրենց բնական խելքով ընդունակ են հասկանալու շատ գաղափարներ, որոնք իբրև թե միայն մտավորականներին են սեփական. եթե միայն գյուղացիներին՝ իրենց հասկանալի ձևով բացատրվին այդ գաղափարները:

Միայն մի ածականով բավ էր բնորոշելու նրան. «լուրջ» ածականով: Լուրջ մարդ էր առհասարակ, և մանավանդ ավելի լուրջ մարդու երևույթ էր տալիս իր դեմքին ու ձևերին: Անկեղծ էր իր զգացումների և արտահայտումների մեջ, բայց իբրև երիտասարդ զերծ չէր ցուցադրումից: Լրջորեն լսում էր գյուղացիներին և լրջորեն

---

[1] B գյապա է *փխ* տխմար ռամիկ է C գյադա

[2] B գլխուն

[3] B + Այստեղ պարոն Կայծակը մեջ մտավ:

[4] C չիք գիտնակ մարդ է

[5] D Հաճախ նրանց

պատասխանում նրանց միամիտ հարցերին, որոնց վրա մի ուրիշը պիտի խնդար արհամարհանքով:

Եվ լուրջ վերաբերում ու հավատ ուներ դեպի իր գործն ու մտքերը. նրա լրջությունը հասնում էր պարզամտության աստիճանին. նման երեխաներին, որ իրենց տղայական խաղերին այնպիսի հավատի և լրջության կնիք են դնում, որպիսին չունեին հաճախ մեծերի լուրջ արարքները:

Եվ այսպես ուշադիր նրանց վեճին, ուշադիր պատասխանեց նա ծանր ու ազդու մի վճիռի պես[1]*.*

— Ո՛չ, հազար անգամ ո՛չ[2]*, տղամարդը պիտի մեռնի ազգի համար. մյուս կամավոր մահերը անպատիվ բաներ են*[3]*:*

Ուստայի վրա պաղ ջուր ածեցին[4]*. չէր սպասում մի դիտնակ, երիտասարդ տղայից այսպիսի*[5] *պատասխան. ուղղակի մի վայրկյանի մեջ քեֆը թողեց ու*[6] *խիստ ամաչելով գլուխը կոր կախեց*[7]*: Ամենքը լուռ էին և անձայն նայում էին Ուստային. սակայն սա գլուխը կախել էր ու չէր տեսնում նրանց*[8]*:*

---

1 B *չիք* Ու ինքնավստահ չեչոտով ... մի վճռի պես C Այստեղ պարոն Կայծակը հանդարտությամբ ասաց, վճիռի պես: *փխ* Պարոն Կայծակը այս խոսակցության ... ծանր ու ազդու մի վճիռի պես.

2 BC *չիք* Հազար անգամ ո՛չ

3 B + ասաց վճռական ձայնով ու լուռ:

4 BC Ուստան Հանկարծակիի եկավ *փխ* Ուստայի վրա ... ածեցին

5 C այդպիսի

6 B *չիք* չէր սպասում մի ... թողեց ու

7 B խիստ ամաչեց և գլուխը կախեց *փխ* խիստ ամաչելով ... կոր կախեց

8 BC *չիք* և անձայն ... չէր տեսնում նրանց

– Խոսքը պատվական Ուստա Կարոն ինձ թողեց,– լռությունը խզեց պարոն Կայծակը[1], նկատելով, որ իր վճռական[2] խոսքը ներազդեց[3] նրանց[4] վրա[5] և վայրկյանը[6] պատեհ համարեց[7] իր քարոզչական դերը կիրարկելու[8]:

Բոլորը[9] ուղղվեցին նստած տեղերում[10]. ոմանք[11] սրբեցին ճակատները, ոմանք[12] ուշքերը[13] լարած՝ հայացքները բևեռեցին[14] նրա վրա[15]:

Նա[16] մի պահ հազալուց հետո խոսեց վճիտ ու հանդարտ ձայնով, որ քանի գնաց տաքացավ ու չեչտավոր-

---

1 B ասողը պարոն Կայծակն էր *փխ* լռությունը ... Կայծակը BC + նա

2 B *չիք*

3 BC ներգործեց

4 B Կարոյի C բոլորի

5 C + [ուզեց մտնել իր քարոզչի դերի մեջ] D հոգիներին

6 D *չիք* և վայրկյանը

7 D + վայրկյանը

8 B ուզեց մտնել իր քարոզչի դերի մեջ, և մանավանդ որ Ուստան իր այս բանաստեղծական ղգացմունքով (մեռնել սիրո համար) նրա երիտասարդ սրտին շատ հաճելի թվեցավ. [Կայծակը տեսավ] պարոն Կայծակին այնպես եկավ, թե Ուստեն հասարակ գյուղացիներից չէ, և որ կարող է դործին պետք գալ *փխ* և վայրկյանը ... կիրարկելու C *չիք* և վայրկյանը ... դերը կիրարկելու

9 BC Սեղանակիցները բոլորը

10 B *չիք* նստած տեղերում

11 BC մի քանիսը

12 BC մյուսները

13 C ուշքները

14 B ձդեցին

15 BC + նախապես դիտնալով, որ սա խելացի բաներ պիտի խոսի: (C-ում *ջնջված է*):

16 D չրջիկը

վեց, ինչպես լինում էր միշտ, մանավանդ որ այսօր ինչքան չլինի մի քիչ էլ գինով էր[1]:

– Սիրելի եղբայրներ. ձեզ հայտնի է, թե ես ինչի[2] *եմ ծառայում և թե որքա՜ն*[3] *սուրբ է այդ գործը*[4]:

– Ճշմարիտ է, ճշմարիտ է[5],– *վկայեցին ամենքը*[6] *միաբերան: Սակայն Ուստան նորից լուռ էր:*

Ապա շարունակելով իր խոսքը, ասաց, թե[7] *այդ գործը*[8] *ամեն*[9] *ազնիվ հայի սրտում կա, բայց*[10] *միայն Հ. Յ.*[11] *Դաշնակցության մեջ է մարմին առել*[12]*, ձենք ու ղրահ հագել*[13]*. և*[14] *այդ գործի*[15] *էությունն է*[16] *ազատել հայ*[17] *ժո-*

---

1 BC *չիք* Նա մի պահ ... մի քիչ էլ գինով էր:

2 BCD ինչ գաղափարի

3 B ինչքան

4 BCD գաղափարը

5 B [սուրբ է, սուրբ] *փխ* ճշմարիտ է C *չիք* ճշմարիտ է

6 B Հաստատեցին սեղանակիցները *փխ* վկայեցին ամենքը C Հաստատեցին սեղանակիցները բոլորը *փխ* վկայեցին ամենքը

7 BC *չիք* Ապա շարունակելով ... ասաց, թե

8 B սուրբը գաղափարը, որ C սուրբ գաղափարը + շարունակեց նա,– որ D գաղափարը

9 B + մի

10 C + որը

11 B *չիք* Հ. Յ.

12 B մարմին առավ

13 B Հագավ

14 B *չիք*

15 BD գաղափարի

16 B նպատակն է C մեջ ու նրա միջոցով մարմին առավ, ձենք ու ղրահ հագավ, այդ գաղափարի նպատակն է *փխ* մեջ է մարմին առել ... էությունն է

17 B Հայաստանը ու վրկել հայերին C Հայ[աստանը վրկել հայերին]

ղովուրդը[1] բռնակալի[2] լծից[3]: Գիտեք[4], որ[5] մեր պապական երկրի մի մասը[6], ուր հիմա դառն[7] արտասուքով[8] ապրում են մեր արյունակից[9] եղբայրները, Սուլթանի կրունկի տակն է՝ շղթայված և արյունլվա:

Սուլթանը[10] ղինեց տգետ ու գռեհիկ[11] քրդերին ու թուրքերին[12] և բաց թողեց[13] անզեն հայերի վրա, որ կոտորեն ծեր ու մանուկ[14], տղա ու աղջիկ[15], ջնջեն հայի[16] ծուխը[17] իր դարևոր[18] հայրենիքից[19]:

---

1 C + օտար

2 C բռնակալ

3 B *չիք* ժողովուրդը բռնակալի լծից

4 BC Դուք գիտեք + սիրելի եղբայրներ

5 C + Հայաստանը

6 BC պապերի հողը *փխ* պապենական երկրի մի մասը

7 B [արուն] դառն

8 B արյունքով C արտասունքով

9 B *չիք*

10 BC Գազան Սուլթանը

11 BC ու գայլերի պես բաց թողեց *փխ* տգետ ու գռեհիկ

12 BC թյուրքերին

13 BC *չիք* և բաց թողեց

14 C + մայր ու քույր

15 C + որ

16 B + արմատը

17 C արմատը

18 C *չիք*

19 BC + ծուխը կարեն Հավիտյան (B *չիք*) հայ օճախներից: Ձեզ հայտնի է նույնպես (B Մի՞թե ձեզ հայտնի չէ) այն սարսափելի արյան ծուլը, որի ալիքները հասան այստեղ, և մինչև աշխարհիս չորս (B *չիք*) ծայրերը:

Ուրեմն ի՞նչ է մնում մեզ (B *չիք*), հայերիս, եթե մենք պատիվ ունենք, և տղամարդ ենք կոչվում, եթե ոչ՝ միայն մի (B մեկ)

Հանցավոր չեն թուրք և քուրդ ամբոխը. մոլեռանդ են նրանք[1]: Հանցավորը նրանց դեկավարող ձեռքն է, Սուլթանը. վրեժ ունինք միայն և կռիվ Զարիքի արմատի դեմ...

Մեր ընկերակցության ծրագիրն եղբայրությունն է քարոզում ժողովուրդների մեջ, ազգերի միջև դաշնակցություն: Մեր[2] նպատակն է՝ հայրենիքում[3] հաց, լույս և խաղաղություն բոլորին, բոլորի համար: Բայց ի՞նչ է մնում մեզ հիմա, ներկայիս անելու, երբ ամեն օր մեր հեռավոր մայրերն ու քույրերը, հազարներով, լկվում են ու մորթվում, եթե ոչ կռվել ու մեռնել նրանց փրկության համար և ոչ թե մեռնել միայն մի աղջկա սիրուն:

Եվ ապա մեկ-մեկ ներկաների[4] աչքերի մեջ նայելով, սուր հայացքն ամփոփեց Ռւստայի վրա և կտրուկ ասաց[5].

— Հայ տղամարդը պետք է ասե սուլթանին. «Արևի տակ կամ ես, կամ դու»:

Հոգի դառնանք, [լուծենք մեր արյան վրեժը] և փրկենք մեր Հողն ու մեր հարազատներին (B եղբայրներին):

(Ես չեմ ուզում վիրավորել ազնիվ Ռւստա Կարոյին) Բայց քանի որ մեր ազգի մեջ հազար-հազար կիներ՝ մեր հեռավոր քույրերն ու մայրերը, մեռան ու ամեն օր մեռնում են ազգի պատվի համար քրդի ու թյուրքի յաթաղանից, ամո՞թ է, չա՛տ ամոթ (B *չի՛ք* շատ ամոթ), որ մենք մեռնենք (B + միայն) մի կնոջ համար.) Հայ տղամարդը հիմա պիտի միայն (B [միայն]) կռվի ու մեռնի բոլոր-բոլոր հայ քույրերի և մայրերի համար. (C *պարբերության հոդքին, ձախ լուսանցքում.* «Կայծակն է պատռում»):

1 D + և վայրենի

2 D Ներա

3 D ազատ Հայրենիքում

4 D ներկայիներնի

5 BC *չի՛ք* Հանցավոր չեն ... կտրուկ ասաց.

Պարոն Կայծակը[1] վերջացրեց ճառը[2]: Բոլորը, որ չունչ-ները պահած լսում էին, հառաչեցին մի մարդու պես[3]:

– Ա՛խ, էդ գեչ Սուլթանը, նզովք նրա[4] թախթին,– գլուխը թափահարելով մրմնջաց[5] Տոնոն:

– Արուն[6] ելավ ծովերու պես ծով կապեց[7],– կանգնած տեղից տխուր սրտով[8] խոսք ձգեց Հլղաթը, որ բնիկ[9] Մշու դաշտից էր[10]:

– Էյ վա՛խ, էյ վա՛խ,– հոգոց հանեց Զավուշը[11], որ վաղուց գաղթած[12] էր Բասենից[13].– էդ գազանի ձեռքից[14] արուն են լալում ամենքը[15]:

Բոլորը մի հարվածով զգաստացել էին[16]. գինու զո-րությունը տեղի էր տվել արյունի հուշերի առջև[17]:

---

1 BC + ոգևորված

2 B իր խոսքը [(և մի բաժակ սառը ջուր խմեց)] C իր խոսքը

3 B Ամենքը մինչև սրտի խորքը հուզվել էին [– Ախ, էդ գել Սուլթանը, նզովք թախ...] *փխ* Բոլորը չունչները պահած ... մի մարդու պես: C Կարոն չունչը կտրած լսում էր. ամենքը մինչև սրտի խորքը հուզվել էին: *փխ* Բոլորը չունչները պահած ... մի մարդու պես:

4 C էնոր

5 C հառաչից *փխ* գլուխը թափահարելով մրմնջաց

6 C Արյունն

7 C գնաց *փխ* ծով կապեց

8 C չիք տխուր սրտով

9 C + երկրից էր

10 C չիք

11 C Քերոր ախպարը D Փիլոս ախպարը

12 C գաղթել

13 C Բասենա [գյուղերի] գավառից

14 C ձեռքեն + գարի-գարի կուգան ամենքը

15 C արուն կուլան *փխ* արուն են լալում ամենքը

16 C Ամենքը քեֆերը թողել էին *փխ* Բոլորը ... զգաստացել էին

17 C գինին տեղի էր տվել արյունի հուշերի առաջ *փխ* գինու զորությունը ... հուշերի առջև

Գլուխները կրծքներին[1] կախ, կնճիռները ճակատներին հավաքած՝ մտորում էին[2]...

Ուստա Կարոն, որ պարոն Կայծակի փայլուն ու ծակող հայացքից շանթահար էր եղել ու պապանձվել, հիմա ղգում էր իրեն պզտիկցած, բոլորի առջև խաղք եղած, որ թույլ էր տվել իրեն տղամարդու[3] անվայել փափագներ հայտնելու: Չէ՞ որ նա լսել էր հենց պ. Կայծակից, գաղթականներից, Թորոս[4] վարժապետից հայերի չարդերի մասին. անտեղյակ լիներ, ուրիշ բան... Եվ մեկ էլ սթափվածի պես, ձեռքը ամուր զարկեց ճակատին, ասես, մի բան հանկարծ հիշելով, մի շնչով ասաց.

– Պարոն Կայծակ, դրան ո՞վ է դեմ. ես ինքս էլ Դաշնակ եմ, ու[5] պատրաստ եմ մեռնել ազգիս համար: Զավուշն էլ հետս. խոսքս խոսք է[6]:

---

1 D կուրծքերին

2 C *չիք*

3 D տղամարդի

4 D Թաթոս

5 B Ուստա Կարոն՝ որ չունչը պապած լսում էր, մեկել ասես, սթափվեց, խոր շունչ առավ, և ձեռքը ամուր զարկելով ճակատին ասավ.– Պարոն Կայծակ, [նպատակիդ մեռ...] դու մեծ խոսք ասիր, [ով կրնա բան ասե] քեզի խոսցնող նպատակիդ մատաղ, էդոր ո՛վ է դեմ, ես *փխ* Ուստա Կարոն, որ ... Դաշնակ եմ, ու C Ուստա Կարոն որ մինչև այդ՝ պապանձված էր, մեկ էլ սթափվեց, ձեռքը ճակատին ամուր զարկելով, ասես թե մի բան հանկարծ հիշեց, որ վախուց որոնում էր, ու մի շնչով ասաց.– Պարոն Կայծակ, դու մեծ խոսք ասիր, քեզի խոսցնող նպատակիդ մատաղ, էդոր ով է դեմ, ես [ես ինքս Դաշնակ եմ, Հայոնի է ամենքին, ու «Ղևոնդ երեց» խմբի անդամ. Թաթոս վարժապետը մեզի չա՞ր բան է ասել Հայաստանի համար ու փող ուղիլ, բայց մեզի կռիվ գրկելու համար բան չի ասել. հիմի, որ բանն էրանել նկավ, ես] *փխ* Ուստա Կարոն, որ ... Դաշնակ եմ, ու

6 B Ինչ խոսք, Զավուշն էլ, որ այլապես, կմեռնի ինձի հետ [ազգի] Հայաստանի համար *փխ* Զավուշն էլ ... խոսք է

Եվ աչքերը[1] կախեց պարոն[2] Կայծակի չրթներից[3] մի բախտորոշ վճիռ ստանալու համար. իսկ սա նրա[4] հանկարծական վճիռը վերագրեց գինու ազդեցությանը և մտածում էր մի[5] խուսափուկ պատասխան տալու[6], երբ Տոնոն մեջ ընկավ[7].

---

1 D աչքը

2 C *չիք*

3 C չրթունքներից

4 C Շրջիկը Ուստայի *փխ* իսկ սա նրա

5 C + երկդիմի

6 C + վրա

7 B Եվ աչքերը կախեց Կայծակի չրթունքներից:

– Ապրիս, Ուստա Կարո, բայց այդպես չո՛ւտ վճիռ տալու չէ:

Ուստան չվոխվեց, չիմացավ ինչ պատասխան տար:

– Ա՛խ, էդ գեչ Սուլթանը, նզովք էնոր թախթին,– հառաչեց երեցփոխ Տոնոն:

– Արյունն ելավ ծովերու պես գնաց,– կանգնած տեղից խոսք ձայնեց Ասլան Բալասին, որ ինքը բնիկ երկրից էր:

– Էյ վախ, է՛յ վախ,– հոգոց հանեց Փիլոս աղբարը, որ վաղուց գալթել էր Էրզերումի կողմերից,– էդ գաղանի ձեռքեն զարի-զարի կուպան ամենքը, արուն կուլան...

Բոլորը քեֆերը թողեցին. գինին տեղի էր տվել արյունոտ հուշերի առաջ: Գլուխները կրծքերին կախ, կնճռոտ ճակատներին հավաքած (ասես ուրախ սեղանի վրա չէին, այլ [նոր ն...] մի [սիրելի նոր] սիրած նորոգ ննջեցյալի հոգեհացի):

– Էդ Սուլթանի հախից գալը էնքան էլ գժար բան չէ,– որոտմունքով կարեց սգավոր լուռթյունը Ուստա Կարոն,– բայց հայերս միաբան չենք. երկինքը վկա, մեծ խոսալ կամ գարծեննալ չըլնի, ավելք ինձի, չա՛տ չեմ ասի, 5000-1000, սրտոտ տղամարդիկ, լավ սապաղ մտած, հրնդեն ձիերով, օսմանլու հողի էս գլխեն մանիմ, ավլեմ-սրբեմ ինչքան ասկյար առջևս գա, դուրս գամ Ստամբոլ, Սուլթանին իրեն թախթեն գլխի վրա կախեմ:

— Տո՛, քո տունը չծակվի, որ կրակվում ես[1], էլ չդիտես[2] ի՛նչ մեծ քար վերցնես[3]. մեծ քար[4] վերցնողը զարկելու միտք չի ունենա, թե կարաս[5] պատիկը վերցրու:

Ու քմծիծաղով բոթեց արմունկով նրա[6] կողքը[7].

— Քեզնից Հայաստան գնացող չի ըլնի. տեղդ ծանր նստի:

Ուստան անզուսպ կերպով երեցփոխի[8] վրա պրծավ[9].

— Տոնո ամի, Աստված վկա, գնացողն եմ ու ամենեն մեծ քարը վերցնողը[10] ու Սուլթանի գլխին զարկողը[11]...

Եվ բորբոքուն աչքերը վառեց Տոնոյի վրա[12]. ապա դառնալով նայեց ուղղակի շրջիկի աչքերի մեջ[13]:

Մեկ չնչով ասաց Ուստեն և աչքերը մեկ-մեկ պտտցրեց անդանակիցների վրա, հավանության նշաններ փնտռելով նրանց [դեմքերի վրա] հայացքների մեջ:

Պարոն Կայծակը աննշմարելի քմծիծաղի տվեց: *փխ* եվ աչքերը կախեց ... Տոնոն մեջ ընկավ.

1 C կկրակվես

2 C *չիք* էլ չդիտես

3 B + [Կարոս]

4 C քարը

5 BC կրնաս *փխ* թե կարաս

6 C Ուստայի

7 B խնդալով ասաց Տոնոն և արմունկով բոթեց Ուսի կողքին *փխ* Ու քմծիծաղով ... նրա կողքը

8 C *չիք*

9 B *չիք* Քեզնից Հայաստան ... վրա պրծավ C եկավ

10 C վերցնող

11 C զարկող + [Սուլթան, կամ ե՛ս, կամ դո՛ւ:]

12 C + և

13 B զարկելու եմ... [Թող պարոն Կայծակը ինձի գործի մեջ առնե...] — և Ուստեն նայեց Կայծակի աչքերին: *փխ* գնացող եմ ... շրջիկի աչքերի մեջ:

Պարոն Կայծակը նրա[1] այս մեծխոսիկությունը նույնպես[2] վերագրեց գինուն[3] և[4] հարկ համարեց այս խոսակցությանը վերջ տալ[5]:

— Մեծ քարի ու պստիկ[6] քարի խնդիր չկա. ամեն մարդ[7] պետք է իր պարտքը կատարե իր ուժերի համաձայն[8]. մարդու արժեքը իր վճիռի, իր կամքի մեջն է: Հա՛, սիրելի հայրենակիցներ[9], ներեցեք. ես ստիպված եմ սեղանը թողնել[10]. գործեր ունիմ. խորին չնորհակալություն, ցտեսություն[11]:

Եվ ոտքի ելնելով մնաս բարևի[12] ձեռք մեկնեց[13] բոլորին[14], ամենից առաջ երեցփոխին, ապա մտերմական ժպիտով սեղմեց Ուստայի ձեռքը[15]: Ուստան երկու ափերի մեջ առավ նրա ձեռքը և բոլոր սրտով ասաց.

— Քեզի խոսցնող նպատակիդ մատաղ, պարոն Կայծակ:

---

1 B Ուստի

2 B *չիք*

3 B գինու ազդեցությանը [և նրա չատ բռնկվող-բանաստեղծ բնավորությանը]

4 C ու

5 B *չիք* և Հարկ համարեց ... վերջ տալ C + ասելով

6 B Մեծ քարի-պստիկ քարի *փխ* Մեծ քարի ու պստիկ քարի

7 B + [իր կարողացածի չափ]

8 B տեղը եկած ժամանակը պղտիկ քար վերցնե, տեղը եկած ժամանակ՝ մեծ *փխ* իր ուժերի համաձայն

9 B եղբայրներ BC + ինձ

10 B + դյուղում C + [դյուղում]

11 B մնաք բարև

12 B *չիք* մնաս բարևի

13 B ավից

14 BC *չիք*

15 B + նույնպես բոլորի և Ասլան-Բալասու հետ ընկալ ճամբա:

Երբ դինվոր Հլդաթի հետ շրջիկ-քարոզիչը գնաց, Ուստան երկա՛ր, մտորուն նայեց նրա ետևից, ապա նստեց իր տեղում: Նա չա՛տ գոհ էր, որ շրջիկը մասնակի ուշադիր եղավ իրեն, ժպտաց. միայն հայտ չբերեց այս զգացումը, այլ անտարբեր կերպով[1] ասաց[2].

— Պարոն Կայծակը չա՛տ խելքը գլխին տղա է. իմաստուն խոսքեր ասաց:

— Ինչ ասել[3] կուզե, գիտնակ ուսումով մարդ է. թե չէ կոմիտեն ինչո՞ւ պիտի դործի մեջ առներ,— պատասխանեց ենթակոմիտեի անդամներից մեկը[4]:

---

1 C նույնպես բոլորին և Հլդաթի հետ ճամբա ընկավ: Նրա դնալուց [հետո] քիչ հետո Ուստան *փխ* Ուստան երկու ափերի ... անտարբեր կերպով

2 B Նրանց դնալուց հետո Ուստան ասաց *փխ* Ուստան երկու ... անտարբեր կերպով ասաց

3 B ըսել

4 BC + Այդ միջոցին մի քանի պյուղացիներ էին անցնում այդու վերևով:
— Ո՞վ եք,— ձայն տվեց Ուստան,— (B + կայնեք) արեք էստեղ մի-մի թաս անուշ արեք:
Ջորս հոգի էին անցորդները (B + [որոնք խակուլն մոտեցան]):
— Բարև ձեր հրամանոցը,— ասացին նրանք մոտենալով (B *չիք*):
— Բարով եկաք, ո՞րտեղացի եք,— հարցրեց Ուստան:
— Մավրակցի ենք:
— [Ինձի կճանչնաք,— հարցրեց Ուստան:] Բա, ինչպես ես ձեզի չեմ ճանչնա (B *չիք* Բա ... ճանչնա):
— Մենք Ղարս կաշխատեինք (B *չիք* Մենք ... կաշխատեինք):
— Ինձի կճանչնա՞ք... (B + հարցրեց Ուստեն)
— Ի՞նչի չէ (B *փխ* չենք ճանչնա), դու մեր Ուստա Կարոն չե՞ս:
— Հա, մատաղ ձեզի,— ուրախացած ասաց Ուստան:— Դեհ (B *չիք*), էս թասերը վերցրեք, էս ձվեն, էս պանիրեն (B *փխ* խորոված ձեն) անուշ արեք,— ու «Աստված ձեզի հետ, հարցնող կըլնի, չմոռանաք

Սակայն Ուստան չէր լսում. նա հոգով ներկա չէր այնտեղ. նա մտածում էր: Տոնոն կարծելով, թե նա վիրավորվել է իր հեգնանքից, ուզեց սիրտն առնել. գավաթը օղիով լցրած՝ մատուցեց նրան՝ բարի ձայնով.

— Կարո ջան, խմե՛ էս մեծ գավաթը, մեծ քարը մոռցի՛. տնաշեն, իսկի հանաք չես վերցնում, ես քեզ էդպես չգիտեի:

Ուստան ելավ մտքերի միջից:

— Տոնո ամի, կնաս կտրես, քեզնից նեղացող չկա,— և մի ումպով խմեց օղին:

Երեցփոխի ակնարկի վրա, Փելիշը զվարթ մի եղանակ նվագեց, և ընդհատված ու վերջին մոտեցած քեֆը նորից ընթացք առավ: Նորից զվարթ ծիծաղում էին ու զվարճանում անցածը մոռացած[1], երբ Մացակը հարբած մարդու լրջությամբ դիմեց Ջավուշին[2].

— Հը՛, Փիլոս[3] ջան[4], դո՞ւն էլ Ուստայիս[5] պես ազգասեր ես[6]:

ասել (B *փխ* չմոռնաք ըսել), որ Ուստա Կարոյի քեֆը շա՜տ լավ է»,— ասաց Կարոն, ու (B *չիք* ասաց ... ու) մի զվարթ ժպիտ թափառեց ամենքի երեսով:

Անցորդները ոտքի վրա կերան-խմեցին, և չնորհակալ լինելով (B *փխ* չնորհակալություն տալով) նորից ճամփա ընկան:

— Լ՛հ, մենք էլ երթանք,— ասաց Տոնոն ոտքի ելնելով: (B *չիք* Էհ ... ելնելով)

1 D մոռցած

2 BC *չիք* Սակայն Ուստան ... դիմեց Ջավուշին

3 C Փեթոր

4 B պրաւ

5 B Ուստիս

6 BC + դիմեց Փեթորին (B *չիք*) երեցփոխը, որ շատ էր սիրում կատակել (B ընկնել) թե Կարոյի, թե Փեթորի (B *փխ* Ուստայի և Փի-

Փոխանակ Զավուշը[1] *պատասխանի, պատից ընկածի պես վրա եկավ Ուստան.*

– Ի՞նչ եք մտքում, Զավուշս ամենալավ հայն է, որ կա[2]*: Կեցե՛ք*[3] *մի պատմություն անեմ, տեսնք, թե նա*[4] *ո՞վ է ու ի՛նչ ազգասեր հոգի ունի: Էս օրից*[5] *չիտակ երկու տարի առաջ ես ու ինքը Արազի գեղն էինք երթում*[6]*, անցանք Անի քաղաքի ձորաբերնից մի-երկու արտ հեռու կածանով, նորեն տեսա Անին*[7]*, սիրտս մղկտաց, դարձա Զավուշիս*[8] *ասի.– Զավուշ*[9] *ջան, է՛ստեղ*[10] *մեկ կանգնի: Զավուշս*[11] *կանգնավ:*

Այս խոսքի վրա Ուստան ինքն էլ կանգ առավ, դանդաղորեն դրպանից հանեց ծխատուփը և դանդաղորեն,

---

լոսի) հետ. սակայն սրանք երբեք չէին վիրավորվում նրա կատակներից, որովհետև խորապես հարգում էին նրան և պիտեին (B չիք և պիտեին), որ սա (B նա) էլ իրենց (B սրտանց) չատ է սիրում ու պատվում (B + սրանց):

– Տոնո ամի, ես չդիտեմ, Ուստաս գիտե (B + [իմ սիրտը]),– պատասխանեց Քերոբը (B Փիլոսը) գլուխը համեստորեն կախ ձգելով:

1 D Զավուշի

2 BC – Տո՛ ի՞նչ կասեք (B կըսեք),– քարափից ընկածի պես վրա եկավ (B պրծավ) Ուստան (B Ուստեն),– Քերոբս (Փիլոսս) ամեններն լավ հայեն լավ հայ է *փխ* Փոխանակ Զավուշը ... Հայն է, որ կա

3 B կայնեք C կանգնեք

4 B Փիլոսս C էն

5 BC օրեն

6 BC գեղը կերթայինք

7 BC տակով *փխ* ձորաբերնից ... տեսա Անին

8 B Փիլոսիս C Քերոբիս

9 B Փիլոս C Քերոբ

10 B հալա C հըլա՛

11 B Փիլոսս C Քերոբս

գինովի մատներով, մի հաստ գլանակ փաթթեց, ունկնդիրների հետաքրքրությունը, կարծես, դիտմամբ ավելի գրգռելով, վառեց[1], մի-երկու կում, ագահաբար, ներս քաշելով ծուխը, հարեց[2].

– Ջավուշս կանգնավ[3]: Ասի, Ջավո՛ւշ[4] ջան, թե որ[5] Անին նորեն նոր չննցնեն, ի՞նչ կուտաս: Ջավուշս[6] թե՝ մեկ միլիոն մանեթ կուտամ: Ջէ՛, Ջավուշ[7] ջան, ասի, թե որ[8] լա՛վ, լա՛վ չննցնեն, պայծառ նորվի ու հայի[9] թագավորն էլ մեջը նստի, ի՞նչ կուտաս: Ջավուշը[10] թե՝ Ուստա ջան, ի՞նչ կուզես որ տամ: Ես էլ[11] հինգ միլիոն կուտա՞ս[12]: Կուտամ, Ուստա ջան, կուտամ, ասավ[13]: Մեկ խոսքս երկու չարավ[14]: Դե՛հ, հիմի տեսա՞ք[15], էդպես հայ ո՞րտեղից[16] կգտնեք[17]:

---

1 D ծուխը վառեց

2 D *չիք*

3 BC *չիք* Այս խոսքի վրա ... Ջավուշս կանգնավ

4 B Փիլոս C Քերոբ

5 BC օրթե *փխ* թե որ

6 B Փիլոսս + մեկ բերան C Քերոբս + մեկ բերան

7 B Փիլոս C Քերոբ

8 BC օրթե *փխ* թե որ

9 B Հայու

10 B Փիլոսը C Քերոբը

11 C + թե

12 BC կտա՞ս

13 BC *չիք*

14 C + աղքատ տեղով հինգ մլլիոն կուտա

15 BC տեսեք

16 BC ո՞րտեղեն

17 BC կգտնիք

– Ղորթ է ասում վարպետս, Աստված վկա[1], որ ունենամ, կուտամ,– հավաստեց Զավուշը[2]:

– Որ ունենաս՝ կուտաս,– հռհռացին բոլորը[3] ու ծափ ծափի[4] տվին,– դարտակ ամբար, անտակ կոտ. չափե՛ ու չափե՛, մեջն ի՞նչ ունիս, ի՞նչդ կերթա[5]...

– Էստեղ ի՞նչ կա խնդալու,– բարկացած ու վիրավորված վրա բերեց Ուստան[6],– բանը մարդուս[7] սիրտն է, սրտից[8] պիտի բխի[9], որ ձեռքը տա. ու[10] ձեռքը կուտա, թե որ սիրտն ուզենա[11]...

Ուստայի խոսքը կարեց աչուղ[12] Փելեշը կողքից մի խոսք նետելով.

– Ասած է՝ ձեռքը կա՝ սիրտը չկա. սիրտը կա՝ ձեռքը չկա:

– Ապրիս, Փելեշ, իսկն ասացիր,– դոչեց Ուստան[13].– հա՛, էն էլի ասում[14], թե ա՛յ ինչքան հարուստ, Աստծու

---

1 BC Աստված վկա, ղորթ կասի Ուստաս (B *փխ* կըսի Ուստա Կարոն), էստեղ սուտ չկա *փխ* Ղորթ է ասում ... Աստված վկա

2 BC *չիք* Հավաստեց Զավուշը

3 BC սեղանակիցները

4 B *չիք*

5 B *չիք* մեջն ինչ ... ինչ կերթա

6 B Կարոն

7 B + [սրտի մեջն է]

8 B սրտեն

9 BCD բխեղա

10 B *չիք* որ ձեռքը տա. ու

11 B + թե չէ՝ այ, էնքան հարուստ Աստծու կրակի տեր հայեր կան՝ որ ուզենան չէ թե հինգ միլիոն, տասը հինգ միլիոն կուտան, մինակ չեն ուզենա, քանի որ սիրտ չունին, հասկյա՞ք: C օրթե սիրտն ուզենա, ձեռքը կուտա *փխ* ու ձեռքը կուտա ... ուզենա

12 C *չիք*

13 C + ու չարունակեց թելը

14 C կասի

կրակի տեր հայեր կան, որ ուզենան չէ թե հինգ միլիոն, տասը հինգ միլիոն կուտան, միայն չեն ուզենա[1], սիրտ չունին: Պարոն կայծակն էլ էդ մտքով ասավ, թե բանը կամեցողության[2] մեջն է. հիմի հասկցա՞ք...[3]

– Ուստայիս[4] լեզվի վրա ո՞վ կրնա գա,– վեճը կնքեց[5] երեցփոխը և օրորվելով ոտքի կանգնեց,– երթանք, ուշ է. իրարուց կշտանալ չի ըլնի. երթանք, կեսն էլ Աստրծով, մեկ ուրիշ անգամ[6]:

Արդեն երեկոյան ստվերները խտանում էին ձորերում[7]: Բագրանի մեծերը[8] Ուստային[9] մեջներն[10] առած՝ իրար թև մտած, ծանր ու դանդաղ գլորվելով, աղմուկ-ծիծաղով[11] մտան Բագրան: Պատերի տակ նստած գյուղացիները[12] հարգանքով ոտքի էին ելնում[13]. հարս ու աղջիկ դռների[14] ճեղքերից ու[15] անկյուններից ծկլատում էին կերուխումից դարձող[16] իշխաններին:

---

1 C + քանի որ

2 C կամքի

3 B *չիք* Ուստայի խոսքը կտրեց ... հիմի հասկցաք

4 B Ուստիս

5 B վեճը կնքեց *փխ* կնքեց վեճը

6 BC *չիք* երթանք, ուշ է ... մեկ ուրիշ անգամ

7 B ձորում

8 BC իշխանները

9 BC Ուստին

10 BC մեջերն

11 BC Ուստան էլ թևերը ձգած նրանց վզովը – երդով, աղմուկով *փխ* իրար թև մտած ... աղմուկ-ծիծաղով

12 BC գյուղացիք

13 BC կանգնում + և

14 C + [անկյուն...]

15 B *չիք* ճեղքերից ու

16 B ևս դարձող

Նրանց ականջին դիպան Ուստա Կարոյի կրակոտ խոսքերը.

– Ձեզի բան եմ ասում[1], ուզածս տղերքը տվեք, Սուլթանին գլխի վրա կախեմ. ու հայերի լացի[2] ձենը կտրվի ականջներից[3]...

---

1 B կըսեմ C կասեմ

2 BC *չիք*

3 BC ականջներես + խոսքս խոսք է

Բ. ԳԼՈՒԽ
<Ա. տարբերակ>

<ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ>

Ուստա Կարոյի և Ջավուշի ճչմարիտ և[1] *իսկական ծագումը՝ թե բնիկ որտեղացի են, առաջ ինչ մարդիկ են եղել, ի՛նչ գործով են պարապելիս եղել, կին ու տուն ունեցել են թե ոչ, ի՞նչ երկրներ են եղել, և վերջապես ինչպես և ո՞րտեղ են իրար հանդիպել ու ընկերացել.— [հայտնի] գիտեն միայն իրենք, և իրենց պատմությունների համաձայն էլ գյուղացիները:*

Որովհետև նրանք բնիկ այդ գյուղերից չէին և նրանց մանկությունն ու երիտասարդությունը չէին անցել գյուղացիների հետ միասին[2]*, դրա համար էլ գյուղացոց աչքին նրանց անցյալը մնում էր միշտ խորհրդավոր քողով ծածկած, թեև առհասարակ հավատում էին նրանց պատմություններին և ի՞նչ իրավունք ունեին չհավատալու, քանի որ Ուստան հազար փաստերով ճչմարտախոսի արդար համբավ էր հանել գյուղացիների մոտ, նա երբեք իր տված խոսքը*

Համեմատվող բնագրային միավորները.

A = ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 16-30:

B = ԳԱԹ, ԻՓ, 287ա-II, էջ 14-24:

[1] B *չիք* ճչմարիտ և

[2] B [աչքերի առաջ]

չէր դրժել, սուտ վկայություն չէր տվել, բամբասանքներ ու զրպարտություններ չէր սիրում և չէր անում. առօրյա դրծերի, առևտուրի մեջ աղնիվ էր, ճշտապահ, չիտակ:

Մի՞թե դյուղերում և մանավանդ քաղաքներում քիչ կան մարդիկ, որ տարիքն առած հասակ[ով]ում, դալիս են օտար երկրամասից, հաստատվում են [այն նոր տեղ...] բոլորովին անծանոթ նոր բնակավայրում, գործ են սկսում, հաց վաստակում ու ամուսնանում, և պատմում իրենց անցյալը, գլխի գալածները և ոչ ոք իրավունք չի համարում չհավատալ, [միայն] սոսկ այն պատճառով, որ մանկությունից նա իրենց հետ չի ապրել[1]:

Գյուղացիք այսօրվա պես հիշում էին, որ մի 8-9[2] տարի առաջ Ուստա Կարոն և Քերոբ[3] աղբարը՝ էշն առաջները ձգած, երևացին սկիզբը Քիրս գյուղում, ապա թափառեցին մի փոքր ժամանակ գյուղ գյուղ աշխատելով, և[4] տեղավորվեցին Նախճվան գյուղում[5] Շեկոյենց Օսկանի տանը[6]: Այն օրվանից մինչև այսօր նրանք ապրում են այս շրջանի [բոլոր] գյուղացիների հետ, նվազ բացառությամբ[7] այնպես[8] ծանոթ ու հարազատ, ասես թե մանկությունից իրար հետ մեծացած լիններին:

Մի[9] հայացքով առած՝ Ուստա Կարոն[10] սիրուն տղամարդ էր. առողջակազմ, լայնաթիկունք և միջահասակ: Ուներ կա-

---

1 B *չի՛ք քանի որ Ուստան ... իրենց հետ չի ապրել*
2 B 7-8
3 B Փիլոս
4 B + *իսկույն*
5 B Նախջվանում
6 B *չի՛ք Շեկոյենց Օսկանի տանը*
7 B *չի՛ք նվազ բացառությամբ*
8 B + [*մտերիմ*]
9 B Առաջին
10 B *չի՛ք*

նոնավոր գլուխ, սև, խիտ մազերով, միշտ կարճ խուզած[1], միջակ ճակատ՝ երկու կամար ունքերի վրա, մեծ, սև աչքեր՝ լիքը ուրախությամբ ու բարությամբ, մի քիչ մեծ քիթ: Ծիծեռնակի թևերի [պես] ձևով սև [ու բարակ] բեխեր, որ եզրում էին[2] կարմիր-հաստ շրթունքները, թյութունի[3] ծխից դեղնած, բայց առողջ ատամներ. կզակը՝ կլոր[4], նման դեղձի իր քնքուշ փոսիկով: Երեսը միշտ սափրած էր և դեռ ոչ մի ճերմակ մազ չուներ: Նրա[5] թավ ձայնը, կարծես[6], բղխում էր սրտի խորքից: Շարժուձևերը կրակոտ էին, քայլվածքը մի փոքր օրորուն, ինքը ամբողջապես աշխույժ ու եռանդ:

Ուստա Կարոն լավ հադնիլ սիրում էր: Դնռավուր հագուստը, երբ հնանում էր, գործ էր ածում աշխատելու ժամանակ: Դնում էր մույգ-դեղին փոքրիկ փափախը[7], որ միշտ թնքում էր[8] ականջի վրա և ճակատից բարձր: Բանելու ատեն[9] գլխին կարմիր թաշկինակ էր փաթաթում, որ քրտինքը ծծե[10], չուտ չորանա[11] և զով լինի[12]: Հագնում էր սև մահուդե կարճ չուխա, սև լաստիկ[13] արխալուխ, կա-

---

1 B + [էր լինում]
2 B կլուսածածկում էին
3 B [ծխախոտի]
4 B *չիք*
5 B Ուստա Կարոյի
6 B ասես
7 B փափախ
8 B ծռում էր
9 B [Այնպես որ] աշխատանքի ժամանակ
10 B ծծիր
11 B չորանար
12 B լիներ
13 B լաստիկե

պում էր գույնզգույն մետաքսախառն հյուսած[1] գոտի, որ մի քանի տակ փաթ էր տված լինում մեջքի շուրջը[2]. գոտու[3] մի ծալքում[4] միշտ խրած ուներ փիրուզեն մուշտուկը թյութունի[5] սև-երկարուն[6] տուփի հետ, մյուս կողմից[7] կախ էր ընկնում[8] կարմիր, դեղին[9] մանր ծաղիկներով նախշուն թաշկինակը: Շալվարը նույնպես սև մահուդից էր, սակայն ոչ շատ[10] լայն. հագնում էր մինչև ծնկները չհասնող կոշիկները, որ գործի միջոցին կամ ճամբա դնալուս[11], հավաքում էր շալվարի եզրերը[12]: (Բացի ժամացույցից նշանավոր էր և նրա կարմիր քարով մեծ մատանին, ոսկեջուր [ոսկու նման պղնձով] արծաթով, որ կրում էր միշտ աջ ձեռքի մատնամատին. Ուստայի վկայությամբ Իրանա աշխարհում 20 թումանի էր գնել այդ մատանին, և ամեն պարի ժամանակ այնպես էր ձեռքը բռնում, որ կարմիր ակը միշտ աչքի ընկներ:)[13]

---

1 B գործած

2 B Ուստի մեջքին

3 B որի

4 B կողմից

5 B + [տուփի]

6 B երկար

7 B կողմում + միշտ

8 B չիք կախ էր ընկնում

9 B + [խալերով]

10 B չափավոր

11 B չիք կամ ճամբա դնալուս

12 B երիզները

13 B Աջ ձեռքի մատնամատին ուներ մի կարմիր քարով մատանի, որը Ուստի ասելով՝ Իրանա աշխարհում 20 թումանի էր առել: Եվ ամեն պարի ժամանակ այնպես էր ձեռքը շարժում, որ միշտ մատանին աչքի ընկներ: *փխ* Բացի ժամացույցից ... աչքի ընկներ

Ուստա Կարոն ուտելու և խմելու մեջ իրեն երբեք չէր ղրկում. առավոտ-երեկո՝ թեյ անպատճառ., միշտ[1] լավ ճաշ, երբեմն էլ, երբ իրենց տանն էին լինում, Քերոբ[2] աղբոր ձեռքով պատրաստած սև սուրճ: Ամենօրյա[3] արաղը անպակաս պիտի լիներ[4] «բարի լույս» մաղթելու[5] համար: Գինին ճաշի վրա, հո՛, միշտ կար ու կար[6]:

Ուստա Կարոն անվանի, չնորհքով վարպետ էր. ամեն բան ձեռքից գալիս էր. [սակայն նրա] «ինձի[7] պես այվան չինող, կամուրջ[8], օճախ կապող արևելքից-արևմուտք չի[9] դտնվի»,— իրավունքով Ուստան այսպես էր վկայում իր մասին. և նորից լի հավատով ավելացնում էր[10]. «[Ո՞վ կարող է[11] նրա] Ով կրնա ինձի[12] պես հասկնալ[13] աղբյուր հանելու վարպետությունը. ապառաժներին ու հողերին մի անգամ[14] նայելով, ես կիմանամ[15], թե այդտեղից[16] ջուր դուրս կգա, թե ոչ»: Ապացույց[17] – Զռչի գյուղի[18] անվա-

---

1 B *չիք*
2 B Փիլոս
3 B [Արաղն ու գինին] *փխ* Ամենօրյա արաղը
4 B լինեին
5 B բարեմաղթությունների
6 B *չիք* Գինին ... կար:
7 B *չիք*
8 B *չիք*
9 B էր
10 B *չիք* իրավունքով Ուստան ... հավատով ավելացնում էր
11 B էր
12 B *չիք* Ով կրնա ինձի
13 B Հասկանալ
14 B աչքով
15 B կիմանար/ (իմանում էր)
16 B *չիք*
17 B *չիք*
18 B *չիք*

նի աղբյուրը, որ Ուստան էր հանել[1] և որից[2] մինչև հիմա լիառատ խմում են անցորդ ու դարձորդ, ու հազար բերան օրհնում վարպետի կյանքը: Աննման բանդ կապող էր[3] անջուր ձորերի առաջը, որպեսզի հավաքվեն անձրևի ջրերը ու ավազան կազմեն այդ սակավաջուր երկրում հոտն ու նախիրը ջրելու համար[4]: Ուստան դիտեր երկանքի[5] և ջրաղացի քարեր կլորացնել ու հղկել, մի դժվարին արհեստ, որ կարծր քարին սլիտի տալ թեթև թռիչք՝ ամենաուղիղ շրջան, հավասար շառավիղներ:

Ուստայի համար հացի կամ ջրի հոր փորել, սալահատակել խաղ ու պար էին: Թեև Ուստան[6] քարեղեն գործերի մեջ աննման վարպետ էր, ուղղակի «քարին հոգի» [էր տալիս] տվող, բայց փայտի գործերի մեջ էլ խելքը հասնում էր. կարող էր լավ տուն ծածկել, դուռ-լուսամուտի փեղկեր[7] չինել[8], եթե ուզենար դղալ, դղլաման[9], օրոցք էլ կշիներ[10], բայց մանր-մունր բաների գլուխ չուներ:

---

1 B է չինել *փխ* էր հանել

2 B որ *փխ* և որից

3 B + թե գյուղացիների համար, և թե

4 B որ անձրևի ջրերը հավաքում ու ավազան են դառնում (այդ ջրջանում, ուր աղբյուր<ներ>ը սակավ են, այդ ավազանները [անչափ օգտակար են հանդիսանում] անասելի օգուտներ են մատուցարում հոտին ու նախիրին. հոտն ու նախիրը ջրելու համար. և այդ հսկա բանդերը մեծ մասով Ուստա Կարոյի խելքի ու ձեռքի գործերն են): *փխ* որպեսզի հավաքվեն ... նախիրը ջրելու համար:

5 B *չիք*

6 B Ուստա Կարոն

7 B *չիք* լուսամուտի փեղկեր

8 B + նույնիսկ սայլ կապել, արոր չինել

9 B *չիք* դղալ, դղլաման

10 B *չիք*

Աշխատանքի մեջ նա[1] *անխոնջ էր ու գործը սիրով ա-նող*[2]*. և միշտ ջանում էր*[3] *իր ձեռին դիպած*[4] *գործը կա-տարյալ լինի: Ա՛յնչափ*[5] *բարեխիղճ էր, որ*[6] *ասես իրեն*[7] *համար էր շինում մի բան, ինչ որ շինում էր: Գայլի պես ուտում էր գործը, որքան էլ դժվար ու մեծ լիներ. երբեք չէր վռազում, բայց և այնպես ո՛չ մի ուրիշ*[8] *վարպետ նրա նման*[9] *արագ գործ չէր վերջացնում: Բավական էր, որ բան շինող տվող գյուղացին ասեր թե՝ Ուստա, ուզում եմ այսպես, այս տեսակ*[10] *այվան կամ ամբար ունենալ, դու գիտես էլի, ինչ երկարացնեմ*[11]*, Ուստան մի խոսքով ըմբռ-նում էր*[12] *նրա ուզածը և իսկույն կպչում էր*[13] *գործի, և ավարտելուց հետո գյուղացին տեսնում էր*[14]*, որ իր սրտի ուզածից ավելի լավն է կառուցվել*[15]*:*

Ով որ փափագում էր[16] *մի հաստատուն, հիմնավոր և աչքի ընկնող բան շինել տար — անպատճառ*[17] *միայն*

---

1 B Ուստան

2 B էր անում

3 B + [կատարյալ լինի]

4 B ձեռքից [դուրս ելածած] *փխ* ձեռին դիպած

5 B Անչափ

6 B *չիք*

7 B իրան

8 B *չիք*

9 B պես

10 B այսպես-այսպես *փխ* այսպես, այս տեսակ

11 B *չիք* դու գիտես էլի, ինչ երկարացնեմ

12 B կհասկանար

13 B կկպչիր

14 B կտեսներ

15 B շինել

16 B ուզում էր

17 B *չիք*

Ուստա Կարոյին[1] *կարող էր դիմել. «Օրհնած է Ուստա Կարոյի*[2] *ճեռքը. չինվածը չի քանդվի»,– ասում էին գյուղացիք*[3]*: Ամեն [մարդ] մեկը պարծանքով էր խոսում, որ իր այվանը կամ [ամբարը] օճախը*[4] *Ուստան է կապել:*

Իսկ վարձատրության մեջ Ուստան չա՜տ չափավոր էր. դեպք չի եղել, որ մի որևէ գյուղացի գանգատվեր, թե Ուստան չատ վարձ առավ: [Հենց իմանաս] Նա [գործի] փառքի, անունի, վարպետության սիրուն էր աչխատում, և ոչ թե փողի համար: Միայն վայ նրան, ով կհանդգներ քննադատել նրա վարպետությունը, այլևս Ուստան նրա համար, սպանելիր, գործ չէր անի. ի՜նչ միջնորդություն, ինչ ճաշեր պիտի սարքվեին, որ Ուստի բարկությունը – քենը իջներ, ու նորեն հաշտվեր քննադատողի հետ: Գյուղացիք լավ գիտեին Ուստայի այս թուլլ կողմը.

– «Ուստան բուրդ վերցնող է,– ասում էին,– բրդին տվեք, գովեք, անվարձ տարի բոլոր կաչխատե. ասես՝ Ուստա, դիտեմ, կրնաս թռնի էս ձորը ու կթռնի ձորն ի վար[5]*: Աստված կյանք տա մեր Ուստին, մեզ չենցրեց ու լիացրեց»: [Աստված մեզի համար ուղարկեց էս անուշ մարդը] Ուստի անունը տալիս անբաժան էին այս գնահատական խոսքերը:*

Եվ գյուղերը ամենից չատ այս բարեխիղճ և չնորհալի[6] *վարպետության համար էին Ուստա Կարոյին սիրում և պատվում*[7]*:*

---

1 B Ուստա Կարոյին մխայն *փխ* մխայն Ուստա Կարոյին

2 B Ուստայի

3 B գյուղերը

4 B չիք կամ օճախը

5 B չիք Նա փառքի, անունի ... կթռնի ձորն ի վար:

6 B չնորհքով

7 B + [նրա անունով երդվում]

Բացի [սրանից] չնորհալի վարպետությունից[1], որից դյուղացիք օգտվում էին ու դրա համար նրան պատվում, հարգում[2], Ուստան[3] ուներ և բազմաթիվ սիրելի հատկություններ, որոնց չնորհիվ դյուղացիների սրտերը[4] կապվել էին Ուստա Կարոյի հետ:

Ուստա Կարոն բարի և առատաձեռն մարդ էր. չնայելով, որ իրրև անվանի վարպետ շատ դրամ էր վաստակում, բայց երբեք խնայողություն չէր անում և փող չէր հետ ձգում «սև օրվա» համար[5]: Փողը նրա աչքին ուղղակի արժեք չուներ: Կարողացածի չափ սրան-նրան դրամ էր փոխ տալիս, առանց տոկոսի, և ամաչում էր պարտապանին վճարը հիշեցնել: Գյուղի աղքատներին միշտ [ծածուկ] օգնում էր փողով ու հացով[6], հին հագուստներ էր տալիս[7]: Սակավ էր պատահում, որ Ուստան մենակ հացի նստեր. «Առանց ընկերի[8] հացը վար չի երթա»,— Ուստի ամենօրյա խոսքն էր: Հարուստ գյուղացիք և սանամերները Ուստային հաճախ կերակուրի հրավիրելուց զատ, միշտ նրան նվերներ էին ուղարկում տան բարիքից.

---

1 В *չիք* չնորհալի վարպետությունից

2 В *չիք* որից գյուղացիք ... պատվում, հարգում

3 В Ուստա Կարոն

4 В սիրտը

5 В *չիք* և փող չէր հետ ձգում «սև օրվա» համար

6 В + (Նախճվան, Շեկոյենց Օսկանի ընտանիքին, որոնց մոտ ապրում էր նա Փիլոսի հետ, Ուստան նայում էր իր տան վրա, վաստակածի կեսը, գուցե [երևի նրանց էր տա...] ավելին [այդ ընտա...] իրենց խնամող ընտանիքին էր բաժին հանում:) *Այս հատվածի կողքին, աջ լուսանցքում հեղինակը գրել է.* «Դնել Օսկանի պլխում»:

7 В *չիք* հին հագուստներ էր տալիս

8 В ընկեր

մածուն, զուտ սեր, նոր կարագ ու պանիր, իրենց ձեռքով գործած նշխուն դուլպաներ, խոնջան, [քխսա] քսակ[1]*:*

Հռչակավոր էր Ուստայի ընտիր թյութունը, որ մի կաղղվանցի[2] *ամեն ամիս խուրջինի երկու աչքը լիքը՝ Թուրքիայից գաղտնի փախցրած*[3] *բերում էր Ուստային, լավ վարձատրությամբ*[4]*: Այդ թյութունը գրեթե*[5] *դեղովի ծխում էին*[6]*. համարյա*[7] *դեպք չի եղել, որ Ուստան տուփը հաներ*[8] *և ներկաներին չհյուրասիրեր: Նվազ դեպքերում, երբ մեկին*[9] *չէր առաջարկում*[10] *թյութունը.— դա բացորոշ նշան էր*[11] *թշնամության կամ ատելության, և մանավանդ վայրկենական դժգոհության*[12]*:*

Ուստայի առատաձեռնությունը հասնում էր իր բարձունքին նրա քավորության, հարսանիքների և ուխտագնացության[13] *ժամանակ. ամենաթանգ նվերներն էր առնում նա իր սանամորների համար. հարսանիքներին իր առատ*[14] *«սաչու և շաբաշ»ով*[15] *զարմացնում էր բոլորին*[16]*:*

---

1 В *չիք* Հարուստ գյուղացիք ... քսակ:
2 В Թուրք / [օսմանցի]
3 В *չիք* Թուրքիայից գաղտնի փախցրած
4 В *չիք* լավ վարձատրությամբ
5 В *չիք*
6 В ÷ Ուստայի հետ հավասարապես
7 В գրեթե
8 В + [ծխախոտ փաթաթելու և մոտը եղ...]
9 В նա
10 В + իր
11 В իբրև բացորոշ նշան *փխ* դա բացորոշ նշան էր
12 В *չիք* և մանավանդ վայրկենական դժգոհության
13 В ուխտագնացությունների
14 В *չիք*
15 В շաբաշ
16 В բոլորին զարմացնում էր *փխ* զարմացնում էր բոլորին

Ուխտատեղերում օր ու գիշեր չրջապատում էր իրան ընկերներով և[1] *դավուլ-զուռնայով: Դրա համար էլ տարի չէր լինում, որ Ուստան մի քանի*[2] *ամուսնացող զույգերի խաչը չբռներ և բազմաթիվ անգամ տները մեռոն չտաներ: [Ամեն գյուղի ազիզ քավորն էր Ուստան — հարգված ու սիրված:]*

Այդ չրջանի գյուղերում առանց Ուստա կարոյի հարսանիք, կամ մի մեծ կոչունք չէր լինի, քանի որ Ուստան էր բոլոր սեղանների[3] *խոսքաչեն մարդը*[4]*: «Առանց Ուստայի դավուլ չի զարկվի», ասում էին գյուղացիք, իսկ առանց Ուստայի ի՞նչ պար կարող էր լինել. հարսները նրա անունը տալով ավելացնում էին — «կլոր պար, կլոր պար, Ուստան մեջը խնկի ծառ»:*

Ինչպես որ առանց Ուստայի այվան ու ամբար չէր շինվի ու հարսանիք չէր զարդարվի, այնպես էլ առանց նրա միջնորդության համարյա[5] *գործ գլուխ չէր գա. եղբայրների բաժանություն, տղա-աղջիկ կարգել, հաշիվ վերջացնել երկու կռվող ընկերների միջև*[6]*,— Ուստան պիտի լիներ կենսական այս դժվարին հարցերում գյուղական իշխանների մեջ*[7] *նստած. և ուր որ նա լիներ, հաշտություն ապահովված էր. վայ թե լուր առներ նա*[8]*, թե չրջանի մի որևէ*[9] *գյուղում երկու հարևաններ իրար հետ*

---

1 B + [երկու ձեռք]

2 B + [զույգերի]

3 B + ծաղիկն ու

4 B + [Ուստան ամեն պարի հո...]

5 B չիք

6 B չիք երկու կռվողների միջև

7 B մեջը

8 B նա լուր առներ *փխ* լուր առներ նա

9 B չիք

վեճ ու[1] կռիվ են ունեցել, իսկույն ձեռքի գործը թողնում էր[2], արագ ու չարագ վերցրած նստում էր[3] ձին ու թռնում[4] կռվի գյուղը.— «Ախբեր, ի՛նչ կա գնչ ըլնելու, հաչտվեք, հարևաններ եք[5], ամոթ է, դու էնոր գիչիր, էն էլ քեզ, չան ասեք, չան լսեք, ուրախ[6] ապրեք. աչխարհը անցավոր է, ո՞վ է բան տարել, որ դուք տանեք»: Եվ այսպես խրատելով, անարդելով համոզում էր նրանց[7], ու հակառակորդների ձեռքերը իրար հաչտ միացնում[8]. և ապա տարած արաղը հետները խմում, ուրախանում, ու նորից դառնում իր գործին:

Այս բոլոր [անուչ] հատկությունների հետ մեկտեղ[9] Ուստան գրավել էր գյուղացիների սիրտը նաև իր աչխարհատեսությամբ ու փորձառությամբ:

Նա շատ երկրներ էր թափառել (իրեն ասելով)[10], հեռավոր ու մոտավոր, չա՛տ ժողովուրդներ[11] էր[12] տեսել[13], զանազան տեսակի մարդկանց տեսել ու հետները գործ ունեցել, փորձել է նրանց ու փորձվել, փորձ առել, փորձված մարդ դարձել, անթիվ գյուղ ու քաղաքներ, ամեն

---

1 B *չիք* վեճ ու

2 B կթողներ

3 B կնստեր

4 B կթռներ

5 B + մարդ եք

6 B *չիք*

7 B *չիք*

8 B *չիք* ու հակառակորդների ձեռքերը իրար հաչտ միացնում

9 B Հատկություններից բացի *միս* հատկությունների հետ մեկտեղ

10 B *չիք* (իրեն ասելով)

11 B + ու աղգեր

12 B *չիք*

13 B + անթիվ գյուղ ու քաղաքներ

տեղ մի նոր արհեստ, մի նոր բան չինել էր սովորել. դրա համար էլ նա դարձել էր հազարափեչակ: Բացի այդ[1] չա՜տ զարմանալի դեպքեր ու արկածներ[2] աչքով տեսել է[3] կամ ականջով լսել. դրա համար էլ գիտեր շատ պատմություններ, զրույցներ ու առակներ, թե սրամիտ[4], թե բամբառակ խոսքեր և թե իմաստուն ասացվածքներ[5]: Ուստան ուներ և իր խոսքերը, որոնք ժողովրդի հինավուրց թևավոր առածների պես թռչում էին բերնե-բերան: «Էսպես կասե[6] Ուստան» և կնքում էին գյուղացիք Ուստայի ասածով իրենց խոսքը:

Ուստան լավ գիտեր և չոնգուռ նվագել[7]. իր հեռավոր ճանապարհներին և հիմա էլ գյուղերում[8] միշտ հետը ման էր ածում չոնգուռը ու իր սրտի վիշտն ու հրճվանքը խոսցնում էր[9] [անպաճույճ] պարզ լարերով[10]:

---

1 B չիք զանազան տեսակի ... Բացի այդ

2 B + էր

3 B չիք

4 B + առածներ

5 B + (Սովորույթ ուներ խոսքը առակով սկսել, առակով էլ վերջացնել. գիտեր հարմար տեղին պատշաճավոր առած ասել կամ մի պատմություն կցել:)

6 B կըսե

7 B ածել

8 B + համարյա

9 B չիք

10 B + (Թեև Փիլոս աղբոր պես հաճելի ձայն չուներ, բայց երբ ոգևորվում էր (զգածվում) իր թավ ձայնով բայաթիներ էր երգում և նույնիսկ երբեմն էլ [իրեն սրտից խոսքեր] իր սրտի ալեկոծումը, ինքնաբուղխ, աշուղների պես հանգավոր խոսքերով դրսևորում:) (Եվ գյուղացիք, մեծ ու պստիկ, այր ու կին, սիրում ու հարգում էին նրան, հիացմունքով ականջ կախում նրա զրույցներին ու բազմափորձ անցյալին: Ուղղակի նրա անունը զանգի պես հնչում էր այդ գյուղե-

Ուստան[1] և Քերոբ[2] աղբարը այնքան անկեղծ մարդիկ էին, որ կարիք չունեին իրարուց ծածկելու իրենց անցյալը: Եվ Ուստան Քերոբին[3] իր ծանոթության առաջին օրերում իսկ հետևյալն էր պատմել իր դլխի անցած-դարձածից:

Ուստան ասել է, որ ինքը բնիկ Շիրակեցի է, Շիրակի արևելյան[4] [վերին] գյուղերից, [ուր Ախուրյանը իր սկիզբն է[5]] Արագածի հյուսիսային ոտքերի վրա, որ ձգվում է Ապարանին: Շեն ու[6] լավ տան տղա է եղել ու մեկուճար:— «Քերոբ ջան,— ասել է Ուստան,— ծնողքիս զավակ չէր ըլնի. մատաղ կանեն Սուրբը Կարապետին, որ իրենց մի տղա տա ու կխոստանան ամեն տարի էնոր տոնին մողի մորթել ու մոմ ղրկել էնոր վանքը: Ես աչխարհ կուգամ, անունս կդնեն Կարապետ, սուրբի պատվի համար: Դե՛հ, դու տես Հորս ուրախությունը. ողջ գյուղը կոչունքի է կանչված եղել. հազար հավկթեն ձվածեղ են արել, մեկ երինջ են մորթել, երեք ոչխար, [հարյուր] 50 հատ հավ, երկու տաշտ գաթա, յոթը կարաս գինի, երեք տիկ արաղ»: [Եսև ինձի մեր գյուղացիք կպատմեին] Հետո պատմել է թե, հայրը սարը գնալուս կայծակնահար է եղել, մայրն էլ վշտից մեռել է, քիչ անց. ինքը երեք-չորս տարեկան հասակում մնացել է որբ, առանց հայր-մայր, քույր-եղբայր. հորեղբայրը իր մոտն է առել, որը մի ան-

---

րում, ամեն օր խոսվում էր նրա խոսքը. ամենաառաջին-ամենաժողովրդական մարդն էր նա – Ուստա Կարոն:)

1 В Ուստա Կարոն

2 В Փիլոս

3 В Փիլոսին

4 В Շյորագյալի վերին *փխ* Շիրակի արևելյան

5 В + [առել] առնում

6 В *չիք* Արագածի հյուսիսային ... Շեն ու

գուբի մարդ է եղել, ինչպես և հորեղբոր կինը: Թե սրանք և թե հորեղբոր զավակները նրան օր չեն տվել[1]: Հորեղբայրը[2] Ուստայի հոր կարողությունը տակովն է արել և նրան էլ կարգել է հորթարած, իր հոր ծով-հարստությունն առնելով, այդ անգուբը իսկի չի էլ մտածել գոնե նրան մի պարզ դրել-կարդալ սովորեցնել տալու: Ուստան մի փոքր խելահաս դառնալով[3], իբրև[4] աչքաբաց տղա, տեսել է, որ գյուղում մնալով մարդ չպիտի դառնա[5], ելք է մտածել օձիքն ազատելու ծննդավայր գյուղից, ուր իրեն բոլորը խորթի պես են վարվել[6]: Այդ ժամանակները Ուստայենց գյուղն են եկած եղել[7] Ուռում (Հույն)[8] որմնադիրները[9]: Մանուկ Ուստան վճռում է նրանց աչկերտ դառնալ[10], ու մի գիշեր՝ հոր ու մոր գերեզմանի վրա կուշտ լալուց հետո, անիծում է իր գյուղը, երդվում է, որ էլ ոտք չկոխե այդ կռապաշտ տեղը ու նույնիսկ[11] երբեք[12]

---

1 B [տղա հասակից] մանկուց զրկվել է հորից ու մորից, մնացել է որը և պատապարվել է հորեղբոր մոտ, որ մի անգուբ մարդ է եղել *փխ* Բերդը Ջան ... նրան օր չեն տվել:

2 B *չխք*

3 B *չխք* իր հոր ծով-հարստությունն ... խելահաս դառնալով

4 B լինելով

5 B չի դառնալու

6 B գյուղից ու հարևաններից-ազգականներից, որոնք օր չեն տվել որը մանուկին *փխ* ծննդավայր գյուղից ... խորթի պես են վարվել

7 B եկել *փխ* եկած եղել

8 B *չխք*

9 B որմնադիր վարպետներ

10 B *չխք* նրանց աչակերտ դառնալ

11 B այդ խորթ ծննդավայրը *փխ* այդ կռապաշտ տեղը և նույնիսկ

12 B + նույնիսկ

բերանն անգամ չառնի նրա[1] անունը, ուր այնքան լացել է ու չոր հաց կռծել հորական կողոպտված օճախի կողքին[2] — փախչում[3]-միանում է Ուռումներին. սրանք էլ վերցնում են Ուստային[4] ու հետները տանում են գյուղե գյուղ, քաղաքե քաղաք: Մի փոր հացի[5] Ուստան նրանց մոտ աշխատելով մի քանի տարվա մեջ[6] սովորում է որմնադրության[7] բոլոր[8] արհեստը. և ապա[9] նրանցից բաժանվելով ինքնուրույն գործեր է բռնում, գործ անելով, գործ անելով ողջ Կավկասը ոտքի տակ է տալիս, էլ Թիֆլիս ասես, էլ Գանձակ, էլ[10] Ղարաբաղ: Այդ թափառումների ժամանակ երբեմն էլ նոր արհեստներ է սովորել[11]: Ուստան միշտ մտածել է, որ ինքը լինելով անտեր-անտիրական մարդ՝ ընկած աշխարքի բերանը, ուրեմն դլուխ պահելու ամեն միջոցները պիտի ունենա. եթե մի տեղ հաց չի տալու այս արհեստը, ապա գործ դնել տեղին հարմար, հաց բերող արհեստը:

Բայց միայն հացի ապահով ճանապարհ գտնելու հոգսը չի զբաղեցրել Ուստային[12], նրա մեջ միշտ մի անմարե-

---

1 B այդ կռապաշտ գյուղի փխ նրա

2 B վրա + վճռում է ու

3 B + է տնից ու

4 B նրան

5 B չիք

6 B նրանց մոտ մի [երկու] քանի տարի մնալով Ուստան փխ Ուստան նրանց մոտ աշխատելով մի քանի տարվա մեջ

7 B + աղբյուր բերելու, ջուր դնելու

8 B չիք

9 B չիք

10 B չիք

11 B + հյուսնություն, սայլ կապել և ուրիշ մանր-մունր բաներ

12 B + [նա երկրներ թափառելով]

լի կարոտ է եղել հեռավոր աշխարհներ գնալ, նոր մարդիկ[1] տեսնել, ու քանի թափառել է, այնքան ավելի է ճամբորդությունների համն առել[2].– «Քերոբ[3] չան,– ասել է Ուստան,– տեսա որ շատ ապրողը չէ շատ բան գիտցողը, հապա՝ շատ մանն եկողը»:

Ու գնալով, գնալով հասել է Թավրիզ. առաջ այնտեղ սորվել է ջուր հանելը, աղբյուր կանգնեցնելը. ապա[4] մտել է մի պարսիկ նշանավոր քարվանատիրոջ[5] մոտ ծառա[6], որպեսզի հնար ունենա աշխարհներ տեսնելու: Մի երկու տարի ծառայելուց հետո, իր խելքի ու աչքաբացության չնորհիվ դարձել է քարվանապետի օգնական. չա՛տ է սիրել քարվանապետը Ուստային, այնպես որ քիչ հետո դարձրել է նրան իրեն ընկեր պես, լավ վարձատրել է[7]: [Մասնակից օգուտին ու վնասին, կարողության տեր, մի խոսքով – իրեն հավասար քարավանապետի իրավունքով:] Այնուհետև չա՛տ անգամներ[8] ինքը մենակ քարավանը պտըտցրել է աշխարհն աշխարհ:

– «Ողջ աշխարհքին հայտնի է, Քերոբ[9] չան,– ասել է Ուստան Քերոբին[10],– որ ես քարվանի գլուխ-գլխավոր

---

1 B + [նոր ազգեր]

2 B համն առնել ճամբորդությունների *փխ* ճամբորդությունների համն առնել

3 B Փիլոս

4 B չիք այնտեղ սորվել ... կանգնեցնելը. ապա

5 B քարվանապետի A *Ձախ լուսանցքում.* «Թեջիր խոջա Աբաս աղա»:

6 B ծառայության

7 B չիք

8 B անգամ

9 B Փիլոս

10 B Փիլոս աղբորը

էի[1], *չա՛տ տարիներ, ասելը հեչտ է: Գլուխս առած քարվանիս*[2] *հետ հազար սարեր ու ձորեր*[3] *եմ կտրել-անցել մի աշխարհից մյուսը, գանձ ու կարողություն, մարդ ու ապրանք տանելով-բերելով. ի՛նչ*[4] *իմաստուն մարդիկ տեսա. օրը՝ նոր, ճամբան*[5] *նոր, փորձությունը՝ նոր. հասակես ավելի հասակ առա. Բաղդադ եղա, Հաբաշ, Մսըր, Իրանթուրան ուրքիս տակն էր, Ղանդահար եղա, Քերոբ*[6] *չան. Հնդստան չեղա, հասա մինչի*[7] *Արաբստանի քովը. Զինմաչին էլ*[8] *չեղա. մեծ փորձանք պատահավ. իմաստուն խոսք ասած չեմ ըլնի, օրթես ասեմ, թե բախտն է աշխարքի կառավարողը*[9]*, էսօր իշխան ես, վաղը՝ հող ու մոխիր. երեկ անունդ չդիտեին, էսօր մատով ցույց*[10] *կուտան*[11]*. էսօր դուռդ հազար մարդ հայց կուտե, էգուց դու հացի կարոտ կմնաս: Բախտի ամեն խաղերն*[12] *ու երեսները*[13] *աչքերովս տեսա իմ հազար ճամբաներու*[14] *վրա. էս բանը աշխարքի օրենքն է*[15]*,*

---

1 B քարվանապետ էի *փխ* քարվանի պլուխ-պլխավոր էի

2 B քարավանիս

3 B ծովեր ու սարեր *փխ* սարեր ու ձորեր

4 B *չխք* գանձ ու կարողություն ... տանելով-բերելով. ի՛նչ

5 B ճանապարհը

6 B Փիլոս

7 B *չխք*

8 B *չխք*

9 B կառավարում աշխարհը *փխ* աշխարքի կառավարողը

10 B ցույց

11 B + էգուց ուրքի տակ քցելու համար

12 B խաղերը

13 B *չխք* ու երեսները

14 B ճամբաների

15 B [կանոն է]

ու մեր գլխին[1] էլ[2] եկավ.– Արաբստանին չհասած[3], ավազակները՝ անթիվ ու անչափ[4], վրա տվին, մեր քարվանը տարան, մենք մահից պրծանք, և հաց մուրալով, ոտքով եկանք-ընկանք Թավրիզ: Տերս էլ մորե մերկ էր դարձել, ես էլ. չա՛տ դժվար էր նորեն քարվան սարքել, մեկ էլ բավ հաշվեցի[5] դրսերը մնալ[6], հայի հողին ու լեզվին էլ կարոտցել էի, ասի՝ երթամ իմ ազգիս մեջ ապրիմ ու մեռնիմ, ու ինձի քցեցի[7] էջմիածին ու էնոր բոլորի[8] գյուղերը, ու էդպես[9] քեզի գտա, ու ախբերացանք[10]. մնացածը դու[11] գիտես»:

Այս խոսքի վրա Ուստան ավելացրել է.– «Քերոր ջան[12], հիմի ո՞ւմ խոսք հասկցնես, թե ես քարվան եմ ուննեցել, կրնան չատերը[13] չհավատա. չէ՞ որ[14], Քերոբ[15] ջան, էս մարդիկ[16] ինձ ու քեզի[17] մեր իշու հետ տեսան[18], էնոնք

---

1 B պլխուն

2 B + էլ [կանոնն] օրինքն

3 B [քովերը]

4 B *չիք* անթիվ ու անչափ

5 B էլ չուզեցի *փխ* Տերս էլ մորե մերկ ... մեկ էլ բավ հաշվեցի

6 B + մեկ էլ

7 B քցի

8 B [էջմիածնա] Երևանի *փխ* էջմիածին ու էնոր բոլորի

9 B *չիք* ու էդպես

10 B + եկանք էստեղ

11 B *չիք*

12 B *չիք* Այս խոսքի վրա ... ավելացրել է.– «Քերոր ջան

13 B *չիք*

14 B *չիք* չէ՞ որ

15 B Փիլոս

16 B ախր Շիրակեցիք *փխ* էս մարդիկ

17 B ինձի-քեզ *փխ* ինձի ու քեզի

18 B + (աղքատ-թշուառական)

ինձի[1] *քարվանիս հետ չտեսան: Ով որ ինձի քարվանիս գլուխն անցած տեսել է, էնոնք հեռու աշխարհքներ*[2] *են, ո՛րը Մըսր, որը Ղանդահար, երթցողը թող երթա էնտեղերի քարվանսարայները*[3]*, հարցնե, ճիշտն իմանա ու գա*[4] *պատմե, որ իմանան*[5] *էն ժամանակ*[6] *թե ով է Ուստա Կարոն, որ հիմա արժեցող-չարժեցողի հորը կփորե...*

Է՛յ է՛յ, Քերոբ[7] *ջան, ողջ մնանք, կարելի է բախտը նորեն մեր դուռը գա. սիրտս կուզե նորեն*[8] *քարվան ունենամ ու արար-աշխարհ ժուռ գամ, էս անգամ դուն էլ հետս կըլնիս*[9]*. ա՛յ սիրելու բան, տես ու զարմացի: Էն ժամանակ ես*[10] *չա՛տ ջահել էի, խելքս էնքան չէր կտրի*[11]*. չա՛տ բան չէի սրտով նայե*[12]*, տեսածս էլ լավ չէի հասկանա... մեկ էլ որ ոտքս ընկավ, դու տե՛ս էն ժամանակ. էլ լամսի հող, էլ ֆրանցուզի, ինգլիզի, Զինմաչին, կարմիր ու ոսկի ծովեր, ներսի ու դրսի բոլոր*[13] *աշխարհները — ամենքը, ամենքը...»*[14]*:*

---

1 B *չիք*

2 B աշխարհներ

3 B էնտեղերը ի՛նչ քարվանսարա մանի, *փխ* էնտեղերի քարվանսարայները

4 B + [մեր գեղացիք Կողպեն էն կողմ էլ երկիր չունին]

5 B *չիք* պատմե որ իմանան

6 B + կիմանան

7 B Փիլոս

8 B նորից

9 B *չիք* էս անգամ դուն էլ հետս կըլնիս

10 B ես էն ժամանակ *փխ* էն ժամանակ ես

11 B վրես չէր *փխ* էնքան չէր կտրի

12 B տեսնի *փխ* սրտով նայե

13 B *չիք*

14 B + ես մենակ աշխարքի մեկ ծերը տեսա — Հնդու Հողը, մեկել ծերն էլ Սամսոն-Տրապիզոնն է, էն մեկել ծերն էլ — ծով-ովկիանո-

Քերոբ[1] *աղբարը թյուրքահայ էր, Բասենի*[2] *գյուղերից*[3]*, Ուստային*[4] *գրեթե*[5] *տարեկից*[6] *կամ ավելի ճիշտ [մոտ չորս] մի [երկու] տարով ավելի երիտասարդ: Ուստայի պես միջահասակ*[7]*, մի քիչ նիհար, սև մազերով, թուխ դեմքով, ավելի կանոնավոր*[8] *քթով, հաստ բեխերով. աչքերը*[9] *սև, բարի, միամիտ, մի քիչ փոքր, քան Ուստա Կարոյինը*[10]*: Ձայնը մեղմ, քչախոս. շարժուձևերը հանդարտ, հագնվում էր Ուստա Կարոյի նման, միայն ժամացույց չուներ: Երկար տարիներ ապրելով Շիրակում, փոխել էր իր մայր-բարբառը և խոսում էր տեղացիների նման*[11]*. երգելու շնորհք ուներ*[12] *և գիտեր շա՛տ ժողովրդական, աշուղական*[13] *ու թյուրքական*[14] *խաղեր*[15]*, ամեն անգամ,*

սը.– Էսոնք ամենքը, Հնդու աշխարքն էլ հետը, դրսի աշխարքներն են, մնացածները՝ ներսի աշխարքները... Ա՛խ, թե մեկ էլ քարվան կուենանամ...»:

Փիլոս աղբարը, իրրև խոստովանանք, Ուստային եղբայրացման առաջին օրերում այսքանն է պատմել իր կյանքի վեպից:

1 B Փիլոս

2 B Կարնո դաշտի *փխ* Բասենի

3 B + երկար ապրելով Շիրակում և Հարևան գյուղերում փոխել էր Կարնո բարբառը և խոսում էր տեղացիների նման:

4 B Ուստա Կարոյին

5 B *չիք*

6 B + կլիներ

7 B Հասակով Ուստին նման *փխ* Ուստայի պես միջահասակ

8 B + [դեմքով]

9 B + նույնպես

10 B Ուստինը

11 B *չիք* Ձայնը մեղմ ... տեղացիների նման

12 B ուներ երգելու շնորհք *փխ* երգելու շնորհք ուներ

13 B *չիք*

14 B Թրքական

15 B + համարյա

երբ[1] *Ուստան չոնգուռ*[2] *էր նվագում*[3]*, նա*[4] *ձայնակցում էր Ուստայի նվագին*[5]*:*

Ընդհանուր[6] *դումարում – նրանք իրար բավական*[7] *նման էին*[8] *և*[9] *գյուղացիք*[10] *կարոյի և Քերոբի*[11] *մասին*[12] *ասում էին, թե նրանք երկուսով*[13] *մի մարդ են մի մարմնի մեջ, բայց Կարոն այդ մարմնի աջ կողմն է, Քերոբը*[14] *ձախ, Կարոն աջ ձեռքն է, Քերոբը՝ ձախ: Գյուղական այս*[15] *համեմատությունից պարզ երևում է, որ Կարոն չա՛տ*[16] *ավելի ընդունակ ու չնորհքով*[17] *մարդ էր, քան*

---

1 B պիշնր *փխ* անգամ, երբ

2 B չոնգուռն

3 B ածում

4 B + էլ

5 B երդում էր *փխ* ձայնակցում էր Ուստայի նվագին

6 B + [առումով]

7 B չատ

8 B + Արդյոք երկար ժամանակ միասին ապրելն էր, անբաժան, մի հարկի տակ, մի գործի մեջ, մի հոգու մեջ, որ տարիների փոխադարձ ազդեցությամբ իրար հետ մերվել էին, թե մի ուրիշ խորհրդավոր-ճակատագրական հիմք, որ պատճառ էր դարձել նրանց չափազանց նմանության: Անծանոթները նրանց հաճախ հարազատ եղբայրներ էին համարում:

9 B *չիք*

10 B + Ուստա

11 B Փիլոս աղբար

12 B + մի չա

13 B երկուսը

14 B Փիլոսը

15 B + պատկերավոր

16 B *չիք*

17 B *չիք* ու չնորհքով

Քերոբը[1], *և արդարև, Քերոբը*[2] *ամեն բանի մեջ հետևում էր Ուստա Կարոյին, ուղղակի*[3] *նրա հավատարիմ արձադանքն էր:*

Քերոբը[4] *մի քիչ դրել-կարդալ դիտեր*[5] *ու թվանշանները ճանաչում էր*[6]*, այդ պատճառով էլ*[7] *նա*[8] *էր պահում իրենց հաշիվը*[9] *առնելիք-տալիք, մուտք-ելք մի լաթակապմ տետրակի մեջ, որ միշտ ծոցումն էր պահում:*

Քերոբը[10] *խնայող էր նույնպես. դրա համար էլ*[11] *Ուստան միշտ ուզում էր, որ նա*[12] *փողը պահե. բայց այս*[13] *բարի ցանկությունն էր միայն մնում, որովհետև՝ չնայելով աշխատանքի վճարները Ուստան սկզբում հանձնում էր Քերոբին*[14]*, սակայն կարճ ատենի մեջ*[15] *այլևայլ*[16] *պատրվակներով*[17] *համարյա բոլոր փողը քաշում էր իր քսակը*[18] *[ոչ թե հակաընկերական նպատակով, այլ], առատաձեռն*

---

1 B *չիք քան Քերոբը*

2 B Փիլոսը

3 B *չիք*

4 B Փիլոս աղբարը

5 B + Ուստան այրը-լինից չէր զանազանում

6 B *չիք ու թվանշանները ճանաչում էր*

7 B դրա համար էլ *փխ* այդ պատճառով էլ

8 B Փիլոսն

9 B հաշիվը պահում *փխ* պահում իրենց հաշիվը

10 B Փիլոս աղբարը

11 B այդ պատճառով էլ *փխ* դրա համար էլ

12 B Փիլոսը

13 B սա

14 B Փիլոսին

15 B բայց մի քիչ անց հետո *փխ* սակայն կարճ ատենի մեջ

16 B զանազան

17 B + Ուստան

18 B քիսան

ծախսելու համար: [Թեև երկուսն էլ քեֆ էին անում[1], բայց Քերոբը[2] մնում էր միշտ չափի մեջ[3]:]

Ուստան [առանց] Քերոբի[4] խորհրդին[5] էր դիմում[6] մի գործ ձեռնարկելիս[7], իսկ Քերոբը[8] առանց Ուստայի մի ոտքը մյուս ոտքի առաջը չէր դնում: Գյուղացիք շատ անգամ էին տեսել, թե ինչպես նրանք գյուղից դուրս իրար փաթաթված ման էին գալիս, խոսում ու խորհրդակցում: Նրանք չտեսնված ու[9] չլսված սիրում էին իրար, սիրում ու անվերապահ իրար[10] հավատում: Երբ մեկը մի փոքր[11] հիվանդանում էր, մյուսն էլ ուղղակի հիվանդ էր դառնում ու կողքին պառկում: Մեկի դեմքը մյուսի հայելին էր. երբ մեկը տխրում էր, մյուսի երեսի վրա էլ իսկույն արտացոլվում էր ընկերի թախիծը: Նրանք առանց «Ուստա չան, Ջավուշ չան» քաղցր խոսքերի իրար չէին դիմում: Գյուղացիք հիացած էին այդ ընկերական-եղբայրական մեծ սիրո վրա. «Ճրագ առնիս, արար-աշխարհ ման դաս, էդպես սիրով ախբեր ու ընկեր չես գտնի. էդ

---

1 B սիրում էին *փխ* էին անում

2 B Փիլոսը

3 B + իսկ Ուստան էր, որ [ոչ մի չափ չէր ճանաչում] ամեն բանի մեջ չափից անցնում էր, մանավանդ կերուխումի:

4 B Փիլոսի

5 B խորհուրդի

6 B *չիք* էր դիմում

7 B չէր բռնում *փխ* ձեռնարկելիս

8 B Փիլոսը

9 B *չիք*

10 B *չիք*

11 B *չիք* մի փոքր

սիրով Աստծու առաջ էնոնք արդար մարդիկ են»,— այսպես էին դատում գյուղացիք[1]*:*

[Արդյոք կարելի՞ է հարց տալ] Թե նրանց[2] *ո՞րի սրտում սերն ավելի ծանր է կշռում, [դժվար է] անհնար է պատասխանել, քանի որ նրանց գգացումները իրար հանդեպ մի արդար ու նուրբ կշեռքի երկու դաշն ու հավասարազոր նժարներ են*[3]*: Միայն մի բան*[4] *պարզ աչքի էր ընկնում այն, որ Քերոբը*[5] *բացի սիրուց ուներ չատ մեծ հարգանք ու պատկառանք*[6] *դեպի Ուստան. նրա համոզմունքով Ուստի պես խելոք, բանգետ, ազնիվ մարդ չկար աշխարքի վրա. ակնածություն ուներ նրա վարպետության հանդեպ, ու դրա համար էլ՝ չնայելով երկար տարիների սիրով ու համերաշխ համակեցության ու անկեղծ մտերմության — Քերոբը երբեք իրեն թույլ չէր տալիս նրան «Կարո» ասել, այլ միշտ «Ուստա, վարպետ» տիտղոսներով և ոչ նույնիսկ «Ուստա Կարո» կոչականով: (Ձևով)*[7]

Եվ Քերոբը[8] *ծառայում էր*[9] *ու սպասավորում*[10] *Ուստա Կարոյին, ո՛չ միայն որպես ավագ և սիրելի ընկերի, այլ*

---

1 В *չխ* Նրանք առանց ... դատում գյուղացիք:

2 В *չխ*

3 В մխթե կարելի է ասել, թե կշեռքի դաշն ու հավասարազոր նժարներից ո՞րն է ավելի բեռնաբարձ *վխ* անհնար է պատասխանել ... հավասարազոր նժարներ են:

4 В *չխ* մի բան

5 В Փիլոսը

6 В *չխ* ու պատկառանք

7 В *չխ* նրա համոզմունքով ... կոչականով: (Ձևով)

8 В միշտ *վխ* Եվ Քերոբը

9 В պատվում էր

10 В + և նրան առանց Ուստա-վարպետ տիտղոսի չէր դիմում. Ուստեն էլ նրա միշտ «Փիլոս ջան» էր ասում. միշտ:

գլխավորապես, որպես պատկառելի և հարգելի վարպետի: Ինքը Քերոբն էլ արհեստներ էր սովորել որը լավ, որը վատ, [սակայն և] այնպես որ կարոյի բացակայության պահերին կարողանում էր նրա գործը տեսնել. արդեն նրա ձեռքի տակ նա բավական վարժություն էր ձեռք բերել և կարող էր նույնիսկ վարպետ կոչվել[1]:

Քերոբ[2] ախբարն էլ իրենց եղբայրացման[3] առաջին օրերում հետևյալն էր[4] պատմել Ուստա Կարոյին[5] իր կյանքի վեպից[6]:

[Թե ինքը չեն ու[7] համբա տան տղա է եղել, գյուղի քահանայից[8] դրել-կարդալ է ուսել[9],] բեխերը նոր ծաղկած ժամանակ[10] գլխին մի փորձանք է եկել, որ պատճառ է դարձել հայրենի հողից փախչելու:

---

1 В *չիք* Ուստա Կարոյին, ո՛չ միայն ... նույնիսկ վարպետ կոչվել:

2 В Փիլոս

3 В իր ծանոթության *փխ* իրենց եղբայրացման

4 В է

5 В *չիք* Ուստա Կարոյին

6 В գլխով անցած-դարձածից *փխ* կյանքի վեպից

7 В *չիք* չեն ու

8 В տերտերից

9 В սովորել

10 В + աչք է կպել գյուղի թուրք աղայի աղջկա վրա.– Ուստա ջան, սրտի մրմուռով խոստովանել է Փիլոսը Ուստային,– էդ սեր չէր, կրակ էր, կրակ. ի՜նչ հրեղեն աղջիկ, հյուրի փերի, էդպես սիրուն, խաս աղջիկ Սուլթանի իրան քյոշք ու սայրայումն էլ չէր եղած. Հազար տեղերն մյուլադիմները, մուֆթաարիֆ-էֆենդիները կուզեին էնոր, բայց աղջիկը չէ կըսեր ու կկայներ. էնոր սերը ինձի հետ էր. էհ վա՜խ, էհ վա՜խ. հիչ եղած էր, որ նորին ըլներ թուրք աղջիկը հայի տղային: Ես չլամ, քա՞րը լա, ես չխելառիմ, քամի՞ն խելառի. էնպես յար եմ կորցրել, Ուստա ջան, օրթի աշխարքի չորս ծերն էլ քարվանիդ ոտքի տակը փոթիներ, հատը չէիր գտնի. ծովե-

«Ուստա Ջան,– ասել է Քերոբը,– եղավ որ եղավ, մի օր իմ Հորս ծանոթի մի քուրդ քառասուն եզան բեռ ձմերուկ բերեց, լցրեց Հորս ամբարը որ ծախե. ես էլ ջահել էի, ընկերներիս հետ սարքել էինք, գիշերով կելնեինք ամբարի երթիկը, մզրախը կկոխեինք երթիկից ներս, ձմերուկների մեջ կխրեինք. քուրդը տեսավ մեկ-երկուս, որ ձմերուկները կեցած տեղերը կհատնեին, նշան էր արել ու նշաններն իմացել, որ գողացող կա. ուզեցավ բռնել գողը. գիշերը կերթա կպառկի երթիկի տակը, ձմերուկների վրա. մենք էլ անտեղյակ, ելանք էլի գողության. մզրախս կոխեցի, տեսնեմ «ա՛խ, օ՛ֆ» ձևներ ելան, քաշեցի դուրս, ի՛նչ տեսնենք. քուրդը մզրախիս հետ կախ ընկած ելավ. մզրախս մտել էր խեղճի կուրծքը. արուևը կվազեր. ըն-

---

րու մեջ ծլած վարդ էր, արևի տակ՝ մեծցած, խոսք մեկ էրինք ու վախանք. գիշերով մտա Աղի ախուռը, քաշեցի էնոր հրեղեն ձին, որ աղբեր աղբորը տնով մեկ ոսկու չէր տա, առա աղջկան գիրկս ու փախանք դեպի Ռուսաթի Հողը. Բասենու պաշտը չէի անցել, մեկ էլ ինչ տեսնեմ, աղի խոլամները, քրդեր ու ասկյար, գումար չիտկվել էին վրա, սարերի գլուխը փաթթել, ձորերի բկերը բռնել, կրակ էր, որ կթափեին վրաս, դար ու քար դղորդ էր ընկել, չունչ ու ճամբորդ ծակեծակ կմտաներ. կարմիր պնդակները կուգային, բոլորքս կարկտի պես վժժալով կընկնեին. իմ պետքս չէր, արուևս աչքս էի առել, յարիս աղմել սրտիս, ոտքերս էնպես զիլ կզարկեի ձիու փորին՝ որ խեղճը քարերեն կիծեր հանելով մի գլուխս կթռներ ու կթռներ... Աղի աղջիկը՝ նազուկ պահված, կալել էր սրտիս, կուլար ու կուլար. վախեն ուշքն անցավ, սիրտս մղկտաց, ասի՝ էս անհավատքները կզարկեն կմեռցնեն էս հրեշտակին, ու ավուր դատաստանին պատասխան կմնամ Աստծու առաջ: Հետ նայեցի, ձևքով արի, կրակը դադարեց. իջա, ձին տվի աղջկան, վերջին հեղ էլ մի կսկուծ պաչեցի ու լացով ասի՝ գնա, Աստված քեզի հետ, ինձի մի մուցի, ես՝ էլ հարամ է ինձի օսմանլուի Հողն ու ջուրը, ես մեռա, էլ չկամ: Ու եկա ընկա Ռուսաթի Հողը:

կերներս փախան, ես էլ տեսա, որ բանը կհասնի դատավորին ու ինձի կմեռցնեն, կամ քյուրդի ազգականները ոխ կպահեն ու ինձի մի օր չէ մի օր կզարկեն կսպանեն, գլուխս առա ու պուկ Ռուսի հողը: Ու էլ չեմ իշխնա ոտք կոխել Օսմանլուի երկիրը. կյանքը ամեն բանե անուշ է, ախբերս որ դուն ես: Եկա, ընկա Ղարսա, Գյումրվա, Երևանու գեղերը[1], չա՜տ տարիներ գեղե գեղ պըտրտա, շատ գեշ օրեր տեսա, անոթի, անտուն, չարքաշ, դռնե դուռ, գաղթականի ապրուստ, գիտե՞ս ինչ պիտի ըլնի. համբերանք ունեցա, մշակ ու բանվոր եղա, [արհեստների ձեռք զարկեցի, վերջը բոստան էի դրել] որ դու հանդիպեցար — հիմի, տեր Աստված գթաց, քեզի պես գլուխ ու ընկեր ղրկեց, որ մեծ ախբոր պես վրաս կնայե, ու մարդու չարքը կմտցնե. մնացածը դու գիտես»[2]:

Ուստան Քերոբի[3] այս սրտառուչ խոստովանանքի վրա, արցունքոտ աչքերով գրկել է Քերոբին[4] ու [ճակատից կակուծ] համբուրել[5]: [Ու հին սովորության համաձայն, դանակի ծայրով իրենց մատներից մի երկու կաթիլ արյուն են հանել, իրար խառնել արյունը, ու եղբայրացել, մի մորից ծնվածի պես արյունակից դարձել:][6] Ու[7]

---

1 B *չիք* գլխին մի փորձանք է եկել ... Գյումրվա, Երևանու գեղերը

2 B ընկած, աշխատեցի, բոստնչու մոտ, չաղցըպանի մոտ, վար ու ցանք, ու հազար ու մեկ փեչակ, մինչի Տերը գթաց, քեզի պես, Ուստա Ջան, ինձի գլուխ ու տիրական գտավ, որ հոր պես ինձի հացը կկերցնե ու մարդու չարք կմացնե»: *փխ* պըտրտա, շատ գեշ օրեր ... մնացածը դու գիտես»:

3 B Փիլոսի

4 B Փիլոսին

5 B + է ճակատը

6 B *չիք* Ու հին սովորության ... արյունակից դարձել

7 B և

այն օրվանից մինչև հիմա եղել են ու կմնան[1] մինչև մահ [որպես] հարազատ եղբայրների պես[2], երկու անբաժան[3] ընկերներ — մի հոգով և մի քսակով[4]:

Ուստա Կարոն և Ջավուշը մենակ չէին բոլորովին. նրանք ունեին [և մի ուրիշ երրորդ համեստ ընկեր, չա՛տ համեստ տեսակի] և մի ուրիշ ընկեր Միրզա անունով, մշտական անբաժան իրենց աշխատանքներին ու ճանապարհներին, մի ընտիր ու թանգարժեք էշ: (Սա էլ [իրենց] իր տերերի նման հասարակ ընտանիքից չէր. Ուստա Կարոյի հավատացնելով, սերած էր նա Երևանի խանների էշերի ազնիվ ցեղից): Ճերմակին [նմանող] մոտեցող գորշ գույն ուներ, խոշոր ու մեծ կազմվածք, հաստատուն ու վճռական քայլվածք. խելքի կողմից նմանը չուներ. «Ավանակս էշի երես ունի, [բայց սատանի] մարդու խելք»,— վկայում էր Ուստան: Եվ իրոք, նա այնքան բանիմաց էր, որ «էն կրնա երկու թյուրք գյուղի վարժապետ ըլնիլ, երեք քյուրդ գյուղի դատավոր»: Նրան [առաջները ճգած, «Ուստա Կարոյի չարժական կայքը», ինչպես ասում էին գյուղացիք] իրենց առաջները ճգած գյուղից դուրս էին ելնում. նա վաղօրոք գիտեր, թե ո՞ւր պիտի գնար. ջրի պես գիտեր, գիշեր ժամ լիներ թե ամպ ու մշուշ օր, բոլոր գյուղերի ճամբանները. գիտեր Ուստայի ամեն սանահոր ու բարեկամի տունը և նույնիսկ գուշակում էր թե Ուստան մի գյուղ մտնելիս ո՞ւմ դուռն էր ուզում.— և անսխալ գնում, կանգնում էր իր տիրոջ փափագած դրան առաջ: Հնազանդ Ուստայի վաղեմի սովորության, Միրզան

---

1 B մնացել

2 B չիք մինչև մահ ... եղբայրների պես

3 B սիրով

4 B չիք և մի քսակով

իսկույն կանգ էր առնում, երբ ճանապարհին իրենց դեմ էր ելնում մի անցորդ, ծանոթ թե անծանոթ, որովհետև [Ուստան] սիրում էր Ուստան [ճամբի վրա պատահած] հանդիպած մարդուն կանգնեցնել, ողջունել, մի ծխախոտ ծխել, հարց ու փորձ անել, հաճախ նստել ճամբեզրի եզրին կամ առվակի ափին, մի-մի արագ անուշ անել, մի քիչ հանգչել ու խոսակցել. և Միրզան էլ ականջները լարած, կարծես, լսում էր նրանց զրույցին: Առակի կարգ էր մտել գյուղերի մեջ ավանակի այս հատկությունը.— «Ի՞նչ Ուստայի ավանակի պես էլի կանգնար». գյուղացիք ծաղրով ասում էին նրան, որը կանգ էր առնում բանի-գործի ժամանակ մի մարդ տեսնելիս:

Երբ քարքարոտ ճանապարհներ էին լինում, Միրզան այնպես հանդարտությամբ վերցնում էր փոքրիկ ոտքը, դնում, և խոհուն, զգույշ կերպով դնում քարերի մեջ, որ Քերոբը ոգևորված բացականչում էր. «Տեղոցտեղ խելքի կտոր է, սիրտս կասե, բռնեմ մի կսկուծ պաչեմ էդ խելացի ճակատը»:

Բացի այդ՝ էշը դուրս էր եկած իշությունից. նա մի հատկություն ուներ, որ ոչ մի էշ ոչ մի աշխարհում չունի — նա համառ չէր. ոչ մի անգամ ճանապարհին կամ գետի մեջ կանգ չէր առնում, ինչպես ամեն կամակոր, իրասածի-տեր էշերը. երբեք նեղ փողոցներում գյուղերի չէր խրտնում, դիպչում անցորդներին, կամ գնում բևեռով մեկի դուռը [կանգնում] տնկվում-մնում, տան ելքը ու մուտքը բռնում. ուղղակի, ասես, հասկանում էր մարդու լեզու — ականջ դրած լսում էր, թե ինչ է ասում նրան Քերոբը, որը ոչ մի անգամ «չո, չո» չէ ասել, այլ՝ «Միրզա, մի քիչ էլ գնա՛, մի քիչ էլ՝ հասանք» կամ «Միրզա, էստեղ կանգնիր», և Միրզան բառ առ բառ կատարում էր այդ:

Եվ նրա այդ ընտիր հատկությունների համար տերերը նրան չա՛տ էին սիրում, մանավանդ Քերոբը, որ աչքի լույսի պես էր խնամում նրան և լավ կերակրում, երբեք չէր բարկանում վրան, իսկ հարվածել – եղած բան չէր: Իհարկե, երբեք չէին հեծնում, այլ գործ էին ածում իրենց հագուստները, ճամբու-պաշարը և արհեստի գործիքները տեղափոխելու համար[1]:

---

[1] В *չիք* Ուստա Կարոն և Ջավուշը մենակ չէին բոլորովին ... և արհեստի գործիքները տեղափոխելու համար

<ԳԼՈՒԽ Բ.>
<Բ. տարբերակ>

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ

Ուստա Կարոյի և Ջավուշի ճշմարիտ և իսկական ծագումը թե՝ ընիկ ո՞րտեղից են նրանք, առաջ ի՛նչ մարդիկ են եղել, ի՞նչ գործով են պարապելիս եղել, կին ու տուն ունեցե՞լ են արդյոք, ի՞նչ երկրներ են եղել, և վերջապես ո՞ւր և ի՞նչ կերպ են իրար հանդիպել և ընկերացել – դիտեն միայն իրենք, և իրենց պատմությունների համաձայն էլ գյուղացիները:

Եվ գյուղացիները ի՞նչ [իրավունք] հիմք ունեին չհավատալու նրանց ասածներին. կամ ի՞նչ իրավունք ունեին կասկածելու: Մի՞թե միայն այն պատճառով, որ նրանք ծնունդով ու ծագումով իրենց գյուղերից կամ գավառից չէին, նրանց մանկությունը չէր անցել իրենց հետ, [մյուս] իրենց տղայության խաղերի մեջ միասին:

[Արդյո՞ք] Մի՞թե գյուղերում և մանավանդ քաղաքներում քիչ կան մարդիկ, որ տարիքն առած հասակում գալիս են օտար մի երկրամասից, հաստատվում են բոլորովին անծանոթ նոր վայրում, «վերաբնակվում», ինչպես ասում են, գործ են անում, հաց վաստակում և պատում իրենց անցած կյանքից: Եվ ոչ մի ազնիվ մարդ իրավունք չի համարում չհավատալ այդ վերաբնակիչներին՝ սոսկ այն պատճառով, որ նրանց ապրած կյանքը իրենց աչքերի առջև չի հոսել:

Մնաց որ Ուստան և Ջավուշը այնպիսի հավատով և ղգացումով էին պատմում իրենց կյանքի վեպը, որ կասկածի տեղիք չէր թողնում բնավ: Իսկ ներկա նրանց ապրելակերպը բոլորի աչքի առջևն էր պարզված – մի աշխատավոր, արդարախոս և մաքուր կյանք:

Ուստան և Ջավուշը այնքան անկեղծ մարդիկ էին, որ պետք չէին ղգում իրարից և մարդկանցից ծածկելու իրենց [անցյալը] ինքնությունը իրենց անցյալով:

Ջավուշին այսքան և այսպես է պատմել Ուստան իր վեպից, ինչքան ու ինչպես որ կարողացել է վերհիշել, որովհետև նրա գլխով անչափելի բաներ են անցել, որ մի ուրիշը նրա տեղը շատ բան պիտի մոռանար [անցած դեպքեր եղած] պատահած դեպքերից կամ վայրերն ու ժամանակները իրար պիտի խառներ, և մարդ բան պիտի չհասկանար:

Ուստան ասել է, որ ինքը բուն Շիրակեցի է, Շիրակի հյուսիսային ծայրից, ձորերի մեջ կորած, Ախուրյանի ակունքների վրա ընկած փոքրիկ Սալուտ գյուղից:

Շեն [մեծ] տան տղա է [եղել], «օճախի տղա» Աբիկենց Գաբոյի մի հատիկ որդին:

Նրա ծնողները երկար ժամանակ զավակ [չեն ունենում] չունենալով ուխտ են անում, յոթ տարի ծոմ ու պաս են պահում [իրար վրա ուխտի են գնում], սուրբ Կարապետի անվանը մատաղ են կտրում, որ իրենց մի տղա տա և խոստանում են [սրբի] նրա տոնին ամեն տարի մատաղ անել (ինչ որ Ուստան ինքը մինչև օրս սրբությամբ կատարում է՝ լուսահոգի հոր փոխարեն): Ուստան ծնողների հոգուն է մատաղ անում ամեն տարի:

Ուխտը կատարվում է: Նա աչխարհ է գալիս, [անունը] մկրտվում, անունը դնում են Կարապետ՝ սրբի պատվի համար: Նրա ծնողների ուրախությանը սահման չի լինում:

Կարոյի [իննամյա] տասնումեկամյա [տարեկան] հասակում հայրը մեռնում է, մայրն էլ մի տարի անց վշտից մահանում է: Պստիկ Կարոն մնում է որբ: Որովհետև Կարոն հորեղբայր չի ունենում, քեռին իսկույն «հերագլուխ» է կանգնում, տանելով նրան իր տունը:

Մի անգութ մարդ է լինում թե՛ քեռին, թե՛ քեռակինը: Թե՛ սրանք, թե՛ սրանց զավակները նրան օր չեն տալիս: Հոր հարստությունը տակովն են անում և իրեն էլ կարգում են հորթարած:

Հոր արտերն ու ապրանքը կորզելով, անգութ քեռին բնավ չի էլ մտածում նրան մի պարզ դրել-կարդալ սորվեցնել տալու:

Շատ դեչ օրեր է տեսել հոր մարած օճախի կողքին՝ կիսաքաղց, կիսամերկ: «Քեռիս կուշտ հաց չէր տա, որ խելքի գայի. հագուստ չէր տա, որ չնորհքի մտնեի: Էն օրն էին քցել ինձի, կարկատաններու մեջ, որ թե լուսահոդի մերս զարթներ, պիտի չճանչնար իրեն մեկ հատիկ տղին»:

[Վերջապես, մի փոքր խելահաս դառնալով, իրև աչքաբաց տղա, տեսնում է, որ պյուղում մնալով մարդ չպիտի դառնա: Գեղն էլ արդեն նեղ ու անճուկ է գալիս Կարոյի մատաղ սրտին և փափագներին: Մտածում է իրեն նետել դուրս, աշխարհի մեջ բախտ գտնելու, մարդ դառնալու, աշխարհ տեսնելու, բան սորվելու. մի կողմից էլ, օճիքն ազատելու կռապաշտ ծննդավայրից, ուր բոլորը խորթի պես են վարվել հետը՝ ազգական ու հարևան, որովհետև ամենքն էլ քեռու կողմն են բռնել, իրեն հոր հացը քեռու տանն են կերել ու կուրացել. «Շունը չատորին կհաչա, աշխարքի օրենքն է»:

Երբ 15-16 տարեկան է լինում, գարնանը Սալուտ են գալիս [Ուռում] Թոփտումին Բերդէն (Հույն) որմնադիր-

ներ, խճուղու [վրայի] կամուրջներ [չինելու] նորոգելու համար: Պատանի Կարոն վճռում է նրանց աչկերտ դառնալ և խոստում է առնում: Միևնույն ժամանակ ապագայում վճարելու պայմանով, հույն վարպետների ձեռագործ արբաստաշ չիրմաքարեր է դնում ծնողների գերեզմանի վրա: Այսպիսով կատարում է որդիական պարտքը, և խիղճը հանդստանում է:

Հույների մեկնած օրն իսկ, Կարոն ուշ երեկոյան՝ ծնողների գերեզմանի վրա երկար ու կուշտ լալուց հետո, հեծնում է հորից մնացած մադյանի քուռակը և փախչում է գյուղից, գնում միանում վարպետներին: Փախչելիս երդվում է՝ որ էլ երբեք ոտք [չկոխել] չկոխե [իրենց գյուղը] այդ թշնամի գյուղը, ուր այնքան լացել է ու տառապել և նույնիսկ բնավ բերանն անգամ չառնի նրա անունը:

Հույները պատանի Կարոյին հետներն առած տանում են գյուղե գյուղ, քաղաքե քաղաք, ուրտեղ որ գործ է բացվում իրենց համար[1]:

---

[1] *Առանձին թերթիկի վրա՝ այս հատվածի բնագրային տարբերակ.* «Վերջապես, տարինների հետ խելահաս դառնալով, պատանի Կարոն, իրրև աչքաբաց տղա, տեսնում է, որ գյուղում մնալով մարդ չպիտի դառնա: Հիմա հորթաթաթ է, մեծանա, պիտի հովիվ դառնա: Ավելի բան դառնալիք չունի: Մտածում է իրեն նետել դուրս, մեծ աշխարհի մեջ բախտ որոնելու, աշխարհներ տեսնելու, բան սովորելու, մի խոսքով, մարդ դառնալու: Մի կողմից էլ, օձիքն ազատելու կռապաշտ ծննդավայրից, ուր բոլորը խորթի պես են վարվել հետը՝ ազգական թե հարևան, որովհետև ամենքն էլ քեռու կողմն են բռնել, [իրեն] իր հոր հացը [կերել] քեռու տանն են կերել ու կուրացել:

Եվ այս բոլոր պատճառների տակին [խորքում] կար հիմնական պատճառը – Կարոյի տարերքը: Նրա տարերքը կրակից էր շինած,

Բախտը մի նեղ կածան բացեց նրա առջև: Այսպես եղավ այդ դեպքը:

Սալուտ դյուղի հանդերի միջով կտրում-անցնում է Ալեքսանդրապոլից-Ախալքալաք ձգվող խճուղին:

Ինչքան անգամ մանուկ Կարոն կանգնել է այդ բանուկ մեծ ճանապարհի եղերքին և նախանձով և հափշտակությամբ նայել է անծանոթ ճամփորդներին, որ սլանում են ձիերը հեծած. ո՞վ գիտե որտեղից են գալիս, ո՞վ գիտե ուր են գնում քառաձի ֆայտոնները, հարուստ մարդիկով և կնիկներով, թռչում են, անցնում են... Ծանր ու բարակ ֆուրգոններ՝ հովերի դեմ փռֆռացող ծածկի ճերմակ քաթաններով, որ աղմկում են և օրորում խճուղու երկայնքին, անընդհատ, անվերջ... և ուղտերի ձիգ քարավաններ, որ շորորվելով և ղողանջելով գալիս են, մոտենում են համր ու դանդաղ, [գնում են] անցնում են,

---

որն այրում էր Կարոյին անհանգիստ [տեն<չերով>] և անորոշ տենչերով, դանդաղ ու առաջ մղող փափագներով, և դյուղն էլ իր հանդերով [չափ] խեղդելու չափ նեղ ու անճուկ էր գալիս նրա խանդավառ և երազող հոգուն:

Հետագայում Ուստա Կարոն ասում էր.– «Գիշերը քնած ժամանակս, ցորեկը, հանդում, հորթերի հետև ընկած ժամանակս, միշտ էն երազի մեջն էի, թե մեր գեղեն փախել եմ. անծիր աշխարքի մեջ լող կուտամ: Չէի հավք[ի]ում մեր գեղի ու հանդերի մեջ, սիրտս կնեղվեր, չունչս կկտրվեր: Կելնեի սարերու գլուխը և կաշեի ամեն կողմ փուչ աշխարքին ու կուզեի՝ հավք դառնալ ու թռնել: [Աշխարքի հեռու] Մինչև աշխարքի հեռու ծովերն ու ծերերը թռնել, ազատ չունչ քաշել: Սարերու գլխուն մարելիք կուգար վրես: Թե որ չփախնեի մեր գեղեն՝ պիտի շնչակտուր մեռնեի, անդուռ ու աներդիկ բանտի պես էր մեր գեղն ինձի համար...»:

Այս սրտամաշ մտորումների և մտմտուքների մեջ տապակվում էր Կարոն»:

գնում են համր ու դանդաղ: Ո՞րտեղից են գալիս, ո՞ւր են գնում... Հեքիաթներից գիտեր Կարոն, որ նրանք գալիս են Իրանից ու Թուրանից, Սամսոնից ու Տրապիզոնից և գնում են Հաբաշ, Հալաբ, Մսըր ու Բաղդատ, Հնդստան, Զինմաչին, ներսի աշխարհներից դրսի աշխարհները...

Եվ Կարոն կանգնած տեղը քար կտրած՝ բայց հոգով, երազով գնացել է նրանց հետ: Նրանց հետ գնացել է հեռու աշխարհները, նոր, զարմանալի, հեռավոր աշխարհները...

Մինչ այս սրտամաշ մտորումների և մտմտուքների մեջ տապակվում էր Կարոն, որ երբ [Կարոն երբ 15-16 18-19 15-16 18 17 տարեկան էր] 17 տարեկան էր, գարնանը Սալուտ գյուղն եկան Բերգեն՝ Թրքահոս հույն Թափառական որմնադիրներ, խճուղու կամուրջները նորոգելու համար: Սալուտ մնացին մի երկու ամիս: Կարոն վճռեց նրանց մոտ աշկերտ դառնալ և խոստում առավ: Միևնույն ժամանակ ապագայում վճարելու պայմանով, հույն վարպետների ճեռագործ սրբատաշ տապանաքարեր դրեց ծնողների գերեզմանի վրա: Այսպիսով կատարեց որդիական պարտքը և խիղճը հանգստացավ:

Բերգեննների մեկնած օրն իսկ, պատանի Կարոն ուշ երեկոյին՝ ծնողների գերեզմանի վրա երկար և կուշտ լալուց հետո, հեծավ հորից մնացած մադյանի [քուռակը] կրակոտ քուռակը և ծածուկ փախավ գյուղից: Փախչելիս երդվեց, որ էլ երբեք ոտք չկոխե այդ Թշնամի գյուղը, ուր այնքան լացել է ու տառապել, և նույնիսկ բնավ բերանն անգամ չառնի նրա անունը:

Հույները պատանի Կարոյին հետներն առած տարան գյուղե գյուղ, քաղաքե քաղաք, ուր որ գործ էին գտնում: Այս Թափառական կյանքը Կարոյի չա՛տ սրտովն

եկավ: Սիրով ծառայեց վարպետներին, սրանք էլ սիրեցին Կարոյին: Կարոն [մի քանի երկու] երեք տարի նրանց մոտ աշխատեց ձրի, «մի փոր հացի», սակայն հիմնավորապես սովորեց որմնադրության բոլոր արհեստը — քար տաշել, քանդակ անել, պատ շարել, կամար կապել, [գմբեթ բարձրացնել] և դարձավ վարպետ:

Այդ ժամանակաշրջանում էլ, մի անգամ, ձմեռը Ղազախ գավառում լինելով, պարապ պահերին մի աշուղից չոնգուռ նվագել սովորեց, որն իր որբության և մենակության ընկերն եղավ, նվագեց իրեն համար, սիրտը զեղեց ու մխիթարվեց:

Ապա հույներից բաժանվելով ինքնուրույն գործեր բռնեց: Գործ անելով, գործի հետ թափառելով, ողջ Կովկասը ոտքի տակ տվեց. էլ Թիֆլիս ասես, էլ Գանձակ, Արան, Ղարաբաղ, Երևան [Նախճվան]:

Այդ թափառումների ժամանակ, երբեմն էլ, նոր արհեստներ սովորեց [հինները կատարելագործելով]: Ուստան այն համոզմունքն ուներ, թե ինքը լինելով մենակ մի մարդ, անոք և անպաշտպան, ընկած մարդակուլ աշխարհի բերանը. ջրի երեսը մնալու համար պետք է ուներ ձեռքին «ոսկե ապերանջան»՝ մեկի տեղ մի քանի հատ: Եթե մի տեղ հաց չի տալիս այսինչ արհեստը, ապա գործ դնել տեղին ու պետքին հարմար արհեստը:

Եվ այս իրողության չնորհով [հետևանքով] դարձավ նա հազարարհեստ մարդ:

Հացի ապահով ճանապարհ գտնելու հոգսը նրան այն չափով է ղրաղեցրել, ինչ չափով որ այդ կարող էր դյուրացնել նրա փափագի իրականացմանը: Հայտնի է, որ նրա հոգում, մանուկ հասակից, բռնկած կար մի անմարելի կարոտ, թափառումների կարոտ — դնալու հեռավոր աշխարհներ, նոր մարդիկ, նոր բաներ տեսնելու. հանդի-

պելու արկածների և դիպվածների, որոնց դեմ ճակատելով բովվում է մարդ, փորձ է առնում:

Այդ արկածներն ու պատահմունքները, Ուստա Կարոյի կարծիքով, կյանքի սանդուխի ստեղներն են, որոնցով խելոք և աստղի տեր կտրիճը կարող է բարձրանալ մինչև դադաթը — մատով ցույց տրվելիք մարդ դառնալ, աշխարքի մեջ մի մեծ անուն:

Արդեն Ուստան փոքր հասակում, ձմեռները գոմի օդանների (սենյակների) անկյունում կուչ եկած՝ ուշադիր, ականջը կախած՝ լսել է ծեր, փորձված մարդկանցից հրաշալի պատմություններ, քաջերի կռիվների և արկածների մասին. լսել է հայ և թուրք թափառաշրջիկ աշուղներից հոգի կախարդող հեքիաթներ ու մասալներ, և անցորդ ճամբորդներից սիրտ գերող զրույցներ զանազան զարմանալի աշխարհների և [ազգերի] ժողովուրդների մասին... և Կարոն տեսլացած թռչել է այդ հրաշքի վայրերը, կռվել է ու հաղթել և աշխարհով մեկ անուն հանել...

Հիմա որ կտրիճ երիտասարդ է, ձեռքն էլ հաց ունի և արհեստի բերմամբ թափառելով ճամփորդությունների համն առել է և բավական եփվել — ինչո՞ւ հիմա կանգ առնի կես-ճանապարհին, ինչո՞ւ չգնա ավելի և չա՛տ ավելի հեռուները, այն դյութական, խելք թռցնող հեքիաթի աշխարհները: Մարդ [մի անգամ] աշխարհ է գալիս աշխարհ տեսնելու համար. [բայց դժբախտաբար մի անգամ] ժամանակ չպիտի կորցնես. հո՛, երկու անգամ չես գալիս, որ վրա երկրորդին աշխարհատեսության երթաս...

Թեև կովկասում Ուստան իր թափառական կյանքի ընթացքին շատ բան սովորեց չա՛տ մարդիկ տեսնելով, լսեց ու սերտեց հայերեն ու թուրքերեն լեզվով երգեր ու խաղեր, զրույցներ ու հեքիաթներ, իմաստուն առակներ

ու առածներ, բայց նորից ծարավի էր նրա հոգին... անծայր ուղիներ էր ուզում նրա հոգին, փորձի ու բախտի մեծ ոլորտներ, ավելի չա՜տ բան սովորելու, չա՜տ ավելի բան սովորելու... [Ուզում էր Կովկասից դուրս ձգել իրեն, [Իրան] ընկնել Իրան ու Թուրան, Հինդ ու Հաբաշ:] Հիմակ ու հիմակ ուզում էր իրեն դուրս նետել Կովկասից, ընկնել Իրան-Թուրան, ուզում էր Թավրիզ ձգել իրեն:

«Ջավուշ չան, ասել է Ուստան, տեսա որ չատ ապրողը չէ չատ բան գիտցողը, հապա, չա՜տ ման եկողը: Աշխարքն որ կա՝ ասուլիս է, տես ու ուսե: Գլուխդ առ ու գնա, [ամեն պատահած ելած] ճամփին ամեն պատահած մարդու հետ խոսքի բռնվիր, թե իմաստուն հետ չդառնաս, էլ ինձի բարև մի տուր»:

Եվ այսպես երիտասարդ Ուստան ծարավ հոգով, գլուխն առած, ձեռքի արհեստները բանեցնելով, գնալով, գնալով գնաց հասավ Իրանի հողը, Թավրիզ քաղաքը: Թավրիզում մի տարվա չափ մնալով պարսիկ վարպետներից սովորեց ջուր գտնելու գաղտնիքը, աղբյուր կանգնեցնելու արհեստը:

Ապա իր երազածը դիպվածով առաջն եկավ: Մանոթացավ պարսիկ նշանավոր քարավանապետ Խոջա Մանսուր աղայի հետ, որին և Թեջիր Մանսուր աղա էին ասում. մի պատվական մարդ, որի անունը առանց օրհնելու սեղան չէր նստում Ուստան:

[Որպեսզի հնար ունենա աշխարհներ տեսնելու՝ երիտասարդ Ուստա Կարոն քարվանի մեջ ծառայության մտավ. երկու տարի Մանսուր աղայի ձեռքի տակ ծառայելով՝ ցույց տվեց իր աչքաբացությունն ու հավատարմությունը:]

Որպեսզի հնար ունենա աշխարհներ տեսնելու, երիտասարդ Ուստա Կարոն ծառայության մտավ Մանսուր

աղայի քարվանի մեջ: Երկու տարի եռանդով և հավատարմությամբ ծառայեց: Մանսուր աղան [տեսնելով] դնահատելով Ուստայի կորինճությունն ու աչքաբացությունը, դարձրեց նրան իր [տեղապոխ] տեղապահ Աբբաս աղայի օգնական, առատ վարձն էլ իր կարգին:

[Աբբաս աղան, որ քարավան վարողն էր և [չատ հմուտ քարվանապետ էր], չա՛տ սիրեց իր օգնական Ուստային, եղբոր պես վարվում էր:]

Աբբաս աղան, որ փորձ ու հմուտ քարվանապետ էր, չա՛տ սիրեց [Ուստային] իր օգնական Ուստային. մեծ եղբոր պես թևի տակ առավ նրան, հարազատի [եղբոր] պես վարվելով հետը:

Այնուհետև չատ անգամ Ուստան Աբաս աղայի հետ քարվանի [մեկ մասի] գլուխն անցած, քարվանը պտտեցրեց քաղաքե քաղաք, երկրե երկիր: Նա հնար ուներ դնալու հեռու տեղեր, հրաչքներով և հրապույրներով հարուստ աշխարհներ, որ քարվան ունենալուց առաջ ե-րազների և հեքիաթների մեջ էր միայն տեսել... [իսկ հիմա այդ հեքիաթի]

Տարիքով մարդը մեծացած [տղա] երեխա է. նրա հոգին էությամբ չի փոխվում, այլ մեծանում է. էությամբ մնում է նույնը: Ուստա Կարոն, մանուկ ժամանակն էլ, առանց հուզումի չէր կարող նայել ճանապարհ ասած բանին. լինի դա չավիղ կամ կածան, արահետ կամ լայն ուղի, բավական է, որ այդ կախարդ բանը, քեզ կարող է տանել այս ծանոթ, սովորական տեղից անծանոթ, գրավիչ, գեղեցիկ տեղեր, հեռու տեղեր: Հեռու տեղերը մանուկ Կարոյին և մեծացած Ուստա Կարոյին [դյութական, խորհրդավոր պատկերով] երևում էին դյութիչ, խորհրդավոր պատկերով, որ քաշում էին, ձգում նրա հոգին դեպի իրենց հրաչքն ու կախարդանքը:

Ճանապարհը փոքր ու մեծ կարոններին չքեղ խոստումներ էր չննջում: Ճանապարհը [բանում էր] պարզում էր նրանց առաջ լայն ու մեծ աշխարհը, փորձի ու գործի անսահման [վայրը] ասպարեզ...

[Ճանապարհը, ճանապարհը...]

Եվ երբ Ուստան քարավանի գլուխն անցավ, այնուհետև նրա առջև բացվեցին բոլոր ճանապարհների երկաթե դռները, և բոլոր հեռու տեղերը մոտեցան, և մոտիկ տեղերը հեռացան:

«Ողջ աշխարքին հայտնի է, Ջավուշ ջան,— ասել է Ուստան ընկերին,— որ ես քարվանի գլուխ գլխավոր էի. չա՛տ անգամ մենակ, չա՛տ անգամ Աբբաս աղի հետ, ժամանակ-ժամանակ էլ Մանսուր աղայի ձեռքի տակ: Օխթը տարի, ասելն է հեշտ, օխթը տարի: Ես կտրիճ, անվախ երիտասարդ էի, արյունս տաք: Էսպես, գլուխս առած՝ քարվանիս հետ հազար սարեր ու ձորեր եմ կտրել-անցել. կապուտ ու կանանչ ծովերու պռունկներով՝ մեկ աշխարքեն մեկ[էլ] ուրիշ աշխարքը գանձ ու կարողություն, մարդ ու ապրանք եմ տարել-բերել: [Ինչ] Ինչպիսի իմաստուն մարդիկ տեսա, որ օրերով լսեիր, չէիր կշտանա: Օրը՝ նոր, ճամփեն՝ նոր, փորձությունը՝ նոր: Մազերուս համրանքի չափ չար ու բարի եմ տեսել: Ի՜նչ հողեր, ի՜նչ երկրներ, վերի աշխարքներեն ներքի աշխարքները, ներսի աշխարքներեն դրսի աշխարքները: Է՜հ, Ջավուշ ջան, իմ չիբուխիս մուխը ի՜նչ երկնքի տակ ասես, չի մխացել, ի՜նչ ծովերու ամպերու հետ չի խառնվել: Հիմի ո՞ւմ խոսք հասկացնես: Նատողն ի՞նչ գիտե, թե գնացողն ո՞ւր հասավ:

Ո՞ր մեկն ասեմ տեսածներես: Ի՜նչ ապրեր ու լեզուներ, ի՜նչ տեսակ-տեսակ քաղաքներ: Ծառներ կային, որ մարդու և էլ անասունի մսերը կքաշեին, կուտեին, թե որ

մոտերեն անցնելիր. անտառներ կային, որ մեղր կըղխեր ծառերեն ու գետի պես կելներ կերթար մեղրը: Ու էլի ինչե՜ր, ինչեր...

Ի՜նչ եղելություններ տեսա, ի՜նչ հրաշք բաներ, [չատերին] չատերուն աչքովս ականատես եղա... Ու էսպես տեսնելով, լսելով ու փորձվելով, հասակես ավելի հասակ առա:

Ջավուշ չան, Թավրիզ, քարվան նստելուս օրը դնացի մեկ բախտ-բացող աճամ կնկա մոտ: Ինչու որ նոր ճամբա բացավ առջևս, կուզեի ճակտիս դիրն իմանալ: Էդ կնիկը ինձի աչեց, ետև իրեն եղունկին աչեց ու ասավ. նոր-նոր աչխարքներ պիտի տեսնես, ծովերու բոլորը պիտի ման դաս, դանձով ու փառքով պիտի ապրիս, բայց առջևդ սև բու կա, ճամբեդ օձերով լիքն է: Էդ փորձանքներեն պիտի ազատվիս վերջը, Աստծուդ ապավինելով, ու ետև ծիծեռնակի պես պիտի թռնիս երթաս քու ազդիդ ու լեզվիդ հողը, էնտեղ բունդ պիտի չինես ու սրտիդ ուզածի պես պիտի ապրես:

Էդ կնկա խոսքն ելավ: Ջավուշ չան, քարվանովս եղա Բաղդատ, Մսըր, Իրան-Թուրան ոտքիս տակն էր. Ղանդահարը ճամբուս վրան էր. Հնդստան չեղա. հասանք մինչև Արաբստանի քովը. Զինմաչին էլ չեղա: Մեծ փորձանք պատահավ: Իմաստուն խոսք ասած չեմ էղնի, թե որ ասեմ թե՝ բախտն է աչխարքիս կառավարողը. էսօր իշխան ես, վաղը՝ հող ու մոխիր. երեկ անունդ չգիտեին, էսօր մատով ցույց կուտան քեզի. էսօր դուրդ հազար մարդ հայ կուտե, էդուց դու հացի կարոտ ես: Բախտի ամեն խաղերն ու երեսները աչքովս տեսա իմ հազար ճամբեքի վրա: Էս աչխարքի օրենքն է ու մեր գլխուն էլ եկավ: Արաբստանին չհասած՝ ավազակները, անթիվ ու անչափ, վրա տվին, մեր քարվանը տարան, մեկ օր ու մեկ

գիշեր կռիվ տվինք, խեղճ Աբբաս աղան էդտեղ զարկվավ. ես ու Մանսուր աղան մահե պրծանք. հրաշք էր, մեր մերերի աղոթքը զուր չէր անցել: Ես ու ինքը, հաց մուրալով, տեղ-տեղ արհեստներս բանեցնելով, եկանք ընկանք Թավրիզ:

Խոջա Մանսուրը, Աստուծ բանն աջողե՝ թե ողջ է հիմի, իրենց չեննաթին արժանանա, եթե մեռած է հիմի,— մորե մերկ աղքատ էր դառել ու վախեն երկու կտոր եղել... Ուրտեղեն փող ճարեր, որ նորեն քարվան սարքեր. անկարելի բան էր: Ես էլ ի՞նչ աննի, ի՞նչ չաննի.— ես էլ էի մորես մերկ դառել, իմ ունեցած չունեցածն էլ թալանել էին,— էդ մտմտուքի մեջն էի, ներսես մեկ ձեն ինձի ասավ.— հերիք մնաս դրսերը, տուն դարձի՛: Էս խոսքը ականջս ծակեց, աչքս բացեց: Ես էլ չա՛տ կարոտել էի հայի հողին ու ջրին, հացին ու լեզվին, ձեռաց մնաս բարով արի Մանսուր աղային ու ճամբա ընկա:

Էսպես դարձա եկա Հայու Հողը: Մեկ տարի չկար, որ էջմիածնա գեղերն էի, բախտը մեզի իրար բերեց ու ախպերացանք: Մնացածը դու գիտես:

Այս պատմության վրա թե՛ տխրությամբ և թե՛ իրեն մխիթարելով՝ ավելացրել է Ուստան.

«Զավուշ չան, ցավ մնաց սրտիս մեջ, որ Զինմաչինն ու Հնդստանը չտեսա: Զելավ: Բախտը չկամեցավ: Է՛յ քարվան, քարվան, է՛յ անուշ տեղեր. արդյոք մեկել աչքս տեսնելու է ձեզի... Է՛հ, ի՞նչ աննենք. էլի բախտավոր եմ, որ աշխարքի մեկ մեծ կտորը տեսա, մեկ կտորն էլ լսողաց գիտեմ. մեկ կտորն էլ երազով, մտքով կիմանամ. մնացած մյուս կտորն էլ (մյուս անգամ աշխարհ գալուս, թե որ մեկել անգամ աշխարք գալ կա)[1] մնաց ա՛ես քաշելու համար»:

---

[1] Հեղինակը այս երկու չարուչթների միջև դրել է կամ:

Ուստան ծիծեռնակի պես թռավ եկավ, և հայրենի Շիրակի հակառակ ծայրում չինեց իր բույնը նորածանոթ հայրենակից գյուղացիների բույների մեջ:

Գյուղացիները ապրում էին անձուկ ձորերում, լեռների խորշերում, ուր երկինքը երթիկի չափ է, ապրում են բլուրների տակ կուչ եկած պստիկ գյուղերում, մի սահմանավոր փոքր աշխարհում, որի հորիզոնները վրանի պես իջնում են մոտիկ լեռների գլխին: Եվ այդ անձուկ ծիրից երազում են մեծ, լայն, անսահման աշխարհը, որի ծայրերը կորչում են ծով-օվկիանոսների և սատանայական անդունդների մեջ:

Այս կուսական մտքերի պատկերացումով այդ մեծ աշխարհը կազմված է զանազան զարմանալի երկրներից՝ ներսի ու դրսի, վերևի ու ներքևի՝ գույն-գույն ծովերով իրարուց զատված: Այն տեղերում ուրիշ տեսակի մարդիկ են ապրում, ուրիշ տեսակի լեզուներով ու կրոններով, ուրիշ տեսակի վարքերով ու սովորույթներով:

Զարմանահրաշ կենդանիներ, թռչուններ, բույսեր կան այն տեղերը: Հրաշքի ու հրաշալիքների երկիրներն են նրանք, հեքիաթի գործեր են կատարվում այդ հեքիաթունակ և խորհրդավոր աշխարհներում:

[Եվ Ուստան եկել է հիմա այդ մեծ աշխարհի գոնե մի մասից, որ տեսել է իր աչքերով, և խոսում է հիմա այդ զարմանալի աշխարհների մասին: Եվ պատմում է հավատով ու հիացումով, բուխ զգացումով, ու վաղուց տեսածանցածը իր արարչագործ երևակայությամբ վառելով ու կենդանացնելով:]

Եվ հիմա գյուղացիները իրենց առօրյա չարքաշ կյանքում, անդիտակ մղումով, փափագում են մտքով ճամ-

բորդել այն վայրերը՝ հեռու և դեղեցիկ, տեսնել, չոշափել պերճն ու սքանչելին, հոտոտել ցնորուն բույրերը այնտեղի կախարդիչ պարտեզների, ունենալ այն, ինչ որ չունի [նրանց] իրենց չքավոր կյանքը,— այն ամեն հրաշալին ու ցանկալին, որի չգոյությունը լիուլի կերպով կարող է փոխարինել պատրանքը միայն,— իրականի բույրն ու դուներ պատկեր-պատճենը, որ բերում էր Ուստայի քարավանը հեռու հեռուներից...

Ուստայի քարավանը՝ երազի մարմին հագած, դյուղացիների հայացքի առջև փռում էր նրանց փափագած աշխարհների տեսիլները, որոնք դյուքական ուռկանի պես դրկում, քաշում, հեռացնում էին նրանց հոգիները իրականության չար ու չոր չրջապատից:

Եվ տեղափոխվում էին նրանք երջանիկ լույս-ոլորտի մեջ, ուր մի պահ ուրախանում էին՝ մոռանալով իրենց աղքատիկ, փոքրիկ կյանքը: Մանավանդ [երբ] եթե բախտ էին ունենում հանդիպելու Ուստայի ոգևորված կամ գինով ժամերին, (երբ քարավանը ավելի հեռուներից ու խորերից էր գալիս՝ բարձած ներսի ու դրսի աշխարհների անանուն-հազարանուն դանձերով, հրաշքներով ու հեքիաթներով, գինիներով ու լուսե-աղջիկներով...)

Ինչո՞ւ պիտի չլսեին հավատով իրենց սահմանափակ աշխարհից մեծ աշխարհը չտեսած դյուղացիները երբեմնի քարվանապետ-աշխարհաժուռ Ուստայի տեսածներին ու լսածներին, երբ սրանք լիակատար համոզմամբ հաստատում էին թե իրենց երևակայած իրականին և թե ուրիշ եկողների տեսածների ու լսածների ճշմարտությանը: Իրենց ամբողջ մտայնությանը:

Չէ՞ որ, եթե իրենցից՝ դյուղացիներից մեկն ու մեկը Ուստայի փոխարեն այդ տեղերը լիներ, նույն բաները պիտի տեսներ ու լսեր, և թերևս, ավելի պակաս բաներ,

որովհետև ամեն մարդ, հավասարաչափ, տեսնող աչք ու լսող ականջ չունի, [այսինքն Ուստայի] ինչպես Ուստան է, և Ուստայի նման ճարտար լեզու և հիշելու միտք և [անցած] եղած–անցածը վառ ներկա դարձնելու չնորհք:

Եվ թերևս ավելի չատ բաներ տեսներ ու լսեր, եթե Ուստայից ավելի չնորհալի լիներ, աչքը՝ բաց, և ականջը՝ ծակ:

Գյուղացիներից չատերը, [քիչ] չնչին բացառությամբ, հավատում էին Ուստայի ղրույցներին այնպես, ինչպես երեխաները հավատում են մեծերի խոսքերին և կամ հավատավորները առանց կասկածի ընդունում են սրբերի և նրանց հրաշքների իրական գոյությունը:

Երբ Ուստան ու Ջավուշն իրար հետ ծանոթացան ու եղբայրացան, Ուստան մի օր ընկերոջ ուսին զարկելով ասաց.– «Առ էս արաղը, խմենք մեր ախպերության կենացը: Սիրտդ չեն-ուրախ պահե: Ջորս ձեռք ունենք, երկու բերան. թագավորի պես կրնանք ապրել ու դեռ ուրիշներին էլ ծաղկեցնել: Միայն մեկ լավ տեղ գտնենք ու պանդխտության գոտիներս քանդենք ու նստենք»:

[Եվ մի անգամ, երբ կողբ էին աչխատանքի հանգամանքով, լսեցին որ չուտով Բագրանա ս. Գեորգի ուխտի [տոնումն է, ուր մեծ աչխարհաժողով հանդես] օրն է լինելու, ուր ամեն կողմից [կհավաքվեին] հավաքվում էին ուխտավորներ, ուր, իբրև հնուց ավանդաբար կատարվող «աչխարհաժողով», տեղի են ունենում հանդեսներ, խաղեր և տոնավաճառ:]

Մի անգամ, երբ Կողբ մեծ գյուղումն էին աշխատանքի հանգամանքով, լսեցին որ հաջորդ չաբաթ Բագրանա ս. Գեորգի նշանավոր ուխտի օրն է:

[Այս ավանդական] Ավանդաբար, այդ տոնի շնորհիվ հինավուրց դիցավանը դառնում է «աշխահաժողով» մեծ մի վայր, ուր Շիրակի, Երասխաձորի և շրջակա գավառներից հավաքվում էին բազմաթիվ ուխտավորներ – [հայ] գյուղացի, քաղաքացի, հայ, քուրդ, եզդի:

Երկու օր մեծ հանդեսներ են տեղի ունենում ավերակ վանքերի շուրջը, այգիներում զանազան խաղեր, քեֆ ու ուրախություն և տոնավաճառ:

Իրենք էլ պատրաստվեցին և կողբեցիների հետ գնացին ուխտին: Լավ քեֆ արին այնտեղ: Ծանոթացան նոր մարդկանց հետ և նրանցից էլ իմացան, որ այս հողաշատ և հացաշատ գավառում չկան որմնադիր վարպետներ և նրանց [քաղաքից են բերում] բերում են Կարսից, Կաղզվանից [են բերում կարիքի] կարիք եղած դեպքում:

Նոր ծանոթները, որ լավ վերաբերմունք ցույց տվին նրանց հանդեպ, խորհուրդ տվին իրենց մոտ մնալ և նույնիսկ գործեր հանձնեցին: Եվ վերջապես Ուստայի մանկուց խմած Ախուրյան գետն էլ կար, որ թեև իր ապրախտ հայրենի գյուղի [մոտով] հանդերով է անցնում, բայց և անգին ծնողների սուրբ գերեզմաններին էլ է աչք ածում:

Առաջին աշխատանքը կատարեցին Քիրս գյուղում, Նազարենց Մարգարի մոտ: Ու նրա տանն էլ իջևանեցին: Ուստան Մարգարի նոր ծնված որդուն [էլ] կնքահայր եղավ, այսպիսով այս նոր տեղում առաջին հիմքը դրեց սրբագործած բարեկամության: Այս եղավ նրա անդրանիկ կնքահայրությունը այս գավառում: [Սրանից / Որից հե-

տո / Որին] Սրան հետո հաջորդեցին անթիվ դեպքեր, որով վերջիվերջո Ուստան դարձավ համարյա ամբողջ գավառի քավորը և իրավունքով կոչվեց «քավոր Ուստա Կարո»:

Ուստան ուզում էր հենց սանահայր Մարգարի տունը [մշտական] մշտապես տեղավորվել, սակայն զգաց, որ Մարգարի պառավ մայրը՝ նորահարսի տեր լինելով, սրտաբաց վերաբերմունք [չի հայտնաբերում չհայտնաբերեց] չունի Ուստայի հանդեպ, [Ուստան զգաց այս և իրենն] և Ուստային բնավ դուր չեկավ պառավի կասկածոտ աչքը:

Ուստան և Զավուշը, իբրև ամուրիներ, առհասարակ միշտ մի ընտանիքի մոտ էին բնակվում, որովհետև իրենց խնամող էր պետք, կանացի հոգատար ձեռք, եփող, թափող, կարող, լվացող: Եվ մնում էին իրենց սրտաբաց ընդունող ընտանիքների մոտ: Իհարկե, Ուստան լիուլի վարձատրում էր հյուրասիրող ընտանիքի աշխատանքը և չա՛տ ավելի էր տալիս, քան ստանում:

Զավուշի հետ վճռեցին ուրիշ տեղ որոնել, ասելով թե՝ իրենց հացն են ուտում, ուր որ սիրով ընդունեն, այնտեղ էլ իրենց օճախը կվառեն:

Եվ կարճ որոնումից հետո՝ փոխադարձ սիրով ու համաձայնությամբ Նախճվանի Շեկոյենց Օսկանի տունը ընդավ իրենց տունը:

Ուստան իր քաղցր սրտով գրավեց գյուղացիների սրտերը: Կերավ ու ավելի կերցրեց, խմեց ու ավելի խմցրեց: Մի-երկու տարի չանցած բոլոր գյուղերում բարեկամ ու սանահայր ունեցավ, ընկեր ու պաշտպան գտավ: Ամենից սիրվեց ու հարգվեց:

Եվ այդ կողմերը երևալու օրից մինչև այսօր, չրջանի գյուղացիների հետ, [նվազ բացառությամբ] մատերի վրա

համրվող բացառութիյամբ, Ուստան ու Զավուշը ապրում էին այնպես ծանոթ ու հարազատ, ասես թե, մանկական խաղերից իրար հետ մեծացած լինեին:

Ուստան այնքան հարազատ էր զգում իրեն այս միջավայրում, որ երբեք մտքով չանցրեց հորական դյուղը դառնալ:

«Զավուշ ջան, ասել է Ուստան ընկերին, երկու բան չեմ ուզում — մեկ՝ կնիկ առնել, քանի որ ժամս անցել է, ժամվորս դուրս ելել, մեկ էլ՝ իմ ծնած դեղն երթալ: Էնպես եմ կուշտ մեր դեղեն, էնպես եմ կուշտ, որ ասել չի ըլնի: 20 տարի է անցել, որ վախել եմ մեր դեղեն, իսկի չեմ կարոտել մեր գեղացոց ու իսկի էլ չեմ ուզենա, տեղս իմանան, գան արունս պղտորեն: Ուրիշ բան է՝ թե էնքան հարուստ էղնեի, երթայի ողջ մեր դեղի հողերն առնեի, գեղացոց դուրս հաններ, էնոնց տեղը ծառ ու ծաղիկ տնկեի՝ երկնուց խոսնակ հավքերի համար. ծնողներուս գերեզմանի վրա էլ մարմար դմբեթ չինեի էդ ծառ ու հավքի մեջ: Ուխտել եմ միայն, երբ լավ ծերանամ, երթամ ծնողներիս հողը վերջին հեղ տեսնեմ, պագնեմ ու դառնամ գամ, էստեղ մեռնիմ: Ինչ ունեմ-չունեմ էստեղ է.— ախպեր էլ, քուր էլ, ընկեր էլ, բարեկամ էլ: Շինած տներս էստեղ են, բերած աղբյուրներս էստեղ են, ու անուններս էլ էդոնց վրա է գրված: Ես կմեռնեմ, սանիկներս աղբյուրներուս ջուրը կխմեն, ինձի կհիշեն, ճամբորդները կարմունջներով կանցնեն, անուններս կարդան, ողորմիս կուտան»:

Մի հայացքով առած՝ Ուստա Կարոն սիրուն տղամարդ էր. առողջակազմ, լայնաթիկունք: Միջահասակ

էր: Ուներ կանոնավոր գլուխ սև խիտ մազերով՝ միշտ կարճ խուզած: Միջակ լայնությամբ ճակատ՝ հոնքերի բարակ աղեղների վրա: Թուխ, չադանակի գույն մեծ աչքեր, մի քիչ մեծ քիթ: Միծեռնակի թևերի [նման] ձևով սև բեխեր, որ եզերում էին [կարմիր-հաստ] կենսալից կարմիր շրթները, ծխախոտից դեղնած առողջ ատամներ: Կզակը՝ կլոր, նման դեղձին իր քնքուշ ակոսով: Երեսը միշտ սափրած էր և դեռ ոչ մի ճերմակ մազ չուներ:

Նրա թավ ձայնը բղխում էր ուղղակի սրտից: Շարժ ու ձևերը կրակոտ էին, քայլվածքը մի փոքր օրորուն:

Ինքը ամբողջ աշխույժ ու եռանդ:

Ամենից գրավիչը նրա հայացքն էր — պարզ, համարձակ, ուրախ: Ամեն խոհ ու խորհուրդ, հուզում ու զգացում լեզու էին առնում նրա աչքերի մեջ: Հոգին հայացքի մեջն էր:

Այդ հայացքն իշխում էր նրա դեմքի վրա, տալով նրան իր գույներն ու երանգները — և վստահ, պարզ ու գվարթ էր այդ դեմքը:

[Ուստայի խորքը արևով էր չաղված: Ուրախությունը եթե առարկայանար, անպատճառ Ուստա Կարո պիտի դառնար:]

Շա՛տ զգայուն հոգի ունենալով՝ սաստիկ և իսկույն ազդվում էր: Մի որևէ տխուր լուրից, անհաճո դեպքից, ուրիշին զարկած աղետից մահու չափ տխրում էր: Բայց չատ չանցած՝ գվարթանում էր, ինչպես գարնան երկինքը, որ հանկարծ ծածկվում է մութ ամպերով, [բայց] սակայն մի պահ թաքնված անհաղթ ու պայծառ արևը, երևում է մեկ էլ վանելով ամեն թուղպ ու թախիծ: Անարդարության, չարիքի դեմ ընդվզած վայրկյաններին սպառնալից խոսքեր էր թափում,— գայրագին չարժում-

ներ, ոխ ու վրեժի ուխտեր, սակայն անցնելով վայրկյանը, հալչում էին զայրույթն ու կռվի տենչը:

Երբ հուշերից ծագած մի դառն պատկեր կամ մարդկանցից կրած մի ծանր խոսք [ու վնաս] քայքայում էր նրա հոգին, իսկույն Զավուշին պիտի հաղորդեր այդ բոլոր դառնությունները, բոլորը առանց մնացորդի պիտի պարպեր, որ մտքի վրա ո՛չ մի վայրկյան ճնշող բեռ չունենար:

Եվ Զավուշին էլ նույն խրատն էր տալիս:

«Զավուշ ջան, երբ որ նեղվիս մեկ պատճառով կամ առանց պատճառի, իսկի ներս չբցես: Ասա՛, խոսի, չպահես: Ցավը [մատի] մատը մտած փուշի պես է, հանես՝ կլավնա, թողնես՝ կթարախոտի»:

Ինչքան որ նրա հոգին տրամադրությունների դյուրին ենթարկվող էր, սակայն տիրող գույնը հոգու – կարմիր ու կանաչ էր – հուսավառ զվարթության:

[Եվ արդեն սրտի արևը նրա դեմքի վրա գրեթե մայր չէր մտնում:

Այս արևազվարթ սրտով սիրում էր նա կյանքն ու աշխարհը, մարդիկն ու իրերը: Դյուղացիները սիրելով նրա այս պայծառ բնույթը՝ ասում էին իրար.– «Էրնեկ իրեն, երջանիկ մարդ է. արդար հոգի ունի»:]

[Ուստայի] Նրա խորքը արևով էր չաղված: Ուրախությունը եթե առարկայանար, անպատճառ, Ուստա կարո պիտի դառնար: [Խորունկ ուրախությունն էր նրա աշխարհազգացումը: Եվ նրա դեմքի վրա գրեթե մայր չէր մտնում կենսուրախ արևը գրեթե նրա դեմքի վրա մայր չէր: Եվ կենսուրախ արևը թե նրա սրտում, թե դեմքի վրա գրեթե մայր չէր մտնում: Այս արևազվարթ սրտով սիրում էր նա կյանքն ու աշխարհը:] Այս կենսուրախ արևը գրեթե երբեք մայր չէր մտնում նրա սրտի մեջ, թե

նրա դեմքի վրա: Եվ այս արևազվարթ սրտով զգում էր նա կյանքն ու աշխարհը, սիրում էր մարդիկն ու իրերը:

Գյուղացիները սիրելով նրա այս պայծառ բնությունը ասում էին իրար. «Երնեկ իրեն, երջանիկ մարդ է, արդար Հոգի ունի»:

Ուստան խորապես հավատում էր Աստծու գոյությանը և նրա նախախնամությանը և Հոգու անմահությանը: Հավատի մասին մանուկ հասակում բան չգիտեր, կամ այնքան, ինչքան հասակակից մանուկները, որոնց համար կրոնը նախապաշարումների և եկեղեցական ծեսերի պատկերներով էր սահմանվում:

Միայն «Հայր մերն» էր սովորել լուսահոգի մորից և ուրիշ ոչ մի աղոթք:

Ամեն անգամ «Հայր մերն» ասելիս՝ Հոգու լացող աչքի առջև ներկայանում էր խեղճ վաղամեռ մայրը: Հասակն առնելով՝ լրիվ թափանցեց, հասկացավ «Հայր մերի» խորհուրդը և նրանից ավելի իմաստուն բան չէր գտնում մարդկային խոսքերով ասված.- «Մեր ամենօրվա հացը տուր մեզի, փորձանքի մեջ մի՛ քցիր մեզի, [չարից] հապա փրկիր մեզի չարից»:

Ապագայում շատ բան սովորեց կրոնի վերաբերմամբ, սակայն ոչ թե տերտերներից և եկեղեցուց, այլ զանազան բանգետ մարդկանցից, նրանց հարցնելով և ուշադիր ականջ դնելով:

Բայց մի մարդ՝ մի հին վարժապետ, դերվիշի տիպար, կրոնաբարոյական սահմանում, անջնջելի կնիք դրեց նրա հոգու վրա:

Նրա հետ ծանոթացավ Թավրիզում, մի իջևանի-քարվանսարայի մեջ. երկու շաբաթ ապրեցին միասին: Նրան բոլորը Խալֆա էին կոչում և հարգալիր վարվում հետը: Խալֆան իջևանի տիրոջ [ազգականն էր] վարժապետն էր եղել, գրել-

կարդալ սովորեցնողը: Ծերացած [լինելով] և անընտանիք [չունենալով] լինելով՝ ապաստանել էր իր [ազգականի] աշակերտի մոտ, որը Ալֆային պատվում էր հոր պես: [Արհեստով վարպետ ոսկերիչ էր, բայց ձեռքը դողալու պատճառով] Ներության պատճառով չատունց դադարել էր [արհեստը բանեցնելուց] աշակերտներ կրթելու դործից: Հիմա, երբեմն, նորից, դիմում էին նրան, իբրև հմուտ հասկացողի, արժեքավորելու և գնահատելու համար ոսկեղեն ու գոհարեղեն զարդեր և իրեր: Հատուկի այս բարակ աղբյուրը բավարար էր այս սակավապետ մարդու համար:

Ուստան չա՜տ սիրեց նրան:— Տեսած ու լսած մարդ էր, բարի ու հեզ, [գրող-կարդացող էր] ողջ Ավետարանը գոց գիտեր: Ուստան ուզեց նրանից գրել-կարդալ սովորել, որ իր աչքերով կարդալ կարողանար Քրիստոսի խոսքերը, բայց ժամանակ չկար, քարավանը սպասել չէր կարող: Սակայն այս երկու շաբաթում Ալֆան նրան բավականաչափ ծանոթացրեց Քրիստոսի ուսմունքի հետ. մոտը կարդաց Ավետարանը, պատմեց Աստվածաշնչի դանազան դրվագներից, աշխարհի ստեղծման գլուխը կարդաց և բացատրեց, հասկացրեց, ինչ որ պետք էր: Ուստան հափշտակված լսում էր Ալֆային, հոդու մեջ քանդակելով նրա ամեն մի խոսքը:

Ալֆայի ասածներից [ամփոփումը ու իր] Ուստան այս աշխարհապատկերացումը ունեցավ.

Աստված հազար-հազար տարիներ խորունկ մտածելուց հետո ոչնչից ստեղծեց աշխարհը կատարյալ կերպով: Եվ ստեղծեց մարդուն իր պատկերի նման անմահ հոգով, և երջանկության համար թե այս անցավոր աշխարհում և թե մյուս հավիտենական աշխարհում: Միայն մի պայման դնելով — հնազանդումը մարդու՝ աստվածային պատվիրաններին: Անհնազանդը սատանայի

գերին է՝ հոգով-մարմնով կորած, դժոխքի բաժին: Աստված հոգում է իր ստեղծների վրա: Համրել է մարդու գլխի մազերը և մի մազ չի ընկնում մարդու գլխից Աստծու կամքից անկախ: Ամեն բան գիտե Աստված, ամեն բան տեսնում է նա, թե՛ անցածը, թե՛ գալիքը: Ողջ աշխարհը Աստծու ափի մեջն է, երկու աչքով հսկում է աշխարհին, և մյուս ձեռքով պաշտպանում է չարից-սատանայից: Իր որդուն՝ Քրիստոսին ուղարկեց աշխարհ իր պատվերները – Ավետարանը մարդկանց տալու համար: Այս են նրա պատվերները – սիրիր ուրիշին ինչպես քո անձը. բարի արա թշնամուդ և ինչ որ ուզում ես մարդիկ քեզ անեն, դու էլ նույնն արա նրանց: Այս է, ուրիշ բան չկա ավելի: Կատարողը կարժանանա Աստծու երեսաց տեսության, դրախտի հավիտենական երանության: Ուստան երկար մտածելով աստվածային այս պատգամի վրա, հասավ այն մտքին, թե [իրապես] արդարև չատ դժվար է մարդ արարածին լիապես կատարելու Ավետարանի պատվերը, սակայն ինքը ձգտում էր հնար եղածից ավելի չչեղվելու սուրբ պատվերներից.– բարությունն էր անում ուժից ավելի, աղքատասեր ու [մարդասեր] օտարասեր, դրամի և [շահի] օգուտի համար սուտ չէր խոսում, մարդ չէր խաբում, բամբասանքից և հայհոյանքից խուսափում էր:

Եկեղեցի [գնալու] հաճախելու հետ այնքան գլուխ չուներ, երբեմն միայն չաբաթ հիշտեկ երեկոները կամ կիրակի պատարագին [ներկա էր հաճախում էր] գնում էր եկեղեցի՝ [առաջ մոմ] արբերի առաջ հաստ մոմեր վառում և գանձանակը առաջ խաչհամբույր [ձգելով] ձգում: Սակայն Ուստան, ինչպես և Ջավուշը, ամեն տաղավարների մեռելոցներին օրհնել էին տալիս անտեր, մոռացված գերեզմանները, իրենց ծնողների սուրբ հիշատակին:

Պտիկ պասերը, երբ միտքն էր մնում, պահում էր նա, իսկ մեծ Պասը [երբեք] չէր կարող «անծակ» մինչև Զատիկ հասցնել, որովհետև քեֆի ժամանակ, գինով սիրտը հավի միս կամ խորոված էր ուզում, և երբ այսպես մի անգամ ծակվում էր պասը, այդպես էլ տևում էր մինչև Ավագ չաբաթը, որը սակայն խիստ պահում էր:

Ուստան մանուկ հասակից չա՜տ հարցասեր միտք ուներ. հետաքրքիր հոգով լսում էր ամեն մի խոսք փորձված մարդու բերանից և լսածը հզոր հիշողության մեջ [պահում էր] ամբարում: Նրա անհագ հարցասիրությունը անսպառ ասպարեզ գտավ իր ծայր չունեցող թափառումների ընթացքին: Թեև քարավանն ու ձեռք բերած հարստությունը կորցրեց, բայց հետ դարձավ ավելի հարուստ և այս անգամ անկողոպտելի գանձերով — այն իմաստությամբ, որ նա մրջյունի չանքով ու տոկով հավաքել էր իր կարճ կամ երկար, բայց իրապես անցած ճանապարհների վրա: Ինչպես ծարավի հողը ծծում է ջուրը, այնպես էլ Ուստան [ծծել էր] խմել էր ու ծծել հայ ու հարևան ժողովրդի իմաստուն առակներն ու առածները, զրույցներն ու ասումները, որոնք դարերի մեջ, արձագանքի արձագանք թռչելով ու բազմապատկվելով եկել հասել են մինչև ներկա մարդը՝ ստեղծելով [մի ուրույն մտայնություն] մի ամբողջ աշխարհայացք:

Միայն այս տարրերով չէր մշակած նրա միտքը:

Հազարավոր մարդիկ էր տեսել, ամեն տեսակի, ճամբորդ ու նստակից, աշուղ ու թափառական, արհեստավոր ու վաճառական, ու լսելով նրանց կյանքի վեպերն ու փորձությունները, յուրացրել էր ու բյուրեղացրել այս բոլորը իր հոգու մեջ, և իր բախտի իրադարձություններից և ապրումներից ստացած [գանձերով] գանձերն էլ

վրան դումարած՝ դարձել էր իսկապես փորձ-մարդ և աշխարհատես, բանիմաց և սրտագետ:

Սակայն նրա մտքի հորիզոնից չա՛տ ավելի անպարփակ էր նրա բորբ երևակայությունը, որ ոչ միայն Ուստայի տեսածի ու լսածի թերին էր լիուլի լրացնում, այլև մի քարից մի պալատ էր [կերտում] չինում, մի ծառից մի անտառ, մի կաթիլ ջրից մի ծով և մի աստղից մի ողջ երկինք:

Այդ երևակայությունը այնքան հախուռն էր ու կենդանարար, որ թեև մարած անցյալն ու դեռ չեկած ապագան ապրող ու չնչող ներկա էր դարձնում, և մեռելը նույնիսկ կարող էր հարուցանել, և թե չեղածն ու սուտը առարկայացնել ու ամեն ինչ չոշափվող իրականի շրջել:

[Եվ ինչքան Ուստան այսպիսի հզոր երևակայությամբ էր օժտված, որը հաճախ, նրա կամքից անկախ, [ստեղծում էր հեքիաթի նման] պատահած պատմություննների և արկածների հեքիաթի դույն էր տալիս և առասպելի բնույթ]

[Եվ ինչքան որ Ուստան այսպիսի մի հզոր երևակայությամբ էր օժտված, որը, հաճախ, նրա կամքից անկախ, ստեղծում էր հեքիաթի նման պատմություններ, կամ [եղած արկ<ածներին>] պատահած արկածներին առասպելի դույն էր տալիս, այնքան էլ երևակայությունից և ստեղծագործությունից գրեթե զուրկ էր ու նրա առօրյա կենցաղը թե մարդկանց հետ ունեցած փոխհարաբերություններ մեջ, թե կյանքի սովորական դեպքերում: Ճշմարիտ էին նրա խոսքն ու գործը: Իրական էին նրա զրույցները:]

Եվ ինչքան որ Ուստան օժտված էր այսպիսի մի հզոր երևակայությամբ, որը, չարունակ, նրա կամքից անկախ, ստեղծում էր հեքիաթի նման պատմություններ և պա-

տահած արկածներին առասպելի դուլն էր տալիս և հաճախ Ուստայի առօրյա կյանքը խառնում էր երազականի և անիրականի հետ, սակայն, դրեթե, երևակայությունից և ստեղծագործությունից զուրկ էր նրա կյանքի այն մասը, որ գործի մարզում չփվում էր մարդկանց հետ: Ճշմարիտ էին նրա խոսքն ու արարքները: Շիտակ էին նրա ղրույցները: Իրականության զգացումից չեղված չէին նրա փոխհարաբերությունները միջավայրի հետ: Ուխտապահ էր և խոստում կատարող: Եվ սուտից ու խաբեությունից զզվելով զզվում էր:

Նրա ճշմարտախոսությունը և արդարասիրությունը այն աստիճան անկաշառելի էր, որ դյուղացիները նրան երբեք վկա չէին կանչում դատարանի առաջ իրենց վեճ ու կռիվների համար, որովհետև նա ճշմարիտն էր խոսում,— փորձել էին այդ մի քանի անգամ.— և ճշմարտությունը հաճախ նպաստավոր չէր լինում վկա հրավիրողի գործին: Մորթիեր, նույնիսկ բարեկամի համար սուտ վկայություն չէր տա:

Ուստան ուներ այն հազվադյուտ շնորհքը, որ դիտեր տեղին ու դեպքին պատշաճ՝ դուրս քաշել իր հուշերի ծովից և մտքի ամբարից հարմար խոհ ու խոսք, առած ու առակ՝ համով-հոտով և կապել ընթացիկ ղրույցի հետ:

Գյուղացիները՝ հիացած նրա այս համեմված խոսքի ու պատրաստաբան շնորհքի վրա՝ խոստովանում էին ամեն առիթի. «Ուստան նմանը չունեցող խոսքաշեն մարդ է»:

Ուստան շա՛տ տեղեր թափառելով, բնականաբար, իր լեզվի մեջ [մուծվել մտել] թափանցել էին զանազան գավառների բարբառներից որոշ տարրեր, ձևեր ու ոճեր, որով նրա [լեզուն] խոսած լեզուն տարրեր բարբառների մի տեսակ խառնուրդ էր [ներկայացնում] դարձել:

Ուստան առանձին պահերին, օճախի կողքին թիկն տված՝ ծուխը բերանին, ստեպ իջնում էր հոգու մինչև խորքը և [այնտեղ] իր մեջ տեսնելով ուրիշներին՝ շատ հաճախ անվրեպ հասկանում էր մարդկանց արարքների բուն արմատները:

Ներհայեցության այս պահերին խորհելով աշխարհի բանը, տեսածի ու լսածի մասին, մարդկանց պատահած դեպքերի վրա, մի խոսքով աշխարհը պռունկն պռունկ լցնող անհամար բանների մասին,— Ուստան իրեն հարցեր էր տալիս և իրեն պատասխանում:

Այդ պատասխանները ձևով նման էին ժողովրդի ասածներին: [Դրանք] Նրանք իր կարծիքներն էին աշխարհի և կյանքի երևույթների մասին, համոզմունքով ասված, հավատի չափ հզոր:

Ինքնավստահ հայտնում էր նա այդ կարծիքները համայնքի վեճերի ու հարցերի փոթորիկների մեջ, խնջույքների ժամանակ, օրվա սովորական ընթացքին:

«Իմ դատողություններով էս էսման է», ասում էր Ուստան իր ասածը [նեռնելով] մեջտեղ ձգելով: Եվ դիտմամբ, շատ անգամ խոսք էր բաց անում, որ իր չինած նոր առածները աշխարհ նետե՝ փորձելու համար թե կարո՞ղ են թռչել: Եվ արդեն ինքը այն հավատն ուներ թե՝ իր խոսքերը անվախ, պտիկ ճնճղուկների նման թռչում են երդիկն երդիկ, դյուղե դյուղ:

Եվ իրավ, նրա խոսքերը բերնե բերան ճամբա էին կտրում:

«Էսման է ասում Ուստան» — ու կնքում էին դյուղացինները իրենց զրույցը Ուստայի ասածներով:

Ինչքան որ Ուստան մեծ հավատ ուներ դեպի իր խոսքը, նույնքան էլ հավատ ու հարգանք ուներ «աշխարհաբանի» մարդկանց խոսքի հանդեպ և անողոք պահանջում

էր նույն վերաբերմունքը ուրիշներից իրենի հանդեպ: Թեև առանց այդ էլ Ուստան գիտեր արժեցնել իր խոսքը:

Սակայն հոգու մեղք էին գործում գյուղացիները, երբ ասում էին թե – «Ուստան լավ մարդ է, բարի, աղնվական, հացով ու պատվով, բայց վայ թե խոսքի պոչը կոխես, օխտը տաշտ մեկ տեղ կերած հացը մեկ ժամում կմոռնա»:

Հոգու մեղք ու չափազանցություն էր այս՝ գյուղացիների կողմից, որովհետև Ուստան մյուս օրը, քենը մոռացած, նույն աղուհաց կտրող բարեկամն էր, նվազ բացառությամբ:

Ուստայի [ուրիշ հատկությունների և մանավանդ] այս «խոսքաչեն» չնորհքի համար էր, որ առանց նրան կոչունք տեղի չէր ունենում, որովհետև ինքն էր սեղանները ծաղկեցնողը: [Առանց Ուստայի դավուլ չէր զարկվում, որովհետև ինքն էր աղմուկով ու ախորժակով ուրա...]

Ուստայի մյուս գեղեցիկ հատկությունների համար էր, որ առանց նրան դավուլ չէր զարկվում, որովհետև ինքն էր աղմուկով ու ախորժակով ուրախացողը և ուրախացնողը և միշտ պարերի գլուխ կանգնողը:

Գյուղացիները չա՛տ էին գնահատում Ուստայի փորձառությունը ու ճարտար լեզուն: Եղբայրների բաժնություն, տղա-աղջիկ կարգել, հաշիվ մաքրել [կռվող] վիճող ընկերակիցների միջև – Ուստան պիտի լիներ, իբրև միջնորդ կենսական այս կնճռոտ հարցերում գյուղական ջոջերի մեջ նստած.– և ուր որ լիներ նա՝ հաշտությունը ապահովված էր:

Բան էր, նթե լուր առներ, թե շրջանի մի ուրէ գյուղում երկու հարևաններ իրար հետ վեճ ու կռիվ ունեն, իսկույն ձեռքի գործը թողած՝ օղի առած նստում էր ձին ու թռչում

կռվի գյուղը: Խրատելով, խնդրելով, անարգելով համոզում էր գժտվածներին ու հակառակորդների ձեռքերը իրար հաշտ միացնում. ապա տարած օղին հետները խմում, ուրախանում և ուրախացնում. և նորից դառնում իր գործին:

Ուստան չա՜տ առատաձեռն մարդ էր: Այդ հատկությամբ բազմաթիվ բարեկամներ էր վաստակել, չա՜տ սրտեր չահել: Հաճախ կասեր նա. «Մեկ փոր հացը մեկ հոր հաց կշահե»:

Լինելով գավառի միակ անգերազանցելի վարպետը, շատ դրամ էր անցնում ձեռքը և անխնա վատնում էր: Նրա սեղանը իր սրտի պես բաց էր բոլորի, ծանոթ-անծանոթի առջև: Սակավ էր պատահում, որ մենակ հացի նստեր: «Առանց ընկերոջ հաց վար չի երթում». ամենօրյա խոսքն էր նրա:

Նրա «հացով» մարդ լինելու հռչակը տարածվել էր հեռու գյուղերում: «Ուստան համ ցորեն հաց ունի, համ ցորեն լեզու», ասում էին Նախճվան մտնող ճամբորդները, անցորդ-դարձողները և իջևանում նրա մոտ:

Սրտագին ընդունում էր Ուստան իջևանող ճամբորդներին, հյուրասիրում ու գոհ ճամբա դնում: Նրա բացակա պահերին Օսկանի ընտանիքը Ուստայի անվան համար նույն ձևով պատվում էր եկող-գնացողներին:

Հռչակավոր էր Ուստայի ընտիր ծխախոտը, որ ամեն ամսու գլխին մի կաղզվանցի [ծածուկ] բերում էր նրա համար: Այդ ծխախոտը թուրքերից առանց մաքսի փախցնում էին այդ կողմերը: Ուստան գովելով ծխախոտը միշտ կատակով ասում էր — «Թուրքն անիծած, թյութունն օրհնած»:

Նրա թյութունը գրեթե գեղովի ծխում էին: Սակավ դեպք էր լինում, որ Ուստան տուփը հաներ և չհյուրասիրեր ներկաներին: Որոշ դեպքերում, երբ մեկին չէր առա-

ջարկում, դա պերճախոս նշան էր հակակրանքի և թշնամության և մանավանդ վայրկենական դժգոհանքի:

Ուստան գաղտնի կամ հայտնի կերպով, ձեռքից եկածի չափ, օգնում էր գյուղի չքավոր ընտանիքներին: Հաճախ դրամ էր պարտք տալիս սրան ու նրան, առանց տոկոսի, որ գյուղի սուրբն էլ այդ չի անում. և ոչ միայն չէր հիշեցնում պարտքը, այլ երբ հանդիպում էր պարտապաններին, չտեսնել էր ձևանում՝ նրանց չամաչացնելու զգացումից մղված: «Ուզես, գեչ մարդ կըլնիս, Ջավուշ ջան, ունենան՝ բերեն կուտան»: Եթե Ջավուշը չլիներ, Ուստան այս մասում կորած մարդ էր: Ջավուշն էր, որ երեսը պնդացնելով, պարտքերը հավաքում էր, առավելապես, կալ ու կուտի շրջանին, երբ սովորաբար գյուղացու ձեռքը բերանն է հասնում:

Առատաձեռնությունը հասնում էր իր կատարին Ուստայի քավորության, հարսանիքների և ուխտագնացության ժամանակ: Ամենաթանկ նվերներն էր առնում սանամայրների համար, հարսանիքներին առատ «սաչու և շաբաշով» զարմացնում էր կոչնականներին: Ուխտավայրերում օր ու գիշեր՝ իրեն շրջապատած ընկերներով ու դավուլ-զուռնով բոլորի ուշադրության ծխնին էր դառնում:

Այսպիսով, տարի չէր անցնում, որ Ուստան մի քանի ամուսնացող զույգերի խաչը չբռներ և բազմաթիվ անգամ տները մեռոն չտաներ:

Ուստա Կարոն չնորհքով-հնճարքով վարպետ էր, ինքնաբեր, նորույթներ էր մուծում ավանդաձև շենքերի մեջ. հարմար, օգտակար, գեղեցիկ նորույթներ:

«Ինձ նման օթևան չինող, օճախ կապող, կարմունջ քցող, աղբյուր հանող վարպետ արևելքից արևմուտք չի գտնվի»,— իրավունքով այսպես վկայում էր իր մասին Ուստան և վկա էր բերում իր ձեռքով չինած գեղեցիկ

չենքերը, կամուրջներն ու աղբյուրները, որ ամեն մարդ դիտե և [օրհնում է] գովում է կառուցող ձեռքը:

Սարերի ապառաժ կողերին նայելով հասկանում էր նա, թե՝ ո՞րտեղից կարող է ջուր բղխել: Քարերը ճեղքելով ջուր էր հանում, առու ձգում. և ջուրը գալիս էր ընտելացած կենդանու պես հնազանդ նրա ձևած չավիղով դեպի դյուղերն ու պարտեզները, և չէր փախչում այլուր:

Աննման բանդ-ամբարտակ կապող էր ձորակների առաջը, որով գոյանում էին փոքր կամ մեծ ավազաններ: [որպեսզի ավազանի այդ գոյացած ավազանում հավաքվեն անձրևի ջրերը] Այս ավազաններում հավաքում էին անձրևի ջրերը՝ բոստաններ, առվույտի արտերը ոռոգելու համար և սակավաջուր տեղերի ուրիշ պետքերի համար[1]:

Նրա ձեռքին՝ հացահատիկի կամ ջրի հորեր փորելը, սալահատակել, պատ քաշել — խաղ ու պար էին: Թեև քարեղեն գործերի մեջ եղակի վարպետ էր, ուղղակի, «քարին հոգի տվող», բայց փայտի գործերի մեջ էլ խելքը հասնում էր: Կարող էր տան լավ ծածք քաշել, նույնիսկ «Սողոմոնին» [առաստաղ] երդիկ չինել, [իր միասար] զարդարուն խոյակներով և գեղեցիկ սյուներով:

Ով որ փափագեր մի հիմնավոր և աչքի ընկնող չենք ունենալ, անպատճառ Ուստա Կարոյին [էր դիմում] պիտի դիմեր: Ամեն մեկը պարծանքով էր ասում թե՝ իր օթևանը կամ ամբարը Ուստան է չինել:

Վարձատրության մեջ Ուստան չափավոր էր: Դեպք չի եղել, որ մեկը գանգատեր թե՝ Ուստան չա՛տ վարձ ուզեց:

«Աստված կյանք տա մեր Ուստային, մեզի չենցրեց ու լիացրեց: Օրհնած է Ուստայի ձեռքը, չինածը քանդում չու-

---

[1] Հեղինակը այս պարբերության ձախ լուսանցքում գրել է՝ ուղղել:

նի»... Ուստայի վարպետության մասին խոսելիս, անբաժան էին այս գնահատականները գյուղացիների բերանում:

Միայն մի անժխտելի պայման կար, որ պիտի կատարեին գյուղացիները, եթե ուզում էին փափագած չենքն ունենալ: Պիտի խորհուրդ չտային նրան և մանավանդ պիտի չքննադատեին նրան:

Շենք չինել տվողը պիտի հայտներ իր մտադրածը և հավատով ուղղակի պիտի հանձնվեր նրան:

«Ուստայի նազերը պիտի քաշենք, որ նազելի բան չինե»,— հաշտ ասում էին գյուղացիները և դիմում նրան: «Ուստա ջան, սրտիդ ուզածի պես արա: Ձեռքեդ բան չի պրծնի, թե որ ուզենաս: Քեզի հո՞ սորվեցնելու չենք, դու լավը գիտես: Քո հավնածը մեր հավնածն է»:

Այսքանը բավ էր. մնացածը դիտնալիք բանն էր Ուստայի, որն ըմբռնելով շենքատերի միտքը՝ ախորժակով ընկնում էր գործի վրա, գայլի պես ուտում էր գործը, ինչքան էլ որ դժվար ու մեծ լիներ: Թեպետ և [երբեք] չէր չտապում, բայց և ոչ մի ուրիշ վարպետ նրա չափ արագաձեռն չէր: Այնպես բարեխիղճ գործ տեսնող էր, որ, ասես, իր համար էր շինում, ինչ որ շինում էր: Ձեռքը դիպած գործին ջանում էր կատարյալ ձև տալ:

Շենքատերը՝ Ուստի մոտը կանգնած, գովում էր ու խրախուսում նրան, իսկ սա ոգևորված, ուղղակի, ստեղծում էր՝ [խոսքն ու գրույցը] միաժամանակ խոսքն ու գրույցը չընդհատելով:

Գործի ավարտից հետո շենքատերը տեսնում էր, որ իր սրտի ուզածից ավելի լավն է մարմին առել: Բայց եթե մի շենքատեր, անգույշ մեկը, խորհուրդ տար գործի կեսին և կամ քննադատեր, Ուստայի ցասմանն էլ սահման չկար:

Մի անգամ Ուստան մի հորի ներսաչուրջը պատ քաշելիս՝ հորի տերը ասում է.— «Ուստա ջան, գիտես թե՝ պատը մեկ քիչ գոգավոր է»... Ուստան անմիջապես կրակված բղավում է — «Ջէ՛, հիմի գոգավոր է, տղա պիտի բերե». և գայրույթով սկսում է հորը հողով լցնել... Ներկանները միջամտում են, հորի տերը ներողություն է խնդրում և հաչտվում են: Եթե [հաչտությունը] հորի տերը զղջումի չգար, սպաններիր՝ Ուստան այլևս նրա համար գործ չէր անի:

Սկզբներում, Ուստայի բնույթը գյուղացիների կողմից դեռ չսերտած ժամանակները, այսպիսի շատ անհամություններ են ծագել: Ուստան թողել է գործը կիսատ՝ խռով հեռացել է: Եվ հետո ի՛նչ խնդիրներ, ի՛նչ ճաշեր անուշի կապելու համար գժտությունը: Նրա բնությունը ճանաչելուց հետո՝ այլևս դաշն էին փոխհարաբերությունները:

Ուստան գիտակից լինելով գյուղացիների կարծիքներին իր մասին՝ թե ինքը չնորհքով վարպետ է, հասնող չունի իրեն, թե իր ձեռքը պստիկ աստված է,— ավելի ոգևորվում էր, և բոցավառելով իր ստեղծագործ զգացումը, հաց ու հանգիստ մոռացած՝ ձգտում էր արդարացնել իր վարպետության վրա դրած մարդկանց հավատն ու համոզումը:

Ճշմարիտ է, որ Ուստան իր վարպետի անունը բարձր էր բռնում. գյուղերն ընկած գործ չէր որոնում կամ ուրիշների ձեռքից գործ չէր խլում: Մարդիկ իրենք տեսնելով նրա ձեռագործները գալիս էին նրա ոտը, գիտնալով, որ Ուստան փողի համար կամ միայն փորի համար չէ գործում, այլև արհեստի սիրուն, իր բավականության համար, փառքի ու հռչակի համար, բարեկամին լավ չենք չնորհելու մտքով:

Սակայն նա իր ներքին անկեղծության մեջ ուրիշ կերպ էր տեսնում ճշմարտությունը: Նա գիտեր, որ արհեստները սովորեց ոչ թե արհեստի սիրուն, այլ որպեսզի ապահով հացի միջոցով հնար ունենար աշխարհներ տեսնել:

Ուստան իրեն զգում էր թիրախից վրիպած, ուղին կորցրած: Բնավ արհեստը չէր նրա կոչումը:

Ի՞նչ էր նրա կոչումը: Մի խորհրդավոր, մի երազական բան, որ ամենևին լուծված չէր նրա մտքի համար: Մի անհուն, անճև փափագ, մի տարերային ուժ, որ քշում-տանում էր [նրան] նրա սիրտն ու հոգին՝ և սուզում հեքիաթի և կապույտ հեռուների կախարդանքների մեջ:

Նա թեև տասը տարի կուշտ թափառելուց հետո արդեն տարիներից ի վեր ամուր նստել էր Նախճվանում, իր տունն ուներ, իր հացն ու ջուրը, շրջապատված բարեկամներով ու հարգանքներով, գոհ ու երջանիկ և թեպետ ամենօրյա հոգսերն ու հաճույքները անթեղել էին նրա կիզող փափագը, սակայն երբեմն-երբեմն, հին փափագը կրակված օձի պես գալարվում էր նրա ներսում, ցավագին կերպով խայթում նրա հանգիստը և մղում նրան անհայտ երազին:

Այդ փափագը զորեղ էր Ուստայի կամքից, ինչպես անձրևի զեղումից ծագած հեղեղը զորեղ է թումբից: Որ մի օր չէ մի օր պիտի խորտակե թումբը և...

«Զավուշ ջան,— «ախ» քաշելով ասում էր Ուստան,— ես արհեստի համար չէի ծնվել: Ես՝ ո՞ւր, արհեստը ո՞ւր: Ես ուրիշ բանի համար էի ծնվել, ուրի՛շ, ուրի՛շ բանի համար... Մեջս մեծ փոթորանք կար, գիտեի, որ չատ մեծ մարդ [կրնայի] կրնամ դառնա, աշխարքը մատիս վրա [կդնեի] կրնամ առնի (առնել, դառնալ): Ես աշխարքի մեջ

մարդ մեծ եղնելու է կամ իսկի գալու չէ: Պստիկ մարդը կամ եղած, կամ չեղած — ոտնատակի փոշի: Քար էլ որ կեղնիս, գլուխ կոտրող քա՛ր եղիր:

Ջեղավ: Անտեր էի: Ճար չունեի: Աղքատությունը արհեստ սորվեցրեց: Հո՞, չէի կրնա ուրիշի ձեռքին աչել: Կռահեցի, որ արհեստը մարդու հավատարիմ ախթերն է, որ արհեստավորի փորը մինչև կեսօրն է սոված: Հիմի, փառք Աստծու, մեկ ձեռքս մեկելիս կարոտ չէ. միայն սիրտս արհեստիս կպած չէ: Ձեռքով կշինեմ, մտքով չգիտեմ ո՞ւր եմ: Մեկ աչքս չինածս պատի վրա է, մեկէլ աչքս (ման եկած հեռու) ճամփեքի վրա: Նստած եմ հորի մեջ, բայց սիրտս ի՞նչ իմանաս, ո՞ր ծովերու վրա է, ո՛ր երկրներու մեջ...

Ա՛խ, կուզենայի մեծ գործեր տեսնեի, անունս աչխարքի չորս պոչերը ձեն տար, թե չէ, սիրտս կպատռվի՝ քար տաչել, պատ չարել, հորի մեջ նստել...»:

Եվ սակայն, չուտով, սեփական վիճակի հետ հաշտված՝ դառնում էր իր գանգատին. «Ջավուշ չան, հիմի պիտի ասես, թե որ արհեստս չեմ սիրե, հապա [ինչո՞ւ] ինչի՞ լավ գործ կտեսնեմ: Պատճառն էն է, որ ձեռքես բան չի պրծնում. քարն ու ջուրը ծառա են ձեռքիս հնճարքին:

Ու ի՞նչ խոսք, որ մենակ հացը չէ, որ ձեռքս բանի կդնես, վարպետության պատիվն էլ առավել կա:

Ու նորեն տեսնում եմ, որ արհեստից պատվավոր բան չկա: Առուտուրը սրտովս չէ, էժան առնել — թանգ ծախել. ի՞նչ չնորհք կա էստեղ. բայց արհեստը աչխարք է չենցնում, գեղ ու քաղաք է չինում, Աստծուն ընդունակ բաններ — ժամ ու վարժատուն: Ինչքա՛ն բարություն է, մանավանդ ջուր բերես, անցնող-դարձող, մարդ ու անասուն հարուր տարիներով պիտի խմեն ու անունդ օրհնեն:

Շինածդ չենքերու ճակտին անունդ անմեռ կըլնի, հիշատակդ կտեսնեն ու կասեն, լույս դառնա հոգիդ, ա՛յ երևելի վարպետ, ի՛նչ անմահական ժառանգ ես [թող] կանգնեցրել:

Խոսքս վարպետի մասին է: Էդոր համար էլ [ձեռքիս գումար չնորհքն ու հնճարքը թափում եմ անունիս ու պատվիս վայել] անունիս ու պատվիս վայել թափում եմ ձեռքիս գումար չնորհքն ու հնճարքը»:

Այս խոսքերի վրա Ուստան հպարտ բարձրացնում էր գլուխը և հպարտ նայում Ջավուշին և Ջավուշի միջոցով ողջ աշխարքին՝ թե ներկա, թե գալիք:

Իր բոլոր այս հատկությունների համար Ուստան չա՛տ սիրված էր ու հարգված բոլոր գյուղերում: Սիրված ու հարգված իբրև չեն-սիրտ ու [ծախսող առա<տա>ձեռն] հացով մարդ, խոսքաչեն ու գլուխ-վարպետ, իբրև քավոր ու բարեկամ, աշխարհատես ու փորձված մարդ:

Մարդամոտ [բնույթ] լինելով, շատ բարեկամներ ուներ և նրանց տներում իր պատվավոր տեղն ու բարձը: Մանավանդ մի-երկու մտերիմ ընկերներ ուներ, փոխադարձ իրար հոգի տվող:

Գործից ազատ պահերը [կամ երբեմն ձեռքի գործը Ջավուշին հանձնելով] Ուստան գնում-չրջում էր գյուղերը, անբաժան չոնգուռի հետ, քեֆ էր անում, ուրախանում: Եվ ուր որ գնում էր՝ ուրախությունը հետն էր տանում:

Ամենաժողովրդական մարդն էր Ուստան, իր անվան չուրջը ամենից շատ խոսք ու զրույց դարձնողը:

Եվ ամեն տեղ «բարձրաթռռ էր և ամեն տեղ հառաջավոր»:

Փիլոս ախբարը թյուրքահայ էր, Բասենի գյուղերից: Պատանի հասակում փախել է Ռուսահայաստան, և Երևանի և Էջմիածնի գյուղերում մշակ-բանվոր լինելով մի կերպ գլուխ էր պահել:

Երբ Ուստան Պարսիկի հողից նոր վերադարձած Էջմիածնի գյուղերում արհեստը բանեցնելով թափառում էր, մի օր պատահեց Զավուշին – Փիլոսին և իր մոտ բանվոր առավ: Տեսնելով նրա համեստ, չարքաշ, լուռ, աչխատասեր բնույթն ու բարքը, սկզբում խղճաց, հետո ավելի ճանաչելով մտերմացավ, սիրեց և կապեց իրեն հետ:

Փիլոսն էլ առաջին օրվանից անվերապահ սիրեց Ուստային, իր կողմից էլ կապվեց նրա հետ և նվիրվեց նրան բոլոր սրտով: Սերը եղավ նրանց հոդող օղակը: <...>[1]

[1] *Այստեղ ձեռագիրն ընդհատվում է:*

Ե. ԳԼՈՒԽ
<Գ. տարբերակ>

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ

Ուստա Կարոյի և Ջավուշի իսկական ծագումը, թե բնիկ ո՞րտեղից են նրանք, առաջ ի՞նչ մարդիկ են եղել, ի՞նչ գործով են պարապելիս եղել, կին ու տուն ունեցե՞լ են արդյոք, ի՞նչ երկիրներ են եղել, և վերջապես ո՞ւր և ի՞նչ կերպ են իրար հանդիպել ու ընկերացել – դիտեն միայն իրենք, և իրենց պատմությունների համաձայն էլ դյուղացիները:

Եվ դյուղացիները ի՞նչ հիմք ունեին չհավատալու նրանց ասածներին: Մի՞թե միայն այն պատճառով, որ նրանք բնուստ իրենց դյուղերից չէին և նրանց մանկությունը չէր անցել իրենց տղա-խաղերի մեջ միասին:

Արդյո՞ք դյուղերում և մանավանդ քաղաքներում քիչ կան մարդիկ, որ տարիքն առած հասակում գալիս են օտար մի երկրամասից, հաստատվում են բոլորովին անծանոթ նոր վայրում, գործ են անում, հաց վաստակում և պատմում իրենց անցած կյանքից, և ո՛չ մի աղնիվ մարդ իրավունք չի համարում չհավատալ՝ սոսկ այն պատճառով, որ նրանց ապրած կյանքը իրենց աչքերի առջև չի հոսել:

Մնաց որ Ուստան և Ջավուշը այնպիսի հավատով ու զգացումով էին պատմում իրենց կյանքի վեպը, որ կաս-

կածի տեղիք չէր թողնում բնավ. իսկ ներկա նրանց ապրելակերպը բոլորի աչքի առջևն էր պարզված – մի աշխատավոր, արդարախոս և մաքուր կյանք:

Ուստան և Զավուշը այնքան անկեղծ մարդիկ էին, որ պետք չէին զգում իրարից և մարդկանցից ծածկելու իրենց անցյալը:

Զավուշին այսչափ և այսպես է պատմել Ուստան իր վեպից, ինչչափ ու ինչպես որ կարողացել էր հիշել, որովհետև նրա գլխով անչափելի բաներ էին անցել, որ մի ուրիշը նրա տեղը պիտի չատ բան մոռանար դեպքերից կամ վայրերն ու ժամանակները իրար պիտի խառներ, և մարդ բան պիտի չհասկանար:

Ուստան ասել է, որ ինքը բուն Շիրակեցի է, Շիրակի Հյուսիսայինն ծայրից, ձորերի մեջ կորած, Ախուրյանի ակունքների վրա ընկած փոքրիկ Սալուտ գյուղից: Մեծ տան տղա է եղել, Աբիկենց Գաբոյի մի հատիկ որդին:

Նրա ծնողքին առաջ զավակ չի եղել. ծնողքը ուխտ են արել, մատաղ են կտրել Սուրբ Կարապետին, որ իրենց մի տղա տա ու խոստացել են սրբի տոնին ամեն տարի մատաղ անել, ինչ որ Ուստան ինքը մինչև օրս սրբությամբ կատարել է՝ լուսահոդի Հոր փոխարեն:

Նա աշխարհ է գալիս, անունը դնում են Կարապետ՝ սրբի պատվի համար: Նրա ծնողքի ուրախությանը սահման չի եղել:

Կարոյի իննամյա հասակում հայրը մեռել է, մայրն էլ մի տարի անց վշտից մահացել է. պստիկ Կարոն մնացել է որբ:

Քեռին խնկույն «հերագլուխ» է կանգնել և տարել է նրան իր տունը, որովհետև Կարոն հորեղբայր չի ունեցել:

Մի անգութ մարդ է եղել թե սա, թե քեռակինը: Թե սրանք, թե սրանց զավակները նրան օր չեն տվել: Հոր

Հարստությունը տակովն են արել և իրեն էլ կարդել են հորթարած:

Հոր հարստությունը կորզելով անգութ քեռին բնավ չի էլ մտածում նրան մի պարզ դրել-կարդալ սորվեցնել տալու:

Շատ դեչ օրեր է տեսել հոր մարած օճախի կողքին՝ կիսաքաղց, կիսամերկ: «Քեռիս կուշտ հաց չէր տալում, որ խելքի գայի, հագուստ չէր տալում, որ չնորհքի գայի. էն օրն էին ձգել ինձ, կարկատանների մեջ, որ թե լուսահոդի մերս զարթներ, պիտի չճանչնար իր մի հատիկ տղային»:

Վերջապես, մի փոքր խելահաս դառնալով, իբրև աչքաբաց տղա, տեսել է որ գյուղում մնալով մարդ պիտի չդառնա, գյուղն էլ արդեն նեղ ու անձուկ է գալիս կարոյի մատաղ սրտին և փափաքներին, մտածում է իրեն նետել դուրս, աշխարհի մեջ բախտ գտնելու, մարդ դառնալու, մի խոսքով, օձիքն ազատել կռապաշտ ծննդավայրից, ուր բոլորը խորթի պես են վարվել հետը՝ հարևան ու ազգական, որովհետև ամենքն էլ քեռու կողմն են բռնել. իրեն հոր հացը քեռու տանն են կերել ու կուրացել. «Շունը չատվորին կհաչա, աշխարքի օրենքն է»:

Երբ 15-16 տարեկան էր, Սալուտ են գալիս Ուռում (Հույն) որմնադիրներ. պատանի Կարոն վճռում է նրանց աշկերտ դառնալ և խոստում է առնում: Միևնույն ժամանակ, ապագայում վճարելու պայմանով, Հույն վարպետների ձեռագործ՝ սրբատաշ չիրմաքարեր է դնում ծնողքի գերեզմանի վրա: Այսպիսով կատարում է որդիական պարտքը, և խիղճը հանդստանում է:

Ուռումների մեկնած օրն իսկ, պատանի Կարոն ուշ երեկոյին՝ ծնողքի գերեզմանի վրա կուշտ լալուց հետո՝ հեծնում է Հորից մնացած ձին և փախչում միանում է վարպետներին: Փախչելիս անիծում է իրենց գյուղը, երդ-

վում է՝ որ էլ երբեք ոտք չկոխել այդ թշնամի գյուղը, ուր այնքան լացել է ու տառապել, և նույնիսկ երբեք բերանն անգամ չառնի նրա անունը:

Ջին տալիս է ուռումներին, որ իրեն արհեստ սորվեցնեն և որդու պես նայեն: Նրանք պատանի կարոյին հետներն առած տանում են գյուղե գյուղ, քաղաքե քաղաք: Կարոն նրանց մոտ մի փոր հացի աշխատելով մի քանի տարվա մեջ սովորում է որմնադրության բոլոր արհեստը – քար տաշել, քանդակ անել, պատ չարել, կամար կապել և այլն, և դառնում է վարպետ:

Այդ ժամանակաշրջանում էլ, մի անգամ, ձմեռը Ղազախ դավառում լինելով, պարապ ժամանակ մի աշուղից չոնգուռ նվագել է սովորում, որն իր որբության և մենակության ընկերն է դառնում. Նվագում է իրեն համար, սիրտը զեղում ու մխիթարվում:

Ապա հույներից բաժանվելով ինքնուրույն գործեր է բռնում. գործ անելով, գործ անելով ողջ Կովկասը ոտքի տակ է տալիս. էլ Թիֆլիս, է՛լ Գանձակ, է՛լ Ղարաբաղ:

Այդ թափառումների ժամանակ երբեմն էլ նոր արհեստներ է սովորում, հիները կատարելագործելով: Ուստան միշտ մտածել է թե՝ ինքը լինելով անտեր-անտիրական, ընկած մարդակուլ աշխարհի բերանը ուրեմն ջրի երեսը մնալու համար ամեն միջոցները պիտի ունենար. եթե մի տեղ հաց չի տալու այս արհեստը, ապա գործ դնել տեղին ու պետքին հարմար գլուխ պահող արհեստը:

Եվ այս վճռի չնորհով դարձել է նա հազարարվեստ մարդ:

Բայց միայն հացի ապահով ճանապարհ գտնելու հոգսը չի զբաղեցրել երիտասարդ Ուստային. նրա մեջ միշտ մի անմարելի կարոտ էր բռնկված, մի կարոտ՝ հեռավոր աշխարհներ գնալու, նոր մարդիկ, նոր բաներ տեսնելու.

հանդիպելու արկածների և դիպվածների, որոնց դեմ ճակատելով բովվում է մարդ, փորձ է առնում: Այդ արկածներն ու պատահմունքները կյանքի սանդուխի ստեղներն են, որով խելոք և աստղի տեր կտրիճը կարող է բարձրանալ մինչև գագաթը — մեծ, մատով ցույց տրվելիք մարդ դառնալ, աշխարքի մեջ մի անուն:

Եվ վերջապես դնալ, թափառիլ, ինչո՞ւ համար, ինքն էլ չէր իմանում: Մղված երևակայության հորդումյունից, զգացումների բնազդական թափից, նույնիսկ աննպատակ, միայն թափառելու սիրով, ապագայի չքեղ խոստումներից հմայված...

Արդեն մանուկ հասակում, ձմեռները գոմի մի սենյակի անկյունում կուչ եկած՝ ուշադիր ականջը կախած՝ լսել է ծեր, փորձված մարդկանցից հրաշալի պատմություններ, քաջերի կռիվների և արկածների մասին. թափառիկ աչուղներից հոգի կախարդող հեքիաթներ, և անցորդ ճամբորդներից սիրտ դերող զրույցներ զանազան, զարմանալի աշխարհների և ազգերի մասին... և կարոն տեսլացած թռչել է այդ հրաշքի վայրերը, կռվել է ու հաղթել և աշխարհով մեկ անուն հանել...

Հիմա որ կտրիճ երիտասարդ է, ձեռքն էլ հաց ունի և մինչ այդ օրը թափառելով, այնքան ավելի ճամփորդությունների համն առել է և եփվել.— ինչո՞ւ հիմա կանգ առնի, ինչո՞ւ չգնա չա՛տ ավելի հեռուները, այն դյութական, խելք թռցնող հեքիաթի աշխարհները: Մարդ մի անգամ է աշխարհ գալիս՝ աշխարհ տեսնելու համար. հո երկու անգամ չի գալիս, որ վրա երկրորդին աշխարհատեսության երթա...

Թեև մինչայդօրյա թափառումների ընթացքին չա՛տ բան էր սորվել նա, չա՛տ մարդիկ տեսնելով, երգեր ու խաղեր, զրույցներ ու հեքիաթներ, իմաստուն խրատներ

ու առակներ, թուրքերեն լեզու, բայց նորից ծարավի էր նրա հոգին... անծայր ուղիներ էր ուզում նրա հոգին, փորձի ու բախտի մեծ ոլորտներ, ավելի չա՜տ բան սորվելու, չա՜տ ավելի բան սորվելու...

— «Զավուշ ջան, ասել է Ուստան, տեսա որ չա՜տ ապրողը չէ չատ բան գիտցողը, հապա չա՜տ ման եկողը. աշխարհն որ կա, աս ու լիս է, տես ու ուսե. գլուխդ առ ու գնա, ամեն մարդու հետ խոսքի բռնվիր, թե իմաստուն հետ չդառնաս, էլ ինձ բարև մի՛ տուր: Գնա՛, ուր աչքդ կտրում է, էլի գնա, ինչ իմանաս բախտդ ո՞րտեղ է, կարելի է ծովի էն երեսն է. ճակտիդ գիրը էդ կողմերը կարդալ փորձե...»:

Եվ այսպես երիտասարդ Ուստան ծարավ հոգով, գլուխն առած, երբեմն ոտով, երբեմն ձիով կամ սայլով, արհեստները բանեցնելով, գնալով, գնալով գնում է հասնում պարսկի հողը, Թավրիզ քաղաքը:

Թավրիզ մի տարվա չափ մնալով պարսիկ վարպետներից սովորում է ջուր գտնելու գաղտնիքը, աղբյուր կանգնեցնելու արհեստը:

Ապա իր երադածը դիպվածով առաջն է գալիս. ծանոթանում է պարսիկ նշանավոր քարվանապետ Խոջա Մանսուր աղայի հետ, որին և Թեջիր Մանսուր աղա էին ասում. մի պատվական մարդ, որի անունը առանց օրհնելու Ուստան սեղան չէր նստում:

Ուստան նրա ձեռքի տակ մտնում է ծառա, որպեսզի հնար ունենա աշխարհներ տեսնելու. մի-երկու տարի ծառայելուց հետո՝ Մանսուր աղան տեսնելով նրա աչքաբացությունը, դարձնում է իր տեղապահ Աբբաս աղայի օգնական:

Էլի մի-երկու տարի անց՝ քարավանապետը գնահատելով Ուստայի խելքը և սիրելով նրա բնությունը՝ դարձ-

նում է իրեն օգնական, Աբբաս աղայի հավասար, և վարվում է հետը ընկերի պես՝ կարգին վարձ տալով:

Այնուհետև չա՜տ անգամ Ուստան՝ քարավանի գլուխն անցած, մեն-մենակ, պատցնում էր քարավանը երկրե երկիր, փռելով առջևը լայն ու մեծ աշխարհը՝ փորձի ու գործի անսահման վայրը:

Սալուտ գյուղից սկսած քայլ առ քայլ հետևելով Ուստա դարձած կարոյին, հետևելով նրա քայլերին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, հանդույցից հանդույց պարզ երևում է, որ նա մինչև Թավրիզ գնացել է ձիով, ոտքով կամ սայլով, իսկ Թավրիզից սկսած Խոջա Մանսուրի քարավանով. այդ պատճառով էլ հնար է ունեցել գնալու չա՜տ հեռու տեղեր՝ խորհուրդներով, գաղտնիքներով, հրաշքներով ու հրապույրներով հարուստ աշխարհներ, որ նա երազների ու հեքիաթների մեջ միայն տեսել է առաջ:

— «Ողջ աշխարքին հայտնի է, Ջավուշ ջան,— ասել է Ուստան ընկերին,— որ ես քարվանի գլուխ-գլխավոր էի, յոթը տարի, ասելն է հեշտ, յո՜թը տարի: Ես կտրիճ, անվախ երիտասարդ, արյունս տաք. էսպես, գլուխս առած՝ քարվանիս հետ հազար սարեր ու ձորեր եմ կտրել-անցել, կապուտ ու կանանչ ծովերի պռունկներով՝ մեկ աշխարհից մեկել աշխարհը գանձ ու կարողություն, մարդ ու ապրանք տանելով ու բերելով: Ի՜նչ իմաստուն մարդիկ տեսա, որ օրերով լսեիր, չէիր կշտանա. օրը՝ նոր, ճամբան՝ նոր, փորձությունը՝ նոր. մազերիս համրանքի չափ չար ու բարի եմ տեսել: Ի՜նչ հողեր, ի՜նչ երկիրներ, վերի աշխարհներից դեպի ներքի աշխարհները, ներսի աշխարհներից դեպի դրսի աշխարհները. է՜հ, Ջավուշ ջան, իմ չիբուխիս մուխը ի՜նչ երկնքի տակ ասես չի մխացել, ի՜նչ ծովերի ամպերի հետ չի խառնվել. հիմի ո՜ւմ խոսք հասկացնես. նստողն ի՞նչ դիտե, թե գնացողն ո՞ւր հասավ...

Ո՞ր մեկն ասեմ տեսածիցս. ի՛նչ ազգեր ու լեզուներ, ի՛նչ տեսակ-տեսակ քաղաքներ: Ծառներ կային, որ մարդի ու անասունի մսերը քաշում ուտում էին, թե որ մոտերից անցնեիր. անտառներ կային, որ մեղրը բղխում էր ծառերից ու գետի պես գնում: Ու էլի ինչե՛ր, ինչե՛ր...

Ի՛նչ եղելություններ տեսա, ի՛նչ հրաշք բաներ, չատերին աչքովս ականատես եղա... Ու էսպես տեսնելով, լսելով ու փորձվելով, հասակիցս ավելի հասակ առա:

Ջավուշ ջան, Թավրիզ քարվան նստելուս օրը գնացի մեկ բախտ-նայող պարսիկ կնկա մոտ, ինչու որ նոր ճամբա բացվեց առջևս: Էդ գուշակը ինձի նայեց, հետո իրեն եղունկին նայեց ու ասաց թե՝ նոր-նոր աչխարհներ պիտի տեսնես, ծովերի բոլորը պիտի ման գաս, գանձով ու փառքով պիտի ապրիս, բայց առջևդ սև բու կա, ճամբադ օձերով լիքն է. էդ փորձանքներից պիտի ազատվիս վերջը, Աստծուդ ապավինելով, ու ետև ծիծեռնակի պես պիտի թռչիս, երթաս քո կրոնքիդ ու ազգիդ հողը, հոն բունդ պիտի չինես ու սրտիդ ուզածիդ պես պիտի ապրիս:

Էդ գուշակի խոսքն ելավ. Ջավուշ ջան, քարվանովս եղա Բաղդատ, Հաբաչ, եղա Մսըր, Իրան-Թուրան ոտքիս տակն էր. Ղանդահարը ճամբուս վրա էր. Հնդստան չեղա. Հասանք մինչի Արաբստանի քովը. Զինմաչին էլ չեղա. մեծ փորձանք պատահեց. իմաստուն խոսք ասած չեմ ըլնի, թե որ ասեմ թե՝ բախտն է աչխարքիս կառավարողը, էսօր իշխան ես, վաղը՝ հող ու մոխիր. երեկ անունդ չգիտեին, էսօր մատով են ցույց տալում. էսօր դուռդ հազար մարդ հաց է ուտում, էգուց դու հացի կարոտ ես: Բախտի ամեն խաղերն ու երեսները աչքովս տեսա իմ հազար ճամբաների վրա: Էս աչխարքի օրենքն է ու մեր գլխին էլ եկավ. Արաբստանին չհասած, ավազակները՝ անթիվ ու

անչափ, վրա տվին, մեր քարվանը տարան, մեկ օր ու մեկ գիշեր կռիվ տվինք, խեղճ Աբբաս աղան էդտեղ զարկվեցավ. ես ու Մանսուր աղան մահից պրծանք: Հրաշք էր, մեր մերերի աղոթքը զուր չէր անցել: Հաց մուրալով, տեղ-տեղ արհեստս բանեցնելով, եկանք-ընկանք Թավրիզ:

Խոջա Մանսուրը, Աստուած բանն աջողե՝ թե ողջ է հիմի, իրենց չեննաթը տանի, թե մեռած է հիմի,— մորե մերկ աղքատ էր դարձել, ու վախից երկու կտոր եղել: Շատ դժար էր նորեն քարվան սարքել, ի՞նչ անեի, ի՞նչ չանեի... Էդ մտմտուքի մեջ միտս եկավ գուշակ կնկա խոսքերը, ասացի, օրն եկել է, էս է. մեկէլ բավ հաչվեցի դրսերը մնալը, կարոտել էի հայի հողին ու ջրին, լեզվին ու կրոնքին, մնաս բարով արի Մանսուր աղային, ու ճամբա ընկա:

Էսպես դարձա եկա. մեկ տարի չկար որ էջմիածնի գեղերն էի, երբ քեզ հանդիպա ու ախբերացանք. մնացածը դու գիտես»:

Այս պատմության վրա թե տխրությամբ և թե մխիթարելով իրեն՝ ավելացրել է Ուստան.

— «Ջավուշ ջան, ցավ մնաց սրտիս մեջ, որ Զինամաչինն ու Հնդստանը չտեսա, չեղավ: Է՛յ, քարվան, քարվա՛ն, ասո՛ւշ տեղեր, արդյոք մեկէլ աչքս տեսնելու է ձեզի... Է՛հ, ի՛նչ աննենք, Աստծու կամեցածն էր, էլի բախտավոր էի, որ աշխարքի մեկ մեծ կտորը տեսա, մեկ կտորն էլ լսողաց գիտեմ, մեկ կտորն էլ երազով, մտքով կիմանամ, մնացած մյուս կտորներն էլ մյուս անգամ աշխարհ գալուս»...

Ուստան ծիծեռնակի պես թռավ եկավ, և հայրենի Շիրակի հակառակ ծայրում չինեց իր բույնը նորածանոթ հայրենակից գյուղացիների բույների մեջ:

Գյուղացիները ապրում էին անձուկ ձորերում, լեռների խորշերում, ուր երկինքը երթիկի չափ է, բլուրների տակ կուչ եկած պստիկ գյուղերում, մի սահմանավոր փոքր աշխարհում, որի հորիզոնները վրանի պես իջնում են մոտիկ լեռների գլխին, և այդ անձուկ ծիրից երազում են մեծ, լայն, անսահման աշխարհը, որի ծայրերը կորչում են ծով-օվկիանոսի և սատանայական անդունդների մեջ:

Այս կուսական մտքերի պատկերացումով այդ մեծ աշխարհը կազմված է զանազան զարմանալի երկիրներից՝ ներսի ու դրսի, վերևի ու ներքևի, գույն-գույն ծովերով իրարուց զատված: Այն տեղերում ուրիշ տեսակի մարդիկ են ապրում, ուրիշ տեսակի լեզուներով ու կրոններով, ուրիշ վարքերով ու սովորույթներով:

Զարմանահրաշ կենդանիներ, թռչուններ, բույսեր կան այնտեղերը: Հրաշքի ու հրաշալիքների երկիրներն են նրանք, հեքիաթի գործեր են կատարվում այնտեղերը այդ հեքիաթունակ աշխարհներում:

Եվ Ուստան եկել է հիմա այդ մեծ աշխարհի գոնե մի մասից, որ տեսել է, և խոսում է հիմա այդ զարմանալի աշխարհների մասին:

Եվ պատմում է հավատով ու հիացումով, բուխ զգացումով, ու վաղուց տեսած-անցածը իր արարչագործ երևակայությամբ վառելով ու կենդանացնելով:

Եվ գյուղացիները հավատով լսում էին նրան: Գյուղացիները իրենց առօրյա չարքաշ կյանքում, անգիտակ մղումով փափաքում են մտքով ճամբորդել այն վայրերը՝ հեռու և գնդեցիկ. տեսնել-չոշափել պերճն ու սքանչելին, հոտոտել ցնորուն բույրերը այնտեղի կախարդիչ պարտեզների, ունենալ, ինչ որ չունի իրենց չքավոր կյանքը. այն ամեն հրաշալին ու ցանկալին, որի չգոյությունը լիուլի կարող էր փոխարինել պատրանքը միայն, իրակա-

նի բույրն ու գունեղ պատկեր-պատրանքը, որ բերում էր Ուստայի քարավանը հեռո՛ւ հեռուներից...

Նրա քարավանը՝ գյուղացիների աչքին երազի մարմին հագած՝ փոխում էր նրանց հայացքի առջև փափաքած աշխարհների տեսիլները, որոնք դյութական ուռկանի պես գրկում, հեռացնում էին նրանց հոգիները չար ու չոր չրջապատից...

Եվ տեղափոխվում էին նրանք երջանիկ լույսոլորտի մեջ, ուր մի պահ ուրախանում էին՝ մոռնալով իրենց աղքատ գոյությունը: Մանավանդ եթե բախտ էին ունենում հանդիպելու Ուստայի ոգևորված, գիննարը ժամերին, երբ քարավանը ավելի հեռուներից ու խորերից էր գալիս՝ բարձված անանուն-հազարանուն գանձերով՝ հրաշքներով ու հեքիաթներով, գինիներով ու լուսե-աղջիկներով՝ ներսի ու դրսի աշխարհների...

Ինչո՞ւ պիտի չլսեին հավատով՝ իրենց սահմանավոր աշխարհից մեծ աշխարհը չտեսած գյուղացիները երբեմնի քարավանապետ-աշխարհաժուռ Ուստայի իրապես տեսածներին ու լսածներին, երբ սրանք լիակատար համապատասխանում էին թե իրենց երևակայած իրականին և թե ուրիշ եկողների տեսածների ու լսածների ճշմարտությանը:

Ջի՞ որ, եթե իրենցից մեկն ու մեկը Ուստայի փոխարեն այդ տեղերը լիներ, նույնը պիտի տեսներ ու լսեր, թերևս ավելի պակաս, որովհետև ամեն մարդ տեսնող աչք ու լսող ականջ չունի, և Ուստայի նման չնորհալի լեզու, հիշելու միտք եղած—անցածը վառ ներկա դարձնելու:

Երբ Ուստան ու Ջավուշն իրար հետ եղբայրացան, Ուստան մի օր ընկերի ուսին ձարկելով ասաց.— «Ա՛ռ էս

արաղը, խմենք մեր ախբերուԹյան կենացը: Սիրտդ չենուրախ պահե, չորս ձեռք ունինք, երկու բերան, Թագավորի պես կրնանք ապրիլ ու դեռ ուրիշներին էլ ծաղկեցնել. միայն մեկ լավ տեղ գտնենք ու պանդխտուԹյան գոտիներս քանդենք ու նստինք»:

Եվ մի անգամ, երբ Կողբ էին աշխատանքի, լսեցին որ մյուս օրը Բագրանա Սուրբ Գեորգի ուխտն է, մեծ հանդես է լիներու...

Իրենք էլ պատրաստվեցին և Կողբեցիների հետ գնացին ուխտին. լավ քեֆ արին այնտեղ, նոր մարդկանց հետ ծանոԹացան. իմացան, որ այս հողաշատ և հացաչատ գավառակում վարպետներ չկան, քաղաքից են բերում կարիքի դեպքում:

Նոր ծանոԹները, որ լավ վերաբերմունք ցույց տվին նրանց, խորհուրդ տվին իրենց մոտ մնալ, գործեր հանձնեցին, և վերջապես Ուստայի մանկուց խմած Ախուրյան գետն էլ կար, որ Թեև իր ապերախտ հայրենի գյուղի մոտով է անցնում, բայց և ծնողքի սուրբ գերեզմաններին էլ է աչք ածում:

Առաջին աշխատանքը կատարեցին Քիրս գյուղում, Նազարենց Մարգարի մոտ. ու այնտեղ էլ բնակարան հաստատեց: Եվ Մարգարի նոր ծնված որդուն կնքահայր եղավ, անդրանիկ քավորը նոր տեղում, այսպիսով հիմ դնելով սրբագործված բարեկամուԹյան: Ուզում էր հենց Մարգարի տանը մշտական տեղավորվել, բայց նրա պառավ մայրը գնչ բնուԹյուն ուներ. նորահարսի տեր էր, և Ուստային դուր չեկավ նրա կասկածոտ աչքը:

Զավուչի հետ վճռեցին ուրիշ տեղ որոնել, ասելով Թե՝ իրենց հացն են ուտում. որտեղ որ սիրով ընդունին, էնտեղ էլ իրենց օճախը կվառեն:

Եվ կարճ որոնումից հետո՝ փոխադարձ սիրով ու համաձայնությամբ Օսկանի տունը եղավ իրենց տունը:

Ուստան իր քաղցր սրտով գրավեց գյուղացիների սրտերը. կերավ ու ավելի կերցրեց, խմեց ու ավելի խմցրեց. մի-երկու տարի չանցած բոլոր գյուղերում բարեկամ ու սանահայր ունեցավ, ընկեր ու պաշտպան գտավ. ամենից սիրվեց ու հարգվեցավ:

Եվ այդ կողմերը երևալու օրից մինչև այսօր չրջանի գյուղացիների հետ, նվազ բացառությամբ, ապրում էին Ուստան ու Զավուշը այնպես ծանոթ ու հարազատ, ասես թե, մանկական խաղերից իրար հետ մեծացած լինեին:

Ուստան այնքան հարազատ էր զգում իրեն այս միջավայրում, որ երբեք մտքովը չանցրեց Հորական գյուղը դառնալ:

— «Զավուշ ջան, ասել է Ուստան ընկերին, երկու բան չեմ ուզում. մեկ կնիկ առնել, քանի որ ժամս անցել է, ժամվորս դուրս ելել, մեկ էլ իմ ծնած գեղն երթալ. էնպես եմ կուշտ, էնպես եմ կուշտ, որ ասել չի ըլնի: 20-23 տարի է անցել, իսկի չեմ կարոտցել մեր գեղացոց ու իսկի էլ չեմ ուզենա տեղս իմանան, դան արյունս պղտորեն: Ուրիշ բան է՝ թե էնքան հարուստ ըլնեի, երթայի ողջ մեր գեղի հողերն առնեի, գեղացոց դուրս հանեի, նրանց տեղը ծառ ու ծաղիկ տնկեի՝ երկնուց խոսնակ հավքերի համար. ծնողքիս գերեզմանի վրա էլ գմբեթ չինեի էդ ծառ ու հավքի մեջ: Ուխտել եմ միայն, որ ծերանամ, երթամ ծնողքիս հողը վերջին հեղ տեսնեմ ու դառնամ գամ, էստեղ մեռնիմ: Ինչ ունիմ-չունիմ էստեղ է — ախբեր էլ, քուր էլ, ընկեր էլ, սանիկներ, բարեկամներ. չինած տներս էստեղ են, կապած կարմունջներս, բերած աղբյուրներս էստեղ են ու անուններս էլ դրանց վրա է գրած. ես կմեռնիմ, սանիկներս աղբուրներիս ջուրը կխմեն՝ ողորմիս կուտան.

ճամբորդները կարմունջներով կանցնին, անունս կարդան, ողորմիս կուտան»:

Մի հայացքով առած՝ Ուստա Կարոն սիրուն տղամարդ էր, առողջակազմ, լայնաթիկունք. միջահասակ էր, ուներ կանոնավոր գլուխ սև, խիտ մազերով, միշտ կարճ խուզած. մի՛ջակ ճակատ՝ երկու բարակ կամար հոնքերի վրա. թուխ չագանակի դույն մեծ աչքեր. մի քիչ մեծ քիթ. ծիծեռնակի թևերի ձևով սև բեխեր, որ եզրում էին կարմիր-հաստ շրթները. ծխախոտից դեղնած առողջ ատամներ. կզակը կլոր նման դեղձին իր քնքուշ ակոսով:

Երեսը միշտ սափրած էր և դեռ ո՛չ մի ճերմակ մազ չուներ: Նրա թավ ձայնը բղխում էր սրտից. չարժ ու ձևերը կրակոտ էին. քայլվածքը մի փոքր օրորուն. ինքը ամբողջ աշխույժ ու եռանդ:

Ամենից գրավիչը նրա հայացքն էր — պարզ, համարձակ, ուրախ: Ամեն խոհ ու խորհուրդ, հուզում ու զգացում լեզու էին առնում նրա աչքերի մեջ: Հոգին հայացքի մեջն էր:

Այդ հայացքը իշխում էր նրա դեմքի վրա, տալով նրան իր դույներն ու երանգները. և վստահ, պարզ ու գվարթ էր այդ դեմքը:

Ուստայի խորքը արևով էր չաղված. ուրախությունը եթե առարկայանար, տեղոց տեղ Ուստա Կարո պիտի դառնար: Շատ զգայուն հոգի ունենալով՝ սաստիկ և իսկույն ազդվում էր — մի որևէ տխուր լուրից, գնչ դեպքից, ուրիշին զարկած աղետից, մահու չափ տխրում էր: Բայց շատ չանցած գվարթանում էր, ինչպես գարնան երկինքը, որ հանկարծ ծածկվում է մութ ամպերով, բայց

արևը ամպերի տակն է, խորքում թաքնված, անհաղթ ու պայծառ, և քիչ հետո երևում է վանելով ամեն թուղպ ու թախիծ:

Անարդարության, չարիքի դեմ ընդվզած վայրկյաններին սպառնալից խոսքեր էր թափում, զայրագին չարժումներ, ոխ ու վրեժի ուխտեր, սակայն անցնելով վայրկյանը, հալչում էին զայրույթն ու կռվի տենչը:

Երբ հուշերից ծագած մի դառն պատկեր կամ մարդկանցից կրած մի ծանր խոսք ու վնաս քայքայեր նրա հոգին, իսկույն Զավուշին պիտի հաղորդեր, բոլոր, բոլոր դառնությունները առանց մնացորդի պիտի պարպեր, որ մտքի վրա ո՛չ մի վայրկյան ճնշող բեռ չուննար: Եվ Զավուշին էլ նույն խրատն էր տալիս:

«Զավուշ ջան, երբ որ նեղվիս մեկ պատճառով կամ առանց պատճառի, իսկի ներս չքցես, ասա՛, խոսի՛, չպահես. ցավը մատը մտած փուշի պես է, հանես, կլավանա, թողնես՝ կթարախոտի»:

Ինչքան որ նրա հոգին տրամադրությունների դյուրին ենթարկվող էր, սակայն տիրող գույնը հոգու — կարմիր ու կանանչն էր — հուսավառ զվարթության: Եվ արդեն սրտի արևը նրա դեմքի վրա գրեթե մայր չէր մտնում:

Այս զվարթ սրտով սիրում էր նա կյանքն ու աշխարհը, մարդիկն ու իրերը: Գյուղացիները սիրելով նրա այս պայծառ բնույթը՝ ասում էին իրար— «էրնեկ իրեն, երջանիկ մարդ է. արդար հոգի ունի. Բախտավոր աստղի տակ է ծնվել»:

Ուստան աստվածապաշտ, խորունկ հավատացող մարդ էր. հավատքի մասին մանուկ հասակում բան չգիտեր, կամ այնքան, ինչքան հասակակից մանուկները, որոնց համար կրոնը եկեղեցու ծեսերի պատկերներով էր

սահմանվում: Միայն «Հայր մերն» էր կիսատ-պռատ սովորել լուսահոգի մորից, և ուրիշ ո՛չ մի աղոթք:

Ամեն անգամ աղոթքն ասելիս՝ հոգու լացող աչքի առջև ներկայանում էր խեղճ վաղամեռ մայրը:

Հասակն առնելով՝ լրիվ սովորեց, թափանցեց, հասկացավ «Հայր մերի» խորհուրդը, և նրանից ավելի իմաստուն բան չէր գտնում մարդկային խոսքերով ասված.— «Մեր ամենօրյա հացը տուր մեզ, մի տար մեզ փորձության»:

Ապագայում չա՛տ բան սովորեց կրոնի մասին, ոչ թե տերտերներից և եկեղեցուց, այլ զանազան բանգետ մարդկանցից. նրանց հարցնելով և ուշադիր ականջ դնելով:

Բայց մի մարդ վճռական կնիք դրեց նրա հոգուն. մի օտար, անանուն մարդ, որին պատվելի էին ասում:

Նրա հետ ծանոթացավ Ուստան Թավրիզում, մի իջևանի մեջ. երկու չաբաթ ապրեցին միասին: Պատվելին ձրի պստիկ ավետարաններ էր տարածում. հեզ, բարի մարդ էր. ողջ ավետարանը գոց գիտեր. Ուստան չատ սիրեց նրան: Ուզեց դրել-կարդալ սովորել պատվելիից, որ իր աչքերով կարդար Քրիստոսի խոսքերը: Հազիվ էր սկսել Գիմ տառը Դա-ից զատել, երբ պատվելին ստիպված եղավ ուրիշ քաղաք մեկնել:

Ուստան սորվածը մոռացավ, և այն մոռանալն էր... այլևս չփորձեց վերսկսել, ասելով — ո՛ւշ է, բրիչը վաղուց կոտրել է գրիչը...

Սակայն այդ երկու չաբաթում պատվելին նրան բավաչափ ծանոթացրեց Քրիստոսի ուսմունքի հետ. երկու անգամ մոտը կարդաց Մատթեոսի ավետարանը, աշխարհաբար և բացատրեց, ինչ որ պետք էր:

Հափշտակված լսում էր պատվելիին՝ հոգու մեջ քանդակելով ամեն խոսքը:

Պատվելին ասաց. «Աստված հազար տարիներ խորունկ մտածելուց հետո ստեղծեց աշխարհը կատարյալ կերպով. և ստեղծեց մարդուն իր պատկերի նման և երջանկության համար, թե այս աշխարհում և թե մյուս անմահ աշխարհում, միայն մի պայման դնելով — հնազանդումը մարդու աստվածային պատվերներին. անհնազանդը սատանի գերին է՝ հոգով-մարմնով կորած, Աստված հոգում է իր ստեղծների վրա. համրել է մեր գլխից մազը և մի մազ չի ընկնում մեր գլխից նրա կամքից անկախ: Ամեն բան գիտե, ամեն բան տեսնում է. թե անցածը, թե գալիքը. ողջ աշխարհը նրա ափի մեջն է, երկու աչքով հսկում է նրան, մյուս ձեռքով պաշտպանում չարից — սատանայից: Իր որդուն Քրիստոսին ուղարկեց աշխարհ իր պատվիրան-ավետարանը տալու մարդկանց. այս է նրա պատվիրանը. Սիրի՛ր ուրիշին ինչպես քո անձը. բարի արա թշնամուդ, և ինչ որ ուզում ես մարդիկ քեզ անեն, դու էլ նրանց նույնն արա:

Այս է, ուրիշ բան չկա ավելի. կատարողը կարժանանա Աստծու երեսաց տեսության»:

Ուստան երկար մտածելով Քրիստոսի ուսմունքի վրա, հասավ այն եզրին թե՝ ճիշտ որ Աստծու սրտից ըղխած խոսքեր են. Մարդիկ այդ չեն կարող կատարել, սրբերի գործ է թերևս...

Իսկ ինքը հնար եղածին չափ, իբրև մարդ, ձգտում էր կատարել ստեղծողի պատվերները — բարություն էր անում ինչքան կարող էր, և աղքատասեր էր ու մարդասեր. փողի և օգուտի համար մարդ չէր խաբում, սուտ չէր խոսում, բամբասանք, հայհոյանք չուներ:

Եկեղեցի երթալու հետ այնքան զլուխ չուներ. չաբաթ հիշեցկ երեկոները միայն կամ կիրակի պատարագին էր հաճախում, առատ մոմն ու խաչհամբույրը իրեն կարգին:

Պատիկ պասերը, երբ միտքն էր մնում, պահում էր, իսկ մեծ պասը[1] չէր կարող «անծակ» մինչև Զատիկ հասցնել. դեպք էր պատահում, դինով էր դառնում, և անգիտակ՝ սիրտը հավի միս կամ խորոված էր ուզում, և երբ այսպես մի անգամ ծակվում էր, տևում էր մինչև ավագ շաբաթը, որը սակայն խիստ պահում էր:

Ուստան մանուկ հասակից շատ հարցասեր միտք ուներ. հետաքրքիր հոգով լսում էր ամեն մի խոսք փորձված մարդու բերնից, և հզոր հիշողության մեջ ամբարում. նրա անհագ հարցասիրությունը անսպառ աստյարեզ գտավ իր ծայր չունեցող թափառումների ընթացքին:

Թեև քարվանն ու ձեռք բերած հարստությունը կորցրեց, բայց հետ դարձավ ավելի հարուստ գանձերով — այն իմաստությամբ, որ նա մրջյունի ջանքով ու տոկով հավաքել էր իր կարճ կամ երկար, բայց իրապես անցած ճանապարհների վրա:

Ինչպես ծարավ հողը ծծում է ջուրը, այնպես էլ Ուստան ծծել էր հայ ու հարևան ժողովուրդների իմաստուն առակներն ու առածները[2], զրույցներն ու ասումները, որոնք դարերի մեջ, արձագանգե արձագանգ թռչելով ու բազմապատկվելով եկել հասել են մինչև ներկա մարդը: Մի ամբողջ աշխարհահայացք:

Միայն այս տարրերով չէր մշակված նրա միտքը:

Հաղարավոր մարդիկ էր տեսել, ամեն տեսակի, ճամբորդ ու նստակյաց. լսելով նրանց կյանքի վեպերն ու փորձությունները, յուրացրել ու բյուրեղացրել էր այս բոլորը իր հոգու մեջ. և իր ապրումներն էլ վրան գումարած՝ դարձել էր իսկապես փորձ-մարդ և աշխարհատես:

---

[1] «Հայրենիքում»՝ մասը, ուղղել ենք ըստ բովանդակության:

[2] «Հայրենիքում»՝ ասածները, ուղղել ենք ըստ բովանդակության:

Սակայն նրա մտքի հորիզոնից չա՛տ ավելի անպարփակ էր նրա բորբ երևակայությունը, որ ո՛չ միայն Ուստայի լսածի ու տեսածի թևերին էր լիուլի լրացնում, այլև մի քարից մի պալատ էր շինում, մի ծառից մի անտառ, մի կաթիլ ջրից մի ծով և մի աստղից մի ողջ երկինք:

Այդ երևակայությունը այնքան հախուռն էր ու կենդանարար, որ թև մարած անցյալն ու դեռ չեկած ապագան ապրող ու շնչող ներկա էր դարձնում, թե կարող էր մեռելը նույնիսկ հարուցանել չեղածն ու սուտը առարկայացնել — ամեն ինչ շոշափվող իրականի չրջել:

Եվ ուներ այն հազվադյուտ շնորհքը, որ դիտեր պատշաճ տեղին ու դեպքին դուրս քաշել իր հուշերի ծովից հարմար խոհ ու խոսք, առած ու առակ՝ համով ու հոտով, և կապել ընթացիկ զրույցի հետ:

Գյուղացիները՝ հիացած նրա այս համեմված խոսքի ու պատրաստաբան շնորհքի վրա՝ խոստովանում էին ամեն առիթի. «Ուստան նմանը չունեցող խոսքաշեն մարդ է»:

Ուստան առանձին պահերին, օճախի կողքին, թիկն տված՝ ծուխը բերնին, ստեպ իջնում էր հոգու մինչև խորքը, և այնտեղ տեսնում էր ուրիշներին. և չա՛տ հաճախ անվրեպ հասկանում էր մարդկանց արարքների բուն չարժառիթները:

Ներհայեցության այդ պահերին խորհելով աշխարհի բանը, տեսածի ու լսածի մասին, մարդկանց պատահած դեպքերի վրա, մի խոսքով աշխարհը պռունկե պռունկ լցնող անհամար բանները,— իրեն հարցեր էին տալիս, և իրեն պատասխանում:

Այդ պատասխանները ձևով նման էին ժողովուրդի առածներին. Սրամիտ էին հաճախ նրանք, իր կարծիքներն էին նրանք աշխարհի-կյանքի երևույթների վրա, համոզմունքով ասված, կուռ ու կոփ, հավատքի չափ հզոր:

Ինքնավստահ հայտնում էր նա այդ կարծիքները համայնքի վեճերի ու հարցերի փոթորիկների մեջ, չքաշվելով ոչ ոքից, թեև հարգելով միշտ գործից հասկացողների խոսքերը:

Դիտումով Ուստան շատ անգամ խոսք էր բաց անում, որ իր չինած նոր առածները աչխարհ նետեր, փորձելու համար թե կարո՞ղ են թռչել. և արդեն ինքը այն հավատն ուներ թե՝ իր խոսքերը անվախ, պտիկ ճնճղուկների պես գյուղն գյուղ, երդիկն երդիկ են թռչում:

Եվ իրավ, նրա խոսքերը բերնեն բերան ճամբա էին կտրում:

«Էսման է ասում Ուստան». ու կնքում էին գյուղացիները իրենց զրույցը Ուստայի առածներով:

Ինչքան որ Ուստան մեծ հավատք ուներ դեպի իր խոսքը, նույնքան էլ հավատք ուներ ու հարգանք ուրիշների խոսքի հանդեպ, և անողոք պահանջում էր նույնը ուրիշներից իրենի հանդեպ. թեև առանց այդ էլ՝ Ուստան գիտեր արժեցնել իր խոսքը:

Սակայն հոգու մեղք էին գործում գյուղացիները, որ ասում էին թե —«Ուստան լավ մարդ է, բարի, աղնվական, հացով ու պատվով, բայց վայ թե խոսքի պոչը կոխես, յոթն դաշտ մեկտեղ կերած հացը մեկ ժամում կմոռնա»:

Հոգու մեղք ու չափազանցություն էր այս գյուղացիների կողմից, որովհետև Ուստան մյուս օրը, քենը մոռացած, նույն աղուհաց կտրող բարեկամն էր, նվազ բացառությամբ:

Ուստայի այս «խոսքաչեն» չնորհքի համար էր, որ առանց նրան կոչունք տեղի չէր ունենում, քանի որ ինքն էր սեղանները ծաղկեցնողը. առանց Ուստայի դավուլ չէր զարկվում, քանի որ ինքն էր աղմուկով ու ախորժակով ուրախացողը, և միշտ պարերի գլուխ կանգնողը:

Գյուղացիները շատ էին գնահատում Ուստայի փորձառությունը ու ճարտար լեզուն: Եղբայրների բաժնություն, տղա-աղջիկ կարգել, հաշիվ մաքրել կռվող ընկերակիցների միջև — Ուստան պիտի լիներ, իբրև միջնորդ, կենսական այս դժվարին հարցերում գյուղական իշխանների մեջ նստած. և ուր որ նա լիներ, հաշտությունը ապահովված էր:

Բան էր, եթե լուր առներ թե շրջանի մի որևէ գյուղում երկու հարևաններ իրար հետ վեճ ու կռիվ են ունեցել, իսկույն ձեռքի գործը թողած, օղի առած, նստում էր ձին ու թռչում կռվի գյուղը. խրատելով, խնդրելով, անարգելով համոզում էր գժտվածներին ու հակառակորդների ձեռքերը իրար հաշտ միացնում. ապա տարած օղին հետները խմում, ուրախանում և ուրախացնում, և նորից դառնում իր գործին:

Ուստան չա՛տ առատաձեռն մարդ էր. այդ հատկությամբ շատ բարեկամներ էր վաստակել, շատ սրտեր շահել: Լինելով շրջանի միակ անգերազանցելի վարպետը շատ դրամ էր անցնում ձեռքը և անխնա վատնում էր: Նրա սեղանը իր սրտի պես բաց էր բոլորի առջև. սակավ էր պատահում, որ մենակ հացի նստեր. «Առանց ընկերի հաց վար չի երթում» ամենօրյա խոսքն էր նրա:

Նրա հացով մարդ լինելու հռչակը տարածվել էր հեռու գյուղերում: «Ուստան համ ցորեն լեզու ունի, համ ցորեն հաց», ասում էին Նախճվան մտնող ճամբորդները, անցորդ-դարձորդները և իջևանում նրա մոտ:

Սրտագին ընդունում էր Ուստան ծանոթ-անծանոթ հյուրին, հյուրասիրում ու ճամբա դնում: Նրա բացակա պահերին Օսկանի ընտանիքը Ուստայի անունի համար նույն ձևով պատվում էր եկող-դնացողներին:

Հռչակավոր էր Ուստայի ծխախոտը, որ ամեն ամիս գլխին մի կաղզվանցի բերում էր նրա համար. այս ծխա-

խոտը Թուրքիայից առանց մաքսի փախցնում էին այդ կողմերը: Ուստան միշտ կատակով ասում էր՝ «Թուրքն անիծած, թյությունն օրհնած»:

Նրա թյությունը զրեթե գեղովի ծխում էին. սակավ դեպք էր լինում, որ Ուստան տուփը հաներ և չհյուրասիրեր ներկաներին. որոշ դեպքերում, երբ մեկին չէր առաջարկում, դա պերճախոս նշան էր թշնամության և մանավանդ վայրկենական դժդոհանքի:

Ուստան գաղտնի կամ հայտնի կերպով, ձեռքից եկածի չափ, օգնում էր գյուղի աղքատ ընտանիքներին, հաճախ դրամ էր պարտք տալիս սրան ու նրան, առանց տոկոսի, որ գյուղի սուրբն էլ այդ չի անում, և ո՛չ միայն չէր հիշեցնում պարտքը, այլ երբ հանդիպում էր պարտապաններին, չտեսնել էր ձևացնում, նրանց չամաչացնելու դգացումով. «Ուզես, գնչո-մարդ կըլնիս, Զավուշ չան, ունենան բերեն կուտան»: Եթե Զավուշը չլիներ, Ուստան այս մասում կորած մարդ էր. Զավուշն էր, որ երեսը պնդացնելով, պարտքերը հավաքում էր կալոցին, երբ սովորաբար գյուղացու ձեռքը բերաններն է հասնում:

Առատաձեռնությունը հասնում էր իր կատարին Ուստայի քավորության, հարսանիքների և ուխտագնացության ժամանակ. ամենաթանկ նվերներն էր առնում սանամայրերի համար, հարսանիքներին առատ «սաչու և չաբաշով» զարմացնում էր կոչնականներին: Ուխտատեղիներում օր ու գիշեր՝ իրեն չրջապատած իրեն ընկերներով ու դավուլ-զուռնայով բոլորի ուշադրության ծղնին էր դառնում:

Այսպիսով, տարի չէր անցնում, որ Ուստան մի քանի ամուսնացող զույգերի խաչը չբռներ և բազմաթիվ անդամ տները մեռոն չտաներ:

Ուստա Կարոն չնորհքով-հնճարքով վարպետ էր, ինքնաբեր նորույթներ էր մուծում ավանդաձև շենքերի մեջ, հարմար, օգտակար, գեղեցիկ նորույթներ:

«Ինձ նման օթևան չինող, օճախ կապող, կարմունջ քցող, աղբյուր հանող վարպետ արևելքից-արևմուտք չի գտնվի» — իրավունքով այսպես վկայում էր իր մասին Ուստան և վկա էր բերում իր ձեռքով շինած գեղեցիկ շենքերը, կամուրջներն ու աղբյուրները, որ ամեն մարդ գիտե, ու օրհնում է կառուցող ձեռքը:

Սարերի ապառաժ կողերին նայելով՝ հասկանում էր նա թե՝ ո՞րտեղից ջուր կարող է բղխել. քարերը ճեղքելով ջուր էր հանում, առու ձգում, և ջուրը ընտելացած կենդանու պես գալիս էր նրա ձևած շավիղով դեպի գյուղերն ու պարտեզները, և չէր փախչում այլուր:

Աննման բանդ-ամբարտակ կապող էր ձորակների առաջը, որ հավաքվեն անձրևի ջրերը, ավազանի պես՝ սակավաջուր տեղերի պետքերի համար:

Նրա ձեռքին՝ հացահատիկի կամ ջրի հորեր փորելը, սալահատակել, պատ քաշել — խաղ ու պար էին. թեև քարեղեն գործերի մեջ եզակի վարպետ էր, ուղղակի, «քարին հոգի տվող», բայց փայտի գործերի մեջ էլ խելքը հասնում էր.— կարող էր տան լավ ծածք անել, դուռ ու պատուհանի փայտեղեն կազմերը շինել:

Ով որ փափաքեր մի հիմնավոր և աչքի ընկնող շենք ունենալ,— անպատճառ միայն Ուստա Կարոյին պիտի դիմեր: Ամեն մեկը պարծանքով էր ասում թե՝ իր օթևանը կամ ամբարը Ուստան է շինել:

Վարձառության մեջ Ուստան չափավոր էր, դեպք չի եղել որ մեկը դանգատեր թե Ուստան շա՜տ վարձ ուզեց:

«Աստված կյանք տա մեր Ուստային, մեզի չենցրից ու լիացուց.— օրհնած է Ուստայի ձեռքը, շինածը քանդում չունի»:

Ուստայի անունը տալիս անբաժան էին այս գնահատական խոսքերը գյուղացիների բերանում:

Միայն մի անժխտելի պայման կար, որ պիտի կատարեին գյուղացիները, եթե ուզում էին փափաքած շենքն ունենալ: Պիտի խորհուրդ չտային նրան և մանավանդ պիտի չքննադատեին նրա գործը:

Շենք չինել տվողը պիտի հայտներ իր մտադրածը և հավատով ուղղակի պիտի հանձնվեր նրան:

«Ուստայի նազերը պիտի քաշենք, որ նազելի բան չինե». հաչտ ասում էին գյուղացիները և դիմում նրան — «Ուստա ջան, սրտիդ ուզածի պես արա. ձեռքիցդ բան չի պրծնի, թե որ ուզենաս. քեզ հո՞ սորվեցնելու չենք. դու լավը գիտես. քո հավնածը մեր հավնածն է»:

Այսքանը բավ էր. մնացածը Ուստայի գիտնալիք բանն էր. ըմբռնելով շենքատերի միտքը՝ սրտով ընկնում էր գործի վրա. գայլի պես ուտում էր գործը, որքան էլ որ դժվար ու մեծ լիներ, երբեք չէր շտապում, բայց և ոչ մի ուրիշ վարպետ նրա նման արագաձեռն չէր:

Այնպես բարեխիղճ գործ տեսնող էր, որ, ասես, իր համար էր չինում, ինչ որ չինում էր: Ձեռքը դիպած գործը ջանում էր կատարյալ լինի:

Շենքատերը կանգնած մոտը գովում էր ու խրախուսում, և Ուստան՝ խոսք ու զրույց անելով, ոգևորված ուղղակի ստեղծում էր:

Գործի ավարտից հետո շենքատերը տեսնում էր, որ իր սրտի ուզածից ավելի լավն է մարմին առել: Բայց եթե մեկը, անզգույշ, խորհուրդ տար գործի կեսին և կամ քննադատեր, Ուստայի ցասմանն էլ սահման չկար:

Մի անգամ Ուստան մի հորի ներսաշուրջը պատ էր քաշում, հորի տերը ասում է. «Ուստա ջան, գիտես թե, պատը մեկ քիչ գոգվոր է...», Ուստան անմիջապես, կրակված

բղավում է. «Ջէ՛ հիմի ծոցվոր է, տղա պիտի բերե», և զայրույթով սկսում է հորը հողով լցնել... Ներկաները միջամտում են, հորի տերը ներողություն է խնդրում և հաշտվում են... եթե հաշտությունը իսկույն չկայանար, սպաններիր, Ուստան այլևս նրա համար գործ չէր անի:

Սկզբներում, Ուստայի բնույթը գյուղացիների կողմից դեռ չսերտած ժամանակները, չա՛տ այսպիսի անհամություններ են ծագել. Ուստան թողել է գործը կիսատ՝ խռով հեռացել. ի՛նչ խնդիրներ, ի՛նչ ճաշեր անուշի կապելու համար գժտությունը:

Ուստայի բնությունը ճանաչելուց հետո՝ այլևս դաշն էին փոխհարաբերությունները:

Ուստան գիտնալով գյուղացիների կարծիքները իր մասին թե՝ Ուստան աստվածատուր շնորհքով վարպետ է, հասնող չունի իրեն, ձեռքը պստիկ աստված է,— ավելի բոցավառելով իր ստեղծագործ զգացումը, մոռանալով հաց ու հանգիստ, ձգտում էր արդարացնել իր վարպետության վրա դրած մարդկանց հույսն ու հավատը:

Թեև Ուստան իր վարպետի անունը բարձր էր բռնում, ուրիշների նման գյուղերն ընկած գործ չէր որոնում, կամ ուրիշների ձեռքից գործ չէր խլում, թեև իրողություն էր, որ ձեռագործները տեսնելով մարդիկ գալիս էին իրեն ոտը, գիտնալով որ Ուստան փողի համար չի գործում, հապա արհեստի սիրուն, փառքի ու հռչակի համար, բարեկամին լավ չենք շնորհելու համար, սակայն նա իր ներքին անկեղծության մեջ ուրիշ կերպ էր տեսնում իրողությունը:

Նա տեսնում էր, որ միայն արհեստի սիրու համար չէր, որ գործում էր, այլ ապրուստի, և որ արհեստը իսկապես իր կոչումը չէր. իրեն զգում էր թիրախից վրիպած, ուղին կորցրած:

Ի՞նչ էր նրա կոչումը:— Մի դյութական, մի խորհրդավոր, մի երազական բան, որ լուծված չէր որոշակի նրա մտքի համար: Մի անհուն, անձև փափաք, որ քշում-տանում էր նրա սիրտն ու հոգին՝ սուզում հեքիաթի և կապույտ հեռուների կախարդանքի մեջ:

Նա թեև ավելի քան տասը տարի կուշտ թափառելուց հետո, մոտ տասը տարի էր ամուր նստել էր Նախճավանում, իր տունն ուներ, իր հացն ու ջուրը, չրջապատված բարեկամներով ու հարգանքներով, գոհ ու երջանիկ, բայց երբեմն-երբեմն հին փափաքը կրակված օձի պես գալարվում էր նրա ներսում, ցավագին կերպով խայթում նրա հանգիստը և մղում նրան անհայտ երազին:

«Ջավուշ ջան,— «ախ» քաշելով ասում էր Ուստան ընկերին,— ես արհեստի համար չէի ծնվել: Ես ո՞ւր, արհեստը ո՞ւր: Աստված չուզեց որ հայրս ապրեր, քեռիս էլ վիզը տակը մնա, ուսման չտվավ. թե որ ուսում առնեի, ուրիշ մարդ կդառնայի, ուրի՛շ, ուրի՛շ: Մեջս մեծ փոթորանք կար. գիտեի, որ չա՛տ մեծ մարդ կդառնայի, աչխարքը մատիս վրա կառնեի...

Էս աչխարքի մեջ մարդ մեծ ըլնելու է կամ իսկի գալու չէ. պատիկ մարդը կամ եղած, կամ չեղած,— ոտաց տակի փոշի. չունն էլ որ կըլնիս, մեծ գել-խեղդող եղի՛ր...

Ջեղավ. անտեր էի. ճար չունեի, աղքատությունը արհեստ սորվեցրեց. հո՞, չէի կրնա ուրիշի ձեռքին նայել. կռահեցի, որ արհեստը մարդու հավատարիմ ախբերն է, արհեստավորի փորը մինչի կեսօրն է սով. հիմի, փառք Աստծու, մեկ ձեռքս մեկէլին կարոտ չէ, միայն սիրտս արհեստիս կպած չէ. ձեռքով կշինեմ, սրտով ուրիշ տեղ եմ. մեկ աչքս շինածս պատի վրա է, մյուս աչքս ման եկած հեռու ճամբեքի վրա: Նստած եմ հորի մեջ, բայց սիրտս ի՛նչ իմանաս որն ծովերի վրա է, որ երկրներում...

Ա՛խ, կուզենայի նորեն քարվան ունենայի, երթայի՛, երթայի՛, կամ թե մեծ գործեր անեի, անունս աշխարքի չորս պոչերը ձեն տար, թե չէ՝ սիրտս պատռվում է, քար տաշել, պատ քաշել, հորի մեջ նստել»...

Եվ սակայն միշտ էլ, չուտով, սեփական վիճակի հետ հաշտված՝ յարում էր իր դանգատին –

– «Ջավո՛ւշ ջան, հիմի պիտի ասես, թե որ արհեստս չեմ սիրում, ինչի՞ լավ գործ եմ տեսնում. պատճառն էն է որ ձեռքիցս բան չի պրծնում, քարն ու ջուրը ծառա են ձեռքիս հնճարքին, ձեռքս է պատճառը, ե՞ս,– ես չէ: Ու Աստված է վկա, որ մենակ հացը չէ, որ ձեռքս բանի է դնում, վարպետությանս պատիվն էլ կա:

Ու նորեն տեսնում եմ, արհեստից պատվավոր բան չկա. առուտուրը սրտովս չէ, էժան առնել, թանգ ծախել. բնությիս մեջ չկա սուտ խոսելը. ի՞նչ չնորհք կա էստեղ, բայց արհեստը աշխարք է չենցնում, գեղ ու քաղաք է շինում, Աստծուն ընդունակ բաներ – ժամ ու վարժատուն: Ինչքա՛ն բարություն է մանավանդ ջուր բերես, անցնող դարձնող, մարդ ու անասուն հարյուր տարիներով պիտի խմեն ու անունդ օրհնեն: Շինածդ չենքերի ճակտին անունդ անմեռ կըլնի, հիշատակդ կտեսնեն ու կասեն, լույս դառնա հոգիդ, ա՛յ երևելի վարպետ, ի՛նչ անմահական ժառանգ ես կանդնեցրել:

Խոսքս վարպետի մասին է. դրա համար էլ ձեռքս գումար չնորհքն ու հնճարքը կթափե անունիս ու պատվիս վայել»...

Այս խոսքերի վրա Ուստան հպարտ բարձրացնում էր գլուխը և հպարտ նայում Ջավուշին և Ջավուշի միջով ողջ աշխարհին՝ ներկա ու գալիք:

Այս բոլոր հատկությունների համար Ուստան շատ սիրված էր ու հարգված բոլոր դյուղերում. սիրված ու հարգված, իբրև աստվածավախ ու առատաձեռն մարդ,

խոսքաչեն ու գլուխ-վարպետ, իրրև քավոր ու բարեկամ, աչխարհատես ու փորձված մարդ:

Գյուղացիների մեծ մասի անկեղծ կարծիքը այս էր նրա մասին — «Աստծու չնորհքը Ուստայի վրա է. լեզուբերան, չեն սիրտ, ճարտար ձեռք. Աստված մեզ համար ղրկեց էս անուշ մարդը»:

Մարդամոտ բնույթ ունենալով՝ մեծաքանակ բարեկամներ համբելու բախտն ուներ նա, և նրանց տներում իր պատվավոր տեղն ու բարձը: Եվ ամեն գյուղ սանահայրեր ու սանամայրեր:

Մանավանդ մի-երկու մտերիմ ընկերներ ուներ, փոխադարձ իրար հոգի տվող:

Թշնամիներ ունենալու բախտից էլ զուրկ չէր, որոնց գլուխն էր Նախճավանցի Հարուստ Ղուկաս աղան: Նրանք բամբասում էին Ուստայի ստվերին ու ծաղրում նրա քարավանը. սակայն Ուստայի բարեկամները գիտեին նրանց չար լեզուները բույներնին դնել. հարկավ Ուստան էլ խոսքի տակ մնացողը չէր. ավելի էր հորդում ու հոխորտում նրանց դեմ:

Գործից աղատ պահերը կամ երբեմն ձեռքի գործը կես թողած՝ Ջավուշին հանձնելով, Ուստան շրջում էր գյուղերը, անբաժան չոնգուռի հետ, քեֆ էր անում, ուրախանում ու դառնում նորից գործին:

Եվ ուր որ գնում էր՝ ուրախությունը հետն էր տանում:

Ամենաժողովրդական մարդն էր Ուստան, իր անվան չուրջը ամենից չատ խոսք ու զրույց դարձնողը:

Եվ ամեն տեղ «բարձրաթռռ էր և ամեն տեղ հառաջավոր»:

Փիլոս ախբարը Թյուրքահայ էր, Բասենի գյուղերից. ուսկից պատանի հասակում փախել էր Ռուսահայաստան,

և Երևանի գյուղերում մշակ-բանվոր լինելով մի կերպ գլուխ էր պահում:

Ճակատագի՞ր էր, ո՞վ էր, ի՞նչ էր, որ Ուստային ու նրան հանդիպեցրեց իրար:

Երբ Ուստան պարսիկի հողից նոր վերադարձած՝ էջմիածնի գյուղերում արհեստը բանեցնելով ապրում էր, մի օր պատահեց Զավուշին և իր մոտ բանվոր առավ: Տեսավ նրան տխուր, վիրը ծուռ, համեստ, չարքաշ, լուռ աշխատասեր, խղճաց, ավելի մոտիկցավ, մտերմացավ, սիրեց և կապեց իրեն հետ:

Փիլոսն էլ առաջին օրից անվերապահ սիրեց Ուստային, իր կողմից էլ կապվեց նրա հետ և նվիրվեց նրան բոլոր սրտով: Սերը եղավ նրանց հոդող օղակը:

Այդ օրվանից անտերունչ Զավուշի համար արև ծագեց և աչքը լույս տեսավ:

Այդ ժամանակ Փիլոսը կլիներ մոտ 24-25 տարեկան: Ուստան նրան իր գիտցած արհեստներից սորվեցրեց. ժամանակի ընթացքին Ուստայի ձեռքի տակ նա այնքան վարժություն յուրացրեց արհեստների մեջ, որ կարող էր նույնիսկ լավ վարպետ չեղած տեղում վարպետ կոչվել: Ուստայի բացակա պահերին կարողանում էր նրա գործը շարունակել, և արդեն մանր-մունր բանները ինքը միայնակ էր շինում:

Փիլոսը իրեն հավիտյան երախտապարտ էր զգում, որ Ուստա Կարոյի նման մի վարպետի չնչի ու չնորհքի տակ մարդ դարձավ, մարդամեջ մտավ, գլխին մեծ եղբայր ունեցավ, և ապահով հաց: Եվ բացի արհեստներից սորվեց չա՛տ իմաստուն բաներ, խոսք ու զրույց, առակ ու առած:

Սակայն ինքն էլ իր փոքրիկ թափառումների մեջ ուսել էր բավական երգ ու զրույց, աշուղական ու թրքա-

կան տաղեր. մանավանդ որ անուշ ձայն ուներ և երգելու չնորհք. այնպես որ ամեն անգամ, երբ Ուստան չոնգուռն էր ածում, ինքն էլ ձայնակցում էր նրա նվագին:

Փիլոսը Ուստայի պես միջահասակ էր, մի քիչ նիհար, սև մազերով, թուխ դեմքով: Հոնքերը այնքան թավ էին, որ ստվեր էին ձգում աչքերի խորչերի վրա, ուր ջինջ սպիտակի մեջ ավելի ցայտուն էին սև պտուղները: Տխուր էին այդ աչքերը և շատ բարի. երբ նայում էր, երեխայական միամիտ ու պարզ սիրտն էր, որ նայում էր մարդկանց ու աշխարհին: Կանոնավոր, սուր քիթ ուներ, որ մի փոքր կռացած էր հաստ բեխերի վրա:

Հագնվում էր Ուստա Կարոյի նման, միայն ժամացույց չուներ: Երկար տարիներ ապրելով Շիրակում փոխել էր մայր-բարբառը և խոսում էր տեղացիների պես:

Բնությունը մեղմ էր նրա ու հանդարտ. սակավախոս էր, ծանր ու քիչ հուզվող. գլուխը կախ, տոկուն աշխատող: Գաղտնապահ էր և չափավոր իր վարմունքի և կերուխումի մեջ: Խնայող էր շատ, եթե նա չլիներ, Ուստան փողի երես պիտի չտեսներ, ամսվա վաստակածը մի օրում ջուր պիտի դարձներ. նա էր, որ «սև օրվա» համար «ճերմակ փող» էր ետ ձգում:

Ուստան այս հատկության համար նրան չինել էր իրեն դանձապահը, նա էր պահում ելք ու մուտքի հաշիվը:

Ուստան թեև աշխատավարձը սկզբում բոլորը առանց հաշվելու Փիլոսին էր տալիս, և իսկապես ուզում էր, որ սա էլ իրեն գրպանի-ծախքի համար խնայողաբար փող բաց թողնե, սակայն այս միայն բարի ցանկություն էր մնում, որովհետև կարճ ժամանակի մեջ զանազան պատրվակներով դրամ էր կորզում դանձապահից, առատաձեռն ծախսելու և սրան-նրան տալու համար: Փիլոսն էլ չվստահանալով մերժել վարպետին, փոխարենը սուտ ու

սխալ, բարդ հաշիվներով մոլորեցնում էր նրան, և այսպիսով փող տնտեսում:

Ջավուշը իր համար առհասարակ բան չէր գնում, առանձին ծախսեր չէր անում, որով<Հետև> Ուստան ինչ որ առնում էր իր համար, նույնը հավասարապես ընկերի համար:

Գյուղացիները գտնում էին, որ նրանք ընդհանուր գումարի մեջ շատ նման էին իրար, «ասես թե կլիսած խնձոր ըլնեին». սակայն ճշմարիտ չէ այս, ճշմարիտը այն է, որ Փիլոսը երկար տարիներ ապրելով Ուստայի հետ, կրել էր նրա ազդեցությունը, մանավանդ արտաքուստ. յուրացնելով նրա շարժ ու ձևերը, նույնիսկ ձայնի շեշտերը: Ներքին բովանդակությամբ էլ քչից-շատից նմանվել էր Ուստային, թեև ակներև տարբեր խորք ունեցող մարդիկ էին: Բայց դրսերևույթով՝ Փիլոսը Ուստայի արձագանգն էր:

Գյուղացիների ասումով՝ նրանք երկուսով մի մարդ են մի մարմնի մեջ. ալ կեսը՝ Ուստան է, ձախ կեսը՝ Ջավուշը. և այսպիսով իրար լրացնում են:

Այս պատկերով ուզում էին ասել, թե Ուստան ավելի շնորհքով, ընդունակ մարդ էր, քան Փիլոսը, ինչպես ալ ձեռքը ձախ ձեռքի վրա:

Մի բան, որ խորապես բնորոշում էր Փիլոսին և խիստ տարբերում Ուստայից, դա նրա զգացում ու տարր դարձած ճակատագրի հավատքն էր. համոզված ճակատագրապաշտ էր նա, բառի իսկ իմաստով: «Ինչ ըլալիք է՝ պիտի ըլնի. ինչ որ գալիք է՝ պիտի գա. ինչ եղել է, չէր կրնա չեղնել. ինչ որ չի եղել, չէր կրնա եղնել». միշտ այս էր կրկնում նա պատահած կամ սպասելիք դեպքերի հանդիման:

Այս հավատքը դարձրել էր նրան անվրդով, անայլայլ, հանգիստ ու համբերող, հակառակ Ուստայի բնույթին, որ բուռն ու բորբ էր, անդուսպ ու անհամբեր:

Նրանք մի բանի մեջ բոլորովին նման էին իրար — երկուսն էլ դյուրահավան ու բարի, մարդկանց հավատացող ու մարդասեր:

Ուստան միշտ Ջավուշի խորհրդին էր դիմում մի գործ ձեռնարկելիս, իսկ սա առանց Ուստայի մի ոտքը մյուս ոտքի առջևը չէր դնում:

Գյուղացիները չա՜տ անգամ էին տեսել թե՝ ինչպես նրանք գյուղից դուրս, իրար փաթաթված ման էին գալիս, խոսում ու խորհրդակցում:

Նրանք տեսնված ու չլսված սիրում էին իրար, սիրում ու անվերապահ իրար հավատում: Երբ մեկը մի փոքր հիվանդանում էր, մյուսն էլ ուղղակի հիվանդ էր դառնում ու կողքին պառկում:

Մեկի դեմքը մյուսի հայելին էր. երբ մեկը տխրում էր, մյուսի երեսի վրա էլ իսկույն արտացոլում էր ընկերի թախիծը: Նրանք առանց «վարպետ ջան, Ջավուշ ջան» քաղցր խոսքերի իրար չէին դիմում:

Գյուղացիները հիացած էին այդ ընկերական-եղբայրական մեծ սիրո վրա. «Ճրագ առնես, արար-աչխարհ ժուռ գաս, էդպես սիրով ախբեր ու ընկեր չես գտնի, էդ սիրով Աստծու առաջ նրանք արդար մարդիկ են». այսպես էին դատում գյուղացիները:

Թե նրանց որի՞ սրտում սերն ավելի ծանր էր կշռում, անհնար է պատասխանել, քանի որ նրանց զգացումները իրար հանդեպ մի արդար ու նուրբ կշիռքի երկու դաշն ու հավասարազոր նժարներ էին:

Միայն մի բան աչքի էր ընկնում, այն, որ Փիլոսը բացի սիրուց ուներ չատ մեծ հարգանք ու պատկառանք դեպի վարպետը. նրա խոսքերը իր համար սրբություն ու պատգամներ էին՝ անքննելի, անկասկածելի: Նա վարպետի առջև երբեք անվայել խոսք չէր զրցում, երբեք բաց

հանաք չէր անում, երբեք նրա խոսքը չէր կտրում, թեկուզ շաքարով:

Նրա համոզմունքով՝ Ուստայի պես խելոք, բանիմաց, ազնիվ մարդ չկար աշխարհի երեսին. և մեծ ակնածություն ուներ նրա վարպետության հանդեպ, այնպես որ չնայելով երկար տարիների սիրով ու համերաշխ համակեցությանն ու անկեղծ, բացարձակ մտերմությանը — Փիլոսը իրեն երբեք թույլ չէր տվել նրան «Կարո» կոչելու, այլ միշտ «Ուստա, վարպետ» տիտղոսներով, և ոչ նույնիսկ «Ուստա Կարո» ձևով:

Եվ հոգով ծառայում էր Զավուշը ու սպասավորում Ուստային ո՛չ միայն որպես ավագ և շա՛տ սիրելի ընկերի, այլև որպես պատկառելի և երևելի վարպետի:

Եվ պատրաստ էր վարպետի պատվի ու կյանքի համար ողջ աշխարհի դեմ կռիվ դուրս գալու՝ իր անձը զոհելու աստիճան:

Փիլոս ախբարն էլ իրենց եղբայրացման առաջին օրերում հետևյալն էր պատմել Ուստա Կարոյին իր կյանքի վեպից:

Թե իրենց շեն տունը կոչվել է դյուղում Զավուշենց տուն. մեծ հայրը երկար ժամանակ Կ.Պոլիս է եղել և հրչեջների գլուխ—տասնապետ՝ Զավուշ. այդ պատճառով ամբողջ տոհմը Զավուշենք կոչումով է հայտնի եղել շրջապատում և կառավարության առաջ, և ինքն էլ Զավուշենց Փիլոս անունով:

Ուստան Զավուշենց հին տան պատվի համար Փիլոսին Զավուշ կոչեց. դյուղացիներն էլ որդեգրեցին այդ ձևը և սրբագործվեց Զավուշ մականունը:

Փիլոսի բևեռը նոր ծագկած գլխին մի փորձանք է եկել, որ պատճառ է դարձել հայրենի հողից փախչելու:

«Վարպետ Ջան,– խոստովանել է Փիլոսը,– եղավ որ եղավ, մի օր իմ Հորս ծանոթ մի քուրդ քառսուն եզան բեռ ձմերուկ բերեց, լցրեց Հորս ամբարը՝ որ ծախե: Ես էլ տղա-մանուկ էի, ընկերներիս հետ սարքել էինք, գիշերով ելնում էինք ամբարի երթիկը, նիզակը կոխում էինք երթիկից ներս, ձմերուկների մեջ էինք խրում, դուրս հանում ու տանում կալերը, ուտում: Քուրդը տեսավ մեկերկուս որ ձմերուկները կեցած տեղերը հատնում էին, նշան էր արել ու նշանից իմացել, որ գողցող կա, ուզեց բռնել գողը. գիշերը երթում է պառկում երթիկի տակը, ձմերուկների վրա. մենք էլ անտեղյակ, ելանք նորեն գողության. նիզակս կոխեցի, տեսնեմ «ա՛խ, օ՛ֆ» ձևներ ելան, քաշեցինք դուրս, ի՛նչ տեսնենք, քուրդը նիզակիս հետ կախ ընկած ելավ. նիզակս մտել էր խեղճի կուրծքը. արունը վազում էր. ընկերներս փախան, ես էլ տեսա որ բանը կհասնի դատավորին ու ինձի կմեղցնեն, կամ քուրդի ազգականները ոխ կպահեն ու ինձի մի օր չէ մի օր կգարկեն կսպանեն, գլուխս առա ու պուկ ռուսի Հողը: Էլ չիշխցա ուռք կոխեմ ծնողքիս երկիրը, կյանքը ամեն բանից անուշ է:

Էսպես դառա անտուն-անտեր գաղթական, ընկա Ղարսա, Երևանու դեղերը, չա՛տ գեշ օրեր տեսա. անօթի-ծարավ, չարքաշ փոր-հացի մշակ, գեղե գեղ, դռնե դուռ, մինչև որ տեր Աստված գթաց, քեզի պես գլուխ ու ընկեր դրկեց ինձ համար»...

Ուստան Ջավուշի այս սրտառուչ խոստովանանքի վրա՝ արցունքոտ աչքերով գրկել է նրան ու կսկուծ համբուրել:

Ու այն օրվանից դարձան, մնացին մինչև հիմա և պիտի մնան էլ մինչև մահ հարազատ եղբայրների պես, երկու անբաժան ընկերներ – մի հոգով և մի քսակով:

Ուստան ու Ջավուշը ունեին և մի համեստ ուղեկից, իրենց աշխատանքներին ու ճանապարհներին անմեկին ընկեր – Միրզան:

Գյուղացիները այսօրվա պես հիշելով նրանց Նախճավանի կողմերը երևալը, ծիծաղելով ասում էին. եկան առաջները ճգած «էշ ընդ ավանակի»:

Արդարև, նրանք այն ժամանակ երկու էշ ունեին՝ մատակ-էշը իր քուռակով: Տարիներ անցան, մայր-էշը ծերացավ և արևը բաշխեց իր որդուն, որը մեծացել էր իր հերթին և դարձել նրանց գործակիցը:

Ավանակը աչքը բացեց այդ գյուղերի ճանապարհների և ծանոթ-բարեկամ դռների վրա. և քաջ կարդացող վարժապետի պես, որ գոց գիտե գրքերը, այնպես էլ նա գոց գիտեր, խուփ աչքերով, այդ ուղիներն ու դռները: Դրա համար էլ Ուստան անունը դրեց «Միրզա»: (Գրող-կարդացող վարժապետ): Երբ տերերը ճամբա էին ելնում, Միրզան նրանց նայելով իրեն բնազդի ուղիղ թելադրումով, հասկանում էր թե որ գյուղը պիտի երթային. գյուղը մտնելիս, նորից մի հայացք ճգելով տերերի աչքերի մեջ դուշակում էր՝ թե ո՞ւմ դուռն էին ուզում գնալ. չա՜տ հաճախ ստույգ էր լինում նրա կանխազգացումը:

Նրա այս զարմանալի հատկության վրա՝ Ուստան ասում էր. «Միրզան իշու երես ունի, մարդու խելք, ինչպես որ ներհակը կա, մարդու երես ունեցող, իշու խելք» և ավելացնում էր – «Միրզան կրնա մեկ թուրք գեղի վարժապետ ըլլալ, երկու քուրդ գեղի դատավոր. ու երեք ճի ճգած տեղը նորեն թագավոր», հակառակ այն առածին թե՝ ճին չեղած տեղը էշը թագավոր է:

Ձերմակին մոտեցող գորշ գույն ուներ Միրզան, խոշոր կազմվածք. հաստատուն ու վճռական քայլվածք: Երբ քարքարուտ կածաններով մագլցում էր, ա՛յնպես հաշվով էր ոտները փոխում, ա՛յնպես խոհուն, որ Փիլոսը ոգևորված բացականչում էր. «տո՛, յահուդու պես հաշիվ գիտե, տեղից տեղ խելքի կտոր է, սիրտս ուզում է՝ բռնեմ պաչեմ էդ խելացի ճակատը»:

Ինչպես որ Միրզան հասկանում էր իր տերերի միտքը, նույնպես էլ նրանք էին հասկանում նրա միտքը, մանավանդ Ջավուշը, որ գրեթե միշտ ինքը խնամելով, ավելի մտերիմ էր դարձել նրան և այդպիսով գիտեր, թե Միրզան ի՞նչ է ուզում, հոգնե՞ց արդյոք, նեղացավ, քաղցած է, ծարա՞վ է արդյոք...

Միրզան գիտեր և նրանց սովորությունները: Օրինակ, Ուստան սովորություն ուներ, որ ճանապարհին հանդեպն ելնող ծանոթ մարդուն, երբեմն էլ անծանոթին, կանգնեցնում էր, մի-մի ծուխ ծխում, հարց ու փորձ անում, հաճախ, սիրտն ուզածի հետ նստելով ճամբի եզրին օղի առնուշ անում, խոսում, հանգչում.— և Միրզան, այսպես, իսկույն կանգ էր առնում հանդիպողի առջևը, և ականջները լարած լսում նրանց զրույցը:

Առակի կարգ էր մտել գյուղերի մեջ ավանակի այս հատկությունը: «Ի՞նչ Ուստայի ավանակի պես էլի կանգնար». ծաղրով ասում էին գյուղացիները նրան, ով կանգ էր առնում բանի-գործի ժամանակ մի մարդ տեսնելիս:

Բացի այդ՝ Միրզան ուներ և մի եզակի հատկություն, գովական ու աննման — նա զերծ էր իշությունից, որից ազատ չէ աշխարհում ո՛չ մի էշ: Նա համառ չէր: Ո՛չ մի անգամ, ճանապարհին, գետի մեջ, կամուրջի վրա, ուրիշ կամապաշտ էշերի նման, չէր ոտները չորս չռում կանգնում, ո՛չ հառաջ գնում, ո՛չ ետ: Երբեք գյուղի նեղ փո-

ղոցներում չէր հրում անցորդներին, կամ բեռով գնում մեկի դռանը սեղմ տնկվում, տան ելքն ու մուտքը բռնում:

Եվ նրա այս ընտիր հատկությունների համար տերերը չա՛տ էին սիրում նրան. լավ կերցնում էին, երբեք չէին բարկանում վրան, իսկ հարվածել – եղած բան չէր: Ջավուշը, կարծես, չվիրավորելու համար բնավ «չո, չո, չոշ» չէր ձայնակցում, այլ՝ «Միրզա, մի քիչ էլ գնա, էս է հասանք, Միրզա, մարալս». և Միրզան սիրալիր ձայնից թև էր առնում:

Օսկանը թեև ձի ուներ, և Ուստան ու Ջավուշը օգտվում էին, երբ ուզենային, սակայն արհեստի բերումով գյուղերը շրջելիս, իբրև գործիքների և ճամբու պաշարի կրող, միշտ Միրզային էին գործի դնում, որովհետև հարմար էր և կարող էին միշտ հետներն ունենալ:

Գյուղում զանազան պետքերի առիթով մարդահամար անելիս, Ուստան կատակով ասում էր. «Միրզային էլ հաշվեք»:

Եվ չնայելով որ Ուստան Միրզային, թեկուզ կատակով, մարդու տեղ էր դնում, սակայն նրա հանդեպ՝ միշտ ցավով միտքն էր բերում իր այն երևելի ավանակը, որ ուներ Ղարաբաղ եղած ժամանակը:

Այդ ավանակը զոհ գնաց՝ մի փորձանքով, Սխտորաշեն գյուղի եկեղեցուն, հռչակվելով իբրև նույն գյուղի «Երեցփոխի Հայրը». Ու մազ մնաց որ տիրոջ գլուխն էլ ուտեր...

Այս պատմությունը չա՛տ տեղ է պատմել Ուստան, և երբ տեղը գա՝ նորից կպատմե:

<Գ. ԳԼՈՒԽ>

Բ. ԳԼՈՒԽ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՋԱՎՈՒՇԻ ԴԱՐՋԸ ՆԱԽՃՎԱՆ[1]

Գյուղը հավերի հետ քուն է մտնում[2], աքլորների[3] հետ աչքը բաց անում[4]: Ուստա Կարոն էլ քնից հետո մեռածի պես քնեց, և առավոտ վաղ, աքլորների[5] հետ դարթնեց. վեր կացավ[6], լուր օրվա զգեստները հագավ[7], լվացվեց[8], «մախմուրահան» մի-երկու բաժակ օղի[9] անուշ արավ[10], նախաճաշեց. և ապա հյուրընկալ երեցփոխ Տոնո-

---

Համեմատվող բնագրային միավորներ.

A = «Հայրենիք» բնագիրը՝ հեղինակային ուղղումներով:

B = ԻՖ, 287ա-II:

C = ԻՖ, 291-II:

D = «Հայրենիք» (1925, N 4, էջ 22-26):

1 D դարձը Նախճվան *փխ* Նախճըվան դարձը

2 B քնում է

3 BC աքլորի

4 B վեր կենում *փխ* աչքը բաց անում C բանում *փխ* բաց անում

5 BC + ու գյուղացիների

6 B *չիք* C + լվացվեց

7 BC *չիք* լուր օրվա ... հագավ

8 BC *չիք*

9 BC արաղ

10 B արեց

յին և բոլոր[1] տնեցոց[2] մնաք բարև[3] անելուց հետո՝ Զավուշի[4] և իրենց[5] ավանակի հետ ճանապարհ ընկան դեպի Նախճվան[6], «Ուստա Կարոյի աթոռանիստ» գյուղը, ինչպես[7] ասում էին նրա բարեկամները[8]:

Թեև արևը[9] բավական բարձրացած էր և հսկայական[10] քարաժայռի գլխին նստած ս. Գեորգի[11] մատուռը ճառագայթների մեջ ծփում էր, սակայն Բագրանի գոգավոր ձորի վրա դեռ գիշերվա ստվերներն էին թափառում. և զով էր մրսեցնելու չափ[12]:

Գյուղի արևմտյան ծայրին[13], որ զառիվեր բարձրանում է ոլորանման[14], քարքարոտ[15] չավիղներով[16] հանդիպեցին չորս[17] բագրանցու. նրանց վրա-գլուխներից երևում էր, որ չունևոր մարդիկ էին, ցրտից կուչ եկած ցնցոտիների մեջ՝ քայլում էին գլխակոր[18]:

---

1 B *չիք*

2 BCD տանեցոց

3 B բարով

4 BD Զավուշի *փխ* Փիլոս աղբոր C Զավուշի *փխ* Քերոբ աղբոր

5 BC *չիք*

6 B + էշը հետները D Նախճըվան

7 C + [կերուխումի ժամանակ] միշտ

8 B *չիք* «Ուստա ... բարեկամները C + չինական մեծամեծները

9 B + հորիզոնի վրա

10 BC Հսկայաբերձ

11 B Գեորգա

12 BC *չիք* և զով էր մրսեցնելու չափ

13 B + [այն զառիվերին]

14 BCD ոլորման

15 D քարքարուտ

16 BC + Ուստան ու Փիլոսը

17 B + [հինգ]

18 BC *չիք* նրանց վրա-գլուխներից ... քայլում էին գլխիկոր

– Բարի լույս[1] ձեզ[2], տղերք,– ասին միաժամանակ Ուստան ու Ջավուշը[3]:

– Բարին արևներդ, Ուստա, Ջավուշ[4],– պատասխան տվին նրանք[5]:

– Ո՞ւր առաջ բարի,– հարցում արավ[6] Ուստան:

– Տիկոր[7], գլխիդ մատաղ[8], Համբոյենց հողերի վրա բանելու. աղքատի օրոցքը կոտրի,– հառաչանքով ընկերների կողմից պատասխանեց մեկը[9]:

Մի պահ գնում էին անխոս. լսելի էր միայն քայլերի տակ գլորվող և ցուպերի հետ ծեծկվող քարերի չոր աղմուկը: Ավանակը հաչվով, տնտղելով փոխում էր քայլերը, սուր քարերից ազատ, հողի վրա դնելով տոտիկները:

– Տո՛, էս ճամփու տիրոջն ի՞նչ ասեմ,– խոսեց Ուստան,– հավատաս թե՝ դևերն ու սատանաները իրար հետ կռվել են ու քարե կարկուտ թափել իրար վրա, թե չէ էսքան քար ո՞վ հավաքեց էստեղ. խեղճ անասունի ոտները ջարդվան,– վերջացրեց խոսքը՝ կարեկցաբար նայելով ավանակին[10]:

– Երևկ լավ քեֆ ունեիք, Ուստա[11],– ասաց բագրանցիներից երեցը Ուստային չեղ նայելով[12]:

---

1 BCD լուս

2 BC ձեզի

3 BC միաժամանակ ասացին երկու ընկերները *փխ* ասին ... Ջավուշը

4 BD Ջավուշ *փխ* Փիլոս ախպար C Ջավուշ *փխ* Քերոր աղբար

5 BC պատասխանեցին ուղևորները *փխ* պատասխան տվին նրանք

6 BC Հարցրեց

7 C Տիկոռ

8 B Հեչ, գլխիդ մատաղ, Տիկոռ *փխ* Տիկոր գլխիդ մատաղ

9 BC *չի՛ք* Համբոյենց Հողերի ... նայելով ավանակին

10 BC *չի՛ք* Համբոյենց Հողերի ... պատասխանեց մեկը

11 BC *չի՛ք*

12 BC Նրանցից մեկը *փխ* բագրանցիներից ... չեղ նայելով

Ուստան ուրախացավ սրտի մեջ և[1] չկարողացավ[2] զսպել այն գոհ ժպիտը, որ շողաց դեմքի վրա[3]:

– Էլ լա՛վ ասիր ու անցար. փառավո՛ր[4], ուղածիդ պես. պակաս բան չկար:

– Էդպեսն է,– վրա բերեց մի ուրիշը,– բայց խոսքը մեր մեջ մնա, աշխարքի համը դու ես առնում[5]. կնկա-ն-բեխի ցավ չես քաշում[6]. դեղ ու քաղաք[7] կրակ ընկնի, քո[8] մի խորոմ խոտը չի էրվի:

Ուստան նկատեց նրա ձայնի մեջ նախանձի մի թեթև գույն[9]:

– Աստված էլ մեզ էդ է վիճակել,– կարճ կտրեց[10] ձայնին մի այնպիսի իմաստ տալով, թե վերջացած է այս մասին խոսքը[11]:

Ու լուռ բարձրանում էին: Ավանակը[12] նրանց առաջն ընկած, ականջները ճոճելով քայլում էր. երբ ոտքը դրեց զառիվերի դագաթին, և նրա առջև[13] փռվեց կամսարականների ընդարձակ դաշտը, ուր կանաչ արտերը ցնծին

---

1 BC չիք Ուստան ...մեջ և

2 BC + Ուստան

3 B աչքերի մեջ, տեսնելով որ բոլորը պիտեն երեկվա փառավոր քեֆը *փխ* դեմքի վրա C աչքերի մեջ *փխ* դեմքի վրա

4 B չիք

5 BC կառնես + մեննակ

6 BC դարդ չես քաշի *փխ* ցավ չես քաշում

7 BC ողջ աշխարք *փխ* դեղ ու քաղաք

8 BC քու

9 BC շեշտ/գույն

10 BC + Ուստան

11 BC չիք ձայնին մի ... մասին խոսքը

12 C էշը

13 C առաջ

էին տալիս, ռունգները[1] բացեց դալարի վրա սահող հովի դեմ և լիակուրծք զննչաց[2]:

– Դադրած է Միրզան,– ավանակին նայելով[3] ասաց Ջավուշը[4], որ անշեղ հասկանում էր նրա լեզուն ու սովորույթները[5]:

– Նստինք, նստինք,– ասացին ու[6] նստեցին[7] ցրված քարերի վրա:

Ուստան ծուխի[8] տուփը հանեց, մի գլանակ[9] փաթաթելու չափ ծխախոտ առնելուց հետո[10], տուփը հրամցրեց դյուղացիներին:

---

1 CD ռունդերը

2 B Գուցե երկար տևեր այս լռությունը, եթե ավանակը հանկարծ չխզեր: Նեղացի էշը, որ նրանց առաջին ընկած, հնաղանդ, գոհ իր վիճակից, [մանրիկ] ոտները մանր-մանի փոխելով, ականջները ճոճելով բարձրանում էր. երբ հասավ պառիվների դագաթին, և նրա առաջ փուվեց Կամսարականների ընդարձակ դաշտը, ուր կանանչ արտերը ցնծին էին տալիս, առավոտու բարակ հովը սահելով դալար արտերի վրայից եկավ և չոյեց ռունգները, ասես, բարևելու համար, նա բարձրացրեց դունչը և լիակուրծք զննչաց *փխ* Ավանակը նրանց առաջին ընկած ... դեմ և լիակուրծք զննչաց

3 BC *չխք* ավանակին նայելով

4 B Քերոբ աղբարը C Փիլոս աղբարը

5 B *չխք* որ անշեղ ... սովորույթները + Էստեղ մի քիչ նստենք C որ միշտ անսխալ ըմբռնում էր ավանակի տրամադրությունը *փխ* որ անշեղ ... սովորույթները + Էստեղ մի քիչ նստենք

6 BC Համաձայնեց Ուստան,– տո՛, էս ճամբու տիրոջն ի՞նչ ասեմ,– չարունակեց նա,– Հավատաս թե սատանաներն ու դևերը իրար հետ կռվել են ու քարն կարկուտ են թափել իրար վրա. խեղճ անասունի ոտները չարդան: *փխ* ասացին ու

7 B Ամենքը նստեցին C [Ամենքը] նստեցին

8 BC թյութունի

9 D գլանիկ

10 BC և ինքը իր համար մի պապիրոս փաթաթելու չափ թյութուն վերցնելուց հետո *փխ* մի գլանակ ... առնելուց հետո

Զավուշը Միրզայի[1] բեռը վար առավ[2] և բաց թողեց սեղերի մեջ արածելու. ինքն էլ եկավ նստեց Ուստայի կողքին, ծուխին մասնակցելով[3]:

Ուստան ծխում էր և սուզված նայում իր շուրջը: Ոսկի թևերը փռած՝ արեգակը բարձրանում էր դեպի երկնքի կամարը. բնությունը լցված էր երիտասարդությամբ. դաշտերը, արտերը խայտում էին մանկական թարմությամբ. թռչունները երգելով՝ թևին էին տալիս՝ աշխույժ ու կայտառ. մողեսները արևկող էին եղել քարերի վրա. ճերմակ թիթեռները սուրում էին[4] կապույտ ծաղիկների շուրջը, որոնք նայում էին արևին. երկրից՝ հողից ու քա-

---

[1] B փիլոսը այնինչ ավանակի *փխ* Զավուշը Միրզայի C Քևրոբը ավանակի *փխ* Զավուշը Միրզայի

[2] BC վայր բերեց *փխ* վար առավ

[3] B ուր դրված էին իրենց հագուստները, գործիքները և ճանապարհի պաշարը, և ավանակին բաց թողեց դալարի մեջ: Եվ ինքը [միացավ ծխողների] ապա նստեց Ուստայի կողքին: + Նրանց այս համեստ ընկերը այնքան էլ հասարակ տեսակից չէր. Ուստան գնել էր նրան բոշաներից, որոնց ասելով, սա սերված էր Մաքվա խանի պալատական ազնիվ ավանակների սրյունից. և իրոք էլ՝ տեսքով նա շատ սիրուն էր, խոշոր ու սպիտակ, իսկ խելքով նմանը չուներ. ջրի պես դյուղերի ճանապարհները գիտեր՝ գիշեր լիներ թե ամպ ու անձրև օր. գիտեր Ուստայի ամեն սանահող ու բարեկամի տունը և նույնիսկ գիտեր, թե Ուստան մի դյուղ մտնելիս ո՞ւմ դուռն էր ուղում իջնել: Եվ նրանք էլ, մանավանդ Փիլոսը, աչքի լույսի պես լավ պահում էին նրան, և երբեք մինչև իսկ չէին բարկանում վրան: [– Էս քարերի մեջ շատ օձեր կան, աչքերդ չորս պահնք,– վախվխելով շուրջը նայելով ասաց մի բադրանցի:] *փխ* և բաց թողեց ... ծուխին մասնակցելով C և ավանակին բաց թողեց [դալարի մեջ] սեղերի մեջ և հետո ինքը նստեց Ուստայի կողքին *փխ* և բաց թողեց ... ծուխին մասնակցելով

[4] D ճախրում էին

ըից, մի ջերմ շնչով գոլորշի էր ելնում ու ճգվում դեպի վեր. նրբին ծուխի նման: Ամենուրեք կյանք կար, անհուն եռուզեռ:

– Շիտակ է ասել իմ Օրթե Հարութիս, թե արար-աշխարք մեկ հավկիթի է արևի տակ թուխս դրած,– կարծես, արևի ու երկրի հետ խոսելով ասաց Ուստան, ապա երապից արթնացածի պես չուռ եկավ դեպի ներկանները[1]:

– Մարդար ջան, տխուր ես երևում, ի՞նչ կա[2],– հարցրեց[3] դիմացը նստած գյուղացուն, որ միշտ լուռ էր, մտամփոփ[4]:

– Է՛հ, Ուստա ջան, մի տարեկան տղաս մեռավ:

– Գլուխդ ողջ ըլնի, նշանածդ ողջ ըլնի[5], բանը էդ է,– մխիթարական ձայնով ասաց Ուստան[6],– կնկա ծոցը լիքը ծաղիկ է, պարպելիք չկա[7]:

– Բերող կնիկը մահին կհաղթե,– միջամտեց Ջավուշը[8]:

– Ուստա ջան,– ծիծաղելով ասաց մի ուրիշ գյուղացի,– Աստված տվել է Մարգարին, չի խնայել, ուժը հատ երևխա ունի[9]:

---

1 BC *չիք* Ուստան ծխում էր ...չուռ եկավ դեպի ներկանները

2 B կերևաս, ինչի *փխ* ես երևում, ի՞նչ կա C կերևաս, ինչո՞ւ *փխ* ես երևում, ի՞նչ կա

3 BC + Ուստան

4 BC *չիք* որ միշտ ... մտամփոփ

5 B լինի

6 B *չիք* մխիթարական ... Ուստան

7 BC + էլի կբերի

8 B *չիք* Բերող ... Ջավուշը C Ջավուշը *փխ* Բերոք ալրարը

9 B + տունը

– Էհ, թո՛ղ ըլնի,– կես հպարտ, կես տխուր պատասխանեց[1] Մարգարը,– մատղաշի մեռնելը ցավ է. ամեն մեկը իր տեղն ունի[2]. Աստծուն փառք:

– Մի խոսքով, երեխա կունենաս՝ ա՛խ, չես ունենա՝ վա՛խ,– վրա բերեց մեկ ուրիշը[3]:

Մի մողես կտրեց անցավ նրանց առջևից[4]:

– Էս քարերի մեջ շատ օձեր կրնա ըլնի. աչքերդ չորս պահեք,– վախվխելով և չուրջը նայելով տխուր խոսքի[5] նյութը փոխեց մի ուրիշը:

– Մի՛ վախեցեք[6],– վստահ ու իրաւխուսելով ասաց Ուստան,– էստեղի օձերն ի՛նչ են որ մարդու վրա իշխնան՝ գան. աչքս որ վրաները գցեմ[7], իրենց բնի ծակն էլ կկորցնեն. ա՛յ, օձեր, սարսափելի մեծ, դերանի պես հաստ օձեր է՛նքան եմ տեսել[8], որ ծառն արմատով են հանում[9],

---

1 BC ասայ

2 C + Էյ աշխարհ, երեխա կունեննաս ա՛խ, չես ուննենա վախ... մի խոսքով

3 BC չիք Մի խոսքով ... մեկ ուրիշը C + – Ինձի նայեք, քեզի չիտակ խոսք կասեմ. առջի կնիկս որ մեռավ, ես քիչ մնայ խելոքեի, աչքի բան արժեք չուներ. օր ու գիշեր ողորմածիկի հետ էի. ինձի էնպես կերևար, թե էլ խնդում չի գալու երեսիս, բայց շատ ժամանակ չանցավ, հիմի էնպես մոռացել եմ, որ աչքերս կփակեմ, կուզեմ էնոր երեսը միտքս բերեմ, չի ըլնի, էնպես մոռացել եմ: Դու էլ մարդ ես ինձի պես, կմոռանաս. մարդը ամեն բան կմոռանա... – Աչխարհը անցողայ է. ամեն բան անցավոր է...

4 BC չիք Մի մողես ... նրանց առջևից

5 B խոսքի տխուր *փխ* տխուր խոսքի

6 BC վախեցեք

7 BCD քցեմ

8 BC + որ ձիավորին ձեռայ վար կրնրեն

9 BC կհաննեն

որ ֆշշալով մարդու վրա են գալում[1], ասես թե՝ վիշապ քամի ըլին[2]. ահն ու դողը մարդու[3] ծուծն է ընկնում[4]...

– Ուստա՛ ջան, էդ ո՞րտեղաններն[5] ես տեսել էդ օձերը,– հարցրեց մեկը:

– Ո՞նց թե որտեղաննեը[6],– վիրավորված կրկնեց Ուստան գյուղացու անմեղ հարցը. վիրավորված, որ դեռևս գյուղերում մարդիկ էին գտնվում[7], որ չէին իմանում, թե Ուստան աշխարհներ է ոտքի տակ տվել:

– Ի՛նչ տղա-տղա խոսում ես[8],– բարկացած մեջ մտավ Փիլոսը[9] կտրելով վարպետի[10] խոսքը[11] և աչքերը[12] սևեռելով գյուղացու վրա. զարմանում էր, որ[13] աշխարհաժուռ վարպետը ի՞նչ չի տեսել, որ այդ էլ տեսած չլինի[14]:

Հարց տվողը իրեն մեղավոր զգալով գլուխը կախեց[15]:

---

1 BC կուգան

2 B ըլնին C ըլնի

3 BC + ոսկորների

4 BC կընկնի

5 B ո՞րտեղ

6 B որտեղ

7 B կգտնվին

8 BC կխոսես

9 B Փիլոս աղբարը C Քերոբը

10 C Ուստայի

11 B չխք կտրելով վարպետի խոսքը

12 B աչքը

13 D + իր

14 B Ուստան աշխարքի մի ծերն մտել մեկելն դուրս է եկել, ի՞նչ չէ տեսել, որ էդ տեսած չըլնի *փխ* զարմանում էր ... չլինի C (Ուստան աշխարքի մեկ ծերն մտել մեկել ծերն դուրս է եկել, ի՞նչ չի տեսել, որ էդ տեսած չըլնի *փխ* զարմանում էր ... չլինի

15 B + [և քարի կողքին բուսած մի սեղ [կտրեց] պոկեց]

– Ես գիտեի[1], որ Ուստան չա՛տ տեղեր է եղել. մենակ[2] ի՞նչ գիտնամ[3], թե էդ տեղերը էդքան օձեր կան եղեր[4]:

– Որ չգիտեն, Փիլոս ջան, ի՞նչ մեղդնես,– փափկությամբ[5] միջամտեց Ուստան,– օձի խոսք եղավ ու միտքս ընկավ[6] Շամի օձերը:

Առհասարակ, երբ առիթը գալիս էր[7], Ուստայի միտքն էր ընկնում իրեն գլխով եկած մի պատշաճ[8] դեպք, որ պատահած է եղել[9] երբևէ իր ճանապարհորդությունների ընթացքում, ու սովորույթ ուներ պատմել այդ պատշաճ դեպքը[10]:

Եվ Ուստայի[11] չնորհքը այդտեղ էր երևում, որ համարյա միշտ, երբ խոսք էր բացվում մի բանի մասին[12], իսկույն կարողանում էր օգտվել իր հարուստ փորձառությունից և պատմել տեղին իրեն պատահած դեպքերն ու արկածները, կամ նմանօրինակ «լսողաց» դեպքերն ու արկածները[13]:

---

1 B գիտեմ

2 B բայց

3 B գիտեմ C գիտենամ

4 BCD եղել

5 B Համեստ ձայնով C *չիք*

6 B + [Հաքաչու]

7 C առիթ էր գալիս *փխ* առիթը գալիս էր

8 C պատշաճի

9 C *չիք*

10 C *չիք* այդ պատշաճ դեպքը

11 C [գարմանալի] [հարուստ փորձառությունը]

12 C + Ուստան

13 B *չիք* Առհասարակ, երբ ... դեպքերն ու արկածները C [դրանով առիթներ էին առեղծվում իրեն պատահած դեպքերն ու արկածները հիշեցնելու] *փխ* իսկույն կարողանում էր ... դեպքերն ու արկածները

– Էդ տեղերը, որ ման էի գալում[1],– հարեց[2] Ուստան[3],– ամեն անցուդարձիս պատահում էի[4] էդ ահռիկ օձերին. է՛նպես օձեր, է՛նպես օձեր: Շամի[5] հողը մեր Արազից մեծ մի ջուր կա, անունը, անունը... լեզվիս վրա է[6], հա՛, միտքս չի գալում[7]. հենց լեզվիս ծերին է[8]... Զավուշ[9] ջան, քեզի չա՛տ եմ պատմել էդ ջրի մասին, միտքդ չե՞ս պահել, ի՞նչ է:

– Գիտցածովս[10], Զոռ-սու անունն էիր տալում[11], վարպետ[12],– օգնության հասավ Զավուշը[13]:

– Հա՛, ապրի՛ս, ապրի՛ս, Զոռ-սու, մեծ ու խորունկ ջուր. օձերը էդ գետի վրայից թռչունի պես էին թռնում[14] ու քարվանիս վրա տալում[15]. բայց վախեցողն ո՞վ էր, թե որ[16] գալում էին[17] քարվանիս առջևը[18] խմբով կտրում[19],

---

1 B էդ աշխարքով որ անց ու դարձ կունենայի *փխ* էդ տեղերը որ ման էի գալում C ման կուգայի *փխ* ման էի գալում

2 C չարունակեց

3 B *չիք* հարեց Ուստան

4 B միշտ կպատահեի *փխ* ամեն ... պատահում էի C կպատահեի

5 B Հարաշու

6 B *չիք* լեզվիս վրա է

7 BC դա

8 B *չիք* հենց ... ծերին է

9 B Փիլոս C Քերոր

10 B ես կըսեմ C ես կասեմ

11 BC կուտայիր

12 BC Ուստա ջան

13 BC *չիք* օգնության հասավ Զավուշը

14 BC կթռնեին

15 BC վրա կուտային քարվանիս *փխ* քարվանիս վրա տալում

16 BC օրթե

17 BC կուգային

18 BC առաջը

19 BC կկտրեին

Հանում էի[1] չոնգուրս[2] ու հնջաղին ածում[3]. հնջաղին որ իմանում էին[4], բոլորը գումար[5] բերանները բաց, աֆսոնած կանգնում[6] մնում էին[7]... ես էլ դրանց վրայից[8] քշում էի քարվանս, անցնում-երթում[9]... Բա՛, էդպիսի բաներ[10]. բա՛, դրանց[11] կռիվը, տեսնելու բան էր. զարմանալի՛, զարմանալի՛[12]...

Անցած-գնացած դեպքերի վրա զարմանքով գլուխը տարուբերեց Ուստան[13]:

Գյուղացիների հնքիաթական երևակայությունը վառվեց:

— Պա՛հ օ՛հ, Ուստա ջան, պատմի՛ տեսնենք[14], Ուստա ջան, գով[15] ճամփա է, խոսելով[16], խոսելով կկարճնա[17],— թախանձեցին[18] զարմացած գյուղացիները:

---

1 BC կհանեի

2 D չոնգուռս

3 B կղարկեի հնջազին *փխ* հնջաղին ածում C կածեի

4 BC կիմանային

5 BC *չիք*

6 D կանգնել

7 BC կանգնել-կլսեին *փխ* կանգնում մնում էին

8 BC էնոնց վրայեն *փխ* դրանց վրայից

9 BC քարվանս կքշեի կերթայի *փխ* քշում էի ... անցնում-երթում

10 B + էդպեսի տեղե՛ր...

11 C էդոնց

12 B *չիք* տեսնելու բան էր ... զարմանալի՛...

13 C + [հենց սաես հիմա զարմանալիս լիներ]

14 BC + էդ տեղերի վրա

15 BC գով

16 B *չիք*

17 BC խոսելով հնչա տեղ կհասնինք *փխ* խոսելով կկարճնա D կկարճընա

18 BC խնդրեցին

– Լավ,– համաձայնեց Ուստան,– քանի որ խոսք ե-ղավ[1], պատմեմ էդ կռիվը:

Բոլորը ոտքի ելան ու քայլ առան, Ուստան մեջերը. սա էլ[2] մի վայրկյան ունքերը իրար բերեց՝ մտքերն հա-վաքելու համար ու սկսեց.–

– Էդ[3] տարին Շամ[4] էի. մեկ[5] քարվանսարի մեջ քնած. մեկ էլ կես-գիշերին էնպես ձեն ու սլսլոց, ճիչ ու ճչոց լսվեց, որ բոլոր ճամբորդները զարթնան վախեցած: Ա-սինք իրարու[6] «Էս կամ Սպահանի սարերից[7] վիշապ քա-մին է պրծել ու անտառները պոկելով գալում է[8], կամ[9] Զոռ-սուն է, որ հեղեղից[10] կատաղած[11] գեղերը սրբելով ծո-վերն է երթում[12]: Ելանք մոտիկ մեկ քար-ապառաժի[13] գլու-խը. ի՜նչ տեսնենք՝ աստղերի պես գետինը փայլփլում[14] է[15]

---

1 C + ես

2 B – Հերիք նստանք, վեր ելք,– ոտքի կանգնելով ասաց Ուստան, ես ձեղի, բան որ խոսքը օձերի վրա է, պատմեմ էնոնց կռիվը: / Եվ քանի որ գյուղացիք խնդրեցին ու առիթը բացվեց Ուստի համար պատմելու իր զարմանալի ճանապարհորդությունների արկածնե-րից – Ուստան *ին* – Լավ,– համաձայնեց ... սա էլ

3 BC Պատմությանս

4 B Հարաշ

5 B *չիք*

6 BC *չիք*

7 BC սարերեն

8 BC կուգա

9 BC + թե

10 BC հեղեղեն

11 B կատղել

12 BC ծովերը կերթա *ին* ծովերն է երթում

13 BC քարափի

14 D փալփլում

15 BC կփայլփլի

ու պսպղում[1] և չարժվում[2] դեպի Հաբաչու սարերը: Մնացինք չվարած-կանդնած մինչի ադամամուրթը[3]. չատերը վախու[4] ետ դառան քարվանսարան. մնացինք ես ու երեք կարիճ տղա: Էն ժամին, երբ որ մարդ կրնա սև թելը ճերմակ թելից զատել[5], արմանք-զարմանք բան տեսանք[6], որ հիմի էլ միտքս է գալում, մազերս ցից են կանգնում[7]: Ի՛նչ ասեմ, որ հասկանաք, երկու[8] արտի երկանքին[9] ճամփա լիքը[10], լիքը օձերով, իրար վրա, խոխոտալու տեղ չկա[11].— գույն-գույն, սև, ճերմակ[12], նշխուն, կարմիր, կապուտ, դեղին, կանաչ[13], մեծ ու խոշոր, վազող ու թռչող օձե՛ր-օձե՛ր[14]. մեկ[15] ծերը հասել էր Ջոռ-սուի[16] քարքարոտ դուրաններըը, մեկէլ ծերը, ինչպես ասում էին[17] տեսնող-

---

1 BC կպսպղա

2 BC կչարժի

3 B լույս + [աղոթրանին տեսանք] C լույս

4 BC *չիք*

5 BC աղոթրանին *փխ* էն ժամին ... զատել

6 BC տեսանք արմանք-զարմանք բան *փխ* արմանք-զարմանք բան տեսանք

7 BC որ միտքս կըներմ մազերս ցից կկանդնին *փխ* որ հիմի էլ ... կանդնում

8 BC մի

9 BC երկայնքին

10 B ամենքը

11 B *չիք* իրար վրա ... տեղ չկա

12 B սպիտակ

13 BCD կանանչ

14 BC *չիք*

15 BC մի

16 B [Սպահանի]

17 B կըսեին C կասեին

նները, նոր էր դուրս պրծել Սպահանի սարերից[1]. զարդանդ ֆշշալով, չորս դի թույն ու[2] աղու փսխելով[3], արտերը տափնելով գալում էին ու գալում էին, դիզվում էին ու ծովանում[4] Զոռ-սուլի փեշերի վրա: Մեկ էլ տեսանք, Հաբաշու սարերից, քարերից ու ծերպերից, այրերից ու քերծերից[5] կրակի աչքերով, լեզուները բոց նետերի[6] պես ցցած, քամուց զիլ թռնելով՝ կատղած, կայծակ դառած[7] Թափվան Հաբաշու օձերը, ես ասեմ հեղեղի պես, դու ասա կարկուտի պես՝ անծեր, անտուտ, անթիվ եկան, եկան, Զոռ-սուն Թռան[8] և Թափվան[9] Սպահանի օձերի վրա.— մեկ[10] իրարանցո՛ւմ, մեկ[11] իրարանցո՛ւմ[12].— տեսնելու բան էր. լեզվով[13] ասել չի ըլնի[14]...

Եվ Ուստան ընդհատեց խոսքը[15]. մի վայրկյան կանգնեց, ձեռքերը առաջ տարածեց և աչքերը սարսափից մեծ-

---

1 B Սպահանի սարերեն նոր էր դուրս պրծել *փխ* նոր էր ... սարերից C սարերեն

2 B *չիք* թույն ու

3 BC վռնելով

4 BC կուզային ու կուզային, կղիզվեին ու կծովանային *փխ* գալում էին ... ծովանում

5 BC սարերեն, քարերեն ու ծերպերեն, այրերեն ու քերծերեն *փխ* սարերից ... քերծերից

6 B աստղերի

7 BC դարձած

8 BC + թռան ու

9 BC + թափվան

10 BC մի

11 BC մի

12 B + կարկուտի պես խշխշոց

13 C + [խոսքով ու] լեզվով B *չիք*

14 B լինի

15 B *չիք*

մեծ բացեց ու քարացավ, ասես, հենց հիմա, իրապես[1], աչքերի առջև կատարվում էր այդ ահավոր դեպքը, որ նա տեսել էր[2] գոնե մի տասը տարի առաջ:

Ունկնդիրները համակված նրա սարսափից՝ լուռ կանգնել էին փշաքաղված:

— Հա՛, մեկ էլ են տեսա,— շարունակեց[3],— Հաբաչու օձերի թագավորը մեկ[4] հաստ ու երկեն, ոսկեղեն օձ՝ ալմաստի ու յաղութի[5] թագը գլխին թռավ Սպահանի օձերի թագավորի վրա[6], իրար փաթաթված[7], ծառս ելան, զարկին իրար գետին, քարեքար[8], էլի կանգնան, էլի զարկին. մնացած հազար-հազար օձերն էլ նրանց[9] նման իրար փաթաթված[10], լեզուները հանած շչում էին ու ճչում[11]. հողն ու փոշին էլել[12] ամպերի[13] պես դիզվել էր կռվողների վրա: Մեկ էլ են տեսանք, Սպահանի օձերը ետ-ետ դառան, գլուխ կորցրած, փախս տվին... Հաբաչու օձերը քշին[14] փախչողների ետևից[15] մինչև[16]

---

1 B + նրա
2 B + [մի քանի տարի առաջ]
3 B + Ուստան որ C + Ուստան
4 BC մի
5 B յաղութեն
6 BC վրեն
7 BC հետ շուլլվան
8 B *չիք*
9 BC էնոնց D + նմին
10 BC հետ փաթաթվան
11 C կշչային ու կճչային *փխ* շչում էին ու ճչում
12 D ելել
13 BC ամալի
14 BC + վրա տվին
15 BC ետևեն
16 BC մինչի

Շամի[1] հողից[2] դուրս. ու հետո[3] իրանք ուրախ-ուրախ դաշտերի վրա[4] սլսլանց եկան գնացին[5] իրենց աչխարքը[6]: Էդ կռվի ժամանակ ոչ մեկ[7] մարդու կամ անասնի իսկի վնաս չհասավ[8]. գնացինք կռվի տեղը[9]. համրանքին համրանք կար, սատկած օձերին[10] համրանք չկար... Տղամարդ կտրիճ օձեր էին Հաբաչու օձերը...

Ուստան ավարտեց[11] իր ականատեսի պատմությունը, և իր սովորության համաձայն մեկ-մեկ նայեց ներկաների[12] երեսներին՝ տեսնելու համար, թե ի՛նչ տպավորություն է թողել:

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ի՛նչ կռիվ է եղել. իսկի ռուսն ու օսմանլին էդպես չեն կռվել,— ուշքի եկած ասացին գյուղացիները[13]:

Ուստան ինքնաբավական[14] ընչացքը[15] ոլորելով՝ չուխան[16] հանեց ու ձգեց ուսին[17]: Բազրանցիներից[18] մեկը ասաց.

---

1 B իրենց
2 BC Հողեն
3 BC եաև
4 B վրայով
5 B չիք
6 B բնները
7 BC մի
8 B չեղավ
9 B + տեսանք
10 B օձերուն
11 BC վերջացրեց
12 BC ունկնդիրների
13 B ասաց նրանցից մեկը C գյուղացիք
14 B + նայեց նրանց երեսին ու
15 BC բնները
16 BC չուխան
17 B + [ուսերի վրա] ուսին C ուսերին
18 C գյուղացիներից

– Իմ ողորմածիկ հերս էլ տեսել է Մասըսա օձերի կռիվը կավկավու օձերի հետ, բայց էդպես զորավորը չի տեսել:

Գյուղացիներից մեկը, որ ամենից խեղճն էր, թե պատմությունից զրգռված, թե արևից տաքացած, իր ցնցոտիի օձիքը բացեց՝ ասելով.

– Տո՛, արևը մինչի ծուծս խարկեց:

Շիտակ է[1], «արևը աղքատի կապան է» – մտքի մեջ խոսեց Ուստան, նայելով նրան՝ չուզենալով բարձրաձայն ասել՝ չվիրավորելու համար չունևոր ուղեկցին[2]:

Նրանց հանդեպ[3] մի խումբ քրդեր եկան[4] բարձած եզներով. մի եզան վրա ճգած կար մի չվալե պարկ[5], որի մի աչքում դրած կար[6] մի[7] երեխա, մյուս աչքում մի մեծ քար, հավասարակշիռի համար:

– Մար հաբա[8],– ասացին քրդերը:

– Մար հաբա[9],–պատասխանեցին հայերը[10]:

Երբ քրդերը մի փոքր տեղ անցան, Ջավուշը[11] դարձավ[12] ուղեկիցներին[13].–

---

1 D *չիք* Շիտակ է

2 BC *չիք* Գյուղացիներից մեկը ... չունևոր ուղեկցին:

3 B + ճանապարհով C + [ճանապարհով]

4 BC էին գալիս

5 BC խուրջին

6 BC էր

7 BC + քուրդ

8 C Սալամ ալեքյում *փխ* Մար հաբա

9 C Ալեքյումի սալամ *փխ* Մար հաբա

10 B – Սալամ ալեքյում, ասին Ուստան և իր ընկերները: / – Ալեքյումի սալամ, պատասխանեցին քրդերը: *փխ* Մար հաբա ... պատասխանեցին հայերը:

11 B Ուստան C [Ուստան] Քերոբը

12 C + իր

13 B Փիլոսին

– Տեսա՞ք քրդերի խելքը. քար էր դրած պարկի[1] մեջ:

– Դրանց[2] խելքը ես նո՞ր գիտեմ,– բոլորի կողմից[3] պատասխանեց Ուստան[4].– երկու հավի կուտ տալ չգիտեն: Դրանց[5] խելքը հաստգլուխ սոխի մեջն է. կանգնեք, միտքս մի բան ընկավ[6]: Մեկ[7] անգամ երեք քուրդ անցնում են[8] մեկ[9] հայ գեղի[10] հողերով. տեսնում են[11], որ հայերը ցանքս են անում[12]:– «Ես զարմանում եմ[13],– ասում է[14] մեկը,– հայերը ի՛նչ խելք են անում, որ ցորեն են ցանում, ցորեն են քաղում[15]. օգուտներն ի՞նչ է»:– «Դեռ հայերին էլ խելոք մարդ են հաշվում[16], ես դրանց[17] խելքին հավան չեմ»,– ասում է[18] մեկել քուրդը:– «Սխալ եք, տղերք,– վրա է բերում[19] մյուս քուրդը, որ նրանց[20] գա-

---

1 BC խուրջինի
2 BC Էդոնց
3 C չիք բոլորի կողմից
4 B չիք բոլորի ... Ուստան
5 BC Էդոնց
6 C + Էդոնց խելքի մասին
7 C մի
8 C կանցնին
9 C մի
10 C գյուղի
11 C կտեսնեն
12 C կանեն
13 C կզարմանամ
14 C կասե + քրդի
15 C կանեն, որ ցորեն կցանեն, ցորեն կքաղեն *փխ* անում ... քաղում
16 C կհաշվին
17 C Էդոնց
18 C կըսե
19 C կբերե
20 C Էնոնց

վառագիտունն է[1] եղել,– հայերը[2] ցորեն են ցանում[3] հարդ[4] ստանալու համար. օգուտը՝ հարդն է[5]»:

– Ի՛նչ ծիծաղ բան, հա՛, հա՛, հա՛,– հրհռացին բոլորը[6]:

– Մենակ ի՛նչ եք ասում[7], որ դրանք[8] չա՛տ սիրուն հարսներ ունին,– ընդհատեց նրանց ծիծաղը Ուստան,– երկնվիզ, կռնկաչք[9]...

– Էդպես է, տանձի լավերը[10] սարի արջերն են ուտում,– կարմրելով խոսք նետեց[11] Ջավուշը[12] մեղմ ժպտալով վարպետի աչքերին:

– Դուն էլ լավ ասիր, Ջավուշ[13] ջան,– կնքեց խոսակցությունը Ուստան[14]:

Նրանց միացավ մի դյուղացի, որ գալիս էր նոր հիմնած կնտո գյուղից:

---

1 C գավռագիտունի անուն է [հանած] ունեցած *փխ* գավառագիտունն է

2 C էնոնք

3 C կցաննն

4 C գարման

5 C գարմաննն է

6 B *չիք* կանգնանք, միտքս մի բան ընկավ ... հրհռացին բոլորը

7 B Բայց ի՞նչ կըսես *փխ* Մենակ ի՛նչ եք ասում C Բայց ինչ կասնք *փխ* Մենակ ի՛նչ եք ասում

8 BC որ էդոնք

9 B երկնվիզ, կռնկաչք,– կարծես քրդերին արդարացնելու համար Ուստան այս ասաց *փխ* ընդհատեց նրանց ... կռնկաչք

10 BC լավը

11 BC պատասխանեց *փխ* կարմրելով խոսք նետեց

12 B Փիլոսը C Քերոբը

13 B Փիլոս C Քերոբ

14 B չիք կնքեց ... Ուստան D *չիք* Նրանց հանդիպ ... խոսակցությունը Ուստան:

Բարևեց Ուստային և մյուս բոլորին:

— Պողոս չան, ի՞նչ կա ձեր դեղը:

— Առողջություն, Ուստա չան, չա՛տ լավ ենք. քո ձեռքդ կանաչ[1] ըլնի. չինածդ բանդը մեզ լիացրեց ու անցավ:

Ուստան անհո՛ւն ուրախացավ. ինքն էր այդ անջուր գյուղի համար ձորում ամբարտակ կապել, ուր հավաքվում էին[2] անձրևի ջրերը[3] և տավարը հագեցնում էր ծարավը, իսկ բնակիչները ուրիշ գյուղից էին տակառներով խմելու ջուրը տանում:

— Լսել ենք, որ լավ այդի ունիք, լավ տուն ու տեղ. բայց ժամ չունիք. տո՛, առանց ժամի ինչպե՞ս եք ապրում,— չար-քմծիծաղելով հարցրեց բազրանցու մեկը:

— Ոնցոր քաղաքացիք են ապրում առանց ժամի, մենք էլ էդ օրինակ.— լրջորեն պատասխանեց կնտոցին:

Բոլորը զվարթ խնդացին այս կատակի վրա: Ուստային չա՛տ հաճելի եկավ նրա սուր խոսքը և, իբրև նշան իր հաճույքյան, իր ձեռքով գլանակ փաթաթեց և տվավ Կնտոյի բնակչին[4]:

Նրանք արդեն Կամսարականների դաշտի մեջտեղն էին, որը բարձր գահի պես իշխում է Ախուրյանի[5] և Կաղզվանի ձորերին[6]: Շատ մոտիկ[7] էր[8] Մրենի հռչակա-

---

1 D կանանչ

2 D էր

3 D ջուրը

4 BC *չիք* Նրանց միացավ մի գյուղացի ... Կնտոյի բնակչին

5 C Սարդարապատի Հարթությյան *փխ* Ախուրյանի

6 C ձորերի վրա

7 C Այդտեղ շատ մոտիկ

8 C երևում էր

վոր տաճարը, որ գմբեթը՝ վեղարի նման[1] դլխին դրած, հազար տարուց ավելի կանգուն էր արևի տակ[2] : Ուստան ամեն[3] տեսնելուն[4] հիացումով ու նախանձով գովում էր նրա կառուցող անհայտ վարպետի հանճարը[5]:

Ձախ կողմը[6] Կամսարականների բերդաբլուրն էր՝ ցրտից ու տապից[7] թրծված փլատակներով:

Կապույտ հեռուներից, հորիզոնների վրա, երևում էր տեսիլի[8] նման մեծ Մասիսի ձյունափառ գագաթը, հանդեպ՝ քղանցքները անծայր փռած, ճերմակ տատիկի պես, Արագածն էր նստել ծալապատիկ, սակայն որի բեղուն կանանչ կողերը ցոլցլում էին արեգդեմ[9]:

---

1 C *չիք* վեղարի նման

2 B Նրանք անցան ավերակ Մրենու առջևից, ուր արևի տակ գմբեթը դլխին կանդնել էր Մրենի հռչակավոր վանքը փխ Նրանք արդեն ... կանգուն էր արևի տակ C կանդնած էր *փխ* Հազար տարուց ... կանգուն էր արևի տակ

3 D + անդամին այդ

4 D տեսնելով

5 BC *չիք* Ուստան ամեն ... վարպետի հանճարը

6 BC դիմացը *փխ* ձախ կողմը

7 D տաքից

8 D գաղափարի

9 B Հորիզոնների կապուտակ ափերից երևում էր հեռավոր հուշերի մեջ կորած երազի նման Մասիսի ձյունափառ գագաթը. դիմացը քղանցքները անծայր փռած Արագածն էր նստել ծալապատիկ. կողքերը զմրուխտին էին տալիս և ցոլցլում: / Բերդի մյուս երեսը գտնվում է Նախչվանը, [դյուղը] «Ուստա Կարոյի աթոռանիստը» [դյուղը], [ինչպես կերուխումի ժամանակ միշտ ասում էին նրա բարեկամները, դյուղական մեծամեծները] *փխ* Կապույտ հեռուներից ... արեգդեմ: C Հորիզոնների կապույտ ափերից նկատվում էր հեռավոր հուշերի մեջ [կորած] երազի նման մեծ Մասիսի ձյունափառ գագաթը. Հանդեպ՝ քղանցքները անծայր փռած Արագածն էր նստել ծալապա-

Ուստան լուռ էր, ընկած մի մտքի ետևից, որ իր ծայրին չհասած խզվեց, որովհետև կեսօրին կուժի եկող ծովածավալ հոտը՝ մայելով, դմակները օրորելով բռնեց ուղևորների առաջը, փոշեղեն ծուխի մեջ թաղելով մարդ ու ճամփա:

Ուստան իր խմբով հաջողեցավ ոչխարներից առաջ գյուղը մտնել:

Ուղեկիցները գյուղի ափին բաժանվեցին[1]*:*

ափիկ. զմրուխտ կողքերը [զմրուխտին էին տալիս] արևին տված, որոնք ցոլցլում էին: *փխ* Կապուչյա Հեռուներից ... արեգդեմ:

1 ВС *չիք* Ուստան լուռ էր ... ափին բաժանվեցին:

<Դ. ԳԼՈՒԽ>

Գ. ԳԼՈՒԽ

ՇԵԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ

[1]Ավանակը քայլերն ուղղեց՝ ակներև աշխուժ<ով> դեպի[2] Շեկոյենց Օսկանի տունը[3]: Ուստան և Ջավուշը[4] գյուղական նեղլիկ փողոցներով՝ ծանր ու մեծ անցնելով, աջ ու ձախ բարև առնելով ու տալով հասան տուն:

Օսկաննենց շները, մեծ ու փոքր, որ պառկել էին չվաքի հովում, նրանց տեսնելով, մի գլուխ վրա տվին, մանավանդ[5]

Համեմատվող քնագրային միավորներ.

A = «Հայրենիք» տնքստը՝ հեղինակային ուղղումներով:

B = ԳԱԹ, ԻՖ, 287ա-II:

C = ԳԱԹ, ԻՖ, 291-II:

D = «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 26-29:

1 BC + կեսօրին, երբ ծովածավալ հոտը մայելով ու դմակները (B *չիք*) օրերելով մոտենում էր գյուղին, [կարծես] (B + ասես) փոչեղեն ծխի մեջ կորած, Ուստան (B + [ընկեր...]) էլ մտավ գյուղ: (B + խելացի)

2 BC *չիք* ակներև աշխուժով դեպի D *չիք*

3 B + և Ուստայի այվանը միաժամանակ, ուրախադին երազելով հանդստություն, ջուր և խոտ: / Բադրանցիք բաժանվեցին: C + և Ուստայի այվանը միաժամանակ: Բադրանցիք բաժանվեցին:

4 BD Փիլոսը C Գևորըը

5 C *չիք*

Միրզային[1]*: Մեկն անցավ նրա*[2] *փորի տակով, մյուսը դունչն ի վեր մագլցեց, մյուսը պոչը քաշեց. մի այսպիսի*[3] *զվարթ ողջագուրում. ապա Միրզան թողած՝ բոլորով մեսին ավելի եռանդով*[4] *թափվեցին Ուստայի և Ջավուշի վրա, նրանց փեշերը քաշքշելով: Ուստան ուղղակի*[5] *հազիվ էր կարողանում քայլերն այնպես փոխել, որ կամ վար չընկներ, կամ սիրազեղ*[6] *շների թաթիկները չկոխեր: Շներից մեկը կանգնեց եւևի երկու ոտների վրա ու առաջի երկու ոտները հասցրեց դրեց Ուստայի ուսերին և սկսեց լիզել նրա*[7] *ծնոտի դեղձի փոսիկը*[8]*:*

— Տո՛, էս անգին[9] *շները մարդու պես կարոտ են քաշում*[10]*,— ասաց*[11] *Ուստան*[12] *քնքշորեն շոյելով լիզող շան գլուխը, ազատելով ծնոտը նրա գուրգուրանքից*[13]*:*

Ապա աչքի պոչով նայելով իր օթևանի[14] *(այվան)*[15] *կարմիր դռանը, որի ճակատին, վերև, իշխում էր*[16] *խոյի*

---

1 B + [խանախանային]

2 B *չիք*

3 B *չիք*

4 BC նույն աշխույժով ու կարոտով (B եռանդով) *փխ* Միրզան թողած ... ավելի եռանդով

5 BC Ուղղակի Ուստան *փխ* Ուստան ուղղակի

6 BC հավատարիմ

7 C Ուստայի

8 B *չիք* Շներից մեկը ... դեղձի փոսիկը

9 B + [աղիղ]

10 BC կքաշեն

11 BC ասավ

12 B Ուստան

13 B շոյելով մեկի ու մյուսի գլուխը *փխ* քնքշորեն շոյելով ... գուրգուրանքից

14 BC այվանի

15 BC *չիք*

16 B փայլում էր

ահագին դլուխը ոլորուն եղջյուրներով, ներս մտավ սրահը, այնտեղից[1] թոնրատունը. իսկ Զավուշը[2] ավանակի առջև բացեց դոմի դուռը:

Թոնրատան չեմքից Ուստան ուրախ-ուրախ ձայն տվեց.

– Բարով ձեզ[3], Եղսո քուրիկ, բարով հարս, ա՛յ սիրուն մատղաշներս, մոտս եկեք[4], ի՞նչպես եք, լա՞վ եք,– դիմելով թոնրի չուրջը հավաքված[5] երեխաներին[6]:

Օսկաննոց ամբողջ ընտանիքը մեծ ու պստիկով ժողովվել էր[7] թոնրի բոլորքը[8]. կրակի վրա դրված էին կերակուրի[9] կաթսաներ. երեխաները մեկ-մեկ չամիուր ձեռներին, թոք ու փայծախ շարած՝ սըպզել էին կաթսաների ետևը՝ չամիուրները կրակին բռնած[10]:

Օսկանի կինը, Եղսոն, տանտիրուհին, ծիծաղն աչքերի մեջ ընդառաջ եկավ Ուստային, և թաց չերեփը աջ ձեռքից ձախին տալով, բարևորվեց Ուստայի հետ.

– Բարով, Ուստա ջան, բարով եկար:

Տանտիրուհի Եղսոն թեև դեռ երիտասարդ էր տարիքով, բայց ընտանեկան հոգսերն[11] ու ամենօրյա անդադար աշխատանքը ժամանակից առաջ[12] ծերուիյան նա-

---

1 B *չիք* սրահը, թոնրատունը

2 BD Փիլոսը C Քերոբը

3 BCD քեզ

4 BCD *չիք* մոտս եկեք

5 C *չիք* թոնրի չուրջ հավաքված

6 B *չիք* դիմելով ... երեխաներին

7 B հավաքված էր C հավաքված էին

8 BC չուրջը

9 B *չիք*

10 B *չիք* չամիուրները ... բռնած

11 D հոգերն

12 BC չուտ

խանչանները ձգել էին նրա դեմքի[1] վրա[2]: Սակայն մի դրավիչ կրակով փայլող սև ու խոշոր աչքերից երևում էր, որ[3] գեղեցիկ է եղել աղջնակ[4] օրերում:

Միաժամանակ մոտենալով Ուստայի ձեռքը համբուրեց մի մանկամարդ հարս, Օսկանի եղբոր, Հովսեփի[5] կինը, որ հարսնություն էր անում Ուստայի առաջ, բնավ չէր խոսում հետը, ինչպես թե մեծ տագրը կամ կեսրարը լիներ[6]: Ուստայի հարցերին պատասխանում էր նա գլխի ու ձեռքի նշաններով կամ երեխաների միջոցով[7]: Մինչ այդ[8], երեխաները թվով հինգ հոգի, աղմկով ու ծիծաղով, կախ էին ընկել Ուստայի թևերից[9]. մեկը քաշում էր նրա կարմիր թաշկինակը, մյուսը ջանում էր ձեռքը նրա արխալուղի գրպանը մտցնել:

– Ուստա ջան, մեզի ի՞նչ ես բերել Բագրանից, ի՞նչ ես բերել, Ուստա ջան[10]:

– Հա, մատաղ եմ ձեզի, չա՛տ բան եմ բերել,– ասաց Ուստան մեկ-մեկ համբուրելով երեխաներին,– փչատ եմ բերել, չամիչ, կակալ. Միրզայի[11] վրա է[12]:

---

1 B թառամած երեսի *փխ* նրա դեմքի

2 B + մեջքը մի քիչ կորացած էր, ձեռները չոր ու ոսկրոտ

3 B + նա

4 BCD աղջկնակ

5 BC Հոսեփի

6 C որը Ուստայից հարսնություն էր անում ու բնավ չէր խոսում հետը, ինչպես մեծ տագրի կամ կեսրայրի *փխ* որ հարսնություն ... լիներ

7 B *չ/ք* որ հարսնություն ... երեխաների միջոցով

8 BC Այնինչ

9 B ձեռքերից

10 BC *չ/ք* Ուստա ջան

11 B խանախանի

12 B + Փիլոս աղբարը դոմը տարավ

Նրանք Ուստայի դրկից ուրախ ճիչերով Թռան դեպի գոմը[1]:

– Ուստաս առանց արմաղանի[2] տուն չի գալում[3], երեխեքը գեչ են սորվել,– ժպտալով ասաց Եղսոն և այունի տակ կարպետ[4] փռելով դիմեց նրան:

– [5]Անոթի[6] կըլնիս, նստի, խաչլամա հանեմ Փիլոս[7] ախպորս հետ կեր:

– Հա, Աստված է վկա, անոթի ենք, բայց դեռ[8] մեկ ասա, էս ի՞նչ բան է, էսօր մորթ ունինք[9]:

– Գյումրեցի հաց առնողներն են եկել. Օսկանը հաց ծախեց վրանները. իրիկվա ճաչ եմ չինում[10]:

Մեծ չերեփը խառնելով կաթսայի մեջ լավ կտոր էր որոնում Եղսոն, երբ թոնրի մոտ սուտ-քուն մտած կատուն վրա տվեց ոչխարի ոտները[11] փախցնելու, սակայն աչքաբաց տանտիրուհին[12] վայրկենաբար տաք-տաք չերեփը հանեց և տո՛ւր թե կտաս կատվի դունչին[13], որը մլավելով

---

1 B դուրս թռան *փխ* թռան դեպի գոմը

2 BC նվերների

3 BC դա

4 B + բարձը

5 B + Ես կըսեմ C + Ես կասեմ

6 B դադրած ու անոթի

7 C Քերոբ

8 B Հլա

9 B + էն էլ ոչխար: / Ուստան Օսկանի տունը, որ իրան տուն էր համարում, և դրա համար էր ամեն իրավունքով հարց տալիս «իր կամ իրանց տան» անցուդարձի մասին:

10 B ճաշի է կանչել *փխ* ճաշ եմ չինում C կչինեմ

11 B ոտքերը

12 B տնտես Եղսոն CD տնտեսուհին

13 B դնչին

փախավ ծալքի տակ. ապա[1] գոգնոցով սրբեց չերեփը և նորից սուզեց կաթսայի մեջ[2]:

Թոնրատունը[3] – բնակարանի կենտրոնական մասը – բարձրանում էր չորս մեծ ու հաստ գերանե[4] սյուների վրա՝ գմբեթաձև առաստաղով[5]. տանը, ուղիղ մեջտեղը, գետնի մեջ[6] ահագին թոնիրն էր խորանում, որի[7] վերև, գմբեթի գագաթում[8], երդիկն էր[9] բացված[10] լույսի ու ծուխի[11] համար: Սյուների չուրջը փաթաթած էին գութանի հաստ ու բարակ չղթաները. սյուներից[12] մի երկուսի վրա կային ճրագթաթեր, որոնց վրա հանգչում էին հիստ փոքր ճրագամանները. մյուսներից կախված էին գդլոցները[13] մանր ու խոշոր գդալներով լեցուն: Ծխից սևացած առիքի[14] այս ու այն գերանից կախված էին գերանդիներ, մանգաղներ, փոցխ, հորսելի և այլ գյուղատնտեսական գործիքներ[15]:

---

1 CD այնինչ + եղսոն

2 B *չիք* ապա գոգնոցով ... կաթսայի մեջ

3 B + ամբողջ

4 CD փայտե

5 B գմբեթաձև առաստաղով չորս մեծ ու հաստ փայտե սյուների վրա փխ չորս մեծ ... սյուների վրա

6 B նրանց մեջտեղը *փխ* տանը, ուղիղ ... գետնի մեջ

7 B + ուղիղ

8 B գագաթին

9 B + երկնքի կապույտ մի կտորով

10 B *չիք*

11 B ծխի

12 C *չիք*

13 C գդլոցները D գդլոցներ

14 CD առիքից

15 B *չիք* Սյուների չուրջը փաթաթված էին ... գյուղատնտեսական գործիքներ

Թոնրատան հարավային և հյուսիսային պատերի կողմը դռներ էին բացվում դեպի մառանն ու մյուս սենյակները. արևմտյան կողմը ընդհանուր մուտքն էր, իսկ արևելքում[1] մի կամարակապ խորշ էր բացվում, եկեղեցու սեղանի պես մի-երկու ոտք սանդուղքով[2]. այնտեղ թաղած կար մի փոքր թոնիր, իսկ պատի մեջ՝ Ուստայի հմուտ[3] ձեռքով չինած մի գեղեցիկ[4] օճախ[5]:

Տան մի անկյունում ահագին ծալքն էր բազմաթիվ անկողիններով[6], վերմակներով[7], բարձերով՝ ծածկված մի նշխուն կարպետով, իսկ[8] մյուս անկյունում դորգերի[9] ու կարպետների ծալքն էր. խսիրները ոլորած՝ դրված էին այս ու այն կողմը:

Ծալքերից ու դռներից աղատ մնացած պատերի տակ թմբիկների վրա կլոր ու կարմիր[10] փորերով շարվել էին կողք-կողքի տված[11] նշխուն կճուճներն ու կարասները[12]

---

1 В արևելյան կողմում

2 В *չիք* մի-երկու ոտք սանդուղքով

3 ВС վարպետ

4 ВС *չիք*

5 В + Սյուների շուրջը վաթսաթած էին դուքանի հաստ ու բարակ չղթաները. սյուներից մի երկուսի վրա կային ճրագաթաթները, որոնց վրա հիստո փոքր ճրագներն էին հանդչում. մյուսների վրա դղյոցները մանր ու խոշոր գդալներով լեցուն: Ծխից սևացած առիքի այս ու այն գերաններից կախված էին գերանդիներ ու մանգաղներ, փոցխ, և այլ գյուղատնտեսական պարզ գործիքներ:

6 ВС *չիք*

7 ВС + դոշակներով ու

8 В *չիք* ծածկված մի ... կարպետով, իսկ

9 В խալիների

10 В կարմիր ու կլոր *փխ* կլոր ու կարմիր

11 В *չիք* կողք-կողքի տված

12 В կարասներն ու կճուճները *փխ* կճուճներն ու կարասները

յուղի, պանրի, բրնձի, աղի և թթու դրած բանջարեղեննե-րի, խուրմը բերաններին:

Նրանց վերև ձգվում էին դարակները գույն-գույն փայլուն սաքսոններով և նկարազարդ ափսեներով, որոնց խորքերից[1] ամենից շատ աչքի էին ընկնում կարմրակա-տար աքլորների պատկերները[2]:

Մինչ Օսկանի եղբոր կինը[3] դնչկալը բերնին, երկայն թարթիչներով, նշաձև սիրուն աչքերը վար[4] ձգած՝ հա-մեստ շարժուձևերով սեղան էր հարդարում[5] Ուստայի առջևը — ներս մտան Ջավուշն[6] ու Օսկանը:

Օսկանը մի երկու տարով Ուստայից[7] պակաս կլիներ[8], չեկ մազերով[9], հասակով մի քիչ[10] Ուստայից բարձր. ու-ներ կապույտ-խաղաղ աչքեր, դեմքը բացօդյա աշխա-տանքից ու քրտնքից եփված[11]-կարմրած:

— Դե՛հ, Ուստա ջան, բարով տեսանք. կերած-խմածդ անուշ ըլնի ու քեզ ըլնի, տեսածդ պատմե[12]. լսողաց՝ լավ քեֆ ես նշանց տվել,— ասաց[13] Օսկանը և ամուր[14] սեղմե-

---

1 B խորքից
2 B աքլորները *փխ* աքլորների պատկերները C նկարները
3 B + տան հարսը
4 BC վայր
5 B խոնջան էր դնում *փխ* սեղան էր հարդարում
6 B Փիլոան C Քերոբն
7 B Ուստայից մի երկու տարով *փխ* մի երկու տարով Ուստայից
8 B չիք
9 B + մի փոքր հաստ մարդ էր
10 BC երկու մատ
11 B + ու
12 B ըսա
13 BC ասավ
14 B կսկուծ

լով Ուստայի ձեռքը, նստեց կողքին. Զավուշն[1] էլ տեղ բռնեց մյուս կողքին:

– Հա՛, Օսկան չան, քե՛ֆ, չահել տղամարդի քե՛ֆ:

– Լավ քեֆ արինք,– վարպետի[2] խոսքը հատատեց[3] Զավուշը[4].– գինին առատ[5], դառի միս, հավ[6], ձուկ, արագ, աշուղ[7], իշխաններն էՀնպես...

– Զավո՛ւշ[8] չան,– նրա խոսքը կտրեց Ուստան,– խոսքդ տո՛ւր ինձ[9], մեկ[10] ես պատմեմ, թե Բագրանի իշխանները մեզի ի՛նչ պատիվ տվին, թե ես ի՛նչ խոսքեր ասի. պարոն Կայծակը ի՛նչ ճառեր ասաց[11] ու ինչքան ինձի գովեց, քանի հեղ կենացս խմեցին, աշուղ[12] Փելեշը ի՛նչ լավ երգեր ասաց, ու թե ի՛նչպես մինչի իրիկուն աքլորը երդիկը հանեցինք, էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րն ասեմ...

Բայց զարմանալի կերպով Ուստան մոռացել էր իր Հայաստան գնալու միտքը[13], Սուլթանին սպանելու փափագը. սակայն ընավ չհիշեց, եթե ո՛չ կասեր. Օսկանից ծածկելու

---

1 B Փիլոսը C Քերոբը

2 B Ուսաի

3 B կտրեց

4 B Փիլոսը C Քերոբը

5 B լուլ

6 BC + միս

7 B աշըղ

8 C Քերոբ D Փիլոս

9 B – Դեհ մի թող, Փիլոս չան,– առանց վիրավորիչ շեշտի ասաց Ուստեն,– դեհ մի թող վիս Զավուշ չան ... խոսքդ տո՛ւր ինձ

10 B չիք

11 B ասավ

12 BC աշըղ

13 D դիտումը

Ի՞նչ լմաստ կար, երբ երեկ[1] պատվավոր մարդկանց առջև հանդիսավոր ձևով արել էր իր հանդիսավոր խոստումը[2]:

Այդ միջոցին խաչած[3] միսը դրին[4] սփռոցի վրա, օղին[5] էլ իրեն կարգին: Ուստան գրպանից հանեց գոմեշի եղջյուրի կոթով մեծ դանակը, սկսեց միսը կտրտել:

– Բա, չե՞ս ասի, երկու հոր ցորենս լավ գնով տվի Գյումրեցի խելառներին[6]:

– Լսեցի[7]. Աստված զղջում[8] չտա,– ասաց Ուստան լցնելով օղին[9] բաժակը[10]. ու առաջ ինքը մի հատ խմելով[11], տվեց Օսկանին, հետո Ջավուշին[12],– էլ ի՞նչ կա ուրիշ[13], ի՞նչ չկա գեղը. երկու շաբաթ է հեռու եմ:

– Գեղն էլի էն է. նոր բան չկա. մենակ աչքդ լուս, սանահեր Մուկուչիդ նշանածը պատկել է[14] տղա է բերել:

---

1 D + Դաշնակցության ներկայացուցչի և

2 BC *չիք* Բայց զարմանալի ... հանդիսավոր խոստումը:

3 C խաչլամա

4 C դրեցին

5 C արաղն

6 B Խաչլաման դրեցին խոնջայի վրա, արաղն էլ իրան կարգին:/– Էդ ով են՝ էդ [ավարա փոր պատցնողները] հյուրերը,– հարցրեց Ուստան / – [Ռու ազիզ Գյումրվա] Գյումրեցի խելառները:/ – Ինչ կուզեն էդ փոր պատուցները: / – Հայ առնողին, երկու հորս էնոնց տվի, լավ գին էր: *տե՛ս* Այդ միջոցին ... Գյումրեցի խելառներին:

7 B *չիք* C Հա, լսեցի

8 B + [փոշմանություն] զղջում

9 BC արաղի

10 B + ու մի չնչով կռթթացնելով ([կամ] կուլ տալով) – Օսկան ջան

11 CD + ապա

12 B *չիք* ու առաջ ինքը ... հետո Ջավուշին D Փիլոսին

13 B *չիք*

14 BC *չիք*

– Աչքի լուսով կենաս, Օսկան ջան, տարոսը[1] մեկել սանամորներիս. չէ՞ որ[2], չքերք ըլնին[3] ինձ են մեղ դնում[4], թե Ուստայի ձեռքը վրա չեկավ. հիմի պարզերես կըլինք[5]:

Ներս մտան Օսկանի եղբայրը՝ Հոսեփը[6] և տղան՝ Արտաշը: Բարև տվին ու հացի նստան: Հոսեփը[7] դիմագծերով նման էր մեծ[8] եղբորը. միշտ լուռ էր, համրի պես. գլուխը կախ իր բանին[9]. տնտեսության գործերի մի խոշոր[10] մասը նա էր կատարում[11]. չա՛տ չարքաշ մարդ էր[12] ու հոգնած տեսք ուներ:

Օսկանի[13] մի հատիկ[14] որդին[15] Արտաշը մի չա՛տ դուրեկան պատանի էր, տասնութ տարեկան, բարձրահասակ[16], խարտյաշ, կապույտ աչքերով[17]:

---

1 D տաուոսը

2 B ախր, դու չգիտես, որ *փխ* չէ որ

3 B կըլնին

4 BC կդնեն

5 B կըլնինք + Այուների տակից լսվեց Եղսոյի և Հարսի անհամարձակ քրքիջը: / – Էդպես է, էդպես, Ուստա ջան, ասավ Օսկանը: C կլինենք

6 B Գալուստը

7 B Գալուստը

8 B նման էր իր դիմագծերով *փխ* դիմագծերով ... մեծ

9 B սակայն սակավախոս, և հոգնած տեսք ուներ *փխ* միշտ լուռ էր ... իր բանին C + [գործին]

10 BC մեծ *փխ* մի խոշոր

11 B վարում + կլիներ մի 30 տարեկան մարդ C վարում

12 B *չիք* շատ չարքաշ ... տեսք ուներ

13 C + ու Եղսոյի

14 C մեկուճար *փխ* մի հատիկ

15 B *չիք* Օսկանի ... որդին

16 C + երկայնվիզ

17 B Արտաշը տասնութ տարեկան, բարձրահասակ, երկայն վիզ, խարտյաշ, կապույտ աչքերով պատանի էր, ծնողների մեկուճար որդին: *փխ* Արտաշը մի շատ ... կապույտ աչքերով:

Ճաշից հետո Ուստան «չե՛ն մնաս, ապրի՛ս, Եղսո քուրիկ», ասելով վերկացավ և ուղղվեց իր օթևանը[1] մի քիչ հանգստանալու: Գոհ էր, որ հյուրեր ունեին, այն էլ քաղաքացի մարդիկ, որոնց հետ հաճելի էր ասուլիս ունենալ[2]:

Շեկոյենց տունը Նախճվան գյուղի[3] ունևոր ընտանիքներից մեկն էր: Օսկանը գյուղում «դաս» չուներ – հորեղբայրանք կամ հորեղբոր որդիներ. մենակ մարդ էր, ինքն ու իր եղբայրը[4]: Նրա տունը[5] պարկեշտ, հացով և վարվոդ հարևանի հռչակ ուներ. ինքը Օսկանը հանդարտ[6] բնավորութ֊յան տեր մարդ[7] էր, վեճ ու կռվից խուսափող[8], նույնիսկ բավական[9] վախկոտ[10]:

Բացի Արտաչից[11] ուներ և երկու փոքր աղջիկներ, տասներկու և տասը տարեկան: Հոսեփը[12] Օսկանի կտորն էր. ամեն բանի մեջ հնազանդ երեց[13]֊եղբորը, նրա

---

1 C այվանը

2 B *չիք* մի քիչ ... ասուլիս ունենալ: C *չիք* Գոհ էր ... ասուլիս ունենալ:

3 B + միջակ

4 B *չիք* մենակ ... եղբայրը

5 B + գյուղում

6 BC խաղաղ

7 B *չիք*

8 C + մարդ

9 C մի քիչ *փխ* նույնիսկ բավական

10 B և գլուխը կախ աշխատող մարդ, իր բանին ու գործին *փխ* վեճ ու կռվից ... վախկոտ

11 B ուներ մի հատ որդի, Արտաչը *փխ* Բացի Արտաչից

12 B + [Գալուստը]

13 B *չիք*

խորհրդով նստող ու կանգնող[1]. այնպիսի[2] խորին հարգանք ուներ դեպի ավագ եղբայրը, որ[3] համարյա նրա ներկայությանը[4] չէր ծխում. և մի ավելորդ[5] խոսք չէր ասում:

Ամբողջապես[6] նվիրված էր իրենց օճախի բարօրությանը[7]: Գյուղի աչքին նախանձելի եղբայրներ էին նրանք[8], սիրով ու ներդաշնակ: Գյուղացիք նրանց վրա խոսելիս ասում էին, թե[9] Օսկանենց տանը երբեք «իմ ու քո[10]» չկա: Բաժանության չար-ոգին նրանց չեմքովը[11] բնավ[12] չէր[13] անցնելու:

Հոսեփը[14] ուներ երկու մանչ[15]-տղա՝ ուլթը[16] և մյուսը[17] չորս տարեկան. և մի աղջիկ տասը[18] տարեկան[19]:

---

1 B առանց նրա խորհրդին մի քայլ չէր անում *փխ* նրա խորհրդով ... կանգնող

2 B *չփք* C այն

3 B *չփք*

4 B առջև

5 BCD ավելնորդ

6 B ամբողջովին

7 B օճախին և օր ու գիշեր աշխատում էր *փխ* օճախի բարօրությանը

8 B *չփք*

9 B *չփք* Գյուղացիք ... ասում էին, թե

10 BC քու

11 D դեմքովը

12 B երբեք

13 BCD չի

14 B + [Գալուստը]

15 BC *չփք*

16 C 10

17 B *չփք*

18 B [վեց 7] 8 C 8

19 B + որին Ուստան էր գրկել

Ուստայի սերտ բարեկամությունը այս օճախի հետ Հոսեփի ութ տարեկան տղայի[1] մկրտությամբ սկսվեց[2]: Ուստան, Զավուշի[3] հետ այս կողմերը երևալուց հետո, մի տարվի չափ[4] այս ու այն դյուղերը թափառելով, պատահաբար[5] մի օր հյուր եղավ Օսկանին, ապա դարձավ կնքահայր-քավոր[6], և սիրտը կպնելով այս տան մեծին ու պստիկին[7], խարիսխ ձգեց այստեղ[8], հիմք դրեց ու մնաց: Մի-երկու տարի ապրեց Օսկանի հին օթևանում (Հյուրասենյակ)[9], ապա[10] քանդելով հինը[11], սրտով ու սիրով[12], իր բոլոր ճաշակով ու վարպետությամբ չինեց նորը, չա՛տ լավը[13]:

«Օսկան ջան,— ասել էր Ուստան,— քանի ողջ եմ, կամ թե քանի էս կողմերն եմ[14], միասին կապրինք էս օթևանի[15] մեջ, թե որ[16] մեռա կամ[17] գնացի ուրիշ երկիրներ[18],—

---

1 B այդ փոքրիկի *փխ* Հոսեփի ութ տարեկան տղայի C աղջկա *փխ* ութ տարեկան տղայի

2 BCD սկսվեց *փխ* է սկսվել

3 BD Փիլոսի C Քերոբի

4 B մի տարի *փխ* մի տարվի չափ

5 B եկավ մի օր Նախճվան *փխ* պատահաբար

6 B քավոր C քավոր (կնքահայր) *փխ* կնքահայր-քավոր

7 BC մեծի ու փոքրիկի վրա [այստեղ] *փխ* մեծին ու պստիկին

8 B *չփք* խարիսխ ձգեց այստեղ

9 BC այվանում *փխ* օթևանում (Հյուրասենյակ)

10 B + իր ձեռքով

11 BC հին այվանը

12 B + և

13 B *չփք* շատ լավը

14 BC կողմերը *փխ* կողմերն եմ

15 BC այվանի

16 BC օրթե *փխ* թե որ

17 B + թե

18 B երկիր

բարով վայելեն Օսկանիս ու Հոսեփիս[1] տղերքը, որ իմ տղերքն ասել է[2]»:

Այս պայմանից դուրս ուրիշ խոսք ու զրույց չի[3] եղել երկու բարեկամների միջև:

Թեև Օսկանն էր[4] ընտանիքի տերն[5] ու գլուխը[6] գյուղի և[7] հոգևոր ու մարմնավոր իշխանությունների առջև[8], սակայն նա թե[9] տանը և[10] թե դուրսը այնպիսի հարգանքով ու սիրով[11] էր վարվում Ուստայի[12] հետ, և[13] այս վարվելակերպը այնպես էր[14] ներշնչել ընտանիքի մեծին ու փոքրին[15], որ օտար[16] գյուղացիները[17] այն տպավորությունն

---

1 B + Գալուստիս

2 B + ինչ խոսք C + [ինչ խոսք]

3 B չէ

4 B + իր

5 BC մեծն

6 B + [համարվում]

7 B + [գյուղական]

8 B առաջ

9 B *չիք*

10 B *չիք*

11 B այնպես *փխ* այնպիսի ... սիրով

12 B Ուստի

13 B + իր B *պարբերության կողքին, աջ լուսանցքում, առանց տեղը նշելու.* «Ուրիշ կտորներ – Իր աշխատանքի մի մեծ մասը այս տան վրա էր ծախսում, նրանց մեջ հաշիվ չկար, Ուստի հաշիվները նրանց հաշիվներն էին, նրանց հաշիվները – Ուստի հաշիվները: Ուստան ամենայն իրավունքով Օսկանի տունը «իր տունը, մեր տունն էր» համարում:

14 B *չիք*

15 B մեծի ու փոքրի մեջ *փխ* մեծին ու փոքրին

16 BC *չիք*

17 BC գյուղացիք + և անծանոթները

էին առնում, թե Ուստան է տան պետը[1], իսկ համագյուղացիները[2], թե Օսկանը չարժվում է, ինչպես կրտսեր եղբայր, նրա խորհուրդներով ու ցուցմունքներով ճիշտ այնպես[3], ինչպես Հոսեփը[4] Օսկանի հարաբերությամբ[5]:

Օսկանի կինը[6] խորապես[7] հարգում էր Ուստային և նրա բնակվելը[8] իր օճախում համարում էր իրենց[9] համար բախտ ու չնորհ[10]: Նվազ սեր ու հարգանք չունեին նաև դեպի Ջավուշը[11]: Հոսեփը միշտ ասում էր. «Երկու աղբեր[12] չենք, չորս աղբեր[13] ենք. Աստված բաժանություն[14] չտա»[15]:

Ուստան և Ջավուշը[16] լավ ըմբռնում էին այս սերն ու[17] հարգանքը և կարողացածներից ավելին[18] չէին խնա-

---

1 B գլուխը
2 BC *չիք* իսկ համադյուղացիները
3 CD *չիք*
4 B Գալուստը
5 B վերաբերությամբ
6 B Օսկանը *փխ* Օսկանի կինը
7 B + և սրտանց
8 B + ապրելը BCD բնակվիլը
9 B իրեն
10 B մեծ պատիվ *փխ* բախտ ու չնորհ
11 C Քերոբը
12 CD ախբեր
13 CD ախբեր
14 C բաժնություն
15 B *չիք* Նվազ սեր ու հարգանք ... բաժանություն չտա
16 C Քերոբը
17 C *չիք* սերն ու
18 C ավելի բան

յում[1] այս հյուրընկալ օճախի բարգավաճման և պատվի համար:

Նրանց միջև հաշիվ դոյութիւն չուներ. Ուստան և Զավուշը[2] գարնան բացվելուց սկսած[3] մինչև ձյունը դնելը համարյա միշտ դուրսն էին, գործերով. ամիսը հազիվ մի քանի օր էին անցկացնում Նախճըվանում[4], սակայն ձմեռը տանն էին միշտ[5]: Այդ միջոցին Օսկաննանք[6] չա՛տ ընտիր կերպով կերակրում էին նրանց ու նրանց հյուրերին[7]. հադուստները լվանում[8], կարում-կարկատում[9]:

Բայց[10] Ուստան նկատելի ու զգալի չդարձնելու ձևով[11], ժամանակ-ժամանակ, զանազան պատրվակներով[12], փող էր տալիս Օսկանին ու Եղսոյին, տան համար գնումներ էր անում, կանանց ու երեխաներին[13] հադուստներ: Ու[14] ինչ որ իրեն ու Զավուշի[15] համար էր առնում, նույնը առնում էր և Օսկանի և Հոսեփի համար:

---

1 B Ուստան խորապես զգում էր այս հարգանքը և կարողացածից ավելի բան չէր խնայում *փխ* Ուստան և Զավուշը ... չէին խնայում

2 C Քերոբը D Փիլոսը

3 C *չիք*

4 C + այն էլ սրա ու նրա մոտ ճաշի հյուր լինելով

5 C անցկացնում

6 C Տանը եղած աաին *փխ* Այդ միջոցին Օսկաննանք

7 C *չիք* և նրանց հյուրերին

8 C + ու

9 D կարկատում

10 CD *չիք*

11 C կերպով

12 C *չիք* զանազան պատրվակներով

13 CD երեխաներին *փխ* երեխաների համար

14 C Եվ

15 C Քերոբի D Փիլոսի

Իհարկե առանց վարձի[1], չինում-սարքում էր նրանց տունն ու տեղը, սայլն ու արորը, նորում-նորոգում: Ջավուշը[2] պարապ եղած օրերում, մտած տան ծակն ու ծուկը, արհեստի գործիքները ձեռքին, չինում էր, կարկատում[3] տան պակաս-պռատը, գնում էր արտն ու կալը, օգնում նրանց, ջրաղացը բնաղուն տանում, աղումին[4] հսկում[5]:

Մի խոսքով, նրանք համարում էին Օսկանի տունը իրենց տունը, «մեր տունը» ասելով[6], և[7] Օսկանի չահերը – իրենց չահերը[8]:

Գյուղի արյուն-բերան լեզուները նախանձով ասում էին, թե Ուստան կթան կով է Օսկաննենց համար. բայց[9] Ուստան բնավ ականջ չէր կախում այս չարերի[10] դայթակղիչ թույն-խոսքերին և արհամարհանքով պատասխանում էր. «Իրենց ի՛նչ. մեր դիտնալիք բանն է»:

Սակայն նվազ չէին և բարի նախանձով խոսողները, որոնք ասում էին, թե Ուստան Շեկոյենց տան օրհնությունն է[11]:

---

1 C չիք Իհարկե առանց վարձի

2 C Քներոլը D Փիլոսը

3 CD չինում

4 CD աղում

5 B չիք Նրանց միջև հաշիվ ... աղումին հսկում

6 C չիք + Օսկանի և իրենց հյուրերը – ընդհանուր տան հյուրեր

7 D չիք

8 B դեռ ավելի – Ուստան համարում էր Օսկանի տունը, որպես իր տունը, նրա չահերը – իր չահերը: *փխ* Մի խոսքով ... իրենց չահերը:

9 C սակայն

10 C չար լեզուների

11 B չիք Գյուղի արյուն-բերան ... օրհնությունն է: C չիք Սակայն նվազ ... օրհնությունն է:

Դ. ԳԼՈՒԽ
<Ա. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ>

Ուստա Կարոն մտավ այվանը[1]*:*

[2]Այվանը (կամ օթևանը) սրբատաշ, սև ու կարմիր քարից[3] *էր չինած*[4]*, փեղկերը կարմիր ներկած երկու լուսամուտներով, որոնք*[5] *արևելք էին նայում: Դուռը բացվում էր չվաքի*[6] *վրա՝ գոմի ու ամբարի դռների դեմ ու դեմը, դրանց միջև գտնվում էր Օսկանի տան*[7] *մեծ դուռը*[8]*:*

Այվանը սալահատակ էր. դռան հանդիպակաց կողմը, վերի գլուխը, հյուսիսային պատի վրա բուխարիկն էր (օճախը)[9]*, Ուստայի բոլոր հմտությամբ կերտված, պայ-*

Համեմատվող բնագրային մխավորներ.

A = ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 45-57:

B = ԳԱԹ, ԻՓ, 287ա-II, էջ 38-47:

1 B *չիք* Ուստա ... այվանը

2 B + Ուստա Կարոյի

3 B քարերից

4 B *չիք*

5 B + [նայում էին]

6 B *Ա՛յ լուսանցքում.* – չվագ (ծածկած սրահ)

7 B + ընդհանուր

8 B + *Ծրագրային գրառում.* (Ասոյի գլուխը այստեղ դնել:)

9 B *չիք*

տաճև կամարը[1] զարդանկարներով քանդակած և գույն-գույն ներկած:

Բուխարիկի աջ ու ձախ թևերով, արևելյան և արևմտյան պատերի երկայնքին[2] լայն թախթեր կային՝ ծածկված թաղիքով և[3] գորգերով. պատերի տակը չարված էին թիկն տալու[4] բարձեր:

Այվանի պատերը զարդարված էին ճիավոր կտրիճների, ծովի ու ցամաքի պատերազմների[5], գունավոր[6] նկարներով[7], որոնք գնել էր[8] Ուստան Ղարսում[9] ռուս չրջիկ գրավաճառներից: Այդ մեծ նկարների մեջ հազիվ նկատվում էին Վարդան Մամիկոնյանի, Դաշնակցության խմբապետների՝ Սերոբի, Անդրանիկի և Կուկունյանի խմբի պատկերները, որոնք նվեր էր ստացել Արտաշը գյուղական դպրոցը հաճախող Դաշնակցական քարոզիչներից[10]:

Դռան ձախ կողմում կար մի[11] ծալք կապերով [ծածկված] պատած[12] նրանց և հյուրերի համար պահեստի անկողիններով. ծալքի առջևը[13] դրած էր մի մեծ կանանչ[14]

---

1 B + [նախշերով]
2 B երկայնքով
3 B + [խալիներով]
4 B + մեծ
5 B + [թագավորների և թագուհիների, խմբական պատկերներով]
6 B չիք
7 B + և ուրիշ գունավոր պատկերներով
8 B / դնված էին
9 B + ու Գյումրիի
10 B չիք Այդ մեծ նկարների մեջ ... Դաշնակցական քարոզիչներից
11 B + մեծ
12 B չիք
13 B առաջը
14 B կանաչ

սնդուկ, ուր պահվում էին նրանց դանակուր[1] հագուստ-կապուստները, և սանամայրերին[2] ու սանիկներին[3] տալու նվերները, որոնք միշտ անպակաս էին [որովհետև Ուստան նորանոր գնումներ էր անում շարունակ[4] պաշար ունենալու համար]:

Մյուս կողմը, պատն ի վեր տնկած էր հացի խոնչանեղանը[5], Ուստայի ձեռագործը, որն[6] այնպես[7] վարպետորեն[8] էր չինել, որ երբ գետեղում էին թախթերի միջև – դառնում էր մի շա՛տ կանոնավոր, վայելուչ ճաշի սեղան:

Թախթերի տակ, հատուկից[9] չինած պահարաններում տեղավորում էին իրենց[10] արհեստի գործիքները:

Այդ[11] բոլորի վրա իշխում էր առաստաղից կախված մեծ լամբը (լամբարը)[12], որ Ուստան Ղարսում հազարի միջից ընտրել[13] բերել էր [ու մեծ խնամքով պահում էր]:

Ուստան ներս մտնելով[14], չուխան[15] հանեց, կախեց պատից ու նստեց իր մշտական տեղը, բուխարիկի աջ

---

1 B *չիք*
2 B սանամորնիերին
3 B սանիկների
4 B միշտ
5 B (սեղանը)
6 B որ նա
7 B այնպիսի
8 B վարպետությամբ
9 B հատկապես
10 B նրանց
11 B Այս
12 B *չիք*
13 B + ու խնամքով
14 B + այվանը
15 B չուխեն

կողքին, արևմտյան թախթի վերի գլուխը: Նրա այդ մշտական տեղն ու կարմիր մեծ բարձը դիջում էր նա միայն չա՛տ պատվավոր հյուրերին[1]: Բուխարիկի մարմանդ կրակից վառեց պապիրոսը ու[2] թիկն տվեց բարձին: Նրա բուխարիկում միշտ մխում էր աթարը, տարին տասներկու ամիս, օր ու գիշեր, չպիտի կտրվեր նրա օճախի ծուխը, ինչ էլ որ լիներ, ուր էլ որ լիներ նա. «Իմ ծուխս չպիտի կտրվի, ամպերի հետ միշտ ման պիտի գա»,— ասում էր Ուստան[3], և տանեցիք սրբությամբ կատարում էին նրա իղձը:

Ուստան ծխելով մտածում էր վաղվան անելիքների մասին, սանամորների ցանկալի այցի մասին: Այս ժպտուն մտքերի մեջ սուզված[4] գլուխը դրեց բարձին ու չիմացավ, թե ինչպես աչքերը փակեց:

Երեկոյան, ժամի զանգերի [տալու] հետ[5] Քերոբը[6] ներս մտավ այվանը[7] դոլորշիով[8] պատած սամովարը դրկին. սեղանը[9] զետեղեց իր մշտական տեղում, թեյի պարագաները հանեց պահարանից: Բաժակների աղմու-

---

1 В *չիք ու նստեց իր մշտական ... պատվավոր հյուրերին*

2 В *և*

3 В *չիք ասում էր Ուստան*

4 В *Պապիրոսը վերջացնելուց հետո փխ Ուստան ծխելով ... մեջ սուզված*

5 В *ժամանակ*

6 В *փիլոս աղբարը*

7 В *չիք*

8 В + [*ծածկված*]

9 В *խոնչան*

կից զարթնեց Ուստան, գնաց դուրս, լվացվեց ու եկավ նստավ թեյի[1]:

– Քերոբ[2] չան, քովդ ինչքան փող կա,– դիմեց Ուստան նրան[3]:

Ակներև դժգոհությամբ Քերոբը չրթները[4] կծեց՝ կռահելով, որ փող պիտի ուզե[5]. ապա ծոցից հանելով լաթակապմ տետրակը[6], որ քրտնքից դեղնել էր և լուսամուտին մոտենալով պլչեց[7].

– 6[8] մանեթ Սերոբեն[9] ստացա[10], 12 մանեթ Մակարեն[11], 7 մանեթ Ղևոյեն[12].– էս քեզի եղավ[13] 25 մանեթ[14],– հաշվի մեջ ևս 20 րուբլի կար գրած, որ[15] դիտմամբ չկարդաց. նա առհասարակ[16] աչխատում էր հաշվի մեջ Ուստայից որոշ գումար գաղտնի պահել՝ փող ետ ձգելու նեղ օր-

---

1 В *Հաջորդող դրվագի նկարագրությունը հեղինակը գրել է ալ լուսանցքում հետևյալ հղումով.* «Սա դնել մյուս օրը սանամորների այցի գնալու <անընթ.>: Երկրեն Ռեսին փող տալ 10, Մանուկենց»:

2 В Փիլոս

3 В *չիք* դիմեց Ուստան նրան

4 В + ջղայնորեն

5 В + և ճիգ թափեց ծածկել դժկամությունը իր մեծից

6 В դավթարը

7 В + (պուչ) և ասաց

8 В 5

9 В Սերոբից

10 В *չիք*

11 В Մակարից

12 В Ղևոյից

13 В *չիք*

14 В + ապա

15 В + Փիլոսը

16 В + միշտ

վա համար, քանի որ Ուստան խնայողություն չուներ և ինչ որ[1] կար, կծախսեր:

– Բա, Բագրանի փողը – 60 մանեթ,– վրա բերեց Ուստան[2]:

– Էդ իր կարգին[3], մեկ էլ Ղզրոյենց տղայեն 15 մանեթ իր պարտքը[4], եղավ գումարը 100 մանեթ[5],– ու նորից չհիշեց 20 րուբլին:

– Ոչինչ[6], Քերոբ[7] չան, կասեմ[8] 30 մանեթ տուր էստեղ, մեկ մասը[9] Օսկանին տամ, վաղուց է տնեցոց բան չենք տվել, մեկէլ մասն էլ ձեռքի ծախս[10]:

– Ի՛նչ վաղուց, էն օրն էր, որ 15[11] մանեթ տվիր[12]. լավ, մի բան կուտամ էս եղածեն[13], քեզի տամ, վախնամ[14], ուղտ չինես, ես քեզի նո՞ր գիտեմ:

– Դեհ, ձեռքի ծախս տուր, մոտս մենակ 7-8 մանեթ կա[15]:

---

1 B *չիք*

2 B + Էլ չկա՞,– հարցրեց Ուստան,– բա Բագրանի փողը: *փխ* Բա, Բագրանի փողը ... վրա բերեց Ուստան

3 B + 60 մանեթ

4 B Դավիթը տվեց իր պարտքը 15 մանեթ *փխ* Ղզրոյենց տղայեն ... իր պարտքը

5 B Էդ քեզ եղավ [69] 90, ինչ կա որ, Ուստա *փխ* եղավ ... 100 մանեթ

6 B Հնչ

7 B Փիլոս

8 B կըսեմ

9 B *չիք* մեկ մասը

10 B *չիք* մեկ մասն էլ ձեռքի ծախս

11 B 10

12 B + Ուստան մի քիչ մտածելուց հետո կլոկնեց իր պահանջը

13 B ես կուտամ եղած քուրիկին,– ասաց Փիլոսը *փխ* մի բան կուտամ էս եղածեն

14 B վախենամ

15 B – Չէ, գլխիդ մատաղ, դրպանի փող մոտս 7-8 մանեթ կա. Հերիք <չէ>. չես հավնա, դու տուր *փխ* Դեհ, ձեռքի ... մանեթ կա

Քերոբը գրպանի ծախս տվեց միայն 10 րուբլի: Ուստան սուսիկ առավ, գրպանը դրեց[1]*:*

Եկան Օսկանն ու[2] *գյումրեցի վաճառականները:*

— Բարի իրիկուն,— ասացին նրանք:

— Բարով եկաք, համեցեք, նստեք,— [ասաց] պատասխանեց[3] *Ուստան և տեղ ցույց տվեց: Նրանք տեղավորվեցին. չորս հոգի էին նրանք*[4]*: Աչքի պոչով Ուստան մեկիմեկիկ*[5] *տնտղեց նրանց:*

— Էս էլ մեր Ուստա Կարոն[6]*, է՛ս էլ մեր Քերոբ*[7] *ախբարը.— ասաց Օսկանը,— ճանաչ եղեք:*

Մոտեցան իրար ձեռք տվին:

— Բարով տեսանք[8]*,— ասաց Ուստան և մի փոքր անց չարունակեց,— ախբրտիք, չա՛յ անուշ արեք:— Եվ ինքը կարմիր թաշկինակով վերցրեց բաժակը և մեղմ ֆռֆռոցով սկսեց*[9] *խմել:— Ի՞նչ նորություն կա Գյումրի, մենք դեղի անկյունն ընկած բան չենք իմանա:*

— Առողջություն, ուրիշ[10] *էնպես բան չկա.— պատասխանեց քաղաքացիներից մեկը, որ մի քիչ սպիտակած մարդ էր:*

— Հարստացող՝ քիչ, աղքատացող՝ շատ,— ասաց մի ուրիշը:

---

1 В *չիք* Քերոբը գրպանի ... գրպանը դրեց

2 В և

3 В *չիք*

4 В նրանք չորս հոգի էին *փխ* չորս հոգի էին նրանք

5 В մեկ-մեկ

6 В + [մեծ ախբերս]

7 В Փիլոս

8 В + նորից

9 В սկսեց մեղմ փռփռոցով *փխ* մեղմ ֆռֆռոցով սկսեց

10 В *չիք*

Քերոբը թեյի բաժակները շարեց Հյուրերի և Օսկանի առաջին:

– Ներսի աշխարհներից ի՞նչ կա, չկա.– հարցրեց Ուստան:

– Հա[1], մենակ դպրեթներում կգրեն, թե էս տարի աշնանը[2] աշխարքը պիտի կործանի. կան մարդիկ, որ չա՛տ կվախենան[3]:

– Իսկի[4] եղնելու բան է, աշխարք կործանի, ու կործանողն ո՞վ է[5],– խնդալով ասաց Ուստան,– ի՛նչ տուտուց բան ըլնի, քաղաքներեն դուրս կուգա. չա՛տ գիտնակ մարդիկ չա՛տ անգետ կխոսան:

– Ջիտեմ, դպրեթները կըսեն, իմ խելքիս էլ չի պառկի[6],– արդարացավ դյումրեցին:

– Կպրեթներն էլ մարդիկ կգրեն, հո, Ավետարանի մեջնեն չէ, որ Աստծու խոսքն ըլնի. խելքիս տունը չի մտնի[7], թե աշխարք անցնի:

– Ինչո՞ւ չէ, կրնա ըլնի. աշխարհանցում, ի թոթափելն աստեղց[8], ըչտե գրած է[9] Ավետարանի մեջ,– վկայեց մի ուրիշը դյումրեցիներից[10]:

Ուստան գլուխը չկորցրեց լսելով Ավետարանի ապացույցը, և ուղղակի նայելով խոսակցի աչքերին, համոզական չնչտով ասաց.

---

1 В *չիք* Քերոբը թեյի ... հարցրեց Ուստան: – Հա,

2 В Հոկտեմբերին *փխ* տարի աշնանը

3 В կվախնան

4 В Հնչ

5 В *չիք* ու կործանողն ո՞վ է

6 В *չիք* իմ խելքիս էլ չի պառկի

7 В Հնչ խելքիս չի պառկի *փխ* խելքիս տունը չի մտնի

8 В աստղից

9 В գրած է ըչտե *փխ* ըչտե գրած է

10 В ասաց մի ուրիշ դյումրեցի *փխ* վկայեց մի ուրիշը դյումրեցիներից

– Էդ ասածդ ավուրն ահեղ դատաստանին է. մենակ էլ կասեմ[1], որ խելքիս չի նստի[2]. աշխարքը եղել է, կա ու կմնա. հավի բուն չէ, որ քանդվի. մեկ էլ որ[3],– ժպիտը խաղացնելով շրթունքների վրա ավելացրեց,– քանի կնիկը կա, աշխարք չի անցնի:

– Խելոք խոսքին ո՞վ բան կասե[4],– ուրախ ծիծաղով ասացին նրանք[5]:

Ուստայի ինքնասիրությունը գոհացավ[6]. այս խոսքով նրանց դյուր եկավ Ուստան[7]:

– Քերոբ[8] ջան, մի հատ էլ[9] լից[10], էսօր չայը շա՛տ դուրըս կգա[11]:

– Էնոր համար է, որ էսօր մախմուռ ես...– վրա բերեց Օսկանը:

– Ի՛նչ է, Ուստան[12] քեֆի մեջ է եղել, ե՞րբ, ո՞ւրտեղ[13].– հարցրեց հետաքրքիր[14] [ու զարմանալով] գյումրեցինե-

---

1 B Էլի կըսեմ *փխ* Էդ ասածդ ... մենակ էլ կասեմ

2 B պառկի

3 B *չիք*

4 B կըսե

5 B ասացին նրանք ուրախ ծիծաղով *փխ* ուրախ ծիծաղով ասացին նրանք

6 B + (Նա միշտ այն համոզմունքին էր, որ ինքը դրել-կարդալ իմացողներից շա՛տ խելացի է. «Բանը խելքի մեջն է, չէ թե ուսումի». տեղը եկած ժամանակը նա միշտ այսպես էր ասում:)

7 B *չիք* այս խոսքով ... Ուստան

8 B Փիլոս

9 B *չիք* մի հատ էլ

10 B + դարձավ նա ընկերին

11 B կուգա

12 B Ուստեն + երեկ

13 B *չիք* ե՞րբ, ո՞ւրտեղ

14 B *չիք*

րից[1] մեկը, որի քթի կարմրությունից երևում էր[2], որ առաղի լավ բարեկամ է ու զարմացքի չեչտ էր դրված նրա հարցի մեջ, թե ի՞նչպես է որ դյուղում իր ներկա եղած օրերում քեֆ է եղել, ու ինքը չի մասնակցել հյուրասիրական իրավունքով[3]:

– Երեկ, Բագրան[4], քեֆ, ի՛նչ քեֆ. հով տեղ, ջրի ափին, հինգ[5] գավ գինի խմեցի, պակաս որ չասեմ. արաղն էլ իրեն կարդին[6]:

«Փչան կերևա Ուստան[7]» իրար ականջ չչնջացին վաճառականներից[8]:

– Մարդ կրնա՞[9] հինգ գավ գինի խմե,– զարմացած հարցրեց[10] մեկը:

– Մարդը գիտե.– կտրուկ պատասխանեց Ուստան՝ վերցնելով թեյի չորրորդ բաժակը...– Է հե՛յ, անցած օրին օր չի հասնի. երեկ էս ժամանակս քեֆս Սուլթանի Մուրադի քեֆն էր,– կարոտով բացականչեց[11] Ուստան և ժամացույցը հանեց.– էս ժամանակս, ուղիղ ժամը[12] 9-ին[13]:

---

1 B քաղաքացիներից
2 B չիք որի քթի ... երևում էր
3 B չիք ու զարմացքի ... իրավունքով
4 B չիք Երեկ, Բագրան
5 B + [տասը]
6 B չիք արաղն էլ իր կարդին
7 B չիք
8 B վաճառականները
9 B էլ
10 B + դյումրեցիներից
11 B ասավ *փխ* կարոտով բացականչեց
12 B ահաթի [հինգին]
13 B 10-ին

– Յա՛,– հանկարծակիի եկած[1] գոչեց դյումբեցիներից մեկը[2].– ինչպե՞ս թե ժամը 9-ին[3], քու ժամացույցդ 9-ն է[4], Ուստա:

– [5]Բա՛, քանիսը կուզես ըլնի:

– Իմս յոթն[6] է՝ բանըմ սուտ. քո՞ւկդ, Գևոր, քո՞ւկդ, Օնես:

– Շա՛տ սուտն է, ինչպես թե՝ բանըմ սուտ,– քմծիծաղի տվեց[7] Ուստան:

Գևորն ու Օնեսը նայեցին ժամացույցներին:

– Մերն էլ յոթեն[8] բանմ պակաս է. էդպես էլ կըլնի[9]. արևը մեր մտելու վրա է[10]:

– Ուստա ջան, ժամացույցդ[11] չա՛տ[12] հառաջ է. Բյուրոյի[13] ձիու պես կվազե. էդպես որ երթաս, գարնան ծերին չհասած՝ ճմռան մեջ տեղը կըլնիս[14],– մեղմ[15] ծաղրով ասաց[16] առաջին խոսող դյումբեցին[17]:

---

1 B պարմայած *փխ* հանկարծակիի եկած

2 B դյումբեցին *փխ* դյումբեցիներից մեկը

3 B սհաթի [հինգին] 10-ին *փխ* ժամը 9-ին

4 B քու սհաթդ հինգն / 10 է *փխ* քու ժամացույցդ 9-ն է

5 B + Հա

6 B ուլթն

7 B քմծիծաղի տալով նկատեց *փխ* քմծիծաղի տվեց

8 B ուլթեն

9 B + կրակ վառոց է. [ըսինք ամառ է, կմթնի:] էլ դեմ չէ:

10 B էլ մեր կմտնի *փխ* մեր մտնելու վրա է

11 B սհաթդ

12 B + [հետ է]

13 B գուբերնատորի

14 B չիք էդպես որ երթաս ... տեղը կըլնիս

15 B չիք

16 B ասացին

17 B երկուսը դյումբեցիներից *փխ* առաջին խոսող դյումբեցին

Ուստային թեև հաճելի եկավ Իյուրոյի ձիու համեմատությունը, բայց ընդհանրապես սրտին դիպավ, նկատելով նրա խոսքի խորքում ծաղրանք[1]: Եվ ուղղակի թշնամաբար տրամադրվեց դեպի նրանց[2]:

— Ո՛չ ժամացույցը[3]. իմ ժամացույցի[4] հատը չկա ի վեր աչխարքի՝ հարավեն-հյուսիս[5]. ես ի՞նչ էնեմ, որ ձերը[6] ձեզի պես[7] օխտը տարվա գոթի[8] է,— ասաց Ուստան և թյությունի տուփը հանելով, արագ-արագ[9] մի պապիրոս փաթաթեց[10], ապա[11] ակներև թշնամանքով գյումրեցիների գլխի վրայով[12] նետեց տուփը Օսկանի գոգը, որ նա էլ պապիրոս չինե[13]. հյուրերը[14] նրա այս վիրավորական վարմունքը[15] չհասկանալ ձևացրին:

---

1 В Նրան և դյուր եկավ այդ համեմատությունը, և միևնույն ժամանակ դյուր չեկավ, նկատելով խոսքի խորքում մի ծաղր: Սիրտը խոցվեց *փխ* Ուստային թեև ... խորքում ծաղրանք:

2 В դյումրեցիները

3 В սհաթը

4 В սհաթի

5 В արևմուտքեն-արևելք *փխ* հարավեն-հյուսիս

6 В ձեր սհաթը

7 В + [խելքի աղքատ է, մտքի՝ արագ]

8 В անդամալուծ

9 В *չիք*

10 В չինեց + և տուփը

11 В *չիք*

12 В գլխից *փխ* գլխի վրայից

13 В փաթաթե

14 В դյումրեցիները + թե Ուստայի խոսքը և թե

15 В չարժուձևը

– Լա՛վ, հլա մեկ տուր ժամացույցդ[1] տեսնենք, կարելի է որ անթիկա է,– ասաց ավագ գյումրեցին ու[2] ձեռքը մեկնեց:

Ուստան տվեց ժամացույցը[3]: Գյումրեցին ուշի-ուշով նայում էր[4]: Ժամացույցը «Օսմանլի» կոչված տեսակից էր, կափարիչը ուռուցիկ, բարձր, արծաթյա, հաստ ու կոպիտ, թվերը[5] զուտ արաբական[6] նշաններով, ձայնը ամուր չնչկում էր: Ուստան չունչը կտրած սպասում էր վճռին[7]:

– Ուստա ջան[8], կնմանի բռնոթու տուփի[9]...

Այս անքաղաքավարի վարմունքը Ուստային հանեց իրենից. մի փոքր լռեց[10]. բարկությունը քանի գնաց[11] աճեց, ունքերը հավաքեց[12] իրար վրա, աչքերը մեծ-մեծ բացեց ու[13] սրտի որոտմունքին ազատ ելք տալով[14] ասաց.

---

1 B սհաթդ

2 B և

3 B տվեց ժամացույցը *փխ* Հանեց սահաթը և տվեց նրան

4 B *չփք* Գյումրեցին ... նայում էր

5 B + [թվանշանները]

6 B տաճկական *փխ* զուտ արաբական

7 B *չփք* Ուստան չունչը ... վճռին

8 B *չփք* Ուստա ջան

9 B բռնոթի տուփ + Ուստա ջան [աւ, Հանկարծ չփչանա, չավրվի (չփչանա)]

10 B Ուստի *փխ* Այս անքաղաքավարի ... լռեց

11 B *չփք* քանի գնաց

12 B Հավաքվեցին

13 B + հազիվ

14 B որոտմունքը զսպելով *փխ* որոտմունքին ազատ ելք տալով

– Է՛ս գյումրեցիք... տո՛, դուք ի՞նչ կհասկանաք, ձեր քաղքից[1] դուրս[2] հավկուր եք, ի՞նչ կհասկանաք բանի[3] լավն ու վատը. արագի[4] մեծն ու պստիկը մենակ գիտեք, բայց[5] ուրիշ բան – գրե՛ վրես, գի քո է...

– Ինչի՞, էլ ժամացույց[6] չե՞նք տեսել. քուկդ ո՞ւրտեղեն[7] է որ...

– Ի՞մս[8],– Էրզերումի[9] մութասարիֆի[10] ժամացույցն[11] է, Հայտնի խմբապետ Փալաբեխ Կարապետն ինչ է, որ Բասեն կնստի, էն սպանել է էնոր[12] ու ժամացույցը[13] վրայեն առել. մութասարիֆին էլ Էրզերումի վալին է նվեր տված եղել[14]: Հինգ տարի առաջ Ղարս[15] հանդիպավ խմբապետն[16] ինձի՛ ու նվեր[17] արավ. ես էլ իրան լավ քեֆ նշանց տվի[18]: Ի՛նչ խոսք, որ ժամացույցս անթիկա է. տա-

---

1 B քաղքեն
2 B + դուք
3 B չիք
4 B + բաժակի
5 B Հմա
6 B սհաթ
7 B որտեղեն
8 B Իմ սհաթս փխ իմս
9 B Էրզրումի
10 B վալլիի
11 B սհաթն
12 B Թալանել է վալիին փխ սպանել է էնոր
13 B սհաթը
14 B չիք մութասարիֆին էլ ... տված եղել
15 B չիք
16 B չիք
17 B փեշքեշ
18 B սարքեցի փխ նշանց տվի

րա ժամացուց չինող անվանի վարպետի մոտ ցուց տվի, Քերոբն[1] էլ հետս էր. էստեղ սուտ բան չկա:

Քերոբը[2] այս խոսքի վրա՝ դլխով լռելյայն հաստատեց[3] փաստը:

– Էդ ժամացուց չինողը[4] ասավ թե՝ ժամացույցդ[5] տևսոք հասարակ է, բայց ընտիրն է. քարերը ամենքը անգին են ու իսկի[6] մաշելիք չունին[7]. և էլ մինչի իրարուց բաժանվիլը ժամացույց չինողի[8] երեսը չի տեսնելու. ասավ[9], հերը տղին 20 թումանի[10] չի տա: Հիմի դուք ի՞նչ կասեք[11]. հինգ տարի է ձեռքես ի՛նչ կքաշե. շա՛տ ժամացույցներ[12] եմ առել ու ետ ծախել, էսպեսը չեմ տեսել: Թիֆլիզն եղե՞լ եք[13]. էնտեղ որ չորս կողմը չուշաբանդ[14] դռներով խանութներ կան ու բարձր պատի վրա[15] մի մեծ ժամացուց[16] – էնոր հետ կխոսա: Խրիմյան Հայրիկի[17],

---

1 B Սհաթն՝ ինչ խոսք, որ անթիքա է. վերցրինք տարանք Ղարս մի սհաթչու մոտ, Փիլոսն *փխ* Ինչ խոսք ... Քերոբն

2 B Փիլոսը

3 B + այդ անհերքելի

4 B ժամացույց չինողը *փխ* սհաթչին

5 B սհաթդ

6 B հեչ

7 B չունի

8 B ժամացույց չինողի *փխ* սհաթչու

9 B ըսավ

10 B + [թումանից պակաս]

11 B կըսեք

12 B սհաթներ

13 B ինչ է *փխ* եղել եք

14 B ոսկե

15 B չիք պատի վրա

16 B սհաթ

17 B Կաթողիկոսի *փխ* Խրիմյան Հայրիկի

եպիսկոպոսների, երանելների ժամացույցների[1] հետ կխոսա[2]. էջմիածին, [մեռոն օրհնեքի [ներկա երևելի] անունով[3] մեծ մարդիկ էին եկել, իրենց ժամացույցները իմիս հետ հարմարցրին, ու մնացած հայտնի իշխանավոր մարդկանց[4] ժամացույցների[5] հետ կխոսար:] էն տարի ներսերեն գիտնակ երևելի մարդիկ էին եկել, էնոնց ժամացույցների հետ կխոսար[6]. մեկ խոսքով, կարճը ասեմ[7], Աստծու անսխալ ժամացույցների — արև-արեգակի, լուսնի, աստղերի հետ կխոսա. հիմի հասկացա՞ք[8]...

Ոգևորված ավարտեց[9] իր ժամացույցի գովքը և հաղթանակով նայեց գյումրեցոց երեսին: Նրանց դեմքերի վրա մի զսպված ուրախություն էր փայլում, հազիվ էին տիրապետում իրենց քրքիջին:

— Աչխարքի մեջ ամեն բան կրնա [պատահի] ըլնի. կհավատանք ժամացույցիդ[10] գորքին: Ուստա ջան, առ, դլխիդ մատաղ, հանկարծ փորձանք չպատահի, ավիրվի, մեզ[11] մեղավոր հանես,— ասաց հանդարտությամբ ավագ գյումրեցին[12] և ժամացույցը հոգատար զգուշությամբ դրեց տիրոջ[13] առաջը:

---

1 В սհաթների

2 В [կխոսա]

3 В Հետու Անի ներսերեն գիտնակ *փխ* էջմիածին ... անունով

4 В էնոնց *փխ* իրենց ժամացույցները ... իշխանավոր մարդկանց

5 В սհաթների

6 В *չիք* էն տարի ... հետ կխոսար

7 В ըսեմ

8 В արևի սհաթ է, կհասկանա՞ք *փխ* Աստծու անսխալ ... հիմի հասկացա՞ք

9 В վերջացրեց

10 В սհաթիդ

11 В + [մեղ դնես]

12 В ավագը *փխ* ավագ գյումրեցին

13 В Ուստի

Ուստան վերցնելով[1] ժամացույցը, կապեց չղթայից և դրեց ծոցը:

Նրա[2] ժամացույցի հռչակը տիրոջ անվան պես հայտնի էր շրջանի գյուղերում. հատկապես հավատացողները[3] գյուղից գյուղ մարդու միջոցով ուղարկում էին[4] իրենց ժամացույցները Ուստա Կարոյի ժամացույցի հետ ներդաշնակելու: Իսկ ինքը[5] ոչ մեկի հետ և ոչ մի տեղ չէր ներդաշնակում: Ճշտապահ, միշտ իր կեսօրին, երբ իր ժամացույցի սլաքները պառկում էին իրար վրա[6] – նորից լարում էր նա[7]: Այսպիսի անխորտակելի հավատ ուներ իր ժամացույցի վրա. և այս[8] հավատը վարակել էր շրջանի շա՛տ[9] ժամացույցներ[10]: Այսպիսով, այնինչ երբ Շիրակում օրը կեսօր էր – նրանց ժամերը[11] երկուսն էր, ճաշից հետո[12]: Արևը նրանց համար երկու ժամ հետո էր դուրս գալիս և երկու ժամ [առաջ] հետո էր մայր մտնում[13]:

Այս խոսակցության վրա իջավ մի լռություն, որ հարկավոր էր ամենքին հանգստացնելու և[14] տևեց մինչև

---

1 B վերցրեց

2 B Ուստի

3 B *չիք*

4 B + Հավատացողները

5 B + իր ժամացույցը

6 B իրար վրա էին պառկում *փխ* պառկում էին իրար վրա

7 B լարում էր նորից *փխ* նորից լարում էր նա

8 B այդ

9 B [Համարյա բոլոր]

10 B ժամացույցները + և

11 B + [կամ 9-ն էին առավոտու, կամ 3-ը՝ ճաշից անց]

12 B անց

13 B *չիք* Արևը նրանց ... մայր մտնում

14 B Լռությունը *փխ* Այս խոսակցության ... հանգստացնելու և

ընթրիքի սեղան բանալը: Ուստան արխալուխի թևքերը[1] *վեր քչտեց, կարմիր թաչկինակը փռեց ծնկներին և նախկին քենը մոռացած՝ ժպտերես դիմեց հյուրերին.*

– Ախբրտիք[2]*, բարով եք եկել, մոտեցեք հացին, անո՛ւշ արեք:*

Եվ լցրեց արաղի բաժակը, ու սկիզբը ինքը խմեց՝ ասելով[3]*.*

– Առաջ ես կխմեմ, որ իմանաք, թե դեղած չէ:

Բաժակը լցվելով ու դատարկվելով[4] *չրջան գործեց և նորից հասավ Ուստայի ձեռքը: Ուստան նորից լցրեց բաժակը, որ նորից չրջան գործեց*[5]*:*

Հացի միջոցին[6] *ավագ վաճառականը հարց տվեց.*

– Ուստա, իրավունք ունի՞նք բանըմ[7] *հարցնելու:*

– Իրավունք է,– պատասխանեց Ուստան:

– Դուն[8] *ի՞նչ արհեստի վարպետ*[9] *ես, կրնանք իմանալ:*

– Ես տուն կչինեմ, ա՛յ, էս այվանը ձեռքիս գործն է. հոր կփորեմ, աղբյուր[10] *կբերեմ, կարմունջ կկապեմ*[11]*,*

---

1 В թևները

2 В Դե՛հ բարով եք եկել *փխ* Ախբրտիք

3 В խմելով *փխ* խմեց՝ ասելով

4 В *չիք* լցվելով ու դատարկվելով

5 В *չիք* Ուստան նորից ... չրջան գործեց: + – Մի-մի հատ էլ երթանք,– առաջարկեց Ուստան: / – Չէ, մի քիչ ետև,– պատասխանեցին գյումրեցիք: / – Ի՞նչ ետև, խմենք, միամտինք, դառնանք գդալների գործին: / Ուստան նորից լցրեց բաժակը և ապա ձեռքե-ձեռք գնաց:

6 В վրա

7 В մի բան

8 В Դու

9 В ուստա

10 В աղբուր

11 В *չիք* կարմունջ կկապես

ջաղաց կշինեմ, ամբար, սել, արոր և էլ ուրիշ շատ բաներ. չինել տվող լինի[1]*, ամեն բան ձեռքես կուգա:*

– Հարցնելն[2] *ամոթ չըլնի,– ասաց կարմիր քթով գյումրեցին, որի աչքը չէր հեռանում արաղի չիշից,– շինել տվողը ըլնի, կրնա՞ս*[3] *Անիի կարմունջի պեսը չինել՝ մեկ ոտքն էս կողմը, մեկէլ ոտքն էն կողմը*[4]*:*

Ուստան զգաց, որ իրան ձեռք են առնում, հեգնում[5]*. «Էդ՝ գյումրեցոց սովորութին է, բայց ես ո՞վ եմ, որ տակը մնամ»,– այսպես*[6] *վճռեց մտքում*[7] *և հանդիստ ձայնով ասաց*[8]*.*

– Յոթը էդպես դետ ըլնի, վրան կարմունջ կրնամ ձգե. շատ չինած ունիմ էդպեսները[9]*:*

Նրանցից՝ գյումրեցիներից մեկը[10] *աննկատելի փսփսաց ընկերի ականջին. «Լավ տրաքեցնող է, քիչմ ձեռք առնենք*[11]*, ուրախանանք»:*

---

1 B ըլնի

2 B Հարցնել

3 B + Գյոչք-սարայ չինել

4 B *չիք* Անիի կարմունջի ... ոտքն էն կողմը

5 B *չիք*

6 B *չիք*

7 B + Ուստան

8 B պատասխանեց

9 B – Էնպես Գյոչք-սարայ չինեմ, որ ձեր Գյումրին քովը պետռ երևա: *փխ* Յոթը էդպես ... ունիմ էդպեսները:

10 B Տիրեց մի վոքր զսպված լռություն: Ավագ վաճառականը *փխ* Նրանցից՝ գյումրեցիներից մեկը

11 B Ուստին հարցնենք, քիչմ ուրախանանք»: + / Լռիվ համաձայնեցին մեծ ընկերի առաջարկին: *փխ* քիչմ ձեռք առնենք, ուրախանանք»:

– Ուստա, կրնա՞ս,– հարցրեց գաղտնի փսփսացողը[1],– էնպես հոր փորել, որ ողջ Նախճվանի հացը հավքի մեջը:

– Ուստա մարդու[2] ձեռքեն բան չի պրծնի,– կուվի պատրաստականությամբ պատասխանեց Կարոն,– էնպես հոր փորեմ, որ ձեր ողջ Գյումրին մեռել-կենդանով, ձեր տներով ու խանութներով[3], ձեր յոթը պորտով հավքիք մեջն ու մնաք մինչի Քրիստոս գա դատաստան:

– Վնաս չունի, տղամարդու գործ է,– բայց, Ուստա, էդքան մեծ հոր փորած կա՞ս իսկի:

[Ուստան դեռ չպատասխանած՝ Օսկանն ուզում էր միջամտել այս անախորժ խոսվրտուքին վերջ տալու, իսկ Քերոբը, որ իրեն ուտում էր, և ուղղակի փչի վրա էր [նստած] զգում, երբ Ուստան կարճ կապեց պատասխանը:

– Է՛, որ փորել ես ի՛նչ է][4]

– Շա՛տ...– կարճ կապեց Ուստան:

– Որ փորել ես, ի՞նչ է դուրս եկել,– հարցրեց չորրորդը:

Այնինչ Օսկանն ուզում էր միջամտել այս անախորժ խոսվրտուքին վերջ տալու, իսկ Քերոբը իրեն ուտում էր և ուղղակի փչի վրա էր նստած զգում, երբ Ուստան համբերանքը հատած վրա տվեց[5].

– Էնպե՛ս տաք, եուման ջրեր, որ ձեր ողջ գյումրեցոց[6] հարս-աղջիկը[7] կրնան բաղնիք էննել ու իրենց ճերմակ ծծերը...

---

1 В мультике, где маленькими глазами был похож на *чуть* гадкого человечка

2 В Уста *чуть* Уста мардо

3 В домами и магазинами *чуть* домами и магазинами

4 В *чуть* Уста ... ты что

5 В Уста Терпение лопнуло: *чуть* Тогда Оскан ... ответил:

6 В Гюмрулу

7 В Невесты и девушки

– Ուստա, ի՛նչ զոռ փուչտ կուռեցնես...– [խոսքը] Ուստայի խոսքը կտրեց կարմիր քթով դյումբեցին՝ սաստիկ վիրավորված լինելով իր համաքաղաքացիների կինաղջկա պատվի համար[1]:

– Բա՛, ձեզ պես փուչտիկներին[2] ես լավ կուռեցնեմ. մտքերդ ի՞նչ է,– կրակ կտրած ասաց Ուստան[3]:

– Ուստա՛, լեզուդ քիչմ քեզ[4] քաշե, թրի պես մարդ կզարկե,– լսվեց մեկի ձայնը:

Ոնց որ կարկտաբեր ամպը գոռար ու փուլ գար, Ուստան էլ այնպես:

– Ձե՛ներդ, Գյումրվա անոթիներ, ընկել եք գյուղերը, փոր կպտըտցնեք[5], դեռ մարդու էլ չեք հավնի. ձեզպեսներին էնքան եմ ջուրը տարել, ծարավ ետ բերել. դուք ո՞ւմ ձեռք կառնիք. դուք է՞լ եք մարդ. դուք է՞լ եք մարդու շարքի. խաղք ու խայտառակ գյումրեցիք, ձեզի ո՞վ չի ճանչնա. դուք էն չե՞ք, որ անոթի-ծարավ՝ գերեզմաննե-րի[6] քարերի վրա տամա կխաղաք, ու ձմեռը փուռի[7] երթիկները՝ խումար: Տո՛, հոգի հայհոյողներ[8], դուք էն չե՞ք, որ տասը գրվանքեն փութի[9] տեղ կքաշեք, տարան

---

1 В կարմիր քթով գյումրեցին սրա վրա սաստիկ վիրավորվեց և կտրեց Ուստայի խոսքը. / – Ուստա, ի՛նչ զոռ փուչտ կուռեցնես: *փխ* Ուստա, ի՛նչ զոռ ... պատվի համար:

2 В փուչտերին

3 В Ուստեն

4 В քեզի

5 В + հլա

6 В գերեզմննների

7 В ֆռընի

8 В չոթողներ

9 В փթի

եղեն ծանր կհաչվեք, ոտներդ կչեռքի քար կչինեք, սատանի ձագե՛ր...

– Լավ, լավ, Ուստա Ջան, մի նեղացիր,– թախանձեց Օսկանը,– օտար մարդիկ են, քեզ չեն ճանչնա, չգիտեն, ինչ մարդ ես:

– Ջեռքս հո քարի տակ չէ, որ էդոնց թուք ու մուրը տանիմ. էդոնց ցերեկը մանգալածը, ես գիշերն եմ ման նկել. էդոնց կնանիքը ժամ կերթան, Աստվածածնուն կաղաչեն, որ իրենց մարդոցը մահ տա. էդքա՛ն էտոնք [գե՛չն են], գե՛չն են[1]...

Այնինչ Օսկանը հյուրերի ոտները սեղմելով, աչքովունքով հասկացնում էր, որ լռեն[2]. նրանք էլ լռում էին՝ ականջները կախ, բերաններում մնացած պատառները պաղ-պաղ ծամելով[3]:

– Ուստա Ջան, Ուստա Ջան, ներող եղի՛ր, էսօր-էսօր էդոնք[4] մեր հյուրն են, քու օճախիդ մեջ[5], ներող եղիր, սիրտդ լեն պահի՛ր...

Քանի խնդրում էին Օսկանն ու Քերոբը[6], Ուստան այնքան ավելի թև էր առնում:

– Տո՛, ես չտրաքվիմ, ո՞վ տրաքվի. մեկ՝ ժամացույցս[7] չեն հավնի, մեկ՝ վարպետությունս[8] կծաղրեն... ես ձեզ մարդ ասողին... թյո՛ւ, ախպեր Օսկան, կուզես նեղացիր[9],

---

1 В *չիք էդոնց կնանիքը ... գե՛չն են*

2 В + *համբերեն*

3 В *ծամում*

4 В *չիք*

5 В + *ամոթ է*

6 В *խնդրում էր Օսկանը փխ խնդրում էին Օսկանն ու Քերոբը*

7 В *սհաթս*

8 В *ուստությունս*

9 В *նեղացի*

կուզես՝ մի՛. ես էսոնց հետ հաց չեմ կտրի. դու էլ որ տղա չըլնեիր՝ մարդու կչիռքը[1] կհասկանայիր ու այվանս գոմ չէիր դարձնի[2]...

Ուստա Կարո, դո՛ւ, Ուստա Կարո, մեկ էլ վեր ելավ սեղանից ու բարկացած մի գլուխ դեպի դուրս. Քերոբը[3] [ընկավ ետևից] կտրեց առջևը[4]. բոլորի վրա սառը ջուր մաղվեց:

– Ուստա՛ Ջան, մեծ ախբեր[5], վերև Աստված, ներքև – դու. ներող եղիր[6], Օսկան ախբոր հետ[7] կերած մի բրդուճ հացը միտքդ բեր:

Քերոբն էր խնդրողը[8] ու դռան առջև բանդ եղել-կանգնել[9]:

– Թո՛ղ, ե՛լ երթանք [չոլերի] անապատների մեջ տուն չինենք, նստինք[10]:

– Յա, Կարո Ջան, հոգուդ մատաղ, քովդ էնքան պատիվ[11] չունի՞մ, ինձի ողջ-ողջ թաղես, լավ է, ո՞ւր կերթաս, էսքան տարվա աղ ու հացկեր ենք, Ջան ասել ու Ջան լսել. հիմի՝ ամենքը ոտքի տակ տանք, ի՞նչ է ասածդ[12]. երկ-

---

1 В խաան ու խամը *վրա* կչիռքը

2 В չինի + (ել երթանք չոլերի մեջ տուն չինենք, նստինք:)

3 В Փիլոան

4 В *չիք* կտրեց առջևը

5 В ախպեր

6 В + (խղճի պրի)

7 В մոտ

8 В Փիլոան էր, խնդրում էր *վրա* Քերոբն էր խնդրողը

9 В + Օսկանը նույնպես կտրեց նրա առաջը, փնչից կախ ընկնելով:

10 В *չիք* Թո՛ղ, ել երթանք ... չինենք, նստինք

11 В պատիվ /խաթր

12 В ըսածդ

նուց-գետինք կբցես ինձի[1]*. տե՛ս, գլուխս կդնեմ չեմքիդ*[2] *վրա, վիզս կտրի՛ր*[3]*, եւս ուր կուզես՝ դնա...*

Այսպես ասելով փաթաթվեց Ուստայի վզովը, համբուրեց ու ականջից չշնջաց.— «Էդ չարժեցող ամբարտավանների համար արժե՞, որ արյունդ պղտորես. ես քեզի էդպես չգիտեի»[4]*:*

Կարոյի աչքերը լցվեցին. կանգ առավ, գայրույթը մեղմացավ, գյումրեցիք էլ մեկ-մեկ եկան և զղջումով գլուխները կախ, ձեռք տվին Ուստային[5] *խնդրելով*[6]*.—*

— Ուստա, մեղա Աստծու, հաշտվինք:

Ուստա Կարոյի[7] *սիրտն [բոլորովին] իջավ:*

— Ես ոխ պահել չգիտեմ. իմ սիրտը [գնչ է] շուտ է, գնչ բան չի տանի. լավ, հաշտվինք. էս վերջինն ըլնի. մարդու հարգը գիտնաք. ես ձեր ակռի հավկիթը չեմ. ակռա չի դիմանա ինձ[8] *[իմացա՞ք]...*

Ուստան բոլորին ձեռք տվեց ու գնաց նստեց իր տեղը:

— Նեղսրտելու բան չկա, Ուստա ջան, մեծ մարդը մեծ սիրտ կունենա,— ասավ Օսկանը.— էս մարդիկը չգիտեն, թե ում հետ հանաք կաննն:

— Թո՛ղ հիմի իմանան, թե ես ինչ մարդ եմ ու որտեղ որ իրենցը կպատմեն, էնտեղ էլ իմը չմոռանան...

Հյուրերը պատերի տակ քաշված, լուռ նստել ծխում էին. ոչ ոքի բերանը չէր բացվում մի խոսք ասելու: Մի

---

1 B + Հնչ խաբարություն ունի՞ս

2 B չեմքի

3 B + վրայեն անցիր

4 B չիք Այսպես ասելով ... էդպես չգիտեի

5 B Ուստին

6 B չիք

7 B Ուստայի փխ Ուստա Կարոյի

8 B ինձի

ծանր, ճնշող[1] լռություն իջել էր այվանի ամեն անկյուններում:

[Ուստի սիրտը նեղվում էր] Մի փոքր անց, Ուստան[2] վեր կացավ, չուխան[3] հագավ, չոնգուռն առավ պատից և կանգնեց հատակին:

– Բարի գիշեր ձեզի[4].– [դառնալով դեպի] ասաց հյուրերին և ապա ուղղվելով դեպի դուռը[5], Օսկանին կամացուկ ասաց.

– Մի քիչ կալերը կերթամ. սիրտս կնեղվի:

Քերոբը[6] հնազանդ ստվերի պես հետևեց նրան:

Ուստան գնաց նստեց կալը[7], ծառի տակ, Քերոբն[8] էլ մոտը[9]. Ուստայի[10] սիրտը[11] ելած էր և հանգստանալու համար չոնգուռը նվագեց: Գարնան ջինջ գիշերվա լռության միջից լսվում էր չոնգուռի անուշ հնչյունների հետ Քերոբի[12] սրտալի ձայնը.

– «Սիրելիս, օր դատի, օր կեր.
Բախտդ[13] մի տուր նամարդի ձեռք»:

---

1 B անախորժ

2 B *չիք* մի փոքր անց, Ուստան

3 B չուխեն

4 B + [որտեղ որ ձերը կպատմեք, էնտեղ էլ իմը չմոռնաք, ասավ]

5 B և դուրս [գնաց] գալով այվանից *փխ* և ապա ... դեպի դուռը

6 B Փիլոս աղբարը

7 B կալի

8 B Փիլոսն

9 B + (լուռ ու տխուր)

10 B Ուստի

11 B սիրտն

12 B Փիլոսի

13 B Յախեդ

<ԳԼՈՒԽ Դ>

<Բ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Ուստա Կարոն ներս մտավ իր այվանը — օթևանը:

Ներս մտնելով չուխան հանեց, կախեց պատից ու նստեց իր մշտական տեղը՝ բուխարիկի աջ կողմը: Իր այդ մշտական տեղն ու կարմիր մեծ բարձը զիջում էր[1] միայն չա՛տ պատվավոր հյուրերին:

Բուխարիկի մարմանդ կրակից վառեց ծխախոտը և թիկն տվեց բարձին: Նրա բուխարիկում միշտ մխում էր աթարը, տարին տասներկու ամիս, օր ու գիշեր. երբեք պիտի չկտրվեր նրա օջախի ծուխը[2], ուր[3] որ լիներ նա.— «Իմ ծուխս չպիտի կտրվի, ամպերու հետ ման պիտի գա»,— ասում էր Ուստան, և տանեցիք սրբությամբ կատարում էին նրա իղձը:

Ուստան ծխելով մտածում էր վաղվան անելիքների մասին, սանամորների[4] այցի մասին: Այդ մտածուն[5]

Համեմատվող բնագրային միավորներ.

A = Ավետիք Իսահակյան, Եժ, 1951, հ. III, էջ 289-295:

B = «Արեգ», 1922, օգոստոս, թիվ 8, էջ 469-475:

1 B + նա

2 B + ինչ էլ որ լիներ

3 B + էլ

4 B + ցանկալի

5 B ժպտուն

մտքերի մեջ սուզված՝ գլուխը դրեց բարձին ու չիմացավ, թե ինչպես աչքերը փակեց:

Երեկոյան, ժամի զանգերի հետ, ներս մտավ Փիլոսը՝ Զավուշ մականունով (Ուստա Կարոյի ընկերը), գոլորշիով պատած սամովարը գրկին: Սեղանը զետեղեց սովորական տեղում, թեյի պարագաները հանեց պահարանից: Բաժակների աղմուկից զարթնեց Ուստան. գնաց դուրս, լվացվեց ու եկավ նստեց թեյի:

– Զավո՛ւշ չկա, ամեն օրվա վրա էսօր քեֆս աբրա Մարկոսի է:

– Աստված ամեն մարդու սրտովը իրեն կուտա,– ասաց Փիլոսը և բաժակները լցրեց:

Եկան Օսկանն ու հացահատիկ առնող գյումրեցի վաճառականները:

– Բարի՛ իրիկուն,– ասացին նրանք:

– Բարո՛վ եկաք, համեցեք, նստեք,– պատասխանեց Ուստան և տեղ ցույց տվեց նրանց: Զորս հոգի էին գյումրեցիները. աչքի պոչով Ուստան մեկիկ-մեկիկ տնտղեց նրանց:

– Էս էլ մեր Ուստա Կարոն, էս էլ մեր Փիլոս ախպարը[1],– ասաց Օսկանը,– ճանա՛նչ եղեք:

Մուսեցան իրար ձեռք տվին:

– Բարո՛վ տեսանք,– ասաց Ուստան և մի փոքր անց չարունակեց,– ախպրտի՛ք[2], չա՛յ անուշ արեք:– Եվ ինքը կարմիր թաշկինակով վերցրեց բաժակը և մեղմ փոփոցով սկսեց խմել:

– Ի՞նչ նորություն կա Գյումրի, մենք գեղի անկյուն ընկած՝ բան չենք իմանա:

---

[1] В ախպարը

[2] В ախբրտիք

– Առողջություն, ուրիշ էնպես բան չկա,– պատասխանեց քաղաքացիներից մեկը, որ մի քիչ սպիտակած մարդ էր:

– Հարստացող քիչ, աղքատացող շատ,– ասաց մի ուրիշը:

Փիլոսը թեյի բաժակները չարեց հյուրերի և Օսկանի առջև[1]:

– Ներսի աշխարհներէն ի՞նչ կա չկա,– հարցրեց Ուստան:

– Հա՛, մենակ գազեթներում կգրեն, թե էս տարի աշնանը աշխարքը պիտի կործանի. կան մարդիկ, որ շատ կվախենան:

– Իսկի եղնելու բա՞ն է. աշխարհք կործանի. ու կործանողն ո՞վ է.– խնդալով ասաց Ուստան.– ի՛նչ տուտուց բան ըլնի, քաղաքներեն դուրս կուգա. չա՛տ գիտնակ մարդիկ չա՛տ անգետ կխոսեն:

– Զգիտեմ[2], գազեթները կըսեն, իմ խելքիս էլ չի պառկի,– արդարացավ գյումրեցին:

– Գազեթներն էլ մարդիկ կգրեն, հո՞ ավետարանի մեջնեն չէ, որ Աստծու խոսքը[3] ըլնի. խելքիս տունը չի մտնի էդպիսի բաները:

– Ինչո՞ւ չէ, Ուստա, կրնա ըլնի, աշխարհանցում-թոթափելն աստեղց, ըշտե գրած է ավետարանի մեջ,– վկայեց գյումրեցիներից մեկը:

Ուստան գլուխը չկորցրեց, լսելով Ավետարանի ապացույցը, և ուղղակի նայելով խոսակցի աչքերին՝ համոզական շեշտով ասաց.

---

1 В առջևը

2 В Չ'իտեմ

3 В խոսքն

– Էդ ուրիշ բան, դիտեմ, Հայտնի է. ասածդ ավուրն ահեղ դատաստանի մասին է. էդորեն ջոկ, խելքիս չի նստի գազեթներու գրածը. աչխարք եղել է, կա ու կմնա. հավի բուն չէ, որ քանդվի. մեկ էլ որ,– ժպիտը խաղացնելով չրթունքների վրա, ավելացրեց,– քանի կնիկը կա, աչխարք չի անցնի:

– Խելոք խոսքին ո՞վ բան կըսե,– ուրախ ծիծաղով ասացին վաճառականները: Ուստայի ինքնասիրությունը գոհացավ:

– Փիլո՛ս ջան,– ասաց,– մի հատ էլ լից, էսօր չայը շա՛տ դուր կուգա:

– Էնոր համար, որ էսօր մախմուռ ես,– վրա բերեց Ոսկանը:

– Ի՞նչ է, Ուստան քեֆի մե՞ջ է եղել,– հարցրեց հետաքրքրված գյումրեցիներից մեկը, որի քթի կարմրությունից երևում էր, որ արաղի լավ բարեկամ է: Զարմացքի չեչտ էր դրված նրա հարցի մեջ, թե ինչպես է, որ գյուղում իր ներկա եղած օրերում քեֆ է եղել ու ինքը չի մասնակցել հյուրասիրական իրավունքով:

– Երեկ, Բագրան, քեֆ, ի՛նչ քեֆ, հով տեղ, ջրի ափին, հինգ գավ գինի խմեցի, պակասը որ չասեմ. արաղն էլ իրեն կարգին:

«Փչան կերևա Ուստան»,– իրար ականջ չչնջացին վաճառականները:

– Մարդ կրնա՞ հինգ գավ գինի խմե,– զարմացած հարցրեց գյումրեցին:

– Մարդը գիտե,– կտրուկ պատասխանեց Ուստան, վերցնելով <թեյի> չորրորդ բաժակը...– Է հե՛յ, անցած օրին օր չի հասնի. երեկ էս ժամանակս քեֆս սուլթան Մուրադի քեֆն էր,– կարոտով բացագանչեց Ուստան, ժամացույցը հանելով.– էս ժամանակս, ուղիղ ժամը 9-ին:

– Յա՛,– հանկարծակիի եկած գոչեց գյումրեցիներից մեկը,– ինչպե՞ս թե ժամը 9-ին, քու ժամացույցդ ի՞նն է, Ուստա:

– Բա քանի՞սը կուզես ըլնի,– ասաց Ուստան:

– Իմս օխթն է՝ բանըմ սուտ. քո՞ւկդ, Գևոր, քո՞ւկդ, Օնես:

– Շա՛տ սուտն է, ի՞նչպես թե բանըմ սուտ,– քմծիծաղի տվեց Ուստան: Գևորն ու Օնեսը նայեցին ժամացույցներին:

– Մերն էլ օխթեն բանըմ պակաս է. էդպես էլ կըլնի. արևը դեռ մեր չի մտել:

– Ուստա ջան, ժամացույցդ չա՛տ առաջ է, հրեղեն ձիու պես կվազե. էդպես որ երթաս, գարնան ծերին չհասած՝ ձմռան մեջ տեղը կըլնիս,– մեղմ ձայնով, բայց ծաղրի չեչտով ասաց առաջին խոսող գյումրեցին:

Ուստային թեև հաճելի եղավ ձիու համեմատությունը, բայց ընդհանրապես սրտին դիպավ՝ նկատելով նրա խոսքերի խորքում ծաղրանք: Եվ ուղղակի թշնամաբար տրամադրվեց դեպի նրանց:

– Ո՛ւմ ժամացույցը. իմ ժամացույցիս հատը չկա ի վեր աշխարքի. ես ի՞նչ անեմ, որ ձերը ձեզի պես օխթը տարվա գոթի է:

Ասաց Ուստան և թյութունի տուփը գոտիկի ծալքերից հանելով՝ արագ-արագ մի գլանակ փաթաթեց, ապա ակներև թշնամանքով գյումրեցիների գլխի վրայով նետեց տուփը Ոսկանի գոգը, որ սա էլ գլանակ չինե: Հյուրերը նրա այս վիրավորիչ վարմունքը չհասկանալ ձևացրին:

– Լավ, մեկ տուր տեսնենք ժամացույցդ. կարելի է, որ անթիկա է,– ասաց ավագ գյումրեցին՝ ձեռքը մեկնելով:

Ուստան տվեց ժամացույցը. գյումրեցին ուշի-ուշով նայում էր: Ժամացույցը «Օսմանլի» կոչված տեսակից

էր, կափարիչը ուռուցիկ, բարձր, արծաթյա, հաստ ու կոպիտ. թվերը գուտ արաբական նշաններով. ձայնը ամուր չնկչնկում էր: Ուստան չունչը կտրած սպասում էր վճռին:

– Ուստա ջան, ժամացույցդ կնմանի բռնոթու (քթախոտի) տուփի...

Այս անքաղաքավարի համեմատությունը Ուստային հանեց ինքն իրենից. մի փոքր լռեց, բարկությունը քանի գնաց աճեց, հոնքերը հավաքեց իրար[1], աչքերը մեծ-մեծ բացեց և սրտի որոտմունքին ազատ ելք տալով՝ ասաց.

– Է՛ս գյումրեցիք... տո՛, դուք ի՞նչ կհասկանաք. ձեր քաղաքեն[2] դուրս դուք հավկուր եք. ի՞նչ կհասկանաք բանի լավն ու գեշը, արաղի մեծն[3] պստիկը մենակ գիտեք. ուրիշ բան – վրա՛ս դրե, ղի քո է:

– Ինչի՞, էլ ժամացույց չենք տեսել. քուկդ որտեղե՞ն է որ...

– Ի՞մս.– իմս Էրզրումի[4] մութասարիֆի ժամացույցն է. հայտնի խմբապետ Փալաբեխ Նադոն, էն որ Բասեն կնստի, էն սպանել է էնոր ու ժամացույցը վրայեն առել: Մութասարիֆին էլ Էրզրումի[5] վալին է նվեր տված եղել: Հինգ տարի առաջ Ղարս հանդիպավ խմբապետն ինձի ու հիշատակ տվավ. ես էլ իրեն[6] լավ քեֆ նշանց տվի: Ի՛նչ խոսք, որ ժամացույցս անթիկա է. տարա ժամացույց չի-

---

1 B + վրա
2 B քաղքեն
3 B + ու
4 B Էրզեռումի
5 B Էրզեռումի
6 B իրան

նող մեկ անվանի վարպետի ցույց տվի. Փիլոսն[1] հետս էր. էստեղ սուտ բան չկա...

Փիլոսը այդ խոսքի վրա՝ գլխով լռելյայն հաստատեց փաստը:

– Էդ ժամացույցը չինողն ասավ, թե՝ ժամացույցդ տեսոք հասարակ է, բայց ընտիրն է. քարերը ամենքը անգին են ու իսկի մաշելիք չունեն[2], և էլ մինչև իրարուց բաժանվիլը ժամացույց չինողի երեսը չի տեսնելու, ասավ. հերը տղին քսան թումանի չի տա. հիմի դուք ի՞նչ կասեք. հինգ տարի է՝ ձեռքես ի՛նչ կքաշե: Շատ ժամացույցներ եմ առել ու ետ ծախել, էսպեսը չեմ տեսել: Էն տարի էջմիածին էի գնացել, նայեցի տեսա իջման տաճարի զանգերի հետ կխոսար. ամեն մեծ մարդոց ժամացույցի հետ կխոսա. Խրիմյան Հայրիկի ու եպիսկոպոսների: Անիի ներսերեն գիտնակ երևելի մարդիկ էին եկել, էնոնց ժամացույցներու[3] հետ կխոսար: Մեկ խոսքով, կարճ ասեմ, Աստծու անսխալ ժամացույցներու[4] հետ՝ ըսել է արևի, աստղերու, լուսնյակի ու աքլորներու հետ կխոսա, արդար կչիդքի պես. հիմա[5] հասկացա՞ք...

Ուստան ոգևորված ավարտեց իր ժամացույցի գովքը և հաղթանակով նայեց գյումրեցոց երեսին: Նրանց աչքերի մեջ մի զսպված ուրախություն էր փայլում, հագիվ էին տիրապետում իրենց քրքիջին:

– Աչխարքի մեջ ամեն բան կրնա ըլնի, կհավատանք ժամացույցիդ գործին, Ուստա Ջան, ա՛ռ, գլխիդ մատաղ,

---

1 B + էլ

2 B չունին

3 B ժամացույցնելու

4 B ժամացույցնելու

5 B հիմի

Հանկարծ փորձանք չպատահի[1], մեզ մեղավոր Հանես.— ասաց հանդարտությամբ ավազ գյումբեցին և ժամացույցը հոգատար զգուշությամբ դրեց տիրոջ առջևը:

Ուստան վերցնելով ժամացույցը, կապեց չղթայից և դրեց ծոցը:

Նրա ժամացույցի հռչակը տիրոջ անվան պես հայտնի էր շրջանի գյուղերում: Հատկապես՝ շատերը գյուղից գյուղ մարդու միջոցով ուղարկում էին իրենց ժամացույցներն Ուստա Կարոյի ժամացույցի հետ ներդաշնակելու, իսկ ինքը ոչ մեկի հետ, և ոչ մի տեղ չէր ներդաշնակում: Ճշտապահ՝ միշտ իր կեսօրին, երբ իր ժամացույցի սլաքները պառկում էին իրար վրա, այն ժամանակ միայն լարում էր նա: Այսպիսի անխորտակելի հավատ ուներ իր ժամացույցի վրա, և այս հավատը վարակել էր շրջանի շատ ժամացույցներ: Այսպիսով, մինչդեռ Շիրակում օրը կեսօր էր,— նրանց ժամերը երկուսն էր՝ ճաշից հետո: Արևը նրանց համար երկու ժամ առաջ[2] էր ծագում և երկու ժամ առաջ էր մայր մտնում:

Այս խոսակցության վրա իջավ մի լռություն, որ հարկավոր էր բոլորին հանգստացնելու համար, և տևեց մինչև ընթրիքի սեղան բանալը: Ուստան արխալուղի թևքերը վեր քշտեց, կարմիր թաշկինակը փռեց ծնկներին և նախկին քենը մոռացած՝ ժպտերես դիմեց հյուրերին.

— Ախպրտիք[3], բարո՛վ եք եկել, մոտեցեք հա՛ց անուշ արեք:

Եվ լցրեց արաղի բաժակը ու սկիզբը ինքը խմեց՝ ասելով.

---

[1] B + ավերվի

[2] B Հետո

[3] B Ախբրտիք

– Առաջ ես կխմեմ, որ իմանաք թե դեղած չէ:

Բաժակը լցվելով ու դատարկվելով[1] չրջան գործեց և նորից հասավ Ուստայի ձեռքը:

Ուստան դարձյալ լցրեց բաժակը, որ դարձյալ չրջան գործեց:

Հացի միջոցին ավագ վաճառականը հարց տվեց.

– Ուստա, իրավունք ունի՞նք մի բան հարցնելու:

– Իրավունք է,– պատասխանեց Ուստան:

– Դուն ի՞նչ արհեստի վարպետ ես, կրնա՞նք իմանալ:

– Ես չատ բանի արհեստ ունիմ. ա՛յ, էս այվանը ձեռքիս գործն է. հոր կփորեմ, աղբյուր[2] կբերեմ, կամուրջ[3] կկապեմ, կրնամ սել ու արոր չինեմ. և էլ ուրիշ չա՛տ բաներ. չինել տվող ըլնի, ամեն բան ձեռքես կուգա:

– Հարցնելն ամոթ չըլնի,– ասաց կարմիր քթով գյումրեցին, որի աչքը չէր հեռանում արաղի չչից.– չինել տվողը ըլնի՝ կրնա՞ս Անիի կարմունջի պես չինել՝ մեկ ոտքն էս կողմը, մեկել ոտքն էն կողմը:

Ուստան զգաց, որ իրեն ձեռք են առնում, հեգնում.– «Էդ գյումրեցոց սովորութիւնն է, բայց ես ո՞վ եմ, որ տակը մնամ»,– այսպես վճռվեց մտքում, և հանգիստ ձայնով ասաց.

– Օխտը[4] էդպես գետ ըլնի, կարմունջ կրնամ ձգե. չա՛տ չինած ունիմ էդպեսները:

Գյումրեցիներից մեկը աննկատելի փսփսաց ընկերի ականջին. «Լավ տրաքացնողն է. քիչ ձեռք առնենք՝ ուրախանանք»:

---

1 В պարդկվելով

2 В աղբուր

3 В կարմունջ

4 В Охթը

– Ուստա, կրնա՞ս,– հարցրեց գաղտնի փսփսացողը,– էնպես հոր փորել, որ ողջ Նախճվանի հացը հավքի մեջը:

– Վարպետ մարդու ձեռքեն բան չի պրծնի.– կուվի պատրաստակամությամբ պատասխանեց Կարոն,– էնպես հոր փորեմ, որ ձեր ողջ Գյումրին մեռնի- կենդանով, ձեր տներով ու խանութներով, ձեր քառսուն պորտով հավքիք մեջն ու մնաք մինչև Քրիստոս գա դատաստան:

– Վնաս չունի, տղամարդու գործ է. բայց, Ուստա, էդքան մեծ հոր փորած կա՞ս իսկի:

– Շատ...– կարճ կապեց Ուստան:

– Որ փորել ես, ի՞նչ է դուրս եկել,– հարցրեց չորրորդ գյումրեցին:

Մինչև Ոսկանն ուզում էր միջամտել՝ այս անախորժ խոսվրտուքին վերջ տալու, և Փիլոան իրեն ուտում էր, երբ Ուստան համբերանքը հատած վրա տվեց.

– Էնպե՛ս տաք, եռացման, եռացման[1] չրեր, որ ձեր ողջ գյումրեցոց Հարսն ու աղջիկը կրնան բաղնիք անել[2]...

– Ի՛նչ գոռ փուշտիկ[3] կուռեցնես...– Ուստայի խոսքը կտրեց կարմիր քթով գյումրեցին, սաստիկ վիրավորված լինելով իր համաքաղաքացիների ընտանեկան պատվի համար:

– Բա՛, ձեզի պես փուշտիկներին ես լավ կուռեցնեմ. մաքերդ ի՞նչ է,– կրակ կտրած ասաց Ուստան:

– Ուստա՛, լեզուդ մի քիչ քեզ[4] քաշե, Թրի պես մարդ կզարկե,– լսվեց մեկի ձայնը:

---

[1] Բ եռացման, եռացման *փխ* եռման

[2] Բ + ու իրանց ճերմակ ծծերը...

[3] Բ փուշա

[4] Բ քեզի

Ոնց որ կարկտաբեր ամպը գոռար ու փուլ գար: Ուստան էլ այնպես...

– Ձեններդ, Գյումրվա անոթիներ, ընկել եք գեղերը, փոր կպտցընեք, դեռ մարդու էլ չեք հավնի՞. ձեզպեսներին էնքան եմ ջուրը տարել, ծարավ ետ բերել. դուք ո՞ւմ ձեռք կառնիք, դուք է՞լ եք մարդ, դուք է՞լ եք մարդու չարքի. խաղք ու խայտառակ գյումրեցիք, ձեզի ո՞վ չի ճանչնա, դուք էն չե՞ք, որ անոթի-ծարավ՝ գերեզմանների քարերի վրա տամա կխաղաք ու ձմեռը փուռի երդիկները՝ խումար. տո՛, հոգի հայհոյողներ, դուք էն չե՞ք, որ տասը գրվանքան փութի տեղ կհաչվեք, տարան եղեն ծանր կքաշեք, ոտներդ կշեռքի քար կշինեք, սատանի՛ ձագեր...

– Լա՛վ, լա՛վ, Ուստա ջան, մի՛ նեղացիր,– թախանձեց Ոսկանը,– օտար մարդիկ են, քեզ չեն ճանչնա, չգիտեն ինչ մարդ ես:

– Ձեռքս հո քարի տակ չէ՞, որ էդոնց թուք ու մուրը տանեմ. էդոնց ցերեկը մանգալածը՝ ես գիշերն եմ ման եկել. էդոնց կնիկները ժամ կերթան, Աստվածածնուն կաղաչեն, որ իրենց մարդոցը մահ տա, է՛դքան էդոնք գեչն են...

Այնինչ Ոսկանը հյուրերի ոտները սեղմելով աչքովունքով հասկացնում էր, որ լռեն, և նրանք էլ լռում էին՝ ականջները կախ, բերաններում մնացած պատառները պաղ-պաղ ծամելով:

– Ուստա ջան, Ուստա ջան, ներող եղիր, էսօր, էսօր էդոնք մեր հյուրն են. քու օջախիդ մեջ ներող եղիր, սիրտդ լեն պահիր:

Քանի խնդրում էին Ոսկանն ու Փիլոսը, Ուստան այնքան ավելի թև էր առնում:

– Տո՛, ես չտրաքվիմ, ո՞վ տրաքվի. մեկ՝ ժամացույցս չեն հավնի, մեկ՝ վարպետությունս կծաղրեն... Ես ձեզ

մարդ ասողին... թյո՛ւ. ախպեր[1] *Ոսկան, կուզես նեղացիր, կուզես՝ ոչ*[2]*. ես էսոնց հետ հաց չեմ կտրի. դու էլ որ տղա չլիներ՝ մարդու կչեռքը կհասկանայիր. ու այվանս... մեղա՛ Աստծու, ինչ պիտի ասեի...*

Ուստա Կարո, դո՛ւ Ուստա Կարո. մեկ էլ վեր ելավ սեղանից ու բարկացած մի գլուխ՝ դեպի դուրս:

Փիլոսը կտրեց առջևը. բոլորի վրա սառը ջուր մաղվեց:

— Ուստա՛ ջան, մեծ ախպեր[3]*, վերև Աստված, ներքև — դու. Ոսկան ախպոր*[4] *հետ կերած մի բրդուճ հացդ միտքդ բեր:*

Փիլոսն էր խնդրողը և դռան առջև բանդ եղել կանգնել:

— Թո՛ղ, ե՛լ էրթանք[5]*, անապատներու մեջ տուն չինենք նստինք:*

— Յա՛, կարո ջան, հոգուդ մատաղ, քովդ էնքան պատիվ չունի՞մ, ինձի ողջ-ողջ թաղես լավ է, ո՞ւր կերթաս, էսքան տարվա աղ ու հացկեր ենք[6]*, հիմի ամենքը ոտքի տա՞կ տանք, ի՞նչ է արածդ*[7]*:*

Ոսկանն այսպես ասելով փաթաթվեց Ուստայի վզովը, համբուրեց ու ականջին չշնջաց — էդ չարժեցող ամբարտավաններու համար արժե՞ որ արյունդ պղտորես. ես քեզի էդպես չգիտեի:

---

1 B ախբեր

2 B մի՛

3 B ախբեր

4 B ախբոր

5 B երթանք

6 B + ջան ասել ու ջան լսել

7 B ասածդ + երկնուց գետինք կքցես ինձի. տե՛ս, գլուխս կդնեմ չեմքիդ վրա, վիզս կորի՛ր, նաև ուր կուզես, դնա:

Ուստա Կարոյի աչքերը լցվեցին. կանգ առավ, զայրույթը մեղմացավ, գյումրեցիք էլ մեկ-մեկ եկան և ղղջումով՝ գլխիկոր, ձեռք տվին նրան[1].

– Ուստա, մեղա Աստծու, հաշտվինք:

Զայրույթն իջավ:

– Ես ոխ պահել չգիտեմ, իմ սիրտը շուտ կնեղվի[2], գեչ բան չի տանի, լա՛վ, հաշտվինք. էս վերջինն ըլնի, մարդու հարգը գիտնաք. ես ձեր ակռի հավկիթը չեմ, ակռա չի դիմանա ինձի...

Ուստան բոլորին ձեռք տվեց ու գնաց նստեց իր տեղը:

– Նեղսրտելու բան չկա, Ուստա՛ ջան, մեծ մարդը մեծ սիրտ կունենա.– ասաց Ոսկանը,– էս մարդիկը չգիտեն, թե ում հետ հանաք կանին:

– Թող հիմա իմանան, թե ես ինչ մարդ եմ. և էլ՝ ուրտեղ[3] իրենցը կպատմեն, էնտեղ էլ իմս չմոռնան...

Հյուրերը պատերի տակ քաշված՝ լուռ նստել ծխում էին, ոչ ոքի բերանը չէր բացվում մի խոսք ասելու. մի ծանր, ճնշող լռություն իջել էր սենյակի բոլոր անկյուններում:

Մի փոքր անց, Ուստան վեր կացավ, հագավ չուխան, չոնգուռն առավ պատից և կանգնեց Հատակին:

– Բարի գիշեր ձեզի, ներող եղնք,– խոսեց հյուրերին և ապա ուղղվելով դեպի դուռը, Ոսկանին կամացուկ ասաց.– մի քիչ կալերը կերթամ, սիրտս կնեղվի:

Փիլոսը հնազանդ ստվերի պես հետևեց նրան:

---

[1] B + խնդրելով

[2] B է

[3] B + որ

Ուստան գնաց նստեց կալը, ծառի տակ, Փիլոսն էլ մոտը: Ուստայի սիրտը[1] ելած էր, և հանգստանալու համար չոնգուռը նվագեց: Գարնան ջինջ գիշերվա լռության միջից լսվում էր չոնգուռի անուշ հնչյունների հետ Փիլոսի սրտալից ձայնը.

– «Սիրելիս, օ՛ր դատի, օ՛ր կեր,
Բախտըդ մի՛ տուր նամարդի ձեռ....»

[1] Բ սիրտն

Դ. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուստա Կարոն երեք ոտ սանդուխ բարձրանալով՝ մտավ իր օթևանը:

Մի հայացքով դննեց սենյակը վեր-վար, աչ ու ձախ, տեսավ ամեն ինչ կարգին տեղն է. բուխարիկում մարմանդ ծխում է աթարը: Գոհ դեմքով հառաչացավ, չուխան հանեց, կախեց պատից ու նստեց իր մշտական տեղը՝ թախթի վրա, բուխարիկի աչ կողմը: Իր այդ մշտական տեղը՝ մեծ բարձով, գիջում էր միայն չատ պատվավոր հյուրերին:

Բուխարիկի ճերմակ վառով պատած մեղմ կրակից վառեց ծխախոտը՝ թիկն տալով բարձին, սկսեց ծխել:

Նրա բուխարիկում միշտ մխում էր աթարը, տարին տասներկու ամիս, օր ու գիշեր. երբեք պիտի չկտրվեր նրա օճախի ծուխը, ինչ էլ որ լիներ, ուր էլ որ լիներ նա.— «Իմ ծուխս չպիտի կտրվի, ամպերու հետ ման պիտի գա».— ասում էր Ուստան, և տանեցիք սրբությամբ կատարում էին նրա իղձը:

Ուստան ծխելով մտածում էր վաղվան անելիքների մասին, սանամայրների ցանկալի այցի մասին: Այս ժպտուն մտքերի մեջ սուզված՝ գլուխը իջավ բարձին ու չիմացավ, թե ինչպես աչքերը փակեց:

Բավական ընդարձակ սենյակ էր նրա օթևանը, երկու մեծ կամարակապ պատուհաններով, որոնք արևին

էին նայում: Դուռը բացվում էր հարավային կողմը, բակի վրա, գոմի և ախոռի դռների դեմ ու դեմը, որոնց միջև գտնվում էր Օսկանի տան ընդհանուր մեծ մուտքը:

Օթևանի հյուսիսային և արևմտյան պատերը հարած էին Օսկանի տան շենքերին, իսկ հարավային և արևելյան պատերը Ուստան շինել էր սրբատաշ սև քարերով, եզրված կարմիր քարերով, այնպես որ սև մասը կարմիր շրջանակի մեջ էր առնված. նույն ոճով էին պատուհաններն ու դուռը՝ կարմիր շրջանակներով և քանդակված: Փեղկերը կանանչ էին ներկված:

Ուստան կարմիր ու կանանչ գույները առհասարակ շա՛տ էր սիրում:

Սենյակը սալահատակ էր: Հյուսիսային պատի վրա բուխարիկն էր, Ուստայի բոլոր հմտությամբ կերտված, իր ազնիվ ճաշակով: Նա օճախ կապելու մեջ հռչակավոր էր, և իր սեփական ոճն ուներ:

Բուխարիկի սև կամարը երկու կողմից կիսաբաց և վարագույրի նման էր, նրբորեն ծալ-ծալ, ծոպավոր:

Նա ազուցված էր նույնպես կարմիր եզրների մեջ, որոնք երկու օձերի պես իրար վրա գալարված էին:

Նրա ոճը տարածվել էր շրջանի գյուղերում. տեսնողը իսկույն կասեր թե՝ Ուստայի ձևն է:

Բուխարիկի աջ ու ձախ թևերով, արևելյան և արևմտյան պատերի երկայնքին, լայն թախթեր կային՝ ծածկված թաղիքով և դորգերով, պատերի տակ շարեշար կարմիր բարձերով՝ կանանչ ծաղկազարդված: Իսկ աջ ու ձախ կողմերը պատերի մեջ կային երկու պատուհաններ՝ կարմիր փեղկերով. այնտեղ էին պահում երկու ընկերների թեյն ու շաքարը, ծխախոտը, բաժակները, օղին, հայելին, երես-սրբիչները և ուրիշ բաներ:

Սենյակի սպիտակ պատերի վրա փակցրած կային ճիա-
վոր կտրիճների, ծով ու ցամաքի պատերազմների, մարդ-
կային կյանքի շրջանները խորհրդանշող սանդուխքի գու-
նավոր մեծ նկարներ, որ գնել էր Ուստան Կարսում ռուս
շրջիկ գրավաճառներից: Այդ նկարների միջից հազիվ
նկատվում էին Վարդան Մամիկոնյանի, Դաշնակցական
խմբապետների՝ Սերոբի, Անդրանիկի և Կուկունյանի խմբի
պատկերները, որոնք նվեր էր ստացել Արտաշը գյուղա-
կան դպրոցը այցելող Դաշնակցական քարոզիչներից:

Դռան ձախ թևի վրա մի ծալք կար՝ վրան կարպետ քա-
շած, իրենց և հյուրերի համար լիառատ անկողիններով:
Ծալքի առջևը դրած էր մի մեծ կանանչ անտուկ, ուր պահ-
վում էին իրենց դրսնավուր հագուստ-կապուտները, և սա-
նամայրներին ու սանիկներին տրվելիք նվերները. վերջիննե-
րը սպառվում էին ու անընդհատ նորից տեղը լցվում:

Մյուս կողմը պատն ի վեր տնկած էր հացի խոնչան-
սեղանը, Ուստայի ձեռագործը. այնպես վարպետորեն էր
չինել այդ, որ երբ զետեղում էին թախթերի միջև՝ դառ-
նում էր մի շա՜տ վայելուչ ճաշասեղան:

Այդ բոլորի վրա իշխում էր առաստաղից կախված մեծ
լամբարը, որ Ուստան Կարսում հազարի միջից ընտրել
բերել էր ու մեծ խնամքով հսկում էր, որ չփչացնեն:

Նրա օթևանը, որ միանգամայն տան հյուրանոցն էր,
գյուղի ամենափայլուն չենքն էր, և որը իր ուրախ գե-
ղեցկությամբ գյուղը մտնողի աչքն էր հրապուրում և
օտարներին ու ճամբորդներին՝ դռնբաց ներս էր հրավի-
րում հանգստանալու և դիշերելու համար:

Երեկոյան, ժամի զանգերի հետ՝ ներս մտավ Փիլոսը
գոլորշիով սամովարը գրկին: Սեղանը զետեղեց սովորա-

կան տեղում. թեյի պարագաները հանեց. բաժակների աղմուկից զարթնեց Ուստան, դնաց դուրս լվացվելու. Օսկանենց հոտաղը ջուր լցրեց նրա ձեռքին, լվացվեց, եկավ նստեց թեյի:

– Ջավո՛ւշ ջան, ամեն օրվա վրա էսօր քնքիս աբրա Մարկոսի է:

– Ասպած ամեն մարդու սրտովը իրեն կուտա,– ասաց Փիլոսը և բաժակները լցրեց:

Եկան Օսկանն ու հացահատիկ առնող գյումրեցի վաճառականները:

– Բարի իրիկուն,– ասացին նրանք:

– Բարով եկաք, համեցեք, նստեք,– պատասխանեց Ուստան և տեղ ցույց տվեց նրանց: Ջորս հոգի էին, աչքի պոչով Ուստան մեկիկ-մեկիկ տնտղեց նրանց:

– Է՛ս էլ մեր Ուստա կարոն, է՛ս էլ մեր Փիլոս ախպարը.– ասաց Օսկանը ձեռքը մեկնելով,– ճանա՛նչ եղեք:

Մոտեցան՝ իրար ձեռք տվին:

– Բարով տեսանք,– ասաց Ուստան և մի փոքր անց շարունակեց.– ախպրտիք, չա՛յ անուշ արեք:

Եվ ինքը կարմիր թաչկինակով վեր առավ բաժակը և մեղմ փռփռոցով սկսեց խմել:– Ի՞նչ նորություն կա Գյումրի. մենք գեղի անկյունն ընկած՝ բան չենք իմանա:

– Ողջություն. ուրիշ էնպես բան չկա.– պատասխանեց քաղաքացիներից ավագը, որ մի քիչ սպիտակած մարդ էր:

– Հարստացող՝ քիչ, աղքատացող՝ չա՛տ,– ասաց մի ուրիշը:

Փիլոսը թեյի բաժակները չարեց հյուրերի և Օսկանի առջևը:

– Ներսի աշխարհներից ի՞նչ կա, ի՞նչ չկա.– հարցրեց Ուստան:

– Հա՛, մենակ գազեթներում կգրեն, թե՝ էս տարի աշնանը աչխարք պիտի կործանի. կան մարդիկ, որ չատ կվախենան:

– Իսկի եղնելու բա՞ն է՝ աչխարհք կործանի. ու կործանողն ո՞վ է.– խնդալով ասաց Ուստան.– ի՛նչ տուտուց բան ըլնի, քաղաքներից դուրս կուգա. չա՛տ գիտնակ մարդիկ չա՛տ անգետ կխոսան:

– Ձգիտեմ, գազեթները կըսեն, իմ խելքիս էլ չի պառկի,– արդարացավ դյումրեցին:

– Գազեթներն էլ մարդիկ են գրում, հո՞, Ավետարանի միջից չէ, որ Աստծու խոսքն ըլնի. խելքիս տունը չեն մտնում էդպիսի բանները:

– Ինչո՞ւ չէ, Ուստա. կրնա ըլնի. աչխարհանցում, թոթափելն աստեղց... ըչտե գրած է Ավետարանի մեջ,– վկայեց ավագ դյումրեցին:

Ուստան գլուխը չկորցրեց լսելով Ավետարանի ապացույցը. և ուղղակի նայելով խոսակցի աչքերին, համոզական չեչտով ասաց.

– Էդ ուրի՛չ բան. գիտեմ, հայտնի է. ասածդ ավուրն ահեղ դատաստանի մասին է. բայց էդորից ջոկ, խելքիս չի նստի գազեթների գրածը. աչխարք եղել է, կա ու կմնա. հավի բուն չէ, որ քանդվի. մեկ էլ որ,– ժպիտը խաղացնելով շրթների վրա, ավելացրեց,– քանի կնիկը կա, աչխարք չի անցնի: Էդ վախեցողներին էս խոսքս իմաց արեք:

– Խելոք խոսքին ո՞վ բան կըսև,– ուրախ ծիծաղով ասացին վաճառականները:

Ուստայի ինքնասիրությունը գոհացավ:

– Փիլոս ջան,– ասաց,– մի հատ է՛լ լից, էսօր չայը չա՛տ դուր կուգա:

– Էնոր համար՝ որ էսօր մախմուռ ես,– վրա բերեց Օսկանը:

– Ի՞նչ է, Ուստան քեֆի մեջ է եղել.– հարցրեց հետաքրքրված՝ գյումրեցիներից մեկը, որի քթի կարմրությունից երևում էր, որ օղիի լավ բարեկամ է: Զարմացքի շեշտ էր դրված նրա հարցի մեջ, թե ի՞նչպես է որ գյուղում իր ներկա եղած օրերում քեֆ է եղել ու ինքը չի մասնակցել հյուրասիրական իրավունքով:

– Երեկ, Բագրան, քեֆ, ի՛նչ քեֆ. հով տեղ, ջրի ափին, հինգ գավ գինի խմեցի, պակասը որ չասեմ. արաղն էլ իրան կարգին:

Վաճառականներից մեկը աննշմարելի չչնջաց մյուսի ականջին. «Փչան կերևա Ուստան»: Սակայն Ուստայի աչքից չխուսափեց այս. և մտքում ասաց. «Անոթի գյումրեցիք իրար ականջի ճենճն են ուտում»:

– Մարդ կրնա՞ հինգ գավ գինի խմե,– չինծու զարմանքով հարցրեց գյումրեցին:

– Մարդը գիտե.– կտրուկ պատասխանեց Ուստան՝ առնելով թեյի չորրորդ բաժակը, և կարծես, ինքն իր հետ խոսելով, կարոտով բացականչեց.– է հե՛յ, անցած օրին օր չի հասնի. երեկ էս ժամանակս քեֆս Սուլթան Մուրադի քեֆն էր,– և հաստատեց ժամացույցը հանելով.– էս ժամանակս, ուղիղ, ժամը իննին:

– Յա՛,– հանկարծ<ակի>ի եկած անկեղծ զոչեց գյումրեցիներից մեկը.– Ինչպե՞ս թե ժամը իննին, քու ժամացույցդ ի՞նն է, Ուստա:

– Բա՛, քանիսը կուզես ըլնի,– հարցրեց Ուստան էլ իր կողմից, անկեղծ զարմացած:

– Իմս օխթին է՝ բանըմ սուտ. քո՞ւկդ, Գևոր, քո՞ւկդ, Օնես:

– Շատ սուտն է, ի՞նչպես թե՝ բանըմ սուտ,– տնազի տվեց Ուստան թե նրա ձայնը, թե նրա բարբառը. «բանըմ սուտ»:

Գևորն ու Օնեսը նայեցին ժամացույցներին:

– Մերն էլ օխթեն բանըմ պակաս է. էդպես էլ կըլնի. արևը մեր մտնելու վրա է:

Օսկանը վախեցած նայեց Ուստային, թե միգուցե վեճ ծագի. Ուստան էլ ուզում էր նրա պատվի համար խոսքը այս կետի վրա սառեցնել, բայց...

– Ուստա Ջան, ժամացույցդ չա՜տ առաջ է. հրեղեն ձիու պես կվազե. էդպես որ երթաս, գարնան ծերին չհասած՝ ձմռան մեջտեղը կըլնիս,– մեղմ ձայնով, սակայն ծաղրի զգացումով ասաց առաջին խոսող գյումրեցին, և հաղթանակ տանողի նման, ինքնաբավ, բութն ու ցուցամատը լեզվի ծայրին վրա թրջելով քսեց բեխերին ու ոլորեց:

Ուստային թեև հաճելի եկավ ձիու համեմատությունը, բայց մյուս կողմից՝ սրտին դիպավ, որոշ նկատելով նրա խոսքի խորքում ծաղրանք. գրգռվեց նրա բեխերի գոհունակ հարդարումից, և ուղղակի թշնամաբար տրամադրվեց դեպի նրանց բոլորին. միաժամանակ մոռանալով Օսկանի աղերսող հայացքը:

– Ո՞ւմ ժամացույցը. իմ ժամացո՞ւյցս. հատը չկա աշխարքի վրա. ի՞նչ անեմ, որ ձերն էլ չարչռու (մանրավաճառի) կաղ էշ է:

Ասաց Ուստան և ծխախոտի սևափայլ տուփը գրպանից հանելով՝ ջղայնացած՝ մատով չը՛րխկ զարկեց կափարիչին, բացեց, արագ-արագ մի հաստ գլանակ փաթաթեց, ապա ակներև թշնամանքով գյումրեցիների գլխի վրայով նետեց տուփը Օսկանի գոգը, որ սա էլ գլանակ չինե, հյուրերը նրա այս վիրավորիչ վարմունքը չհասկանալ ձևացրին:

– Լա՛վ, մեկ տուր տեսննենք ժամացույցդ. կարելի է որ անթիկա է,– ասաց ավագ գյումրեցին ձեռքը մեկնելով:

Ուստան տվեց ժամացույցը. դյումբեցին ուշի-ուշով նայում էր: Ժամացույցը «Օսմանլի» կոչված տեսակից էր, թվերը դուտ արաբական նշաններով. կափարիչը ուռուցիկ էր, արծաթյա, հաստ ու կոպիտ, ձայնը ամուր չնկչնկում էր: Ուստան չունչը կտրած սպասում էր վճռին:

— Ուստա ջան, չնեղանաս, ժամացույդ կնմանի բռնոթու (քթախոտի) տուփի...

Այս անքաղաքավարի և հանրածանոթ վիրավորական համեմատությունը Ուստային հանեց ինքն իրենից. այսպիսի դառն խոսքեր երբեք չէր լսած իր ժամացույցի անվանը. մի փոքր լռեց. բարկությունը քանի գնաց աճեց, ավելի աճեց, հոնքերը հավաքեց իրար վրա, աչքերը մեծ-մեծ բացեց և սրտի որոտմունքին ազատ ելք տալով՝ ասաց.

— Է՛ս դյումբեցիք... տո՛, դուք ի՞նչ եք հասկանում, ձեր քաղքից դուրս հավկուր եք, ի՞նչ եք հասկանում բանի լավն ու գեշը. արաղի մեծն ու պստիկը մենակ գիտեք, ուրիշ բան — վրա՛ս դրե, դի քո է...

— Ինչի՞ էլ ժամացույց չենք տեսել. քուկդ ո՞րտեղն է որ...

— Ի՞մս,— իմս էրզերումի մութասարիֆի ժամացույցն է, հայտնի իմբաշետ Փալաբեխ Նադոն, էն որ Բասեն է նստում, էն սպանել է նրան ու վրայից առել. մութասարիֆին էլ վալին է նվեր տված եղել: Հինգ տարի առաջ Ղարս հանդիպեցավ ինձ իմբաշետն ու հիշատակ տվավ. ես էլ իրան լավ քնֆ նշանց տվի: Ի՞նչ խոսք, որ ժամացույցս անթիվա է. տարա ժամացույց չինող մեկ անվանի վարպետին ցույց տվի: Փիլո՛ն հետս էր. էտեղ սուտ բան չկա...

Փիլոսը այս խոսքի վրա՝ դլխով լռելյայն հաստատեց փաստը:

– Էդ վարպետն ասաց Թե, ժամացույցդ տեսոք Հասարակ է, բայց ընտիրն է. քարերը ամենքը անգին են ու իսկի մաշելիք չունին, և էլ մինչև իրարուց բաժանվիլը ժամացույց վարպետի երեսը չի տեսնելու. ասաց, հերը տղին քսան Թումանի չի տա: Ձեր քաղքցի Համայակ աղան ամեն անգամ հանդիպելիս, ժամացույցս առնում է, նայում, նայում չի կշտանում նայելով, գովելով. ասում է, Ուստա Ջան, ի՞նչ կուզես, կուտամ, տուր ինձ... Հիմի դուք ի՞նչ եք ասում. հինգ տարի է ձեռքիցս ինչեր է քաշում. չա՛տ ժամացույցներ եմ առել ու ետ ծախել, էսպեսը չեմ տեսել: Էն տարի էջմիածին էի գնացել, տեսա Իջման տաճարի զանգերի հետ խոսում էր. Խրիմյան Հայրիկի ու ամեն մեծ մարդոց ժամացույցների հետ խոսում է. Անի քաղաքը հեռու տեղերից գիտնակ, երևելի մարդիկ էին եկել, նրանց ժամացույցներու հետ խոսում էր. քանի էդպիսի երևելի մարդիկ իրենց ոսկե ժամացույցներն իմ բռնոթու տուփիս հետ խոսեցրին. մեկ խոսքով, կարճը ասեմ, Աստծու են անսխալ ժամացույցների հետ՝ ասել է՝ արևի, աստղերի, լուսնյակի, ու աքլորների հետ անսխալ խոսում է, արդար կշիռքի պես, հիմի հասկացա՞ք...

Ուստան ոգևորված ավարտեց իր ժամացույցի գովքը և հաղթանակով նայեց գյումրեցոց երեսին: Նրանց աչքերի մեջ մի զսպված ուրախություն էր փայլում, հազիվ էին տիրապետում իրենց քրքիջին:

Մինչ այդ՝ ժամացույցը ձեռքե ձեռք անցնելով, որպես մի չնաշխարհիկ բան հետաքրքրություն արթնացնելով, նկավ նորից հասավ ավագ գյումրեցու ձեռքը. սա հանդարտությամբ ասաց.

– Աշխարքի մեջ ամեն բան կրնա ըլնի. կհավատանք ժամացույցիդ զորքին: Ուստա Ջան, առ, գլխիդ մատաղ, հանկարծ փորձանք չպատահի, մեզ մեղավոր հանես:– Եվ

հոգատար զգուշությամբ ժամացույցը դրեց տիրոջ առջևը:

Ուստան վեր առնելով ժամացույցը, կապեց չղթայից և դրեց ծոցը:

Նրա ժամացույցի հռչակը տիրոջ անվան պես հայտնի էր շրջանում. ոմանք հատկապես գյուղից գյուղ մարդու միջոցով ուղարկում էին իրենց ժամացույցները նրանի հետ «խոսեցնելու». մանավանդ Բլվիկ գյուղը նստող քուրդ Շեյխը, որի նոր մեծ ամբարն էր չինել Ուստան, ամեն ամսագլուխ մի պստիկ նվերի հետ ուղարկում էր իր սևահատ ժամացույցը:

Իսկ ինքը ո՛չ մեկի հետ, ո՛չ մի տեղ չէր ներդաշնակում: Ճշտապահ, միշտ իր կեսօրին, երբ իր ժամացույցի սլաքները պառկում էին իրար վրա — այն ժամանակ միայն լարում էր նա:

Այսպիսի անխորտակելի հավատ ուներ իր ժամացույցի անսխալականության վրա. և այս հավատը վարակել էր շրջանի չա՛տ ժամացույցներ: Այսպիսով, մինչդեռ Շիրակում օրը հայտնապես կեսօր էր, նրանց ժամերը երկուսն էր ճաշից հետո: Արևը նրանց համար երկու ժամ առաջ էր ծագում և երկու ժամ առաջ էր մայր մտնում:

Եվ ամեն օր էլ պատահում էր այն, որ երբ ուրիշները երեկվա մեջն էին, Ուստան այսօրվա մեջն էր, կամ երբ ուրիշները այսօրվա մեջն էին, Ուստան իր ժամացույցին հավատացողների հետ վաղվա մեջն էր:

Այս պատճառով էլ, նրա ժամացույցի զորության վրա կասկածողները ասում էին.— «Լավ ժամացույց է Ուստայինը, բայց «հառաջախոս է»»:

Սակայն այս ամենը իր արդար պատճառն ուներ, որ գյումրեցիներից ծածուկ մնաց, որովհետև Ուստան զայրույթի մեջ մոռացավ պատմել ժամացույցի իսկական ծա-

գումը, որ իրեն նվեր տալուց չա՛տ առաջ, ուներ իր հետը անբաժան բոլոր ճամբորդությունների ընթացքին, երբ Խոճա-Մանսուրի քարավանն էր վարում հեռու աշխարհներում:

Ուստայի ժամացույցի ճշմարտախոսությունը հենց ինքնին, ժամացույցի հառաջախոսության վրա էր հիմնված. և սկսվել էր այն օրվանից, (ինչպես ինքն էր պատմել մի գինարբուքում, ուր մարդիկ առհասարակ չիտակն են խոստովանում),— «երբ որ մեր քարվանը մեկ հեղ գնաց արևելյան կողմն աշխարքի... գնացինք, գնացինք. գետին՝ կրակ, ջրերը՝ յաման. Հավու թև էլ չերևաց, ո՛չ էլ հողի վրա չունչ-կենդանի — անապա՛տ, անապա՛տ. խոսքս էն է թե՝ մեզ հետ, ներսերից աշխարհաքննող մարդիկ կային, որ բռներով ոսկի տվին քարվանի տեր ու գլուխ Թեճիր-Մանսուր աղային, թե երթալ կուզենք, ինչքան որ կարելի է, արևի ակը տեսնելու: Ինչ սուտ խոսեմ. հնար չեղավ բոլորովին կիպ մոտիկ երթալու. կխորովվեինք ողջ-ողջ. տեսնելու բան էր, զարմանալու բան. երբ արևն ելավ, կրակ ու բոց, հուր-հրեղեն. էդ բխման վայրկյանին, մազը մազին, ժամացույցներս սարքեցինք արդար լույսի հետ շիփ-չիտակ: Հիմա իմացա՞ք, որ էդ վայրկյանից է ժամացույցս ձեր ամենքի վրա հառաջախոս ու ճշմարտախոս»:

Եվ այս հանդիսավոր վայրկյանից էր, իրավունքով, սկսվել նրա անբեկանելի հավատը իր ժամացույցի վրա, և նույնքան իրավացի արհամարհանքը բոլոր մյուս հակախոս ժամացույցների հանդեպ: Իրենը Աստծու ժամացույց-արևի հետ էր խոսցրած՝ բուն իրեն տեղն ու տեղում, իսկ այս կողմերի և ուրիշ չա՛տ կողմերի ժամացույցները ուշացած էին, «հետնախոս» և ուրեմն «ստախոս»:

Եվ հիմա ինչո՞ւ պիտի դիտակցաբար կամենար և հարկ տեսներ խոսցնել սուտ ու սխալների հետ:

Եվ պարծանքով ասում էր միշտ. «Հողեղեն երկրիս վրա չիտակ բան քիչ կա. մեկ արդար մարդու վրա՝ հազար հատ դող ու ծուռ մարդ կա. մեկ չիտակ բանի վրա՝ հազար հատ սուտ կեղծ բան կա. ինձ պատկան երկու արդար ու չիտակ բան կա՝ Զավուշս ու ժամացույցս»:

Այս ժամացույցը չա՜տ վեճ ու դլխացավանք էր պատճառել թե Ուստային և թե իրեն, այսինքն, իրեն ժամացույցին հավատացող բարեկամներին, չա՜տ անարդար ծաղր ու ծիծաղի խոսք ու առակ:

Ուստան ու ժամացույցը հոմանիշներ էին դարձել: Նրա ժամացույցին չհավատալ՝ կնշանակեր չհավատալ Ուստային. հավատալ Ուստային ուրեմն պետք էր հավատալ և ժամացույցին: Այսպիսով՝ ժամացույցը Ուստայի ճշմարտախոսության մի տեսակ մարմնացումն էր, պատկերը:

Ուստայի հետ բարեկամ լինելու առաջին պայմաններից մեկն էր՝ ներդաշնակել, ավելի ուղիղը, ենթարկել իրենց ժամացույցները նրանին:

Բարեկամների ժամացույցները իրենց տերերի սրտերի պես համատրոփ պիտի լինեին:

Վա՜յ թե մեկը չհավատար նրա ժամացույցին, վիճեր ու հակաճառեր. է՛լ դու պրծա՜ր. թշնամությունը ծայր կառներ, թեև Ուստան մյուս բոլոր բաների մեջ բարեհամբույր էր, և կտևեր այնքան ժամանակ՝ մինչև որ ներհակ կողմը ղիջեր և հաշտվեր Ուստայի ժամացույցի հետ. և բարեկամությունը նորից կքայլեր համատրոփ ժամացույցների հետ:

Եվ ով որ մի այլ պատճառով կռվեր Ուստայի հետ, իբրև թշնամանքի վավեր նշան, իսկույն վոխում էր ժա-

մացույցը. այսպիսի դեպքերում կրկնակի էր Ուստայի ատելությունը. իսկ հակառակը, ով որ կուվեր, բայց ժամացույցը պահեր հին բարեկամական վիճակում, Ուստայի աչքում սիրելի էր նա դարձյալ. և մինոցներ էր փնտռում Ուստան, դիջումների մտնում նորից հաշտվելու դժուածի հետ:

Ուստային հարգող, բայց ժամացույցին չհավատացող նրա բարեկամներին ուրիշ ելք չէր մնում, եթե ոչ համակերպիլ, և այնպես նրա այն բարեկամներն ու սանահայրերը, որոնք ժամացույց ունեին, վախից իրենց ժամացույցները հարմարեցրել էին նրանի հետ, բայց մտքերի մեջ միշտ երկու ժամ զեղչում էին:

Ոմանք, փափկանկատ, խուսափում էին նրա մոտ խոսք բանալ ժամի ու ժամացույցի մասին, առհասարակ, խնայելով իրենց բարեկամի հիվանդ թլակողքը: Լավ գիտեին, որ բարեկամական սերը նուրբ բան է, զոհաբերում պետք է այն պահելու համար:

Իսկ Օսկանը՝ որ ժամացույց չուներ, խելացի համարեց չունենալը վեճի ու խճուճի մեջ չընկնելու համար, արդարանալով թե, մի ժամացույց հերիք է մի տան համար:

Բայց և այնպես, Ուստայի պատվավոր բարեկամներից մի-երկուսը ժամացույցով ներհակ մնացին միշտ, զանազան հարգելի պատճառներով: Ուստան ներողամիտ էր դրանց հանդեպ, իրավացի գտնելով նրանց ընթացքը:

Բայց և ճշմարիտ է որ, Ուստայի բարուքյունը վերջ ի վերջո հաղթում էր թե իրեն և թե ամեն բանի. չնայելով դառն վեճերին, ծաղրերին՝ ժամացույցի չուրջը բռնկած, նա դարձյալ բոլորի հանդեպ իր հանգիստ պատասխանն ուներ. «Թո՛ղ էդ մարդիկ իրենց ժամացույցով նստին ու ելին, Աստծու համար էդ նշան չունի. մենակ բռնած գործները իրենց ժամացույցի պես խոտորնակ չըլնին»:

Սակայն այս էլ կար, որ Ուստան իրականի մեջ ժամացույցի պետքը չէր զգում. նա էլ շատերի նման, լռելյայն, այն կարծիքն ուներ, թե առանց ժամացույցի էլ օրը կմթնի, ինչպես առանց աքլորի կլուսանա:

Զարթնում էր առանց իր, այլ Աստծու ժամացույցի օգնությամբ, ճաշում էր նույնպես առանց նրա պետքին, երբ ողջ գյուղը բանթող էր լինում, և քնում էր առանց ժամացույցի խորհուրդին, երբ աչքերը կուլ էին գնում:

Ժամացույցը, մանավանդ իր մեծ ու հնչուն չղթայով, արժեք ուներ իբրև զարդ, իբրև նշան իր հարգը գիտցող մարդու:

Թերևս երբեմն, բացառաբար, տարին մի երկու անգամ ծառայեր իր բուն նպատակին, այն էլ թերևս, գոնե մինչև հիմա չէր պատահել... մինչև հիմա նա ժամացույցը հանել էր մարդկանց մոտ, ձևի համար, իբրև սեթևեթանք, իբրև մի հաճելի ցույց, բնական ու անմեղ, և բնավ ժամանակի ցույց:

Այս խոսակցության վրա իջել էր մի լռություն, որ հարկավոր էր, բնազդաբար, բոլորին հանգստացնելու համար. և տևեց մինչև ընթրիքի սեղան բանալը:

Ուստան արխալուխի թևքերը վեր քշտեց, կարմիր թաշկինակը փռեց ծնկներին և նախկին քենը մոռացած՝ ժպտերես դիմեց հյուրերին.

— Ախպրտիք, բարով եք եկել, մոտեցեք, հաց ան՛ուշ արեք:

Եվ լցրեց օղիի բաժակը, ու սկիզբը ինքը խմեց՝ ասելով.

— Առաջ ես եմ խմում, որ իմանաք թե՝ դեղած չէ:

Բաժակը լցվելով ու դատարկվելով չրջան գործեց և նորից հասավ Ուստայի ձեռքը: Դարձյալ լցրեց բաժակը, որ նոր չրջան գործելուց հետո եկավ Ուստայի ձեռքը. սա էլ բաժակը կործելով չիլչի վրա՝ մի կողմ դրեց:

Ահա աչքերը խոնարհած՝ մտքի մեջ կարդաց «Հայր մեր»ը, երեսը խաչակնքեց, մի կտոր հացի վրա մի պտղունց աղ ցանեց և կերավ: Սրանից հետո միայն, որ իր սովորույթն էր, մյուսների հետ ձեռնամուխ եղավ ընթրիքին:

Հացի մի կողին ավագ վաճառականը հարց տվեց.

— Ուստա, իրավունք ունի՞նք բանըմ հարցնելու:

— Իրավունք է,— պատասխանեց Ուստան՝ խորունկ նայելով նրա աչքերին:

— Դուն ի՞նչ արհեստի վարպետ ես, կրնա՞նք իմանալ:

— Ես չատ բանի արհեստ ունիմ. ա՛յ, էս օթևանը ձեռքիս գործն է. հոր եմ փորում, աղբյուր եմ բերում, կարմունջ եմ կապում, կրնամ սել ու արոր չինեմ. և էլ ուրիշ չա՛տ բաներ. չինել տվող ըլնի, ամեն բան ձեռքիցս կուգա:

— Հարցնելն ամոթ չըլնի,— ասաց կարմիր քթով գյումրեցին, որի աչքը չէր հեռանում օղիի չչից,— չինել տվողը ըլնի, կրնա՞ս Անիի կարմունջի պեսը չինել՝ մեկ ոտքն էս կողմը, մեկէլ ոտքն էն կողմը:

Եվ խորհրդավոր հայացքով նայեց ընկերներին ուզենալով հասկացնել, թե «Ուստան լավ տրաքեցնող է, քիչ ձեռք առնինք, ուրախանանք»: Ուստան ներհայեցողաբար կարդաց նրա մտքինը. «Էդ՝ գյումրեցոց սովորույթյունն է. ես ո՞վ եմ որ՝ տակը մնամ»,— այսպես վճռեց իր ներսում և հանգիստ հոգով ասաց.

— Օխթը էդպես գետ ըլնի, կարմունջ կրնամ ձգե. չա՛տ չինած ունիմ էդմաննները:

— Տեղով վարպետ ես եղել. չենք իմացել.— խոսք նետեց մի ուրիշը և հարեց.— Ուստա, կրնա՞ս էնպես հոր փորել, որ ողջ Նախճվանի հացը հավքի մեջը:

— Վարպետ մարդու ձեռքից բան չի պրծնի,— կուվի պատրաստակամ՝ պատասխանեց Ուստան,— էնպես հոր փորեմ, որ ձեր ողջ Գյումրին մեռել-կենդանով, ձեր տնե-

րով ու խանութներով, ձեր քառսուն պորտով հավքիք մեջն ու մնաք մինչև Քրիստոս գա դատաստան:

— Վնաս չունի, տղամարդու գործ է, բայց, Ուստա, էդքան մեծ հոր փորած կա՞ս իսկի:

— Շա՛տ...— կարճ կապեց Ուստան:

— Որ փորել ես, ի՞նչ է դուրս եկել,— հարցնողը չորրորդ դյումբեցին էր:

Մինչև Օսկանն ուզում էր միջամտել այս անախորժ խոսվրտուքին վերջ տալու և Ջավուշն իրեն ուտում էր, երբ Ուստան համբերանքը հատած վրա տվեց.

— Էնպե՛ս տաք, եուման ջրեր, որ ձեր ողջ դյումբեցոց հարսն ու աղջիկը կրնան բաղնիք անել, ու իրանց ճերմակ ծծերը...

— Ի՛նչ զոռ փուշտիկ կուռեցնես...— Ուստայի խոսքը կտրեց կարմիր քթով դյումբեցին՝ սաստիկ վիրավորված լինելով իր համաքաղաքացիների ընտանեկան պատվի համար:

— Բա՛, ձեզ պես փուշտիկներին ես լավ կուռեցնեմ. մտքերդ ի՞նչ է,— կրակ կտրած ասաց Ուստան:

— Ուստա՛, լեզուդ քեզ քաշն... լսվեց մեկի ձայնը:

Ոնց որ կարկտաբեր ամպը զոռար ու փուլ գար, Ուստա Կարոն էլ այնպես:

— Ձե՛ններդ, Դյումբվա անոթիններ, ընկել եք գյուղերը, փոր եք պատցնում, դեռ մարդու էլ չեք հավնում. ձեզպեսներին էնքան եմ ջուրը տարել, ծարավ ետ բերել. դուք ո՞ւմ եք ձեռք առնում. դուք է՞լ եք մարդ. դուք է՞լ եք մարդու շարքի, խաղք ու խայտառակ դյումբեցիք. ձեզի ո՞վ չի ճանաչում. դուք էն չե՞ք, որ անոթի-ծարավ՝ գերեզմաննների քարերի վրա տամա եք խաղում, ու ձմեռը փուռի երդիկները՝ խումար: Տո՛, հոգի հայհոյողներ, դուք էն չե՞ք, որ տասը դրվանքան փումի տեղ եք հաչ-

վում, տարան եղից ծանր եք քաշում, ոտներդ կշեռքի քար եք չինում, սատանի՛ ձագեր...

– Լա՛վ, լա՛վ, Ուստա Ջան, մի՛ նեղացիր,– թախանձեց Օսկանը,– օտար մարդիկ են, քեզ չեն ճանաչում, չգիտեն՝ ի՞նչ մարդ ես:

– Ջեռքս հո քարի տակ չէ՞, որ էդոնց թուք ու մուրը տանեմ. էդոնց ցերեկը ման գալածը՝ ես դիշերն եմ ման ելել. էդոնց կնիկները ժամ են երթում, Աստվածածնուն աղաչում, որ իրենց մարդոցը մահ տա. է՛դքան էտոնք գե՛չն են, գե՛չ...

Այնինչ Օսկանը հյուրերի ոտները սեղմելով, աչքովունքով հասկացնում էր, որ լռեն. և սրանք էլ լռում էին՝ ականջները կախ, բերաններում մնացած պատառները պաղ-պաղ ծամելով:

– Ուստա՛ Ջան, Ուստա՛ Ջան, ներո՛ղ եղիր, էսօր-էսօր էդոնք մեր հյուրն են, քու օճախիդ մեջ, ներո՛ղ եղիր, սիրտդ լե՛ն պահիր...

Քանի խնդրում էին Օսկանն ու Փիլոսը՝ Ուստան այնքան ավելի թև էր առնում:

– Տո՛, ես չտրաքվեմ, ո՞վ տրաքվի. մեկ՝ ժամացույցս չեն հավնում, մեկ՝ վարպետությունս են ծաղրում... Ես ձեզ մարդ ասողին... Թյո՛ւ. ախբեր Օսկան, կուզես՝ նեղացիր, կուզես՝ մի՛. ես էսոնց հետ հաց չեմ կտրի. դու էլ որ տղա չըլնեիր՝ մարդու կշիռքը կհասկանայիր ու օթևանս... մեղա՛ Աստծու, ի՞նչ պիտի ասեի...

Ուստա Կարո, դո՛ւ Ուստա Կարո, հանկարծ վեր ելավ սեղանից ու բարկացած մի գլուխ՝ դեպի դուրս. Փիլոսը կտրեց առջևը. բոլորի վրա սառը լուր մաղվեց:

– Ուստա՛ Ջան, մեծ ախբեր, վերև Աստված, ներքև – դու. Օսկան ախտոր հետ կերած մի բրդուճ հացը մի՛տքդ բեր...

Փիլոսն էր խնդրողը ու դռան առջև բանդ եղել-կանգնել:

— Թո՛ղ, ե՛լ երթանք անապատներու մեջ տուն չի-նենք-նստինք:— Գոռաց Ուստան՝ ճիգ անելով իրեն դուրս նետել:

— Յա՛, կարո չան, հոգո՛ւդ մատաղ, քովդ էնքան պա-տիվ չունի՞մ. ինձ ողջ-ողջ թաղես, լավ է, էսքան տարվա աղ ու հացկեր ենք, չան ասել ու չան լսել. հիմի, ամենքը ոտքի տա՞կ տանք, ի՞նչ է արածդ. երկնուց գետինք ես քցում ինձ, տե՛ս, գլուխս դնում եմ չեմքիդ վրա, վիզս կտրե, ետև ուր կուզես՝ գնա:

Օսկանը այսպես ասելով փաթաթվեց Ուստայի վզովը, համբուրեց ու ականջին չշնջաց.— «Էդ չարժեցող ամբար-տավանների համար արժե՞ որ արյունդ պղտորես. ես քեզ էդպես չգիտեի»:

Ուստայի աչքերը լցվեցին. կանգ առավ. զայրույթը մեղմացավ. գյումրեցիներն էլ մեկ-մեկ եկան և զղջումով՝ գլխիկոր, ձեռք տվին նրան՝ խնդրելով.—

— Ուստա, մեղա Աստծու, հաչտվինք:

Զայրույթն իջավ:

— Ես ոխ պահել չգիտեմ. իմ սիրտը չուտ է. գնչ բան չի տանում. լա՛վ, հաչտվինք. էս վերջինն ըլնի. մարդու հարգը գիտնաք. ես ձեր ակռի հավկիթը չեմ. ակռա չի դիմանա ինձի...

Բոլորին ձեռք տվեց ու գնաց նստեց իր տեղը:

— Նեղսրտելու բան չկա, Ուստա՛ չան, մեծ մարդը մեծ սիրտ կունենա.— ասաց Օսկանը.— Էս մարդիկը չգիտեն, թե ում հետ հանաք են անում:

— Թո՛ղ հիմա իմանան թե՝ ես ինչ մարդ եմ. և էլ ուր-տեղ որ իրենցը պատմեն, էնտեղ էլ իմս չմոռանան...

Հյուրերը պատերի տակ քաշված՝ լուռ նստել ծխում էին. ոչ ոքի բերանը չէր բացվում մի խոսք ասելու: Մի

ծանր լռություն իջել էր սենյակի բոլոր անկյուններում:

Մի փոքր անց՝ Ուստան վեր կացավ, հագավ չուխան, չոնգուռն առավ պատից և կանգնեց հատակին:

— Բարի գիշեր ձեզի. ներո՛ղ եղեք.— խոսեց հյուրերին և ապա ուղղվելով դեպի դուռը, Օսկանին կամացուկ ասաց.— մի քիչ կալերն եմ երթում. սիրտս նեղվում է:

Փիլոսը հնազանդ ստվերի պես հետևեց նրան:

Լուսնի տրտմալույս քաղցրությամբ շղարշված էին իրերը. Ուստան գնաց նստեց կալը, ծառի տակ. Փիլոսն էլ մոտը. Ուստայի սիրտը ելած էր, և հանգստանալու համար չոնգուռը նվագեց. գիշերվա լռության միջից լսվում էր չոնգուռի անուշ հնչյունների հետ Ջավուշի սրտալի ձայնը.

— «Սիրելիս, օ՛ր դատի, օ՛ր կեր.
Բախտըդ մի՛ տուր նամարդի ձեռք»...

<ԳԼՈՒԽ> Ե.
<Ա. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ>

Գյումրեցի վաճառականները գիշերեցին Ուստայի կարոյի այվանում: Ուստան ամբողջ գիշերը համարյա աչք չկպցրեց. իր հարազատ, մաքուր ու խնամքոտ անկողինը, ասես, բրդի փոխարեն փշերով էր լցված. վաճառականների չունչը նրան գրգռում էր. և եթե Օսկանի պատիվը չլիներ, Ուստան նրանց դուրս կաներ իր հարկի տակից, բայց վեհանձնությամբ համբերեց[1]:

Լուսադեմին հոգնեց և ոխ ու ծաղր մոռացած՝ գլուխը հանգչեց բարձի վրա:

Առավոտուն, սովորական բարև տալուց-առնելուց հետո, Ուստան զարդարվեց, արագ-արագ նախաճաշեց և լավ դյուզամեջ: Գյումրեցիների հետ ունեցած անախորժ վեճից պղտորված սիրտը չհանգստացնելու համար քայլերն ուղղեց սանամորների տները:

Պատահմունք էր, թե սրտի դաղտնի տենչ.— Ուստան իրան հանկարծ կանգնած տեսավ սանամեր Մովինարի տան առաջ. նրան բոլոր մյուս սանամներներից ավելի էր սիրում:

Դռան առջև չան քոթոթների հետ խաղում էին մի քանի երեխաներ:

---

[1] *Ալ լուսանցքում. «Ուրիշ տեղ»:*

– Ա՛, սանիկս, Սմբլո, պուլիկս, արի, տեսնեմ,– գուրգուրանքով ասաց Ուստան մի զզգզված մազերով չեկ երեխայի:

– Քավո՛լ, քավո՛լ, չամիչ կուզեմ:

Ուստան մի մեծ բուռ չամիչ լցրեց երեխայի գոգը՝ համբուրելով հողոտ ճակատը:

Ապա ներս մտավ գավիթը, գավիթում չունչ չկար, և բարձր գոչեց.

– Էհե՛յ, սանհեր Դավիթ, սանամեր, ո՞ւր եք:

Թոնրատան դուռը բացվեց և չեմքին երևաց մի մատաղահաս կին, սիրուն երեսով, չեկ մազերով, կարմիր ու կանաչ հագած, գրկանոց երեխան կրծքին:

– Քավոր Ուստա կարո, էդ դո՞ւ ես:

Սանամայրերը, թեև առհասարակ քավորի առաջ հարսնություն են անում, չեն խոսում, բայց Ուստան այս օրենքը վերացրել էր իր և սանամայրերի միջև:

– Բարով տեսանք, սանամերս,– և քննական հայացքը ձգելով սանամոր աչքերի մեջ,– Դավիթն ուր է:

– Սանահերդ առավոտ-առավոտ ջաղաց գնաց:

– Զգիտեի, եկա քեֆ-հալերդ հարցնելու, վաղուց է գեղը չէի, ի՛նչ կա, ի՛նչ չկա, սանամեր անան ուր է,– խոսքը սկեսուրի մասին էր:

– Տալիս տունը գնաց:

Ուստան մնաց կանգնած. սանամայրը այնքան անչնորհք գտնվեց, որ նույնիսկ չհրավիրեց Ուստին նստել. մի փոքր համբերեց՝ [ուզեցավ] մտածեց գնալ, բայց սիրտը չէր հնազանդվում [կամքին] մտքին:

– Քավոր, կեսուրս տունը չէր, որ քեզի պատիվ անեմ. գիտե՞ս, էդ պառավեն չա՛տ կվախենամ, կատու չի թողնի երթևներես անցնի:

Ուստի սիրտը տեղն ընկավ, և առանց հրավերի գավիթում աղասանդի վրա նստեց.

– Օրթե կեսուրդ գա, տեսնի էստեղ նստած, մտքեն գեչ բան չի կրնա անցնել,– է՛հ, [սանամ...] Ծովո ջան...

– Քավոր,– խստագին կտրեց Ուստայի խոսքը սանամերը,– էդման խոսքեր մի ասա, մեղք է, դու պատվով մարդ ես:

– Ի՞նչ կըսեմ, աչքի լույս, ջան կըսեմ, ի՛նչ կա, կարոտել եմ, ջան կըսեմ,– վրա բերեց Ուստեն:

– Էլի, անպատիվ բաներ կըսես, դու իմ ախբերն ես, տունս մեռոն ես բերել:

– Սանամեր ջան, մի նեղացի. հիմի էլ քեզի մի լավ բաղդադի եմ բերել, տես,– և հանեց ծոցից մի կապտավուն մետաքսե թաշկինակ. սանամոր [աչքերը գնացին բաղդադիի] զայրույթը թուլացավ բաղդադին տեսնելով:

– Շնորհակալ եմ, քավոր կարո, ավելնորդ բան է, քեզնեն էնքան արմաղաններ ունիմ:

Եվ Ուստան ուզում էր իր ձեռքով փռել, սանամերը ձեռքի մեղմ հպումով հեռացրեց.

– Հիմի չէ, էգուց ճաշին արի, սանահորդ քով տուր, հիմի չէ:

– Լավ, մի քցե, տեսնեմ,– թախանձեց Ուստան:

– Տեսնենք,– չինծու անտարբերությամբ առավ Ծովինարը բաղդադին,– քավոր, սանիկիդ գրկե մեկ:

Ուստան գրկեց երեխային. Ծովինարը քանդեց գլխի նախկին ծածկույթը և կապեց բաղդադին. ապա հանեց կրծկալի տակից մի փոքր հայելի, ուղղեց մազերը, և աչքերի պայծառ ժպիտով նայեց Ուստային: «Իրար հետ են մարդու գնում Հարսն ու հայելին»,– մտածեց Ուստան:

– Օխա՛յ, Ծովո ջա՛ն, աննման դարձար, լույսի կտոր:

Հետո նորից քանդեց բաղդադին, ծալեց, երեխան առնելով և տալով բաղդադին Ուստային, չոր-չոր ասավ.

– Ա՛ռ, էգուց բե՛ր, հիմի գնա:

Ուստան հասկացավ. հասկացավ, որ այստեղ էլ անելիք չունի. սակայն պիտի կոտրել այս հարսի նազերը. բոլոր սանամերներից Ծովինարն էր միակը, որ Ուստայի հետ ավելի մտերմություն չէր ցույց տալիս, այլ միշտ մի որոշ հեռավորության վրա էր պահում: Ուստան աչքերը չէր հեռացնում նրա երեսից:

– Ծովո ջան, [աչքերդ] թերթիչներդ էսօր չա՛տ սև կերևան, վախնամ դեղ ես քաշել ունքերդ էլ:

– Ջէ, քավոր, էդման բաների պետք չունիմ,– հպարտ ժպիտով ասաց Ծովինարը:

– Հլա, մի մոտեցիր, աչքովս տեսնիմ,– ասավ Ուստեն և բռնեց սանամոր մեջքից ու քաշեց դեպի իրան: [ճգնելով նստեցնել ծն...]

Սանամերը ուժ արավ ու փախավ. երեխան մի ճիչ արձակեց:

– Սանիկիդ նայե, մեղք բաներ կենես, ես քու ասածդ չեմ, դնա Վարդանենց Մաքոյին սեր ցույց տուր:

– Ջէ, Ծովո ջան, հոգուդ դուր մի սևցու.– ես քեզ կսիրեմ մենակ, ջանիկս:

Ծովինարը դեպի դրսի դուռը քայլելով հանդիմանական չեչտով ասաց.

– Քու սերդ քեզի ըլնի, քու ջանդ էլ. դու հազարին ջան կըսես. վայն եկել ինձ տարել է, ով որ քու ջանին կհավատա՛...

Ուստան ելավ և մոտեցավ նրան:

– Սանամեր ջան, ինձի լսե, մի փախի. դու իմ էն ամենեն ազիզ սանամերն ես, հոգուդ մատաղ:

– Դու դնա Մխոյենց Գյուլոյի հոգուն մատաղ եղիր:

– Գյուլոն ո՞վ է քո դիմաց, դու՝ արեգակ ես, էնոնք հասարակ աստղեր, դու հազարան վարդն ես, էնոնք դաշտի ծաղիկները:

– Կարո, չիմացա քո ղորթդ ո՞րի հետ է, սուտդ – ո՞րի:

– Ղորթս քեզի հետ է, անունիդ մեռնեմ. քեզի հետ...– և ձեռքը դնելով սանիկի թշերին՝ հանկարծ չոյեց Մովսինարի [ծնոտի] կզակի տակը:

Սանամերը այս անգամ չբարկացավ. Ուստեն նորից-նորից փայփայեց կզակը, ապա սանամերը հեռացրեց Ուստի ձեռքը և վճռականորեն ասաց.

– Հիմի դնա, էգուց արի ձվածեղի, սանահերդ քեզի կարոտացել է:

Ուստան ուրախությունից ոտները գետնուց կտրած՝ գավիթից դուրս թռավ, փափախը կորզեց ականջի վրա, պապիրոսը դրեց բեխի տակ, և ծուվեց Վարդաննոց Մաքոյի տան կողմը:

Սանամեր Մարքրիտը չվաքում [նստած] խնոցի էր հարում, մի թուխ դեմքով, գիրուկ կին էր, [սև աչք...] վառվռուն աչքերով, զվարթ ու աշխույժ:

– Բարով սանամեր Մաքո, քեֆ, հալ, ոնց եք. սանահերս տունն է:

– Աստծու բարին, քավոր Ուստա, սանահերդ արան է. դու ո՞ւր էիր էս քանի օրերս:

– Էս ի՛նչ բան է, էսօր ձեր տանը չունչ չի ժաժա:

– Տալս աղջիկների հետ սնձի է գնացել. կեսուրս էլ՝ կավի, դուն էլ ինչ լավ հոտն առել ես, որ տունը մարդ չկա,– խորհրդավոր քմծիծաղով ասաց Մաքոն[1]:

– Բանն լուր չունիմ. վաղուց է չէի տեսել, կարոտացել էի, եկա տեսի, ի՞նչ կա որ, նոր եկած ճամբե՞ս է:

---

[1] *Պարբերության կողքին՝ այլ լուսանցքում.* «Սկիզբը մի փոքր մտերմական խոսակցություն դնել սանամոր գործերից, իր գործերից, ապա անցնել սիրալիրություններին»:

– Հա, ինչ խոսք, ես էլ քեզի էի կարոտցել,– և նկատելով որ վերջին խոսքի վրա [Ուստան] քավորը փայլեց՝ իսկույն ավելացրեց,– սրտիդ տունը լույս ընկավ, հա՞:

– Լուսը քեզի, Մաքո ջան, արքայությունն լցվեց սրտիս մեջ,– և նայելով աչքի ծայրով փողոցը, տեսավ, որ անցնող չկա, կամացուկ մատով դիպավ սանամոր թշին,– [ողորմի անուշ ծնողացդ] ի՛նչ սիրունցել ես, հոդիդ ուտեմ:

– Էդման բաներ մի արա, կնտիք կտեսնեն, գեչ-գեչ կխոսին:

– Կնտիք կտեսնին, գեչ-գեչ կխոսին,– նույն ձայնով կրկնեց Ուստան Մաքոյի խոսքերը:

– Յանի ինչո՞ւ տնազ կեննես, կարո:

– Յանի ինչո՞ւ տնազ կեննես, կարո:

Մաքոյի բարկությունն եկավ:

– Գրո՛ղ, գրո՛ղ, առ, է՛,– ձեռքի հինգ մատով բանալով:

– Գրո՛ղ, գրո՛ղ, տուր, է՛,– և ուզեց բռնել Մաքոյի ձեռքը:

Սանամերը արագ ծլկվեց ներս, քավորն ետևից:

[– Աստծու սիրուն, ինձի ձեռք մի տուր, գնա, ողջ գյուղի բերանը ծամոն մի չինե, հոգուդ մեռնիմ, Ուստա, գնա՛, գնա:]

Գավիթում Ուստան բռնեց սանամոր մեջքից:

– Աստծու սիրուն, ինձի ձեռք մի տուր, ոտքդ կպագեմ, ինձի ողջ գյուղի բերանը ծամոն մի չինե, ազիզ քավորս:

Ուստան ուժով համբուրեց Մաքոյի ականջի տակը, որովհետև պատահաբար այդ տեղն ընկավ նրա կարմրած չրթների առաջ:

– Ա՛խ, ես քեզնեն երբ պիտի կշտանամ,– սրտի խորունկ կսկիծով հառաչեց Ուստան՝ սանամորը բաց թողնելով:

– Ցավս ուտես, բալքի կչտանաս,– հանդիմանական շեշտով ասաց Մաքոն:

– Մենակ ցավդ. ուրիշ բան չէ՛, լուս-արեգակս:

– Օրթե խելոք մնայիր, նոր կարագ [կուտեիր կուտա-յի] կուտեցնեի. [կուտեիր, հիմի հնչ բան չի],– ասաց և նորից չվաքն ելավ: Ուստան կանգնել էր խնոցու հան-դեպ:

– Ի՞նչ ես սատանի պես տնկվել առաջս, քավոր է-րինք, խո, կրակը չընկանք:

– Ա՛խ, Մաքո ջան, [ինչի],– քնքշորեն չչնջաց Ուս-տան,– ինչի էդպես չորի կկապես. Աստված է վկա, որ քե-զի չա՛տ կսիրեմ:

– [Գնա սանամեր Ծովոյիդ] Քու ուզածդ սանամեր Ծովոյի քովն է, գնա էնոր սերդ ըսա:

– Սանամեր Ծովոն իրան տեղը, դու քու տեղդ,– Ուս-տան չկարողացավ կեղծել. սանամեր Ծովոյին, որին իս-կապես ամենից շատ էր սիրում, չուզեց նսեմացնել Մա-քոյի առաջ:

– Էդպես բան չկա, կամ ինձի պիտի սիրես, կամ էնոր. երկու ժամին լուսարար, երկուսն էլ կմնան խավար:

– Դարդ մի էրա, Մաքո ջան, քավորիդ սերը հազար ժամ պայծառ կպահե:

Շները երթիկից կատաղի հաչեցին:

– Կարո, փասա-փուսեդ քաշե, մարդ կուգա:

Կարոն աչքի պոչով երկարուն նայելով հեռացավ սա-նամեր Մարգրիտի մոտից, և օրորվելով, երթիկների վրա-յով ելնել-իջնելով [մտավ] հասավ սանամեր Սանոյենց տունը:

Սանամեր Սանոյի ամուսինը սանահեր Սարոն Ուստա Կարոյի [չսիրած սանահորներից] աչքի դրողն էր. չէր սի-րում նրան և զզջացել էր նրան քավոր դառնալուց. Սա-

րոն խիստ մարդ էր և խեթ-խեթ էր նայում Ուստայի վրա, սանահորների միջից միայն սրա սրտում կասկած կար Ուստայի զգացմունքների վերաբերմամբ դեպի սանամայրները:

Ուստան կանգնեց դռան առաջ և միտք էր անում՝ մտնի թե չմտնի սանամոր տունը. այդ վարանումից հանեց սանիկը, որ ընկերների հետ ճիպոտները հեծած ձի-ձի էին խաղում:

– Արի քովս, գառնուկս,– կանչեց սանիկին, երեխան ձին քշելով մոտեցավ Ուստային,– հերդ տունն է,– հարցրեց Ուստան:

[– Չէ՛, քավոր, տունը չէ,– ասաց և ուզում էր փախչել, Ուստան ձեռքը տարավ գրպանը, հանեց մի բուռ չամիչ և տվեց սանիկին:][1]

Ուստան սրտապնդած ներս մտավ գավիթը, գավիթը լցված էր թանձր ծխով, որ թոնրատան բաց դռնից հեղեղի պես բղխում էր:

«Սանամերս հացի <է>»,– ասաց ինքն իրեն Ուստան և կամացուկ չեմքեց թոնրատան դուռը: Ծխի միջից հաղիվ նկատվում էր սանամեր Սոնայի հաճելի և ճերմակ երեսը, որ թոնրի գոլից հիմա կարմրել – վարդ էր դարձել: Նա թոթոլ թևերը վեր քշտած՝ մենակ համ խմորի գունդն էր բաց անում գրտնակով, համ լավաշը կպցնում թոնրի կողերին, համ փռում եփածը. Ուստան դուռը սուսիկ դրեց, և այն ժամանակ, երբ սանամերը կզել էր թոնրի մեջ և կրակը խառնում էր,– Ուստան մարախ մոտած կատվի պես վազեց և գրկեց Սոնայի մեջքը – հետևի կողմից, ու ակնթարթի մեջ համբուրեց նրա ծամերի տակից, ուղիղ

---

[1] *Աչ լուսանցքում՝ առանց տեղը նշելու.* «Մերդ տանն է,– Հա՛,– Օխա՛յ, հերդ,– Հերս, օ՛, օ, ասաց և քայլերն ուղղեց այլ կողմ»:

ծոծրակը: Սանամերը վախեցած իսկույն ետ նայեց և տեսավ քավորին ու, բեխերից պինդ քաշեց:

– Զոզկիս, կարո, ինձի թոնիր էիր քցել:

– Ես էլ հետդ կըլնեի, թեկուզ դժոխքը բացվեր,– ասաց Ուստան և նորից իրար վրա համբուրեց:

– Գետինը մտնիս, քելե, կարո, ոչ հացի պատիվը գիտես, ոչ մեռոնի, դու հաստատ որ դժոխքական ես:

Ուստան չպատասխանեց: Սոնան հետ հրեց նրան և աչքերը սրբելով, որ ծխից արցունքոտել էր, ասաց.

– Սատանա Կարո, դուռը բաց, խեղդվա, ինչպես փակվիր, որ ձեն չառա [չուն մարդ ես, քավոր, չուն]:

Ուստան ելավ դուռը բացեց:

– Սանամեր չան, մատներդ ուտեմ, երբ պիտի քավորիդ վրա քաղցր աչքով աչես:

– Անօթի չուն,– կտրեց Ուստի խոսքը Սոնան,– հողը մեր մարդոց գլուխը, որ քեզի պեսին կապել ենք մեր տաշտը, կշտանալիք չունիս:

– Սոնա, դու միշտ գեչ լեզու ունիս, ինչի՞ չուն կըսես, քեզի հավատարիմ կսիրեմ էդոր համար...

– Շունն ինչու տիրոջը կսիրե, ավելցուկի համար. դու էլ էդման ես – մեր մարդոց քովը:

– Թյո՛ւ, կնիկն էլ էդպես խոսք խոսի,– սաստիկ վիրավորված ասաց Ուստեն, և չիտկվեց դեպի դուռը,– օրթե թագավոր ծնիս, էլ քավոր չեմ ըլնի, չուն Սարոյեն ի՛նչ դաս պիտի առնես...

Առանց պատասխան առնելու Ուստան մեծ-մեծ քայլերով թռավ դուրս, և վատ տրամադրությամբ դնաց տունը՝ չուզենալով [վերջաց...] շարունակել մյուս սանամերների այցելումները:

Ուստան շաբաթը մի անգամ, Նախջվանում եղած ժամանակ այցի էր ելնում սանամորներին. որի հետ սիրով,

որի հետ խոով բաժանվում էր, ու նորից թե խոովին, թե սիրովին տես գնում:

Ուստան իր բոլոր սանամորների հետ, առհասարակ, մտերիմ էր. միշտ ընծաներ էր տալիս, և սանամորներից հաճախ բաժին էր ստանում — կարագ, սեր, գաթա, և [չա՛տ-չա՛տ հաց] հարիսի, փլավի, խաչիլի հրավիրում:

Թե ինչ տեսակի մտերմության մեջ էր Ուստան սանամորների հետ, նույնիսկ չարախոս-բամբասասեր գյուղացիք, առանց հոգիներին մեղք անելու, չէին կարող որոշ, հաստատ մի պատկեր կազմել. և աշխարքի սկզբից ի վեր դեռ ոչ մի արև չի ծագել, որ կարողանա լուսավորել սիրող սրտերի մութումութ, գաղտնի արարքները:

Միակ ճշմարիտ աղբյուրը Փիլոս աղբարն էր, Ուստի խոստովանահայրը, [որից նա ոչ մի գաղտնիք չէր պահում]: Ուստան Փիլոսին միշտ պատմում էր, թե որ սանամոր հետ լավ է, որի աստղը իր աստղին դուր է եկել, որին է նվեր տվել, որից խոովել, որին, նույնիսկ, համբուրել:

«Փիլոս ջան,— [ասում էր Ուստան] խոստովանում էր Ուստան,— սանամորներիս ծուռ աչքով չեմ մտիկ անե. մեկ-մեկ, տեղն ընկած տեղը, ճարս կտրած, կպաչեմ. քուր-աղբոր պաչ. օրթի չպաչեմ, կննդանան էնոնք, քանի որ կնիկները երեխոց պես միշտ պադվել կուզեն»[1]:

Եվ Փիլոսն էլ անդրդվելի հավատում էր Ուստի բոլոր խոսքերին, ամենուրեք փրփուրը բերանին պաշտպանում էր իր վարպետին չարախոս, հետախույզ, [բամբասասեր]

---

[1] *Այ լուսանցքում՝ առանց տեղը նշելու.* [«Ուստան տուն-տեղ, կնիկ-երեխա չունի, մենակ մեզնով կմխիթարվեր»,— պաշտպանում էին սանահերները Ուստային՝ անկման չրջանում: «Թող գար, երթար, ո՞վ բան կասեր»»:]

գյուղացիների առաջ, որոնց միակ բանն ու գործն է, սուտ ու փութ լուրեր հավաքել սրա-նրա մասին և եկեղեցու պատի տակ բամբասել ու չարախնդալ: Երդվում էր ու կուրծք ծեծում, որ Ուստան ազնիվ, սիրտը մաքուր, միամիտ մարդ է, որ գյուղը այդ ամենը, լույսի պես, կտեսնի:

«Գեչ մարդը գեչ կմտածե, ամեն մարդ աշխարքը իր սրտի պես գիտե»,— այսպես հանդիմանում էր նա գյուղացոց, և ավելացնում Ուստի խոսքը. «Հազար լավ է մի կաղ կով ունենամ տունս, թե քառսուն մարալ սարերը»:

Դատարկախոս, անգործ գյուղացիների այն խոսքին թե՝ մեղր կտրողը մատը կլիզե, Փիլոսը կրակ դառած ուղղակի քցըցում էր նրանց աչք ու երեսը. «Տո, մեղր թողնել ես, որ ուրիշին էլ փայ հասնի, տո, չարի ճարտար, բարու տխմար անաստվածներ. Ուստես ձեր լվոտ հարսներին կարոտ է, զրող ու մրող հոգի կորաններ...»

Եվ գյուղը իրավունք չուներ չհավատալու Փիլոս աղբորն ու Ուստա Կարոյին, մանավանդ որ բոլոր գյուղերի սանահորները, բացառությամբ սանահեր Սարոյի, ո՛չ մի կասկած չունեին իրենց պատվավոր քավորի վրա. և բացի այդ տարոց-տարի չատանում էր սանամորների թիվը: (Ամենքը երազում էին Ուստին քավոր տեսնել իրենց պսակի ու երեխայի վրա) կաթնահունցի պես Ուստա Կարոյին ձեռքն ձեռք էին խլում քավոր դարձնելու համար:

Ե. ԳԼՈՒԽ
<Բ. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ>

Գյումրեցի վաճառականները գիշերեցին Ուստա Կարոյի այվանում: Երբ առավոտյան Ուստան աչքերը բացեց, տեսավ, որ [նրանք] գյումրեցի ամբարտավանները չկային, նրանք շատ կանուխ ելել, մեկնել էին [նրանք] ուրիշ գյուղ: Հակառակ երեկ երեկոյան անախորժ դեպքին, նրա տրամադրությունը շա՛տ լավ էր, և ավելի զվարթացավ, երբ տեսավ նրանց բացակայությունը: Երդը չրթունքին հագնվեց, լվացվեց, նախաճաշիկից անմիջապես հետո Քերոբին ուղարկեց սափրիչի ետևից: «Էսօր չպիտի բանեմ, էսօր պիտի հանգնիմ-կապեմ, երթամ գյուղամեջ, երթամ սանամորներիս ինձի ցուց տամ».— այսպես խոսեց ինքն իրեն հետ Ուստան և ջուր դրեց օճախի կրակի վրա սափրվելու համար:

Ներս մտավ Քերոբի հետ սափրիչ Գալուստը, որ մի ոտքից կաղ, ծաղկատար երես [զվարթ] մարդ էր:

— Էկա՞ր, Գալո ջան,— ասաց Ուստան ձեռք մեկնելով:

— Էկա, գլխիդ մատաղ,— պատասխանեց Գալուստը:

— Դեհ, նստի՛ր, մի պապիլոս չինիր, մինչի ջուրը [տաքնա] եռ գա,— և տուփը ընձեռնելով նրան, չարունակեց:— Ի՞նչ կա, ի՞նչ չկա գեղերը, մեր գեղն էլ մեջերը,— ձայնի բազմիմաստ շեշտով հարցրեց Ուստան:

Գալուստը Նախջևանի և շրջակա գյուղերի սափրիչն էր, ատամ հանողը, (ոզրուկ դնողը՝ արյուն առնելու հա-

մար, վիրաբույժը և կոտրած ոսկոր կապողը) և այդ արհեստների հետ միասին — գյուղական լուրերի և մանավանդ բամբասանքների չրջուն (հարուստ) տոպրակը: «Ջհուդի բոխչա է Գալոյի բերանը»,— ասում էին գյուղացիները: Ամեն գյուղ և ամեն տուն մտնելով-ելնելով, հավաքում էր խոսք ու զրույց՝ սուտ ու [ճշմարիտ] չիտակ՝ և տարածում էր գյուղից գյուղ, տնից՝ տուն:

— Ողջույթյուն, Ուստա Ջան, էս անգամը էնպես, պոչով, բան չկա. մեկ երկու օր Ագրակ էի, մեկ-երկու օր էլ Ծալնի, եռև էլ՝ Ջուչի, վով սուտ ըսե, բերանը արաղով չթռչի:

Ուստան հասկացավ Գալոյի միտքը, աչքով արեց Քերոբին, որը պահարանից հանեց արաղը և մի բաժակ լցրեց, տվեց ասելով.

— Որ էղեր ես Ջուչի, լից բերանդ թռչի:

— Ուստա Ջան, մեր մեջ մնա,— բերանը ափով ամուր սրբելով ասաց սափրիչը,— Ագրակ, Համբոյենց հարսը ջուխտ է բերե...

— Ինչ զարմանք բան կա որ, էդ նշան է, որ հարսի զավակատունը ուժով է:

— Ջէ, Ուստա Ջան, գլխի չես, ախր բանի մեջը բան կա. էդոր մարդը Ռուսեթ սալդաթ է.— և ականջի մեջ լսելի ձայնով չչնջաց,— Ագրակ ո՞ւր, Ռուսեթ ո՞ւր:

— Հըմ,— գլուխը վեր-վար չարժելով ասաւ Ուստան,— (կը նշանակե գեղի կտրիճները լավ են հոգացել. [մեկի տեղ երկու.] մեկն իրենց տեղը, մեկն էլ մարդ-ամուսնու տեղը:)

— Ուստա Ջան, դեռ խոսքիս վերջն առ, զարմանքն էն է, որ երկու երեխեն ցուցանք է դուրս նկել. մեկի գլուխը մեջքի վրա է կպած, մեկելի ոտքը՝ փորեն է ելել. ի՞նչ ըսիր, Ուստա Ջան:

– Աստծու պատիժն է, բա. կխաբե պսակի մարդին,– ասավ երկյուղածությամբ Քերոբ (Փիլոս) աղբարը:

– Չէ՛,– ասավ Ուստան (Գալոն),– Աստված էդպես հասարակ բաներու մեջ չի խառնի. էդ բանը նշան է, որ կտրիճներեն մեկը սարքել է, մեկ ուրիշն էլ եկել-քանդել է:

– Հա՛, հա՛, հա՛,– [ծիծաղեց սափրիչը] ասեց ու ծիծաղեց Ուստան ինքը:

– Տո՛, Աստծու պատիժն է, ի՞նչ կծիծաղաս, մեղք է.– [խրատական] բարկացկոտ ձայնով խրատեց Քերոբը, պնդելով իր արտահայտած առաջվա միտքը:

– Չէ, Քերոբ ջան, էն կծիծաղամ, որ ողջ գեղը էդ դեպի վրա Ուստայիս խոսքը կհիշեն ու կխնդան:

– Ո՞ր խոսքս,– զսպված ուրախությամբ հետաքրքրվեց Ուստան:

– Էն որ մի անգամ ադրակցիք հարցրել <են> քեզի, Ուստա ջան, թե պատճառն ի՞նչ է, որ կնիկ կա ձուկ կծնի, կնիկ կա՝ կատվի գլխով ցուցանք, կամ երկու-գլխանի ևրնխա, ուրիշ-ուրիշ այլակերպ-այլակերպ բաներ. դուն էլ ասել ես թե՝ պատճառս ո՞րն է, խելքդ որ կնկա հետ դնես, խաղաս, էլ ինչ ասես՝ կբերե...

– Միտքս չէ, ես ո՞ր ասածս միտքս պահեմ,– հպարտությամբ պատասխան տվեց Ուստան:

– Ուստա ջան, մենակ Ադրակ չէ, ամեն տեղ էլ խոսքերդ կասեն ու քեզի կհիշեն ու անուշ-անուշ կխնդան. խոսքի օրինակ. Զուչի ասածդ թե՝ ձրի գարի ունենամ, էշը գոռալով Ստամբոլեն կուգա: Հավկիթի պես խոսքերդ գլորել ես ամեն տեղ, հիմի ձագ են հանել [թև են առել, կթռնին բերնեն բերան]:

– Խոսք է, կասենք, կանցնինք,– նորից ինքնագոհ հանդարտ ասաց Ուստան:

Ջուրն եփ էր գալիս, սափրիչն սկսեց իր գործը:

— Ուստա ջան, Ջուչի չինածդ աղբուրը լավ գործ կհոգա. մեկել օրը ուշ գիշերը տուն կուգայի, տեսա աղբուրի տակ մեկ սիրուն հարս կլողնար, լուսի պես:

— Էնոնց համար եմ չինել, հո, էնոնց քոսոտ մարդոց համար չեմ չինել,— ասավ Ուստան:

— Ուստա ջան, սանահորդ, Պողոսի տանն էի. քեզի չա՛տ բարև կեներ:

— Բարև բերողը ողջ ըլնի,— ասավ Ուստան:

— Սանամերդ, ես կասեմ, երկհոգսի է, պատրաստ [եղիր] էղի:

[Տիրեց մի փոքր] Իջավ լռություն. սափրիչը վերջացնելու վրա էր:

— Էնքան մարդ կսափրեմ, Ուստա ջան, չիտակը կասեմ, քուկիդ պես սիրուն, կարմիր, պինդ թշեր չեմ տեսել, եղի պես ածելիս կսլա. ատլաս է, ատլաս թշերդ.— ու փառք իրան, դիդապտի ճերմակ մազ չկա...

Ուստային չա՛տ հաճելի եկավ այս գովքը, և բախտավոր ժպիտը [փայլեց] խաղաց սափրած [պայծառ] փայլուն երեսի վրա:

Վերկացավ Ուստան՝ լվացվելու: Քերոբը նստեց նրա տեղը:

— Ուստա ջան, երեկ Ղուկաս աղային կսափրեի:

Ուստան Ղուկասի անվան վրա դեմքը ծամածռեց: Ղուկաս աղան,— այդ անունով էր նա հայտնի շրջանում,— Նախճևանի դավառակի ամենաառաջին հարուստ մարդն էր. խանութ ուներ և ցորենի լայն գործ: Ուստայի բացարձակ թշնամին էր նա, Ուստան էլ՝ նրա: Ղուկասը կարոյին համարում էր թոկն փախածից մեկը, անտուն, անհայտ մի բախտախնդիր: Ուստան էլ նրա մասին բոլոր գյուղերում հայհոյելով՝ խոսում էր իբրև մի

անգուլթ վաչխառուի, գող-ավազակի, որբի բերանից հաց խլողի:

– Ի՞նչ կասեր էդ մարդագելը,– հարցրեց Ուստան:

– Քու մասիդ չէր, Ուստա ջան. Տեր-Մուքայելը թուղթ է ստացե, որ իրան նորեն գործակալ են կարգե. շատ ուրախ էին, փող զարկելու նոր դուռ է բացվել:

Տեր Մուք[այ]ելը Ղուկասի աներն էր և միևնույն ժամանակ նրա վաճառականական ձեռնարկների ընկերը և խորհրդա[կից]տուն, [իբրև շատ] խելացի մարդու հռչակ ուներ [ունեցող մեկ մարդ]:

– Տեր-Մուք[այ]ելը, հեռի իրեն սուրբ կարգեն, խաչադող, էչ ներկողի մեկն է, դարմանի տակի չուր, կակուղ փուշ է. ո՞վ գիտե, ինչքան կաշառք է տվե քաղաք, վարդապետին, որ նորեն գործակալ է դառե:

– Ուստա, խոսքը մեր մեջ մնա, շատ կռապաշտ մարդիկ են, աներ-փեսա: Երեկ եկել էր մի խեղճ մարդ, կուլար, կասեր՝ երեխեքս մերկ (տկլոր) են. էդ անաստվածը 5 մանեթի ճոթ տվավ, 10 մանեթի մուրհակ առավ, ամիսը [30 կոպեկ] 2 աբասի չահ. հին մուրհակն էլ, որ 20 մանեթ էր, նորեն գրեց. գրողն էլ էդ ձեռքը չորնալիք տերտերն էր,– չինեց 30 մանեթ, էլի 2 աբասի չահով. մարդն ասավ ինձի, թե 20 մանեթի տեղ 10 մանեթի ճոթ եմ առել աչունքը. հիմի դեհ արի էդ գազանի ձեռքեն պրծի, պրծում չկա. չա՛տ զրկողն է, զրկողը, չի վայելելու: Ի՞նչ ըսիր, Ջավուշ ջան,– դիմեց Ջավուշին՝ ածելին երեսի վրա սահեցնելով:

– Ի՞նչ ըսեմ, տո՛, երեսս կտրեցիր, խելքդ գլուխդ ժողվե:

– Վա՛յ, հաստատ.– խնդրական ձայնով ասաց սափրիչը՝ բամբակ կպցնելով Ջավուշի երեսի կտրածի վրա:

– Ծհ, Ղուկասը, Ղուկասը, քար կպաչտե,– ասավ Ուստան.– ինչի՞ մոտս չղրկեցիր էդ խեղճին, փողը տայի, պարտքը թափեր:

— Մոքես չանցավ, Ուստա Ջան, մնկէլ [անգամին] հեղին:

Քերոբի երնսէի մի կողմը [պրծել էր] ավարտել էր, մյուս [երեսը] կողմը պիտի սկսեր, երբ մնկէլ ածելին ձեռքին մոտեցավ Ուստային:

— Ուստա Ջան, բան է կասեմ, ուրիշ տեղ չասես. իրեն տունն էլ դուրկ կպահե. կնկանեն, երեխաներեն, ախբրտոցեն կկտրե, էդ ծով-հարստութենի մեջ հետնյալ աղքատեն վատ կապրին. կերածներն ի՞նչ է — միշտ թանե սպաս, միշտ թանե սպաս. միս չի մտնի տունը [բայց ինքը գողտուց հավ ու եղ կուտե]:

— Գիտեմ, գիտեմ,— ասավ Ուստան.- էն որ իմանա, թե անփող կթաղեն՝ ձեռաց կմեռնի:

— Ուստա, ասենք էդպես է, բայց իրան չի դրկե, ծածուկ հավ[ի միս] կուտե, եղ ու մեղր:

— Էդ չգիտեի, տո, ինչ գազան-անասուն հրեչ է եղել...— գլուխը տարուբերելով, զարմացած ասավ Ուստան:— Շատ նախանձ մարդ էլ է, չա՜տ, հատը չկա, չի կրնա տեսնի, որ աշխարքում հարուստ մարդ կա, կուզե որ ամեն մարդ մուրացկան ըլնի, ինքը մենակ երևա:

— Գիտեմ, գիտեմ,— [ասավ Ուստան] հաստատեց Ուստան,— էն որ իմանա, թե էս մարդը երազին գանձ է գտել, ցավեն հիվանդ կպառկի:

— Շատ չիտակ կխոսիս, Ուստա Ջան. մեկ էլ էդ անասուածը չա՜տ ամբարտավան է. գիտե թե ողջ գեղը ինքը կպահե. ընձի հետ էնպես կվարվի, ասես թե սովի տարին երեսուցս հաց է տվել. մեկ կուզեմ քովը չերթամ, մեկ էլ կասեմ՝ հերն անիծած, չան վրայեն մազ պոկել է:

Ուստային չա՜տ ուրախացնում էին իր թշնամու վրա բարդած այս մեղադրանքները և մի առանձին հրճվանքով լսում էր ու վկայում սափրիչի ասածները:

– Էդ էլ դիտեմ, էն էնպես կկարծեն, թե Մսրա ծովերի վրայով անցնող հավքերը իրեն հաց ու ջրովն է, որ կթռնին:

Ու մոտեցավ Ուստայի ականջից փսփսաց. աչքը չա՛տ չոռն է. հինգ, վեց սիրող ունի. Գլեննց, Ներթևցու, Մխոյենց հարսները. հիմի էլ ձեռք է ձգել, մարդու չըսես, աբունք կեղնի, Նիկո քեհի հարսը. կըսեն, Ուստա ջան, կըսեն...

Ուստան զարմացած. ի՛նչ կըսես, եղնելիք բան չէ, էն հարսը – սրբի պես էր...

– Հաստատ է, Ուստա, աչքի տես բան է:

– Աստվածդ սիրես, հոգուդ մեղք մի՛ էրա:

Այնինչ Քերոբի համբերանքը հատած՝ զայրույթը հաղիվ զսպելով, ասաց.

– Տո, տնակոլի տղա, սապոնն երեսիս չորցավ, չուտ էրա պրծի, ես պարապ մարդ չեմ:

– Մի նեղսրտի, Քերոբի ախբար ջան, Ուստի հետ խոսնելն չեմ կշտանա:

Ու սկսեց սափրել մյուս կողմը:

– Հա՛, Ուստա ջան, Ղուկասը նոր մենծ ամբար չինել կուտա, քարերը թափել տվել է, կաղզվանեն վարպետներ է բերել. ասի թե՝ մեր Ուստին թողած, ինչո՞ւ ուրիշին կբերես. էն էլ թե՝ որ ուզենամ էշի բաղնիք չինեմ, նոր [Ուստա] խելառ կարոյին կկանչեմ...

Սափրիչը խոսքը չվերջացրած, Ուստան աչքերը բորբոքված բղավեց.

– Տո՛, ես քու... ի՞նչ ասեմ, [դու էլ մարդ ես, որ վարպետությունս կծաղրես] վա՛յ հողը գլխիդ, Ուստա Կարո, ուրիշի վրա չուն կհաչա, քու վրեդ՝ կատու. սպասե՛, աչքիդ լուսը պիտի թափեմ, սպասե, ինձի Կարո կասեն, ես էշի բաղնիքի մեջ կաշիդ պիտի քերթեմ...

— Ուստա Ջան, վարպետ Ջան, հոգուդ մատաղ, գուր ինչո՞ւ արունդ կպղտորես, թող հաչէ վրադ, քանի որ չի կրնա խածե. հանդարտի՛ր, հանդարտի՛ր...

— Հանդարտ եմ, հանդարտ եմ,— ասաց Ուստան հանդարտ ձայնով:

Եվ իրոք հանգստացած՝ սկսեց հագուստները փոխել և դրսնավուրները հագնել: [Այնինչ] Սափրիչը վերջացրեց գործը և պատրաստվում էր մեկնել: Ուստան իր սովորական առատաձեռնությամբ վարձատրեց նրան, որ մի քանի անգամ չնորհակալ լինելով դնաց:

Ուստան նայեց ժամացույցին.— իր ժամի 11-ն էր. վեր կացավ, կապուտ սնդուկից հանեց մի բաղդադի դրեց ծոցը, պապիրոսը բերանին, զուգված ու զարդարված, ծանր քայլերով դնաց գյուղամեջ

Պատահմունք էր, թե սրտի գաղտնի տենչ.— Ուստան իրան հանկարծ կանգնած տեսավ սանամայր Ծովինարի տան առջև. բոլոր սանամորներից [ամենից շատ] սիրուն, ճերմակ, նազուկ Ծովինարին էր ամենից շա՛տ սիրում, և հակառակի պես բոլոր սանահայրերի մեջից միայն Ծովինարի ամուսնուն, սանահայր Դավիթին էր ատում, և աչքով աչք չուներ նրան տեսնելու: Սա մի կասկածամիտ և խորամանկ բնավորության տեր էր, և թվում էր թե բոլոր սանահայրերի մեջից նորեն սա էր միայն, [որ չէր հավատում], որ նվազ հավատ ուներ Ուստայի՝ դեպի սանամայրերը ունեցած վերաբերմունքի մաքրության: [Եվ պարզ ճակատով իրար չէին կարող նայել քավոր-սանահայր:]

Ուստան փոքր-ինչ վարանեց՝ մտնի՞, թե՞ չմտնի, ապա աչքը չորս կողմը ածելով ուզում էր ներս մտնել սանամոր տունը, երբ նկատեց իր սանիկին՝ երեխաների աղմկող խմբի մեջ, որոնք ճիպոտներին հեծած ձի-ձի էին խաղում:

– Սմբլո, գառնուկս, արի տեսնեմ,– [Ուստան] քավորը կանչեց սանիկին, որը ձին քշելով մոտեցավ և թրվռալով ընկավ քավորի գիրկը:

– Ֆավոր, քավոր, չամիչ կուզեմ:

Ուստան, որ միշտ գրպանում միրգ էր պահում երեխաների համար, մի [բուռ] ափ չամիչ լցնելով սանիկի գոգը, և շոյելով հողոտ ու գղգղված մազերը, կամացուկ հարցրեց.

– Մերդ տո՞ւն է, պուլիկս:

– Հա՛:

– ՀՀընն,– գոհ սրտով հնչեց Ուստայի ձայնը:

– Հե՞րդ:

– Հերս էլ:

– Օհոոո՛,– դժկամորեն մնչաց և կրունկի վրա ետ դարձավ. երթիկները ելնելով ու իջնելով հասավ Վարդանենց սանահեր Տիգոյի տանը. վստահ ներս մտավ չվաքը և բարձր ձայնեց.

– Սանահեր Տիգո, սանամեր Մաքո, էս ի՞նչ է, չունչ չկա՞ տունը:

Նրա ձայնի վրա տան դուռը բացվեց և չեմքի վրա երևաց մի սիրուն, մատաղահաս կին, կանանչ-կարմիր հագած, գրկանոց երեխան կրծքին:

– Բարով, քավոր Ուստա Կարո, էդ դո՞ւ ես. ո՞ւր էիր էսքան ժամանակ:

Երիտասարդ սանամորները, թեև չինական սովորութեան համաձայն առհասարակ քավորի հետ հարսնութեյուն են անում, չեն խոսում, բայց Ուստան այս օրենքի [վերջացրել էր] զորութեյունը կորցրած էր համարում, երբ պսակից մի-երկու տարի անցած կամ մի տուն մեռոն էր տարած լինում: Իսկ այն սանամայրները, որ համառում էին չխոսկան լինելու մեջ,– նրանց մոտ չէր գնում:

– Բարով տեսանք, սանամեր Մաքո. Բագրան էի. չա՜տ աշխատանք ունեի,– պատասխանեց,– սանահերս ո՞ւր է, սանմեր անան ո՞ւր է:

– Սանահերդ առավոտ-առավոտ չաղաց գնաց, կեսուրս էլ տալոջս տուն է, տալս մի քիչ հիվանդ է:

Ուստան գեմքի վրա առանց գոհունակության նշան ցույց տալու, հանգիստ կերպով ասաց.

– Եկա, քեֆերդ, հալերդ հարցնելու, ի՞նչպես եք, լավ եք:

– Բարով եկար, քու տունդ է. համն ներս,– և քավորի ձեռնն բռնելով ներս տարավ. Ուստան մի ակնարկով նայեց թոնրատան չորս անկյունը, և նստեց աղասանդի վրա:

– Քավոր չան, քեզի ի՞նչ պատիվ անեմ, ձվածեղ անեմ, կուտե՞ս:

– Չէ, սանամերս, չնորհակալ եմ, նոր հաց կերա, ի՜նչ պատիվ, ի՞նչ բան, էնքան եմ տեսել որ:

– Թող ըլնի. մեկ բռնե սանիկդ, քավոր չան, մի արաղ բերեմ:

Ուստան գրկեց սանիկին, երեխան ձեռքը ձգեց ժամացույցի փայլուն շղթային, քաշեց. քավորը հանեց ժամացույցը, մոտեցրեց երեխայի ականջին, որ կուսական հետաքրքրությամբ՝ սուս եղած լսում էր ժամացույցի չխկչխկոցին: Սանամերը արաղը բերեց և բաժակը պռունկե պռունկ լիքը մատուցեց Ուստային:

– Սանամեր Մաքո, սանիկս ի՜նչ մեծցել է, ի՜նչ սիրուն տղա է դարձել, ի՜նչ սիրուն աչքեր ունի, տեղոց-տեղ քեզի է քաշել,– և արաղը առնելով մի կումով խմեց:

– Անուշներ, քավոր,– ասաց և մի կտոր չաքար հանեց կրծկալի տակից ու տվեց իրեւ արաղի մատա:

– Ողջ ըլնիս, սանամեր ջան,– ասավ Ուստան և դրպանից հանեց մի կապտավուն մետաքսի ընտիր բաղդադի,– էս քեզ համար եմ բերել, հատուկեն Երևանեն բերել եմ տվել, չեմ ու չում չկա, պիտի առնիս:

Ուստան այստեղ սուտ խոսեց՝ հակառակ իր ճշմարտասիրությանը: Բաղդադին հատկապես նվիրելու էր բերել Ծովինարի համար, բայց այդ այցի անհաջողությունը զայրացրել էր նրան և վայրկենապես փոխել մտադրությունը:

Սանամայրը աչքի ծայրով զննեց գեղեցիկ թաշկինակը, և հավանեց չա՛տ:

– Շնորհակալ եմ, քավոր, ավելնորդ բան է, քեզնեն էնքան նվեր ունիմ ո՛ր:

– Դուն իմ սովորությը չես կրնա փոխել, առ գլխիդ քցե, մեկ տեսնեմ:

– Որ չա՛տ կուզես, տուր, ձգեմ, տես,– չինծու անտարբերությամբ ասաց սանամայրը, և քանդելով գլխի նախկին ծածկույթը, նվեր բերածը կապեց, ապա կրծքկալի տակից հանեց մի փոքր, կլոր հայելի, ուղղեց մազերը և աչքերի պայծառ ժպիտով նայեց Ուստային:

– Կսազա՞, չէ՞, [Ուստա] քավոր...

– Օխայ, Մաքո ջա՛ն, աննման դարձար, լույսի կտոր:

Հետո հանեց, ծալեց բաղդադին և տալով Ուստային, ու երեխան նորեն ինքը դրկելով ասավ.

– Առ, քավոր, էգուց բեր մարդուս մոտը տուր:

Ուստային դուր չեկավ այս նոր կերպի վարմունքը, ու սանամոր ձայնին նմանելով կրկնեց նրա խոսքերը.

– Որ մարդուս մտքեն գեչ բան չանցնե:

– Ինչո՞ւ տնազ կենես, Ուստա:

– Ինչո՞ւ տնազ կենես, Ուստա:

Սանամայրը չդայնացած կտրուկ ասաց.

– Ես քեզի բան կասեմ, ի՞նչ է, կուզես վրա՛ս խոսին, բամբասեն:

– Մարդ էլ բամբասանքեն վախնա, դարդակ հրացան է բամբասանքը, օխտը (յոթը) սարի ետևեն արձակած:

– Թող ըլնի. ո՞վ կուզե, որ իրեն առնեն-ծախեն. ես կմեռնեմ, որ վրաս խոսեն թե Վարդանենց Հարսը Մաքոն Ուստա Կարոյի հետ էսպես-էսպես...

– Որ խոսին, ի՞նչ կըլնի, նշան է, միսդ անուշ է, կծամեն. ինձի նայե, բամբասը ի՞նչ է որ, սանամեր չան, օրթե մարդ ականջը դնե իրեն ամեն մեկ ծանոթ-բարեկամի դռանը, երեխի պես անմեղ ըլնիս, թեկուզ, կլսե իր վրա էնպիսի բաներ որ, կիմանա թե երդում կերած իր թշնամիներն են էնոնք. էդպես է աշխարքը. դու քու օրդ արա, թող հաչողը հաչա:

– Ջէ, քավորս, ես գետինը կմտնեմ:

– Թող թշնամիդ գետինը մտնի, ափսոս չէ քեզի պես ծաղիկ հարսը,– և ապա գուրգուրանքով չարունակեց,– Մաքո չան, էսօր չա՛տ սև կերևան թերթիչներդ, վախնամ [դեղ ես] ներկ ես քաշել:

– Էդման բաների պետք չունիմ,– հպարտ պատասխանեց Մարքրիտը:

– Մեկ մոտեցիր, աչքովս տեսնիմ, չեմ հավատա՛,– ասավ Ուստան և ուզեցավ բռնել Մաքոյին, որը փախս տվավ, Ուստան ընկավ ետևից և սյունի տակ գրկեց մեջքից, երեխան մի ճիչ արձակեց, (սակայն Ուստայի ձեռքն էր ընկել սանամոր բազմահյուս ծամերից մի փունջ, որը կարոտով բերանն առավ և կսկուծ համբուրեց, սանամայրը չտեսնել ձևացուց և զսպեց շրթունքների չուրջը հավաքված գոհ ժպիտը,) ապա պուկ եկավ Ուստայի ձեռքից, թռավ չվաքը:

– Քավոր, ինձի լսե, հիմի գնա, էգուց արի ճվածեղի, սանահերդ քեզի կարոտցեր է:

Ուստան (բավ համարեց այսքանը, և) աչքերը խորհրդով լի՝ սևեռելով սանամոր անորոշ խաղերով ծոր գնացող աչքերին, մնաս բարև ասաց և դուրս եկավ, (քայլելուս փողոցում այն մտքի հետ էր, թե «չհասկացա սանամորս սրտինը. կնկա մեկ աչքը հա է, մեկել աչքը – չէ. Աստված հա-ին արժանացնե»:)

Ուստան քայլերն ուղղեց սանահեր Մարգարի տունը. դավիթը լցված էր ծխով, որ թոնրատան բաց դռնից հեղեղի պես բղխում էր: «Սանամերս հացի է»,– ասաց ինքն իրեն Ուստան և կամացուկ շեմքեց դուռը. սանամերը թխլիկ թևերը մերկացրած մինչև արմունկները, մեն-մենակ և խմորի գունդն էր բաց անում գրտնակով, և լավաշը կպցնում թոնրի կողերին, և փռում եփածը: Նրա հաճելի դեմքը թոնրի գոլից կարմրել էր – վարդ էր դարձել: Ուստան դուռը սուսիկ դրեց և այն իսկ միջոցին, երբ սանամերը կռացել էր թոնրի կրակը խառնելու – Ուստան մարաղ մտած կատվի պես վազեց և գրկեց Սոնայի մեջքը, հետևի կողմից: Սանամերը վախեցած՝ իսկույն ետ նայեց և տեսնելով քավորին, բեխերից պինդ քաշեց:

– Զռզկի՛ս, կարո, ինձի թոնիրն էիր ձգել:

– Ես էլ հետդ էի. իրար գրկած մոխիր կդառնայինք, ի՞նչ է վախեցար, հանաք կանեի:

– Գնա սանամեր Ծովոյիդ հետ հանաք արա:

– Ախ, սանամեր Սոնա,– քնքշորեն շշնջաց Ուստան,– ինչի՞ էսպես չորի կկապես, Աստված է վկա, որ քեզի շա՛տ կսիրեմ:

– Քու փնտրածդ սանամեր Ծովոյի քովն է, (գնա էնոր սերդ ասա՛: [Գտիր քեզի հարմար խնամի, որ պոչը պոչիդ նմանի:]

– Սանամեր Ծովոն իրան տեղը, դու քու տեղդ,– Ուստան չկարողացավ կեղծել. [իսկապես] ամենից շատ սի-

րած Ծովինարին [էր սիրում] չուզեցավ նսեմացնել [նրան] Սոնայի առջև:

– Էդպես բան չկա, կամ ինձի պիտի սիրես, կամ էնոր. երկու ժամին լուսարար, երկուսն էլ կմնան խավար:

– Դարդ մի անիր, Սոնա ջան, քավորիդ սերը հազար ժամ պայծառ կպահե:

– Էդ քու լեզուդ որ չըլներ, ագռավները աչքերը հանել էին:

– Ջէ, սանամեր ջան, էսօր ձախ ոտքիդ վրա ես զարթնել, լեզուդ չեմ հասկնա:

– Իսկի մի էլ հասկանար,– ասաց սանամերը աչքերը տրորելով,– կուրացա, քավոր, դուռն ինչի ես դրե, բայ, ել բաց:

Ուստան տհաճ՝ վեր կեցավ, դուռը բացեց, ու մնաց դռան մոտ և ուզեցավ սանամորից մի պատիկ վրեժ հանել. ձայնը ծոր տալով ասաց.

– Ա՛խ, Սոնա ջան, էրնեկ էն օրը:

– Ֆա, ո՞ր օրը,– զարմանալու պես հարցրեց սանամերը:

– էն օրը, որ ես ու դու դիտենք:

– Ես բան չգիտեմ. ինձի ուրիշի հետ ես խառնել. գնա բան գիտցող սանամորներիդ մոտ:

– Էդպե՞ս. օրթե թագավոր ծնիս, էլ քավոր չեմ ըլնի. դու էլ գնա, գտի՛ր քեզ հարմար խնամի, որ պոչը պոչիդ նմանի:

Եվ չակվեց դեպի սրահը, դեպի դուրս:

Սանամերը նկատեց, որ քավորը դժգոհ է, կատակ չի վերցնում, ձայնը քաղցրացրած ասաց.

– Դեհ լա՛վ, լա՛վ, քավոր ջան, մի նեղսրտի, արի նստի մարդավայել, լավ անքաշ պանիր ունեմ, նոր լավաշի հետ, կեր, անուշ-անուշ զրույց արա, ես էլ լսեմ:

— Ջէ, սանամեր, չնորհակալ եմ, պիտի երթամ, գործ ունիմ:

— Հա՛, նեղացար, ի՞նչ ասի, որ նեղացար, սիրտդ ի՛նչ փուխր է:

Ուստան վրդովված էր նրա այս տեսակի վարմունքից, ու դռան մոտից առաջ չեկավ:

— Հաց տամ հետդ տար, Քերոբ ախբորս հետ կուտեք:

— Շատ չնորհակալ եմ, սանամեր,— կարճ կապեց Ուստան, և քթի տակ մնաս բարև ասելով դուրս ելավ. սանամերը հետևից ձայնեց:

— Օրթե նեղացար, մենակ Քերոբի բաժինը տուն կղրկեմ:

Ուստան փողոց ելնելով՝ ծխից ազատված՝ լիաթոք շունչ առավ. «Էսօր Սոնայի սիրտը տեղը չէր. կամ սանահորս հետ է կռվել, կամ սանամեր Ծովոյի հետ ու ինձեն ոխն առավ, ու որտեղեն գիտե, թե Ծովոյին ավելի կսիրեմ, ի՛նչ նախանձ են կնանիք. անցուք-մոռցուք աննենք: Սոնան ափսոս հարս է», մտմտաց ինքն իրեն, և ծանր քայլելով՝ միտքն <> բերում բոլոր սանամորներին, թե ո՞րի մոտ ավելի հաճելի է գնալ, և որոշեց այցելել սանամեր Եվային, Սարոյի կնոջը:

Սանամեր Եվայի չվաքը մտնելով, տեսավ որ սանամերը մենակ չէ, մի դրացու հետ խնոցի է հարում, և մի ուրիշ կին էլ, անգործ, նստել է պատի տակ, քարի վրա, զրույց էին անում (այլևս չէր կարող ետ դառնալ նրանց աչքերի առջևից):

— Բարի հաջողում, սանամեր Եվա, բարով ձեզի, քուրիկներ, ի՞նչպես եք, լավ եք, սանահերս տո՞ւնն է:

— Բարին եկար, քավոր, սանահերդ գնդամնջն է, հիմի կուգա, նստի, նոր կարագիս համը տես:

Ուստան նստեց թմբիկի վրա. Եվան կանգնեցրեց խնոցին, մի մեծ կաոր կարագ հանեց, գնաց տնից էլ հաց բերեց, [դրեց Ուստայի առջևը]:

– Ուստա, լսողաց, Բագրան լավ քեֆ ես արել, մեր մարդն ասավ,– խոսք բաց արեց պատի տակ նստած անգործ կինը:

– Ամենօրվա քեֆն էր, ուրիշ տեսակի չէր, որ գեղե գեղ ձենձընվել է,– անտարբեր [ասաց] պատասխանեց Ուստան՝ և սկսեց կարադը հացին քսել:

– Հազար էրնեկ տղամարդոցդ, իսկի ձեզի չեք զրկե. մենք ի՞նչ ենք որ – ճիժ, պիժ, էս է խնոցի, թոնիր...– նախանձով ասաց մյուս կինը:

– Աստծու դրուքն է,– ասաց Ուստան, հացի մի մեծ պատառը բերանը դնելով:

– Հա՛, խոսքս կիսատ մնաց,– չարունակեց անգործ կինը իր զրույցի թելը, որ ընդհատվել էր Ուստայի երևումով.– էն կուզեի ասել թե՝ բախտն է բանը, ա՛յ, մեր Ավագի համար չառանք Մավրակցի [Մուշեղի] Սաքոյի աղջիկը, հիմի դու տես, թե ի՛նչ հարս է դառել. ողջ տունը ծաղկեցրեր է. մատներեն ի՛նչ չնորհք ասես, կթափի. կար ու ձև, օյա գործել, չգիտեմ որ մեկն ասեմ:

– Արժանի չէր էդ աղջիկը փսլնքոտ Սերոբին,– ասաց մյուսը:

– Հա, լավ միտս ընկավ, էնօրը ժամ էի գնացել, Բուլիկենց հարսը տեսա. ի՛նչ զուգված-զարդարված էր, գլխին մի չալ էր քցել, օրթե ասեմ 20 մանեթ արժենար, էլի քիչ է. ախբերը Բագու աչխատանքի է գնացել, քրոջ համար Զատկվա [նվեր] արմադան է ղրկել. ախբեր էլ կա, ախբեր, երեք տարի է հորանցս տունը ոտք չեմ կոխել, ասա, կերևան էդ անխիղճ ախբրտիքս, թե՝ քո՛ւր, կաս, չկաս: Ես գիտե՞ս, թե ինչ քուր եմ եղել էնոնց համար. լուսահոգի մորս մեռնելեն ետև – անուններս չեն տա, հարսներս որ – ծակծկվին, հորս հացը ընձի կխնայեն, հա՛, ասածս էլ չեմ իմանա՝ թե ի՞նչ կասեի...

– Հերանցդ տանը վրա էր:

– Ես կասեմ, Ավագի վրա էր,– միաժամանակ պատասխանեցին մյուս երկու կիները:

– Ջէ, միտքս եկավ, չալի վրա էր խոսքս. աղջիկներ, մեր գեղը էդպես չալ չկա. ինքը ծիծեռնակի գույն ունի, վրան վարդի պուտ-պուտեր կան, տեսնելու բան է, լեզվով չի ասվի... քեռնկինս մի չալ ուներ, միտքս է, աղջիկ ժամանակս, վրան կղարմանայինք. էն էլ Թանգանոց տեսակին էր, գույնը՝ դայֆայի, վրան կաս-կապուտ նիշաններ, բայց մենակ...

Ուստան ուշադիր լսում էր:

Շալի գովքը անող կնոջը ընդհատեց սանամեր Եվան:

– Ենկոյենց տղան կնշանվի. պատգամ են ղրկել Բադոյենց Սաթենիկի համար. հերն ու մերը կամ չեն՝ տալու. աղջիկը ոտքը զարկել է գետին, կանգնել կասե՝ թե էդ տղային կուզեմ որ կուզեմ: Աչք են քցել իրար վրա...

– Էդ աղջիկը չատ իր ասածին է. բռի եկող չէ. ում տունը մտնի, պիտի քանդե,– Եվայի խոսքը կտրեց մյուս խնոցի հարողը,– հերու սարը ժախի էինք գնացել, [միալար] էն աղջիկ չեղածը աչքով-ունքով կխոսեր տղոց հետ կխոսեր միալար...

– Էնոր մորը ես լավ գիտեմ,– մեջ մտավ անգործ կնիկը,– մեր հորքուրիս տալի աղջիկն է, չա՛տ խաղցողն էր. գեղի հոտաղներու հետ կլուսացներ, էնոր վրան մեր գեղը խաղ կար կապած...

– Բայց, ի՞նչ կասես,– չարունակեց նրա խոսքը Եվան,– հիմի ի՛նչ տնտես, համավոր-հարգևոր կնիկ է դարձել...

– Ի՛նչ խոսք, աղջիկ ժամանակ, կերել-կչտացել է, հիմի փուքն իջել, նստել է,– Եվայի խոսքերի հետ հյուսեց իր խոսքերը մյուս հարողը, այնինչ Եվան առանց լսելու նրան՝ չարունակում էր իր խոսքը.

– Էն որ չլինի, էնոնց տունը քար քարի վրա չի կենա, մարդը հավի մեկն է...

– Լավ գտար, էն իրենց թաղի աքլորն է. էնպես տակն տակ մարդ է, ժամեն հետ չի ընկնի, բայց գիշերները տան երես չի տեսնի, էսոր-էնոր դուռը ափ կառնի:

Ուստան ուզում էր ինքն էլ մի-երկու խոսք ասել, բայց միջոց չէին տալիս:

– Աղջիկներ, բա չեք ասի, Զաքարենց Հարսը, երկու որբը երեսի վրա ձգած, Խեչանենց Մաթոսին կառնի:

– Վո՛ւշ, մարդ էլ Մաթոսին կնիկ կլինի, էն էլ օղոր-մածիկ Մանուկի պես մարդ ունենալեն [հետո] եռե:

– Ջէ, էդպես մի ասիր, կեսուր-կեսրարի քթի ջուրը քաշելե հազար տակ լավ է իրեն համար մարդ ունենալը:

– Էդ էլ է չիտակ, ասած է թե՝ աքլորի չափ մարդս ունենամ, մեկ կալի չափ տեղս կունենամ...– վրա բերեց անդործ կինը:

Ուստան ձանձրանում էր. վեր կացավ գնալու:

– Կեցե՛ք բարով,– ասավ,– սանահորս հետ գործ ունեի, երթամ գտնիմ:

– Յա, ի՛նչ չուտ ելար,– ասաց Եվան,– խոսքի բռնվանք, մոռցանք քավորիս. կա՛ց, հիմի սանահերդ կուգա:

– Ջէ, սանամեր, երթամ, ժամի 12-ն է,– ասաց Ուստան՝ նայելով ժամացույցին,– չեմ կրնա մնա. կերթամ չենլիքի ժողոված տեղերը. սանահերս եղավ-եղավ, չեղավ, տուն կերթամ, մարդ պիտի գա մոտս...

Եվ պապիրոսը վառելով կամացուկ հեռացավ: Ճանապարհին մտածում էր Ուստան. «Տո՛ էս կնանիք խոսքը իրար բերնե կխլեն. ամեն մեկը իրեն հաշվին կխոսի, բոլորն էլ մեկ ժամանակի մեջ կխոսին. մեկը մեկէլի խոսքին չի պատասխանե, ու իակի իրար չեն լսի: Էնպես դուրս

կուգա, որ կնկա համար լսող պետք չէ. էնքան որ ինքը խոսի: Կնկա ականջն եղել է օղի [կախելու] համար, չէ թե՝ խոսքի [լսելու]. կնկա խոսքն էլ որ կա, իրեն մանած թելեն երկեն է»:

Ու բավական համարելով սանամայրերի այսօրվա այցելությունները – գնաց նորեն գյուղամեջ:

Ուստան [որ] ինչ գյուղում որ աշխատելիս լիներ, գործից հետո սանամորներին այցի էր գնում (պիտի գնար), նույնպես Նախճվանում եղած ժամանակ չաբաթը մի-երկու անգամ տես էր ելնում սանամորներին, ասում, խոսում, նորություններ պատմում ու լսում, կատակներ անում, ծիծաղում, մի տեղ մի արաղ, մի տեղ մի ազիզ պատառ վայելում. ու մեկի հետ սիրով, մեկի հետ խռով բաժանվում, ու նորից թե խռովին, թե սիրովին տես գնում:

Ուստան գրեթե բոլոր սանամորների հետ մտերիմ էր. միշտ ընծաներ էր տալիս և նրանցից բաժին ստանում – կարագ, սեր, գաթա, և հարիսի, փլավի, խաշիլի հյուր լինում:

Սակայն Ուստային ևս բամբասողներ կային, թեև նա այն հավատքին էր, թե ինքը գյուղերում բնավ թշնամիներ չունի, բացի Ղուկասից և նրա դասերից, բայց սխալվում էր. կա՞ մարդ, որ թշնամիներ չունենա. նույնիսկ միամիտ նստած տեղդ թշնամիներ կճարես. մտքիցդ չանցած մարդը թշնամի է քեզ, հենց այնպես, առանց պատճառի: Մեկը քեզ տեսնում է առաջին անգամ, աչքին ուրիշ կերպ ես երևում և իսկույն ատելության զգացմունքը ծայր է առնում.– և Ուստան էլ այս օրենքի հի-

ման վրա իրեն անհայտ պատճառով թշնամիներ ուներ. քանակով քիչ, բայց դարձյալ ուներ. բացի այդ՝ կային, կարող էին լինել նախանձոտ, չարակամ մարդիկ, որոնց քավոր չէր եղել կամ քավոր եղել էր և ավելի լավ նվերներ չէր տվել, ինչպես ուրիշ սանամորներին և կամ ավելի մտերիմ չէր դարձել, ինչպես մի ուրիշի հետ. կամ հենց Ուստայի բարեկամների թշնամիները, որոնք թեև Ուստայի հետ վեճ կամ տհաճություն չէին ունեցել, բայց նրանք Ուստային թշնամի էին համարում և առհամ ուներին նրա դեմ, միմիայն այն պատճառով, որովհետև Ուստան իրենց թշնամու թշնամին չէր: Մարդիկ ուզում էին, ամեն ոք բարեկամ լինի իրենց բարեկամի հետ և մանավանդ անպատճառ թշնամի իրենց թշնամու հետ: Եվ վերջապես նվա՞զ կան գյուղերում չարախոս, արյունբերան մարդիկ, պարապ, դադարկապորտ մարդիկ, որոնց միակ բան ու գործն է — սուտ ու փութ լուրեր հավաքել սրա ու նրա վրա, հաճախ ստեղծել ղրող ու մրող լուրեր, ու պատերի տակ նստել, վայր ի վերո խոսել, բամբասել ու չարախնդալ: Բնական է, որ Ուստան էլ սրանց առհամի տակն ընկներ, չանային ստվեր ձգել նրա՝ սանամորների հետ ունեցած հարաբերությունների վրա. և այսպիսով տեղի ու անտեղի, այստեղ ու այնտեղ երկդիմի խոսքեր էին գլորում Ուստայի և այս ու այն սանամոր վրայով, միևնույն ատեն ցանկանալով, որ այս փսփսուքները սանահորների ականջներին հասնին:

Մի անգամ Բերոբի ականջին դիպավ այդպիսի մի խոսք. բերանը փրփուր մտած բղավեց այդ չարամիտների վրա, [որոնք փորձում էին իրենց արդարացնել մեղքը նետելով իրենց վրայից թե — կասեն, մենք ինչ անենք, կասեն, մենք էլ լսել ենք]. «Տո՛, չարի ճարտար, բարու տխմարներ, չիտակ է ասած, թե գնչ մարդը գնչ կմտածե,

լավ մարդը՝ լավ. ամեն մարդ աշխարքը իրան սրտի պես դիտե, չըլնի, չիմանամ թե մեկել Ուստիս մասին էդպես բերան բանաք. էն ձեր բերնի մաստակը չէ, չափերդ ճանչցեք», իսկ չարախոսները փորձում էին իրենց վրայից մեղքը նետել թե. «Կասեն, մենք ի՞նչ անենք, կասեն. ո՞ւմ բերանը բռնես, [մենք ինչ անենք] մեզի ի՞նչ, մենք լսել ենք»:

Իսկ սանահայրները մի ականջով լսում էին այդ բամբասանքները, մյուս ականջով դուրս տալիս: Նրանք լավ գիտեին, որ Ղուկաս աղան կա իր դասերով, և վերջապես իրենք՝ սանահայրերը թշնամիներ ունեին, որոնք ոխ են հանում իրենց կանանց բամբասելով: Քավորը ով էլ որ լիներ, նույնը պիտի լիներ, Ուստան մեղավոր չէր. և պաշտպանելով նրան ասում էին. «Ուստայի սիրտը մաքուր է. երեխի սիրտ ունի, մենակ լեզուն է, որ մեկ-մեկ կարկուտ կանե: Ուստան պարզ մարդ է, աստառ չունի, ուրիշների պես դարմանի տակի ջուր չէ»: Իսկ սանամայրներն էլ իրենց հերթին ասում էին թե. «Ինչ որ Ուստայի սրտին է, էն էլ լեզվի ծերին է. էնոր բերանը չիր չի թռչի, գաղտնիք չի պահե, եթե հաստատ գեչ բան ըլներ, ողջ գիշեր տեղոք անուն-անուն կիմանային ամեն բան. Ուստեն տուն-տեղ, կնիկ-երեխա չունի, մենակ մեզնով, իր սանիկներով կմխիթարվի: Թող գա, երթա, վով գեչ բան կասե, ասողին չմնա»:

Եվ (պիտի ավելացնել, որ) նույնիսկ այդ զրախոս մարդիկ, առանց Հոգիներին մեղք անելու չէին կարող որոշ, հաստատ, վարկաբեկող մի պատկեր կազմել Ուստայի և սանամորների մտերմության վերաբերմամբ: Եվ գյուղը իրավունք չուներ չհավատալու Ուստա Կարոյին, մանավանդ որ բոլոր գյուղերի սանամայրները, (բացի կախ-գլուխ սանահայր Դավիթից, է՛ն սիրելի Ծովինարի

ամուսնուց) ո՛չ մի կասկած չունեին իրենց պատվավոր քավորի վրա.— ու տարոց-տարի, այսպեսով, չատանում էր սանամայրների թիվը. Ուստայեն ավելի առատաձեռն քավոր ո՞ւր կարող էին գտնել. կաթնահունցի պես Ուստա Կարոյին ձեռքից ձեռք էին խլում:

Ե. ԳԼՈՒԽ
<Գ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ

Գյումրեցի վաճառականները դիչերեցին Ուստայի օթևանում:

Ուստան երբ առավոտյան զարթնեց՝ աչքերը տակավին չբացած՝ առաջին միտքը, որ նրա գիտակցության մակերևույթի վրա եկավ՝ գյումրեցիների մասին էր:

Անախորժ էր այդ միտքը. և դառնությամբ ամուր սեղմեց աչքերը՝ չուզենալով նրանց երեսը տեսնել: Խոժոռվեց Ուստայի սիրտը. առհասարակ զարթնելիս միշտ զվարթ էր լինում նա, հակառակ բնությին շատ մարդկանց, որ թթված դեմքով և տհաճ ինքնազգացումով են քնի աշխարհից դուրս գալնում:

Լսելիքը լարեց — ձայն չկար. ուժ արեց, վերմակի տակից նայեց — գյումրեցիները չկային, անկողինները նույնիսկ վեր էին քաշված:

Իսկույն թռավ, նստեց[1] տեղում, աչքերը տրորեց ու տրորեց՝ մեջեմեջ[2] նայելով ուշադիր — մարդ-մուրդ չկար:

Համեմատվող բնագրային մխավորները.

A = «Հայրենիք»-ի բնագիրը՝ հեղինակային ուղղումներով:

D = «Հայրենիք», ամսագիր, 1925, N 9, էջ 15-29:

[1] D նորից

[2] D չիք

Աչխարհն իրեն տվին: Կանդնեց ոտի, չտապ հագավ հին չորերը և մոտեցավ լուսամուտին.— դուրսը, երկնքի կապույտը չողում էր դաշտերի ցողաթուրմ կանաչի վրա և արևը հին, լավ բարեկամի պես ժպտում էր անուշ, և անուշ ժպիտով օրհնում էր աչխարհ-արարած:

Երգը չրթներին նլավ Ուստան սրահը լվացվելու՝ անձեռոցն ուսերին նետած:

Օսեփը սայլն էր լծում՝ մղելով եղը լծի տակ՝ ականջից քաշելով. իսկ մչակ Սեթոն մատակ գոմեշն էր ձիթում՝ մակաբույծներից ազատելու համար արյունաքամ անասունին:

— Բարի՛ լուս, տղե՛րք ջան,— ասաց Ուստան:

— Բարին արևուդ,— պատասխանեցին տերն ու մչակը:

Եվ որովհետև մչակը՝ ձեռները ձիթոտ լինելով՝ չէր կարող սպասավորել Ուստային, Օսեփը ձայն տվեց տան բաց դռնից ներս:

— Արտա՛չ, արի ջուր լից Ուստի ձեռներուն:

— Օսեփ, ո՞ւր էդման,— հարցրեց Ուստան:

— Արտը, քար ու քըռչը թափելու:

Մինչ Արտաչը ջուրը կբերեր՝ Ուստան մի հայացք նետեց շուրջը — իրենց չները իրար բերանից մի մորթի էին քաչքչում... Թխսամայրը ոսկեփետուր ձագերին թևի տակն առած՝ կը՛ռթ, կը՛ռթ, հպարտ քայլելով հետ ու առաջ էր դառնում... Դրացի Գլխենց[1] տանը՝ Կոլոտ Աթոն սանտի մեջ հևալով աղ էր ծեծում, իսկ նրա մայրն ու կինը պտիկ երեխան էին լողացնում...

Ուստան լվացվեց և սրբվելով ներս մտավ օթևանը: Դեմքը դարձրած արևելք, անդադար խաչակնքելով երե-

---

[1] D Գլեննց

սը և «Հայր մերը» կիսաձայն մրմնջալով՝ կատարեց ամենօրյա իր առավոտյան աղոթքը:

Ապա՝ փոքրիկ հայելին հանելով պահարանից սկսեց դանդաղորեն սանրել[1] գլուխը՝ սպասելով Ջավուշին, որ ուշանում էր:

Ուստան հայելու մեջ դիտում էր իրեն. ի՜նչ ուրախ, պայծառ, ի՜նչ առողջ է իր դեմքը: Գոհունակ մի ժպիտ փայլեց աչքերի մեջ: Նորից նայեց, ավելի ուշադիր, ուղղակի իր աչքերի մեջ սևեռելով իր հայացքը[2].— «Ուստա Կարո»,— անձայն շշնջաց իր մտքում, «Ուստա՛ Կարո, ես Ուստա Կարոն եմ». և ավելի պայծառ ու բախտավոր մի ժպիտ ծփաց ամբողջ դեմքի վրա: Եվ անչափ բախտավոր էր, որ ինքը Ուստա Կարոն է: Աչքն ընկավ հանկարծ Անդրանիկի պատկերին. հարյուր անգամ տեսած պատկերին[3] նորից նայեց: Նախանձով բորբոքված էին Ուստայի բիբերը...

Աշխարհագով խմբապետը կանգնած էր, հսկայահսկա, մի ոտը դաշտի վրա, մյուսը[4] սարի գլխին, հրացանը՝ ձեռին, դաշույնն ու ատրճանակները գոտու մեջ, փամփուշտակալները ուսերից խաչ-փակ իջնելով մեջքի չուրջը երկու փաթ պարառած: Ծոպավոր մեծ փափախի տակից կրակ էին ցայտում գայրագին աչքերը: Թավախիտ բեղերը՝ երկու ահագին կեռ թրերի պես՝ ականջների ծայրը կտրում անցնում էին:

«Անդրանիկը տղամարդ է, խոսք չունիմ, կտրիճ է, հապա ընչի՞ սուլթանին չի սպանե՝ աշխարհ խաղաղի»...

---

1 D սանտրել

2 D աչքերը

3 D + և

4 D + ոտը

Եվ հիշեց Բագրանում ասած իր հանդիսավոր խոսքը, և աչքին ներկայացավ պ. Կայծակը, ամոթու գլուխը կախեց, տխրած ու նվաստացած էր Ուստան... «Կարելի է՝ դժվար բան է. հանաք չէ, տո՛, ինչքան չեղնի՝ սուլթան է, հազար չուն ու գել ունի տունն ու դուռը»:

Արդարացնելով Անդրանիկին, ինքն էլ մի թեթևություն զգաց, և աչքերը հեռացնելով խմբապետից, կանգ առավ կյանքի սանդուխի պատկերի վրա, հատկապես 40 տարին խորհրդանշող աստիճանի վրա:

Այդ հասակը անձնավորված էր մի առնական կերպարանքի մեջ, որ կնոջ ու երեխաների հետ, լուրջ և ինքնավստահ, կանգնել էր լեռան[1] կատարին: Այդ բարձունքից հետո իջնում էր կյանքը – 50 տարեկան, հետո 60 տարեկան, հետո ծերություն ու մահ...

Ուստան՝ կենտրոնացած[2] նայեց, մի պահ արևը խավարեց և աշխարհն ունայնացավ աչքին, ապա ձեռքը թափահարելով, տխրամած աչքերով հեռացավ նկարից: Խավար մտքերի մեջ սուզված՝ անց ու դարձ էր անում թախտերի միջանցքում, երբ Ջավուշը աղմուկով դուռը բացեց՝ ինքնաեռը գրկին:

Ուստան ուշքի եկավ:

– Բարի՛ լուս, վարպե՛տ, քունդ անուշ,– ասաց Ջավուշը,– էսօր ուշ զարթնար,– և զննական նայելով ավելացրեց.– վարպետ ջան, երեսիդ գունը տեղ չէ, ի՞նչ կա...

Ուստի[3] սիրտը վախ ընկավ, բայց զսպելով իրեն, դեմքն ու աչքերը ամուր տրորելով, դիմեց Ջավուշին.

---

1 D լերան

2 D կեդրոնացած

3 D չիք

— Հաստա՞տ որ գունս տեղը չէ. էղնելու բան չէ, մեկ լա՛վ աչե:

Զավուշը մոտեցավ, ավելի ուշադիր նայելու համար:

— Չէ՛, վարպետ ջան, բան չկա. աչքի երևույթք էր:

Ուստան սրտապնդվեց:

Զավուշը սեղանն էր հարդարում:

Ուստան խոսքի ուղղությունը փոխելու համար, հարցրեց.

— Ամբարտավան Գյումրեցիք գնացին, հա՞:

— Գնացին, վարպետ ջան, էդոնց կրունկները թող միշտ էսդին էղնին:

— Զավուշ ջան, երազիս լուսահոգի մորս տեսա. ձեռքը պաչեցի. տրտում նստեր, ընծի համար դուլպա կգործեր: Ա՛խ, մերիկ ջան. տեսնիս՝ ի՞նչ բանի նշանակ է...

— Բարի է, Ուստա ջան, մորը տեսնելը միշտ բարի է: Ես էլ երազիս քեզի ու Օրթե Հարությիս տեսա, կըսեր՝ վաղուց է ձեզի չեմ տեսե, կարոտցեր եմ:— Դրուստ կըսե, երեք շաբաթ եղավ խելառ երեսը չեմ տեսե. էս օրերս երթանք. երազով եկեր՝ մեզի կկանչե:

Ներանք միշտ, իրենց սովորույթի համաձայն, տեսած երազներն առավոտյան իրար պատմում էին, իրար օգնությամբ մեկնաբանելով, և երբեք մեկը մյուսի երազին չարագուշակ իմաստ չէր վերագրում[1]:

— Զավուշ ջան, դեհ, հիմի արաղը հա՛ն:

Առանց նրա խոսքին էլ՝ Զավուշն արդեն ուղղվել էր դեպի պահարանը: Հանելով օղիի շիշը պտիկ բաժակներով, և մի քանի հատ չամիչով, իրրև աղանդեր, դրեց նախաճաշի սեղանի վրա:

---

[1] D չէր վերապրում *փիս* չվերապրելով

Նրանք ամեն օր, և ամեն տեղ միշտ օղիով ողջունում էին «բարի լույսը», բարեմաղթություններ անելով աշխարհի և իրենց համար, տարիների ընթացքում դրեթե նույն, անփոփոխ բառերով:

– Ջավուշ ջան, լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝ քեզի:

Ջավուշը լցրեց բաժակները:

– Տեր Աստված, եղիցին կամք քո, ստեղծեր ես, չկորցնես,– աղոթավոր ձայնով ասաց Ուստան՝ աչքերը ճակատի տակից վերև ձգելով:

– Ամե՛ն. փառքդ չա՛տ, ի՞նչ ըսեմ...– աչքերը նույնպես վերև ձգելով՝ ձայնակցեց Ջավուշը:

Երկյուղածությամբ խմեցին օղին:

– Ջավուշ ջան, նորեն լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝քեզի:

Ջավուշը նորից լցրեց բաժակները:

– Ջավուշ ջան, մեր կյանքի համար. Աստված մեր սրտովը մեզի տա, մեր գեչ օրն էս էղնի ամեն լավ մարդու կյանքի համար, և էլ Օսկանի գերդաստանի համար. աշխարհքին խաղաղություն, մահին թանկություն, հացին էժանություն և էլ հայոց ազգին աղատություն. ամեն:– Ծանր և լուրջ եղանակով ասաց Ուստան՝ բաժակը շրթունքին տանելով:

– Ամեն. Աստված լսող-կատարող էղնի,– ասաց Ջավուշը, խմելուց հետո բաժակը կործելով:

– Ջավուշ ջան, նորեն լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝ քեզի:

– Չէ՛, ինձի չէ, վարպետ ջան, չեմ ուզե, դիտե՛ս, էլի,– ասաց Ջավուշը միայն մի բաժակը լցնելով:

– Լի՛ց, էսօր լից, Ջավուշ ջան. ի՞նչ է որ՝ մատնոցի չափ բաժակ է, խմե՛[1],– պնդեց Ուստան:

---

[1] D չիք ի՞նչ է որ՝ մատնոցի չափ բաժակ է, խմե՛

– Չէ՛, գլխուդ մատաղ, խոսքիդ դեմ չեմ կենա. բայց չէ՛, վարպետ չան,– թախանձեց Զավուշը:

Եվ ամեն օր դրեթե տեղի էր ունենում այս վեճը: Ուստան պնդում էր, Զավուշը հակառակում: Թեև Ուստան երկար պայքարից հետո հաչտվել էր, բայց դարձյալ կրկնում էր սովորական բանաձևը:

Եվ այսպես տարիներ շարունակ, Ուստան երրորդ բաժակը խմում էր միայնակ: Խմում էր լուռ, անխոս, սրտի մեջ միայն մաղթանքներ անելով: Ո՞ւմ համար...

Մի օր խմում էր ծնողների հիշատակին, մյուս օրը մի լավ ընկերոջ համար, մանավանդ «Աստվածուբեննեն դարձ» խնդրելով Օրթե Հարությի համար, կամ մի գործի հաջողության, կամ մի հիվանդ բարեկամի առողջության համար:

Ինչպես որ առաջին երկու բաժակախոսքերը դրեթե միևնույնն էին միշտ, այնպես էլ երրորդ բաժակի մաղթանքները փոփոխվում էին շարունակ:

Մինչդեռ Ուստան օղին լռելյայն խմելուց հետո չամիչն էր ծամում բերանը քաղցրացնելու համար՝ Զավուշը «անուշներ, անուշներ» ասելով, լցնում էր թեյի գավաթները: Ամեն օրվա պես այսօր էլ ուտելով ու խմելով՝ մեջընթեր մտերմիկ զրույց էին անում նրանք, երբ չների հաչը ընդհատեց ընկերների մեջ մանվող խոսքի թելը:

Մի կորաքամակ ծերունի, չոր ծնոտը առաջ ճգած, պարկը ուսից կախ, գավազանը սալահատակի վրա քարշ տալով, մեկ աչքը չներին հառած, մյուս աչքը՝ օթևանի դռանը, հառաջանում էր կամացուկ:

Զավուշն ելավ, սաստեց չներին: Ծերունին եկավ, կանգնեց դռանը:– Ողորմություն արեք, խեղճ աղքատ եմ[1],

---

[1] D + տկլոր եմ

Հնեն-նորեն. թռուներս տվլոր են, Ասլաձ իր[1] օխթին աթռուով ձեզի պահե. հոգով խնդաք, Միածինը որդիքդ ձեզի բաշխե...

Ուստան հայ ու պանիր ուղարկեց Ջավուշի հետ, ապա մի ճերմակ 20 կոպեկանոց ևս տվեց:

– Ապրիք, դորանաք, տղեքս, ինչ որ պակսեցուցի ձեր սեղաննեն, էնտոր[2] տեղը Ասլաձ իրան առատ սեղաննեն ձեզի հազարապատիկը պարգևե:

Եվ հեռացավ երերուն քայլերով, անվերջ օրհնանքները թափելով. «Բարերար Տերը սիրտդ ուրախ էնե, տարիդ հազար. գնգզնդան ժամերը բարեխոս էղնին ձեզի»...

Աղքատին ուղի դնելուց հետո, չները եկան չարվեցին դռան առջևը, գլուխները թաթերի և սյամի վրա դնելով համբերող աչքերով սպասում էին սովորական պատառներին: Այսօր մորթու պատճառով ուշացել էին նրանք ներկա գտնվելու նախաճաշի սեղանին:

Ուստայի առանձին խնամքը վայելող փոքրիկ չնիկը «Ջադարը», պոչը խաղացնելով եկավ փաղաքուշ քավեց Ուստայի ոտներին: Ուստան բոլորին հայ բաժանեց, յուրաքանչյուր չան անունը մեկ-մեկ տալով: Հանկարծ, մի ոտնաձայնի վրա բոլոր չները մեկեն[3] թռան սրահը:

– Ջավուշ չան, էսօր չպիտի բանիմ, ներող եղիր.– ընդհատված զրույցը կենդանացրեց Ուստան.– էսօր հազնիմ կապեմ, գեղամեջ երթամ պտի՝ սանամերներուս ինձի ցույց[4] տամ.– ապա խնդալով հարեց,– դուն գլխուդ ճարը տես:

---

1 D չիք

2 D էնոր

3 D մեկանց

4 D ցուց

– Վարպետ ջան, ես էլ կերթամ Բուլիկենց ամբարի քարերը տաշեմ. էգվան ամբարի հիմքը պտի քցենք: Բադրան երթալեն առաջ խոստացանք, մի՞տքդ է:

– Հա, լավ միտքս քցիր, շատ լավ. բայց էսօր չէ. էսօր սիրտ չունիմ: Ջավուշ ջան, ախբերս որ դուն ես, ամենօր-վա[1] վրա էսօր քիչըմ տրտում եմ. պատճառ չկա, էնպես, դատարկ[2] տեղը: Ջավուշ ջան, դու գիտես, որ ես ուրախ մարդ եմ, ինձի սևը չի հաղթե. էնքա՜ն գեչ օրեր եմ տեսեր ու թռեր վրան ելեր: Հիմի էլ ըսենք ուրախ եմ. էս վարկենիս տրտմությունս անցավ. չուքի պես բան էր, վրայես թռավ գնաց՝ ըսկի չեղածի պես:

– Վարպետ ջան, տխրելու բան չկար. կարելի է՝ անհավատ էն գյումրեցիք էին պատճառը...

– Տո՛, ի՞նչ կըսես, ողջ Գյումրին թափվի, ինձի չի կրնա գետին զարկե. մեկ բան էր ըսի, դուն էլ առար-անցար: Աստծու էս չեն ու պայծառ տան մեջը ե՞րբ եմ ես «ա՛խ» քաշեր, որ հիմա քաշեմ...

Մի քիչ խնդալուց հետո, «ախ» քաշելով, չարունակեց.

– Հիմի կըսես, թե որ բախտավոր եմ, ընչի՞ շատ կխմեմ, ոչ[3] թե Օրթե Հարուրթիս չափ, քիչըմ պակաս, ա՛խ, Ջավուշ ջան, լմանկատար ուրախ չեմ. սրտիս մեջը մեկ անդադար բանըմ կա, չեմ գիտեր՝ ի՞նչ է. էսա ես[4] թե աչքը ծով դառած կապասեմ[5] թագավորի վայել մեկ մեծ բա-

---

1 D ամենօրյա

2 D դարտակ

3 D ոնչ

4 D էսա ես փխ ըսես

5 D կապասե

նի, մեկ մեծ բախտի: Աղջի՞կ է – չէ՛, փո՞ղ է – չէ, մեկ ուրիշ բան է, անուն չունեցող:

Մեկ-մեկ էլ ինձ էնպես կերևա, թե՝ սրտիս մեջը ապպաշ կապած մեկ կտրիճ կա, խրխնջացող ձիու վրա նստած՝ կքշե, ու կքշե, ո՞ւր, ընչի՞ համար: Ես էստեղ, էս ծածկի տակ նստած՝ սիրտս ամեն տեղ է, ամեն ճամբու վրա...

Է՛հ, Ջավուշ ջան, չծերացա, որ հանդարտ նստեի, չիբուխս ծխացնեի... ինչորիս է...

Դոցեց Ուստան իր խոսքը, և խաչակնքելով երեսը, սեղանից վեր եկավ:

– Դե՛հ, Ջավուշ ջան, գնա՛ բյառբյառ Գալոյին կանչե գա թրաշ էղնինք[1], ես էլ էս է, ջուրը վրա կդնեմ:

Ջավուշը սեղանը հավաքելուց հետո՝ գնաց:

Մի ծխախոտ վառելով՝ Ուստան ամանով ջուրը դրեց մեղմ ծխացող աթարի վրա և սկսեց դրսնավուր[2] կոշիկները[3] մաքրել:

Եկավ Ջավուշը և հետևից, մի ոտի վրա կաղալով, սափրիչ Գալոն:

– Էկա՞ր, Գալո,– ասաց Ուստան ձեռը մեկնելով:

– Էկա, դլխուդ մատաղ,– ասաց սափրիչը նրա ձեռն ուժգին թափահարելով.- քեֆդ ի՞նչդ է, Ուստա ջան, քե՛ֆդ:

– Դե՛հ, նստի, նստի, մեկ պապիլոս չինե, մինչև ջուրը եռ գա,– և ընձեռելով նրան ծխատուփը՝ շարունակեց:– Ի՞նչ կա, ի՞նչ չկա գեղերը, մեր գեղն էլ մեջը. բոխչե՛դ բաց:

---

[1] D եղնինք

[2] D դրսնավոր

[3] D կոշիկներ

Գալոն սափրիչ ու ատամնաբուժն[1] էր դրացի մոտիկ գյուղերի: Այդ կրկնակի արհեստների հետ միասին գյուղական լուրերի և մանավանդ բամբասանքների չրջուն հարուստ տոպրակը:

«Ջհուդի բոխչա է Գալոյի բերանը»,— այսպես էին բնորոշում նրան գյուղացիները:

Ջլարթ-բամբառակ մարդ էր: Այծի նման սև ու խլրտուն: Սուր և կենդանի աչքերով: Թեև կաղ, բայց ա-րագոտն էր, ամեն գյուղ ու ամեն տուն մտնելով— ելնե-լով՝ հավաքում էր խոսք ու զրույց՝ սուտ ու չիտակ՝ ե-ռանդալից տարածելով գյուղեգյուղ, տնետուն:

— Ողջուէյուն, Ուստա ջան, էս անգամը էնպես, պոչով բան չկա. մեկ-երկու օր Ագրակ էի, մեկ-երկու օր էլ Ծպնի, հետև էլ՝ Զռչի, վով սուտ ըսե Հոգին արաղով չթրջի.— և ձայնին բազմիմաստ չեշտ հաղորդելով, նայեց Ուստայի աչքերին:

Ուստան հասկացավ Գալոյի միտքը. աչքով արեց Ջա-վուշին, որը պահարանից հանեց օղին, մի բաժակ լցնելով տվեց Գալոյին, ասելով.

— Որ էղեր ես Զռչի, կուլ տու՝ հոգիդ թրջի:

— Ուստա ջան, մեր մեջ մնա,— բերանն ափով և հա-գուստի թևքով ամուր սրբելով ասաց սափրիչը,— Ագրակ, Համբոյենց հարսը ջուխտ[2] է բերե...

— Ի՜նչ զարմանք բան կա որ, էդ նշան է, որ հարսի զավակատունը ուժով է.— ասաց Ուստան:

— Չէ՛, Ուստա ջան, գլխու չես, ախր, բանի մեջը բան կա. էդոր մարդը Ռուսեթ սալդաթ է. Ագրակ՝ ո՞ւր, Ռու-սեթ՝ ո՞ւր:

---

1 D ատամնաբուժն փխ ատամ հանողն

2 D ճուխտ

Եվ Ուստայի ականջի մեջ մի բան չչնջաց:

– Հըմ,– գլուխը վեր-վար շարժելով ասաց Ուստան,– ըսել է, որ գեղի կտրիճները լավ գործ են հոդացե. մեկն իրանց տեղը, մեկէլն էլ մարդու տեղը: Աստծուց էր, որ էդոնց քավոր չեղա, չա՛ւ կուզեին:

– Ուստա՛ ջան, հլա խոսքիս վերջն առ. զարմանքն էն է, որ էրկու երեխեն էլ ցուցանք են դուրս էկե. մեկի գլուխը մեջքի վրեն է կպած, մեկէլի ոտքը՝ փորեն[1] է էլե[2]. ի՞նչ կըսես[3] էսոր, Ջավուշ ջան:

– Աստու պատիժն է. հպա կխաբե պսակի մարդուն,– երկյուղածությամբ ասաց Ջավուշը:

– Ջէ՛,– վրա բերեց Գալոն,– Ասպած էդման հասարակ բաներու մեջը չի խառնվի. բանի մեջը ուրիշ բան կա. ի՞նչ ըսիր, Ուստա ջան:

– Ես էն կըսեմ, որ կտրիճներեն մեկը սարքեր է, մեկէլն եկեր՝ քանդեր է,– հանգստությամբ ասաց Ուստան:

– Հա՛, հա՛, հա՛,– ծիծաղեց սափրիչը՝ փորը բռնած՝ կաղ ոտի վրա հենվելով:

– Տո՛, Աստու պատիժն է, ի՞նչ կծիծաղաս – մեղք է.– բարկացկոտ ձայնով խրատեց Ջավուշը:

– Ջէ՛, Փիլոս ջան, էն կծիծղամ, որ ողջ գեղը էդ եղելությեռնի վրա Ուստիս խոսքը կձենձընեն ու կխնդան:

– Ո՞ր խոսքս,– զսպված ուրախությամբ հետաքրքրվեց Ուստան:

– Էն որ մե հեղ ագրակցիք հարցրեր են քեզի, Ուստա ջան, թե՝ պատճառն ի՞նչ է, որ՝ կնիկ կա ձուկ կծնի, կնիկ կա՝ կաուվի գլխով ցուցանք. յա ուրիշ-ուրիշ այլակերպ-

---

[1] D փորին

[2] D ելև

[3] D ըսես

այլակերպ աճուճ-մաճուճ բաներ: Դուն էլ ըսեր ես, թե՝ պատճառս ո՞րն է. տղամարդը, որ խելքը կնկա հետ դնե խաղա, էն[1] էլ ի՛նչ ըսես՝ էնի կբերե:

– Միտքս չէ,– հպարտորեն ասաց Ուստան:

– Դուն ո՞ր ըսածդ միտքդ պահես, Ուստա ջան. տո՛, մինակ Ագրակ չէ, ամեն տեղ էլ խոսքերդ կըսեն. էնօրն էլ Զռչի ըսին, թե Ուստան կըսե, թե՝ կնկան պաչես՝ տղա կբերե, չես պաչե՝ բուղա... Ի՛նչ տեղոք, իմաստուն խոսք. բերնիդ մեռնեմ, Ուստա ջան:

– Խոսք է, կըսենք, կանցնինք,– նորից ինքնագոհ հանդիստ ասաց Ուստան:

Ջուրն եփ էր գալիս. սափրիչն սկսեց իր գործը:

– Ուստա ջան, Զռչի չինածդ աղբյուրը[2] լավ գործ կտեսնի. գիշերանց տուն կուգայի, աչեմ-տեսնեմ, աղբյուրի[3] տակը մե սիրուն հարս կլողնար, լուսի՛ կտոր...

– Էնոնց համար եմ չինե, հո էնոնց քոսոտ մարդոց համար չե՞մ չինե,– հաստատեց Ուստան:

– Ուստա ջան, սանահորդ Պողոսի առկեն հանեցի. մե ձենը երկինքն էր, մե ձենը գետինքը... քեզի չա՛տ բարև կեներ:

– Բարև բերողն ողջ էղնի[4]:

– Սանամերդ, ես կըսեմ, երկահոգսի է, գոգնոցը մինչի ծնկներն էր եվե. պատրաստ էղիր, Ուստա ջան:

– Գլխուս վրա, գործերուս անունն ի՞նչ է. իրանց կողմեն՝ աղջիկ ու մանչ, իմ կողմանեն՝ մեռոն ու խաչ,– խնդալով ասաց Ուստան:

---

1 D էս

2 D ալբուրը

3 D ալբուրի

4 D եղնի

Լռեցին: Սափրիչը վերջացնելու վրա էր:

– Էնքան մարդու թրաշ կենեմ, Ուստա ջան, չիտակն որ ըսեմ, քուկիդ պես սիրուն, կարմիր, պինդ թշեր չեմ տեսե. եղի պես ածելիս երեսիդ վրեն կսլա[1], ատլաս է թշերդ, ատլա՛ս, ու փառք երկնավորին, դեղապտի ճերմակ մազըմ չկա...

Ուստային չա՛տ հաճելի եկավ այդ գովքը, և բախտավոր ժպիտը խաղաց սափրած փայլուն երեսի վրա:

– Ուստա ջան, մեկ հայլին առ աչե, խոսքիս կհամոզվիս:

Ուստան ձեռը մերժողական ձևով չարժելով՝ ելավ լվացվելու: Ջավուշը նստեց նրա տեղը:

– Ուստա ջան, երեկ Ղուկաս աղին թրաշ կենեի:

Ուստան դեմքը ծամածռեց:

Ղուկաս աղան, այդ անունով էր հայտնի նա Նախճավանի գավառակում, չրջանի ամենահարուստ մարդկանցից մեկն էր, մեծ խանութ ուներ և հացահատիկի լայն գործ:

Ուստայի բացարձակ թշնամին էր նա, Ուստան էլ՝ նրա: Ղուկասը կարոյին համարում էր ու հռչակում բախտախնդիր, անտուն-անհայտի մեկը. «պատի ծակե ելած, թոկե փախած, քամու քարվան քշող»:

Ուստան էլ բոլոր գյուղերում հայհոյելով՝ նրան հռչակում էր անգութ վաշխառու, գող-ավազակ, որբի բերանից հացը խլող. «մարդ քերթող է Ղուկաս չեղածը, արուն ծծող, տղրուկ. վասա՛կ է, վասա՛կ»:

Այսպես էին կոչում իրար, և իրար դեմ դավեր լարում:

– Ի՞նչ կըսեր էդ մարդագելը,– հոնքի մեկը բարձրացնելով հարցրեց Ուստան:

---

[1] D սլա

– Քու մասիդ չէր, Ուստա Ջան.– տեր Մուքելը թուղթ է ստացե, որ իրան նորեն գործակալ են կարգե. շատ ուրախ էին. փող գարկելու նոր դուռ է բացվե:

Տեր Մուքելը Ղուկասի աներն էր, միևնույն ժամանակ նրա ձեռնարկների ընկերը և խորհրդատուն: Խելացի մարդու համբավ ուներ:

– Տերտերը, հեռի իրան սուրբ կարդեն՝ խաչագող, էշ ներկողի մեկն է, դարմանի տակի ջուր, կակուղ փուշ է... Մ'վ գիտե, ինչքա՜ն կաշառք է տվե քաղաք, վարդապետին, որ նորեն գործակալ է դառե:

– Ուստա, խոսքը մեր մեջ մնա, շատ կռապաշտ մարդիկ են, աներ-փեսա: Երեկ խեղճ մարդըմ էկեր, կուլար, կըսեր՝ երեխեքս տկլոր են... Էդ անաստվածը 5 մանեթի ճոթ տվավ, 10 մանեթի թուղթ առավ, ամիսը էրկու աբասի չահ. հին թուղթն էլ, որ 20 մանեթ էր, նորեն գրեց. գրողն էլ՝ էդ ձեռքը չորնալիք տեր Մուքելն էր, չինեց երեսուն[1] մանեթ, էլի էդ անխիղճ չահը վրեն բանեցնելով: Մարդն ընձի լալով ըսավ, թե՝ 20 մանեթի տեղ աչունքը 10 մանեթի ճոթ է առեր. հիմի դուն արի էդ գաղանի ձեռքեն պրծի. պրծում չկա. չա՜տ զրկողն է, զրկողը չի վայելե: Ի՞նչ ըսիր, Ջավուշ Ջան,– վերջին խոսքը ուղղեց[2] Ջավուշին՝ ածելին երեսի վրա սահեցնելով:

– Ի՞նչ ըսեմ, տո՛, երեսս կտրեցիր, խելքդ գլուխդ ժողվե:

– Վա՛յ, հաստա՞տ.– աղաչական ձայնով ասաց սափրիչը:– Էն կեծակի զարկվածն էր մեղավորը, լաչո Ղուկասը:

Եվ բամբակի մի ծվեն կպցրեց կտրված տեղին:

---

[1] D եոսուն

[2] D ուղղելով

– Օ՛, Ղուկա՛սը, Ղուկա՛սը. քար կպաչտե,– ասաց Ուստան.– ընչի՞ քովս չղրկեցիր էդ խեղճին, փողը տայի, պարտքը թափեր:

– Մտքես չանցավ, Ուստա ջան, մնկէլ հեղին:

Ջավուշի դեմքի մի կողմն ավարտել էր արդեն, մյուս կողմը պիտի սկսեր, երբ ածելին ձեռին մոտեցավ Ուստային:

– Բան է, կըսեմ, Ուստա ջան, ուրիշ տեղ չըսես. չեմ ուզե՝ իմանան, թե Գալոն խոսք տանող-բերող է[1]: Հա՛, էն կըսեմ, որ իրան տունն էլ զուրկ կպահե, կնկանեն, երեխոցեն կզրկե. էդ ծով-հարստութենի մեջ ետնյալ աղքատեն գեչ կապրին. կերածներն ի՞նչ է որ – միշտ թանե ապուր, միշտ թանե ապուր. միս կմտնի՞ տները,– մենակ տաղավարներուն:

Փողը դրեր կպաչտե, մե քոռ կոպեկի համար օխթը գըլխ-կոնծի կուտա:

– Գիտեմ, դիտեմ,– սափրիչի խոսքը կտրեց Ուստան.– էն որ իմանա, թե անփող կթողեն[2] ձեռաց կմեռնի:

– Ուստա, ըսենք էդպեսն է, համա իրան չղրկե[3], ծածուկ՝ հավի միս կուտե, եղ ու մեղը:

– Էդ չիտեի, տո՛, ինչ գազան-անասուն հրեշ է եղեր,– գլուխը տարուբերելով, զարմացած ասաց Ուստան:– Շա՛տ էլ նախանձ մարդ է, չատ, հատը չկա, չի կրնա տեսնի, որ աչխարքի վրեն իրանեն ջոկ հարուստ մարդ էղնի. կուզե որ ամեն մարդ մուրացկան էղնի, ինքը մենակ երևա:

---

1 D տանող-բերող է *վրա* տանի կրնան

2 D կթողին

3 D չի ղրկե

– Գիտե՛մ, գիտե՛մ: Էն որ իմանա, թե մարդու մեկը ե-րազին ոսկու գանձ է գտե, ցավեն հիվանդ կպառկի:

Ուստան մի չար հաճույք էր զգում իր թշնամու մասին լսելով այս վկայությունները, և ուզում էր, որ անվերջ չարունակվի:

– Շիտակ կըսես, Ուստա ջան, մեկ էլ էդ անաստվածը չատ ամբարտավան է. գիտե, թե գումար ողջ գեղը ինքը կպահե. ընձի հետ էման կվարվի, ըսես թե սուլի տարին ե-րեխոցս հաց է տվե. մեկ կուզեմ քովը չերթամ, մեկ էլ կըսեմ՝ հերն անիծած, չան վրայեն մազ պոկել է:

– Էդ էլ գիտեմ. էն կկարծե, թե Մսրա ծովերու վրայով անցնող հավքերը իրան կուտ ու ջրովն է, որ կթռնին,– ուրախությամբ հաստատեց Ուստան:

Գալոն ավելի մոտեցավ և փսփսաց Ուստայի ականջին:

– Ի՞նչ կըսես: Եղնելի՞ք բան է,– ապշած նայում էր Ուստան Գալոյի սուր ու գաղտնալից աչքերին...– Էն հարսը սրբի պես է, հոգուդ մեղք մի՛ էրա...

Սափրիչը նորից փսփսաց, իսկ Ջավուշը համբերանքը հատած՝ զայրույթը հազիվ զսպելով, ասաց.

– Տո՛, հորդ թուխթունը թափի՛. սապոնն երեսիս չորացավ[1]: Է՛ է՛հ, հերիք է՝ կլափին տաս: Արի՛, է՛, ես պարապ մարդ չեմ...

– Մի՛ նեղսրտի, Փիլոս աղբարս, Ուստիս[2] հետ խոսելն չեմ կշտանա:

Եվ սկսեց սափրել մյուս կողմը:

– Հա՛,– նորից խոսեց սափրիչը,– Ղուկասը նոր մենծ ամբար չինել կուտա. քարերը թափեր է տվե, կաղզվանեն

---

[1] D չորցավ

[2] D Ուստայիս

վարպետ է բերե: Ըսի թե՝ մեր Ուստեն թողած, ընչի՞ ուրիշը կբերես. էն էլ թե՝ որ ուզենամ իշու բաղնիք չինեմ, նոր խելառ Կարոյին կկանչեմ...

Սափրիչը խոսքը չվերջացրած՝ Ուստան աչքերը բորբոքված բղավեց.

— Տո՛, ես քու... ի՞նչ ըսեմ, մեղա Աստծու... վա՛յ հողը գլխուդ, Ուստա Կարո, ուրիշի վրան չուն կհաչա, քու վրադ՝ կատու... Սպասե՛, աչքիդ լուսը պտի թաւիեմ, սպասե՛, ինձի Կարո կըսեն, ես իշու բաղնիքի մեջը կաշիդ պտի քերթեմ...

— Ուստա ջան, Ուստա՛,— թախանձեց սափրիչը,— դուր ընչի՞ արուեդ կպղտորես, թո՛ղ հաչե ինչքան կուզե, չի կրնա խածե. հանդարտի՛, հանդարտի՛...

— Հանդարտ եմ, հանդարտ եմ,— ասաց Ուստան հանդարտ ձայնով:

Եվ իրավ հանգիստ դգացմունքով՝ սկսեց դրսնավուր հագուստները ծալքի վրայից խնամքով դուրս հանել: Գալոն ավարտելով գործը՝ պատրաստվում էր մեկնել: Ուստան իր սովորական առատաձեռնությամբ վարձատրեց նրան, որ մի քանի անգամ չնորհակալ լինելով դնաց, սափրելու պարագաները թևի տակ՝ արագաոտ՝ կաղին տալով:

Ուստան հագավ տոնական հագուստները. հագավ նոր փայլեցրած կոշիկները, կապեց արծաթյա գոտին: Կապույտ անդուկից հանելով մի ոսկեշող «բաղդատի», դրեց գրպանը: Եվ նայելով ժամացույցին, ժամը 10-ն էր,— ծանր քայլերով գնաց գյուղամեջ՝ գլանակը բերանի ձախ կողմում, դանդաղ ծուխ արձակելով:

Ելավ սանամայրերին այցի:

Աշխատանքի լուր օր էր: Գյուղացիներն անցնում էին մտազբաղ՝ ոմանք մի երգ ծորելով քթերի տակ, ոմանք

եղների ետևն ընկած, «հո՛, հո՛» գոչելով: Բարևում էին Ուստային և անցնում:

Մի դռան առաջ ոչխար էին խուզում, մյուսում՝ կապույտ քարով դմակը հականեխում: Մեկը կվարկ էր կտրում: Եվ գրեթե ամեն դուռ, երթիկ բռնել էր նորաթուխ հացի համով հոտը[1]:

Մի տեղ՝ չվաքում նստած երկու կին զրույց էին անում՝ անուշադիր անցուդարձողներին. մեկը սանդերքի բուրդ էր գզում, մյուսը թեչիկ էր մանում:

— Սիրտս կուլա, աչքս չի լա, քուրիկ ջան, դու չգիտես, թե ես ի՛նչ քաշեցի մինչի էսօրը հասցուցի, մատներուս միսը կերա, մատներուս:

— Ասպած պահե, լավ տղա է, ազրայիլ[2] է դառե:

— Օղորմածիկը կըսեր թե, տղես մեծնա, թևիս թևը կեղնի, ո՛ւր էր մեկ ելներ, իրան աչքովը տեսներ:

Թեչիկ մանողը չչնջաց բուրդ գզողի ականջին, ապա սովորական ձայնով հարեց.— Դուսե դուս գիտեմ, լավ տեղյակ չեմ. դրո՞ւստ է, աղջի Մա՛քո:

— Էդ աղջիկը տեղովն աստղ ու լուսնյակ էղնի[3], էլ մեզի հարկավոր չէ...

Ուստան առաջ անցավ: Աչքին ընկավ Գասպարենց Մանուկի ամբարը, իր ձեռքի գործը: Դռան վերևը կարմիր քարի վրա[4] որոշ տեսավ իր անունը, ինքն էր փորագրել: Թեև գրել-կարդալ չգիտեր, բայց[5] գիտեր ի՛նչ է

---

1 D հոտով

2 D ազբայիլ

3 D եղնի

4 D + իր անունը կար գրած

5 D չիք Թեև գրել կարդալ չգիտեր, բայց

գրած[1]. «Ամբարս այս Մանուկ Գասպարեանցին, չինեցաւ ձեռօք վարպետ Ուստայ Կարօի, յամի 1901-ի Նախջվանի գեղջ Շիրակայ»:

Հպարտացավ, և փափախը ցնցեց գլխի վրա:

Առջևն ելան երկու գյուղացիներ: Բարևներից հետո Ուստան հարցրեց.

— Նիկո, իմանալով՝ տղեդ հիվանդ էր, Ասծու աչքը վրեն էղնի, ի՞նչդ է հիմի:

— Գոհություն Աստու, լավ է:

— Հայկո՛, ըսին թե ջուխտըմ եղ ես առե, լա՞վն են:

— Ինչըմ տուկատ են, հիմի կերի եմ քցե, տեսննենք հլա:

— Բարով վայելես,— հարեց Ուստան՝ առաջանալով:

Պատահմունք էր, թե սրտի գաղտնի տենչ՝ Ուստան իրեն հանկարծ կանգնած տեսավ սանամայր Ծովինարի տան առջև: Բոլոր սանամայրերից ամենից շատ նրան էր համակրում, ճերմակ[2], նազուկ Ծովինարին: Եվ հակառակի պես բոլոր սանահայրերի մեջից նրա ամուսնուն՝ Դավիթին էր, որ Ուստան աչքով աչք չուներ տեսնելու:

Դավիթը կասկածամիտ, խորամանկ բնույթի տեր մարդ էր: Եվ թվում էր, թե բոլոր սանահայրերի մեջից միայն սա էր նվազ հավատ ընծայողը Ուստային:

Սակայն քավոր Ուստան Ծովինարի սիրուց՝ բանի տեղ չէր դնում սանահոր պղտոր աչքը և ոտը չէր կտրում նրանց տնից, միայն աշխատում էր առանձին գտնել սանամայր Ծովինարին:

---

[1] D + և մտքով կարդաց

[2] D + սիրուն

Դող առավ Ուստայի սիրտը. վարանում էր, մտնի՞, թե՞ չմտնի, ա՛յ, թե չունը ներսը լինի[1], ի՞նչ իմանաս: Ապա չորս կողմն աչք ածեց՝ կասկածը փարատելու[2] համար մի նշան գտնելու, երբ նկատեց իր սանիկին՝ երեխաների աղմկող խմբի մեջ:

Երեխաներից մի երկուսը մի չուն բռնած ունեին[3], երկու ուրիշ երեխա մի կատու չան վրան էին ձգում ու վերստին[4] հեռացնում. չունը մռմռում էր զայրույթից՝ մռութը կծկած, իսկ կատուն ճիրանները հանած՝ ֆշշացնում էր:

Երեխաների մի ուրիշ, ավելի մեծ խմբակ[5] փոշոտ մաղերով, բոբիկ[6], ճիպոտների վրա հեծած ձի-ձի էին խաղում՝ հետ-առաջ քշում էին ձիերը՝ հող ու մոխրի մեջ[8], մի բերան բղավելով. «Մոսկով-Խարկով կերթանք... Մենք էլ Սամսոն-Տրապիզոն կերթանք»:

– Սմբլո, գառնուկս, արի տեսնեմ,– ձայնեց Ուստան: Սանիկ Սմբլոն, մի չիկահեր մանուկ, ձին քշելով եկավ Սամսոն-Տրապիզոնից թե Մոսկով-Խարկովից, և ձիով միասին ընկավ կնքահոր դիրկը:

– Քավո՛ղ, քավո՛ղ, չամիչ կուզեմ[9], չամիչ:

---

1 D էղնի

2 D կասկածը փարատելու *փխ* վարանումից դուրս գալու

3 D + իսկ

4 D չիք

5 D + բոբիկ ու

6 D չիք

7 D չիք

8 D հետ-առաջ ... մոխրի մեջ *փխ* քշում էին հող ու մոխրի մեջ հետ-առաջ

9 D կուղիմ

Ուստան կես[1] ափ չամիչ գրպանից հանելով լցրեց սանիկի գոգը, և չոյելով հողոտ ու դզդզված մազերը, կամացուկ հարցրեց.

– Մերդ տա՞ն է, պուլիկս:

– Չա՛:

– Ըհը՛ն,– գոհ սրտով հնչեց Ուստայի ձայնը:

– Հե՞րդ:

– Հերս էլ:

– Օհոոոո՛,– դժկամորեն՝ քթի տակ մնչաց Ուստան և կրունկի վրա ետ դարձավ. «Շունը տանն է»:

Երդիկներն ելնելով-իջնելով հասավ Վարդանենց Տիգոյի տունը: Սանամայր Սանդուխտը Ծովինարից հետո երկրորդ սիրելին էր նրա:

Վստահ ներս մտավ սրահը. անախորժ բան չէր լինի, եթե Տիգոյին հանդիպեր, որովհետև իրար բարեկամ էին:

– Սանահեր Տիգո, սանամեր Սանդուխտ,– գոչեց նա[2].– էս ի՞նչ է, չունչ չկա տունը:

Նրա ձայնի վրա տան դուռը բացվեց և չեմքի վրա երևաց սանամայրը՝ թուխ, կայծկլտուն աչքերով, կարմիր-կանաչ հագած, դեղին մաշիկներով, տարի-կիսկան երեխան գրկին:

– Յա՛[3], քավոր Ուստա կարո, էդ դո՞ւն ես, բարով եկար[4], սանահերդ կհարցներ, թե ո՞ւր է քավորը[5], չի էրևա:

---

1 D մի

2 D + ոչ մի ձայն

3 D Բարով

4 D չիք

5 D + էսքան ժամանակ է

Առհասարակ[1], տակավին երիտասարդ սանամայրնեը[2], նահապետական[3] բարքի համաձայն[4], քավորների հետ «հարսնութիւն»[5] են անում. երկար[6] տարիների ընթացքում չեն խոսում, սակայն Ուստան այս օրենքի զորութիւնը կորցրած էր համարում, երբ մի-երկու տարի էր անցած լինում պսակի օրից, կամ նորապսակների տունը մի կամ առավելն երկու անգամ «մեռոն» էր տարած լինում: Իսկ այն սանամայրերը, որ համառում էին «չխոսկան» լինելու մեջ, նրանց մոտ ոտ չէր դնում մինչև լուսթյան լուծումը:

– Բարով տեսանք, սանամեր Սանդուխտ. Բագրան էի, շա՛տ աչխատանք ունեի, սանահերս ո՞ւր է, մեծ սանամերս ո՞ւր է:

– Սանահերդ ջաղաց գնաց, կեսուրս էլ տալոչս տուն է, ես կըսեմ իրար հետ կավի[7] են գնացել:

Ուստան դեմքի վրա առանց գոհունակութեան նչան հայտ բերելու, հանգիստ ձայնով ասաց.

– Եկա, քեֆերդ հարցնելու, ի՞նչդ եք, լա՞վ եք:

– Բարով եկար, քու տունդ է. համե՛ ներս, փառք իրան, լավ ենք.– և քավորի ձեռից բռնելով ներս տարավ: Ուստան մի ակնարկով նայեց թոնրատան չորս անկյունը, և նստեց ջվալով ծածկված աղասանդի վրա:

---

1 D չիք
2 D + թեև
3 D + վարք ու
4 D + առհասարակ
5 D հարսնութիւն
6 D չիք
7 D կուվի

– Քավոր Ուստա, ի՞նչ պատիվ էնեմ[1], ձվածեղ էնեմ[2] կուտե՞ս:

– Ջէ՛, սանամերս, չնորհակալ եմ, նոր հաց կերա, մեկ էլ, պատիվս ո՞րն է, էնքան պատիվ եմ տեսե ձեզնե, որ համրանքի չի գա:

– Թո՛ղ էղնի, մեկ բռնե սանիկդ, քեզի արաղ բերեմ:

Երեխան Ուստայի դրկում թռվռալով թաթիկը ձգեց նրա բեղերին, ապա բռնեց ժամացույցի շղթան ու քաշեց: Քավորը հանելով ժամացույցը մոտեցրեց սանիկի ականջին. երեխան կուսական հետաքրքրությամբ՝ աչքերը զարմանքով բացած՝ լուռ ու լռիկ, լսողություն դարձած, մտիկ էր անում ժամացույցի ամուր չխկչխկոցին:

Սանամայրը բաժակը լեփ-լեցուն մատուցեց Ուստային:

– Սանամեր... չան...– «չան» բառը գրեթե կուլ տալով, ասաց Ուստան, բաժակն առնելով.– սանիկս մեծցեր է, ի՛նչ սիրուն տղա է դառե: Տիգոյին լման է երեսի դրուքով. աչքերը շատ սիրուն են, ես կըսեմ՝ քու աչքերդ են, տեղոց-տեղ, քո՛ւ աչքերդ,– և չեչտակի նայելով սանամոր աչքերի մեջ, հարեց.– Աստված պահե, հորով-մորով էղնի:

Եվ հենց ուզում էր օղին բերանը տանել, երբ սանիկը թաթիկով տվեց, ողջ օղին թափեց Ուստայի աուլաս արխալուղի կրծքի վրա:

– Վա՛յ, լուսս թափվեր, ի՞նչ էրավ անառակը,– կարմրած ասաց Սանդուխտը երեխայի արարքի վրա ամաչելով և

---

[1] D էնիմ

[2] D էնիմ

միաժամանակ այս պատահարի բնույթը ծիծաղաշարժ գտնելով, ժպտում էր, խնդում-խնդում աչքերով[1]*:*

– Վնաս չունի, սանամեր, ի՞նչ եղավ որ[2]*, ի՞նչ եղավ որ,– կրկնում էր Ուստան, այնինչ սանամայրը երեխային գետնին*[3] *դնելով, կրծքկալի տակից հանեց թաշկինակը, սկսեց սրբել քավորի թրջած կուրծքը: Սրբելիս սանամոր մազերի ծայրերը չոյանքով քսվում էին Ուստայի երեսին: Սանամոր չնչի գոլը, որ պատրանքն էր տալիս եփվող չիր ու չամիչի քաղցր չոգուն, գրգռում էր Ուստայի ռունգները:*

Նա ուզում էր, որ մինչև Քրիստոսի դատաստան նստելը սրբեր սանամայրը, սրբեր իր թաց կուրծքը, որի ներսը, սրտի մեջ, զգում էր[4] *սանամոր նազուկ մատների ախորժելի խտխտանքը:*

Սանամայրը ավարտեց.

– Էս չեղավ, քավոր, մեկ հատ[5] *էլ լցնեմ:*

Ուստան անխոս համաձայնեց:

– Ողջ էղնիս, Տիգոյի հետ բախտավոր ապրիս,– ասաց օղին խմելով, ապա գրպանից «բաղդատին» պարզելով սանամորը.

– Էս քեղի համար եմ բերեր. հատուկեն Երևաննեն[6] *բերել եմ տվե. չեմ ու չում չկա, առնես պտի:*

Ուստան այստեղ սուտ խոսեց՝ հակառակ իր ճշմարտությանը[7]*: «Բաղդատին» հատկապես Ծովինարին նվիրե-*

---

1 D խնդում-խնդում աչքերով փխ աչքերովը խնդումով լի

2 D + վնաս չունի

3 D գետնի վրա

4 D + Ուստան

5 D մեկ հատ փխ մի հատ

6 D Էրևաննեն

7 D ճշմարտախոսությյան

լու դիտումն ուներ, բայց այն այցի անհաջողությունը և Սանդուխտի մատների քաղցը «խոուսը» սրտի մեջ՝ վայրկենապես փոխել տվին նախկին մտադրությունը:

Սանամայրն աչքի ծայրով դիտեց դեղեցիկ «բաղդատին» և չա՜տ հավանեց:

– Շնորհակալ եմ, քավոր Ուստա, ավելնորդ բան էր էսիկ, քեղնեն էնքան փեշքեշ ունիմ որ...

– Դուն իմ սովորությը չես կրնա փոխե, առ գլուխդ քցե, մեկ տեսնեմ:

– Որ շատ կուզես, տու, քցեմ,– չինծու անտարբերությամբ ասաց Սանդուխտը. և արձակելով գլխի նախկին ծածկույթը, նվեր բերածը կապեց, ոսկեշող բաղդատին, ապա կրծքկալի տակից հանելով մի փոքր կլոր հայելի՝ կարմիր կաշեպատ, ուղղեց մազերը, և աչքերի նուրբ ժպիտով նայեց քավորին:

– Կսաղա, չէ՞, քավոր...

Ուստան մի անհագ հայացքով դրկեց սանամորը:

– Օխա՛յ, սանամեր չա՛ն,– չնչտելով «չան» բառը,– աննման դառար, սանահեր Տիգոյի աչքը լուս:

Սանամայրը, հանկարծ վար առավ բաղդատին, ծալեց տվեց քավորին ասելով.

– Ա՛ռ, քավոր, էգվան բեր, կեսուրիս յա մարդուս քովը տու:

– Ընչի՞,– բեկված հարցրեց Ուստան:

– Որ մտքերեն դեչ բան անցնող չեղնի...

Ուստային հաճելի չնկավ վարմունքի այս կերպը, և նրա ձայնին նմանելով կրկնեց նրա խոսքերը.

– Ընչի՞ տնաղ կիննես, Ուստա[1]:

Սանամայրը ջղայնացած՝ կտրուկ վրա բերեց:

---

[1] D + Ընչի՞ տնաղ կիննես, Ուստա

– Ես քեզի բան կըսեմ, ի՞նչ է, կուզես՝ վրաս խոսի՞ն, բամբասե՞ն:

– Մարդ էլ բամբասանքեն վախնա՞,– խրախուսեց Ուստան:– Բամբասանքն որ կա, դարդակ թվանք է, դարդակ թվանք:

– Թող էղնի. ով ուզե-չուզե, ես չեմ ուզե, որ ընձի առնեն-ծախեն, արժեցող-չարժեցող դնե-վերցնե. ես գետինը կմտնիմ[1]:

– Թող չարկամդ գետինը մտնի, դու[2] ափսոս չե՞ս. սանամեր, էնպես, խոսքի օրինակի համար կըսեմ, մարդ պիտի իրան օրն էնե, հաչողը թող հաչա:

Ուստան թևև ինքն էլ չէր հավատում իր ասածին, ինքն էլ չէր սիրում բամբասել ու մանավանդ բամբասվիլ, բայց «խոսքի օրինակի» համար ասաց, ինչ որ ասաց:

Սանդուխտը չլսելու տվեց և երեխային գետնից վերցնելով գիրկն առավ:

– Սանամեր, դո՞ւն էլ աչքերդ կդեղես. էսօր թերթիչներդ[3] չատ սև կերևան:

– Էդման բաներու պետք չունիմ,– հպարտ պատասխանեց սանամայրը:

– Մեկ մոտեցիր[4], աչքովս տեսնիմ[5], չեմ հավատա,– ասաց Ուստան, ելնելով սանդի վրայից և մի քայլ առնելով դեպի նա:

Սանամայրը խեթ նայելով Ուստայի աչքերի մեջ՝ վճռական ասաց.

---

1 D կմտնեմ

2 D դուն

3 D թերթչներդ

4 D մոտեցի

5 D տեսնեմ

— Քավոր, հիմի կեսուրս կուգա. չմոռնաս էգվան գաս ձվածեղի, սանահերդ քեզի կարոտցեր է:

— Լավ, թե որ միտքս մնա,— ձայնի դժգոհ դույնով ասաց Ուստան և մնաս բարևի ձեռք տվեց սանամորը, որի ժպտուն խաղերով ծոր գնացող աչքերը ճանապարհ դրին կես-խռով, կես-հաչտ քավորին:

Ճանապարհին Ուստան, ակամա, պատկերեց սանամոր աչքերը — փայլուն, կայծկլտուն: «Սիրուն, համով հարս է, էրնեկ պաչողին, մեռոն եմ տուն բերե, թե չէ...» — չգլխավորեց մտքով անցածը և շուռ եկավ դեպի սանահայր Մարգարի տունը:

Մարգարի տան առջև հավաքված էին մի խումբ կանայք և աղջիկներ: Շիտե, ազմուկ, խոսք ու ծիծաղ: Ուստան ոտը քաշ տվեց. կին ու աղջիկ հավաքվել էին Զարչի Կակոսի գլխին: Կաղզվանցի փերեզակ Զարչի Կակոսը՝ թրթռուրը կերած կաղամբի պես երեսով՝ փռել էր նրանց առջև իր բողչան (կապոցը)՝ չարժական խանութը: Թել, ասեղ, ասղաման, մատնոց, կոճակ, մաստակ, ժապավեններ, կարմիր ու դեղին սապոններ, պատիկ հայելիներ, հասարակ դույն-գույն քարերով մատանիններ, և ուրիշ շա՛տ բաններ:

— Քա՛, գնտինը մտած Կակոս, հոդի կծախես, սա՞նդր է, թե՞ ոսկի: Վո՛ւշ, ի՛նչդ լավ օյա է,— զարկվորածին տե՛ս, կրակի դին կուզե...

Կակոսի էշը, անտարբեր կանանց աղմուկին, ձանձրացած, վիզն անընդհատ քսում էր սայլի կոփին, ժամանակ սպանելու համար, իսկ տերը, ոգևորված, ապրանքն էր գովում, որ եկած էր Ստամբուլից, Թավրիզից ու Թիֆլիսից:

Ուստան խառը ձայնների միջից լսեց սանամայր Սրբուհի կարկաչուն ձայնը... «Խառն է գլուխը սանա-

մորս, բնկալը հավկիթ պիտի[1] չթողնի հուլունքի[2] համար»,— ժպտալով խոսեց մտքի մեջն Ուստան և հառաջացավ:

Սանահայր Մուշեղի տան գավիթը լցված էր ծխով, որ թոնրատան բաց դռնից հեղեղի պես բխում էր. «Սանամերս հացի է»,— ինքնաբեր՝ ասաց Ուստան: Դռան առջև կապած այծը եղջյուր բռնեց նրա դեմ. այծի մորուքը շոյելով, ծխից հազալով, կամացուկ սյամն անցավ Ուստան:

Սանամայրը բազուկները մերկ մինչև արմունկները՝ մեն-մինակ և՛ խմորի դունդն էր բաց անում գրտնակով, և լավաշը կպցնում թոնրի կողին, և եփած հացը փռում չուրջը: Թոնրի դոլից խիստ կարմրել էր նրա դեմքը, և քրտինքը առատ կաթիլներով հոսում էր ո՛չ միայն ամբողջ դեմքից, այլև մազերն ու թարթիչների ծայրերը պտղել էին քրտինքից: Երևում էր, որ միայնակ աշխատանքից չափազանց հոգնել էր խեղճ սանամայր Վաթոն, հոգնած ու սրտնեղած:

Ուստան սակայն թանձր ծխի մեջից չկարողացավ կարդալ նրա այս վիճակը, և կատակի համար՝ դուռն անձայն գոցեց և հենց այն վայրկյանին, երբ սանամայրը բազուկը թոնրի շրթին հենած, կռացել էր թոնրի կրակը խառնելու՝ Ուստան դարան մտած կատվի պես վազեց և բռնեց մերկ բազուկը:

Սանամայրը վախեցած՝ իսկույն ետ նայեց և տեսնելով քավորին, բարկացած պինդ քաշեց բեղերից:

— Ջոզըկիս, քավոր, ինձի թոնիրն էիր քցե:

---

[1] D պտի

[2] D հլունքի

— Ես էլ հետդ էի...— ուզում էր ասել՝ «իրար հետ մոխիր կդառնայինք», լեզուն կծեց և չասաց, այլ հարեց ժպտալով:— Ինչի՞ վախեցար[1], հանաք կէնեի...

— Գնա սանամեր Ծովոյիդ հետ հանաք էրա...

Ուստան չփոթվեց, չկարողացավ պատասխան տալ. նա գիտեր, որ սանամայրերն իրար նախանձում են քավորի համար, մանավանդ երբ իմանում են, թե ում ավելի թանկ նվեր է տվել, ո՞ւմ ավելի ստեպ է հաճախում: Բայց «տնակոլի կնիկը ուրտի՞ց գիտե, թե ես Ծովոյին էվելի կուզեմ. տո՛, կնիկները ի՛նչ սուր քթի ծակ[2] ունին»,— խորհում էր Ուստան չփոթված ու հանկարծի եկած:

— Քու փնտռածդ Ծովոյիդ քովն է,— կծու ձայնով ասաց սանամայրը՝ աչքերը տրորելով:

— Սանամեր Վաթո, ընչի՞ էդման բաներ կըսես. ամեն սանամորս էլ մեկ աչքով կաչեմ: Ընչի՞ հոգուդ մեղք կենես:

— Քու աչքերդ քեզի մնա, իմ աչքերս քոռցան[3], դուռն ընչի՞ ես դրե, բա՛ց, ե՛լ բաց:

Ուստան, տհաճ, գնաց դուռը բացեց, ու մնաց դռան մոտ: Սիրտն ելել էր շատ. վրեժով լցված՝ ձայնը ծոր տալով, ասաց.

— Էսօր ձախ ոտքիդ վրա ես զարթնել, լեզուդ չեմ հասկնա:

— Ըսկի էլ մի՛ հասկնա,— չոր-չոր պատասխանեց սանամայրը, և անուշադրությունից կուտ ընկած մխացող հացը նետելով հեռուն՝ հարեց.

— Քեզի հասկցող ունիս...

---

[1] D վախցար

[2] D ծակեր

[3] D քոռնան

Ուստան զայրացած չթողեց, որ նա խոսքը լրացներ, ինքը կանխեց մի չնչով՝ ասելով.

– Էդպե՞ս, շատ լավ, թե որ էսուհետ թագավոր ծնիս, էլ քեզի քավոր էղնողը[1] չեմ: Գնա գտի քեզի հարմար խնամի, որ պոչը պոչիդ նմանի...

Եվ շտկվեց դեպի սրահը, դեպի դուրս:

Սանամայրը, զղջացած իր կոպիտ վարմունքի վրա, քավորի ետևից քաղցրաբար կանչեց.

– Վա՛յ, նեղացա՞ր, քա՛, հողը գլխուս, ի՞նչ ըսի, որ նեղացար, հանաք էրի. սիրտդ ի՛նչ փուխր է...

Ուստան չէր լսում: Սանամայրն ավելի բարձր ձայնեց.

– Քավոր ջան, արի՛, արի՛, լավ անքաչ պանիր ունիմ, նոր լավաշի հետ կե:

Ուստան ետ չդարձավ:

– Թե որ նեղացար, ես էլ նեղացա: Փիլոս աղբորս բաժինը մենակ տուն կղրկեմ, քեզի համար[2] չէ:

Սակայն Ուստան արդեն փողոցումն էր: Ծխից ազատվելով՝ լիաթոք չունչ քաշեց, մտքի մեջ խոսելով.– «Էսօր Վաթոյի սիրտը տեղը չէր. կամ սանահորս հետն է կռվե, կամ սանամեր Ծովոյի հետ է խոսք-խորաթա ունեցե, ու հիմի ոխն ինձեն առավ, անցուք-մոռցուք էնենք: Վաթոն ափսոս է, սիրտն էլ բարի է. տո՛, թշերն էլ իրան անվանը պես ինչդ կարմրեր էին, վա՛րդ, վա՛րդ»:

Եվ համր քայլելով[3] մեկ-մեկ միտքն էր բերում բոլոր սանամայրերին, թե ո՞րին ավելի հաճելի է գնալ, և որո-

---

1 D եղնողը

2 D հմար

3 D քայլերով

չեց այցելել հին սանամայր Հեղնարին՝ Մարջաննեց[1] Սարոյի կնոջը:

Սանամայր Հեղնարի չվաքը մտնելով, տեսավ՝ սանամայրը մենակ չէ[2], մի կնոջ հետ խնոցի է հարում, և մի ուրիշ կին էլ, անգործ, նստել է պատի տակ, քարի վրա: Զրույց էին անում:

— Բարի հայդուռմ, սանամեր, բարով ձեզի, քուրիկներ,— ի՞նչդ ես, լա՞վ ես, սանահերս տո՞ւնն է:

— Բարին եկար, քավո՛ր,— պատասխանեց Հեղնարը, խնոցու ծիուռմը դանդաղեցնելով.— սանահերդ գեղամեջն է, հիմի կուգա, նստի, նոր կարագիս համը տես:

Ուստան նստեց թմբիկի վրա. սանամայրը մի խոշոր կտոր կարագ հանեց դրեց լավաշի վրա:

— Բալոր Կարո, անուշ էրա:

— Ուստա, լսողաց՝ Բագրան լալ քեֆ ես էրե, մեր մարդն ըսավ,— խոսք բաց արեց պատի տակ նստած անպործ կինը:

— Ամենօրվա[3] քեֆն էր, ուրիշ տեսակի չէր, որ գեղի գեղ ձենձնվես է,— անտարբեր պատասխանեց Ուստան՝ կարագը հացին քսելով:

— Հազար էրնեկ տղամարդոդդ, ըսկի ձեզի չենք ղրկե. մենք ի՛նչ ենք որ — ճիժ, պիժ, էս է՝ խնոցի, թոնիր...— նախանձով ասաց մյուս կինը դլխի թաշկինակն ուղղելով:

— Աստծու դրունքն է,— ասաց Ուստան, պատառը բերանը տանելով:

— Հա՛, խոսքս Ուստեն չաքյարով կտրեց,— սկսեց անպործ կինը ընդհատած դրույցը.— հա՛, էն կուգեի ըսել, թե

---

[1] D Մաւջաննեց

[2] D չի

[3] D Ամենօրյա

բախտն է բանը, ա՛յ, մեր Ավագի համար չառանք Մավրակցու Սաքոյի աղջիկը... Հիմի դու տե՛ս, թե էն ի՛նչ հարս է դառեր. ողջ տունը ծաղկեցրեր է. մատներեն ի՛նչ չնորհք ըսես կթափի, կարել, օյա գործել, չիտեմ որ մեկն ըսեմ...

– Արժանի չէր էդ աղջիկը փսլնքոտ Սողոյին,– ասաց մյուսը:

– Լավ միտս ընկավ. էնօրը ժամ էի գնացե, Բուլիկենց հարսը տեսա...

– Ո՞րը...– հարցրին մյուս երկուսը:

– Էն աստուռ պատկերքը...

– Աստուռ պատկերքը...– քահ-քահ ծիծաղեցին՝ կրծքկալները բռնելով, որոնց տակ խնոցու պես ծփում էին լիալիր ստինքները:

– Համա ի՛նչ զուգված-զարդարված էր, գլխուն մե չալ կար, թե որ ըսեմ 20 մանեթ արժենար, էլի քիչ է: Ախբերը Բաքու աշխատանքի է գնացե, քրոջ Զատկվա արմաղան է ղրկե. ախբեր էլ կա, ախբեր. երեք տարի է հերանցս տունը ոտք չեմ կոխե, ըսա՛, կերևան էդ անխիղճ ախբերտինքս[1], թե՝ քո՛ւր, կաս, չկաս.. Ես գիտե՞ս, ի՛նչդ քուր եմ էղեր էդոնց համար. լուսհոգի մորս մեռնելեն ետև, անունս չեն տա, հարսներս որ, օ՛խ, ծակծկվին, զարկվին, թևերու միսն ուտեն, հորս հացը ընճի կխնային. հա՛, ըսածս էլ չեմ իմանա՝ թե ինչ կըսեի...

– Հերանցդ տան վրան էր:

– Ես կըսեմ, Ավագի վրան էր,– միաժամանակ երկուսը միասին օգնեցին նրան հիշելու ասելիքը:

– Ջէ՛, միտքս եկավ, չալի վրան էր խոսքս. աղջիկներ, մեր գեղը էդպես չալ չկա, ինքը ծիծեռնակի գուն ունի, վրեն վարդի պուտ-պուտեր կան, տեսնելու բան է, լեզվով չի ըսվի... Քեռեկինս մե չալ ուներ, միտքս է, աղջիկ ժա-

---

[1] D ախբերտիքս

մանակս, վրան կզարմանայինք, էն էլ թանկանոց տեսակեն էր, գուռը ղայֆայի, վրան կաս-կապուտ նիշաններ...

Ուստան պատառները կամաց-կամաց ծամելով լսում էր ուշադիր:

Շալի գովքը անողին ընդհատեց սանամայրը:

– Ենկոյենց տղեն կնշանվի, պատգամ են ղրկե Բաղոյենց Սաթենիկի համար. հերն ու մերը կամ չեն, համա աղջիկը ոտքը զարկեր է գետին, կանգներ կըսե, թե էդ տղին կուզեմ որ կուզեմ, աչք են քցեր իրար վրա...

– Հողեմ էդոնց գլուխը... էդ աղջիկը չատ իր ըսածին է. բռի էկող չէ. ում տունը մտնի, քանդե պտի,– Հեղնարի խոսքը կտրեց մյուս խնոցահարը,– հերու սարը ժախի էինք գնացե, էդ աղջիկ չեղածը աչքով-ունքով տղոց հետ կխոսեր միալար...

– Էնոր մորը, Նարգիզին, ես լավ գիտեմ,– մեջ մտավ անգործ կնիկը,– հորքուրիս տալի աղջիկն է, չատ խաղացողն էր, գեղի հոտաղներու հետ կլուսցներ, էնոր վրան մեր գեղը խաղ կար կապած. էսպես կըսեին.–

Ջաղացս կեներ ալուր,
Նարգիզ, մի՛ մնա մալուլ,
Սիրեր եմ, քեզի կառնեմ,–
Թող բերե հետը բալուլ...

Նորից բարձր ու զվարթ ծիծաղեցին[1], Ուստան էլ ծիծաղեց:

– Հըմա, ի՞նչ կըսես,– շարունակեց նրա խոսքը սանամայր Հեղնարը,– հիմի ի՛նչդ տնտես համավորհարգևոր կնիկ է դառե, կզարմանաս...

---

[1] D ծիծաղացին

– Ընչի՞ կզարմանաս, աղջիկ ժամանակը էնքան է կե-
րև – կշտացեր է՝ հիմի փուքն իջե, նստեր է,– սանամայրը
Հեղնարի խոսքերին հյուսեց իր խոսքերը մյուս խնոցի
հարողը, մինչդեռ Հեղնարը առանց նրան լսելու չարու-
նակում էր իր խոսքը:

– Էն որ չեղնի, էնոնց տունը քար քարի վրան չի կե-
նա, մարդը հավի մեկն է...

– Հավի մեկն է... լավ գտար. էն իրանց թաղի աքլորն
է, էնպես տակն տակ մարդ է, ժամեն հետ չի ընկնի, գի-
շերները տան երես չի տեսնի, էսոր-էնոր դուռը ափ կառ-
նի.– անգործ կինն էր խոսողը, որ ինքն էլ իր կողմից
նրանց խոսքերին հյուսեց իր խոսքերը:

Ուստան ուզում էր ինքն էլ մի-երկու խոսք ասել,
բայց միջոց չէին տալիս:

– Աղջիկներ, ըպա չեք հարցներ, Զաքարենց հարսը
երկու որբը երեսն ի վար քցած՝ խնչաննենց Մաթոսին
կառնի...

– Վո՛ւշ, մարդ էլ Մաթոսին կնիկ կեղնի, էն էլ Մա-
նուկի պես մարդ ուննենալեն ետև...

– Չէ՛, էդպես մի՛ ըսե, կեսուր-կեսարի քթի չուրը քա-
շելն հազար տակ լավ է իրան համար մարդ ուննենալը:

– Էդ էլ չիտակ ըսած է, թե՝ աքլորի չափ մարդս ուն-
նեմ, մե կալի չափ տեղս կուննենամ...

Ուստան ձանձրանում էր. վեր կացավ գնալու:

– Կեցե՛ք բարով,– ասաց,– սանահորս հետ գործ ու-
նեի, էրթամ գտնեմ:

– Յա՛, ի՛նչ չուտ եկար,– ասաց Հեղնարը,– խոսքի
բռնվանք[1], մոռացանք[1] քավորիս, կեցի, հիմի սանահերդ
կուգա:

---

[1] D բռնանք

– Չէ՛, սանամեր, էրթամ, սհաթի 12-ն է,– ասաց՝ նայելով ժամացույցին,– չեմ կրնա մնա, կերթամ չենլիքի ժողված տեղերը, սանահերս էղավ՝ էղավ, չէղավ՝ տուն կերթամ, մարդ պիտի[2] գա քովս...

Եվ գլանակը վառելով՝ հեռացավ:

«Տո՛ էս կնանիք խոսքը իրար բերնե կվալեն,– խոսում էր ինքնին Ուստան՝ մտքի մեջ բարակ ծիծաղելով,– ամեն մեկը իրան հաչվին կխոսի, ամենքն էլ մեկ ժուկի-ժամի մեջ կխոսեն[3]. մեկը մեկէլի խոսքին չի պատասխանե, ու ըսկի իրար չեն լսե, հե՛չ: Էնպես դուրս կուգա, որ կնկա համար լսող պետք չէ. էնքան որ ինքը խոսի: Կնկա ականջն էղեր է օղի համար, չէ թե՝ խոսքի. կնկա խոսքն էլ որ կա, իրան մանած թելեն երկեն է»:

Դժգոհ մնաց Ուստան այսօրվա այցերից: Ինչո՞ւ համար, ի՞նչ էր ուզում, ինքն էլ չգիտեր: Դժգոհ էր սակայն, և ընդհատելով նախորոշած այցերի շարանը՝ մտավ եկավ փողոցներում, գտնելու իրեն վայել մի ընկեր, հաճելի ժամանցի համար: Ամայի էր սակայն գյուղը. բանիպործի օր է, ապրել-մեռնելու օրեր էին:

Շրջում էր ու խորհում Սանդուխտի կասկածհարույց խոսքերի վրա. նրա ձայնը դեռ ականջում հնչում էր. «Կուզես՝ վրաս խոսի՞ն, բամբասե՞ն»:

Ի՞նչ ավելորդ խոսքեր, ո՞ւմ բամբասանն, ինչո՞ւ համար... Նա սովորույթ ուներ, ինչ գյուղ որ աշխատելիս

---

[1] D մոռցանք

[2] D պտի

[3] D կխոսին

լիներ, ազատ պահերին սանամայրներին այցի երթալու: Մի սանամոր մի օղի, մյուսի մոտ մի ազնիվ պատառ վայելելով՝ անուշ-անուշ զրույցներ աներ, նորություններ ասեր ու լսեր, կատակներ աներ, ծիծաղեր ու ծիծաղեցներ: Եվ մեկի հետ սիրով, մյուսի հետ խռով բաժանվելով, նորից թե՛ սիրովին, թե՛ խռովին տես երթար՝ անխուսափելի նվերներով, և նորից անմեկին հյուրը լիներ խաչիլին ու հարիսային, նորից իր բաժինն ընդուներ սերից ու մածունից, կարագից ու գաթայից:

Այսպիսի ընտանեկան անմեղ հարաբերություններ[1]: Սակայն, չնայելով այս իրողությանը՝ Ուստան մի օր իմացավ, որ իրեն բամբասողներ կան: Սկզբում ուշ չդարձրեց, բայց զանազան ուղիներով նրա ականջին նորից նոր հասնում էին այդ չարամիտների բամբասները:

Զարմացավ ու զայրացավ այդ անանուն բամբասողների վրա: Ո՞վ էին, ի՞նչ էին ուզում իրենից: Եվ քրքրելով բամբասանքների «թնջուկը», հասավ արմատին.— Ղուկաս աղան էր իր «դասերով». Ղուկասը՝ տիկը, նրանք՝ բերանը: Իր սանամայրների պատիվը պաշտպանելու համար, չուզենալով հասարակության առջև խոսք ու վեճ բանալ, մի ընդհանուր ծանոթի միջոցով խրատիչ ու սպառնալից լուր ուղարկեց Ղուկասին. «Գնա էդ մեհոգևորին ըսա՝ բերանն իրան քաշե, ամոթ է. թե չէ, ոչ թե խոնճանիս պես բերանը կկապեմ, հապա էդ հաստ բուկը խոնճանովս էնպես խեղդեմ, աչքերն առիքը թռնի»:

Ուստան սպառնացավ ու հանգստացավ. թեև իր հինգ մատի պես գիտեր, որ նորից նրանք, Ղուկասի մարդիկը, պատերի տակ կծկված՝ իրար ականջ փսփսում էին[2] գուր

---

[1] D հարաբերություններ

[2] D ին

ու մուր խոսքեր, միաժամանակ ցանկանալով, որ այդ փսփսուքները հասնին Ուստայի ականջին, խուսափելով հրապարակով ասել՝ վախենալով ծեծ ու կռվից:

Ուստան այլևս անտարբեր էր դրանց հանդեպ, սակայն Ջավուշը, որ վարպետի սիրտը դիտեր և արդեն նրանք իրար խոստովանահայրերն էին, երբեք չէր հանդուրժում այդ չարաչյուկ ակնարկներին,— և մի օր, փրփուրը բերանին՝ հարձակվեց Ղուկասի դասերի վրա. «Տո՛, չարի ճարտար, բարու տխմարներ, չիտակ է ըսած, թե գեչ մարդը գեչ կմտածե, լավ մարդը՝ լավ. ամեն մարդ աշխարքը իրան սրտի պես դիտե: Դուք ընչի՞ ուրիշին ձեր գեչ աչքով կաշնք. Ուստե՞ս, էն սուրբ մարդ է. զուր տեղը հոգիներդ ընչո՞ւ կմրնք»:

Իսկ չարախոսները փորձեցին իրենց վրայից մեղքը նետել անտեսանելիի վրա. «Կըսեն, մենք ի՞նչ էննենք, կըսեն. ո՞ւմ բերանը բռնես, մեզի ի՞նչ, մենք լսածը կըսենք»:

Ջավուշը՝ զայրացած, խրատելով զգուշացրեց. «Ես գիտեմ ձեզի տուն տվողը, չափերդ ճանչցնք, է՛լ չեղնի, չիմանամ ձեր հաչմչոցը...»:

Քիչ մնաց կռիվ ծագեր, բայց Ղուկասի մարդիկը տեղի տվին, որովհետև թույլ էին նրանք, այնինչ Ուստայի եռևը կանգնած էր գյուղի մեծ մասը՝ գլուխ ունենալով Դաշնակցության ննթակոմիտեն, որ Ուստայի մտերիմ բարեկամներից էր կազմված:

Ղուկասի մարդիկ ատամները կրճտացնելով ասում էին իրար. «Տո՛, վո՞վ են էս թոկն փախուկները, որ եկեր մեր գեղի վրեն լեզու կփարթեն, հողը մեր գեղի մենծննեբուն, է՛ն սև հողը»...

Մինչդեռ Ուստան խորհուրդ էր տալիս ընկերոջը անվրդով մնալ:— «Ջավուշ չան,— ասում էր նա,— թո՛ղ

խոսին. էդ նշան է, որ մսերս անուշ է՝ կծամեն: Մեկ էլ՝ աշխարքի օրենքն էնպես է, որ, թե ականջդ կտրես քցես աշխարհամեջ, ու թեկուզ երեխի պես անմեղ էղնիս[1], հենց տես ու ճանանչիդ կողմեն էման դեչ խոսքեր վրադ լսես պտի, որ հենց իմանաս, թե երդում կերած թշնամիքդ են էտոնք, է՛դ տես ու ճանանչներդ. էլ ո՞ւր կմնան թշնամիքդ»:

Սակայն բուն թշնամիները, Ղուկասն իր դասերով, առանց իրենց հոգիներին մեղք անելու մինչև օրս չէին կարողացել մի անհերքելի, վարկաբեկիչ փաստ ներկայացնել Ուստայի և սանամայրների փոխհարաբերությունների[2] մասին, և նրանց չանքերը տարիների մեջ դուր էին անցել՝ երբեք չկարողանալով իրենց լրտեսների միջոցով Ուստայի բերանից, նրա ամենաթունդ հարբած պահերին իսկ, մեղադրիչ մի խոսք դուրս քաշել, թեև Ուստան բնությամբ գաղտնիք պահող չէր, թեև նրա բերանում չիր չէր թրջում: Եթե իրավ դեչ բան լիներ, ողջ գյուղերը ամեն բան տեղին, անուն-անուն պիտի գիտենային:

Այսպես, թեև այս ամենը չարանյութ վարկած էր, բայց և այնպես, նորից միշտ նրանք էին՝ Ղուկասի մարդիկ: Ղուկասի սադրանքով՝ պատերի տակ կծկված՝ իրար ականջ փսփսում էին զուր ու մուր խոսքեր. միաժամանակ ցանկանալով, որ այդ փսփսուքները հասնեին սանահայրների ականջներին, խուսափելով հրապարակով ասել՝ վախենալով վեճ ու ծեծից:

Իսկ սանահայրները մի ականջով լսում էին այդ բամբասանքները, մյուս ականջով դուրս տալիս: Նրանք լավ

---

[1] D էղնես

[2] D փոխհարաբերություններ

գիտեին, որ Ղուկաս ազգից գաւտ, իրենք էլ ունեին թշնամիներ, որ ոխ են հանում իրենց կանանց բամբասելով: Գավորը ով էլ որ լիներ, նույնը պիտի լիներ, Ուստան մեղավոր չէր. մեղավորը՝ աշխարքի կարգն էր:

«Ուստայի սիրտը,— ասում էին նրանք,— իստակ է. էրեխի սիրտ ունի, մենակ լեզուն է, որ մեկ-մեկ կարկուտ կենեն: Ուստեն պարզ մարդ է, աստաւ չունի, և էլ ուրիշներու պես դարմանի տակի ջուր չէ»:

Եվ սանամայրներն էլ, որ Հարգում էին ու սիրում Ուստային՝ իրրև չնորհքով, լեզվանի, իրենց ամուսիններից գնրազանց մի տղամարդու, պաչտպանելով նրան՝ ասում էին. «Ինչ որ քավոր Ուստի սրտինն է, էն էլ լեզվի ծերին է. Ուստեն տուն-տեղ, կնիկ-երեխա չունի. մենակ մեղնով, իրան սանիկներով պիտի մխիթարվի: Թո՛ղ գա-երթա, վով գնչ բան կըսե, ըսողին չմնա»:

Ուստան էլ բաց ճակատով էր նայում սանահայրներին: Որովհետև ինչքան իրեն գիտեր, ո՛չ մի արարքով չէր մեղանչած բարեկամության սուրբ օրենքի դեմ: Ինքը աստվածավախ մարդ է, ջերմ հավատացող եկեղեցու խորհուրդներին: Խաչ բռնելով ու մեռոն տանելով՝ սուրբ կարգ է կատարել և այդ սուրբ կարգի զորությամբ քույրերայր են դարձել իրար բոլորովին օտար մարդիկ:

Եվ աշխարհ գաւտաստան նստի, վրան գնչ բան չի կարող գոնի[1]: Բայց արդյոք այդպե՞ս է իսկությունը, ներքին մարդը.— արի տես, որ սիրտը... է՛ն, ուրիշ բան է մարդու սիրտը... Ուստայի մարդկային սիրտն էլ, հակառակ իր ազնվական կամքին, երբեմն պղտորվում է անվայել զգացումներով:

---

[1] D պոնել

Իրենից զորեղ մի բան կա, իր կամքից հզոր մի բան, այն, որ երբ սանամոր մեկը ժպտուն աչքերով արաղ է տալիս, ակամա լզած է վառվում իրեն սրտում. կամ պարի մեջ իրար ձեռք բռնած վեր-վար թռչելիս սիրտն էլ դող է առնում սանամայրների կրծքկալների տակ դող ընկած «սրսփուն» ծծերի մեջ ու[1] միասին..

Ի՞նչ աներ... սիրտը որ կա՝ լկամը կտրած[2] սատանի ձի է, ոտները պիտի կոտրես, որ չտանի քեզ[3] քարև քար ձգե: Եվ սատանի ձիու ոտները կոտրելով՝ Ուստան Հանգիստ ու մաքրախիղճ քայլում էր մի սանամորից մյուս սանամոր մոտը և այնտեղից էլ ուրիշ նոր սանամայրների մոտ, որոնց թիվը տարվե տարի չատանում էր:

Նրանից[4] ավելի ընտիր, ավելի առատաձեռն քավոր ո՞ւր կարող էին գտնել: Կաթնահունցի պես ձեռքն ձեռք էին խլում անզուգական, պատվական քավոր Ուստա Կարոյին:

---

1 D *չիք*
2 D կտրածը
3 D ձեզ
4 D Նրանցից

Զ. ԳԼՈՒԽ
(Ա. տարբերակ)

<ԾԵՐԵՐԸ>

Ուստան գյուղամիջով անցնելիս, հակառակի պես այսօր իրան արժանի մարդու չպատահեց, որ նստեր, խոսեր, պարապությունը անցներ: Գնաց եկեղեցու սրահը, ուր սովորաբար հավաքվում էին պարապ մարդիկ զրույց անելու, գյուղի և գյուղերի անցուդարձի մասին մտքերի փոխանակություն ունենալու: Այնտեղ էլ իրեն ընկերմարդ չգտավ: Միայն եկեղեցու պատի տակ, ստվերի մեջ, նստել էին յոթ-ութ ծեր մարդիկ, ծեր-հալևոր մարդիկ ութսուն-իննսուն տարեկան, ուղղակի մարդկային ավերակներ.— բերանները բաց, կամ խոր ընկած՝ ծնոտները քթերին հասած, կապույտ լնդերով, անատամ, հատ ու կենտ երկարավուն, դեղին ատամներով, աչքերը փոքրացած, հանդած, անթերթիչ. հաստ, կարմիր ու վերքի պես կոպերով բոլորի դեմքերը հաղար կնճիռներով, խավար խորշոմներով ծռմռված-ճմռթված, չորացած, մաշկը ոսկորներին կպած՝ դեղին, մեռելի գույն: Նրանցից մի-երկուսը իրար ուսի տված՝ քնել էին, մյուսները չիբուխ էին ծխում՝ գլուխները գետնին հասած՝ գերեզմանի հողին կարոտ:

— «Էս խեղճերեն մեռելի հոտ կուգա»,— իր մտքի մեջ խոսեց Ուստան և նստեց մի քիչ հեռու, կարեկցանքով լի աչքերը անթարթ նրանց վրա սևեռած:

Նրանցից ամենեն երիտասարդը, ինչքան ձայն ուներ, բղավեց ամենեն ալևորի ականջի տակ.

– Օհան ջան, Օհան ամի, փեսեդ ինչի՞ գնաց Բաքու:

– Քու ի՞նչը, տո, Մարգար, լավ չիմացա,– պատասխանեց նա, որ բոլորովին «բլբլկած» մի ծերուկ էր, միայն աչքերն էին մի քիչ կենդանությյան նշույլ ցույց տալիս:

– Քու փեսադ, Բադոն, ինչի գնաց Բաքու,– ուղղակի ականջի մեջ բարձրաձայն բղավեց:

– Հա, գնաց Բաքու, Բաքու, էլի կուգա:

– Ինչի՛, ինչի՞ համար...– կրկնեց մյուսը:

Այս անգամ ո՛չ մի պատասխան:

– Է՛հ,– հուսահատած ասաց Հարց տվողը.– Օհանի բանը բաննեն անցել է. գաբրիել հրեշտակը էնոր մոռացել է, քաշելիք ունի...– ծիծաղելու պես կծկելով բերնի չուրջը:

– Էդման մի ասա, Աստված իրան հաշիվը գիտե: Մեկ էլ որ, է՛հ, կյանք է, հեչ չեղածեն լավ է. փառք իրան, խղճով տղերք ունի, լավ կշահեն:

– Օհանը աչքերեն լավ է. իմ աչքերը տուկատ են, բայց ակռաներս լավ կբանին, քուկդ ինչպե՞ս է, Մարգար:

– Ակռա՞... դեղապտի չունիմ. աչքիս լույսը տեղն է, ականջս էլ տեղն է, [սիրտս չա՛տ կնեղվի. ախ, ծերուԹյո՛ւն, չար գերուԹյո՛ւն] մենակ ես ո՞ւր, Օհանը ո՞ւր. ես հոտաղ էի պստիկ, Օհանը նշանվավ. վախնամ էնոր տարիքին չորս Թաթով հասնիմ... Դո՛ւ ի՞նչպես ես, Աբրո,– հարցրեց կողքինին:

– Աչքս, ականջս լավ եմ, մենակ կերածս չեմ մարսե. սիրտս էլ չա՛տ կնեղվի. ախ, ծերուԹյուն, չա՛ր գերուԹյո՛ւն...

– Ես,– ձայնեց ծուխը բերանեն հանելով մի ուրիշը,– հերու չա՛տ լավ էի. էս տարի ծնկներս զորք չունին, կդո-

ղան, ու քուն չունիմ ծով-դիշերը իմ սիրաս էլ չա՛տ կ-նեղվի, մենակ մեկ հուսալով, մեկ անցածը մոռնալով, մեկ իրան-իրան սիրտ տալով հա՛ն-հո՛ն, օրը կհասնի, կեր-թանք 7000 տարվա մեռելներուն կհավասարվինք. ո՛չ եկել ես, ո՛չ գնացել... դիտես թե՝ երեկվա տղեն եմ... երա՛զ, երա՛զ, երա՛զ փուչ աշխարք, մարդ պիտի երկու անգամ աշխարք գար, որ Համ առներ, բան Հասկանար, փորձված՝ գործ տեսներ...

– Է՛յ դիտի, Հակո՛, ի՛նչ կտրիճ տղա էիր, ի՛նչ խե-լառն էիր. ողջ կաղզվանու սար ու քարերը կքրքրեիր որ-սի համար. աչքդ էլ շա՛տ շոռ էր, հը՞, համը բերա՞նդ մնաց, քի՞չ էր, հիմա կուզես փորձված՝ աշխարք գաս, որ ձեռքեդ էլ բան չպրծնի,– ասաց ու կատակի համար իր չիբուխով ղարկեց նրա չիբուխին:

– Միտքս չէ, հնուքի բաներ են,– ասաց Հակո ամին, և կողքը քորելու համար քավեց կուշտը նիրհած ծերուկին, որը այս շոշափումից չզարթնեց:

– Լավ քուն ունի Սիմոնը, հոգին հանդարտ է, արդար մարդ է:

– Խե՛ղճ Սիմոն, ի՛նչ կանանչ-կտրիճ տղերք իր աչքով հողը դրեց, էն օրվանեն դմրած է, նստած տեղը կքնի:

– Աստծու բանը,– ասաց մի ծերուկ,– ո՞վ է մեռնողը, ո՞վ կմեռնի. է՛յ դիտի աշխարք, մարդ չի իմանա քու ելն ու մուտը: Փառքդ չա՛տ ըլնի, փառք քեզեն, Աստված, երեք օրվա մահ տուր, դևտնին դերի չըլնինք. բան չեմ խնդրե. տղերքս, թոռներս երեսիս մե բուռ հող ածեն, ար-ժանանամ Գաբրելական փողին, Աստծու լուս-երեսին. էն տղան էլ չեկավ, ինձի տուն տաներ, անոթի եմ, գիտես թե...

Ուստային սաստիկ տխրեցրեց նրանց այս անկարող, ցավալի վիճակը. և մի սև միտք դանակի պես փարատեց

անցավ նրա սրտի միջով: Թե որ մի օր էլ գալու է, որ ինքն էլ նույն վիճակի մեջ, պատերի տակ պիտի չորացած նստի – «Ա՛խ, մեռնել ըլներ, ծերուԹյուն չըլներ» մրմնջաց կսկիծով ինքն իրան, և վեր կացավ և ուղղվեց տուն, մի-երկու արաղ խմելու, մի քիչ չոնգուռ ածելու սփոփվելու համար, և բացի այդ – արդեն ճաշի ժամանակ էր:

ԳԼՈՒԽ Զ.
(Բ. տարբերակ)[1]

ԾԵՐԵՐԸ

Ուստան հակառակի պես, այսօր իրեն արժանի մարդու չպատահեց, որ նստեր՝ հետը խոսեր, պարապություն անցներ: Գնաց եկեղեցու բակը, ուր սովորաբար կհավաքվեին պարապ մարդիկ զրույց անելու, գյուղի և գյուղերի անցուդարձերի մասին մտքերի փոխանակություն անելու:

Այստեղ էլ իրեն ընկեր մեկը չգտավ:

Եկեղեցու պատի տակ նստոտել էին ութ-տասը ալևոր ծերուններ՝ 70-80 տարիներով բեռնավոր: Ուղղակի մարդկային վիլատակներ էին նրանք, յուրաքանչյուրի վրա ժամանակի դաժան հարվածները... անխնա իջած:

Ոմանք ոսկրացած, դեղին մատներով, դանդաղ՝ հին «տեր-ողորմյան» էին քաշում, քթերի տակ աղոթքի կտորներ մրմնջալով, ոմանք սրացած, դողդոջուն ձնոտներով ծխամորճն էին բռնել՝ անարյուն շրթներից ծուխը հուլորեն դուրս թողնելով:

Համեմատվող բնագրային միավորներ.

A = Հեղինակային ուղղումներով տարբերակը («Արձակ էջեր», 1963, էջ 568-573):

D = «Հայրենիք», 1925, N 10, էջ 19-22:

Տարրալուծված էր, որ[1] ավելի կամ նվազ չափով, բոլորի դեմքերը՝ հազար կնճիռներով, խավար խորշոմներով ծռմռված ու ճմրթված, չորացած, մեռելի գույն մաշկը ոսկորներին կպած:

Մեկ-մեկ դիտում էր Ուստան նրանց: Բաց էր բոլորի բերանը, քթերը կզակներին հասած, այտերը փոս ընկած, աչքերը փոքրացած ու հանգած, անթարթիչ, հաստ, վերքի պես կարմրացած կոպերով, ճերմակ կամ թափած հոնքերով... Ոմանք գրեթե բոլորովին անմազ ու անմորուք, ոմանց նոսր մազերը մետաքսից ավելի բարակ, հյուսված[2] ճյունաճերմակ և կամ դեղնավուն... Եվ գրեթե ղլուխները դետնին հասած՝ գերեզմանի հողին կարոտ:

Ամենքին էլ, մեկին չատ, մյուսին քիչ, չոշափելի էր մահվան ձեռքը:

— «Էս խեղճերեն մեռելի հոտ կուգա», մտքով ասաց Ուստան և նստեց մի քիչ հեռու, լսելու նրանց զրույցը՝ կարեկցանքով լի աչքերը անթարթ նրանց վրա հառած:

Նստել էին նրանք կողք-կողքի. մի երկուսը իրար ուսի ծռած՝ ննջում էին...

Մերերից ամենից երիտասարդը, ինչքան ձայն ուներ, բղավեց ամենաալևորի ականջի կիպ ծակին[3].

— Օհա՛ն ջան, Օհա՛ն ամի, փեսեդ ընչի՞ էրևան գնաց:

Օհան ամին հարցաբար նայեց՝ աչքերի մեջ մարող կրակի մի նսեմ կայծ ցոլացնելով: Հարցավորը կրկնեց խոսքը: Նորից պատասխան չառավ: Հարցավորը չորա-

---

1 D չ/ք

2 D Հյուծված

3 D ծակը

ցած կոկորդը ավելի ուժգին քերելով՝ դոչեց[1]: Նորից անպատասխան:

– Է՛հ,– հուսահատած ասաց հարցատուն.– Օհանի բանը բանեն անցեր է. Գաբրիել հրեշտակը էնոր դիրը մոռցեր[2] է, է՛հ, հլա քաչելիք ունի...– ծիծաղելու պես կծկելով բերանի շուրջը:

– Էդման մի՛ ըսա, Աստված իրան հաշիվը գիտե: Փա՛ռք Ամենակալին, խղճով տղերք ունի, լավ կշահեն...

– Օհանը աչքերեն լավ է, անկանջն է դուլցեր: Իմ աչքերս տուկատ են, հմա ակռեքս լավ կբանին, քուկդ ի՞նչդ է, Մարգար...– և շրթները հետ շրջելով, ցույց տվեց կապույտ լնդերի վրա հատ ու կտոր երկարուն, դեղին ու ժանգոտ ատամները:

– Ակռա՞... դեղապտի չունիմ: Գոհություն Աստծու, աչքիս լույսը[3] տեղն է, ականջս էլ՝ վնաս չունի, մենակ, թա՛ռու, ես ո՞ւր, Օհանն ո՞ւր... մատըմ տղա էի ես, պստլիկ հոտաղ, Օհանը նշանավավ... վախնամ էնոր տարիքին ճռնիկով ման գամ, յա չորևքթաթ: Դո՛ւ ի՞նչդ ես, Աբրո,– հարցրեց կողքինին:

– Է՛հ, ի՞նչդ պտի էղնի, գնի՛չ, օր-օրի վրա դևշ... ա՛խ, ծերություն – չար գերություն,– հառաչեց Աբրո ամին,– սիրտս շատ կննդվի. քուն չունիմ, կերածս չեմ մարսե. չա՛տ կդժգոհիմ... կյանքն որ երկննա, համն[4] կանցնի, ըսենք, ըսկի էլ աշխարքի համը չառա, չիմացա կյանքս ո՞ր[5] էկավ,

---

1 D դոցեց
2 D մրոցեր
3 D լուսը
4 D + էլ
5 D երբ

ե՞ր[1] գնաց... Ես գանգատավոր կերթամ աչխարքես, Աստծու դիվանի հաղագ գանգատավոր, ի՞նչ էր տվածը — ցավերս՝ երկար, խնդումներս՝ կարճ, բախտի դրքի մեջ ինձեն ի՞նչ գրվավ — մենակ ցավերս ու նեղություններս...

— Տո՛, Աբրո, Աբրո,— ծխամորճը նրա ոսկրացած չոր ծնկին զարկելով ասաց մի ուրիշը,— տո ծերացար, ծռեցա՞ր... Աստծուն քար մի գցե, դիվոտա՞ր, մեղա՛ արի, Աստծու դրուքի դեմ մարդ ի՞նչ կրնա էնել. հող էինք, հող դառնանք պտի, ճար չկա: Դու ըսա՛ մենակ էնդիու աչխարքի մեջ հոգով չկորինք, էսդիու աչխարքը մարմնուկորուս է ու կորուս. ի՞նչ ըսիր, Պողոս քհհա...

— Ես էլ Աբրոյի խելքին եմ. աչխարք երկու օրվա խաղ է, անխելք մանկութին, անուժ ծերութին... է՛հ, ըշտե, բան է՝ բռնել-կերթանք: Մազերս թափվան, ակռեքս փթան ընկան, գերեզմնին հասա, հնչ չհասկցա թե՝ ընչի՞ եկա, ընչի՞ կերթամ, ո՞ւր կերթամ... ինչքա՛ն մարդ է մեզնեն առաջ եկեր ու գնացեր ու մեկն էլ էնդիեն լուրիկ՛մ չէ բերեր, յա[2] դրկեր... էնդիու աչխա՛րք... ո՞վ է տեսեր, ո՞վ է էկեր...

Մինչ ծերունիները կխաչակնքեին դեմքերը, իրենց ընկերների անբարեպաչտ խոսքերի վրա, մի ուրիչ ծերունի ձայնեց, ծուխը բերանից հանելով.

— Ես էլ քուն չունեմ ծով-դիշերը. հերու լավ էի, էս տարի ծնկներս էլ զորք չունին, կդողան... սիրտս էլ չա՛տ կնեղվի, մենակ՝ մեկ՝ հուսալով, մեկ՝ անցածը մոռանալով[3], մեկ՝ իրան-իրան սիրտ տալով, հա՛ն-հո՛ն, օրը կհաս-

---

1 D երբ

2 D հա

3 D մոռնալով

նի, կերթանք օխթը հազար տարվա մեռելներուն կհավասարինք. ո՛չ եկեր ես, ո՛չ գնացեր...

– Էդպեսն է,– ասաց ծերերից ամենից երիտասարդը,– փուչ աշխարք, երա՛զ, երա՛զ, երա՛զ... գիտես թե՝ երեկվա տղեն եմ. մարդ երկու անգամ պտի աշխարք գա որ, համ առնի, փորձված գործ տեսնի... Է՛յ դիտի անցած օրեր, ո՞ւր եք կորեր, ո՞ւր, հետ դառեք մեկ բերանըմ հլա՛...

– Հակո՛, զուր կկանչես, զո՛ւր. էդ օրերեն օրըմ էլ հետ չի դառնա՝ աչքդ կոխես. չիբուխիս մուխի պես գնացին, թե կրնաս երեկվա մուխս բռնես, անցածդ օրդ էլ կբռնես:

– Է՛յ դիտի, Հակո, ի՛նչդ կտրիճ տղա էիր, տո՛, ի՛նչդ խելառն էիր. գեղ ու թաղ քթիվ կէնեիր լորիկ բռնելու, չա՛տ չոռ աչքն էիր, հա՛... չեղնի՞ համը բերանդ մնաց, քիչ էր, հա՞, հիմի կուզես փորձվա՞ծ աչխարք գաս, որ ձեռքեդ էլ բան չպրծնի,– ասաց ու կատակի համար իր ծխամորճը զարկեց նրա ծխամորճին:

– Միտքս չէ, հնութ բաներ են,– ասաց Հակո ամին, և կողքը քորելու համար, եռանդով քսվեց իր կուշտը նիրհող ծերուկին, որն այս շոշափումից չզարթնեց: Եվ հարեց.– Լավ քուն ունի Սիմոնը, հոգին հանդարտ է, արդար մարդ է:

– Խե՛ղճ Սիմոն, ի՛նչդ կանանչ-կտրիճ տղերք իրան աչքով հողը դրավ. են օրվանեն դմրած է. նստած տեղը կքնի:

– Աստծու բանը,– ասաց մեկը,– ո՞վ է մեռնողը, ո՞վ կմեռնի. է՛յ գիտի աշխարք, մարդ չի իմանա քու ելն ու մուտը... Փառք քեղեն Աստված, իրեք[1] օրվա մահ տաս, գետնին գերի չէղնինք. բան չեմ խնդրի՝ տղերքս, թոռ-

[1] D երեք

ներս երեսիս մե բուռ հող գցեն[1]*, արժանանամ Գաբրելական փողին, Աստծու լուս-երեսին... Էն տղեն էլ չեկավ՝ ընձի տուն տաներ, անօթի եմ, գիտես թե...*

Ուստային սաստիկ տխրեցրեց նրանց այս անկարող, այս ցավալի վիճակը, և վախենում էր նրանց նայել. սակայն թվում էր իրեն թե՝ կյանքի ճշմարտությունը, ինքը, բխում է սրանց չորացած բերանից և քայքայված մարմնից...

Եվ մի սև միտք սուր դանակի պես փարտեց անցավ նրա սրտի միջով – ինքն էլ է ծերանալու, ինքն էլ: Եվ տեսիլքի պես եկավ աչքին, ինչ որ գալու էր ապագայում.– ցամաքած, պստիկցած, կույր ու խուլ, պատերի տակ, ա՛յնքան խղճալի ու ողբալի... գերեզմանի բերանը այնպե՛ս մոտիկ... Մի-երկու վայրկյան, ապա բնազդական ներքին ակներից մի բուռն ու բորբ ալիք հորդեց հանկարծ Ուստայի էության մեջ՝ բոլոր թելերի վրա: Ելավ ոտքի, և առանց ծերերին նայելու, չտապ, ուղղվեց դյուղամեջ, կենսուրախ ու ապրող մարդկանց մոտ, որոնք թերևս պատահեին հիմա:

– «Հասկացանք[2]*, բանը ջահել էղնելու մեջն է, գլուխդ որ տաք էղնի*[3]*, աչխարքն էլ տաք կէղնի,– իրեն հետ խոսում էր Ուստան,– Հասկացանք*[4]*, հալևորներու արուևը պաղեր է, սրտերը՝ դարտկվեր, աչխարքն էլ նմին-նման պաղեր ու դարտկվեր: Քե՛ֆ էրա, հաչիվը մեկ է, ուզես-չուզես պտի ծերանաս: Նստած տեղդ էլ, քնած տեղդ էլ, ուտես-խմես էլ, պաս պահես էլ, գնտանի մեջ թե հարսի*

---

1 D քցեն

2 D Հասկցանք

3 D եղնի

4 D Հասկցանք

ծոցը, լաց էղնիս, թե պար գաս, ծերանաս պտի. լավն է՛ն է՝ քեֆով ապրիս, քեֆով ծերանաս»...

Սակայն այս կենսուրախ ալիքը նորից իջավ: Ծերերից ամենածերի դեղին պատկերը դերեզմանից հանած, այտերը փոս ընկած՝ հանկարծ ցցվեց աչքի առջև[1]. կարծես, խուսափելու համար նրանից, տենդոտ քայլեր առավ Ուստան, և մեկ էլ իրեն տեսավ գյուղից դուրս: Մտամոլոր քայլում էր ամայի հանդում, ուր միջօրեի արևի տակ անդուլ բզզում էին բզեզները և թռչունները՝ նետված քարի պես՝ չաչյունով սուրում-անցնում. սինձի կաթնահոտը՝ արևաջերմից դրդռված՝ պարուրել էր դաշտերի երեսը, ցողունների չաղը կանաչ ներկելով թրջում էր Ուստայի կոշիկները:

Գլուխն առած դնում էր Ուստան՝առանց հետ ու առաջ նայելու, և ծերունու պատկերը հետն էր քայլում անբաժան. հալածում էր նրան, հոգու վրա ամուր նստել՝ ասում էր նրան. «Երեկ ես քեզի պես էի, էգվան դուն կեղնիս ինձի պես, մի՛ վռազի, էգվա՛ն, էգվա՛ն»...

Ուստան նայեց իր ձեռներին — առողջ, ուժեղ, վարդագույն[2]. ու չհավատաց ծերունու ձայնին, սակայն, ձայնը նորից հնչեց. «Մի՛ պարծենա, էգվա՛ն, էգվա՛ն»...

Ու Ուստայի համար ա՛յնքան սիրելի աշխարհն, առօրյայի ա՛յնքան սիրելի իրերով հանկարծ անարժեք երևաց և տհաճ[3]: «Օրթէ Հարութի գլուխը կուլայի, իմ գլուխս եկավ. էսօր Սատանի ներհակ օրն էր ինձի համար. ես սովոր չեմ էսպիսի թինջուկ բաներու», մտմտաց յուրովի Ուստան և վախենալով դաշտերի միայնությունից, նորից

---

1 D առջևը

2 D վարդագույն

3 D տհաճելի

տենդոտ քայլերով, հետ դարձավ դյուղ, եկեղեցուց հեռավոր ուղի բռնելով:

Շտապում էր տուն հասնել. Ջավուշի կարոտն ուներ, Ջավուշի ներկայությունը կփարատեր տխուր մտքերը... Ճանապարհին միտքն ընկավ քրդերի խոսքը՝ վաղուց լսած իրանի մի քարվանսարայում. «Մեռնել էղներ[1], ա՛խ, ծերություն չէղներ[2]»: Անուշադիր շրջապատին, անվերջ ու մեքենաբար կրկնելով այս առածը՝ վերջապես իրեն ձգնց ընկերոջ մոտ:

Ջավուշը ճաշի սեղանը դրել սպասում էր վարպետին: Ճաշի վրա ինչքան ուզեց իր բնույթի համաձայն, խոսք ու զրույց խառնել աղ ու համեմի պես կերուխումին, չեղավ, Ջավուշն էր խոսում միայն, իսկ ինքը լսում ու չէր լսում միաժամանակ:

Ճաշից հետո փորձեց «տամա» խաղալ Ջավուշի հետ.— «Խաղով ընկնեմ, սիրտս բացվի», բայց կիսատ թողեց տամանն[3]: Ջավուշի զարմացական և ահաբեկված հարցերին խուսափուկ պատասխաններ էր տալիս Ուստան: Սակայն տխրության սովոր չէր նրա հոգին, ճիգ էր թափում հաղթահարելու այդ ճնշող չար շունչը. մի-երկու չոնգուռ ածեց, նույնիսկ զվարթ եղանակներ, բայց չատով թողեց, սիրտ չուներ... վերջապես խորհելով, որ իրեն բնավ վայել չէ քիթը կախել նստել, վեր կացավ, հադուստները փոխեց, դնաց Ջավուշի հետ քար տաշելու, աշխատանքի մեջ մոռանալու[4] ծերերից առթած տխրությանը:

---

1 D հլներ
2 D չէղներ
3 D չիք
4 D մոռնալու

Երեկոյան Ուստան ավելի թեթևացած տուն դարձավ, սակայն նորից այն չէր – մշտական զվարթ Ուստան, որի երեսից[1] պայծառ ժպիտը մի պահ միայն մայր կմտներ:

Սովորականից կանուխ պառկեց քնելու, վաղվան օրը շուտ սկսելու համար: Վաղը Բուլիկենց ամբարի հիմը պիտի դրվեր:

Խավարի մեջ՝ աչքերը գոց[2] սպասում էր քնի գալուն, բայց քունը չէր գալիս... հոգում ոտքի էին ելել[3] խառն ու խառն մտքեր... անցյալից ու ներկայից խուժեցին նրա վրա զանազան դեմքեր ու դեպքեր... ի՜նչքան կերպարանքներ ուրվացան աչքի առջև[4] – վարպետ ուռումները, հորենական ճերմակ ձին, որով փախավ գյուղից, սիրական ճերմակ ձին, որ ի՜նչպես տխուր աչքերը ձգելով Ուստայի աչքերին, վերջին չունչը փչեց Գյանջվա կողմերը, անթիվ հայ ու թուրք, աճամ, ասորի ու քուրդ, գյուղացիներ ու սանամայրեր[5]... պատկերի պես երևաց աչքին Զանգուի կամուրջի վրայի այն «չարվադարը», որ ջորու վալանն էր չիտկում... աչքի դիմաց տնկվեց երկայնավիզ մի ուղտ, որ մենակ արածում էր Արազի չոռուտների մեջ... ճրագի պես մեկ-մեկ տեսավ Թավրիզի խաղողի անվանի տեսակները... համրեց իր չինած տներն ու աղբյուրները, կապած օջախներն ու կամուրջները... համրեց, թե քանի գյուղ է եղել... և 45 համարի վրա գլուխը չաղվեց ու անվերջ կրկնում էր՝ 45, 45, 45... քանի հառաջացավ, միտքն ավելի մշուշվեց, պատկերները՝ խառնաշ-

---

1 D երեսից *փխ* երեսի վրայից

2 D + Ուստան

3 D Հոգում ոտքի էին ելել *փխ* մտածում էր

4 D առջևը

5 D սանամայրներ

վոթ՝ իրար մեջ անցան, թնջուկի պես՝ հազար թելեր իրար վրա, իրար մեջ – ծերունիների անթարթիչ աչքերը, սանամոր կարմիր թշերը, մի բառաչող կով, չարվադարի ջրին ու սանիկի փայտե ձին, և վերջը միտքը՝ փսորած՝ կանգ առնելով սանամայր Ծովինարի վրա՝ էլ չիմացավ Ուստան իրեն:

<«ԾԵՐԵՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՁՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ԾԵՐԵՐԸ

Մեկը ասում է, որ Մինաս ամին իսկի չի դիմանա ծնրուբյան, կճնշվի, կանիծե իրան բախտը, Աստծուն քար կքցե, աչքերը բռնվեր են, ճռնիկեն կքնկե, մեռնել չի ուզենա, կըսե 90 տարեկան եմ, դիտե թե հեչ չեմ ապրի, նորեն կուզեմ ապրի, մեռնելու անուն չէր ուզեր լսե, կըսե, օրթե մի սհաթ ավելի ապրիմ, էլի բան է, նպատակ կայ. մեռնելեն կսասանվի. քովը միշտ մարդ կպահե. քովը խուռնէ կենդանի, կվախնա մենակ մնա, մենակ տեղը մահեն կդարպանդի, ես կըսեմ դիվոտեր է. Աստծու դրուքի դեմ ինչ կրնա մարդ էննել, հող էինք, հող պտի դառնանք, ճար չկա. մենակ դու տաս, էնդի աչխարքի մնջ հոգով չկորինք. էսդիու աչխարքը մարմնի կորուս է. ի՞նչ ըսիր, Պոտոս քիհա...

– Մահը չոշափել էր նրանց:

– Ծերուբյան, ժամանակի հարվածները երեսին, մնջքին, աչքին:

2. ԾԵՐԵՐԸ

– Ինչքան մարդ է մեղնից առաջ եկել ու գնացել. ու էն աչխարհից լուր բերող չի եղել իսկի:

– Ամեն մարդ հարցում է արել ու անպատասխան մնում-պնացել:

– Կյանքդ... չես իմանա երբ եկավ, երբ գնաց:

– Բախտի գրքի մեջ ինձնից ի՞նչ գրեցավ, մենակ ցավերս:

– Կյանք... ցավերը երկար, ուրախությունը՝ կարճ:

3. ՆԱԽՃՎԱՆԻ ԾԵՐԵՐԸ

Ծերը բղավում էր ծերի ականջին, չէր լսում, չէր կարող լսել, ծերունին ուժ արևց ուժգին գոչելու, բայց ջանքը զուր անցավ – ձայնը առաջվանից ավելի թափով չհնչեց: Սպառված ձայն:

4. <Ի՞ՆՉ ՄԻՏՔ ՈՒՆԻ...>

– Ի՞նչ միտք ունի՝ ժանգ ժողվիս, էգուց պիտի թափես, երթաս, սատանոց պիտի մնաս:

– Կոշկոչ (կոշկոճ) ձեռներով, ճոպաննների պես հաստ երակներով: Ճաղատ, ցամաքած մսերով, գանգերը ուրվագծված: Սպասատավոր, կուզ, կռացած, երկու տակ եղած, գլուխները գետին հակված, վիրավոր աչքերով, անթարթիչ, անկոպ, կոպերից զուրկ:

5. ԾԵՐԵՐԸ

Խնդաց, աչքերը կորան խորխոմների տակ. անարյուն ընդերք, անատամ, երևանները ոմանց անմազ, ան-

Հոնք. ճերմակ հոնքերով: Ջոր ձեռքեր, դեղին մարած ձայներ:

6. <ԾԵՐԵՐԻ ՀԱՏՎԱԾԸ ԳՐԵԼԻՍ...>

1. Ծերերի հատվածը գրելիս կարդալ Տացուի մոր հետ խոսածը:

Ուստան նրան ասում է, որ արդեն մեծացել է, 40-ի կամ դուռն է, կամ երթիկը: Քառասուն էլնեի, ուրիշ բան: Պառավն ասում է, հիմի լավ հասակի մեջ ես, աշխարհը ձեռքեդ բաց մի թող, 10 տարի հետո ուշ կլինի. կուլաս, գլխուդ կուտաս, էլ օգուտ չի ունենա, թռած է:

2. Ուստան հայելուց հետո՝ երբ նայեց Անդրանիկին, տխրեց՝ հիշելով սուլթանին սպանելու խոստումը, և ավելի տխրեց՝ տեսնելով կյանքի աստիճանները...

7. <ՀՈՂԱԲՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻՆԵՐ...>

– Հողաբույր ծերուներ:
– Էս գործի մեջ սատանի մատը կա:
– Սրա եղենն ի՞նչ է = էությունը, տեսակը:
– Ինչո՞ւ ես տխուր, ի՞նչ է եղել.
– Ամեն բան եղել է:

8. ԿԱՐՈՆ ԵՎ ԾԵՐԵՐԸ

Երբ Կարոն ծերերին տեսավ և լսեց նրանց զրույցը, շատ տխրեց, մռայլվեց, հուսահատվեց... և ասաց յուրովի.

Հարուβի նման եմ դառնում. Հարուβի հոգին մեջս մտավ... տո՛, Հարուβին ինչի՞ ես լսում, քանի որ Աստված կա, ասել է՝ ծերանալուց, մեռնելուց վախենալու է. Աստված ստեղծել է և բարի է և ողորմած, որ չի կորցնե իրան ստեղծածին:

Եվ սիրտիվեց, հանգստացավ:

– Մարդիկ Աստծուն ստեղծել են մահի վախից: Չհաշտվելով մահի հետ, ստեղծել են Աստծուն:

Եթե մահը չլիներ, Աստված էլ չէր ստեղծվի: Պետք չէր: Ավելորդ բան էր:

9. ԾԵՐԵՐԸ

– Ծերուβյունն ի՞նչ է – հեչ գիտեք. ինձի համար չկար, ես գիտեի β՝ հեչ չպիտի ծերանամ. ինձի համար ծերուβյուն չկա:

– Մի չա՛տ դարդ էր. ջահելներն էլ պտի ծերանան, գան մեր օրին: Աշխարքի դրուքն էդպես է:

10. ԾԵՐԵՐԸ

Ուստան լսում էր նրանց:

Հիմի հեչ բան աչքիս չի էրևա, հառաջ էլի, անցած օրերս միտքս էի բերում, ուրախանում կամ տխրում, հիմի էդ էլ չկա, անցած կյանքս էլ աչքիս չի էրևա: Տղերք, β՛ոռներ աչքիս չեն էրևա. հեչ բան սրտիս չի դարկե. ինձ-

նից առաջ սիրտս մեռել է: Ամեն բան չահելության մեջն է. սեր, կնիկ, քեֆ, տղա, հարստություն չահելության ժամանակ են, էն ժամանակ արժեք ունի, կա հաստատ. հիմի, ծեր ժամանակ, հնչ բան չկա: Ջահել մարդն է մարդ. իսկական մարդը – չահելն է. կյանք, կռիվ, կրակ, սեր, ձի, սար ու ձոր... հիմի ի՞նչ ենք մենք... էլ ինչո՞ւ ենք ապրում, կուզենք ապրել. էլ աշխարքը մեզի ի՛նչ պիտի տա. էլ բան չունի տալու. տվել է, ինչ որ պիտի տար... տվածը հետ է առնում. օր-օրի վրա մեզի թալանում է, կողոպտում. վերջին տվածը մի բուռն հողն է, էն էլ թող չուտով տա, երթանք տեղավորվենք, վերջանա...

– Սարո ամի, չիտակ կխոսիս, ես էլ էդման կմտքեմ. գիտեմ, որ մենք կորած ենք, բայց արի տես, որ իսկի հավատս չի գա, թե պիտի մեռնեմ: Գիտես թե մահը ինձի համար չէ. ընկերներս կմեռնին, ինձնից չահելները կմեռնին, բայց ես ինձի մեռնելու տեղ չեմ դնե. ձեռներս կդողան, ծնկներս կդողան, աչքերս լավ չի տեսնի, ախորժակ չունիմ, քունս չի տանի, բայց օր-օրի վրա, ինձի դերեզմանից հեռու կտեսնիմ, քանի կմոտենամ գերեզմանին, էնքան՝ ինձի կերևա թե, կհեռանամ դերեզմանից ու դպա կյանքը կերթամ: Արի տես, որ դեռ բան կսպասեմ աշխարքեն... սիրտս մահի մասին չմտածե... ի՛նչ կասեք էս բանի մասին, ա՛յ ընկերներ...– հարցրեց քովի նստածներին:

11. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԾԵՐԵՐԸ

Ծերեր – կնճիռներ, խորունկ ծալքեր երեսների վրա, կախված թշերով, կզակների տակ ահագին թուլլ մսեր կախված, ամբողջ մարմինը դեպի ներքև, դեպի հողը...

Աչքերը հագիվ տեսանելի, կնճիռների մեջ: Քիթը բերանին հասած, կորաքամակ, երկու տակ եղած, աղեղ դառած:

Մորթերը դեղին, չորացած, անարյուն: Մրսած, դիակնացած:

Ուստան նայեց, սարսափեց, նայեց իր ձեռքերին, կյանքով, ուրախ արյունը խփում է, պնդում է... մեջքին թևեր կան՝ թռնելու...

Ա՛խ քաշեց, դիտնալով՝ որ սա անցնելու է և գալու է ծերուքյունը, ցամքիլը...

Մխիթարեց իրան՝ որ ինքը էդպես գնչ չի ծերանալու...

Մտածում էր – «Գնչ բան է ծերուքյունը, նաև էլ մահը... բայց վախնալու ի՞նչ կա որ... Աստված կա՞, չէ՞, քանի որ կա – վախնալու հնչ բան չկա: Ինքն ստեղծել է, ինքն էլ կմեռցնե. ինքը դիտե իրեն բանը. ամեն բան Աստծու ձեռքն է, ամեն բան Աստծու ձեռքից է եղել: Մենք պտի միայն նրա հրամանը կատարենք...

Էշը տիրոջ ուզած տեղը կապե. կորի թե մնա, քու գործդ չէ. քեզնից հաչիվ ուզող չկա:

(Այս գուցե Հարուքի մոտն ասել):

12. ԾԵՐԵՐԸ

Կարոն լսում էր ծերերին:

Մեկն ասաց, թե Ամոյենց Եղսոն էս քանի ամիս է դողինք է ընկել, աջ ձեռքն ու ոտքը թլկվել է, մեկ աչքը կուրացել է, լեզուն կիսատ բռնվել, մեկ խոսքով՝ կիսվել է, էլի ուզում է ապրի. թե որ ասում են, թե մեռիր, բոլ է, ասում է՝ էս երթկից իջնող լույսն էլ հերիք է ինձի, որ ապրիմ ու գոհ էղնիմ, փառք տամ Աստծուն...

– Լսող ծերերից մեկն ասաց. Հալբաթ որ գերեզմանի մեջ որդերն ուտելուց գողինքին մեջ պառկելն 1000 անգամ լավ է:

13. <ՄԵՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ...>

Մերերը խոսում են կյանքի անցավորությունից, գուցե և պոլիտիկից, բայց դա ուրիշ առթիվ. հոպպոն, ինգլիզ, ռուս, լամսի, ֆռանկ:

14. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԵՐԿՈՒ ՄԵՐՈՒՆԻ

Մի ծերունի մյուսին ասում է –

– Տո, Գասպար, Աստված քեզի բարի տա, ի՞նչ ես դառն: Ի՛նչ մենձ աչքեր ունեիր, հիմի պստիկցել, խավրել, կոպերդ ճորթել է: Անկանջներդ լոշտակ-լոշտակ կախվել:

– Բա, դո՛ւ, Մնո, քեզի չես տեսնի. ի՛նչ սիրուն քիթ ունեիր, հիմի [խորոված] լխկած բողկի պես կախվել է բերնիդ վրա ու կծլլա...

– Է՛հ, [ծերուԹյուն], ծերուԹյուն, տունդ չքանդվի, ձեռքերս էլ են կարճցել, դլխուս չէ հասնի, ծնկներս կդողան, ոտներս կփարթեմ, ըսես, մե կարաս դինի եմ խմե... մեջքս փետ է դարձե, չեմ կրնա կզի... բերանս համ չկա, քուն չունիմ, թուքս կվազե...

<Է. ԳԼՈՒԽ>

<ՌԵՆ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ>

Երեկոյան դեմ Ուստան ու Քերոբը նոր էին սկսել թեյ խմել, երբ շվաքում չների հաչոց բարձրացավ, Քերոբը դուրս գնաց, ու քիչ անց, ներս մտավ հետը բերելով երեք անծանոթ մարդիկ, որոնք անվստահ քայլերով, իրար ետևից չեմքեցին այվանի դուռը: Նրանցից մեծը, 50-55 տարեկան, պատկառելի, ազդեցիկ դեմքով ու շարժուձևով մի մարդ մոտեցավ Ուստային՝ ձեռք տվեց. նրան հետևեցին իր կինը և մի 18 տարեկան սիրուն, առողջ պատանի, երեքն էլ հին, մաշված հագուստների մեջ էին, փոշիով ծածկված:

— Բարով եք եկել, հազար բարին, համեցեք նստեք, չայ անուշ անենք,— ասաց Ուստան իր սովորական սրտաբաց հյուրասիրությամբ տեղ ցույց տալով իր դիմացը:

Անծանոթի կինը քաշվելով նստեց՝ գլուխը կախ արած. պատանին դեռ ոտքի վրա մնաց կանգնած, իսկ ընտանիքի հայրը, գլխարկը հանեց, սրբելով քրտնաթոր ճակատը, դիմեց Ուստային.

— Հրամանքներդ վարպետ կարոն եք, չէ՞:

Ուստան գլխով արավ և թյութունի բերանը (կափարիչը) բացած՝ որ մի առանձին հարգանքի նշան է, մատուցեց նրան, որը մի պապիրոս փաթաթելով հանդարտ ասաց.

– Անունդ լսեցի. դեղերը կասեին, որ խղճով, հացով մարդ ես, կուշտդ եկա...– ապա ծուխը կրծքից հանելով, շարունակեց,– օճախդ եմ ընկել հիմի, ես էլ օճախի տեր էի, օրը տասը օտար հացս կկտրեր, ինձի ձեռք բռնեն, Աստված էլ քեզ կհասնի:

– Աստծու տվածը ձեղի չեմ խնայի,– հաստատակամ ձայնով ասաց Ուստան,– մենակ ներող եղնք հարցնեմ. ո՞ւր տեղեն եք, ուր կերթայիք...

– Ես Մշու Ցրոնք գյուղի ռեսն եմ, Ռես-Հոսեն. էս էլ,– ցույց տալով կնոջը,– իմ մեկուճար, աչքի-լույս տղայիս մերն է. Մուշեն գաղթ եղել, ընկել ենք աշխարհ, քամու բերան... էսդին-էնդին. [կոլորտինք] ո՞ւր երթալ-ներս չգիտենք, կուզենք մի տեղ դադար առնենք, մի կտոր հաց վաստակենք, ապրինք, մինչի աշխարք աշխարք ըլնի:

– Ռես, հենց հիմի Մուշեն ելել, կուգաս,– հարցրեց Քերոբը:

– Չէ, ախպարս, հերու աչունեն մինչի էսօր կոլորտենք. չա՛տ փորձանքներև անցանք, չա՛տ չար ու չարիք տեսանք, իմ գլխի պատմությունը երկար է... Տաճիկի զուլումեն փախանք...– կտրեց իր կցկտուր խոսքը Ռեսը ծխախոտի ծուխը կարոտով ծծելով:

– Ի՛նչ քաշեցինք, ի՛նչ քաշեցինք այլազգի ձեռքեն. մեր հոգին քար է, հոգի էր, որ դիմացավ...– ասաց ցած ձայնով Ռեսի կինը՝ աչքերը դեռնից չբարձրացնելով:– Հոգի հետ մաղվեցինք, քարերի հետ քաղվեցինք...

Ուստա Կարոյին առաջին հայացքից դուր եկավ Ռեսը, նրա մեջ նախազգալով ազնվական մարդը. և համակված նրանց վիճակից, զգացված ասաց.

– Ռես ջան, քուրս, անցածն անցած է. դարդ մի ա-րեք, Քերոբ ջան, չայ լիցի, հաց անո՛ւշ արեք,– ու դառ-

նալով դեպի Ռեսի որդուն,— սիրուն տղա, անունդ ինձ բաչխե:

— Կրպո, քեզի ծառա,— պատասխան տվեց պատանին:

— Աստծուն ծառա. ասել է՝ անուններս մեկ է,— ու ձեռքին բռնելով նստեցրեց մոտը, թեյն ու հաց-պանիրը առջևը դնելով:

Բոլորը սկսեցին լուռ ու մունջ հաց ուտել — թեյ խմել. ապա Ուստան նկատելով, որ Ռեսը վերջացրել է ուտելը, հարցրեց.

— Ռես-Հոսե, օրթե հիմի սիրտ ունիս, գլխիդ գալածներն մի-երկու բան պատմես, լսենք. չա՜տ կուզենայի իմանալ:

— Վարպետ, ի՜նչ ասեմ, չգիտեմ, էնա՛ ձեզի հայտնի է թե ինչ զազան մարդիկ են թյուրքն ու քյուրդը. էն արուներբու սասանական գազաններն էլ գեչ են, օձի կաթ են էնոնք, էնոնց դիչուքյունը անուն չունի, նման չունի... Ա՜խ, հայերը ինչ կքաչեն, ի՜նչ կքաչեն էնոնց ձեռքեն, լեզուն չի կրնա պատմե. երկաթ-ապառաժ ըլներ մեր տեղը՝ հալել էր, մոմի պես հալել. ամեն օր, ամեն օր արուն կլացացնեն հային, կմորթեն, կվառեն, կթալնեն, աղջիկդ-կնիկդ ձեռքեդ կքաչեն կտաննեն. էնոնք...

— Բարեբախտաբար կրակը թափվի էնոնց գլխին, էրվին-խորովին, մի պուտ ջուր չգտնին,— Ռեսի խոսքը ընդհատեց կինը այրված ձայնով,— ա՜խ, էնոնք մեծով-պստիկով, էգով-որձով հողը լիզեն, չկշտ<ան>ան. ինչ որ էնոնք հայի գլխուն կբերեն, դժոխքի մեջն էլ նմանը չկա. հայի տուն չմնաց, հայի կտրիճ չմնաց, մեռանք, մարանք. ա՜խ, Սուրբ Կարապետ, դու գիտես, էնոնց չթողնես, քո արդար ողորմությանդ մեռնիմ...

— Հա, էն կըսեի,— հանդարտ չարունակեց Ռեսը,— քյուրդ-թյուրք՝ երկուսն էլ մի դևի ծնունդ, հայի արնան

ծարավ են, աչք տնկել են հայի հացին. այլազգի համար հային սպանել, հային դողնալ – դրախտ չեննաթ երթալու է՛ն կարճ ճամբան է. էնոնց Աստվածն էլ, Մահմեդն էլ, դող է, ավազակ, արուեստներ, պոռնիկ, պոռնիկի տղա. Հա, էն կասեի, որ ես Յրոնք գեղի Ռեսն էի, մենք վարպետ չան, համբա տուն էինք, 12 լուծ դուքան դուրս կելներ մեր դռնեն. Աստծու ամեն բարիքով լիքն էր մեր դուռն-երթիկ, ամբար-փեթակ, ոչխարեն-ոչխար, ինչքան ասես, ձիեն – ի՛նչ հրեղեն ձիեր, էլ ջաղաց, էլ ձեթհանք. մեր սեղանը չէր վեր քաղվի. օխտն օտարը մեր դուռը կիջներ, քյուրտ ըլնի, թյուրք ըլնի, չերքեզ ըլնի,– մեկ է, ամենքն էլ հարկով ու հարգով կպատվեին... հիմի էդ ամենը մոխիր. մոխիր, գերեզման...

Ռես-Հոսեն լռեց, կնճիռներն խորացրած՝ մտքերն էր հավաքում:

Ուստան մի պապիրոս չինեց, և թղթի ծայրերը իրար չմիացրած տվեց Ռեսին, որ սա ինքը իր թքով կպցնե. սա արդեն ամենամեծ հարգանքի նշանն էր, որ Ուստան կարող էր ցույց տալ որևէ մեկին:

– Հա՛, վարպետ չան, երբ է եղած, որ տաճիկ ու մահմեդական մեկել չները Հայու չեն տուն տեսնին ու հնար չմտածեն քանդելու, ավերելու. էնոնց աչքերը բռնե իմ տված հացը. էնքան անոթի թյուրք ու քրդի ու չերքեզի ձեռք եմ բռնել, ոտքի վրա կանգնեցրել... էսօրեն երեք տարի առաջ քյուրդ Ռոզակ աղայի խոլամները զարկին տարան մեր նախիրը. իմ տղերքը՝ լուսահոգի Աստատուրն ու Խաչատուրը հոտաղների ու մշակների հետներն առած, եռևներն ընկան, կռիվ եղավ – մերոնք տվին սատկացրին խոլամները ու նախիրը ետ բերին. թյուրք կառավարութիյուն ուզեց բռնել բանդ դնել ու բանդի մեջ մեռցնել մեր տղերքը. ես էլ չա՛տ ոսկի տվի էսոր, էնոր,

ու տղերքը ազատեցի. մենակ արի տես որ, քյուրդեր հանգիստ չմնացին. ասած է, հազար տարի կանցնի, քյուրդի ոխը չի անցնի. օրեն մեկը իմ մեծ տղան Աստուր քաղքեն մենակ կուգար. Ռոզակ՝ քարի տակեն տվեց սպանեց իմ կտրիճ Աստուր ու ձին տարավ: Գնացինք կառավարության դուռ դանգատ, է՛խ, վարպե՛տ, ինչ արժե հայու դանդատ. կառավարություն մեզի վռնդեց դուրս թե՝ դուք սպանեցիք Ռոզակի խոլամներ, Ռոզակն էլ ձեզ պիտի սպանե, արդարություն էդ է, ուր կուզեք, գնացեք: Իմ միջնակ տղան Խաչատուր, էս անիրավություն, էս անարդարություն չկրցավ տանել, ասավ. հե՛ր, ես պիտի իմ ախբոր Ասպատուրի վրեժ հանեմ, ես իմ մոր անարատ կաթ չեմ կերած, հապա չան կաթ, օրթե օխտը տակ վրեժ չհանեմ. հեր, օրհնե ինձի՝ ես կերթամ... էսման ասավ ու գնաց. գնաց Սասուն, միացավ ընկերության Ս. Մրագրի դաշնակի տղերանցը, ու էնոնց գլուխ-գլխավորի Գէորգ-Զավուշին...

– Ո՞վ է էդ Գէորգ Զավուշը, չեմ լսած անունը,– հարցրեց Ուստան,– Սերոբ փաշային, Խանը, Անդրանիկը դիտեմ, էդ չդիտեմ:

– Գեորգ Զավուշ, օօո՛հ, Գեորգ Զավուշ. տղոց քաջը կհարցնես, էն Գեորգ Զավուշն է. էն վախն ի՞նչ է – չգիտե. էն Սասնա սարերի արծիվն է, որ կիջնա Մշու դաշտ, կզարնե թշնամին ու նորեն կերթա կթառի Անդոքա սար, Մխրին-կատար. Գեորգ Զավուշն էն է, որ տղա ատեն, իրեն իսկ հրացան ունենալու համար, հոր տնեն ծածուկ, փախավ գնաց Հալապ, մեկ ամիս ճամբա, էնտեղ փող վաստակեց, հրացան առավ եկավ Սասուն: Գեորգ Զավուշ հրացան ավելի կսիրե ու կպաշտե, քան քահանան իր մաշտոց ու մանտատուփ, քան դուսան իր սազ, քան փեսեն իր հարս: Էն կասե, որ ղենք կփրկե ազդ, ղենք, ղենք:

էն կասե, որ մեկ չախմախ հրացան ավելի բարեկամ-պաշտպան է հայու ազգին, քան խաչապաշտ ֆռանկ ու ինդլիզ հայու ազգին: Էն աչքը չի կպցնի, մինչի մի մահ-մեդական չուն էդ շաբթի մեջ սատկացրած չըլնի: Կառավարությունն ամիս մեկ անգամ ասկյար կղրկե էնոր բռնելու, ասկյար կզարդվի, ետ կուգա: Էնոր գլուխ 1000 ոսկի է գին կտրած, ու վերի հավք անգամ չի իչխնա էնոր գլխի վերև պըտըտի...

– Ողջ է հիմի Գեորգ Ջավուշ կտրիճը,– հարցրեց Ուստան:

– Էնոր մահ չկա, էն կտրիճությանն չափ էլ խելք ունի, ջաղացի քարի տակ քցես, դուրս կգա: Ջավուշ կտրիճների էդ կտրիճ՝ տղա ժամանակ կոտրեց Մշու բանդի երկաթե ճաղեր ու փախավ Սասուն. էն ազգի համար էր բռնուկ, շղթա դրած: Էնոր ի՞նչը գովամ ես, էնոր նշանը իսկի ղուր չի անցնի, էն թշնամուն կասե՝ խեղճ ես, ետ դառ, ա՛յ, ձիուդ ականջը կծակեմ, ու դնդակը ձիու ականջով կանցնե: Էն մատնիքի միջով հնովենն դնդակը կսողանցե: Երբ որ Սերոբ փաշան՝ նահատակվավ, Մշու դաշտ ու Ախլաթ սուգ կապեց, թե ո՞վ պիտի վերցնե Սերոբի թուր, հայու ազգ, հայու հավատք պաշտպանե: Էն՝ Գեորգ Ջավուշն էր, որ ազգի ճակատ պայծառ պահեց, Սերոբի թուր վերցուց. դիտես ինչ տեսակ (դինաս իմալ) ազնիվ թուր էր Սերոբի թուր: Օր մի չեղավ, որ էդ թուր անպատիվ մնար. էդ թուր ի՛նչ ազնավուր կտրիճների ձեռքերով է անցել, [ի՞նչքան] քանի թշնամու մուխ է մարել, հայու արցունք սրբել: Էդ թուր լուսահոգի Գուրգեն տված Սերոբին, լուսահոգի Աբրոն էն տված Գուրգենին, լուսահոգի Լևոն էն տված Աբրոյին, լուսահոգի Արաբոն էն տված Լևոնին, մնծ Բյուրոն էն տված Արաբոյին: Էդ թուրով Ջավուշ կտրեց դևսալիլ աղայի գլուխ,

որ դավով սպանեց զՍերոբ փաշա: Էդ թուրի առջև թուր չի կայնի, զէդ թուր կհաղթե մենակ Հավլունի Թուր Կեծակին, Պռոշ Թագավորու Թուր Կնծակին, որ կհանդչի մեջ Լաթարա ծովուն. ու վով որ զէդ թուր հանե Լաթարա ծովու մեջեն, էն կփրկե զհայու ազգ անօրեններեն:

Ուստան վաղուց լսել էր Պռոշ Թագավորի թուրի զրույցը, դրա համար էլ չհետաքրքրվեց, և կտրելով Ռևսի ոգևորված պատմությունը, հարցրեց.

— Ռևս ջան, ո՞ւր մնաց, ի՜նչ եղավ քո խաչատուր տղան:

— Իմ խաչատուր տղան նահատակվեցավ...— հանդարտ, բայց սրտամորմոք ձայնով պատասխանեց Ռևսը:

Պատանի Կրպոն փղձկաց, իսկ մայրը լացող որդուն գորովով կրծքին սեղմելով, խորունկ, անհույս հառաչեց.

— Ա՜խ, հովերուն դեմ մի բուռ փոշի ըլնեի, մեր չըլնեի, ա՜խ, ազի՜զ, ազի՜զ ձագուկներս:

Տիրեց մի ծանր լռություն: Ուստան չէր իմանում, ինչպես, ինչ խոսքերով մխիթարեր նրանց. լռությունը խզեց Ռևսը, իրեն հատուկ վեհ հանդարտությամբ պատմելով ի կյանքի տխուր վեպը:

— Իմ կտրիճ խաչատուր տղան հանեց լուսահոգի Աստուրի վրեժ, սատկցուց Ռոզակին, ելավ Գեորգ Զավուշի հետ ամեն կռիվների մեջ: Կառավարությունն ինձի չատ նեղեց, ամեն հեղ տղայիս տեղը կհարցներ, ես էլ թե՝ Ռուսի հողն է փախեր, ամեն հեղ կաշառք կուտայի, օձիքս կազատեի, էդպես քանդվա, ոչխար, տավար ծախծխեցի, կաշառ տալու համար: Հերու աչուն խաչատուր իջավ սարընն, եկավ մեղի տես, նստել կեսօրին հաց կուտեինք, մեկ էլ դուռը զարկեցին, թե բացեք. եկողներ կառավարության մարդիկ էին. մեր դեղ վատակ մարդիկ կան եղեր, լուր են տվել, թե Ռևս-Հոսևի տղա խաչատուր էստեղ է.

երբ որ դուռ ծեծեցին, հասկացանք բանի էությունը: Խաչատուր ասավ. հեր, ես ձեռք չեմ ընկնի, կկռվեմ, կմեռցնեմ, կմեռնիմ: Ես էլ ասի. ես էլ քեզի հետ, կկռվեմ, կմեռնիմ, հաչիվ մեկ է, էսպես էլ կորած ենք, էնպես էլ: Հեր ու տղա բռնեցինք մեր տան պատուհաններ ու մեր հրացաններեն կրակ թափինք թյուրք զաբթիաների վրա, որ եկել էին Խաչատուրին բռնելու ինձ էլ հետ, ու մեր տունը քանդելու հիմն-արեգական հանելու: Կրպոն ինձի փամբուշտ կուտար, իմ նշանած էլ Խաչատուրին: Վարպետ ախբեր, իմ նշանած, քու քուր Մարիամ, փամբուշտներ կպագեր, կհամբուրեր կուտար Խաչատուրին, Թշնամին չէր իշխնա մոտենալ մեր դռանը: Ես ասեմ 10 այլազգ, դու ասա 15 չուն այլազգ սատկցուցինք: Մեկ էլ գնդակ դիպավ Խաչատուրի ճակատին, Խաչատուր «Ա՛խ, Հայաստան, հայու ազգ» ասելով սուրբ հոգին տվավ մեր աչքի առջև: Ես սիրտ արի, ասի Կրպոյին. տղա՛, դու Ռեսի տղան ես, քու ախբրտոնց ախբերը, աո հրացան, կռվի, զարկ, մեռնել կա, ողջ-ողջ ձեռք ընկնել չկա. օրթե ես ընկնեմ, դու էլի կռվի, քանի ողջ ես: Կրպոն ախբոր տեղը բռնած կկռվեր, Մարիամն էլ մեկ էնոր փամբուշտ կհասցներ, մեկ ինձ: Էսպես մուրթը կոխեց, Թշնամին փախավ, մի-երկու ծածուկ պահապան դնելով մեր դռան առաջ՝ մեկէլ օրը ավելի մեծ զորքով գալու համար: Ես էլ միքա արի, որ մեզի ազատում չկա, իմ ձեռքով գերեզման փորեցի մեր Թոնրի գլուխ, իմ հոգի, իմ աչքի լույս Խաչատուրին թաղեցի, ու գաղտուկ մեր տան ետևի պատ ծակեցինք, դուրս եկանք ու գիշերանց փախանք ուրիշ հայու գեղ, էնտեղ բարեկամի տուն պահ մտանք: Մեկէլ օր ասկյարը եկել էր մեր տուն մտել կողոպտել, քանդել, վառել, գնացել է: Ես կուզեի երթայի Գեորգ Զավուշի մոտ, զինվոր գրվեի, մեկէլ Ընկերության տղերք, Աստծու աչք

էնոնց վրա ըլնի, եկան բարև բերին իրիցու տղա Հրայր-Արմենակեն, թե կուզե, որ դու քու ընտանիք առնիս Ռուսի հողն երթաս, թե Ռեսը ազգի համար երկու տղա մատաղ տվավ, տուն-տեղ տվավ, հերիք է, թող կրպոն ապրի, Ռեսի ծուխ չմարի. ու Ընկերության տղերք մեզի գեղեգեղ պահելով հասցուցին Ռուսի հողը... Հիմի էսպես – ձեռներս ծոցս մնացինք մոլոր ու ոլոր...

Ռեսի պատմության ամբողջ ընթացքին Ռեսի կինը աչքերը քամում էր. Ուստան խորապես զգացված ասաց.

– Քուրիկ ջան, մի լաց, մի լաց, Աստված ողորմած է:

– Չէ, տաճիկը ողորմած չէ, թյուրքը գութ չունի,– լացով պատասխանեց Մարիամը:

– Տաճիկը, թյուրքը չեմ ասե, քուրիկ, կասեմ՝ Աստված ողորմած է,– կրկնեց Ուստան:

– Հա, ես էլ էն կասեմ, տաճիկը հոգի չունի, խիղճ չունի:

Ուստան մնաց չվարած, նրան թվաց, թե խեղճ կինը ցավից խելքը կորցրել է: Ռեսը խոսք առաջ, ասաց.

– Չէ՞ որ, վարպետ ջան, իմ նչանածը Աստծու հետ խոով է. էն կասե, թե Աստված տաճկցել է, թյուրքացել է. ու Աստծու անունը ուխտել է բերանը չառնել մինչի մահ, ու ավուր դատաստանին Աստծու հետ կռիվ ու հաչիվ ունի...

Ուստան ու Քերոբը զարհուրած նայում էին Մարիամի երեսին:

– Բա, էն տաճկացել է, էն որ կասեն՝ ամենազոր է, ու ամենաարդար է՝ իր աչքով կտեսնի խաչապաչտ հայու չարդն ու կոտորումը. էն կտեսնի, թե այլազգ [ինչպես] ո՞րման մոր աչքի առաջ մանուկ կմորթեն, էն օգնության չի հասնի, իր խաչ, իր ավետարան, իր ժամ կպղծեն, կթքեն, չնոց կդարձնեն, էն բան չի ասե: Էն չի թյուր-

քացել, բա ե՞ս եմ թյուրքացել: Էնոր որդին էլ է թյուրքացել-տաճկացել: Հայր էդոր հավատի համար ամեն օր կխաչվի անօրեն մահմեդականի ձեռքին, էն իր հավատի մարդոց փրկելու չի գա: Ես էդոնց՝ էդ հոր ու տպայի անուն բերանս չեմ առնի, էդոնք թյուրք են դարձել, թյուրք-տաճիկ...

Ռևոը նորից խոսաց.

— Վարպետ ջան, իմ նշանածը Բրիտոոսի հետն էլ է խոսով. Հայր-Աստված ու որդին Բրիտոոս կհաշվի տաճկացած: Ժամ որ կերթա, էնոնց պատկերներին չի նայի, էնոնց առաջ մոմ չի վառի. հապա Սուրբ-Կարապետին կաղոթի, էնոր կխնդրի, էնոր մոմ կվառի: Ինչքա՜ն կխրատեմ, չի րնի:

— Հա՛, Սուրբ Կարապետ, մեռնիմ էնոր դորքին, էն հայի վրա դութ ունի: Էն տաճիկ աստվածները չխնայեցին իմ թագավոր, իմ կարիճ Աստուրին ու Նաչաստուրին, որ իրանց էի տվել, մենակ Սուրբ Կարապետ իմ կրպոն ինձի բաշխեց, որ իրեն էի նվեր արել:

Ուստայի զարմացական հարցին Ռևոը պատասխանեց բացատրելով Մարիամի անորոշ տածները: Երկար ժամանակ նրանք զավակ չէին ունենում, ուխտ են անում մարդ ու կին Աստծուն, Բրիտոոսին ու Սուրբ Կարապին, որ եթե զավակ ունենան, նվիրաբերեն նրանց՝ պատշաճ անուններով. այդպիսով առաջնեկ որդին կոչվեցավ Աստվածատուր, երկրորդը — Նաչաստուր, երրորդը՝ Կարապետ: Սակայն Աստված ու Բրիտոոս չուզեցին պաշտպանել երկու՝ իրենց նվիրած երիտասարդների կյանքը, այնինչ Մշու պահապան Սուրբ Կարապետը հովանի եղավ իր Կրպոյին, կռվից ազատեց ու ողջ-առողջ հասցրեց Ռուսի հողը:

Երբ Ռևոը ավարտեց իր բացատրությունը, Ուստան հարգանքով դարձավ որդեկորույս Մարիամին:

— Մի լար, թուրիկ, դնչ օրը կանցնի, մի լար. քու աղկրքդ ապրի համար նահատակվել են, էդով մխիթարվի՛ր, էդ մեծ բան է... Հիմի, Բերոր, Մարիամ քրոջս ու Կրպոյին տար տուն, Եղտո Հարսիկին ասա, որ լավ պատիվ անեն, մենք Ռևսի հետ կխոսինք:

Բերորը առաջնորդից մորը և տղային մեծ տուներ: /և բիչ անց դարձավ նկատ:/

Ուստան Ռևսին խոստացավ իր բոլոր աջակցությունը, որ հոր պես նայի Ռևսի վրա, ձեռք բռնեն ամեն կերպ, թող Ռևսը հանդիստ սրտով գլուխը բարձին դնեն այսուհետ:

— Ռևս ջան,— ոգևորված ասաց Ուստան առանց երկար ու բարակ մտածելու,— Կրպոն իմ տղան է, ես էնոր ուսումի կուտամ ու արհեստ կսորվեցնեմ, քեզ էլ փող կուտամ, ոտաց վրա դուրս կանես, իմ տունս — քուկդ է, իմ քաակը — քուկդ է:

Ռևսի աչքերը լցվեցին ու չկարողացավ խոսքով շնորհակալություն հայտնել: Ուստան հասկացավ նրա հոգեկան հուզված վիճակը, մի պահ լռեց, ապա վեր կացավ օդիի չիշը բերեց, և լցրեց մի բաժակ իրեն, մի բաժակ Ռևսին:

— Ռևս ջան, իմանք քո տղաների հոգու պայծառության համար, որ իրենց մատաղ կյանքը հայոց ազգին սիրեն. ամեն:

Ռևսը չափազանց զգացված այս կենացի վրա, ասաց.

— Ամեն. թող ազգը ազատվի էն անօրեն թյուրք-քրդի լուծեն, ամենքս էլ մատաղ ըլնինք: Վարպետ ջան, էս օր չէ, որ հայը կթաշե, ի՞նչ է հայի մեղքը — հայը արդարություն կուզե, ազատություն կուզե, իրավունք կուզե, ինչ որ ամեն մարդ պիտի ուննենա և ունի, մենակ հայը չունի: Ու հային իրավունք տալու տեղակ էդ <անընթ.> պապաններր կատղած կվռափին մեր վրա, կջարդեն ու

կփրթեն: [Էնոնք կուզեն] Հաստատ կասե իմ նչանածր, վերև Աստված չկա, ներքև էլ – արդար դատաստան: Էդ թյուրք-քյուրդ մարդապկնները կուզեն, որ հայը միշտ ռայա մնա, իրենց ճորտ ու ծառա, դների ու դրաստ, բայց հայ մարդը չա՛տ կորիճ է, չատ խելացի է, չի կրնա էդպես մնա. էն ազգի համար բան չի խնայե, մենակ անտեր է, ու զենք չունի, զենք, զենք:

– Բա ի՞նչ կանեն մեր կոմիտեները, դաշնակցությունը, զենք չե՞ն բերե,– հարցրեց Ռւսոան:

– Աստված էնոնց հազար կյանք տա, էնոնք էլ որ չըլնին, մենք հող ու մոխիր ենք, բայց ազգն էլ պիտի էնոնց կռնակ ըլնի, փող տա, զենք տա, բայց ի՛նչ կասես, որ հայի հարուստը կռապաշտի հոգի ունի...

Ռւսոան անխոս՝ հավանության նշան տվեց գլխի շարժումով:

– Վարպետ,– շարունակեց Ռեսը,– թյուրք-քյուրդ վախկոտ դորտեր են, էնոնք մենակ անզեն մարդու հետ սիրտ կանեն կռվելու. էնոնք կռվողի հետ չեն կռվի. մեր մի գինված տղան էնոնց 100-ին կփախցնե... աչքիս տեսը կասեմ: Թյուրքը ինչ է որ, էն մարդու երես ունի, դազանի հոգի, բորենու խիղճ ու հավի սիրտ: Թյուրքը իրեն համար կասե թե.

Բին թյուրք – բիր թուրմի. Հազար թյուրք արժե մի բողկ.
Ալ թյուրքիյ, վիր թորփայ, Առ թուրքը զարկ բողկին.
Կենա յաղըք թյուրպա – Նորեն ափսոս բողկին:

Ի՛նչ են քյուրդն ու թյուրքը. (չիտակը կասեմ, վարպետ, 10 էչ կառավարելու համար 5 քյուրդ չեյիս պետք է, 4 թյուրք հոճա, [3 մութասարիֆ, 2 վալի, 1 սուլթան] խելքեն զուրկ բաններ են. 7 էչ քամես մի քյուրդ հագիվ

դուրս կուգա, 7 թյուրքեն՝ մի քոստ էչ: Հայը, վարպետ չան, հայր խելք ունի, հայր կարիճ է. թյուրքը էնքան ախմախ է, որ չգիտե, թե մեզի գարկելով, իրան պլխին կզարկի, մեզի վերք տալով՝ իրան կսպանե. առանց մեզի էնոնք մեռած են ու սատակ, մենք որ չըլնինք, էնոնք առնոթի կչորնան, հանց ձուկը ջրեն հանած: Վարպետ չան, հիմի մենք նստել ենք մութին, կսպասենք լուսին, որ գաղց է, ես չպիտի մեռնիմ, մինչի աչքերով թյուրքի <անընթ.> չտեսնեմ. ու էն էլ հաստատ գիտեմ, որ վազ թե ուչ, Հայաստան երկիրը մերն է ըլնելու: Էն էլ կասեմ, որ թյուրք-քյուրդը [մեր ծառան են] պիտի ըլնին, մեր հրամանի տակ, ու իրենց բախտեն գոհ պիտի ըլնին, որ մեր ծառան են:

Ռեսը խոսում էր, խոսում, Ուստան ականջ դարձած լսում էր նրան հիանալով նրա խելացի խոսքերի վրա և իրար վրա օղի էր լցնում ու հրամցնում. ապա ներս մտավ Քերոբ ախբարը ճոխ ընթրիքով: Ռեսը, որ վազուց այսպիսի հարուստ սեղան չէր տեսել, ասես, մոռացած իր դժբախտ կյանքը, [պատկառելի] բազմափորձ դեմքի վրա կնճիռները պարզած, և օղիով էլ արդեն բավական բորբոքված, ուտում էր ախորժակով ու պատմում Մուշի ժողովրդի մասին, նրանց ապրած տառապանքների, ահավոր կռիվների, կոտորածների և ազատության անհողդողդ համառի մասին:

Ուշ գիշեր եղավ. անկողիննները պատրաստեցին և Ռեսը հոգնած ու հանգիստ քնեց Քերոբի տեղում, Ուստայի դիմացը: Իսկ Ուստան անկողնում, մթության մեջ, դեռ երկար մտածում էր, թե ապրուստի ի՜նչպիսի պայմաններ ստեղծեն Ռեսի համար, որ վայել լինի այդ արժանավոր մարդուն և նրա ազնիվ ընտանիքին. և այս խորհրդածությունների մեջ էլ քուն մտավ:

Է. ԳԼՈՒԽ

<ԶՐՈՒՅՑ ԶԱՐԴԱՐ ԱՆԱՅԻ ՀԵՏ>

Առավոտ, Ուստան իր հին ու նոր հագուստներից մաս հանեց Ռես-Հոսեին, կարգադրեց նույնպես, որ Եզոսն էլ իր և Արտաշէի հագուստներից տա Ռեսի կնոջը և կրպային, մինչև որ նրանց համար կարէին [տոնական] զգեստներ կարել տրվի: Ուստան Ռեսին տվեց նույնպես 20 ր<ուբլի> [ձեռքի] դրպանի ծախս, ապա թեկ խմելու միջոցին հայտնեց Ռեսին՝ թե ինչքան ուզում են՝ կարող են մնալ իրենց [մոտ] հարկի տակ, մինչև նրանց համար մի հարմար բնակարան և ապրուստի ճանապարհ գտնի. և թեյից հետո գնաց դյուզամեջ, ենթակոմիտեի անդամներին՝ Պոտոս Տասուի, սերգացու Հովակի և Թաթոս վարժապետի մոտ նրանց հետ այդ մասին խորհրդակցելու:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը այդ տարիներում իր կազմակերպական ցանցը սփռել էր գրեթե բոլոր հայարնակ գյուղերում ու քաղաքներում: Կազմակերպության տարրերը կազմում էին կենտրոնական կոմիտեն, կոմիտեն, ենթակոմիտեն և խումբերը: Կարս նահանգի կ<ենտրոնական> կոմիտեն գտնվում էր Կարս քաղաքում, որ կրում էր «Զրաբերդ» դաշնակցականների մկրտված ծածկանունը: Նրա իրավասության էին ենթարկվում նահանգի բոլոր հեղափոխական մարմինները: Նախճավանամ կար ենթակոմիտեն, որ ստորադրվում էր Կաղզվանի կոմիտեին: Ենթակոմիտեն հսկում էր իր գյուղի խմբերի վրա, կոմիտեից ստացած հրահանգներով

դևկավարում նրանց, պահում էր դաղտնի պարոց և գրադարան, որոնց գոյությունը այդ տարիներում խիստ արդելված էր Ռուս կառավարությունից, զբաղվում էր գեներների թաքստոցների պահպանությամբ ու նրանց տեղափոխության գործը դևպի Թյուրքա-Հայաստան դյուրացնելով, իրեն ենթակա գյուղից Հայաստան գնացող-կուղող գինվորներ էր գտնում Դաշնակցական մարտական ու գինառատար խմբերի համար, պատսպարում էր հեղափոխական վախտականներին ու ահաբեկիչներին ռուս կառավարության հետապնդումից. նամակատար սուրհանդակներին բնդունում էր ու ճանապարհ գնում, նույնպես Հայաստան արշավող ֆիդահիններին խմբերին, որոնց կերակրում էր ու պետքերը հոգում: Ժողովրդի մեջ տարածում էր հեղափոխական գրքույկներն ու թերթերն ու թռուցիկները: /կազմակերպում էր/ Հոգ էր տանում ժողովրդի մեջ հեղափոխական գաղափարներ տարածելուն, կազմակերպելով պարբերաբար հավաքույթներ, ուր խոսում էր կամ չրջիկ-քարոզիչը կամ ենթակոմիտեի ու խմբերի միջից կարող անձեր:

Բացի այս ամենը, ենթակոմիտեն կառավարում էր գյուղական համայնական խանութը, եթե այդպիսին կար իր ենթակա գյուղում, հարթում էր գյուղացիների միջև տեղի ունեցած վեճերը, դատեր էր վարում իր նախօրոք որոշած իրավասության սահմաններում, պայքարում էր լրտեսության, մատնության, վաշխառության, արբեցության և անբարոյականության դեմ: Ավելի մեծ դատերը ենթարկվում էին կոմիտեի դատական մարմնին, իսկ ավելի ծանրակշիռ դատերը վճռում էր կենտրոնական կոմիտեն, որը և լիազոր իրավունք ուներ հաստատելու կամ բեկանելու չրջանի կոմիտեների բոլոր վճիռները: Կոմիտեն էր վարում իր չրջանի մանր-մունր, գյուղական ար-

հետախզական բանկը և համայնական խանութը: Նա կենտրոնական կոմիտեի աջակցությամբ ձեռնարկում էր նոր հողաբաժնություն գյուղացիների մեծամասնության դիմումի վրա համաձայնությամբ՝ ավելի արդար բաշխելու համար արտերն ու արոտները: Արշավող խումբ ուղարկել թյուրքերի դեմ, ծանր պատիժների նշանակումը և ահաբեկումը վերապահված էր միմիայն կենտրոնական կոմիտեին:

Եննթակոմիտեի անդամների թիվը լինում է 3-5 հոգի ընտրած խմբերի կողմից. խումբը բաղկացած էր դաշնակցական ծրագիրը ընդունող 7 անձերից առնվազը, որոնք ունեին իրենց ընտրովի խմբապետը: Խմբերը, Հ.Յ. Դաշնակցության կազմի այդ մանր բճիճները բաժանվում էին քաղաքական, մարտական, զինամարզական, զինատար, հետախուզական, արհեստակցական, գյուղացիական, կարմիր-խաչի և այլ տեսակի. կային և կանանցի խմբեր. ամեն մի խումբ ուներ իր հեղափոխական գաղտնի անունը. խմբի յուրաքանչյուր անդամ տալիս էր իր կարողության համաձայն ամսական մի որոշ, կամովին տուրք, անդամավճար Հ.Յ. դաշնակցության կարիքների օգտին, որը դանձում էր խմբապետը և հանձնում եննթակոմիտեին, սա էլ կոմիտեին, որը իր հերթին իրեն եննթակա շրջանի հեղափոխական հայ ժողովրդի տուրքը հասցնում էր կենտրոնական կոմիտեին. սա էր պահում, քննում ու հրատարակում ընդհանուր հաշիվը Դաշնակցության բերան «Դրոշակ» թերթում:

[Այսպիսով Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ներկայացնում էր մի պետություն Ռուս պետության մեջ. Նա կատարում էր հայ պետության բոլոր գործառնությունները, ուներ պոստ, դատ, բանտ, բանկ, ոստիկանական ու հակակրտեսական ցանց, դպրոց, մամուլ, հարկա-

հավաքում, ազգային ինքնապաշտպանության համար զենք ու զինվոր՝ միշտ կազմ ու պատրաստ կռվելու և մեռնելու։]

Ուստա Կարոն և Բերոր ախբարը պատկանում էին «Ղևոնդ-Երեց» խմբին. ժողովրդական ավանդությամբ Վարդանանց պատերազմի անմահ, մարգարեաշունչ քաջալերիչը Նախջևանի գյուղի բնակիչ է եղել, և նրա չիրիմը գտնվում է գյուղի եզրին մի բլրակի վրա՝ ջերմագին հաճախված շրջանի գյուղերից, իբրև նվիրական ուխտատեղի։

Ուստան ու Բերորը վճարում էին ամսական 2-ական ռուբլի անդամատուրք, և գյուղում եղած օրերում ներկա էին լինում բոլոր հավաքույթներին, ժողովներին, դասախոսություններին։ Ուստա Կարոն ընտրված չէր ննթակոմիտեի անդամ, ո՛չ թե նրա համար, որ արժանի չէր այդ պատվավոր պաշտոնին, որին կոչվում էին գյուղի անունով ու խելացի մարդիկ, այլ պարզ այն պատճառով, որ գյուղից [շատ էր հաճախ] ստեպ էր նա բացակա լինում և հետո էլ նա իր մտքով երբեք չէր անցել ձգտելու այդ [բարձր] դիրքին։

Ուստան դնաց Պոտոս Տայուի տունը, մտավ այվանը. սննյակի վերի պլուխը նստած էր մի պառավ կին, Պոտոսի մայրը, իր տարիքին անհամեմատ թարմ դեմքով և աչխույժ աչքերով։ Ծնկների վրա մի հաստ վերմակ փռած, ոսկրացավից խեղճ կնոջ ոտները անդամալույծ էին դարձած։ Ուստան մոտեցավ, համբուրեց պառավի չոր, չղուտ ձեռքը, մտերմական ձայնով ասելով.

— Բարի լույս, Զարդար անա, ի՞նչպես, լա՞վ ես։

— Աստված արևդ պահե, տղաս, լավ եմ, ինչ պիտի ըլնի. նստե, վաղուց է մերը չես եկած, աչքս կպտըցներ քեզի։

Այդ միջոցին, ներս մտավ մի երիտասարդ կին, համբուրեց Ուստայի ձեռքը, և պահարանից հանելով արագի չիշը, լցրեց մի բաժակ, մատուցեց Ուստային:

— Ուստա ջան, տպա՛ս, խմե՛ն,— ասավ Զարդար-անան:

Ուստան առնելով բաժակը, ասավ.

— Զարդար անա, Աստված տունդ չենն պահե. տղերդ, թոռներդ ողջ ըլնին, վատ օր չտեսնես:

— Ապրիս, Ուստա ջան, մի հատ էլ անուշ արա՛:

Ուստան բերանը սրբելով ասավ.

— Չէ, Զարդար անա ջան, հերիք է, ինքը, Պատոս Տացուն ո՞ւր է, տանր չէ՞...

— Աստված բարի տա Պատոսիս, երեկ իրիկուն վազ-վազ խաո դնաց: Նոր, գովական ձիու տեղ էր լսել, դնաց կամ փոխե, կամ առնի. գիտե՞ս էլի,— և խորհրդավոր [աչքեր] հայացքով նայեց Ուստային. և ապա երկուսը իրար [նայելով] հասկանալով՝ ծիծաղեցին:

Պատոս Տացուն երիտասարդական հասակից մի սովորություն ուներ, այն՝ որ երբեք գոհ չէր լինում իր ձիուց. ամեն օր, եթե հնար լիներ ու առիթ ներկայանար նոր ձի կառներ, ու [քիչ] մյուս օրը նորից կծախեր, կամ կփոխեր մի բան վրա տալով, կամ, երբեմն էլ, մի բան վրադիր առնելով: Ուր որ լսում էր մի նոր ձիու մասին, իսկույն դնում էր այդ առևտուրին: Հաճախ խաբվում էր իր լավ ձիու փոխարեն վատն առնելով, բայց և առաջին առիթին ծախում էր նոր գնած կամ փոխանակած ձին, ինչքան էլ որ լավը լիներ՝ մի ուրիշ նորը ունենալու համար: Տարին Պատոս-Տացուն առնվազը մի 7-8 ձի էր առնում ու տալիս, ընդհանուր դումարի մեջ միշտ մի որոշ վնաս կրում էր այդ առևտուրից, սակայն նորից չէր խրատվում: Գյուղացիք տեղի-անտեղի ծաղրում էին նրա այդ հատկությունը, սակայն Պատոս-Տացուն ուշք չէր դարձնում ծաղրին

ու նույն /սիրով/ եռանդով չարունակում էր իր սիրած /գործը/ առևտուրը. այդ գործի մեջ նա մեծ հաճույք էր գտնում:

Կարոն չատ էր սիրում Զարդար-աղայի հետ գրույց անել. ասող-խոսող, լեզվանի, ու արամիտ կին էր Պոտոսի մայրը — և բազմափորձ. կատակներ էր անում ու կատակներից չէր նեղանում: Ուստան երեկ նկնեցու պատի տակ ծերունիների խոսքերը լսելուց հետո՝ հոգում մի քանի հարցեր էին ծագել, որոնց ուզեց այսօր բավարարություն տալ, ու պատահի ու իրեն համար մի-մի պապիրոս պատրաստելով՝ հրամցրեց նրան՝ դիմելով.

— Զարդար-աղա ջան, դու փորձված, խելոք կնիկ ես, հարցմունք անեմ, ինձի ասա.— ծերությունը ի՞նչ բան է:

— Ի՛յ, ողաս, բարով դու էլ ծերանաս, կիմանաս, հիմի ի՞նչ ասեմ քեզի. կյանքն որ երկնցավ, համն էլ կերթա:

— Զարդար աղա, մահեն չե՞ս վախենա:

— Ի՞նչ վախենամ, մահը թե էսօր, թե հարյուր տարիեն հետո՝ գալու է, մեռնելու ենք, հնար չկա. աշխարհը ո՛չ մեկին չի մնացել. բայց ո՞վ մեռնելու վրա կմտածե. ո՛չ մի մարդ. էնպես կապրինք, գիտես թե մեռնելու չենք, մեզի խակի մեռնելու տեղ չենք դնե, հոգու հետ մարդը էլի գիտե թե պիտի ապրի. էսպես մեզի խաբելով, կիմանանք թե մահին կխաբենք:

— Զարդար աղա ջան, աշխարքեն կուշտ կերթաս, թե՞ կարոտով,— իր հարցերը չարունակեց Ուստան:

— Ինչ տղա-տղա բաներ կհարցնես. ո՞վ է աշխարքեն կուշտ գնացել, որ ես երթամ. աշխարքեն մարդ չի կշտանա. օրթե մարդ է եղել, որ մեռնել է ուզեցել, իմաց կաց, որ էն իր մարմնեն է հոգնել. ծերությունը մարդու մարմներ կդառնացնե, թե չէ մահ ուզող չկա. ա՛յ ես ոտքս 81 մեջն եմ դրել, բայց սիրտս ազամ աղջկա սիրտ է, մենակ

մեջքս, ոտքերս ուժ չունեին, թե չէ կվազեի պար կվտարայի, անձի կերթայի...

Տխրության մի սև հող ծածկեց պառավի դեմքը, և վանելու համար այս տխուր տրամադրությունը, խոսքի նյութը փոխելով ասավ Ուստային.

– Կարո՞ղ ան, դարտակ բան կխոսիս. օրթե կնիկ առնիս, երեխա ուննենաս, էդպես տխուր մտքեր չես մտքս. քեզի հետ եմ, ինձի նայե – կնիկ առ, աշխարք խառնվի, պորտդ կապե աշխարհի պորտի հետ. ի՞նչ ուրիշի դռները աչք ման ածելով՝ օր կմթնեցնես. աշխարք մտի՛, աշխարք:

– Զարդար անա, ի՛նչ կասես, հո աշխարքին դուրս չեմ, հենց աշխարքի մեջ-տեղն եմ, կանդնել եմ մեջտեղն ու կամ:

– Անուն հոր ու որդվո,– երևսը խաչակնքելով ասավ պառավը զարմացած,– դիտեմ, որ աշխարքի մեջն ես, հո Փռթենեգոյենց երթիկը չես, ես կասեմ, կնիկ առնելու համար. ինձի լսե, ես էլ քու մերն եմ, դուն քանի որ մեր զավը հիմդ քցեցիր, էսքան ախբեր-բարեկամ-ընկեր գտար, մի կնիկ էլ առ, լավ մերվիր մեր ժողովրդի հետ. քեզի համար տուն եղիր, քուկիդ պես արհեստ ունեցողն էլ ուրիշին հյուր ըլնի, ուրիշի դուռը ըլնի. առանց կնկա մարդու օրը սև է. մարդու հոգին, կյանքը կնկա մեջն է, կնկանն էլ՝ մարդու:

– Էդպես է,– ասավ Ուստան,– մենք էլ, ներող եղիր, խոստովանեմ, որ վարդապետների պես [էս գեղի] հարսները կհովվենք (կնիկ չունենք, բայց առանց կնիկ չենք մնացել),– զայրացնելու համար ասաց այսպես:

– Հիսուս ու Քրիստոս,– նորից խաչ հանելով երևսը՝ զայրացած ու զարմացած ասաց պառավը.– էդպես պետո-պետո բերան մի բաց. մեկ որ՝ սուտ կխոսիս, ծվծվան կատուն մուկ չի բռնե. չա՛տ խոսողը չէ բան

տեսնողը, մեկ էլ որ՝ տերտերի տունը էն օրը քանդավ, որ երկու տեղեն հացի կանչեցին. չա՛տ կնիկ ունեցողը՝ կնիկ չունի. մեկն ունեցի՛ր, լավն ունեցիր: Քու ասածդ մեջեն չէ, ուրիշի կնիկը քեզի կնիկ չի ըլնի. դիտե՞ս, երեխա ունենալը ի՛նչ անուշ բան է, աչխարքի մեջ էն ամենեն մեծ բախտն է. դուն կթառամիս, էնոնք կկանանչեն, երեխեքդ. քեզի էնպես կթվա թե՝ դու ես ծաղկողը, դու կմեռնիս, էնոնք կապրին. էդ ասել է՝ թե դու չես մեռել, անունդ վրաններն է, արունդ մեջերն է: Տղա՛ս, արի կըլնի սատանին հակառակի ու [աչխարք մտի] կարդվի, աչխարքեն դարտակ մի գնա՛. վայ էն մարդուն, որ հիչատակ չի թողնի. մեկ էլ տեսար,— տարիքդ թռան, դուռը ու երթիկդ ձմեռը կոխեց,— օրթե երեխա ուննենաս, օճախդ վառ կմնա, երեխեքդ տունը ուրախությունով կլցնին. դրուստ է ասած՝ թե երեխան տան ծաղիկն է: Հա՛, կաչխատես, ո՞ւմ համար, թող ինքն էլ, դու ասա՛, հա, հա՛, Քերոբը. թող էն էլ կարգվի, էն էլ մեղք է, երեսներդ չոր, ցուրտ պատնիվեր տալու տեղ սիրուն կնկա կակուղ ծոցին դրնք, [տուտուցնե՛ր] դդումնե՛ր:

Ուստան պատավին [մի քիչ] ավելի դայրացնելու համար լուրջ ձայնով ասաց.

— Զարդար-անա, դու էլ կնիկ ես եղել, բայց չնեղանաս, մի բան ասեմ. կնտոցը չա՛տ կգովես, կնիկն ի՞նչ է որ.- աներես ճանճի պես էն զօր ու դիշեր երեսնիվարդ բզզա ու կտզզա. կնիկ առնողը կռիվ երթցողի պես բան է. վայ թե մարդ գերեզմանի մեջն էլ կնկա ճանկռտոցեն հանգիստ չպառկի. մեկ էլ որ կնիկ կառավարելը մի աչխարք կառավարելեն դժար է...

— Ձե՛նդ, ձենդ, լկվի՛ր,— բարկացած ասաց Զարդարանան և ձեռքի գավազանը, որ ընկած էր կողքին վերցրեց և Ուստայի գլխին մի հատ տվեց...— կնիկը որ չըլներ՝

դու ո՞րտեղեն կըլնեիր. Ադամը Եվային սիրու համար դրախտը թողուց. դու էիր պակաս կնկան չհավնելու, կնիկդ թագավորներին կխնդճացնե, դու ո՞ւր կմնաս, կնիկը չսիրող մարդը – տղամարդ չէ...

Ուստային չա՛տ դուր եկան այս դովտանական խոսքերը, մանավանդ վերջին խոսքերը, և քանի որ նա իրան միշտ տղամարդ էր համարում և կնկա համար էլ միշտ հոդի տվող, չկարողացավ կեղծել, և ժպիտով ու գլխի շարժումով հաստատում էր պառավի ասածները:

– Հա,– չարունակեց Զարդար-անան,– կնիկն որ կա, խոսքս լավ-սիրուն կնկա մասին է, ոսկու գանձ է, գուրը լիքը նռան գինի է, կնիկը մարդու թագն ու պսակն է, ազիզ ծոց-ընկերը. Պոտոսի օղորմածիկ հերը ինձի [գրկեր-] կասեր,– ա՛յ կնիկ, ինձի չափ էլ բախտավոր մարդ կա: Գիտե՞ս, ես էլ ի՞նչ աղջիկ էի, մի մատիս հազար ուզող կար. Պոտոսիս հերը ինձնեն չա՛տ մեծ էր, տարիքով էր, մերս չէր ուզեր տալ, հերս տվավ, ես էլ բախտիս հնազանդա. քանի [ողջ] ողորմածիկը ողջ էր, էնոր ողջության պատիվը կպահեի, քանի որ Հիմի մեռել է, էնոր գերեզմանի պատիվը պահեցի, նստա, ձագուկներս մեծացրի...– Ու ձայնի մեջ խրատական շեշտ դնելով՝ մեղմորեն ասաց,– տղաս, դու դեռ բավականին երիտասարդ ես, ջուրդ դարիվեր է, չես հասկանա. ինձի մտիկ, կարգվիր, օր-ծերուիյուն կա, թուշդ միշտ էդպես կարմիր չի մնա ու ձեռքդ ուժով, ընկնել կա, ո՞վ պիտի քեզ պահե. աշխարք չմտած մարդը – աշխարքեն դուրս մարդ է. ո՛չ տղա ունես, ո՛չ կնիկ, ո՛չ սրտացավ, վերջը անօթի-ծարավ երեսիդ նայող չպիտի ըլնի. օտարի դռանը պիտի ոտքերդ պարզես... մտածի՛ր, ի՞նչ կըլներ իմ վիճակը, օրթե տուն չունենայի. տե՛ս անդամալույծ եմ, բայց ի՞նչս է պակաս, դոհ եմ քեղնեն, Աստված ջան:

Ուսաայի հոգու աչքերի առջև՝ վառ կերպով նկարվեց նրա ապագան, և կարծես՝ համոզված ասաց.

– Լավ կխոսես, Զարդար անա ջան, բայց տարիքս անցել է, ինձի ո՞վ կառնի հիմի:

– Ինչի՞... մի լավ, սիրուն, որևայրի հարս ձևոդ կպաչեն. աղջիկ չառնիս, ո՛չ դու էնորեն գոհ կլինիս, ո՛չ էնիկ քեզնեն:

Ուսաան տարիքով ամուրիններին հատուկ վարանումով ավելացրեց.

– Չգիտեմ ինչպիսի կնիկ առնիմ, որ ինձի հարմարվի, էսպես ապաք, ապատ սորվեցանք:

– Էդ բանը Աստծուն քյի՛ր. էդ բախտի բան է. աչքը կինատև, սիրտը կհավանի. փնտռե, ապատ, ու որին որ սիրտդ կկպնի, էնոր առ. դժոխք կուգի՞ս – չսիրածդ կնոջ հետ ապրիր. ողորմած հոգի քեռիս կասեր թե՝ լավ կնիկ ունես – հարստնատուն ի՞նչ գործ ունես, գեշ կնիկ ունես – ապատուն ի՞նչ գործ ունես... լավ կնիկն էն է, համ երևույթն է սիրուն, համ սիրտը. գեշ կնիկը օխթը պորտին վնաս է. ա՛խ, ո՞ւր է թե՝ լավը լավին հասներ, ինչպես վարդը բլբուլին, գեշը գեշին, ինչպես էշն ու փոշին. լուսհոգի մամս շա՜տ խելոք կնիկ էր. էն թոռներին խրատ կուտար, կասեր, սիրունությունը երջանկություն է. կնիկ առնելուս սիրունն առեք, թե սրտով էլ սիրուն եղավ, էն էլ ձեր բախտը: Դեհ, քեզի տեսնեմ, ապաս, դու էդքան [մարդ կկարգես] հավ ես թառը դրել, ես էլ քեզի թառավորեմ. բարով հարսնիքիդ դուռնան լսեմ. չես փոշմնի՝ ինձի օրհնող կլինես...

Ուսաան վերկացավ, չնորհակալություն [տվեց] հայտնեց տված խրատների համար, ձևոքը համբուրեց և գնաց, ասելով միևնույն ժամանակ, որ երբ Տացուն [մինչև իրիկուն] տուն դառնա, թող անպատճառ երեկոյան թեյի իր

մոտ գա, հարկավոր բան [ունի] կա: (ունի ասելու) Գնաց Տիրացու Հովակի տունը: Տիրացուն նստել էր օճախի կողքին, Աստվածաշունչ էր կարդամ, որ իր ծանրությամբ հանգչում էր հացի սեղանի վրա:

– Բարով, տիրացու Հովակ, քեֆ, առողջություն,– հարցրեց Ուստան ձեռք տալով:

– Բարին արևդ, վարպետ, համեցեք, նստիր էստեղ, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

– Ողջություն, տնեցիք ի՞նչպես են:

– Փառք իրան,– պատասխանեց լրջությամբ տիրացուն և թյուրթունի տուփը ներկայացրեց կարոյին ու ելավ արաղի չիչը բերեց:

Տիրացուն մոտ 35 տարեկան միջահասակ մարդ էր, ուժեղ կազմվածքով, լայնաթիկունք. մեծ գլուխը խիտ մազերով ծածկված՝ ուղղակի նստել էր ուսերի վրա, և երկար սև մորուքի տակ կորած էր վիզը: Թավ ունքերի տակ խորանում էր երկու սև, լուրջ աչքեր. գյուղի հայտնի տան զավակն էր. սովորել էր Շիրակի Հառիճո վանքի դպրոցում, քահանայության էր պատրաստված, սակայն սպասում էր հերթի, որ ձեռնադրվեր. հզոր ու դուրեկան ձայն ուներ. շարականները բոլորը անգիր գիտեր, լավ տեղյակ էր Աստվածաշնչին և Զամչյանի «Հայոց պատմությանը». թե՛ ենթակոմիտեի գործոն եռանդուն անդամ էր և թե գյուղական գաղտնի դպրոցի դասատու, ուր ավանդում էր Հայոց պատմություն և կրոնքի ուսմունքը, իսկ նրա ընկերակից ենթակոմիտեի անդամ Թաթոս վարժապետը ավանդում էր Հայոց լեզու, թվաբանություն և ազգերի ընդհանուր պատմություն, և առհասարակ ինչ որ գիտեր. երկուսով միասին պարբերաբար հավաքում էին դպրոցի չենքում խմբերի անդամներին, նրանց համար կարդում էին ու բացատրում Րաֆֆիի, Շերենցի և

այլ հեղինակների վեպերն ու պատկերները, «Դրոշակ» թերթը և Դաշնակցության հեղափոխական դրքույկները:

Արաղը խմելուց հետո Ուստան հայտնեց իր այցելության նպատակը:

– Շա՛տ բարի, դու ի՞նչ կմտածես, ի՞նչ անենք:

– Ես կասեմ՝ Ուսումնարանի պարապ աչքի մեջ Ռեսին տեղ տանք, թող ապրին, սենյակները մաքրեն, ջուր բերեն, ձմեռը վառարանը վառեն ու Թաթոս վարժապետին շահեն, լվացքը անեն, կերակուրը եփեն, ամսական 5 մանեթ էլ կուտանք. մենք էլ մեր ձեռքեն եկածը կանենք, մեր տներեն բան կղրկենք, էս է հաց է, եղ է, պանիր է... ես էլ Ռեսին մի քիչ փող կուտամ, ոտքի վրա առուտուր անե. հավկիթ ժողվե, բուրթ առնե, գիշերը պտըտող վաճառականների վրա ծախե, ապրի, դու ի՞նչ կասես:

– Շատ խելացի ես մտածել, հավան եմ, էդպես էլ կանենք:

– Դե՛հ, գլխիդ մատաղ, տիրացու ջան, իրիկունը մոտս թեյի կուգաք դու, տացուն, վարժապետը, կծանոթանանք Ռեսի հետ, կտեսնենք ինչ պատվավոր մարդ է:

– Շատ բարի, մենակ Թաթոս վարժապետը էստեղ չէ, պ<արոն> Կայծակը կանչել էր Բագրան, էգուց կուգա. վնաս չունի, առանց էնոր կկարգադրենք. տացուն էլ հավան կլինի, բարի մարդ է. վերջապես մեր հայն է, պիտի շահենք. վերջացած բան է. էդպես էլ ասա իրան, թող խեղճը միամտվի, օր առաջ. ես տացուին, Թաթոսին կհամոզեմ. իրիկունս էդոր մասին չենք խոսա. էգուց թող ուսումնարան երթա:

Ապա մի փոքր էլ այստեղից-այնտեղից զրուցելուց հետո՝ Ուստան չատ չնորհակալ լինելով, որպես թե իր անձնական գործը հաջողացրած լիներ, [ուրախ] մնաք բարև ասավ և ուրախ-ուրախ [գվարթ] տուն ուղղվեց, սակայն

կարճառոտ ճանապարհով դնալու փոխարեն գյուղի կալերով մեծ շրջան գործեց Զարդար-անայի տասծնների վրա մի քիչ խորհրդածելու համար. նա գիտում էր, որ պառավը իրավացի է խոսում, բայց ի՞նչ արած, ուշ է արդեն, վաղը մյուս օրը ութը 40-ի մեջ կդնեն. ի՞նչպես տարիները չո՛ւտ թռան, աչք չթևթռած արդեն 40 տարեկան են. սակայն ի՞նչպես կարող էր ամուսնանալ. աչքը բացեց — անտեր որբ, գլուխն առավ [իր] հորական գյուղից հեռացավ: Ի՛նչքան դառն օրեր տեսավ, չարքաշ գյուղից գյուղ, երկրից-երկիր. Թավրիզում անտէի քիչ մնաց մեռներ, եթե պարսիկ բարեվանասիրի մոտ ծառա չմտներ. ի՛նչ աներ, սիրտը ոչ մի արհեստի չէր կպչում, ո՛չ մի տեղ գլուխը դադար չէր առնում, ո՛չ մի տեղ տուն չուներ. կին-երեխա ունենար, ո՞ւր պահեր. վերջը նկավ-ընկավ Նախջևանի գյուղերը. մի-երկու տարի թափառական էր, ճիշտ է, հետո նստեց, բայց հակառակի պես՝ կնիկ առնել երբեք մտքովը չանցավ. քանի երիտասարդ էր, կարծում էր թե միշտ երիտասարդ է մնալու. և վերջապես գործեց, քնֆից աչք չբացեց, որ մի օր նստեր, լուրջ խորհեր այդ մասին. ատտանի պես, իրեն բարեկամներն էլ իսկի գլխի չբցեցին, գոնե Քերոբը խորհուրդ տար... ասենք, պառավի տասծի պես, էլի ուշ չէ. եթե մի լավ, սիրուն հարս պատահի... ապա ձեռքը թափ տալով բավական բարձրաձայն ասաց.— «Անցածն անցած է...» Ինքը առանց կնիկ սորվեցավ, մի կերպ, այս ամանից, այն ամանից ճեռքը մի պատառ ընկնում է, բայց Քերոբը խելոք է, նա անպաշար է. արի կլինի նրան կարգենք, և երիտասարդ է իրենից և ավելի տուն-տեղ դնելու, առիք սևցնելու հարմար է, քան ինքը. այսպես ուրեմն [որոշեց Քերոբին ամուսնացնել] լավ կլինի, նրան տան տեր կդարձնեն. ինքն էլ նրա մոտ մնծ եղբոր պես կապրի. ծերուհյան նե-

ցուկ կուննա Քերոբի գերդաստանի մեջ. Քերոբի երեխաները – իր երեխաները ասել կնշանակի:

Ու վճռեց մի օր, հարմար առիթին, Քերոբի հետ այդ մասին լուրջ խոսել:

Եվ ասն գնալով, որոշմունքը հայտնեց Ռեսին, որը մեծ ուրախությամբ ընդունեց այդ. միասին ճաշեցին, ապա մի քիչ հանգստանալուց հետո հագուստը փոխեց, գնաց Քերոբի հետ բաններու, որ արդեն երկու օր էր նպարեվաճառ մարագը չիններու համար քարեր էր տաշում:

Երեկոյան տուն դառնալուն, Ռուսան Քերոբին կարճ ու կտրուկ ասաց.

– Քերո՛բ ջան, քեզի մի բան պիտի ասեմ, հիմի չէ, [մենակ էս օրերս անցնի] մի օր միտքս բցե՝ ասեմ, [հիմի ժամանակ չունիմ] չուր վերցնող բան է:

Քերոբը գլուխը խոնարհելով ասաց.

– Շա՛տ լավ, Ռուսա ջան:

[Նրա ձայնի մեջ] Ռուսայի ձայնի մեջ Քերոբը նկատեց, զգաց մի խորհրդավոր բան, և մտքի մեջ ամուր մխեց, որ մի օր անպատճառ [Հարց...] հիշցնե[1]:

---

[1] *Նեղքևի լուսանցքում՝ առանց տեղը նշելու.* «Մտածեց, որ երկար ու բարակ պիտի խոսի, համոզի, թողեց պատհ օրին, ժամին»:

Ը. ԳԼՈՒԽ

<ՍՏԻ ՄԱՍԻՆ>

Երեկոյան Ուստան նստել էր Քերոբի և Ռես-Հոսեի հետ այվանում և սպասում էր հյուրերին, որոնց հրավիրել էր Ռեսի հետ ծանոթացնելու համար: Ներս մտավ սանահայր Մուկուչը ժպիտն երեսին:

— Ա՛յ լուսը քեզ տեսնողին,— գոչեց Ուստան,— կերևա, գործդ աջ է, քեֆիդ քեֆ չի հասնի:

— Աստծուն փառք, քավոր Ուստա ջան,— ասաց Մուկուչը և մոտենալով բարևի ձեռք տվեց Ուստային, Քերոբին և Ռես-Հոսեին:

— Նստի մոտս, տեսնենք ի՛նչ կա, ի՛նչ չկա:

— Գիտես էլի, գլխիդ մատաղ,— աչքերը գետնին խոնարհելով՝ գրեթե չշնչաց Մուկուչը,— երկնային տերը գթաց մեզի, տղա սանիկ [տվեց] ունիս. ի՛նչ ասեմ. տղա զավակի կարոտ էինք, գիտես, քեզի հայտնի է. սանամորդ աղոթքն հասավ Աստծու աթոռին...— ու ապա աչքերը բարձրացնելով ասաց,— ում քավոր որ չուզենաս ընել, մերը կաս ու կաս. մեկ խնդիրքս երկուս չեմ անի. էգուց կիրակմուտ է, երեխին պիտի մկրտենք, մի լավ քեֆ էլ պիտի անենք, բան ունի՞ս ասելու:

— Չէ, սանհեր չան, գլխուս վրա, իմ գործի անունն ի՛նչ է. դե՛հ, ծանոթ եղիր իմ պատվական բարեկամ Ռես-Հոսեի հետ ու մեզի մնա. իրիկունս խոսք ու զրույցի պիտի գան Տացուն, տիրացուն ու մեկէլները:

Մուկուչը նորից ձեռք տվավ Ռես-Հոսեին, ապա նստեց Ուստայի կողքին:

Մի քիչ անց, նկան Պոտոս Տացուն, տիրացու Հովակը, և ուրիշ չորս գյուղացի հարգևոր մարդիկ, որոնց երկուսին Ուստան հրավիրել էր, իսկ մյուս երկուսը իրենց կամքով էին նկել Ռեսին տեսնելու: Ուստան ավելի ուրախացավ իր անկոչ բարեկամներին տեսնելով:

— Այ գլխուս վրա, աչքիս վրա, բարով նկաք, բարով եկաք, համեցե՛ք, համեցե՛ք,— ուրախ-ուրախ ասաց Ուստան և հյուրերին ներկայացնելով Ռեսին,— ծանոթ եղեք իմ պատվական բարեկամ Ռես-Հոսեի հետ. Ռես չան, էտոնք մեր գեղի իշխան, ազնիվ մարդիկ են ու իմ ախպրտիքը:

Ամենքը իրար ողջունելուց հետո նստեցին. ներս մտավ Օսկանը իր եղբոր հետ: Ուստան բոլորին հրամցրեց իր թյութունի լեցուն տուփը: Քերոբը դուրս գնաց և քիչ հետո [ներս] դարձավ Արտաշի և տան ծառայի հետ եռուն սամովարով ու սալաները լիքը հացով և սառն [կերակուրներով] ընթրիքով՝ պանիր, կարագ, մեղր [ձու և պաղ միս]: Ուստան վաղուց արաղը հանդես էր հանել:

— Ախբեր Ռես-Հոսե,— դիմեց Տացուն Ռեսին,— բարով ես նկել մեր [կող...] գեղը: Քանի որ Ուստայիս հետ լավ բարեկամ ես դարձել, հույս ունենք, որ [մեզի հետ] մենք էլ իրար հետ լավ բարեկամ կդառնանք, մեր գեղի մարդիկ լավ մարդիկ են:

— Աստծու աչքը ձեր ու ձեր գեղի վրա ըլնի, մենք էլ ձեր չվաքի տակ ապրինք. հայի [պաշ...] տերը հայը պիտի ըլնի...— գլուխ տալով պատասխանեց Ռեսը զննական հայացքով նայելով Պոտոս-Տացուին:

Տացուն 50 տարեկանից անց, երկարահասակ, թուխ դեմքով մի մարդ էր. խելացի փոքր աչքերով, արդեն բավական ալեխառն մազ-մորուքով:

Այնինչ սեղան էին պատրաստում, Ուստան իր ձեռքով օղի էր հրամցնում հյուրերին:

— Տացու ջան, առևտուրդ չնորհավոր բլնի...— աչքերի մեջ հեգնական ծիծաղով ասաց Ուստան,— լսողաց, լավ ձի ես առել. Աստված փոչմանումյուն չտա:

Հյուրերը այս խոսքի վրա՝ դալված ժպիտով, սպասում էին Տացուի պատասխանին:

— Ուստա ջան, առուտուր կանննք, որ չասեն թե Պոտոս-Տացուն վաճառականումյուն չի հասկանա. մի քու օրհնած աչքովդ տեսնես, թե ի՛նչ ձի եմ առել. կաղպվանցի Ալեքսան աղի արաբական ձին իմիս մոտ չորի է. էգուց արի տես, բերանդ բաց մնա — ի՛նչ բարակ ոտներ, ի՛նչ երկեն վիզ, կաքավի բելվածք. էդպես ձի մինչև էս տարիս չեմ տեսել ու չեմ ունեցել:

Տիրացու Հովակը ուզենալով խոսքի նյութը փոխել, հարցում արավ Ռեսին.

— Ռես-Հոսե, Ուստան քո ախուր պատմուբյունը ինձի արավ. կուզեմ իմանամ, հիմի էդ տղայեդ գաու, Աստծու աչքը վրան լինի, երկիր ուրիշ ազգական, ախբեր չունի՞ս:

— Փառք իրան, ունիմ. մեկ ախբեր ունիմ Ստամբոլ. երկու տղա ունի:

— Կրնամ իմանա, ի՛նչ կանեն ախբերդ էնտեղ:

— Առաջ դայֆե կբաննցներ, նաև գոցեց. հիմի ոտքի վրա առուծախս կանե. մեր կողմի մարդը չա՛ռ Ստամբոլ կերթա՝ ստակ վաստակելու համար. ես էլ ազապ [ժա...] առենս երեք տարի մնացի Ստամբոլու քաղաք, [առուտուր կանեի] նաև դարձա մեր երկիր. նշանվեցա, երկու տարի մնացի, նորեն գնացի, նորեն երկու տարի մնացի ու եկա, էլ չգնացի. հերս մեռավ, սերս տվի ռանչպարության, ախբերս գնաց իմ տեղյակ:

Տիրաց մի կարճատև լռություն, որի ընթացքում:

— Սահմրոյ, ի՞նչպես քաղաք է,— հարցրեց Ռևանան:

— Զարմանալի քաղաք է, վարպետ ջան, սև ու ճերմակ ծովերու վրա նստած թագուհի [քաղաք է] Սահմրոյ քաղաքը. ափսոս մեռնիք, որ չուն թուրքերի ձեռքն է. մեկ կողմեն հայն ու հոռոմ կշինեն ու կպարպարեն, մեկեյ կողմեն թյուրքը կքանդե ու կքանդե:

— Յա՛, Ռևանա ջան, դուն Սահմրոյ չե՞ս եղել. էդ ի՞նչպես է եղել որ,— անկեղծ զարմանքով հարցրեց հյուրերի մեկը:

— Սիմոն ջան, քարվանս ծովերու վրա ինչպես կրնար քեզել. Սահմրոյ փափորով կերթացվի, չէ մի՞, Ռևս ջան,— պատասխանեց Ռևանան՝ փրկելով իր աշխարհահռչակ թյան հռչակի պատիվը:

— Հրամեքբս, Տրապիզոնի քաղքեն մեկ շաբաթ [փափորով] օր ու գիշեր ջրերու վրա փափորը կերթա ու վրա ուեքըն օրը Սահմրոյու առջև [խարիսխ] երկաթ կնետե...

— Ես էլ Սահմպոլեն պակաս քաղաքներ չեմ եղել,— Ռևսի խոսքը ընդհատեց Ռևանան,— չեմ ասի Թիֆլիզի, Սամրղանդի, Ղանդահարի մասին, մեռնիք խոսքի օրինակ՝ Թավրիզի մասին. վա՛յ Թավրիզ, տունդ չքանդվի, ի՛նչ քաղաք է, ի՛նչ քաղաք, օրթե Սահմրոյ քաղաքներու թագուհի է, Թավրիզն էլ, հասասա ու հասասա, քաղաքներու թագավոր է, ի՛նչ քյոշք-սերայներ, ինչ պալատներ, ինչ խաներ ու քարվանսարայներ, մարմարե չատրվաններ, ի՛նչ դյուքյան-բազար, էժանություն, լիություն, ասել չի ըլնի. Թավրիզի վրա պարպած է, էնոր պես քաղաք չկա:

Ռևսը հետաքրքրված լսում էր, երբ Ռևանան ավարտեց իր պովքը, Ռևսը հարցրեց.

— Դուն քարվան ե՞ս ունեցած եղել... վարպե՛տ:

— Հա, Ռես ջան, էտենց գալուց առաջ. էլ աշխարհ չթողի, ոտքի տակ առա. քեզի նաև, խոսք բացվի, չա՛տ բան կպատմեմ:

— Աշխարհ տեսնողն է բան դիտցողը, մեծ վայելչություն է աշխարք ժուռ գալը. բայց հայրենիքն էլ քաղցր է. ես կասեմ դուն էլ ինձի պես մոռածել ես ու տուն դարձել:

— Խոսք չի վերցնի. հայրենիքի հողն անուշ է, մարդու կքաշե.— կարճ պատասխաննեց Ուստան և միևնույն ժամանակ հարցում տվեց Ռեսին:

— Ռես, կասեն Ստամբոլու Օսմանլի թյուրքերը լավ, աղա մարդիկ են, Հայաստանի թյուրքերի պես գեշ չեն:

— Չէ, չէ՛, հազար անգամ չէ՛, վարպետ ջան,— տաքացած պատասխաննեց Ռեսը,— չնեղենաս, որ կհակառակիմ քեզի. թյուրքը թյուրք է հա էտեղ հա էնտեղ, օձը իրեն թույնը մորեն կուննենա ու հետը մեն կուտա. Աստված թյուրքին քոր տա, եղունկ չտա, էդ վայրի գազաններն ո՛վ, թագավորություն ուննենալն ո՞վ. էնոնք ոչ կառավարել գիտեն, ոչ մարդ չահել. կույր բախտն է էնոնց իշխանություն տվել. էնոնք իրենց համար կասեն թե թյուրքին բեյություն տվին, հորը կախեց: Սարի արյունխում քյուրդը թուրքեն լավ է, քանի որ, մեր երկիր մի կտրիճ մարդ կար, անունը Հակոբ Ճարտար, լուսհոգի Սերոբ-Աղբյուրի խումբեն, դաշնակ. էնիկ 40 թյուրք էր սպանել, 40 քյուրդ, էնոնց փորերը բացել էր. 40 թյուրքի [մեջ] ոչ մեկի մեջ սիրտ ու խիղճ չէր դտել, 40 քյուրդի մեջ սիրտ ու խղճմտանք ունեցող մի հատ մենակ գտել էր:

— Ռես-Հոսեն ամենը ճիշտ կասե,— միջամտեց Քերոբը,— էն թյուրքի մեջեն կուգա, թյուրքին լավ կճանչնա.

իմ ողորմածիկ պապս կասեր Թե, ով որ ասե, Թե Թյուրքի լավը կա, պիտի 40 տարի լա ու աղոթե էդ մեղքը քավելու համար. ես տղա էի, որ Թյուրքի հողեն փախա, չա՛տ բանի տեղյակ չեմ. իմ ժամանակ կոտորում չկար, բայց հայը Թյուրքի ու քրդի ձեռքեն քար-արուսունք կուլար. օրը մեկ անգամ հաց կուտեինք, տասը անգամ՝ ծեծ. չունը էնտեղ պատիվ ունի, հայը պատիվ չունի:

– Շունը պատիվ ունի, հայը պատիվ չունի... – գլուխը խորհրդավոր կերպով ժաժեց Ռեսը.– մեր Ս.Կարպետու վանք, մեռնիմ էնոր դորքին, մի գիտնակ վարդապետ կար, կասեր Թե, չան պատիվ էնտեղեն կուգա, որ չուն սատանաների մարգարե Մահմեդի երես կերել է, երբ որ Մահմեդ սուտ մարգարեն փիծել է, չունչը փչել, էնոր աչակներոներ էնոր չեն Թաղել, դրել են պարտեզ ու պահապան կանգնել, էն հույսով, Թե Աստված էնոր հարուԹյուն պիտի տա ու երկինք քաշե. քուներնին տարել է, չունը եկել էնոր երկու երեսն էլ կերել է. էն օրեն չունը կպատվեն, ինչու որ մարգարեի երես չան փորի մեջն է:

Հյուրերը բոլոր ծիծաղեցին: Ռեսը գրեթե վիրավորված պնդեց:

– Ճշմարիտ եղելուԹյուն է, գրքերու մեջ գրած է, սուտ խոսք չէ:

Ուստա Կարոն Ռեսի այս զրույցի վրա ուրախացած իր ձեռքով նորից օղի հրամցրեց հյուրերին:

– Ռես,– խոսք բաց արեց տիրացուն,– լսել եմ Թե Ստամբոլ և էլ ուրիշ տեղ Օսմանլու հողի վրա հայեր կան, որ հանդիստ կապրին, էդ ինչպես կըլնի հայեր էնտեղ ազատ, հանգիստ ու հարուստ կապրին, էդ ի՞նչպես կըլնի:

– Հա, չիտակ է. [Ստամբոլու] էդ հայեր, սուտ կխոսին, սուտ երդում կուտան, գլուխ կպահեն:

– Լավ կաննն,– ասավ Տացուն,– նեղն ընկած տեղը սուտը Քրիստոս է, փրկիչ է:

– Առանց սոի մարդ էս աշխարքում յոլա չի երթա...– Պոտոս Տացուի խոսքը վավերացրեց հյուրերից մեկը:

Ինսը զարմացած, զարհուրած աչքերով լսում էր նրանց և խոսք չէր գտնում պատասխանելու:

– Էդպես է,– իր խոսքը (ընդհատած) շարունակեց Տացուն,– Թշնամու ձեռքին ապատվելու համար սուտ խոսելը Թուր ու Թվանքի դործ կաեսնի. ապատն քեզի ու նաև Թշնամու հերն անիծե. իսկ Թյուրքի պես Թշնամու դեմ մարդ ամեն հնար պիտի բանեցնե պլուխն ապատե. Թյուրքը մարդ չէ:

– Լավ,– ասավ Տացուն:

– Միտքս մի պատմություն ընկավ, ականջ դրեք,– ասավ Ուստան,– էսօրեն երկու տարի առաջ Երևան էի գնացել. ժողովուրդը փողոցները ծով էր կապել ու կանգնել. էդ օրը մեր դաշնակները մեկ ուս պրիստավի տեղը էին արել. գիտեք, տեղորն ի՛նչ զարհուրելի բան է. ողջ քաղաքի բերանը էդ խոսքն էր. մեկ էլ ոնց որ ձկնկուլը ջրի մեջեն կկացե ու կհանե ձուկը, էդման էլ չանգարմը էդ ծով ժողովրդի մեջեն հանկարծ իմ օձիքը բռնեց ու հարցուց թե՝ դու ո՞վ ես, որտեղեն ես, դաշնակ ես, թե հնչակ, ո՞վ է սպանել պրիստավին, ով է տուն տվել պրիստավի տեղորին: Ես ասի, թե գլխիդ մատաղ, չանգարմ աղա, ես լոռեցի եմ, անունս [Համբո] Ղազար բիձա, ոչ դաշնակ եմ, ոչ հնչակ, ոչ պրիստավ գիտեմ, ոչ տեղոր: Էդ խոսքի վրա օձիքս թող տվավ: Հիմի, խոսքիս մեկ արեք, օրթե սուտ չխոսեի, օղորմն ասեի, թե ես Ուստա Կարոն եմ, դաշնակ, ու դաշնակն է տեղորն արել... գիտե՞ք ինչ կլիներ, կդնեին սև կառեքն ու կառնեին Սիբիր, հոդով-մարմնով կկորցնեին, գիտե՞ք սիբիր-բանտ ի՛նչ բան

է – ողջ մարդու դեմքիցն է: Ես [էնքան էլ սուտ] կրնամ ասել, որ չիտակ խոսող մարդ եմ [չեմ], ու սուտ խոսող մարդից էլ չեմ սիրե, բայց տեղ կա, որ սուտը հազար դրմի արժե. տեսաք, որ օրթե սուտ չըլներ, դրմբը տունս քանդել էր...[1]

– Ուստա Կարոն լավ օրինակ բերեց,– մորուքը շփելով ասաց Տացուն,– առանց ատի, էդ ասել է, շո՛ւտ պեմզման մասի. մեննակ չիտակ խոսքով էն կարճ օրը մի ոտք առաջ չես կրնա դնե. օրթե միշտ ճիշտ ասես, քարկոծ կաննեն. դնա՝ կույր մարդուն ասա թե կույր ես, դողին՝ թե՝ դող, տես, հերդ կանիծեն. ապրելու համար մարդկանց հետ, սուտ պիտի խոսես, ճիշտ խոսողը ձին պիտի պատրաստ ունենա՝ նստի ու փախնի:

– Իմ խելքով,– շարունակեց Տացուն իր խոսքը,– [Ուստան] սուտ խոսողը էն մարդն է, որ կասե, թե ես իսկի սուտ չեմ խոսի կամ սուտ չեմ խոսել...– Բայց հանկարծ ուշքի գալով, որ Հարգելի Ռեսը սա իր վրան կարող է առնել և խորապես վիրավորվել, ավելցրեց.– սուտ չխոսողը Ռեսիս պետն է, որ գլուխն առել ու փախել է...

Ռեսը որ [մինչև] զարհուրած պապանձված լսում էր նրանց, համբերությունը հատած [կրակի պես] սրի պես վրա տվեց.

– Սուտ խոսելը տղամարդու վայել չէ. [օրթե] թե որ Հայաստանի հայն էլ ուզենար գլուխ պահեր, սուտ խոսեր,

---

[1] *Ձախ լուսանցքում.* «Սուտի մասին. Ուստան սուտը այլ կերպ է հասկանում, բանաստեղծի և ազգի համար...

(Ուզվել, Տիրացուի խոսքերից բաժանել, բայց Պետրոս առաքյալինը թողնել իրեն)

Իր շահի համար, փողի համար սուտը դեղ է, վաճառականի սուտը դեղ է, բայց ազգի համար լավ է»:

սուտ ազգասեր, վասակ ըլներ, [Ստամբոլցոց պես] ուրիշ տեղի պես՝ սուտ հայ ըլներ, թագավորի պես կյանք կունենար. բայց մեր մարդը կարիճ է, կմեռնի ու սուտ չի խոսի, կնահատակվի, ազգի սիրուն, ազգին չի [խաբի] ուրանա. ես՝ ներող եղեք ինձի, [ձեր լեզուն] ձեր խոսքին հավան չեմ, ու Քրիստոնեի վայել բառ չէի ասի, ինչ որ կասեք:

Իջավ մի ծանր լռություն. Ուստային թեև չա՛տ հաճելի թվացին Ռեսի անվեհեր խոսքերը, և ակնածությամբ [լցրին] լցվեց նրա սիրտը դեպի Ռեսը, սակայն և այնպես նվաստացած ու վիրավորված էր զգում իրեն, որ Ռեսի առաջ ինքը սուտ խոսելուն պաշտպան հանդիսացավ: Տիրացու Հովակը, որ [աչխուժությ...] ուշի-ուշով հետևում էր այս վիճաբանությանը, խոսք առավ:

– Ճշմարիտ է, որ սուտը սատանա է. մարդ չպիտի մեղանչե սուտ խոսելով, սուտ երդում ուտելով, բայց այս սատանի աշխարհում չա՛տ անգամ սուտը ամենեն հարկավորն է. ամենեն մեծ առաքյալը, Պետրոսը, երեք անգամ սուտ խոսաց, Քրիստոսին ուրացավ. գլուխն ազատեց դահիճներից ու հետո եղավ Քրիստոսի եկեղեցու վեմը [քարը]: Հեղափոխական-ազգասեր մարդը իր ազգի սիրուն սուտ պիտի խոսի. սուտ խոսելը մեղք է իր դրպանի համար, փողի ու սատանայական գործերի համար: Այդպես՝ սուտ էլ կա, սուտ էլ. վատ նպատակի, չար նպատակի համար[1]:

---

[1] Էջի ներքևում՝ սոսնձված թերթիկի վրա, առանց տեղը նշելու. «Ստի մասին

Տիրացուն ասում է թե [դրոց] մեր իմաստուն պապերի խոսքն է.– «Կա սուտ, որ վարձք է. վի սուտ ասելն՝ որով ի մահուանէ և յորոդայթէ ապրիլ և կամ գայլ մարդ փրկել,– չատ վարձք տայ Աստուած»:

Տիրացուի [խոսքը] մեկնություն բոլորին հանդուգն թվաց, մանավանդ Պետրոս առաքյալի օրինակը. Ռեսը հանդարտած ասաց.

– Էդօր հակառակ չեմ. էդպես սուտներ մենք էլ կխոսինք՝ մեր վնասին, ազգի օգուտին, մենակ Ստամբուլու հայը սուտ կխոսի, սուտ երդում կանի իր փորի, իր քսակի համար: Հա, հիմա ձեզի հասկացա ([էդոնք] ճշմարիտ է, անմեղ սուտեր [են] էլ կան, էդպես սուտերու մասին ստամբոլցիք քաղաքավարություն անունը կուտան): Բայց իրենց սուտերը ազգի տուներ կքանդեն [ու քանդել են]:

[Երբ Ռեսը խոսքը վերջացուց, Տացուն ասավ.

– Ախպեր Ռես-Հոսե, էս իրկուն մենք իրար տես ու ճանանչ եղանք. էսօրեն հետո իմ տունը քո տունն է, [ազգը] էգուց իրկուն համեցեք մեզի, կերակուր ուտենք:

Այս խոսքի վրա սանահեր Մուկուչը մեջ մտավ, հայտնելով, թե վաղը [ամենքդ] ամենդ էլ իր մոտ հրավիրված են, կնունքի համար: Տացուն իր հրավերը հետաձգեց ուրիշ օրվան: Ապա բոլոր հյուրերը ոտքի ելան, մնաս բարև ասին և մեկնեցին իրենց տները:]

Այդ միջոցին դուռը ամուր բացվեց, բոլորի հայացքը ուղղվեց այդ կողմը. ներս մտնողը Թաթոս վարժապետն էր[1].

– Բարև ձեզի,– զվարթ ու բարձր ձայնով գոչեց նա:

– Բարև, բարև,– բոլորը միաբերան ձայն տվին:

– Ի՞նչ լավ արիր, որ եկար, վարժապետ ջան,– ասաց Ռստան ու ձեռքեն բռնելով դեպի այվանի խորքը բերեց:

---

[1] *Ձախ լուսանցքում.* «Վարժապետը ներկա լինի «Սոխ» մասին խոսելիս և նա հարց տա պոլսեցիների մասին, որ ավելի խելքի մոտիկ կլինի: Թեև վարժապետը կարող է հետո դալ, ոչ սկզբում»:

— Կաղզվանն եկա, իմացա, որ Ուստա Կարոյիս մոտ ժողվվել եք. չիտակ եկա էստեղ:

— Առավոտուց աչքս ջեղի կփնտռեր, իմացա որ գնդր չէիր. ծանոթ եղիր, վարժապետ ջան, իմ բարեկամ պատվական Ռես-Հոսեի հետ:

Վարժապետն ու Ռեսը իրար ձեռք տվին:

Թաթոս վարժապետը Նախիջևանի գյուղական գպրոնի ուսումնարանի դասատուն էր տիրացու Հովակի հետ. ապրում էր գպրոցի շենքի մեջ, ստանում էր ամսական մի չնչին ռոճիկ դաշնակցական ննթակոմիտեից: Սակայն գյուղացիները նրան միշտ ուղարկում էին իրենց բարեքից — [թարմ հաց, ձու, պանիր, կարագ, հավ] և ամեն կոչունքներին պատվավոր հյուրերից մեկն էր նա:

Թաթոս վարժապետը չա՜տ գոհ էր իր վիճակից. հոգով նվիրված էր գպրոցին, ննթակոմիտեական գործերին: Շաբաթը երկու անգամ գլխին հավաքում էր հետաքրքիր գյուղացիներին, և նրանց համար կարդում էր Աբովյան, Րաֆֆի, Ծերենց և ուրիշ հեղինակներ ու մեկնում, պարզաբանում: Ուստան էլ նրա ունկնդիրներից էր. (և ավելորդ չէ ասել, որ Ուստային ամենից չա՜տ հաճելի էին հղել «Վերք Հայաստանին», որին նա «Քաջ Ազատ պատմություն» անունն էր տվել, «Դավիթ Բեկը», «Սամվելը»):

Նա բարի և զվարթ[1] բնավորություն ուներ, մի մեծ, պայծառ ժպիտ միշտ վառվում էր նրա [սև] թուխ դեմքի վրա, և ոչ մի ծանր կացության մեջ չէր հանդչում: Նա 25-26 տարեկան մի երիտասարդ էր, Շիրակի գյուղերից,

---

[1] *Ձախ լուսանցքում՝ կարմիր մատիտով. «Այստեղ պնել, որ նա աշակերտներին սովորցրել էր կաթնեխոմը. «Հաւատոյ Հանդանակը»»:*

իր ուսումը ավարտել էր Ալեքսանդրապոլի երկդասյան հայոց դպրոցում, ապա նվիրել էր իրեն ուսուցչության և ընթերցանությամբ բավական առաջ գնացել: Նա ամուր, ուժեղ կազմվածք ուներ, չա՜ռ թուխ դեմք, մանր, վառվռուն աչքեր, կարճահասակ էր և չատ աչխույժ, կենդանի չարժ ու ձևերով: Հագուստ-կապուստը քաղաքացու նման էր. դյուզացիք նրան սիրում էին և հաչվում էին իրենցից, ինև երրորդ տարին էր, որ նա գործում էր նախճվան գյուղում[1]:

Ուստա Կարոն մի քանի խոսքով ներկայացրեց Ռեսո-Հոսեի ով լինելը:

— Ռեսո-Հոսե,— հարցրեց վարժապետը,— ինչպես եք ապրում թյուրքի ու քրդի հետ:

— Ինչպե՞ս, պիտի մատաղ,— պատասխանեց Ռեսը,— հանց որ արջի-գայլի հետ մեկ վալի մեջ. էն էլ մերկ մարմնով:

— Լավ պատկերով ասիր, բայց որ դանակ լինի, վալի մեջ ամենեն հարմար տեղն է նրանց օգտերը դալու:

— Դանակ կա,— հառաչելով պատասխանեց Ռեսը,— մենակ կոմը նրանց ձեռքն է:

— Վաղը մյուս օրը կոմը մեր ձեռքն է անցնելու:

— Աստված սուրբ ձենդ լսե, բերնիդ մեռնեմ,— ուրախացած վրա բերեց Ուստան:

— [Դանակը որ] Կոմը որ մեր ձեռն անցնի, մեր քառասուն պապերի ոխը կհաննենք էնոնց քառասուն պապերեն: Էնոնց 40 պապը կհաննենք գերեզմաննեն, կատակցնենք, ու նորեն կթաղենք:

---

[1] Ձախ յուսանցքում. «Այտահեղ դեպք Թաթոսի «Հաւատոյ հանդանակը»:

– Ապրիս, Ռես ջան, էդպես էլ լինելու է. համբերենք ու աշխատենք,– պատասխան տվեց վարժապետը դեմքի վրայի ժպիտը ավելի մեծացնելով.– Ուստա ջան, անոթի եմ, ծարավ եմ, չայ կուզեմ:

– Հիմի պատրաստ կլինի, վարժապետ ջան,– ասաց Ուստան,– մենակ դու էն ասա, ի՛նչ կար, ի՛նչ չկար – կաղզվան:

– Շրջիկ պ. կայծակն էր եկել, չա՛տ մեծ գործեր կար...– խորհրդավոր ակնարկով և ձայնին էլ նույնը տալով, պատասխանեց,– մի ծիծաղելի բան. էն հիմարապլուխ Մինաս աղան ի՞նչ է որ դյուզ ու քաղաք էնքան մեծ պատիվ ունի, մի լավ կերավ. հակառակ կերթար կազմակերպությանը, դավառապետի հետ միացած. պարոն կայծակը հասարակության առջև մի լավ խայտառակեց, [1000] 200 րուբլի էլ տուգանք առավ. (բայց մարդը ռուս դավառապետից, ռուսներից ու թյուրքերից գրավոր ու բերանացի վկայություն էր բերել, թե ինքը մեծ ազգասեր է...) էդ հարգելի հիմարան[իոս]յանը...

– Խելքի կաոր չկա էնոր գլուխը, մարդ կզարմանա, որ հարգ ու անուն ունի էն կաղզվանի ներսն ու դուրսը,– ասաց տիրացուն:

– Տիրացու ջան, մի զարմացիր, էդպես տեղերի համար եմ ես ասել թե՝

Ոսկին կապե իշու բկին,
Բարև կուտան ինչպես բեկին:

– Ուստա կարոյի ամեն խոսքը գոհարի արժեք ունի,– ծիծաղելով ասաց վարժապետը, առջևը նոր [բերած] դրած [հավի յուղոտ աղդրը] հավկիթի կեսը խածնելով, և ապա բերանը լիքը հավիվ կարողացավ շարունակել,– էս աշ-

խարհում մինչև այսօր փող ունեցողն է հարգելի ու խելոք մարդը. իհարկե, ամենքիդ էլ հայտնի բան եմ ասում:

– Էդպես է, նոր բան չէ, փողն է մարդը...– գրեթե միաձայն ասացին մի քանիսը:

– Մեր Ղուկաս աղի տոնը երբ պիտի աննենք,– հանկարծ հարցում արավ Ուսուան:

– Ես էլ էդ [էլի ուզում] կուզեի հարցնել,– ասավ Տացուն:

– Ես էլ հենց էդ էի ուզում ասել, էս մոտիկ օրերս գալու է, մեզի կհայտնեն: Դրա մասին էլ չխոսինք...– ու բազմախորհուրդ հայացքով նայեց իր ենթակոմիտեական ընկերներին, նույնպես Ուսուա Կարոյին:

Ապա անցան դանադան հարցերի՝ (մասին), երբ բավական դիշեր եղավ, առաջինը ինքը՝ Տացուն, ամենից տարիքավորը, ոտքի կանգնեց և ասաց.

– Էհ՛, բարի դիշեր ասենք, երթանք, ուշ է...– ու դարձավ Ռեսին,– Ախբե՛ր Ռես-Հոսե, էս իրիկուն մենք իրար տես ու ճանանչ եղանք. էսօրեն հետո իմ տունը քո տունն է...– ու դիմելով դեպի բոլորը.– էգուց իրիկուն համեցեք մեզի, կերակուր ուտենք:

Այս խոսքի վրա սանահեր Մուկուչը մեջ մտավ՝ հայտնելով թե՝ վաղը, այստեղ եղածները, ամենքն էլ հրավիրված են իր մոտ կնունքի համար: Տացուն հետաձգեց իր հրավերը և վարժապետն էլ ներողություն խնդրելով մերժեց, որովհետև վաղը ճաշից հետո գնում է իր հայրական գյուղը հիվանդացած մորը տեսնելու:

Ապա՝ մնաս բարև, երթաս բարև՝ ասելով իրար մեկնեցին իրենց տները:

Է. ԳԼՈՒԽ

ԲՈՒԼԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ

Կայերում, ծառերի[1] տակ Ռւստան ընկերներով քեֆ էր անում: Երբ նայ՝ «չարաչ» տալով դուռնաչուն՝ թևերը պարզից պարելու, դուռնան ա՛յնպես որոտալից ոկսվածի փչեց նրա ականջի տակ, որ Ռւստան՝ ցնցված՝ աչքերը բացեց, նայեց և նորից գոցեց... սակայն, ընկերներն էլ չկային, քեֆն էլ չկար. իսկ դուռնան կար հնչուն ու դոնչուն: Մ՞ւր էր, որտեղի՞ց էր դա — դուռնան: Ականջը լարեց, ուշով, ավելի ուշադիր: Հասկացավ — սա՛յլ էր. խոտաբարձ օրանի սայլեր էին, որ իրար հետևից ճռնչալով ու ծլվլալով հար ու նման Սրապ-Ջուրապի դուռնաներին, լուսադեմին, անցնում էին իր[2] օթևանի տակով:

— Տո՛, աշխարքի էն գլխեն մինչի օրս՝ էս սկերր սապոնի երես տեսած չունեին.— դժկամ քրթմնջաց Ռւստան աչքերը տրորելով. բռւ տիրոջն ի՛նչ ըսեմ, քեֆս ամիրեց, թևկուզ երազի միջի, հաշիվը մեկ է...

Համեմատվող բնագրային միավորներ.

A = Հեղինակային ուղղումներով տպագրվածը («Ազգակ էջեր», 1963, էջ 583-595):

D = «Հայրենիք», 1925, N 10, էջ 22-29:

[1] D ծառնեի

[2] D Ռւստայի

Արևի ոսկի թևերը չեղ բնկել էին պատուհանից ներս: Երկու ապակին՝ պարանոցի ծիածաններով չողշողացնելով, իրար կառչ էին տալիս պատուհանի դռդում: Ուստան՝ սիրտ մանկան պես ճխլով, ոտի կանգնեց: Անուշ արևը սիրող աչքերով նայում էր անուշ աշխարհին[1], և նորից առօրյան Ուստայի համար դարձավ հրաշքի ու հնքիաթի պես՝ համայիչ ու սիրնկան...

Մի տղա «Շնկո՛ չան, ծամմն՛ե՛րդ» երգելով անցավ լուսամուտի տակից, Ուստան ինքնաբերաբար չարունակեց նրա երգը՝ «կանթնդ են աչքնի՛րդ, մանավանդ աչքնի՛րդ», հետո էլ հագնելով բաներու օրվա չորերը:

Նախաճաշին սոխակ Ջավուշին, որ երբորդ բաժակ օղին այսօր անպատճառ խմե:

– Ջավուշ չան, հոգիդ ուռնամ, էսօր շա՛տ ուրախ եմ, էսօր սրտիս մնջի իրնք[2] արև կա, մնկը մնկնն սիրուն, էդոր համար իրնք թռան էլ պտի խմես: Եղածն[3] ինչ է որ, մատնոցի չափ սոսկաններ են (բաժակ), ճնճղուկ[4] ջրելու բաներ են...

– Վարպե՛տ չան, ոտախաթննիդ համար կյանքս էլ կուտամ, մննակ էսօր չատ խմելու ենք, ամբարի հիմքը պցնուն[5], ճաշի վրան...

– Լա՛վ ըսիր, ես էլ չեմ խմե...

Մինչ Փիլոսը արհատի զործիքները կհավաքեր, Ուստան կարմիր թաշկինակը կապեց պլխին և իրեն ու ընկերի ծխատուփերը լիքը լցրեց թութունով[6]:

---

1 D աշխարհին փո աշխարհի վրա

2 D նրնք

3 D չիք

4 D ճնճուղ

5 D քցնուն

6 D չիք

Փողոց կընկնին, Ուստան հետ նայեց[1]*.*

– Զավո՛ւշ չան, հո բան չմոռցա՞նք:

Մի վայրկյան ամփոփվելուց հետո.

– Չէ՛, վարպետ չան, ամեն բան տեղոք հետներս է,– ասաց Զավուշը:

Բուլիկենց Տեփանոսը նրանց ընդառաջ եկավ: Նա ութսուն տարին անց, կապույտ աչքերով, հաստ ու հաստատուն մի մարդ էր. խոսում էր «ֆսֆսալով»: Միասին գնացին կառուցվելիք ամբարի տեղը, ուր արդեն փորված էին հիմերը և քարերն առաջը դիզված: Մինչ այս, մինչ այն, հավաքվեցին Տեփանոսի մոտիկ ազգականները, աներն ու աներձագը, հորեղբայրը, փեսան, որ ականատես լիներին[2] *ամբարի հիմնարկին և ապա մասնակցեին*[3] *հանդիսավոր ճաշկերույթին:*

Եկավ և Նազարենց Պոտոս Տացուն, Տեփանոսի քեռին. հիսուն տարեկան կլիներ նա, բարձրահասակ ու պատկառելի. չա՛տ թուխ դեմքով, խոհուն արտահայտությամբ, աչքերը փոքր, սուր բզի պես ծակող ու թափանցող: Գյուղի ազդեցիկ, առաջին մարդկանցից մեկն էր, հարուստ օճախի զավակ, ու գրաճանաչ, Դաշնակցության ենթակոմիտեի անդամ էր: Ուստա Կարոյի լավ բարեկամն էր, Ուստային սիրող ու պաշտպան–հովանավորող:

Մոտիկ ազգականներից բացի, հավաքվեցին նաև անգործ մարդիկ, պարզապես ժամանցի համար: Արդեն երբ Ուստան մի տեղ բանի լիներ, իսկույն գլխին կհավաքվեին տունը մնացած պարապ մարդիկ, լսելու Ուստային, զրուցելու և կատակելու նրա հետ և միմյանց հետ: Կու-

---

[1] D + ասելով

[2] D լիներին

[3] D մասնակցին

պային ու կնատևին Ուստայի շուրջը. ոմանք «տամա» կխաղային՝ հողի վրա գծած, ոմանք իրենց տրեխի կաշինները քարերին քսելով, «կհասրևին», ոմանք ձեռևներին մի դանակ, դոմեշի եղջյուրից չինած կոթով[1], մեքենայաբար[2], փայտ կտաշևին, և բոլորն էլ ուշադիր՝ Ուստայի խոսքին ու դրույցին:

Երկու բանվոր կար Ուստայի ձեռքի տակ, որոնք չափսխ ու քար էին կրում: Ուստան Տեփանոսի ձեռքից բռնած թռավ հիմքի խրամատի մեջ. Զավուշը բանվորներով չորս մեծ անկյունաքարերը եզրին մոտեցրեց. Ուստան երեսը խաչակնքեց, Տեփանոսը ցորենի հատիկները շաղ տվեց խրամատի մեջ, սրտում լուռ աղոթելով:

Ապա Ուստայի հետ միասին դրին հիմքի անկյունաքարերը: Ամեն կողմից ծայր տվին բարեմաղթանքները.

— Տեփանոս ջան, բարով-խերով ամբար էղնի, արդար սրտով վայելես...

— Ամբարդ լիքն էղնի. Աստված[3] քեզի տա, դուն էլ՝ ուրիշին:

Տեփանոսը խրամատից ելնելով օղի հրամցրեց[4] բարեկամներին՝ միատեսակ խոսքով չնորհակալ լինելով մաղթած բարիքներից[5].

— Տառոսը ձեզի էղնի, դուք էլ ուրախնաք:

Պատոս Տացուն քրոջ որդուն մի քանի խրատական խոսքեր ասելով, բաժակը տվեց Ուստային:

---

1 D *չիք դոմեշի եղջյուրից չինած կոթով*

2 D *մեքենաբար*

3 D *Աստած*

4 D *հրամցրեց փիս էր հրամցնում*

5 D *բարիքներին*

— Տեփանոս ջան, արագի թռան ինձի, ամբարիդ բարին՝ քեզի: Էնպես ամբար չինեմ, որ Թոռանդ Թոռն էլ վայելե, Թե՛ քամի խաղա մեջը, Թե՛ մուկ չժաժա, քու պատվիդ, ու էվելի Պռոռոս Տայուխս պատվի համար:

— Ուստա՛ ջան, դիտեմ,— ասաց Տեփանոսը,— ձևդը բախտով է, չնորհքիդ մեջ անապատ մնաս:

Սկսվեց եռուն աշխատանքը:

Բանվորները քար ու շաղախ էին բերում, Ուստան շարում էր որմը, Ջավուշը լիցքն էր անում: Եռանդով, աշխուժով[1] դործում էր Ուստան՝ մի պահ կյանված աշխատանքով:

Պռոռոս Տայուն դնաց՝ խոսք տալով ճաշին նորից գտնվելու:

— Ուստա՛ ջան, բանըմ բաա, անկանջ էննենք[2],— ձայն տվին հավաքվածները[3]:

— Դժվար տեղ եմ, խոսքի մի՛ դցնք[4] ինձի, դուք ըսենք, ես լսեմ.— և դրպանից հանելով ծխատուփը նետեց հավաքույթի մեջ, ասելով.— Քաշե՛ք, բիֆերո՛ւդ աչնք:

Մեկը ծուխը քիթ ու բերանից հորդաբուխ հանելով՝ խոսք բաց արեց.

— Կըսեն Թե՝ Յապոններդ ռուսի Թագավորի բուրդը լավըմ դզեր են. քաղաք քաղքի վրա տալով՝ Թագավորի դորքը «վա՛յ մերիկ» կանչելով կփախնի. էդ ի՛նչ աժդահա մարդիկ են եղեր յապոններդը...

— Ասպած է դրկե էդոնց մեր հայի ոխն առնելու համար... ըպա՞, էջմիածնի դուռը կկտրեն, Լուսավորչա

---

[1] D աշխույժով

[2] D էնինք

[3] D հավաքվածներից

[4] D քցնեք

ալն ու խաչը տանելու, մեր ժամերու, մեր ուսումնարաններու մյուլքը կառնեն, հիմի թո՛ղ մեկին հագար տան, Լուսավորչու անեծքը բռնեց,— ասաց ներկաներից մեկը:

— Էդ ո՞ւրտեղն ևկան էդ յապպոնները կամ թե հոպպոնները. էդոնց անուներ յաձ չունեի ըսկի՛, ո՞ւր էին մինչի օրս...

Հարց տվեց մեկը և հարցը մնաց օդում, անպատասխան... Ոչ ոք չդիտեր, և Ուստան էլ որ թևերս կարող էր դիտենալ՝ ոտով-գլխով զրաղված էր հիմքի որմերը հաստատուն դնելու հոգսով[1]:

— Ուստա՛, Ուստա՛ կարո, դուն յապպոններու, էդ հոպպոններու հողը չե՞ս նդեր...

— Ը՞ս... ատ՛, հոգիս ապր ու ավլուքի մեջ հո՞ չէի[2] պտեր, որ էդոնց աչխարքն երթայի... էդոնք՝ թիզ ու կես — դևտնի բզեզ, մարդ կկտրեն մարախի պես:

Բանվորի ձևրքից փրթեց ընկավ քարը՝ սրունքը ուժգին քերծելով. խնդճր բռնեց ատն ու նստեց. արյուն էր կաթում տաչված մսից...

— Խանձրձուկ էրնք, խանձրձուկ,— ձայն տվին ամեն կողմից:

— Արադո՛վ, արադո՛վ,— գոչեց Ուստան,— խանձրձուկը բրդի բան է, արադով լվացեք, ևս էդպես կչնեմ մչատկան:

Եվ չդոհանալով միայն խորհրդից՝ թռավ եկավ խրատից. ինքն իր ձևռքով թրջեց թաչկինակը օդիով, և կապեց վերքին, առաջուց օդիով արբելով վերքի վրայի հողն ու

---

[1] D գործով

[2] D չեմ

ցեխը: Բանվորը օղին պատճառած սուր կսկիծից[1] ծամածռում էր երեսը, հառաչում էր. նույնիսկ արցունքներ երևացին աչքերում:

— Տո՛ տղա, էս թաան էլ խմե, մոմուռը կանցնի, ներսեն էլ կլավնաս, ես մշտական էդպես կխնեմ, հա՛մ դրսեն, հա՛մ ներսեն...

Կեսօր եղավ:

Տեփանոսը հայտնից ճաշի[2] պատրաստ լինելը: Այսօր Ուստան՝ բանվորներով և Տեփանոսի ազգականները հանդիսավոր սեղանի էին կոչված ամբարի հիմնարկի առթիվ:

Ուստան միջօրեի բանթող հայտարարեց:

Սրահում, ստվերի մեջ, սեղան էր պարզած: Խորովածի հոտը բռնել էր արդեն բակի մթնոլորտը: Հյուրերը դրդռված ռունգներով[3] սեղան նստեցին: Պոռոս տացուին «հրամցրին» վերի գլուխը. ձախ կողմը՝ Տեփանոսի աննրոջը, աջ կողմը՝ Ուստային: Մոտիկ ազգականներից բացի հրավիրված էին և մի-երկու բարեկամ դրացիներ:

Զվարթ, ազմկալից սեղան էր. առատ ուտելիքներով ու խմիչքով՝ վայել Տեփանոսի նման ունևոր գյուղացու անվանն ու կարողությանը:

Տացուն բացեց սեղանը, խմելով Տեփանոսի կենացը, նաև նրա ընտանիքի, և բարեմաղթեց գործերին հաջողություն, ամբարին անսպառելի լիություն:

Կոչնականները ուտում էին ու խոսում, խմում էին ու ծիծաղում, բայց Ուստայի հնչուն ու զվարթ ծիծաղը գլուխ-անցնում էր բոլորի խինդ ու ծիծաղից: Իրեն ամենազվարթ օրերից, իրեն հատուկ բոլոր չափերից դեր-

---

[1] D կսկծից

[2] D ճաշը

[3] D ռունգներով

պանց ուրախ էր այսօր նա. և դեմքը՝ գարնան պայծառ արևպակ:

Տեփանոսի անները, որ ծանր ու մռայլ մարդ էր, նույնքան ծանր ու մռայլ ժպիտով, ասաց Ռւստային.

— Ասպած քեզի էլ էվելի ուրախ պահի, Ռւստա ջան, քեզի չճանչցողը պտի իմանա, թե նախճվանու դումար ամբարներու հացը քուկդ է[1]:

— է՛, Աթո ամի,— վրա բերից Ռւստան,— քանի որ աչքս կուշտ է, աշխարք իմս է: Աթո ամի, դուք որ իրնք[2] ամբար հաց ունիք, տարին քանի՞ հեղ կկնդաք:

Աթոն չկարողացավ պատասխանել. չփոթվեց, մանավանդ որ Ռւստայի խոսքի վրա տարափի պես տեղաց ընդհանուր ծիծաղ ու քրքիջ:

Ռւստան կամաց չչնջաց կողքը նստած Տեփանոսի հոր եղբոր ականջին. «Բարեկեղ ջան, ես ամպ-օրը կսիրեմ, ամպ-մարդը չեմ սիրե. խնամիդ ամպ է»:

— Մշտական ուրախ է Ռւստես, մենք էլ էդպես հետը կուրախանանք: Դրուստ որ, թե Ռւստեն մեր գեղը չեղներ, մենք նավակատիկն-նավակատիկ պտի խնդայինք,— ասաց տացուն, դինով լիքը թասը խփելով Ռւստայի թասին:— Ռւստես ծնած տարին հնչ մարդ չի մեռեր, եռտուն հարսնիք է էղեր, չէ՞, կարո ջան:

— Պատիկըմ սխալվար, տացու, քառասուն հարսնիք է էղեր, մեկ էլ օխթը տարվա դոթի պառավ'մ է հայր Աբրահամու գոգն ընկեր.— հնչուն ծիծաղով հաստատեց Ռւստան.— մեկ էլ որ, ուրիշները Աթո ամուս պես, ծնվելուս յաց են էղեր, ես խնդացեր եմ... էն օրվանեն էդ

---

[1] D են

[2] D իրնք

ծիծաղն երեսիս մնացեր է... Հապա՞, Աթո ամիս որ դուն ես:

Լուսթյուն իջավ. կոչնականներն[1] նոանդով, առանց հագենալու, ուտում էին, ծնոտները «չփչփոցով» գործի դրած:

Սակայն Ուստան մարդկանց մոտ լռելը անվայել, մի տեսակ վիրավորական բան էր համարում. պիտի խոսեր նրանց պատվելու համար, եթե, հակառակ իր կամքին[2], ուրիշը խոսեր, վատամարդ կդառնար նրա աչքին. և պիտի աշխատեր խոսքի մարդից նրան դուրս նետել:

Եվ դինու գավաթը լցնելով դարձավ Տեփանոսին.

— Տեփանոս ջան, ամբարդ ուրախ սրտով վայելես, ուրախությունո՛վ. բանը ուրախությունն է. ուրիշ մարդու չհավատաս, ինձի լսե, ուրախ էդնելու մեջն է խելքն ու հնճարքը մարդու: Ասածու չնորհքը ում վրան է որ, էն ուրախ սիրտ կունենա. ապրելու համը ուրախության[3] մեջն է, դուրսը բան չկա... խոսքս թագավորցնելու համար՝ կեցի՛ր, ձեղի դլխես անցած բանիս պատմեմ... Շատ իմաստուն մարդիկ եմ տեսե ճամբեքիս վրան, քարվանիս վրան ու քարվանսարեքի մեջ. մեկ իմաստուն մարդու ըսկի չեմ մոռցե. ամեն օր ողորմիս կուտամ, պատկերն աչքիս առաջն է, ձենն՝ ականջիս մեջ:

Ես Իրանա հողն էի, Իրա՛ն, տունդ չքանդվի. ինքը մեկ անուն, ճամբեքն ու քաղաքները՝ հազար: Թավրիզեն իրեք[4] օր հեռու, գարնան գլխուն մեկ անձեր դուրանի մեջ մե քարվանսարի մեջ բանդ եղեր, մնացեր էինք, էնոր

---

1 D չիք

2 D չիք հակառակ իր կամքին

3 D ուրախության

4 D երեք

համար որ ջրերը նկել[1], կարմունջն[2] ու ճամբան[3] ավերեր, ծածկեր էին: Երկու չարաճճի էդտեղ մնացինք. ես ըսեմ հարուր, դուք ըսեք երկու հարուր մարդ ճամբորդ էր: Շա՛տ մարդ ճանչցա էդտեղ, անունով, հունարքով մարդիկ, երևելի աշրոններ, հնբիամճ ըսողներ: Էդտեղ սովրեցա Մելիք-Շահի, Ամման ու Զևյջանի հնբիամճները. վաղուց էդ օրեն առաջ, ուրիշ տեղեր, խոսքի օրինակ՝ Ղարաբաղ, Բորչալու, Դյանջա, Թուրան, Սպահան, սրվեր էի Բյոռօղլուի, Դահար-Միրզայի, Աչըղ-Ղարիբի, Բյարամ ու Ասլուի, Ռոստում Զալի հնբիամճները...

Ասըս էս չէր. հապա էն էր, որ էնտեղ մեկ պղքատ մարդ կար. է՛նպես ուրախ սրտով ու երեսով, էնպես ուրախ-զվարթ, որ խնդում-ուրախություն[4] ըսած բանը էդքան կէղներ: Ջոր հայը մեկ թաս դինու հետ առաջը կդներ, կուտեր ու կխմեր, իրան համար խաղ կանչելեն, էնպես ուրախ. զվարթ[5] դիտես թե, Շահնշահի սեղան կար առաջը, անմահական դինին ոսկե թասով: Թե որ կխոսեր՝ մարգրիտ[6] կթափվեր բերնեն. էն կըսեր. «Ուրախ ապրի, սատանեն մոտ չի գա բեզի. ուրախությունը մարդն է իրան տվողը. քեֆո՛վ ապրի, անմե՛զ մեռի, մնացածը թո՛զ Աստծուն»: Կրսեր, թե աշխարքը սիրուդ է. հույզ կտրած մարդ ես — աշխարքը սպասուն է, սեր ու խնդում կա սրտիդ մեջ — աշխարքը հարսնատուն է. ուրախ պղքատը՝ «ախ» բաշող թագավորեն առավել է. բանը՝ սիրան է:

---

1 D նկեր

2 D կարմունջ

3 D ճամբար

4 D ուրախություններ

5 D զուրախ

6 D մարգրիտներ

Էդ մարդու իմաստուն խոսքը՝ տեղոյտեղ[1] հաստատավավ. ճամբա ընկանք թե չէ, տեսանք մի քաղաք[2] իրար կպած երկու ախրեր կային, ջուխտ ծնած. կարելի է որ դուք էլ էդպես բան[3] տեսած կամ լսողած էդնիք. հա՛, էդոնցեն մեկը միշտ կուլար, մեկելը միշտ կխնդար. մեկի երեսին ծիծաղ չկար, մեկելի երեսը՝ վարդ ու խնձոր: Երկուսն էլ մեկ և նույն փորն ունեին, կերած-խմածները մեկ էին, և էլ նույնը, մենակ սրտերն էին չոկ, պատճառը՝ ամեն բանը մարդու սիրտն է, հասկցաք[4], գլխո՞ւ եք...

– Ի՛նչդ չիտակ խոսքեր են:

– Տո՛... էդ ի՞նչ բան էր:

– Ի՛նչդ էլ միտքդ ես պահեր, Ուստա Ջան:

– Էստեղ կենացդ ուզեց, կարո Ջան, ապրի՛ս, ապրի՛ս:

Ամեն կողմից ճայնեցին սեղանակիցները, գովելով ու խրախուսելով Ուստայի խոսքն ու աշխարհատեսությունը:

Ուստան ոգևորված նորից քայլ առավ.

– Էդ պատվական մարդու մասին խոսքս բանալով, միտս ընկավ Ղանդահարի բազարը իրան քեյֆխանեով: Կեցե՛ք էս փլավը սրբեմ, փորս ցնծա, էդոր մասին էլ պատմեմ:

Ուստայի սովորությո՝ մի պատմությունը միշտ մի ուրիշ պատմության դուռ կբանար. և միտը կընկնեին այնպիսի նոր բաներ, որ ինքն էլ կզարմանար, թե ի՞նչպես եղավ, ո՞րտեղից եկան ու միտն ընկան սրանք. այնպիսի բաներ, որ առաջ մտքում բնավ[5] չկային...

---

1 D տեղուց տեղ

2 D տեսանք մի քաղաք *փխ* մի քաղաք տեսանք

3 D չիք էդպես բան

4 D ամեն բանը մարդու սիրտն է, հասկցաք *փխ* սրտերն էին

5 D չիք

Որտեղից էլ որ եկած լինեին այս պատմությունները[1], և ի՞նչ կերպ, միևնույն է, քանի որ, ինչպես միշտ, կուրախանային բոլոր գյուղացիները. այսօր էլ այս սեղանակիցները սրտանց ուրախացան, որ Ուստան նոր պատմություն պիտի անե, մանավանդ դիտեին[2], որ երբ Ուստան ուրախ կլինի և բավականաչափ խմած, ավելի հետաքրքիր և չբնդ դեպքեր ու զրույցներ կպատմե, ավելի հետավոր ու խորհրդավոր երկրներից. և ա՛յնպես համով և իր տեսածները ուրիշների աչքերի առջև ա՛յնպես վառ ու պատկերավոր կներկայացնե, որ թերահավատ մարդն անդամ կկարծե, թե ինքն էլ Ուստայի հետ այնտեղերն եղել ու տեսել է նրա հետ միասին՝ նրա տեսածները բոլոր...

Ուստան չտապում էր: Տեփանոսը թախանձեց.

— Ուստա՛ ջան, ծանր կե՛ր, քեզի համար է հաց քաշելս. ի՞նչ կվռազես, էսօր բանթող ենք, էգվան կաշխատինք...

Ուստան յուղոտ շրթներն ու բեխերը սրբելով՝ սկսեց.

— Էդ մարդն ըսավ, թե ես էնքան ուրախ եմ, ոնց որ Ղանդահարի բազարի քեյֆխանեի մեջն էղնիմ. չեննաթի երազի մեջ: Միտքս դրի՝ Ղանդահար էղնելուս էդ գովական քեյֆխանեն տեսնեմ: Էնպես էղավ, որ մե տարի չանց՝ մեր քարվանը Ղանդահարի ճամփեն բռնեց, լավ միտքս չէ, քանի օր ու գիշեր գնացինք. Թեհրան, Սպահան, Բաղդադ, իջանք Ղանդահարի վրա...

Ղանդահարի բազարը չա՛տ մենծ տեղ կբռնե, կրնամ ըսել մեկ պստիկ աշխարքի չափ. էնտեղ ամեն տեսակի

---

[1] D չիք այս պատմությունները

[2] D գիտնալով

արհեստի ու առուտուրի խանութ կա. մի[1] տեղ երկաթ կծեծեն, մեկել տեղ արշում կշինեն, էտեղ[2] կտավ կհինեն, էնտեղ[3] կներկեն. մեկ տեղ ոսկի զարդեր կշինեն, հայց կնկեն, մեկել տեղ[4] պղպեղ կխուզեն, ակռա կքաշեն, հագուստ կկարեն, ձի կնալեն: Էսպես հազար ու մեկ խանութ, հազար տեղն կկանչեն ու կքաշեն առուծախի. ապրանքները կգովեն, առնողին կխաբեն, ծախողին կխաբեն: Էս փող ու հաշվի, խաբելու և էլ խաբվելու, վնճի ու կռվի տեղն է. պարաքնաները փողը կուզեն, պարտականը չի տա. ծեծ ու դեշ-դեշ խոսքեր, դիվան-դատաստան. դրժ՛-բր՛ժ, գլուխ կդնկա... Բայց էս բազարի վերևը, սանդուղներով կելնես — վերնատունն է, ուրիշ տեսակ[5] տեղ է, դրախտի աշխարք, քեյֆխանեն, անունն էդման է: Բազարի վրեն չինած էր[6] քեյֆխանեն[7] էնոր չափ մենծ տեղ, մարմար օթևաններ, անհաշիվ շա՛տ, ամենքը զարդարած, թախթերը դրած, բարձ ու խալի. տեղ-տեղ շուշաբանդ, մեջը շատրվաններ, զով ու զուլալ ջուրը կբխեն, առիքներեն պիլլորի ջահեր[8] կախած, ամեն դին ծառ ու ծաղիկ, խառհավքերը կգունդունան...

Մի տեղ անուշ խորակներ կուտեն, հազար ու մեկ մերգ ու պտուղ, շարբաթ ու դայֆա կխմեն. նարգիլա կքաշեն, տամա, նարդի կխաղան...

---

1 D մե

2 D էտեղ *վրա* մե տեղ

3 D էնտեղ *վրա* մեկել տեղ

4 D չիք մեկել տեղ

5 D տեսակի

6 D կան

7 D չիք

8 D ճառեր

կերթաս կնատես չուշաբանդի մեջ, բարձին մեջդ տված՝ նարդիլա կքաշես, պայֆա կխմես կամ չարըմթ[1], մեկ էլ ջահերը[2] կվառին, խնկածաղիկի անուշ մուխը չորս դին կբռնե, թառն ու սազը բլբուլի ձենով կխոսին. ներս կմտնեն խաս ու ատլաս հագած, թևերն ու կրծկալները բաց հուրի[3]-փերի աղջիկներ[4], էն որ երազիդ մեջ տեսել[5] ես ու ցորկը ա՛ռ քաշել[6], կամ էն որ աչխարքի մեջ տեսել[7] ես ու երազիդ մեջն էլ չես կրցեր գրկել[8]... Էդ աննման, անմահական աղջիկները[9] կպարեն ու կերգեն, ու կխաղան հազար նազերով...

Նոև, ջահերը[10] կմարին, թառերը կերթան, ձեն-ձուն կկտրվի, մենակ շատրվանի անուշ շիշփոցը կիմանաս[11]. մենակ աստղերու լուսը չուշաբանդեն մարմանդ կցոլա, կամ թե լուսնակի լուսը[12]: Մեկ էլ էդ պահին, քաղցր քեֆով կուգա քու ամենեն ուզած ու ա՛ռ քաշած աղջիկդ, քու մարքիդ ու երազիդ միջի աղջիկը[13], կուգա կմտնի ծոցդ՝ անուշ ծամերը երեսիդ վրան շաղ տալեն[14], գլուխը

---

1 D *չիք պայֆա կխմես կամ չարըմթ*

2 D ճառերը

3 D հյուրի

4 D աղջկներ

5 D տեսեր

6 D քաշեր

7 D տեսեր

8 D պրկել *փխ* ձեռք բերել

9 D աղջկները

10 D ճառերը

11 D + մութ-մլար է

12 D լուսը *փխ* թե որ էղնի

13 D *չիք* քու մարքիդ ու երազիդ միջի աղջիկը

14 D տալով

սրտիդ վրան դնելով[1]... Ու կմոռնաս թե՝ աշխարքում[2] քեզնեն ջոկ ուրիշ մարդ կա, թե որ քեզի էլ չի մոռնաս...

Դրա՛խտ... Էսքան կրնա էդնի դրախտը. ամեն բան կուտաս հոգիդ էլ վրան, որ ինչ է՝ էս օրը տարի դառնա, տարին էլ ծեր չուննենա...

Մի վայրկյան լռեց Ուստան և հայացքը պատեցրեց[3] սեղանակիցների վրա: Նրանք Տփանոսի սրահում նստած՝ հոգով ներկա չէին. նրանց ներքին[4] աչքերը գինով[5] ու երազով թե առած թռել հեռացել էին Ղանդահարի մարմարյա վերնատունը...

— Պահո՛, պահո՛...

— Մ՛ման բաներ կան ի վեր աշխարքի...

— Արքայութենն[6] էնտեղ է էղեր, տեղյակ չէինք...

Ուշքի եկած ունկնդիրների կրծքերից էր, որ թռչում էին այս հիացական կոչերը:

— Էս էլ ըսեմ որ,— չարունակեց Ուստան,— մարդ կար, որ տարին մեկ հեղ էլ վարեն չի ելեր վերև, առուտուրեն, ագահութենեն աչք չի բացեր՝ ելնելու, վայելելու քեյֆխաներն: Մարդ կար, որ տարիներով ցածեն վերև չէր ելեր: Շատ մարդիկ էլ կային, մեկ ոտքը բազարի մեջն էր, մեկել ոտքը քեյֆխանեի մեջ. շատերն էլ կային, օրը բոլոր վերնատան մեջն էին, մե-երկու պատիկ պահիկ կիջնեին բազարը, մե-երկու պլիկ կշահեին ու նորեն վերև կելնեին: Կային, որ ըսկի վերևեն վար չէին իջնի:

---

[1] D դնելեն

[2] D աշխարք

[3] D պտտցրեց

[4] D չիք

[5] D գինիով

[6] D Արքայությունն

Մանսուր աղեն, երկու օր մեկ հեղ մտներ-չմտներ վերնատուն. առուծախի[1] վրա էր, քարավանի[2] համար բաներ կառներ ու բերածը կծախեր: Ես էլ՝ մեկ ոտքս վարն էր, մեկել ոտքս վերևը. հենց որ առուծախի մեջ գլուխս չաղաց կդառնար, սիրտս կնեղվեր, ինձի վերև կգցեի[3]: Գիշերները ցորեկ դարձրած[4], ցորեկները՝ գիշեր, էնտեղ ընկած՝ քեֆ կէնեի:

Լավ կյանք քաշեցի, պակաս տեղ չմնաց...

Ուստան վերջացրեց:

— Կարո,— դիմեց տացուն, որ սովորույթ ուներ հաճախ միայն անունով կոչելու նրան,— դուն էդքան հեռուները երթալու պետք չունեիր. դուն մշտական էլ վերևն ես, ամեն հեղ էլ, երեկ էլ, հիմի էլ, էգվան էլ, և էլ ամեն տեղ էլ դուն մշտական քեյֆխանեի մեջն ես...

— Ջէ՛, տացու, հոգուդ մեղք մի՛ էրա. ոտքիս մեկը մշտական բազարի մեջն է, վարն ու վերը ես խառներ եմ իրար:

— Ես էլ տացուի պես կմտքեմ. Ուստես մշտական քեյֆխանեի մեջն է[5]:

— Կարելի է,— հարեց տացուն,— ժամանակ-ժամանակ բազար իջնես, թե չէ փող ո՛ւր տեղեն պիտի ճարես, որ քեֆ էնես. առանց փող՝ վերնատուն կթողնե՞ն, Ուստա՛...

— Տացու ջան, լա՛վ իմաց որ հարուստ, փողաչատ մարդիկ առավել քիչ կելնին[6] վերնատուն, քանց աղ-

---

1 D առուծախի

2 D քարվանի

3 D կքցեի

4 D դառած

5 D + ի՞նչ գործ ունի առուծախի, խառ ու խուբի մեջ,— Տեփանոսն էր ձայնակցողը:

6 D կելին

քաոնները: Կրնամ բանլ, որ ապրանքու համար է չինված քիֆխաննն... ապրաար, խնդճը էնաեղ կմոռնա իրան խնդճ օրը, էնաեղ իրան հարուստ ու բախտավոր կտեսնի. մեկ պիկ ունեցողը էնաեղ իրան գանձատեր կիմանա:

— Ուսաա,— հարցրեց Աթոն,— դուն էս բաները լսողա՞ց ես, թե՞ տեսողաց:

— Ըսի բշտե,— կարճ կապեց Ուսաան, առանց նրա կողմը նայելու:

Սեղանակիցներից մեկը սեղանի վրայից կանաչեղենի մի ցողուն առնելով մաքրեց ծխամորճը, ու գարկելով Ուսաայի ծնկին, ասաց.

— Էրենկ աչքերուդ, Ուսաա, մեկ էլա գոմական թաթունդ հան, խելքս տուն գա:

Ուսաայի ծխատուփը գատարկվել էր արդեն. Ջավուշը տվեց իրենը. խնդրողը մի պղանակի չափ ծխախոտ առնելով, տուփը հանձնեց հարևանին, սա էլ իր հարևանին, և այսպես ձեռքն ձեռք անցնելով, կիսված հասավ կրկին տիրոջ ձեռքը:

— Ուսաա՛, Ղանդահարի բազարը մինչի քանի՞ օրվա ճամբա է,— հարցրեց Աթո ամին:

— Ղանդահարի քովն կես ժամու ճամփա է,— պատասխանեց Ուսաան ամենայն լրջությամբ:

Աթոն չփոթված նայեց Ուսաայի աչքերի մեջ:

— Աթո ամիս, բան կհարցնես, օրենքով հարցրու. ո՞ւրտեղեն քանի օրվա ճամբա է:

Աթոյի հարցերը անհաճո էին Ուսաային, որով նա հեգնող ու թշնամական էր տրամադրվել դեպի Աթո ամին:

— Հա՛, խոսքի օրինակ, թավրիզեն,— լրացրեց տված հարցը Աթո ամին:

— Բառատուն օրմա ճամփա է. Իրանա հողերեն կելնես Բաղդադ, հնտեղեն էլ Թուրանա դուբաններով չիտակ Ղանդահար:

— Տո՛, մարդ զարմանք[1] կմնա, էդքան հետու ի՞նչդ ես գնացն, մեր Շորագյալն ո՞ւր, Ղանդահարն ո՞ւր...

— Ի՞նչ կա զարմանալու. մեր գեղերեն ի՛նչքան էրթացող[2] ու գալող կա Պետերբուղ, Վարշավ, Երուսաղեմ, մինչի Ամերիկա, որ գիտցածովս աշխարքի էն ծերն է՝ մեր աշխարքի տակի-ղին: Դո՛ւ, Ամո, կաներեն հետու չես գնացն, գիտես թե, ուրիշներն էլ քեզ[3] պես են,— Ուստային պաշտպանելու մտքով միջամտեց տացուն, և չատերը ձայնակցեցին նրան:

— Պատո՛ս տացու,— դիմեց Ուստան իր ազդեցիկ բարեկամին,— գործն հասկցող մարդու մասին չէ խոսքս. բաած է թե՝ Վանեցու կաղը Զինամաչին է հասեր. տո՛, ես որ երկու ոտք եմ ունեցեր, քարվանն էլ տակս, ընչի՞ Վանեցու կաղեն պակաս տեղ երթըցած չեմ կրնա էղնի, ընչի՞ իմ երթըցած տեղերը երթըցած չեմ կրնա էղնի: Վանեցին Զինամաչին է էղեր, ես չեմ էղեր. մեննակ էս հերիք է, որ խոսքս չիտակ էղնի. սուտ որ ուզենամ ըսեմ, կըսեմ թե՝ Զինամաչին էլ եմ էղեր, Արաբստան էլ, Հնդստան էլ. թևս բռնող ո՞վ է. ի՞նչ է, խելքի չի՞ պառկի: Ճչմարիտը կուզե՞ք, ես կհավատամ, որ Վանեցին իրան կաղ ոտքովը հասեր է հասած տեղերը, Զինամաչին ու էլ էվելի հետու աշխարքներ: Չէ՞ որ մարդը անթև թռչուն է, ճամփեն բռնի՝ կերթա, կերթա մեկ տարի, օրթը տարի, տասը տարի, թե որ չմեռնի, մեկ օր էլ կհաս-

---

[1] D զարմացք

[2] D երթացող

[3] D քեզի

նի հետց դրսի աշխարքներն էլ: Հետմի խոսք է, թե հավին որ թողնես, մինչի երեսաղեմ կերթա, հապա աբլորն ո՞ւր կերթա: Դե՛հ հիմի, Ամո ամի, դուն թե ունես՝ հետևեն հասի...

Ուստան այս խոսքի վրա կանգ առավ, մի գավաթ գինի «կաթնցրնց»[1] ուղղակի քիմքի[2] վրա և նույն վայրկենքով շարունակեց.

— Ամո ամին գիտես, թե ծնկաչոք եմ գնացեր ես...

Ամոն իսկույն վրա բերեց.

— Գիտեմ որ քարվանով ես գնացի:

— Է՛, պրծանք-գնաց պարտապանաց: Դժարը քարվան ուննալն է, բանի՛ք[3], դժարը էդ չէ, բանը սեր ունեցնալն է, աշխարք տեսնելու սերը: Մանկուց ես կուզեի ժուռ գալ՝ վեր-վար, էսդես-էնդին... Բախտս բացավ, քարվանի մեջ ընկա, էնդուց հետև հո՞ տունը նստելու չէի, քարվան ունեցող մարդը թևավոր է, մեկ էլ որ՝ քարվան որ ուննես՝ պետի առուտուրի համար երկրեն երկիր, քաղքեն քաղաք էրթաս-գաս, ընչու որ քարվան խոսքը, ինչ որ ըսին ինձի թավրիզի դիտնակ աճամնները, քյար-բան խոսքն է, որ ըսել է՝ քյարի, շահու, օգուտի բան, գործ:

Ուրեմն, էսպես, քարվան ունես, առվի ջրի պես կընկնես ճամբա, կէրթաս ու կէրթաս, ու կէրթաս օրերով, ամիաներով, էստեղեն էնտեղ, էնտեղեն էլ կանցնես կէրթաս է՛լ էվելի հեռուները. մեկ էլ որ աշխարքները, ներսի ու դրսի, վերի ու վարի և էլ բոլոր աշխարքները իրար կպած բաներ են, հողը հողին կիպ-կպած է. մեկ աշխարքի հողը

---

1 D «կոթացրնց»

2 D քմքի

3 D ըսինք

մտար, ըսել է թէ՝ մեկ ուրիշ աշխարքի հոգին մոտիկցար, էդ ուրիշ աշխարքն էլ, որ մտար, մեզի համար հետու, իրանց համար դրկից աշխարքին մոտեցար: Էսպեսով, էման կէղնի, որ էրթալով, էրթալով հետուն մոտիկ կդառնա, մոտիկը՝ հետու:

Ուստան նորից կանդ առավ, մի գլանակ չինեց՝ որ ծխե, մի փոքր հանգստանա, սակայն չէր կարող հանգստանալ. ապրած-անցած կյանքը, աշխարհաժուռ քարվանը դրդռել էր նրա երևակայությունը, որ օղի-գինու չնորհիվ էլ գերազանց վառվել էր արդեն: Ջարթնել էին հոգում դեղեցիկ հուշերն ու տեսիլները ապրած քաղցր օրերի և անցած հեքիաթային ճանապարհների: Ուզում էր պատմել, անհագ պատմել, որ միտքը հանդարտի, երբ սեղանակիցներից մեկը, կարծես ճեղքեց նրա մտածումը, մի հարց տալով նրան.

— Կզարմանամ, Ուստա՛, դուն ի՞նչդ ես էդ օտարականն, այլազգիներու հետ տարիներով ճամբա կտրեր, տարիներով հետներն ապրեր, չա՛տ կզարմանամ...

Տված հարցը փոխում էր խոսքի ընթացքը. Ուստան հանկարծակիի[1] եկած՝ վարանքի մեջ էր. չփոթվեց նրա միտքը: Մի պահ անց՝ իրեն գտավ վերստին ու վստահ պատասխանեց.

— Իակի[2] էլ մի՛ զարմացի. աշխարքը ինձի ու քեզի պես մարդոցով[3] լիքն է. մեկ անգամ պատահիս մարդուն՝ ճանաչ[4] կէղնիս, վրա երկուսին՝ ընկեր, վրա իրեքին[5] ախբեր:

---

1 D հանկարծի

2 D Իակի

3 D մարդկերանցով

4 D ճանանչ

5 D երեքին

Ու էս էլ իմաց, որ մարդն ախորժին առավել է. ախորժն օրական է, մարդն՝ հավիտենական: Ի՞նչ ըսիր, Պատոս ասպուռ:

– Շիտակ է խոսդ. ախորժն օրական է, մարդն՝ հավիտենական, ողորմածիկ հնար էլ էղպես կրանը,– վկայեց Պատոս ասպուռն:

– Չէ՛, Ուսաա,– նորից դիմից նախկին հարցաւոն,– կուզեի բանել Քեն՝ դուն հայ-քրիստոնեն, քու հավատքին ու օրենքին հաստատ, էնոնք մայմեղական՝ աճամ ու արար, հաչար ու մաքր, իրանց դինին ամուր, ո՞րման կապրեիք...

– Ըսինք՝ բնկերոջ պես, ախորժ պես, մարդու պես...

– Էդ որման կէղնի, չեմ հասկնա:

Ուսաան նկատեց, որ բոլոր սեղանակիցները շահագրգռված էին այս հարցի պատասխանով: Մի պահ խորհեց՝ հայացքը ներս դարձրած[1], ապա ձեռքը փարտելով, որպես թե իրենից մի հոգս դուրս[2] էր նետում:

– Բանը հասկնալու մեջն է. չէ՞ որ Աստված մեկ է ամեն տեղի համար՝ Քե՛ քրիստոնեի, Քե՛ մահմեդականի, Քե՛ կռապաշտի, և էլ ամեն արարած-աշխարքի. Աստված մեկ է, մենք էլ իրան տեղծնները:

– Հա՛:

– Չէ՞ որ Աստված դրկեց իրան օրենքները մարդոց բանելու համար, իրան մարգարեն ու փեղամբարները:

– Էդ հայտնի բան է:

– Էդ ման[3]: Քրիստոսին դրկեց մեր մեջը քարոզելու, Մահմեդին դրկեց էնոնց մեջը քարոզելու, ոնց որ Դաշնակի շրջիկները մեր մեջը կքարոզեն իրանց ծրագիրը.

---

[1] D դարձրեց

[2] D մի կողմ

[3] D չեք

Հնչակի չրջիկները ուրիշներու մեջ իրանց ծրագիրը: Ու ամեն մարդ էլ իրան խելքով ու խղճով էս կամ էն ծրագրին կկամավորի: Բրիստոսը քարոզեր է մեր մեջը մեր լեզվով, Մահմեդը էնոնց մեջը իրանց լեզվով. Բրիստոսը իրան Ավետարանը գրեր է էս կողմեն — ձեռքը ձախից դեպի աջ չարժելով — Մահմեդն էլ իրան Ղուրանը ներհակ կողմեն — նույն չարժումը կրկնելով աջից դեպի ձախ — ու էդ գրածները էկեր մեջտեղը իրար հետ մերվեր են, միավորվեր,— և ձեռքերը աջից ու ձախից վրա բերելով՝ մատներն հյուսեց իրարու՝ այս պատկերով Ավետարանի և Ղուրանի միաձուլումը ցույց տալ կամենալով. ապա մի պահ լռելով, հարեց.— երկու մարգարեքն էլ նման-նմին բաներ են քարոզեր — Աստված սիրել, Աստծուց վախնալ, արուն չթափել, չգողնալ, չդրկել, ողորմություն հնել — լսող-կատարողներր կերթան մեր դրախտն ու իրանց չննաթը, չկատարողները կերթան մերոնց դժոխքն ու իրենց չհհնմը: Լդման, մենք էլ: Ես Ավետարանի ճամբեն բռնած էս դիեն, էնոնք էլ Ղուրանի ճամփեն բռնած հակառակ դիեն՝ կէրթայինք ախբոր պես, ընկերոջ պես, հիմի հասկցա՞ք...— ավարտեց Ռւստան իր խոսքը, և քրտինքը ափով ճակատից սրբելով՝ հաղթական նայեց ունկնդիրներին:

— Ապրի՛ս, կարո չան, ապրի՛ս,— սրտագին ձայնեց Պոտոս տացուն,— վարդապետներեն լավ քարոզ կուտաս, խելքի պուտուկ ես, խելքի՛ պուտուկ:

Եվ ամենքը գովասանքներով օծեցին Ռւստային: Սեղանը վերջացավ: Տեփանոսը այսօր «բանթող» հայտարարեց, ասելով՝ «Մեկ՝ կուշտ կերածին, մեկ էլ՝ անոթուն պտի չթանեցնես, էգուց առավոտ կանուխ նորեն գործի ենք»:

Անուշ խոսքերով իրարուց բաժանվելով՝ Ուստան Զավուշի հետ գնաց տուն՝ տաքացած գլուխը մի քիչ բարձին դնելու. այսօր թե շատ էր կսրել ու խմել, թե շատ էր խոսել. և վերջապես, մինչև ճաշ եռանդուն բանել էր:

Զ. <ԳԼՈՒԽ>
<Ա. տարբերակ>

<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՋԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>

Ուստան ճաշից հետո մի փոքր քնել էր, քունն առել, և հիմա լվացված, սիրտը տեղը, թիկն էր տվել բարձին, և ծխում էր ու միտք անում իր անելիքները՝ թե ո՞ր գյուղում կլիաստ թողած ամբար կամ հոր ունի չինելու, և ուր նոր այվան կամ սայլ կապելու:

Օճախում, մարմանդ կրակի վրա, թշում էր փոքրիկ, սևացած սրճամանը: Ներս մտավ նոր ծննդական սանամեր Սաթոյի ամուսինը՝ սանահեր Մուկուչը.

– Քավոր Ուստա ջան, բարի իրկուն, գլխիդ մատաղ, էլի դուռդ եմ եկել,– ասաց Մուկուչը մոտենալով և ձեռքը մեկնելով:

– Բարով եկար, հալա մի [կողքիս դիմաց] քովս նստի՛ր, տեսնեմ քեֆդ ի՛նչպես է,– և տուփը բացած ներկայացրեց Մուկուչին:

– Քեֆս լավ է,– պապիրոս փաթթելով,– ու հիմի էլ ավելի լավ է:

– Հա, օղորդ, աչքդ լույս, սանամերը տղա է բերել,– ասաց և սանահոր ձեռքը ամուր սեղմեց:

– Աչքի լսով մնաս, քավոր ջան, էլ խոսք չունի, մուրազս առա. ա՞խր, էս քանի հեղ է՝ աղջիկ աղջիկ, ժառանգի կարոտ մնացինք:

– Հաստատ, որ էս մեծ աչքի լույս է. [աչքերդ լույս ըլնի, կաց մի արագ խմենք/ էղանել կաց, մի արագ խմենք՝ սանիկիս արևշատության համար,– և վեր կացավ արագի շիշը բերելու:

Սանահերը չարունակեց խոսքը.

– Ուստա Ջան, լա՛վ հարկ եմ տենել. լավ կյանք ունինք. տնաշեն, աչքերս պարզավ [մեկ կուգաս, մկրտենք, էսօր կիրակմուտ է. [նշանածս էլ/ մերս էլ, աներս էլ, նշանածս էլ՝ սանամերդ՝ ձեռքդ կհամբուրեն – ամենքս կխնդրենք, որ էսօր քո ապիր ձեռքերովը էլի մեր տունը մեռոնդ բերես: Բան ունի՞ս ըսելու:

– Գլխիս վրա, Մուկուչ Ջան, [աո, խմե/ իմ բանիս տունն ինչ է, էս է՝ հազնիմ, պատրաստվեմ, կուգամ: Ա՛ռ խմե՛ – մեկ:

– Ուստա Ջան, չեն մնաս,– խմելով և սրբելով բերանը,– փիլոսին տեսա, խնդրեց, որ գա, Օսկանի մոտ կերթամ հիմի, որ ընտանին առնի գա:

Սանահերը գնաց: Ուստան կանչեց գյուղի սափրիչին, սափրվեց, հագուստները փոխեց, և գնաց գյուղամեջ՝ խանութները՝ մեռոնլամ գնելու, սանամոր համար մի մեծ չալովի, և ծանր-հանդիսա քայլերն ուղղեց սանահեր Մուկուչի տունը:

Ճանապարհին Ուստի առաջ [կարեցին] եկան երկու մարդ. մեկը մի երկու ոտք հեռու մնաց, մյուսը մոտենալով բարևեց ու ասաց.

– Ուստա, ո՞ւր էղան, քովդ կուգայի:

– Ի՞նչ կար, Սողոմոն,– քաղցր ձայնով հարցրեց Ուստան:

– Հեչ, Ուստա Ջան, քիչըմ փող էր պետք, հարկը կուգենն, ո՞ւր երթայի, եկա քովդ. դե՛հ, դու գիտես, որ քեզնեն դուրս մարդ չունիմ. քո սիրտն էլ հայտնի է դեղին, որ ձեռքդ [ընկնի] ըլնի – չէ՛ չկա:

– Ինչքա՞ն է պետք:

– 10-15 մանեթ:

– Պիտուս վրա,– հանեց քիսեն ու տվեց:

– Ուստա ջան, չա՛տ չնորհակալ եմ. հիմի պարտքս էդավ, ես կրսեմ, առաջուց հետ – 40 մանեթ, կալոցին կուտամ. 40 մանեթ, չէ՞:

– Փիլոս աղբարը պիտի, ինչքան ես պարտք. իմ միտքս չի մնա էդպես բաները:

Եվ չարունակեց նույն քայլվածքով ճանապարհը:

– Տեսա՞ր մարդը,– Ուստի դնալուց հետո փող ստացողը դարձավ ընկերին,– մի խոսքս երկուս չէրավ:

– Բարի ըմբր ու անցար. ամենքին ձեռք է բռնել. էս է՝ սերմնացու չունիս – Ուստի քոմը կերթաս, էս է՝ հարկ է, պարտքեները դուռդ է չոքել,– էլի Ուստեն, որ հոգին կրակը կձգե, քարի տակեն փող կճարե, քեզ նեղ տեղեն կազատե. ու մի օր էլ չեղավ, որ տված պարտքը հիշեցնե. Աստված էնոր մեկը հազար անե:

– Էդ հալա հայտնի բաները. դու չդիտես թե տնաչենը պաղտնի ինչքան տուն կպահե. էդոր համար էլ Աստված էնոր քիսեն միշտ լիքը կպահե, քանի կծախսե, էնքան կծաղկի:

Ուստան մտավ Մուկուչի այվանը. սանահները գլխաբաց դիմավորեց նրան, ապա գայեկ Անան ներսի տնից բերեց բարուրի մեջ փաթաթած նորածինին, և քավոր Ուստայի հետ, մի քանի տարիքավոր կանանց և մանրախոչոր տղա ու աղջիկ դուռ-դրացիների հետ դնացին եկեղեցի: Մկրտությունից հետո, բարուրը դրեցին քավորի տարածված ձեռների վրա, ափերի մեջ երկու վառվող մոմեր, և այսպիսով գլխաբաց, Տեր-Մաթոսն էլ առաջները ձգած ծանր ու մեծ վերադարձան նոր սանիկի տունը:

Տերտերը [աղոթքներ մրմնջալով] քավորի հետ մոտեցավ տղոցկանի անկողնուն:

Անկողինը պատրաստված էր Թոնրատան վերի անկյունում, կամարից կապած թախտի վրա: Սանամները նստել էր վերմակը ոտքերին, բարձերը մեջքի հետևը դրած, գլուխը փաթաթած մի քանի բազպատիններով և ուսերին ձգած քավորի նվիրած նոր չալովին: Տղոցկանի գլխավերևը նստել էր նրա մայրը, իսկ Մուկուչի մայրը, տան տնտեսը, մի ոտքը հարսի մոտն էր, մյուսը՝ Թոնրի շուրջը: Դրացի և բարեկամների կանայք պատել էին անկողնու շուրջը, թևերի տակ բռնած նվեր բերած «սեղանները», որը սալով ձվածեղ, որը մազով՝ խաշած հավ: Քավորը, ինչպես կարգն էր, բարուրը տվեց սանամորը, որը ձեռները պարզած, գլուխը համեստ խոնարհած՝ ընդունեց. ապա մոմերը նույն ձևով հանձնեց սանամորը: Տերտերը շուռ էր տալիս Մաշտոցի այս ու այն երեսը՝ լսողին ու չլսողին անհասկանալի աստուածքներ մրմնջալով: Ծեսը [վերջացնելուց] ավարտելուց հետո՝ օրհնեց մանուկին, ծնողներին, կնքահորը ու վերջացրեց.

– Հորով-մորով պավակ ըլնի, բարով մեծնա, աչքերդ լույսի, քավոր Ուստա, դաստումդ կատար:

– Ամեն, ամեն,– ասացին բոլոր կողմերից, և հերթով մոտեցան համբուրելու. հերթով՝ առաջ տերտերի ձեռքի Մաշտոցը, հետո մեռոնված երեխային՝ բարուրի վրայից:

– Աչքերս լույսի, սանահեր Մուկուչ, սանամեր քուր, Զարդար անա, Աստված ձեզի ողջ պահե սանիկիս գլխուն, երկեն արև ըլնի, էս օճախի անունը պայծառ պահե, ամոթով դուրս չդանք...

Քավորը դեռ երկար էր չարելու բարեմաղթություններըը, բայց նորածին սանիկը սկսեց լալ, սանամայրը ստիպված եղավ ծիծ տալու, միայն ամաչում էր տերտերի և քավորի ներկայության կուրծքը բանալ: Մուկուչի մայրը բանը գլխի ընկավ:

– Տերտեր չկան, քավոր չկան, համեցեք այվանը:

Մուկուչը առաջնորդեց նրանց այվանը: Այնտեղ լամբը վառ էր, օճախը բոցին էր տալիս, և սամովարը եռ էր գալիս դռան առաջը:

Ուստան նստեց օճախի աջ կողմը, վերի գլուխը, տերտերը մյուս գլուխը՝ նրա դեմ ու դեմ:

Իրար հետևից ներս մտան ու տեղ բռնեցին հյուրերը՝ Փիլոսն ու Օսկանը, և մի քանի դյուղացիներ, հարևաններ ու ազգականներ:

Տեր Մաթոսը մի խոր ծերացած [կիսագրագետ միամիտ] մարդ էր, մեջքը երկու տակ, միրուքը հինավուրց ճերմակությունից դեղնած, որի վրա բռնոթի թափթփուկները դունդ-դունդ նստել էին. երկար գորշագույն և բազմաթիվ կնճիռներով ակոսված [հանգած աչքերը հագիվ էին երևում խորշոմների միջից:

Նստելն ու բռնոթու մեծ տուփն հանելն մեկ եղավ, ահագին պտղունց լցրեց քթի խոռոչների մեջ և մեծ դեղնավուն թաշկինակը հանեց]:

[Այնինչ] Տերտերը հանեց բռնոթու մեծ տուփը և ահագին պտղունց լցրեց քթի խոռոչների մեջ, [և փռշտալը մեկ եղավ] սովորականից դուրս բռնոթու քանակը փռշտացրեց նրան, և մեկ էլ բռնոթու մի զանգված թափվեց միրուքի և վերարկուի կրծքի վրա, որ կերակուրից [ու միրուքի] նստած յուղերի պատճառով փայլում էր աղյասի նման: Այնինչ նա անընդհատ փռշտում էր՝ հյուրերը անդադար կրկնում էին.

– Տերտեր, բարի ըլնի, տերտեր, բարի ըլնի:

– Օրհնյալ ըլնիք, որդիքս,– հազիվ կարողացավ փռշտոցի միջից ձայնել Տեր-Մաթոսը: Ապա երբ հանգստացավ, վերարկուի թևի [ծայրերով] սրբեց ոչ միայն միրուքն ու կուրծքը, այլև քիթը:

Մուկուչի երիտասարդ եղբայրը թեյ էր չինում և մատուցանում հյուրերին:

— Ի՞նչ նոր բան կա,— դիմեց քավոր Ուստան բոլոր հյուրերին առհասարակ:

Ուստան հասարակության մեջ լուռ մնալ չէր սիրում. կամ ինքը պիտի խոսեր, և կամ ուրիշին պիտի խոսցներ: Ամեն մարդ մի սովորություն ունի, Ուստեն էլ չա՜տ սովորություններ հետ, այս սովորությունն ուներ: [Սակայն] Միայն նա ավելի շատ սիրում էր, որ ինքը խոսի [սակայն այսօր առանձնապես տրամադրություն չուներ (սիրտ չուներ)]:

— Նորն էլ դու պիտես, հինն էլ, քավոր Ուստա,— պատասխանեց հյուրերից մեկը,— դու ասա, մենք լսենք:

— Մեծերն եղած տեղը, պզտիկները չեն խոսի,— ասաց Ուստեն,— դու ասա, Ադամ ամի, ինչ կա ձեր գեղերը:

Ադամ ամին Մուկուչի տներն էր, մինչեւ Շիրակի կարմիր-վանք գյուղից, որ կնոջ հետ էր եկել իրենց ազգկա կենդանաբերության առթիվ:

— Ինպես բան չկա, պլխիդ եմ մատաղ, քավոր ջան, մեռնակ, կարելի լսած կաս, որ մեր գեղի երեսելի տիրացուն համբարձման իրան օրը մեռավ:

— Չեմ լսած, Ադամ ամի, էդ ինչո՞վ էր երեսելի որ,— հետաքրքրված հարցրեց Ուստեն:

— Ուստա քավոր, ուստա ուներ, ուստա ուներ, ծովի պես, էդ մեր յուսահոգին. հոր կփորեր, կմտներ մեջն ու օր-ցերեկով երկնուց մեջ աստղեր կպտներ, աստղաբաշխություն կեներ. ես ո՛րն ասեմ, թուղթ ու դիր կեներ, գել կկապեր, բնկնավոր կլավցներ, մարդու ճակատի դիր կկարդար... էդ ինչպես էնոր անունը չենք լսած, տեր ստեր, դու էլ դրոց մարդ ես, չես լսած...

— Օրհնյալ կենաս, չեմ իմացել, յուսահոգու անուներ, ինչ էր, ասա, կարելի է միտքս գա...

– Անունը տիրացու Բարսեղ էր:

– Հա՛, հա՛, [էն էլ իմ տարիքին մարդ էր], գիտեմ, հին մարդ է, վաղուցվա տիրացու է, ես որ [Ակոռա կործանումին հետո] էստեղ քահանա եկա՝ էն Հոռոմոց վանքը տիրացուիմյուն կեներ:

Ուստի հետաքրքրությունը խոսույն չուռ եկավ դեպի Տեր-Մաթոսը, և ուղղակի կարելով ընդհանուր խոսակցությյան թելը, դարձավ տերտերին:

– Տերտեր, դու Ակոռա կործանումը ըսիր, ըսել է՝ աչքովդ տեսե՞լ ես:

– Բա, չգիտես, օրհնյալ. ողջ [գյուղը] աչխարհ գիտի, [դու չես իմացած, ես ինքս ակոռցի եմ]: Քանի հեղ պատմել եմ Ուստա Կարոյին:

Եվ փոքրիկ աչքերը, ասես, հանդիմանությամբ ուղղվեցին Ուստի մեծ ու աչխույժով վառ աչքերին:

– Ներող եղիր, տերտեր, դու չես պատմել ինձի, ուրիշն էլ չի ասել.– իրեն արդարացնելով խնդրեց Ուստան,– հիմի լավ ժամանակն է, չատ կուզեմ իմանալ դլխուդ եկածները...

Բայց խնդրեցին, որ նորից պատմեր չգիտցողների համար, լսողների համար էլ հետաքրքիր էր նորից: [Ուստան լսել էր, նորից ուզեց լսել:]

– Էհ, Ուստա, իմ դլխի եկածները Այսմավուրքեն չատ է, մենք էլ մեզի համար մարդ էինք ժամանակով, հիմի ծերացանք, հարցնողն ով է, թե դու էլ մարդ ես, քավոր Ուստա, մենք էլ <ենք> տղամարդ եղել, աչխարք տեսել. է՛յ գիտի օրեր... Հա՛, Ակոռա կործանման տարին, ես մի թեթև հոտաղ տղա էի,– սկսեց տերտերը, թելի բաժակը քամելով,– ընկեր հոտաղների հետ [մալ] տավարը կարծեցնեինք Մասրտա ժեռերի ու հարտոնների վրա, մեկ էլ, ասես, [երազ ըլներ] ահռիկ երազի մեջ ըլնեինք, ողջ աչ-

խարք դղորդ ընկավ, ու մեր ոտքի տակը հողը կամի պես սլում էր. էնպես ժաժք, որ սարերը իրար կուգային ու կերթային, ջրերը ամեն խառնվեցին իրար, ծով եղան ու սարերը գլուխն ելան, էդ պոռնն Մասիսը հազար տեղեն տրաքվեց, ու ճեղքերեն ծուխ ու կպրեն հեղեղ թափվեց. ծուխը բռնեց երկինքը, յոթն օր, յոթ գիշեր, ծուխը մնաց մուժի պես ու արևը խավարեց, ու ադամամութ գիշեր. ընկեր հոտաղներս ամենքը լեղապատառ ընկան մեռան. յոթն օրեն հետո՝ ծուխը քաշվեց, արևն ելավ, աշխարհք աշխարհք եղավ. ես էլ մեն-մենակ, իրար վրա ժողվեցի ցիրուցան տավարը ու ցած իջա, անցա Ակոռա կուշտով. ի՞նչ տեսնեմ, ինչ որ տեսա, տղես սպանողը չտեսնի. Ակոռա տեղը պղտոր ծով, ու մարդոց լեշերը ջրերի վրա՝ ուռած-կապտած կոմբոմբային. հեր, մեր, քուր, աղբեր էնտեղ էին. ընկա գետին ու լացի. մեկ էլ, ասես, հոգիս տուն տվեց, մեկ ձեն լսեցի հոգուս մեջ, թե մի լար, տավարդ առ, էջմիածին գնա. էդպես էլ արի, գնացի տավարը տվի վանքին: Լուսահոգի Ներսես կաթողիկոսն էր էն ժամանակը Իջման աթոռքի վրա, ինձի կանչեց, հարցուփորձ արավ ու պահեց իրեն կուշտը, էնոր չիրուվին կրակ կդնեի ու հետը ինձ ման կուտար, քաղքե-քաղաք, լավ օրեր տեսա էդ լուսահոգու հետ. ինձի չա՛տ կսիրեր լուսահոգին:

— Ի՛նչ ահռելիկ բան, ի՛նչ զարմանք բան, սիրտս դող ընկավ,— զարմացած ձայնարկեց Ուստան, կտրելով տերտերի երկարաշունչ պատմությունը:

Հյուրերը ամենքը սարսափած կուչ էին եկել: Ուստայի ձայնը բոլորին սթափեցրեց:

Մուկուչը աչքով նշան արավ, և անմիջապես փոխեցին հացի սփռոցները, ու արագ, գինի և տեսակ-տեսակ կերակուրներ չարեցին հյուրերի առաջը:

[Միաւժամանակ ամենքը զբաղված էին ուտելով և նորածին մանուկին ու ծնողների համար բարեմա...]

Տերտերը հոգնած ձայնով վրա տվեց «Հայր-մերը», որը տարիների ընթացքում, օր ու գիշեր, այնքան էր ասվել, որ այլևս մաշվել էին բառերը, և ոչ մի տող հնչյուն չէր մնացել, ապա սեղանը խաչակնքելով ասաց.

– Հայր Աբրահամու օրհնությունը իջնի էս տան վրա. նորածինը բաղդավոր ըլնի, հորն ու մորը խնդում ըլնի, Սիմավոն ծերունի ըլնի:

– Ամեն, տեր Աստված լսող-կատարող ըլնիս. Մուկուչ ջան, աչքերս լույս: Սանիկս, ես գիտեմ, էնպես տղա պտի ըլնի, որ նմանը չունենա:

Եվ լցրեց արաղի բաժակը. բոլոր հյուրերը խմեցին արաղն լիքը-լիք բարեմաղթություններով. միաւժամանակ ոչ մի ձայն չէր լսվում, բացի միայն ուտելու [և դալնեբի] չչունչից և դալների՝ սաքսոններին հպած ներդաշնակ աղմուկից:

– Հա, էն կուզեի ասել,– կտրեց լռությունը քավոր Ուստան,– տերտեր ջան, կարգիդ մատաղ, էդ որման եղավ, որ տերտեր դառար, օրթե կաթողիկոսը քեզի չա՛տ կսիրեր, կրնայիր եպիսկոպոս ըլնել:

– Կդառնայի, բայց չուզեցա, քանի որ կուզեի աշխարք մտնել, [կնիկ առնել] առանց կնկա չարժե թեկուզ կաթողիկոս ու թագավոր դառնալ[1]:

– Շիտակ կխոսի տերտերը,– վրա տվեց Ուստան:

– Սուտ խոսելու ինչ ունիմ. ադամորդի ենք, ամեն մարդ չի կրնա աշխարքեն ձեռք քաշե. ասենք, իսկի

---

[1] *Լուսանցքում.* «Մեկ որ մեծ ուսում ենք տեսել, մեկել որ չուզեց»:

միաք էլ չունեի քահանա դառնալ, քանի որ կարդմունք լավ չդիտեի, պատահեց էլի, բան էր:

Հյուրերի լարված ուշադրությունը նշան էր, որ ուզում էին լսել աեր Հոր պատմությունը:

— Օրին մեկը քաղքցի ու գեղացի տիրացուներ նկել էին էջմիածին տերտեր ձեռնադրվելու. կաթողիկոսը ինքը նստել, կբններ էնոնց. ես էլ կանգնել էի էնոր հրամանին ու սպասին:

Բննության պահին հարցմունք էրավ ինձ, «տիրացուներ, ինչ որ սուրբ սկիհի մեջ ճանճ ընկնի, ի՞նչ էնելու եք». հենչ մեկը չդիտեր. մեջերը մեկը կար, էն էլ բասավ ինձ՝ վեհափառ տեր, ինչ ճանճ ընկնի, երկու [մատովս] մատս կկոխեմ սուրբ սկիհի մեջ, մատներիս ծերով կբռնեմ ճանճը, կդնեմ բերանս, վրայեն սուրբ գինին կծծեմ, ու նոր ճանճը կդնեմ ժամի պատի ծակը:— Ապրիս, ասավ կաթողիկոսը,— ինչ որ էծ ընկնի, ինչ կննես: Էն չկրցավ պատասխան տալ. մեկելներն էլ պապանձված կանգնել էին, ինչ էս քարեն ձեն կուգա, էնոնցեն էլ ձեն կելներ.— ձեռքը գարկեց օճախի քարին,— էն ժամանակ ես սիրտ առած վիզս կերկարցնեի ու կկարճցնեի: Լուսահոգին նշմարեց ինձի ու ասավ.— Հը՛, Մաթոս, գիտես, ասա, ինչ տիրացուները ամչնան, որ իմ ծառան տերտերացուներեն չա՜տ բան կհասկնա: Ես էլ ձեռքերս սրտիս դրած ու աչքերս գետին քցած ասի.— Ինչ էծ ընկնի, երկու մատս կխոթեմ սուրբ սկիհի մեջ, մատներիս ծերով կբռնեմ էծը գուրս կհանեմ, կդնեմ բերանս, վրայեն կծծեմ սուրբ գինին, նոր էծը կխրեմ ժամի պատի ծակը: Ապրիս, ասավ կաթողիկոսը, որ էպես է, կուզե՞ս քեզի էլ քահանա ձեռնադրեմ: Ես չուզեցի մեծամորիս խոսքեն անցնել, ու էդման քահանա դառանք:

— Ինչ լավ պատահմունք է եղել,— ուրախ ծիծաղեցին տերտերակից հյուրերը:

Ուսուան քննական չնչտով ասաց.

— Տերտեր, էդպես բան կրնա պատահի, որ մեծ էծն բնկնի պզտիկ սկիհի մեջ:

— Աստված քեզի բարի տա, քավոր Ուսուա կարո, էդոնք հրաշք բաներ են, օրթե Աստված ուզենա մարդու փորձել՝ կրնի, բա չի րնի. Աստծու ձեռքեն ամեն բան կուգա, պզտիկը մեծցնել, մեծը պզտիկցնել. էդման հրաշքներ դու քի՞չ ես տեսել. ամեկ մարդու մեկն ասեր քու տեղը, վնաս չուներ. դու աշխարհաժուռ, [հրաշք տես...] հրաշքներ տեսած մարդ ես, ի՞նչ կա չհավատալու. հո չենք ըսե՝ թե էծն ընկավ, կըսենք՝ օրթե ընկավ:

Ուսուայի ինքնասիրությունը շոյվեց:

— Հրաշքներ միշտ եղել են ու միշտ էլ եղնելոց են, ամեն բան կպատահի աշխարքի վրա, քանի որ [պատահել է] միշտ էլ պատահել է, էդ էլ կպատահի. տերտեր ջան, ես թիրահավատ չեմ մեր գեղացոց պես, մենակ բան մ՝ էր՝ ասի. ես էլ որ իմ տեսածներն [ու լսած...] կպատմեմ՝ լսողներու մազերը բիզ-բիզ կկանգնեն, բայց ես տեսել եմ ու չեմ զարմացել, ու հավատացել եմ, չտեսնողները մենակ թարահավատ են ու կզարմանան:

Ուսուան առհասարակ [չատ] հավատացող ու դյուրահավան մարդ էր. ինչ տեսակ անհեթեթ պատմություններ ասեին, կհավատար որպես իրողության, միայն թե խելքին նստեր. իրեն ըմբռնողությամբ՝ հավատալի լիներ. օրինակ, եթե մեկն ասեր, թե Արագը առաջ սարերի պլխովն է գնալիս եղել, բայց [հարյուր] հազար տարի առաջ մի վարպետ մարդ ձորերն է իջեցրել, կհավատար, ոչխհետև, նրա կարծիքով, այդտեղ ինչ անհավատալի բան կար որ. մի՞թե քիչ գետեր կան սարերի գլուխը. բայց եթե ասեին թե՝ Արագը ձորերից սարերն ի վեր է վազելիս եղել և թափվում է եղել երկնքի մեջ — [ջրվար

[Թե] ամեննևին չէր հավատա (միայն նեմե հրաչքի մասին խոսք չլիներ):

Սեղանը վերջացավ: Տերտերը նորից մի վայրկյանում մտավ «Հայր մերի» դլխից և ծայրից դուրս եկավ, խաչակնքից, թևերի ծայրերով սրբից բերանն ու օրորվելով, տնքալով ոտքի կանդնից.

— Օրհնյալ մնաք, որդիք, ես երթամ, ծեր մարդ եմ, քնեմ, էգուց կիրակի է, պատարագ ունինք:

— Փառավոր մնաս,— ասին հյուրերը ոտքի կանդնելով և համբուրելով տեր Հոր աջը:

Տերտերը դնաց, Մուկուչի եղբայրը մինչև տուն ճանապարհ դրեց ծերունուն:

— Մեր տերտերը լավ մարդ է,— ասաց Ուստան,— եաևեն չեմ ասի, երեսին էլ կասեմ. վահրատենց Տեր-Մուքելեն ազնիվ է. ինչ էննենք, որ էնոր ուսմունքը չունի. հետու սուրբ կարդից, մեղրը չա՜տ տկի մնչն է դրած — տեր Մուքելի մասին է խոսքս. Տեր-Մաթոսի ոտքը ինձի համար էնոր դլխեն առավել է:

— Ինչ խոսք,— ասավ դյուղացիներից մեկը,— Տեր-Մուքելը նեռ է, Տեր-Մաթոսը անմեղ երեխա է, մենակ քիչմ սուտ կխոսե. խոսքի օրինակ, Ակոռի կործանումը տեսնելը փչոց էր:

[Է մարդ է, էլի, նեղելի է, չի ուզե]

— Է՛հ, վնաս չունի,— մնչ մտավ Փիլոս աղբարը,— մարդ է, էլի, չի ուզե, աչխարհ տեսած, չար ու բարի անցրած մարդոցենետ մնալ:

Ուստա Կարոյի ունքերը կամաց-կամաց վեր էին բարձրանում, ապա դիզվեցին իրար վրա, և սրտի հևքը հազիվ մի քիչ դասելով բարձրաձայն [որոտաց (թնդաց)] ասաց.

— Ամոթ չէ, էդպես կխոսիք, տերտերն ինչո՞ւ պիտի սուտ խոսեր, ով էր դանակն առնել էնոր բկին չոքել, որ

սուտ խոսի, կամ որ էնոր բառով ոսկի կուտար, որ սուտ ըսե. մարդը իր տեսածը կըսե: Հնութ [խոսք է, թե] բառ է՝ թե խոսքի սուտը չկա, սխալը չկա, օրթե սխալ էլ ուզենար տերտերը խոսել, կըսեր թե Սոդոմ-Գոմորի կործանումն է տեսեր, [կամ թե չէ սկիհի մեջ փիղ է ընկել]. Ակոռը հասատատ որ կործանվել է, ու տեղն էլ կա մինչի էսօր, ու մեղ էլ մոտիկ է. ես, դիտեք որ, սուտ խոսող մարդոցեն կպատռիմ. սուտ կխոսին գեշ նպատակով, խաբելու համար, առուտուրի մեջ, դատավորի առաջ, [որ Սիբիլ չերթան...]

Եվ կրակոտ աչքերը ոլորեց տերտերին ստախոսության մեջ մեղադրող դյուզացու վրա:

Ուստի խորին համոզմունքով, ինչպես և շատ անգամ է նա, առիթը եկած ժամանակը արտահայտվել, սուտ են խոսում մարդիկ անձնական շահի համար, սուտ երդում են ուտում, սուտ վկայություն տալիս — դատավորներին խաբելու համար չխոստովանելով իրենց և իրենց բարեկամների հանցանքները. իսկ հնքիաթական զրույցները, առասպելներն ու հրաշքներով լի պատմություննները և նրևակայական [ամեն] ամպեղեն կառուցվածքները նրա համար անաղարտ, անխոցելի ճշմարտություններ ու իսկություններ են միայն:

— Ա՛յ, ես տեսել եմ ներսի աշխարքները, որ մեծ խիաըը արագի պզտի բուտիլկի մեջ են տեղավորել, հաստ ճոպանը ասեղի ծակումն են անցրել, [ձին <անընթ.> պարանի վրա խաղ է արել], փիղը դավուլ է զարկել, էշը գուլպա է գործել, աղջիկը ջրի մեջը [պառկել] պառկած պապիրոս է քաշել ու ծուխը ջրի տակին դուրս հանել. էլ որն ասեմ, էման մարդիկ եմ տեսել, որ շուշա կամ կրակ են կերել. ի՞նչ է, սուտ կըսեմ[1]:

---

[1] *Լուսանցքում.* «Ուրիշը կասի՝ Ամերիկա գնացողի մասին»:

– Էդ ամենքը օդորմի է, Ուսուա ջան,– ասավ Փիլոսը,– ես էման դերվիշներ եմ տեսել Սամարղու քաղաքի մեջ, որ ջրի կուժը կդնին բոխի մեջ, ու աչքդ չթևերթած՝ բոխի մեջեն [մեծ] ծիրանի մեծ ծառ կբուսնի, վրեն անուշ ծիրաններ, հավքերը կերգին. կուգես ծիրանը քաղե կեր, կուգես հավքերին լսե:

– Էդ ամենը,– մեջ մտավ մի ուրիշ դյուզացի,– մենք էլ ենք լսել. աղբոբս տղեն Թիֆլիզ սալդաթ էր, եկել էր, կպատմեր զարմանալան հրաշք բաներ. էնտեղ ձիրկ կա, կըսեր. էդպես բաներ ցուց կտան, բայց կրսեն՝ աչքակապություն է, շիտակ բաներ չեն:

– Աչքակապություն չկա,– համարյա նեղացած ասավ Ուսուան,– ձեր աչքերը ով կկապե. տեսնելուս դնա, ձեռքով անտղե, տես. ինչ բան որ մեր ձեռքեն չի գա, կրսենք սատանի բաներ են, աչքակապություն է. աշխարքն էլ էդպես չէ՝ արև-լուսին, ցորենը ցանքս կբուսնի, հնչ չեղածից երեխա կլինի, մարդ կդառնա, հրացան, երկաթե ճանապարհ... ինչ է՝ էդոնք էլ աչքակապություն է: Կսխալիք, ինչ որ կըսեն կա, մեծ հրաշքի բաները Աստված է ստեղծել, պզտիկ հրաշքի բաները – մարդիկ. էպես. մարդ կա մարդակ է, մարդ էլ կա կաս-Աստված, հրաշագործ. անհավատ ըլնելը, մեծ խոսելը լավ բան չէ: Դեհ, ելեք երթանք տներս, դիշեր անցավ:

Ամենքը ոտի կանգնեցին, շնորհակալություն հայտնեցին [սանահեր] տանտեր Մուկուչին, և մեկ-մեկ դուս եկան, ամենից վերջը Ուսուան, Օսկանը և Փիլոսը ձեռք տվին Մուկուչին. սանահերը մի կապոց դրեց Փիլոսի թևի տակը:

– Էս ի՞նչ բան է, Մուկուչ ջան, փեշքեշս ո՞րն է, մեր տունն է. էդ չեղավ:

– Չէ՛, քավոր ջան, քու գլխուդ մատաղ, սանամորդ փեշքեշն է. վնաս չունի, թողություն էրա, քեզի ու Փիլո-

սխա համար գուլպաներ է գործել, քիսա, մանդր-մունդր բաներ, թողություն էրա:

– Լա՛վ, լա՛վ, սանամորա ասա, որ երկնուց-գետին չնորհակալ ենք. Թող չո՛ւտ ոտքի կենա, կիմանաս, քեզի հետ եմ,– և խորհրդավոր ժպիտով շարունակեց,– տարիմ՝ հաօր էլի քավոր եմ, ինձի ամոթով չէնենք:

Մուկուչը ամոթխած հարսի պես կարմրեց և զվարթ խնդումով բացեց դուռը. փոքր նըքայրը՝ ճրագը ձեռքը, /փողոցն/ մեծ ճանապարհն առաջնորդեց պատվավոր հյուրերին, որոնք Նզոյի հետ ուրախ-ուրախ խոսելով սուզվեցին գյուղական անլապատեր փողոցների բավիղում:

Թ. ԳԼՈՒԽ
(Բ. տարբերակ)

<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>

Առավոտյան նախաճաշից հետո Ուստա Կարոն Քերոբ ախպոր, Ռես-Հոսեի և [Արտաշի] Կրպոյի հետ գնացին Նազարեթենց ամպարը չինելու: Ռեսին հետը տարան, իբրև ղրույց-ընկեր աշխատանքի ժամանակ, իսկ Կրպոյին՝ արհեստ սորվեցնելու համար:

— Կրպո ջան, էսօր քեզի կտանեմ արհեստ սորվեցնելու համար, երկուշաբթի էլ կերթաս վարժապետի մոտ գիր-կարդալ սորվելու համար. ազատ ժամանակդ կուգաս արհեստի, ինչու որ կարդմունքը արհեստեն վեր է, առավել է, բայց արհեստն էլ դուվլական բան է, էն ապրուստի անցամքելի աղբյուր է, լավ արհեստ որ գիտնաս, աչխարքիս վրա հացի ամեն դուռ ու ճամբա առջևդ բաց է, թեկուզ օխտը օտարի մեջ ըլնիս, Ջինմաչինի հողն ընկնիս: Արհեստ սորվիր, ինձի կօրհնես:

Կրպոն լուռ էր, իսկ Ռեսը սրտագին շնորհակալություններ հայտնեց իր և իր որդու կողմից:

— Ուստան իմաստուն կխոսա,— դարձավ Ռեսը իր տղային, նրա աչքերի մեջ իր խիստ ու դիմառատ հայացքը բևեռելով,— էնոր խոսքերը ականջիդ օղ արա. հաց որ ունենաս, առանց թագի թագավոր ես:

Ճաշից հետո Ուստան բանթող հայտարարեց. մեկ որ շաբաթ օր էր, մեկ էլ որ մկրտության պատրաստություն

պիտի տեսներ: Մի փոքր հանգստանալուց հետո, Ուստան կանչեց գյուղի սափրիչին և ամենքը՝ ինքը, Ռեսը, Քերոբը և Օսկանը սափրվեցին. ապա դռնավուր հագուստները հագնելով Ռեսի հետ ելավ գյուղամեջ, և քայլերն ուղղեց խանութի մեռոնլաթ գնելու համար. իսկ սանամոր համար նվեր տալու մեծ չալովին ուներ իր պահեստի անդուկում, և որը Քերոբը պիտի տաներ հետը: Ուստան դեռ խանութ չհասած երեք տեղից իր բարեկամ գյուղացիք հրավիրեցին Ռեսի հետ մի-մի արաղ անուշ աննելու. Ուստան քաղցրությամբ ընդունեց բոլորի հրավերները, մինչ այդ եկեղեցու զանգերը [մեղմաձայն] մեղմանուշ հնչեցին, Ռեսը դնաց եկեղեցի, իսկ Ուստան չտապ-չտապ խանութից դնումն աննելով՝ քայլերն արագացրեց սանահեր Մուկուչի տունը, սակայն առաջը կտրեցին երկու մարդ. մեկը մի-երկու ոտք հեռու մնաց, մյուսը բարև տալով ասաց.

– Ուստա, ո՞ւր էդման վռազ, քովդ կուգայի:

– Ի՞նչ կար, Սողոմոն,– քաղցր ձայնով հարցրեց Ուստան:

– Ոչինչ, Ուստա ջան, մի քիչ փող էր պետքս, հարկը կուզեն,– ձայնը փորը ձգելով, ասաց Սողոմոնը.– ո՞ւր երթայի. դու գիտես, քեզնեն դուրս մարդ չունիմ: Քու սիրտն էլ հայտնի է աշխարքին, որ ձեռքդ ըլնի, չէ՛ չկա:

– Ինչքա՞ն է պետք:

– 15 մանեթ, գլխուդ մատաղ:

– Գլխուս վրա, Աստված ինձի, ես էլ ձեզի,– հանեց քսակն Ուստան և տվեց:

– Շա՛տ չնորհակալ եմ, Ուստա ջան, Աստված սրտովդ քեզի տա: Հիմի պարտքս եղավ, [45 մանեթ] առաջվա հետ 45 մանեթ, կալոցին կուտամ:

– Քերոբ ախպարը գիտե. ինչքան ես պարտք, էնոր ասա, իմ միտքս չի մնա էդ բաները:

Եվ չարունակեց իր ընթացքը:

— Տեսա՞ր մարդը,— Ուստայի դնալուց հետո Սոդոմոնը դարձավ բնկերին,— մեկ խոսքս երկուս չարավ:

— Ես էնոր նո՞ր պիտիմ. ափսոս չէ՞, էնոր ուրիշի հետ մե կյնոքի դիննք: Էդպես բարի մարդ քիչ կա էս ժամանակներս:

— Բարի ասիր ու անցա՞ր, ամենքին ձեռք է բռնել. էս է՝ սերմնացու չունիս — Ուստայի քովն կերթաս, էս է՝ պարտքատերդ դուռդ է չոքել — էլի Ուստան է, որ հոգին կրակը կձգե, քարի տակեն փող կճարե, բեղի նեղ տեղեն կազատե ու մեկ օր էլ չեղավ, որ տված պարտքը հիշեցնե. Աստված էնոր մեկը հազար անե:

— Էդ դեռ հայտնի բաներր, դու չգիտես թե տնաշենը պաղտնի ի՞նչքան տուն կպահե. քանի կծախսե, էնքան կծաղկի[1]:

Ուստան մտավ Մուկուչի այվանը. Սանահերը դիմաբաց դիմավորեց նրան, ապա տատմայր Անան ներսի տնից բերեց բարեւրի մեջ փաթաթած նորածին երեխան և քավոր Ուստայի հետ, ու մի քանի տարիքավոր կանանց, մանր ու խոշոր տղա-աղջիկների, դուռ ու դրացիների հետեն ու առջեւր ձգած գնացին եկեղեցի: Մկրտությունից հետո բարեւրը դրեցին քավորի տարածած բազուկների վրա ու ափերի մեջ երկու վառվող մոմեր, և այսպես, դիմաբաց, մկրտող ակոռցի Տեր-Մաթոսն էլ հետևերը ծանր ու մեծ՝ վերադարձան նոր տանիկի տուներ:

Տերտերը քավորի հետ մոտեցան տղոցկանի անկողնուն: Անկողինը պատրաստած էր Թոնրատան վերի անկյունում՝ կամերից կապած թախտի վրա: Տանտայրը

---

[1] Այս երկու պարբերությունը հեղինակը ձախ լուսանցքում ընդծել է:

նստել էր վերմակը ոտքերին, բարձերը մեջքի հետևը դարսած, դլուխ փաթաթած բաղպաղիններով և ուսերին ձգած քավորի նվիրած նոր չալովին: Տղոցկանի դխավերևը նստել էր նրա <մայրը>, իսկ Մուկուչի մայրը, տան տնտեսը, մեկ ոտը հարսի մոտն էր, մյուսը՝ թոնրի շուրջը: Դրացի և բարեկամների կանայք պատել էին ծննդամոր անկողնու շուրջը, թևերի տակ բռնած իրենց նվեր բերած «սեղանները» – որը սալի մեջ ձվածեղ, որը մաղի մեջ խաչած հավ: Քավորը, ինչպես կարգն էր, բարուրը տվեց տանտիրոջը, որը ձեռները պարզած, գլուխը համեստ խոնարհած՝ ընդունեց, ապա նույն ձևով վառ մոմերը հանձնեց տանտիրոջը: Տերտերը չուռ էր տալիս Մաշտոցի այս ու այն երեսը՝ լսողին և չլսողին անհասկանալի տմտմունքներ մրմնջալով. ծեսը ավարտելուց հետո օրհնեց մանուկին, ծնողներին, կնքահորը ու վերջացրեց խոսքը կնքելով.

– Հորով-մորով գավակ ըլնի, բարով մեծնա, աչքերդ լուս, քավոր վարպետ, դառումդ կատար:

– Ամեն, ամեն,– ասացին բոլոր կողմերից, և մոտեցան համբուրելու, հերթով՝ առաջ տերտերի ձեռքի Մաշտոցը, հետո մեռոնված երեխային՝ բարուրի վրայից:

– Աչքերդ լուս, սանահեր Մուկուչ, սանամեր քուր, Զարդար անա, Աստված ձեզի ողջ պահե սանիկիս պլխուն, երկնե արև ըլնի, էս օճախի անունը պայծառ պահե, ամոթով դուրս չգանք...

Քավորը դեռ երկար շարելու էր բարեմաղթություններ, սակայն սանիկը սկսեց լալ. տանտիրայրը ստիպված եղավ ծիծ տալու, բայց ամաչում էր տերտերի և քավորի ներկայությանը կուրծքը բանալու: Մուկուչի մայրը բանը գլխի բնկավ ու գարձավ նրանց:

– Տերտեր ջան, քավոր ջան, համեցեք այվանը:

Մուկուչը առաջնորդեց նրանց այվանը, ուր լամբր վառ էր արդեն, և [բուխարիկը բոցին էր տալիս] ու հյուրերը նստել էին արդեն — Պատոս Տացուն, [տիրացու Հովակը] գյուղի տանուտեր Խեչանը, [Ռևս-Հոսենն] Օսկանը, Մուկուչի անները՝ Խաչատուր Ադամ ամին, և ուրիշ շատերը ազգական ու դրացի: [Նրանք ողջունեցին հյուրերին] Բոլորը ուրախ կանդնեցին, համբուրեցին տերտերի աջը և տեղ տվեցին բուխարիկի վերի դլուխը, [Ուստային էլ իրեն] կնքահորն էլ, նրա հանդեպ, մյուս վերի դլուխը:

— Օրհնյա՛ ի Տեր,— նորից ասացին հյուրերը դլուխ տալով:

— Աստված օրհնե ամենեցուդ,— պատասխանեց տերտերը:

— Քավոր Ուստա Կարո, դատումդ կատար. բարով էդ սուրբ մեռոնը մեր տունն էլ բերես,— ձայնեցին ամեն կողմից, և ապա դառնալով Մուկուչին.

— Մուկուչ ջան, բարով երեխիդ պտուղը վայելես:

Մուկուչը ուրախ ժպիտով շնորհակալություն հայտնեց ամենքին մեկ-մեկ, և օդին առաջ բերելով հրամցրեց ամենքին, որոնք խմեցին նորածին երեխայի արևշատության համար:

Տեր Մաթոսը, որ մի խորին [ծերացած քահանա էր] ծերունի էր, մեջքը երկու տակ, միրուքը հինավուրց ճերմակությունից դեղնած, դեմքը դորշագույն բազմաթիվ կնճիռներով ակոսված, հանեց բռնոթու մեծ տուփը և մի ահագին պտղունց բռնոթի (քթախոտ) լցրեց քթի խոռոչների մեջ և ապա հրամցրեց իր կողքին նստած Խաչատուր Ադամ-ամուն:

Քթախոտը դրգռեց Տեր-Մաթոսի քիթը, [որն] ու սկսեց անընդհատ փռշտալ. հյուրերը իրար հետևից ձայնում էին.

– Տերտե՛ր, բարի ըլնի, տերտեր, բարի ըլնի:

– Օրհնյալ լինիք, որդիքս,– հազիվ կարողացավ փուշտոցի միջից պատասխանել Տեր-Մաթոսը, և երբ մի քիչ հանգստացավ, հանեց դեղին մեծ թաշկինակը և սրբեց քիթն ու բերանը և մուրուքը:

Ադամ-ամին, Մուկուչի ծնող հայրը, Շիրակի կարմիր-վանք [գյուղից] գյուղացի էր, մի բավական ծերացած մարդ, փոքր կազմվածքով, աչխուժ ու առողջ, սուր աչքերով. նրա [կրծքի] սրտի վրա կախված կային մի խաչ և մի մեդալ, որ ստացել էր ռուս-տաճկական պատերազմին ռուս բանակին մատուցած ծառայության համար:

Մուկուչի երիտասարդ եղբայրը թեյ էր չինում և հյուրասիրում հրավիրվածներին:

– Ի՞նչ նոր բան կա,– դիմեց Ուստան բոլոր հյուրերին առհասարակ:

Ուստան հասարակության մեջ լուռ կենալ չէր սիրում, կամ ինքը պիտի խոսեր, և կամ ուրիշին պիտի խոսցներ. ամեն մարդ մի սովորություն ունի, Ուստան էլ չա՛տ սովորությունների հետ – այս սովորությունն էլ ուներ:

– Նորն էլ դուն գիտես, հինն էլ, քավոր Ուստա,– պատասխանեց տանուտեր Խնչանը, գյուղի հարուստ մարդկանցից մեկը, որը թեև տանուտեր լինելու հանգամանքով գյուղում մեծ ազդեցություն պիտի ունենար, սակայն Դաշնակցության գործունեության չնորհիվ նրա դերը չա՛տ նսեմացած էր, և դարձել էր լոկ անվանական:

– Մեծերն եղած տեղը,– տանուտեր Ջան, դու լավ գիտես, որ պզտիկները չեն խոսի,– ասաց Ուստան, ու դիմեց Ադամ-ամուն,– դու ասա, Ադամ ամի, ի՛նչ կա ձեր գեղերը:

– Էնպես բան չկա, գլխիդ եմ մատաղ, քավոր Ջան, մենակ, կարելի է լսած կաս, որ մեր գեղի երևելի տիրացուն Համբարձման իրան օրը մեռավ:

— Չեմ լսած, Ադամ-ամի, էդ ինչո՞վ էր երևելի որ.— հետաքրքրված հարցրեց Ուսաման, ուրիշներն էլ միացան նրա հարցումին:

— Ուսաս քավոր, ուսում ուներ, ուսում ուներ, ծովի պես ուսում ուներ մեր լուսահոգին. խորունկ հոր կփորեր, ու կմտներ մեջն ու օր-ցորեկով երկնուց մեջ աստղերը կզտներ, աստղաբաշխություն կաներ: Էն դաներ է Թագավորի, Սրիմյան Հայրիկի աստղերը: Ես ո՞րն ասեմ, Թուղմ ու գիր կաներ, Սողոմոն իմաստուն, վեցհազարյակ կկարդար, գնել կկապեր, ընկնավոր կրավցներ ու մարդու ճակատի գիրը կկարդար... էդ ի՞նչպես է, էնոր անունը չեք լսած. տերտեր, տիրացու Հովակ, դուք էլ պրոց մարդ եք, չե՞ք լսած:

— Օրհնյալ կենաս, Ադամ ջան, չեմ իմացել լուսահոգու անունը, ի՞նչ էր, ասա, կարելի է միտքս գա:

— Անունը, տիրացու Բարսեղ էր:

— Հա, հա, Կարմիր-Վանքցի տիրացու Բարսեղ, հին մարդ է, դիտեմ, վաղուցվա տիրացու է. ես որ Ակոռայ կործանումեն ազատված էստեղ քահանա եկա՝ էն Հոռոմոսա վանքը տիրացուբյուն կաներ:

Ադամ ամու [և շատերի] հետաքրքրությունը իսկույն շուռ եկավ դեպի Տեր-Մաթոսը, և Ադամ ամին ուղղակի կտրելով իր խոսքի թել, հարցրեց տերտերին.

— Տերտեր, դու Ակոռա կործանումը ասիր, ասել է՝ աչքովդ տեսե՞լ ես:

— Բա, չդիտես, օրհնյալ, ողջ աշխարքին հայտնի է, չէ՞ որ ինձի Ակոռա Տեր-Մաթոս կասեն,— և խորշոմների տակ ծածկված փոքրիկ աչքերը հանդիմանությամբ ուղղվեցին Ադամ ամու վրա: [Գրեթե բոլորը] Ու Կարոն Ադամ ամու կողմից ներողություն խնդրեց միաժամանակ թախանձելով, որ նորից պատմե չդիտցողների համար, թեև դիտցողների համար էլ դարձյալ հետաքրքիր է:

— Հա, օրհնյալներ, Ակոռա կործանման տարին, ես մեկ թեթև տղա էի,— սկսեց տերտերը թեյի բաժակը քամելով.— Ողորմածիկ հերս ավել էր ինձ Ս. Ակոբա վանքը վանահոր քով ժամի ասմունք սորվելու, մոնթ, մեկ խոսքով ասած, կիրակոց-կիրակի վանահայրը ինձի ասմուլք ու կարդմունք կտրվեցներ, ողջ չաբաթը հոտապություն կանեի. Հա, ես էն կուզեի ասել, որ Ակոռա կործանման դառն օրը, ես ընկեր հոտապներու հետ տավարը կարծրցնեինք Մասրաս ժեռերի և հարոնների վրա, մեկէլ, ասես, ահռիկ երազի մեջ ըլնեինք, ողջ-աչխարք դղորդ ընկավ, ու մեր ոտքի տակի հողը կամի պես կպար. էնպես ժաժք, էնպես ժաժմունք, որ սարերը իրար կուդային ու կերթային, ջրերը ամեն խառնեցին իրար, ծով եղան ու քարափների գլուխն ելան. դեհ, դիտեք, Մասիսը, որ մի չափազանց սար է, էդ ահավոր զոռեն, հազար տեղեն տրաքվեց ու ճեղքերեն ծուխ ու կպրե հեղեղ թափվեց, ծուխը բռնեց երկինքը, յոթ օր, յոթ գիշեր ծուխը մնաց մուժի պես, արևը խավարեց, իջավ Ադամա մութ գիշերը. ընկեր հոտապներս ամենքը լեղապատառ ընկան մնացան...

Ադամ ամին, որ տերտերի հանդիմանությունից հետո, նոր էր իրեն հավաքել, ընդհատելով նրա զրույցը, ասաց.

— Ըչտե, ես էն կուզեի ըսել, որ Ակոռա [կործանման] ավերման տարին եմ աչխարք եկել. էդ տարին ժաժքի վախեն մեր գեղի բոլոր կնիկները անպուշք են արել. մենակ ես կարգին ու ժամանակին ծնվա: Էստեղ [լուսահոգի] տիրացու Բարսեղն ըսել է, թե էդ երեխան չա՜տ քաչ պիտի էղնի, որ ժաժքին դիմացել է մոր փորի մեջը...

Հյուրերը ամենքը [զսպած] ծիծաղով դարձան դեպի Ադամ ամին, սակայն Մուկուչը աներին ծիծաղական դրությունից ազատելու համար իսկույն միջամտեց. [հայտարարելով]

– Էդ դուշակ խոսքը չիտակ դուրս եկավ, քանի որ ա-ներս կռվին մեծ քաջություններ է ցույց տվել ու խաչ-մեդալ [ստացել] առև, ու էլ ամեն տարի էլ թագավորի խաղնեն ուղը մանեթ կուտա մինչի մահ:

– Էդոր մասին հետո,– ասաց տերտերը,– հիմի թողնք խոսքիս վերջն առնեմ: Հա, էն տեղ էի, թե ընկերներ ա-մենքը վախեն մեռան, մնացեր էի ես, մեն-մենակ, կիսա-մեռ, գետին ընկած, անոթի-ծարավ: Յոթն օրեն հետո (ետև) ծուխը քաշվավ, արևն երևցավ, աչխարք աչխարք եղավ. ես էլ վեր ելա, մնացած ցիրուցան տավարը իրար դլխի ժողվեցի ու ցած իջա. վանքի տեղը բան չէր մնա-ցել, քար ու ղուր, անցա Ակոռի կուշտով, ի՞նչ տեսնեմ, ինչ որ տեսա, աղիս սպանողը չտեսնի, Ակոռա տեղը պղտոր ծով ու մարդոց և անասնոց [մարմինները] լեշերը ջրերու վրեն՝ ուռած-կապուտցած կոմբոմբային, ընկա գետին ու լացի. մեկ էլ հոդիս տուն տվավ, տավարս առա, իջա Սուրբ Էջմիածին, տավարս Հանձնեցի վանքին. լու-սահոդի Ներսես կաթողիկոսն էր էն ժամանակ Լուսավոր-չա աթոռքի վրա, ինձի կանչեց հարցուփորձ արավ, մե-նակ ես էի ողջ մնացել էդ մարդաչատ հայ-քրիստոնե գե-ղից ու մենակ ես էի ականատես... ու պահեց իրեն կուշտը ծառա. դայֆա կչինեի, չիբուխին կրակ կդնեի, ու հետը ինձի ման կուտար քաղաքն քաղաք. լավ օրեր տեսա էդ լուսահոդու հետ. ինձի չա՜տ կսիրեր լուսահոդին...

Տերտերը վերջացրեց և հանեց ծոցից քթախոտի տու-փը: Հյուրերը որ չատ անգամ էին լսել այս զարհուրելի անցքը և սարսափել, հիմա էլ առաջին անգամ լսողի պես, սարսափած կուչ էին եկած իրենց տեղերում նստած, այն-քա՜ն կենդանի կերպով վերստին պատկերացրին տերտե-րի ականատեսի պատմությունը: [Բոլորը գրեթե, սարսա-փած կուչ էին եկել]:

– Ի՛նչ ահռիկ բան, Աստված կարոտ պահե...– չչնջացին մի քանի հյուրեր՝ երևոները խաչակնքելով:

Սանահեր Մուկուչը աչքով նշան արավ եղբորը, և անմիջապես փռեցին հացի սփռոցները [գինի և տեսակ-տեսակ կերակուրներ] չարեցին հյուրերի առջև: Տերտերը հոգնած ձայնով [օրհնեց սեղանը] վրա տվեց «Հայր մեր», որ տարիների ընթացքում օր ու գիշեր [այնքան էր ասել, որ այն] ասվելուց, այլևս մաշվել էին բառերը և ոչ մի որոշ հնչյուն չէր մնացել:

Ապա սեղանը խաչակնքելով ասաց.

– Հայր Աբրահամու օրհնությունը իջնի էս տան վրա, նորածինը բախտավոր ըլնի, հորն ու մորը խնդում ըլնի, Սիմավոն ծերունի ըլնի:

– Ամե՛ն,– հյուրերի կողմից պատասխանեց կնքահայր Ուստան,– Աստված լսող-կատարող ըլնի, Մուկուչ ջան, սանիկիս լավ պահե. ես գիտեմ, էնպես տղա պիտի ըլնի, որ նմանը չունենա:

Լցրեցին օղիի բաժակները, հյուրերը խմեցին լիքը-լիքը բարեմաղթություններով: Մուկուչը ամենքին գլուխ տալով պատասխան[եց]ում էր:

– Աչքի լույսով կենաք. էս ուրախությունը թշնամուս տունն էլ թող ըլնի. խնդրեմ, հաց անուշ արեք, ձեր տունն է, էվել-պակաս ներող էղեք:

Միառժամանակ ո՛չ մի ձայն չէր լսվում, բացի միայն գդալների ներդաշնակ աղմուկից:

Լռությունը խզեց քավոր Ուստան:

– Ադամ ամի, քաջությունների մասին [լսած] իմացած կամ. գիտեմ, որ դար ապրած մարդ ես, գլխուդ գալածներեն պատմե, լսենք [չատ հետաքրքիր ենք]:

Ադամ ամին բերանը սրբելով, դարձավ Ուստային:

– Քավոր Ուստա ջան, իմ գլխի [եկածները] գալածները Այսմավուրքեն չա՛տ են. որը ասեմ, որը թողնեմ. մենք

էլ [մարդ էինք] մեզի համար մարդ էինք ժամանակով, հիմի ձերացանք, հարցնողն ո՞վ է, թե դուն ո՞վ ես, անցածն անցուկ է, ամենն բան — մոռցուկ. հիմի որ պատմեմ, չատերու աչքին սուտ կթվա կամ անսիլք:

— Ադամ ամի,— հարկ համարեց Ուստան խրախուսել նրան, այստեղ Ուստան ուզեց իր միտքը,— ես [չատերի] ուրիշներու պես թերահավատ չեմ. ես էլ որ իմ տեսածներր կպատմեմ, լսողներու մազերր բիզ-բիզ կկանգնեն. բայց ես տեսել եմ ու սուտ չեմ [համարել] հաչվեր ու տեսածիս էլ հավատացել եմ. չտեսնողներր մեռնակ թերահավատ են, մեղք դրել չի րլնի:

— Էպես է, քավոր Ջան, ուրիշ պոռնիք բեզ պես [աշխարհաժուռ] բանիրուն մարդ. իրեն գեղեն դուրս չեկող մարդր [կամ գլքի երես չտեսնող մարդր] աշխարքեն ի՛նչ կիմանա. Բա, ես ի՛նչ մարդիկ տեսա, ինչեր լսեցի... Էյ գիտի օրե՛ր, մենք էլ էինք երիտասարդ, հիմիկվանները էլ. ի՛նչ լավ բնկեր-ոգերք ունեի, ամենքն էլ կտրիճ, ոգամարդ. էս Ալաճա սարր ի՛նչ է քաշել մեր ձեռքեն, լեզու առնի, պատմի. ամիսներով տուն գեղ չէինք իջնի, քարը բարձ կանեինք ու անուշ կքնեինք: Ջյուրդը, Թյուրքը չէին իշխնա մեր սինոռին մոտենա. օրթե մեր մի եղը կգողնային, մենք էնոնց տասը կտաննինք: Էս սար ու քրչերը ընկերներով քջուջ կէնեինք Թուրք ու քուրդ դաննու՝ դլուխներն ազալու. ամեն բարի ու քրչի տակ մեկ անհավատի դլուխ կա: Որսի մեծ սեր ունեի. երկնուց հավքերը, վայրի անասուններր ձեռքես դաղար չունեին մեր ձեռքեն. աննման նշան բռնող էի. մեկ օրինակ տամ, հասկցեք. Թե ինչ [Հրացան] Թվանք բաներնող էի. օրվա մեկը ողորմած հոգի մերս վաղեվաղ տուն մտավ Թե՝ ուրուրը մեր [չան ձագը] Թուխաը ձագերով տարավ. Հրացանս (Թվանքս) առա, դուրս Թռա, տես-

նեմ՝ ուրուրը երկնքի մեջ, ամպերու տակ կթռներ, [չան ձագը ճանկերի մեջ] թխսամները ճանկերու մեջ, ձագերն էլ թևերի տակ ծվարած. հրացանս արձակեցի, չիտակ ուրուրի [կրծքին] սրտին, ուրուրը սատկած գլոր-գլոր վար կուգար. [մտածեցի, որ չունը կընկնի բարձրեն ու կտոր-կտոր կլինի] փափախս բռնեցի, [էնպես բռնեցի, որ] մերս էլ դոգնոցը, ձագն ողջ-կենդանի ընկավ մեջը:

Մեկ զարմանալի դեպքի պատճառով՝ որսկանությանը վերջ տվի: Բգների (Բագնայրի) [մոտերը] քովերը մեկ եղնիկ զարկ[եց]ի, ոտքին էի նշան առել, որ կենդանի ձեռքս անցներ. էդ խեղճը վիրավոր ոտքը վերցնելով դնաց վանքի դուռը, [ու լիզեց վանքի] մեջքը տվավ դռան քարերին, [տխուր] աչքերը տրտում՝ երեսիս քցած. խղճիս դիպավ, սիրտս դող ընկավ, [հրացանս] թվանքս մեկդի [ձգեցի] քցեցի, եղնիկն եկավ քովս ու ձեռքս լիզեց. էնօրեն ուխտեցի՝ որսկանություն չանիմ...

[Այս] Եղնիկի պատմությունը ազդեց հյուրերի վրա:

– Լավ ես արել, Ադամ ջան, Աստված էդոր համար մեղքերուդ թողություն կուտա,– ասաց տերտերը:

– Է՛հ, տերտեր ջան, ո՞ր մեկ մեղքերիս... Է՛նքան արունք եմ արել ռուս-օսմանլուի կռվին, է՛նքան թուրք ու քուրդ եմ սպանել, համրանք չկա...

– Էդ մեղքերիդ համար [Ադամ ամի ջան] հենց դրախտի մեջտեղը կերթաս: Աստծուն ընդունելի բան ես արել, մի վախեցիր,– ըսավ Ռեսը [Ուստան և բոլոր հյուրերը գլխի նշանով համաձայնություն տվին]:

– Ողորմի ծնողացդ,– պատասխանեց Ադամ-ամին ուրախացած,– ի՞նչ պիտի աննինք, կռվի տարի էր. էնոնք կուզնին հայ սպանել, մեր ձեռքերն էլ բանճար չէր քաղե: Հա, կռվի խոսքը կանեինք: Հայոց քաջ երանալ Ազարովն էր կռվի Աստվածը. էն Արփա-չայի մեկել երեան

էր. ընկեր-տղերքով՝ Փարկիտցի Գալատի, Աբրոյի, Մարտոյի հետ. Աստված էնոնց հոգին լուս դարձնեն, փախանք մեր գնդեն, գնացինք Լազարովի դուռը, էնոր պինվոր զրվեցանք: Ինքը դարաբաղցի էր ու ձեռքի տակ դարաբաղցի առուծի պես կորիճ տղամարդիկ ուներ, որ Թրեն երես չէին դարձնեն. անցանք օսմանլուի հողը, վրա տվինք Ղարսի վրեն. Օսմանլու դորքը մերեն չա՜տ էր. ռուսի թագավորը հրաման չտավ Ղարսա վրեն երթալու, թե՝ կեցնք (սպասնք) նոր զորք[եր] դրկեմ. Լազարովը Լազարով էր, հրամանին ականջ չդրավ, մուղիկանները փչեցինք, բոչկաներով արաղը կոնծեցինք՝ ուզածիդ չափ, ուռա քաշելով ընկանք Թյուրք ասկյարի վրա: Ինքը Լազարովն էլ Թուրը քաշած, գլուխը բաց՝ զորքի առջևն ընկած՝ չարդելով, փրթելով՝ կոխեցինք Ղարսա բերդը: Ինքա՜ն, էնքա՜ն Թյուրք չարդեցինք բերդի տակը, որ էդոնց լեշերը ելան, դեզ-դեզ, հավասարվան բերդի պարիսպին, ու էնոնց վրա ռուսի դրոշակը տնկեցինք...

Հյուրերը հափշտակված լսում էին, կերուխումը մոռացած, և ամենքի աչքերի մեջ փայլում էր անսահման հրճվանք և ոգևորություն:

— Ընկեր-Գալուստս, լուսհոգին, էստեղ զարկվեց. [իրիկունը որ կազարմա մտանք, որ մի քիչ հանգստանանք, (յարունջիս հանեցի, ողջ տեղ չկար, մաղ էի դարձել. հագուստերս հանեցի, Թափ տվի, գնդակները առջևս դիզվեցին. ա՛յ, էսչափ,— և ձեռքով ցույց տվեց մի կույտ,— ես կասեմ [1000] 100 չափ օսմանլուի գնդակ վրես էր ընկել ու ինձի չէր վնասել], Աստված ինքը խնայել էր ինձ. մենակ վիզս երկու տեղ Թրով զարկել էին. ա՛յ, էստեղերը...

Ադամ ամին երկարացրեց վիզը՝ տեղերը մատով ցույց տալով, բայց հյուրերը չկարողացան դտնել կտրվածքի

հետքերը, որովհետև ծերութեան խորշոմներով [ծածկած էր] պատած էր ամբողջ վիզը՝ ծալ-ծալ...

Տերտերի քունը տանում էր, և գլուխը օրորվում էր կրծքի վրա. մինչ այդ ընթրիքը վերջացել էր. տիրացուն հյուրերից աննկատելի կերպով զարթնեցրեց տերտերին. աչքերը տրորելով տերտերն ասաց.

– Օրհնյալ մնաք, որդիք, ես երթամ, ծեր մարդ եմ, քունս կտանի, էգուց կիրակի է, պատարագ ունինք. ժամ համմեցեք,– և մի վայրկյանում մտնելով «Հայր-մերի» [ծայրից և գլխից] գլխից ու ծայրից դուրս ելնելով, խաչակնքեց սեղանը և տնքալով ոտքի կանգնեց:

[Տերտերը իր տիրացուի հետ գնաց] Մուկուչի եղբայրը մինչև դուրս ճանապարհ դրեց նրանց:

Ապա նորից չարունակեց.

– Լազարովը եկավ, ամենքիս տեսավ, [ինձի] գրկեց, ճակատներս պաչեց ու իր ձեռքով էս խաչն ու մեդալն էլ [կրծքես] դոչես կախեց... Շա՜տ զարմացավ, որ ես զարաբաղցի չեմ: Շա՜տ ազգասեր, քաջ մարդ էր Լազարովը, ու խելքի ծով: Ղարաբաղցիք ամենքը էդպես են, մեր մարդը էնոնց մոտ երեխա է, երեխա – փոփոխական, քամի, անհաստատ, ոնց որ նապաստակ, վախկոտ...

– Շիտակ կասե Ադամ-ամին,– հաստատեց Ուստան,– էնոնք են իսկ հայը, տղամարդ, թյուրքին հեծնող, ու խելոք, սատանի ճագ են. էնոնց լավ գիտեմ, մեջերը չա՜տ եմ եղել:

– Էդոնց քաջությունը մեր Մուշն էլ է տեսել. Դաշնակ ընկերության էն քաջերն են. կասեին թե՝ (էդոնց պորտը մեր սասունցոց պես) թրով է կտրած:– Խոսք առաջ Ռես-Հոսեն:

– Թե որ ղարաբաղցուն էդքան գովք կանենք, բա ինչո՞ւ, հեռու լսողաց, հեռու էս հարկեն, էնոնց էշի հետ

կնմանցնեն, էշ-դարաբաղցի կասեն,— նկատեց Հյուրերից մեկը:

— Հա, դարմանք բան է,— ասաց Տացուն,— ես էլ էնոնց չա՜ս եմ տեսել, տեղց տեղ խելք են, ու ես էնպես կհասկանամ, թե հենց էդ պատճառով էլ էնոնց էդ անունը կտան, ինչու որ, էն խելացի, խորամանկ մարդը են է, որ իրեն սուտ-էշ կձևացնեն, էդով ուրիշին մարդ ավելի լավ կխաբեն: Հնուց խոսք է թե՝ սուտ-խելառ ձևացնողն է, որ վանքի հավերը կուտե: Դու ի՞նչ կասես, Ռւստա Կարո:

— Չէ, հիմի ասեմ ձեզի,— խոսեց Ռւստան,— ամեննեն առաջ էն որ, էդոնց աչխարքը չա՜ս էշ կա. Ամեն տուն մի քանի էշ ունի. քարուտ-սարուտ տեղեր են, սայլ չի բանի, ամեն բան իշով կաննեն, հացը, խոտը, ամեն բան, ինչ որ մենք սայլով. էդպեսով ամեն դեղ հազար էշ ունի, էդ պատճառով իրանց երկրի անունը խարտաղ է դրած. ինչո՞ւ որ Ղարաբաղ՝ սև բաղ ասել չէ, [ինչպես չաուերը կհասկանան] հապա՝ էշի-բաղ: Գիտեք, որ ես Իրան-Թուրան շատ եմ եղել, ու էնոնց լեզուն քիչ գիտեմ. Իրանա լեզվով «խար» էշ ասել է:

Հյուրերից [ուրախ — բարձր բարձր ծիծաղով] մի քանիսը ուրախ ծիծաղեցին Ռւստայի բացատրության վրա, մի քանիսն էլ զարմացան նրա լեզվագիտության նկատմամբ:

— Հա՛, մեկ էլ որ,— շարունակեց Ռւստան,— դարաբաղցիք շատ իրատածի են, [Համառ, համառ, կամակոր] կամապաշտ. մարդ չգիտե, էշերն են իրենց տերերից սորվել էդ համառությունը, թե դարաբաղցիք են իրենց էշերից սորվել էդ [համառությունը] բնությը, ամոթ է ասել, իշությունը: Ինչպես հասկցնեմ ձեզի էդոնց կողքի ընկնելը. էդոնք, որ Աստված մի արատցե, կողքի ընկնին, յոթը լուծ դոմեչ լծես, տեղեն ժամ չես կրնա հանե: Ինչպես իրատածի են, որ՝ ամառվա կեսօրին [արևը կատեն] կըսեն ձուն կուգա, էնոնց հետ որ վեճի մտնես՝ էն գլխեն պիտի

իմանաս, որ մածունը սև դուրս պտի գա: Ղարաբաղցին իր գլուխը կկոտրե, խոսքը չի կոտրե: Որ մի բան ուզենա, դևմը բերդ չի դիմանա: Ա՛յ լավ միտքս ընկավ, մե պատմություն կանեմ, տեսնք էդոնց կողքի հասուրյունը:

Դրա-Դոռանչի օրը, ասել է մեր Տերնդազին, զարաբաղցու հետ մեր էշերով ճամբա կերթայինք սարերի բանձրիկ լենջերով, մեկ տեղ շատ խորունկ անդունդ կար, էդ մարդը անդունդի պռունկով կերթար, ասի, ախբեր, անդունդի պռունկով մոտիկ մի գնա, վար կընկնես, Ադամ-Եվայի տես կերթաս:— էն թե՝ բան չըլնի.— ասի՝ ինչպես թե բան չի ըլնի. Թռչուն քցես, ցրեխ-ցրեխ կլինի, ուր մնաց թե մարդը.— էն նորեն թե՝ բան չի ըլնի ու նորեն անդունդի պռունկով կերթար: Ես իմ խոսքիս վրա կանգնա, էն իր, վեճը որ շատ տաքցավ, էն ասավ. արի դրազ դանք, Թոննենք. Ասի, չէ, գլուխս դուրսը չեմ գտած: Ասավ, թե որ կվախնաս, ես կթոննեմ, թե որ ողջ մնացի, քու էշդ ինձի, թե որ մեռա՝ իմ էշը քեզի. Խոսքս խոսք է:

Ես խզճացի վրան, մտքիս մեջ ասի. զարաբաղցի է, խոսքի տերն է, կընկնի, կմեռնի, համ տունը հաց տանող չլինի, համ ես Աստծո առաջ սևերես կըլնեմ: Ասի.— ախբեր, դու ինչո՞ւ ընկնիս, հանկարծ որ Սատանան մեջ մտավ ու քեզ մեռցուց, [հետո] լավ կլինի, արի էշդ վար քցենք. Թե ողջ մնաց՝ իմ էշը քեզի, թե արևը քեզ բաշխնց, ասել է իմ խոսքն եղավ, դու էլ Աստուծուն փառք կուտաս, որ քու տեղդ էշդ մեռավ: Կամք տվավ ու երկուսով գրկեցինք էշը ու վար նետեցինք. խեղճ անասունը գռռալով գնաց ու էն գնալն էր, որ գնաց... կարելի է ողջ տեղը մենակ պոչը մնացած ըլներ: Տերն էլ կանգնել մնացել էր զարմացած՝ քարի գլուխը, վիզն երկնցած, ականջը անդունդին բռնած. ասի, տեսա՞ր, հունց իպատոս եղավ, ինչ լավ էր որ դուն չէիր:

Էն ի՞նչ ասեր, որ քնֆերդ գա. էն ասաց թե.

– Ի՞նչ խոսք, որ էշս էշ էր, խելքը չհասավ. ես բնկ-նեի, չէի մեռնի:

Էլ խոսքս չասի, նորեն փորձություն չանելու, թևեն բռնեցի, մխիթարելով դնացինք իրենց գեղը [Մմակաչեն] Մմակաբերդ, «դուն ապրիս» խմեցինք: Տեսա՞ք հիմի: Բայց ինչքան իրասածին, էնքան էլ քաջ են. մեկ խոսքով՝ զարաբաղցու ասածը ասած է, կտրածը՝ երկաթ:

Ուստան վերջացրեց, բոլորը ուրախ ու բարձր երկա-րատև ծիծաղում էին [ու ծափ տալիս]: Ապա [Ուստան] Տացուն խոսքն ուղղեց բոլորին.

– Ես կըսեմ, բավական դիշեր էղավ, երթանք տուն:

Բոլորը հավանություն տվին, ոտ[ք]ի կանգնեցին և շնորհակալություն հայտնելով սանահեր Մուկուչին՝ դուրս ելան: Սանահերը մի կապոց դրեց Քերոբի թևի տակ:

– Էս ի՛նչ բան է, Մուկուչ ջան, նվերս ո՞րն է, ամոթ չէ, մեր տունն է. էս չեղավ...– նկատեց Ուստան:

– Ջէ՛, քավոր ջան, հնութ սովորութ է, գիտես, գլխիդ մատաղ [գիտե՞ս]: Սանամորդ նվերներն են, վնաս չունի. քեզի ու Քերոբի համար գուլպա է գործել և էլ ուրիշ մանր-մունր բաներ. թողութիւն էրա:

– Լավ, լավ, սանամորս ասա, որ երկնուց-գետին շնոր-հակալ ենք. թող չուտ ոտքի կենա: Կիմանա՞ս, քեզի հետ եմ,– և խորհրդավոր ժպիտով չարունակեց,– մեկ տարի էսօր էլի քավոր եմ էտեղ, ինձի ամոթով չանենք:

Մուկուչը ամոթխած հարսի նման կարմրեց, մինչդեռ փոքր եղբայրը դուռը բացեց և ճրագը ձեռքը մինչև մեծ ճանապարհը առաջնորդեց պատվավոր հյուրերին, որոնք խոսելով ու զրուցելով սուզվեցին գյուղական անլապտեր փողոցների բավիղում:

Ը. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>[1]

ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՋԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ

Արդեն մի քանի օր էր՝ Ուստան բանում էր Բուլիկենց ամրարի վրա: Այսօր էլ, աշխատանքի համար, վաղ առավոտյան, ոտը դուրս դրեց թե ոչ, առջևը կտրեց սանահայր Մուկուչը: Մեծոյենց Մուկուչը Ուստայի հին սանահայրերից էր և լավ բարեկամներից մեկը, երկարահասակ, կարճ քթով, վճիտ աչքերով մի մարդ:

– Բարի լո՛ւս, Ուստա ջան,– ասաց Մուկուչը ժպտալով և ձեռքը մեկնելով:

– Ա՛յ լուսը քեզի տեսնողին. էս ո՞ր խաչեն է՝ էսման կանուխ ինձի միտքդ ես բերեր:

– Գիտե՛ս, էլի՛, գլխուդ մատաղ,– աչքերը գետին խոնարհելով չչնջաց Մուկուչը,– երկնային տերը մեզի դթաց. տղա-սանիկ ունիս... ի՞նչ ըսեմ, տղա-զավակի[2] կարոտ էինք, քեզի Հայտնի է,– ու աչքերը ձայնի հետ բարձրացնելով,– ում քավոր որ չուզենաս էղնիլ[3], մերը

Համեմատվող բնագրային միավորներ.

A = Հեղինակային ուղղումներով տարբերակը («Արձակ էջեր», 1963, էջ 596-616):

D = «Հայրենիք», 1925, N 11, էջ 16-28:

[2] D զավկի

[3] D եղնել

կաս ու կաս: Էսօր կիրակմուտ է, երեխեն[1] պտի մկրտենք[2], լավ քեֆ էլ պտի էննենք[3]: Բան ունի՞ս ըսելու...

— Չէ՛, սանահևր ջան. գլուխս վրեն. իմ բանիս անուն ի՞նչ է: Երթանք ներս, արադրմ խմենք սանիկիս կյանքի համար, ևսև էրթամ քիչըմ բանիմ, ևսև է՛լ...— Ուստան ձայներ ծոր տալով[4], լռեց...

Մուկուչր հասկացավ յոուքյան իմաստը:

— Ուստա ջան, է՛լ ի՞նչ ևսև. բան-ման պետք չէ. հե՛չ բան չառնիս...

— Դուն քեզի համար ես ըսեր: Աստվածամորը քավոր էղա, մեռոնլաթն ինձեն ուզեց. կսման է օրենքը՝ հնութենուք:

Ներս մտնելն ու մի-մի[5] բաժակ օղի խմելն ու դուրս գալերն մեկ եղավ:

Ուստան գնաց «բանատեղը»[6]: Ճաշից հետո էլ, մինչև արևի թևքումր աշխատեց, ապա գործը հանձնելով Զավուշին, ինքր չտապեց մկրտության համար գնում ներ առնելու: Ուղղվեց Պետոյենց Մանուկի խանութը: Երկու գյուղացի մոտեցան նրան, մեկը մի-երկու ոտ հետու մնաց, մյուսը, գտակը հանելով, ասաց.

— Ուստա՛ ջան, ներո՛ղ էղիր, ո՞ւր կսման վռազ, քովդ կուգայի:

— Ի՞նչ կար, Սողոմոն,— քաղցր ձայնով հարցրեց Ուստան:

---

1 D էրեխեն
2 D մկրտինք
3 D էնինք
4 D տվեց
5 D մի
6 D «բանատեղր»

– Հնչ ի՞նչ, Ուստա Ջան, քիչըմ փող էր պետք, հարկը կուգան,– ձայնը փորը ձգելով, ասաց Սողոմոնը.– ո՞ւր էրթայի. դու գիտես, քեզնեն ջոկ մարդ չունիմ: Քու սիրտն էլ հայտնի է աշխարքին, որ ձեռքդ էղնի, չէ չկա:

– Ինչքա՞ն է պետք. չա՛տ չըսես:

– Տասը մանեթ, գլխուդ մատաղ:

– Հիմի քովս չկա, դնա Ջավուշեն առ:

Եվ սև հատիկներից չարած «թագըեյը» տվեց նրան, իրև վկայություն Ջավուշին ներկայացնելու դրամն առնելու համար:

– Շա՛տ չնորհակալ եմ, Ուստա Ջան, Աստած սրտովդ քեզի տա: Հիմի պարտքս էղավ, առաջվա հետը, քսանը հինգ մանեթ, կալոցին կվճարիմ:

– Ես չիտեմ, Ջավուշը գիտե. իմ միտքս չի մնա էդ բաները. իմս էն է, որ Աստված ինձի տա, ես էլ ձեզի:

Եվ չարունակեց իր ընթացքը:

– Տեսա՞ր մարդը,– Սողոմոնը դարձավ ընկերոջը,– մե խոսքս երկուս չէրավ: Էստեղ է ըսած թե՝ ծառ կա, տակը մեկ ոչխար չի կրնա ծվարի, ծառ էլ կա, տակը մե հոտ ոչխար կծվարի: Հատը չկա, հա՛տը...

– Ես էնոր նո՞ր գիտեմ. ափսոս չէ՞ էնոր ուրիշի հետ մե կշիռքի դնենք: Էդման բարի մարդ քիչ կա էս ժամանակներս:

Ուստան դնեց մեռոնլաթը և մի թեթև չալ էլ սանամոր համար: Գնումը անութի տակ դրած, խանութից ելնելիս՝ հանդիպեց Ղուկաս աղային: Շեկ մորուք ուներ Ուստայի թշնամին, երկայն բեղերով, կանաչավուն աչքեր, հաստ ու կարճ ոտքեր, մեծ, հսկա իրանով, լայն երես ուներ՝ խոշոր ներքին ծնոտով, քիթը երեսի վրա չէր երևում:

Նրանց հայացքները մի վայրկյան դիպան իրար և կայծակնեցին սև և կանաչ բոցերով: Կռվի պատրաստ

խոյերի ձև առան նրանք: Ուստան խոժռեց ճակատը, Ղուկասը սեղմեց ծնոտները... և իրար կողքից անցան, քթերի տակ մրմնջալով.

— Օխթը տարվա անոթի գիլուն պտի տամ քեզի, աղցան էնե,— գայրացած արտում Ուստան էր խոսողը:

— Պնչիդ մուխը և էնպես Սմրդանդ հասցնեմ, անունս մտքեդ չհանես...— Ղուկան էր գայրացած երդվողը:

Ուստան հասավ տուն, լվացվեց, հագավ[1] տոնական զգեստները և գնաց սանահորանց տունը:

Եկեղեցու երեկոյան զանգերը հնչում էին արդեն: Սանահայր Մուկուչը, գլխաբաց, դիմավորեց նրան, չնորհակալությամբ ձեռքից առնելով բերած նվերները: Ներսի տնից տատմայր Զմրուխտը, «դայեկ անան», բերեց խանձարուրի մեջ պարուրած նորածին երեխային, և քավոր Ուստայի հետ ուղղվեցին եկեղեցի, շրջապատված դրացի և ազգական կանանցով, որոնց մեկը տանում էր սափորով տաք ջուրը ավազանի համար:

Մանր տղա-աղջիկների մի խումբ նրանց հետևն ու առջևն ընկած՝ զվարթ աղմուկով ընկերակցում էին այս թափորին:

Մեսի կատարումից հետո, ծանր ու հանդիսավոր քայլերով[2] եկեղեցուց ելավ Ուստան՝ խանձարուրը տարածված բազուկների վրա, ափերի մեջ երկու վառվող մոմեր: Նրա[3] աջ ու ձախ կողմերը[4] մկրտող քահանա տեր Մաթոսն էր[5],

---

1 D հագնվեց

2 D չիք ծանր ու հանդիսավոր քայլերով

3 D չիք

4 D + ունենալով

5 D Տեր Մաթոսն էր փխ Տեր Մաթոսին

ոսկեթել չուրջառ հագած, և տիրացու Հովակը[1]: Ամենքը գլխարաց էին[2]:

Հանդիպողները պատկառանքով ուղի էին տալիս թափորին, կանգնում էին՝ երեսները խաչակնքում. պառավ կանայք մոտենում էին համբուրում երեխայի մեռոնած ճակատը:

Մատթեոս քահանան, «Ակռոցի տեր Մաթոս» հորջորջմամբ, մի խորին ծերունի էր, մեջքը գետնահակ, մորուքը հինավուրց ճերմակությունից դեղնած. գորշ գեմքը բազմաթիվ կնճիռներով թնջկած, սակայն, հակառակ այս առաջացած տարիքին, տակավին կայտառ էր իր չարժումների մեջ և ձայնը՝ հնչեղ:

Տիրացու Հովակիմը մոտ 32-33 տարեկան մարդ էր, միջահասակ, թիկնեղ. մեծ գլուխը սև-երկայն մազերով, խնամքով սանրած[3]. թավ հոնքեր ուներ՝ ծայրերն իրար միացած և իջած քթի վրա բավական տեղ: Սրճագույն խոշոր աչքեր՝ լուրջ ու խաղաղ հայացքով: Կարճ վիզը ծածկված էր երկայն մորուքով. աջ այտի վրա մի մեծ մազոտ ծին ուներ: Շարժումները դանդաղ էին, ձևերը մտածված. ամեն մի բառը կշռելով ասող ու կշռելով ընդունող, և մեծ համարում ներշնչող իր խոսքին:

Յոսելիս և խորհելիս անընդհատ խաղում էր մորուքի հետ: Քահանացու էր, միջավայրին պահանջած չափից[4] բարձր կրթությամբ. սովորել էր Շիրակի Հառիճո վանքի դպրոցում, ապա երկու տարի էջմիածնում մի գիտնական

---

[1] D Հովակը փխ Հովակին

[2] D + Ծանր և հանդիսավոր քայլերով վերադարձան նորակնունք սանիկի տունը:

[3] D սանտրած

[4] D չափերից

վարդապետի մոտ ձրի սպասավոր էր եղել՝ դրաբար լեզվի և ժամերգության մեջ համառնալու պայմանով: Լավ տեղյակ էր Աստվածաշնչին, հայոց հին պատմիչներից մի երկուսին և Զամչյանի[1] «Հայոց պատմություն»[2]:

Գոց դիտեր շարականները. հզոր ու դուրեկան ձայն ուներ:

Նա հագնված էր գյուղական մտավորականի պես — չուստեր, երկայն տաբատ, արխալուխ, վրան ժակետ, գլխին ռուսական «շապկա»: Գյուղական դպրոնի վարժարանում կրոնի և երգեցողության դասատու էր, և միաժամանակ Դաշնակցության ենթակոմիտեի անդամ Պոտոս տացուի և Թաթոս վարժապետի հետ[3]:

Նախճվան մեծ գյուղը երկու քահանա ուներ. մեկը Տեր Միքայելն էր, Ղուկաս ադայի անները, մյուսը՝ Տեր Մատթեոսը. տիրացուն վերջինիս օգնականն էր և ծուխերի ժառանգորդ նրա մահից հետո:

Թափորը ներս մտավ Մուկուչի տունը: Տերտերը կնքահոր հետ մոտեցան տղոցկանին, որի անկողինը պատրաստված էր թոնրատան վերի անկյունում, կամերից կապած թախտի վրա: Այս վայրկյանին, մայրերին հատուկ նվիրական հուզմունքից շառագունած՝ նստել էր տղոցկանը վերմակը ծնկներին, բարձերը մեջքի հետևը, մոմի բազդատիով դյուրը փաթաթած և ուսերին ձգած քամորի նվիրած վարդափիլիմ շալովին:

---

1 D Զամչյանին

2 D չիք «Հայոց պատմություններ»

3 A-ում «և միաժամանակ Դաշնակցության ենթակոմիտեի անդամ Պոտոս տացուի և Թաթոս վարժապետի հետ» հատվածի փոխարեն բազմակետ է դրված (պատատու էր...), ինչը վկայում է, որ հեղինակն ակնարկում է հարկադրական կրճատման մասին, ինչի կարիքը չկար:

Նրա դիմաւորելը կանգնել էր իր պառաւ մայրը՝ արցունքոտ ու ժպտուն աչքերով, դնչկալը խորշոմած բերանին, իսկ Մուկուչի մայրը, տան տնտեսը, մի ոտը հարսի մոտն էր, մյուսը՝ թոռների շուրջը, կերակուրների մոտ: Դրացի և ազգական կանայք պատել էին անկողնու բոլորը, թևերի տակ բռնած իրենց նվերները ծննդկանին՝ ավանդական «անդանները», որ ձմածել, որը մաղի մեջ խաչած հաւ, որը հալվա:

Քաւորը, ինչպես կարգն էր, խանձարուրը տվեց սանամորը, որը բազուկները պարզած, դլուխը համեստ խոնարհած՝ ընդունեց իր մեռոնած զաւակին, ապա նույն ձևով մոմերը հանձնեց սանամորը:

Տերտերը չուռ էր տալիս Մաշտոցի այս ու այն էջը՝ լսողին և չլսողին անհասկանալի աստուածքներ մրմնջալով: Ծնեը ավարտելուց հետո օրհնեց մանուկին, ծնողներին, կնքահորը:

— Հորով-մորով զավակ լինիցի, բարով մեծնա, ավազանի սուրբ չնորհքը վրան իջնի, աչքերդ ի լուս, քավոր վարպետ, դաստուդ ի կատար:

— Ամե՛ն, ամե՛ն,— ասացին բոլոր կողմերից, և հերթով մոտեցան համբուրելու տերտերի ձեռքի խաչը, հետո երեխային, խանձարուրի վրայից:

— Աչքերդ լուս, սանահեր Մուկուչ, սանամեր քուրիկ, Գոհար անա, Աստված ձեղի ողջ պահե սանիկիս գլխուն, երկնեն արև էղնի[1], էս սուրբ բալուլը աջողություն բերե ձեր օճախին, պայծառ մնաք...

Քաւորը դեռ երկար չարելու էր մաղթանքները, բայց սանիկը սկսեց լալ, մայրը ստիպված եղավ ծիծ տալ, միայն ամաչում էր պատավոր մարդկանց ներկայությա-

---

[1] D նդնի

նը կուրծքը բանալ: Մուկուչի մայրը, Գոհար անան, բանը գլխի ընկավ և դարձավ ծիսակատարներին:

— Տե՛ր հայր, քավոր ջան, համմեցե՛ք այվանը:

Մուկուչը առաջնորդեց նրանց այվանը (հյուրասենյակը): Ուստան տատմայրի ափը դրամ դնելով հետևեց նրանց: Լուսավորված այվանում նստել էին արդեն կոչնականները.— Պոտոս Տացուն, տանուտեր Խեչանը, Օսկանը, Ջավուշը, Մակուչի անները՝ Խաչավոր Ադամ ամին և Թաթոս վարժապետը, և ուրիշ ազգական ու դրացի մարդիկ:

Ադամ ամին, որ եկել էր Թոռի մկրտության հանդեսի համար, Շիրակի Ճալա գյուղից էր. մի բավական ծերացած մարդ, նիհար, փոքր մարմնով, բայց աչխուժ և առողջ. չարժուն աչքեր ուներ, մի հոնքը անծեղի կոտրած թևի պես կախվել էր, իսկ մյուսը բոլորովին չկար. կղակը սուր էր, վիզը անթիվ խորշոմներով ակոսված: Հին արխալուխի նոր կարկատած կրծքի վրա կախված կային մի բրոնզե խաչ ու մեդալ, որ ստացել էր ռուս-տաճկական պատերազմին, Ցարի բանակին մատուցած ծառայության համար, որով «Խաչավոր» մականուն էր ստացել:

Կուրծքը ստեպ-ստեպ հպարտությամբ առաջ էր ցցում, ուժգին ցնցելով չքանչանները, որոնք իրար դիպչելով գնգում էին: Ադամ ամին հագած ուներ ռուս գեներալի հին վերարկու, որի կարմիր եզրերն ու կարմիր աստառը ավելի էին աչքի ընկնում լամբարի լույսի տակ, հյուրերի դորշ հագուստների մեջև:

Թաթոս վարժապետը Շիրակի արևելյան մասից էր, ավարտել էր Ալեքսանդրապոլի երկդասյան դպրոցը. քննություն բռնելով, ուսուցչական վկայական էր ձեռք բերել: Նախճվանի ծխական վարժարանում դասատու էր մինչև 1896 թիվը, երբ ռուս կառավարության բռնությամբ գոցվեցին հայոց դպրոցները: Վարժարանը գոցվե-

լուց հետո էլ մնաց նա Նախճավանում, որովհետև ամուսնացել էր Մուկուչի քրոջ աղջկա հետ. նրա զոքանչը այրի կին էր և աղջկանից բացի ուրիշ զավակ չուներ, ուստի Թաթոսը տնփեսա եղավ: Նա պարապում էր հողագործությամբ և մեղվաբուծությամբ:

Երկու զավակ ուներ. մեկը կնքել էր իր ընկեր մի ուսուցիչ, մյուսը՝ Ուստա Կարոն:

Երբ Դաշնակցության ջանքերով[1] զանազան գյուղերում բացվեցին գաղտնի դպրոցներ և փոքրիկ գրադարաններ, Թաթոսը կարգվեց ուսուցիչ և գրադարանապահ: Ավանդում էր հայերեն լեզու, հայոց պատմություն և թվաբանություն. նաև ենթակոմիտեի անդամ էր և քարոզիչ Դաշնակցական խմբակների մեջ[2]:

Որպես գրադարանապահ, որի ձեռքի տակ կային 100-ի չափ հայերեն գրքեր, նա ամառը չաբաթը մի անգամ, ձմեռը երկու անգամ գլխին հավաքում էր գյուղացիներին և նրանց համար կարդում էր վեպեր ու պատմություններ — Արովյան, Րաֆֆի, Ահարոնյան, Փափազյան և այլն, բուլղարական և ուրիշ ազգերի ազատագրական կռվից գրվածներ, «Դրոշակ» թերթն ու նրա գրքույկները[3], և կարդացածը մեկնում, բացատրում: Ուստա Կարոն և Ջավուշը, Նախճվան եղած դեպքերում, նրա ընթերցումների հավատարիմ ունկնդիրներից էին:

Գյուղացիները սիրում էին նրան և իրենց համագյուղացին էին համարում[4], ինքն էլ սիրում էր նրանց և նվիրված էր գյուղի չահերին:

---

[1] A չիք Դաշնակցության ջանքերով

[2] A չիք նաև ենթակոմիտեի ... խմբակների մեջ

[3] A չիք «Դրոշակ» թերթն ու նրա գրքույկները

[4] D Հանում

Ուստայի լավ բարեկամն էր, իրար հավանած և իրար սիրած:

Կիներն մոտ 33-34 տարեկան, նազանքուն և կրակոտ երիտասարդ էր, ամեն գործի վարպետ, միամիտ էր ու պարզասիրտ, ժպիտը միշտ վառվում էր նրա գվարթ դեմքի վրա, և ոչ մի ծանր կացութեան մեջ չէր հանդչում այդ լուսավոր ժպիտը: Նոտում էր արագ-արագ և միշտ ոգևորված, լեզվի շնորհք ուներ, ամեն առիթի կարող էր ճառեր ասել, պերճ, բոցաշունչ ճառեր: Երբեմն հայրենասիրական ոտանավորներ էր գրում, որոնք դոց էին անում իր աշակերտները:

Ուներ բաց դույնի մազեր, նեղ ճակատ, կոր քիթ, ժպտուն, խաժ աչքեր, նիհար էր, միջակից բարձր հասակով, ձևերը՝ աշխույժ, արագաշարժ:

Հագուստը գյուղական վարժապետի էր, գլխին «ռուսական» չապկա՝ կրպոնկով», ժակետ ու ժիլետ (բաճկոն և բաճկոնակ), առանց փողկապի շապիկ, երկայն տարատ, ոտներին՝ երբեմն «չուստիկներ», երբեմն կոշիկներ:

Կոչնականները ոտի եյան, համբուրեցին տերտերի աջը և անդ ավին բուխարիկի վերի գլուխը, կնքահորն էլ նրա հանդեպ մյուս վերի գլուխը, սակայն Ուստան հարգանքով իր տեղը գիջնց ծերունի Ադամ ամուն:

— Օրհնյա ի Տեր,— նորից ասացին հյուրերը նստած տեղերից գլուխ տալով:

— Ամեն օրհնեսցե ամենեցուդ,— պատասխանեց տերտերը:

— Քավոր Ուստա Կարո, դատումդ կատար, բարով էղ սուրբ մեռոնը մեր տունն էլ բերես,— ձայնեցին ամեն կողմից, և ապա դառնալով Մուկուչին.

— Մուկուչ ջան, բարով էրեխիդ պատուղը վայելես:

Մուկուչը բախտավոր ժպիտով շնորհակալություն հայտնեց բոլորին մեկ-մեկ և համբուրեց աներոջ ձեռքը.

Ադամ ամին թաց աչքերով՝ համբուրից փեսայի ճակատը:

Մուկուչը ապա օդին առաջ բերելով հրամցրեց ամենքին, որոնք խմելին նորակնունք երեխայի արևշատության համար:

Տեր Մաթոսը գոտիկի ծալքից հանեց բռնոթու (քթախոսի) մեծ տուփը և մի ահագին պտղունց բռնոթի լցրեց քթի խոռոչների մեջ, և հետո տուփը հրամցրեց Ադամ ամուն:

Քթախոսը դրդռեց տեր Մաթոսի քիթը, սկսվեց մի անընդհատ փռշտոց. ներկաները իրար հետևից ձայնում էին.

— Տերտե՛ր, բարի էղնի, տերտե՛ր, առողջություն:

— Օրհնյալ լինիք, որդիքս,— հազիվ փռշտոցի միջից Տեր Հայրը պատասխանել կարողացավ, և թևզանիքից հանելով խոշոր, դեղին թաշկինակը, սրբեց քիթն ու մորուքը:

Մուկուչի երիտասարդ եղբայրը թևլ էր չինում և հյուրասիրում կոչնականներին:

— Ի՞նչ նոր բան կա՝ նեան ու դուսը,— դիմեց Ուստան բոլոր ներկաներին, անխտիր:

Ուստայի բնույթն էր, որ հավաքույթների մեջ լուռ կենալ չէր սիրում ու չէր կարող. կամ ինքը պիտի խոսեր, կամ ուրիշին պիտի խոսացնել տար:

— Նորն էլ դուն պիտես, հինն էլ, քավոր Ուստա,— պատասխանեց տանուտեր Խեչանը:

— Խեչան քիհա, դուն լավ պիտես, որ մեծերն եղած տեղը, պտուկները չեն խոսի,— ասաց Ուստան բարձը քաշելով թևի տակը:

— Էդ ման, խոսքը ինձի տվավ Ուստեն,— սկսեց տանուտերը,— երեկ պրիստավը ինձի Տիկոր կանչեց ու

բարևագիր-նամակներ տվավ, որ մեր սպրդած էրթցած տղերքը գրեր են իրանց ծնողներուն: Գրեր են Յապոնների երկրեն, գերի են ընկել Հնտեղ, զարմանալի բաներ կգրեն...

Ներկաների հետաքրքրություն վառվեց և տիրեց մի լարված լռություն: Օրվա այրող հարցը ռուս-ճապոնական պատերազմն էր. հին սերունդը ռուսի հաղթանակն էր տենչում, նոր սերունդը՝ պարտություն, թեև, առհասարակ, ամենքի համար էլ ռուսի պարտությունը աստվածային արդար հատուցման նշանն էր հայերի հանդեպ գործած ցարի անիրավությունների:

– Ի՞նչ կգրեն...

– Ի՞նչ են գրե...

Կարկուտի պես, չդադրիլու ձայնով, տեղացին հարցերը:

– Զրմանք-զարմանք բաներ, հիմի կըսեմ,– և տանուտեր Հնչանը պատրաստություններ տեսավ պատմելու, լռիկ և դանդաղ շարժումով գրպանից հանեց ծխախոտի նախշուն քսակը, միջից առնելով չոր ու կոշտ ծխախոտը, դրեց ձախ ափի մեջ և սկսեց աջ ափով մանրել, միաժամանակ անվերջ կրկնելով.– Հա՛, զարմա՛նք բաներ...– ապա մանրած խոտը դրեց ծխամորճի կավե գլխի մեջ. Մուկուչը շտապով բուխերիկից այրվող աթարի կտորը դրեց խոտի վրա. տանուտերը ծուխը անհագաբար ծծելով և ամպի նման դուրս մղելով քթից ու բերանից, սկսեց[1] ասելիքը.

– Կռիվը ռուսի և յապոնի մեջն է, բայց հմա Չինմաչինի հողերու վրեն է կռվի տեղը. մեր գեղերու տղերքն էլ ընտեղն են գերի ընկեր, ու տարեր են յապոններու եր-

---

[1] D + իր

կիրը, որ Զինմաչինեն երկու ծովով հեռու է. մենք մեր տղուք ժամանակ հեքիաթներու մեջ էինք լսեր Զինումաչինի անունը, մեր տղերքը հիմի աչքով տեսան... աշխարքի բանը չի հասկացվի... հա՛, կգրեն, որ շատ լավ են, հանդիսատ են, լավ կերուխում ունին: Էդ յապոն ըսվածները պստիկ, կարճ ու դեղին մարդիկ են, անբեխ-անմորուք[1], բայց լմա[2] սատանի խելք ունին, հնճարքով մարդիկ են. երևելի քաղաքներ ունին, ծովերու վրեն էլ դեղ կշինեն՝կապրին. կերածները գանելիք բաներ են՝ հոտած ձուկ ու մուկ, շուն ու կատու, միսը կհոտեցնեն, միջի որդունքը կուտեն, ամեն ժժմունք կուտեն, չայեն ու բրինձեն գինի-արաղ կշինեն ու կխմեն: Կնտիքը դուսը տակլոր կլողնան, ամոթ չկա. աստվածապաշտ են լմա[3], բայց խաչ ու Քրիստոս չունին: Շատ քաջ մարդիկ են, մահեն վախ չունին, ու մեր թագավորի բանը լավ չէ, վերջը լավ նշանց չի տա...

– Օխա՛յ, օխա՛յ, թող մեկ ցարի[4] գլուխը քարին գա, քիթ ու պռունկը ջարդի, կակարտը շատ բարձր կբռներ,– վրա տվին մի քանիսը, չքաշվելով պաշտոնական անձի՝ տանուտերի ներկայությունից, դիտենալով, որ տանուտերը թե՛ իրենց մարդն է, և թե՛ Դաշնակցության ծավալման հետևանքով պաշտոնյաների դերը նսեմացել էր շատ, դառնալով լոկ անվանական[5]:

Այս ուրախաձայն կոչերի վրա՝ Ադամ ամին նստած տեղը բռնկվեց, դորապետական վերարկուն մի ցնցումով

---

1 D անմուրուք

2 D իմա

3 D իմա

4 D ուսի

5 A չիք պիտենալով, որ տանուտերը ... դառնալով լոկ անվանական

չիակից ուսերի վրա, ձեռքը դարկից խաչին, և ուղղակի դռռաց.

— Ռուսի դեմ խոսալը Քրիստոսի[1] էս սուրբ խաչի դեմ խոսալ ըսկլ է. հրամմե՛ր ևք, պլուխը քարի գա, հալը ձեր պլուխն ո՞ւր պտի մնա. խելքերդ տե՞ղն է թե չէ: Փորձված բան է, թե որ ռուսի թուրը կտորի, աշխարքի վերջը կէղնի, քար քարի վրեն չի մնա: Թուրք ու չաչան, պյուրջի ու լազկի, քյուրտ ու ջլո, չուն ու գել հայ-քրիստոնեին հում-հում պտի ուտեն. դուք դրա տգա ևք՝ խելքով էվելի, քանզ հասակով. մարդ տեսածն կվախնա, դուք ի՞նչ ևք տեսեր որ... Տերտեր, տիրացու, Աստծուն աղոթք էրեք, ամեննքդ էլ դումար աղոթք էրեք, որ Աստված ռուսի թուրը կտրուկ էնե...

Տերտերն ու մի երկու հոգի կրկնեցին Ադամ ամու մաղթանքը, իսկ տիրացուն Աստվածաշունչից վկայություն բերեց ասելով.

— «Զարիք կարկառեալ գան ի հիւսիսոյ»[2]:

— Իմ սրտես չի գնա ցարի թրին հաջողություն խնդրեմ,— Պատոս Տացուն էր խոսողը,— Ծո՛ղ կոտրվի ինքն էլ, իրան թուրն էլ. հապա ինչո՞ւ մեր ժամերու Հարություներ դումար խլեց տարավ, մեզի հարկերու տակ կապուցրեց, մեր երկրի հոդերը քրդին ու մալականին կուտա, մեզի չի թողնե մեր պապական տեղերու վրեն՝ Մրենի, Անիա քովերը գեղեր չիննենք, այլպղինեուն կուտա: Ես ո՞րն բսեմ, էդոր համար էլ Աստված վերեն տեսավ ու գարկեց...

Թաթոս վարժապետը լրացրեց Տացուի մեղադրանքը.

---

[1] A *չիք*

[2] A *չիք իսկ տիրացուն ... գան ի հիւսիսոյ»:*

– Ցարր, ներկա Նարուգոդոնոսորը, ինչո՞ւ գպրոցները գոցեց. որպեսզի հայերենը մոռանանք, ուրանանք մեր ազգը, մեր լեզուն, ինչո՞ւ գազան Թուրքին, իժից արմատ, դև սուլթանին օգնում է, որ հայերին ջարդեն, ջնջեն, ո՞ւր մնայ նրա քրիստոնյա լինելը, ասացեք, խնդրեմ...

Տիրացու Հովակն էլ՝ չուզենալով հետ մնալ, ինքն էլ իր հերթին լրացրեց Թաթոս վարժապետի մեղադրականը.

– ինչո՞ւ ռուս և ուռում տերտերներին ուղարկում են գյուղերը կաչառով հայերին մեր Լուսավորչա լույս հավատքից դարձնում իրանց ծուռ[1] խաչին և ծուռ[2] հավատքին, ամենաառաջին քրիստոնյա դառած ազգը հայն է, ռուսը պիտի մեր հավատքին դառնա, ոչ թե մենք իրան. և դրա համար էլ եղև անկումն մեծ նրա, ինչպես եղավ Ջար-Հուլիանոսի և դեհենական Ներոնի[3]...

Տիրացու Հովակը և Թաթոս վարժապետը ձգտում էին միշտ գրական լեզվով խոսել՝ գյուղացիների վրա տպավորություն թողնելու համար, թեև հաճախ թելը կորցնում էին ու դառնում միջավայրի[4] բարբառին:

Ադամ ամին կրակ ու բոց կտրվեց, թեյի բաժակը բարկացած վայր դրեց, և բռնեց ուղղակի Պոտոս Տացուի ձեռքից, արհամարհական հայացքով չափելով տիրացուին և վարժապետին[5].

– Տացո՛ւ, Պոտո՛ս Տացու, ես քեզի խելքը գլխուն մարդ պիտեի. տո՛, մաղկոզ ճերմակած տղա ես էղե, էն-

---

1 A չիք

2 A չիք

3 A չիք ռուսը պիտի մեր ... դեհենական Ներոնի

4 D + ժողովրդական

5 D ձեռքից, արհամարհական հայացքով չափելով տիրացուին և վարժապետին *վրա* օձիքից, կարծես, արհամարհելով տիրացուին և վարժապետին, նրանց խոսքը բանի տեղ չդնելով

քան հում կխոսիս, որ կզարմանամ: Մինչի էս օրս չիտես, որ էսման բաներու մեջ թագավորը մեղավոր չէ, իրան վազիր-նազիր, էն իշու փիծուկ, չան կրծուկ մինիստրները[1], էն անիծածներն են մեղավոր, որ բանը սուտ տեղ կհասցնեն. թագավորը անարդար բան չի բռնե, Աստծու ձեռքը էնոր սրտի վրեն է: Գրոց մարդ ես, ի՞նչդ էս բան չիտես...

Պոտոս Տացուն վիրավորվեց, ուզում էր չոր ու կծու պատասխան տալ, սակայն Մուկուչը թախանձալից ակնարկներով հասկացրեց թե՛ Տացուին, թե՛ տիրացուին ու վարժապետին, որ աններող խոսքը բանի տեղ չդնեն: Դեմքին ծաղրող երևույթ տալով, Տացուն մեկ-մեկ նայեց հյուրերին, աչք ու հոնքը չարժելով:

Ադամ ամին խրախուսվեց նրանց կամավոր պապանձումից.

— Յապոնները հեչ բան են, էնոնք ջրի փշտիկ են,— շարունակեց նա.— էն սատանի ձագ ինգիլիզն է մեղավորը, էնոր պոչն է ամեն կռվի մեջը, էդման էր ռուս-օսմանլուի կռվին էլ. ուրիշին կսրե, ինքը պռունկը կկայնի: Իմա՛ց էղեք, թե աշխարքը իմ դիտցած աշխարքն է, թե ռուսը իմ տեսած ռուսն է, էն որ օսմանլուին քոռ մկի ծակը մտցուց, առաջը բան չի դիմանա. էնպես թուփեր ունի, որ էստեղեն կաղզվան մէ քցելով կսրբե. աչքիս տեսը՝ Ալաճայի գլխեն Ղարսա մեջը կրակ կթափեր: Իմ դիտցածով՝ էս մեր տափակ գտակ չեկ ռուսը վերջը-վերջը ամենքի մերը պիտի լացըցնե.— լամսա էղնի թե նամսա, ֆրանցուզ էղնի թե տալիանցի, յապոն էղնի, թե ինգիլիզ...

---

[1] D էն իշու փիծուկ, չան կրծուկ մինիստրները *փխ* իրան մինստրները

Ադամ ամին մի պահ կանդ առավ. տերտերից քթախոտը խնդրելով՝ լցրեց քթի մեջ, փռշտաց ու նորից փռշտաց, մինչ այն Մուկուչը աչքով նշան արավ եղբորը, և հարդարեցին հացի սփռոցները: Թոնրատունից Թաթոս վարժապետի կինը և Մուկուչի եղբայրը բերում էին կերակուրները, իսկ Մուկուչը արտի գուղձերի պես կոչկոռ մատներով՝ ափսեներն էր չարում հյուրերի առջև:

Տերտերը, խաչակնքելով սեղանը, վրա տվեց «Հայր մերը», որ տարիների ընթացքում օր ու գիշեր ասվելուց, այլևս մաշվել էին բառերը, և ոչ մի որոշ հնչյուն չէր մնացել: Ապա վեր առնելով լավաշ հացը, վերից վար կտրեց, արավ երկու կտոր, հետո իրար վրա դրեց կտորները և այս անգամ աջից դեպի ձախ կտրելով՝ դարձրեց չորս կտոր, որով հացը բեկաննելու չարժումից խաչի պատկերն ստացվեց, և դառնալով կոչնականներին և Մուկուչին, հարեց.

– Հայր Աբրահամու օրհնությունը իջնի էս տան վրեն, նորածինը բախտավոր եղիցի, հորն ու մորը խնդում եղիցի, Սիմավոն Ծերունի եղիցի:

– Ամե՛ն,– ձայնեցին հյուրերը,– Մուկուչ ջան, աչքդ ի լուս:

Իսկ Ուստան ավելացրեց.

– Աստված լսող-կատարող էղնի, Մուկուչ ջան, սանիկիս լավ պահե. ես գիտեմ՝ էնպես տղա պտի կանգնի, որ նմանը չունենա:

Մուկուչը օղին հյուրերին հրամցնելով՝

– Աչքի լուսով կենաք. էս ուրախությունը թշնամուս տունն էլ թող էղնի. խնդրեմ, հաց անուշ էրեք, ձեր տունն է, էվել-պակաս ներող էղեք:

Միառժամանակ ոչ մի ձայն չէր լսվում, բացի միայն դդալների ներդաշնակ աղմուկից:

Ադամ ամին խոնց յոութիյուն՝ չարունակելով խոսքի կտրած թելը.

— Հր՛մ, հր՛մ... Ռուսին բան չի էղնի, էնոր աստղը պոյծառ է: Երեկ-մեկել օրը մեր տիրացուն բաւ, թե ուսի աստղը ոսկի է և էլ ճրագի պես պոյծառ է: Հր՛մ, դուք չեք յսե մեր գեղի երեխի տիրացուի անունը: Էն չա՛տ դիտնակ[1] մարդ է, հիմի չա՛տ ծեր է, բնձեն մենծ է. ես մատրմ ջուր էի, էն կարդին տիրացու էր.— և օղիով ու դինիով կենդանացած հայացքը պատեցրեց, դիտելով մեկ-մեկ ունկնդիրների երեսները.— ուսում ունի, ուսում ունի, ծոխու չափ ուսում ունի մեր տիրացուն, խորունկ հոր է փորեր, ու կմանի մեջն ու օր-ցորեկով երկնուց միջի աստղերը կաշե, կքննե, էնոնց ճամբու դիրը կկարդա, աստղաբաշխութիյուն կենե: Ես ո՞ր մեկն ըսեմ էնոր գործերեն. Թուղթ ու գիր կէնե, գել կկապե, բնկնավոր կլավցնե: Էդ ի՞նչդ որ էնոր անունը չեք իմացած, տերտե՛ր, տիրացո՛ւ, դուք էլ դրոց մարդիկ եք, ես եղնելո՞ւ բան է:

— Օրհնյալ կենաս, Ադամ ջան, չեմ իմացեր, անունը ո՞րման է, բաս, կարելի է միտքս գա,— հարցրեց տերտերը[2]:

— Տիրացու Բարսեղ:

— Հա՛, հա՛, ճարեցի տիրացու Բարսեղ, հին մարդ է, վաղուցվա տիրացու է:

— Հր՛մ, էն է. պիտեմ որ պուճ իմացած էղնիք, անունը ամեն տեղ ձեն կուտա... էնիկ հերու Հրիմյան Հայրիկի աստղը գտավ, ես տարի էլ գտավ Թագավորի՝ իրան աստղը ճրագ-պոյծառ[3]: Էդման, աստղերը կմագն ու կգանի մեծամեծներու աստղերը: Մեր գեղի տանուտերը էդ

---

1 A — դիտնական

2 D չիք հարցրեց տերտերը

3 D պայծառ

գոնունքի մասին քաղաք դրեց, նաչալնիկին իմաց տվավ...— Հյուրերը զսպված ծիծաղով իրար երես նայեցին: Ուստան, որ վարժվել էր զարմանալի բաներ տեսնել ու լսել, ապշանքի մի սարսուռ զգաց:

— Կզարմանամ, կ՛սքան անհաշիվ աստղերու մեջեն էդ ո՞րման իմացավ Թադավորի աստղը, վրեն գրա՞ծ էր անունը... Հրա՛շք բան է:

— Յա՛, քավոր Ուստա,— ավելի զարմացած պատասխանեց Ադամ ամին Ուստայի թերահավատ հարցումին,— դուն ի՞նչդ էդման կխոսաս, ուրիշ մարդ խոսա, ջոկ բան: Դուն որ աշխարհաժուռ մարդ ես, հրաշքի պես բաներ ես տեսե, ի՞նչդ չես հավատա էդած բաներուն: Էն մարդուն ես դիտեմ, որ կըսեմ: Էն համբռ Թե՝ եռասուն տարի կա՝ ցորեկով կաչե աստղերուն, դիշերով կաչե աստղերուն. Սողոմոն Իմաստուն կկարդա, վեցհազարակ կկարդա, մարդու ճակտի գիրը՝ ճակտին կաչե՝ կկարդա... Էն գըռ ռուսօսմանլուի կռվի տարին, գրռ կռիվ չէդած, մեկ արնաժեռ աստղ դուավ, ըսավ Թե՝ մահ-պատերազմ, կռիվ-կոտորմունք պտի էղնի, և էլ էդավ...

Ուստան բմբռնեց իր սխալը, ճիշտ որ՝ ինքը իրավունք չուներ զարմանալու: Եվ Ադամ ամու՝ իրեն ուղղած խոսքերից չոյված զգալով, պատեհ բառեր էր որոնում բարեխառնելու իր անպատեհ հարցումը, երբ տերտերը երկուսի մեջն ընկավ.

— Ակոռա կործանման տարին էլ Մասսա գլխուն մեկ աստղ երևաց. Սուրբ Հակորա վանուց վանահայրն ըսավ Թե՝ աշխարհաժամ-կոտորում պտի էղնի, չքաշեց մեկ-երկու ամիս, էդավ. ինքը գուշակ վարդապետն էլ տուրը դնաց, մենակ ես ողջանց[1] մնացի...

---

[1] D ողջանկ

Նախճվանցիները չա՛տ անգամ էին լսել Ակոռի պատմությունը ականատես տերտերի բերանից պատմված, ուստի անտարբեր մնացին, իսկ Ադամ ամին մոռանալով իր պատմելիքը, հետաքրքրված դիմեց Տեր Մաթոսին.

– Դուն էՙ նաեղ էիր էղեր...

– Դու նո՞ր կիմանաս, օրհնյալ, ողջ աշխարքին ու տիեզերաց հայտնի է, չէՙ որ ինձի Ակոռա Տեր Մաթոս կրսեն,– և խորշոմների տակ ծածկված փոքրիկ աչքերը հանդիմանությամբ ուղղվեցին Ադամ ամու վրա: Այդ հայացքի տակ չփոթվեց Ադամ ամին, մի բառ իսկ չկարողացավ հայտ բերել չքմեղանքի համար:

Մինչդեռ տերտերը առանց հրավերի սկսեց նույն բառերով ու նույն ոճով տարինների ընթացքում անթիվ անգամ կրկնված նույն պատմությանը, որ հարկ էր համարում պատմել ամեն հավաքույթի[1]:

– Հա՛, Ակոռա կործանման տարին, ես մեկ թեթև տղա էի: Ողորմածիկ հերս տվեր էր ինձի Ս. Հակոբա վանահոր քովը մոնթ, ժամուց ասմունք սովրելու համար, մեկ խոսքով ըսած, կիրակոց կիրակի վանահայրը ինձի կարդմունք կսորվեցներ, ողջ շաբաթը հոտաղություն կենեի: Ս. Հակոբա վանքը չինած է էն ժեռ-ապառաժներու վրեն, ուրտեղեն Տրդատ Թագավորն հայոց՝ Ս. Էջմիածնա հիմանց վեմ քարերը մեջքի վրեն դրած տարավ ի քավություն մեղաց. վանքի դռանն է ցավոց դարման հրաշագործ սուրբ աղբյուրը. էդ սուրբ աղբյուրը բղխեր է Հակոբ Մծբնա հայրապետի գլուխը դրած տեղեն, երբոր ծարաված քնավ հայրապետը, երբոր Մասիս լեռը բարձրանալ կճգներ՝ Նոյան տապանը տեսնելու կարոտով. էդտեղ տեսիլքի մեջ Տյառն հրեշտակի ձեռքեն ընդունեց տապանեն

---

[1] D *չիք* որ հարկ էր համարում պատմել ամեն հավաքույթի

մե կաոր փայտ, որն հիմի էջմիածին է, ամեն մարդ կրնա երթա տեսնի, մեռնիմ էնոր գորքին[1]:

Էդ օրվանեն վանքն ու ապրյուրը սուրբ Հայրապետի անվամբն կոչվեցավ: Ս. Հակորը մեր Լուսավորչա հորքուրի տղան էր...

Մուկուչը, որ սեղանի ծայրին փչի վրա նստածի պես էր, չորս աչքով հսկում էր, թե ում ինչ է պակաս, և ակնարկով հասկացնում էր ոտքի վրա կանգնածներին՝ եղբորն ու վարժապետի կնոջը, որ լրացնեն թերին. և անվերջ թախանձում էր սրան ու նրան՝ ախորժակով և լիուլի ուտեն, եթե ուզում են Մուկուչի հարկինքը պատված լինել:

– Օրհնյալ կենաք, որդիքս, ես էն կուզեի ըսել, որ Ակոռա կործանման դառն օրը ընկեր հոտաղներու հետը տավարը կարծեցնեինք Մասըսա ժեռերու և հարոսներու վրեն, մեկ էլ, ըսես, ահռիկ երազի մեջ էղնեինք, աչխարքարարատ դղորդ ընկավ, ու մեր ոտաց տակի հողը կամի պես կսլար ու կսլար. էնպես ժաժք էղավ, էնպես ժաժմունք, որ սարերը իրար կուգային ու կերթային: Մասըսա ծանոր ու բարձր լեռը, որ հայոց աչխարքի երթիկն է, ու ամեն երթիկի վրան մարդ արարած կրնա ելնե, մենակ էնտեղ՝ հրամանք Աստծու չկա, ամեն երթիկի ձունը կհալի, էնորը՝ հավիտենական է, էս անգամ էնոր ձունն էլ հալավ, փլավ եկավ – ջրհեղե՛ղ, իսկ ջրհեղեղ. ամեն ջուր խառնվան իրար, ծով էղան ու քարափներու գլուխն ելան: Դե՛հ, գիտեք, Մասիսը, որ մեկ չափազանց սար է, ամուր և էլ հաստատուն, էս ժաժքի զոռեն հազար տեղեն տրաքվեց, ու ճեղքերեն ծուխ ու կպրե հեղեղ թափվավ. ծուխը երկինքը բռնեց՝ յոթն օր, յոթն գիշեր, ծուխը

---

[1] D չիք մեռնիմ էնոր գորքին

կանգնած մնաց մութ պես, արևը խավարած, իջած Ադամ մութ դիշերը... Ընկերութիւն ամենքը լեռապատառ բնական մնացան...

Ադամ ամին, ուրտների հանդիմանութիւնից միայն հիմա իրեն հավաքած լինելով, ընդհատեց նրա ահավոր պատմութիւնը.

— Ըհա՛, ես էն կուզեի ասել, որ Ակոռա ավերման տարին ես աշխարք էկեր, էդ տարին ժամբի վախեն մեր գեղի ծոցվոր հարսները անցուդարձ են էրե, մենակ ես կարդին ու ժամանակին ծնվա: Էս բանի վրեն՝ տիրացու Բարսեղն բան է, թե էս էրեխեն չա՛տ կարճ պտի էղնի, որ ժամբին պիտացեր է մոր փորի մեջը:

Հյուրերի աչքերում նորը ծիծաղ նշմարվեց, որ չխուսափեց Մուկուչի հայացքից, և սա աներին ծաղրական դրութիւնից ազատելու համար, անմիջապես վրա եկավ.

— Էդ գուշակ խոսքը շիտակ դուրս եկավ, քանի որ աներս կուվին մենձ քաջութիւններ է ցույց տվեր ու խաչմեղալ առեր և էլ ամեն տարի թագավորի խապնեն տասնօրթը մանեթ կուտա մինչի մահ:

Ուսաա կարոյի բարի արամադրութիւնը շրջվել էր արդեն դեպի Ադամ ամին և հենց այն է, ուզում էր նրան պաշտպանել, երբ Տեր Մաթոսը վիրավորված իրեն զրույցի՝ ամենակարևոր տեղում խզումից, ակներև դժգոհութիւնով ասաց.

— Էդոր մասին եսև, հիմի թողնք խոսքիս ավարտն առնեմ: Հա՛, էնտեղ էի, թե ընկերութիւնը ամենքը վախտ մեռան, մնացեր էի ես, կիսամեռ, գետնին ընկած, անոթի-ծարավ: Յոթն օրեն եսև ծուխը քաշվավ, երկինքը պարզվավ, արևն ելավ, աշխարհք աշխարհք էղավ. ես էլ ոտքի ելա, մնացած ցիրուցան տավարը իրար վրա գլխեցի, անցա Ակոռա կուշտով, ի՞նչ տեսնեմ, ինչ որ տեսա, տղոցս

սպանողը չտեսնի.— Ակոռա տեղը ծով ու բրոր, մարդոց և անասնոց լեշերը ջրերու վրեն՝ ուռած-կապուտցած կամրամբային... գետին ընկա ու լաց լացի — հեր, մեր, քուր, ախպեր, ազգ ու տակ՝ գումար կորած, կար էղած... Աստծու պատիժն էր, որ ընկավ մեր գլխի մանտր-խոշորի վրա, ես պզտիկ էի, չիմացա, ի՞նչ էր մերոնց մեղքը[1]:

Մեկ էլ հոգիս տուն տվավ, տավարն առա, իմա սուրը չմխածին, տվի վանքին: Լուսահոգի Ներսես կաթողիկոսն էր էն ժամանակ Լուսավորչա աթոռքի վրեն, ինձի կանչեց հարցուփորձ էրավ ու ինձի վար դրավ իրան կուշտը ծառա-սպաս. պայֆա կշինեի, չիբուխին կրակ կդնեի: Լավ օրեր տեսա էդ լուսահոգու քովը: Ինձի շա՛տ կսիրեր, ինձի արդար կհաշվեր, քանզի որովհետև[2] ես էի մենակ ողջանց[3] մնացեր էդ մարդաշատ հայ-քրիստոնեի գեղից ու մենակ ես էի ականատես...

Տեր-Հայրը վերջացրեց: Ունկնդիրները թեև շա՛տ անդամ էին լսել այս զարհուրելի անցքը և սարսափել, հիմա էլ՝ առաջին անգամ լսողի նման, մութ սարսափով համակվեցին, այնքա՛ն կենդանի կերպով վերստին պատկերացավ ականատեսի պատմվածքը նրանց տեսողության առջև:

Մի պահ լռություն իջավ:

Տերտերի քունը տանում էր, գլուխն օրորվում էր կրծքի վրա. քունը վտարելու համար[4] ուժգին ցնցեց իրեն.

— Օրհնյա՛լ մնաք, որդիք, ես էրթամ, ծեր մարդ եմ, էդուց կիրակի է, պատարագ ունինք. ժամ համմեցեք,— և

---

[1] D չիք Աստծու պատիժն էր ...ի՞նչ էր մերոնց մեղքը

[2] D չիք ինձի արդար կհաշվեր, քանզի որովհետև

[3] D ողջանկ

[4] D չիք քունը վտարելու համար

խաչակնքելով սեղանը՝ ունքալով ոտքի կաւ.— Մուկուչ ջան, չեն մնաս, մե կտոր հավու միս տուր՝ առուման ակրատիս համար:

— Հրամմեր ես, տերտեր ջան,— ասաց Մուկուչը՝ հավի փափուկ մսերը լավաշի մեջ փաթաթելով:

Տեր Մաթոսը խոշոր պատառը դրպանը դնելով ուղղվեց դեպի դուռը, ընդհանուրի պատշաճ «գիշեր բարի»-ի մաղթանքների տակ: Մուկուչի եղբայրը ուղեկցեց նրան մինչև տուն:

Երբ տերտերը հացը գրպանն էր դնում, Ուստայի մտքովն ակամա անցավ այս խոսքը. «Տերտերները երկու փոր ունին, մեկը իրանց չեպն է» (դրպանը):

Սակայն զսպեց իրեն և բարձրաձայն չարտահայտեց մտքովն անցածը: Զարմանալի մարդ էր նա. հաճախ կարողանում էր սիրել իր լեզվին, իբրև չա՜տ մարդամեջ եղած և վարվելակերպ ձեռք բերած մարդ, բայց ավելի հաճախ բաց էր թողնում խոսքի սանձը և հանդես էր բերում ինչ որ կար սրտի մեջ. «Ինչ կեղնի, թող էղնի», ասում էր նա և մի կողմ նստում:

Այս անգամ ոչ միայն զսպեց իրեն, այլև անհաճո ինքնագոհացում ունեցավ՝ թույլ տալով վիրավորիչ խոսք մտքովն անցնել սուրբ կարդ կրողի հանդեպ. տխրեց և երկար պահ լուռ մնաց ու անուշադիր արտաշխարհի անցուդարձին:

Ներկաները խոսում էին զանազան իրերի մասին, տարվա բերքի և նոր հարկերի մասին, գյուղերում պատահած դժբախտ դեպքերի և այս ու այն մարդու մասին:

Երբ խորովածը՝ գրգռիչ հոտ արձակելով՝ տեղաց լավաշների վրա, Ուստան դուրս եկավ իրեն մի կողմ և վերստին ընկավ նախկին զվարթ տրամադրության մեջ:

Երկու գամփռ չներ՝ թաթերը դրած սեմին[1], վառ աչքերով հետևում էին համեղ պատառներին: Երբեմն նրանց ոսկոր էին նետում այս ու այն կողմից: Պոտոս Տացուն մի ոսկոր նետեց, որ չներից մեկը օդի միջից բռնեց և մռմռալով սկսեց կրծել:

– Ի՞նչ է էդ չան անունը,– հարցրեց Տացուն:

– Ղուկա՛ս,– վրա բերեց անմիջապես Ուստան:

Հյուրերը, որ գրեթե բոլորը թշնամի էին Ղուկասին, ուրախ ծիծաղեցին:

– Տո՛, ափսոս չէ Ասլանս,– վիրավորված ասաց Մուկուչը, թե իր չան պատիվը պաշտպանելու և թե Ուստային հաճելի լինելու համար:

– Դրուստ որ ափսոս է,– հաստատեցին մի քանի ձայներ:

Ուստան ուզում էր լսել Ադամ ամու կյանքի վեպը. մարդը խաչ-մեդալ ունի, հարկավ ձրի չի ստացել, ի՞նչ խոսք, որ մի բան արած կլինի:

– Ադամ ամի,– դարձավ նրան,– դիտեմ, որ դար ապրած մարդ ես՝ գլխուդ գալածներեն պատմե, ականջ էնենք:

– Քավոր Ուստա,– բերանը սրբելով խոսեց Ադամ ամին,– իմ գլխու գալածները Այսմավուրքեն չատ են: Մենք էլի մեղի համար մարդ էինք ժամանակով, հիմի ծերացանք, հարցնողն ո՞վ է, թե դուն ո՞վ ես, անցածն անցուկ է, ամեն բան մոռցուկ. հիմի որ պատմեմ, չատերու աչքին սուտ կթվա կամ տեսիլք:

– Ադամ ամի,– հարկ համարեց Ուստան խրախուսել նրան և միաժամանակ ուղղել իր սխալը,– ես ուրիշներու պես թերահավատ չեմ: Ես էլ իմ տեսածները, որ կպատմեմ, մազերս բիզ-բիզ կկային, բայց լսողներու հավատը

---

[1] D այսմին

չի պա. բանն էդպեան է, տեսնողը տեսածին կհավատա, լսողը լսածին չի հավատա. մեղք դննել չի էդնի:

— Դրուստ է բսածդ, քավոր Ուսուա, համա ուրտեղո՞ն դանինք քեզի պես բանիրուն մարդ: Իրան դեղեն դուրս չեկող մարդը աշխարքին ի՞նչ կիմանա... ինչդ որ իրան բնի վրեն պպզած հանդի մուկ...

Ուսուայի սրտին յուղ քսեցին, ինքն էլ միշտ այդպես էր մտածում. իրեն կարծիքի փայլուն վկայությունն էր տեսնում փորձված, ծեր մարդու բերանում[1]: Հիմա ծո՛ղ դյուղից ու դոմից դուրս չեկած մարդիկ, «տնմնա ապջիկներու պես իրանց ասպարնով մեկտեղ», իրենց խուլ ականջներով լսեն, ըն աշխարհում ինչե՛ր կան, որ չտեսի աչքին երազ ու հեքիաթ կերևան:

Եվ համակրությամբ լցվեց դեպի Ադամ ամին: Առաջ կերուխումից բոլորի ուրամադրությանն էլ զվարթացել էր, բոլորն էլ խոսք ու դրույց էին ուզում լսել, և Ադամ ամուն հավատացողն էլ, չհավատացողն էլ թախանձեցին նրան, որ պատմե հին բաններից, միայն Պատոս Տացուն էր, որ քմծիծաղը դեմքից բնավ չհեռացնելով, ծուլորեն[2] վարունգն էր կեղևում, անտարբեր դեպի շրջապատը: Իսկ Ադամ ամին՝ կրկնակի զվարթացած, որովհետև՝ մեկ որ առու Թոռի մկրտության հանդեսն էր այսօր, և երկրորդ, որ խնդրում էին իրեն[3], սկսեց ոգևորությամբ պատմել իր կյանքի անցքերից.

— Ե՛յ պիտի օրեր, մենք էլ էինք երիտասարդ, հիմիկվաններն էլ... Ի՛նչ ընկեր-ոդերք[4] ունեի, ամենքն էլ

---

1 D բերանից

2 D Հուլորեն

3 D չիք և երկրորդ, որ խնդրում էին իրեն

4 D ոդնք

կարիճ, տղամարդ: Էս Ալաճա սարը ի՛նչ է քաշե մեր ձեռքեն, լեզու առնի, խոսի. ամիսներով գեղ չէինք իջնի, քարը բարձ կէննինք, երկինքը՝ ծածկոցք: Թուրքը, քուրդը չէին իշխնա մեր սինոռին մոտիկնա. Թե որ մեր մեկ եզը կգողնային, մենք էնոնց տասը կտաննինք: Էս քար ու քրչերը ընկերտանքով քշուչ կէննինք թուրք ու քուրդ գանելու, գլուխներն ազալու համար. ամեն քարի ու քրչի տակ մե անհավատի գլուխ կա[1]: Որսի մենծ սեր ունեի, երկնուց հավքերը, վերի անասուննները ձեռքես դադար չունեին: Նմանս չունեցող նշան բռնող էի, խոսքի վրա, մեկ օրինակըմ ըսեմ, հասկցեք. օրվա մեկը լուսհոգի մերս, Աստած ողորմի ձեր անցավորաց հոգուն էլ, գոռաց, բոռաց[2], Թե ուրուրը թխսամները ձագերով առավ-տարավ. տեսնեմ՝ ուրուրը երկնուց մեչ, ամպերու տակ կթռնի[3], թխսամները ճանկերու մեչ, ձագերն էլ թխսամոր թևերու տակ ծվարած. մեկ-երկուս չէրի, Թվանքս կրակեցի՝ չիտակ ուրուրի սրտին, ուրուրը սաստկած գլոր-մլոր վար կուգար. ես փափախս բռնի[4], մերս՝ գոգնոցը, էնպես որ թխսամները ձագերու հետ ողջ-կենդանի ընկան մորս գոգնոցի և էլ իմ փափախի մեչը:

Մե զարմանալի պատահմունքով՝ որսկանութենեն վազն էկա: Բգների (Բագնայր) քովերը մեկ եղնիկ զարկի, ոտքին էի նշանս առեր, որ ողջանց[5] բռնեի, մեկ էլ խեղճը վիրավոր ոտքը վերցնելով դնաց վանքի դուռը, մեչքը

---

1 A չիք Թե որ մեր մեկ եզը ... անհավատի գլուխ կա:

2 D գոռաց

3 D կթռչի

4 D բռնեցի

5 D ողջանք

տվավ դռանը, աչքերը արտասուքով[1] երեսիս քցեց. խղճիս դիպավ, սիրտս դող բնկավ, թվանքս մեկդի քցի, եղնիկն էկավ քովս, ձեռքս լիզեց: Էն օրեն ուխտեցի՝ որսկանուհյուն չէնիմ...

Եղնիկի պատմուհյունը հուզեց ունկնդիրներին:

– Լավ ես արել, Ադամ ամի, Աստված էնոր բարեխոսութհյամբ մեղքերիդ թողութհյուն կուտա,– ասաց տիրացուն:

– Է՛հ, տիրացու ջան, ո՞ր մեկ մեղքերուս... Է՛նքան արունք եմ էրեր ռուս-օսմանյուի կռվին, է՛նքան թուրք ու քուրդ եմ սպաներ, համրանք չկա[2]...

– Էդ մեղքերուդ համար դրախտի մեջտեղը կկրթաս, Աստծուն ընդունելի բան ես էրեր,– ասաց հյուրերից մեկը, և չաուերը դլխի ու ձեռքի նշաններով հավանութհյուն տվին:

– Ողորմի ձեր ծնողացը,– պատասխանեց Ադամ ամին ուրախացած,– ի՞նչ պտի էնեինք, կռվի տարի էր. էնոնք կուզեին հայ սպանել, մեր ձեռքերը խո բանճար չէ՞ր քաղե, հը՛մ, էդման, մենք էլ մերն էրինք: Հա՛, կռվի խոսքը կէնեի: Հայոց քաջ Երանալ Լազարովն էր կռվի մենծը, Թագավորի աչքն ու ձեռքը. էնիկ Արփաչայի էն երեսն էր, Գյումրվա քովերը: Ես՝ ընկեր-տղերքով՝ Փարկիտցի Գալուստն էր, Մավրակցի Աբրոն, կարմիր-Վանքցի Մարտոն, խոսք մեկ էրինք,– Աստված էնոնց հոգին լուս դարձնե, հա՛, խոսք մեկ էրինք, փախանք Օսմանլուի հողին, դնացինք Լազարովի դուռը: Գնացինք իրան դինվոր դրվանք: Ինքը Ղարաբաղցի էր ու ձեռքի տակ Ղարա-

---

[1] D արտաուքով

[2] A չիք է՛նքան թուրք ու քուրդ եմ սպաներ, համրանք չկա

բաղցի առյուծի պես կտրիճ տղերք ուներ, որ Թրեն երես չէին դարձնև:

Անցանք Օսմանլուի հողը, վրա տվինք Ղարսա բերդն առնելու: Սուլթանի զորքը մերեն չա՜տ էր. ռուսի թագավորը հրաման չտվավ Ղարսա վրեն երթալու, ըսավ թե՝ կեցե՛ք նոր զորքեր ղրկեմ. հմա Լազարովը Լազարով էր, հրամանին ականջ չդրավ, մուզիկանները փչեցինք, արագը կոնձեցինք ուզածիդ չափ, ուռա՜ քաշելով ընկանք ասկյարի վրա: Ինքը Լազարովն էլ Թուրը՝ քաշած, գլուխը՝ բաց, մեր առաջն ընկած՝ կրակի ու կեծակի պես մտավ ասկյարի մեջը[1]. Թուրը առաջ կբերեր՝ իրեք մարդ կզարկեր, հետև կտաներ՝ հինգ մարդ կզարկեր: Էսպես, ջարդելով, փրթելով կոխեցինք Ղարսա բերդը: Էնքա՜ն, էնքա՜ն Թուրք ջարդեցինք բերդի տակը, որ էնոնց լեշերն ելան, դեղ-դեղ հավասարվան բերդի բուրջերուն, ու էդոնց վրեն ռուսի խաչի նշանը տնկեցինք...

Ադամ ամու պառաված աչքերը փայլում էին հինավուրց վերարծարծված կրակով, կուրծքը պարզել էր առաջ, որի վրա խաչն ու մեդալը տոն էին տոնում ցնծուն զրնգոցով[2], կարմրել էին երեսն ու չրթունքները. ինքը տարված իրեն զրույցով ու ձայնով, քարշ էր տալիս իր հետևից հավատացող ու թերահավատ ունկնդիրների ուշն ու ուրուշը:

— Ընկեր Գալուստս, լուսհոգին, էստեղ զարկվավ, ես էլ վրիս վրեն ծանտր վերք առա, մազ մնաց մեռնեի... ա՛յ, էստեղ էր Թրի կտրածը:

Ադամ ամին վիզն երկարեցրեց՝ վերքի տեղը մատով ցույց տալով, բայց մոտը նստողները չկարողացան գտնել

---

[1] D մտավ ասկյարի մեջը *փխ* կերթար

[2] D *չիք* որի վրա խաչն ու մեդալը ... ցնծուն զրնգոցով

կտրվածքի հետքերը, որովհետև ձերուբյան խորշոմներով ծալ-ծալ պատած էր ամբողջ վիզը:

Ապա հանդեց խոսքի ամփոփին.

— Լաղարովն նկամ, ամենքիս ճակատը պաչեց ու խաչ-մեղայ տվավ. շատ զարմացավ, որ մենք Ղարաբաղցի չէինք: Շա՜տ ազգասեր, քաջ մարդ էր Լազարովը, ու խելքի ծով: Ղարաբաղցիք ամենքը էդպես են, էնոնց պորտը թրով է կտրած, մեր մարդը էնոնց քով էրևիա է, հավի ձագ, քա՜մի, վախկո՜տ...

— Սյունյաց աշխարհի մարդիկ միշտ քաջ ու արի են եղել,— վկայեց տիրացու Հովակը:

— Շա՜տ չիտակ է,— հառաչեց Ուսուան նրանց կարծիքները,— էնոնք են իսկ հայ[1] ազգամարդ, ազգի պատիվը պահող ու խելոք, սաւանի ձագեր են: Ես էնոնց լավ գիտեմ, մեջները չա՜տ եմ էղեր:

— Թե որ Ղարաբաղցուն էդքան դովք կէնիք, հըպա ինչի՞, հետու լսողաց, հետու էս սուբր հարկեն ասեմ և ոչ ամաչեմ, էնոնց իշու հետ կնմանցնեն, էշ-ղարաբաղցի կրանեն,— նկատեց հյուրերից մեկը:

— Այո՛, զարմանալի է,— խոսք առավ Թաթոս վարժապետը,— ես էլ նրանց չա՜տ եմ տեսել, տեղից-տեղ խելքի կատր են, այդ անունը իսկի չի սազում նրանց վրա. ուղղակի՛, ուղղակի՛ զարմանալի է, ես չեմ հասկանում...

— Զարմանքի բան չկա,— միջամտեց Պատոս Տացուն, որ մինչև այդ լուռ էր,— ես էնպես կհասկանամ, թե խելքի պատճառով էդոնց էդ անունը կուտան, ընչու որ էն խելացի մարդը էն է, որ իրան ախմախ կձևացնե, էդով ուրիշին մարդ ավելի լավ կխաբե: Հնուվ խոսք է, թե

---

[1] D հայը

սուտ ապվա[1] է էղեր, վանքի հավերը կուտե: Ի՞նչ ըսիր, Ուսուա:

– Չէ, հիմի ես ըսեմ ձեզի,– խոսեց Ուսուան,– ամենեն առաջ էն է, որ էդոնց աչխարքը շա՛տ էշ կա. տուն գլուխ մե քանի էշ ունի: Քարուտ-սարուտ տեղեր են, սել չի բանի, ամեն բան իշով կէնեն: Էդոնց էշերը մեր աքլորներու գործը կտեսնին, իշու զռռոցեն կիմանան օրվա կամ գիշերվա ո՞ր ժամն է: Ամեն գեղ հազար էշ ունի, էդ պատճառով էլ իրանց երկրի անունը «Խարաբաղ» է դրած. ընչու որ Ղարաբաղ՝ սև բաղ ըսել չէ, հըպա՝ էշի-բաղ: Գիտեք, որ ես Իրան-Թուրան շա՛տ եմ էղեր ու էնոնց լեզուն քչեն-շատեն կհասկնամ. Իրանա լեզվով «խար» էշ ըսել է:

Ուսուան հաղթանակով նայեց հյուրերին, որոնցից մի քանիսը գոհունակ ժպտացին նրա բացատրության վրա, մի քանին էլ զարմացան նրա լեզվագիտության վրա:

– Հա՛, մեկ էլ որ,– շարունակեց Ուսուան,– Ղարաբաղցիք, չիտակը ըսած, Խարաբաղցիք, շատ իրան ասածի, կամապաշտ մարդիկ են: Չես կրնա իմանա, էշերն են իրանց տիրոջներեն սորվեր էդ կամապաշտ բնութը, թե տերերն են էշերեն սորվեր... Ի՞նչէ հասկցնեմ ձեզի էդոնց կողքի ընկնելը. էդոնք որ, Աստված մի արասցե, կողքի ընկնին, օխթը լուծ գոմնէ լծես, իրանց տեղերեն չես կրնա ժամել: Էնպես իրասածին են, որ ամառվան կեսօրին արևը սուտ կհանին, էնոնց հետ որ վեճի մտնիս, էն գլխեն պտի իմանաս, որ սաթերու ձուևը սև դուրս պտի գա:

Ղարաբաղցին իրան գլուխը կկոտրե, խոսքը չի կոտրե: Որ մեկ բան ուզենա, դեմը բերդ չի դիմանա: Ա՛յ, լավ միտս ընկավ, մե պատմությունըմ պատմեմ, տեսնք էդոնց կողքի հաստությունը:

---

[1] D էշ

Դրա-Դոռանչի օրր, ըսկլ է մեր Տերնտատին, Ղարաբաղցում հետ Սյատրաչեն գնդեն կերթայինք Ջուռնապատ գեղը,— այս անուններն վրա հյուրերի դեմքը ծիծաղով փայլեց,— մեկ էշ ես ունեի, մեկ էշ՝ ինքը: ճամբեն կեռաններով էր, նեղ կածաններով, սարերու բանձրիկ լեռնջերով, մեկ տեղ էլ անդունդ-անհատակի պռունկով կերթայինք: Ես Ղարաբաղցին էլ հետս պռունկով կերթար: Իրանց լեզվով ըսի.— Ատա՛, էդ ձորի պռնկավ գնալ մի՛:

Էն թե՝ խի՞:

Ըսի՝ վեր կընկիս, կերթաս Ադամա կոչտը:

Էն էլ թե՝ պեն չինի. այսինքն՝ բան չի եղնի:

Ըսի. Հետս թա պեն չինի, ճանճ որ վեր քցես, լոխ մենծ տեղը անդունդը կմնա, հո՞ր մնաց թա մարդ:

Էն նորեն թե՝ պեն չինի:

Էլի անդունդի պռունկով կերթար: Ես իմ խոսքիս վրեն կայնա, էն՝ իրան խոսքին. վեճը որ շատ տաքցավ, էն դառավ, ըսավ.

— Եկ մյառջ գյանք, լոք տանք, թա հյուր գլոխ կջարդվի:

Այսինքն թե՝ բյաս (գրավ) բռննենք, թռննենք, տեսննենք ո՞ւմ գլուխը կջարդվի:

Դե՛հ, ես գլուխս Փոթոյենց խելոնոցը չէի դռեր, որ տուրը տայի:

Էն նորեն ըսավ.— Թա դու վախես ես, ես թռնելական եմ. թա ես մեռա, իմ էշը քեզ, թա մեռա ոչ, քու էշը ինձ. խոսքս խոսք ա:

Ես խղճացի վրեն, մտքիս մեջ ըսի.— էն Ղարաբաղցի է, խոսքի տերն է, կքցե իրան, կմեռնի, համ տուրը հաց տվող չի էղնի, համ ես Աստծու առաջ սևերես կմնամ: Ըսի.— աբեր, հինչո՞ւ դու մեռնիս, թռղըլական չեմ, քե՛

մատաղ, հոգի օնիմ Աստծու տալացուկ: Եկ քու էշը վար քցինք. թա ողջ մնաց՝ իմ էշը քեզ, թա արևը քեզ տվավ, ասիլա, իմ խոսքս իլավ. դու էլ Աստուծուդ փառք տու, որ քու տեղը էշդ ոտները տնկեց:

Էն թե՝ լյավ, թխի գյա:

Ջեռքը ձեռքիս զարկեց, կամք տվավ:

Երկուսով գրկեցինք էշը ու վար քցինք. խեղճ անասունը զռռալով գնաց ու էն զռռալն էր... կարելի է ողջ կտորը մենակ պոչը մնաց:

Տերն էլ կայներ-մնացեր էր չվար, քարի վրայեն վիզն երկնցուցած ձորն ի վար, կաշեր: Էլ ձեն-ձուն չկար: Թևեն բռնեցի, քաշեցի մեկ դի, ըսի.— Տեսա՞ր, հունց ի պատոս իլավ: Այսինքն թե՝ տեսա՞ր ոնց մեռավ...

Էն ի՞նչ ըսեր, որ քեֆերդ գա.

— Հի՞նչ խոսք,— ըսավ,— որ էշս էշ էր, ընտրա բռեխի պենը չէր թռնի, խելքը հասավ ոչ. թա ես ընկել էի, չէի մեռնե:

Կուզեր ըսել թե՝ ինչ խոսք, որ էշս էշ էր, էնոր բերնին չէր ընկեր՝ թռնի. թե ես ընկնեի, չէի մեռնի:

Էլ խոսքս չըսի նորեն փորձություն չէնելու համար: Միխթարելով, տարա գեղը, «դուն ապրիս» խմցրի, սրտի մրմուռն առա:

Տեսա՞ք հիմի, ինչքան կողը հաստ են. մեկ խոսքով՝ Ղարաբաղցու ըսածը ըսած է, կտրածը՝ երկաթ:

Ուստան վերջացրեց, բոլոր ներկանները քահ-քահ ծիծաղեցին:

Ապա Պոտոս Տացուն խոսքն ուղղեց բոլորին.

— Ես կըսեմ, բավական գիշեր էղավ, ելինք:

Բոլորը ոտի կանգնեցին և չնորհակալություն հայտնելով Մեծոյենց Մուկուչին՝ սրահ ելան:

Սանահայրը մի կապոց դրեց Ջավուշի թևի տակ:

— Էս ի՞նչ բան է, Մուկուչ ջան, փնչքնչ-նվներս ո՞րն է, ամո՞թ չէ, մեր տունն է. էս չեղավ,— նկատեց Ուսուան:

— Չէ՛, քավոր ջան, հնումի սովրությի է, պիտես էլի, պխուդ մատաղ: Սանամորդ փնչքնչներն են. վնաս չունի, քեզի ու Փիլոս ապրոտս համար գուլպա է գործեր և էլ ուրիշ մանր-մունր բաներ. ծողություն էրա:

— Լա՛վ, լա՛վ, սանամորս լսաս, որ երկնուց պահին չնորհակալ ենք. ծո՛ղ չուս ոտքի կենա: Կիմանա՞ս, քեզի հետ եմ,— և խորհրդավոր ժպիտով հարևց,— մեկ տարի էսօրս էլի քավոր եմ էտեղ: Ինձի ամոթով չէնենք:

Մուկուչը ամոթխած հարսի նման կարմրեց, մինչդեռ փոքր եղբայրը՝ ճրագը ձեռքը, մինչև մեծ ճանապարհը առաջնորդեց կուշտ ու կուռ կերած պատվավոր հյուրերին, որոնք խոսելով ու պրուցելով սուզվեցին գյուղական անլապատեր փողոցների բավիղում:

ԳԼՈՒԽ Ժ.

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԾՊՆԻ ԳՆԱԼԸ>

Առավոտ չատ վաղ, Ուստան դեռ քնի մեջ, նրա գլխու վերևը կտրեց ծպնեցի սանահայր Վարդանը:

– Ել, Ուստա ջան, ել,– ձայնեց սանհերը:

Ուստան աչքերը բացեց, ապա ձախ աչքը դոցելով ասաց.

– Հը՛, էդ դու ես, Վարդան ջան,– ու նորից մյուս աչքն էլ դոցեց:

– Ուստա ջան, ի՛նչ քնկոտն ես եղել. աչխարհ-արաբաւո ոտքի վրա է, դու քնել ես:

– Երեկ կնունք ունեի, չա՛տ խմեցի. քուն չեմ առել,– ասաց, բայց և այնպես, չիտկվեց, նստավ անկողնու մեջ.– ի՛նչ կա, բարի է:

– Բարի է, գլխուդ մատաղ, թե ժամ ունիս, երթանք խաթերս համար հորս չարե:

– Աչքիս վրա, [ասավ Ուստան] ես քու գլուխդ կկոտրեմ, խաթերդ չեմ կոտրի, ի՞նչ բանի վրա ես,– ծիծաղելով ասաց Ուստան և սկսեց հագնվել:

Սանահերը հատուկ պատվի համար քավորի ձեռքին ջուր լցրեց. Ուստան այնպիսի եռանդով բուռ-բուռ ջուրը զարկում էր երեսին, որ չորս կողմը անձրևի պես թրջվում էին, և մնչալով ու թնչալով. սանահոր ոտնե-րը բոլորովին թրջվել էին, բայց չտևանել էր ձևացնում:

Թեյից հետո Ռևսին տարան ուսումնարան, ներկայացրին Թաթոս վարժապետին, որ հետո երբ, Ռևան ուզենա ընտանիքով տեղափոխվի այնտեղ. ապա տուն դառնալով ճաշեցին ու. երեքով, Միրզան առաջները ձգած՝ [խոսելով, խոսելով] ճամբա ընկան դեպի Մալնի: Օսկանի չները, իրենց սովորության համաձայն, ուղեկցեցին Ուստային և մանավանդ Միրզային մինչև գյուղից դուրս, բայց փոքր Զախարը ընկերակցեց գյուղից չա՛տ հեռու. Քերոբը հազիվ, ուժով-զորով, բարկանալով, սաստելով, հետ դարձրեց նրան, որը վերջին անգամ Ուստայի ոտքերի մեջ փաթաթվելով, դժկամ հեռացավ, գլուխը կախ, պոչը քաշած:

Երեկոյան դեմ հասան Մալնի. կամսարականների Շիրակի այն գյուղերից մեկն է Մալնին, ուր լիքն են մեր հնադարյան արվեստի հրաշակերտներով. այսպես, մի չքնաղ եկեղեցու շուրջ ծվարած է այս գյուղը:

Նրանք մտան գյուղամեջ, գյուղացիք, տես ու ճանանչ բարի գալուստ էին մաղթում Ուստային ու մոտենում բարև տալիս, բարև առնում, այնպես որ մինչև վարդանի տունը հասնելը գրեթե մի ժամ տևեց, այնինչ սանամեր Շողերը թոնիրը վառել, ընթրիքը չինել, սպասում էր [հյուրեր] իր ազիզ քավորին:

Վերջապես ավանակը գնաց կանգնեց վարդանի դռան առաջ: Սանամեր Շողերը առաջ եկավ ուրախ ժպիտը երեսին:

— Այ [սանամեր] բարով, սանամեր Շողեր, քուրիկ, բարով տեսանք, բարին քեզի, ի՞նչպես ես, լավ ես,— ասաց Ուստան ու ձեռք մեկնեց:

— Գալդ բարի, քավոր աղբեր, հա՛, նոր միտքդ ընկանք, էս ո՞րքան ժամանակ է, մերը չես եկել...— պատասխանեց վիրավորված Շողերը:

– Դե՛հ, ի՞նչ անենք, քուրիկս, մեկ գավառ, մեկ Ուստա Կարո, չենք կրնա Հասնի ամեն տեղ, հազար կտոր պիտի ըլնիմ, որ ամեն տեղ էլ կարոտով չմնան ինձենն... – կատակով ասաց Ուստան:

– Չէ, չէ, մի քեզի չթմեղե. աչխարքի դրուկ է. քուրը կաան ախբեր ունիմ, ախբերն կաան, քուր չունիմ. գիտեմ, գիտեմ: Ինչի Թանկ կծախես, որ անուշնաս:

– Անուշնամ՝ չուտ կպարպիմ...– ծիծաղեց Կարոն ու նրա հետ բոլորը:

– Հերիք է իրար մեղադրեք, ներս համեցեք, միջամտեց Վարդանը, և Ուստայի թևեն անցած, ներս [տուն] տարավ:

Սանամեր Շողերը երիտասարդ, վառվռուն, լեզվանի մի կնիկ էր, սակայն ո՛չ այնքան դեղեցիկ, որքան աստղով. Ուստան նրան էլ շատ էր սիրում ու հարգում և բավական ազատ էր հետը: Նույնանման վերաբերմունք ուներ սանամերը դեպի իր հարգելի, սիրելի քավորը:

Սանիկները մի տղա և մի աղջիկ վազեցին, ընկան Ուստայի գիրկը. Ուստան մեկ-մեկ նրանց ամուր պաչեց, և մրգեր լցրեց նրանց դոդը. ապա լվացվեց, վրայի փոշին մաքրեց, և եկավ, առոք-փառոք նստեց օճախի վերի գլուխը. Հերոքը գնացել էր ավանակին հոգալու՝ կեր ու ջուր տալու, իսկ Վարդանը [տնտեսական] տնտեսության գործերով էլումուտ էր անում:

– Հավոր չան, քեզի համար լավ կերակուրներ եմ եփել, քու ուզածդ...– ասաց Շողերը:

– Սանամեր Շողեր չան, էլպուր էլ որ եփած ըլնիս, ինձի համար ձվածեղեն առավել է,– ասաց Ուստան և թյուրթունը հանեց:

Վարդանը դրսի տնից բղավելով ներս մտավ.

– Աղջի, սեղան դիր, անոթի ենք, չատ մի խոսա՛:

– Տո, Աստծու մարդ...– պատասխանեց Շողերը,– չես թողնի քավորս մի քիչ չունչ քաշե, մի քիչ իրար գնաս տանինք:

– Սեղան դիր, քեզի կասեմ, հացի վրա իրար ավելի լավ կտեսնենք:

Ուստան չմիջամտեց, որովհետև ինքն էլ քաղցած էր ու մանավանդ օղիի ծարավ:

Մի քիչ անց, բոլորով սեղան նստեցին, [առատ ու շեն սեղան] կերան, խմեցին, ծիծաղացին ու կատակեցին ու նորեն կերան, խմեցին: Սեղանը քաշելուց հետո՝ Վարդանը թեյամանը դրեց բուխարիկի վրա, ու սանահեր ու սանամեր, քավոր ու Քերոր իրար պլուխ հավաքված ծխում էին ու զրուցում:

Ծանին գյուղերի շրջանում հայտնի է, որպես շա՛տ զվարճախոս և առակասեր մարդ[1], և երբ արդեն գյուղում ձեն ընկավ, թե Ուստա Կարոն նկել է, Ուստայի բարեկամները, տես ու ծանոթ, հնռավոր ծանոթներ նույնիսկ, մնկմնկ, նկան իրար հետևից Վարդանի տունը, Ուստայի հետ զրույցի, խնդալու, ուրախանալու, հաճելի երեկո անցկացնելու համար:

Բոլորին Ուստան սիրով ու ժպիտով, անուշ խոսքով ու կատակով ընդունեց, տես թե ինքը լիներ տան տերը, և հրամայրեց իր շուրջը:

Մի քանի սարից-ձորից հարց ու պատասքանից հետո, Ուստան բացեց իր խոսքի թելը:

– Լսողաց եմ, թե վերջը-վերջը Պետրոսենց Խնչոն մտուրի տեր է եղել. ամպերին ջուր կիմներ. նշանածը բանի նման է. ի՞նչ կասեք:

---

[1] *Ինքնագրում՝ այսպես:*

– Ուստա Ջան,– պատասխանեց ծպնեցոց մեկը,– գետնին կուտ չէր ուտե, երկնքի մեջ գտավ – հրեշտակ է ձևոք դցած:

Գնդացիք քմծիծաղ տվեցին. Ուստան դլխի ընկավ.

– Ասել է, նախանձի պատճառ չունենք:

– Ի՞նչ նախանձի:

– Մարդու սիրտն էնպես է, երբ մի սիրուն աղջիկ հարս կերթա, մարդ դիտե, թե իր ծոցեն կերթա,– վրա բերնց Ուստան:

– Ուստա Ջան, մի պղտորվիր. ծոց պահելու բան չէ եղածը,– ասաց մի ուրիշը,– Շատվանցիք էդ դամեցած աղչիկը տարել սարը, ծառին էին կապել, գնլերը չէին եկել տարել, մեր ճլուզը դավուլ-զուռնայով դնաց-բերնց:

– Տո, ճլուզ, ճլո՛ւզ, էդ էլ նոր անուն եք դրել...– քա՛հ-քա՛հ ծիծաղելով, հրհռալով կրկնեց Ուստան մի քանի անգամ «Ճլուզ» անունը...– տո՛, տո՛, ի՛նչ պոչատն ե՛ք, ի՛նչ հնճարոզը... քա՛հ-քա՛հ[1]:

Ծպնեցիք ամեն բացատական կամ ծաղրելի կողմերով աչքի ընկնող մարդկանց մականուններ էին դնում, ո՛չ միայն իրենց գեղացոց, այլև շրջակա գյուղերի բնակիչներին. և այդ անուննները այնքան հարմարավոր, ասես, չափած-ձևած էր ենթակաների վրա և միևնույն ժամանակ այնքան սրամիտ, որ բոլորն էլ ուրախությամբ ընդունում էին ու գվարճանում, և այդպիսով գյուղից գյուղ թռչում էին այդ անուննները անվախ ճնճղուկների պես. և ո՛չ ոք չէր վիրավորվում, քանի որ դա բխում էր մի կատակասեր գյուղից: Մականունների այդ պատշաճության պատճառով ծպնեցիք իրենց մասին ասում էին հպարտությամբ. «Ծպնի, ինչ (ում) դնեմ կպնի»:

---

[1] Ինքնագրում այսպես:

— Անաստված ծպնեցիք, ինչ նոր ավել անուններ եք հնարել, ասեք, տեսնեմ,— [հարցրեց] խոսքը շարունակեց Ուստան:

— Ես-իմ, ո՞ւմ միտքն է,— գոռաց մի ծպնեցի այնպես բարձր, հենց իմանաս սարի մյուս ծերից ձայն տալիս լիներ.— դու ասա ո՞ւմ անունը կուզես, ես ասեմ:

— Տո՛, Հայկո, էդ քու ձենն էր, ասես, Թոփ տրաքվավ, դլուխս վերցուց,— ասաց Ուստան,— հա — ծառա եմ ձայնիդ, մեկ ասա ինչ եք դրել Ղուկաս աղի անունը:

— Փռնտոզո, քստըր:

— Ի՛նչ լավն է, ի՛նչ լավն է, օֆ, օֆ, ի՛նչ տեղին է, ինչ կատա — Ֆռնտոզո... — հրհռալով, քրքջալով ասավ Ուստան անհուն ուրախությամբ և քննով. հրհռում էր ու կրկնում. Ֆռնտոզո՛... Լ՛հ, տերտերի, Մուքայելի անունը:

— Ծռան,— ձայնեց մեկը:

— Խոլեռ,— ավելացրեց մեկ ուրիշը:

— Ապրիք, կեցցնք, սիրտս հովցավ, օխայ, ի՛նչ տեղին է. խոլեռ թե խոլերա, տեղոց տեղ — Ֆռռնտոզո, Ծռան խոլեռ...— նույն անհուն ուրախությամբ ասաց Ուստան, և երկարորեն ծիծաղում էր ու ծափ տալիս, այնպես ուժգին էր ծիծաղում ու ծափում, որ առաստաղից կախված լամպը սկսեց ճոճալ: [և լուսամուտների ապակիները թրթռալ:] Ծիծաղից կաս-կարմիր էր դառել. աչքերը լցվել էին արցունքով, [և սկսեց հազալ ու հազալ]: Այդ առողջ ու հուժկու ծիծաղը վարակել էր բոլորին, բոլորին, բացի մեկ անձից, որ լուռ նստել էր և միայն լսում <էր>: Երբ Ուստան հանգստացավ, կարմիր թաշկինակով աչքերը սրբեց, դարձավ լուռ նստողին:

— Սարո, ի՛նչ կմտքես, առ պապիրոսդ չինն,— և նետեց դեպի նա ծխախոտի տուփը:

– Ուստա ջան, էն կմտքեմ, թե ի՛նչ ուրախ սիրտ ունիս. Աստծու տվածն է, կվախենամ նախանձել,– ասաց Սարոն պապիրոս փաթաթելով:

– Ինչի չպիտի ուրախ ըլնիմ, Սարո ջան, խիղճս՝ հանդիստ, քունս տեղը:

– Ջէ, Ուստա ջան, էդ չէ, կնիկ չունիս, երեխա չունիս, [աշխարք վառվի քո խորոմ խոտը չի վառվի] մեջը կուգես, բոլորը ման կուգաս:

– Էդ չէ, Սարո ջան, էդ չէ. բնութիս է էդպես. սևը, որ վրես կուգա, ես կարմիրը դեմ կանեմ. մեկ էլ որ, գիտեք, իմ ծնած օրը մեր գեղը օխթը հարսանիք է եղել, ու էդ տարին էլ իսկի մեռնել չի եղել. ուրախ տարի եմ ծնվել, էդոր չնորհքն է:

– Բանը ուրախ ըլնելն է,– ասաց մեկը մի անկյունից:

– Ապրիս, լուսը կաթե պապիդ գերեզմանին, խոսքս թագավորեցրիր.– պոչեց Ուստան ոգևորված,– բանը ուրախ ըլնելն է, էդ է գլխավորը, աղքատ ըլնիս, թե հարուստ. ուրախ սրտով չոր հաց ուտես, տխուր սրտով գաթա ուտելուց առավել է. սգվոր թագավոր ըլնիս, մեկ հոտաղ չարժենաս. իմ խելքով՝ ուրախությունը որ մեռավ, ամեն բան մեռած է, էնպես որ, արևն ու գինին իրար հետ պիտի պահել, ես էլ գլխներին խաչ-քավոր, որ նորեն ուրախությունը ծնի աշխարքի վրա:

– Ուստի խոսքերը լալ ու մարջան են,– ու իրար հետևից, իրար բերնից խոսքը [առնելով] արձագանքելով ասացին գյուղացիք ուրախացած ու աչխուժացած:– Ուստան մեջ գեղի հոգուց կխոսա:

– Էս խոսքի վրա արաղ պետք է,– ասավ Վարդանը, և պահարանից արաղի մեծ շիշը հանեց ու հյուրասիրեց դրեթե բոլորին մինչև [հատնելը] խմիչքի հատնումը:

— Դարդը գնչ բան է, դարդը կյանքը կմաշի՝ ժանգի պես,— ասավ մի պյուղացի՝ արագը կոնծելով:

— Էսօր դու շատ խելոք կխոսես, ատ Հակո,— նորեն խոսեց Ասատան,— դարդը որ կա թշնամի է. մարդ պաի թշնամուն հաղթե ու գլխուն նստի, մե չէ կորած ես, ջրի տարած:

— Ասատան ում տուն որ կմտնի, պատերը վարդ կդառնան:

— Ասատան արևը իր հետ կպարտցնե,— մյուսի խոսքին կցնց իր խոսքը մի ուրիշը:

— Հերիք է գովեք ինձի, պոչվոր ծպնեցիք, ես գիտեմ ձեզի, էգուց վրաս պիտի խնդաք,— ասավ Ասատան:

— Բավ լինի, Ասատա ջան, լմե խնդանք, խոսքերիդ վրա կխնդանք/ դու մեզ ինչի տեղ դրեր ես, դու միշտ մեր ապիդ, աչքի լույս Ասատան ես, ատա խոսդի բերանը ծուփ,— ասացին մի քանիսը միաժամանակ:

— Դե՛հ լավ, հանաք արի. մի նեղսրտեք,— արդարացավ Ասատան,— հիմի ինձի ասեք, իմ անունս ի՞նչ է:

— Քեզի ի՞նչ անուն, ով կիշխընա քեզի անուն դնել. տես քեզի ի՞նչքան կպատվենք, որ ամենքին անուն ենք դրել, քեզի — չէ. էղ մեկ. մեկ էլ որ, հայտնի անունով մարդուն ի՞նչ անուն. Ասատա կարո, մեկ անուն է. ամեն մարդ՝ ապա, աղջիկ, բուրդ, թուրք քեզի պիտեն, անունդ ամեն տեղ կթնդա:

— Էլի ձմերուկ գրիր թեխս տակը,— ասաց Ասատան:

— Էհ Ասատա ջան, չես հավատա, շիտակը կասենք. աշխարք որ կոչունքի նստի, քու տեղդ վերի գլուխը կըլնի, հարուրից թե որ ցած, բայց 1000 բանձր:

Ասատային շատ դյուր նկավ այս խոստովանությունը, և գոպած ոգևորությամբ հանեց ծխախոտի տուփը, ինքը մի պապիրոս խինեց և ապա հրամցրեց ծպնեցոց. ինչպես

որ ոչխարը ապի վրա, այնպես էլ գյուղացիք թափվեցին թյութունի վրա, հատ-հատ պապիրոսներ փաթաթեցին վառելով պապիրոսները իրար կրակից:

Տիրոց մի գոհացուցիչ լուռթյուն. ամենքը ախորժակով ծխում էին՝ բերաններից բաց թողնելով թանձր ծուխը:

– Ուստա Ջան,– խզեց լուռթյունը մի ծպնեցի,– վարշամ եղել ես, քեռուս տղան սալդատ է եղել հոն, կասի՝ աննման քաղաք է:

– Չէ, չեմ եղել. Վարշա՞վ,– փորփրելով իր հիշողությունը պատասխանեց Ուստան,– չէ, չեմ եղել:

– Էդ ինչպե՞ս է որ չես եղել...– նորից կրկնեց զարմացած հարցնողը:

– Ջեմ եղել ի՛նչ կա զարմանալու, աշխարք էնքան մեծ է որ, մարդ չի կրնա ամեն տեղ հասնի, խաբելու հո չեմ ձեզի, չեմ եղել:

– Ադէ՞աս. էնտեղի մասին էլ չա՛տ կգովեր:

– Չէ, չեմ եղել,– ապա մի փոքր մտածելուց հետո [աչքերը] ուսերը վեր քաշելով ավելացրեց Ուստան,– կարելի է որ եղած էլ ըլնիմ, ո՞րը միտքս պահեի. հազար քաղաք ու գետ եմ տեսել ու անցել, որի մեջ մտել, որի կողքովն անցել. ատ, դու որ հիմի Երևան երթաս, էնտեղեն էլ ապարաններով դառնաս դաս Գյումրի, էնտեղեն էլ Ղարս, Ղարսեն էլ կաղզվան ու վերջը Էստեղ, ի՞նչ է ամեն տեղ տեսած պիտի ըլնիս, կամ միտքդ կրնաս պահել անուններըը, ու թե որ վրայեն էլ մի տասը տարի թռած ու մտքիդ մեջեն էլ չատ բան քերած-տարած ըլնի՞...– հարցական շեշտով ու հայացքով Ուստան նայեց ծպնեցոց, որոնք ամենքն էլ գլխով, ակնարկով հավանություն տվին նրան:

– Հա՛,– չարունակեց Ուստան,– մեկէլ որ չատ տեղեր պիշերն ննջ անցել, քնով եմ եղել, հիմի որ, չա՛տ ժամա-

նակ, աչքս կխփեմ, հագար ու մի ծով ու քաղաք, սար ու անտառ կանցնին աչքիս առջևով, խառնված, իրար չաղված, երազի պես, ոնց որ տեսած-չտեսած...

– Էդպես է, չիտակ է,– ասաց մի դյուզացի,– մեռնակ, Ուսուա չան, կխնդրեմ էն ծիծաղի պատմությունն արա, որ դու մեկ անգամ արիր, վարդևորին, վանքը, հինգ տարի առաջ, էս կասեմ, պատմությունը Հարնչ է եղել:

– Տո՛ ո՞րը, հագարը կա, ո՞րը, միտքս ձգե, ասեմ:

– Ուսուա, միտքս չէ:

– Իմ միտքս էլ չէ. հինգ տարվա խոսք կասես, ո՞ւմ միտքը...

– Էդ թողննք,– մեջ մտավ մի ուրիշը,– Ուսուա, ես կասեմ, աշխարքի մեկ ծերը Սամսոն-Տրապիզոնն է:

– Չե, տո մարդ-Աստծու, էդ չա՛տ մտիկ է, Սամսոնու ճամբու վրա է,– պատասխանեց Ուսուան և բերքը հաստատեց նրա խոսքը:

– Բա, որոնք են աշխարքի ծերերը, ես չա՛տ հետաքրքիր եմ,– հարցրեց նույն դյուզացին, չաուերն էլ ձայնակցեցին նրան:

– Աշխարհի ծերի՞ր,– կնճիռները հավաքելով և մտքերը ամփոփելով, լուրջ ու ծանր ասաց Ուսուան,– աշխարքի ծերերը անծեր են, մեռնակ հայտնի են էս աշխարքները. ծերեր, բայց կտոնցն էն դին՝ մարդ չի եղել, ոտք չի դրել, աչք չի տեսել: Էնպես որ ակնահայտնի ծերերը կտոնք են. մեկ կողմը՝ Զինմաչին ու Հնդստանն է, մեկել կողմը՝ Ամելիկիան է, մեկել կողմը մարդակերներու հողն է, որ մարդ չի իշլընա ոտք կոխե. էս իրենք. վրա չորնք կողմն էլ ծով-ովկիանոսն է՝ անծեր, անտուտ, անվերջ ջո՛ւր, ջո՛ւր, ջո՛ւր ջուրի վրա: Էտոնք կասվին դրսի աշխարքներ. էդոնց մեջերը ընկած աշխարքները կասվին ներսի աշխարքներ, վերի, ներքի աշխարքներ. էդ աշ-

խարքներն են – Իրան, Թուրան, [Սպահան] Ղանդահար, Սմրղանդ, Հարաշ, Հալեպ, Մըսր, Սպահան, Շամ, Բաղդադ, Ռուսեթ, Լամանդ, Ֆրանքստան, Ինգլիզ. մեր աշխարքը՝ Կավկաս, աշխարքների մեջտեղն է: [ու ամենեն մեջտեղը՝ պորտը՝ էջմիածինը. ու էդոր համար էր որ Քրիստոս իջավ իջման տեղը:]

– Հերու մեր գեղը մի տիրացու էր եկել, կասեր, որ էջմիածինը աշխարքի պորտն է... իջման տեղը: Ուստայի խոսքը թագավորեցնելու համար կասեմ:

Ուստան վերջացրեց. խորին տպավորություն էր թողել նա բոլորի հոգու վրա. [տևող լռ...] հաջորդող լռության մեջ դյուզացիք մտածում էին և իրենց երևակայության մեջ տեղավորում-դասավորում Ուստայի աշխարհացույցը:

– Ուստա,– երկյուղածորեն հարցրեց մեկը,– էդ աշխարքներեն դու որտեղերն ե՞ս գնացել. աշխարքի ծերերին չե՞ս հասել:

– Չէ, Հակո ջան,– մինչի դրսի աշխարհները, մինչի կնոնց սահմանը. Զինմաչին, Ամելիկա, ծով-ովկիանոս չեմ տեսել. բայց ներսի աշխարհները, վարի-վերի շատ եմ գնացել եկել. հոդուս ի՛նչ մեղք անեմ – Լամանեթ, Ֆրանկստան, Ինգիլիզ, Ճնվզներու հողը, Երուսաղեմու հողը, Ստամբոլու հողը չեմ եղել. մնացածները – ջրի ճամբա էին, թեկուզ ինչքան էլ որ իրարուց հեռու էին...

– Ուստա ջան,– չերմ հետաքրքրությամբ հարցրեց մեկը,– էդոնք շա՛տ հեռու են, չէ՞, մեր կողմերեն:

– Հա, մեկ տարվա ճամբա,– կտրուկ պատասխանեց Ուստան:

– Ուստա ջան, երնեկ քեզի, ի՞նչքան բան տեսած կաս, աչքերիդ տեղն ըլնեի. էդոր համար անսպառ աղբյուր ես խոսքի ու զրույցի, մենակ, շա՛տ, շա՛տ կը զարմանամ,

ինչպես ես եղել էդքան հետու – Շորագյալը ո՞ւր, խոսքի օրինակ – Ղանդահար ո՞ւր.– անկեղծ զարմացումով-հիացումով հարցրեց միևնույն դյուզացին:

– Տո, տնակոլի տղա, քա դու չե՞ս իմացել, որ քարվան եմ ունեցել, Թավրիզցի երևելի Թաջիր Խոջա-Աբաս աղի ընկերի պես եմ եղել:

– Լսել եմ, Ուստա Ջան, ու չեմ ասե թե, չէ. կհավատամ, մենակ նորին կզարմանամ, քանի որ մեր մարդը դուբերնիեն հետու չի երթա:

– Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ,– չորս կողմեն վրա տվին,– մեր գեղերեն Պետրիքոլ, Վարշավ, Երուսաղեմ, մինչև Ամելիկա գնացող-եկող կա. դու կալերեն հետու չես գնացել, դիտես թե, ուրիշներն էլ քեզի պես են:

Հարց տվողը համաձայնեց ու լռեց. Ուստան ավելի լրջանալով շարունակեց, որպես թե իրան պաշտպանելիս լիներ:

– Տղերք Ջան, կասեն թե վաննցու կաղը Զինամաչին է հասել. ատո, ես որ երկու ոտ ունիմ, ու քարվան եմ ունեցել, ինչ զարմանալու բան է, որ գնացածս տեղերը [երթայի] երթացած ըլնեի, էն էլ առանց Զինամաչին. ի՞նչ է խելքի չի պառկի. սուտ որ ուզենամ ասեմ, կասեմ Զինամաչին էլ եմ եղել, Հնդստան էլ, թևս ով պիտի բռներ, ով էր հետս, ով էր էնտեղ գնացող-հարցնող: Շիտակը կուզեք, դժարը հետու տեղեր երթալը չէ, դժարը քարվան ունենալն է. ասենք, քարվան ունենալն էլ դժար չէ, բանը սեր ունենալն է. սեր ունիս մի բանի համար, կաշխատիս. և աշխատող մարդուն բան չի պակսի, նպատակին կհասնի. առաջ մի երկու ուղտ կառնես, հետո կշատացնես. ուրիշները ձի, ոչխար կառնեն. մեկ էլ որ հացի լավ աղբյուր է. աջամները քարվանով տուն կպահեն. հա՛, էն կուզեմ ասել թե դժար ու մեծ բան չէ քարվան ունենալը.

ա՛յ, հետու չերթանք, [մեր Կողբա] Զորաքյարեցիք [կտա-ննեն] քարվան կպահեն, ու մեր Կողբա ապը էնոնք կտա-ննեն աշխարհն-աշխարհ: Ես էլ հո սեփական քարվան չեմ ունեցել, հայտնի է ձեզ: Ես չա՛տ բեր ունեի աշխարք պը-տրտելու. բախտս բերավ, խոճա Աբաս աղայի մոտն եղա, հետո ընկերի պես դառա – դե՛հ, մեկ որ քարվան ունե-նաս, հո, չպիտի տունը նստած մնաս. շահի, առուտուրի համար պիտի երկրե-երկիր, քաղաքե քաղաք ապրանք պիտի տաննես-բերես: Գետի ջուրի պես կընկնես ճամբա կերթաս ու կերթաս – օրերով, ամիսներով էտեղեն էն-տեղը, էդ տեղերեն էլ կանցնիս, կերթաս ավելի հեռուներ-ը. մեկ էլ որ աշխարքները իրար կպած բաներ են. մեկ աշխարքի հողը մտար, ասել է թե, մեկել աշխարքի հողին մոտեցար, էնտեղեն էլ որ հասար, մեզի համար ուրիշ՝ բայց իրենց համար դրկից աշխարհին մոտեցար. էդպեսով էնպես կըլնի, որ գնալով, գնալով՝ հետուն մոտիկ կդա-նա, մոտիկը հետու...

Ուստան կանգ առավ այստեղ. մի պապիրոս չինեց, որ հանդստանա, սակայն չէր կարող հանգստանալ. անցյա-լը, քարվանը դրդռել էր նրա երևակայությունը, զարթնց-րել էր չքեղ պատկերներ, ուզում էր չքնաղ անցյալից պատմել, պատմել: Գյուղացիք [որ բնավ կասկած չու-ննին Ուստայի քարվան ունենալու վրա, այս բաց...] հա-մոզիչ բացատրությամբ դլխովին համոզված՝ պապանձ-վել էին և ոչ ոքի մտքեն չէր անցնում մի հարց հարու-ցանել: Ուստան ծուխը լիաթոք կուլ տալով ու կուշտ ծծե-լով, չարունակեց իր խոսքի թելը՝ հյուսված մշուշային ծուխով:

– Մեր խեղճ գյուղացիք ծով-ովկիանոսը կանցնեն Ամելիկա կերթան, աշխարքի ծերը. հետու, հետո՛ւ մի նոր պատճ աշխարք, էնպես նոր, որ տեսնողները կասեն թե

էնտեղ ամեն բան ուրիշ տեսակ է: Խոսքի համար, էստեղ որ հիմի գիշեր է, էնտեղ ցորեկ է, էնտեղ գիշեր է, էստեղ – ցորեկ. էստեղ տանձի պոչը բարակ տեղեն է, էնտեղ հաստ տեղեն: Էդպես զարմանալի բաներ, որ մարդու հավատալը չի գա, բայց շիտակ է, սուտ չէ: Իմ եղած աշխարքներն էլ հրաշք, զարմանազան բաներ կան, որ կպատմեմ, իրավունք չունիք չհավատալու, քանի որ չհավատալու բաներ են: Ես որ աչքով կտեսնեի, մատներով կբռնեի, էլի չէի հավատալ. ինձի կերևար թե, երազի միջի բաներ են կամ հեքիաթի. արի տես, որ հեքիաթի միջի բաներն էլ էս աշխարքի միջի բաներ են շինել ու սարքել: Խելքե-մտքե դուրս բաներ կան. խոսքի օրինակ, կրնաք հավատա, որ մարջանը ծովի ծառի պտուղ է, կամ թե մարքրիտը ձկի փորեն կելնի, բայց հաստատ է, որ էդման է: Ես որը ասեմ, որը թողնեմ: Անցած օրերը Մավրակ բաներ կպատմեի ներսի աշխարհներեն. մեկն ասավ թե՝ քաղաք ցիրկ է նկել, էդպես բաներ ցուց կուտան. ես էլ ասի թե, չէ, կնշանակե, իմ տեսած աշխարքներեն մարդիկ են նկել: Էն էլ թե՝ չէ, աչքակապություն է: Ես թե՝ իմ աչքերս մարդ չէր կապել. տեսել եմ ու ինձի հետ հազար մարդ էլ նույն բանը տեսավ. դուք էլ դնացեք, դուք էլ տեսեք: Հավատաց ինձի էն մարդը, թե մտքի մեջ սուտասան, փչան հաշվեց, ինձի համար մեկ, Աստված իրան բանն աջողե:

– Ուստա Ջան,– ասավ գյուղացիներից երեցը,– մենք կհավատանք ու կզարմանանք. մենք ինչ ենք որ, էշ կևրել, էշ մեծացել. եկանք աշխարհ, կերթանք ոչխար. Ադիանցի մարդիկ, տունը մնացած աղջիկ. մեզի համար աշխարքի ձերը Փոթոյենց արտն է:– Ամենքը ծիծաղեցին նրա համեմատության վրա:

– Ա՛խ, քարվան, քարվան, ջան քարվան,– կարոտով խոսքը թևից նորից Ուստան.– օխթը պորտով անիծած ըլնեին ավազակները, որ եկան քարվան զարկեցին-տարան... ա՛խ, ա՛խ,– խորին ափսոսանքով հառաչեց Ուստան.– տղեք ջան, չատ անուշ բան է քարվան ուննալը, հիմի, էս ժամիս պես, քարվանս աչքիս առջևն է. տղեք, դուք էլ աչքերիդ առջևն առեք – 40-50 ուղտ՝ իրար հետևն չղթա կապած՝ գլուխը նաու-ուղտը՝ հարսնիք երթյող հարսի պես զուքված-զարդարված, հուլունքներով, հազար գույնի, փունջերով, բոժոժներով ու բուկը երեքտակ գանգակով, ի՛նչ գովական նաու-ուղտ էր. ողջ Իրանի մեջ նման չուներ. էնոր վրա [ոչ մարդ] բնավ չէինք դնե. [մեկ-մեկ ես կնստեի] էն քարվանի գլուխն ու աչքն էր. մեկ անգամ տեսած համբան մեկել անգամին ջրի պես գիտեր. Մըսր ըլներ թե Ղանդահար. հարհանդ կորոճար ու աչքերը կձգեր սարերին ու ձորերին. ու կիմանար իր երթալիք համբան, մուժ ըլներ փաթած թե մշուշ. գիշերը աստղերուն կնայեր, ու մեզնեն տասնապատիկ լավ գիտեր, թե ո՞ւր ձոր կա, ուր անդունդ, ուր տեղ գետ, ո՞ւր տեղ քարվանսարայ: Մեկել ուղտերը բարձած-բեռնած՝ ամենքն էլ զանգակներով ու զանգուլակներով, օրորվելով, չորորվելով, կերթային, կերթային, կերթային, անուշ – ձենները լցնելով սար ու ձոր, դաշտ ու անտառ, էսպե՛ս, ըզնգ ու ըզնգ, ըզնգ ու ըզնգ, ըզնգ ու ըզնգ.– և ինքը, մեկել, ոգևորված, ուրքի ելավ ու բուխերիկի առջև, թախտերի մեջև ձգվող նեղ անցքով, օրորվելով, ուրքը ամուր զարկելով գետնին, մի քանի անգամ դնաց-եկավ՝ պատկերավոր օրինակով ցույց տալու համար ծպնեցվոց իր քարվանը. գյուղացիք վարակված Ուստայի տրամադրությամբ և հափշտակված, ասես թե նրանք այլևս Վարդանի այվանում չլինեին, հետևեցին նրա ներկայաց[ումին]րած քար-

վանի ընթացքին: Ապա նկավ նստեց իր տեղը, մի փոքր հանգստանալուց հետո չարունակեց.

– Ա՛խ, քարվանը դու տեսնեիր լուսնյակ գիշերները. հովն անուշ, բարակ կուգա ծաղիկներու հոտերու հետ. մեկ էլ մի ուղտի վրայեն մի աշուղ երգ կասե, մնկելը թառը կզարկե. բոլոր ճամբորդները ձեները կկարեն. մենակ զանգակներն անուշ կխոսեն ու սար ու քար հազար ձենով հետ կուտան էդ խաղի ու թառի անուշ ձենները. մարդ չգիտե՝ երազի մեջ է, թե արթուն. ա՛խ, գիտեք ինչ անեման աշուղներ կային քարվանիս վրա, որ մի հողեն, մի աշխարքի մյուսը կերթային, ի՛նչ հնքիաթ ասողներ. էդ ժամանակներին էր որ, էդոնցեն սորվեցի չա՛տ-չա՛տ սիրուն, քաղցր, հրաշք-հնքիաթներ, Ջյոռ-օղլին, Շահ-Իսմայիլ, Ասլի-Քյարամ. էն ո՞րն ասեմ. կամ՝ աշըղ-Ղարիբ, Դոնյա-Գյոզալի: [մի անգամ ինչպես եղավ որ] Շա՛տ անգամ ուղեցի աշուղ դառնամ, քարվան թողնեմ. մի սազ մեջքս քցեմ ու էդ աշուղների հետ ընկնեմ դեղ ու քաղաք, դոննդուռ. բայց մտածեցի, որ քարվանի պետ ըլնելը ավելի սիրուն է ու համով՝ հարգ ու պատիվն էլ իր կարգին, թողի էդ փորձությունը:] Հա՛, էն կուզեի ասել, որ մեկ անգամ, քարվանիս մեջ մի հնքիաթ ասող կար՝ անունը աշըղ Դարբեդար: Սամարղանդեն կանք թե չէ հնքիաթն սկսեց, օիսան օր, օիսը գիշեր գնացինք, [մտանք] Թուրանա բուրջերին հասանք՝ վերջացուց: Զարմանք հնքիաթ էր, միտքս չմնաց, շատ երկեն էր. ի՛նչ դարվիշներ կային, իմաստուն, խելքով մարդիկ, խաներ, իշխաններ, ի՛նչ պատմություններ կանեին. երբ քարվանսարայ կիջնեինք, հարանիք էր. օճախները կվառեինք, կնստեինք կեր ու խումի. ի՛նչ ազգեր ու ժողովուրդներ ասես, որ չկային. հայ, թյուրք, քուրդ, աջամ, պարսիկ, ուռում, արաբ, ինկլիզ, ֆռանցուզ: Աստված վկա, քարվանիս մեջ

չա՜տ ավելի տնտակի լեզվով կխոսեին, քան թե օրինակի համար Թավրիզի կամ Մարա բազարի վրա: Հա, կնստեինք կերուխումի, ու աչխարհատես, աչխարհաժուռ, պիտնակ, կարդացող-գրող, չափող-ձևող մարդիկ պատմություններ կաններին հետու աչխարհների մասին, անծանոթ ազգերու մասին, հին թագավորների, կրած, ավեր քաղաքների, կռիվների ու հազար բաների մասին. չա՜տ բան սորվեցա, չա՜տ բան էլ միտքս չէ. ներսի աչխարքնեքնն եկած դիտնակ ինդլիզ ու ֆրանցուզները դյուբրինով կնայեին ամեն տեղ ու գիշեր-ցերեկ կգրեին. աչխարք կգրեին, տնտածներն ու լսածները գրի կանցնեին: Բա, իմանայիք ի՜նչ կնիկներ կային, ի՜նչ խանումներ, լուչի կտորներ, ոսկու, ալմաստի մեջ կորած, սիրուն, աննման հյուրի-վներիններ, հետու, օտար աչխարքների կամ հարս կներթային, կամ իրենց մարդոց հետ տեղափոխություն, ճամփորդություն կաններին. ամեն ինձ տեղ հասցնելուս, Աստծուն հայտնի է, ձեզի ինչ պահեմ, սիրտս կտոր-կտոր կլիներ, թովները կմնար...

Այս խոստովանության վրա դյուզացիք ուշքի եկան և գլարթ ծիծաղացին՝ հարևան հարևանի ակնարկելով:

— Ի՜նչ անուշով, ծովի [պես] չափ հարստություն ունեցող Թաղիր-վաճառականներ կային, որ երկրե-երկիր կտանեին աչխարհի հարստությունը: Բեռներս լիքն էին հազար ու հազար բարիքներով. խալի, քիշմիրի չալեր, արմնշում, ոսկե-արծաթե բանածներ, զուքա ու զարդեր, թանգագին քարեր ու ակնառուներ, զմրուխտ, յաղութ, փերուզ, էլ ո՞րն ասեմ, որը թողնեմ. զարմանապան չորմրդներ — բազամ, խուրմա, բրինձ, զայֆա, զառչին, զաղարծիլ, զանջաֆիլ, չինիներ, սաքառններ... մնացածն էլ դուք ասեք: Դե, էսպես քարվանին ավազակ չմոտենա, բա ի՜նչ մոտենա. ասենք, քանջ ծառաններ ունենինք, լավ

գնքով. մնք էլ գինված, չա՜տ տեղ կռվեցինք, չա՜տ տեղ հաղթեցինք, բայց վերջերս բարի չեղավ. փառք իրան, գոնյա ողջ մնացինք, նորեն տա, նորեն խնդացնեն:

Ուստան կանգ առավ, ծխեց, նայեց ժամացույցին, և դառնալով ծպնեցոց ասավ.

— Տղերք, ուշ գիշեր է. էդուց երկուշաբթի է, աշխատանքի օր, գնացեք քնեք, մենք էլ քնենք, արժանանանք բարի լուսին:

Գյուղացիները «բարի գիշեր» մաղթելով ցրվեցին իրենց տները: Ուստան և Քերոբը պատրաստվեցին քնելու[1]:

[1] *Ալ լուսանցքում.* «Այստեղ նոր գլուխ»:

<ԳԼՈՒԽ ԺԱ.>
<ԾՊՆԻՈՒՄ>

Առավոտ վաղ, վեր կացան, նախաճաշեցին և գնացին աշխատելու: Վարդանի տան մոտ մի մեծ, խոր հոր կար փորած՝ ցորենը պահելու համար. պետք էր հորի շուրջը քարի պատ քաշել. քարերը արդեն տաշված, պատրաստ էին, Ուստան մտավ հորը, Բերոբը տվեց գործիքները. սկսվեց աշխատանքը. Բերոբն ու Վարդանը քար ու ցեխ-շաղախ էին բերում, դույլով կախում հորը, Ուստան դատարկում էր դույլը, և պատը շարում, մուրճով ջարդում էր քարերը, հարմարեցնում. Բերոբն ու Վարդանը մեկ-մեկ կռանում էին, նայում հորի ներսը:

— Բերոբ ջան,— հարցնում էր Ուստան,— էս քարն էստեղ դնեմ, ի՞նչ կասե. լավ չի ըլնի:

— Ուստա ջան, ի՞նչ պիտի ասե, իրեն խոսքն է, լավ կլինի:

Իսկ Վարդանը, որ աչքերը չորս արած, հետաքրքիր հետևում էր ամեն քարին, քթի տակից մրմնջում էր.

— Ըհըն, եղավ, տեղն առավ, ապրիս, քավոր Ուստա ջան, մատներուդ մատաղ, էդ քարը էդտեղ լավ մեռավ:

Նորից եկան երեկվա գյուղացիներից չատերը, որոնք այսօր գործ չունեին, չգիտեին ինչպես մթնեցնեին, եկան Ուստայի հետ խոսելու, գրույցները լսելու:

— Բարի լույս, Ուստա ջան, բար հաջողում, Ուստա ջան,— ձայնեցին նրանք հորի բերանից:

— Բարին արևնիդ, բարով եկաք,— պատասխանեց Ուստան հորի միջից:

– Ուստա ջան, դիշերս լավ քնա՞ր,– հարցրեց մեկը:

– Շա՛տ անուշ քնա, ու չա՛տ սիրուն երազներ տեսա, երեկ դիշեր քարվանիս խոսքն արի, ու երազիս քարվանս տեսա ու նորեն գնացի ման նկած տեղերս. աշխարքի բանը. հիմի մենակ երազի մեջ քարվան կպտրացնենք:

– Տեսածներս ու նկած տեղերս նորեն տեսա. Թիֆլիզն եկա Ախալցխա, Ախալքալակ, Գյումրի, Երևան, Էջմիածին, Թավրիզ ու էնտեղեն էլ Իրան, Թուրան, Հարաշ, Սամարղանդ, Մսըր, Ռուսեթ: Էլի մարմար քաղաքներ, կապուտ կանանչ ծովերը, դառչինի ծառերը, հյուրի-փերիներ, հնքիաթ ասող աշուղներ, ամենքը, ամենքը:

– Ուստա, էրնեկ քեզի, էլի հազար էրնեկ, որ երազիդ էդպես սիրուն բաներ կտեսնես:

– Բա ձեր երազները դիտե՞ք,– ասաց Ուստան:

– Շիտակ է, ես էս դիշեր Զոփուռինց քոռ Աղեքին տեսա ու կռվանք իրար հետ,– ասաց մեկը:

– Տո, էնոր տեսնելու համար է՞լ մարդ քնի,– ծիծաղով ասաց Ուստան:

– Շիտակ խոսքին ո՞վ բան կասե...– ասացին մի քանիսը և Ուստայի հետ կուչտ ծիծաղացին:

– Մենք մեր երազներու մեջ Զոչինն հետու չենք երթա.– ասաց մեկը,– բայց դու նորեն աշխարք ժուռ կուդաս:

– Տո, ինչ են մեր երազները...– չարունակեց այս խոսքը մի ուրիշ ծպնեցի.– էն՝ որ լի օրերը կտեսնենք. պրիտավ, տուր ու դմբոց, ախոռի անկյուն, պատմի կռիվ, էյ ու դոմնչ, հաստատ, որ էդման երազներու համար մարդ էլ քնի: Ա՛յ Ուստիս երազները – հետո՛ւ աշխարհներ, ոսկե քյոշք-սարայներ, հրեղեն ձի, բլբուլ... էդոնց համար արժե մարդ քնի ու իսկի չզարթնի: Ի՞նչ կասես խոսքիս, Ուստա ջան:

— Հա, Ալնք ջան, որ իմանամ թե՝ ձեր երազները պիտի տեսնիմ, իսկի չեմ քնի: Բերող, մեկ կլոր քար տո՛ւր:

— Ուստա ջան, Թուխիթ ասիր. մեր ոտևանները հոն կապրենն, չէ՞:

— Հա, բուն էնտեղ է. թե որ չիտակը կուզես իմանա, էնտեղ ամենքը դուրբընատ են, նաչալնիկ, պրիստավ, սորաժ, ջանդարմ, կամ ավիցներ, մնացած հասարակ ժողովուրդն էլ սալդաղ, սալդաղ:

— Բա, էնտեղ իսկի ռանչպար ու վաճառական չկա՞,— հարցրեց մեկը զարմացած:

— Չէ, Թագավորի հրաման է, որ էդպես ըլնի: [որ ուրիշ տեղ սալդաղ — մեկել ասածներս հասցնեն]

— Ուստա ջան, հալա, էդ տեղերին մի քանի բան պատմե. ի՛նչքան կլսենք, էնքան կարոտ կուննանք լսելու:

— Շատ լավ,— համաձայնվեց Ուստան,— կնցնք մի պապիլոս քաշեմ, հետո:

Տևեց մի կարճ լռություն, հորից ծուխի հետ սկսեց բարձրանալ Ուստայի ուժեղ, քաղցր ձայնը:

— Բարվանով Թիֆլիզ մտա. Թիֆլիզը, տղերք ջան, էլի ինքն էր, Թունդ հարբած. հայ ու վրացի խառն են էնտեղ, մարդ չի կրնա իրարե զատել, ուրախ-անդարդ ման կուգան. գիտե՞ք՝ ի՞նչ է վրացին, էնոր տուր գինի, ինչ կըլնի, կրլնի: Շա՛տ անուշ աչքերով սիրուն կնիկներ կան հոն. լավ տղամարդ ըլնի, մնծ գործ կհոգա: Ախալցխան, ի՛նչ ասեմ, էնտեղի տղամարդը վրես գրե, կնիկները համով են. հոն լավ տանձ կհասնի: Ախալքալաքը մեկ բրդուճ քաղաք է. ոտքդ փոխես, համ մեջն ես, համ դուրսը. քաղքցիք ամենքը իրար քավոր-սանհեր են, իրար հետ խնամի-խնամի կվսաղան, կարմրաթշիկ հարսներ ունեն, էնտեղ լավ գարի կհասնի:

Երևանա հաղողն ու գինին գովաս, էնտեղի մարդ ու կնիկ սև ու դեղին, ով որ տեսնի — պատռի լեղին. էջմիածնեցիք էլ որ, Աստված օրհնե էնոնց, ամենքը վարդապետի տղա են:

Այս խոսքի վրա, մի ծպնեցի, որ փորի վրա պառկած գլուխը հոր կախ ձգած լսում էր, երեխայի պես թավալվեց մեջքի վրա, ծալի տվեց ու հրհռալով բղավեց.

— Էդպես է, ողորմած հոգի պապս էլ էդպես կասեր:

— Եկա Գյումրի,— չարունակեց Ուստան,— գյումրեցոց վրա պարապած է. ուտող, խմող, լոթի, պարզախրտ,— հանկարծ միտքը գալով գյումրեցի հացավաճառները, ձայն փոխած, վրա բերեց.— բայց չա՜տ ջրոտ են, լոպաղ, մարդու ձեռք առնող. մեր դարսեցիքն էլ էնոնց ձագն են ու ձագը: Էսպես, մեր երկրներեն, քարվանս դնաց աջամի հողը, ընկանք Թավրիզի դուրանը:

Այստեղ Ուստան մի քիչ կանգ առավ, գյուղացիք կռահելով, որ սկսվում է հետաքրքիր ճամբորդությունը, պառկեցին հորի չուրջը, չաո մոտիկ, ականջները, ասես, հորի բերանին դրած. Ուստան մեկ քարին զարկելով, մեկ քարվանին՝ պըտրտվեց չա՜տ հեռու և զարմանալի տեղեր, քարվանսարայից քարվանսարա, երկրից երկիր, մեկ թագավորի հողից մի ուրիշ թագավորի հողը. դողանջում էր նրա քարվանը այդ հեռու աշխարհների ոսկի ճանապարհների վրա, իսկ ինքը՝ քարվանապետը, մութ հորի մեջ, հողի ու ցեխի մեջ, պատն էր բարձրացնում:

— Տղեք ջան, գնացինք էնպես տաք երկրներ, որ հավկիթը կդնեինք քարի վրա, կրտրվեր, ավազը կփորեինք, փեթռած հավը կդնեինք մեջը, խորոված կլիներ: Իսկի չեմ մոռնա մի աշխարք, որ սով կար. կատուն, շունը ավելի գին ունեին, քան մարդը. իրար կուտեին, իրար կուտեին. աճամ վաճառականները հաց տարան, ցորենի

կշեռքով ոսկի բերին: Էդ ոչինչ. մտանք մի աշխարք, ինչ ասեմ, բնակիչները ամենքը կնիկ էին, տղամարդ չա՛տ քիչ կար. չիտակ հավնոց. էդ կնիկները մեզի ձեռներու վրա կպահնին, օր ու դիշեր կերածներս հավ ու գաթա էր, նե ու մեղր, խմածներս խաս գինի ու արաղ. գլխի եք ի՛նչ կասեմ. կնկախեղդ եղանք, կնկախեղդ...

— Էրեկ քեզի, Ուստա, մենք հետդ պիտի եղած ըլ-ննինք,— ասացին մի քանի երիտասարդներ:

— Տո, ի՛նչ պիտի անեիք. մենք զվանքով փախանք, դժարով օձիքներս ազատեցինք... Քերոբ ջան, քար բեր, քա՛ր:

— Հետո, հետո՛, Ուստա ջան...— վառված հետաքրք-րությամբ գոչեցին ծպնեցիք:

— Հետո մտանք մի աշխարհ, էնոր հակառակը. ամեն-քը տղամարդ էին, կնիկ չա՛տ քիչ կար. տղամարդիկ մեղի չա՛տ խոռ կնայեին, կուզեին, որ չուտով հեռանայինք ի-րենց հողեն, որ իրենց հացը չկտրեինք. էդտեղ գլխիս մի փորձանք պատահավ, որ Աստծու ողորմությամբ հազիվ ազատվա:

Գյուղացիք ավելի հափշտակված՝ գլուխները կախե-ցին հորի մեջ: Նրանք, ասես, մի դյութական լուսամու-տից նայում էին, տեսնում էին մի այլ աշխարհ — արևա-կեզ, հարուստ ու հեքիաթավառ, ուր Ուստան պըտրտում էր իր քարվանը, և արկածից արկած անցնում, միանգա-մային մոռանալով իսկական իրականությունը, ուր Ուս-տան իրապես գտնվում էր ցեխի ու հողերի մեջ թաղված՝ մութ, նեղլիկ, խոնավ հորում:

— Վարդան ջան, մի ջուր տուր, բուկս չորցավ. Քերոբ ջան, դու էլ պատիկ մուրճս տուր:

[Արաղն] Ջուրն եկավ, Ուստան ձեռքը երկնցուց հո-րից, [արաղի չիշն] բխբխն առավ, դրեց բերանին, [մի

քիչ) կըլկըլ խմեց, բերանը սրբեց ու սկսեց իր պատմությունը:

— Անցանք մի բուրջի տակով, դեմներս ելան մի քանի ծառաններ, խնդրեցին, որ իրենց խանութի քովն երթանք, թե թանգագին ակներ ու զոհարներ ունինք, ծախենք վրան. քարվանս կանգնցրի մի դաշտի մեջ, ես էլ մի վաճառականի հետ գնացինք բուրջը. մեկ զարմանալի քյոշք ու սարայի մեջ մեր առջևն ելավ մի հուրնի հրեղեն կնիկ. ի՛նչ սիրուն, ի՛նչ սիրուն, ո՛չ ուտես, ո՛չ խմես, էնոր հասակին նայես. երկեն վիզ, մազերը քառսուն հուսերով, զարդարված ակնունքներով՝ մեջքի վրա ալին-ալին կուտային. երկու աչք ուներ մեկ-մեկ արև-արեգակ, պռունկները մարջան, բերանը դինու թասիկ, անուշ ձենով մեզի բարև տվավ, քարեղեններն առավ, բուռներով ոսկին տվավ. էն է կուզեինք, երթայինք, ձեռքով նշան արավ, վաճառականին ճամբու դրին, ինձի պահեցին, թագավորի վայել սեղան բացին, հրեղեն դիներով: Կերանք, խմեցինք, իրիկուն եղավ՝ ինքը ասավ թե՝ «Բարվանի տեր, բարով ևկար, բարով երթաս, ուզդ կընկնի, մեկ էլ արի» ու ուզքի ելավ, որ ես էլ երթամ, ես էլ ելա, մենակ էինք, աչքերու մեջ նայեցի. կնկա աչքե՛րը, կնկա աչքե՛րը, գիտե՞ք, կնկա մեկ աչքը հա է, մեկէլ — չէ. ես էլ ի՛նչ մեռածն եմ, ի՛նչ տղա եմ. մեկէլ որ պարծենանք չըլնի, թեկուզ Լամսա թագավորի կնիկը, թեկուզ աշխարքի ամեննեն ամուր բերդի պես ամուր կնիկը, չա՛տ չեմ ասե, մի-երկու ժամ քովս մենակ թողնք, ես էնոր խելքն հանեմ. արուներս եռաց, վրա պրծա, գրկեցի էնոր. ինչո՞ւ որ, իսկական կնիկը ղոռը կսիրե. մնացածը ղուք իմացեք, գիշերը անցրի էնոր լուսեղեն ծոցի մեջ. առավոտ բացվավ, պարտեզ ելա, ասի, գնամ, քարվանս տեսնեմ. գնացի՝ ի՞նչ տեսնեմ. վրաններըը հավաքել են,

քարվանս կուգեն երթա, քանի որ հույսերը կտրել էին, թե ես կուգամ, կարծել են թե՝ էդ աչխարքի մարդիկ, նախանձու, ինձի սպանել են. դու մի ասա, ես մեկ գիշեր չեմ մնացել, հապա օխթն օր, օխթը գիշեր: Սիրուն կնկա գրկի մեջ օխթն օրը կամ օխթն տարին մեկ գիշերվա պես կթռնի: Քարվանս քշեցի, մեկ ձորի բերան էդ տեղի տղամարդիկ առաջները կտրեցին, որ ինձ սպանեն: Մեր ձևները հո՛ բանճար չէին քաղե, կռվեցինք, մենք էնոնցեն զարկեցինք տասը մարդ, էնոնք մեզնեն մեկ [պառավ ձեր] հալիվոր աճամ, որ հաճ կերթար: Էդպես գլուխները առան փախան, հետո իմացանք, որ էնոնք մեծ [զորքով եկել էին] զորք էին ժողովել մեր վրա գալու, բայց մենք արդեն [ապահով] ուրիչ թաղավորի հողն էինք ընկել: Էսպես պրծանք փորձանքեն:

— Բա՛հ, Ուստա ջան, էրնեկ աչքերիդ, ի՛նչ բաներ ես տեսել, մենք էլ ենք աչխարք եկել, դո՛ւ է՞լ. չդիտենք՝ աչխարհեն ի՛նչ լուր պիտի տաննենք,— ասացին դյուղացիք և քնից արթնացածի պես աչքերը տրորեցին:

— Է՛հ, աչխարքի բանը. ինչպես բռնես, էնպես կերթա, հաչիվը մեկ է.— անտարբեր ձայնով ասաց Ուստան,— դեհ, տղեք ջան, ձեռքես բռնեք, ելնեմ, հերիք էղավ:

Մպնեցիք ձևները կախեցին հորը, ու քաշեցին Ուստային դուրս, հորի միջից երևաց Ուստայի կարմիր թաշկինակով կապած գլուխը: Ելավ, բոլորին մեկ-մեկ նայեց, ապա ժամացույցին: Ժամը նրա 12-ն էր. «ճռ ճռ» լարեց. գյուղացիներից ով որ ժամացույց ուներ՝ ներդաշնակեց Ուստայի ժամացույցին: [Ապա] ճաշի ժամ էր. լվացվեց, և Վարդանի հետ Ուստան ու Քերոբը դնացին ճաշի, գյուղացիք էլ իրենց տները:

Մյուս օրը առավոտ Ուստան հորը արդեն չինել վերջացրել էր, բերանի ծակ-քարն էր դնում. մի քիչ անց հո-

րի խուփն էլ չիննց, և դնելով ծակի վրան՝ ձեռնները թափ տալով ասաց ուրախ-ղվարթ.

— Պրծանք գնաց պարտապանաց, բարով վայելիք.— առհասարակ նա միշտ այս խոսքերով էր կնքում իր ձեռագործը՝ հոր լինի թե տուն, տուն լինի թե աղբյուր:

[Մուկուչը] վարդանը հորի խուփը տնտղելով ու ժամ տալով՝ դոհ սրտով բացականչեց.

— Ապրիս, քավոր Ուսուա ջան, մատներիդ մատաղ, շա՛տ չնորհակալ եմ:

— [Մուկուչ] վարդան, չնորհավոր հոր ըլնի. միշտ լիքը ըլնի. դարդակ մենակ էսօր տեսննս, դևհ ջրելը վրեդ է.— ասացին դրացիները:

— Գլխի վրա,— ասաց Վարդանը և դրսանից հանեց աբադի մեծ շիշը և դրեց դետին ու ձեռով մեկ բղավեց:

— Աղջի, ակրատ բերեք, գոխ, պանիր, հաց:

Ասելն ու սալով ակրատ բերելը մեկ եղավ:

— Ուսուա ջան, Քերոբ ջան, մի քիչ անուշ արեք, ճաշին խաչիլ ունենք,— Վարդանը լցրեց բաժակը:

— Համիր ու օրհնիր, Ուսուա ջան,— ասաց և բաժակը տվեց նրան:

— Շա՛տ եմ օրհնել, էլի կօրհնեմ, բերնիս վարձք չեմ ուզե. Վարդան ջան, տնով-տեղով, կնկով, ճժով, հավով-ճիվով ողջ մնաք, չեն մնաք:

Բաժակը թափառեց դյուղացիների ձեռքում:

— Ուսուա, ինչ շուտ պրծար հորը,— ասաց դյուղացիներից մեկը:

— Մի բրդուճ հոր էր, ինչ էր որ, էնպես խորունկ հորեր եմ փորել ու մի-երկու օրվա մեջ չարել, որ մեջը նայես, գլուխդ կդառնա, ձեն տաս, ձեննդ մի կես[1] ահաթեն հետո կուգա...

---

[1] *Ինքնագրում՝ կեղ:*

Շիշի տակ մի քիչ արաղ էր մնացել:

— Քերոբ ջան, էս էլ դու խմե, որ [Հարանների] նշանածդ սիրուն ըլնի,— ասաց Վարդանը:

— Ի՞նչ դուրս կտաս,— դժկամ պատասխանեց Քերոբը,— մեզ ավորին ով է տվել արքայությունն, դու խմիր, որ Հարանների սիրուն ըլնին (կամ երեխեք):

Հետո Ուստան գյուղացիների հետ վեր կացավ՝ խոսելով-կատակելով գնացին գյուղից դուրս ղբոնելու, դաշտերում ծաղիկների ու սեղների մեջ. ճաշին վերադարձան տուն: Ուստան ու Քերոբը Վարդանի մոտ փառավոր ճաշելուց հետո, պատրաստվեցան գնալու. սանամերը Շողերը մի կապոց՝ պարենով լի, Ուստայից ծածուկ տվեց Քերոբին: Գյուղից բավական հեռու Վարդանը ուղեկցեց նրանց և ապա մնաք բարով-երթաք բարով ասելով՝ բաժանվեցին: Երբ Ուստան ու Քերոբը մենակ մնացին, Քերոբն հարցրեց.

— Ո՞ւր կերթանք, վարպետ ջան:

— Օրթե-Հարութի քովը, մի քիչ ժղվելու:

Քերոբը լուռ համաձայնությամբ ավանակի ղեկը ուղղեց դեպի Տիկոուց գյուղը:

— Օրթե-Հարո՛ւթ, հաստատ որ՝ Օրթե-Հարութ,— ինքն իրան ծիծաղելով ասաց Ուստան:

Ծպնեցիք այդպես էին մակակոչել Տիկոուցի Տերտերանց տղայի՝ Հարութի անունը, որովհետև նա խոսքի տակն ու վրան, գրեթե ամեն նախադասություն «օրթե»-ով էր սկսում, այսինքն՝ — օրթե չաղկապով:

— Գիտե՞ս էլի, Քերոբ ջան,— դարձավ Ուստան ընկերին,— ես Հարութին ի՛նչքան կսիրեմ. ոսկի տղա է, չէ թե մեր գեղերը, տո, Գյումրի էլ, չեմ վախենա, թե որ ասեմ, թե ներսի աշխարքներն էլ էնոր հատը չկա, էնոր կեսի նման մարդ ոչ մի տեղ չեմ տեսել. գիտնակ տղա է, իմաս-

տուն հոգի ունի. ափսոս որ [գլուխ չճանչցող] իր գլուխը չճանչցող տղա է. թե չէ որ իրեն պահեր, հիմի ակն ու արեգակ, մատով ցույց տալու, երևելի մարդու անուն կունենար. ա՛խ, ափսո՛ս, հազար ափսոս,— սրտանց հառաչեց Ուստան:

— Հա, վարպետ ջան, չա՛տ ափսո՛ս, սատանա է մտել փորը, ի՞նչ պիտի աննս,— ձայնակցեց Քերոբը:

Բավական ժամանակ լուռ, անխոս քայլում էին նրանք՝ Մրզան առաջնները ձգած. Ուստան [խզեց] բացեց խոսքի ծայրը:

— Քերոբ ջան, քու մասին կմտածեի:

— Վարպետ ջան, ես էլ քու մասին կմտածեի,— պատասխանեց Քերոբը:

Նրանք առհասարակ չա՛տ հաճախ, [միաժամանակ] թե տանը, թե ճամբին [միշտ] իրար մասին էին մտածում [էին] միաժամանակ:

— Քերոբ ջան, ի՛նչ կմտածեիր, ասա, տեսնեմ:

— Վարպետ ջան, առաջ դու ասա, չեմ իշխանա:

— Հա, Քերոբ ջան, միտքդ չէ՞, որ մի քանի օր առաջ քեզի ասի թե — Քերոբ ջան, քեզի մի բան պիտի ասեմ, միտքս քցե, մի օր ասեմ:

— Լավ միտքս է, վարպետ ջան, ամեն օր էլ լեզվիս վրա է, բայց կուլ կուտայի:

— Դեհ, էսօր լավ օրն է, ասեմ. լսե, Քերոբ ջան, դուն իմ ախբերն ես, քեզնեն զատ արարատ-աշխարհի վրա սրտամոտիկ մարդ չունեմ և դիտես, որ քեզի ինձի չափ կսիրեմ. էդոր համար էլ կուզեմ, որ քեզ կարգեմ...— Ու բազմախորհուրդ հայացքը նետեց Քերոբի երեսին, միաժամանակ ճանապարհի մնջտեղը կանգ առնելով. Քերոբը նորահաս աղջկա պես չիկնած՝ աչքերը փախցրեց Կարոյից և գետին ձգեց:

— Հա, քեզի կարգեմ, տուն ու տեղ չինեմ, երեխա ունենաս, բախտավոր ըլնիս, ես էլ գլխներիդ հոր պես պատեմ, օր-ծերության գլուխ դնելու տեղ ունենամ, ձեռնով խնդամ, մեռնեմ, վրաս լացող լինի, մի բուռ հող քցող ըլնի...— և աչքերը լցվեցին դոլ արտասունքով, ձայնը խզվեց:

Քերոբը նույնպես չա՛տ հուզված էր. աչքերը բռունցքով սրբեց, և ալեկոծ ձայնով ասաց.

— Վարպետ, վարպետ ջան, Աստված է վկա, որ ես էլ էդ կմտքեի քո վրադ, թե վարպետս ողջ աշխարքի համար տուն կշինե, օճախ կկապե, [ամենքին] ամենքի տունը խաչով ու մեռոնով կերթա, ու ինքը կմնա մերկ ու զուրկ. վարպետ ջան, առաջ դու կարգվի՛, ես քեզ մատաղ, մինչև մահիս օրը քեզի ծառա ըլնեմ:

— Չէ, Քերոբ ջան, իմս անցավ. քանի երիտասարդ էի, քաղքե քաղաք, երկրե երկիր ման կուգայի, կնիկ առնել մտքովս չէր անցնի. մեկ էլ որ սիրտս կոտրած է. գիտես, Քերոբ ջան, ի՛նչ սեր եմ կորցրել. [աչքիս] հիմի թագավորի աղջիկ ըլնի աչքիս չի երևա: Բանը առաջի սերն է, էն որ չեղավ, մարդու սիրտը էլ տեղը չի դա. էյ գիտի օրեր, անցած օրեր...

Այս խոսքերի վրա խորունկ, խորունկ հառաչեց Ուստան:

— Վարպետ ջան, ներող եղի՛ր, հարցնեմ, էդ ի՞նչ սերի մասին է, որ դու ինձի չես պատմել մինչև օրս:

— Քերոբ ջան, մարդ չի ուզենա հին վերքի բերանը բանա, չա՛տ կցավցնե. հիմի որ խոսք բացվավ, ասեմ. կանանչ-կարիչ տղա էի, մեր գեղը վրացի պրիստավ կնստեր, մեկ աղջիկ ուներ, մեկ աղջիկ, վրացու թավաղ, չուտեիր-չխմեիր, օր ու գիշեր, աչքդ էնոր լուս երեսին նայեիր. ի՛նչ աղջիկ,— Սուլթանի իրան քյոշք ու սայրայումն էլ

նման չէր եղած. հնքիաթների մեջեն հանած աղջիկ: Հազար տեղերե հարուստ մարդիկ կուգային կուզեին էնոր, բայց աղջիկը չէ կասեր ու կկայներ. էնոր սիրտը ինձի հետ էր. է՛յ վախ, է՛յ վախ, իակի եղած բան էր, որ նորեն ըլներ, որ պրիստավ մարդը գյուղացու կտորին աղջիկ տար. [ա՛խ, Քերոբ ջան,— սրտի մրմուռով հառաչեց Ուստան ու կարծես, վառվող սրտի մուխը քթիցը ելավ] ի՞նչ էննի, ի՞նչպես սրտիս խոսք հասկցնեի. էդ սեր չէր, կրակ էր, կրակ: Էդ աղջկա սերից, Քերոբ ջան, աշուղ դառա. Հրաշքով չոնգուռ ածելը սորվեցա. վառված մի օր չոնգուռն առա ձեռքս, ու ածեցի՝ ասես, Սուրբ-Կարապետի շնորհքը վրաս իջած ըլներ. խաղեր կապեցի — ու մեր գեղի սարերն ու ձորերը մոլոր-մոլոր մանկուգայի կերգեի ու կածեի...

Խելքս կորցնելու վրա էի. հե՛յ ինչ սեր էր, հիմի ըլներ... երկինք-գետինք իրար կխառնեի, կամքս կանեի, բայց էն ժամանակ անփորձ էի. ասենք՝ կամքս արեցի, բայց խղճիս դիպավ. կուգեմ ասել թե, Քերոբ ջան, էդ աղջկան հոր ձեռնեն փախցրի, խոսք մեկ արինք ու փախանք. գիշերով մտա պրիստավի ախոռը, քաշեցի էնոր հրեղեն ձին, աղջկան առա դիրկս ու թռանք. բայց մեկ կես ժամ տեղ չէինք կտրել անցել, պրիստավի ծառաները, սալդաթ ու ստրաժ, մեկ էլ տեսնենք, բոլոր դումար չիտկվել էին մեր վրա, սարի գլուխը փաթթել, ձորի բկերը բռնել, կրակ էր, որ կթափեին վրաս, դար ու քար դղորդ էր ընկել, չունչ ու ճամբորդ ծակնծակ էին մտել. կարմիր գնդակները կուգային, բոլորքս վժժալով կընկնեին. իմ պետքս չէր, արուն աչքս էի առել, յարիս սեղմել էի սրտիս, ու ոտքերս էնպես զիլ կզարկեի ձիուս փորին, որ խեզճը կողերեն արուն կաթելով, ճամբու քարերեն կեծեր հաննելով մի գլուխ կթռներ ու կթռներ: Վրացու աղջիկը՝

նազուկ պահված, կպել էր սրտիս, կուլար ու կուլար. մեկ էլ վախեն ուշքն անցավ, սիրտս մղկտաց, ասի. ես մեռնեմ, մատաղ էնոր, վնաս չունի, բայց էդ անաստվածները կզարկեն կմեռցնեն էս հրեշտակին, ավուր դատաստանին պարտական կմնամ: Ասի, լավ է սերս կորցնեմ, քան էդ աղջկա կյանքը. ձին կանգնեցրի, ձեռով արի, կրակը դադարեց. իջա ձին տվի աղջկան, վերջին հեղ էլ մի կսկուծ պաչեցի ու լացով ասի. գնա, Աստված քեզի հետ, ես մեռա, էլ չկամ, ինձի մոռցի. գնա՛ բախտավոր եղիր, Աստուծո կամքն էր, կարելի է, որ մեր սրտերը իրար չհասնին:

Էն օրվանեն անիծեցի էդ մեր գյուղը, գլուխս առա, գնացի ու հետ չնայեցի...— Հարկավ Ուստան մոռացավ հիմա իրենց ծանոթության առաջին շրջանում Ջավուշին արած պատմությունը իր հայրենի գյուղը թողնելու մասին:— Էնօրվանեն սիրտս քար ու քանդ եղավ.— խորին մրմունդով հառաչեց Ուստան, ասես, վառված սրտի մուխն էր ելնում քթի ծակերից,— ես չլամ, քա՞րը լա, ես չխելառնեմ, քամի՞ն խելառի. էնպես յար եմ կորցրել, աչխարքի [չորս] երկու կողմը քարվանիս տակն առա, էնոր նմանը չգտա. ծովերու մեջ ծլած, արևի տակ մնծցած վարդ էր, կուզեի հոգիս հանեի, էնոր տալի, ինչքա՜ն, ինչքա՜ն կսիրեի...

Ասլա աչքերը հեռավոր հորիզոններին ուղղելով գոչեց.

— Ա՜խ, մեկ իմանայի, հիմի ո՞ւր ես, ո՞ղջ ես, անաստվածի աղջիկ...

Ուստան, ասես, ծնկները ծալվեցին, թալկացավ, և նստավ պատահական մի քարի վրա. Քերոբը մինչև սրտի խորքը համակված իր ավագ եղբոր վշտով, ծնկաչոք նստեց նրա առջև, անխոս, չգտնելով մի բառ նրան սփոփելու. հանեց իր ծխախոտի տուփը, չինեց մի պապիրոս և

Հարգանքով տվեց Ուստային. [սա էլ առավ և] ծուխը պապակած շրթունքով, ջղայնորեն, ծծեց, ասես թե, [ինքնամո...] այդ մի կախարդական միջոց լիներ մոռացությունն բերելու [մաշող] կիզող վշտին: Ուստան ծխեց. ծխեց, և ապա հանգստացած՝ [որպես թե] սրտից դառարկած լիներ բոլոր ցավերն ու կարոտները, ասաց.

— Իմս անցավ. դու բախտավոր եղիր, էդ մեկ է թե՝ ես եմ բախտավոր:

Այս խոսքերը կոտրեցին Քերոբի սրտի [սառույց] փականքը, և նրա զգացումները դուրս պոռթկացին արցունք ու լեզու առած.

— Ինչքան բախտավոր եմ, որ վարպետիս պես ընկերախբեր, տեր ու հեր ունեմ. մեռնեմ ոտներիդ տակին, մենակ թե դու [չեն ու պայծառ] ուրախ ու չեն ըլնիս...

Եվ վրա պրծավ գրկեց ու համբուրեց, համբուրեց Ուստային, և նորեն համբուրեց: [Ուստան էլ նույն զգացումով համբուրեց նրան] Ապա Ուստան ասավ.

— Քերոբ ջան, ասա, ինձնեն մի ծածկե. դյուղերը իսկի որբևների հարսի նշան չես արել, սիրտդ ո՞ւմ կուզե, որովհետև աղջիկը էլ քեզ վայել չէ, հասու տղամարդ ես:

Քերոբը լուռ էր՝ գլուխը կրծքին կախած:

— Լա՛վ, աչքս չորս արած՝ դու էլ իր կարգին, որ գեղը որ կերթանք՝ որբևների հարսների նայե, ականջդ ձենի պահե, փնտռողը կգտնե, փափագողը կունենա:

Քերոբը նորեն լուռ էր:

Քիչ հետո Ուստան վեր կացավ, և չարունակեցին ուղին:

<ՈՒՍՏԻ՝ ՏԻԿՈՐ ԳՆԱԼԸ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ ԺՂԼՎԵԼՈՒ>

ԳԼՈՒԽ

Ուստա Կարոն, Ջավուշի հետ եկան կանգնեցին Տիկորի պատիճափի վրան: Տիկորը [հին ժամանակին] լայն հովիտ մեջ շինված, ջրերով և այգիներով լի, պատմական մի հայ գյուղ է: Բլուրից իջան և առանց գյուղը մտնելու [աչխարհահռչակ հին] հռչակավոր վանքի հարավային կողմով անցան՝ դիմելով ուղղակի Օրթե Հարուբի ջրաղացը: Հայոց վանքերի նախամայրը, որի մեջ մարմնացավ և կաղապարվեց տոհմային գեղեցկի դաղափարը և ճառագայթեց Հայաստան աչխարհի և ուրիշ աչխարհների վրա, այդ [հինավուրց] բազմադարյան վանքը միշտ հառում էր իր վրա Ուստա Կարոյի հայացքը: Ուստան անտարբեր չէր կարող մնալ [վանքի] նրա հանդեպ, ամեն անցնելուս կանգ էր առնում մի քանի րոպե, հիացած նայում էր [հազար] հարյուր անգամ նայած վանքին, և գլուխը շարժելով խոսում էր յուրովի. «Երևելի, աննման գլուխ վարպետի չենք է»:

Ուստան աչքերը ձգած ճանապարհի ծայրին, անհամբեր՝ ծառերի միջից որոնում էր Հարուբին. մոտեցան թե ոչ, ավանակը քայլերն արագացրեց և գնաց կանգնեց ջաղացի դռան առջև, և ձայնը ձգեց. Ուստան էչի [էչից հեռո] ազազակին խառնեց և իր ձայնը՝ բարձր և ուրախ գոչեց.

– Հարութ ջան, գլուխդ թաղեմ ոչ, նկանք:

– Վա՛յ, կարո ջան, օրթե դու ես, գալած ճամբիդ մեռնեմ, լուս էիր, վրաս բացվեցիր. Ջավուշ ջան, հոգիդ ուտեմ,– պարտեզի միջից վազելազ եկավ Հարութը, ուրախ-ուրախ, փաթաթվեց Ուստային և Ջավուշին միաժամանակ և համբուրվում էին իրար դրկած. ապա մոտենալով ավանակին գորովով շոյեց նրա աչքերն ու ճակատը:

– Կարո ջան, օրթե իշուդ կտեսնեմ, չատ կամչնամ, չատ խելքը վրան մնկն է:

[– Բա, ի՛նչ կասես, երեք քաղքցու խելք ունի, կրնա հինգ քրդի գեղի ռես ըլնի, չորս թուրքի գեղի խոջա:

– Օրթե էդչափ դիտնակ է, արի էշիդ կարդենք:

– Լավ, լավ, էդ օրն էլ կուգա, բարին հետը:] Մեկ առաջ դու ինձ ասա, ի՞նչ բանի ես, քնփդ տե՞ղն է:

– Է՛հ... ձեռքը թափ տալով պատասխանեց Հարութը.– էլի էն ջուրը, էլի էն ջաղացը,– է՛յ Մրոտ, հոս արի,– դեպի ջաղացի ներս կանչեց Հարութը: Ջաղացից դուրս եկավ մի երիտասարդ՝ [տղա] ծառա Գաբոն, որ հակառակ իր մականունին, որ Հարութն էր կնքել, բոլորովին ճերմակ, ալրիկոլոլ էր, մոտենալով հյուրերին բարևեց: Ուստան սրտագին բարևելով, հարցրեց.

– Գաբո ջան, վարպետ Գոգորն ո՞ւր է:

– Ուստա ջան, գեղ է գնացել, հիմի կուգա:

– Մրոտ,– դիմեց Հարութը,– չայ դիր. հավ մորթեն, ձուկ խաշեն, իրակվան համար,– կարո, Ջավուշ, երթանք հոլիկս, ցորեն [եմ] ենք փռել չորնալու, [ահն տանք] հավերը չուտեն:

– Հարութ ջան,– ասաց Ջավուշը էշը քշելով դեպի գոմը,– ես կմնամ Գաբոյին օգնելու, մենակ է տղեն:

Համաձայնեց Հարութը և թևը փարելով Ուստայի վզովը, ծանր քայլերով անցան ծառների հետևը:

Հարութը մոտ 32-33 տարեկան, միջահասակ, թուխ մի երիտասարդ էր, սև, անուշ և տխուր աչքերով՝ լայն ճակատի տակ եղրված [բարակ] հոնքերով: Սուր քիթ ուներ, փոքրիկ բեխեր և նուրբ շրթունքով բերան, որի երկու անկյունում [վշտի քնքուշ] թեթև խորշոմներ կային: Կարճ և խնամված մորուք ուներ, հագնվում էր Շիրակեցոց պես,— չուխա, արխալուխ, մեջքին արծաթե դոտի. սև մազերը ծածկում էր մի փոքրիկ դեղնավուն փափախ: Ջայնը դրավիչ էր և մեղմ: Գյուղի հարս ու աղջկա[1] աչքին Հարութը գեղեցիկ տղայի համբավ ուներ, «ախ ու ափսո՛ս» էին քաշում նրա անունը տալիս[2]:

— Կարո ջան,— ասաց Հարութը հոլիկին մոտենալով,— դուն ու քու հոգիդ, էս պարտեզիս ծառները հարսների պես չե՞ն, զառ հագած, նշխուն, համավոր-հարգևոր, դլխներին քողեր, բարև բռնած-կանգնած ու իրար ականջ կփսփսան. արի էս խնձորի ծառի տակ նստենք. դու խոսի, ես քյա՛ անեմ հավերին, ես խոսեմ, դու քյա՛ արա:

— Հա, Հարութ ջան, քո պարտեզ-հոլիկդ թագավորություն արժենա:

Ուստան թիկն տվեց ծառի տակ և հանեց ծխատուփը. Հարութը հոլիկի առջև չոքին տվող (արծաթափայլ) ավազանի մեջից հանեց շիշով օղին, որ դրել էր սառը մնալու համար: Ուստան իր սիրելի ընկերի համար մի պապիրոս փաթաթեց և ինքը իր թքով չկպցնելով թղթի թերթերն իրար, մեկնեց նրան, ասելով[3]:

— Տո, թքոտ տիկորցի, կպցրո՛ւ:

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է Հարուստ աղջկա:*

[2] *Այ լուսանցքում.* «Մի մասը կենսագրություններից դնել»:

[3] *Այ լուսանցքում.* «Փափախը դրեց <անընթ.> վրա, կարմիր թաշկինակով ճակատը սրբեց»:

– Ուստա Ջան, քու պռոշներովդ[1] կպցրու, գնդերեն կուգաս, սանամորներիդ մեղրե պաչերով ու ձվածեղներով մեռոնած են էդ կարմիր պռունկներդ:

Ուստան գվարթ ծիծաղեց ու ինքը միացրեց թերթի ծայրերը:

– Ուստա Ջան, առ էս բաժակը, խմենք քո աղնիվ, քո ոսկի կյանքիդ համար:

– Հարութ Ջան, հոգիս, աչքիս լուսը, և էլ քու անուշ կյանքի համար. մեղի իրարուց ով է բաժնել, որ դու կբաժնես հիմի. Աստված մեղի մեկ պահե, իրար հետ պահե, սիրով, մեկ սրտով. արադն էլ անպակաս ըլնի մեր վրա իրեն օրհնության հետ:

– Ամեն, Կարո Ջան, արադն է մենակ [Աստծու] Սատանայի օրհնությունը, օրթե մեկէլները վրաս գրե:

– Հարութ, ձենդ կտրե, էս գիշեր լավ քեֆ պիտի անենք, աքլորը երթիկը պիտի հանենք, էսոր ի՞նչ կասես:

– Գլխուս վրա, ես էլ պատարագիչն եմ,– եռանդուն ձայնով հավանեց Հարութը, ապա ձայնին վիրավորվածի գույն տալով ավելացրեց,– գիտե՞ս, Կարո, քեզնից խռով եմ, բա՛ չես ասի, ինչո՞ւ:

– Ինչո՞ւ, խելառ Հարութ, ես երբ եմ ասել, թե աչքիդ վերև ունք կա:

– Օրթե ինչի՞ էսքան[2] ժամանակ է, քովս չես եկել, էս ելավ իրեք չաբաթ:

– Իրավունք ունիս. Հարութ Ջան, մեղավոր եմ առջևդ. [մենակ] բայց պարապ չէի, գեղերը չա՛տ գործ ունեի – Ջուչի, Բագրան, Ծպնի. թե չէ քո հոլիկդ աչխարքի հետ

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է պռոշներդ:*

[2] *Ա.Ինճիկյանը կարդացել է էս քանի:*

չեմ փոխե: Վա՜յ, Հարութ ջան, ասել է՝ մենակ էիր: Անուշկեդ[1] ի՞նչ կեններ, քովդ չէ՞ր գա:

– Անուշկաս[2] ոսկի աղջիկ է, էն կա-կա. էն իրեն ոտքով եկած մատաղ է, էն իր տեղը, դու՝ քու տեղը:

– Իրեն ոտքով եկածը Աստծուն ավելի ընդունակ է. բարով իմ դուռս էլ գա, քու էդ անուշ Անուշկեդ[3],– դիտմամբ ասաց՝ Հարութին չարացնելու համար:

– Փնչքնչ քեզի, մեծ ախբեր, Անուշկես[4] քեզի, սանամերնեդ՝ ինձի, աշխարքը փոխ-հաց է, էս խոսքիս ի՞նչ ասիր:

– Իրավունք ունիս, բայց իմ աչքս ի՞նչ տեսավ, որ քոնն ի՞նչ տեսնի:

– Կարո, աչքիս աչև, սատանա պոչիդ տակ մի բան կա:

– Չէ՛, Հարութ ջան, անդին դլուխդ վկա, եղածը կասեմ:

– Վա՜յ, ամո՛թ քու տղամարդությանդ, էդպե՞ս:

– Էդպես, Հարութ ջան, [աշխարքը իշով լիքն է, մենք ոտքով ման կուդանք]:

– Չէ, կարո ջան, օրթե դու թաց տեղ պառկողը չես, դու հում դործ բռնող չես. ինձի քարե մի թռցրու. ամենին լոլո, քրդի տղին է՞լ լոլո:

– Հարութ ջան, էդ թո՛ղ հլա,– խոսքը փոխելու նպատակով ասաց Ուստան,– տո, ախր ես ծպնեցոց հետ կռվեցի, արուն-քերան ունին էդոնք:

– Օրթե արժե՞ր էդ լվռաների համար արուն պղտորել:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է Անուշիկդ:

[2] Ա.Ինճիկյանը կարդացել է Անուշիկս:

[3] Ա.Ինճիկյանը կարդացել է Անուշիկեդ:

[4] Ա.Ինճիկյանը կարդացել է Անուշիկս:

– Ի՞նչ անեմ, քեզի նոր էվել անուն էին դրել, գիտե՞ս թե՝ օրթեն քիչ էր:

– Պա՛հ, ես էդոնց...– դայրացած խոսքը կուլ տվեց Հարությը,– սպասե, օրթե վանքը ուխտի գան, էդոնց էշերի բոլորի պոչը կտրեմ:

– Խելառ Հարությ, էշերի հետ ի՞նչ գործ ունիս, դու գիտնակ, տերտերացու մարդ, կրնաս էդոնց տերերի պոչերը կտրե:

– Օրթե պոչ ուննենան, կարո, պսակված մարդիկ վաղուց պոչերը կտրած էշեր են:

– Կրակ չուտես, Հարությ ջան, լավ տեղին ասիր,– ուրախ ծիծաղեց Ուսուան,– տո, Հարո՛ւթ, դու հին կապելուն ես, մի՞տքդ է, էն տարին, վարդեվորին, վանքը. անաստված, ի՛նչ խայտառակն ես, ինչ խաղ խաղցար էն ագրակցու Հարսի գլուխը. ողջ չենլիքի մեջ, գնացիր, պաչեցիր Հարսին, շատ անսպեռն ես, բայց քցած էիր, Հա. լո՛լի՛կ, լոլի՛կ:

– Ջէ, մտքիս դրել էի վաղուց, օրթե էդ Սողոյենց Ջավոյին պաչելի, չէի իշխնա, սուտ Հարրած ցուց տվի, մուրագիս հասա:

– Հըմը՛, լավ կերար, Հարսը ոնց չերևիով կոճոյիդ մեկ, երկու հասցուց, դու էլ ոռձ-ոչխարի[1] պես ճակատդ դեմ էիր տվել, կասես թե էն սեր կաներ հետդ, գլուխդ կմաժեր, լավ կերար, լավ կերար:

– Վնաս չունի, [օրթե] կնկա ձեռքեն կերածը չաքարեն քաղցր է. մեկ էլ ես քեզ պես տակեն խուզող չեմ. աշխարքի քավոր, ով վնաս՝ դու հետն ընկեր. ծածուկ ես[2] կուտես, պռոշներիդ հող կցաննես:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է ոռձ-ոչխարի:

[2] Ա.Ինճիկյանը կարդացել է էլ:

Ուստան չարունակում էր ծիծաղել:

– Օրթն դու ինձի էշի տեղ ես դրել՝ կներկես, ես չգիտեմ, որ մեղրահատր կլիզե մատը. քու ձեռքդ տարի բոլոր մեղրի մեջ է:

Ուստան ժպտում էր քմծիծաղի տալով:

– Հա,– չարունակում էր նույն չեչտով Հարութը,– ես քու զորքդ նո՞ր դիտեմ: Պատճառն ի՞նչ է, որ քեզի ձեռքն ձեռք կխլեն քավորության համար. քու պատկածներդ իսկի չերեք չեն մնա, օրթե ես կասեմ, որ բանի մեջը բան կա. ազահ, աչքածակ կարո, Անուշկես վրաս չա՜տ տեսար:

Ուստան աչքերը խոլռելով Հարութի վրա, բարկացած ձայնով թնդաց.

– Լկվի, կարե՛ չախչախդ, տո, օրթե, թե չէ բուտիլկեն ճակտիդ կկոտրեմ, հոլիկդ գլխիդ կբլեմ, ցորենդ ջուր կթափեմ, հերիք սանամորներիս միսը ծամես, անոթի խելառ:

Հարութը գլուխը կախեց. մի բաժակ արագ մատուցանելով Ուստային, թախանձեց:

– Լա՛վ, ներե՛, օրթե նեղսրտար, մեծ ախբեր:

Ու իրար աչքերի մեջ նայելով հաշտված ծիծաղեցին:

Ուստան և Հարութը իրարուց երբեք չէին վիրավորվում, որ հետո հաշտվեին. այս ամենը կատակ էր սոսկ, կատակով էին իրար խայթում, կծում, ծաղրում ու հայհոյում.– երբեք լրջորեն, չար դիտումով. դա նրանց տարիների անփոփոխ սովորությունն էր, որ ժղլանք էին անվանում.– նստել դիշերը մինչև լույս՝ օղիի սեղանի առջև, իրենց սրտերը բանալ մեկ-մեկու դիմաց. անվերապահ՝ ոչ մի զաղտնիք չթաքցնելով և այսպես [խոսում] զրուցում էին դառն ու անուշ, սրախոսում, համով-հոտով առակներ պատմում. այնտեղ չաղացի չախչախան էր անդադար

չխկչխկում, այստեղ նրանց ծնոտները. ամբողջ գավառակի ծանոթ մարդկանց ու կանանց մասին էին խոսում, նրանց ծաղրելի կողմերը հանդես բերում,— ծիծաղում, ծափ տալիս, և ուրիշ ծիծաղաշարժ անցքեր պատմելով, և անցած օրերի դեպքերը վերհիշելով զվարթանում ու տխրում. հաճախ համեմում էին իրենց ժղլանքը աշխարքի երևույթների վրա իրենց դատողությունները և կարծիքները հայտնելով:

Եվ այսպես մինչև լույս ժղլվում էին ու խմում, բայց երբեք գլուխ չէին կորցնում, որ չկարողանային համով ու խելացի խոսել կամ կռվել ու իրար վիրավորել. նրանք փորձված քեֆ անողներ էին, ողջ գավառակի մեջ անուն հանած, առակի կարգ անցած:

Մրոտն եկավ հայտնեց, թե պատրաստ է թեյը: Ուստան ու Հարությը չորրորվելով առաջ անցան, դնացին ջաղացը. պատի տակ, հասիր էր փռած, վրան մի խոնջա սառը կերակուրներով. մի երկու քայլ հեռու սամովարը աղմկում էր. նրանք նստեցին իրար կողքի, եկան Զավուշն ու վարպետ Գոգորը, որ ուրախ ժպիտով բարևեց Ուստա Կարոյին՝ երկու ափերի մեջ ամուր բռնելով նրա ձեռքը:

Վարպետ Գոգորը Կարոյին հասակակից կլիներ. կարճահասակ էր, մի քիչ ծաղկատար [դեմքով] քթով, նոսր բեխերով, չարժուձևները կենդանի էին և արագ. փայլուն, մանր և խելացի աչքերը դեմքը դարձրել էին արտահայտիչ և [աստղով] համակրելի:

— Ուստա ջան, դալդ բարի, կարոտդ հա կքաշենք, պոչով աստղի պես ուշ-ուշ կերևաս:

— Վարպետ ջան, չուտ-չուտ որ գամ, համը կելնի:

— Ո՛վ կասե, դու ցորենհացի պես միշտ համ ունիս, էն որ ամեն օր համով կուտենք և էլի չենք կշտանա:

– Տեսա՞ր, կարո,– միջամտեց Հարութը,– օրթե Գոգոր-ը խոսքով-չնորհքով քեզնեն վար չի մնա:

– Վարպետ մարդիկ մեկ հենքի կտավ են, դու քու գլխուդ ճարը տես,– ասաց Ուստա Կարոն:

– Իմ գլխուս ճարը դուք տեսեք,– ասաց Հարութը,– դուք իմ մեծ ախպրտիքս եք. հիմի ինձ ասեք, չայ խմելուց առաջ օրթե մի-մի արաղ երթանք՝ գեչ չի ըլնի:

Եվ լցրեց արաղի բաժակները: Արաղը խմեցին, ապա սկսեցին թեյին անցնել:

Երեկոյանում էր. պարտեզն ու չաղացը սուզվում էին վերջալույսի երազական անդորրի մեջ. աղավնիները դույգ-դույգ իջնում էին գետակի եզերքին՝ կարմիր տոտիկները դնում դալարի վրա, ջուր էին խմում ու թռնում դեպի բույները:

– Գոգոր ջան,– դիմեց Ուստան,– գեղն էիր գնացել, ի՞նչ նոր բան կա:

– Բան չկար, գլխիդ մեռնիմ, մենակ կնիկս հետս կռվավ:

– Ըսել է՝ պաչէի տեղ ճանկռտոց կերար:

– Կըսե՝ ուշ-ուշ կուգաս, կարոտ եմ քեզի:

– Դու էլ չուտ-չուտ գնա,– հարեց Ջավուշը:

– Ջավուշ ջան, ասելը հեշտ է, կատարելը՝ դժար:

– Ջեմ հասկնա, խրթին կխոսաս,– Ջավուշի տեղը բռնեց Ուստան:

– Ուստա ջան, ուշ-ուշ կերթամ, տարին մեկ ծին ունի, [օրթե] թե որ չուտ-չուտ երթալու ըլնիմ, գլխովս-արևովս պիտի թափե. հաց պիտի չկրնանամ[1] հասցնել. մոլորվել եմ, Ուստա ջան, թե որ հեռվեն աչքով կենեմ, ձեռաց երեխան ծոցում տուն կուգա:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է չկրնամ:

Բոլորը զվարթ ծիծաղեցին:

– Գոգոր ջան, դու էլ և-ի պոչը կարճ էրա,– խրատեց Ուստան:

– Կզարմանամ, Ուստա ջան, որ անփորձ կխոսիս. չի ըլնի, երկու կրակի մեջ եմ. ա՞խր դու չէիր, որ կըսեիր թե – կնկան պաչես, տղա կբերև, չես պաչի – բուղա: Դու հիմի տեղս ըլնես՝ ի՞նչ կանես:

– Հորս հացը ես կուտեմ, ուրիշին չեմ տա:

– Օղորմի քեզ ես քյողին, կնիկս էլ էդման կասե. կե՛ր թե չէ...

– Ասաված քեզի կարողության տա,– ասաց Ուստան ծիծաղելով:

– Երևիա ուննենալուց ինչի՞ կվախնաս. տղան անուշ բան է, տան ծաղիկ է, Աստծու օրհնությունն է, թող անպակաս ըլնի,– ասաց Ջավուշը:

– Ես էլ, Ջավուշ ջան, քու խելքիցդ եմ,– հարեց Գոգորը,– հանաք կննեի, առանց երևիի կնիկն ի՞նչացու է, պնչիդ զարկողը, դնչիդ նստողը:

– Երևիան իր տեղը,– ասաց Ուստան խոհական լրջությամբ,– կնիկն իր տեղը, կնիկը անմահական բան է ու աշխարքի քարվանը կնկա չնքերի միջով կանցնի:

– Մանավանդ քու քարվանդ, կարո ջան,– վրա բերեց իսկույն Հարությը:

– Եվ էլ ամենքի քարվանը, ճամբեն էդ է.– հանդիստ կերպով խոսքը կնքեց Ուստան, և իր ձեռքով արաղը լցրեց[1]:

– Խմենք կնկա կյանքի համար. Աստծու անբավ հարստության մեջ կնիկն է էն թանդ բանը. ու մեր բախտեն՝ էդ էլ մեր բաժինն է. փառք իրան:

---

[1] *Ա.Ինճիկյանը կրճատել է «ու աշխարքի քարվանը կնկա չնքերի միջով ... և իր ձեռքով արաղը լցրեց» հատվածը:*

– Ինձի համար՝ կնիկը սատանի թառափ է, մնջն ընկար – կորած ես,– ասաց Հարությը:

– Ջաղացպանի խնկքով ասեմ,– խոսք առավ Գոգորը,– մարդ ու կնիկ երկու ջաղացի քարեր են վերնակ ու ակնակ՝ իրար հետ մնկտեղ ջաղաց կշինեն, գործ կդարձնեն:

– Ու իրար փառավոր կմաշեն,– հաղթանակով կցնց Հարությը:

– Ու իրար մաշելով աշխարք կշենցնեն,– վրա բերեց Գոգորը և գառնալով դեպի Ջավուշը.

– Ջավուշ ախպար, դու ի՞նչ մտքի ես:

– Կնիկ առնելը, սուրբ պատկով, սրտի սիրով՝ լավ բան է:

– Հա՛, հա՛, հա՛,– ծիծաղեց Հարությը,– օրթե 40 էշ չալկես, ջորով երուսաղեմ երթաս լավ է, քան կնիկ առնես:

– Էլի կարկուտ էրիր,– բարկացած ասաց Ուստան Հարությին, խիստ նայելով,– կնկա համար հոգի կուտաս, էլի էպես կխոսիս, դու էիր ըսողը թե՝ կնկան գրկելիս՝ մարդու հոգին կերթա դրախտն ու հետ կուգա:

– Դնհ լա՛վ, մի վրա կախես, ես իմ ո՞ր խոսքը միտքս բերեմ. դու էլա մնկ չոնգուռդ դարկ, մինչև հավն ու ձուկն եփեն. ես քեզի չա՛տ բան ունիմ ասելու կնկա մասին:

Երևկոյան սովերները բարակ քողերի պես նրբածալ իջնում էին ձորի վրա, ծղրիդները անուշ ու միալար ծղրտում էին. բարակ սյուքը երբեմն չչնջում էր սաղարթների միջով. Ուստան գարկում էր չոնգուռի լարերին, Հարությը կլանված լսում էր:

– Ջավուշ չան, Գոգոր չան, Քյոռօղլի կզարկեմ, ձեն բռնեցեք:

Ուստայի նվագի վրա մի տուն Գոգորն էր երգում, ապա մի տուն Զավուշը, մինչ այդ Գարոն սեղանի վրա դարսում էր կերակուրները: Ուստան ձկի հոտը առնելուն պես՝ չոնգուռը վար դրեց:

— Օ՛յ, օ՛յ, օ՛յ, ի՞նչ երևելի ձկներ են, մատներդ հետներդ չուտեք[1],— ասաց Ուստան և արխալուխի թևերը ծալեց:

— Գոգոր ջան, արադը լից ճամբա բանանք պատվական ձկների համար:

— Մրո՛ւտ, դինին մոռցար, վիզդ տակը չմնաց, վազե՛,— գոչեց Հարուքը. Մրոտը թռավ և գավով դինին բերեց:

— Տղերք ջան, կերեք, խմեք, լեն ու բոլ չափվեք,— ասաց Ուստան, կարծես թե ինքը լիներ հյուրատերը:

Մի պահ ամենքը լռելյայն ուտում էին:

— Հավասարական ողջ ըլնիք, երկան խոսելու ժամանակ չունիմ,— ասաց Ուստան,— դեռ մեկ էս գինով պատկեցնենք ձկներին, դառնանք հավին, տեսնենք վերջերս ինչ կըլնի:

— Ես ձեզի մատաղ,— ասաց Հարուքը,— խմեք ի՛նչ կենաց որ կուզեք, կամ հենց առանց կենացի կոնծեցեք, հաշիվը մեկ է, օրթե չիտակ երթանք, չա՛տ կերթանք, Զավուշ ջան, մինչև ի տակ քցե:

— Հարուքի ջան, դիտես, խմելու հետ շատ գլուխ չունիմ, մի-երկու հատ որ երթամ՝ քունս կուգա:

— Ուստա ջան, լավ կշտացի՛ր, քարվանդ էս գիշեր չա՛տ հեռուները պիտի քշես:

Ուստան չլսելու տվեց:

— Էս սառը ձվածեղը ո՞րտեղից է, էս չոր սերը ե՞րբ եկավ:

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է չարեք:*

– Հարութ ջան, ես դրի սեղանի վրա,– բացատրեց (պարզեց) Զավուշը,– Ծպնվա արմատան է:

– Հա՛, սանամոր անուշ ձեռքով է, մատներն ուտեմ,– ասաց Հարութը և աչքի պոչով նայեց Ուստային:

Ուստան նույնպես չտեսնելու տվեց և բեխերը սրբելուց ու ոլորելուց հետո սկսեց պապիրոս փաթաթել:

– Ուստա, ինչ չուտ հետ քաշվեցիր:

– Հարութ ջան, կշտացա հիմիկ-հիմիկ:

– Վահ, դուք էլ՝ կշտացաք,– դիմեց մյուսներին,– կերեք, ինչքան կուզեք, մնացածը Ուստային և ինձի հերիք է մինչի լույս մանր-մանր աղալու համար:

– Լավ կերանք,– միասին ասացին Գոգորն ու Զավուշը,– չեն մնա Տերտերանց օճախը:– Ուստան ծխախոտը երկարացրեց նրանց:

Լուսնյակը ծայր տվեց ձորաբաշի վերևից:

– Մեկ էդ լուսնյակին նայեք,– ցույց տվեց Հարութը,– ասես՝ կեսը կտրած ըլնի. օրթե կնիկ է, մարդն է թուշը խածել-կիսել, օրթե մարդ է՝ կնիկն է շերեփով գարկել, երեսը կոտրել: բայց լիաերես ժամանակ կնմանի Աթոյենց [Անթառամի] Մանուշակի երեսին, լույս ու կլոր. ես եղա՝ էդ կնիկը, չկրցա էդոր թշերին բեղերս քսեի:

– Քու բերնին է ընկել լուսնյակ պաչելը,– ծաղրեց Ուստան:

– Էդքան էլ վերևանց չէ,– միջամտեց Գոգորը ու փափաց Կարոյի ականջին, Ուստան գլուխը չարժեց:

– Ի՞նչ կմտքես,– հարցրեց Հարութը:

– Էն կմտքեմ, թե՝ մեկ իշու պառավը չիմացա, մեկ էլ՝ կնկա հավատարիմը:

– Տեսա՞ր, Ուստա ջան,– խոսքը տեղը դրեց Հարութը,– դուն էլ դավուլի երկու երեսը կզարկես. եկա՞ր իմ խոսքիս:

— Ես գնչերի, անդգամների մասին կխոսեմ,— արդարացրեց Ուստան իրեն,— լավ, ադնիվ կնկա ծոցը դրախտ է. ասել եմ ու միշտ կասեմ:

— Անդգամ ու ադնիվ կնիկ չկա, [սիրուն ու] գեղեցիկ ու աստուծ [երեսով] պատկերով կնիկ կա մենակ:

Ուստան ուշք չդարձրեց Հարությին և խոսքն ուղղեց Ջաղացպան Գոգորին.

— Վարպետ Ջան, Ղևոնդենց որբևայրի հարսը ի՞նչ ջրի է:

Ուստան դիտմամբ նրա մասին հարցրեց, որովհետև Ջավուշի համար հանկարծ նկատի ունեցավ:

— Էդ հարսը իր ողորմած փեշը բացել է, իր դուռն ևկողին ծարավ հետ չի դարձնե:

— Դուն ու քու հոդիդ:

— Հա՛, գլուխդ վկա, Ուստա Ջան, հոգուս մեղք չեմ անե:

Ուստան մատը կծեց մի բան վերհիշելով և հանկարծ կռահելով. Հարությը այս չնկատեց, թե ոչ տեղին մի խոսք կփսկցներ[1] իր կարծիքը հաստատելու համար:

[— Մարտիրոսենց Բարթեղի ծափ-ծադիկ հա՞րսը:

— Օ՛հ... էն ձիավորը ձին վար կբերե, օձը ծակեն կհանե. եղ ու մեղր կուտե, պռունկներին մոխիր կցանե. տարին երկու անգամ անցուցք կէնե...

Ուստան զարմանքից աչքերը բացեց.

— Տո, աշխարք էշերով լիքն է, մենք ուրով ման կուգանք:]

Բոլորը ընթրիքից հետո հենած իրենց արմունկներին ծխում էին, ու սարից-ձորից, հնից-նորից պրույց անում: Գոգորը պատմեց մի քանի զվարթ, բամբասակ բաներ,

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է կփակցներ:

երբ վերջացրեց, Կարոն նույն նպատակով հարցրեց մի ուրիշ կնկա մասին:

– Վարպետ ջան, Փիլոյենց Արշակի էն որբևայրի քույրը, որ խնամախոս եկողներին ճամբու կդնե՝ ասելով թե ինձի էլ մարդ պետք չէ, զլխավոր կորցնելեն հետո, կճանչենա՞ս, ի՞նչ կէնե:

– Կարո ջան, ջանիդ մատաղ, էնիկ առանց մարդ առնելու, երեխա բերեց, էս հացը վկա:

Ուստան զարմանքից բերանը բացեց:

Հարությը մարախ մտած կատվի պես վրա պրծավ:

– Տո աչխարհաժուռ Կարո, բերանդ բանալու տեղ, աչքդ բաց. մի՞տքդ է, օրթե ես ասի, թե աչխարքիս վրա մի կույս կնիկ է եղել, մենակ էն էլ երեխա է բերել, էդ էլ մեռնեմ իրան՝ Մարիամ Աստվածածինն է եղել: [Դրուստ չեմ, օրթե չէ՝ զլխիս տվեք:]

Ջավուշը երկյուղած՝ խաչակնքեց դեմքը, Ուստան խոժոռեց աչքերը.

– Գաբը բահով է բացած:

– Լավ, ինչ ասի, որ բերնիս եկար, դրուստ չէ՞ր:

– Տո, Օրթե, դրուստ էլ որ ըլնի, նորեն բառդ բառ չէր,– ասաց Ուստան և խռովի պես դեմքը չուռ տվեց:

Տիրեց մի պահ լռություն. ապա Գոգորը ոտքի ելավ՝ բարի դիշեր ասելով և հայտնելով թե ջաղացում գործ ունի, գնաց: Ջավուշի զլուխը ծանրացել էր կրծքի վրա. Հարությը նկատեց և յուրովի խոսեց.– Ջավուշը տանձ կկշռե: Սա էլ սթափվեց և աչքերը տրորելով ասաց.

– Քունս կատանի, ներող եղեք:

Հարությը առաջարկեց, որ Ջավուշը գնա ջաղացի սենյակը իր անկողնի մեջ քնի, քանի որ ինքը Ուստայի հետ դիշերը հոլիկում պիտի անցկացնեն և կարգադրեց, որ Մրոսը սեզանի մնացորդը տանի հոլիկը: Քիչ հետո Ջա-

վուշին բարի քուն մաղթելով դնացին Հոլիկը, որի դռան առջև, ավազանին կից, Մրոտը տարածել էր հասիր ու կարպետ բարձերով և սեղան էր հարդարել:

Երբ նրանք առանձին մնացին՝ դոհունակ կերպով իրար երես նայելով՝ իրար հասկացած ժպտացին:

«— Էս լավ եղավ, տունը մնաց մեզի, բակը՝ հավերին, կուշտ կժղլվենք»: Իրար աչքերի մեջ այդպես կարդացին: Նստեցին միմյանց դեմուդեմ: Հարութը լցրեց դինու բաժակները:

— Ուստա Ջան, մեկ էս բաժակը վռազ խմենք Հոլիկիս կենացը, Հոլիկս, դիտես, ինձի համար արբաստեղի[1] է:

Բայաթու պես անուշ դիշեր էր, պայծառ, աստղազարդ, թռչուննները լուռ էին թևև, երբեմն միայն քնի միջից, երազի ձայներ էին արձակում. բարակ հովը բերում էր դիշերային ծաղիկների արբեցնող հոտը, առուն էր միայն, որ արթուն էր և մանկական ծիծաղով ման էր գալիս պարտեզի մեջ՝ շողշողուն դեմքը երբեմն ցույց տալով:

— Հարութ Ջան, տրորանք, քեզի առնեմ, ո՞ւր երթամ. ի՛նչ դիշեր է, ի՛նչ դիշեր է, հոգիդ կուծեմ:

— Ինձի առ, քարվանդ հետ տար, կարո Ջան, [շունդ ըլնիմ] մեկ քարվանիդ ճոթը բաց, լուսնկա գով դիշեր է, երթա՛նք, երթա՛նք մինչև աշխարքի ծերը:

Ուստան ականջ չկախեց, և նայելով երկնքին, ասաց ոգևորված.

— Ա՛խ, Հարութ Ջան, էդ աստղերը մարդ բռնե ուտե, հոգին [լուս] փառավորվի:

— Տո, բան չունես, ո՞րն ուտես, էնքան շա՛տ են որ. հա մեկ էլ խոսքը երկնքի կտուրը մի քցե, Ուստա Ջան, քարվանիդ ճոթը բաց:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է սրբատեղ:

Ուստան անդեն ականջ չկախեց և շարունակեց իր մտքի թելը:

– Մարդ գոնյա մի գիշեր էդոնց մեկի տեղն ըլնի. մեկ պատիկ աստղ, ու վերևեն աշխարքին նայես, ամեն գեղ ու քաղաք, երթիկներեն ու պատահաններեն ներս, ինչեր կտեսնի, ինչե՜ր կտեսնի, մարդ իմաստուն կդառնա:

– Դու, Ուստա ջան, քու քարվանովդ, գիշերով ու արևով, էնքան տեղ ես եղել, էնքան բան ես տեսել, որ պետք չունիս իակի աստղ դառնալու. Ուստա ջան, մի հատ էլ խմենք ու յալլա, քարվանիդ ճոթը բաց, հոգուդ մեռնեմ, ոտքդ պագեմ...

– Լավ, առաջ-առաջ քու օրթենների[1] ճոթը բաց:

– Գլխուս վրա, պայմանը պայման է, Ուստա ջան, ես կասեմ, դու համրե... օրթե բարակ քամի ըլնեի, փարվեի հարսներին անուշ-անուշ պաչեի. օրթե չատ հեռու չերթանք, մեր վանքի ջերմուկները ըլնեի, քաղքցոց ճերմակ հարս-աղջիկներին չուխ-չուխ լողցնեի ծոցիս մեջ, ու էնոնց բամբակ ծիծերի վրա ալին-ալին գայի, օրթե վրանները ցամքեի, չորնայի. ֆը դհա ոչինչ. ես կուզենայի, օրթե կրնայի էնպես բան ըլնեի, ծածուկ, անտես, մտնեի ամեն տուն, դինու կարասները բանայի, խմեի, խմեի, սիրուննե-րին դրկեի, պաչեի, պաչեի, ու հետո օրթե պուկ գայի, հեռուն կանգնեի, էնոնց մարդկանց ժիժի գայի, օրթե...

– Հերիք է, հերիք է, հաստատ որ՝ օրթե Հարութ. անունը վրկված է:

– Դեհ, իմ պարտքս տվի, Հնդստանցի Կարո, անունիդ մեռնիմ, ալմաստե քարվանդ քշե, ոսկե զանգուլակները թող զնգան, զնգան անո՛ւշ, անո՛ւշ. էս թասը խմենք քարվանիդ աղիղ կենացը. թող էնոր ճամբան ջրի պես եր-

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է որդինների:

կան ըլնի. երթա, երթա, ձենն անապատ ըլնի.— և խմեց լիքը բաժակով,— խոմ, Ուստա ջան, օրթն լավ քշես, սար ու դար չիտկվի, դուբան[1] դառնա առջևդ:

Ուստան լուռ էր, մտքերն էր հավաքում, ասես, պատրաստություն էր տեսնում երկար ճամբա ընկնելու, մինչդեռ Հարությը անհամբեր էր:

— Ել, ել աննման քարվանիդ գլուխը ել, ուղտերդ ոտքի հան, երեսս դնեմ էնոնց ոտների տակ, կոխնք անցնք, Ուստա ջան, հոգիս,— և թախանձում էր[2] աչքերը աղերսանքով ճգած նրա աչքերին, ականջները կախած նրա շրթունքներից, իսկ Ուստան տակավին տեղից չէր շարժվում:

— Կարո ջան, քարվանդ որ էդպես զարմանալի տեղերով կերթա օրորվելով, շորորվելով, գնդալով, գնդալով, վրաս անուշ քուն կբերե՝ թադավորի վայել երազներով. քշե, տա՛ր քարվանդ. ես էլ հետդ չեմ, հետդ չեմ, էլ հոլիկիս մեջը չեմ, քեզի հետ դրսի ու ներս աշխարհներն եմ, անմահական գինով-արաղով լիքը էդ աշխարհները, ապրած կենա քարվանդ, որ հոգիս մարմնես[3] կբաժանե. օրթն սուտ էլ ըլնի քարվանդ, հազար ղորթ արժենա. էնքա՜ն սիրուն է, էնքա՜ն սիրուն է, որ մարդ կուզե անպատճառ հավատալ:

— Ի՞նչ, սո՞ւտ. չես ամչնա ինձ էդպես կասես, ես ո՞րտեղի սուտ խոսողն եմ, ե՞րբ...— վիրավորված ասաց Ուստան:

— Բերանս ծուվի, Ուստա ջան, թե ես էդ մտքով ասի. կուզեմ ասեմ թե՝ քուկդ ոսկի հնքիաթներ են...

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է գարուն:

[2] Ա.Ինճիկյանը կարդացել է թախանձավոր:

[3] Ա.Ինճիկյանը կարդացել է մարմնից:

— Հնդիա՛թ...— Ուսուան կտրեց նրա խոսքը,— կուզես հնդիաթ ասեմ, քնֆդ գա,— Ֆյոուղլին, Ասլի-Ֆյարամը, Դահար-Միրզան... բայց իմոնքս տեսած ու եղածը լսած բաներ են. սուտ բան չկա. ասենք հնդիաթներ էլ, կան որ էնքան սուտ չեն, մեննակ մի քիչ ծաղկեցրած են:

— Կարո չան, խոսքիս կատարն ա՛ռ. քուկդ թագավորի արժանի ստեր են. չէ, չեղավ, էն կուզեմ ասեմ՝ հնճարածաններդ[1], ստեղծածներդ ղորթ են, դրուստ, դուտ ճշմարիտ:

— Տո, ի՞նչ կզվռնես, եղած բանը չեն ստեղծի, չեղածը կհնճարեն, կստեղծեն:

— Հա, դլխիդ մեռնեմ, մեծ մարդն էն է, օրթն չեղած տեղեն բան կստեղծե. թող միտքս ասեմ. էնպես բան, որ աշխարքի ղորթը էնոր մոտ սուտ է. ի՞նչ ասեմ քեզի, օրթն հասկանաս. կարո չան, ես կուզեմ, որ քու սուտը ինձի հետ ըլնի, քու ճշմարիտը ուրիշների հետ. ես քու սուտերին կհավատամ, ինչո՞ւ որ քու սուտը թե բոլոր մարդկանց, թե քու ճշմարիտեն առավել է ու չա՛տ ճշմարիտ...

— Բեզի չեմ հասկնա,— ակներև նեղսրտած ասաց Ուսուան,— սուտը — սուտ է. ղորթը՝ ղորթ. սուտը խաբեբա մարդու քոմն է. ճշմարիտը՝ ազնիվ, շիտակ մարդու. ի՞նչ պատեպատ կընկնիս. ես ազնիվ, շիտակ մարդ եմ, թե չէ, ասա, լսած կա՞ս, որ ես մարդկանց խաբեմ, փող տված չլնեմ — փող պահանջեմ. սուտ մրող խոսքեր իրար տանեմ-բերեմ. սուտ կխոսեն փողի համար, օգտի համար. իմ օգուտս, շահս ի՞նչ է, որ ես՝ վարպետ մարդ, իմ հացը ուտող մարդ՝ սուտ խոսեմ, թե որ սուտ քարվան ունեցած ըլնեմ, ո՞վ բուռս փող կդնե. իմ տեսած-լսածիս պատմություններուն համար ինձ ով փող տվեց. տո խելառ, անսպետ Հարութ, չափդ չես ճանչնա, կըլղուբես:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է հնարածներդ:

— Ուստա Ջան, բնխերդ ուտեմ, ես էլ էդ կասեմ, ուրիշ ի՞նչ ասի որ. դու գիտես, օրթեն ես քեզի Հոդուցս առավել կսիրեմ, ինչպես մի ազնիվ, չիտակ մարդու. ես էլ կասեմ, էդ տեսակ սուտը քու մոտը չկա. էդ տեսակ սուտը մեր գեղացոց քովն է, որ կեղծ վկայություն կենանն, սուտ երդում կուտեն, փողի, օգուտի համար ինչ ատեր ասես, կմոդոննն. սուտը քաղաքացոց մոտն է, էդ խաբեբաները, որ փթած ապրանքը սուտ խոսքերով լավի տեղ կծախեն, սուտը դորթի տեղ կքշեն. բայց դու — չէ. դո՛ւ քաչ տղամարդ ես, սուտասան չես, դողին դող կասես, լավին — լավ. մենակ քու քարվանիդ հեքիաթները էդ անդին... ատերը, աչխարքի բոլոր սրբերի ճշմարտություններեն ճշմարիտ է, հասկցա՞ր, հիմի, հոդիս — լից խմենք...

Ուստան գլուխը գարմացմամբ և բարկությամբ տարուբերեց.

— Չեմ հասկնա, չե՛մ, չեմ, հարբած կերևաս, հարբած. տո՛, մեկ նալին կուտաս, մեկ՝ մեխին. մեկ՝ կասես, թե քեզ պես չիտակ մարդ չկա, մեկ էլ կասես — հեքիաթներդ, ատերդ... տո, զիփո, սուտ ուզենամ ասեմ, էնպեսներն ասեմ, որ զարմանաս ու զարմացած մնաս, դու էլ, քու յոթը պապն էլ, թևս բռնողն ո՞վ է, ծովերը կրակեմ... ա՛յ, կուզե՞ս ասեմ. մեկ անգամ Արաբստանի կողմերն էի, էնպես սատանի քամի ելավ, որ մեկ պոչը գետինն էր, մեկել պոչը երկինքը կխառներ. ծովերը վերցրավ թափեց ցամաքի վրա, ցամաքն էլ [գետեր] գեղերով ու քաղաքներով լցրեց ծովերի տեղը. քարվանս ետև հին ծովերի տեղով անցավ. էդ ժամանակ [երկնքի ամպերից մեկ կայծակ իջավ, պտի զարկեր ինձի, փախա, ետևես ընկավ, ես փախա, էն վազեց, ես վազեցի] մի պոչով աստղ երևաց, պոչը գետին հասած՝ բռնեցի պոչը, ելա երկինք. լա՞վն է. կուզե՞ս, կեսն էլ ասեմ. (փախա հասա Հնդստան թե Զինմա-

չին, լավ միտքս չէ, ազատվեցի. նստել էի, չիբուխս կքաշեի, չիբուխիս կրակեն [ընկավ] մի պնծ քամին տարավ. մնկէլ էն տեսա, որ էդ աչխարքի սարերն ու ձորերը փաթթող բաղամի ու խուրմի անտառները վառվեցին, բոցն հասավ երկինքը, մուխը երեք տարի օր ու գիշեր բռնել էր ամպի[1] տեղ ու արեւի խավարում էր երեք տարի օր ու գիշեր. տեսա՞ր, սուտն ինչպես կըլնի...

Ուստան լռեց. չա՛տ հուզված էր. մի բաժակ գինի խմեց լուռ ու մունջ. ապա մի պահ հանդչելուց հետո նայեց Հարութին, որը կարծես վախից կուչ էր եկել ու հետաքրքիր աչքերով դիտում էր [Ուստին] նրան.— Ուստան անդորրացած չարունակեց, թե՝ բանը հավատի վրա է. օրինակ, եթե մեկը գնա Քյուրդաստան և քրդերին ասե թե՝ երկաթե-ճանապարհ կա, որ անասուն-կենդանիի տեղ ջրով ու կրակով են գնում, որ հեռու տեղերից, աչխարհ աչխարհի հետ թելով [կխոսեն] խոսում են ու գրում. (կամ [մեքենայով] մեքենայի միջոցով թռչում են օդի միջով—), նրանք պիտի ծաղրեն քեզ, խաբեբա, ստախոս պիտի անվանեն, որովհետև չեն տեսել իրենց աչքով, չգիտեն ու չեն ուզում հավատալ: Ամերիկայից վերադարձող մեր գյուղերի տղերքը Ուստա Կարոյի տեսածներից ու լսածներից ավելի զարմանալի բաներ են պատմում, բայց նա չի ասում թե՝ սուտ է, որովհետև հավատում է, թեև չի տեսել նրանց տեսածները. դեռ վերջերս Ռես-Հոսեն ամենայն լրջությամբ և չիտակությամբ պատմեց իր աչքով տեսածը թե՝ տարիներ առաջ մի 20 տարեկան համր տղա Ս<ուրբ> Կարապետ ուխտի եկավ, և հենց որ վանքի գմբեթը տեսավ՝ լեզուն բացվեց և խոսեց, փառք տվեց, հազար մարդու նկարագրությանը. ինչպե՞ս ասել թե սուտ

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է* ամայի:

է, կամ Ռնսը խաբեբա է, հնճարող է, պետք է հավատալ, և ինքը, Ուստան, հավատաց, մանավանդ երբ պատմողը աղնիվ մարդու մեկն է:

Եվ ապա ասաց բոլորովին հանգստացած.

— Հարութ ջան, դու խելոք տղա ես, մենակ ճղեն մեկ-մեկ դուրս կուգաս. ճամբա չես գնացել, ճամբու բանը չես հասկանա, երբ մարդ ճամբա կերթա, աչխարհն աչխարհ, կասես, երազ կտեսնի, երազի մեջ է, կամ երազի միջով կերթա. էդոր համար էլ իմ ճամբորդած աչխարհները երբ բաներ կպատմեմ, ուրիշին սուտ, երազի նման բաներ կերևան, քանի որ ուրիշ, հեռու աչխարհներ էնտեսակ բաներ կան, որ էստեղ չկան. էնպես նոր տեսակի, նոր ձևի բաներ են, որ մեր երկրի բաներին իսկի նման չեն, թե Աստծու ձեռքով, թե մարդու. ձեռքով չինած բաները. էդոր համար էլ անհավատալի կթվան, երազի մեջնեն:

— Ապրես, Կարո ջան, խոսքս թաղավորնցրիր, օրթե ես էլ էդ կուզեի ասել. դու բաց-աչքերով երազ կտեսնես, արթուն, օր-ցերեկով. էդոր համար էլ տեսած երազներիդ կհավատաս, ինչ որ բաց աչքով ես տեսել: Դու դիտես, օրթե ես երազ տեսնելու համար կքնեմ ու կխմեմ[1], որ սիրուն երազներ տեսնեմ, էս գիչ աչխարքեն հեռանամ. թե չէ խելաւ եմ, օրթե քնեմ. մենակ երբ աչքերս կբանամ, կիմանամ օրթե տեսածներս երազ են, սուտ ու փուրթ[2] գիչ կըլնեմ, տխուր ու տրտում, բայց դու չես զարթնի — քանի որ զարթուն ես, զարթունի մեջ երազը կտեսնես, էդոր համար էլ տեսածներդ հաստատ, օղորթ կհամարես, ու բախտավոր ես: Հասկացա՞ր, հոգիդ ուտեմ, դու ամեն օր

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է կմեռնեմ:

[2] Ա.Ինճիկյանը կարդացել է փուչ:

տեսիլք կներթաս. ու ո՞վ կրնա քեզի սուտ-խոսող ասել. քու պատմածներդ իսկի սուտ չեն, քանի որ տեսիլքի մեջ հաստատ տեսել ես. ինձի նայե, խոսքս առ,— օրթե մարդ ելնի առավոտր, ու իրեն երազի մեջ տեսած զարմանալի-հրաշք բաները պատմե, խո էդ մարդուն չեն ասե սուտ-խոսան, խաբնեբա. կըսեն՝ երազ է, երազ. թագավորն էլ երազ կտեսնի, կամողիկոսն էլ, խո էնոնք փչաններ, սուտասաններ չեն. քոնն էլ էդպես է, ու դեռ ավելի, քանի որ դու բաց-աչքերով երազ կտեսնես, ու կհավատաս, ինչպես ասի, տեսածներիդ իսկությունին: Քու մեծությունը, քու առավելությունը էդ է՝ թե իմ վրա, թե դուման աշխարքի վրա. էդոր համար էլ քեզի շատ կնախանձեմ. ինչու որ շա՛տ երջանիկ ես, աշխարքը սրտիդ ուզածի պես կերևա քեզի. ու էս ամենի համար էլ հատուկ՝ քեզի շա՛տ կսիրեմ:

— Օ՛ֆ, հոգիս հանեցիր,— չունչ քաշելով ասաց Ուստան, որ համբերությունը հավաքած լսում էր նրան, և ավելացրեց,— գլուխս բան չմտավ, լից, խմենք:

— Ուստա ջան, մի նեղսրտի՛ր, մտքիս ծերին դեռ չեմ հասել, հլա լսե.— ասաց Հարությը բաժակները լցնելով և Ուստային ներկայացնելով: Ուստան խմելով ասաց.

— Ականջս բերանդ է, ասա՛, ասա՛, չան ոտք, Մշու դաշտ, դնա՛ ու դնա՛, վերջ չկա, սրտիդ փուքը բաց թող, հանգստանաս:

Եվ մի ծխախոտ փաթաթեց, թիկն տալով սկսեց ծխել կիսախուփ աչքերի թարթիչների միջով նայելով Հարությին:

Հարությը խոսում էր հասնելու համար իր մտքի ծայրին: Իր [ոճով] խոսքերով և իրեն հատուկ ոճով ձգտում էր բացատրել իր հայացքները,— թե ինքը քանի հարյուր անգամ ասել է Ուստային, թե Աստծու չինած այս աշ-

խարհը չա՛տ պակասավոր է. մի քանի գեղեցիկ բաների կողքին լիքն են սարսափելի վատ բաներ – ցավ ու հիվանդություններ, աղքատություն, ավազակ, արյունարբու մարդիկ, թյուրք ու թյուրքերի պես գազան ժողովուրդներ, պատերազմ, ծերություն և մահ. և այս բոլոր սարսափները, որ տանջում են մարդուն՝ [մոռանալու համար պետք է] պետք է որ մարդ մոռանա ապրելու համար. և մոռանալու համար [պետք է] – մի միջոց կա՝ [խմել և արբել և] ընկնել գեղեցիկ երազների մեջ: Եվ այսպես, մարդ Աստծու աշխարհի վրա չինում է իրեն սրտի ուզածով մի [ոսկի] լավ աշխարհ, ուրտեղ նա իրեն բախտավոր է զգում, իր փափագներին հասնող, իր սիրածի սերը ունի, իր ցավերը բժշկված, երիտասարդացած, այնտեղ կտեսնի լավությունը, պտնվությունը, այն ամեն ցանկալի բաները, որ պիտի լինեին Աստծու աշխարհում, բայց չկան. դրա համար էլ մարդ սիրում է իր չինած աշխարհը, այնքա՛ն է սիրում, որ ոչ միայն հավատում է նրա գոյությանը, այլև աչքով տեսնում է, ձեռքով բռնում: Եվ նրան երևում է այդ աշխարհը անկասկածելի ճշմարիտ, անմեռ ու անմահ, իսկ Աստծու աշխարհը սուտ, չեղած, անհաստատ:

– Ուստա Ջան, օրթե հասկացա՞ր. դու Աստծու պակասավոր աշխարհի վրա զարկում ես քո ոսկի վրանդ, ուր երջանկություն է ապրում. քու չինած վրանը կամ աշխարհը դուրսը չկա, բայց քեզի համար կա. կնշանակե կա, ու սուտ չես խոսի. էն հաստատ կա, քանի որ դու սրտանց կփափագես էնոր. ու ինչ բանի որ կփափագես՝ էնոր էլ կհավատաս. ու էդոր համար էլ քու սուտերդ անուշ են ու հրաշք, ոսկի են ու դոհար, անմահական գինի են. քարվանդ մարդու էնպիսի սիրուն աշխարքներ կտանի որ, Աստծու աշխարհեն չա՛տ վեր ու պատվական. ի՞նչ

են մեր դյուղացոց կամ արար[1]-աշխարքի սուտն ու զորթը – էն մարդը փողս կերավ, մոզիս ծախեցի, ախբերս Ղարս եղ[2] տարավ, սելս կոտրավ, Պողոսն եկավ, Մարկոսը գնաց, կնիկս կարպետ կգործե, երեխես փորը ցավավ. գանելի, պլուխս տանելի, սիրտ խառնելի բաներ. բայց քուկինդ՝ քուկոնքդ աստղ ու արև, լույս ու լուսնյակ: Ուստա Ջան, քանի-քանի անգամ քու անուշ քարվանդ տարել է ինձի էս ցավի չար աշխարքեն հետու, դրախտի տեղեր, ի՞նչքան անգամ մոռցել եմ թե ինձի, թե դարդերս, Հրեղենիս [ձեռքեն] ղրկած գինին եմ խմել, որ քու քարվանդ է բերել էնոր մոտեն... դեհ, կարո Ջան, Ջանիկիս, քարվանդ քշե, բերնիդ մատաղ:

Հարուքը վերջացրեց. Ուստան հասկացավ ու չհասկացավ. նրան ամենևին հաճելի չէր երևում «սուտ» բառի հիշատակումը, որ Հարուքն անվերջ կրկնում էր զանազան ձևերով, թեև միշտ «ճշմարիտի» արժեք տալով: Եվ ձեռքը թափահարելով, ջղայնացած ասաց.

– Է՛հ, Հարուք, վարդապետի լեզու թափեցիր. հերիք ձեռք առնես ինձի, գլուխս կդմբա. լից խմենք, էս գիշեր քեֆը գլխուս խառով արիր, չոնգուռս մեկ էստեղ տուր, տեսնեմ:

– Ուստա Ջան, ի՞նչ ասի, որ քեֆդ խառով եղավ, առ չոնգուռդ, զարկ, քեֆդ բացվի, էլ չեմ խոսի:

Ուստան սկսեց չոնգուռը խոսցնել. կաթնոտ գիշերվա մեջ ծորում էին հնչյունները՝ քաղցր և [անուշ] գրավիչ, և գնում էին լուռ ստվերների մեջ մարում: Մի մեղմ տխրություն իջավ երկու մտերիմ ընկերների վրա: Ուս-

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է* արարատ:

[2] *Ա.Ինճիկյանը կարդացել է* ինձի:

տան չոնգուռը վար դրնց. նրա տրամադրությունը ավելված էր. մի պահ երկուսով լուռ էին: Ուստան ապա ասաց.

— Հարութ, մի հանելուկ ասեմ, պարզիր. էն ինչ պտիկ տղա է, վար կդնեմ կսկի, սրտիս կդնեմ կուլա... (չոնգուռն է, չիմացար):

Տիկորի վերևից, դիշերվա անդորրի միջից լսվեց անցնող մի քարավանի մեղմ ու ներդաշնակ ղողանջը. երկուսն էլ ականջները լարեցին:

— Քարվան է,— ասացին միասին, իրար աչքերի մեջ մխրճվելով:

— Ի՜նչ անուշ է,— հարցը[1] Ուստան,— ա՜խ էրնեկ էնոնց, կերթա՜ն, կերթա՜ն...

— Քու քարվանիդ ձենին չի հասնի, իսկի...

Այդ շրջանում շատ հաճախ են քարավանները, որ սովորաբար կողքից աղ են կրում:

— Հարութ, լավ միտս նկավ, էս սալած ճամբեքը, որ կան մեր հանդերում, Անիից դեպի Մրենի կողմերը, որ մեկ կերևան, մեկ կկորեն, ո՞վ է շինել. դու կարդացած տղա ես, կգիտնաս. և էլ ուրդի՞ց կուգան, ո՞ւր կերթան...

— Ա՜խ, Ուստա ջան, էդոնք չա՜տ հնութ ճամփեք են. հայոց թագավորներն են շինել, որ Անի կնստեին. էդոնք կուգային քու ներսի աշխարհներեն, կերթային քու դրսի աշխարհները, հայոց զորքերն են անցել էդոնց վրայով. հետու աշխարքների, Հնդստանի ու Բաղդադի քարվաններն են եկել ու անցել՝ բարձած հուբիններով ու փերիններով, դինիներով, դոհարներով ու ատլասներով, և զարմանազան թանգ բաներով, (հիմի չա՜տ մասը քանդած է, գազանական թուրքերն են քանդել, Ուստա ջան...)

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է հուռաչեց:

– Հեյ վա՛խ, հեյ վա՛խ,– խորունկ հառաչեց Ուստան,– հե՛յ վախ, հեյ վա՛խ, հայոց ազգ, հայոց փառք:

– Ուստա, ես չգիտեի, թե էդքան ազգասեր ես եղել:

– Ինչո՞ւ, դու ազգդ չես սիրում:

– Ե՞ս, չգիտեմ, ե՞ս,– մտածելով,– չէ. ինձի համար ամեն ազգ իժից արմատ են, օրթե լավ մարդ ըլնի, նրան կսիրեմ, ուր էլ որ ըլնի՝ թուրքի, ռուսի, քրդի քով, ես քեզ հայի համար չեմ սիրե, ես քու հոգիդ կսիրեմ, քո քարվանդ...

Ուստան չպատասխանեց, աչքերը տխրությամբ թաթախված հետևում էր քարավանի անտեսանելի, միայն ներքին լսելիքին ղգալի քայլերին, ասես, հոգով գնում էր քարավանի հետ: Կարծես եկեղեցու տոնական զանգերի պես, նրա զանգակներն ու բոժոժները հրավիրում էին մարդկանց երազի ու հեքիաթի դյութական աշխարհները:

– Ուստա ջան, էս քարվանները հիմի աղ կտանեն կողբեն, քու քարվանդ էլ աղ կրող է. մենակ քու աղդ ուրիշ է. էսոնց կրածը – ոչինչ. քուկը կյանքի ու աշխարքի աղն է:

Հարությն ուզում էր ասել, թե աղ, հասարակ աղ չհասկանաս, հապա, խոսքի աղը, որ սուտն է, բայց վախեցավ զայրացնել նորից, և չարունակեց.

– Ուստա ջան, առանց էդ քու աղիդ, արար աշխարք անհամ կլիներ, կհոտեր, կորդնոտեր...

Ուստան չէր լսում Հարությին. նա հոգով ներկա չէր այնտեղ, ականջները սուզած տարածության մեջ, հոգով ծծում էր քարավանի հետզհետե մարող ղողանջները:

Ոչ միայն քարավանի ձայնը, կամ նրա պատկերը, այլ սոսկ նրա անունը դյութիչ-հափշտակիչ ներգործություն ուներ Ուստայի վրա. անհաղթելի փափագ էր զարթնեցնում նրա մեջ՝ իսկույն իր քարավանը ոտքի հանելու և ճանապարհ ձգելու...

— Ա՛խ, Հարութ ջան, դու չես կրնա իմանա, մեն ի՞նչքան անուշ բան է քարվանը, մեն որ իմանայիր, էլ ձեռք չէիր քաշի. ա՛խ, Աստված նորեն պիտի տա, որ քարվան ունենամ, կս սպած, հնուքի ճամբեքով երթամ մանեկած տեղերս և էն հետու, դրսի տեղերը, որ կուզենայի ու չկրցա երթալ... Հարութ ջան, հա աչքիդ առջեն բեր. էսպես մի լուսնյակ, քաղցր պիշեր, մի անդամ քարվանիս հետ Հարաչեն կերթայինք Ղանդահարի աշխարքը...

Հարութը կննդանացավ. մի ցնցումով հենվեց արմունկի վրա, վառվեց հետաքրքրությամբ՝ աչք ու ականջ դարձած:

...— Ղանդահարի աշխարքում չուբ չկա, հողը ավազ է, երկնքեն կրակ կթափի, մեռնիկ մեր ճամբի երկայնքով, չինի պատերով բանձրիկ, բանձրիկ՝ պարտեզներ կան, որ մեր գլխի վրա կախված կերևնան. էդոնց չվաքի տակով կերթայինք. պարտեզների մեջ փիրուզի քարերով շատրվաններ կան, որ երկնքի մեջ էնոնց կաթիլները անդին, պայծառ ակունքների պես պիծին կուտան...

Եվ ընդհատելով ինքն իր պատմությունը՝ դարձավ դեպի Հարութը:

— Տո, դեղացիք անուշդ լավ են դրել,— Ջնչահավատ,— հիմի պիտի ասես թե՝ հևքիամ է, սուտ է, երազ է, էդ տեղերը չես եղել:

Հարութը ուշքի եկավ, և մի պահ վարանումից հետո, պատասխանեց.

— Ուստա ջան, կարելի է, օրթն ուռք չես դրել էդ տեղերը, բայց հավատամ ու խոստովանիմ, որ քարվանդ եղել է՝ հոգիդ վրան թառած. հաշիվը մեկ է...

Ուստան արդեն պատասխանին չէր սպասել և շարունակում էր իր պատմության թելը:

— Էդ պարտեզի մեջ կան էնպիսի պտուղներ, էնպիսի անմահական մրգեր, որ իսկի նման նմուշը ուրիշ տեղ չեպած. էնպիսի հուրնիհրեղեն, հրնշտակ աղջիկներ, որոնց մի պահը մի թագավորություն արժենա, մի բան էլ ավելի: Էդ ծառերի հոտն ու աղջիկների [ձայնը] ձենը չատ հեռուներեն մարդու ուշքն ու ուրուշը կտանեն, կհարբեցնեն: Գետին ընկած էդ անուշ պտուղներեն թե որ մի հատ կուտեինք, քներս կտաներ ու երազի մեջ կտեսնեինք, թե մենք էլ վերևն ենք, պարտեզների մեջ, շատրվանների տակ, աղջիկների գրկի մեջ, կխոսեինք ու կծիծաղեինք, ու էնոնց ձեռքեն դրախտի գինին կխմեինք: Շատ, չատ հարուստ մարդիկ, իշխան-իշխանապետ կուգային էդ ամայի չոր տեղերը, որ պտուղներ գտնեին, ուտեին, դրախտի երազների մեջ ընկնեին, ինչու որ հնար Աստծու չկար էդ պարտեզը երթալու. դուռ չունի, սանդուղ չկա ու անկարելի է, թե չինվի, թեկուզ սարերի չափ ոսկի ծախես: Մի անգամ էլ քարվանս կպատցնեի...

— Ուստա Ջան, հոգուդ մեռնեմ. մեկ էդտեղ հլա կանգնեցրու քարվանդ, մի բան պիտի հարցնեմ:

Ուստան կանգ առավ և աչքերը բացեց Հարութի վրա:

— Ա՛ռ հլա էս թասը խմենք քարվանդի կենացը, ասեմ. հա՛, Ուստա Ջան, աշխարքի մեկ ծերեն մտել, մեկելեն դուրս ես եկել, տեսակ-տեսակ ազգեր ես տեսել ու գիտնակ, աշխարհաժուռ ճամբորդներու ես պատահել, իսկի լսած կա՞ս Հրեղենիս տեղի մասին, կամ տեսած, ասա, հոգուդ մեռնիմ, ծառա եմ ձայնիդ, Կարո Ջան: Հրեղենս օր ու գիշեր մտքիս մեջ ունեմ, ես կրնամ մեր կնիկներին սիրել, իսկի խա՞լք է. հանաք կանեմ, երբ կնիկների մասին կխոսեմ. ի՞նչ են կնիկները — գեշ ապրանք են, գեշ հոգի ունեն, չար, բամբասող, խելք չունեն, մենակ, տակե-տակ են՝ խորամանկ, սուտ կուլան, սուտ կխոսին. կնիկ ստածդ

ի՞նչ է — միևնույն բանը ամեն օր, օրական քառասուն անգամ ասել, ասել, Հոգի հանող են, Հո՛գի...

— Հարութ, սուտ կխոսիս, դու կնկա համար Հոգի կուտաս, մի հատ էլ փոխ կառնես տալու:

— Չէ, Ուստա Ջան, ես քեզի օրթե հազար անգամ ասած կըլնեմ, թե՝ էս գնչ աշխարքը, արտիս ցավերը ու Հրեղենիս կրակ-կարոտը մոռնալու համար կնիկներին բարև Աստծու բարին կուտամ, քանի որ սիրուն, գեղեցիկ կնիկը արագ ու գինի ունի իրեն սերի մնջը, մարդու կհարբեցնեն, մոռնալ կուտա... Հրեղենս, ախ, էրնեկ էր բերանս դնեի էնոր մարջանե պռունկներն, ու խմեի էնոր սերի գինին, ծծեի էնոր սերի արագը ու գրկի մնջ մեռնեի... Կարո Ջան, օրթե ողջ-աշխարքի սիրուն կնիկները դնես կշեռքի մեկ թաթը, մեկէլ թաթը — Հրեղենիս, Հրեղենս բոլորին կշռե, կանցնի. ա՛խ, ի՞նչպես վազ անցնիմ, ես կխելոիմ. Հրեղենս տվեք ինձի, մեկէլ բոլոր-բոլոր կնիկները ձեզի [ոտքով] ոտով-գլխով. իսկի վրաննները մի օր էլ չնայեմ. օրթե Հրեղենս չկա, բոլոր-բոլոր սիրուն կնիկները ինձի տվեք, որ Հրեղենիս ցավը քիչիկ մի մոռնամ, օրթե էն էլ կրնանամ... Կարո Ջան, ասա, սուտ-ղորթ, Հրեղենիս մասին օրթե լսել ես:

— Հարութ Ջան, չգիտեմ Հրեղենիդ նման է թե չէ,— աչքերը տրորելով ասաց Ուստան,— մեկ անգամ, քարվան իջավ մեկ աղբյուրի վրա. լուսնյակ գիշեր էր էսօրվա պես. մենակ նստել էի մեկ ծառի տակ, Հանգիստ կենեի ու չիբուխս [կծխեի] կքաշեի, մեկ էլ մոտիկեն մեկ [ըլբուլի] թառի ձեն առա, ասես, ինձի [քովը] կկանչեր, վեր ելա՝ [մոտեցա թփին, էնտեղեն թռավ մեկ ուրիշ թփի վրա, քիչ հեռու, նորեն երգեց, նորեն] քալեցի թառի ձենի վրա, ես կմոտենայի, ձենը կհեռանար ու մեկ էլ կմոտիկնար. ես կմոտենայի, ինքը կմոտիկնար ու կհեռանար. ես մոտեցա,

էն հետացավ, ես մոտեցա, էն մոտեցավ, [կանչեց, ես մոտեցա, էն հետացավ, ես մոտեցա, էն հետացավ] էդպես [դնալով] երթալով, երթալով – հասա լուսերի մեջ կորած մեկ պալատի. դռները կրընկի վրա բաց. ապշած, բերանբաց մոտեցա դարպասին, մեկ դուդված ծառա ինձի ներս [կան...] համեցրեց, թե էս պալատի տեր-տիրուհին է կանչողը. ներս մտա – արմանք-զարմանք բան, ասես, թագավորի տուն ու տեղ ըլներ. դեմս ելավ մեկ հրաշք կնիկ. նուշը կոտրած մեջեն հանած. տեսա թե չէ, երկու անգամ բանձր ձենով Աստծուն փառք տվի. ինչո՞ւ որ, Հարութ ջան, սիրուն կնիկ կտեսնիս երկու անգամ Աստծուն փառք տուր, լավ մարդ կտեսնիս – երեք անգամ: Սպահանի թագավորների պարտեզների էն անուշ վարդերի հոտը էդ կնկա ծոցեն կըղխեր. Հարո՛ւթ, դու էլ գիտես թե՝ կնիկ ես տեսել, հողը գլխիդ, էդ անաստվածի կնիկը, [ծիծերը] կնկա աչքերը անհատակ, ծծերի պտուկները – ակն-յաղութ, էն իր մարմար ձեռքով ոսկի թասով գինի տվեց. խմեցի թե չէ, ներսս կրակ ընկավ, ծարավ-պապակ եղա. գլուխս կորցրած վրա պրծա [էնոր վրա], ոնց որ յոթըն օր ծիծ չկերած երեխան մոր ծծերին, ես էլ էնոր պտուկներին... [Հարութ ջան,]

– Լա՛վ, լա՛վ, հասկցանք,– կոպիտ ձայնով ընդհատեց Հարութը,– Հրեղենիս ծառայի շվաքն էլ չես տեսել, ո՞ւր մնաց Հրեղենս, էն ուրիշի պաչ չի տա, էն ինձի կսպասե, Հրեղենս թե մարմնով է սուրբ հրեշտակ, թե սրտով ու հոգով. էնոր դեռ հողեղեն չի պաչել, պարծենկոտություն մի արա, օրթե ուրիշ բան գիտե՛ս, ասա՛:

– Հարութ ջան,– կարծես չքմեղելով ասաց Ուստան,– կարելի է Հրեղենդ չէր տեսածս, մենակ պատմածս շիտակ էր. թե որ տեղը կորցրած չըլնեի, նորեն կերթայի քովը, համը դեռ բերանս է: Հարութ ջան, լավ միտս եկավ, էս

պատմությունը որ պիտի էնեմ հիմի, անպատճառ Հրեղենդ է. մեկ անգամ Մարա կողմերը մեկ հալևոր մարդ տեսա, որ կապրեր մեկ քարվանսարայի մեջ, տասներկու ճամբաբաժնի վրա չինած. էստեղ, օր ու գիշեր, տարի բոլոր, էդպես 40 տարի նստել էր էդ մարդը, որ 12 ճամբեքից եկող-գնացող քարվաններին հարցուփորձ անե աշխարքի էն գեղեցիկ կնկա մասին ու իրեն կորցրած քարվանի մասին...

Հարությը չտապով կարեց խոսքը.— Հրեղենիս կմոտենա, ասա, Ռւսուա ջան, հետե...

— Հետե, ես խնդրեցի որ ինձի պատմե իր գլխի եկածը. էն էլ թե՝ կանանչ-կարիճ երիտասարդ էի, քարվանի գլուխ-գլխավոր, մեկ անգամ Հնդու աշխարհով անցնելուս տեսա ճամբին մարգարիտներ կային շատ տված, ամեն մի հատը իրարուց մեկ-մեկ ոսոք հեռու, քարվանս իջեցրի մի ջրի վրա, ասի [րնկերիս] օգնականիս, թե դու էստեղ ինձի սպասե, ես էս է՝ կուգամ. ես էլ մարգարիտները մեկ-մեկ [հավաքելով] ժողվելով դնացի, դնացի, մեկ էլ [լսեցի մեկ հրաշագան-զարմանագան թառի ձեն, ու] ասես, Հնդու [բազերի] այգիների բոլոր բլբուլները ականջիս տակ մեկ ձեռով երգեցին. աչքս ծածկեցի որ լավ լսեմ. մեկէլ որ աչքս բացի, ի՞նչ տեսնեմ.— մեկ երևելի, անպատմելի Քյոշք ու սարա, մարմարե ու սադաֆե շինած, դռներեն ու պատուհաններեն հազար ջահերի լուսը արեգակի պես դուրս կթափվեր. սիրտ արի, ներս մտա.— շա՛տ աշխարքներ էի տեսել, շա՛տ պալատներ, բայց էսմանը — իսկի: Ինչ բանի որ աչքդ կդիպներ — ոսկի էր ու ալմաստ, յաղութ ու զմրուխտ, բանձրիկ փղի ոսկորի գահի[1] վրա նստել էր մեկ գեղեցիկ, անպակաս, աննման

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է ջահի:

յուս-արևգակ կնիկ՝ աշխարքի ամեն սիրուն կնիկներեն կ՛ն սիրունը,— Դունիա Գյոզալին, կնիկների թագն ու պսակը. խոսքով չեմ կրնա պատմել էնոր սիրունությունը. լեզու չի կրնա բանի[1] էդ սիրունությունը չափելու համար. խելքն-մտքն սիրուն, երազների մեջ տեսածներեն ու հնբիամների մեջ լսածներեն հազար-հազար անգամ գնդնցիկ, գնդնցիկ, գնդնցիկ:

Ինքանս բռնվեց, լեզուս կպավ, դողն ընկավ սիրտս. էնոր անմահական հոտեն գլուխս գառավ, ծնկներս ծալվեցան, գետին ընկա, էնոր ոտների տակ. քիչ հետև ուշքս վրաս եկավ, [պատիկ սիրուն աղջիկներ ոսկի թասերով գինի բերին] ասի,— կտեսնեմ, որ թագուհի ես, կուզեմ իմանալ, դու որ աշխարքին կհրամայես: էն էլ բլբուլներից անուշ ձենով ասաց թե՝ բոլոր աշխարքի վրա կերթա իմ հրամանս, դու ինձի չե՞ս ճանչենա: Ասի, ներող եղիր, անունդ չեմ լսել, ես հասարակ, քարվան քշող մարդ եմ, ոչ գիտնական մարդ եմ, ո՛չ գիր կճանչնամ: էն էլ թե՝ [իմ անունս] ես կնիկն եմ, հասատատ, իսկական կնիկը. ով որ իմ սերս վայելն ամենեն երջանիկը կլինի. ո՛չ կպառվնա, ո՛չ կմեռնի. իմ սերս անմեռ է՝ հուր-հավիտյան մինչև աշխարքի վերջը:

Մեկ էլ էն հրամանից, մեր քով եղողները բոլորը դուրս եկան, մնացինք ինքն ու ես, մենակ: Ասավ, ես քեզ սիրեցի, դու կտրիճ տղա ես, կուզեմ քեզի հետ սեր անել...

— Ուստա, կանգնի՛ր, քարվանդ [գուբ տեղը] գուբը անպետք տեղեր մի պտըտցներ. էդ Հրեղենս չէ. էնիկ ուրիշի սեր չի տա. բան գիտես, բան ասա:

— Հարութ ջան, լսե մինչի տակը. կարելի է էն գուբս կուգա, [ինքը] էն էլ որ չեղավ, լավ պատմության է...

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է բռնի:

Հա, էն կասեի... Հետև էդ Հալևորը ասաց թե՝ աղջիկը սկսեց Հագուստները Հանել. 7 Հագուստ իրար վրա էր Հագած՝ բարակ քողերի պես. առաջ Հանեց ոսկի Հագուստը, ես աչքս չթարթած կնայեի, Հետև արծաթեն, վարդն, կապուտ[1], կանանչ[2], ալ կարմիր՝ արյունի դույն, մնաց վերջինը, որ արևի պես վառ-վառ կփայլեր. վրան նայել կարելի չէր. էն է, որ սկսեց վերջինը Հանել, մարմինը՝ կայծակի պես կրակ տվեց, ու ասես, կայծակի պես ինձի զարկեց. մեռած ընկա գետին. առավան զարթնա, տեսա ինձի դուրսը մեկ օտար ճամբու վրա քցած: Հետև էդ մարդը փնտռել է քարվանը, Հարցուփորձ է արել, իմացող մեկը չի գտել, ուզեցել է նորեն գնալ էն կնկա մոտ, ճամբան չի գտել. ու մինչև էս օրս Հարցուփորձ կանեն նստած էդ քարվանսարայի դռան առաջ՝ օրը Հարուր քարվան 12 ճամբեքին ու Հեռու, Հեռու տեղերեն կուգան ու կերթան, բայց ոչ մեկն էլ բան չի կարող ասել էդ խեղճ Հալևորին, որը չի մեռնի, ու չի ուզի մեռնել, որ նորեն, մի անգամ էլ տեսնի էդ կնկան ու Հետև մեռնի: Հարուրթ ջան, անՀնար է գտնելը, դուն էլ ձեռք քաշե Հրեղենից: Լի՛ց խմենք, բերաններս չորցավ:

— Կարո, իմ անունս Հարուրթ է, Կարո չէ, որ մխոտ սանամերներով Աստծուն փառք տամ ու Հրեղենս էլ ձեր բերնի բանը չէ, դուք՝ ո՞վ, էն՝ ո՞վ:

— Ինչո՞ւ, էլ կնիկ չենք տեսել, ի՞նչ է, էնոր ոտները ամպո՞տ են:

— Հա, ամպոտ են, էն Հրեշտակ է, էն կնիկ չէ. Աստված էնոր ստեղծելուս մազաչափ չի սխալվել, էն Հրեղեն է, Հողեղեն չէ:

---

[1] Բառի վերևում՝ փիրուզ:

[2] Բառի վերևում՝ զմրուխտ:

— Կարելի է, մեռնեմ էնոր սուրբ դորությանը,— ասաց Ուստան երեսը խաչակնքելով,— հլա մեկ-մեկ առջևս բեր էդ աղջկա սիրունությունը, կարելի է նմանը տեսած ըլնեմ:

— Կարո ջան, ի՞նչ ասեմ. օրթն հասկնաս. աննման է, անմահ է. տեսած չես ըլնի, սուտ մի խոսի, էդ սուտիդ չեմ հավատա. էն անթառամելի է, անծերանալի, ամեն մեկ մարդ մարդ կհարբեցնեն. դրախտի ամենաանուշ ծաղիկը էնոր [հոտը չունի] մոտ գարշահոտ, ունքերը մարդ կապանն ու հոդի կուտա, երկնքի բոլոր աստղերը էնոր աչքերի քով մարած ճրագներ են. նրա աչքերը արեգակներ են՝ մեղրաթաթախ ու դեմքի վրա դրախտի մեղր կթափեն. է՛հ, մի հարցրու, չեմ կրնա ասել. մի անգամ տես, հետև մեռիր, էլ ապրել պետք չէ. էնոնցեն հետև էլ գեղեցիկ բան տեսնելու չես, թեկուզ անմահ ըլնիս ու ամենակարող:

— Պահո՛, չէ, Հարութ ջան, չեմ տեսել, էլի ասա,— հափշտակված ասաց Ուստան:

— Ի՞նչ ասեմ: Ո՞ր մեկն ասեմ, իրեն ամեն մասերով Աստվածաշեն. ի՛նչ մարմար, ի՛նչ դոհար, ի՛նչ լուսնյակ, ի՛նչ ծովերի փրփուր — էդպես էնոր մարմինը. խելոքու բան, տես ու հոդերը համբուրե: Ինքը բոլոր գինի, գինի, Աստծու խմած գինի: Կարո ջան, էնորից կատարյալը կրնա մեկ էլ Աստծուն ստեղծող Աստվածը ստեղծել:

— Չէ, չեմ տեսել, Հարութ ջան, ի՞նչ սուտ խոսեմ:

— Տո, ո՞ւր կարող էիր տեսնել. էն երկնային է, էն ինչպես կրնա ապրել էս գեշ աշխարքի մեջ. էնոր մեկ անգամ պաչելը անմահություն է, արքայություն է, էնոր մոտ մի օր մնալը 1000 երջանիկ, անցավ[1] ապրած տարիներեն ա-

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է անցած:

վելի կերևա, ու էնոր հետ 1000 տարի ապրելը մի ժամվա պես կանցնի, չես իմանա. էն որ քուկդ ըլնի,— դու Աստծուց մեծ կըլնես:

Կարոն հաղթված էր՝ լուռ, ապշահար:

— Լեզո՛ւն, լեզո՛ւն... Ջինմաչինի թագավորի ու քու գոված աշխարքների պարտեզների ըլրուլների երգերը էնոր մոտ — ագռավ ղոզղոց. օրթե Սողոմոնը լսեր իր իմաստությունը մեկ պլիկի կծախներ էնոր [սիրուն] լսելու համար, ու նորեն էժան կհաշվեր: Կարո, հողեղենների մեջ աշխարքի էն գլխեն մինչև էսօր մենակ ես տեսա իրան, ու էդոր համար էլ էնօրվանեն էսպես անբախտ եմ, քանի որ տեսնելը՝ երջանկությունների գլուխ կատարյալն է, չտեսնելն ու [ապրելը] քաշ գալը էս ավանակների ու գաղանների մեջ տարտարոս է. ա՛խ, Կարո ջան, ա՛խ, էնոր տեսնելեն հետ էլ ուրիշ ուրախություն, փափագ չունիմ... լից խմենք, լի՛ց, լի՛ց...

Հարուքը տխրեց, նրա տխուր աչքերը ավելի տխրեցին:

— Հարութ ջան, էլի հազար էրեսիկ քեզի, որ էդպես երազ ես տեսել. աշխարքի հրեղենին ես տեսել, էդ էլ է մեծ չնորհք. ուրիշ մարդիկ էդ չնորհքն ու բախտն էլ չունեին: Լիքը լից, թող թափվի, խմենք քու անգին հրեղենի կենացը:

Հարուքը լցրեց գավաթները պռունկն պռունկ՝ լիքը:

— Հարութ ջան, քու ծովերդ գինի դառնան, քեզի ու հրեղենիդ անուշ օրորելով, նավերդ հարբած մանդան:

— Շնորհակալ եմ, Ուսուս ջան, միայն առանց էնոր չեմ կրնա ապրի. ես պիտի վնասեմ էնոր, հուր-հավիտյան, մինչև վերեզման, օրթե չէ կխնդրիմ, նորեն սարերը կընկնիմ, օրթե չէ կմեռնիմ. ա՛խ, Կարո ջան, դու չես կրնա ինձի հասկանալ. լից, լից նորեն խմենք հրեղենիս կենացը:

— Հարութ ջան,— խորապես ցաված սրտով ասաց Կարոն,— չա՜ս մի տխրի, հույսդ էլի իսկի մի կորի. դու չգիտե՞ս, որ սրան սիրտ ճամբա կա. քու սրտի լացը, կարոտը կհասնի Հրեղենի սրտի ականջին. ո՞վ դիտե, թե էս պայծառ աստղը, որ հիմի քեզի կնայե, Հրեղենիդ աչքը չէ, էս անուշ հովը, որ կշնկշնկա ծաղիկների մեջով, Հրեղենիդ շունչը չէ, որ քովդ է եկել, Հարութ ջան, [քեզի բարև է բերել. Ու քու բախտն էլ կառնի, կտանի] ի՞նչ իմանաս, աչքիս լույսը:

Հարութը հոգով, ուշքով լսում էր:

— Հարութ ջան, ի՜նչ իմանաս, արդյոք Մարա ծովերեն եկող էս բարակ քամիները չե՞ն, որ կբերեն քեզի էնոր վարդի հոտը. մեր սինոռի սալած ճամբեքով անցնող քարվաննների անուշ դնգոցը չէ՞, որ Հրեղենիդ [կողմեն] բարևները կբերե քեզի, [ու կանցնի ջադացիդ վերևով ու] բարևներդ հետը տանելով:

— Կարո ջան, ես էլ շատ ժամանակ էդման Հրեղենիս քովս կզգամ. էդոր համար էլ հույսս չեմ կտրել. ա՜խ, մեկ-մեկ էլ կհուսահատիմ, մտածելով թե՝ թիթեռնիկը օրթե սիրահարվի հետու աստղի վրա, ու թռնի դեպի աստղը. կրնա՞ հասնի, իսկի հնա՞ր է, ես էլ — նմին նման, Հրեղենս աստղ երկնաց, ես խեղճ թիթեռնիկ...

Ուստան չանում էր Հարութին մխիթարել և հույս ներշնչել. մյուս կողմից էլ ցավում էր, որ փափագած քեֆը պլուխ չեկավ՝ խանգարվեց մի կողմից սուտի ու ճշմարտի մասին ավելորդ խոսք լինելով, մյուս կողմից էլ Հրեղենի մեջն ընկնելով. փորձեց խոսքի նյութը փոխել.— Հարութ ջան, [լից խմենք] ականջ էրա, չոնգուռս պիտի ածեմ, էլա մեկ դու էս քառճիկը կեր, կրծքի էս ճերմակ միսը. ի՞նչ լավն է. թիթու խիարն էլ վրան տապկրու, տո, ինձի նայե, դարդս ո՞րն է, քեֆ արա, էսօր կանք, վաղը չկանք:

Հարութը մեքենաբար հնազանդվեց Կարոյին: Մի պահ եղավ, որ երկուսով էլ լուռ էին և խոհուն, մտքի մեջ ընկած, ջաղացն էր քաղցր ու մեղմ չխկչխկում և [առավակն էր] գետակն էր գիշերվա անխոս լռության մեջ բարձրահնչուն խոխոջում, [երբ և ծղրիդն էր դեռ մերթ մերթ] ծղրտում:

— Տեսնես ի՞նչ կասե էս առուն,— ասաց Կարոն,— իմ չոնգուռիս ձենից քաղցր կխոսի, ի՞նչ դարդ ունի, ի՞նչ կարոտ ունի, որ մի դլուխ կխոսի, կխոսի...

— Բա էս [ծղրիթը] թռչնիկը, չես իմանա՝ հոլիկիս ո՞ր ծակեն գիշերը մինչև լույս ինձի բան կասե, ու չի հոգնի[1], մեղնեն չա՛տ կխոսի, տե՛ս... [ծղր, ծղր, ծղր]

— Հարութ ջան, էդ իր յարի անունն է, որ մաքեն չի քցե, կասե ու չի կշտանա:

— Կարո ջան, ի՛նչ սիրուն կխոսիս, մարդու սրտեն կխոսիս:

— Էդպես է, Հարութ ջան, լից խմենք, էս էլ հավասարական բոլոր սիրուն կնիկների կենացը. կնիկը լավ բան է, վարդաջրի անուշ շատրվան է, մեղրի աղբյուր է, Հնդաքուշի գինու հնձան է...— և գավաթը գարկեց Հարութի գավաթին:

— Ջէ, Կարո ջան, սարսափելի բան է կնիկը ու ավելի սարսափելի բան է կնկա սերը. Սողոմոն իմաստունը կասե՝ որ սերը մահի չափ հզոր է, կհասկանա՞ս, անհաղթելի մահեն հզոր է:

— Կհասկանամ, Հարութ ջան, կերածս հաց է, խոտ չէ, կհասկանամ ու քու Սողոմոնիդ էլ սխալը կշիտկեմ. սերը մահից հզոր է, ինչու որ մահը աշխարքը դարդակում է, սերը լցնում մեկել կողմից ու մարդիկ մեռնողներից շատ

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է Հայտնի:*

կաճեն... սերը մահի չափ որ հզոր չըլներ, աշխարք չէր ըլնի:

Եվ ձեռքն առավ չոնգուռը ու սկսեց թրթռացնել բարակ լարերը. Հարուքը հարբած, մի քիչ խզած ձայնով երգեց.

Մերս ինձի բերել է,
Նշխուն, բարուր էրել է,
Նշխուն բարուր մեռնեի,
Սիրուդ դերի չըլնեի...

Ուստան էլ իր հերթին՝ [և նվագում էր ձայնակցելով] մի տուն երգեց՝ ձայնակցելով իր նվագին:

Սիրելիս, ես [երկրե երկիր] քարեքար,
Սիրովդ խենթ ու խելագար,
[Ինձ դրել ես կրակի մեջ]
Ինձ դրեցիր կրակի մեջ
Ու ձգեցիր ինձ քարեքար:

Հանկարծ պարտեզի միջից բանձրիկ զնգաց բլբուլի ձայնը. նրան հետևեցին մի ուրիշ երկուսը, և սկսվեց դայլայլիկների մի անուշ ցնցուղ:

— Կարո՞ղ ան, սո՛ւս, չոնգուռդ թող, բլբուլներին լանք, ջա՛ն, ջա՛ն, Հրեղենիս լեզուն է ձեր պստիկ բերանների մեջ, ուտե՛մ ձեզի:

Ուստան արդեն չոնգուռը մի կողմ էր դրել, լսում էր և վերացած նայում: Լուսաբացի մոտ էր. [երկնքի մի կողմը] աղոթարանի կողմը պայծառ էր ու ամպերը թեթև, վարդերն ու ծաղիկները, ծառները գլուխները թեքել էին լույսի կողմը, դիտակցաբար սպասելով կենսատու արևին:

Մի բարակ, մի քիչ ցուրտ հով սուրալով գալիս էր ձորի վերևից: Ուստան դադարեցավ.

— Հարութ ջան, առավոտ է, ել պատկենք, չա՜տ խմեցինք, խոսեցինք. գադար առնենք մի քիչիկ:

— Դու քնի՛ր, ես գարմուն կմնամ, բլրուլներին լսեմ:

— Հարութ ջան, չի բլնի, /վրաններս էլ ույժ/ վրաս ուժ չկա, քեզի էլ մենակ չեմ կարող թողնի. վախնամ քնով ըլնես ու վրադ բաց՝ մրսիս, պատկի՛ր, անկողնուդ մեջնեն էլ՝ կլսես:

— Լավ, ել պարտեզիս մեջ մեկ պռուտ աննենք, գանք քննենք:

Ուստան համաձայնեց. և երկու սրտակից բնկերներ՝ դունատ ու /քնահատ/ քնատ դեմքերով, հոգնած ու հարբած աչքերով՝ իրար թև-թևի չրջում էին ցորապատ անկերի վրա[1]. ձորի հակա բարաժայռերի սուրուլիկ ծայրերը կարմրել էին, արևը դեռ չէր երևում. թռչուններըլ՝ գարթնած ու զվարթ՝ իրենց թաքստոցներից դուրս էին ելել, ճոխողում էին ու թևերը ներկում արևի ոսկի ցնցուղի մեջ:

— Կարս ջան, նայի՛ր,— մատով ցույց տվեց Հարութը օդում թևոտ թռչուններին,— արդյոք Հրեղենիս երազներն ու կարոտները չե՞ն, գլխուս վրա էսպես կպարտին...

— Հա՛, Հարութ ջան, հա՛, իսկ և իսկ:

Եվ Ուստան Հարութին, ասես, զրկելով, կամաց-կամաց տարավ հոլիկը. ուժով պատկեցրեց թախթի վրա, ինքն էլ նրա կողքին: Ուստան խոսուն քննց. Հարութը մի ժամանակ դեռ արթուն էր, նա հոգին բլրուլների ձևնին տված խոսում էր ինքն իրեն. «Ա՛խ, էս բլրուլների հետ թռնեի, երթայի Հրեղենիս քով», մինչև որ քունը փակեց նրա աչքերն ևս:

---

[1] *Վերին լուսանցքում՝ մատիտով. «Այստեղ ամպերին կպարևև.— է՛ ամպեր»:*

<ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹԻ>

Հարութը Տիկոռի Տերտերանց հարուստ, անունով ընտանիքի պապական էր: Այդ ընտանիքի պլուխն էր դյուզպապաում չա՛տ հարգված Տեր-Սահակը, Հարութի հորեղբայրը, [նա] որն ուներ չորս որդի և ամուսնացած երկու աղջիկ: Հարութը մեկուճար էր. նրա հայրը՝ Հակոբ ապան՝ վաղուց էր մեռել, պատանի Հարութի վրա այդ վաղահաս մահը չա՛տ տխուր և խորին ազդեցություն էր թողել. նրա մայրը՝ խեղճ ու կրակ Մարիամը, մխիթարված էր միմիայն Հարութով: Նրա փոքր հորեղբայրն էր Վարդան ապան, որն երեք որդի աներ, երկու աղջիկ: Այս բազմամարդ ընտանիքը, որ լիքն էր հարաններով և երեխաներով, միասին էին ապրում, նահապետական սովորույթներով. չա՛տ սիրով ու հարգանքով իրար հանդեպ: Ամբողջ ընտանիքը մեծ դուրդուրանքով էր վերաբերվում դեպի Հարութը, իբրև որբի ու միակ ժառանգին՝ հիշատակ մնացած իրենց մեռած սիրելի եղբոր ու հորեղբոր: Երևի այդ սիրալիր վարմունքի պատճառով էր, որ Հարութի մեջ զարգացել էր քնքուշ և շուտ վիրավորվող մի սիրտ. այսպես ասած՝ ապան մեծը թե փոքրը երես էին տվել նրան, և նրա ամեն մի իղձը կատարում էին:

Տերտերանց տոհմի մեջ քահանայությունը ժառանգական էր չա՛տ հին ժամանակներից. սերտերները իրենց կենդանությանը իրենք էին ընտրում իրենց հաջորդը, որին ամենահարմարն էին տեսնում՝ համաձայն այդ հին տոհմի ավանդական սովորույթին: Հարութը մանուկ հա-

սակից գրավեց Տեր-Սահակի ուշադրությունը իր խելացիությամբ ու ուշիմությամբ, և ընտրությունը կատարվեց Հարությի վրա. արդեն պատանի օրերից Հարությի վրա նայում էին թե ընտանիքը և թե գյուղը իբրև ապագա քահանայի վրա: Տեր-Սահակը [որ] գյուղերի քահանաների մեջ «բանիբուն, ուսյալ» քահանայի հռչակ ուներ, 55-ի մոտ [տարիք ուներ] տարեկան էր, կրթությունը առել էր իր պատանի հասակում, Ս. Էջմիածնում, մի նշանավոր եպիսկոպոսի մոտ, միաժամանակ ժառանգավորաց դպրոցում, լավ գրաբար գիտեր, Աստվածաշունչին, հայոց մատենագիրներին, Զամչյանի հայոց պատմությանն ու քերականությանը հմտորեն տեղյակ էր՝ ձեռք զարկեց Հարությի կրթությանը: Հարությն էլ ամենայն եռանդով և ուշի-ուշով արձագանք տվեց տեր-հոր թափած ջանքերին: Արդեն 21-22 տարեկան էր նա, որ դրեթե ծայրեծայր կարդացել էր տերտերի գրադարանը, ուր կային Զամչյանի [երեք] հատորները, Խորենացի, Փարբեցի, Ագաթանգեղոս, Եղիշե, Եղնիկ, Վարք Սրբոց, [Թ. Գեմբացու Նմանողություն Քրիստոսի] Թ. Գեմբացի. «Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի», Դավիթ Անհաղթ փիլիսոփան, [Ս. Գրքի մեկնությունները]: Աստվածաշունչ, ժամագիրք, Մաշտոց, Շարականներ, Այամավուրք, և այլն, ծիսական ու եկեղեցական գրքեր նա մի քանի անգամ էր կարդացել, ու չա՛տ բան անգիր գիտեր, օրինակ՝ եկեղեցու արարողության վերաբերյալ նյութեր և մանավանդ Սողոմոն իմաստունի առակները, ժողովողը, Երգ երգոցը:

Առավոտ-երեկո տերտերի հետ եկեղեցի էր գնում, և օրվա մեջ մի քանի ժամ անցկացնում էր տերտերի հետ. և նա էլ օրհնության ու զուտասանքի խոսք չէր գտնում Հարության կրոնասիրությունը, երկյուղածությունը, աշխա-

տասիրութիւնը չափելու համար: Համագիւղացիք չա՛տ սիրում էին Հարութին և հարգում. «Գառի պես տղա է տիրացու Հարութիւնը,— ասում էին նրանք,— Սուրբ Հոգու չնորհքը վրան է, Աստված պահե»: Ոչ ոք Հարութի բերանից վատ ու դառն խոսք չէր լսել. ոչ ոք դանգատ չուներ նրանից. ամենքի հետ նա վարվում էր քաղցրութիւնամբ, փափուկ սրտով. նրա կեանքը օրինակելի էր բոլոր պատանիների և երիտասարդների համար. նա ո՛չ ծխում էր, ո՛չ էլ մի կաթիլ խմիչք բերանն առնում, հեռու էր քաշվում վատ տղաներից, որոնք խումար էին խաղում կամ աղջիկների հետևից ընկնում: Նրա օրն անցնում էր դրքերի մեջ՝ ընթերցանութիւնամբ, եկեղեցում սպասավորելով. ամեն ծոմ ու պաս պահում էր և դեպք չէր եղել եկեղեցուց բացակայելու:

Հարութի սիրած տեղը իրենց ջրաղացն էր, ուր նա դասերից հետո՝ գիրքը թևի տակ՝ գնում էր, ծառների տակ առանձնացած կարդում էր ու մտածում, և երեկոյան դյուղ դառնում ժամասացութեան համար: Նա դրեթե երբեք չէր զբաղվում դյուղատնտեսական գործերով. մեկմեկ ջրաղացում եղած աւենը օգնում էր ջաղացի բանվորներին, կամ պարտեզում աշխատում էր, այն էլ միայն երբ հոգնում էր կարդալուց կամ մկաններըը չարժում ու գործ էին պահանջում: Ընդհանուր առումով նա լուրջ, սակավախոս, տխուր տղա էր:

Թեև առաքինի Տեր-Սահակը միշտ ներշնչում էր Հարութին, թե քրիստոնյան պիտի նմանի Քրիստոսին և շարունակ խորհուրդ էր տալիս կարդալ ու կարդալ «Նմանողութիւնն Քրիստոսի», սակայն Հարութը այն կարծիքին էր, թե անկարելի է նմանվել Քրիստոսին, որովհետև նա Աստվածորդի է՝ աստվածային կերպով կատարյալ ամեն վեհ բանի մեջ, ինչպես և բացարձակ անկարելի է

նմանվել Աստծուն, որպես ուսուցանում է Դավիթ Անհաղթը թե՝ «իմաստասիրութիւն է նմանութիւն Աստծոյ բոլ կարողութեան մարդկան», սակայն ավելի հնարավոր է, և մարդկայնորեն կարելի, նմանվել Սողոմոն իմաստունին, ամենաիմաստուն և կատարյալ մարդուն բոլոր մարդկանց մեջ. քանի որ Սողոմոնը մարդ է եղել, ուրեմն ուրիշ մի մարդ էլ կարող է Սողոմոն լինել, գոնե մի քիչ պակաս, բայց ոչ մի մարդ չի կարող Աստված լինել: Այսպիսով Սողոմոն իմաստունը [զարձել էր Հարութի կաղապարը, ձգտում էր նրան նմանվել/ զարձավ Հարութի տեսակետով մարդկության համար կաղապար, որին պետք է ձգտել նմանվելու, նրա վրա ձևվել. և այս ձգտումը դրեթե եղավ նրա ճակատագիրը: Մինչև 21-22 տարեկանը դրեթե չէր հետաքրքրվում կանանցով. երբ աղջիկները նրա երևան էին նայում, նա նորահարսի պես ամաչկոտ, աչքերը վար էր ձգում և կաս-կարմրում. սակայն կամաց-կամաց սկսեցին նրա հոգում քնած զգացումները զարթնել, և Հարութը թե նկատեցում, թե դուրսը սկսեց աչքի ծայրով հետևել աղջիկների սովերներին, և հետաքրքրությամբ կարդում էր Աստվածաշնչի այն էջերը, ուր խոսվում է սիրո մասին և սիրային պատկերներ ներկայացվում. ամենից շա՜տ սիրում էր կարդալ «Երգ երգոց»: Մի օր էլ. երբ նա ջաղացի պարտեզում, առվակի ափին, պառկել էր ծաղիկների մեջ սովրաշատ ծառի տակ, կարդում էր հարյուր անգամ կարդացած «Երգ երգոց», թռչունները երգում էին նրա գլխի վերևը, այնպես ա-նո՛ւշ, ասես, «Երգ երգոց» անուշ խոսքերն էին թոթովում. Հարութը գիրքը ծալեց, դրեց գլխի տակը, աչքերը փակեց [և ուզում էր պատկերացնել իր հոգու առջև գեղեցիկ ու մանկատի Սոմնացին, որ կարողացել է հափշտակել սիրուց հագեցված Սողոմոնին, որ հազար

կին է վայ<ել>ել:[1] Տարված սպարթի օրորուն ու քնաբեր շրշյունով, թռչուննների երգով և իր մտքերով, քուն մտավ Հարութը, և մեկ էլ ահա՝ երևցավ մի շա՛տ գեղեցիկ աղջիկ. հազար անգամ գեղեցիկ, քան Սոմնացին, լուսաշող երեսով, վարդեր հագած, անուշ ժպիտով, մի հրեղեն աղջիկ. մոտեցավ Հարութին այնքան, որ Հարութը հազիվ թե հասներ նրա գեղյուռի պես շղարշներին, Հարութի շրմունքներին մի ոսկի թաս մոտեցնելով՝ դրախտի թռչունների ձայնով ասաց.— «Լսմի՛ր, Հարութ ջան, գիտե՞ս ես ով եմ, ես [կամ] եմ մենակ — [ես եմ ճշմարիտ] հաստատ բանը»: Հարութը մի կումով խմեց անմահական խմիչքը, և վայրկյանի մեջ հարբած՝ ձեռք մեկնեց, որ բռներ Հրեղեն աղջկա բազուկից. աղջիկը մի քանի քայլ հեռացավ և ասաց.— «Հարութ ջան, կրակով պիտի փորձվի սերը. մնաս բարով, ինձ մի՛ փնտռիր ծաղիկների, աղջիկների, եղնիկների մեջ, [կարելի է գտնես] չես գտնի, ինձ փնտռիր երազների մեջ», ասաց և անուշ ժպտելով թռավ վե՛ր, վե՛ր և [երապի] լույսի, բույրի, երգի պես ցնդվեց ու ցնդվեց: Հարութը ապշած նայում էր նրա հետևից, պապանձված էր, խոսք չէր կարող խոսել, ու կայծակով զարկվածի պես ընկել էր մեջքակոտոր, գետնին. երբ Հրեղենը իսպառ անհայտացավ, Հարութը կսկծուց ուշաթափվեց... Եվ երբ զարթնեց, արդեն երեկո էր. մոլորված ու չփոթված պառկել էր նա և չէր կարողանում շարժվել. շրմունքների վրա դգում էր անմահական խմիչքի համը. անուշ ձայնը թրթռում էր դեռ ականջների մեջ, աչքերը դոցեց՝ նորից նրան տեսնելու համար, բայց դուր. այդ ցնորուն և մոլորուն դրության մեջն էր, երբ

---

[1] Ձախ լուսանցքում, ուղիղ փակագծերում առնված հատվածի կողքին հեղինակը դրել է. «Ուրիշ տեղ»:

լսեց երեկոյան եկեղեցու զանգերի հատ ու կտոր հնչյունները. այս առաջին անգամ էր, որ նրա սիրտը չճգտեց ժամ գնալ. նորից պառկած մնաց, մինչև ստվերները ավելի թանձրացան ձորի մեջ. ապա Հարությը, աչքերը տրորելով՝ ոտքի կանգնեց, և օրորուն քայլերով, կիսաքուն ու կիսարթուն բռնեց տան ճամփան:

Բերանը առանց մի պատառ հաց դնելու, Հարությը մտավ անկողին. առավոտ շա՜տ դժկամությամբ հետևեց տերտերին եկեղեցի. և եկեղեցումն էլ նա աստիճ ցրված էր, չփոթում էր ժամասացության կարգը. [երբեմն] հաճախ էլ մոռանում էր հազար անգամ ասածը, ջրի պես դիտացածը: Տերտերի հարցին, թե արդյոք հիվանդ չէ, Հարությը չպատասխանեց: Տուն դառնալով՝ Հարությը իսկույն չտապեց ջաղաց, և պառկեց այն նույն տեղում, ուր եկել էր տեսիլը, աչքերը գոցեց՝ ականջը թռչունների երգին, հուսալով նորեն տեսնել Հրեղենին, բայց նորեն զուր. այս դիշեր և հաջորդ երեք դիշերները Հարությը գյուղ չիջավ, մնաց ջաղացում, առավոտից մինչև ուշ-դիշեր նույն տեղում՝ [հաճախ] աչքերը գոց, երբեմն էլ հայացքը աստղերից աստղ հածելով, ինքնիրեն մրմնջուն.— «Տեսնես հիմի ո՞ր աստղի վրա է Հրեղենս...»:

Ջաղացի ծառաները ուժով նրան զարթնեցնում էին ու բերում ջաղացի սենյակը հաց ուտելու համար, և նրա փակված ախորժակը բանալու համար ջաղացպան վարպետը մի-երկու բաժակ օղի էր տալիս, ճաշից հետո էլ ծխախոտ էր հրամցնում ասելով. «Քաշե, Հարությ ջան, սիրտդ բացվի. մուխի հետ դեչ մտքերդ դուրս կելնեն կերթան»: Այնուհետև Հարությը փախնում էր տնից ու ժամից, դալիս էր ջաղաց, պառկում էր այնտեղ, Հրեղենին տեսնելու տենչով և ապա գնում էր վարպետի մոտ, արաղ էր խմում, որը սկսել էր նրան դյուր գալ, որովհետև կրա-

կում էր արյունը, և ապա տաք ու անուշ թմրություն էր բերում վերան, [որ դեռ] որով ավելի դյուրությամբ ընկ-նում էր երազանքի գիրկը:

Մի անգամ ամբողջ մի շաբաթ մնաց ջաղացում. տեր-տերն ու մայրը քանի անգամ խնդրեցին, սպառնացին, որ տուն գա, եթե հիվանդ է պառկի, Հարությը չհամաձայ-նեց, ապա նրան գրեթե ուժով տուն տարան, և որովհետև կարծում էին թե՝ ծառների տակ պառկելով, մրսել-հիվան-դացել է, տաք թեյ խմցրին, ծածկեցին, որ քրտնի, բայց Հարությը թեյի փոխարեն արաղ ու ծխախոտ էր ուզում, երբ չկատարեցին նրա պահանջը՝ դիշերով փախավ ան-կողնուց և գնաց ջաղաց. այնուհետև Հարությը ո՛չ եկեղե-ցի էր գնում, ո՛չ տան երես տեսնում. գյուղում ընկերներ գտավ, որոնք ծխում էին ու խմում, ընկերացավ նրանց հետ:

Հրեղենին տեսնելուց հետո բոլորովին փոխվել էր Հա-րությի հոգին. նա սիրահար էր, սիրով հարբած, գիննհար. իսպառ լքել էր գրքերն ու եկեղեցին. թափառում էր սա-րերն ու ձորերը, ամեն ծաղիկի աչքի մեջ նայում, (ամեն ծաղիկի բույրը ծծում, ամեն թփի տակ պրպըտում էր Հրեղենին գտնելու համար. գնում էր Ալճա – Առիճ լե-ռան հետու, բարձր կատարները, իջնում էր խոր փապար-ները, մացառուտների մեջ թաքչում, եղնիկներին գտնե-լու իղձով. սակայն ապարդյուն, որովհետև չա՛տ հազ-վադյուտ են եղնիկներն ու այծյամները այս սարերում, որոնք պատահելիս էլ ծլկվում էին նետի պես, նման Հրե-ղենին, որ երևեցավ ու մի վայրկյան հետո չքացավ... ա-պա)[1] գետերի[1] ափում, ճանապարհների վրա, հանդերը

---

[1] Փակագծերի մեջ առնված հատվածի կողքին՝ ձախ լուսանցքում, հեղինակը սև մատիտով հարցական նշաններ է դրել:

բանջար քաղելու եյած աղջիկներին մտանում էր, երեսներին նայում, նայում, հուսալով թե՝ մի դուցե նրանց մեկն ու մեկի մեջ, պատահարար, իրեն ուված խոստումի համաձայն, մարմնացած լիներ նրագի աղջիկը: Սակայն [նորից] ապարդյուն:

Հրեղեն աղջկա անսահման կարոտից և անհատանելի սիրուց Հարությի հոգին օր-օրի վրա ավելի բորբոքվեց ու կատաղեց, ալեկոծվեց ու խենթ ու խելառ ձևեր առավ. օրերով ծարավ էր մնում, որ գոնե երազում աղջիկը նրան ջուր տա, ինչպես անում են գյուղերում սիրահարները սովորաբար, սակայն նրա չար բախտից Հրեղենը չէր երևում ու չէր երևում[1]:

Տեր-Սահակը խորին վշտով մտածում էր ու նորից մտածում Հարությի հոգու փոփոխության մասին և չէր կարողանում հասկանալ պատճառը. իր ամեն ապրիմքի մեջ խնդրում էր Աստծու ու բոլոր առաքյալների բարեխոսությունը, որ հանդստություն տան Հարությի վրդովված հոգուն, բարի դարձ տան մոլորված ոչխարին: Մի երկու անգամ խոսեց նրա հետ, խրատներ կարդաց, սակայն նա լուռ, անպատասխան լսում էր և հարմար վայրկյան գտնում, դուրս փախչում: Հարությը այսպես երկու տարի շարունակ անանուն սիրով ու կարոտով այրվեց, տանջվեց ու մաշվեց. խմելուց աչք չէր բանում, միակ մխիթարանքը խմելու մեջն էր գտնում: Երկու տարի նա անայլայլ որոնեց Հրեղենին, որը սակայն ո՛չ երազում տես եկավ, ո՛չ աշխարհի վրա մարմին առավ... Հու-

---

1 Ինքնագրում՝ էյուղերի. ուղղել ենք՝ գետերի:

2 *Ձախ լուսանցքում.* [«Երապին չէր գալիս, ինչ անում էր. Դրանից նա կատաղում էր, գազազում. «Թե որ չէր ուզում, ինչո՞ւ հասել եկավ առաջին անգամը...»»]

սահատ էր Հարութը... Իսկ նրա խեղճ մայրը մեկուճար սիրած որդու տանջանքով լուռ տոչորվելով, կռահեց մի օր կանացի բնազդումով, թե Հարութը սիրով զարկված կլինի, և մի անգամ բռնեց նրան ջրաղացի մոտերքը. լալով, մղկտալով խնդրեց, որ ասե, հայտնե իր վիշտը հարազատ մորը, ավելացնելով, որ երեք աչք ունի ձգած մի ոևէ աղջկա վրա, «երկինք-գետինք իրար կխառնենք, քու սերիդ քեզ կհասցնենք. հազար աղջիկ քեզի մատաղ, հողնամ աղջիկների գլուխը, դարդ մի արա, անուշիդ մեռնեմ»:

Այս խոսքերի վրա Հարութը մեղմացած լաց եղավ և ասաց, որ իրեն երազի մեջ սեր են տվել, մի հրեղեն աղջիկ, որ ասել է՝ ինձ փնտռիր, կարելի է գտնիս: Մայրը խրատելով ասաց.— «Երազի աղջիկը թո՛ղ երազի մեջ մնա. շատ կարզացողի վերջը էդպես է, ես քեզի չէի ասի, խելքդ գրի հետ կերթա. դու հանդիստ եղի՛ր, ես քեզի համար հաստատ, աչքի-տեսը, սիրուն, լուսյակ կատր աղջիկ առնեմ, չէ թե երազի միջի զարդակ, սուտ աղջիկ»:

Մայրը խրախուսված այս հայտնությամբ գնաց, տերտերին հայտնեց բանը: Տերտերը լսեց ու հառաչելով ասաց.— Հասկացա, խեղճ տղան սատանոք է եղել. փորձիչ Սատանան, որ զօր ու գիշեր կդատի մարդկանց հոգիները որսալ, տեսնելով Հարութի աստվածապաշտությունը և ուղիղ ճամբով գնալը, դայթակղեցրել է նրան իր աղջկա պատկերը ցույց տալով. Հարութին անպատճառ պիտի ամուսնացնել, որ Սուրբ պատկի կնիկը գա, դուրս քցե Հարութի չարոցք ընկած մաքի մեջեն էն անզգամի աղջիկը: Տեր Աստված, դու հասնիս, ամեն»:

[Այս խոսակցությունից հետո] Տերտերը վճռեց Հարութին չուտով պսակել. հայտնեց սիրուհուն և Հարութի մորը, որ գյուղում աղջիկ նայեն. ինքն էլ հանձնարարեց

իր բարեկամներին, որ գյուղերում հետաքրքրվեն, հարց ու փորձ անեն ապագա՝ տիրուհի լինելու անհրաժեշտ հատկություններով, իրենց տոհմի անունին վայել, մի սիրուն և լավ սրտի տեր աղջիկ գտնեն:

Գյուղացիք բերնե-բերան լսելով Հարութի այս խնդիր փոփոխության մանրամասները, և նրան տեսնելով հանդերում մենակ թափառելիս, ինքնիրան խոսելիս, և մարդկանցից փախչելիս, վճռապես ասում էին թե՝ Հարութը սատանաների հետ է, որ նրանց փեսա է եղել, դիշերները նրանց մոտ քեֆ է անում դավուլ-զուռնայով, խմում հետները, նրանց լկտի աղջիկների հետ պար գալիս, նրանց հետ գնդակ է խաղում, ու միշտ էլ հիմա Սատանի սաղմոս կարդում:

Նույնիսկ տեսնող է եղել, մի պառավ տիկոջի կին, որ Հարութը ծառի տակ պառկած ժամանակ, մոտենում է նրան Սատանան իր երկու տղոց հետ, Սլիկի և Պլիկի: Նրանք գիտնալով Հարութի ժամասիրությունը, մեծ տղան ուզում է զարկել նրան սպանել. բայց հայրը չի թողել՝ ասելով թե, եթե սպանես, հոգին դրախտ կերթա. այնպես մի բան աննենք, որ մոլորվի, ժամի ճամբան կորցնե, գա մեր թաւուին ընկնի: Այս խոսքի վրա Սլիկը արագ է քսում Հարութի ճակատին ու չրթունքին, որ հարբեցող դառնա, Աստծո երեսից ընկնի. իսկ փոքր տղան՝ Պլիկը ցույց է տալիս իր քրոջ սատանայական պատկերը, որ Հարութը նրա սիրով այրվի ու պապակի, և հոգին տա Սատանին իր աղջկա համար:

Վերջապես, տերտերը գտավ մի սիրուն և լավ տնից աղջիկ, Խասգյուղից, Հարութի համար հարսնացու: Համաձայնվեց ամուսնանալ Հարութը, որովհետև հուսահատվել էր ու հոգնել Հրեղենին փնտռելուց և ուզեցավ «կնկա համն առնել», ինչպես ասում էր նա իր մտքի մեջ,

վճիռ կայացնելուս: Ամուսնության առաջին երկու ամիսը բարեբար փոփոխություն մտցրեց նրա հոգու մեջ, Հարությը սկսեց չո՛ւտ-չո՛ւտ եկեղեցի գնալ, և երբեմն էր խմում, տանեցիք բոլորը ուրախանում էին և իրար ասում, ծիծաղելով, թե «դոդնոցը խելք բերեց». իսկ տերտերը փառք էր տալիս Աստծուն, որ գթացավ Հարությի վրա, սակայն այս դրությունը երկար չտևեց:— Մի գիշեր, երբ Հարությը կնոջ հետ պառկած էր, հանկարծ լսեց Հրեղենի ձայնը.— «Ամոթ քեզի, Հարությ, ինձի ուրիշի հետ փոխեցիր, հա՞, հա՞, հա՞...»... Հարությը խենթի պես թռավ անկողնուց և վազում էր սենյակի մեջ այս ու այն կողմը, այս ու այն անկյունում մի բան որոնելով: Այդ դեպքից հետո Հրեղենի սերն ու կարոտը զարթնեց ու տանջեց Հարությին առաջվանից ավելի զորեղ կերպով, դադարեց եկեղեցի գնալ, նորեն իրեն հարբեցողության տվեց. տուն չէր գալիս օրերով ու գիշերներով. երբ տուն էր դառնում, անասխորժ դառն կռիվներ էին տեղի ունենում մարդ ու կնոջ միջև: «Գառի պես տղա էր,— հեծկլտալով ասում էր կինը,— մեկ էլ ի՛նչ եղավ, ի՛նչ չեղավ, կես-գիշերին դիվոտավ, ու էն օրվանեն կխմե, կուգա գլուխս կկպնի, հոգիս էլ չի առնի Աստված, որ պրծնեմ էս տարտարոսեն...»: Եվ լաց էր լինում խեղճ հարսը օր ու գիշեր և իր բախտն անիծում, մանավանդ որ հղի էր արդեն և հիվանդագին կերպով ջղայնացած, չարունակ խանդում էր Հարությին և նրանից սեր ու համբույրներ էր պահանջում, մի բան, որ սարսափելի կատաղեցնում էր ու դիվահար դարձնում Հարությին, իսկույն գլուխն առած դուրս էր փախչում կնոջ փաղաքշանքներին չենթարկվելու համար, փախչում էր այս ու այն ընկերի մոտ. խմում, հարբում, կամ գնում էր Ծպնի, քեռանց տանը պահվում, և կամ ավելի հաճախ գնում ջրաղացը, այն ճակատագրական տեղի վրա բե-

բանքսիվար հարրած ընկնում և Հրեղենին սպասում կա-
րոտով, կարոտով:

Մինչ այդ Հարութի թշվառ կինը ծնունդի վրա մեռավ չուզենալով [նույնիսկ] Հարութի երեսը նույնիսկ վերջին անգամ տեսնել. մեռավ խեղճ կինը մի երեխա թողնելով. այս ահավոր դեպքը անկշռելի վշտով ու տանջանքով լցրեց Հարութի սիրտը, որ ընականից չա՜տ փափուկ էր ու կարեկցող: Նա թեև, իսկապես չէր սիրում իր կնոջը, բայց չա՜տ էր խղճում նրան, իսկ մահը, որի մեջ Հարութը իրան մեղավոր էր համարում, չափազանց գազազրեց ու հուսահատեցրեց նրան: Այլևս անկարելի էր Հարութին տունը դանել. իր որբ երեխայի լացի ձայնը չլսելու համար նույնիսկ դյուղ չէր գալիս, կամ ջրաղացումն էր անցկացնում, կամ քեռանց տանը, կամ սարերում ու ձորերում, հաճախ անոթի-ծարավ: Եվ վերջապես խղճի խայթն ու իր դժբախտ կյանքի ծանր ցավերը մոռնալու համար նորից դիմում էր կամա թե ակամա կերպով խմիչքի: Հարութի ընտանիքի սիրտը լցվում էր կրակով, երբ տեսնում էին նրան այս ողբալի վիճակի մեջ. խեղճ մայրը ամեն շաբաթ մատաղ էր անում այս ու այն սրբի անունով և գանազան վանքերի դուռը մաշում լալով ու հեծեծանքով, որ Աստվածային ուժերը մի ճար անեն Հարութի կորած հոգուն, սակայն Հարութը օր-օրի վրա վատանում ու վատթարանում էր. դյուղացիք, երբ հանդիպում էին նրան սարերում կամ ձորերում, խրատում էին, բայց նա հայհոյում էր թե նրանց, թե Աստծուն, և թե՛ Սատանային: Այսպիսով դյուղացիք նրան սկսեցին վերակոչել «Չիք Հարություն դավանող Հարութ» կամ պարզապես — «Չնչհավատ»:

Լուրը հասավ տերտերի ականջը, թե Հարութը Աստծուն հակառակ բաներ է խոսում. տերտերը այս գույժի

տակ բոլորովին վհատվեց, թե այլևս Հարությի համար ընտավ փրկություն չկա, որի կրթության վրա նա տարիներ աքնեց, և ամեն ինչ հիմա դուր կորավ. վճռեց, ինչ էլ որ լինի, մի անգամ լուրջ խոսի նրա հետ. այնպես արեց, որ մի օր երբ Հարությը չրաղացն էր, սենյակում, տերտերը նևրս մտավ, դուռը փակեց և Հարությի ձեռքը բռնելով, անհուն դորովով նայելով աչքերի մեջ ասաց.— Որդիս, աչքիս լույս Հարություն, դա գիտես, որ ես քեզ մեր անոցիցն ամենեն չա՞տ կսիրեմ. ինչո՞ւ կուտանջես թե մեզ, թե քեզ. մորդ միակ մխիթարանքն ես, և հորդ միակ հիշատակը. գլուխդ հավաքիր, մի խմի՛ր. ափսոս էդ քու խելքին, չնորհքին, ուսումին, դոնե խղճա քեզի: «Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ տրտմութիւն է մօր»:

Հարությը գլուխը կախ՝ լուռ մնաց:

— Որդիս, կլսեմ, թե դուն Աստծուն հակառակ կխոսիս. այդ էր պակաս. փոխանակ որ Նրան խնդրես, աղաչես, որ քեզի դարձ տա, դու դեղացոց ասել ես, թե Նա չար է. ու չես վախենա, որ տեղն ու տեղը քեզի կայծակով զարկե: Սատանան ինքը կխոսի քո բերանովդ, Սատանան ինքը, մնծը:

Հարությը պատասխանեց՝ աչքերը կախ ձգած՝ որովհետև միշտ ակնածում էր տերտերից և չէր համարձակում վատահ խոսել:— Ի՞նչ կասկած, որ նա չար է. ինքդ ասիր, թե կպատժե. օրթե բարի ըլնի, չի պատժե: Սատանա չկա, Սատանան էլ ինքն է, Աստված...

— Լռի՛ր, անզգամ,— բղավեց տերտերը բարկացած, ապա մտածելով, որ բարկությամբ նպատակի չի հասնի, խրատելը կընդհատվի, դինվեց համբերությամբ և սկսեց մեղմ ձայնով.— Որդիս, դու լավ գիտես, որ Տեր-Աստված չի ուզեր մեղավորի կորուստը, հապա նրա ղղջումը. տես,

ինչքա՜ն բարի է Աստված: Արդ, դու ի՞նչպես կասես, թե Սատանան (մեղա քեզ, տեր) Աստվածն է. դու չգիտես, որ Սատանան Աստծուն ներհակ է, և որ Աստված սատանին ստեղծեց մարդկանց փորձելու համար:

— Տերտեր, դուք կասեք, թե՝ Աստված ամենագետ է, կանխագետ, ամենակարող, ամենաբարի, ամենազորութ, ամենողորմ...

— Հավատամ և խոստովանիմ:

— Լավ, օրթե էդպես է, ինչո՞ւ է ստեղծել փորձիչ Սատանային, ինչո՞ւ է ստեղծել չարն ու մեղքը:

— Ամենաբարի Աստված չէր կարող չարը ստեղծել. և չի էլ ստեղծել. երևացող չարը բարի նպատակի համար է ստեղծել՝ մարդուն փորձելու համար:

— Օրթե նա կանխագետ է, պիտի գիտենա, կանուխեն, շա՜տ-շա՜տ հառաջուց, որ էս ինչ մարդը փորձության կդիմանա, թե չէ. մի՞թե նա չգիտեր, որ Եվան պիտի խաբվեր. ինչո՞ւ փորձեց, ինչո՞ւ կխաղա մարդու հետ:

— Հապա ի՞նչպես կուզեիր, որ Աստված ստեղծեր. դուն ասա, հետո ես կասեմ, մեկ միտքդ իմանամ:

— Օրթե Աստված ամենակարող է, թող մարդուն ստեղծեր էնպես, որ մարդը իսկի չդայթակղվեր, փորձությանը հաղթեր:

— Կտեսնես, որ խելքդ բանի չի հասնի. էն ժամանակ մարդը մեքենայի պես կլիներ, իսկ Աստված մարդուն ստեղծեց անձնիշխան, ազատ կամքով, բանականությամբ. մարդու հոգու մեջ դրեց կշեռք, որ մարդ մտածե, կշռե, դատե, ու ազատ, հոժար կամավոր ընտրությամբ ու խելքով չարն ու բարին ընտրե, իրարուց զատե: Եվ Աստված այնքան ողորմած է, որ մարգարեների բերանով մարդկանց հայտնեց օրենքներ ու պատվիրաններ, կրոն ու Սուրբ Գիրք տվեց, իր միածին իսկ որդուն ղրկեց աշ-

խարհ ճշմարտության բանը քարոզելու... մարդկանց կմնա մենակ լսեն այդ օրենքներին ու ճշմարտության բանին, և իրենց կյանքի ճանապարհը երթան նրանց ցույց տված համաձայն:

Տերտերը նայեց, որ Հարությը ուշադիր լսում է, քաջալերված չարունակեց քթախոտը քաշելով.

– Այդ ճանապարհը երկնային է, կտանի մարդու հոգին հավիտենական արքայությունն. իսկ հակառակ ճանապարհը Սատանայինն է, որ կտանի հուր-հավիտյան դժոխք, ուր լալ կա և կրճտել ատամանց: Դուն անմիտ ես, ու քեզ իմաստուն կկարծես:

– Տերտեր,– հարցրեց Հարությը,– ես չեմ հասկանար. չէ որ դրած է, թե ինչ որ կկատարվի տիեզերք-աշխարքի մեջ՝ Աստծո կամքով կկատարվի:

– Այո՛, մեր գլխի մաղն իսկ առանց նրա կամքի վար չի ընկնի,– հաստատեց Տեր-Սահակը:

– Օրթե էդպես է, ուրեմն Աստծո կամքով է, որ մարդկանց մեկ մասը դրախտ կերթա, մեկել մասը՝ դժոխք. ի՞նչ մեղավոր է էն մարդը, որ թուլլ կամքով է ծնվել, չէ՞ որ Աստված նրան էդպես է ստեղծել, ու չի կարող հաղթել Սատանային. իսկ ի՞նչ իրավունք ունի դրախտ դնացողը, որին Աստված ամուր, հաղթող կամք է տվել, Աստծո ձեռքն է մարդկանց դրախտ կամ դժոխք տանելը. էդպես, օրթե ամեն բան Աստծո կամքեն է կախ, օձը մեղավոր չէ, որ թույն ունի. գայլը մեղավոր չէ, որ գառ կուտե. թյուրքը մեղավոր չէ, որ հային կմորթե, թող Աստված թույն չստեղծեր, թող թուրքին մարդու պես ստեղծեր:

– Ջէ՛, տղաս, Աստված ամենաբարի Հայրն է մեր. նա ստեղծել է աշխարքը մարդու վայելքի և բարիքի համար. չար Սատանային էլ Աստված տվավ այս երկրի իշխանությունը, նորեն կասեմ, որ լավ հասկանաս, որ փորձե

մարդու հաստատամտություն, հավատի ամրություն, հնազանդություն Աստվածային օրենքներին, ու էդպես-սով բարի հավատքով մարդը կհաղթանակե չարի վրա. էնպես որ չարը բարիքի համար է, բարի Աստված չար բան չի ստեղծել: Աստված էլ թյուրքին ստեղծել է հայու հավատքը փորձելու համար: Որդիս, հավատա՛, և կապրիս, հավատքը կփրկե մարդուն. հավատա՛ ու մի քննիր Աստծու գործքերը, դի անքննելի, անիմանալի են նոքա:

— Տերտեր, խելքիս չի նստի, չեմ կարող հավատալ,— հուսահատ ձայնով ասաց Հարությը,— դու կասես՝ չար բան չկա. երևացող չարը բարիի համար է ստեղծել, ինձի էնպես կերևա, թե չարն է հաստատը, բարին երևցողը: Մի՞թե բարի բաներ են տանջանք, [անօթություն] հիվանդություն, ցավ ու սով. մահ և սպանություն, օրթե Աստված բարի է, ինչո՞ւ ստեղծեց կատուն՝ մկին դահիճ, մարդը մարդուն խաչող, բարի հայրը ինչու ստեղծեց մահը, որ անխնա, անխիղճ կերպով կսպանե, կսպանե մարդուն, [մնծ ու փոքր] մնծ ու պստիկ: Սատանին ըրկեց, որ մարդուն խաբելով կերցնե չարի ու բարու գիտության ծառի պտուղը, որ մարդ բան իմանա, անբախտ ըլնի ու մեռնի. իսկ հրեղեն սրով արգելեց, որ չուտեն կյանքի ծառից, որ անմահ մնան, էդպես հորը ես բարի չեմ ասի:

Տերտերը այլևս չհամբերեց, կտրեց Հարությի խոսքը.

— Դու նզովված հերետիկոս ես, Սատանան մեջդ բուն է դրել. դժոխքական ես դարձել. նորեն կասեմ, խելճ ես, ղղյա՛, մեղքերդ լաց ու քավե. Ստեղծողը կներե, Սատանայի ճանկից կազատվիս: «Սկիզբն իմաստության երկիւղ տեառն է», դու էդ երկյուղը կորցրել ես. կհամարձակիս Ամենակալի գործերը քննել. նախախնամության դեմ քո փուչ ունայնամտությունը կբանեցնես, վախեցիր Նրա ահեղ բարկությունից, դու ո՞վ ես որ. որդ, ճիճու

ոչնչական, հին ժամանակ քեզնից հազար անգամ մեծ ու խելոք հսկաները լեռները լեռների վրա դրին, որ հասնին երկնքին ու Աստծուն սպանեն. նրանց պետը ելավ դիզված լեռների վրա ու նետն արձակեց երկնքի խորքը, նետը դնաց, դնաց և ապա ետ դառավ, եկավ խրվեց ամբարտավան հսկայի սրտի մեջ, սատակեցրեց ու գլորեց դժոխքի խորքը ամբարտավան հսկային... Դուն ո՞ւր կմնաս, ծունկի արի, հավատամք ի մի Աստուածն, ասա Հրաժարիմք ի Սատանայեն, ասա, երթանք եկեղեցի, լա՛ց-որոտա՛, որ նորից հավատացյալ դառնաս, ապրիս...

— Ջուր է,— ասավ կտրուկ Հարությը,— ես չեմ հավատա Աստծու բարությանը. նրա բարությունը չեմ տեսել. ես տեսել եմ մինչի հօր, որ չարն է աշխարքի տերը, ապրողը գրկողն է, եղկել, մեռնողը՝ խեղճը, գրկվողը. ինչո՞ւ Աստված մեր աչքի առջև չի պատժի չարին, սպանողին. կամ օրթն չի կարող չարը ջնջել, կնշանակե ամենակարող չէ, օրթն կարող է ու չի անն, կնշանակե՝ չար է, (օրթն Աստծո կամքով՝ մեղավորն է պատժվողը, ուրիմն հայն է մեղավոր, թուրքը՝ արդար.) ես չեմ կարող էդպես Աստծուն բարի ասել...

Տերտերը զարհուրած խաչականքում էր երևսը և թախանձանքով ու դայրույթով պահանջում էր, որ Հարությը «Հավատամքն ու Հրաժարիմքը» ասե:

— Ջուր է, պո՛ւր,— կրկնեց Հարությը,— ես չեմ հավատա Աստծու բարությանը, ես չեմ հավատա Սատանայի չարությանը. ո՛չ էլ դրախտի կհավատամ, ո՛չ էլ դժոխքի, ամեն բան էս աշխարքի մեջն է, օրթն Սատանա էլ կա, նրա ճամփան լավն է, նրա աշխարքը՝ դրախտն է — կնիկ, գինի, քեֆ, դուռնա, իսկ Աստծու աշխարքը — դժոխք — ծուռ, պաս, գրկում, անկնիկ, ճգնավորի մեռած օր ու կյանք...

Տերտերը այլևս չէր լսում Հարութին և իրենից դուրս ելած՝ հայհոյում էր և գավազանի մի-երկու հարված իջեցրեց նրա գլխին. Հարութը առանց խոսք ասելու դուրս թռավ լուսամուտից և անհայտացավ ձորի մեջ:

Տերտերը բավական ժամանակ չկարողացավ մեղմել իր նզովներն ու բարկությունը, ապա «Հրաժարիմքն ու հավատամքը» ինքը մենակ բարձրաձայն արտասանելով, վերադարձավ գյուղ՝ ճանապարհին անվերջ խաչակնքելով երեսը: Հուսահատված իր ձեռնարկի անհաջողությունից առաքինի ծերունին աչքերը լցված կոշտ արցունքով մտավ Տիկոռի հին, բազմադարյան նվիրական տաճարը. և մենության ու լռության մեջ փուվեց բազկատարած՝ սեղանի առջև, ջերմեռանդ ու սրտաբուղխ աղոթքով խնդրում էր Աստծուց մոլորյալ Հարութի համար կամ վաղահաս մահ, կամ դարձ դեպի ուղղափառ հավատքը և Քրիստոսի սուրբ եկեղեցին:

Հարութի կասկածները դեպի Աստծո ամենակարողությունն ու ամենաբարությունը, թերահավատությունն ու չեղումը ուղղափառ դավանանքից, իրենց արմատները վաղուց էին ձգել նրա հոգում, սկիզբները չա՛տ նուրբ ու վախկոտ, ապա ավելի հաստատուն ու վստահ. եկեղեցում սպասարկության ժամանակ հաճախ նրա մտքում կասկածի մտքեր էին ծագում, ակամա կերպով. ինչքան ջանում էր վանել, այնքան ավելի մեծ թափով նրանք արշավում էին Հարութի վրա ու դնում իրենց ահավոր հարցերը նրա հոգու առջև. և պատասխան պահանջում, խստասիրտ, անողոք պարտատերի նման. անլույծ հարցեր, որոնք օր ու գիշեր տանջում էին նրա երիտասարդ միտքը. [այդ գյուղացին, թեև օժտված] բնությունից սուր և խորունկ խելքով օժտված այդ գյուղացին անկարող էր լուծել այդ հարցերը, չունենալով

ժամանակակից դիտական զարգացում, [նա դրեթե] կրթված [էր] լինելով միջնադարյան դպրությամբ. սակայն ինչպե՞ս, [ինչ տեղից] և ե՞րբ դրդվեց նրա ուղղափառ հավատքը, և ինչպե՞ս, ի՞նչ տեղից մուտք գործեցին նրա մեջ կասկածները, չա՜տ դյուրին կարելի է հասկանալ, երբ նկատի առնվի այն երևույթը, որ Շիրակում դաղտնի և հայտնի կերպով զանազան աղանդների փոքրիկ կենտրոններ կան. բողոքականներ [կան], չաբաթականներ կան, որոնք գործում են հայ եկեղեցու անսխալականության դեմ. Թոնդրակեցոց հին և մեծ աղանդի արձագանգները կան, որոնց հետևորդները դիմակված ու ծպտյալ կերպով շրջում են գյուղերը՝ առևտրական գործերով. պարզ, անպաճույճ գյուղացիներ խոսքի ու վեճի են բռնվում այս կամ այն տիրացուի հետ, կրոնական խնդիրների վերաբերմամբ, թունավորելով իրենց չուրջը, կասկածներ հարուցանելով հոդու անմահության, հանդերձյալ կյանքի, նախախնամության [մասին], վերջին դատաստանի և եկեղեցու յոթը խորհուրդների մասին, որոնց թեև իրենց սրտի խորքում չեն հավատում, [բայց] սակայն, երեսանց հավատացյալ են [իրենց] ցույց տալիս իրենց՝ հալածանքների չենթարկվելու համար: Վեճերից հետո եկեղեցի են հաճախում և ավելի ջերմեռանդ աղոթում, քան անկեղծ հավատացյալները: Նույնանման մի քանի դեպքեր պատահել էին Հարությին, այդ ծպտյալ աղանդավորների հետ վիճել էր նա կատաղի կերպով, պաշտպանել էր ուղղափառ դավանությունը. սակայն այդ վեճերը ձգել էին միևնույն ժամանակ կասկածի և քննության սերմերը նրա մեջ և չէին դադարել աճելուց ու զարգանալուց[1]:

---

[1] *Ձախ լուսանցքում.* [վանեցի վարժապետ]:

Եվ Հարութի կարդացած դրքերը՝ ուղղափառների կողմից գրված ընդդեմ աղանդների, ինչպես Եղնիկի «Եղծ աղանդոցը» կամ Զամչյանի և հին [պատմիչների վարդ...] հայերի պաշտպանողականները թոնդրակեցոց [հակառակ] դեմ — այդ ամենը հակառակ ազդեցություն էին գործում նրա վրա, ուղղակի պաշտպանողական վահան էին դառնում աղանդների համար (օգտին):

Շիրակի գյուղական ժողովրդի ուղղափառ հավատին դեպի ամենակարող Աստվածը նվազ չհարվածեցին հայկական ահավոր ջարդերը, նյութված Սուլթան Համիդից և կատաղած թյուրք ժողովրդի ձեռքով. մորթվող հայը ո՛չ երկնքից օգնություն ստացավ, ո՛չ երկրից, ո՛չ Աստված վրա հասավ, ո՛չ մարդը. թյուրքը այրեց եկեղեցին՝ մանուկներով ու կանանցով լեցուն, խաչը ձգեց ոտքի տակ, սկիհով շուներին լափ տվեց, եկեղեցիները չինեց հայ կույսերի պղծարան վայրագ դինվորների համար, բայց նորին մնաց հաղթող ու թագավորող, քրիստոնյա ազգերից ու թագավորներից հարգված ու պատված. գյուղերում եղան մարդիկ, որ բացարձակ ժխտում էին նույնիսկ Աստծո գոյությունը: Հարութը նույնպես ազատ չմնաց զգացումների և մտայնության այս ընդհանուր ալեկոծումից: Սակայն կասկածներ տածելով Աստծո բարի կամքի վրա, վախով քննադատելով նրա արարքները, երբեք չհասավ նա անաստվածության[1]:

Տերտերի հետ ունեցած խոսակցությունից հետո Հարութի երեսի կաշին [ինչպես ասում է ժողովրդի ոճը,] պատռվեցավ. մինչ այդ նա ակնածում էր հարգված հորեղբորից, այսուհետև դարձավ համարձակ, անվախ: Խմում էր անչափելի, հարբած մտնում էր գյուղ, ծանոթ թե անծանոթ հարսների ու աղջիկների առաջն էր կտրում,

---

[1] *Ձախ լուսանցքում.* [վանեցի դաղթական վարժապետ]:

մի խոսքով, Տերտերանց տան անունը խայտառակվել էր գյուղում. դրացիները մերթ զսպում էին իրենց Տերտերանց ընտանիքի պատիվը պահելով, մերթ բողոքում էին, թե ինչո՞ւ ճար չեն անում, ինչո՞ւ են վեր վարել... «Խելառ է, խելառ չէ Հարությը, խելոք է, խելոք չէ, ինչպե՞ս պրծնենք էս Աստծո կրակի ձեռքեն»,— ասում էին գյուղացիք, որը ցավով, որը բարկությամբ: Տերտերն ուղղակի դլուխը կորցրել էր. իսկ խեղճ մայրը խունկ ու մոմով, ու մատաղով [ուղղակի] ձանձրացրել էր բոլոր սուրբերին: Մի օր էլ լսեց մայրը, թե Կողբում մի պառավ կին կա, որ մեծ համբավ ունի գյուղերում, իբրև նշանավոր աղոթող, թիզ-բացող, նետ-ձգող, վախ-բռնող և ուրիշ Աստվածատուր շնորհքների տեր. գնաց այդ վհուկի մոտ, պատմեց իր վիշտը. պառավը նետ դրեց, նետը ցույց տվեց Կաղզվանի խոնարհ կտուրի դուռը: Այդ սուրբը գտնվում է Կաղզվանի մոտ և բոլոր գազազված, խելագար հոգիների բուժողն ու անդորրացնողն է:

Պետք է Հարությին տանել նրա դուռը, բայց ի՞նչպես համոզել Հարությին. նա երբևք բռի մեջ չէր գալիս, կատաղած ցուլի պես փախչում էր, ով որ ուզենար մոտենալ: Մնում էր, որ նրան բռնեին, կապեին ոտն ու ձեռքը և տաներին:

Մի օր էլ, Հարությը չա՛տ խմած-հարբած անզգա ընկել էր գյուղում, փողոցի մեջտեղը. գյուղացիք նրան տուն բերեցին, տաներցիք պատեհ վայրկյանը գտան, որ նրան կապեն ու տաննեն Կաղզվան, բայց Հարությը մեկ էլ ուշքի եկավ, հայհոյեց բոլորին, կատաղած-գազազած սրան էր խփում, նրան էր խփում, ձեռքն ընկած իրը կոտրում-ջարդում: Տերտերը վրա հասավ, Հարությը նրան տեսավ թե ոչ, խաղաղվեց. ապա տերտերը կանգնեց ու Հարությի գլխին Ավետարան կարդաց: Երբ կարդում էր ու նորից անընդ-

հատ կարդում, դողդողուն ու լալահառաչ ձայնով, ամբողջ ընտանիքը ժողովված լաց էր լինում այդ խորհրդավոր ու սրտառուչ ժամին. մեկ էլ հանկարծ Հարութը դիվոտեց, զարկեց դլխով Ավետարանին և գոռաց.

— Տերտեր, չո՛ւտ արա պրծի,

Հարսներն ելան սնձի...

Տերտերը սաստիկ բարկացած գոչեց.— Խռով մնա ավետարանը գլխիդ, ազգի խայտառակ, Սադայելի աշակերտ, կորի՛ աչքես, կորի՛, կորի՛, կորի՛:

Եվ գավազանի անխնա հարվածով դուրս արավ տնից, հրամայեց ծառաներին, որ չաղաց տանեն և հայտնեն «անպիտան» Հարութին, որ իրավունք չունենա չաղացից ոտքը դուրս դնելու. եթե գյուղում երևա, ամեն մարդ կարող է նրան ծեծել, Տերտերանց տնից ո՛չ ոք չի պաշտպանելու նրան:

Տերտերը հայտնեց ընտանիքի հասուն անդամներին.— «Թո՛ղ էն անհավատը իրեն համար ապրի չաղացում. ի՛նչ կենե, թող էնե, էլ օգուտ չունի, իրեն կոտոշն իրեն փորը. երեխեն մենք կպահենք, թող տան երեսը չտեսնի, մինչև Աստված նրան դարձ տա»:— «Իրեն կոտոշն իրեն փորը», համաձայնեցան տանեցիք, հուսահատված ձեռները թափ տալով: Այդ օրվանից Հարութը թե տերտերի և թե տան համար կենդանի մեռել էր. միայն խեղճ մոր համար դեռ կենդանի էր — ապրող, տանջվող ու դիվահար: Եվ մայրը օր ու գիշեր ավելի ջերմագին սկսեց լալ ու աղոթել, աղոթել ու լալ:

Ծառաներն Հարութին ձեռքից բռնած տարան չաղաց և հանձնեցին վարպետ Գիրգորին, հայտնելով տերտերի

կարգադրությունը, որ լավ հակե և չթողնե ջաղացեն հեռանալ, աշխատեցնե և արգելե խմել: Արդեն գյուղացոց տերտերը խնդրել էր, որ Հարությին արագ չտան, արագ չծախեն վրան: Վարպետ Գիրգորը, [որ տարիքն առած] մի բարի, ուրախ և առակախոս մարդ էր, սիրով ընդունեց Հարությին, որին միշտ էլ սիրել էր ու փայփայել. Հարությը նույնպես սիրում էր վարպետին: Տեղավորեց Հարությին իր սենյակում, ամեն օր նոր-նոր առակներ ու հեքիաթներ էր պատմում, ծիծաղեցնում, մխիթարում էր նրան. աշխատանքի սեր էր ներշնչում նրան, հետը աշխատեցնում էր պարտեզում, ջաղացում. երբեմնապես արագ էր տալիս, և միշտ խնդրում էր, որ վերջ տա, կամ չա՛տ սակավ կերպով գործածե:

Ժամանակ անցավ, Հարությը կամաց-կամաց բավական փոխվեց դեպի լավը. առաջ որ չատ խմելու պատճառով ախորժակը փակվել էր, նորեն բացվեց, առաջ որ չա՛տ նիհարել և դեղնել էր, հիմա կարմիր գույն եկավ երեսին և մի քիչ պարարտացավ: Գեղեցիկ ընության մեջ ապրելը, հանգիստ և մենավոր կյանքը, պարտեզի ու ջաղացի զբաղումները գոհացուցիչ կերպով նորոգեցին նրան, համեմատաբար խաղաղացրին հուզված հոգին: [Արդեն երկու տարի էր անցել, որ] Նա ջրաղացումն էր. ուժերի նեբածի չափ աշխատում էր տնտեսության մեջ, և այս ժամանակի ընթացքին ո՛չ մի անգամ գրեթե խենթության կամ կատաղության մեջ չընկավ, թեև ամեն օր խմում էր, սակայն բավական չափավոր: Առաջ որ օրն ի բուն, հաճախ, մինչև անզգայությունը հարբած էր լինում, հիմա չա՛տ ուշ-ուշ, մանավանդ երբ Ուստա Կարոն և կամ մի ուրիշ սիրելի ընկեր հյուր էր գալիս մոտը, կամ երբ առանձնապես ուժգին կերպով վերզգում էր իր հոր ու կնոջ մահը կամ Հրեղենի անհույս սիրո կարոտը և կրոնական

անլուծելի հարցերը.— և վերջապես, այդ բոլորից հետո, երբ չարեչար հետևում էին իր հոռետես տպավորությունները կյանքից ապրած, տխուր մտքերը, տխուր հուշերը — այն ժամանակ խոժում էր ու հարբում [նա], որ ինքնամոռանա, անտեսե աշխարհի իրականությունը և ընկնի երևակայական դեղեցիկ աշխարհի մեջ, երազական իրականության մեջ:

Պակաս չնպաստեց Հարությի զգաստանալուն և այն հանգամանքը, որ տերտերը դուրս արավ նրան տնից ու դյուղից. իսրապես խայթվել էր նրա ինքնասիրությունը, և պատվի զգացում էր զարթնեցրել իր հոգում դեպի իր անձը: Այն դեպքի շնորհիվ [ով] Հարությը [վճռեց] չուղեցավ այլևս դյուղ դնալ, տանը այցելել: «Թե կուզեն ինձ տեսնել, թող դան ջաղացը, թե կուզեն տուն դառնամ, թող ասեն» — այսպես էր ասում նա չարունակ ինքն իրեն մեջ:

Տերտերը մտքի մեջ ուրախանում էր, տեղևկանալով Հարությի մի քիչ դեպի լավը փոխվելու մասին, սակայն տեղեցոց նորից խիստ պատվիրում էր, որ երես չտան, թող տակավին մնա աչքից ընկած, տնից հեռու, մինչև որ կատարելապես լավանա: Ինքը երբեք չդնաց Հարությին տեսնելու, բայց մայրը շաբաթը մի երկու անգամ Հարությի որբուկին գրկած դնում էր նրան տես, դանազան նվերներով կամ շապիկ, գուլպա և այլ կարևոր բաներ հետն ունենալով: Հարությը կարոտով համբուրում էր մորը, երեխային գրկում, լաց լինում, ապա չա՛ս գվարթ կերպով մոր հետ գբոսնում էր պարտեզում, հյուրասիրում էր լավ պատառներով, և դարձին մինչև գյուղի մոտերքը ուղեկցում նրանց: Մայրը մխիթարված էր և գոհ, որ Աստված բոլորովին աչքից (երեսից) չձգեց աննման Հարությին: Տաննեցիք նույնպես այցելում էին նրան:

Կարմրադեմ և վիթխարի ժայռերի ծոցում, խորունկ ձորի մեջ, խնձկոնքի մշտակարկաչ և անապակ գետակի վրա կառուցված էր Տերտերանց ջրաղացը — երկու աղորիք և մի դինկ. ջրաղացին կից շինված կար մի գոմ, մի ամբար և երկու սենյակ իրենց սրահով: Այդ շենքերի շուրջը, գետակի երկու ափերին տարածվում էր պարտեզ-բանճարանոցը, խնձորի, տանձի, ծիրանի, բալի, հասմիկի ծառերով, ուռիների շարքը ձգվում էր գետակի ընթացքով, բարդիները շրջապատում էին պարտեզը ամեն կողմից: Ժայռի տակից հորդառատ բխում էր մի սառնորակ ու վճիտ աղբյուր, որ վարդենիների ներքև չողալով, քարերի [տակ զանգակի պես զնգալով] մեջ, ծիծաղի պես քրքջալով մանր էր դալիս պարտեզում, կեդրոնի մեջ կազմում էր մի ավազան, ուր լողում էին Հարութի սագերն ու բադերը: Ավազանին [հանդեպ] չա՜տ մոտիկ, այնտեղ, ուր Հարութը տեսավ Հրեղենին, շինել տվեց մի հոլիկ, մի պատիկ բուխերիկով, իր մենակության ու երազանքի պահերը նա այստեղ էր անցկացնում. փոխնեփոխ գիշերները նա կամ այստեղ էր քնում, կամ ջրաղացին կից սենյակում: Հարութը իր տնտեսության համար հավեր, սագեր-բադեր ուներ, մեղվի մի քանի փեթակներ, մի կով, [10-12] այծ ու ոչխար, աղավնիներ չա՜տ սիրելով՝ շատ աղավնիներ էր պահում, զանազան տեսակի ու գույնի. դուռն ու երթիկը հսկելու համար մի քանի շներ էլ ուներ նույնպես: Կատուները նույնպես բացակա չէին:

Հարութը ամեն տեսակի բանջարներ էր ցանում և ամեն օր տանը՝ Տիկոո, թարմ բանջարներ էր ուղարկում նորահաս մրգերի հետ: Այս ամբողջ տնտեսությունը, ջրաղացն ու պարտեզը, Հարութը կառավարում էր վարպետ Գիրգորի և [երկու ծառաների հետ, որոնց մեկի անունը Մխո էր, մյուսինը՝] Գաբո<յի հետ>. վերջինս, որի

մականունը Հարութը Մրոտ էր դրել, Հարութի անմիջական ծառան էր. նա էր հացը թխում, կերակուր եփում, թեյ չինում, կովն ու այծ-ոչխարը կթում. Մխոն օգնում էր վարպետին ջրաղացի գործներում, գյուղ էր գնում-գալիս և Հարութի հետ պարտեզն էր մշակում:

Հարութն առհասարակ մասնակցում էր ամեն աշխատանքին, երբ տրամադիր էր լինում [մեկ կերակուր էր եփում, մեկ խմոր հ<ու>նծում կամ ջրաղացում բանում և այլն]: Նրանք բոլորը՝ տեր, վարպետ ու ծառա, չա՛տ հաչտ ու սիրով էին ապրում, ասես մի ընտանիք լիներին: Հարութն ապրում էր այդ տնտեսության արդյունքով և առատորեն մասն էր հանում իրենց ընտանիքին, որով մայրն ու որդին վայելած էին լինում Հարութի աշխատանքից:

Հարութը Ուստա Կարոյի հետ վաղուց էր ծանոթ և տարինների ընթացքում սրտանց մտերմացել, մտերիմ ընկերներ էին դարձել: Նրանց այս փոխադարձ սիրո վրա գյուղացիք կատակով ասում էին.— «Ուստա Կարոյի խուփը գյուղերը գլորվելով, գլորվելով եկել ընկել է Օրթե Հարութի պուտուկի բերանը»:

Կարոն Հարութի մասին մի՛շտ ասում էր Քերոբին — «Հարութը գովական տղա է. էն փիլիսոփա է, հազար վարդապետեն չա՛տ բան գիտե. իմ տեսած աշխարքների մեջ Հարութի հատը չդտա. ա՛խ, թե որ չա՛տ չխմեր, աշխարքի մեջ մատով ցույց տալիք մարդ կըլներ. բայց ի՞նչ — ճակտին արաղ քսես, կհարբի. խմելեն ե՞րբ աչք կբանա, որ իր գլխի պատիվը գիտնա, երազի մեջն էլ փերիների ձեռքեն արաղ ու գինի կընդունե»:

Հարութն էլ Կարոյի մասին էսպես էր խոսում իր սրտի մեջ.— «Կարոն իմ մեծ ախպերն է. էնպես լավ սիրտ ունեցող մարդ աշխարքում չկա. մեծ հոգի ունի, համ խելք

ունի, համ խելառություն. ուտող-խմող ազնիվ տղա է. աշխարքով մեկ ոսկի արժե կարոս. էնոր չա՛տ կսիրեմ, մանավանդ երբ քարվանը չա՛տ հեռուները կքշե, հեքիաթների սիրուն աշխարքները կերթա, մարդ կնախանձի, թե ինչո՞ւ ինքն էլ հետը չի եղել, սուտ կամ ղորթ, հաշիվը մեկ է»:

Մի քանի տարի էր անցել Հարութի՝ ջաղացը տեղափոխելու օրից. նա այդ ամբողջ ժամանակը գրքի երես չտեսավ, սակայն կարդացածները դրեթե չէր մոռացել, [անգիր] բերան դիտեր ու հաճախ իր մտքի մեջ կրկնում էր սիրած հատվածները, մանավանդ Աստվածաշնչից: «Գրքերի մեջ նոր բան չկա,— մտածում էր Հարութը,— մարդկանց գիտցածը ամեն մարդ էլ դիտե. օրթե մի նոր բան ասվի, բերնե բերան կիմանանք, օրթե չկարդանք էլ: Սողոմոնի ասածեն դուրս ո՞վ նոր բան կրնա ասել — ոչ մի մարդ, քանի որ էն իրենեն առաջ, իր ժամանակի, ու իրենեն հետո եկած ու գալիք մարդկանցեն ամենեն իմաստունն է եղել ու կմնա: [Գի՛րք... էնքան դիրք կա, որը կարդաս, որը թողնես ու] Հենց Սողոմոնի ասածի պես, կարդալը ծայր չունի ու չա՛տ կարդալն էլ մարդու հոգին կչարչարե, գլխավոր բանը Հայտնությունն է, օրթե մարդ ստանա»:

Այսպիսով, նա գիրքը ծալեց, և, ասես, նրա առջև բացվեց բնության [մեծ] պատկերազարդ գիրքը. այդ գեղջուկ, բայց խորունկ հոգին աչքը լարած, ականջը սրած ճիգ էր թափում կարդալ ու լսել բնության մեծ գիրքը. ուշով ու սիրով դիտում էր իր շուրջ կատարվող երևույթներին, ականջ էր դնում թռչունների երգերին ու ծառերի և ջրերի [ձայնին] ձայներին, ականջ էր դնում ջաղացը եկող դյուղացիների խոսքին ու զրույցին. և հանդարտիկ, անընդհատ մտածում էր, իր հոգում վերարտադրում, քննում աշխարհում կատարվածը [բանը]:

Մի անգամ, աշնանային մի օր, երևկոյան դեմ, Հարութը բուխերիկը վառել, նստել էր հոլիկում, [նրա կրակի հանդեպ] ծխում էր՝ աչքերը մարմանդ կրակին հառած, և ականջը՝ ծառերի տխուր սոսափյունին, միտք էր անում – աշխարքի բանը: Հրեղենը իրան ասաց, թե ինքն է մենակ [ճշմարիտը], բայց Հրեղենին ի՞նչպես գտնել, նա խոսվել էր Հարութից, ախ, հնար լիներ գոնե Սողոմոնին տեսնել, հարցնել-իմանալ նրանից, թե [ի՞նչ է հաստատ, ճշմարիտ բանը] մարդ ինչո՞ւ է ապրում, աշխարքն ինչո՞ւ համար է, թե ի՞նչն է հաստատ, ճշմարիտ բանը, ի՞նչն է որ չի մեռնում, քանի որ ինչ որ մեռնող է, նա սուտ է, նա չկա, նա աչքի երևույթք է...

Պարտեզում, աշնան տխուր հովի չնչի տակ մեղմ ու թախծագին սոսափում էին ծառերը նրա հոլիկի վրա, [նրա գլխի վերա] և այդ մելամաղձոտ, ներդաշնակ սոսափը անցնում էր նրա գլխի վերևով, անցնում-գնում, հեռանում, ասես, մի հեռու հեռավոր աշխարհ, ուր կամաց-կամաց հալվելով, լուծվելով լռում էր, տանելով իր հետ Հարութի ուշքն ու միտքը, բոլոր բովանդակ հոգին հեռու հեռուները ներկա իրականությունից դուրս [մի ուրիշ նոր] այդ հեռավոր աշխարհը: Հարութը գնաց այդ աշխարհի բարձր լեռների կատարներով, ապա իջավ անդունդները և մխրճվեց անդունդների անսահման խավարի մեջ, ու նորից մենակ, մենակ գնաց խավարի միջով՝ առաջնորդ ունենալով հեռավոր խավարի մեջ մի փայլփլուն աստղ, որ մեղմ [լույսի] ճրագի պես աղկայծում էր. հասավ այնտեղ թե ոչ, մի ձայն ասաց նրան.– «Բարև եկար, Տիկուցի Հարութ, հազարանց տարի է, ես քեզ կսպասեի, [գիտեի] գիտնալով, որ պիտի գայիր»:

Հարութը հասկացավ, որ Սողոմոն իմաստունն է խոսողը, և միևնույն ժամանակ տեսավ նրան՝ մեծ, ծեր,

ալևոր մարդ, ոսկոր ու կաշի դարձած, կուչ եկած, գլուխը մուխ քարին դրած՝ աչքերը խուփ մտածում էր, մտածում, ու չէր կշտանում մտածելուց, վաղօրոք գիտնալով, որ դուր է մտածում. նրա գլխի վերև այն աստղն էր վառվում՝ ճրագի պես՝ օր ու գիշեր, հավիտյանս հավիտենից: Հարուքը կարկամել էր, չգիտեր [ինչ] անելիքն ու ասելիքը:

– Գիտեմ ինչո՞ւ ես եկել,– ասաց Սողոմոնը մի ահավոր ձայնով, որ ասես [հազարավոր] բյուր տարիների մեռելն է (դիակն է) խոսում,– հազարանց տարի է նստել միտք կանեմ աշխարքի բանը, բայց գո՛ւր, գո՛ւր, նոր բան չեմ կարող ասել, ինչ որ ասել եմ հազարանց տարիներ առաջ. [նա] միշտ նոր է, քանի որ ճշմարիտն է – ունայնություն ունայնությանց. ամենայն ինչ ունայնություն է. ինչ որ եղել է, նույնը պիտի լինի, ինչ որ գործված է, նույնը պիտի գործվի. և արևի տակ նոր բան չկա. իմ սիրտը տվի արևգակի տակ ամեն եղած բանը իմաստությամբ փնտռելու և քննելու [համար]. Աստված այս չար զբաղումը տվեց մարդկանց որդիներին արևի տակ զբաղվելու համար. ինչու որ, ով իր գիտությունը կավելացնե, նա իր ցավը կավելացնե: Ու ատեցի իմ կյանքս, որովհետև արևի տակ եղած արարածները ինձ չար թվացին, և ամենայն [ինչ] բան ունայնություն է: Ես իմ սրտի մեջ խոսեցի մարդու մասին, թե Աստված ցույց կտա, որ նրանք անասուններ են, որովհետև մարդկանց որդիներին պատահածը և անասուններին պատահածը միևնույն բանն է. ինչպես մեկը կմեռնի, այնպես էլ մյուսը. և ամենքի շունչը մեկ է. մարդը ի՞նչ առավելություն ունի անասունի վրա,– և ոչ մի, և ամեն բան ունայնություն է: Ամենքը միևնույն տեղը կերթան. ամենքը հողից եղան և ամենքը հողը կդառնան: Եվ ո՞վ գիտե, թե մարդկանց որդիների

հոգինդը վեր կերթան և անասունների հոգինդը վար՝ գետինը կիջնին:

Ողջ չունը մեռած առյուծեն լավ է և քո երթալիք դերեզմանի մեջ գործ, խորհուրդ, գիտություն և իմաստություն չկա. գնա ուրեմն հացդ ուրախությամբ կե՛ր, և գինիդ զվարթ սրտով խմե, և սիրածդ կնկա հետ կյանքը վայելե քո կյանքիդ ունայնության բոլոր օրերի մեջ, որ տված է քեզ արևի տակ մինչև կյանքիդ վերջը. որովհետև սա է քո բաժինը արևի տակ քաշած քո աշխատանքներիցդ. մնացած բոլոր գալիքը ունայնություն է: Ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ունայնություն է...

Հարուքը Սողոմոնի տեսքից[1] ու ձայնից սարսափած ուշաթափվեց, կամ ավելի ճիշտը, ուշքի եկավ.— քամին կատաղի [փչում էր] վազում էր ծառերի վրայով, [որոտուն] հեղեղի պես դոռալով [վազում էր] ու չառաչելով: Հարուքի դուռն ու լուսամուտը դողդողում էին, ասես, ահաբեկված: Ահավոր, աշխարհավեր ունայնության չունչն էր, որ խորտակելով պատ ու երթիկ՝ արշավում էր Հարուքի վրա. Հարուքը ցմքած, վախեցած ու մենակությունից սահմռկած դուրս թռավ մարդկանց մոտ լինելու, գտնելու համար, վազեց դեպի ջաղացը. քամին ծառերի դեղին, մեռած տերևները պոկում էր բուռ-բուռ և ցանում Հարուքի գլխին, նրա ճամբու վրա և ապա օռնալով վիրավոր գայլի պես, հավաքում էր բոլոր այս դեղին, պղտիկ մեռելները, տանում հեռավոր ու մոտավոր ժայռերի ծերպերում ու խութերում թաղում-ծածկում:

Հարուքը մտավ ջաղացի սենյակը. Գիրգորը նստել էր Մխոյի հետ բոցկլտող կարմիր ու զվարթ օճախի առջև,

---

[1] *Ա. Ինճիկյանը կարդացել է* ձեռքից:

տամա էին խաղում. հոխորտանքով իրար վրա էին հարձակվում, ծիծաղում, քրքջում: Կրակի վրա թեյի համար ջուր էր դրած: Հարությը անխոս բարձրացավ օճախի գլուխը և նստեց.– «Ի՛նչ ահռելիկ երազ էր, բայց ի՛նչ իմաստուն երազ էր. ես ասի՝ էս է պիտի մեռնեի...»,– խոսում էր Հարությը իրեն հետ... «Հանկարծ հասկացա իմաստության ուղն ու ծուծը մահն է, որ կա, մահն է, որ աչխարքը ունայն կդարձնե... Ջարհուրիկ բան է մեռնելը»: Այս մտքերի տակ նորից կծկվեց նրա սիրտը անանուն տանջանքով, ապա կարծես [մեկը] թե մեկը իրեն սիրտ տալով չչնջում էր հոգու ականջին. «Խելքը էն բանի մեջն է, որ մոռանաս մահի գոյությունը, Սողոմոնի ասածի պես զվարթացնես մարմինդ գինով, սիրածդ կնկա հետ օր անես, չէ՞ր ինքը, որ իմացավ աչխարքի բանը, չմեռցուց իր անձը, քանի որ՝ [կենդանի շունը մեռած առյուծեն լավ է] «շուն, որ կենդանի է, լաւ է, քան զառիւծ մեռեալ», կնչանակե՝ ապրիր, թեկուզ չան պես ապրիր... բայց խելք ունեցողը թագավորի պես կապրի. ա՛յ ինքը Սողոմոնը՝ կերավ, խմեց, հազար կնիկ ունեցավ ու անկուշտ աչքը ձգեց պատիկ Սոմնացու վրա, խոր ծերունի դարձավ՝ մեռավ, երբ էլ իր ճրագի մեջ ո՛չ ձեթ մնաց, ո՛չ պատրույգ... «Եկ կեր ուրախութեամբ ղհաց քո և արբ սրտիւ զուարճացելով զգինի քո...» [Մարդու] Հերը տղային էսպես լավ խրատ չէր տա, ինչ որ Սողոմոնը քեզ տվեց...»: Եվ վերադառնալով [Մխոյին] դեպի չրջապատի աչխարհը՝ ձայնեց Հարությը.

– [Ել, Մխո] Գաբո, ել, արագ, գինի բեր էստեղ, հավ մորթե, փլավ դիր. էսօր սրտիս մեջ շուն կօռնա, քեֆ պիտի անեմ...

– Ի՞նչ կա, Հարութ ջան, ի՞նչ է պատահել,– հարցրեց Գոգորը՝ Հարությի ջղային փայլով չողացող աչքերի մեջ նայելով:

– Բան չկա, աշունքը վրաս վատ կազդե:

– Դարդակ բաներ են, դու առողջութենեն խոսք ասա:

– Գոզոր ջան, դու մահեն չե՞ս վախնա:

– Ի՞նչ ասեմ, Հարութ ջան, ուզենանք-չուզենանք պիտի մեռնինք. մահը մերն է, մենք մահինը. դյխավորն էն է, որ մարդ լավ ապրի, քանի ողջ է, թե չէ մարդիկ կան, որ ողջ ժամանակները կիսամեռ են՝ տխուր-տրտում՝ սգավորի պես. դարդը կես մահ է, Հարութ ջան:

– Լավ կասես, Գոզոր ջան, բայց օրթե մահը չըլներ, ես կասեմ՝ լավ կըլներ...

– Ջեմ կրնա ասե, Հարութ ջան, վախնամ կյանքի համն էլներ. քիչ բանն է համով. մարդ ավելի կարոտով, դողդողալով կսիրե անցավոր կյանքը. չէ՞ որ երբ դիտես, թե սիրածդ հարսը առավոտ կանուխ ծոցեդ անպատճառ պիտի երթա, ավելի անկուշտ, ագահ, խելառի պես կվայելես էնոր, քան թե որ դիտեննաս թե միշտ մոտդ է ըլնելու:

– Խելոք խոսք ասիր, կենացդ, Գոզոր ջան,– ասաց Հարութը արագի թասը դարկելով նրա թասին:

– Հարութ ջան, ողջ ըլնիս, ուրախ, Աստված մի հատիկ Հակոբիկդ քեզի բաշխե, տղամարդ կաց, ուրախ կաց, դարդ անողին դարդ չի պակսի. քեֆ անողին քեֆ չի պակսի, ասել են մեր խելացի պապերը:

– Էդպես է, Գոզոր ջան, Սողոմոն իմաստունն էլ են կասե՝ թե տխուր մարդու ամեն օրերը դեղ են. ուրախ սիրտր մշտական կոչունքի մեջ է:

– Ապրած կենա Սողոմոնը, հաստատ որ իմաստուն է եղել, ես էլ իմ կարճ խելքով նույն բանին եմ հասել: Մարդ պիտի իր քրտինքով մի կտոր արդար հաց ճարե, խիղճը հանդիստ, իր կնկա կողքին նստի, ուրախ-ուրախ ուտե-խմե. էս կմնա աշխարքում, մեկէլները վրաս դրե՛:

– Գոգոր ջան, դու Սողոմոն չես կարդացել, բայց էնոր պես բաներ կասես. ինքն էլ կասե թե՝ մարդս ուտելեն-խմելեն և իր աշխատանքով, իր գինիով հոգին զվարճացնելեն դուրս ուրիշ լավ բան չունի. կնկա մասին էլ նույն խոսքը կանե:

– Տեսա՞ր, Հարութ ջան, կարդացողը չէ մենակ բան գիտցողը, մարդու սիրտը իրեն համար գիրք է, մեջը կարդա՛ և ասա... Քեֆ աննենք, Հարութ ջան, քանի կա, քեֆ աննենք, քանի ողջ ենք, քեֆ աննենք... [լի՛ց, խմենք] ա՛ռ էս բաժակը:

– Էդպես է,– հաստատեց Հարութը,– քեֆ աննենք, քանի որ մեռնել կա, իմաստությունը ուրախության մեջն է:

Եվ այդ դիշեր, գրեթե մինչև լույս, Հարութը Գոգորի և ծառաների հետ [մինչև] կերան, խմեցին, երգեցին, պարեցին. Գոգորը մի-երկու սիրուն հեքիաթ պատմեց, Մխոն մի քանի զվարճալի առակներ ասաց, Հարութը սիրտված քուն մտավ:

Սողոմոնին տեսնելուց հետո Հարութի հոգեկանը արտաքին երևույթով մեղմացավ, հանգստացավ, կարծես, վիշտը սուզվեց հոգու ստորերկրյա սահմանները. վերքի երեսը դոցվեց, և խոցը ուղղվեց դեպի ներսի դին՝ իր թույն-թարախը ներսերը ուղարկելով:

Այդ տեսիլից հետո, ունայնության գաղափարը, մահը, մի խոսքով, եղավ նրա համար իմաստության սկիզբը, մեջը և վերջը. նա Դավիթ Անհաղթ փիլիսոփային [կարդաց] փորձել էր կարդալ մի-երկու անգամ, թեև չէր հասկացել, բայց հիշում էր շարունակ նրա գրվածքից մի տող, թե, ըստ Պղատոնի, «իմաստասիրությունն է խոկումն մահու», և գլխին շատ էր նստել այս միտքը: Այնպես որ նրա հոգեկան աշխարհը սկսեց պատյա գալ մահվան գաղափա-

րի չուրջը, որպես միակ առանցքի: «Դարդ մի արա, մահ կա.— ասում էր նա միշտ,— լաց, ազա, մահ կա, սիրի՛ր, մահ կա, մի սիրի՛ր, մահ կա, քեֆ արա, մահ կա, մեռի՛ր, հաշիվը մեկ է,— մահ կա». հակասական մտքերի և զգացումների այսպիսի մի վիճակ:

Բայց ընդհանրապես մի անտարբեր դրություն էր իշխում նրա հոգու վրա: Առավոտ վեր էր կենում, թեյի հետ մի բաժակ արաղ էր խմում և ձեռք էր զարկում աշխատանքի պարտեզում, գոմում, փեթականոցում, հավանոցում և ջրաղացում. դրնթե ապրելով կես-քուն, կես-արթուն, կորած, ինքնամոռացված: Ուստա Կարոն էր, որ ամիսը մի-երկու անգամ գալիս էր իր [մոտ] սիրելի Հարությի մոտ «ժղվելու». և իր քարավանով ու ճամփորդությունների զրույցներով ու արկածներով զարթնցնում էր նրա նիրհած հոգին՝ [իր] լիքն երազական անհագ տենչերով:

Բայց երբեմն էլ, ասես, հանկարծ նորոգվում էին վերքն ու վիշտը, անգթորեն կրծում էին նրա հոգու արմատները — «Ջուր է, ամեն բան ունայն է,— հոգին քանդելով ու քրքրելով խոսում էր, կռվում էր Հարությը իրեն հետ.— կարոյի ասած էն սուտը ամենեն ճշմարիտն է, որ իր քարվանով ժուռ եկած տեղերում տեսել է մի մարդու, որ պատանքը հագած կապրի եղեր, ասելով թե՝ էս իմ հուր-հավիտենական չապիկն է, աշխարքը մահի թաուփի մեջն է, ազատվելիք չկա, մեր կյանքը երկու օր է. մեկն անցավ — մանկությունը. մնաց մեկէլը — սև ծերությունը. ծայրը — գերեզման». և ուղղակի աչքին այնպես մոտիկ, չա՛տ մոտիկ բացվում էր օրհասական անդառնալի փոսը, որ անդունդի պես քաշում էր նրան դեպի իրան, և որից նա [սարսափից կոկորդը] սասանած, հազիվ էր հետ դառնում մի քանի քայլ և հուսահատ քաջությամբ ձեռ-

քը թափ էր տալիս սարսափից չորացած կոկորդով բղավելով.— «Հերն անիծած աշխարքին էլ, մահին էլ. մի օր է մնացել, դարդս ո՞րն է, կեր, խմե, որովհետև ամեն բան ունայն է»:

Եվ ապա, օրերով տալիս էր իրեն հարբեցման, խմում էր անհաչիվ, կատաղի գոռալով ամենքի վրա, երբ մերժում էին խմիչք տալ՝ համոզելով, որ չխմե. «Տուք արբեցութիւն տրտմեցելոց և դինի ըմպել ցաւագնոտաց, ոի արբցին և մոռասցին զտնանկութիւնս իւրեանց և զցաւս իւրեանց ոչ ևս յիշեսցեն»:— Եվ ապա սկսում էր նորից անտարբերութեան մի բութ չրջան: Թեև աշխարհը իր բոլոր իրերով ու գաղափարներով սև էր ներկվել Հարութի [մռայլ] տրամադրութեամբ, բայց և այնպես նրա հոգու [մի ափից մինչև մյուս ափը ձգվել էր մի ոսկեղեն (լուսեղեն) թել, արևի մի ճառագայթ — Հրեղենին վերստին տեսնելու անմահ հույսը] մռայլի մեջ ապրում էր Հրեղենին վերստին դառնելու անմահ, պայծառ հույսը, ինչպես խավար ամպերի մեջ արևը,— և այդ հույսը կապում էր Հարութին դեռ կյանքի հետ: Ապրում էր թշվառ Հարութը այդ անհաղթելի հույսով, և օր ու գիշեր չխկչխկում էր նրա ջաղացի ջախջախը ձորն ու պարտեզը լցնելով անդորրութեամբ և չքնաղ երազով. և բոլոր անց ու դարձողին հրավիրում էր հոգով տխուր, երեսով ուրախ Հարութի մոտ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Երբ Հարութը 28 տարեկան էր, և արդեն չաղացումն էր ապրում, Տիկոր նկավ մի երիտասարդ ճարտարապետ, մի վառվռուն հայ երիտասարդ: Նա մոտավորապես մի ամիս մնաց այդ կողմերը — եղավ Մրեն, Բագրան, Զռէի, Ծպնի, Ագրակ, Խնձկոնք: Նկարում էր այդ վայրերի հնություններըը, ինչպես և Տիկորի հին նկեղեցին: Նա իջել էր իրիցոնց տունը, Տիկորի վանքը նկարելու համար: [Հետո] Մի շաբաթ մնաց այդտեղ, մի շաբաթ էլ Խնձոնք: Հարութը ծանոթացավ նրա հետ. նա մի քանի դիշեր հյուր եղավ Հարութի մոտ, քանի որ չաղացը Տիկորի և Խնձկոնքի մեջտեղն էր ընկած: Հարութը նրան լավ հյուրասիրեց. երիտասարդը պատմում էր դանապան քաղաքների մասին, հիացումով խոսում էր հայ վանքերի մասին, բայց ավելի հետաքրքրությամբ հարցնում էր չաղացի մարդկանց կյանքի մասին, դյուղերի, երևույթների: Ծանոթանում էր ժողովրդի մարդկանց հետ: Հարութը նրան շատ հետաքրքրեց իր հարցերով, իր պատասխաններով: Մի դիշեր ընթրիքից հետո պատկել էին նրանք բոստանում, չաղցի տղաներից մեկը չվի էր նվագում, մյուսը երգում էր ժողովրդական երգեր, որ շատ էր սիրում ճարտարապետը: Ճարտարապետը հուզված լսում էր և նայում երկնքին: Աստղավառ երկինք, որ ձորի միջից ավելի մուքն էր երևում, սակայն աստղերը ավելի պայծառ... Ոգևորված կանչեց ինքն իրեն հետ խոսելով — «Ա՛խ, ինչքան գեղեցիկ է հայոց աշխարհը, ինչքան վճիտ է նրա

երկինքը, և աստղերը՝ գոհարներ: Աշխարհի ոչ մի մասում այսպիսի երկինք չեմ տեսել: Երևի, Բաբելոնում այսպիսի երկինք է եղել, ուր ծնունդ է առել աստղաբաշխությունը»...

Հարությի լարեց ուշադրությունը...

Ճարտարապետը. «Ահա Մեծ Արջը, որ հայերս Սայլ ենք անվանում, կարծես ձորի ափին է դրված, սիրտս ուզում է նստել այդ աստղի վրա և գնալ, գնալ երկնքով, աստղերի միջով, Հավիտյան, Հավիտյան, Հավիտյան...»

Հարությի երևակայությունը վառվեց...

— Պարոն ինժեներ, էդպես որ ասում եք (իսկապե՞ս աշխարհը վերջ չունի) Հավիտյան, Հավիտյան, մինչև ո՞ւր...

— Չգիտեմ ուր, միայն թե վերջ չունի. միլիոն տարի կյանք ունենաս և լույսի արագությամբ թռնես, այդ միևնույն է թե տեղից չշարժվես, որովհետև տիեզերքը անսահման է... անծայր, անսկիզբ, անվախճան...

Այստեղից սկսվեց Հարությի համար հրաշալի, զարմանալի և միևնույն ժամանակ սարսափելի մի հայտնություն: Խոսքից խոսք, երիտասարդը նրան շատ բաներ ասաց երկրի ծագման, արևի, աստղերի, տարածության հեռավորության մասին: Հարությը ցերեկը պահեց նրան և խոսում էին, զրույցը, խոսակցությունը տևեց երկար, շարունակվեց մյուս գիշեր ևս: [Երրորդ գիշերն էլ:]

Հարությը շատ բան իմացավ — կյանքի ծագում (նյութից ծնվեց), հյուլե, միկրոպ, բնության նպատակ (չունի, գոնե մեզ համար, մեր կարծիքով):

Հարությը ասաց հուսահատ. «Էլ ի՛նչ պարոն Հարությ» — ողջ աշխարհը, մարդկությունը ունայն, չնչին բան է, ինչո՞ւ ենք ապրում:

Ճարտարապետը — Մարդը չնչին չէ, նրա արժեքը մեծ է: Նա հյուլե է, բայց գիտակցում է, հասկանում է,

կռչում է, չափում է անսահմանությունը, աստղերը և այլն: Մարդը բնության իշխանն է... նա պիտի հաղթե տարածությանը – թռչի պիտի աստղե աստղ, դյուտեր պիտի անե, կյանքը պիտի բարեփոխե, վերջ պիտի տա պատերազմներին, ջարդերին, հիվանդություններին...

– Հետո՞,– հարցրեց Հարությը,– հետո:

– Էլ ի՞նչ հետո. այսպես մինչև, մինչև... երկրագնդի մահը, բայց ուրիշ մոլորակների վրա կերթա՝ շարունակելու իր գոյությունն ու դիտությունը:

– Հետո՞, հետո...

– Ջեմ հասկանում հարցդ, ի՞նչ ես ուզում ասել:

– Ուզում եմ ասել, թե հապա մահը... մարդ մեռնի պիտի, չէ՞. կարո՞ղ է նա անմահ լինել, Աստված դառնալ...

– Անմահ – երբեք. որովհետև տիեզերքի մեջ ամեն բան փոխվում է, լուծվում, մեռնում է, բայց տիեզերքի նյութն է միայն անմահ... իսկ Աստված դառնալ: Ի՞նչ է Աստված...

Հարությը պատասխանեց.

– Տիեզերք ստեղծողը, նյութը ստեղծողը...

Ճարտարապետը մտածեց, մտածեց և ասաց.

– Տիեզերքը երբեք չի ստեղծվել, նա չունի ստեղծող. տիեզերքը, այսինքն նրա նյութը միշտ եղել է, միշտ կա և միշտ կմնա: Եթե ուզում ես, նյութը [ինքը հենց Աստված է] հենց ինքը Աստված է:

– Բայց,– ասաց Հարությը,– Աստված իր չէ, Աստված նյութ չէ, Աստված իմացականություն է, Բանն է, մտածել, կշռել, խորհել, ստեղծել է, նախախնամություն է... և այլն, և այլն. իսկ եթե նյութը Աստված է, ուրեմն ամեն բան, որ տեսնում ենք, բռնում՝ Աստված է, ջրի կաթիլը, հավի բմբուլը, պապիրոսի մուխը, երկաթի ժանգը, եղանկի աղտը, ոջիլը:

Ճարտարապետը մտածեց.

– Իհարկե, կրոնների հասկացած Աստվածը չէ, ես հասկանում եմ քեզ, ոչ, Հարութ, նյութը ուրիշ բան է, նյութը ամեն ինչ է. բայց ինչ է նյութը, նրա էությունը, դա անքննելի է, անբռնելի...

Հարութը ասաց Նարեկի խոսքերը...

– Ուրեմն – բան չգիտենք. դուք ձեր նյութը չեք հասկանում, մենք էլ մեր Աստվածը. վե՞րջը, վե՞րջը... եթե Աստված չկա, բա ո՞վ տվեց նյութին էդ զորությունները, որ քո ասելով, նյութը [մի տեսակ] ինքն իրեն զարգանալով դարձավ արև, ջուր, օդ, հուր, հող, բույս, կենդանի, մարդ, խելք ու լեզու... ես ու դու:

Ճարտարապետը մտածեց...

– Չգիտեմ, չգիտեմ, չեմ կարող բացատրել, որովհետև չեմ կարող դիտնալ: Կարելի է՝ այս բոլորը՝ ամբողջ տիեզերքը զառանցանք է, երազ է, և մենք երազում ենք, կարելի է՝ մենք էլ չկանք: Բան չեմ հասկանում, բայց մենք կանք, ես կամ, դու կաս, աստղերը կան...

Հարութը լռեց, մտածեց և հետո ասաց.

– Ամենայն դեպս, աստվածաբանների ընդունած Աստվածը, եթե չկա էլ, սակայն նա մի մեծ գյուտ է: Վստահ կարելի է ասել, որ մարդկության բոլոր գյուտերից նա մեծ է, նմանը չկա: Նա մեծ է կրակի գյուտից, գրի գյուտից, հացի գյուտից, երկաթուղուց, հեռագրից, բոլոր-բոլոր գյուտերից: Մեծ գյուտ է. առանց այդ գյուտի տիեզերքը, կարծում եմ, մի մեքենա է դառնում, մի աննպատակ գործ, անիմաստ, և մարդը իր գիտակցությամբ տիեզերքի մեջ ամենից թշվառ արարածը, սարսափելի թշվառ, մահվան երկյուղով բռնված, նրա բոլոր գործերը՝ իզուր, ինքը՝ որբ, անտեր այս անծայր, անդլուխ, անտեր տիեզերքում, որ իր ներդաշնակությամբ

Հանդերձ՝ մի քառս է, մի թոհուբոհ, խնկապարի զառանցանք... ես այս մասին երբեք չէի մտածել...

Ասաց ու լռեց. էլ չխոսեց. սուզվեց երկնքի մեջ. Հարությը նույնպես լռեց: Լռեցին երկուսով... ժամեր: Մինչև որ աքաղաղը խոսեց, և վարպետ Դոդոն եկավ, արթնացրեց նրանց, թե ցուրտ է, թաց է, եկեք, քնեք:

Ճարտարապետից ավելի ընկճված էր Հարությը, և Հարությն էլ մոլորված ու շշմած, լուռ հետևեցին նրան, դնացին քնելու:

Հաջորդ վերջին դիշերը նրանք էլ չխոսեցին այդ հարցերի մասին, երկուսով էլ կուտրված էին, միայն կերան, խմեցին և լսեցին տղոց նվագին ու երգին:

Ճարտարապետը մյուս օրը, առավոտը, Հարությին հարգանքով մնաս բարև տալով ասաց. «Մնաս բարև, սիրելի եղբայր Հարություն, մեր իմաստուն ժողովուրդը ճիշտ է ասել. կա անապատի, չկա աշխարհի... ինչքա՜ն քեզ պես խորունկ մարդիկ կան գյուղերի անկյուններում: Ես ինչ որ քեզ ասացի, ոչինչ համարիր, որովհետև բան չասացի. ես քեզնից ավել բան չգիտեմ և աշխարհի ամենամեծ փիլիսոփան էլ քեզնից ավել բան չգիտեն...

Ճարտարապետին զարմացրել էր Հարությի պատասխանը — կամ ավագի հատիկները, կամ արևը, մեկ է, կամ մեծ ուղտը կամ մանրէն... բան չի փոխվում: Գաղտնիքը, խորհուրդը մնում է դարձյալ գաղտնիք, խորհուրդ:

Հարությը հետագայում, չա՜տ անգամ անդրադարձավ նրա ասածների վրա, մտածեց, խորհեց, բայց իր աշխարհահայեցությունից չշեղվեց, չազդվեց. մնաց նորից պեսիմիստ, սկեպտիկ, մոլորված, շշմած, զարմացած, վախեցած տիեզերքի հանդեպ, նորից մահի հանդեպ վախով ու սարսափով...

— Հարութի հարցին, թե մարդը մահկանացու է, թե երկիրը կկործանվի մարդկությունն էլ հետը, կվերջանա մարդը... Ճարտարապետը — թե բնության մեջ ոչինչ չի կորչի, մարդը չի մեռնի, նա նյութի մեջ անմահորեն կապրի: Հարութը պատասխանեց. «Ես որ չեմ զգա իմ ապրելը, ի՛նչ օգուտ՝ կամ թե չկամ. առաջ էլ՝ իմ ծննդից, չատ անգամ նյութի մեջ եղած պիտի լինեմ, բա որ հիմա չեմ զգում՝ եղել եմ, չեմ եղել՝ հաշիվը մեկ է»:

Այս պատասխանները զարմացնում էին ճարտարապետին:

— Նարեկի բնորոշումները աստվածության մասին — «միայն արարիչ զբնաւս յոչէից, անմերձենալի, անչափանդադ գիտութիւն, աներկևան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, անսահմանելի տեսիլ, աննուազելի չնորհ, անպակասելի դանձ, նախախնամող մատն, կենդանարար կամք, որքանութիւն անսահման ...» գլուխ Գ:

Հարութը — Բայց Աստված [նյութ չէ] կա, չէ. Աստված նյութ չէ. Աստված իմացականություն է, Բանն է. մտածել, կշռել, խորհել, ստեղծել է նա. նախախնամությունն է. Աստված ժամանակից ու աշխարհից դուրս է, նրա վրա է, նա է ստեղծել աշխարհն ու ժամանակը... Իսկ եթե քո ասելով նյութը Աստված է, ուրեմն, Աստված նյութ է, ուրեմն ամեն բան, որ տեսնում ենք, բռնում ենք, Աստված է. ջրի կաթիլը, հավի բմբուլը, պապիրոսիս ծուխը, եղանկի աղտը, երկաթի ժանգը, ոջիլը — Աստված են:

Հարութը — Եթե ստեղծողը չկա, ի՞նչպես կարող են լինել նրա ստեղծվածները: Եթե Աստված չկա՝ մտածող, վճռող, բարի կամ չար Աստվածը, ինչպես կլինի այս աշխարհը, որ միշտ կա ու կշինվի, կդառնա ու կքանի... Եթե Աստված չկա, ասել է որ էլ ոչինչ չկա, ո՛չ չար ու բարի,

և ոչ էլ այս տեսանելի և զգալի աշխարհը: Աստծիդ պես — ամբողջ տիեզերքը զառանցանք է, երազ, կարելի է մենք էլ չկանք, աշխարք էլ չկա... բայց մենք կանք, ես ու դու կանք, աստղերը կան, ուրեմն, աշխարքը կա: Եթե աշխարքը կա և Աստված չկա, ուրեմն մարդը ի՞նչ է այս անտակ, անսահման աշխարքի մեջ՝ այս թոհուբոհի մեջ, մի որբ, անտեր, անգլուխ մրջյուններ, աշնան խաղաղ քամու բերանն ընկած, ջրից հանած ձկներ՝ թլպլտացող:

Ճարտարապետը Հարությին ուշադիր լսելով, երկար լռեց, երկար մտածեց, ցավագին մտածեց և ասաց.

— Աստծներդ չա՜տ շիտակ է. գիտության թույլ կողմը դա է. գիտության համար էլ, Նարեկացու համար էլ անլուծելի է աստվածությունը: Ամենայն դեպս, աստվածաբանների ընդունած Աստվածը... ճշմարիտ է զգացածդ, որ առանց այդ դյուտի — Աստծու տիեզերքը կարծես դառնում է մի անհոգի մեքենա, մի աննպատակ, անիմաստ, և մարդը իր գիտակցությամբ... ճիշտ ես ասում... ինքը որբ, անտեր...

<«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ» ԿԱՄ «ԻՆԺԵՆԵՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՁՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ԻՐ ՋԱՂԱՑՈՒՄ

Հարութը հետևյալ հարցերը տվեց ճարտարապետին.

1) Աստված կա՞, թե ոչ. եթե կա, չարիքը ինչո՞ւ է, մահը ինչո՞ւ է. հոգու անմահություն կա՞: Իսկ եթե չկա՝ աշխարհն ո՞վ ստեղծեց, մարդուն ո՞վ... ի՞նչն է կյանքի նպատակը:

Պատասխան – Գիտնականներ կան, որ ընդունում են Աստծու գոյությունը, գիտնականներ կան՝ որ մերժում են: Ինձ համար – բնությունն է ստեղծել մարդուն՝ և անասուններին ու բույսերին. մարդը նրանց չարունակությունն է: Չարիքը բնական է. ինքը բնությունը ոչ բարի է, ոչ չար, մարդու համար է այդպես... Մահը բնական է, ամեն իր փոխվում է, վերջ ունի՝ մի նոր բան դառնալու համար: Հոգու անմահություն չկա: Կյանքի նպատակը կյանքն է. բնության համար կյանքը իր երևույթներից մեկն է, ընթացքն է. ուղղակի բուսել է կյանքը, ինչպես օդը, ջուրը. կյանքը նույն նյութն է՝ այլ ձևի տակ, ձևի մեջ: Բնությունն է միայն անմահ, նա անսկիզբ է, անվերջ, անհուն, անսահման:

Հարութ – Ի՞նչ է բնությունը, ինչո՞ւ է նա անսկիզբ, անվերջ, ո՞վ է ստեղծել նրան:

Պատասխան — Բնությունը չի ստեղծվել. միշտ եղել է, միշտ կա, միշտ պիտի լինի: Թե ինչ է նա — չգիտեմ, չգիտենք, չենք կարող գիտենալ. մարդուն անմատչելի նա՝ գիտենալ: Անհասկանալի է, անըմբռնելի, մարդն է այդպիսի հարցեր դնում, ծագում, վախճան, նպատակ. բնությունը ընթացք է, նա իրեն չի դգում, չի տեսնում, չի խորհում. մարդն է նրան զգում, նրա մասին խորհում: Առանց մեզ՝ բնությունը կա, եղել է միշտ ու կլինի. բայց քանի որ նա իրեն չի դգում, նա իրեն համար չկա, մեզ համար կա նա: Այս քարը իրեն համար չկա, մեզ համար կա: Հենց մարդու մեծությունը դա է — զգալ բնությունը և մտածել...

Մարդու կոչումն է — գործել, ստեղծել իրեն համար լավ կյանք, լավ հասարակություն, գիտություն, քանի ողջ է, իսկ երբ մեռավ՝ ամեն ինչ վերջացած է... կգա մի օր, որ մարդը կվերջանա, և բնության համար դա կլինի ոչ մի կորուստ, ոչ մի ցավ: Թերևս չատ մոլորակների վրա մտածող արարածներ կան...

Հետո խոսում է ժամանակի մասին, տարածության մասին, նրանց անսահմանության, մեծության. աստղեր կան, որոնց լույսը 3 միլիոն տարուց է մեզ հասնում... Նրանք ծնվում են, և նորը չինվում. ատոմների մասին... անհուն փոքրության մասին... Բայց, պարոն Հարութ, դու ապրիր, աշխատիր և ուրախ եղիր...

— Էլ ինչ Հարութ, էլ ի՞նչ պարոն...

2. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքից եկա, որպեսզի բնության անդորրության և լռության մեջ խորհեմ, հանդիստ ղեկով, և հանգստա-

նամ: Եվ ուրեմն պարզում եմ մի փիլիսոփայություն, մաքեր, մտածումներ բնության մասին, հակադրելով իրար երբեմն քաղաքակրթությունը: Մարդը և բնությունը. հոգեբանությունը և տարերքը: Կամքը և կույր տարերքի քմահաճույքը: Բնության ծագման, տիեզերքի ծագման, կյանքի ծագման. ինչ է նյութը, ուժը: Նպատակը, իմաստը բնության, գոյության:

Ինչ որ ճարտարապետը ուզում էր ասել Հարուքին, այստեղ կդնեմ:

Ժամանակի մասին, տարածության մասին: Աստղերի մասին, հավիտենականության մասին, կյանքի ոչնչության մասին, բայց մարդկային արժեքի մասին. մարդն է ստեղծել տիեզերքը (Fehner): Բնազդի մասին, ինքնագիտակցության մասին, ապրելու կամքի մասին (Շոպենհաուեր):

Բնազդը,– օրինակ: Մի միջատ, ձվերը դնելուց առաջ և մեռնելուց առաջ, ուտում է իրենից մի միջատ և ողջ-ողջ բերում է, դնում է իր բույնի մեջ և պարալիզի ենթարկում, որ չմեռնի (ուրեմն գոնե նյարդային կենտրոնը): Ձվերը դնելուց հետո մեռնում է ինքը. ձագերը ծնվում են և նրանց առաջին սնունդը պիտի լինի այդ դևրի միջատը կամ միջատները: Ձագերը հարձակվում են նրանց վրա և խփում են նրա սրտին և մեռցնում և ուտում: Զարմանքը այնտեղ է, որ նրանք բնազդով գիտեն սրտի տեղը:

Բնության հակասությունները, չարությունները ու բարությունները, բայց նա էության մեջ ո՛չ չար է, ո՛չ բարի: Մարդն է դնահատում, կշռաչափը:

Բնությունը մի ձեռքով քանդում է, մյուս ձեռքով՝ չինում: Մարդկային բարոյական իդեալները չեն ներդաշնակվում բնության հետ. բարոյական աշխարհը դեմ-դիմաց բնությանը:

Նախամարդն է բնական մարդը: Եվրոպացին փչացած, այլասերված անասուն է: Բարձր կուլտուրայի միջով պիտի հասնել նոր բնամարդուն...

Ամեն վայրկյան մի մարդ է մեռնում, բայց ամեն վայրկյանի մեջ ինչքան կենդանի է մեռնում — սկսած միկրոպներից, մամուռից, <անընթ.>ծերից մինչև հասարակածային հսկա ծառերը և կետերը, փղերը...

Ինչքան չռայլ է բնությունը, և միևնույն ժամանակ ինչքան ժլատ, գծուծ, կծծի՝ նայելով պարագաներին, նայելով որոշ կենդանիների հանդեպ:

Ոչ մի կորուստի վրա չի ցավում բնությունը, որովհետև էության մեջ ոչինչ չի կորցնում. ամեն բան ելնում է նրա քսակից և նորից մտնում նրա քսակը:

— Բնությունը այսօր նյարդային էր, ջղային, լցված էր էլեկտրականությամբ:

3. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

— Վագրի մեջ տարերքի ամբողջ, բովանդակ կատաղություն է մարմնացած:

— կենդանիները բնազդական ահավոր երկյուղ ունեն իրարուց: Սարսափելի զգույշ են, միշտ ականջները սրած, միշտ թռչելու, թաքչելու, փախչելու պատրաստ: Նրանց քունն էլ զգույշ է. «Արջը քնում է, բայց մի ականջը պահապան է դնում», ասում է ժողովրդի խոսքը:

— կենդանական կյանքը, ամբողջապես անցնում է սնունդ, որս գտնելու մեջ և կեր չդնալու մեջ:

— Ի՜նչ անհամար, անթիվ ողբերգություններ են կատարվում ամեն վայրկյանին բնության մեջ, կենդանական

աշխարհում — անտառներում, դաշտերում, ծովերի մեջ — իրար ուտել, հոշոտել, կլանել... ի՜նչքան ցավ, տանջանք, հոգևարք... Անտառում, գիշեր թե ցերեկ, լսում է չարունակ ցավագին ճիչեր... մեկը կերավ մյուսին...

Եվ ի՜նչ ահավոր վլուզումներ են տեղի ունենում ամեն վայրկյան անհուն տիեզերքի զանազան անկյուններում: Աշխարհներ են բախվում և հրդեհվում, փշրվում... ո՞վ գիտե և կենդանական անքանակ բազմություններ...

— Կարդացել եմ, որ ո՛չ մի դրսի կենդանի, ծով ու ցամաքում, իր բնական մահով չի մեռնում, չի ծերանում, այլ կեր է դնում ուրիշին...

Եվ ինչքան թռչուններ մեռնում են չվելու ժամանակ՝ ցուրտից, փոթորկից, հոգնածությունից, ծովերում խեղդվելուց... Իսկ արևը, լուսինը կամ աստղերը անտարբեր փայլում են բոլորի վրա, այս ողբերգությունների վրա...

Բնությունը առանց գիտակցելու ստեղծել է կամ ստեղծվել են կենդանիները և իրար վրա բաց թողել կամ թողնվել: Ո՛չ տեր կա գլուխներին, ո՛չ ցավող Հայր Աստված, ո՛չ խնամող... Ի՜նչ դիվական խաղ է, որ խաղացվում է ապրողների-զգացողների գլխին: Ինչո՞ւ նյութը, այս անզգա զանգվածը, դարձավ զգացող, ցավ կրող նյարդ...

Նյութ, տարերք, և նյարդ, ցավ... ահա՛ ոճիրը, որ չունի իր գիտակից, պատասխանատու ոճրագործը...

— Եթե թռչյլ տրվի, օրինակ, ինֆուզորիաներին, ասում են մի տարվա ընթացքում, երկրագնդի մեծությամբ կդառնան: Մի քանի ամսվա մեջ կլցնեն բոլոր ջրերը, ծովերը, ովկիանոսները:

Եթե թռչյլ տրվի բույսերի ամենաչնչին մի տեսակին, երկրի բովանդակ մակերեսը մի տարվա մեջ կպատեն: Նույնը բոլոր կենդանիների նկատմամբ: Բայց իրար

խանգարելով, իրար դեմ պայքարելով, պահպանում են հավասարակշռությունը:

– Մի յուլ տեսա – այդ – մի տարերք էր, բնության կույր զորությունը: Յուլ, ուղղակի՝ տարերք: Ուղղակի մղում, բաղձանք, կիրք: Ուրիշ ոչինչ, ո՛չ իմացականություն, ո՛չ բանականություն:

4. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

– Ճակատագրից չի կարելի խուսափել:

Հանգուցյալ Հ. Գույումջյանը պատմում էր, որ իրենց թե հորքուրանց կովը պիտի մորթեին: Բռնեցին, որ մորթեն, զգաց, բառաչելով փախավ, պտտվեց արտի չորս կողմը և հետո, համակերպված նկավ ու լուռ կանգնեց՝ մորթվելու համար...

Զգաց, որ մինուչն է՝ փրկություն չկա:

– Բնության մեջ ամեն մի կենդանի օրգան՝ սերմ, բջիջ, միկրոպ, ծիլ անպարտելի ձգտում ունի ապրելու. ապրել, ամրանալ, սերունդ տալ, տևել, հարատևել, արևի տակ տեղ գրավել, պայքար ապրելու համար, սերունդ թողնելու համար, չմեռնելու համար. և ապրելու պայքարն ու տենչը չմեռնելու տենչ ու պայքար է:

Չմեռնել.– սա է նշանաբանը տիեզերքում:

Եվ չմեռնելու համար ստեղծված է վախը, երկյուղը:

Ամեն մի բջիջի, սերմի մեջ բնազդական կերպով դրված է մեռնելու վախը, ապրելու տենչը, կամքը: Թո՛ղ ոչ մի

մարդ, անհունորեն քաջ թեկուզ, չպարծենա թե մահի վախ չունի. սուտ է, ինքնաճանաչություն չէ, պատրանք է.— ո-րովհետև այդ քաջի մեջ իր կամքից, դիտակցությունից բա-ցարձակ անկախ գոյություն ունի, ներկա է և ներուժ մշտադործ մահի վախը, մահից փախչելու տենչը. ապրելու մշտավառ, մշտազոր կամքը, մութ տենչը:

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԱՆԻՈՒՄ

Նա երիտասարդ տղա է, նորավարտ, Եվրոպայում ու-սած և այնտեղից եկած, հայրենասեր է և հայկական ար-վեստի սիրահար: Հեղափոխական չէ:

Նա լսելով դաշնակների ոգևորված և հավատով ճա-ռերը ասաց.— Ես պաշտում եմ ֆիդահներին, նրանք նոր դարի աստվածներն են, հայության լավագույն, փառավոր, ազնիվ էության դրսևորողները, մեր կենսունակության նշանները: Բայց ես հեղափոխական խառնվածք, բնույթ չունեմ. ես կարող կուլտուրական մարդ եմ: Իմ կյանքի նպատակն է — հայ արվեստի ուսումնասիրությունը. ցույց տալ և հայերին, և աշխարհին մեր արվեստի վե-հությունը, մեծությունը: Ես այն կարծիքին եմ, այն հա-մոզմունքին, որ այն ազգերը, որ յուրահատուկ արվեստ են ստեղծել, ոճ ունեն, չեն կորչի, հավիտենական են. և հայը անվերածելի ազգ է, դաշտ է նա: Եվ վերջապես այսպիսի հոյակապ կառուցումներ ունեցած մի ազգ, եթե նույնիսկ ստրկացած լինի, մի օր պիտի ելնի, ոտքի կանգ-նի իր չենքերի պես... որ դարեր ապրում են և պիտի ապ-րեն մինչև աշխարհի վերջը:

Դուք կռվում եք մի մեծ գաղափարի իրականացման համար — ազատ Հայաստանի համար, և կռվել եք ու

կռվում եք քաջարար, ունեք ձեր հերոսներն ու նահատակները, այսինքն՝ մեր, սրտիս խորքով ցանկանում եմ ձեր մեծ գործին հաջողություն... Բայց ես հավատ չունեմ Եվրոպայի վրա. բարոյապես ընկած է նա. բուրժուական է – դրամասեր, վաճառող և վաճառվող... իմ հույսը դալիք նոր եվրոպական մարդկությունն է, որ պիտի կործանեն այդ անհոգի եվրոպան և վերածնվի նոր մարդկային հոգով: Ես հավատում եմ քաղաքակրթությանը, դիտությանը, զարգացմանը, հառաջադիմությանը, որ պիտի դա և պիտի բերե արդարություն, սեր, ազատություն ամբողջ աշխարհի համար:

Հայությունը պիտի կռվի և չի կարող չկռվել. նա ունի, պիտի կռվի իր իդեալի համար, նա խոսք ունի դեռ աշխարհին ասելու, և պիտի կռվի...

Ազգերը ապրում են իդեալով, հավատով, պատրանքով. վայ այն ազգին, որ չունի դրանց, կնշանակե նա ծերացել է և հոգեվարքի մեջ է: Երբ կան մի ազգի Աստվածները, երազները, կուռքերը – նա կենդանի է, երբ չկան՝ նա մեռած է...

Երազներով է մարդ կենդանի...

6. ԲՆՈՒԹՅՈՒՆ

– Ճաշի ժամանակ չունեն եկել, ճանկռում է դուռը:

– Հանաք բան է, ստամոքս է է՛է՛:

– Կատուն լավ կերավ, կշտացավ, պոչը երկինք է հասցրել, դոհ պտտում է: Քեֆը տեղն է:

– Պատի նեղ ծերպերում բույս է բուսել. և կռվում է հողմի դեմ...

– Ուզում է ապրել. ինչո՞ւ ուրիշները կապրեն, ինքը չապրի...

/Ամեն սերմի անպարտելի ձգտումն է – ապրել, արմատ նետել, տևել, սերունդ տալ, արևի տակ իր տեղն ունենալ:

Միլիարդ-միլիարդ սերմեր, սպերմաներ, սպորներ, բճիճներ խելագար ձգտում ունեն ապրելու, տիեզերական-տարերային մղում, կամք ապրելու: Ինչ կռիվ կա մեր սպերմաների մեջ, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է ինքը բեղմնավորել ձուն: Ո՛չ ոք մահ չի կամենում...

Եվ այդպես է. մեր յուրաքանչյուր խոսքը, միտքը կամենում է ապրել, ասվել, գրվել: Մեր հոգում կատաղի պայքար են մղում մեր տենչերը, մտքերը, երազները, մութ դիտումները – ամենքը ուզում են մեր ետի կեդրոնը մտնել, տեղ գրավել, առաջավոր, և չեչտվել, երևալ, իրականանալ – և ապրել. և ոչ թե մեր անգիտակցության-ենթագիտակցության մեջ խեղդվել, կորչել, անհայտանալ...]

7. ԱՇԽԱՏԱՆՔԸ

– Աշխատանքը կրթում է մարդուն, նա է զարգացրել մարդուն և կենդանիներից բարձրացրել, որովհետև նա պահանջում է ուշադրության լարում, խելք բանեցնել, մտածել, հաշվել: Նա է զարգացրել, ստեղծել իմացականությունը...

– Աշխատանքը ամենամեծ ուժն է՝ մոռացություն բերելու մեջ, ժամանակը չզգացնելու մեջ: Աշխատանքը՝ միայն,– ո՛չ կինը, ո՛չ գինին, ո՛չ խաղը, ո՛չ օրորը, ո՛չ քունը, ո՛չ ճամբորդությունը... Միայն և միայն աշխա-

տանքը՝ մոռացնում է վիշտը, անցյալի անմար հուշերը՝ դառն թուլները, դահիճ-անցյալը, հուշերը.— և վերջապես մահի մշտարթուն ներկայությունը.— ուրեմն աշխատել, անդուլ, անդադար աշխատել:

8. ՄԱՐԴԸ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԳԱԶԱՆ Է

Ամենավայրագ գազանը, վագրը, գայլը, բորենին.— սպանում են՝ ուտելու համար: Քաղցած են՝ սիրտ ուտեն: Մարդն էլ է ուտում՝ սպանելով կենդանիներ՝ ոչխար, եղ, կով, ձի, թռչուններ...

Դա — կենդանիների բնական իրավունքն է՝ ուրիշին ուտել: Բայց մարդը անցնում է այդ իրավունքից. նա պատերազմ է ստեղծել, ուր սպանում է միլիոնավորների, ամենավայրագ ձևերով:

Մարդը աներևակայելի հրեշ է. գազանը նրա մոտ հրեշտակ է: Մարդը գազան է, երբ որսորդ է, ձկնորս է, բայց պատերա՞զմը:

Սուտ է՝ թե քաղցն է ստեղծել պատերազմը կամ երկրի պտտիկությունը. պատերազմը ստեղծել են կուշտերը, թագավորներ, իշխաններ, փաշաներ, կապիտալիստներ — սոսկ կողոպտելու. ընչաքաղց են, նյութամոլներ, փառատենչներ...

Ժողովրդին որ թողնես, նա չի պատերազմի:

9. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Ճարտարապետը երևաց, երբ Հարությը արդեն կազմակերպված էր — կասկածող, սկեպտիկ, հոռետես. երբ ար-

դևն տերտերից քշված էր ու ապրում էր ջաղացում. ուրեմն մոտավորապես 1896-99 թվերը: Երբ Հարությը 26-29 տարեկան էր:

Հարությը կարդացել էր մինչ այդ բացի Աստվածաշունչից, պատմագիրներից, Զամչյանից, այլև ուշի-ուշիով եղնիկին, «Արարատ» ամսաթերթը, Վարք սրբոց, Հայսմավուրք, Պղնձե քաղաք և այլն:

Ինժիները նրա մոտ հյուր եղավ, որովհետև [թե գյուղը նրանց մոտ էր իջել] թեև խնձկոնքի վանքն էր իջել, բայց գնում էր Տիկոո տաճարը նկարելու. իջել էր Հարությենց տանը, և պատահաբար ջաղացը:

Այն իմաստով եմ փոխում այսպես, որպեսզի Հարությը արդյունք չդառնա ճարտարապետի աշխարհահայացքի, այլ, ապագայում, իբրև լրացուցիչ երևույթ, լուսաբանող, ընդլայնող:

Ճարտարապետը գրույցների մեջ նրան ասում է, որ ժամանակ-տարածություն անսահման են, անսկիզբ, անվերջ: Կյանքի ծագումը. նյութից: Պլազմա մինչև մարդ: Միկրոպներ, հյուլեններ, բճիճներ: Տիեզերքի մեջ չկա լույս, գույն, ջերմություն, հոտ, համ...

Լույսի արագությունը:

Մարդկային կուլտուրան, հաջողությունները, կռիվ բնության դեմ, հաղթանակները: Բնության մեջ գոյության սոսկալի կռիվ: Էգոիզմ: Մահի վախ: Ապրելու մեծ տենչանք:

Մարդը մահից սարսափահար ստեղծել է հոգու անմահություն, դրախտ-դժոխք:

Կուլտուրայի հեռապատկերներ — սոցիալիզմ, պատերազմների վերացում, ազգերի ձուլում, ոչնչացում:

Մեծ նվաճումները — օդին հաղթել, տարածության հաղթել, նոր գյուտեր՝ թռչել, լսել, տեսնել, թերևս հարա-

բերվել մոլորականների հետ: Երկարակեցություն, առողջություն, բայց մահը անխուսափելի է: Անհատի մահը:

Կգա և մարդկության մահը, և երկրագնդի մահը, և արևի մահը, և Ծիր-Կաթինի մահը, և նորից Ծիր-Կաթիններ, արևներ, երկիրներ, մարդկություններ, որոնք միշտ եղել են մեզնից միլիոնավոր տարիներ առաջ տիեզերքի հեռավոր աստղերի վրա: Բանի որ տիեզերքը հավերժական է, ուրեմն անթիվ անգամ մարդկություններ են եղել և ոչնչացել:

Հարութի հարցին՝ Աստված կա՞, թե՞ ոչ: Ճարտարապետը որոշ չփաստախանեց. արդյոք խնայե՞ց, թե ուրիշ մի բան, գուցե և իր անկեղծ մտածումը — եկեղեցու Աստվածը՝ մորուքով, մազով, չկա, Մովսեսի Աստվածը, որ ստեղծել է երկիրը՝ չկա: Այլ բնությունն ինքը, տիեզերքը ինքը Աստված է. բնություն և Աստված հոմանիշ են, նույն բանն են: Բայց պատժող, վարձատրող, նախախնամող հայր Աստվածը չկա:

Հարութին բնավ չբավարարեց այդ տեսակի Աստվածը. նրան պետք էր Քրիստոնեական Աստվածը — հոգուն անմահություն տվող, հավիտենական կյանք, դրախտ, դժոխք, հարություն...

24 Հունիսի, <19>33 թ.

10. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

Շաբաթ գիշեր Հարութը Ուստայի հետ թափառելուց հետո ամբոխի մեջ, կատակներ և չարաճճություններ անելուց հետո եկավ, գտավ ճարտարապետին (Կայծակի մոտ) և տարավ իր իջևանը (այդպես էր պայմանավորվել, որովհետև այդ օրից նա իր հյուրն էր, պիտի Տիկոր և Խնծկոնք ու-

սումնասիրեր): Գիշերը մինչև ուշ խոսակցում էին: Հարությը գիշերը չքննց և մտածեց նրա ասածների մասին: Առավոտ նրա հետ թափառեց վանքերը. հետո եկավ, Ուստային գտավ, գնացին միասին քյանդրբազին: Հետո կարոն գնաց հարսին պար հանելու, հետո գոմը: Գոմից հետո գտան իրար Հարությը և մյուսները. քեֆ: Հարությը հուսահատ էր, տխրել էր ճարտարապետի հետ ունեցած զրույցներից: Լավ, կատաղի քեֆ արեց, խմեց, խմեց, բղավեց, գոռաց, ստիպեց, որ զուռնան ականջի մեջ փչե: Երգել տվեց Սայաթ-Նովա, Զախորդ-օրեր... Հետո ավելի կատաղեց. գինով լի շիշը զարկեց քարին կոտրեց, հայհոյեց սրան-նրան, որոնք որ նկատողություն արին [էդ խի ինչու կոտր...], թե հարբել ես, գնա, քնիր... Հարությը ընկավ Ուստայի կրծքի վրա և լացեց, լացեց, համբուրելով նրան: Ուստան էլ նրան գրկեց, համբուրեց, գուրգուրեց և հրամայեց, որ դավուլ-զուռնան առաջները ձգած՝ պտտեն դյուղամեջ, ուխտավորների մեջ, որ Հարությը սփոփվի, մի կողմից էլ Սանամը տեսնի Ուստայի քեֆը: Ուստան թևը ձգած Հարությի վզովը, մխիթարում էր նրան, գրպանից հանելով խուրմա, չամիչ...

Այդ թափորը հանդիպեց մաստարեցոց և թալինցոց կռվին. սպանություն... փախուստ...

Ջավուշը Հարությին տարավ մոր մոտ. Հարությի տեսիլքը:

Սա կատարվում է կիրակի օրը ճաշից շատ հետո, երեկոյան դեմ: (Արդեն աչուն է, չուտ է մթնում:)

11. <Ո՞Ց ՊԻՏԻ ԳԼՈՒԽ ԹԱՓԵԼ...>

— Ո՞նց պիտի գլուխ թափել էսքան միջատների, ճիճուների, որդեր մեջը, ասում էր Հարությը:

– Տօ՛, ի՛նչ թոհ ու բոհ է աչխարքը, ի՛նչ թնջուկ...

– Ճարտարապետը լավատես, ոգևորված երիտասարդ էր, հավատավոր թե ժողովրդի, թե մարդկության, թե պիտության ապագայի նկատմամբ: Բայց հեղափոխության հակառակ էր, և մանավանդ դաչնակցության: Նաղաղ կուլտուրայի հավատացող էր, աչխատանքի, գործի, կրթության հավատացող:

12. ՀԱՐՈՒԹԸ

Մարտ, 1933

– Հարութի հոր վերջին հայացքը Հարութի վրա էր հառած և վերջին խոսքը Հարութի անունն էր...

– Հարութը ամուսնանում է և կինը մեռնում՝ թողնելով մի զավակ:

Այսինքն՝ հին վերսիան պահել:

– Ինժեները գալիս է Հարութի մոտ 1904 թվին. վեպի ընթացքին:

Եվ երբ տեսնում է, որ իրա ասածները աչխարհի, տիեզերքի, Աստծու մասին չատ տխուր, հուսահատական ներգործեցին Հարութի հոգու վրա, ասում է, որ տխրելու բան չկա, որովհետև գիտությունը պատրաստում է մարդկության համար փառավոր ապագա: Սոցիալիզմ. ջարդերի, պատերազմների վերջ. ապրուստի աննևևակայելի դյուրություններ. հիվանդությունների բժշկում, երկարակեցություն: Ժողովուրդների մեջ սեր, եղբայրություն, խաղաղություն...

Հարութին այդ ամենը չի մխիթարում, քանի որ գոյություն ունի մահ, կյանքը անցավոր է, մարդը իր երկրի հետ տիեզերքի մեջ հյուվե է, աննչան մի բան, և Աստված՝ իր

ըմբռնած՝ հայր, խնամող, տիեզերքի տեր և պահող, հոգու անմահություն ճանաչող Աստվածը գոյություն չունի...

13. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ԲԱԳՐԱՆ

– Հայ գյուղացիները ի՛նչպես կապված են, ի՛նչքան խորունկ հիշատակներով, հուշերով այս քարերի հետ...

Զգիտեն կարդալ այս արձանագրությունները, բայց հոգով կարդացել են. հազար տարիներ առաջ կարդացել են և գիտեն, գոց գիտեն: Անգրագետ են, բայց գրագետից լավ են կարդում, որովհետև սերունդներով կարդացել են:

14. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

– Ավերակ վանքերը, բերդերը, պարիսպները ավելի հզոր են հայերին հայ պահելու, քան չեն վանքերը և այլ կանգուն, գործող շենքերը...

Երազը, երևակայությունը ավելի հզոր է...

Այս նվիրական քարերն են հայերին հայ պահել մեր պետության կորցնելուց հետո, դառն դարերի ընթացքում...

Երբ հայ գյուղացին տեսնում է մի ավերակ, երեսը խաչակնքում է, համբուրում... Նա գիտակցում է, որ սա իր տունն է, իր պապերն են չինել, իր արքաները... այս քարերը անժխտելի ապացույց են՝ որ այս երկիրը միշտ իրենն է եղել և է, և պիտի լինի...

15. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ՀԱՐՈՒԹԸ

Ճարտարապետն ասաց, որ կան միկրոպներ, մանր, անտեսանելի արարածներ, մեր բերանի մեջ, մեր թոքերում,

ձեռքերի վրա, մեր ատամոքսում, թոքերի մեջ... որոնք միայն խոշորացույցով են երևում. այդ միկրոսները վխտում են ամեն տեղ բույսերի վրա, կենդանիների վրա, օդի մեջ, ջրի մեջ... և Հարությը զարհուրանքով իր երակի, տեսիլքի մեջ (աշխարհն առանց մարդ) տեսավ նրանց, իր աչքը դառնալով խոշորացույց, հեռադիտակ, տեսնելով հյուլեները, բջիջները, մանրէները, արևները և հեռավոր, հեռավոր աստղերը... և ամեն իր, իրերի միջի անդադար շարժումները, թրթիռները...

– Մարդը դարձավ տիեզերք և տիեզերքը՝ մարդ:

– Հարությի համար իր սերը, Հրեղենը, հայրը, մահը.– դարձան իդե-ֆիքսներ, բևեռուն մտքեր, սևեռումներ, մտահալածանքներ, մտալկանքներ... և տանջանքներ, տառապանքներ՝ յուրաքանչյուրը:

Դրանցից փրկվելը, փրկությունը եղավ Ուստայի քարավանը, արաղը, որ բերում էին մոռացում, պատրանքներ:

16. <ԵՐԲ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ...>

– Երբ ճարտարապետը Հարությին որոշ մտքեր տվեց և բացատրեց չա՛տ բաներ քնության մասին, դրանք եղան մի տեսակ լուսամուտներ Հարությի համար, որոնց միջից նա կարողացավ տեսնել քնության խորքը:

17. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՄՏԱԾՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ

Հեթանոս տաճարը / մեհյանը վերածվել է Քրիստոնեական մատուռի, ատրուշանը՝ սեղանի, նույն քարերից

են չինել... ձևն է փոխվել. էությունը նույնն է – պաշտամունք, իդեալ: Աստված, որով ապրում է մի ժողովուրդ:

Ի՞նչ են այս քարերը, դարևոր քարերը, որ ձևել են, կաղապարել մեր հայերը – քարի կտորներ, բայց սիմբոլ են դարձել... և պահում են ժողովրդին, հայ են պահում. ինքնատիպ, ինքը, իր ես. այդ քարերի մեջ. հայն ասում է – Ես ես եմ: Ես ինձ հետ եմ, ինքս իմ: Ոչ նման ուրիշներին, անվերծանելի, տարրերի, հավիտենական տարերքի պես: Խորհրդավոր այս ավերակ քարերը, որ նյութապես մաշված են, ավրված, բայց միշտ կենդանի են, ապրող, շնչող ներշնչող... հոգի ունեցող և հոգի տվող: Այս քարերը գինք ու վահան են եղել և են հայերի ձեռքում կռվելու և միշտ հաղթելու համար թշնամուն, թշնամի տարերքին:

Եվ գյուղացիների հետ ծնրադրեց և համբուրեց քարի մի բեկոր:

Հարուքը գարմացավ...

Ավանդություններ...

18. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Բագրանում լսում է երգեր, որ երգում են գյուղացի աղջիկները, ժողովրդական երգեր և իրենց հնարած եղանակներով: Խորհում է: «Բանաստեղծ է Շիրակի ժողովուրդը. ի՞նչն է նրան բանաստեղծ դարձրել, իր տենչավառ սիրտը, իր երևակայությունը, և իր ցորենի արտերը գմրուխտ ու ոսկի, և անհուն կապույտ երկինքը, իր գխի վերև»:

19. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԻՆՔՆԻՆ

«Երբ մի ժողովուրդ ընկնում է ստրկության մեջ, բայց պահում է իր լեզուն, կնշանակի, բանտի բանալին իր ձեռին է...»

Ի՛նչ ճշմարիտ է ասել Հանճարեղ Միսաբալը:

Այո՛, այո՛. և երբ պատեհ ժամանակը գա, կբանա դուռը և դուրս կնետվի:

20. ԲԱԳՐԱՆ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԽՈՐՀՈՒՄ ԷՐ

Մենք հարյուրավոր սերունդների, հազարավոր տարիների արյունն ենք կրում մեր երակներում. նրանց (նախահայրերի) զգացմունքները, ապրումները, տենչերը մեր ենթագիտակցության մեջն են. նրանք՝ մենք ենք. մենք այդ բազմահազարանոց ծառի տերևներն ենք. ես մի տերև եմ, ուրիշ ոչինչ:

Մեռնելներն են իշխում:

Մի ազգի տարերքի ուժը, հիմքը, արմատը, հողի վրա և բնության մեջ ապրող ժողովուրդն է, գյուղացին, [ազգի արմատը, որ] որ [գյուղը] ուժով է բնության ուժով և հողի ուժն ունի իր արյան և ջղերի մեջ: Քանի գյուղը կա, ազգը կա...

21. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆ...>

Ճարտարապետը Բագրան իր ճառում ասաց. հուզիչ է պատկերը, թե ինչպես այս անտեր ժողովուրդը, այս հին

տառապած ժողովուրդը, սիրում է իր երկիրը, որ իրեն այնքան տանջից ու տանջում է, ի՛նչպես կապված է, չաղախված այս հողի հետ: Տեսնում է Մասիսը և երկյուղած՝ գլուխը բռնում, ենթագիտակցությունով կամ գարեջրի թաքուն մաքով, որ այս լեռը մի մեծ գաղափար է խորհրդանշում: Ինչպես պանդուխտը օտար տեղ գնալիս հայրենի հող է վերցնում հետը, մի պտղունց, որ եթե մեռնի, վրան ձգեն: Ինչպես ամեն մի պանդուխտ երազում է հայրենի հողում թաղվել. ֆիդային կռվելիս սրբազան հողից մի պտղունց բերանն է ձգում, ուժ առնելու համար, հաղորդվելու համար նախնիքների աճյունի հետ...

– Սակավահող հայ գյուղացիներին ցարը խոստանում է Ռուսաստանում առատ հող տալ, եթե Ռուսաստան լինեն. հայերն համաձայնում են միայն այն պայմանով, որ հայրենի երկրում հող ստանան իրենց պապերի գերեզմանների մոտ: Թշվառ հայերը աղքատությունից նեղված՝ համաձայն են պապերի դավանանքը փոխել, բայց հողը ո՛չ: Հողը բարձր է, ուժեղ է, խորհրդավոր է հին հավատքը, մանավանդ դրսից ստացածը: Հող, ցեղ, լեզու, մշակույթ...

22. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻՆ ԱՍՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ուսապետն ու կայծակը ջատագովում են միայն բռնի ուժը. ուժ չունես, քաղաքակրթությունը սուտ բան է. իշխում են բնազդները. մարդը եսական է, քրիստոնեությունը սուտ է. վա՛յ հավատացյալին, կորած է այս գաղան աշխարհում:

Սրա դեմ ճարտարապետը ասում է.

Ես լավ գիտեմ, որ եվրոպական քաղաքակրթությունը սուտ է, կեղծ է. նա հիմնված է ուժի և շահի վրա. լավ գիտեմ, որ մարդը իբրև կենդանիներից սերած՝ վայրագ է, նապաստակ, անբարոյական. ես ավելին կասեմ. մարդն այնքան եսական է, որ կցանկա ամբողջ մարդկության մահը, եթե դրանով ինքը չի մեռնելու: Նույնիսկ մարդը ուրիշի կամ նույնիսկ բարեկամի, ընկերի մահի լուրը լսելիս առաջին վայրկյանում ուրախանում է, հետո է տխրում, որովհետև հետո է նա կրթվել, բարոյացել ու մարդ դարձել: Ես հավատում եմ կրթությանը, բարոյականությանը. ճշմարիտ քաղաքակրթությունն է մարդկանց հանել բնազդական գազաններից և մարդ դարձրել: Ուրիշ բան թե՝ Եվրոպան բարբարոս է թուրքի պես. նրա քաղաքակրթությունը բարոյական չունի, այլ շահ, փող, տիրել, ապրել ուրիշներին զոհելով. այս խնդրում Անգլիան, Գերմանիան թուրքերից բնավ չեն զանազանվում: Գիտեմ, որ եվրոպական քաղաքակրթությունը մարդկանց ավելի է գազանացնում, գազան են դարձնում զինված հրացանով և դիվանագիտությամբ...

Նա հոգս չէր անում, թե Հարությը կհասկանա, թե ո՛չ. ինքը խոսում էր իրեն պարպելու, հանգստանալու համար:

23. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

— Թերևս տիեզերքը մի խորհուրդ, իմաստ, նպատակ ունի, որ մեր միտքը չի կարող ըմբռնել:

— Ինչպես որ եթե այսօր Միր-կաթիննները վերածվեն թոհուբոհի, ոչ մի նշանակություն չունի տիեզերքի հա-

մար, կամ ավելի համեստ ասենք, եթե այսօր երկրագունդը փշրվի, ո՛չ մի աստղ չի խավարի դրա համար, կամ եթե ողջ մարդկությունը ջնջվի, ոչ մի տերև չի դողա ու ընկնի այդ ցավից, այնպես էլ եթե ամբողջ հայության արյունը թափե թուրքը, ոչ մի եվրոպացու աչքից արցունք չի կաթե:

24. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Նա շաբաթներից ի վեր Անիում աշխատում էր, ուսումնասիրում էր շենքերը և նկարում:

Նա ծանոթացել էր Թիֆլիզից եկած մի խումբ հայերի հետ, որոնք մի քանի օր է Անի էին:

Երբ կայծակը իր խմբով եկավ Անի, բնական է, իսկույն հանդիպեցին նրան և ծանոթացան: Երբ նա իմացավ, որ նրանք գալիս են Տիկորից, Բագրանից, Խծկոնքից, Մրենից, ուր նա մտադիր էր գնալու, տեղեկություններ հարցրեց, ում մոտ իջնել, ուր գնա և այլն:

Ուստան ասաց, որ Տիկոր կիջնեք Երեցոնց տանը. նրանց տղան Հարութ անունով, որ գրող մարդ է, լավ գիտե և վանքերի պատմությունները, էդ տեղերի պատմությունը, նրան տես. ասաց տեղը, տունը: Իսկ Նախճավան իմ մոտ կիջնես. էնտեղից ես կուղարկեմ քեզ մյուս տեղերը բարեկամներիս մոտ:

Ճարտարապետը Անիից հետո մեկնել էր մոտակա տեղերը, հետո Տիկոր, և իջևանել էր Հարութի մոտ, որին սիրել էր շատ և մտերմացել հետը: Այդտեղ էլ Ուստան նրան անցողակի տեսավ, և խորհուրդ տվեց Բագրան գալ Հարութի հետ: Եվ այդպես էլ եղավ. Հարութենց հետ եկավ Բագրան: Եվ նրանց իջևանում իջևանեց:

25. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

– *Ազգը տեղ է և ցեղ:*

– *Հայրենիքը մեր սրտերին խոսում է, մեր հոգու մեջն է:*

– *Մեռելներն են, որ միշտ իշխում են:*

26. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ

Ճառերից հետո, երբ Հարությունն ու ճարտարապետը միասին դնացին վանքերը տեսնելու, և ճարտարապետը դառն դայրույթը հայտնում էր դաշնակիների պոռոտախոսության դեմ. մարդը անասունից բարձր է իր բանականությամբ, խելքով, բայց այդ խելքից զուրկ են դաշնակները: Խելացի մարդը պիտի հասկանա միջավայրը, պայմանները, ժամանակը. թշնամին, իր ուժերը... Բայց նրանք. ոչ մի խելքի նշույլ, միայն պահանջ ունեն և ցանկություններ, պահանջում են Եվրոպայից, պահանջում են Թուրքիայից: Ինչ պահանջ Թուրքիայից. չէ՞ որ պիտեն, որ Թուրքը նախամարդ է, գազան, ծարավի արյան և կործանման, առանց քաղաքակրթության. իսկ Եվրոպան՝ մի փթած քաղաքակրթությունից դատարկված հոգով, թափուր ամեն բարոյական զգացումներից. ներացած, միայն չահախնդիր, նյութապաշտ: Պահանջում են խո՛ղճ, դո՛ւթ, մարդասիրություն... Հիմարներ, հակասողներ:

Ասում եմ, ինչպես որ բնության համար արժեք չունի մեր երկրագնդի կործանումը, և մեր երկրագնդի համար ամբողջ մարդկության ջնջումը, որի վրա ո՛չ մի տերև վայր չի ընկնի ծառից, նույնպես էլ եթե Թուրքը կամ

ռուսը ամբողջ հայութիւնը սրի քաշէ, ոչ մի եվրոպացու աչքերից արցունք չի ընկնի մի հին ազգի համար... Նա միայն կմտածէ այդ արյունից չահ կորզելու համար, «կոդոպուտի» իր մասը, բաժինը:

– Հարութը. ուրեմն սուտ բան է՝ խիղճ, դութ, մարդկութիւն. այստեղ է որ ինժիներն ասում է թե՝ մարդը էգոիստ է՝ երբ լսում է ուրիշի մահը՝ ուրախանում է...

27. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ (ԲԱԳՐԱՆ)

– Դաշնակցութիւնը նման է այն աղքատին, որ փափագում է պալատներ չինել, բայց ուժ և փող չունի մի քար դնելու, և երևակայում է ու երազում:

Ես գիտեմ, որ երազները բավարարում են մարդկանց: Խաբվում են մարդիկ, և իրենց երազների մեջ կառուցած պալատները իրական են համարում: [Ուստան էդպես է, մտածեց Հարութը և]

– Այդ ի՞նչպես կլինի,– հարցրեց ավելի պայծառ հասկանալու համար:

– Շա՛տ պարզ: Նրանք չա՛տ են ցանկանում, ինչպես և բոլոր հայերը, որ լինի ազատ Հայաստան, և իրենց արթուն կամ քնած երազների մեջ տեսնում են ազատ Հայաստանը: Ուզում են հաղթել Թուրքիային.– հաղթված են տեսնում. տեսնում են թյուրքը պատիկցած, պարտված: Այդ նրանց բուռն, մեծ, անպարտելի ցանկութիւնն է, որ երազի մեջ իրականանում է, և մարդիկ բավարարվում են, իրենց բախտավոր և հանգիստ են զգում...

Առանց այդ երազների իրենց չա՛տ դժբախտ և թշվառ են զգում: Այդ երազների մեջ մոռանում են իրենց

դժբախտ վիճակը: Այդ երազները նույնն են, ինչպես խաչխաչը, արագը, դինին շատերի համար:

Հարութը մտածեց — Ես էլ էդպես եմ:

— Գոնե երազներով բավականանան և գործի չանցնեն: Գո՛րծ, ծաղրելով. մի երկու թուրք ու քուրդ են սպանում, և փոխարեն հազարավոր հայի արյունի տակ մտնում...

Ի՛նչ տեղին է ասել Պլատոնը — բարիները երազում են այն, ինչ որ չարերը գործում են... Դաշնակները մեր չար հրեշտակներն են...

28. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ «ՆԱՐԵԿԸ»

Երբ Հարութի հարցին թե՝ ինչ է քո կարծիքով, քո հավատով՝ աշխարքի սկիզբը, պատճառը, այդ ստեղծագործ ստեղծիչ նյութը, ճարտարապետը պատասխանեց, որ դա վեր է մեր խելքից: Դա անքննելի է, անիմանալի է, անըմբռնելի է, անսահման է... և այլն: Հարութը թե՝ Նարեկն էլ է էդպես ասում տիեզերքը ստեղծող Աստծու մասին թե՝ «անքնին, անըմբռնելի, անիմանալի, անքննելի, անշոշափելի, անսկիզբն, անժամանակ, անսահմանելի»:

[Ուրեմն ինչ տարբերություն, մինուճար բանն է, անուններն են փոխված:]

29. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Երբ ճարտարապետն ասաց, թե աշխարհը, բնությունը, ժամանակը, տարածությունը, նյութը անսկիզբ են և անվախճան, միշտ եղել են և պիտի լինեն.

– Այդ բանը,– ասաց Հարութը,– ես չեմ հասկանում. միշտ եղել է, միշտ կա: Ո՞րտեղից են. ով ստեղծեց... Չեմ հասկանում:

– Ես էլ չեմ հասկանում,– պատասխանեց Ճարտարապետը:– Եվ մարդ էլ չի եղել ու չի լինի, որ հասկանա...

30. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Հարութին ասաց. մարդկությունը, որ վայրենի է եղել, կապիկ է եղել... և ստեղծել է կուլտուրա, միշտ անդուլ առաջ է գնում. չուտով կթռչենք օդի միջով, չուտով կհաղթենք ամեն հիվանդությունների, կյանքը կերկարի, կյանքը կդառնա հաճելի, բարեկեցիկ. պատերազմները կվերանան...

Բայց Հարութի համար, սևեռուն մահը, կմնա միշտ անպարտելի... Երբ որ մահին հաղթես, նոր կասեմ, կեցցես, Աստված դարձար. եթե ո՛չ արժեք չունի, թռիր աստղերից աստղ, ապրիր 1000 տարի, միլիոն տարի, դա կթռչի վայրկյանի պես, և հետո հավիտենական պիտի չլինիս, և պիտի փթես, ոչնչանաս, որպես թե իսկի չես եղած, չես ծնված...

31. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Կռիվ կա, անողոք կռիվ, մարդու բնազդի և կուլտուրայի միջև. կրքերի, ցանկությունների և բանականության, մորալի միջև: Բնությունը, բնազդը մորալ չունի, քաղաքակրթությունն է ստեղծում մորալը, զսպումը: Վայրենի մարդը, բնազդի, տարերքի մարդը հետզհետե

պիտի կռվով դիջն հավաքականության պահանջող օրենքին. պիտի իր անսահմանի ձգտող ազատությունից չա՛տ բան կորցնե, սանձվի և հարմարվի օրենքներին, պետությանը, ուրիշների իրավունքին:

32. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ ԱՍՈՒՄ Է...>

Ճարտարապետն ասում է, որ մարդ ուզում է նմանվել Աստծուն (Հարութին ասում է՝ պատռոնը նույնն է ասում), Աստված դառնալ (Հարութին ասում է՝ դիտեմ): Նրկա մարդը, որ չինել է երկաթուղի, շոգենավ, հեռագիր, խոշորացույց... միքրոպներից սկսած մինչև աստղերն է քննում ու չափում, չա՛տ և չա՛տ ավելի մոտիկ է Աստծուն, քան Ադամը, որ Աստված անմիջապես չինեց և հետը խոսեց, իբրև իր պատկերի:

Բայց հառաջադիմությունը կանգ չի առնի. մարդը կերթա, չա՛տ և չա՛տ առաջ. պիտի թռնի, պիտի տեսնի անտեսանելին, աստղերի հետ պիտի հարաբերություն սկսի, դնա այնտեղ, ուղղակի աստվածային դադոնիքին մոտենա: Հարութը թե՝ մահին պիտի հաղթե, անմահ լինի:

Նա թե՝ անկարելի է. ամեն բան մահ ունի. արևներն էլ պիտի մեռնեն, ուրիշները պիտի ծագեն և մարդն էլ պիտի մեռնի, պիտի տարրերի վերածվի: Համանական է, որ շատ երկար ապրի. ապրեցնել 100-200 տարի:

Մարդը շատ պիտի փոխվի. մարմինը, հոգին զարգանա, շատ ավելի իմացի լինի, նուրբ դգա, շատ բան կռահե. ինչպես որ ճիճուից մարդ դարձանք, մարդուց էլ կդառնանք զերմարդ, Աստվածմարդ:

Անվերջ, անվերջ, անվերջ զարգացում, բարեփոխում — մինչև երկրագունդի, մինչև արևի մահը: Արևների մահը:

33. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Երբ հարտարապետը ներկայացնում էր տիեզերքի անսահման մեծությունը, անսկիզբ և անվերջ, Հարությը ախ քաշեց, ասաց –

Սողոմոնն ասել է «Ունայնություն ունայնությանց». ես էլ կասեմ. աշխարքը մեկ անսահման, անսկիզբ և անվերջ ունայնություն է, հնչ ու փուչ:

34. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ

Հարությին տանջող հարցերը սրանք են, որոնց լուծումը նա սպասում էր հարտարապետից:

1. Աստված կա՞, թե չկա: Բարի՞ է, թե չար: Կարո՞ղ է, թե անկարող:

2. Հոգու անմահություն կա՞, թե ոչ:

3. Մարդկության կյանքը երկրի վրա հավիտենակա՞ն է:

4. Եվ ինչպե՞ս է ծագել, որտեղից է:

5. Չարիքը, թշվառությունը, մահը կարելի՞ է վերացնել:

Ճարտարապետը խոսքի մեջ ասաց:

Աստծու գոյությունը հավատալու մեջ է. հավատացողի համար կա. գիտության համար ապացույցներ չկան երկու կողմերի համար: Ինձ համար – ես չեմ հավատում. նույնը հոգու անմահությունը: Ես չեմ հավատում: Մարդու կյանքը երկրի վրա հավիտենական չէ, որովհետև երկիրն էլ վերջ ունի:

Մարդը ստեղծվել է բջիջից, նա զարգացած բույս է, որդ է, անասուն է:

Մահը միշտ պետք է լինի. բայց կյանքը կերկարացվի. հիվանդությունները կվերանան. թշվառություն, աղքատություն նույնպես. բռնություն, ջարդ-կոտորած. բայց մահը կմնա. և կենդանիները մեկը մյուսին ուտելը նույնպես:

Մարդը չի պատերազմելու իրար դեմ, բայց պետք է ուտե կենդանիներին. կամ եթե չուտե, նրանք իրար պիտի ուտեն: Բայց բույսերը պիտի ուտվեն, համենայն դեպս:

35. ԻՆԺԵՆԵՐԸ

Բնությունը կռվի սոսկալի դաշտ է. ամեն արարած իրար ուտելով է, որ կապրի. ո՛չ թույլ կա, ո՛չ ուժեղ: Ուժեղն էլ իր հերթին կեր է լինում: Իրար ուտել — դա է սոսկալի ճշմարտությունը: Եվ այդ դոյության կռվով են արարածները զարգանում, կատարելագործվում: Իրար դեմ սրված կռիվ, որով սրվում է և միտքը, ճարպիկությունը, խորամանկությունը, հնարագիտությունը: Անդութ, անսիրտ, անողորմ կռիվ: Բնության օրենքը դաժան է, պատերազմի օրենք է. ուրիշին պիտի ուտե, որ ինքը ապրի: Բնությունը կռիվ է, իրար դեմ թշնամություն, որս, հակառակություն: Իսկ երբ վերանա կռիվը բնության մեջ, կվերանա և կյանքը: Այս է բնության բարոյականը:

36. ԻՆԺԵՆԵՐԸ

Բնությունը շարունակ, ամեն վայրկյան կձևազեղծն իրերը, պահելով, մեր աչքերից անըմբռնելի, նրանց էությունը:

37. ԻՆԺԵՆԵՐԸ

Ասում է, որ հին հույները երկու փիլիսոփա ունեին. մեկը նայելով աշխարհին՝ տեսնելով իրերի վազքը, անընդհատ անկայուն ձևափոխությունը՝ լաց էր լինում, իսկ մյուսը տեսնելով այդ — ծաղրում էր, կատակում:

38. <ԻՆԺԵՆԵՐԸ ՆԿԱՏԵՑ...>

Ինժենները նկատեց, որ Հարուքը խիստ կենտրոնացած դեմք ունի: Խոհուն, տխուր: Պատմություն կա դեմքի վրա:

39. ԻՆԺԵՆԵՐԸ

— Ինչ որ չի ենթարկվում մեր հինգ զգայարաններին ու չի սուզվում մեր բանականությամբ, ինչ որ գիտությունը չի հաստատում — սուտ է, պատրանք է, առասպել, կրոն, հավատալիք...

Այսպիսով կրոնները, Աստված, դրախտ, անմահություն, նախախնամություն սուտ են, երևակայության ծնունդ, բանաստեղծություն:

40. <ԵՎ ԽԱՎԱՐԸ...>

— Եվ խավարը վերջը լույս պիտի դառնա:

Սա սուզել և դնել ինժեների բերանը թե՝ մարդկային հառաջադիմության վերջը (եթե հանկարծ մի փորձանքով

նա՝ երկիրը, չկործանվի) կհասնի այս դրության — մարդկությունը կունենա անչար, բարի, լուսավոր կյանք:

41. ԻՆԺԵՆԵՐԸ

Տիեզերքը, այս մեր աշխարհը դիտված պարզ աչքով և հետադիտակով ու խոշորացույցով, այս անհամար աստղերի ու հյուլենների, միաբճիճինների տիեզերքը, որ կառավարվում է անհղլի օրենքներով, մի նպատակահարմարությամբ, բայց առանց նպատակի, իսկապես ծնունդ է ո՛չ մտածման, ո՛չ տրամաբանության: Դիպվածակերտ է այս աշխարհը, մնծ և փոքր իր, դիպվածակերտ աշխարհ. այս է նրա անունը:

42. ԻՆԺԵՆԵՐԸ: ԻՆՃԻՆԵՐ՝ ԸՍՏ ՀԱՐՈՒԹԻ

Նա գնում էր դաշտը և հիացմունքով ժամեր նայում էր գութանին ու գութանավորներին, ասելով. սա է՝ ճշմարտությունը, գործը, իրականությունը, էական բանը. և ամեն բանից բարձրը, ազնվացնողը, կրթողը:

43. <ԵՐԲ ԻՆԺԵՆԵՐԸ...>

Երբ ինժենները ծանոթացավ Հարութի հետ, նա արդեն ջաղացումն էր: Այնպես որ տերտերը ինժենների խորհրդով չէ, որ Հարութին աքսորում է ջաղաց:

Ինժենները Հարութին տեսնում է 1896 թվի ամառը: Ուստան Հարութի հետ ծանոթանում է այդ թվի աշնանը:

Կարոն 1895 թվի Բագրանի ուխտին Զավուշի հետ լինում է առաջին անգամ:

44. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻ...>

Հարութը ինժիների ասածների վրա միշտ մտածում էր, տարիներով, և միշտ ասում էր իրան. ինչ ուզում է՝ թող ասի նա, բայց մի բան մնում է հաստատ, որ մարդը բախտավոր չէ այս աշխարհում, մանկությունից դուրս է, և թե այս կյանքը ոչ մի բանի նման չէ. սա է կյանքը. քանիսի կառնեմ. ոչինչ բան է. բայց մեռնել էլ չեմ կարող: Ա՛խ, օրթե Հրեղենս իսկապես լիներ, բախտավոր կլինեի: Էս զղվելի աշխարհի մեջ աչքս կխփեի ու կբանայի Հրեղենիս դրախտ-գրկում:

45. ՀԱՐՈՒԹԸ ՄՏԱԾՈՒՄ Է

Եթե Աստված կա, կնշանակե տիեզերքը սահմանավոր է, նրա բոլոր կողմերով Աստված պատել է, տիեզերքը Աստծու գրկումն է, Աստծու մեջն է: Այնպես որ տիեզերքից՝ նյութից, ժամանակից, տարածությունից դուրս գալով, նրա վերջին հասնելով դեմ կառնենք Աստծուն:

Ինժիներն ասաց, թե աստղեր կան, լույսը 50 միլիոն տարվա մեջ է մեզ հասնում. թող ըլնի. ասել է, որ տիեզերքը չա՛տ, չա՛տ մեծ է, բայց նորեն սահմանավոր է, որովհետև Աստված ամեն կողմից նրա շրջապատ պարիսպն է... իսկ ի՞նչ է Աստված – չեմ հասկանում, չգիտեմ, չեմ կարող ըմբռնել, իմանալ:

46. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՑ...>

Հարութը ինժեներից չատ բան լսեց, ամբողջ մի փիլիսոփայություն: Իհարկե ավելի խճճվեց, հուսահատվեց:

Հարութը հետևյալ հարցերը տվեց.

— Շատ լա՛վ: Բայց ասա՛ —

Աստված կա՞:

Հոգու անմահություն կա՞:

Աշխարհի նպատակը ի՞նչ է:

Ինժեները որոշ չպատասխանեց. հայտնի չեղավ, թե նա այդ հարցերին դրակա՞ն, թե՞ բացասական վերաբերմունք ունի: Այլ ասաց. Ես քեզ ասացի՝ ինչ որ գիտությունը դտել է, մինչև այդտեղ. բայց թե՝ որտեղից է նյութը — ուժը, ժամանակը, տարածությունը, թե որոնց Աստված է ստեղծել... խնդիրներ են, որոնց չի կարելի պատասխանել, այլ սրտով միայն կարելի է վերաբերվել, զգացմունքով, ներքին խղճով: Կան գիտնականներ, որ կհավատան, կան որ՝ ոչ: Այնպես որ, եթե կհավատաս Աստծուն, ուրեմն նրանից բխում է և անմահություն, և նպատակ: Չես հավատա, ուրեմն՝ չկա և հոգու անմահություն, և նպատակ:

Թողնում եմ քեզ, քո խղճին, սրտին, զգացումներին:

Ինժեներն ասաց — Տիեզերքը հոսում է, գնում է, ամեն բան հոսում է, ծորում է, փոխվում է, քայքայվում է, մի վայրկյան կայուն բան չկա. ժայռերը, երկաթը՝ սրանք էլ ջրի պես հոսում են, գոլորշիանում են (թեև չենք տեսնում), բայց քայքայվում են և ուրիշ բան են դառնում: Մնում է միայն հիմնականը, սկզբնականը, էականը — ուժը կամ նյութը, ժամանակ-տարածությունը: Իսկ թե ի՞նչ են դրանք,— դա անիմանալի, անքննելի, անհասկանալի են...

— Հավատում ես՝ կա Աստված,

չես հավատում՝ չկա Աստված:

47. ԻՆԺԵՆԵՐ

Բրիատոնեական պարզ աշխարհը քանդվել է. Աստված չի չինել արևը մեզ համար, երկիրը՝ մեզ բնակավայր, երկինքը՝ մեր հոգիների համար և հրեշտակները՝ մեզ պահապան, և սատանաները՝ փորձիչ...

Անհուն է հիմա տիեզերքը, մեծ, ահագին, ահավոր, և մենք՝ ոչնչություն:

– Բնության մեջ մի բանից, մի իրից մի ուրիշ բան է ծագում, սրանից էլ մի ուրիշը, այսպես հավիտյան, մի 1000 միլիոն տարի հետո, զորօրինակ:

48. <ԻՆԺԵՆԵՐԻՑ ՀԵՏՈ...>

Ինժեներից հետո Հարուքը, որ հաճախ հիշում էր նրա խրատները, առանց ընդունելու նրա անաստվածությունը, ուզեցավ ֆիզիկ<ական> աշխատանքի կպչել և ամուսնանալ: Ամուսնացավ և աշխատեց: Բայց մի պահ դարձյալ իրեն հալածող մտքերը հարձակվեցին վրան. բան չարավ, պարապ անցկացրեց և խմեց, և կնոջ հետ կռվում էր, չէր սիրում: Երբ կինը մեռավ, խիղճը սաստիկ խայթվեց. խայթվեց, որ դեհ վարվեց կնոջ հետ. ավելի ընկավ. ավելի խմեց. տան երես չէր տեսնում. մորն ու երեխային չէր ուզում տեսնել...

49. <ԵՐԲ ԻՆԺԵՆԵՐԸ...>

Երբ ինժեները Հարուքին պարզում էր իր տխուր, անաստված, հոռետես փիլիսոփայությունը, Հարուքը զար-

մանում էր տեսնելով, որ այսպիսի մտքերից [հետո] բնավ չէր ազդված ինժեների հոգին. դվարթ էր նա, հանգիստ և աշխատասեր:

Զարմանում էր, թե ինչպես մարդ կարող է այսպիսի աշխարհավեր մտքեր ունենալ դլխում և կարողանալ ապրել...

50. <ԱՅՍ ԲՈԼՈՐ ՅԱՎԵՐԻՆ...>

– Այս բոլոր ցավերին նա դեմ դրեց, դեմ կեցավ, չհիշելով անցյալը, խուսափելով խոսք բաց անել:

– Ի՞նչ թշվառություններ կան այս ու այն երթիկի տակ:

– Եթե կարող ես քո մի բջիջը ոչնչացնել կամ մի որևէ հյուվլև – այն ժամանակ կարող ես և տիեզերքը ոչնչացնել:

– Ինժեներն ասում էր թե՝ մեր մարմինը կազմված է այսքան միլիոն-միլիոն բջիջներից, որոնք առանձին-առանձին ապրելով, միասին հյուսում են մեր կյանքը և պահում, և կռվում են մահի դեմ – լինի բացիլ, լինի արտաքին մի հարված կամ թույն...

Հարուցի այն հարցին, թե ինչ է մեր կյանքը, ինչո՞ւ համար է այս բոլոր ծախսը՝ բնության կողմից, այսքան խելոք, հրաշքի պես չինված մարմինը...

Երբ չենք իմանում, թե ինչու ենք ապրում, ինչն է կյանքի և տիեզերքի նպատակը...

Ինժեները պատասխանեց թե՝ չգիտենք. գոնե հիմա չգիտենք. մանավանդ բնության նպատակը չգիտենք. գոնե մարդու կյանքին որոշ, մարդկայնորեն նպատակներ կարող ենք վերագրել – օրին<ակ>. երջանկություն, ուրիշին օգնել և այլն, և այլն:

Բայց, իհարկե, սա էլ բացարձակ նպատակ չէ:

Հարությը ինժեներից չատ բան սորվելով, սակայն այդ սորվածից չիմացավ կյանքի և բնության նպատակները: Դրա համար նա հոգին լարեց Սողոմոն իմաստունից լսելու այդ մեծ և անհրաժեշտ գաղտնիքների մասին: Սողոմոնը իրրև մարդկության ամենամեծ իմաստունը, այդպես էր համարում Հարությը նրան:

Եվ տարիներ համառարար միտքն ու հոգին կենտրոնացնելով այդ փափագի վրա, մի օր հաջողվեց գնալ Սողոմոնի մոտ:

51. <ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ...>

– Կենդանի բնությունը յուր ստեղծագործ ուժերը մի օր խտացրած զարկեց մի կետի վրա – և հառաջ եկավ առաջին բջիջը: Որի մեջ ուրեմն խտացած էին բնության բոլոր ուժերը:

Հարությը ինժեներին հարցրեց, թե այդ ասածներդ ճշմարի՞տ են, թե՞ հնարովի: Ինժեները թե՝ կան, որ փորձով հաստատված են, կան, որ փորձի չեն ենթարկվում, այլ ենթադրվում է: Օրինակ, կյանքի ծագումը (պրոտոպլազման): Բայց աստղերի հեռավորությունը չափած է, նրանց մեծությունը, կազմվածքը, արագությունը և այլն:

Հարուքի հոդում թոհուբոհ առաջացավ, որի լուծման համար տառապում էր: Նստում էր մենակ. աշխարհը, իրերը նրան անվերջ և անհագ հարցեր էին տալիս և Հարուքին մղում պատասխանելու:

Ասում էր իրեն. այս բոլորին Սողոմոն Իմաստունը միայն կարող է պատասխանել:

52. ԻՆԺԵՆԵՐԸ

— Ամեն բան բնությունն է չինել. նա չինել է երկիրը, արևը, աստղերը, ծովերը, նա չինել է բույսերը, օդը, ջուրը, թռչունները, մարդկանց, ինձ էլ, քեզ էլ՝ մեր խելքով, մեր հնարքներով, մեր զգացմունքներով: Ամեն բան բնությունն է. նա է ստեղծել, զարդարել, հասցրել և մեռցրել՝ այսինքն՝ այլափոխել: Ոչ մի իր, և մենք, անկախ դեր, դիրք չունենք. մենք մեքենաներ ենք: Բնությունը ինքն է այդ մեքենան չինել և մղման, շարժման մեջ դրել:

Հարուքը.— Ուրեմն, բնության մեջ կա խելք, սիրտ, զգացմունք, մտածողություն, հաշիվ. կնշանակե՝ գիտե չինել, գիտե՝ աչք չինել, սիրտ չինել, լեզու չինել, ծաղիկ չինել. վարպետ է, ուստա է, ուրեմն՝ Աստված է:

Ինժեները.— Այո՛, եթե ուզում ես:

53. ԻՆԺԵՆԵՐԸ

Նա ասում էր թե՝

Տիեզերքը անսկիզբ է և անվերջ. նա ծնունդ չունի, չունի և մահ. միշտ եղել է, կա ու կմնա: Մենք չենք հասկանում մահ, վերջ և ոչնչություն՝ նրա նկատմամբ:

Տիեզերքում ստեղծող չկա, որովհետև չկա արարած, ամեն իր մեկը մյուսից է բխում. կա միայն ձևափոխում. տիեզերական նյութը կամ ուժը, որ միևնույն բանն է, հոսում է և ձևերը փոխում անսպառ կերպով:

Մեր կյանքը ծագել է (մարդ) կենդանիներից, որոնք էլ բույսերից, բույսերն էլ բնության նյութ-ուժերի միությունից:

Մեր գիտակցությունը անզոր է հասկանալ բնությունը, մեր հոգին, մեր կյանքը, որ մասն է բնության: Մենք նույնիսկ չգիտենք, թե մեր կամքը անկախ է, թե ոչ. չգիտենք, ինչպես ենք կամենում, զգում, մտածում:

Ամեն ինչ գաղտնիք է, խորհուրդ, առեղծված:

Գիտությունը միայն բարդացնում է խնդիրները. առաջ մենք զարմանում էինք աչքով տեսանելի մանր միջատի մասին, հիմա տեսնում ենք աչքով չտեսած կենդանուն՝ միջատից հազար անգամ փոքր, բայց ի՞նչ շահ. փիղ կամ բացիլ, միևնույնն է. երկուսն էլ գաղտնիք են:

Կա անսահման մեծ և անսահման փոքր. և այդ մեծն ու փոքրը, երբ քննում ենք, տեսնում ենք, որ դրանք անհուն են:

Բան չենք հասկանում: Գիտենք, որ Աստված չկա, չկա նախախնամություն, հոգու անմահություն: Մարդը բնության մեջ եղած-չեղած. եթե այսօր ողջ մարդկությունը մեռնի, ծառից մի տերև դրա համար ա՛խ չի քաշե ու ընկնի...

Պետք չէ մտածել տիեզերքի մասին, այլ դառնալ մարդկանց մոտ, դա է մեր աշխարհը, այդ աշխարհը կարդի բերել, չարիքը ջնջել, խղճալ, օգնել իրար և ստեղծել մեր մշակույթը, ուրախ լինել, զվարթ. մնացածը մեզնից անկախ է:

Մենք մեր աշխարհի մեջ ենք մեծ ու հզոր, ինչպես մի մրջյունը իր աշխարհում. մեր աշխարհից դուրս՝ բնու-

թյան մեջ, կամ մենք, կամ մի որդ, կամ ծիլ – համարժեք են:

54. ՀԱՐՈՒԹ-ԻՆԺԵՆԵՐ

Հարութը ինժիներին լսելուց հետո հարցրեց. ասում է թե նյութը, ժամանակը, տարածությունը անսկիզբ է: Առանց Աստծու ես չեմ կարող անսկիզբը բան հասկանալ: Ամեն բան պատճառ ունի. նյութի պատճառը ո՞րն է:

Ինժիներ – Զգիտեմ:

Հարութ – Նյութը ինչպես կյանքի բջիջ դարձավ:

Ինժիներ – Զգիտեմ:

Հարութ – Բջիջը ինչպես մարդ դարձավ:

Ինժիներ – Զգիտեմ:

Հարութը կտրուկ դրեց հարցը. Աստված կա՞, ստեղծողը այս նյութի, ժամանակի, տարածության և բոլոր աշխարքի:

Ինժիները մտածեց, լռեց ու մտածեց: Հավատում էր նա Աստծու գոյությանը, թե չէր հավատում, իրեն էր հայտնի: Թերևս Հարութին չհուսահատեցնելու, թերևս չուզենալով նրա հավատը խորտակելու և թշվառացնելու նրան, ասաց.–

Սա հավատի բան է, անձնական: Հավատում ես, Աստված կա, չես հավատում՝ չկա: Իմ կողմից ասեմ, որ ես հավատում եմ Աստծու գոյությանը:

Ինժիները ասաց, որ գիտության չնորհիվ ժամանակի ընթացքում մարդկային բոլոր թշվառությունները կվերանան: Մարդը կդառնա բարի, ազնիվ, իրար սիրող, օգնող, իրար ապրեցնող: Կլինի առողջ, ուրախ, երկարակյաց: Բնության ուժերը կհնազանդեն նրան և օգտակար

գործիք կդառնան: Կվերանան հիվանդությունները, չարդերը, պատերազմները, և այլն, և այլն:

Միայն մահը կլինի անհաղթելի, որովհետև բնության օրենքով, ամեն բան փոխվում է, հին ձևերը եղծվում են, նոր ձևեր են ստեղծվում նրա տեղը: Մենք կմեռնենք, մեր նյութից ուրիշ բան կշինվի: Նյութը անկորնչելի է:

55. ԻՆԺԵՆԵՐԸ

Ասում էր, որ մարդ անձնապաշտ է՝ կուզե աշխարհ մեռնի, միայն թե իր նպ ապրի: Մարդ երբ լսում է ուրիշի մահը, անմիջապես ուրախանում է, հետո է տխրում:

Ասածդ չկա, հարց չկա: Սրբություն չկա, բացի մի սրբությունից, այն է, որ օգնել խեղճին, գթություն. գթություն — ամեն կրոնը:

Հարությը խրատում է՝ չմտածել աշխարքի մասին, անկարելի է հասկանալ, անմտություն է դրա համար տանջվել ու կյանք մաշել, ժամ կորցնել. ապրիր, աշխատիր ֆիզիկապես, ամուսնացիր՝ խառնվիր մարդկանց հետ, նրանց հետ գնա՛, և լավություն արա: Բարի եղիր. գութ ամենքի հանդեպ՝ մարդ, թռչուն, անասուն...

Սկզբում նա Հարությի վրա նայում էր իբրև մի հասարակ տիրացուի վրա, բայց երբ ճանաչեց նրան, տեսավ նրա հարցերը, մտքերը, տանջանքները, գնահատեց, սիրեց և լրջորեն խոսեց հետը: Գյուղացիք, տերտերը և կարոն համարում էին ինժեներին Հարությի տունը քանդողը, կորցնողը նրա հոգին: Ասում էին, որ Սատանան ինքը ինժեների ձև առած եկավ և Հարությին փչացրեց:

56. ԻՆԺԵՆԵՐ

— Քաղաքակրթությունը մի օրում չի ստեղծվել, սերունդներ են տանջվել ու մեռել այն ստեղծելու և պարգացնելու համար: Ո՞վ գիտե, կրակի գործածելը սորվելու համար ինչքան են մարդիկ տանջվել, կամ մի խոփ չիննելու համար ի՞նչ են քաշել: Հիմա մենք դյուրին վայելում ենք: Մեր նախնիքը ապրել են մերկ, քաղցած, գազաններից պատռված, քարայրների մեջ կուչ եկած, բացիլների կեր... Հիմա մենք ինչպիսի տներ ունենք, էլեկտրական լույս, բժշկություն, որ հրաշքներ է գործում, թուղթ, գրիչ, լամպ, կարի մայինա... և դրանց հեղինակները տանջվել են մեզ համար:

Մենք ևս պիտի աշխատենք, և մեր փոքր ուժերով աջակցենք աշխարհի ավելի արդար, մաքուր, աղնիվ և ավելի կատարյալ կազմակերպման:

Օգտվել Սպենսերի գաղափարներից. Чепранов-*ի դրքից:*
A. France. *Էպիկուրի պարտեզը...*
Biologie des Krieges *և այլն:*

57. <ՀԱՐՈՒԹԸ ԹԵ...>

Հարուքը թե ինժեներից և թե կարդացած դրքերից իմացավ, թե Պլատոն, Սոկրատ, Արիստոտել, Էպիկուր մեծ փիլիսոփաներ են, բայց իր աչքին Սողոմոնը մնաց ամենամեծ և ամենաազնիվ իմաստունը: Եվ երբ նրա մոտ գնաց, երբ Սողոմոնը առանց աչքը բանալու տեսավ Հարուքի գալը և ասաց, բարով եկար, տիկորցի Օրքե Հարուք, ես քեզ կսպասեի, գիտեմ ինչու ես եկել. և ավելաց-

րեց, թե 1000 տարիներ միտք եմ անում, բայց նոր բան չունեմ ասելու, ասել եմ և նորեն ասեմ. ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ընդունայն է. դնա, կեր, խմե, սիրածդ կնոջ հետ ապրիր, և սատկած առյուծից չունը... լավ է...

Հարությը զարթնեց այն զգացումով, թե իմաստությունը իր քովն է. ուտել, խմել, Հրեղենին ձեռք բերել և չմեռնել. ապրել թեկուզ չան պես, բայց ապրել: Այս եղավ իր հոգու խարխափը:

58. <ԹԵԵՎ ԻՆԺԵՆԵՐԸ...>

Թեև ինժենները Հարությին չա՛տ բան ասեց գիտության ովյալներից, չա՛տ բան բացատրեց, բայց անկարող լինելով բացատրել տիեզերքի ծագումը, նյութի ծագումը, և չկարողանալով Աստծու գոյությունը ո՛չ անվիճելիորեն հաստատել և ոչ էլ հերքել – Հարությը հասավ այն ներքին համոզմունքին թե՝ ինժենները վերջիվերջո ոչինչ չասաց: Հարցը ավելի խճճեց, բարդացրեց. և Հարությը ինչ տեղ որ էր, այնտեղ էլ մնաց: Դարձյալ մնում է Նարեկացու խոսքերը – անքննելի, անիմանալի, անսկիզբ, անվախճան...

59. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՆ...>

Հարությը ինժեներին հարցնում էր – ասենք եթե Աստված չկա, և աշխարքը, նյութը միշտ եղել է անստեղծ, անսկիզբ և անվախճան, հապա որտեղից էր նա. կամ այդ նյութը ինչպես զարգացավ դարձավ քար,

ջուր, հող, բույս, կենդանի, մարդ. ուրեմն այդ նյութի մեջ կային այդ չորհքները. ուրեմն նյութը խելք, հանճար ուներ, որ իր միջից ստեղծեց այս աշխարհը: Ուրեմն նյութը կույր, անմիտ, անհոգի բան չէ: Իսկ եթե ընդունենք, որ Աստված կա, և ոչինչից ստեղծեց այս նյութը, անսահման տիեզերքի նյութը, հարց է ծագում, ոչինչից ինչպես ստեղծեց, այսքան անսահման նյութը որտեղից առավ, ուր էր այս նյութը, եթե ոչինչից ստեղծեց, կնշանակե Աստված այդ նյութից դուրս է. այն ժամանակ, պետք է ասել, որ նյութը սահմանավոր է, որովհետև Աստված նրա մեջը չէ, նրա չուրջն է. ուրեմն Աստված նյութից դուրս տարածվող էությունն է, որ անսահման է, իսկ նյութը նման է մի կղզու՝ ընկած անսահման ծովի մեջ, որ Աստվածությունն է: Ի՞նչ է Աստված, ո՞րտեղից եկավ, ո՞ւր էր... Չգիտենք, ուրեմն անքննելի է, անըմբռնելի, անակիզը, անվախճան, որովհետև եղել է մի ժամանակ, որ ոչ նյութ է եղել, ո՛չ ժամանակ, ո՛չ տարածություն, այլ միայն Աստվածություն:

Չի հասկացվի:

Իսկ եթե կա այսպիսի մի հզոր, տիեզերաստեղծ Աստված, ապա ինչի՞ դոյություն ունի չարիք, դժբախտություն, հիվանդություններ, տանջանքներ և մահ:

Իսկ եթե դրանց Աստված է ստեղծել, կնշանակե Աստված չար է, բարի չէ, մահ տվող է. այն ժամանակ, ինչի՞ է պետք այս չար, մահ տվող Աստվածը, այսքան անարդարություն ստեղծող Աստվածը:

Ինժեները չէր կարող պատասխանել, և Հարությը տանջվում էր ու տանջանքի մեջ գալարվում, և ձեռք դարկում արաղին՝ մոռանալու համար այս գեչ, թոհուբոհային տիեզերքը:

60. ԻՆԺԵՆԵՐԸ

Խոսում է պլազմայի, բճիճի մասին, նյութի գոյավորման մասին: Կյանքը կատարյալ ստեղծված նյութն է:

Հյուլենների մասին:

Տիեզերքի մեծության մասին՝ լույսի արագությունը, որով չափվում է տարածությունը:

Պանսպերմիա:

Արևի մարելը:

Ամեն ժամ աշխարհներ են կործանվում ու չինվում:

Անսահման մեծության և անսահման փոքրության — Հոգի — ուղեղի հատկություն:

Բճիճների գործունեություն: Անասուն, բույս՝ հոգի ունեն, գույն և քարերը, հողը, ջուրը...

Կյանքը ոչ այլ ինչ է՝ անօրգանական նյութերի զարգացումը...

Աշխարհը, նյութը, գոյանյութը անսկիզբ է և անվախճան:

Ժամանակը տարածության — նյութի չարժումն է: Նյութը ուժ է, ուժը — նյութ:

61. ԻՆԺԵՆԵՐԸ

Ուզում ես Աստվածություն հաշվի՛ր տիեզերքը ամբողջ, որ ամենուրեք է, նյութը, որ ինքը խտացած ուժ է, գույն:

Մենք շատ բան չգիտենք, բայց գիտենք, որ Աստվածաշունչի մեջ պաշտված Աստվածը չկա, նա, որ ուզեցավ ոչինչից տիեզերքը չինել ու չինեց, նա, որ գիտակցաբար կառավարում է աշխարհը իր հրեշտակների միջոցով. նա,

որ իր որդուն ուղարկեց երկիր՝ մեզ փրկելու. նա, որի նախախնամությամբ դառնում է աշխարհը. նա, որի պատկերն ենք կրում մենք:

Տիեզերք... անհասկանալի անհունություն՝ ուժերի ու զորությունների, որի մի չնչին մասնիկն է մեր երկիրը և վերջինիս չնչին մասնիկն է մարդկությունը:

Ո՛վ գիտե ի՛նչ ուժերի արդյունք ենք մենք, և ի՛նչ ուժեր են կառավարում մեզ. անհասկանալի է ամեն բան. թե ես, թե դու, թե այս ճանճը, թե այս ծաղիկը, թե այս ամպը...

Ո՛վ է հասկանում քարի, ջրի, հողի, բույսի կյանքը. ով է իմանում, թե ինչ ազդեցություն ունի մեր վրա օդը, որ ծծում ենք, արևը, որի ճառագայթների [տակ] մեջ լողում ենք. լուսինը, աստղերը...

Հիմա շատ քիչ բան գիտենք. [բայց] գուցե և ոչինչ չգիտենք. բայց մեր հոգին լեցուն է հնարավորություններով, կարողություններով՝ գուցե ապագայում միլիոն տարիներ հետո, եթե ողջ մնա մարդը, հասկանանք մի բան, գուցե և նորից բան չհասկանանք, տիեզերական գաղտնիքից, տիեզերքի պատճառից՝ Աստծուց...

– Ո՛վ գիտե ինչ անթիվ կապերով կապված է մեր մարմին-հոգին տիեզերքի հետ, գուցե մշտական հարաբերության մեջ են մեր մասնիկները տիեզերքը կազմող նյութ-ուժի հետ, գուցե մեր մեջ տիեզերք է խորհում, մենք նրա գործիքն ենք խորհելու...

Ո՞վ գիտե քանի միլիոններ անգամ արևներ ու երկիրներ են չինվել, վրան մարդիկ ապրել, ու բոլորն էլ՝ արևի հետ, մեռել, մարել, փշրվել անհետացել: Ով գիտե հիմա քանի անհամար աստղ երկրների վրա մեր պես զգացող ու մտածող արարածներ կան, որ գլուխ են կոտրում տիեզերքի խորհուրդի վրա, և պիտի մեռնեն, ինչպես և մենք մի օր արևի հետ:

Ճշմարտություն ասելը գնչ բան է. երանի նրանց, որ հավատ ունեն, և ապրում են գոհ ու մեռնում են հույսով, հարություն առնելու հույսով: Ես չունեմ, դու էլ չունես, Հարութ: Պետք է խաբել ինքն իրեն, և ապրել: Հարութ, մի մտածի՛ր, աչխատի՛ր, մի կարղար, հող մշակիր, կնիկ առ, երեխա ունեցիր, և կմոռանաս այս ամենը աչխատանքի և ընտանիքի հոգսերով, որոնք հազար անգամ բախտավորեցնող են, ինչքան անգամ որ թշվառացնող են այդ մտքերը:

Հարութը սակայն նորից հավատաց Աստծու գոյությանը, մտածելով, որ թեև տիեզերքը չատ մեծ է և չա՛տ երկիրներ են երկնքի մեջ մարդկանցով լիքը, որոնց Աստված է ստեղծել, և այլևս հոգ չի տանում, ստեղծել է, օրենքներ դրել՝ ծնվել ու մեռնել, և այլևս չի խառնվում: Հավատաց, որ հոգու անմահություն չկա. մարդ այնքան ոչինչ բան է, որ չարժե նրան հավիտյան ապրեցնել:

— Ինժենները ասում էր թե՝ ոջիլի և մարդու հոգու մեջ տարբերությունը չատի ու քչի հարց է, բայց էությամբ նույնն է: Հոգին՝ խիղճը, եղել է, որ էակը կարողանա միջոցներ գտնել ապրելու համար, կռվելու միջավայրի դեմ:

— Մահի վախն է ստեղծել հոգու անմահություն, հարություն, հանդերձյալ կյանք:

— Հարութի խելքին չա՛տ լավ նստեց խրատը — մոռացություն գտնել, խաբել իրեն, պատրանք, և աչխատելու փոխարեն խմեց, թեև կնիկ էլ առավ, բայց ղղջաց:

62. ԻՆԺԵՆԵՐԸ

Միշտ կա և կմնա, չի սկսվել, չի ստեղծվել և չի վերջանա այն նյութը, այն ուժը, որ միևնույն բանն է — եթե-

րը, որից չինվել է տիեզերքը: Տարածություն կոչված դատարկությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ նիհարով լցված մի էություն:

Դատարկության դատարկությունը մի սուտ, անհասկանալի վարկած է, նա չկա: Կա միայն այդ տիեզերական նիհարը:

Ինչ է նիհարը – ուժն է նա, որը նաև նյութ է. առանց նյութի ուժ չկա և առանց ուժի նյութ... Նիհարը երկու ձևով է ներկայանում մեր մտքին: Նյութը խտացած ուժ է, այսպես ընդունենք: Երբ խտանում է նա, դառնում է հյուլե. հյուլեն հյուլեից բաժանված է նոսր նյութով – նիհարով:

Հյուլեն փոքր՝ անտեսանելի, ոչ մի կերպ տեսանելի, մի աշխարհ է՝ ունի միլիոն յուր արևը՝ շուրջը դառնում են մոլորակներ, երկիրներ: Երկիրները այնքան հեռու են արևից, ինչքան մեր երկիրը, մեր մոլորակները մեր արևից:

Մեր շուրջը պարզված առարկաների, երկրի, նյութերի բազմատեսակությունը ծագում է հյուլեի մոլորակների քանակից:

Եթե երկաթը ունի մի որոշ քանակի մոլորակ, վրան ավելացնենք մի մոլորակ՝ դառնում է նա ուրիշ տարր, օրինակ ոսկի, այլապես նյութը միատեսակ է: Տարրերը կազմված են մոլորակների քանակից, խտությունից և այլն:

Հյուլենների մի ահագին բազմություն իրար վրա գալով կազմում են արևներ, այրվում են սեղմվելուց, հետո երկիրներ:

Երկիրների վրա հյուլեն՝ այլ դասավորությամբ կյանք: Մի բճիճ:

Մի բճիճից բազմաբճիճ՝ մինչև մարդը...

Մեր մարմնի ամեն մասը կազմված է ապրող, կենդանի բճիճներից. մեջը կորիզ, շուրջը հյութ: Նրանք աճում

են, ծնվում, բազմանում: Մեր մարմինը կազմված է անթիվ բճիճներից, որ ունեն իրենց ընդհանուր կենտրոնը – մեր հոգին, մեր գիտակցությունը:

63. ԻՆԾԵՆԵՐԸ

Հասկանալ, տիեզերքը հասկանալ մեր խելքով, մեր հինգ զգայարանով և նրա կեդրոնով – ուղեղով: Կհաջողինք արդյոք: Ուղեղը, մեր խելքը եղել է միայն մեզ ապրեցնելու համար, միջավայրի մեջ կռիվը հաջող (գոյության կռիվը) վարելու համար, իսկ հիմա դարձրինք մենք մեր ուղեղը մի գործիք անհունը, հավերժականը չափելու, քննելու, ըմբռնելու համար:

Շատ բան ենք հասկացել, բայց իրերի բուն էությունը, պատճառը, սկզբնապատճառը չենք կարողացել հասկանալ, չենք կարողացել հասկանալ տիեզերքի կեդրոնը, որից բղխում է ամեն ինչ... բայց մի՞թե կեդրոն կա անսահմանության մեջ...

Թերևս մենք ենք՝ մեր Եսն է կեդրոնը: Բայց ինչ է մեր եսը, ինչ է մեր հոգին, մեր միտքը, ի՞նչ ենք մենք, ի՞նչ է մարդը:

Եթե հասկանանք մարդուն, կհասկանանք և տիեզերքը. եթե տիեզերքը հասկանանք, կհասկանանք և մարդուն. եթե հյուլեն հասկանանք, կհասկանանք և տիեզերքը, որովհետև հյուլեն տիեզերքի պատկերն է, նրա մանրանկարը, ինչպես և մարդը՝ է տիեզերքի մանրանկարը...

Բայց թերևս ամբողջը պիտի հասկանանք՝ մասը հասկանալու համար, կամ մասը պիտի հասկանանք ամբողջը հասկանալու համար: Սակայն բան չգիտենք: Գիտու-

թյունը մեզ այս դիտնալ ավելց՝ որ տիեզերական դատոնիքները չենք կարող դտնել...

Մեզ մնում է մեր տիեզերագիտությունից քաղել գործնական օգուտներ, և մենք քաղում ենք. այժմ ունենք չոգիի մեքենաներ, էլեկտրականություն, հեռախոս, հեռագիր, նաև՝ երկաթուղի, վաղը կթռչենք օդի մեջ: Ունենք քիմիա, դեղեր: Կռվում ենք միկրոպների դեմ, համաճարակների դեմ, կայծակի դեմ, երաշտի դեմ, <...>[1]

64. ՀԱՐՈՒԹԸ

27 Հոկտեմբերի

Հարությը ուշի ուշով լսում էր ինժեներին, զարմանում էր նրա գիտության վրա: Նրա ասածները դրում էր, որ միշտ կարդա, բայց բոլոր հոգով հակառակ էր նա անաստվածության դեմ: Նա ընդունում էր Աստծու գոյությունը, բայց կասկածում էր ու համոզված էր նրա չարության վրա և նրա չինած աշխարհի անկատարության վրա (չարիք կա, մահ կա, անարդարություն կա): Նրա մեջ երբեմն, հաճախ մի ձայն հարց էր տալիս, գուցե չկա Աստված, բայց ուրիշ ավելի զորեղ ձայներ պնդում էին, թե չի կարող Աստված չլինել՝ պատճառը, ստեղծողը տիեզերքի. այս տեսակ կասկածները նրան հյուծում էին, խենթացնում:

Աշխարքի գեշությունը տեսնելով և Աստծու անտարբերությունը կամ նախախնամության բացակայությունը՝

---

[1] *Ինքնագիրն այստեղ ընդհատվում է: Շարունակությունը չի պահպանվել:*

պատրաստում էր ու տենչում կործանել, նորը չինել. ծաղրելով Կարոյի սոցիալիստական խոսքերը, թե Աստված բարի է, խելք է տվել մարդուն՝ որ լավ օրենքներ չինե, իր տունը լավ, արդար կառավարե, ընկերովի, եղբայրաբար: Հարությը չէր հավատում մարդկային բարությանը. մարդը գազանից գազան է: Կայենը Աստծու աչքերի տակ սպաննից Աբելին՝ այն լայն ու արձակ երկրի ժամանակ:

Նա հասավ տեսիլքի մեջ միայն անաստվածության, և զարթնից սարսափած, ընկճված. դարձել էր մի բուռ մարդ, կծկվել, պզտիկցել, կուչ եկել, ինչպես և վկայեց ականատես Ջավուշը, որին նայից արյունոտ աչքերով և դրեթե կուզեկուզ սողալով հեռացավ, անխոս, գնաց:

Այլևս չդրել, թե նա զարթնելուց հետո խորհում էր իր տեսածի վրա: Հետո երևում է Մրենում, և անիծում է ամեն բան:

Տեսիլքի մեջ, երբ Ուստան նրա ոտքից քաշելով, (Հարությը արդեն Մասիսի վրա, երբ բղավում է, թե «Աստված չկա, չկա, չկա» և լսում է ժողովուրդների ձայնը, թե «տեսնք, տեսնք, Նեռը, Նեռը՝ ինքը զարհուրած ընկնում է գետին, Ուստան քաշում է Մասիսեն վար) Մասիսից ձգում է վար, վազում են սարսափած տուն: Քաղցած են: Պառավից հաց են առնում, հացը սկիզբը Հարությի մոտն է, փախչում են. Կարոն իր բաժինն է ուզում, Հարությը չի տալիս. Կարոն ասում է, տո, ընկեր չենք, ազբեր չենք:

– Ինչ ընկեր, ի՛նչ ազբեր...

Կարոն – Տո, անոթի եմ, մեռնում եմ:

Հարությը – Մեռի՛ր, ինձ ի՞նչ:

Կարոն – Տո, խիղճ չունես:

Հարությը – Խիղճս ո՞րն է, ո՞ւր է:

Կարոն – Չէ՞ որ մեղք է, անաստված մի եղիր:

Հարությը – Մե՞ղք, Աստված ուր է որ, ի՛նչ մեղք:

Կարոն հարձակվում խլում է հացը՝ ասելով.

— Դու մեռի՛ր, անաստված զազան:

Եվ ուզում է ուտել:

Հարութը քարով զարկում է նրան, Ուսուան էլ նրան: Իրար են կպնում, բռնում, քաշքշում, իրար վրա ընկնում, իրար հայհոյում, խեղդում իրար... Եվ զարթնում է:

Սրանով ցույց է տրվում, թե երբ Աստված վերանում է, ջնջվում է նաև դութ, խիղճ, մեղք, սեր, տիրում է միայն էգոիզմը, գազանությունը: (Կարոն արդեն այդ միտքը միշտ ասել էր Հարութին, իրենց վեճերի ժամանակ:)

65. ԻՆԺԵՆԵՐԸ

Մտնում էր այրերը, հավաքում էր քարեր, ոսկորներ, բույսեր, քարացած պեոուններ. ու բացատրում էր նրանց մասին:

Այս քարերը, ժայռերը չինվեցին, երբ երկրի վրա ջրի, օդի մեջ կենդանի չկար, կյանք չկար: Բույսերի աճումը, սերմ, զուգավորում:

Թչվառ են կենդանիները, դրեթե ոչ մի կենդանի՝ ձուկ, միջատ, թռչուն, կաթնասուն, չեն մեռնում իրենց կյանքով, ուտվում են:

Բացիլներ, միկրոպներ: Լիքն է, անհուն կերպով, օդը, ջուրը, ամեն տեղ, մեր մարմնի մեջն ու վրան, մեր բերանի, աչքերի, արյան մեջ՝ անթիվ կենդանիներ, որոնք ուտում են կամ մեզ, կամ մեր մեջ եղած դրսից մտած կերակուրները. ոմանք չատ վնասակար են, ոմանք օգտակար:

Նրանց աճումը: Բաժանվում են երկու մասի:

Կան կենդանիներ՝ երկսեռ. երբեմն արու — երբեմն էգ՝ հերթով դործադրելով իրենց սեռը: Ո՛չ մի կենդանի, ծա-

պիկ, միկրոսկ՝ իրար նման չեն, դրանից էլ ծագում են նոր տեսակները. չկա ժամանակ և տարածություն՝ դրանք մեր մտածողության ծնունդն են, առանց դրանց մենք չենք կարող մի իր ըմբռնել, բայց նրանք չկան:

Հյուլեններ չկան, որովհետև նրանք սկիզբ չունեն, անհուն են:

Ուրտեղից է ծագել կյանքը. ոչ մի տեղից, նա բնության կյանքի մի այլ ձևն է, ամեն իր, նյութը՝ կենդանի է, տիեզերքը կենդանի է, միայն իրերը անհատական երևույթներ են, անցավոր ձևեր, որ անհուն ժամանակի և տարածության մեջ միայն մի անգամ հանդես կգա, էլ հավիտյան երբեք չգալու համար:

Ամեն իր կազմված է բճիճներից, հյուլեններից.— ծնվում են, այսինքն, մի նոր ձևով երևում, ապրում, ընդունում իրեն վիճակված չափը, հետո ուրիշին ծնում և հետո ծերանում՝ հոգնում, ուժը կորցնում, ապա մեռնում՝ նղծում իր ձևը, այլ ձև, այլ անհատ դառնում:

Իրար ուտում ենք, մեզ էլ ուտում են բացիլները: Տիեզերքի մեջ չար ու բարի չկա: Կենդանիի համար բարի է մի իր՝ երբ սա նպաստում է նրա աճման, կյանքին, հաճույքին, չար է՝ երբ հակառակ է: Մարդը մենակ չկարողանալով ապրել, լավ ապրել, խմբվում է, հաջող կռիվ տալու գոյության համար, մարդը դառնում է հասարակական արարած և պործիք ունեցող: Այն օրը, որ նա բռնում է քարը բռունցքում և բութ մատով սեղմում և նետում թշնամու վրա — այն օրից նա հաղթեց առյուծին ու վագրին:

Մենք մեր տիրապետությունը, քաղաքակրթությունը պարտական ենք մեր խելքի դործիքին՝ բութ մատին: Բութը կազմեց բռունցքը, խելքն ու բռունցքը՝ ահա մարդիշխանը և երկրի տերը:

Հնքիաթ է, սուտ, Աստվածաշունչը, նրա տիեզերաշինման պատմությունը:

Տիեզերքը եղել է միշտ, բոլոր աստվածներից առաջ: Տիեզերքը չի ստեղծվել, և վերջ չունի: Ինչ է նա — չենք կարող հասկանալ և երբևք չենք հասկանալու:

Կյանքը պատահական երևույթ է, ինչպես ամեն մի իր, որ կարող էր և չլինել: Լեռների գլխին կյանք չկա. և Հյուսիսի կամ Հարավի բևեռների սառույցների մեջ կյանք չկա: Որոշ ջերմություն է պետք կյանքի համար, օդի որոշ ձև: Երբ մի օր արևը ցրտե, երկիրը կսառի: Երբ մի օր օդի թթվածինը չատանա՝ մենք կայրվենք: Երբ մի աստղ դիպնի մեր երկրին, կփշրվենք:

Կենդանիներն էլ, ամենեն մեծ կամ շատ պստիկ, օժտված են բանականությամբ, Հոգով. չա՛տ անգամ, որոշ բաների մեջ, մարդուց կատարյալ. մրջյունների պետական կազմը ավելի տրամաբանական է և խելացի, քան մերը. սեռական «դիվականը» կրքից ազատվելու համար մարդիկ ներքինացնում են իրենց, մի իրոք «դիվական» եղանակ, այլ անվնաս, պատվավոր կերպով: Մեղուները մեղնից ավելի մեծ և ոգևորված ինքնապահում ունին համայնքի սիրուն: Ո՞վ կարող է սարդի չինած թելից և հյուսած ոստայնից ավելի նուրբ և ուղիղ թել չինել և ավելի դաշնավոր ոստայն հյուսել: Եթե մենք ձգտում ենք մեծ զոհերով թռչել օդում, աղավնին անվնաս և դյուրին կերպով կտրում է ովկիանոսը: Պետք չէ մեծամիտ լինել, մենք բարձր ենք, այո, բայց ո՛չ կատարյալ:

Մեր պատերազմները, մեր դիվանագիտությունը (դիպլոմատիա) ցույց է տալիս մեր ստորությունը:

66. ԻՆԺԵՆԵՐԸ

Հարությին պատմելով, բացատրելով չատ բան, երբեք իր եղրակացությունները չէր անում՝ մորալի, Աստծու, նպատակի մասին: Չէր ուզում Հարության հոգու վրա իշխել, նա միայն նրան առարկայորեն պարզում էր գիտության արդյունքները, հաղթանակները:

Օրինակ: Հարությն [աստմ էր] հարցրեց: Աստված կա՞ թե չկա, ով ստեղծել է այդ նախանյութը:

Ինժիներ – Առանց նախանյութի աշխարհ չէր կարող լինել, կաղապարվել, բայց թե նա կա՞ր միշտ, թե՞ Աստված ստեղծեց ոչնչից, դա ներքին խղճի, դգացմունքի հարց է. կան գիտնականներ, որ ասում են, թե նյութն է Աստված, հավիտենական, կան թե՝ Աստված է ստեղծել ոչնչից:

Այդ մասին իմ ունեցած կարծիքը ինձ եմ պահում, դու ընդունիր ինչպես քո ներքին ասը ուզում է, հոգիդ ուզում է:

– Հոգին անմահ է, թե ո՛չ:

– Դա էլ քո որոշելիք բանն է: Կրոնական հարցերի մեջ ես չեմ մտնում. ես ասում եմ, որ կենդանիներն էլ հոգի ունեն, նյութերն էլ... Աշխարհը մի օր պիտի վերջանա՝ այսինքն՝ մեր արևը, բայց թե մեր հոգիները անմահ են – Թող կրոնը որոշե...

– Գիտնալը լա՞վ է, թե՞ գեշ, բախտավորեցնո՞ւմ է, թե՞ դժբախտեցնում:

– Գիտնալը լավ է, որովհետև օգտվում ենք մեր կյանքի համար, գեշ է, որ տխրեցնում է չատերին, ճնշում,

բայց Եվրոպան գոհ է, և գիտնական մարդիկ ապրում են, ամուսնանում են, գվարթ են: Ես էլ եմ գվարթ, ի՛նչ կա որ...

– Աշխարհը, կյանքը՝ չարի՞ք է, թե՞ բարիք:

– Նայելով ում համար: Եվ եթե չարիք է, գիտությամբ մարդ պիտի կարողանա չարիքը սանձել և բարիքի փոխել: Գիտությունը երբ հաղթե՝ հիվանդությունները կվերանան: Հիմա զսպված է կայծակը, հեղեղը, չար ցավեր, խոլերան, և այլն:

– Մա՞հը հապա:

– Դա անհրաժեշտություն է: Պետք է հաշտվել նրա հետ. երբ ուժասպառ է լինում, ծերանում, մահը երջանկություն է:

Բայց դրանց մասին մի մտածիր, ապրի՛ր ինչքան կարող ես: Ամուսնացիր, վայելիր դոյությունդ, սիրի՛ր մերձավորներիդ, բարիք արա, ազգիդ, ժողովրդիդ օգնիր, և աշխատի՛ր, դործի՛ր, պարապ մի նստիր: Անգործությունը չարիք է, և հուսահատ մտքերի աղբյուր:

Մի խոսքով այնպես տանել, որ դուրս չգա թե ինժեները նրան պեսիմիստ դարձրեց: Այլ Հարությը գիտությունից ստացավ ծանր, տխուր տպավորություն: Ինժեների ասածներից նա եզրակացրեց, որ կյանքը նպատակ չունի, աշխարհը մի խաչ է՝ քիմիական-գիտական մի խաչ: Մարդը ոչինչ է, մի հյուլե: Այնինչ ինժեները ասաց, որ մարդը ֆիզիկապես ոչինչ բան է, բայց նրա դլուխը, ուղեղը՝ տիեզերքի չափ արժեք ունի, որովհետև մարդն է, որ դնահատում է տիեզերքը. տիեզերքը մարդու մեջ հոդի, բան է դարձել. առանց մարդու տիեզերքը մի մեքենա է,

ինքն իրեն չհասկացող թևրևա: Դրա համար էլ կարելի է ասել, որ մարդն է ստեղծել տիեզերքը:

67. ԻՆԺԵՆԵՐԸ

— Արևի ուժերը կպակասեն, կդոլորշիանան.— և կյանքը կմեռնի, մի օր:

— Երկիրը կամաց-կամաց տափականում է, սարերը իջնում են, ձորերը լցվում:

— Ամբողջ տիեզերքը անընդհատ, անդադար չարժման և հոսման մեջ է. ամեն իր փոխում է իր պատկերը, ձևը և դնում է անվերջ, առանց հանգրվանի. ո՞ւր, չգիտենք. բայց մենք չենք տեսնում, մեր ներկա գիտության չափով, ո՛չ մի վախճան, ո՛չ նպատակ: Մեծ մասով քիչ բացառությամբ իրերը դնում են դեպի կատարելագործություն. մի բջիջ, պարզ կենդանիներից ու բույսերից, փոխվելով, հեղհղվելով՝ դարձել են ներկայի բարդ կենդանական ձևերը, որոնք նույնպես, անդադար փոխվում են, ով գիտե ինչ նոր-նոր ձևեր հայտ բերելու և ոչ մի կետի չհանգելով, մինչև որ երկրիս պայմանները այլևս աննպաստ լինեն էակների կյանքին, օրինակ, երբ սկսի սառել, և արդեն սառչի:

Կյանքը ծագել է ծովերից, ջրերի միջից. ե՞րբ և ինչպե՞ս, չգիտենք: Ասում են, թե ինչո՞ւ հիմա չի ծագում կյանք. թևրևա միշտ ծագում է, բայց մենք չենք տեսնում: Միլիոն տեսակի պատճառներ և պարագաներ կան, մեզ անհայտ, կյանքի գոյացման համար. եթե հիմա չկա, գուցե այն պատճառով, որ երկրի միջավայրը փոխվել է. թևրևա կյանքը ծնունդ է երկրի երիտասարդ, թարմ ուժերի ժամանակ, ո՞վ գիտե՝ ի՞նչ ջերմություն է եղել, ի՞նչ

ճառագայթների ազդեցության տակ և ինչ տարրերի բաղադրությամբ: Թերևս կյանքի սերմերը եկել են ուրիշ մոլորակներից. թերևս արևի մեջ կան այդ սկզբունքները, որ իջնելով իր ճառագայթներով մեր երկրի վրա՝ կյանքի տեսակների ձևեր են առել: Մենք ապրում ենք անպատմելի, անհամար դադոնիքների և հրաշքների միջին:

Կուլտուրան ավելի հին է, քան քաղաքակրթությունը. նա խաչնարածների և դյուզացիների ստեղծածն է, իսկ վերջինը՝ քաղաքների:

Գնում ենք դեպի սոցիալիզմ: Վերջ պատերազմների, անարդարությունների, ազդերի հակամարտության: Գիտության, արհեստների և սոցիալիզմի միջոցով մենք կհասնենք մարդկային-բարոյական կենակցության և կջնջվեն մեր մեջ դեռ տիրող անասնական հարաբերությունները:

Հարությը

— Մարդը հնչ է, անսահման տիեզերքի մեջ, բայց մահվան վախի նրա տանջանքը տիեզերքի չափ է:

68. ԻՆԺԵՆԵՐ

Մարդու ձգտումն է, նպատակը — Աստված դառնալ: Արդեն Աստծուն նա կերտել է իր կաղապարի վրա, ձուլել է իրեն վրա,— Աստված իր (մարդկային) տենչանքների, երազների, ցանկությունների մարմնացումն է, առարկա-

յացումն է – հետևապես, մարդը տենչում է լինել – ա-
դաա, ամենակարող, ամենագետ, ամենուրեք, բացարձակ,
անմահ և հավիտենական: Միայն Աստված լինելով նա
կարող է հասնել բացարձակ, կատարյա՛լ, անհուն երջան-
կությա՝ անթերի, լրիվ, անմնացորդ երջանկության:

Իսկ մինչդեռ մարդը՝ անկարող մի էակ է, սահմանա-
վոր, թուլ համեմատական: Նրա հավակնությունը, թե
տերն է, իշխանը բոլոր արարածների՝ պատրանք է: Նա
զոհն է՝ կերը՝ բացիլների, միկրոպների: Նրա հավակնու-
թյունը, թե հաղթել է բնության ուժերին՝ մեծախոսիկու-
թյուն է, պարծենկոտություն, սուտ: Նա ոչ ժամանակին է
հաղթել, ոչ տարածության, ոչ ջրին, ոչ հողմին, ոչ ծո-
վին, ոչ ցամաքին: Նրան սպառնացող կան դեռ երկրա-
չարժը, հեղեղը, հրդեհը, անձրևը, ձյունը, ցուրտը, չոգը,
կայծակը, փոթորիկը, երաշտը, մորեխը, ժանտախտը, թո-
քախտը, <անընթ.>, քաղցկեղը և պատերազմը:

Նա թռչել է ուզում, բայց ոտներից կախված է երկ-
րագնդի ծանրությունը: Եթե գիտությունը այնքան զար-
գանա, որ մարդը հաղթող դառնա բնության վրա – դադա-
րի երկրաչարժը, զսպվեն հեղեղները, երաշտը, ցուրտը, փո-
թորիկը, չնջվեն միկրոպները – պատերազմը, և մարդը՝
ընկճելով տարածությունը, ճամբորդի աստղից աստղ.–
բայց վերստին կմնա անպարտելի մի բան – մահը: Մահը
անհաղթելի է, անպարտելի է: Ամենահզոր ուժն է, տերը
տիեզերքի մեջ: Բոլոր իրերը ենթարկվում են նրան՝ երբ
նույնիսկ միլիարդ դար ապրելուց հետո, աստղերը, արևնե-
րը, Շիր-Կաթինները. որովհետև տիեզերքում մի անփոփոխ
օրենք կա – ձևափոխություն: Մեռնում է իրը՝ ձևը, անհա-
տը, ապրում է – մնում է առարկան ինքնին, գոյանյութը,
փչրվում են անոթները, մնում է կավը, մեռնում են մար-
դիկ, մնում է հողը՝ տարերքը, մեռնում եմ ես, մնում են ինձ

բաղկացնող տարրերը, մեռնում են նրանք՝ մնում է տիեզերական նախանյութը, մննակը, միակը, առանձինը, անդուդականը — ու մնում է թե նյութը, թե ուժ-նյութը...

69. ԻՆԺԵՆԵՐԸ

Հիմա մարդկության առջև դրված են հետևյալ իդեալների իրագործումը — վերջ պատերազմի, չահագործման վերացման, սոցիալիզմի հաղթանակի:

Մարդկությունը հաղթահարելով տնտեսական անիրավությունը — կմանի մի մեծ ուղիի մեջ, դիտության, մեքենաների զարգացման. մարդը պիտի հաղթե հիվանդությունների, թունավոր միկրոբների, ժամանակի և տարածության, նյութի արգելքներին: Նա պիտի ապրի առողջ, ամբողջ, երկարատև, պիտի հինգ մատի պես ճանաչե երկրագունդը, լինի՝ երկրագնդի վրա՝ ուր որ ուզենա, բևեռից բևեռ: Պիտի դիտենա ծովերի հատակը: Պիտի ավելին — ճամբորդե մոլորակից մոլորակ, աստղից աստղ:

— Իսկ մա՞հը,— հարցրեց Հարությը:

— Մահը անհաղթելի է. նա կմնա միակ չարիքը մարդու համար այնքան ժամանակ, ինչքան որ մարդը չպիտի կամենա մեռնել: Բայց երբ կամենա մեռնել — այդ կլինի բարիք նրա համար — մահը ցանկալի:

70. ԱՍՏՎԱԾ

— Իհարկե ո՛չ այն Աստվածը, որին մարդը ստեղծել է իր հոր կամ ծերունի պապի պատկերով՝ ալեհեր, մորուքով. բայց, այդ խոսքը այն Աստծու մասին է, որ ստեղծել

է ժամանակն ու տարածությունը, նյութն ու ուժը, դրել է բնության օրենքները, աստղերի բույլերը, ստեղծել է մարդուն՝ ուղեղ, հոգի... Ջափել է ամեն ինչ, կշռել, դասնակել, ամենքի տեղը, դերը որոշել...

71. ԻՆԺԵՆԵՐԸ

Բնությունը հավասարապես վարպետ է՝ անսահման մեծ և անսահման փոքր էակներ ստեղծելու մեջ: Միկրոբներ, բացիլներ: Ատոմներ:

Մեր մարմինը կազմված է միլիարդավոր կենդանիներից, որոնք բջիջներ են կոչվում... ուղեղի բջիջներ, կաշվի, ոսկորի, ներվերի, արյան... կենդանիներ են իրենց համար ապրող, բայց միասին մեր մարմինը չինող: Այդպես է բոլոր կենդանիների, բույսերի և դուցե բոլոր իրերի մոտ — աստղ, երկիր, արև, քար, երկաթ...

72. ԻՆԺԵՆԵՐԸ

Բնությունը զարհուրելի կռվի դաշտ է: Անողոք կռիվ անձնական դոյության և սերունդի, դոյության համար: Իրար ուտել և անվերջ մեռնել: Ինչե՜ր, ի՜նչ զարհուրանքներ են կատարվում ծովերի մեջ, անտառներում, մի կաթիլ ջրի մեջ, մեր արյան մեջ, մեր աղիքներ մեջ:

Կռիվ ամենուրեք, և կռվի միջոցով սրումն կենդանիների հատկությունների, կենսական ուժերի, կենսունակության: Կռվի մեջ զարգանում է օրգանիզմների խելքը, կամքը, հնարագիտությունը: Կարիքը սրում է, ստեղծագործող է նա:

73. ԻՆԺԵՆԵՐԸ

Մենք ունենք բացարձակը դիտնալու անհաղթելի տենչանք, բայց մեզ մատչելի է միայն հարաբերականը: Մենք ապրում ենք մի այնպիսի տիեզերքում, ուր ամեն իր հոսում է, քայլում է, ձևափոխվում է և երբեք չի հանդում մի կետի, վերջնական ձևի:

Հուսահատական է այս, բայց միևնույն ժամանակ խթանում է մեր միտքը՝ չարունակ պեղել, քրքրել, քննել, հետազոտել. և քնավ կանգ չառնել, չմեռնել, որովհետև տիեզերքն էլ կանգ չի առնում, չի մեռնում: Չի քարանում, չի ընդարմանում:

74. ԻՆԺԵՆԵՐԸ

Ճարտարապետն է ներկայացնում հակադաշնակցական մոտածումը. չի հավատում հայկական հարցի լուծմանը:

Նա Անիում և Բագրանում ասում է՝ մեզ փրկություն չկա. ոչ կարող ենք հուսալ թուրքի դժուխքյանը և ոչ Եվրոպայի և Ռուսիայի վհհանձնումքյանը և փրկարար օդնության ու միջամտությանը և ոչ մեր անձնական ուժերի հաղթանակին: Մենք ոչ հույներ ենք, որ Եվրոպան օգնի և ոչ բուլղարներ ենք (սլավոն և օրթոդոքս), որ ռուսն օգնի: Մենք մենակ ենք. անտեր, անօգնական, իսկ թուրքը ունի անթիվ բարեկամներ — ամբողջ Եվրոպան: Մեր փրկությունը պիտի լինի մեր համբերանքի, մեր աշխատանքի, մեր տոկունության մեջ: Թուրքիան պիտի քայքայվի, բայց ոչ մեր ձեռքով. մենք ոչինչ ենք: Մենք պիտի սպասենք.— սա է մեր ճարը.— որ Ռուսիան դնա և

տիրե հայկական նահանգները, միացնե Կովկասին: Այսպիսով կստեղծվի հոծ հայություն, իրար գլխի հավաքված, հայ հողերի վրա. և պիտի գա, անպատճառ պիտի գա Ռուսաստանի հեղափոխությունը և մեր ազատագրումը նոր Ռուսաստանի մեջ, նրա հետ:

Անիում չկան Թիֆլիզից եկած հայերը, որոնց հետ վիճում էին կայծակը <անընթ.>ները:

Սոցիալ-դեմոկրատիայի մտքերի կհանդիպենք Ալեքսոլում, ս. դեմոկրատների ճառի մեջ:

1934 թ., 19 դեկտեմբերի

75. ԻՆԺԵՆԵՐԸ

Մոնղոլներից մենք չարաչար պարտվեցինք. մեր մարդիկների սրերը կոտրվեցին, [նրանք ընկան] նժույգներից ընկան նրանք, մեր դրոշակները ծվեն-ծվեն եղան, ավերվեցին մեր ոստաննները, մեր քաղաքները, մեր ամրոցները, բայց մնաց մեր լեզուն — ահա մեր հայրենիքը, մեզ իրար դողդող անպարտելի, անխզելի ցանցը. մեր լեզուն, որի ամեն մի բառը հնչել է մեր բյուրավոր-բյուրավոր հայրերի-մայրերի նվիրական սրտերի միջից նրանց մաքուր շրթունքով, մեր մանուկների, մեր նահատակների բերաններով... Այդ լեզուն, որով խոսել են մեր հայերը բնության հետ, տիեզերքի հետ, իրենց հոգու հետ, այդ լեզուն, որ հնչել է Մշու դաշտում, [Վանա ծովի] Բզնունյաց ծովի ալիքների հետ, որ հնչել է Արաքսի ա-

վերում, Արարատյան դաշտի սոսինների տակ, այգինների [ող...] խաղողների մոտ, Անիի հոյակապ տաճարներում, Ազատ Մասիան ի վեր...

76. ԻՆԺԵՆԵՐԸ

Ազգությամբ միջոցով պետք է դնալ դեպի համամարդկությունը: Մշակույթը ազգային է: Ապագա մարդկությունը պիտի կառուցվի սոցիալիստական տնտեսակարգի վրա, խարխլված ազատ ազգությունների վրա...

Սոցիալիզմը պիտի փրկե մարդկությունը իրար հոշոտելուց, իսկ ազգությունները կատեղծեն արվեստ, դեղեցկություններ, հավերժական արժեքներ, ձև, ոճ...

Մեզ պետք չեն դիվանագետներ, այլ մարդարեներ. մեզ կփրկեն մեր մարգարեները, և ո՛չ թե ատության, խարդախության, խորամանկ խելքի վրա հիմնված դիվանագետները, քաղաքագետները...

77. <ԲՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵՐԵՎՍ...>

— Բնությունը, թերևս ուզեցավ մարդուն անմահ չինել, բայց այդ անհամատեղելի էր իր օրենքների հետ: Բոլոր իրերը ծորում են, ընթացք ունեն, շրջվում են, հոլովվում են: Ուստի նա մարդուն մահկանացու չինելով՝ խնայեց նրա մեջ դնելու մահի ղգացումը, մարդն ապրում է, որպես թե մահ չկա, ծերանում է, մի ոտքը գերեզման դնում, դարձյալ զգում է թե՝ անմահ է. չի հավատում մահին:

Այդ շատ լավ խորամանկ չինված է, որ մահը կա, բայց նրա գոյության չենք հավատում: Սա է մեզ ապրեցնում,

նման ոչ՝ ինքնաստան կլինեինք: Ուրիշի, մահկանացուի փորած գերեզմանի ափին կանգնած այնպես ենք զգում, թե նա էր, որ պիտի մեռներ, դա բնական էր, որ պիտի մեռներ, բայց ես — ո՛չ. դա անկարելի է, ինձ չի վերաբերում այդ բաղդը — մահ, թաղում, գերեզման... ես բացառություն եմ...

Ո՛վ սուրբ և հզոր պատրանք:

78. ԻՆԺԵՆԵՐԸ

Մարդը զգացող և մտածող բնություն է: Մասն ու մանրիկ մեծ բնության, բայց մտածող ու զգացող:

— Պրծա՞ր... համբերություն հատած՝ հարցրեց նա:

79. ԻՆԺԵՆԵՐԸ

Պարոն Հարութ, դուք այս ձորի մեջ ապրելով և հոլիկիվ լուսամուտից նայելով [աշխարհին] ամբողջ աշխարհը տեսնում եք ավելի լավ, ավելի խորապես, քան նրանք, որոնք մեծ քաղաքներում <են ապրում>: Դուք աշխարքի մի անկյունն եք...

80. ԻՆԺԵՆԵՐԸ

Աշխարհը հարցեր է տալի, մարդը պիտի պատասխանե: Թերևս աշխարհն ու մարդը մեկը մյուսի հանդեպ՝ հարց ու պատասխան են:

Աշխարհը հարց է, մարդը՝ պատասխան, մարդը հարց է, աշխարհը՝ պատասխան:

81. ԻՆԺԵՆԵՐԸ ԱՍԱՑ –

Որ մարդը, մարդու ուղեղը հրաշքների հրաշքն է: Մեծ բան է մարդը, ամեն ինչ է մարդը: Մտածում է, տիեզերքը քրքրում, պեղում, փորում, օրենքներ գտնում, դյուտեր անում: Կարծես, ստեղծված է տիեզերքը քննելու և հասկանալու և փիլիսոփայության-տրամաբանության վերածելու:

82. ԻՆԺԵՆԵՐ

Երբ ինժիները ասաց, թե Աստված ընությունն է, գոյանյութը, ուժը, ժամանակը, տարածությունը, անակիզը, անվախճան, մշտագո, մշտատև, անսահման, անհուն, հավերժական, անիմանալի, անքննելի, անհասանելի, անբավելի, անպարունակելի, անպարփակ...

Հարությը ասաց. նոր բան չէ ասում, հին Նարեկացին էլ նույնն է ասում...

(Կարդալ Նարեկը, Հոբը)

– Անեղ, անճառ, անքննելի, խորհուրդ խորին,
անճառահրաշ զորություն,
էություն, ամենակալ, ամենիմաստ,
անայլայլելի, անմահ,
անարարիչ, անզիտելի,
անհեղլի, անչափելի, անկշռելի,
ամենաբավ,
ամենագործ,
ամենազոր, ամենակարող,
ամենահաս, ամենակիր,
ամենահրաշ, ամենաստեղծ:

83. ԻՆԺԵՆԵՐԸ

Հարութի հարցին, թե Աստված կա՞, ինժենները այսպես է պատասխանում.— Ես քեզ ոչի գիտության ասածը, այն ճշմարտությունները, որ մարդ կարողացել է ստեղծել: Նյութը, նյութի զարգացումը ժամանակի և տարածության մեջ: Թե կա՞ Աստված՝ ստեղծողը նյութի ու ժամանակի ու տարածության, նրանցից վեր, նրանցից դուրս — ես չեմ կարող ասել, ես չգիտեմ, ես երբեք չպիտի կարողանամ գիտենալ: Սա հավատի խնդիր է, կան մեծ գիտնականներ, որ հավատում են Աստծու գոյությանը, կան հասարակ, ոգևոր մարդիկ, որ չեն հավատում: Ինչպես և կան շատ մեծ գիտնականներ, որ չեն հավատում:

Ճարտարապետը խոսում էր համոզմունքով, իր համոզմունքն էր ասում. թե խնայում էր Հարութին՝ չուզենալով նրա հավատը խորտակել, բայց իրականությունն այն էր, որ նա որոշ, վճռական բան չասեց, թողնելով Հարութին՝ իրեն, ինքը եզրակացություններ հանե, ինքը ինքնուրույն ուղիով գնա՝ ուր որ կտանի նրան իր բնազդը, տրամադրությունը, անդիտակցականը, ենթագիտակցականը, գիտակցականը, զգացումները, տենչերը, ցանկությունները, ձգտումները, հակումները և այլն, և այլն:

Թերևս, այդ էր և ճարտարապետի անկեղծ համոզմունքը:

84. ԻՆԺԵՆԵՐ

Քանի անգամ, ո՞վ գիտե, կուլտուրա է եղել երկրի վրա և ոչնչացել ու նորից սկսվել. քանի անգամ համատարած կուլտուրա է եղել ու չքացել:

Միլիոնավոր տարիներ դժոխք է ունեցել երկիրը իր մարդկությամբ:

85. ԻՆԺԵՆԵՐ

– Բնության մեջ ոչինչ կպակսի, ոչինչ կավելնա. նյութն է մշտական, կյանքը, էությունը: Ոչինչ չի ավելանա բնության վրա, ոչինչ չի պակսի նրանից:

– Եթե երկրի պայմանները փոխվեն, մարդն էլ կփոխվի: Եթե օդի միջից թթվածինը պակսի, մարդկությունը մի րոպեի մեջ կոչնչանա...

– Արևի ջերմությունը չարունակ պակասում է, միլիոն դարեր հետո կսառի երկիրը... Բայց ուրիշ մոլորակների վրա կյանք կա. մարդիկ այն կլիմայի ու պայմանների համաձայն կուլտուրա և այլն:

– Ժամանակը տարածության չարժումն է, նյութի չարժումը:

86. ԻՆԺԵՆԵՐ

Հարութին, որ ասում էր՝ թե մի՞թե կարելի չէ հայտնության միջոցով ստանալ ճշմարտություններ կամ տիեզերքի ծագման պատճառի մասին... ինժեները թե՝ ի՞նչ հայտնություն: Ահա քեզ հայտնություն – հանճարը: Հանճարն է ներկա դարերի հայտնությունը, աստվածային հայտնությունը, գիտությունը:

– Նյութը է չոշափելի ուժը, ուժն է անչոշափելի նյութ, նյութը չոշափելի ուժն է, ուժը անչոշափելի նյութն է:

Ինչքան հրաշք է ու զարմանալի մեր ուղեղը, ուր պատկերվում է, տպվում, ցոլանում աշխարհը, ողջ աշխարհը՝ իր առարկաներով, մեր գլխի մեջ:

– Մեր հոգին ձգտում է հաճույքի, փախչելով տանջանքից: Կյանքի նպատակը – հաճույքն է...

Lustgefunը – և Lustgefühlը –

87. ԻՆԾԵՆԵՐԸ

Նա Անիում, ամեն քայլափոխում ասում էր մտքում.
«Թուրքերն անցել են այստեղից» –
Նույնը Բագրանում էր ասում.
– «Թուրքը այստեղից էլ է անցել» –

88. ԻՆԾԵՆԵՐԸ

– Մեր մտքի ներքնաթափանցումը:

Երևույթների ներքնաթափանցումը:

– Եթե կարող ես հյուլենների հարաչարժ թրթռումը կանեցնել,– կարող ես վերջ տալ տիեզերքին:

– Մեր ուղեղի մի չնչին մասն է գործոն և գիտակցություն ստեղծողը: Երբ ժամը գա, երբ մեր բովանդակ ուղեղը գործե և գիտակցե, այն ժամանակ մենք կդառնանք գեր-մարդ, աստվածացման մոտեցած, և հարուստ տիեզերքի խորհուրդների ներքնաթափանցման:

Մարդկության գիտակցության շրջանը շատ նոր է, մի քանի տասնյակ հազար տարիների համրանք ունի, և հասել ենք ներկա վիճակին. ի՛նչ բարձրության պիտի հասնի նա, միլիոն տարի հետո...

Երկրագունդը միլիոն տարիներ կյանք ունի, և դեռ պետք է ունենա...

89. ԻՆԺԵՆԵՐԸ

Հարութին դիտական բաներ է ասում. օրինակ, բջիջ, հյուլե, նախաբջիջ, նյութից ծագել է բջիջը...

Եվ բացատրեց, թե ինչ է բջիջը. [սակայն հեղինակը չի դրում նրա բացատրածը:]

Ուղեղ, նյարդ — դա է հոգին:

Եվ բացատրեց, թե ինչ է նյարդը:

Արյան գնդակներ, որ բճիճներ են, կենդանի օրգաններ:

Եվ բացատրեց գնդակների մասին:

90. ԻՆԺԵՆԵՐԸ

Տիեզերքը սկզբնական պատճառ չունի, որովհետև տիեզերքը անսկիզբ է: Եվ ոչ վախճանական, վերջնական հետևանք, նպատակ ունի, որովհետև նա անվերջ է, անվախճան:

Նա միշտ եղել է, միշտ կա և միշտ կմնա: Անօգուտ աշխատանք է այդ հարցերի մասին մտածել: Մտածիր դարերով, դարերով, արդյունք չկա, նույն բանը պիտի անվերջ ծամես, որոճաս: Միլիոն տարի մտածես, մազաչափ տեղիդ շարժված չես լինի, կլինես անիվի պես, որ անընդհատ իր վրա կդառնա:

Բայց այս գիտնալով, չարունակ դառնում ենք այդ հարցին, և սերունդներով, հին ու նոր ազգերով, դնում են այդ հարցը և գերեզման իջնում:

91. ՀԱՐՈՒԹԸ-ԻՆԺԵՆԵՐԸ

Հարութը հարցրեց ինժեներին.

– Քո էդ գիտությունը կրնա մարդուն հոգի տալ:

– Չէ:

– Կրնա անմահություն տալ:

– Չէ:

– Կրնա նյութ չինել, ստեղծել – չեղած տեղից:

– Չէ:

– Էդ գիտությունը պետք չէ ինձ:

Հարութը մոռացավ, մոռացավ աշխարքի, նյութի ծագման մասին, և հրաշք չընդունելով, չկարողանալով ելք գտնել, ասաց, որ Աստված կա, նա է չինել լավ թե գեչ էս աշխարհը:

92. ԻՆԺԵՆԵՐԸ

Հաշված է, որ երկրի վրա ամեն մի վայրկյանում մարդ է մեռնում, տարեկան մոտ 40,000,000 մարդ. բայց ով գիտե անսահման տիեզերքի մեջ ամեն մի վայրկյանում քանի աստղեր են մարում և ոչնչանում, ջախջախվում... Եվ եթե մարդիկ կան ուրիշ անթիվ մոլորակների վրա՝ ամեն վայրկյան քանի տասնյակ հարյուրավոր միլիոններով մարդ է մեռնում.– ապա պատերազմները, ապա համաճարակները:

– Ո՞ւրտեղ ենք մենք, ինչ իմանաս, անսահման տարածության մեջ՝ ով գիտե ո՞ւր ենք և ուր է գնում մեր

երկիրը... բայց մենք մեր երկրի վրա նստած՝ մեր դործը տեսնում ենք, չինում ենք մեր երկիրը, տունը, հայրենիքը և մեր աշխարհը մի փոքր աշխարհ է նույնիսկ երկրի վրա:

93. ԻՆԺԵՆԵՐԸ

Ողջ տիեզերքը հոսում է, դնում է, չկա մի վայրկյան հանդիստ. իրերը կայուն չեն, հար-հավիտյան փոխվում են, այլակերպվում, ուրիշ բան դառնում, պահելով իրենց բունը, իսկությունը, էությունը, որ չենք հասկանում:

Իրը դառնում է արև, բոց ու լույս, նույն իրը դառնում է ջուր, օդ, հող, նույն իրը դառնում է զգայուն մի կետ, մի տերև, մի սաղմ, նույն իրը դառնում է ձուկ, ծառ, թռչուն, օձ, որդ, ճանճ, ոչխար, մարդ... Եվ բոլորը փոխվում են, այլափոխվում. ո՞վ դիտե՝ մարդուց ինչ պիտի դուրս դա հազար դարեր հետո. ո՞վ դիտե՝ ուրիշ աստղերի հին մարդուց ի՞նչ է ծագել այսօր և ի՞նչ պիտի ծագե հետո — միլիոն տարի հետո. հրե՞շ, հրեշտա՞կ, չդիտենք. մի բան դիտենք, որ ամեն բան հոսում է, վազում է, թռչում է, փոխվում...

Հարությը — Ինչո՞ւ համար, նպատակն ի՞նչ է, և ո՞վ արավ, ինչո՞ւ արավ:

Ինժեներ — Զգիտենք և չենք կարող իմանալ, դուցե և այն պատճառով, որ նպատակ, դիտավորություն չկա. այդպես է լինում, որովհետև ուրիշ կերպ չի կարող լինել, կույր անհրաժեշտություն:

Հարությը չդոհացավ. նրա հոդին նպատակ և իմաստ էր որոնում իրերի կյանքի, չարժման մեջ:

94. ԻՆԺԵՆԵՐԸ

Աչխարքը հրաչք է. բնությունը հրաշագործ է իր անսկիզբ ծագումով, իր անբացատրելի կյանքով ու ընթացքով, և իր անվախճան գոյությամբ: Նա անսկիզբ է, որովհետև ոչինչից ոչինչ կծագի, ոչինչից նյութ չի բղխի, և անվախճան է, որովհետև ինչը չի կարող ոչինչ դառնալ. ոչինչը կարող է ոչինչ դառնալ:

Աչխարքը հրաչք է. իրը, նյութը հրաչք. նա կա հավերժ, բայց փոխվում է. իրից անվերջ բղխում են հյուլեները, բոլոր իրերը աղբյուրի պես իրենցից բղխում են, ու հոսում, ծորում...

Հրաչք են անթիվ, անթիվ աստղերը, որ արևներ են, մեծ ու ահագին, բայց բնության մեջ հյուլեներ են նրանք, կայծեր, որ վառվում են մի հավերժություն — մի վայրկյան, և հանգչում, ուրիչ բան դառնում: Մենք եղել ենք, մեր տարրերը, ամենուրեք, բոլոր աստղերի վրա, և ո՞վ գիտե՝ ո՞ւր պիտի քչվենք: Եվ այս ամենը վարողը տիեզերքի ճակատագիրն է, անհրաժեշտությունը, պատճառականությունը:

Հարությը լսում էր և նրա գլուխը դառնում էր. ձեռքերը գալարելով ասում էր. եթե Աստված չի ստեղծել աչխարհը, ես կխելագռեմ, խելքս մաղվում է... ո՞վ է չինել, որտեղից է. այս արևները, աստղերը, լուսիննները, երկիրները, բույսերը, անասուննները, մարդը. մեր խելքը, հոգին, թռչուննների, միջատների խելքը, երգը. ինչպես կարելի է կարծել, որ անբան, անխելք պատահական պատճառականությունից ծնվեին այսքան զգացող, մտածող, գործող էակներ: Չէ՞ որ ամեն բանի մեջ տեսնում ես հաչիվ կա, մտածողություն. հավն ինչպես է հավկիթներ չինում, մեջը կյանքի սաղմ դնում. ո՞վ կանոնավոր չինեց ծառի

տերևները, ծաղիկների թերթերը ու դույները: Ո՞վ չիներ էս մեքենան էսպես կանոնավոր... Եթե Աստված չկա, ի՞նչ կա... Հրաշք է սա մի. ո՞վ ստեղծեց այս հրաշքը. ինքնիրեն գործվեցավ... զարմանում եմ, զարմանում եմ, խելագարվում եմ... Եթե Աստված լինի, ես չեմ զարմանա, նա կարող է, ամենակարող է, թեև չար, անտարբեր. չինում է, մեռցնում, բայց նորից չինում, մեռած ծաղիկի տեղ նորը չինում... Աստված կա, արարիչ, բայց ամեն բան կատարյալ էչ չիներ. մեզ համար է խոսքս. մեր սրտովը չէ չիներ. դրա համար ես Աստծու հետ խռով եմ, բայց նա կա, հզոր է, արարիչ, ստեղծող. թե օձի և թե թռչնի, թե գառի, թե գայլի, թե կյանքի, թե մահի. բայց առանց Աստծու չի կարելի հասկանալ աշխարհը... ի՞նչ է աշխարհը, ի՞նչ է նյութը, ո՞ւր կերթա, ուրտեղից կուգա, ի՞նչ է նրա դարձնող ուժը, ի՞նչ է այս անծայրությունը, անհուն, աներր, աննահման, անվերջ ժամանակն ու տեղը. ու լցված, ինչպես ասես, աստղերով, արևներով... ցնդում եմ, խենթանում եմ, ուղեղս ցրվում է... ո՛չ, ո՛չ, Աստված կա՝ իր գրկի, ափի մեջ բռնած աշխարհատիեզերքը, իսկ ինքն անհունը, անվերջը... և նրանից մենք պահանջ ունենք, հաշիվ, որ չիտկե մեր ծանր բախտը... Աստծու գործերը կարելի է քննել ու պահանջել, բայց անբան, անմիտ, կույր բնությունից ի՞նչ պահանջես, երբ ինքը չի իմանում, թե ինքն ինչ է...

Ինժեները — Մեր խելքը չի հասնի, աշխարհի առջև մենք հիմար ենք, մեր գլուխը — անամեջ. մենք մեր աչքով ու խելքով ու սրտով ենք նայում աշխարհի, բնության վրա. և սխալվում ենք. գուցե Աստված կա. ո՛վ գիտե. կամ բնությունն Աստված հաշվիր, ապրիր գործնական կյանքով. խորհել, քննել օգուտ չունի. 1000 տարի ապրիս, հիմիկվա գիտցածիցդ ավելի բան չես գիտենա, մի ցորենի հատիկի չափ ավելի...

Հարուքը լռեց. այլևս չէր հարցնում, հասկացավ, որ միտք չունի. ինժեներն էլ չգիտե... և մնաց իր կարծիքին. Աստված է ստեղծել աշխարքը, և մեզ. բայց մեր օգուտը աչքի առաջ չի ունեցել. ով գիտե ինչ հաշիվ ուներ նա, որ մեր մարդկային հաշվի հետ չի մերվում, հարմարվում...

95. ԻՆԺԵՆԵՐԸ

– Հոգու անմահություն. ամեն արարած հոգի ունի, բույս թե կենդանի, որակով նման են, քանակով տարբեր. մարդը և որդը նույն հոգին ունեն. մեկը չատ, մյուսը քիչ: Հոգի ունեն այն անտեսանելի մանրէները, որոնց միլիոն հատը ապրում է մի կաթիլ ջրի մեջ. կամ մի պղտունց նեխվածքի մեջ: Եվ ինչո՞ւ միայն մարդու հոգին է անմահ լինելու. ինչո՞ւ ոչ բոլորը. և ո՞ւր պիտի ապրին այդ անթիվ հոգիները. մի օրվա մեջ մի մանրէն դառնում է հազար միլիոն... ո՞վ պիտի հսկե ու համարե ու դատե մի ամսվա մի մանրէի սերունդները... մենք մեռնում ենք, մեզ կազմող նյութը անմահ է:

– Ազատ չէ մարդը, թեև նա չունի հրամայող Աստված, բայց ունի հրամայող բնության օրենքներ, Աստծուց ավելի խիստ, որովհետև ազոթք չեն լսում. մարտնչող են նրանք, կռվող. և տեղի են տալիս ուժի: Ուժը մեր խիղճն է:

Ազատ չէ և մարդու կամքը. նրա բնությունը կապել են իր նախնիքը. մեր կռնակի վրա ոչ միայն ողջ տիեզերքը կա իր օրենքներով ու ուժերով ու նյութով, այլև միլիոնավոր նախահայեր: <անընթ.> սերունդի մեջ մեր հայերի թիվը... Նրանք են ղեկավարում մեր կամքի մի մասը...

— Երբ է տիեզերքի վերջը. վերջ չունի. նա ձևափոխվում է. ինչպես բրուտի ձեռքում կավը անթիվ ձևեր է առնում, բայց կավը մնալով ինքնին, ձևն է փոխում. մենք ամենքս անցավոր ձևեր ենք. տիեզերքի կավը մնում է. արևներ, աստղեր մեռնում են, փոխվում, նորերն են շինվում, ինչպես և մարդիկ և բոլոր էակները... Բայց մարդկությանը վերջ կա. վերջ կա և մեր երկրին, և մեր արևին: Մի օր պիտի գա, որ արևը այնքան պիտի պաղի, որ մարդկությունը չպիտի կարողանա դիմանալ ցրտին, և անունդ չպիտի գտնի. և պիտի մեռնի... և մարդու մահից հետո երկիրը սառցապատ, Նեպտունի կամ Սատուրնի պես, պիտի թավալվի ցուրտ ու խավար ծիրի վրա, և ոչ ոք պիտի լինի, որ կարդա մարդկության պատմությունը:

Բայց դուցե մինչև այդ օրը մարդկությունը այնպիսի գյուտեր գտնի, որ տեղափոխվի ուրիշ արևի շրջանում, ուրիշ գալար ու տաք երկրի վրա...

Բայց մեր մահով տիեզերքում բան չի փոխվի. տիեզերքը բոլոր ժամանակներից առաջ եղել է, կա և կմնա. նա ինքը ապրող կյանք է, հոգի է, ինքը Աստված է. և նրա անունը հավիտենական բան է, անսահմանություն և խորհուրդ-գաղտնիք, հավիտյան անլուծելի... Եվ մարդկությունը նրա գրկում այնպես է, ինչպես է աներևակայելի փոքրությունը աներևակայելի մեծության մեջ. կամ աներևակայելի կարճ ժամանակը հավիտենականի մեջ...

Այս է ճշմարտությունը. մյուսը մարդկային մեծամտություն է, Երա հոգու երազը, կրոնն է նա. ոչինչ ես դու, ո՛վ մարդ, գլուխդ կախ ապրի՛ր համեստ ու գոհ, և մեռի՛ր հաշտված. աշխատի՛ր և ուրախ եղի՛ր...

Հարությը թեև նրա ասածներից չա՛տ ու չատ բան սորվեցավ, տիեզերքը նրա աչքում ավելի խորացավ ու մեծացավ, բայց չհաշտվեց նրա եզրակացություններին

հետ, նրա իմաստության հետ. չա՜տ անմխիթար էր դառնում մարդու վիճակը այդ տեսակ աշխարհասպատակեցման մեջ. մի ոջիլ, մի ոչինչ, մի հյուլե. և դառնում էր տիեզերքը մի աննպատակ մեծություն, մի անգիտակից Աստված: Անկարող էր Հարուքի հոգին այդ ընդունելու. նրա հոգին ընդունում էր, որ Աստված կա, թեև չար և բարի միաժամանակ, որ մարդուն նա է ստեղծել, որ մարդը մի բան է աշխարքի մեջ. այս հոգին կա, առանց որի մարմինը մեռնում է. և վերջապես, եթե Աստված կա, որ գիտակցում է, մտածում է և ստեղծել է ուզենալով և մտածելով, հետևապես տեր կա տիեզերքին, և բոլորիս. անտեր ու կորած չենք. նա հաշիվը գիտե իր արարածների, ինչպես հովիվը իր ոչխարների...

Ո՛չ, ինժեները ուսումնական մարդ է, գիտնական, բայց անկրոն է, աննաստված. ես՝ ուսում չունիմ, բայց կրոն և Աստված ունիմ. թեև Աստծու գործերը կքննեմ, ինչպես տղան իրավունք ունի հոր գործերը քննելու, և մտածում էր օրերով նրա ասածների վրա. տարի մտածեց, մի ողջ տարի. ծփում էր հոգին դառն մտքերի մեջ. Սողոմոն իմաստունը միայն կարող է լուծել այս հարցերը. նա ինժեներից իմաստուն է, բոլոր ժամանակների իմաստուն մարդն է. չատ բան գիտնալը իմաստության նշան չէ, մարդու հոգու բնույթը պիտի իմաստուն լինի, ամեն բան տեսնող. ամեն բանի հոգու խորքը տեսնող...

Սողոմոնը հետո հանդարտվեց, և պսակվեց:

96. ԻՆԺԵՆԵՐԸ

Նա տակավին երիտասարդ մարդ էր: Նրան գյուղացիք կոչում էին ինժեներ աղա կամ պարոն ինժեներ: Մոտ

երեք ամիս ապրեց Տիկոո, ուսումնասիրում էր վանքը, նկարում, չափում. օրերով հեռանում էր դյուղից՝ շրջակա ավերակները ուսումնասիրում, ինչպես և Խնծկոնքի 5 վանքերը: Ժողովրդավար և մարդամոտ սիրտ ուներ, ազատ ժամերը խոսում էր դյուղացիների հետ, ամեն տեսակի: Կիրակի օրերը նկեղեցի էր գնում և մինչև վերջը մնում: Գիշերները կարդում էր տերտերի դրադարանի սակավաթիվ դրքերից, մանավանդ Հայսմավուրք, Վարք սրբոցը: Հարուքին ու նա չատ մտերմացան իրար հետ: Հարուքը գրեթե անբաժան էր նրանից: Հետը գնում էր վանքը և դյուղից դուրս, օգնում էր նրան ինչով կարող էր. պեղում էր, երբ պետք էր, չափում էր նրա հետ և նրա ծանրոցները տանում էր սիրով: Հարուքը պատմում էր նրան իր պատմական տեղեկուքյուններից, որ գիտեր շրջակա վայրերի մասին, այլև ավանդուքյուններ: Ինժիները նկատեց, որ Հարուքը հասարակ դյուղացի չէ, որ բավական բան գիտե և տեղն ևկած ժամանակ կարող է մաքուր, գրական խոսել. գիտեր, որ տիրացու է, դյուղացիները տիրացու Հարուք էին ասում, և ինքն էլ այդպես էր կոչում. «Տիրացու Հարուքյուն»: Ինքն էլ թե աչխատանքի և թե ազատ ժամերում, ճանապարհի, հացի վրա, պատմում էր իր տեսած աչխարհների մասին, իր ճամբորդուքյուննների, Եվրոպայից, Ռուսաստանից: Հարուքը մեծ հետաքրքրուքյամբ լսում էր, և դա վարձատրում էր ինժիներին, որը սիրով նոր-նոր բաններ էր պատմում:

Հարուքը մտածեց, որ այս մարդը ուսում ունի, մեծ գիտուքյուն, կարող է իրեն տանջող հարցերին պատասխան տա. և սիրտ աննելով, սկսեց կամաց-կամաց հարցեր տալ:

Ինժենները զարմանում էր, որ խավար դյուղի անկյունում գտնվում են թերուս կամ ավելի չուտ տգետ մար-

դիկ, որ տանջվում են մեծ, հին, բնազանցական հարցերով, համոզվելով ինքնին, որ մարդկային հոգին ամեն տեղ մարդկային է:

Ինժեները, երբ նկատեց, թե ինչո՞ւ տիրացուհյուն չի անում, և երբ իմացավ պատճառը, ավելի մեծ հարգանքով ու փափկանկատ վերաբերմունք հայտ բերեց Հարուրթի հանդեպ: (Հարուրթը երբ տերտերին հայտնել էր իր կասկածները Աստծու բարության վրա... տերտերը նրան արգելել <էր>, իբրև անմաքուր, կասկածելի, մոտենալ սրբություններին և ժամասացության, նշանակել էր զղջման մի ժամանակամիջոց ապաշխարության, այսպեսով կախակայել էր նրա պաշտոնեությունը, մինչև որ Հարուրթը սրբվի, դարձի գա):

Հարուրթի հարցերին, կասկածներին նա անկեղծ կերպով, իր համոզմունքներին հավատարիմ, պատասխաններ էր տալիս, որոնք ընդհանուր գումարով այսպես էին ներկայանում:

Աստված չկա, այնպես ինչպես պատկերացնում են կրոնները՝ անձնավոր կամ ոչ անձնավոր, բայց գիտակից ստեղծող նյութի, լույսի, աշխարքի, մարդու, և նախախնամող: Բնությունն է ստեղծողը, իսկ ինքը միշտ եղել է և կմնա. ինքնաստեղծ է. մարդկային միտքը ինչքան էլ զարգանա, տասնյակ միլիոն դարեր հետո, անկարող է գտնել գաղտնիքի էությունը, որովհետև անսահմանություն, անեզրություն, հավերժություն, անհունություն կա, անհասանելի է. մեր միտքը մխրճելով տիեզերքի մեջ ավելի բարդացնում ենք գաղտնիքների թիվը, ավելի զարմացք ենք ստանում, քան լուծում առեղծվածի, և ճահիճի մեջն ընկնողի պես ավելի ենք մխրճվում, երբ ճիգ ենք գործ դնում. պարզամիտ մարդու համար աշխարհն ավելի պարզ է, քան խոր իմաստունի համար:

Մարդը առաջադիմելու է, նա որդից, կապիկից մարդ է դարձել. նրա հոգին պիտի դեռ չա՜տ զարգանա. նա անհունությունից, բնության աննեղը դանձերից, խորհուրդներից չատ բան պիտի ձեռք բերե, նա մարդու հոգին, որ մասն է բնության, նրա պես ստեղծող, կարող և գուցե անսահման, պիտի հաղթե իրեն չրջապատող չարին. նա պիտի վերացնե պատերազմները, հասարակական թշվառությունները, կեղեքում, աղքատություն, հարստություն, նա պիտի հաղթե հիվանդություններին, երաշտին, ցրտին, տաքին, փոթորկին, երկրաշարժին, թունոտ մանրէներին, երկարակյաց պիտի լինի, բարի, ազնիվ, իմաստուն, գուցե պիտի կարողանա աստղերի վրա ապրող արարածների հետ հարաբերության մտնի, գուցե և տեղափոխվի ուրիշ աստղերի վրա, երբ երկիրը ծերանա, ցրտանա և ցամաքի: Որ պիտի լինի մի օր և արևը թուլանա. բայց միայն այսքան. նա չպիտի կարողանա երբեք ըմբռնել բնության էությունը, չպիտի կարողանա փոխել բնության բնույթը, չպիտի կարողանա ինքը անմահ լինել. որովհետև բնությունը անհաղթելի է և անայլայլելի իր էության մեջ. փոխվում են միայն բնության չապիկները, դիմակները, ինքը մնում է անայլայլ: Ինչ որ կատարվում է, ողջ իրականությունները՝ երևույթներ են, պատրանքներ. դրանց մեջ է և մեր կյանքը, մարդկությունը: Բնության երևույթները սկիզբ ունեն և վերջ. տեղի են տալիս իրար. չկա ապրող, հավիտյան երևույթ. և մարդն էլ հավիտենական չէ, ինչպես որ մի արև, որ միլիոն, միլիոն տարիներ գոյություն ունի, և մի օր պիտի փոչիանա, այնպես էլ մարդը՝ իր միլիոն տարվա կյանքից հետո պիտի չէանա. այս է ճշմարիտը. կուզես լաց, կուզես խնդա. մենք մեռնելու ենք: Եվ փրկիչ չկա, և ոչ՝ հարություն տվող:

97. ԻՆԺԵՆԵՐԸ

Հարութը ինչպես եղավ, կասկած մտավ մեջը Աստծու ամենաբարի լինելու վրա: Տևսավ չարիք կա. ինչո՞ւ կա (մահ, հիվանդություն, սպանություն, աղքատություն), մտածեց, մտածեց, խորհեց, կարդաց, «Եղծը» կարդաց,— և ավելի ամրացավ կասկածը... ժամը գնալը լքեց: Տերտերի հետ բացատրություն: Չարիքը բարիքի համար է՝ փորձելու, պայքարելու, ամրանալու, կատարելագործվելու, դյուտեր անելու, զարգանալու համար...

Հարութը չհամոզվեց:

Սպասեց Հայտնության, աստվածային հայտնության:

Սկսվեց հուսահատական չրջան: Աստծու հետ թշնամանք: Խմել, թափառել... եկան հայկական չարդերը: Եկավ ինժեները: Մնաց երեք ամիս:

Հարութի հարցերը — Աստված բարի՞ է, թե՞ չար: Ինչո՞ւ համար է չարը: Աչխարք ինչ է, Աստված ի՞նչ է ստեղծել, նպատակը ի՞նչ է... Ինչպես ստեղծեց: Հոգու անմահություն կա՞, մյուս կյանք կա՞, ինչո՞ւ ենք մեռնում, ինչո՞ւ են հայերը չարդվում...

Ինժեները բացատրեց իր կարողության չափ: Աստղերի ծագումը, երկրի կազմությունը, նրա զարգացման չրջանները, կյանքի ծագումը, մարդու հայտնվելը, քաղաքակրթությունը...

Նա ասաց...

Երբ Հարութը լսեց թե՝ եթե ողջ մարդկությունը մեռնի ցանկացած մի օր, մի տերև չի վայր ընկնի դրա համար, Հարութը սարսռեց...

Հարութը լսելով այս գիտությունը՝ ավելի հուսահատվեց: Երկու հույն իմաստունները՝ լացող և ծիծաղող:

Ինժեները ասաց. ծիծաղիր, ուրախ եղիր, աչխատիր, օգնիր չատերին, և ամուսնացիր:

(Ինքը ամուսնացած էր և երեխա ուներ, որին չատ սիրում էր և գտնում էր իրեն և տիեզերքի հետ կապ, տիեզերքի մնծ կյանքի հետ կապված):

Ինժիները հարցրեց. Հարութ մի՞թե մինչև հիմա մի աղջիկ չես սիրում, եթե ունես՝ առ, և բախտավոր կլինես:

Հարութը խոստովանեց՝ դեպքը, երազը...

Ինժիներ – Թե դա երազ է, սուտ է, զառանցանք... տեսածդ աղջիկը եկել, ցնդել է, և հիմա, եթե նա կա, ամուսնացած է, գտիր քեզ համար հարմարը և պսակվիր: Սերը, բնազդը կկենդանացնեն քեզ, բնության հետ կշաղկապեն:

Հարութը ամուսնացավ մի տարի հետո: Մյուս ձմեռ կինը մեռավ: Հուսահատություն, վիշտ, խղճի խայթ, խմել, հարբել, խենթանալ: Տերտերը քշեց նրան ջաղաց:

98. ՀԱՐՈՒԹ, ԻՆԺԵՆԵՐ

Երբ Հարութը մտածում էր, թե Աստված չկա, նրա համար ուղղակի աշխարհի հոգին, իմաստը վերանում էր, և անկարող էր հասկանալ, թե ինչպես են եղել աշխարհը, մարդը: Քանի Աստված էր ընդունում, խնդիրը պարզ էր, որ Աստված՝ իբրև ամենակարող մի վարպետ, ստեղծել է. Աստված ինքը հրաշագործ է. իսկ երբ նա չկա, ուրեմն որտեղից է այս հրաշք-բնությունը՝ իր չար ու բարիով, մի՞թե առանց հրաշագործի հրաշք կա. և ամեն բան հրաշք էր թվում իրեն. ոչ միայն բնությունը բյուր իրերով, այլև ինքը, մարդը. ինչպես է որ կարողացավ խոսել, մտածել, տեսնել, հասկանալ, քայլել, ուտել...

Եվ անհունորեն զարմանում էր, զարմանում էր և ասում.– Ո՛չ, Աստված կա. կարելի է մեր դիցածի չափ ամենակարող չէ, բայց կա:

Գլուխը կոխում էր վերմակի տակ կամ խոր ձորերն էր մտնում և մտածում այս բանների մասին:

Նա հարցնում էր ինժիներին, թե՝ ինչ է մարդու նպատակը: Ինժիները ասաց.— Աստված դառնալ. ես քեզ ասացի, թե մարդն է ստեղծել Աստծուն, իր կատարյալ, անթերի պատկերի և հոգու նման. մարդը Աստծուն ստեղծել է իրրև իրեն համար ձգտելու ամենաբարձր, կատարյալ կետը. Աստված մարդու ամենամեծ ստեղծագործությունն է. մարդը չինել և դրել է նրան իրրև օրինակ իր առջևը՝ որ նրան հասնի, դառնա կատարյալ, ամենագետ, ամենակարող. երբ մարդ Աստված դառնա, այն ժամանակ նա կհասկանա, թե ի՞նչ է բնությունը, իրեն և դրսի բնության հրաշքը: Ահա քեզի նոր աստվածաբանություն:

— Հարություն ջան, ասել է, դու խելք ունիս, մտածող ես, բայց ափսոս տարիներդ անցել են, որ գնաս, ուսում առնիս և հասնես բարձր գիտության. չա՜տ դժվար է. տարիներ պիտի աշխատել, հազարավոր գրքեր պետք է կարդալ. իմ խորհուրդս է քեզ. մնա՛ գյուղում, աշխատի՛ր, ամուսնացիր, տղաներ ունեցիր, հարստացիր և նրանց ուսումի ուղարկի՛ր:

Ինժիները ասել է. մարդու փրկությունը աշխատանքի մեջն է. աշխատի՛ր, գործիր, պարապ մի նստիր. կգան մարդիկ մեզնից շատ խելացի, իմաստուն, կպարզեն շատ բան: Ես թեև շատ եմ կարդացել, փոքր տարիքից ուսման գնացել, Եվրոպա եղել, լեզուներ գիտեմ, բայց դարձյալ խելքս չա՜տ քիչ բանի է հասնում: Բնությունը մեծ է, խորհրդավոր, անհուն, իսկ մեր ներկա գիտությունն ու միջոցները՝ փոքր, չնչին. և վերջապես, անկեղծորեն ասած, մեր գիտեցածներին էլ չի կարելի հավատալ. ասել է մի հին փիլիսոփա, թե ես մի բան գիտեմ, այն է՝ որ բան չգիտեմ...

Հարութը ինժենների ասածների մասին խորհում էր, չհասկացած տեղերը խնդրում էր, որ պարզե. նրա համար իսկական մի հայտնություն էր նա, բայց իր հոգին չէր բավարարվում, ավելի էր թնճուկվում, խառնաշփոթվում... Հասկացավ, որ ինքը բան չգիտի, և կարդացած գրքերն էլ՝ ոչինչ, բացի Աստվածաշնչից, մի երկու գրքից. և այլևս չէր կարդում: Իսկ երբ ջաղաց գնաց, Աստվածաշունչն էլ թողնց և բոլորովին անգիրք գնաց իրեն համար մտածելու, նայել աշխարհի վրա և մտածելու, յուր խելքով, յուր սրտով:

Նա հասկացավ, որ թեև ուսում չունի, բայց խելք ունի, նույնիսկ համարեց իրեն «իմաստուն հոգի ունեցող» դյուղի մի անկյունն ընկած. և մտածում էր, թե գրքի մեջ չէ իմաստությունը, այլ մեր հոգու և բնության, իրար հետ խոսելու, իրար հետ ապրելու մեջ:

Ինժենները ասել էր թե՝ մարդը մտածող բնություն է. այսինքն բնությունը մարդու մեջ մտածում է, հոգի է դառնում, բացատրում է:

Հարութը չա՜տ բան էր հիշում ինժենների խոսքերից, դրեթե բոլորը, որովհետև միշտ մտածում էր նրանց մասին, իսկ չա՜տ մտքեր միշտ աչքի առջևն էին. և այս միտքը շատ էր հավանել նա:

[Ինժենները Հարութին մի քանի հայերեն գիրք դրկեց, ամիաններ հետո, բայց հասավ Հարութի]

Ինժենները գնաց, և մի տարի հետո նրանից մի քանի գիրք եկավ (հայերեն) Հարութի համար. տերտերը ստացավ, նայեց ու պահեց, չհավանեց. մի ժամանակ հետո պատահմամբ Հարութը գտավ այդ գրքերը, բայց այլևս սիրտ չուներ կարդալու. կնկա հետ կռիվները, նրա հիվանդությունը, իր գազազած դրությունը թույլ չէր տալիս նստելու պարապելու, գլուխն առած միշտ դուրսն էր ու հարբած:

Ինժեներն ասում էր՝ ապրիր, գործիր, սիրիր մարդկանց, օգնիր, սիրիր ապդդ, հայրենիքդ և բոլոր մարդկանց, ամեն ապդերի մարդկանց: Բարի եղիր կենդանիների հանդեպ, ինչպես և բույսերի, նրանց, որոնք դեպի մեզ բարի են, իսկ մարդկանց հետ սիրով եղիր, սերը օրենք է և հաղթող օրենք. բայց երբ կուզեն քեզ ոչնչացնել, պաշտպանիր քեզ, որովհետև քեզ էլ իրավունք ունես սիրելու և քեզ հետ էլ բարի լինելու:

– Ուրախ եղիր, Հարություն, ուրախությունը ամենամեծ իմաստությունն է:

(Երբ նկատում էր, որ նա տխուր է, սևամաղձիկ:)

– Եվ աշխարհը, տիեզերքը մի միակ նյութից է առաջացել ու իրեն մեջ բազմապատկվել, բազմաձև բազմատեսակվել: Հարութ սա չընդունեց և չհասկացավ, թե ինչպես կարող է մի բանը, մի տեսակ բանը ուրիշ բան դառնալ, ինքն իրենից, առանց խառնուրդի, ուրիշի նյութի օգնությամբ, միավորությամբ. ինչպես կարող է ջուրը հող դառնալ, հողը ջուր դառնալ:

Անշուշտ չորս նյութեր կան՝ տարրեր:

Տիեզերքի ուղն ու ծուծը եթերն է, նյութը խտացած եթեր է, մենք ևս խտացած եթեր ենք:

– Հանդերձյալ կյանքը մահից, վախից է ծագել. և կրոնը:

– Բայց միշտ մահը կա, և վախն էլ կա,– ասաց Հարութը,– ուրեմն մյուս աշխարհ և կրոն չպիտի լինեն:

99. ԻՆԺԵՆԵՐԸ

Ոճ ստեղծող, ունեցող ազգերը չեն կորսվի, չեն ձուլվի ուրիշների հետ: Ուրույն անհատականություններ են նրանք, տարբեր, անվերածելի, նրանց միայն արտաքին աղետներով, թշնամիների ներխուժումով (զորեղ, մեծաքանակ թշնամիներ) չարդելով կարելի է ոչնչացնել, բայց երբեք այլասերել:

Ոճը ամենահզոր պահապանն է ազգության:

100. <ԻՆԺԵՆԵՐԸ ՕՊՏԻՄԻՍՏ Է...>

Ինժենները օպտիմիստ է. պարզելով իր անհույս նատուր-փիլիսոփայությունը, մարդու ծագումը կենդանիներից և հոգու ոչ անմահությունը, և Աստծու բացակայությունը, և մորալը իրրև միայն սոցիալական երևույթ, զվարթ է նա, կենսուրախ, աշխատունակ: Կարդում է միշտ, ուսումնասիրում ժողովրդի կենցաղը. և միշտ, ազատ ժամերին, ֆիզիկական աշխատանք է անում: Նա ասում էր, թե՝ աշխատանքն է մարդու մեծ կոչումը, պետք է աշխատել, հոգով ու մարմնով առողջ լինելու համար:

101. <ՀԱՐՈՒԹԸ ԴԻՎԱԿԱՆ...>

18 նոյեմբեր. 1924.

Հարուեթը դիվական տիպ է, Մեֆիստոֆել, բայց մաքով, խելքով, իսկ սիրտը բարի է. նա գազազած, դառնացած է: Ուժեղ մարդ է՝ խելքը, ըմբռնողությունը, որով

հաղթում է, ընկճում է Ուստային: Աստված որոնող, Աստծու հետ կռվող ու նրան սպանող մարդ է:

Ինժենները նրան ասում է, թե կյանքի նպատակը միշտ, միշտ հաճույքն է. օրենք է սա. առանց բացառության. ինքնասպանը հաճույք ունի մեռնելու:

Իսկ Հարութը թե՝ կյանքի նպատակը Աստված գտնելն է ու նրան հասնելը: Ինժենները թե՝ ուրեմն դա հաճույք է...

Ինժենները թեև պեսիմիստ է, անկրոն, մատերիալիստ, բայց մեծ հոգի չէ, պայքարող չէ, դև չէ. նա հաշտվել է իրականության հետ, թե՝ այս այս է, հնար չկա, ուստի աշխատի՛ր վայելես, չտխրես, գործե, լավություն արա և մի մտածիր:

102. ԻՆԺԵՆԵՐԸ

Հարութին ասում է, որ բնությունը բնական հրաշք է:

Բնությունը անբնական է: Բնությունը մեզ թվում է անբնական, որովհետև հրաշք է նա, սակայն բնությունը բնական հրաշք է:

103. ԻՆԺԵՆԵՐԸ

Ինժենները տեսնելով Հարութի մելամաղձությունը, մտքերը, հարցումները, այդ վերագրեց նրա սեռային վիճակին, և խորհուրդ տվեց ամուսնանալ: Գիտնալով, որ նա եթե ամուսնանա, կհանգստանա, նորմալ կդառնա:

(Ջրևոյդիմ)

104. ԻՆԺԵՆԵՐԸ

Բնության մեջ բանականություն, ծրագիր, խելք չկա, միայն հետևողականություն, պատճառ և արդյունք: Իրար ուտել կա բնության մեջ, որով նա ժխտում է իրեն:

Հարությը լսում էր ու դառնանում, տիեզերքը դատարկվում էր, ունայնանում:

105. <ՈՂՋ ՇՈՒՆԸ ԼԱՎ Է...>

– «Ողջ շունը լավ է սատկած առյուծից». այս խոսքերը Հարությը երկաթե բիրով քանդակեց իր հոգին պահող սյունի վրա:

– Ինժենները թե՝ կյանքը վայելիր, օգտվիր առիթից՝ մի անգամ ես ևկել աշխարհ, վայելք քաղած մարդը դյուրին կմեռնի, քան միայն հույսով ապրած մարդը:

– Ինժենները ասաց. մարդիկ իրար հետ ապրելու համար օրենք պետք է, ոչ թե պետությունից դրած, այլ մեր սրտից – իրար կարեկցել, չեմ ասում սիրել. դժվար է սա. այլ կարեկցություն, խղճալ, խիղճ:

106. <ՀԱՐՈՒԹԸ ՆԵՂ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐՈՒՄ...>

– Հարությը նեղ վայրկյաններում, բախտորոշ խնդիրներում առաջնորդ էր ընդունում ինժենների խրատները. (ինժենները նրա աչքում Սողոմոնից հետո միակ խելացի մարդն է:) Եվ ամուսնացավ: Ինժենները նրան ասել էր, թե երբ կհուսահատվես, կին առ, երեխա ունեցիր, արտ վարե, աշխատե, անդորձ մի մնար:

107. ԻՆԺԵՆԵՐ

Ապրել՝ կնշանակի կռվել ու հաղթել. կռվել բնության դեմ, նրա ահավոր ուժերի դեմ՝ ցուրտ, փոթորիկ, ձյուն, սրև, երաշտ, դևշ քամիներ, հեղեղ. կռվել անտեսանելի և տեսանելի միջատների, թունավոր կենդանիների, որոնք չանում են ուտել մյուսին:

Քաղաքակրթությունը լավ է և կենսանպաստ, երբ խաղաղություն է, բայց դևշ է, սարսափելի մահաբեր, երբ պատերազմ է. նա պինում է մարդուն հազար չնչող թնդանոթով ու ռումբերով:

108. ԻՆԺԵՆԵՐ

– Մարդը կենտրոնն է տիեզերքի:

– Գուցե մենք երազում ենք աշխարհը, այսինքն՝ գուցե նա մեր երազն է, նա գոյություն չունի, նա երազ է, իրականություն չէ:

– Ծնվել ենք մի վայրկյանի համար, բայց ցավագին կերպով հավիտենականություն, անմահություն ենք տենչում:

– Հարությը, պարտեզին նայեց, ծաղիկներ, ծառեր... և հանկարծ հիշեց, որ մի օր անպատճառ պիտի մեռնի, և չա՜տ սուր ցավ զգաց ամբողջ սրտով, հոգով, մարմնով:

– Լսում էր Ուստային, բայց հոգին երազի մեջ էր, անցյալի մեջ, ապագայի մեջ:

– Ուստան պատմում էր Հայկական Ցաուստի մասին: Շատ ապրել – համը կելնի, ձանձրալի է...

– Գալիս ենք աշխարհ, տանջվում ու տանջվում և մեռնում ենք՝ պղծած ու պղծված:

109. ՀԱՐՈՒԹԸ

1) Ինժեներն այն մարդն տակ, թե ամեն ինչ փոխում է, ձևը փոխում, բայց էական նյութը մնում է հավերժական, և անփոփոխ, Հարութը նայելով ժայռին, մտածում էր, և տեսնում — ժայռը հող է դարձել, հողը բույս, բույսը փոքր կենդանիներ, սրանք ավելի մեծ, և վերջը մարդ, և ինքը. և նայում էր իր ձեռքին, և ձեռքը դառնում էր որդեր, որդերը դառնում էին բույս, բույսը դառնում էր հող, հողը դառնում էր ժայռ...

2) Հարութը լսելով, որ երկիրը կազմվել է արևից, արևը մշուշից, որ վերջը երկիրը ընկնելու է արևի մեջ, արևը սառելու է, դիպնելու է ուրիշ տիեզերական մեծ մարմիններին, ու փշրվելու, նորից կազմվելու համար հալված զանգված, և արևը, և երկիրը...

Տեսնում էր, որ ինքը երկրի հետ սառչելու է, ապա արևի մեջ ընկնելու և ցրվելու, ապա քարանալու, ապա դիպնելու մեծ մոլորակներին և բոցավառվելու, սարսափած բռնում էր գլուխը, սարսափած՝ թե ահավոր է, գլուխը թափով դիպնելու է մի զարհուրելի մեծ մարմնի, և վայրկյանի մեջ գոլորշիանալու...

3) Հարութը ինժեների աստծների վրա — մի օր նայեց հայելուն, տեսավ իրեն... ո՞վ եմ ես, որտեղից կուգամ, ինչ եմ, ո՞ւր եմ գնում, կամ թե չկամ... ի՞նչ էի, ո՞վ էի... և տեսավ հայելու մեջ իրեն մի փոքրիկ որդ՝ հազիվ տեսանելի, մեծացավ դարձավ դորտի չերեփուկ, ապա ձկի պես, ապա գետն ի վար սողացող խլեզ, ապա մուկի պես, կատվի պես, շան պես, խոզի պես, վերջը կապիկի պես, և վերջը մարդ: Մարդ, ոչ իրեն նման, հազար-հազար դեմքեր, տեսակ-տեսակ, մեկը մյուսին չնմանող, գետի պես եկան այդ մարդու դեմքի վրայից,

և վերջը իր դեմքը եկավ՝ Հարությիը: Հետո Հարությի դեմքը չնչվեց, ուրիշ դեմքեր եկան, նայեց, դետի պես անթիվ, անթիվ...

[Ո՞ւր է ինքը, ո՞ւր գնաց: Հայելին սրբեց, ահա տեսավ իր դեմքը, փոխվեց]

– Մի օր Հարությիը մահի մասին մտածելով, զգաց ու տեսավ իր մարմնի քայքայվելը, որդնոտիլը, հող դառնալը, և քամու բերան, հազար քամիների բերան, հազար տնդ ցրվիլը...

– Ինժեներն ասաց, որ մեր մարմինը և հոդին (ուղեղը, ջղերը), ոսկորները, արյունը... բոլորը կազմված են մոտավորապես 60 միլիոն անգամ միլիոն բճիճներից: Որոնք կենդանի ապրող, աճող և մեռնող էակներ են: Եթե մենք կարողանանք աչքով տեսնենք մեր մարմինը, նա կերևա մեզ մի մեծ այուն վխտացող, ամբողջապես վխտացող որդերից: Նույնիսկ եթե մեր մատը տեսնենք՝ կերևա մեզ միլիոնավոր որդերից կազմված:

Իսկ եթե մի որևէ առարկա նայենք՝ մի քար, մի երկաթ, նա կերևա մեզ դիշերվա աստղազարդ երկինք, ամեն մի մասը: Հյուլեն արև է, շուրջը դառնում են մոլորակներ: Մի կտոր քարը – անթիվ արևներ, միլիոնավոր մոլորակներով:

Տեսնես ի՞նչ հրաշք է աշխարհը: Տիեզերքը: Նյութը՝ որ ուժ է, ուրիշ ոչինչ:

– Ամեն իր անհուն է, անհասկանալի անհունություն: Մարդկային սերմը՝ միաբջիջ, անշուշտ պարզ էություն չէ, նա բաղկացած է երևի միլիոնավոր հյուլեններից, որոնց յուրաքանչյուրը մի գաղտնիք ունի, մի մասը մեր դարևոր պապերից, նրանց հատկություններից:

Իսկ մեր պապերը գիտե՞ս որքան են... 16 սերունդը ունի մինչև XX քսաներորդ նախապապ-նախամամ:

— Անկշռելի պատճառներ թե բնության մեջ, թե մարդու հոգում և թե հասարակական-հավաքական կյանքում... Դրանք չա՛տ բան են որոշում, գործում:

— Ինժիները: Բնության համար ամեն ինչ անարժեք է, ինչպես մի մեծահարուստ մարդու համար կոպեկները. ոչ [ավելի] նվազ, հազար-հազար անգամ [ավելի] նվազ, քան կոպեկը:

Բնությունը առանց ցավի կկործանեն արևները, Մերկաթինները, բնակված երկրագունդները: Ողջ մարդկությունը իր հոգևոր և նյութական դանձերով՝ ոչինչ բան է...

Միայն մեր աչքում, մեզ համար բնությունը իր առարկաներով արժեք ունի. բնության արժեք, իմաստ տվողը մեր սիրտն է, մեր միտքը, մեր եսը, մարդը:

Եվ որովհետև մարդն է բնության հոգին, միտքը, խելքը, ուստի մարդը մարդու համար ամենաարժեքավոր բանը պիտի լինի և է: Մարդը ամենից թանգ բանն է:

— Աստծու ելից և մուխ մատյանը կարդա՛, տիեզերամատյանը կարդա:

110. ԻՆԺԵՆԵՐ

Կան փիլիսոփաներ, որ ասում են, թե նյութը գոյություն չունի, արտաքին աշխարհը գոյություն չունի, որովհետև բոլոր փիլիսոփաները գրեթե պնդում են, թե աշխարհը մենք այնպես չենք տեսնում, ինչպես որ է. այլ աշխարհն այնպես է, ինչպես մենք ենք տեսնում. հետևապես աշխարհը տեսնում ենք մեր զգայարանների համաձայն: Ուրեմն նա մեր պատկերացրածն է, մեր երևակայությունն է, ուրեմն իրական չէ, ուրեմն մեր ըմբռնումը

գիտական չէ: Բայց որտեղից են մեր գաղափարները. եթե արտաքին նյութից են, ուրեմն մեր աշխարհաճանաչումը իրական է: Գաղափարները Աստված է տվել մեզ, Սուրբ Հոգուց:

Սա մենք չենք ընդունում:

Աշխարհը իրական կա: Բայց մենք չենք կարող ըմբռնել նրա էությունը, ի՞նչ է, որտեղից է, ո՞ւր է գնում, եթե գնում է:

Մենք ընդունում ենք նյութը անստեղծ, հավերժական. տիեզերանյութը ունի իր մեջ այն բոլոր կարելիությունները, որոնցից ծագել են աստղեր, էակներ և մեր գիտակցությունը:

Տիեզերքում գոյություն է մի պատճառական պատահականություն, այսինքն՝ պատահական է և կյանքը, և գիտակցությունը, և ես, և դու. կարող էինք և չլինել. բայց և անպատճառ պիտի լինեինք: Հայրս իմ հղացման գիշերը հիվանդ լիներ, ես չէի լինի, անշուշտ, բայց եղա. սակայն իմ լինելը նախօրոք որոշված չէր: Այսպես ամեն բան: Տիեզերքում իշխում է և, էակների կյանքում, բույսերի և իրերի, աստղերի... մի խիստ, բանական նպատակահարմարություն, վախճանականություն՝ սակայն առանց նպատակի և վախճանի:

Շատ խելացի է շինված, օրինակ, մեր մարմինը. բայց ինչո՞ւ համար է շինված: Զարմանալի է միջատի մարմինը, գործարանները, բայց նպատակն ի՞նչ է: Եվ ողջ բնությունը...

Սակայն տիեզերքը հրաշք է, և մեզ համար վերջիվերջո անհասկանալի:

Ջկան գլխի ոսկորների քանակը համապատասխանում է մարդու գլխի ոսկորների քանակին: Երևի, մրջյունինն էլ նույնն է, եթե հնար լինի հաշվելը:

111. ԻՆԺԵՆԵՐ

Փիլիսոփաները իրար հերքում են, և բնության ամեն իր կամ երևույթ իր այոն ու ոչն ունի: Մեկն ասում է, թե նյութը գոյություն չունի, հոգին կա, մյուսը թե հոգի չկա, նյութը կա: Մեկն ասում է՝ թե տիեզերք չկա, իմ ես կա, և տիեզերքը իմ երազանքն է: Մյուսը թե տիեզերքը կա և հոգին նրա մասն է՝ հար և նման:

Մեկն ասում է, որ չկա ո՛չ տիեզերքը, ո՛չ մարդ, ոչ ժամանակ, ոչ մի բան: Մյուսը թե՝ ամեն բան կա:

Ոմանք ասում են թե՝ աշխարհը մենք չենք տեսնում այնպես, ինչպես որ կա ինքը, այլ մեր զգայարանների, մեր զգայարանների համաձայն, այսինքն երևակայում ենք: Աշխարհը այնպես է, ինչպես մենք ենք տեսնում...

Ոմանք ընդունում են Աստված, սկզբնապատճառ՝ մտածող, խորհող... ոմանք՝ ոչ մի Աստված, այլ հավիտենական նյութը՝ անքննելի, անհասկանալի մեր մտքին:

Կա կամքի ազատություն, չկա կամքի ազատություն:

Կա պատճառ-հետևանք: Չկա:

Կա ժամանակ-տարածություն: Չկա:

Կա երեք. չկա. կա հյուլե – չկա...

Մի խոսքով՝ ամեն բան – կա և չկա. մեկի համար կա, մյուսի համար չկա: Առարկան ինքնին կա և չկա:

Ես քեզ ասում եմ, ինչ որ ինձ համար ավելի հավանական է թվում. ճշմարտությունը չէ մեր ձեռք բերածը, այլ ենթադրությունը: Միակ ճշմարտությունը որ ունենք՝ դա ենթադրությունն է... եթե սրա մասին վիճենք՝ ամեն ինչ քաոս կդառնա:

– Տարածությունը անընդհատ լցված նյութ է, իսկ ժամանակը այդ նյութի անընդհատ զարգացումն է, ձևափոխում, շարժում...

– Անշուշտ, մենք նրազանքի, ցնորքի մեջ ենք, երբ կարողանում ենք նախօրոք հաշիվները գուշակել արևի կամ լուսնի խավարումը կամ մի գիսաստղի գալուստ: Առանց իրը գիտականորեն ճանաչելու կարող ենք մենք չոգևնավ չինել՝ և ձգել մեզ ովկյանի մեջ, և կամ կարող ենք մենք մարդու փորը, նույնիսկ գանկը բանալ, կտրել, մաքրել, և նորից գոցել...

Ճիշտ են մեր հաշիվները, և իրերը հնազանդ են մեզ: Եթե իրերը, նյութը խաբուսիկ լինեին, ցնորական, ուրվային, մենք ոչինչ չէինք կարող շինել:

Այլ բան է, որ մենք իրի, նյութի գոյության պատճառը և էությունը չենք ըմբռնում, չգիտենք: Մենք գիտենք միայն նրա հատկությունները, ինչպես գիտենք, որ այս բույսը կթունավորե, մյուսը կբուժե... Բայց թե ի՞նչ է թույնը: Չգիտենք և չենք կարող իմանալ նրա հյուլեների խորհուրդը, էությունը...

112. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ – ՀԱՐՈՒԹ

29 օդոստ<ոսի>. 1932

Ինժեների երևույթը Հարութի կյանքում, թվում է ինձ, անհարմար: Հարութը նրա չնորհիվ դառնում է արդի զարգացած մարդու վիճակում, որով նրա կուսական-տաբերային դրությունը խախտվում է: Նա չի ներկայանում և բավական ինքնուրույն և հայ ժողովրդական պեսիմիստական հոգեբանության արդյունք, ինչպես որ Ուստան է՝ ներկայացուցիչը հայ մտքի, օպտիմիզմի, աշխարհահայացքի: Հարութը այսպիսով իր զարգացմամբ հավասար չի դառնում Ուստայի հետ. այլևս չի կարող տարվել Ուս-

տալի հնքիաՅՆերով, քարվանով: Չի տարվելու Սողոմոնով, Հոբով, Եղնիկով, Նեռով: Միտիկան ջնջվում է, քաոսը ջնջվում է: Ընդհակառակը պիտի <...>[1]

113. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ

Մի 15 օր: (10 օր)

Զրույց: Հիմքը:

Մարդը կռվի մեջ է մահի դեմ. կյանքը կռիվ է մահի դեմ:

Ապրելու բաղձանք, մարդու հաճույք — ցանկությունը միմիայն դեղ է: Ապրել, սիրել չմեռնելու համար, չմեռնել: Մարդը ուզում է անմահություն: Այդ միջատը (մարդը) ուզում է անմահ լինել: Իսկ բնությունը նրան մեղցնում է:

(Հարությը ասում է — Գիտեմ):

Մարդը տեսավ, որ մարմինը մեռնում է, ուզեց հոգով անմահ լինել — երկնային կյանք:

(Հարությը — Գիտեմ):

Մարդը անդադար ցանկանում է, բաղձում է երջանկություն, հաճույքների, գոհունակության բավարարություն: Բայց աշխարհը, բնությունը, իրականությունը հակառակում է, թշնամի է. մարդը տանջվում է, կռվում է, տանջվում է, բայց չի հրաժարվում երջանկությունից, հաճույքներից. ոչ մի բանականություն նրան չի կարող համոզել, որ նա չցանկա երջանիկ լինել, անմահ լինել: Մարդու կամքից չէ այս պահանջը. մարդը ծերանում է և թոշնում. մարդ կերազե — ցանկություն, բաղձանք. այս է

---

[1] Ինքնագիրն ընդհատվում է, մի թերթ պակաս է:

չինված մարդը: Երբ մարդ դադարի ցանկանալուց, կվերանա մարդկությունը:

Ցանկությունը հագենում է, ուրիշ ցանկություն է իսկույն ծնվում. <անընթ.> կամ դժվար տանջանքով դրան էլ բավարարում է, հաճույք է ունենում, նույնն է ծագում և այդպես ցմահ:

Հարութը – Գիտեմ: Մտածել եմ:

Մարդու տենչերը չիրականանալով իրական աշխարհում, մարդն ստեղծել է իր երազի աշխարհը. իրականացնում է այնտեղ իր փափագները. առողջություն, գեղեցկություն, սեր, անմահություն, դրախտ:

Մարդը չի ուզում մեռնել – այս է ամենաուժեղ բանը մարդու մեջ: Գիտության էությունը և հաղթանակը պիտի լինի մարդուն ապրեցնելը:

Հարութը – Գիտեմ:

Հարութը հարցեր է տալիս.

– Ո՞վ ստեղծեց աշխարհը, արևը, լուսինը, աստղերը:

– Չենք կարող գիտենալ, որովհետև նա անսկիզբ է և անվախճան: Հավիտենական է:

[Նարեկացին էլ նույնն է ասում. գիտեմ]:

– Նյութը ո՞վ ստեղծեց:

– Չենք կարող գիտենալ – անգննելի է, անվախճան:

– Ժամանա՞կը:

– Չենք կարող գիտենալ:

– Կյա՞նքը:

– Չենք կարող գիտենալ: Անսկիզբ է, անվախճան. թևև երկրի վրա, բույսերից հետո, ստեղծվել է կյանքը, սկիզբ է առել, բայց կյանքը նույն նյութի այլ ձևն է, այնպես որ նյութը ինքը կյանքն է: Իսկ նյութը անսկիզբ է:

– Աստված կա՞:

– Նայելով թե Աստված ասելով ի՞նչ ես հասկանում: Իմ տեսակետը՝ Աստված կա, ստեղծագործ նյութը: Բայց մեր տեսակետները՝ Աստվածը – հավատքի բան է. հավատաս՝ կա, չհավատաս՝ չկա:

– Ձե՞նք կարող մահի դեմ կռվել, չմեռնել:

– Երբևք, երկիրը ինքը մեռնելու է: Ամեն ձև մեռնում է, նյութն է անմեռ:

Մեր երկինքը – Մեր-կաթիններ:

Աստղերի մասին, մեծություն, ծանրություն, հեռավորություն, նյութի կազմությունը, կյանքի ծագումը՝ բճիճ, պագմա. տեսակների ծագումը... Էվոլյուցիա, կուլտուրա, երկրագնդի մահը, աստղերի մահը, նոր երկիրներ, նոր կյանք. և այսպես եղել է միշտ, պիտի լինի:

Ո՛վ գիտե, քանի միլիարդավոր, միլիարդավոր, միլիարդավոր երկրներ են եղել, վրան կյանք բուսել, կուլտուրա, մարդ, պատերազմ. սեր, երգ, մարդ. սեր, կուլտուրա, արտիստ, փիլիսոփա և մահ...

Երկրագնդի պատմությունը, որ 100 միլիոններ է հաշվվում, մի վայրկյան է, այսինքն՝ մի վայրկյանի Մեր-կաթինը՝ մի վայրկյան, [մարդը մտածող հյուլե] մարդկությունը – մի հյուլե: Հապա՞, պարոն Հարութ:

Հարութը՝ էլ ի՞նչ պարոն, էլ ի՞նչ Հարութ...

Հարութը այս թվերից սարսափեց, մյուս փիլիսոփայական, հայրաբանական մտքերը ծանոթ էին իրեն, բայց այս թվերը, և իր ոչնչությունը սարսափեցրեց և ասաց.

– Եվ ինչպես էս բաները դիտեք և նորանն կապրիք, ուրախ եք, աշխատում եք:

Ճարտարապետը – Այս ամենը մի կողմ ենք դնում և ապրում ենք, գործում ենք, մեռնում ենք, որպես թե մեր երկիրը և մենք նրա վրա հավիտենական ենք, մահ չկա: Միթե այդպես չենք բոլորս և դու էլ: Գիտենք, որ պիտի մեռնենք, բայց այդ գիտակցությունը մի կողմ ենք դնում, որպես թե չկա, սուտ է. և ապրում ենք ու ճգտում, տենչում, կռվում և այլն:

Ուրեմն – պարոն Հարութ, ապրիր. մենք չգիտենք, թե ինչու ենք ապրում. նպատակ [չունի] չկա. բայց եթե բնությունը – Աստված նպատակ ունի, և մենք չենք հաղորդակցվում, ապրի՛ր, ամուսնացի՛ր, աշխատի՛ր, գործե՛, զվարճացի՛ր, ինչպես բոլոր մարդիկ և անասունները երկրի վրա հազարավոր տարիներից սկսած ու անթիվ քանակով:

Ճարտարապետը – Մեր գիտությունը սահմանափակ է շատ, ոնց որ մի որդ մեր փորի մեջ. ինչ է լինելու նրա աշխարհը, մերն էլ նույնն է. մեզ ապրելու ապրեցնելու համար է մեր գիտությունը: Ինչպես կարող ենք հասկանալ անսահման տիեզերքը, անսկիզբը, անվախճանը: Մի բան, երբ սկիզբ ունենա, թերևս կարելի լինի, բայց անսկիզբը... երկինքը և բնությունն ինչ է – չենք իմանում. այնքան գիտենք, որ լույս, ձայն, գույն, համ, հոտ չկա, դրանք մեր ջղերի գրգիռների արդյունքն են: Շարժվում է նյութը, և մենք այսպես ենք զգում: (Եվ բացատրեց):

Հարութը այս բոլորից գլխապտույտ ունեցավ...

(Էլ ինչ Հարութ, ինչ պարոն):

Եվ լրացավ նրա հոռետեսության բաժակը, <անընթ.>:

Ուրեմն ամեն բան սուտ է, մենք է որ կչիննենք օդը՝ դուրսը, նյութը չարժվում է, և մեր գլխի մեջ ենք տեսնում լույսը, ձայնը, համը, հոտը: Դուրսը չկա. արևը լույս չունի, վարդը՝ հոտ չունի, գույն չունի: Ես չլինեմ, տիեզերքի մեջ այս ձայնը, գույնը, հոտը չկա: Այս պատիկ գլուխն է տիեզերքի մեջ գույն, լույս, ձայն, համ, հոտ դրել:

Իսկ այս գլուխն էլ ոչինչ չարժե. մի վայրկյանի կյանք, հետո որդերի բույն, հետո՝ փոշի...

Ճարտարապետին Հարությը և սիրում էր, և վախենում էր նրանից:

Ճարտարապետը ջահել՝ մոտ [35] 34 տարեկան, ուրախ, մարդամոտ, բարի, ազգասեր, ժողովրդասեր [տղա] երիտասարդ էր: Ընկերասեր, զրուցասեր:

Հարությի համար կար երկու թանդ բան՝ արաղ և երաժ:

114. ՀԱՐՈՒԹԻՆ ՏԱՆՋՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Որոնք ամենաէականն են մարդու համար:

1. Աստծու գոյությունը:

2. Հոգու անմահությունը:

Թե իր կարդացած գրքերը՝ Աստվածաչունչ, Ավետարան, Եղնիկ, Դ<ավիթ> Անհաղթ և այլն, և թե իր մտածողությունը անկարող եղան նրան վճռական, հաստատ մի համոզմունքի բերել՝ դրական կամ ժխտական: Միշտ

մնաց կասկածոտ, տարակույսի մեջ, երբեմն՝ ընդունում էր Աստծու և հոգու գոյությունը, երբեմն ժխտում էր: Տանջվում էր խնդճը:

Նա ճարտարապետից սպասում էր վերջնական վճիռ. սա էլ չտվեց: Եվ միայն տեսիլքի մեջ հասավ Աստծու ժխտմանը, և աշխարքի, կյանքի ունայնությանը, և մահի միակ հզորությանը, միակ իրականությանը և հավերժությանը:

6 փետրվարի. 1934

115. <ԻՆԺԵՆԵՐԻ ՆՅՈՒԹԸ ԿԱԶՄԵԼԻՍ...>

Ինժիների նյութը կազմելիս, ասել. եթերը խտացավ [ուժ, ուժը] դարձավ նյութ կամ ույժ, որ միևնույն բանն է – ուժ-նյութ: Սրա զարդացումով, ինքն իր մեջ բազմանալով ու փոխվելով՝ առաջ եկավ այս բազմազան աշխարհը, սկսած մարդուց մինչև աստղերը, սկսած բճիճներից – մինչև ամեն բան:

Առաջին բճիճից սկսվում է կյանքը, բայց բճիճի հնարավորությունը ուրեմն կար եթերի մեջ, ուժ-նյութի մեջ:

Հավանական է, որ քարը խորհե, հողը կամենա, որովհետև չկա անօրգանական կյանք. եթե լիներ, նրանից չէր կարող կյանքը ծագել: Մարդը չա՛տ պիտի զարդանա, չա՛տ մեծ գործեր պիտի անե, այն, ինչ որ մենք հիմա բնավ չենք կարող երազել. գուցե թռչի դեպի մյուս մոլորակների վրա, որոնց թիվը անհամար միլիոններ են, գուցե և երբեք չկարողանա երկրի ծիրից դուրս ելնել:

Սակայն անում է մարդու գովքը. (Philosephe-boysifhe *դիրքը):*

Բայց պիտի աշխատել, պիտի ուսումնասիրել, խորհել, փորձել, գործել, գործել, որովհետև ի սկզբանն էր գործը և գաղափարը նրանից հետո էր:

Հարությը լսում էր, չա՜տ բան հակառակ էր նրան, բայց չէր վիճում, ուզում էր միայն լսել և սովորել:

116. ՀԱՐՈՒԹԸ

15 սեպտ<եմբերի>, <19>43 թ.

Հարությը, որ չատ մտածում էր աշխարքի մասին և չէր կարող պարզել առեղծվածները, ասում էր՝ մեկը գար, մեկ չա՜տ խելացի մարդ, մարգարե, փիլիսոփա, մի տեսակ Պայտնություն և բացատրեր... Եվ նկավ ճարտարապետը (ներե ընդունում եմ այդ), և որովհետև նա էլ չմեկներ, նրանից էլ անբավարար եղավ և սրանից հետո՝ նա երազի մեջ գնաց Սողոմոն իմաստունի մոտ:

Առհասարակ բնական գրել, համոզիչ. Հարությին դուրս չբերել մի զարդացած Փաուստ կամ Մեֆիսթոֆել, կամ Մանֆրեդ: Թերևս հին կոնցեպտով գրել, 1910 թվի, առանց քաղաքացիների մասնակցության, միայն իր միջավայրի ազդեցությամբ, իր կարդացած կրոնական գրքերի – Աստվածաշունչ, Եղնիկ, Իմաստասիրություն բարոյական Թեսավրոսի, աստվածաբանություն, Նարեկ, Հայոց մի քանի պատմագիրներ, Անանիա Շիրակացի...

117. ԻՆԺԵՆԵՐ

Թագավորներն էլ կվերջանան, եկեղեցու պետերն էլ, ազգությունները էլ, լեզուները էլ, սահմանները էլ՝ կմնա մարդը՝ աշխարհաքաղաքացի, մի լեզվով, ազատ բոլոր կապերից ու նախապաշարումներից, բայց դարձյալ գերի ստամոքսին, սեռին և մահվան:

– Դա բնության իշխանությունն է, որից ազատվել երբեք չպիտի կարողանա, քանի կա արևի վերջին ջերմն ու լույսը...

118. ՀԱՐՈՒԹԸ

– Կյանքի նպատակը երջանկությունն է. երջանիկ լինելու համար պետք է լինել առողջ, ազատ և անմահ: Քանի որ մահը կա, մնռնել կա – երջանկություն չկա:

Պետք է լինել ամենակարող, իր բոլոր ցանկություններին բավարարող, գոհացնող.– Աստված:

– Քանի մահը կա – այս բոլոր երևացող աշխարհը, մարդիկ, գործեր, աղմուկ, փառք, ջանք, կիներ, թագավորության երազի միջի բաներ են, սուտ, աչքի-թվացում, մեռար, ամեն բան կցնդի: Սուտ, երազային բաներ են – երկիրը, աստղերը, արևները, ամեն բան:–

– Ինժենները ասում է (երբ Հարուքը հարցնում է, թե դուք՝ գիտնականներդ, որ գիտեք էս բոլորը – աստղերի մասին, նրանց հեռավորության և մեծության մասին, նրանց երկարատևության մասին, բույսերի մասին, միկրոբների, հյուլեների մասին, և այս բոլորի ոչնչության մասին – ոնց եք ապրում), գիտենք, բայց ապրում ենք, գործում ենք, աշխատում ենք. դրանցով մոռանում ենք

մահը... Հարուածը եղրակացնում է — ուրեմն ամեն բան եղել է մոռանալու համար մահը. քանի որ էդպես է՝ խմի՛ր, խմի՛ր, խմիր: Էրեկ էր, խելք չէր եղել, չէինք հասկացել. լավ էր, որ անասուն դայինք աշխարհ, եթե անպատճառ պիտի դայինք աշխարհ,— ապրեինք, խաղայինք, ուտեինք իրար, սեր աներինք և մեռնեինք դնայինք, առանց հասկանալու աշխարհը, կյանքը, մահը, ոչնչությունը:

— Անբևեռակայելի է, անկարելի է պատկերացնել, հասկանալ մարդու (մարդկության) փոքրությունը տիեզերքի հանդեպ, ոչ միայն մարդու, այլև երկրագնդի, արևի, նույնիսկ Մեր Կաթինի և բոլոր ծիրկաթինների:

Նրանք դրեթե դոյություն չունեն համեմատությամբ մի բանի, որ անեզր է, անհուն է, անսկիզբ է և անվախճան:

Լավագույնն է, իմաստություն է դրանց մասին իսկի չխորհել, և ապրել գործնական, երկրային կյանքով, մեր երկրային գործերով, մեր նպատակներով:

Հարուածը չի համոզվում. նրա գլխում ամրացած է այն միտքը, թե առանց մարդու տիեզերքը չկա, և տիեզերքը մարդու համար է, իսկ մարդը ստեղծվել է նրան հասկանալու համար, և պիտի տանջվի թե այդ ճշտման համար, և թե չհասկանալու համար: Մարդկությունը քանի ողջ է երկրի վրա, այդ հարցը պիտի դնե, և իհարկե չպիտի կարողանա երբեք լուծել և պիտի միշտ տանջվի, մինչև որ մեռնի երկրագնդի հետ և դադարի: Բայց կան ուրիշ երկրագունդեր, որոնց վրայի մարդը, խորհող մարդը նույնքան պիտի մինչև մահ տանջվի:

119. ՀԱՐՈՒԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հարութը մտածում է, որ մարդու՝ կյանքի և նրա գործերի նպատակը երջանկությունն է, բավարարությունը. դա է նրա իսկական դանձը. բայց նա չի կարող երջանիկ լինել, որովհետև ծերություն կա, հիվանդություն, չարիքներ կան, և վերջապես մահը:

Աչխարհիս մեջ մարդու համար ամենակարևորը ինքն է, իր կյանքը. բայց քանի որ իր կյանքը իրենը չէ, այլ մահինը, քանի որ մարդը անմահ չէ, ուրեմն նա երջանիկ չէ, ամենակարևոր, պետքական բանը – դարտակ բան է՝ կյանքը:

Աչխարքը պիտի մեզ համար լինի և ոչ թե մենք նրա համար, քանի որ այդպես չէ, քանի որ նա մեզ չի երջանկացնում, անմահացնում, ինչիս են պետք նրա մեծությունը, նրա հավերժականությունը, նրա աստղերը:

Քանի որ աչխարքը իմ սրտիս ուզածի պես չէ, թող կորի, երթա:

Հարութն ուզում է իմանալ աչխարքի նպատակը, միայն կյանքի նպատակը. Աստված կա, թե՞ չկա, հոգի կա, թե՞ չկա, մյուս աչխարք կա, թե՞ չկա: Ինչու է չինվել աչխարհը, մարդը. ո՞րն է չարը, ո՞րն է բարին: Մտածում է, մտածում է, չի կարող գտնել, կասկածների մեջ տանջվում է:

Գիտե, որ չի կարելի իմանալ. մարդու խելքը չատ չնչին, հասարակ բան է՝ աչխարքի հիմքերը, նպատակը գտնելու համար: Բայց գիտնալով, որ այդ այդպես է, նորից մտածում է, մտածում է: Սողոմոնի տեսիլքի մեջ՝ Սողոմոնը նույնն է ասում.– Քանի 1000 տարի է մտածում եմ՝ գլուխս ժայռին դրած, գիտեմ, որ պատասխան չկա, բայց նորեն պիտի մտածեմ, հավիտյան ապրեմ, հավիտյան պիտի մտածեմ: Էս է մարդու ճակատագիրը: Մարդու միտք ու սիրտը չեն հանգստանա՝ ասելով թե հնար չկա:

Բախտավոր է անասունը, որ չի մտածում, բախտավոր է երեխան, որ չի մտածե: Գնա, քեֆ արա, և մի մտածիր... (ըստ Շոպենհաուերի. «Մարդը բնազանցական արարած է». մտածող, բնազանցող, <անրնթ.>)

Մարդն ուզում է իմանալ – դա նրա հավերժական տրագեդիան է: Նա հարցամոլ է. և տիեզերական առեղծվածները ոչ նա կարող է մերժել, ոչ էլ կարող է պատասխանել: Հավիտյան սլիտի նույն հարցերը տա և հավիտյան անարդյունք մտածե:

(Հարութը Սողոմոնի մոտ գնում է ճարտարապետին տեսնելուց հետո, որովհետև ճարտարապետը նրան չբավարարեց. նա տվեց նրան գիտական տեսություններ, որոնք չեն բավարարում արդեն: Հոգու անմահության, Աստծու գոյության մասին ասաց՝ չգիտեմ: Գիտությունը չի կարող այդ հարցերը լուծել, կարելի է՝ կա, կարելի է՝ չկա: Դա հավատքի բան է. հավատացողի համար կա, չհավատացողի համար չկա: Ով իրավունք ունի – չգիտեմ: Զգիտեմ նույնպես տիեզերքի պատճառի և վախճանի մասին. այնքան գիտեմ, որ նա միշտ կա և կլինի. սա էլ չի կարելի ապացուցել. կարելի է, որ իսկի տիեզերք էլ չկա. մենք երազում ենք:

Իհարկե սրանց մասին մտածել դրելիս:

Ճարտարապետն ասում է թե՝ գիտությունն ասում է թե՝ աշխարհանյութը, ժամանակը, տարածությունը միշտ եղել են և միշտ էլ կլինի, անսկիզբ են և անվերջ: Աստղեր, արևներ ծագում են, ապրում են միլիոն-միլիոն դարեր, և մարում:

Կյանքը ծագել է երկրի վրա մի բջիջից... Մի օր էլ կվերջանա. երկիրը կամ կսառի, կամ կդիպչի... գիտությունն այսպես է ասում. դրանից դուրս բան չգիտեմ:

Գիտությունից դուրս մյուս խոսքերը՝ երազներ են, զառանցանքներ, հեքիաթներ:

120. <ՇՐՋԻԿ ԿԱՅԾԱԿԸ ԵՐԲԵՔ...>

7 սեպտ<եմ>բ<երի>. 1933

– Շրջիկ կայծակը երբեք չի խոսում սոցիալիզմի մասին: Նրա ծրագիրը հին դաշնակցական է. ազգային ազատություն, ազգային կյանք, թուրքատյացություն և այլն:

Ուստան առաջին անգամ սոցիալիզմի անունը լսում է Անի և հետո Դյումրի: Սկզբունքով, գաղափարապես, տեսականապես ընդունում է, բայց գտնում է վաղաժամ: Հիշում է լսած մի պատմություն «Ոսկի քաղաքի» մասին և հետո պատմում Հարությին. սակայն Հարությը սկեպտիկաբար է վերաբերվում և հակադրում է նրան մահը, քանի մահ կա, չկա երջանկություն:

Բայց նոր առակ լվարուք:–

Հիմա խորհում եմ, որ լավագույն ելքը կլինի, եթե ճարտարապետին հանդես բերեմ առաջին անգամ Բագրանում, ուր նա եկել էր վանքերը նկարելու: Ծանոթ լինելով կայծակի ընկեր Աղբալյանի հետ, նա էլ միանում է կայծակի և Կարոյի քեֆերին: Քեֆի ժամանակ ծանոթանալով Հարությի հետ իմանում է, որ Հարությը տիկորցի, դրագետ, պատմության տեղյակ և Տիկորի հայտնի, հին տան տղա <է>: Պայմանավորվում է նրա հետ, որ Հարությը օգնի նրան. Հարությը հրավիրում է նրան իր մոտ, Ջաղացը, մոտն ապրի և այնտեղից սկսի իր ուսումնասիրությունները Տիկոր և Խծկոնքի վանքերի:

Ճարտարապետը հակառակ ճառեր է ասում. չի հավատում Եվրոպայի միջոցով Հայաստանի ազատագրման... պեսիմիստ է: Խմում է հայ դյուղացու, հայ ժողովրդի արմատի կենացը, հայրենիքի և հայ լեզվի:

Ասում է, որ եթե ամբողջ հայությունը կորսվի, չարդվի, Եվրոպայի աչքից մի արցունք չի ընկնի:

Գիշերը, նա Հարությի հյուրն է, Հարությի մոր և Հարության հորեղբայրների ընտանիքի: Ընել են բացօթյա: Նայում են աստղերին և սկսվում է դրույցը: Այն դրույցը, որ ես ուզում էի դնել Հարության կենսագրության սկզբում:

Ինչ է ասում ճարտարապետը.

1) Տիեզերքը անստեղծ է, անսկիզբ և անվախճան:

2) Աստծու գաղափարը հավատքի հարց է:

3) Մարդը և կենդանական և բուսական աշխարհը մի ծագում ունեն, առաջին բջիջից, պլազմայից: Տիեզեր<ական> նախանյութից զարդարված:

4) Մարդը միլիոնավոր բջիջների ամբողջություն է:

5) Միկրոպներ:

6) Դարվինիզմի տեսությունը, առանց դարվինիզմի անունը տալու:

7) Երկրի ծագումը և մահը: Աստղերի հեռավորությունը, տիեզերքի մեծությունը:

8) Երկրները՝ մի հյուղե տիեզերքի մեջ:

9) Կյանքը զարդարված նյութ է: Կյանքը տիեզերական նյութ-ուժի զարդարված ձևն է:

10) Մարդկության ապագան փառավոր է, նա պիտի հաղթե տարերքին, միկրոպներին, պիտի թուչի օդի միջով, պիտի ստեղծե արդար հասարակություն... Բայց Հարության հարցին՝ պատասխան. Բնության նպատակը, ինչպես և ծագումը չգիտենք, սակայն մարդկային կյանքը նպատակ չունի, և մահը անպարտելի է...

Եթե ամբողջ մարդկությունը մեռնի այս ժամին՝ ոչ մի տերև չի ընկնի ծառից վշտահար... ամեն վայրկյան սպասելի է երկրագնդի մահը... միլիարդ անգամ ստեղծվել են ու կործանվել երկրները և մարդկությունը... այսպես, սիրելի պարոն Հարութ...

– Էլ, ինչ Հարութ, և ինչ սիրելի պարոն...

Ողջ դիշեր չքնեց Հարութը. մտածեց, մտածեց և հասավ այն մտքին, թե՝ ճարտարապետը չա՛տ բան ասաց, բայց բան չասաց. էլի աշխարքը անքննելի է. նարեկացու ասածի պես, անիմանալի, անսկիզբ... մարդը մահկանացու, Աստծու գոյությունը կասկածելի... և մեր կյանքը աննպատակ... Սակայն ավելի և ավելի տխրեց, չա՛տ տխրեց. հաջորդ օրը ավելի խտացած արտահայտվեց տխրությունը: Իսկ Թալինցու մահից հետո տեսիլքը ապրեցոզ է, որովհետև նա լսեց հայոց ջարդերի զուր լինելու մասին. Եվրոպայի անտարբերությունը, տիեզերքի մեծությունն և իր և մարդկության նսեմությունը... և Աստծու գոյության երկմտության մասին. և վերջապես մահը, որ կա և պիտի մնա և նրա չնորհիվ ամեն ջանք, գործ, հույս, եռանդ, նպատակ երազ է, սին բան...

Աստված չկա:

Երկրագունդը պիտի մեռնի:

Մարդկությունը պիտի մեռնի:

Նպատակ չկա:

Անմահություն չկա...

(Արդեն Սողոմոն Իմաստունն ասել է, որ հոգու անմահություն չկա, կյանքի նպատակ չկա, իմաստ չկա. ամեն ինչ կանցնի, ծուխ է... փոշի, ունայնություն ունայնությանց):

Ավ<ետիք> Իսահակյան

121. ԻՆԺԵՆԵՐԸ

Տիեզերքում, զանազան հնռավոր կողմերում նրա, մեծ հեղափոխություններ են կատարվում, միշտ, բազխվում են իրար արևներ ու երկիրներ, և նրանից նորերը ծագում: Երբեմն, մաշված արևներն ու մոլորակները բախվելով իրար և ուրիշներին՝ այդ թափից նոր ուժ են ստանում, նոր կրակ ու հրդեհ, և նոր մարմիններ են ստեղծվում՝ ապագա խոստումներով և բազմաձև հնարավորություններով:

– Ի՞նչ է կյանքի այս վազքի <...>[1]

122. ԱՍՏՈՒ ԵՎ ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ճարտարապետը և Ալեքպոլի դիշերաշրջիկ փիլիսոփան ժխտում են Աստված և հոգու անմահություն: Բնության ուժերից դուրս և բնության օրենքներից դուրս չկա ուրիշ աշխարհ, ուրիշ ուժեր և օրենքներ: Ամեն ինչ ենթարկված է այդ օրենքներին և ուժերին:

Մարդը և անձրևի կաթիլը և ավազի հատիկը և բույսի տերևը միևնույն օրենքների և միևնույն ուժերի արդյունքն է: Եվ նրանք իրարից չեն զանազանվում ըստ էության, միայն տարբեր են ձևերով: Միայն ըստ ձևի:

Կյանքը, հոգին, ուղեղը նյութի զարգացած ձևն է: Ուրիշ ոչինչ: Կատարելագործված ձևն է:

Հարութը թերահավատ է: Բայց կան ուրիշները՝ օրինակ, Ուսուա Կարոն, Տայուն, տիրացուն, և ուրիշ մարդիկ (Գյումրի) հավատացյալներ են, կամ մխտիկներ, գերազույն ուժ ճանաչողներ, և այլն:

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է: Մեկ թերթ պակաս է:

123. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

– Ամբողջ մարդկությունը մեռնի, ծառից մի տերև չի ընկնի: Այդ վշտից: Յավակից, կարեկից մի տերև չի ընկնի:

– Ամեն վայրկյան երկրագունդը վտանգի մեջ է՝ բախվելու մի աստղի և ոչնչանալու:

– Մարդը մի օր ոչնչանալու է, և նրա կուլտուրան, և տիեզերքում մեկը չպիտի լինի նրան հիշելու:

– Մարդու էգոիզմը հասնում է այն աստիճանի, որ ողջ աշխարհը կզոհի միայն թե ինքը ապրի, իր կյանքի համար, չմեռնելու համար:

– Մարդն ուրախանում է, երբ լսում է ուրիշի մահը՝ ո՛չ միայն թշնամու, այև բարեկամի, ընկերի... մի վայրկյանի չափ:

– Մարդու հոգին՝ դժգոհ երջանկությունից, ստեղծում է, պահանջ է զգում ստեղծելու հոգեկան, ներքին մի իրականություն, երազ, հնքիաթ, իր սրտին սիրելի, հաճելի, երջանկացնող:

– Մարդը թուլլ է, անզոր է, ոչինչ է տիեզերքի հանդեպ՝ բանը երևակայությունն է. մարդու մեծությունը՝ նրա երևակայությունն է: Լոպպազությունը: Մարդը ոչինչ է, նրա խոսքն է բանը, նրա ցանկությունը:

– Մարդն է չինել, ստեղծել տիեզերքը՝ մարդու ուղեղը – բոլոր հրաշքների հրաշքն է:

Նա է տիեզերքը:

– Լոպպազությունը, երազը գործերի, փաստերի փոխարեն է:

– Աշխարհը կա և չկա: Ամեն բան հոսում է, ծորում է, գնում է, քանդվում է և նորը չինվում, սայլը դառնում է հողը, հողը դառնում է բույսը, բույսը ջուր, ջուրը՝ այս ու այն...

124. <ԻՆԺԵՆԵՐԸ...>

– Ինժեներ: Ցույց տալ, որ իրենց ջարդված ապգր ոչխար չէ, իրենց հավասար ապգ է, ի՞նչ չահ ունի ռուսը՝ որ թող է տալիս հային ջարդելով՝ դորեղացնել սահմաններին վրա թուրք, թուրք տարրը... Բայց ռուսը ե՞րբ է խելք ունեցել, որ հիմի ունենա. արդեն ինքը չէ իրան կառավարողը, գերմանացիք ցարին են կառավարում, հրեաները՝ ինտելիգենցիային:

– Ծո՛վ եղիր, համբերիր, ծով սիրտ...

ՀՐԵՂԵՆԻ ՄՈՏ. ԵՐԱՋ

...Ճամփաբաժնին [երկու ճամբու մեջտեղը] բուսել էր մի մեծ, բունը տասը գրկաչափ կաղնի, ճյուղքերը մի մեծ ոչխարի հոտ ստվերով կծածկեր. ո՛վ գիտե քանի հարյուր տարվա հասակ ուներ այդ կաղնին, որ խուլ հնչում էր... Նրա տակ նստել էր մի ծերունի մարդ, միրուքը ճերմակ, մինչև գետինը առած, թիկն էր տվել մի մամռոտ քարի, և ճերմակ թավ ունքերի տակից նայում էր հեռուն...

Հարուքը հրեղեն ձիով մոտեցավ. կանգ առավ ճամբու բաժնին[1]. վարանում էր, ո՞ր ճամբով գնար. նկատեց ծերունուն, խոնարհ գլուխ տվեց և ասավ.

– Բարև, պապի:

Ծերունին [մտքի] մտքով էր ընկած, չլսեց բարևը: Հարուքը կրկնեց.

– Բարև, պապի:

– Ա՛յ բարև, որդիս,– ասաց նա. նրա ձայնը ասես հեռու տեղերից կուգար,– ո՞ւր առաջ բարի:

– Լսել եմ, որ աշխարքի արևը, Հրաչք-աղջիկը, էս տեղերն է ապրում, փափագով եկա, կտրեցի սարեր ու ձորեր. էս քանի տարի է ճամբորդ եմ. հիմի չգիտեմ, ո՞ր ճամբով երթամ. աչ թե ձախ...

– Է՛հ, որդիս, լավ ճամբա չես բռնել, ետ դարձի՛ր. էնտեղ գնացող ետ չի դառնա: Ես աշխարքի սկզբից մինչև հիմա էտեղ եմ նստած ու տեսել եմ բյուրավոր, բյուրա-

---

[1] *Լուսանցքում առանց տեղը նշելու.* «40 ճամբա կար, 40 ճյուղ»:

վոր, անհամար (անհաչիվ) կարիճներ, թագավորներ, թագավորի տղերք [գնացել] գնացին ու ետ չեկան: Նրան տեսնողը կոչնչանա, կայրվի ու մոխիր կդառնա, կամ կքարանա, կամ հավիտյան անտես չղթաներով ղերի կդառնա նրա պալատի դռների տակ:

– Ի՞նչ էլ որ լինի, ես պիտի երթամ, պապի:

– Մի՛ գնա, որդի, ափսո՜ս ես, խեղճ ես. էնտեղ՝ աշխարքի էն ղլխից մինչև հիմի ապրում է աշխարքի գեղեցկուհին, կինը, իսկական կինը: Արևը նրա աչքերիցն է իր լույսն ու բոցը առնում, նա ավելի գեղեցիկ <է>, քան արևը, աշխարհը, քան կյանքը: Ետ դարձի՛ր. օրը հազար-հազարներն են անցնում էստեղից, որն էս ճամբով, որն էն ճամբով, ու ետ չեն դալիս: Աշխարքում էնքան մարդ չկա հիմա, ինչքան որ էնտեղ կա, ծովի պես լցվել են Հրեղենի չուրջը, ծերացել են ու կորացել. ամեն օր հազարների նա մորթում է ու դանկերից բուրգեր չինում: Ու մեկն էլ չեղավ գնացողներից, որ ետ դառնար: Նա կինն է, որին ոչ մի մարդ չի կարող հաղթել, էդպես մարդ դեռ ոչ մի մեր աշխարք չի բերել...

Ու ծերունին համոզող աչքերով նայեց Հարութին.

– Չէ, պապի, ես պիտի երթամ, ինձ համար աշխարքը արժեք չունի առանց Հրեղենի: Ուստա Կարոն էլ համոզեց, որ չերթամ, բայց հնարք չկա. ես պիտի տեսնեմ Հրեղենին, որի աչքերից արևն է ծագում. թո՛ղ միայն մի վայրկյան նայեմ նրան ու մեռնեմ, միայն մի անգամ համբուրեմ նրա ոտները ու այրվեմ, մոխրանամ – էլ ինձ բան հարկավոր չէ, քանի որ մի վայրկյանի երջանկությունը ավելի հավիտենական է, քան առանց երջանկության անմահությունը: Պապի, ես հրացանից արձակած գնդակ եմ, պիտի երթամ, ետ դառնալ չկա. բարի եղիր, ցույց տուր ճամբեն ու օրհնիր իմ գնալը...

Ծերունին խղճահարվելով, նայեց Հարութին և ասաց.

– [Էս] Ամեն մի ճամբան էլ, 40, կերթա Հրեղենի մոտ, քանի որ սիրտդ է, որ քեզ կտանի, [էն ճամբեն՝ Վիշապաղի մոտ, որն աշխարքիս բոլոր դանձերի տերն է: Աշխարքի գեղեցիկը ուզում է ամենակարճ, ամենասիրուն, ամենահարուստ մարդուն, կնիկն ուզում է մարդ ու ոսկի: Վիշապ-աղեն աչքը տնկել է Հրեղենի վրա, իր բոլոր դանձերը տալիս է նրան, որ իր կինը լինի, բայց Հրեղենը չի ուզում, որովհետև վիշապ՝ սիրուն չէ, այլանդակ է: Ո՛վ որ երթա վիշապին հաղթե, դանձերն առնի – Հրեղենը էդ կարիճին կնիկ կդառնա: Բայց Վիշապի մոտ գնացողներն էլ ետ չդառան, գնացողները բոլորն ընկնում են նրա ուռկանը, դառնում են նրա ծառան ու գերին, որ օր ու գիշեր պիտի արուն-քրտինք թափեն աղի համար: Էդ համփով մի գնա՛:]

Հրեղենի մոտ որ կերթաս, լսե իմ խրատներին, որ ամեն գնացողի տվել եմ և զո՛ւր է կորել. եթե կարողացար կատարել խրատներըս, կհաղթես նրան ու տերը կլինես: Գնա՛, նրա պալատի առջևով անցնելուս մենակ մի անգամ նայիր նրան, կիմանաս, միայն մի անգամ նայիր ու անցիր. երկրորդ անգամ չնայես. լավ միտքդ պահե՛: Նա կկանչե քեզ, կերդե, ետ մի նայիր, ուշք մի դարձրու (արհամարհելով, (բանի տեղ չդնելով), կհաղթես կնոջը և ոչ թե սիրով ու խոնարհվելով), անտարբեր, քեզ համար, անցի՛ր, և նա վերջը կվազե քո ետևից, դու նորից գնա, նա տարիներ կվազե ետևիցդ, կընկնի քո ոտներդ և քո գերին կդառնա... Ու երբ կինը կուզենա գերի դառնալ՝ այն ժամանակ՝ վերցրու, առ նրան. որովհետև այն ժամանակ անկեզծ ու ճշմարիտ կլինի նրա սերը: Լսեցի՞ր, հասկացա՞ր, որդիս:

Հարութը կանգնել, մտածում էր:

– Լսիր, որդիս, կինը անհաղթելի է. բոլոր մարդիկ գերի են դառել նրա մի համբույրի համար ու խաչվել են: Եվ ոչ մի մարդ չէ ճարվել, որ արհամարհի նրան: Իսկ նա, Հրեղենը, Կինը – կսիրե ու գերի կդառնա նրան, ով անտես կառնի նրա սիրունությունը, հրաշք-սիրունությունը. այդպիսի կտրիճ տղամարդ դեռ աշխարք չէ եկել: Թե դու կարողանաս արհամարհել նրան, կլինես ամենից քաջ և իմաստուն մարդ աշխարքի մեջ: Կնոջ սերը, բաղդավորությունը՝ խոնարհվելու, գերի դառնալու մեջն է. երբ կնիկդ կընկնի ոտքերիդ տակ – էն ժամանակ կինը [հաստատ] հավատարիմ կսիրե. իսկ թե հաղթվեցիր՝ խոնարհար[1] նրա առաջ – էն ժամանակ նա կդառնա մի կատղած գազան, կքցե քեզ ոտների տակ, սիրտդ կտրորե, կխեղդե քեզ: Ասածներս մի մոռնար, ականջիդ օղ էրա. բարով երթաս, բարով դաս[2]:

Հարութը իջավ ձիուց, համբուրեց ծերունու ձեռքն ու սլացավ աջ ճամբով դեպի Հրեղենը:

Շատ գնաց թե քիչ, մեկ էլ նա տեսավ՝ հեռվից, ասես՝ ոսկեվառ ամպերի [վրա] մեջ, վարդե-մարգարտե բարձրերի վրա նստած Հրեղենին: Հարութը խթանեց ձին և արշավեց, մոտեցավ. փղոսկրե սյուներով և ադամանդե պատերով մի չքեղ պալատ [բացվեց] փայլեց իր առաջը. զմրուխտե ու յաղութե պատշգամբում բազմել էր Հրեղենը, որ չողում էր ու չողչողում հազար ու մի արևներով: Աչքի տակով նայեց Հարութը – և սարսուռ անցավ նրա մարմնով: Տեսավ պալատի ոսկե պատերի տակ, ոչխարնե-

---

1 Ինքնագրում՝ այսպես:

2 *Ձեռագրում հեղինակը խաչով նշել է երկու պարբերությունները և գրել.* «Այս երկու կտորները միացնել. բայց՝ երկու պարբերության մեջ, որ երկար չլինի: Վերևից բերել ներքև»:

րի անհամար հոտերի պես/չափ, լցվել են իրար վրա անհաշիվ, անհաշիվ մարդիկ, բյուր-բյուր սերունդներ, ամեն տեսակի ազգեր. գլուխները ջոտում էին ապառաժներին, որոնք մաշվել էին սերունդների ճակատների տակ, և լալով սեր էին մրմնջում, խոստումներ ու երդումներ անում, աղաչում, պաղատում, իսկ Հրեղենը հազար ու մի արևներով չողշողում էր ու այրում, խանձում բոլորին, գերում ու քարայնում ամենքին, ամենքին[1]:

Երբ աչքը ներքև ձգեց, տեսավ անհամար մարմարե շատրվաններից առատ-առատ բղխում էին խաչխաչի հարբեցնող, քնեցնող աղբյուրներ, որոնք թափվում էին պալատի շուրջը փռված մարդկանց վրա, և ամենքին խելքից հանում. պալատի չորս կողմը խաչխաչն անծայր ծով էր կապվել: Նա տեսավ, թե ինչպես նրա ոտների տակ մարդիկ սողում են ու նվերներ են տալիս նրան. որն իր սիրտը պոկել, բռնել է ձեռքին, ասում է.— առ, քեզ մատաղ, որը իր գանձը, թագավորն իր գահը, քաջն իր սուրը, դիտունն իր գիրքը, վարդապետն իր խաչը, ուրիշները ուրիշների կտրած, արնամաղ գլուխները: Բայց Հրեղենը աչքով աչք չուներ նրանց նայելու: Նա հայելին բռնել, հեռուն է նայում. նա սպասում է էն ազնավուրին, որը ոչինչ չի խոստանա և անտես կառնե նրան...

Իսկ մարդիկ հուսահատված գլուխները զարկում են քարերին, փշրում են, իրար խածում, բզկտում, իրար մորթոտում...

Այդ ամենը Հարութը տեսավ նորից մի վարկենում...

Նա ավելի մոտեցավ: Հրեղենը իր ոսկեծով մազերը չաղ էր տվել, որոնց մեջ աստղեր էին վառվռում, և այր-

---

[1] *Հեղինակը լուսանցքում նշանով հավելում է արել՝ գրելով. «Այս կտորը դնել այստեղ»:*

վող ծովերի պես աչքերը հառել էր մի սադափե հայելու վրա: Հայելին նա բռնել էր ճամբու առաջ, որ տեսնի թե ով է գալիս: Եվ Հրեղենը հայելու մեջ տեսավ Հարութին, և Հրեղենը հեքիաթների նման աչքերը վառեց հեռուներից Հարութի վրա: Հարութը դեռ հեռու էր, բայց դգաց Հրեղենի աչքերի այրող ճառագայթները իր ճակտի վրա. ձիու սանձը քաշեց և դանդաղ-դանդաղ մոտենում էր ապարանքին, ասես թե, իրեն համար հանգիստ ճամբա էր գնում...

Եվ երբ մոտեցավ ապարանքի դեմուդեմը, Հրեղենի պատշգամի ուղիղ դեմը – Հարութը հիշելով ծերունու խրատը, աչքերը մի անգամ բացեց և նայեց. մի վայրկյան, հավիտենականության չափ երկար մի վայրկյան: Այդ վայրկյանում նա տեսավ, հրաչքների մի ծով տեսավ. Հրեղենը իր հազար ու մի արևը միանգամից թափեց Հարութի վրա: Հարութը ցմքեց տեղն ու տեղը. մահից ավելի հզոր էր այդ Հրեղեն աղջիկը: Հարութին թվաց՝ թե նա կարող էր բոլոր աստղերն իրար շաղվել, աշխարքը մի գնդակի պես բռնել ու փշրել... Հարութին թվաց՝ թե ինքը ուր որ է հոգին կփչե... և ապա իր վրա հազար-հազար մարդու ուժ թափելով հաղթեց իրեն, աչքերը քցեց ձիու բաշին, [ամուր, ասես երկաթե ոտքով, այնպես ամուր] խփեց ձիու կողերին, [որ լսակեց խեղճ ձիու կաշին, և ցավից թռավ ձին] և անցավ հանդարտ, պատահական անցորդի պես:

Հրեղենը աչխարքի բոլոր բլբուլների ձենով կանչեց նրան.– Ո՞ւր ես գնում, ետ դարձիր. գիրկս քեզ համար բաց է:

Հարութին այդ հզոր երգը հարբեցրեց, քիչ մնաց ձիուց ներքև գլորվեր. բայց զսպեց իրեն (և նորից խթանեց, մարակեց ձին:)

Հրեղենը նորից ու նորից, հազար նազանքով կանչեց, խնդրեց, բարկացավ հետո, ասելով, որ դևերիս բաց կթողնեմ և քեզ կտոր-կտոր անել կուտամ, ո՞ւմ ես արհամարհում...

Հարությը չլսելու տվեց (և գնում էր և խելագարի պես խթանեց ձին):

Հրեղենը նորից քաղցր, աղաչող ձայնով մղկտաց, կանչեց: Հարությը հավաքեց իր բոլոր ուժերը, ասես, [նրա մեջ աշխարքի չափ] նա աշխարքի չափ ուժ ուներ... Հրեղենի քաղցր, դյութական ձայնով թովված՝ ժայռերը պոկվում էին լեռներից ու գլորվում, հավք ու թռչուն խելակորույս, թևաթափ, չնչասպառ ընկնում էին նրա ոտների տակ, խաչխաչի ծովի մեջ, խեղդվում, իրենց երջանիկ համարելով...

[Իսկ Հարությը, որ այնքան [ուժ] զորք ուներ իր սրտում]

Հրեղենը նորից կանչեց, և մեկ էլ հուսահատված զարկեց հայելին մարմարե սյունին, փշրեց, և մազերը խառնուցրիվ, թռավ պատշգամից և վազեց Հարությի ետևից, քա՛ղցր, քաղցր կանչելով.— «Կանդնիր, արի, արի...»: Նրա երկնային ճառագայթի պես մատները, [հարբեցուցիչ] մեղցնող քնքշությամբ կանչում էին Հարությին. «Արի՛, արի, իմ փեսա՛, արի, արի...»:

Հարությը, որ այնքան զորք ուներ իր սրտում, այս անգամ մազ մնաց, որ ետ դառնար, գոնե մի անգամ ետ դառնար. նրա ոտքերն ու ձեռքերը թուլացել էին, չէր կարող խթանել ու մտրակել, բայց հիշեց ծերունու խրատը, և [կատաղի, անգութ կերպով] խելագարի պես այնպես ամուր խթանեց ձին, որ [արյունը կաթկթեց ձիու կողերից, ձին թռավ] խեղճի կաչին լոպկվեց, և ցավից թռավ ձին:

Հրեղենը խելքը կորցրած վազեց Հարութի եւևից, որ բռներ նրան. հուսահատուր վազում էր Հրեղենը... Իսկ նրա սիրո գերիները, դարերի մեջ քարացած ու մնռած մարդիկը, [ասես,] չունչ առան, կենդանացան, և հողերի ու քարերի մեջ քաշ տալով իրենց ըզկտած մարմիններըր, ճանկռելով իրար, իրար [վրա] կոխելով վազում են ու գոչում. «Դարձիր, Հրեղեն, դարձիր, դարձիր, մի գնա, մենք գոհ ենք քեզ գերի լինելով, քեզ համար մեռնելով: Եկ նստի՛ր գահիդ վրա, թող քեզ նայելով մենք տապակվենք ու մեռնենք. դրանից վեր բաղդ չկա աշխարհում». և լալիս էին, հեծեծում, ու հուսահատ պատռտում իրար: Բայց Հրաշք-աղջիկը չէր նայում նրանց, չէր լսում նրանց լացն ու կոծը, կռիվն ու մահը... Բոլորը հուսահատ մեռնում էին, մեռնում էին, ասես թե արևը Հավիտյան գնաց նրանց վրայից, և, նրանք սառան, մեռան...

Սակայն Հրեղենը ինքը ևս խեղճացած, ավելի հուսահատ, քան իր գերիները, մարած, հոգին բերանը վազում էր Հարութի եւևից՝ հեռացող, անսեր, հպարտ Հարութի եւևից, լացով ու կոծով: Իսկ Հարութը, տղամարդու պես, գնում էր, անդարձ գնում էր, իր հետ տանելով Հրեղենի սերը, կյանքը: Առանց Հարութի Հրեղենը կմեռներ, ինչպես մեռան այն բյուր-բյուր մարդիկ առանց Հրեղենի...

Հարութը գնում էր. Հրեղենը օրերով վազում էր նրա եւևից. նա Հարութի ձիուց ավելի արագ էր վազում, և վերջապես Հրեղենը կարեց Հարութի ձիու առաջը, բռնեց [ձիու ոտքերից] Հարութի ասպանդակներից, ձիու սանձից, և ուժասպառ ընկավ ձիու ոտքերի առաջ/տակը: Ձին կանգնեց:

Հրեղենն ասավ սիրտ մղկտացնող ձայնով. «Իմ քաջ, իմ Հրեղեն վեհսա, ես քոնն եմ, քու գերին եմ. ահա իմ սիրտը, կամ վերցրու, տաքացրու դրկիդ, կյանք տուր, սեր տուր, կամ քեզիր նժույդիդ ոտքերի տակ ու ճմլիր

սիրաս, որ աշխարքի սկզբից մինչև հիմա քեզ համար եմ պահել. ես աշխարքի թագուհին եմ, ամենագեղեցիկը. ո՛չ կպառավնամ և ոչ կմահանամ»: Ասաց և աղերսալի աչքով նայեց ու լացեց: Հարուքը հաղթական և հզոր ձեռքով բարձրացրեց փոշու մեջ թաղված Հրեղենին, գրկեց ամուր, համբուրեց, համբուրեց, վայելեց վայրկյանի անմահությունը: Հրեղենը անմահ, անհուն երջանկության մեջ մարաւ, աչքերը խփեց և բաղդավոր քուն մտավ Հարուքի գրկում, ասես, ամենաերանելի դրախտում: Հարուքը անմահ քաջի պես մտրակեց ձին. «Երթամ հոլիկս, Կարոյիս հետ մեծ կռչունք սարքեմ, նրան էլ քավոր անեմ, ես ու նա — էլ հարսանքավոր[1] հարկավոր չէ. տեսա՞ր, Ուսուա, ի՛նչ կնիկ առա. էսպես սանամեր երազիդ մեջ էլ ունեցած չկաս»:

[2][Իրեն-իրեն խոսում էր Հարուքը, և սլանում մետաքսե դաշտերով: Մեկ էլ տեսավ առջևը մի ահագին [պալատ բացվեց] ոսկու սար կանգնեց: Նրա [պատշգամբում] վերա նստել էր Վիշապ-աղեն, մի հսկա, մի անճոռնի վիշապ սարսափելի, դաժան, անգութ դեմքով. մարդ որ մի անգամ նրան նայեր, կմեռներ, կքարանար ահից: Հաստ, քաչալ գլխով, արյունոտ և փոքր աչքերով, կարմիր ու մեծ քթով, մինչև [պռոշները] ծնոտները կախված պռոշներով և կոտրտված-դեղին ատամներով: Նրա փորը ավելի մեծ էր, քան Կաղզվանու [ձորը] սարերը: Վիշապ աղեն նստել էր ու ծխում էր: Նրա ձեռքերի հազար-հազար մատները, որոնք օձերի ու մեծ սյուլուկների պես են, փռվել են ու սփռվել այդ երկրի չորս կողմը, գյուղ ու

---

[1] *Ա.Ինճիկյանը կարդացել է հարսնառը:*

[2] *Ձախ լուսանցքում. «Դնել այստեղ: Վիշապի վերջը դուրս ձգել, սկիզբների հիշելը, հիշատակումը պահել — երկու ճամբան»:*

քաղաք, արտ ու այգի, ձորերի ու սարերի մեջ, և ամեն տեղ, ուր մարդ էր շարժվում...

Նրա օձավոր ու այուլուկավոր մատները ծծում էին բյուրավոր դյուզացու ու աղքատի, մշակի ու բանվորի, արհեստավորի ու խեղճերի արյունը. և ծծած արյունը Վիշապ-աղի ափերից հոսում էր նրա ոտների տակ, ոսկու սարի ներքև, կարմիր արյունը թափում էր, ծովանում և դառնում ոսկու ծովեր, որ փռվում էին ոսկու սարի լանջերի շուրջը: Լսվում էր սար ու քար մաշող մի հառաչանք ու մղկտանք բոլոր նրանց սրտերից, որոնց արյունը ծծում էր Վիշապ աղեն: Եվ նա տեսավ նորից, թե ինչպես տարել և աշխարհի մնացած մյուս բոլոր մարդիկ՝ թագավորներ ու վարդապետներ, կին ու մարդ, գիտուն ու անգետ լիզում են նրա ոտները, Ոսկե սարերը, և օրհնում, փառաբանում են նրա կյանքը, բարեբյունը և երգում նրա փառքը, խիղճն ու ուժը: Եվ Վիշապ աղեն նրանց երբեմն-երբեմն ոսկու կտորներ է քցում, ինչպես Հարուքը ոսկորի կտորներ շների առաջը:

Հարուքը ձին քշեց նրա առջևով. Վիշապ-աղեն տեսավ և ահեղաձայն գոռաց. «Կանգնիր, ով հողեղեն, ո՛ւր ես տանում Հրեղենին, նա իմն է, ում որ ոսկին է, կինն էլ նրանն է»:

Հարուքը ծուռ-ծուռ նայեց Վիշապին և ձին մտրակեց:

— Վա՛յ, վա՛յ, ուր ես գնում, բռնեցնեք նրան. տարավ Հրեղենին, էդ աղքատի կտորը տարավ Հրեղենին:

Հարուքը մտրակեց ձին, Վիշապը գոռաց. «Վա՛յ, օրս խավրավ, թռավ նա, գնաց, ինչի՞ս է պետք աշխարքի գանձը. արի, ա՛յ աղքատ, ի՞նչ ես անում սիրուն կնիկը, ինչո՛վ պիտի հագցնես ու կերցնես, խեղճ է էդ գոհարը, կցամաքի»: Հարուքը չէր լսում: Վիշապն ասավ. «Արի,

ինձ տուր Հրեղենին, ինչքան ոսկի կուզես վերցրու»: Զլսեց Հարությը: Նայեց ասավ. «Արի, դանձիս կեսը քեզ.– Արի, բոլորը քեզ»: Հարությը դոռաց.

– Ինչի՞ս է պետք քո դանձը, աշխարքի արունը, ես իմ գրկումս ունեմ աշխարքի արևը, ամենից մեծ ու անմահ դանձը:

Մեկ էլ Վիշապը թռավ Ոսկու սարից, հաստ փորը պետնին քաշ տալով վագեց, ընկավ Հարությի ետևից. վազեց, վազեց, ընկավ ձիու ոտներու տակ: «Ա՛յ կտրիճ, իմ բոլոր դանձը քեզ, դյուղերս ու քաղաքներս, արտերս ու դաշտերս, ծառաններս ու բանդերս – քեզ, քեզ, բոլորը քեզ, մենակ Հրեղենին տուր ինձ»: Հարությը ձին քշեց, ձին պողպատե պայտերով սմբակը դրեց Վիշապի սրտի վրա, Վիշապը գալարվեց, կծկվեց և ձիու ոտքերը բռնած, քաշ գալով հողի մեջով՝ չունչը փչեց:

«Օրթե ուզենամ, առանց քեզ էլ քո դանձն իմն է, մենակ չեմ ուզում. առանց դանձի ես աշխարքից հարուստ եմ»: Մեկել Հարությը լսեց, որ Վիշապի ծառաններն ու բանվորները ուրախ-ուրախ բղավեցին.

– Ապրիս, տղա, Աստված քեզ հետ, դու փրկեցիր մեզ. արի մեզ տեր դառիր:

– Ոչ,– դոչեց Հարությը, ձեր արունը ձեզ լինի, ձեր քրտինքը դուք կերեք, ապրեք ու օրհնեք ինձ:

– Հազար-հազար անգամ, հազար-հազար տարով օրհնյալ լինես, բաղդավոր լինես, անմեռն լինես, բարին միշտ քեզ հետ, մեր փրկիչ, մեր ազատիչ...

Հարությը հեռացել էր արդեն և չէր լսում նրանց օրհնանք-գովքը, որ անվերջ լսվում էր...]

Այսպես խոսելով, Հարությը Հրեղենին գրկած՝ գիշեր ու ցերեկ երգող աղբյուրների, բուրալից դաշտերի վրայով սլանում էր դեպի իր հոլիկը:

– Երթամ Հոլիկս, աշխարքի հետ չեմ փոխի Հոլիկս. ամենից մեծ թագավորությունն է Հոլիկս: Ես թագավոր, Հրեղենը թագուհի, Ուստան – քավոր. տեսա՛ր, Ուստա, ի՛նչ տղա եմ: Աշխարհի գանձերի միջից ես իմացա՝ ո՛ր գանձը վերցնեմ, որ ամենքի բերնի ջուրը գնա:

ՀԱՐՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԸ

Հեքիաթ, հեքիաթ պապս,
Հրեղեն ձին տակս,
Շարմաղ Հարսը գավակս,
Մորս գաթեն չալակս,
Փարջով գինին պարկս,
Անուշ սապը կռնակս,
Թռնեմ, երթամ Գյուլստան,
Հնդստան, Արաբստան,
Մեկ Հարսին պադեմ,
Մեկ գաթեն խածեմ,
Մեկ գինին խմեմ,
Մեկ սապս ածեմ,–
Հեքիաթս ասեմ...[1]

Կեղնի, չի եղնի, մի Աստված կեղնի, անունը Օրմե Հարութ. էդ Աստվածը կտեսնի, որ էս աշխարքը, որ կա, դևչ է, թերի, սդի ու ցավի տուն:

Էդ Աստվածը միտք կանե, միտք կանե, կխոսի իրեն մտքերի հետ, թե արի էս աշխարքը [ստեղծող Աստծուն ապանեմ] քանդեմ ու մի նոր, կատարյալ աշխարք ստեղծեմ:

Ու մի օր էլ, կքանդե աշխարքը ու մի նոր կստեղծե: Օրմե Աստվածը, ամեննից առաջ էնքան արևներ ու լուս-

---

[1] *Այլ լուսանցքում.* «Այս կտորը դնել Կարոյի բերանում»:

նյակներ կատեղծն, որ նոր աշխարքում իսկի խավար չի էղնի. միշտ արև ու միշտ լուսնյակ դիշերներ:

Կատեղծն հոգով ու մարմնով սիրուն տղերք ու աղջիկներ, հյուրի-փերիներ, լուսեղեն տղերք, հրեղեն աղջիկներ:

Ամեն մի տղա մի կին կունենա, անուշ կպաչեն իրար, պաչից կծաղկեն վարդ ու շուշան, էնոնցից էլ դուրս կուդա նշխուն թիթեռ, ու թիթեռից էլ մի սիրուն երեխա... Էդ մարդիկ թևավոր են, կրնան թռնել...

Էդ Աստծու աշխարքում մահ չկա, ստեղծվածները կմնան միշտ երիտասարդ, անթառամ, գեղեցիկ, անմահ. ո՛չ ցավ կտեսնեն, ոչ հիվանդություն...

Ամեն մարդ իմաստուն է, թռչնոց լեզվով կխոսեն ու երեխի պես պարզ են ու միամիտ... Ամենքը ազատ են, միշտ ուրախ ու պայծառ, ոչ հսկա կա, ոչ թագավոր, ոչ մեղք ու չարություն... Չեն իմանա, ի՞նչ բան է վախն ու երկյուղը, սուգն ու լացը...

Սարերը ալմաստ են ու զմրուխտ, ջրերն ու [ծովերը] գետերը կաթով ու մեղրով լի, աղբյուրները գանգակի ա-նուշ ձեն ունեն, հնքիաթ ու երգեր կասեն, անմահական գինի ու արաղ կբղխեն:

Ծառերը անուշ հոտ ունեն, ու լուսատու են, քաղցր պտուղներով, անփուշ ու անորդ, ճյուղքերից՝ տերևների հետ՝ բուսնում են չարմաղ լավաշներ, դրախտի խնձորներից տապակած խորովածներ, թագավորի վայել դաթաներ, նազուկներ...

Հազարան անմահական բլբուլներ օր ու դիշեր կերգեն, հազարան անմահական վարդերի վրա, անթառամ ծաղիկները անուշ հոտ կբղխեն ու արար աշխարք լցված է անմահական, անուշ, հարբեցնող հոտով. աստղերը հրեղեն արտուտների պես միշտ լույս կուտան ու կերգեն ոսկեղեն հավքերի հետ:

Երկնքով նշխուն ադամնիների պես կպտտվեն վարդերով ու մանուշակներով հյուսված ամպերը, ու վարդաջուր շաղ կտան Օրթե Աստծու աշխարքի վրա... Թևավոր ձիերն ու մարալները ուրախ կթռնեն սար ու ձոր...

Ձմեռ չկա, ցուրտ չկա, փոշի ու ցեխ չկա, միշտ գարուն ու կանանչ, միշտ սիրուն ու զուգված է էդ աշխարքը:

(Ամեն քար ու թուփ, ամեն ծաղիկ ու հավք թառի ու [չոնգուռի] չվիի պես անուշ կերգեն) – էդ աշխարքում միշտ ուրախություն, հարսանիք է. ամեն տղա ու աղջիկ անթառամ սիրով հարս ու փեսա են, հագած կապած ոսկի ու գոհարներ, իրար գրկած, ընկերներով, կնստեն յաղութի հասկերի մեջ ու կպտտվեն զմրուխտե ծովերի վրա, հրեղեն դավուլն ու զուռնեն կփչեն. պար կխաղան, ու փերի-աղջիկների մարմարե ու ատլասե ծծերից անմահական արաղ ու գինի կկամեն, անուշ-անուշ կխոսեն ու ախ չեն քաշի...

[Կամ] կթռնեն իրար գրկած ամպերի վրա ու կպտըտվեն երկրե-երկիր, ծովերի և սարերի վրա...

Հացի դարդ չունեն, ապրուստի համար չեն հոգում...

Օրթե Աստծու աշխարքում չկա ոչ ցավ, ոչ չոռ, կռիվ ու անեծ չկա, փող ու բանդ չկա, թագավոր ու հպատակ, հարուստ ու աղքատ չկա: [Հիվանդություն, լու, օձ, կարիճ, գեշ-գեշ ղժվելի որդեր, ճիճուներ, գազաններ չկա, գեշ-գեշ հոտեր, աղբ ու թրիք, փսլինք-մսլինք չկա, չկա...]

Ուստեն հիացած լսում է – տո Հարութ, կրակ չուտես, հաստատ ի՛նչ լավ աշխարք է, օրթե էդպես եղներ, ինչ լավ կեղներ:

– Բա, էդպես աշխարք կստեղծեմ, չէ թե Աստծու պես – էս քոստա աշխարքը՝ ուր մահը գլխիդ վրա կանգնած է,

ցավ, թշնամի, քոռ, քաչալ, ձմեռ, սով, արյուն, հիվանդություններ, էլ ո՞րն ասեմ, ամեն բան գնչ է. մի անունը որ տաս, Աստված ուսուա չի եղել, էապես անշնորհք, կիսատ-պռատ աշխարք մամս էլ կրնար ստեղծել. բանր ուժ ուննեալր չէ, շնորհքն է դժխավորը...

– Աստված ինչու էդպես չստեղծեց, Հարութ:

– Կամ սիրտը գնչ էր, չուզեցավ, կամ չկրցավ. օրթև Աստված քեզի պես լավ հնբիաթներ պիտենար, լավ աշխարք կշիներ. [էս աշխարքը գնչ, գնչ հնբիաթ է, կամ գնչ, ծանր երազ... Ես պիտի նորը շինեմ...

– Հարութ, չես կրնա, դուր է, աշխարքր հո՞ հավի բուն չէ, որ քանդես, նորր շինես, Աստվածն էլ չի թողնի, որ նորը շինես:

– Աստված չի թողնի՛... ով է էնոր բերնին տվողը, կսպանեմ Աստծուն ու քեզի հետ կամ մենակ՝ սրտովս, սիրուն, կատարյալ, մի աշխարք կշինեմ...

Ուստեն վիրավորվեց, դայրացավ Աստծուն սպանելու դեմ... վերջը ասավ.

– Հարութ, քեզ պես մի խելառ է եղել, ասել է թե Աստծուն պիտի սպանեմ:

– Ով է եղել էդ Աստվածասպանը...

Պատմութիւն Նեմրութայ սարը...][1]

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

<«ԱՍՈՅԻ ՄԱՀԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Ասոն իր մահի նախընթաց օրը Տիկորում կարոյի հետ քեֆ է արել, կերել-խմել-զրուցել: Այս պատկերը տալ: Նրան նկարագրել հաստ, գեր, կարմրաերես, հևացող, փնչացող: Շատակեր:

Մյուս օրը մեռավ: Ուստան լսեց, սարսափեց: Վա՛յ մարդ, փուչ, ունայն մարդ, էրեկ հետս քեֆ կեներ, էսօր – հնչ, չկա... Ուրեմն ինքն էլ է մեռնելու, մի օր, անպատճառ, դուցե հենց էսօր, էս երեկո, վաղը... ինքն էլ պիտի պաղի, անշնչանա, հնչ դառնա... ինքը, որ հիմի կա, ու աչխարհը հետն է, աչխարհի մեջն է, աչխարհը կզգա... ո՛չ, ո՛չ, եղնելիք բան չէ. հավատալը չի գալիս. ինքը մեռնի՞ – անկարելի է: Սուտ բան է, մահ չկա, մեռնում չկա: Ասոն մեռավ, որովհետև Ասոն արդեն պիտի մեռներ, դա նրա բախտն էր. մեռնողները պիտի մեռնեին, ապրողները չեն մեռնելու. ապրողները՝ ապրողներ են:

2. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Երբ Ուստան ասաց – «Ասոն ասավ, որ Ղարս պտի երթար, հաց ուներ ծախելու: Իրիկունը նստել հաշիվ կեներ, մեկէլ սիրտը կբռնե, վա՛յ-վա՛յ կընե, կընկնի, կմեռնի:

Խեղճ Ասո, իսկի մտքովը չէր անցել, որ մահը հաշվի մեջն էր, Հարութ ջան, Ասոն մեռնելը հաշվի մեջ չէր առել... Ասոյի հաշվի մեջ մահը չկար:

Հարութը մտքի մեջ ասաց. «Բայց մահի հաշվի մեջ Ասոն առաջին պլանն էր...»

3. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Ուստան չատ ցավաց մահը լսելով. ձեռքի գործը թողեց, չուզեցավ գնալ մեռելի տունը մեռելը տեսնելու, ասելով՝ թե ես չեմ կրնա Ասոյին մեռած տեսնել (նա մեռել չէր սիրում տեսնել առհասարակ): Բայց Զավուշի հորդորներից հետո, թե վայել չէ. «Գնա՛ հորը մխիթարե».— գնաց տան դռնից նայեց, տեսավ, որ մեծ տանը մեռելը փաթթած մի կապերտի մեջ պառկեցրել են ու լաց են լինում, գովում (մի երկու խոսքեր լսեց, օրինակ...): Մտավ այվանը, մարդիկ մխիթարում էին հորը, ինքն էլ մխիթարեց: Դարձավ կամ առաջուց պայմանավորվել էր Զավուշի հետ, թե դու թաղմանը մնա, մեկէլ օր կուգամ: Զավուշը թե՝ էլ մի ասի, քու սիրտը փուխր է, ես գործը կմնցնեմ, կիրակի առավոտը կուգամ, հետո տուն կերթանք:

4. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Երբ Ուստան գնաց Ասոյենց տունը, և մտնում էր այվանը, չուզենալով կանանց մասը մանել, ուր լաց ու կոծ կար, հավաքված մեռելի շուրջը, Ասոյի կինը նկատեց Ուստային և սկսեց բարձրաձայն ողբալ — Ամա՛ն, աման, Ուստա ջան, էս ինչ գուլում եկավ գլխուս: Ընկերդ ուր

ա... Ասո՛ ջան, ե՛լ, տե՛ս, քո ազիզ Ուստայիդ, եկավ, բա ինչո՞ւ չես խոսում, բլբուլ լեզուդ ինչո՞ւ չի բանում: Ուստա ջան, ես ինչ էնեմ հիմա, ո՞ր հողը գլխուս տամ... և այլն: Ուստան աչքերը սրբեց, գլուխը կախ, չտապեց, մտավ այվանը, Ասոյի ծեր հոր մոտ...

5. ԱՍՈՅԻ ՄԱՀԻՆ

– Ուստան մտավ Ասոյի այվանը, օդան, ուր նստել էր հայրը՝ չշմած, քշված: Մարդիկ խոսում են իրար մեջ: Մեկն ասում էր. «Աստված մանկության մեղքը երեսովը չտա»...

Մեկը պատմում էր մահվան պարագան, թե ինչպես նստած տեղը, վա՛յ սիրտս, սիրտս ասաց և ընկավ...

Քանի անգամ պատմել էր և ամեն նոր ներս մտնողին նորից պատմում էր:

6. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Ուստան ակամա քայլերը ուղղեց Ասոյենց տունը. Քերոբն էր հետը և մի-երկու ուրիշ մարդ. Ասոյենց տան մոտից լսվում էր կանանց լաց ու կոծի ձայներ: Տուն մտնող-ելնող լիքն էր: Այվանը մտնելուց առաջ Ուստան մտավ տունը, ուր դրված էր մեռելը. խնկի հոտը մեռելի հոտի պես Ուստային սարսափեցրեց: Դռան առաջ կանգ առավ. «Մտնի, չմտնի, բայց պետք է մտնել»: Մի-երկու վայրկյան լսեց. «Աման, ամա՛ն, էս ինչ գուլում էր, ես չեմ կրնա դիմանալ, էս դարդը ես մենակ չեմ կարող տանել,– կոծում էր Ասոյի կինը,– ո՞ւր թողեցի՛ր բալեքդ, ես ինչպես պահեմ, ել, զարթնի՛ր, անաստված, ձեն տուր,

խոսիր, ձենիդ մեռնեմ, իմ թագ ու թագավոր, ինձի ո՛ւմ թողիր»:

Ուստի սրտին արյուն էր կաթում, ներս մտավ. խնկի ծուխի մեջ տեսավ կարպետի մեջ փաթաթած Ասոյին, որի գլուխը ճերմակ պատանքում՝ պառկեցրել էին գետնի վրա, չուրջը ժողովվել էին կինը, ծերերը, դոքանչը և դյուղացի կանայք: Ուստային տեսնելով կինը ձայնն ավելի բարձրացրած ողբալով «Տե՛ս, աչքերդ բաց, քո ապիդ ընկեր Ուստա Կարոն եկել է. վա՛խ, աման, Ուստա ջան, էս ինչ բան էր եղավ – Ասոն չկա, Ասոն չկա, անուշ Ասոն չկա, Ասոն մեռել է, վա՛յ, վա՛յ, վա՛յ» կանչեց: «Հերիք լա՛ս, հերիք լաս, խնդճ ես, մեղք ես, բալեքիդ խղճա՛, լացով Ասոն չի կենդանանա, ինչ քեզ կջարդիս, Աստծուն հակառակ բան կանես»: Կարոն լուռ էր, հանդիսավոր լուռ, մոտեցավ, ծնկի եկավ, խաչակնքեց ու դարձավ կինը. «Քո՛ւր ջան, Աստուծով մխիթարվիս, Սուրբ Հոգին մխիթար լինի, ձեռներես ի՛նչ կուգա, Աստուծո կամքն է, ամենքս էլ մահկանացու ենք. ով ապրի, թող պարծենա. վա՛խ, Ասո ջան, վախ, կուրանայի՝ քեզ էսպես չտեսնեի»: Նորից սկսեց լայ լինել, Ասոյի կինը նվաղած ձայնով, դունատ, աչքերը ուռած ընկավ մեռելի վրա, կանայք ուժով վերցրին վրայից:

«Շողո ջան, աղչի, անոթի եմ, կերակուր չես եփել էսօր». գոչողը Ասոյի կիսախելագար մայրն էր (Օսկանի մայրը):

Ուստան մի քիչ էլ կանգնել, մտածում էր, նայելով դիակի վրա, թե այսպես է աշխարքը, մարդու ճակտի գիրը, ամենքս էլ պիտի մեռնինք. մի օր այսպես մեզ էլ պիտի փաթթեն կապերտով ու դնեն գետին. անշարժ, սառած, դեղնած, վրաղ պիտի լան, հետո պիտի դնեն հողի տակ, ծածկեն ծանր հողով. մեծ քարը վրեդ. գնա՛ այնտեղ մութ հողի տակ, եղի՛ր ճիճուներին կերակուր, հոտի, փթի,

հող դարձի. ինչո՞ւ համար էր աշխարհը, կյանքը, արևը, անուն, աշխատանք, սեր, կռիվ: Ուստայի սարսափը սիրտը սեղմեց, ուրեմն ինքն էլ էսպես է մեռնելու – ինքը՝ Ուստա Կարոն. հենց ինքը, հայտնապես Ուստա Կարոն. անպատճառ, պրծում չկա, մի օր, մի քանի տարի հետո, դուցե մի տարի չքաշած. ինչ տարբերություն կա Ասոյի և Կարոյի միջև. ոչինչ. մի կարճ ժամանակի. և դեռ Ասոն բախտավոր է, որ վրան լացող ունի, իսկ ինքը – մենակ, ոչ մի սրտանց լացող, ոչ մեր, ոչ քույր, ոչ կին, ոչ զավակ, մենակ Հերոբը...

Աչքերը խավրեց, ծնկները ծալվեցին ու նստեց սյունի տակը. կարճ թե երկար տևեց այս դրությունը, մեկէլ մի տաք, հայտնի զգացում վառեց Ուստայի արյունը, մի ուժ գարթնեց մեջը, թե ինքը՝ ուրիշ – Ասոն – ուրիշ. ինքը չի մեռնի, ինչո՞ւ պիտի մեռնի. իսկի հավատը չի գալիս, թե ինքը – պիտի մեռնի. կարծես թե Ասոն էր դատապարտված մեռնելու, ինքը՝ ո՛չ:

Եվ կամացուկ դուրս եկավ տնից.– մտավ այվանը, ուր հավաքված էին գյուղացիներ, տերտեր, տիրացու և պատրաստվում էին մեռելը ժամ տանելու. մոտեցավ, համբուրեց Ասոյի ծերունի հոր ձեռքը «դուն ապրիս» ասելով, համբուրեց տերտերի ձեռքը և նստեց գյուղացիների մեջ: Մեկը նրան ծխախոտ պատիվ արավ, ծխեց, և ասես, սրտի մեջ եղած ճնշող բոլոր զգացմունքը ծխի հետ դուրս ելավ. հանգստացավ Ուստան, բայց իհարկե նորեն չա՛տ տխուր էր:

7. ԱՍՈՅԻ ՄԱՀՎԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուստան Ասոյենց տանից դնաց Հարութի մոտ: Ճանապարհից քիչ հեռու, գետակի ափին, նստեց մի քարի վրա,

խորհում էր տխուր-տխուր: Ի՞նչ է կյանքը, մարդը – էսօր կա, վաղը՝ չկա: Ունայնություն: Արևին նայեց – ունայն, դարտակ բան. ամեն ինչ դարտակ թվաց նրան...

Մտքերը ցրվեցին, անվերջ անդամ, անդիտակից, մեքենաբար կրկնում էր միևնույն խոսքը՝ մի խոսք: Օրինակ, «Կնկա ձենը, կնկա ձենը» կամ մի այլ բան. (Ղարս պտի էրթար):

Երկար նստեց, քշված՝ գետի ձայնը նրա մտքերը տարան, տարան: Սթափվեց, իրան հավաքեց և քայլեց Հարությի մոտ:

8. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀԻՆ

Ասոյի տնից հեռանալիս՝ Հարությի մոտ գնալիս, նստեց մեկուսի, մի քարի վրա, խորհում էր, չէր խորհում, մեկ խորհում էր, մեկ ապուշ, առանց մտքի, նայում ջրին (գետափին նստած)...

Ուրեմն մի օր էլ ինքն է մեռնելու, իրան համար էլ բերելու են նաչը՝ պատն ի վեր տնկելու... Դնելու են նաչի մեջ, թաղելու են հողի մեջ... և ո՞վ պետք է վրան լաց լինի, ոչ Լիին ունի, ոչ եղբայր, ոչ տղա... Ջավուշը մենակ լաց կլինի, Հարությը... գուցե Օսկանի ընտանիքը...

9. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ ԽՈՀԵՐ

Ուստան տներ չինելիս, հոր փորելիս պատահել է մարդկանց կմախքների, զանազան ոսկորներ, գանգեր: Հակվել է նրանց վրա, դիտել, խորհել, զգացել – չոչափել կյանքի ունայնությունը, ոչնչությունը: Հիմա պատկե-

բայրից, որ տարիներ հետո Աստո էլ լինելու է ոսկոր, դանկ, փշած... և ինքն էլ, Հարութն էլ, Զավուշն էլ, ամեն, ամեն մարդ էլ, ողջ աշխարհն էլ:

10. ՀԱՐՈՒԹԸ

Մտածում էր մահի մասին:

Տեսավ իրեն մեռած, տեսավ, որ իր մազերը, ճակատը, աչքերը, քիթը, բերանը, ականջները, վիզը... մինչև ոտները կամաց-կամաց փչրվում են և դանդաղորեն հող դառնում, փոշի, փոշի, խառնվելով անծայր փոշու մեջ՝ որ լցվել է, բռնել արար-աշխարհ. ամեն բան փոշի է դառել – մարդ, Աստված, սար, ծով, արև, աստղեր...

– Մահն է հզորը, մահն է իմաստությունը: Ամեն բանից հզորը:

11. ԿԱՐՈ-ՀԱՐՈՒԹ

– Թեև մահը անկարդ կերպով զարկում է էստեղ-էնտեղ, մեկ ջահելին, մեկ պառավին, բայց Աստված իր հաշիվը գիտե: Մահի դավթարի մեջ գրած է՝ ամեն մարդ իր փոսը պտի լցնե Աստծուց նիշան արած ժամանակին: Էդպես որ չեղներ, պառավները սրտաճաք կեղնեին, բայց Աստված ինչպես է մարդկանց առաջ հաշիվը խառնել, որ ամեն մարդ ինչպես գիտե՝ թե ինքը հաշվից դուրս է, անունը չկա դավթարի մեջ:

Աստծու գործերի մեջ մի խառնվի՛ր...

– Ապրելու սովորությո՞ւն ունենք, մեռնելու՝ չէ: Քանի շատ կապրինք, էնքան կսորվինք ապրելու, էնքան կհեռանանք մահեն: Պառավ մարդը, իր սրտի ասելով, ամենեն հեռու է մահեն:

12. <ԵՐԲ ՀԱՐՈՒԹ ՄՈՏ...>

Երբ Հարութի մոտ խոսեցին Ասոյի մահի մասին, թե առողջ մարդ էր, քնվը տեղը, չազ, հաստլիկ... ջաղացպանը (Գոգորը) ասաց.– Ըպը, հպը՛, էդման է. Թոկի բարակը կկտրվի, մարդու հաստը:

– Մառը տնկեցիր, պտուղը չկերար, Աստ ջա՛ն:

13. ՀԱՐՈՒԹԸ

– Մարդը հնչ է անսահման տիեզերքի մեջ, բայց մահվան վախի նրա տանջանքը տիեզերքի չափ է:

14. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

– Երբ Հարութն ասաց թե՝ հիմա Ասոն գետնի տակն է և որդերը սկսել են գործի, կարոն վախեցած ասաց – Դրուստ է – բայց մարմինը, իսկ հոգին հիմա երկինքն է, ի՞նչ է, չես հավատում հոգուն:

Հարութը թև – չէ: Հետո մտածելով՝ հաստատ չգիտեմ, հոգի կա՞, թե չկա: Սողոմոնը կըսե՝ չկա: Մարդը անասունի պես է, կմեռնի, կանցնի, խոտի պես է: Կարոն թե՝

անաստւնը հոգի չունի, նրա ունեցածը – չունչն է: Հոգի կա, որ կխոսինք, կմտածենք: Հոգի կա անպատճառ:

15. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Գիտես թե ոչ եկել է, ոչ գնացել. գնաց խառնված հարար տարվա մեռելներու հետ:

Աշխարքը դանակ է, կկտրե մարդկանց կյանքը, քանի կկտրե, էնքան կսրվի:

16. <ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԼՈՒՐԸ...>

Ասոյի մահի լուրը տալուց հետո, Կարոն և մյուսները աշխատում են Հարութին խոսեցնել, որ պապանձվել էր, ծիծաղեցնել, խմեցնել. և մի պահ հաջողեցան:

17. ԱՍՈՅԻ ԴԻԱԿԸ

Նաչը դրած էր դուրս պատն ի վեր. երեխաները դուռը կանգնել էին՝ մոլոր... մեկը իր հագուստի փեչն էր բերանը դրել ծծում. չները տխուր կուչ էին եկել պատերի տակ, զգալով:

Ասոն պատանքած ու փաթաթած մի կարպետի մեջ դրած էր գետնին, կանայք բոլորը նստած, գլխի վերևում կին...

18. ՀՈՌԵՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ ԿՅԱՆՔԻ, ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ ԱՍՈՑԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

– Էսօր կանք, էգուց չկանք:

– Քեֆ արա, մեռնել կա:

– Մեռնելուց հետո է՛լ գեղ չկա:

– Աշխարքն ինչպես բոնես, էնպես էլ կերթա:

– Աշխարքն էսպես եկել է, էսպես էլ կերթա:

– Երկու օրվա աշխարքի համար արժե՞ գնչ ու լավ լինել (կռվել, տանջվել):

– Աշխարհը հինգ օր է, հինգն էլ՝ սև:

– Աշխարհը մի փանջարա է, ամեն եկող կաչև, կերթա:

– Ամենքիս վերջի տունը էնտեղ է (գերեզման):

– Ամենքս էլ էնտեղ կերթանք:

– Մահից ազատում չկա:

– Էս ուղտը ամենքի դռանն էլ պտի չոքի:

– Հող էինք, հող պտի դառնանք:

– Անցավոր աշխարհ,

– Փուչ աշխարհ,

– Փուչ իսան:

– Հողեղեն:

– Ճիճուների կերակուր ենք վերջը:

– Անցած օրին օր չի հասնի:

– Երեկ էսօրվանից լավ էր:

– Էգուցվա տերը Աստված է:

– Հա՛ եղել ես, հա՛ չես եղել, հաշիվը մեկ է:

– Ի՛նչ պտի տաննես աշխարքից:

– Ո՞վ է բան տարել աշխարքից (որ դու տաննես):

– Մերկ եկել ենք, մերկ էլ պտի գնանք:

– Ով՞ հետդ գերեզման չես տանելու:

– Մի կանգուն կտավ, մի թիզ հող. էդ է մեր բաժինը:

– Աշխարքի մալը աշխարքին կմնա:
– Մահկանացու ենք. ով որ մնաց, թող պարծենա:
– Աշխարհը նրաղ է:
– Աշխարհը սուտ է:
– Մարդու կյանքը մազից է կախված:
– Մահը ականջի հետև ենք քցել[1]:
– Մահի առջև ամեն մարդ հավասար է:
– Իմ մահով իմ փայ աշխարհը քանդվավ:
– Աշխարհանցումը մեր մեռած օրն է:
– Ինչի՞ կտխրես, մեռնել կա:
– Լալով կուգանք աշխարք, լալով կերթանք:
– Թև որ պիտի մեռնեինք, էլ ինչո՞ւ ևկանք աշխարհ:

Ասոյի մեռած օրը գյուղացիները նստել էին նրա հոր մոտը և ժողովրդի իմաստուԹյուններն էին ասում (այս մտքերից դնել այնտեղ):

Նույն իմաստուԹյուններն ասվեցին և ջաղացում, ՀաբուԹի մոտ:

Նույն իմաստուԹյուններից էլ զանազան տեղեր:

19. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԱՌԱՋ

Ուստան երկու անգամ զգում է մահի գաղափարը, մեկը Սանամի մոտից հեռանալիս (Լորիկի բաղից) և մյուսը Ասոյի մահի դեպքում: (Ծերունիներին՝ ի տես նույնպես մտածում է մահի մասին):

---

[1] Ըստ առասպելի, Աստված մահը միշտ մարդու աչքի առաջն է դրել, որ հիշի միշտ, տեսնե: Բայց Աստված տեսնելով, որ մարդը այդ չի կարող տանել, աչքի առջևից առաջ, ականջի հետևը քցեց, որով մարդ կարողացավ ապրել:

Այս դեպքերը համեմատել իրար հետ չկրկնելու համար ասածները:

Ասոյի պարագային, մտածելուց հետո ասում է –

«Աշխարհին ինչ, էս էլ ննջես» – և ուղղվում է դեպի Հարութի ջաղացքը:

– Ասոյի մահին Ուստան լուռ լսում էր այցելողների, դրացի ծերերի և պառավների փիլիսոփայական մտքերը, որ ասում էին հորը և մորը մխիթարելու համար.

– Մահը մերն է:

Աշխարհով է:

Մանկության մեղքը երեսովը չտա:

– Բա ինչ անե ջրատար Մամբրեն, մեկուճար տղին կայծակը զարկավ... և այլն:

Ուստան լսում էր կնոջ ողբագին ձայնը և մոր ծանր հառաչանքները...

20. ԵՐԵՔ ՏԱՊԱՆԱԳԻՐ

Ուստան ասաց մի օր (Ասոյի մահի օրը, մի այլ անգամ...), թե մի գերեզման կար, վրան դրած էր, կարդացողն ասաց.

«Ինձի տես, քեզ լաց,
Որտեղ որ ես՝ ամուր կաց»:
Մի ուրիշն էլ.
«Ես չեմ ըլնի քեզի պես,
Դուն կըլնիս ինձի պես»:
[Մի ուրիշն է. «Կայի, չկամ»:

Հարութն ասաց. – Ես էնոր տեղը լինեի, կավելցնեի. «Կայի, չկամ, էլ չեմ էղնի էս աշխարհում»:

Ջավուշը. – Հերս ասաց [Ստամբոլում] կա մի հատ.

«Ես կասեի թե ես եմ
Ով որ կասե թե ես եմ,
Կրնեն ինչքան որ ես եմ»:
(Արանք հարմարեցնել, ներդաշնակել, համոզիչ չինել):

21. ԱՍՈՅԻ ԳԼԽՈՒՄ

– Մերկ եկավ, մերկ դնաց, աշխարքեն կողոպտված. կողոպուտի մի մասը կտան աղքատներին, մեծ մասը իրենք կվերցնեն:

– Իսօր Ասոն, էդուց մենք – էս է ողջի ու մեռելի միջի պանապանությունը կամ էդով կջոկվենք իրարուց:

– Էս սև քարվանը ամենի դուռն էլ պիտի իջնի: Աստված խելք է տվել, որ մայր մտնե ու հաչտվի. սիրտը հուր է, խելքը ջուր:

– Աշխարքը երկու օր է, մեկ կարմիր՝ մանկություն, մյուսը սև – ծերություն:

– Ասոն հանկարծ մեռավ. չկարողացավ մի խոսք ասել կնոջը, ծնողներին, երեխաներին, եղբայրներին. չկրցան իմանալ սրտի ցավը, սրտի կամակը. ի՛նչ դարդից մեռավ... Եկավ տուն, սիրտը բռնեց, վա՛յ, վա՛յ, ասավ ու մեռավ: Կարոն լսեց և ասավ.– Լավ որ էդպես եղավ. բա՞, ինչքան գնչ կլիներ, որ զարկվեր կամ օձը խայթեր, կամ սելի տակ ընկներ. էլի փառք Աստուծո, որ իր մահով մեռավ:

Մարդիկ կարծում են, թե եթե մեկը թույնից է մեռնում, ավելի վատ կլիներ եթե հրդեհի մեջ այրվեր: Մխիթարվել պետք է՝ որ թույնից է մեռել:

– Կնիկը երկեն լեզու ունի,– ասաց մեկը Տիկոռում:

– Ա՛խ, թող անծեր լինի, բլբուլի պես խոսա, չհատնի,– ասաց Կարոն:

Ասոն նստել հաշիվ էր տեսնում, մյուս օր պիտի կաղզվան երթար. հաշիվի մեջ մնաս:

«Էդպես է,— Հարությը լսեց ու ասաց ինքնիրեն,— մահը մեր հաշվի մեջ չէ, մենք ենք նրա հաշվի մեջ»:

22. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Ուստան Ասոյի մահի տակ, գյուղից դուրս, Հարությի մոտ փախչելիս, նստեց մի քարի վրա և մտածեց, մտածեց, մտածեց...

Ունայնություն, տխրություն, խավար...

Տեսավ մի քանի մանուկներ խաղում են, վազում են... Տեսավ երկու աղջիկ խնդումներես անցան, իրար բռթելով. մի երիտասարդ անցավ եղն առջևը ձգած, տեսավ նրանց, գդակը թեքեց ականջի վրա, ժպտաց նրանց ետևից... և ուրախ-ուրախ անցավ:

«Կյանքը մահեն ուժով է». ասաց և ոտքի ելավ:

23. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Կարոն գնաց, կոտրված ոտքերով, ակամա, աննշեցյալի տունը: Տխուր, հուսահատ լացի ձայների հետ խունկի մահահոտն առավ: Մոտեցավ տանը: Տեսավ, ժամկոչ Ղզրոն չալակից իջեցրեց նաշը և պատն ի վեր տնկեց, դռան կուշտ, և ինքը ճակտի քրտինքը սրբելով նստեց նաշի մոտ, պատի տակ, փափախը գետնին դնելով:

Ասոյի հայրը նստել էր մխիթարողների մեջ, աչքերը լայն-լայն բացած, անթարթ նայում էր մի կետի. չէր խոսում, չէր լսում, բայց մեքենաբար ականջ էր դնում:

Մի ցավակից գյուղացի ասաց... ծանդր, չքաչվելիք ցավ է... սրտի մրմուռ... է՛, է՛հ... ցավ կա, կուգա կերթա, ցավ կա, սիրտը ծակե, կերթա: Տղի մահը էս ցավեն է, սիրտն էլ կմեռցնե...

Մի ուրիշն ասաց. (իրար էին ասում, ցած, վախեցած ձայնով, այն ձայնով, որ մարդիկ խոսում են մահվան ներկայությանը,– Հերը մեռնի, տղի սրտի վրա մենձ վերք կբանա, որն երթալով, երթալով կպզտիկնա – կխափանվի, կմոռացվի: Տղեն մեռնի հոր առաջ, հոր սրտի վրա պստիկ վերք կբանա, որ երթալով, երթալով կմեծնա ու կմեծնա, չի գոցվի վերքը, ու դերեզման կտանի վերջը: (Այնպես էին ասում, որ ծերունին չլսե):

Մի-երկուսը ծերուկին մխիթարելով ասում էին.– Տիրոջ կամքն է, փառք ողորմությանը, դեռ Ասոն իրան տան մեջ աչքը փակեց, մեր գեղերից էնքան չահելներ կուվի թոփի բերան մեռան, անգերեզման... էն տարի քեռիս երիտասարդ տղեն կայծակը զարկավ... Ուրիշը.– Օձը խեթեց՝ ուռավ մեռավ, մեկ ձեն երկնքին էր, մեկ ձեն գետնին... խեղդվեց, սելի տակն ընկավ, գլուխը, ջանը, վիզը տակովը մնաց: Եվ ուրիշ արկածամահեր:

Ուստեն մոտենալով համբուրեց ծերուկի ձեռքը. ծերուկը նրան տեսնելով աչքերը լցվեցին, շրթները դողացին. հազիվ ասաց, կարո, քու ազիզ ընկերը ո՞ւր ա... ո՞ւր ա...

Կարոյի աչքերն էլ լցվեցին: Լռեց Կարոն:

24. ԱՍՈՅԻ ՏԱՆԸ

Ուստան գնաց Ասոյի այվանը. նստել էր սգավոր հայրը և լուռ մխխում էր: Գյուղացիները մխիթարում էին նրան ասելով.

– Էլի փառք Աստծու: Լուսահոգի Ասոն մնում էր իրենն տունը, իրան օճախի առաջ. բա մեր խնդճ Գալուստը՝ կեծակը զարկավ, կապուտցավ:

Իսկ մյուսը – Տոնոյենց Բարսեղը՝ բուք-բորանին սառավ խեղդվավ:– Համբոյենց Սեթոն՝ Արագի մեջ խեղդվավ... Խնկոյենց Աբելը սելի տակ ընկավ՝ վզի վրայով սելն անցավ, մեռավ: Այսինչը միայն սառավ, մեռավ, մեկէլը՝ բարակացավ ընկավ, հազաց, հազաց, արուն փսխեց, մեռավ... Ասոն բախտավոր էր, ողջ առողջ, առանց իմանալու, ամանաթը Աստծուն տվավ, ազատվավ էս փուչ, անցավոր աշխարքից:

25. ԿԱՐՈՆ ԵՎ ԱՍՈՅԻ ՄԵՌԵԼԸ

Կարոն բաց դռնից նայեց տեսավ՝ [Օսկանի (ուրիշ է անունը, մոռացել եմ] Ասոյի մեռելը, որ դրել էին [կարպետի վրա] հասկերի վրա կարպետի մեջ փաթաթած՝ և լաց են լինում վրան. սարսափեց առաջին նվադ... մտածեց, որ մի օր էլ իրենն է հերթը, անպատճառ. ուզեցավ երևակայել, բայց չկարողացավ պատկերացնել, ներկայացնել իր աչքերի առաջ իր մեռելը, իր դիակը: Մի ներքին ձայն նրան հաստատապես համոզում էր, թե դու չես մեռնելու, ուրիշներն են մեռնելու, քեզ համար չէ այս բանը...

26. ԿԱՐՈՆ ՄԵՌՆՈՂ ԱՍՈՅԻ ՄԱՍԻՆ

– Հարութ չան, երեկ իրիկվա դեմ Ասոյին տեսա, ըսավ Ղարս պտի երթամ, ուրախ էր, ըսավ, երթամ Ղարս, գամ, մի լավ քեֆ անենք: Քեզ էլ բարև ղրկեց. «Այ

մարդ, հնչ մտքովը կանցներ, որ մի կես օր հետո մեռած պտի լինի, ու Ղարսի տեղ գերեզմանի մեջ:

27. ԱՍՈՅԻ ՄԵՌԱԾ ՕՐԸ. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ

Մեկն ասում է, թե գրած է մի գերեզմանի վրա.
Ինձի տես, քեզ լաց,
Ուրտեղ որ ես, ամուր կաց:

28. <ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԱՌԹԻՎ...>

Ասոյի մահի առիթով, ջաղացքում. Ուստան Գոգորին ասաց. «Քեռիս, որ կարդացվոր մարդ էր, մեռնելուս ասաց. Մեկ տարի ժամանակով վրաս քար չքցեք. էն աչխարքից իմ կողմանե մեկ լուրի սպասեցեք. թե լուր ղրկեցի, որ էնդիի աչխարք կա, էսդիի աչխարքի հետ հաչիվներդ իստկեցեք եկեք, էնդիի աչխարքում ապրելը ավելի լավ է, քան էսդիի. թե որ մեկ տարի ժամանակը անցավ, լուր նչան չառաք, վրաս քար քցեք, վրեն գրեցեք – «Ինձ տես, քեզ լաց, որտեղ որ ես, ամուր կաց» –

Լուր չեկավ, քարը քցինք էդպես:

29. ԱՍՈՆ

Նա հաստ մարդ էր, գեր, չա՛տ ուտող, չա՛տ ծխող և դրանից էլ կաթվածահար եղավ:

Երբ Ուստան Գոգորից լսեց նրա մահը, ասաց.– դրուստ եղավ հին խոսքը. չվանի բարակը կկտրվի, մարդու հաստը:

30. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԱՍՈՆ

Երբ Ուստան աշխատում էր Տիկորում, պատահեց Ասոյին, իրար ջան ու դուրքան եղան, քնֆ-հալ հարցրին:

– Առողջությունդ ինչպես է,– ասավ նա:

– Լավ եմ, Ուստա ջան, դո՞ւ:

– Ես էլ, բողկի պես:

– Դարս պիտի երթամ, գործ ունեմ, երթամ-գամ, դոմս պտի մեծցնեմ... Ուստա ջան, ուրիշի խոսք չտաս:

– Երբ պիտի երթաս:

– Էգուց չէ մեկէլ օրը, երկու-երեք օր պիտի մնամ:

– Մեկ չաբաթ հետո՝ ծառադ եմ:

Եվ էգուց չէ մեկէլ օրը Ուստան լսեց նրա մահը, հանկարծի մահ <...>

31. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Ասոյի տնից երբ Ուստան մեկնեց և գնում էր Հարությի մոտ, նստեց ճամբին մի քարի վրա և խորհում էր. մահ, անցավոր աշխարհ, ունայնություն, ինքն էլ <է> մեռնելու, ամեն ինչ իզուր է, սուտ է, դու էլ անպատճառ պիտի մեռնես, էսօր, էգուց... և սարսափեց: Բայց, հանկարծ սմքած հոգու մութ խորքերից վազեց, ելավ, պոռթկաց մի տաք, զվարթ զգացում, որ կյանքի երգն էր, արևի պես վառ ու պայծառ, ավելի ուժեղ, քան մահի զգացումը, կյանքի սերը – ապրել, ապրել, ապրել...

Եվ զվարթ վեր կացավ, ասաց. վառք քեզ, Աստված, քանի որ դու կաս, իսկի վախ չունիմ, դու իմ ապավենն ես:

32. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Երբ Ջավուչն հայտնեց (կամ մի ուրիշը) Ասոյի մահը, Ուստան հետո, մի լուռ պահից, հարցրեց.

– Եռև՞:

[– Եռև, ըչտև, ըչտև մեռավ:]

Ուստան նորից, կարծես, չհասկացավ.

– Եռև՞:

– [Էլ ի՞նչ եռև] Մեռնելուց դենը, էլ ի՞նչ եռև:

33. <ՈՒՍՏԱՆ ՆԱՅԵՑ...>

Ուստան նայեց Ասոյի նաչին, մտածեց, որ մի օր էլ իրեն պիտի դնեն նաչը, կարծես, տեսավ այդ պատկերը – քիթը մոմոայ և արցունքը հավաքվեցին կոկորդում...

34. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ

Այնինչ ուրիշները պիտի կյանքը վայելեն, ուտեն, խմեն, քեֆ անեն. կնիկ, պար. երդ, ձի, գինի...

35. <ՈՒՍՏԱՆ ԵՐԲ ԼՍԵՑ...>

Ուստան երբ լսեց Ասոյի մահը, երես խաչակնքեց ասելով.– Աստված ողորմի հոգուդ:

ԱՍՈՅԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Ուստան դանդաղ քայլերով մոտեցավ Հարութի տունտուեղին, նայեց չորս կողմը, մարդ չէր երևում. ջաղացի բաց դռնից ալյուրի բարակ, նուրբ փոշին դուրս էր մղվում. մոտեցավ, նայեց ներս.— ջաղացի աղոտ լույսի մեջ երկու աղորիքն էլ դառնում էին, և օրորի պես դաշն ու միօրինակ չխկչխկում էին ջախջախները. Հարութը տաբածվել էր պարկերի վրա, քիչ հետու վարպետ Գոգորը մի դյուղացու հետ ալյուրի մանրուքյունն էին պննում:

Ուստան մոտեցավ Հարութին ու մեղմիկ չչնջաց ականջի տակը՝ նստելով պարկի վրա:—

— Հարութ, Հարութ ջան:

Հարութը աչքերը տրորեց թարթիչները կես բանալով:

— Դու ես, Կարո ջան:

— Հա, ես եմ, քեզի մատաղ, ի՞նչ է քնա՞ծ էիր:

Հարութը չիտկվեց, նստեց պառկած տեղը և նայելով Ուստայի երեսին, ասաց.

— Կարո ջան, չա՛տ ամպած կերևաս, օրթե սանամորներիդ հետ չե՞ս կռվել:

— Չէ, Հարութ ջան, գլուխս կցավա. ձեռքս գործի չէր կպնի, քովդ եկա:

— Էսաեղ գալեն ավելի բան չէիր կրնա մտածե, իմ ջաղացս քո ամեննեն դուբնկան քարվանսարան է, չէ՞, Կարո ջան,— և ժպտուն աչքերով նայեց Ուստային, բայց սա անտարբեր էր,— օրթե էս արադը խմես, ցավը կանցնի... և ձեռքը մեկնեց չիշին, որ պարկի տակ դրած էր և ձայն

ավեց.— Գոգոր, տո, ազրակցի հայ, արաղի հոտը չեք առնի, էստեղ արեք:

Արդեն Գոգորը քայլ էր առել դեպի նրանց, ազրակցին հետևից նրան, բարևեցին Ուստային և նստեցին նրանց մոտ. Ուստան արաղի դարդակ բաժակը [ավեց] վերադարձրեց Հարությին, որը հերթով օղի հրամցրեց մյուսներին.

— Հարութ, պաչեմ պիտի քեզի. գնացի հորդ տունը, ապիղ մորդ տեսա, աչքերը թրջեց մի քիչ, ինձի պաչեց, ասավ, որ քու երեսդ կարոտով պաչեմ. անուշ Հակոբիկիդ տեսա, տղամարդ է դառել. կիրակի օրը գաթայով տնեցիք քեզ տես պիտի գան. քաղցր բան է մեր ունենալը, օրթեի օրթին:

— Մերը լավ բան կըլներ, օրթեն կնիկ չըլներ:

— Էլի ճղեն էլար, խելառ. մենակ մեր ունենալու համար արժեր էս աշխարքը գալ. ի՞նչ ասիք խոսքիս,— դիմեց մյուսներին:

— Դրուստ խոսք է, Աստծուն է հայտնի,— վկայեցին նրանք:

Հարութը պատասխան չավեց. Ուստան ուզում էր Ասոյի մահը հայտնել, սիրտ չէր անում. մի պահ լռեց, ապա հենց առանց մտածելու ասաց ինչ որ լեզվին եկավ:

— Հարութ ջան, էդուց շաբաթ է, բանթողի օր է, երթանք սարը ման գանք, երթանք ձեր յայլեն. ծաղիկների վրա, աղբյուրների գլուխը ձեռաց պստիկ քեյֆ մ'անեինք, հա՞:

— Հա՛, ի՞նչու չէ, երթանք, մի բան, որ մահ կա, աշխարքն անցավոր է:

Մեկ էլ հանկարծ կարոյի բերնից դուրս թռավ.

— Հա՛, էդպես է, անցավոր է,— ու մեկ էլ... Բա չե՞ս ասե մեռավ, Ասոն մեռավ...

Հարութը կարծես չհասկացած կարոյի խոսքերը, պապանձված նայեց նրա երեսին:

– Հա, էլի, մեռավ մեր բնկեր Ասոն, մեր լավ Ասոն:

Հարութը գլուխն առավ ափերի մեջ և փչրվեց ինքն իր վրա:

– Ի՞նչեն մեռավ խեղճը. առողջ մարդ էր, Աստված ողորմի հոգուն,– հարցրեց Գոգորը:

– Առավոտ, նստած տեղը, խոսքը բերանը. Ղարս պիտի երթար, մեռավ...

Եվ կցկտուր պատմեց լսած մանրամասները:

– Վա՜խ, Աստ ջան, վա՜խ... խորունկ հառաչեց Հարութը,– և լցված աչքերը սրբեց չուխայի թեզանիքով:

– Ջուր է, դուր, ի՜նչ դարդ կննեք,– ասաց Գոգորը,– ամենիս ճակտի դիրն էս է. ծնվողը պիտի մեռնի, եկողը պիտի երթա, որը չուտ, որը մի-երկու օր ետև, հաշիվը մեկ է, խմենք Ասոյի ողորմածաը:– Եվ ինքն իր ձեռքով լցրեց բաժակները:

– Էրնե՛կ իրան, արդար էր, մեռավ. ապատվավ էս փուչ աշխարհքեն, ի՞նչ տալիք ուներ տապկվելու. մենք որ կմնանք, ի՞նչերս է ավել.– չարքաշություն, հոգու կրանք, վերջը էլի էն տեղն է, քանի չուտ, էնքան լավ,– ասաց ադրակցին և բաժակը արագ կերպով կործնց բերնի վրա, ախորժակով:

– Ջահել էր, մանր ու խոշորի տեր էր, լավ տղա էր, լավ ընկեր էր,– ցավով ասաց Ուստան,– ափսոս էր, ափսոս, ծաղիկ-ծաղիկ սև հողի տակ գնաց պառկավ:

Հարութը լուռ էր, դլխակոր, աչքերը սևեռել էր գետնին և արագի բաժակը լիքը մնացել էր ձեռք չտված:

– Հարութ ջան, ի՞նչ ես քշվել, ցմքել, հավի ճապ ես դառել, խմե՛, տո՛, մահու խոսքը իակի չէ՞իր լսել. առաջին հեղն է, ի՞նչ է. երեխա՞ ես, աշխարքի մեջ օրական ան-

թիվ-անհամար մարդ կմնանի, ամեն մարդ իր փոսը պիտի լցնեն, վախնալու ի՞նչ կա. քանի վախնաս, ավելի չուտ կմնանիս, ահը վեր է քանց մահը:

– Էդպես է,– միջամտեց Ուստան Գոգորի խոսքին,– մեռնակ մոտիկ մարդու մահը մեզի մահը մոտիկ կերևցնե:

– Ես ձեզի էդքան երեխա չէի դիտի,– և աչքով նշան արեց Ուստային, հասկացնելով, որ տխուր բաներ չխոսի...– բան չունիք, ինչ ձեռոք կենեք, արժե՞ աշխարքի համար էսքան տխրել, դարտակ բան է, ինձի աշեք, առանց մեր կամքի աշխարք ենք եկել. քեֆով, կեր ու խումով, հարսներ պահելով դուրս գանք էս աշխարքեն. ի՞նչ էինք բերել, որ ի՞նչ կորցնենք, մե՞ջն ինչ ունեինք, հեչեն ենք եղել, հեչ էլ կդառնանք. հերդ թե որ էդ իրիկուն ուրիշ գեղ քնած ըլներ, դու արևի երես չէիր տեսնի. խմե՛, Հարութ ջան, դառս, անուշիկս, տնկլիկիդ մատաղ: (Գոգորի խոսքերի վրա Հարութի երեսով ակամա ժպիտը անցավ) Վարպետը արաղը ուժով խմցրեց Հարութին, գրկելով ոտքի հանեց ու թևից բռնելով տարավ ջաղացի սենյակը, ձայնելով.

– Ուստա ջան, օճախը վառե, ես էլ հավ մորթեմ, լավ ճուկ էլ ունենք, լավ դիշեր անցնենք, Ասոյի հոգու հացն ուտենք, քեֆ էրե՛ք, քանի ողջ եք, մնացածն Աստված ողորմած է...

Գոգորը գնաց. Ուստան և Հարութը սենյակում մնացին միասին, պապիրոս չինեց իր և Հարութի համար, մինչնույն ժամանակ օճախը վառելով, ապա նստեց Հարութի կողքին, և մի պահ լուռ ծխում էին:

– «Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի, այնպէս ծաղկէ, չնչէ ի նմա հողմ, և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա».– խորին թախծությամբ արտասանեց Հարութը և առանց նայելու Ուստային, ասաց,–

Դավիթ մարդարեն ամենեն ճշմարիտն է ասել,– էհ, Ուստա, խոտ է մարդը, կհասկնաս, ա՛խ, դեղ բան է մահը, անպատիվ բան է մարդու համար, լիրը բան է մահը, դեղ Աստծու սարքած բանն է, մարդուն թշնամի Աստծու սարքած բանն է. մի քանի տարի դեղ-լավ ապրել, կերածը քթեն դուրս բերել, հետո տանել հողերի մեջ հավիտյան փթեցնել...– կատաղի հուսահատությամբ ասաց Հարությը և ձեռքը մեկնեց արապին լցնելով բաժակը և մի կումով խմեց.– (Կարո, մենակ մեռնելը չէ դեղ բանը, ծերությունն էլ շա՛տ դեղ է. ուրիշի ձեռքին կարոտ կմնաս, աննեցոց, տղոցդ աչքեն կընկնես, ինչքան էլ ապիղ ըլնիս, կասեն, ե՞րբ պիտի իսակվի...)[1]

– Էհ, Հարությ ջան, թո՛ղ, անիծած աշխարքի հերն էլ. զարկ, թափե, անցի գնա, ուրտեղ կարավ կապը, անիծեմ տիրու պապը:

Գոգորը ներս մտավ ձկները ափսեի մեջ. ջուրը դրեց կրակի վրա, [և սկսեց] ձկները խաշելու համար:

– Մոռացա հարցնել, Ջավուշն ո՞ւր մնաց:

Ուստան բացատրեց:

– Մրոան էլ էսօր դեղ գնաց, առավոտ կղառնա, ագրակցին հավը կիսակի,– խոսեց յուրովի Գոգորը, աչքի տակով դիտելով Հարությին: Գոգորը [տեսնելով, որ Աստյի մահը տխրեցրել է / տխրեցրեց Հարությին, որոշել էր նրան] որոշել էր մի քնի սարքել, որ Աստյի մահվան թողած տխրությունը հեռացներ. «Էս դիշեր որ լավ անցնի, էգուց կմոռնան. մեռելը մեռած օրը կուլան», մտածում էր նա և դառնալով Հարությին ասաց.

– Պա՛հ, տնաշեն, էնպես ես [աչքերդ] քիթդ կախել, որ ճանճն ընկնի 40 կոտր կըլնի. տո, վախենաս՝ չմեռնիս,

---

[1] *Ալ լուսանցքում.* «Ուրիշ մարդ – ուրիշ տեղ»:

Հիմիկվանից ի՞նչի ես սուգ կապել, նստել... էս ձկներին աչք, ոսկի է, ոսկի...

Եվ մեկ-մեկ լցրեց չրակաթսայի մեջ. ափրակցին եկավ փնտրած հավը ձեռքին:

– Հավը տապկենք, ես կասեմ, լավ կըլնի,– հարցրեց [վարպետ] Ջաղացպանը, և պատասխան չառնելով, որոշեց հավը տապակել: Արդեն երեկո էր, վեր կացավ, լամբը վառեց, սեղանը դրեց թախտերի մեջտեղը, բուխերիկի առջև, և սկսեց ափսեներն ու ուտելիքները դարսել, ապա նստեց կրակի առջև ակն տալով խաշվող ձկներին:

Ուսաան լռությունը խզելով դիմեց ափրակցուն:

– Անունդ Պողոս է, չէ՞:

– Հրամեր ես, Ուսաա Ջան, Մանուկենց Պողոսն եմ, քեռուս հետ լավ ճանանչ ես դու, Սաքո քեհի հետ:

– Հա՛, ի՛նչ խոսք, ախպոր պես. էնօրը տեսա Սաքո քեհին, կաղզման կերթար,– ի՞նչ կա, ինչ չկա գեղը:

– Ողջություն, Ուսաա Ջան, քարին քսվելով կապրենք. էս երկու տարի մեր բերքը լավ չեղավ, կարկուտը զարկեց, մեկերս երկու չի ըլնի. է՛հ, մեռնելն էլ ցավ է, ապրելն էլ, ապրելը ավելի ցավ է, դժվար է. մեռնելը – կմեռնես, էլ չես իմանա. Ուսաա Ջան, գլխուդ մատաղ, խոսքս աղքատի ապրուստի վրա է. ի՛նչ խոսք որ, ապրել կա, ապրել էլ, ապրել կա զոռով, աչքի լուս թափելով, պոչկվելով, տապկվելով. մատնեբի միսն ուտելով մի բրդուճ հաց ձեռք կձգե. ապրել էլ կա, որ մարդ չի իմանա, ընենց հնչո, երազի մեջ, կապրի, մեռնի, կերթա. Ասոն[1] բախտավոր էր, լավ ապրավ, լավ գնաց:

---

[1] *Ին-2000-ում՝ աստծով:*

– Տեսա՞ր, Հարութ ջան, Պողոս ի՛նչ խելոք խոսեց. դու քու բախտեն գոհ չես, կուտես, կխմես, փառք Աստծու, պակասություն չունիս, դեռ ջահել, ուժով:

– Ի՛հ, կասե, Պողոսն էլի. լեզուն կդառնա,– դժկամ ասաց Հարութը,– հարուստ թե աղքատ՝ մարդ մինչև կծերանա, 1000 կտոր կըլնի, հոգին բերանը կուգա, մուխը քթի ծակեն կելնի...

– Ի՞նչ ծերանալ, դեռ հլա ո՞ւր ես...– ընդհատեց Կարոն:

– Ջեզի կանանչ կարիճ կկարծես, (քանի՞ տարեկան ես) կվախենաս տարիքդ համրել,– չոր ձայնով ասաց Հարութը:

– Հարութ ջան, ի՞նչեն պիտի վախնամ, տարիքս հաստատ չգիտեմ. մեր գեղեն պատիկ եմ փախել. որ գիտցողն ասեր, մենակ ես ինձի չատ ջահել, ուժս տեղը կզգամ, կրնամ 30 տարեկան էլ ըլնել, կրնամ 100 տարեկան էլ, 1000 տարեկան էլ, ինչո՞ւ որ՝ քանի ես ինձ գիտեմ, էս աշխարքի վրա գիտեմ. ինձի իսկի չեղած չեմ տեսել, չեղած չեմ գիտցել. ես ինձ միշտ եղած եմ տեսել, ի՞նչ ասիր խոսքիս, Գոգոր ջան, ախքերս, որ դուն ես:

Հարութը թեթև խնդաց. Գոգորը ձկները չարելով լավաշի վրա, բղավեց:

– Էդպես է, արդար եղի պես դրուստ է. էդով մահու ճամբեն կմոլորեցնենք, սև-գիրքը կխաուենենք, հաշիվները տակն ու վրա կանենք: Մարդ պիտի իրեն միշտ ջահել համարե. քանի ձեռքդ բերանդ կերթա, կեր ու խմե, աչ պըտըտի՝ խտըտի, ձախ պըտըտի՝ խտըտի: Հնելք ունիս, էսօրվա վայելե՛. մի ասի, թե ծեր եմ, իմս անցավ, 10 տարի եսև գլխուդ կզարկես՝ թե էշ էի, ջահել էի 10 տարի առաջ, չհասկացա. ինչ խոսք էն ժամանակ էլ նորեն ջահել ես էն գալիք 10 տարվա վրա. իմ ողորմածիկ հոգի պապս

70 տարեկան Հասակին նորեն կնիկ առավ. սիրուն, ջահել հարս. ու խեղճ հարսի ոտները գետին չէր առնի, որ երազ տեսներ...

Ջաղացպանի խոսքի վրա բոլորի տրամադրությունը մի քիչ փայլեց:

– Տո, կերի՛ք, խմի՛ք, քեֆ արեք, աշխարքը մեզի չի մնա. ապրակցի, լից գինիները:

Հարութն [ու կարոն մանավանդ] ակամա կերպով էր ուտում, դանդաղորեն, բայց գինին չուտ-չուտ էր խմում (հաճախ, ստեպ):

– Ես կասեմ,– առաջարկեց Գոգորը,– էս թասը խմենք Ասոյի հղգու համար. Տեր Աստված, դու ստեղծել ես – չկորցնես[1]:

Եվ կաթեցրեց մի-երկու կաթիլ գինի Հացի վերա հայոց հին սովորության համաձայն, իբրև բաժինը հանգուցյալի: Բոլորը հետևեցին նրան, և լռիկ խմեցին:

– Ինձի համար,– չարունակեց Գոգորը,– մեռնողը մեռավ, գնաց, ապրողը պիտի ապրի. էսօրվա օրը մերն է, ամուր բռնե[2], քեֆդ արա. երեկվա օրը մեռելին է, որ մյուսների հետ մեռավ գնաց. էգուցվա օրը – էգուցվա ապրողինն է. թե բախտ ունենք, էգուց էլ կապրենք, թե չեղավ – հերն անիծած մեղնեն հետո ապրողին. ի՞նչ ասիր խոսքիս, Ուստա Ջան:

Եվ առանց պատասխան առնելու, նորից լցնելով գինու բաժակները, չարունակեց.–

– Կեցե՛ք[3], մի բան էլ ասեմ, հետև դուք խոսեք. Հավը տապկեմ.– Հա, էն կասեի թե՝ խելք ունիս, ապրի՛ր. մեռ-

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝ չմեռնես:*

[2] *ՈՒԿ-2000-ում՝ բան է:*

[3] *ՈՒԿ-2000-ում՝ կերեք:*

նելուց հետո էլ դեղ[1] չկա, ոչ արագ կա, ոչ հարս. ինչ կա չկա, լավ, գնչ – էս կողմն է – գինի, դուռնա, հարս: Ուստա ջան, դու մի օր կնրուխուսմի ժամանակ չա՜տ խելոք խոսքեր ասիր. բերան եմ արել. ասիր թե – քեֆ արեք, կուշտ ու կուռ վայելեցնեք, բեռներդ բարձեք, պահեցնեք մինչև ուղն ու ծուծր, էնպես որ ծերանաք, էլ բանի պետք չգաք, քամեք ձեղի, քամեք[2] ու մեռեք. մահը ձեղնեն էն ժամանակ ի՞նչ օգուտ պտի տանի – չորացած ոսկոր ու կաշի. թող տանի, իսկի ճիճուներին էլ պետք չի գա, թող տանի, էլ պետք չէ մեզի. էսով մահի աչքը հանած կըլ-նեք. միտդ չէ՞ խոսքերդ[3], Ուստա ջան:

Եվ խաչած հավը դրավ հալած յուղի տապակի վրա. խանձվող մսի անուշ հոտը բռնեց սենյակն ու դրդռեց բոլորի հոտոտելիքը: Ուստա Կարոյին չա՜տ հաճելի եկան իր խոսքերի մեջբերումները:

– Էդպես է, Գոգոր ջան,– խոսեց Ուստան,– մենակ ես էն կարծիքին չեմ, թե մահեն հետո էլ գեղ չկա, բա, դար-տակ խոսքե՞ր են – ամուրն դատաստանի, գժոխք-դրախտ, հարություն մեռելոց, Գաբրելական փողն հնչուն, արքայություն Աստծո:

– Թող Հարությը խոսի, դրոց մարդ է. ես ալուրի հասան ու բարակը կհասկնամ,– և հայացքն ուղղեց դե-պի Հարությը՝ վկայության համար:

Հարությը դժկամորեն, ծամծմելով ասաց.

– Դարտակ բան է, մեռար-մեռար, պրծավ գնաց, հող էիր, հող պիտի դառնաս, մնացածը չինծու, պառավական

---

1 *Ոսկ-2000-ում* գեչ:

2 *Ոսկ-2000-ում* խմեք:

3 *Ոսկ-2000-ում* խոսքերը:

խոսքեր են, մխիթարանքի համար հնճարած[1]. ի՞նչ պժոխք, ի՞նչ դատաստան, ի՞նչ դրախտ, ի՞նչ հարություն, ա՜ստ, աստ ու փութ, վրաս դրե:

Կարոն սարսափած լսում էր և չէր համաձայնում կրկնելով թե՝ մի՞թե Ս. Գիրքը դուր է գրած՝ աշխարքը խաբելու համար. անկարելի է, անհնար է: Եվ սևեռուն հայացքով նայում էր Հարութին, որը կարճ կտրեց չոր, պաժան մի ձայնով.

– Վրաս գրե:

Ուստան բարկացած վրա տվեց.

– Մեղա Աստծու, մեղա քեզ. արդեն պյուղացիք քեզի լավ անուն են դրել Ջիք-Հարություն դավանող[2], տերտերն էլ տեղին է կնքել ծ<...>[3]. տո ո՛չ բարով տիրացու էիր, տո դու ով ես, ամբարտավան, օրթե բերան, դու էիր պակաս, որ Աստծուն քննես. աշխարք բոլոր, էնոր ելքն ու մուտքը, կյանքն ու մահը Աստծու ձեռքին է. Աստված դիտե թե ի՞նչու կծննցնե ու կմեռցնե, ու քեզի քանի անգամ եմ ասել, թե Աստծու գործերին մի խառնվիր, մի անգամ խառնեցա, հերս անիծեց...

– Իմ էլ մերս լացըցուց,– հարեց Գոգորը ընդհատելով Ուստայի զայրացկոտ խոսքը:

Տիրեց մի ծանր, լուռ տրամադրություն: Ագրակցին, որ ձգտում էր իր ներկայությունը ցույց տալ, չոյված լինելով այն բանից, որ այսօր բախտ ունեցավ հայտնի, հարուստ մարդկանց հետ սեղան նստել, բերանը կերակուրից մաքրելուց հետո՝ ասաց.

---

1 *Ին-2000-ում՝* հնարած:

2 *Ին-2000-ում՝* դաւանող:

3 *Հեղինակը տեղ է թողել բառի համար:*

– Կեցնք ձեզի մի հաստատ պատմություն անեմ. պապս մեռնելուս մեզի գլխուն ժողվեց, ասավ. ես հիմի կմեռնիմ, կերթամ էնդիի աշխարքը. թե լավ եղավ էնտեղ, հանդիստ ու ապրվելիք, ձեզի լուր կղրկեմ՝ չուտ անեք գաք, թե դեշ եղավ, էլի լուր կղրկեմ, որ տեղերդ ամուր մնաք, մեռնելու միտք չունեննաք. էն օրվանեն 10 տարի է անցել՝ ոչ մի լուրի կաոր չեկավ. էս խոսքիս բնաբանը ի՞նչ է:

Եվ նայեց սեղանակիցների երեսին, Հարությը քթի տակ մրմնջաց.

– Կնչանակ՝ էնտեղ դեղ չկա:

– Չէ՛, խելքիս չի՛ պառկի,– պնդեց Ուստան,– հոդուս էն տուն կուտա թե՝ էնդիի աշխարք կա. թե չէ վա՛յ մեռնողին, վա՛յ ապրողին էլ...

– Ես տեսածիս կհավատամ. կմեռնիս, ոտքեդ կբռնեն, փոսը կքցեն, հողը վրադ բլուր կանեն, օրթի դեշ հոտըդ ուրիշի քիթը չտանի, օրթի ճիճուները չորս դին չապտուտեն. ամեն բան սուտ, մահը՝ դորթ. կապպարն էս է, կարո, կուզես, կեր, կուզես, մի ուտիր:– Կարծես չարախնդությամբ ասաց Հարությը: Ուստան չչմել էր, չաղացպանը տեսավ, որ իր բոլոր չանքերը ստեղծելու ուրախ տրամադրություն՝ չուրն ընկավ. փորձեց մի անգամ էս, ու արագ-արագ դինիները լցնելով՝ ոտքի վրա ասաց.

– Տո, խելոք[1] խելառներ, բարակ մանելը մեզի է տված, մենք պիտի թնճուկը բանանք, աշխարքի բանը թեփե հաննենք. խելք ունեցեք, քանի ողջ ենք, փառք տանք Աստծուն, ուտենք, խմենք, զարդ չանենք. հոբ կանք, էգուց չկանք. աշխարքիս մեջ քեֆ արա, անցի գնա՛. Հարութ չան, Սողոմոնի խոսքեր կըսեիր. ողջ շունը առյուծ առյու-

---

[1] *Ռիկ-2000-ում՝* խելքի:

ձեն առավել է. էզպես էլ իմաստուն խոսք, պրծավ գնաց,— ատ՛, լվռա ապրակցի, էն պարի երգը գարկ, ես՝ խաղամ:

Ապրակցին երգում էր ու ձեռքով թախթի վրա համաչափ գարկում.

Բլբուլ եմ ասում.
Ջան եմ ասում,
Պաչ եմ ուզում[1],
Չէր տալում ա,
Չէր տալում ա, չէր տալում:

Նուռներ կնրել
Դուռն էր կայնել,
Օրորվում էր, չորորվում էր,
Չէր տալում ա,
Չէր տալում <ա>, չէր տալում:

Գոգորը պարում էր, ծափ տալիս, ոտքը գետին գարկում, հագուստի վրա հին ու նոր ալյուրի փոշին բարձրանում էր իր շուրջը և տարածվում չորս կողմ: Կարոյի և Հարութի երեսները [ակսեցին] մի քիչ չողացին. Հարութը լցնելով բաժակը խմեց լուռ ու մունջ և դիտում էր պարը. հանկարծ ջրազացի խորքից լսվեց քարի ղիլի ձայնը. նշան էր, թե աղունը վերջացել է, նորը պիտի լցնել. վայրկենի մեջ ապրակցին դուրս թռավ, Գոգորը պարը ընդհատեց և հեռանալով ասաց.— Ես էլ պարապ չեմ, խելոք կեցեք, Ուսուա ջան, քարվանիդ պատմությունները արա, Հարութիս սիրտը բացվի, եռև սուս ու փուս քնեք: Եվ ինքը գնաց ջաղացը:

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝* ասում:

Լուռ էր անդյակում. ամպերը դանդաղ այրվում էր ու ծուխը դանդաղ կինում էր բուխերիկից, դուրս մի բարակ քամի կար, աստղերը յուսամուտից ներս էին թարթում: Ուստան թիկն էր տվել օճախի մի կողմը, Հարությո՝ մյուս կողմը, երկուսն էլ կամաց ծխում էին, յուրաքանչյուրը իր մտքումն ընկած:

– Կարո,– հանկարծ ձայն տվեց Հարությը,– ասել է, Ասոն մնում, էլի:

– Հա, ողորմի հոգուն:

– Օրթև սար ու ձոր տրաքվին, էն էլ չի լսե:

– Հա՛, Հարությ ջան, էլ չի լսե:

– Օրթև հազար-հազար տարի անցնի, էն էլ չի վեր կենալու:

– Հա, մինչի Քրիստոս գա դատաստան:

Հարությը չէր լսում Ուստայի պատասխանները, այլ իր մտքերին էր հետևում:

– Օրթև որդունքը հիմի էնոր կուտեն:

– Չէ, հիմի չէ, էգուց, մեկել օրը:

– Կարո, չե՞ս վախենա, ես կօյմռիմ,– ասաց Հարությը տեղում նստելով:

– Ե՞ս – չէ, ի՞նչ կա որ:

Սակայն Ուստան այս խոսակցությունից ներշնչված, վախենում էր, բայց ջանք էր թափում իրեն դսպելու:

– Կարո, իսկի մահի մասին մտածած կա՞ս:

– Հարությ, մեկ-մեկ որ մեռնելը միտքս կուգա, քենֆս կթողնեմ, դլխուս պաղ ջուր կլցվի. մենակ դուր է, դուր – լից խմենք:

Հարությը լցրեց բաժակները ու աչքերը հառելով նրա վրա, կամացուկ ասաց.

– Էս օճախի կրակի պես պիտի անցնենք, էս ծուխի պես պիտի ոչինչ դառնանք, գլխի՞ ես. օրթե էս աստղերը դու չինած ըլնեիր, ու 1000-1000 տարի ապրած, օրթե մեռնեիր, ասել է թե՝ ո՛չ եկել էիր աշխարք, ո՛չ գնացել. կամ եղած, կամ չեղած, կամ մի ժամ առաջ մեռած, կամ 1000 տարի առաջ մեռած [կամ իսկի չծնված, հաշիվը մեկ է],– հին ու նոր մեռել չկա, մեռած կամ իսկի չծնված հաշիվը մեկ է:

Ուստան հոգով համամիտ էր Հարութի ասածներին, բայց դեմքի նշաններով անհամաձայնություն էր ցույց տալիս, և ճիգ էր գործ դնում թե իրեն և թե Հարութին հանել անհույս մտքերի խառնարանից:

– Հարութ ջան, նոր բան չես ասե. աշխարք գիտե, որ մահը գեշ բան է, անհաղթ թագավոր է, բայց ճարերս ի՞նչ, մենք մահինն ենք, մահը՝ մերը, դու ասա, լավն էն է, որ եղածով գոհ ըլնինք, մեկել որ՝ մահը աշխարքով է, հո մենք մենակ չենք, ինչպես ողջ աշխարք, էնպես էլ՝ մենք:

– Կարո ջան, հեչ-հեչա կխոսիս, բա՛ իսկի չես մտքի, օրթե մահը ականջիդ տակն է, ամեն ժամ թուրը ձեռքին գլխիդ կանգնած, օրթե ամեն բան իր ժամանակն ունի, մահը ժամանակ չունի, ու կուգա, միշտ տարաժամ կուգա... – և հանգած[1] ծխախոտը նորից վառելով, չարունակեց գրեթե կիսաձայն:– Օրթե ամեն լավ բան էլ կարճ է, սերը կարճ է, գարունը, ջահելությունը կարճ է, ամեն լավ բան թև ունի, կթռնի, կերթա մահի ծոցը. ի՞նչ է կյանքը՝ աչքդ բանաս-խփես, կյանքը կանցնի, դու անցար, աշխարքն էլ հետդ կանցնի, օրթե Աստված գեշ չըլներ, օրթե

---

[1] *Ին-2000-ում՝ հանկարծ:*

կյանքը հավիտյան ըլներ, օրթն մի աչխարք ըլներ, մահ չըլներ, լավ կըլներ... լից, խմենք:

– Հարութ չան, խելոք կխոսիս, մենակ ուր պիտի փախչինք Աստծու վրանի տակեն. մեկ հեղ իմացիր, որ մահեն պրծում չկա. կասես, մի աչխարք ըլներ, մահ չըլներ, էդոր[1] վրա միտքս նման մի բան ընկավ (և[2] չիտկվեց, ուրախացավ, որ բան պիտի պատմեն),– քարվանս որ կպըտրացնեի վերի աչխարհները, մեկ օր, ցածի աչխարքների քով մի մարդու հանդիպեցա, որ քեզի պես մահեն կվախնար. էս մարդը փախել եկել էր անդերեզման քաղաքեն. կիմանա՞ս, անդերեզման քաղաքեն, հարցրի թե՝ ի՞նչ քաղաք է. էն մարդն էլ դրուչյ արավ, ասավ թե – մահեն չա՛տ կվախնայի, միտքս դրի, էնպես երկիր երթամ, որ մահ չըլնի. չատ հարց [փորձ արի] ու պատասխանով իմացա, որ մի քաղաք կա, էնտեղ դերեզման չկա. մարդիկ չեն մեռնի, մենակ հանկարծ՝ օր ըլնի թե դիշեր, մեկ ահեղ ձայն անուղղ կուտա, քեզի կկանչե. մարդ ձեռաց աչք չթերթած կվազն կերթա, հաց ուտելիս ըլնի թե երեսը ածիլելիս, հաչիվը մեկ է,– չէրթող չի ըլնի: Ես էլ ասի, թե կերթամ, օրթն անուն տան, չեմ երթա, թևես քաչող չկա. դնացի – մնացի էնտեղ, մի-երկու տարի ընկեր-բարեկամ ունեցա, կեր ու խումի ժամանակ հանկարծ մեղնից մեկը իր անունը կլսեր, բաժակը բերնին՝ կես խմած կվազեր, թե էս է կուգամ.– կերթար ու էլ ետ չէր դառնա, կանեուրթանար: Էդ ոչինչ, ասավ էն մարդը, մի զարհուրիկ բան ասեմ, որ պատմելիս էլ մազերս փուչ կըլնին: Ինձի պես մահեն վախցող մեկ մարդ էլ էր էկել էդ քաղաքը, աչխարքի գանձի տեր Հարուստ մեկը. իր ծառաներին ասել

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝* իրար:

[2] *ՈՒԿ-2000-ում՝* լավ:

էր լմև, ինձ կանչելու կըլլանն, 40 փութ գութանի չղթայով կաղնի ծառնն կապնք, որ չկրթամ: Օրը կուգա, մահը էնոր կկանչե, ծառանները ձեռաց ամուր կկապեն ծառին, բայց արի տես, որ էդ մարդը էնքան ուժ ստացած կըլլնի, որ ծառը արմատով քաշե կհանե հողեն ու կերթա ահեղ ձենին, ծառն եռևեռն քաշեքաշ, աչքիս տեսը.— էդ որ տեսա, փախա էդ քաղաքեն: Էպես, Հարութ ջան, մահին մարդ չի դիմանա:

Հարութը, որ լարված ու սահմռկած հետևում էր պատմությանը, թուքը բերնի մեջ չորացած, ասաց.

— Կհավատամ մահու զորքին, մահն ոչ ի թագաւորէն վախի, և ո՛չ աղքատին ողորմի: Կարո, և էլ ես քո պատմածդ ամենեն ճշմարիտ սուտն է. ճշմարիտների ճշմարիտը: Լի՛ց, լի՛ց խմենք, քեզի մի ուրիշ աչխարքի մասին հարցնեմ[1]:

Ուստան լցրեց բաժակները, և իրար երես նայելով, խմեցին:

— Հա՛, Ուստա, օրթե դու դրսի ու ներսի, վերևի ու ներքևի աչխարհներն եղել ես, հապա իսկի չե՞ս եղել Զիքի թագավորի հողը, Զքաստան:

— Միտք չունիմ, չեմ եղել ու իսկի միտք չունիմ երթալու:

— Միտք չունիս, քո խոսքն է, ամեն մարդ պիտի երթա. մեռելի ու ողջ մարդու մեջ զանազանությունը մեկ ժամ է կամ մեկ օր, և քարվանովդ պիտի երթաս, զուր էդ աչխարքեն հետու տեղերը կպպտես:

— Էդ օրն էլ կուգա, վռազելու պետք չունիմ. դու էլ կարճ խելքովդ քեզի կմաչես, խելքի պուտուկ. իմաց կաց, մեռնելը մեր հոգու պարտքն է, ուզենանք-չուզենանք,

---

[1] Ին-2000-ում՝ Հայտնեմ:

պիտի տանք. Հնճարքը էնոր մեջն է որ, քաչքչենք, ուշ տանք էդ պարտքը, էդ անգին ոսկին, քանի որ մեր տալացուբ ոսկին մեզի պետք է կյանքի վայելչության համար. կհասկանաս, աշխարքի մեջ էնպես վայելչություն կա, որ մարդ հոգին կուտա, էնոր մեկ ժամը հազար տարվա չափ կյանք արժենա ու աշխարք կկշռև, իսկ դու մեկ դլուխ առար անցար. մահ, մեռնել, գերեզման. հերիք է, խեղճ ես:

– Հա, խեղճ եմ, ամեն մարդ էլ խեղճ է, մենակ դու չես իմանա քու խեղճությունը, լից, խմենք, լից, լի՛ց, քեզի ասեմ քու և աշխարքի խեղճությունը:

Ուստան առաջ ուզում էր, որ Հարությը խմե, թմրի, հանգստանա, սակայն նկատեց, որ քանի խմում է, ավելի է բորբոքվում ու խոցոտվում և կարող է հիվանդանալ միայն արագը [չոր-չոր] խմելով, փաղաքուշ ձայնով ասաց.

– Հարությ ջան, արագը չա՛տ չոր-չոր խմեցիր, էս հավի ճերմակ կուրծքը կեր, էս մեջքի փափուկ տեղեն, ու, սիրուն ջան, Հոգիս, ել երթանք դուրս, տե՛ս, ի՛նչ հով[1] անուշ կսլսլա, մի քիչ ման դանք, դառնանք գանք քնենք, Աստված լուսավորե բոլոր հին ու նոր ննջեցելոց Հոգուն:

– Չէ, լից, խմենք, ես քեզի ասեմ աշխարքի խեղճությունը, օրթե չթողնես, կխելոիմ. թող ասեմ – սրտիս միջինը, հանգստանամ. թող ես չարեմ էդ գեչ չար Աստծու ստեղծած գազան մահի արարքները... Դու, կարո, հարթած, սանամորներիդ գրկեն մեկել գիրկը կընկնիս, չես մտածե իսկի էդ ահեղ գազանի մասին. քեզի մեռնելու տեղ չես դնե, չես հավատա, օրթե դու էլ՝ Ղանդահարի

---

[1] *Ին-2000-ում՝* **հավը**:

Ուստա Կարոն, պիտի մեռնի ու չնչվի. գիտես թե մեռնողները քեզի պես չեն, ուրիշ տեսակ են, մեռնելու համար ծնված, իսկ դու – չէ... Հալա մեկ մտքե՛, քեզի մեռելի տեղ դի՛ր – դեղնած, սառած, ցմքած, հողի տակ, ճիճուներ, չոր ոսկորներ, էդպես Հավիտյան, անունդ էլ չնչված. ու նորեն արևը պիտի ծագե, թռնիրները պիտի վառվին, աղջիկները ծաղկած դաշտերում էլի պիտի պաչ տան, ուրիշ քարվաններ քու [երթացած տեսած] եղած տեղերդ պիտի երթան ու գան, էնպես թե իսկի Ուստա Կարո չի եղել ու Հնդստան չի [եղել] գնացել ու աղջիկ չի պաչել... Էա՞, կվախնաս, քեզի մեռնելու տեղ դնել. քեզի սուտ կերևա քու մահը, չէ՞, մենակ քու մահը, չէ՞, սուտ, սուտ, կիմանաս թե մեռնողը ուրիշն է:

– Հա՛, հա՛, Հարութ ջան, սուտ կերևա, հաստատ սուտ. ու լավն էլ էդ է, առանց էդ ստի տեղոցտեղ կմեռնեինք. էդ անգին սուտ է, էդ կյանք է: Դեհ, հերիք է, ելինք ման գանք, անուշիկ Հարութիկս...

– Ջէ՛, լից խմենք, դու կրնաս քեզի խաբե, ես չեմ կրնա. մահը աչքս է ցցված թուրի պես:

– Հարութ ջան, իմաստուն հոգիդ ուտեմ, տղամարդ կաց, ի՞նչ քեզի կքանդես, դարդ կենես [հիմիկվանից նստել գլուխդ կուլաս]:

– Կարո ջան, դարդ չեմ անե, մենակ կմտքեմ, ամեն օր էդ կմտածեմ... ես էլ քու մտքին եմ, սուտ է, մահը չկա, սուտ է, էդպես բան չկա.– ելնել հարսի անուշ ծոցեն, երթալ ճիճուների հետ պառկել:

– Ապրիս, Հարութ ջան, սուտ է, սուտ է, մահ չկա... ել քնենք: Մեռնողը ուրիշներն են:

– Տո, Կարո, սուտ խոսող Կարո, սուտը դու ես. սուտը աշխարքն է, իսկ մահը – ամենեն ղորթը. գիտե՞ս էն ով է.– էն կքաղե թե հասածը, թե կանանչը. մեկէլ տեսար, մեկ

ցավ քեզի բոնեց, ծնկներդ ծալեց, մեջքդ կոտրեց, կուզես աշխարքով մեկ բոռա, թագավոր թե ծառա, ճար չկա.— էն մահն է, դու չես տեսնի իրան, էն քեզ կտեսնի, ու ամեն բան պիտի մոռնաս, տեսած աշխարհներդ էլ չես տեսնելու — էն մահը կուրացրեց քեզի. նստել ես էստեղ, Տերտերանց ջաղացի մեջ, ծանր ու մեծ, բայց կվազես առանց կանդ առնելու դեպի գերեզմանի դուռը. կաթիլ-կաթիլ կմեռնիս. ա՛յ հիմի մի կտոր մեռար. էս խոսքը հիմի լսեցիր, էդ հիմին էլ մեռավ, էդպես ամեն օր մեռնելով ամեն օր ավելի կհեռանաս կյանքեն, ամեն օր քու կյանքիդ տուներն մեկ-մեկ քար վար կընկնի.— էդ մահն է քարերը քցողը...

— Էհ, Հարութ,— ընդհատեց Ուստան,— էդ դու ես, որ մեկ անգամ մեռնելու տեղ ամեն օր կմեռնիս...

Հարութը չլսեց, ու չարունակում էր իր խոսքը, թե մարդ ոչինչ է մահի առջև, հազար երեսով նա կներկայանա, և մարդ չի իմանա թե որ [ծակեն] ծակից կելնի. մարդ նստել հաց կուտե, պատառը բերնի մեջ կմնա, կմեռնի. ոչ ոք չի իմանում, թե ինչ փորձանք է գլխին փաթաթվելու. իզուր է խելք թափելը, չափ ու ձև անելը. մտածում ես գետը խորունկ է, կամուրջով անցնիս, կամուրջը քանդվում է, դու տակն ես մնում. յոթը ծովերի վրա չրջողը տուն է դառնում և իր դռան չեմքին սահում է ոտը, ընկնում է սալին և գանկը [փշրում] ցրիվ-ցրիվ փշրվում. մահամերձ հիվանդը լավանում է, և նրան հսկողը մեռնում է...

— Գառը կմորթես, կարո չան, օրթե ուտես քեֆով, մեկ էլ մորթածդ գառը հոդուդ հացը կդառնա. էդպես, մահը չան պես ծածուկ հետևեդ ընկած է ծնած օրեդ սկսած. ամեն օր մեռնելու վրա ես, իմաստություն, խելք ի՞նչացու է. նստածդ տեղը ավելի կվնասես, քան կռիվ-կրակի մեջ... լի՛ց խմենք:

– Հարութի ջան, կարճ էրա. դու փորձանքի, պատահմունքի մասին կխոսիս, էն էլ իր հաշիվը ունի. իրեն համար, բեղնեն անկախ հաշիվ կբռնե, էնոր հաշվի մեջ չես կրնա խառնվի, լավն էն է, չմտածես,– ո՛չ իմանաս, ո՛չ դառնանաս...

– Էդպե՛ս է, կարո ջան, յաւելնան դիտութիւնք – յաւելնան ցաւք... դու քու քարվանի ման եկած տեղերեն դուրս ուրիշ ճամբա չունիս, ուրիշ բաներեն լուր չունիս, երանի միամտաց...

Ուստայի սրտին դիպավ նրա խոսքը. Ուստային թվաց, թե նա ուզում էր ասել, թե Ուստան ուսում չունի, այդ արդեն Ուստայի թույլ, խոցելի կողմն էր. և վիրավորված ձայնով ասաց.

– Հարութ, ինչի՞ կկարծես թե մենակ դու կմտածես աչխարքի բանը, թե որ չենք խոսի, ասել չէ, թե բան չենք հասկնա:

– Օրթե դիտես էս ամենքը, սիրտդ ինչի չի ցավի, հանդիստ թիկն ես տվել, պապիրոս կքաշես... լի՛ց խմենք...

Ուստան ուզում էր պատասխանել և ասել թե, լավ էլ ցավում է իր սիրտը, և այրում է, և պապիրոսի ծուխի հետ իր սրտի ծուխն էլ ելնում է, բայց ինքը տղամարդ է, դիմանում է, մի՞թե կին է, որ մազերը պոկե և կուրծքը ծեծե ու [լա] ողբա, և ոչ էլ երեխա է, որ աչխարքին հաղթող մահի դեմ սուր չարժե. և վերջապես ցավը մարդը պիտի քաշե և ոչ թե սար ու ձոր: Սակայն լռեց, չուզեց ասել, որ վեճ չծագի և [ցավը Հարութի սրտի վերքը չխոր...] վերջանա այս տխուր զրույցը: Ուզենալով, որ չափից անցած խմելուն վախճան տա, ամենայն քնքշությամբ ասաց.

– Հարութս, հոգիս, աչքիս լույսը, չա՛տ խմեցիր, հերիք է, գառս, ջանս...

– Բա ի՞նչ անեմ, չիմանամ. քու բանը ջոկ է, դու քարվան ունիս, քարվանը կքշես, ես դեղ աշխարքից կերթաս քո չինած գառ աշխարքը, օրը-ցերեկով բաց աչքերով անմահական երազներ կտեսնես, ցավն ու մահը կմոռնաս, սիրած կըլսցվի. ես ի՞նչ անեմ. քարվան չունիմ, որ քեզի նման արտիս ուզածին պես փախնիմ ես դեղ աշխարքին, ու կմնամ էս դժոխքի մեջ, աչքիս բանամ կտեսնեմ արուն, ապքաոուԹյուն, ծերուԹյուն, մահ. ու կմնա ինձի համար մեռնակ խմիչքը. դու քարվան ունիս, ես արագ. իմ քարվանս էլ էդ է, հաչիվը մեկ է, երԹալիք տեղը – մեկ. օդորմի խուռ սահղծողի հոդուն, էն իմ քարվանս է, էն միջոցով կերթամ արտիս ուզած երազների աշխարքը, կհասկանաս, կարո չան, արտիս նեղուԹյունն ձեռքս կձգեմ արագին, էն՝ աչքս չԹերԹած ոսկի նավերով կտանի Հրեղենիս մոտը. էնոր գրկում կլսեմ բլբուլների տաղերը ու կմոռնամ չար Աստծու չինած գեղ աշխարքը. մահը աչքիս սուտ կդառնա, ամեն բան՝ կարմիր ու պայծառ. ես էլ ուրախ ու անմահ[1] կդառնամ, ապրած կենան երազները. էն է մարդու ԹադավորուԹյունը, էնտեղ մարդ լիուլի կապրի, արտ սիրած կյանքով, Հրեղենը կգա քովս, էդոր համար կխմեմ, կխմեմ. արագը իմ կյանքի կանԹեղի ձեթն է, հասկցար, դեհ, լից, խմենք:– Եվ ինքը լցրեց բաժակը ափերից ԹափԹփելով:

Ուստա Կարոյի վրա ազդեցին նրա խոսքերը:

– ՀարուԹ չան, խմե, չափավոր խմե. մեկել ինչո՞ւ էպես գառն բաներ կխոսես, աշխարքը մարդու գլխուն փուլ կբերես, արևը կանցնես, տնաշենի տա՛ր:

---

[1] *Ոխկ-2000-ում՝ աննման:*

Եվ խլեց Հարութի ձեռքից լիքը բաժակը: Հարութը սկսեց թախանձել:

– Կարո ջան, հոգիդ ուտեմ, տուր խմեմ. երեխան մի կտրե մոր կաթնեն, խեղճ է. Կարո ջան, խեղճ է, մարդ-ա-րարածը, եղած-չեղած, ում պետքն <է>. ողջ գեղ ու քա-ղաք, աշխարք-արարած օրթե մեռնի, Աստծու թագավո-րությունեն բան չի պակսի, անունը տվողն էլ չի ըլնի. կամ էս մարած պապիլոս, կամ ինքը. խե՛ղճ, ողորմելի մարդ, գիտե թե ինքը բան է,– «Իսկ արդ եթէ դու մեռա-նիցես, անչէ՞ն մնայցէ առ ի ներքոյ երկնից, կամ թէ և լերինք ի հիմանէ տապալեսցի՞ն»... Կարո ջան, տուր խմեմ, խեղճ եմ, չա՛տ խեղճ եմ...

Թախանձում էր Հարութը, որ արդեն հարբած էր և հարբածի նման փաթաթվելով Ուստայի պարանոցով համբուրում էր նրան: Ուստան խղճահարվեց և բաժակը կիսելով տվեց:

– Օֆ,– ձայնարկեց Ուստան,– ամեն աղջիկ ձութ կծամե, քրդի աղջիկը համը կտանի. հերիք է խմես, հերիք է խոսիս, թե վերջ չես տա, Աստված է վկա, քովդ էլ չեմ գա, գլուխս դը՛նկ ելավ, չոնգուռս վերևդ կախ է, մեկ տուր ինձի:

– Առ, Ուստա ջան, առ, հոգիս էլ առ, ի՞նչի էդպես կխոսիս, դու էլ օրթե ինձի թողնիս, ես ի՞նչ անեմ, որը կմնամ, Կարո ջան, դուն ինձի չես ճանչնա, ա՛խ, ասես մեկը քարով զարկել է սրտիս, կցավի, կտրորվի. աչխարքը աչքիս մեռելի պես է:

– Հարութ, հոգիդ ուտեմ, դու լավ տղա ես, խելք ու-նիս, ի՞նչի էդքան բանը կխորունկցնես, ափսոս ես, վերջը կամ խելքդ կթռցնես, կամ գլուխդ կուտես...

Գինևերվա հովը սաստկացել էր և ծեծում էր դուռն ու լուսամուտ: Ուստան նայեց դուրս, նայեց ժամացույցին,

մրմնջաց յուրովի – «Շատ ուշ է, խելառն էլ չի հանդարտի, որ մարդ քնի, մեռանք էս պիշեր»:

– Կարո ջան, միամիտ կաց, ինձի չեմ ապանի, Սողոմոն իմաստունն էլ շատ դարդ արավ աշխարքի ու մահու մասին, ու նորեն ապրեց 1000 կնիկ շահելով ու ծերացավ, ասելով՝ ողջ չունը մեռած առյուծեն լավ է:

– Էդ խոսքդ ինչի մինչև օրս չէիր ասել, ողորմի Հորդ, էլ ի՞նչ կուզես ավելի, աշխարքի իմաստունն ասել է, թե՝ ապրինք թեկուզ թող չան պես ապրինք... իսկ դու Թադավորի կյանք ունիս, տուն տեղ, պարտեզ, ծառա, դրկիդ մեջ Անուշկա, մտքիդ մեջ՝ Հրեղեն, թե որ խելառնես, բախտիդ քացի կտաս, ես ինչ անեմ:

Եվ սկսեց չոնգուռի լարերի վրա խաղալ չգիտենալով ինչ նվագեր:

– Լավ կասես, Կարո ջան, մենակ սիրտս խոսք չի հասկանա, Ուսուա ջան, արի խելոնենք, սարերն ընկնենք:

– Հարութ, խելառ չես, ի՞նչ ես, ի՞նչ է պակաս:

– Կարո ջան, անուննիդ մեռնիմ, արի պռոշտի աննենք,– և հանկարծ հարձակվեց ու սկսեց Ուսուային իրար վրա պաչել,– Ուսուա ջան, մեծ ախպերս, դուն յար ունիս, յարա բացող յար, օրթե ունիս, յարիդ ու յարայիդ մեռնիմ:

– Հարութ ջան, ունեի, ունեի, տղա-կանանչ օրերս, ծառ կա՞, որ քամի դիպած չըլնի:

– Ափսո՛ս, էդ օրերն անցան, արի կանչենք, ետ գան,– չէ թող երթան, թող ետ չդան, Կարո ջան, լի՛ց լամենք, դու էլ լամի՛ր: Մահը կրնկկոխ եաևեդ է, քնֆ արա, էգուց կմեռնիս, ոչ եկել ես, ոչ էլ պիտի գաս:

– Էլի՛ նույնը, սիրտս մաչեցիր,– մրմնջաց քթի տակ և ապա բարձր ձայնով,– տո, մահի անունը մի տո՛ւր, մեկ էլ տեսար, կլսե կուգա:

Հարուքը վախեցած լռեց. Ուստան [ուզեց] փորձեց մի դվարթ բան նվագել, չկարողացավ. մատները նրա սրտին կին հնազանդվում, ոչ թե [խելքին] կամքին. Հարուքի չնչի տակ ստեղծվել էր մի տխուր ճնշող մթնոլորտ, Ուստան թափ տվեց իրեն, ասես, ուզում էր իրեն հաղթահարող քնից պարթևել, ոտքի կանգնեց, և սենյակի մեջ հետ ու առաջ քայլելով՝ չանում էր Ֆյոռօղլու ոգևորիչ եղանակներից նվագել, Հարուքը բարձր ձայնելով ընդհատեց նրան:

– Կարո, խելքս ալյուրի հետ չեմ խառնել, ա՛յ, ես քեզի կասեմ, էս աշխարքը չա՛տ պակասավոր է, օրթե ես Աստված ըլնեի, չա՛տ լավը կշինեի – անպակասը, կատարյալը. Աստված չար է, ու նախանձոտ, վրեժխնդիր Եհովա. խեղճ Ադամի վրին կապեց Եվան ու դրախտեն դուրս տարավ, որ չուտեն կյանքի [անմահական] ծառի պտուղը – անմահ դառնան. Ադամին կերցրին գիտության ծառեն, խելքն հասավ, չարն ու բարին իմացավ, հասկացավ որ մարդը պիտի մեռնի: Էսպես բարի հայր տեսած կա՞ս, որ իր տղաների մահն ուզենա.– խորթ, չար հայր է Աստված: Ջէ՞ որ էն ամենակարող էր, օրթե ուզենար մենակ լավ բաներ կշիներ:

– Ու չիննց էլ,– կտրուկ [միջամտեց] հարեց Ուստան,– գինի, գուռնա, գարուն, հարս... աչքդ բռնե, երախտամոռ չուն...

– Էդ լավ բաներին էլ խառնեց ամենեն գեշ ու դառն բաները, որ մարդու քթեն գա,– գեշ, չար Աստված...

– Հարուք ջան, հավատա ինձ, ղորթ կըսեմ, Աստված լավն է, բարի է:

– Տո, ես քու ստին չեմ հավատա, ղորթիդ ի՞նչպես հավատամ,– Աստված գեշ է, գե՛շ:

Ուստան չոնգուրը բարկացած վար դրեց, և աչքերը խոլորելով Հարուքի վրա սրտնեղած ասաց.

– Տո քեզի քանի անգամ եմ ասել՝ Աստծու գործերին մի խառնվի, մեկ անգամ խառնվեցա՝ հերս անիծեց, Գոդորի էլ մերը լացրցուց. էն պիտի իր արածը, ստեղծել է, չի կորցնե: Օրթի Աստված կա, մարդու հոգին էլ մահ չունի, էս ասա, Աստված կա՞:

– Կա՛, բայց մարդն ինչի կմեռնի, կանցնի կրակի պես:

– Ես պիտի խառնվիմ իրան գործերին, բա էս դո՞րծ է, որ կյանքն ստեղծել է, մահր՝ վրան, հապա մի միտք արա՛,– ամենքը պիտի մեռնին ու նորերը պիտի ծնվեն ու նորեն մեռնին. էսոր ծերն ո՞ւր կերթա, նպատակն ինչ է, ինչո՞ւ համար կծնվեն – մեռնելու համա՞ր, ինչո՞ւ, ինչո՞ւ...

– Ինքը գիտե,– պատասխանեց Ուստան պատասխանելու համար, և մոլորված նայեց Հարութի երեսին, նրա հարուցած հարցերը կոծում էին Կարոյի սիրտը, ճմլվում էր հոգին և չգիտեր ինչ աներ, ինչ պատասխաներ:

– Կարո ջան, լից խմենք, քեզի ասեմ, ականջիդ ասեմ, ուրիշները չիմանան,– և մոտեցավ ու փսփսաց նրա ականջներին, Ուստան բան չհասկացավ, Հարութը հարբած էր և ձայնը խզված, սակայն Ուստան գլխով էր անում, որպես թե ըմբռնում է:

– Էդպես է, Կարո ջան, էդպես կնչանակե՝ դերեզման գիտե զամենայն... Հորդ, մորդ հոգու կենացը, Կարո ջան:

Եվ Հարութը լցրեց գինու բաժակները. վեր առան բաժակները, մի քանի կաթիլ ծորեցին հացի վրա. Ուստան գլուխը կախեց, աչքերը տաքացան արցունքով:

– Ամեն, Հարութ ջան, քո ազիզ հորդ հոգու համար էլ:

Քիչ լռությունից հետո Հարութը սկսեց:

– Ա՛խ, Ուստա ջան, սիրտս ուրիշ է,– ջաղացիս դուռը լացող քամու պես է, կուզեմ երթամ, բոլոր մարդ-

կանց, օրթե չար, օրթե բարի, գրկեմ, պաչեմ, աչխարք-ա-րարած գրկեմ ու լամ: Ուստա Ջան, արի գիրկս, լա՛վն ես, լա՛վն ես..

Եվ իրար գրկեցին ու համբուրվում էին անվերջ:

– Աստա՛, Հարութ Ջան, սրտիդ մեռնիմ, ոսկի տղա ես, ես քեզի միչտ սիրել եմ:

– Ի՞նչ կըսեի, ի՞նչ պիտի ասեի:

– Օրթե աչխարք գրկեմ, լամ...

– Հա, կըսեի,– մարդիկ դեչ են, կեղծավոր, գոռոզ, փո-պապաչա, արուևքտեր, թուրքի պես, բայց խեղճ են, չեմ սիրե, կկպճամ. աչխարք ջաղցիս հետ չեմ փոխե, ջա՛ն, չախչախես, գարկ, չկկչկկա. Ուստա Ջան, Ուստա, քամին ներս չառնի՞նք, հերիք է՝ դուրսը լա, մեղք է, ցուրտ է, մեղք է, մենակ է:

– Չէ՛, Հարութ Ջան, լամբը կմարի:

– Տե՛ս, անտեր է, էսպես մինչի լույս պիտի լա, ներս առնենք, խեղճ է, մենակ է:

– Բա՞ն չունիս, թո՛ղ երթա ձորերի մեջ պահվի. մենք տեղն ու տեղերս քամի ենք ու կանք:

– Օրթե էդպես է, չոնգուռդ գարկ, բայաթի գարկ, կա-րո Ջան:

Ուստան սկսեց մեղմաբար նվագել. Հարութը հարբած ձայնով երգում էր:

– Մի հավք ելավ մեծ ծովից,
Հարցմունք արավ աչխարհից,
Օրթե պիտի մեռնեի,
Էլ ինչո՞ւ ծնա մորից...

Ուստան հուզված՝ գարկեց մատներով չոնգուռի փո-րին և ինքն էլ երգեց.

– Սիրելիս, ունայն աշխարհ,
Նզովվիս, ունայն աշխարհ,
Հորս ու մորս տարար,
Աչքդ ինձ ես քցել, աշխարհ...

– Է՛, նզովիս դուն, ունայն աշխարհ,– խորին ցավով հառաչեց Հարությը,– է՛յ դիտի Կարո, կանցնի մի քանի տարի ու վրադ խոսողը պիտի ասե – եղել է չի եղել մի մարդ է եղել, անունը Կարո է եղել...

Ուստան չարունակում էր նվագել ու երգել:

– Սիրելիս, էս չլիներ,
Թողնել, ծերանալ չլիներ,
Մեկ մեռնել, մեկ բաժանվել –
Էս երկուսը չլիներ..

– Ա՛խ, Կարո ջան, ա՛խ, չոնգուդդ ուտեմ, խելառ Հարությը միշտ խելոք կխոսի, բայց խելքը բանի չի հասնի. Կարո ջան, ասա, որ մահը զուր է. օրթե կմտածեմ, թե կաս ու չկաս, ու ամենքն էլ պիտի մեռնին, մերս, տղաս, դուն, Հրեղենս, ու պարտեզի ծաղիկները, սարի մարալները ու կապուտ ձիերը... աշխարքը աչքիս ձեռաց սև ու դեղին կդառնա, գրողի պես. գանս կուգա. դիտնաս օրթե՝ հենց ես պիտի մեռնեմ, սիրտս միշտ սգի տուն է. լից մի հատ էլ խմենք. է՛յ վախ, էդ հող դարձող մատներովդ լաց չոնգուդդ, Կարո՛ ջան:

Ուստան նվագում էր տխուր սրտառուչ եղանակներ՝ հակառակ իր որոշմունքին, արդեն ինքն էլ բավական խմած էր, և կամքը թուլացած:

– Կարո ջան, հերս ինձի աշխարհ քցեց, առանց կամքս առնելու, օրթե առաջուց ինձի հարցներ, կասեի, թե ձեռք

վեր առ ինձնեն, ուրիշը ստեղծի, կհասկնա՞ս, Կարո ջան, սիրտս դեչ է, վիրավոր եմ ծնվել, ո՞վ տվեց էդ վերքը ինձի, Աստված է տվել ու դեղ չի անե:

– Աստված ճար կանե, Հարութ ջան, հավատով խնդրե, լաց, աղոթե՛:

– Աստծուն աղաչե՛լ,– էնոր դեղը – գերեզմանի խուփն է[1], ասեմ, Կարո, պիտի ասեմ,– օրթե էս գեչ Աստվածը չըլներ, լավ կըլներ...

– Սո՛ւս, սո՛ւս, Հարութ, սուս, ասա՛ մեղա Աստծու, թե չէ երկինքը փուլ կգա:

– Թո՛ղ փուլ գա, օրթե փուլ գա, ի՞նչ կկորցնես, կորած ենք ու կանք, գեչ Աստվածն ի՞նչ պետք է, երեսին կդռռամ, չե՛մ վախենա:

Ուստան սարսափած մեկ ականջներն էր ծածկում, մեկ երեսը խաչակնքում. և ստիպում էր, որ Հարութը մեղա գա. ապա հարձակվեց Հարութի վրա և ուժով բռնելով նրա ձեռքը երեսի վրա խաչակնքումներ արեց, մյուս ձեռքով գոցելով նրա ըմբոստ բերանը:

– Լա՛վ, լա՛վ, Աստված բարի է, թող երկինքն էլ մեր խեղճ գլխու վրա հաստատ կենա. սրտո՞վդ է հիմի, լից, խմենք, լից, լից խմենք Աստծու գերդաստանի կենացը,– և ձեռքը մեկնեց արաղի շիշին, Ուստան խլեց նրա ձեռքից շիշը, և զարկեց գետին փշրեց. հետո գուրգուրելով, համբուրելով Հարութին, ասաց.

– Ել, Հարութ ջան, ե՛լ քնենք... հերիք է, ճգեն անցար, համն ելավ:

– Չէ՛, Ուստա, ես քնեմ, բա՛ խեղճ քամին դուրսը տխուր վնդստա՞. Կարո, մեկ ականջ դիր էդոր վույվույին, կասես, օրթե մեջը մի անտեր ծեր մարդու լացը կա.

---

[1] ՈՒԿ-2000-ում՝ խոսքն է:

կամ մեկուճարին թաղած մոր սուգը, մեռնողների ողբը չե՞ս իմանա էնոր մեջը. ներս առիննք չմրսի, հանդարտի կարե լացը:

Եվ թռավ տեղից ու բացեց դուռը, քամին վագեց-ելավ, փչեց հանդերից լամբր, և օճախի մոխիրը խառնելով, պեծեր զարթնցնելով բուխերիկի միջից վո՛ւհ անելով փախավ գնաց, մութր խառացավ սենյակի մեջ:

– Տեսա՞ր, չըսի թե՞ կմարե, սպիչկեն ո՞ւր է, լամբը վառեմ:

– Չէ՛, մի վառե՛, թող մութ ըլնի:

Եվ բնազդական վախով բռնել էր Ուստային երկու ձեռքով:

– Հարութ ջան, թո՛ղ [լուցկ...] սպիչկեն գտնեմ:

Եվ Ուստան ճիգ էր անում ազատվելու Հարութի ձեռքերից:

– Կարո, մեռնող կարո, հող դարձող կարո ջան, աշխարքը փուչ է, քամի է, քամի, ու էգուց էս քամին մեր գերեզմանների վրա պիտի վնգստա, կարո, քանի մահը կա – աշխարհը չկա, ոնց որ լամբը մարես, ու մութն իջնի մինչի հավիտյան:

Ուստան զգում էր, որ մութն ավելի է սարսափեցնում Հարութին, սակայն սա հարբածի ուժով բռնել էր նրան և սեղմում էր:

– Հարութ ջան, սիրունս, թող լամբը վառեմ, հետո պառկենք, քննենք:

– Ուստա ջան, ինձի մենակ մի թող, կօյմռիմ:

– Չէ՛, անուշիկս, ես հետդ եմ, ծոցս կքնիս:

Հարութը արձակեց բազուկները, Ուստան չոչափելով սեղանի վրա, լուցկին գտավ, լամբը վառեց:

– Ուստա ջան, տե՛ս, տե՛ս, մի աստղ ընկավ, արդյոք ո՞վ մեռավ, արդյոք ի՞նչ մի ջահել տղա էր, մուրազի

վրա, արդյոք իմ ա՞ստղն էր, քո՞ւկդ էր, կարելի է Հակոբիկիա[1] աստղն էր, Հրեղենինս էր, Ուստա, Ուստա, Ուստա՛...

Ուստան թռավ դուռը գոցեց: Հարությը սաստիկ դողդում էր, ատամները իրար զարկում. Ուստան պինդ-պինդ գրկեց նրան, պառկեցրեց ու վրան ծածկեց ձեռքն ընկած բանով:

[– Հարությ ջան, մեկ գինի խմե, տաքցի, քնինք:

– Հա՛, խմենք, գինին սուրբ բան է,] Քրիստոսի արյունն է գինին. Քրիստոս լավ մարդ է եղել, Աստուծեն հազար անգամ լավ ու իսկի գեչ չի եղել. էն կխզճար մարդկանց վրա ու կսիրեր. ես Ավետարանը բերան գիտեմ, Քրիստոս սեր է, էնոր հոգուն մեռնիմ. էնոր կենացը, էնիկ մեզի համար մեռավ, աչխարքի համար մեռավ, Ուստա՛ ջան, կուզեմ ամենքին սիրեմ – մարդոց, հավքերին, աստղերին, գելերին, թուրքերին. թե սարերը, թե [ձորերը] քարերը. Ուստա ջան, ել երթանք Գոգորին, ագրակցուն ձեն տանք, պաչենք էնոնց, ել երթանք, ե՛լ...

Հարությը չափազանց հուզված գլուխը իսպառ կորցրած համբուրում էր ձեռքն ընկած, բերանն հասած բանը,– մերթ Ուստային, մերթ նրա ձեռքերը, մերթ սեղանը, հացը, փայտը, օճախի քարերը...

Ուստան ուժով հեռացրեց նրան օճախից, գրկեց [տարավ] դրեց գլուխը բարձի վրա, և ինքն էլ պառկեց կողքին թևը դնելով նրա գլխի տակը: Հարությը մի փոքր էլ պառաղաց, ապա լռեց և քնեց:

Երբ Հարությը քնեց, Ուստան զգույշ ձեռքը հանեց գլխատակից, նստեց կողքին ու տխուր մտածում էր,

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝* Հարութիկիս:

քնքուշ և սիրող աչքերով նայելով նրա դունատ դեմքին, և խոսում էր ինքնին – «խնդճ տղա, հարբած, արաղը չվերցրնց, սրտի մեջ մեծ դարդ ունի. ոսկի տղա է, հոգին ուտելու է... տեսա՞ր, ինչ խելոք կխոսար. սատանի խելք ունի, հրեշտակի սիրտ,– Աստված պահե»:

Եվ ինքն էլ թիկն տալով կողքին՝ հապուսատով քնեց[1]:

---

[1] *Էջի ներքևում՝ մատիտագիր.*
«Երկու գիշերվա մեջ բաժանել այս գլուխը: Առաջին գիշերվա մեջ կհայտնե Ասոյի մահը, մյուսները կխոսեն, Հարությը լուռ է, դրեթե չի մասնակցում նրանց զրույցին:
Երկրորդ գիշեր տեղի կունենա իր և Կարոյի միջի տեսարանը:
– Քանի որ անվերջ դիալոգներ կան, հարմար կլինի թատերական ձև տալ:

Հարությ.
Կարո –
Հարությ –
Կարո –»

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՐՈՒԹԻ ՀԵՏ ՋՐԱՂԱՑՈՒՄ
(Գլխի սկիզբը)

ՍԱՐԸ ԳՆԱԼՈՒ ԳԼՈՒԽԸ

Մյուս օրը, առավոտյան, Ուստան սովորականի հակառակ, բավական ուշ վերկացավ. Հարությը դեռ քնած էր. նրան չզարթնեցրեց, այլ կամացուկ [ոտքի թաթերի] դուրս ելավ սենյակից և գնաց պարտեզը: Մի եղանակ չրթունքների վրա դնդնալով նա չրջում էր պարտեզում, բոլորովին զվարթ ու աշխույժով, ասես, գիշերը անքուն չէր լուսացրել և մռայլ, [անհույս] հուսահատ խոսքերի հետ անվերջ չէր խմել: Նրա բնույթը այնպես էր չինված, որ նա տևական կերպով տրտմության մեջ չէր կարող մնալ. բավական էր, որ վշտի վրայից մի գիշեր անցներ, մյուս օրը նա մորեն նոր ծնածի պես թարմ էր, [լի] եռանդուն, ասող-խոսող, կատակով, երգը բերանին:

Կապույտ երկինքը փիրուզյա առաստաղի պես ծածկել էր ձորը, մեծ հսկա ժայռերի գլխին մեղմ օրորվում էին մացառները և ավելուկները: Գետակը թարմ ձայնով գոչ-գոչում էր ափերի մեջ՝ թռչելով լիզված քարերի գլխով, ժայռի մութ ծերպերից ուրախ ճիչով ցայտում էր աղբյուրը լույս աշխարհ, բյուրեղներ բերելով իր հետ, և զնգալով թավիշի և [ավազա...] խիճերի վրա, գալիս հավաքվում էր ավազանի մեջ: Խնձորի, տանձի, փշատի և ծիրա-

նի, և ուրիշ ծառերը մի անուշ[արույր] չունչ[1] ունեին, որ փռվում էին Ուստա Կարոյի վրա: Արևը նրանց սաղարթների միջից ցանցվել էր[2], լույսի կաթիլների պես մաղվելով էր չավիղները, նշխարով պարտեզի արահետները, վարդերը, նարդիզները, տուզտաները խունկ էին բղխում և մեղուները անդուլ բզզում էին ու սուզվում նրանց բողբոջի մեջ: [Թիթեռները ճախրում էին ամեն կողմ դույդ] Բադերն ու սագերը օրորվելով ել ու մուտ էին անում ավազանում:

Ուստան փափախը դրեց գլխին, և կռացավ ավազանի վրա, և բուռ-բուռ ջուրն առնելով լվացվում էր – չառաչելով լվացվում, ապա կարմիր մեծ թաշկինակով սրբվեց, խաչակնքեց երեսը և մի ուրիշ երդի եղանակ բերնին, գնաց ջրաղաց: Վարպետ Գոգորը մի քար էր կռանում, իսկ ագրակցին իր աղունի մոտ նստած ձեռքը ծնոտին նիրհում էր:

– Բարի լույս, վարպետ Գոգոր,– ասաց Ուստան, նստելով նրա հանդեպ:

– Բարին արևդ, Ուստա ջան,– պատասխանեց Գոգորը, գլուխը վեր բարձրացնելով,– հա, ես կասեմ ուշ քնեցիք, Հարությո՞ւր է...

– Աստված բարի տա Հարությին, քնած է, թող քնի, գիշերը չա՛տ լմնց, շատ խոսնց, բոզկի համ տվնց:

– Ասոյի մեռնելը սրտին դիպել էր, դու կրակի վրա պակաս եղ չլցրիր:

– Չկ՛, Գոգոր ջան, ես չա՛տ խրատեցի, չեղավ, չբռնեց. կաօր սարն [երթանք] հանեմ, գարդը քամուն կուտամ:

---

[1] ՈՒԿ-2000-ում՝ չուք:

[2] ՈՒԿ-2000-ում՝ ցնդվել էր:

– Ե՞րբ պիտի երթաք:

– Ես է, զարթնեց թե չէ, հիմի պատրաստություն տեսնեմ պիտի:

Գոգորը մուրճը վար դրեց, առաջարկելով Ուստային որ թեյ խմեն, [և Հարուքին մի կերպ / մինչ այդ Հարուքն էլ կզարթնի] ապա միասին ելան ջաղցից դուրս, և ցրտոնի վրա, ծառի տակ նստեցին, որ Մրոտն արդեն հասիրը փռել էր և նախաճաշիկի սեղանը դրել: Նրանք նախաճաշը նոր էին ավարտել, երբ Հարուքը դուրս եկավ սենյակից, լվացվեց և եկավ նստավ նրանց կողքին. թեև աչքերը ուռած էին և ձայնը կտրած, բայց տրամադրությունը այնքան էլ վատ չէր:

– Տո, խելառ ջան,– պայծառ ժպիտով Ուստան դիմեց Հարուքին,– ծուռ նստինք, չիտակ խոսինք, երեկ գիշերը ջաղցիդ չախչախեն ավելի զվռնեցիր:

Հարուքը չպատասխանեց:

– Խելքի պուտուկ, հիմիկվանից նստել դլուխդ կուլայիր:

– Բա խո մեռնելուց հետո պիտի չլայի,– ասաց Հարուքը. Գոգորը ակնարկով հասկացրեց Ուստային, որ լռե, չնորոգելու համար գիշերվան [խոսակցությունը] դրությունը:

– Մրոտ ջան, մեզի մի քիչ պաշար տուր, սարը պիտի երթանք, գիշերս յայլեն ենք քնելու,– դեհ, ել, Հարուք ջան, քեզի առնեմ տանեմ կաթն-աղբյուրների վրա, ափսո՜ս, [կնիկ] հարս չես, որ լողցնեմ. ել, երթանք, մեզի մի քիչ հովին տանք:

Քիչ անց նրանք մի-մի ցուպ ձեռներին խնձոնքի վանքի վերևից կամաց-կամաց, գրեթե անխոս բարձրանում էին Ալաճայի[1] լայնանիստ լեռնաշղթայի մեկ թևի

---

[1] *Ին-2000-ում՝* Արճայի

վրայով: [Ուստան առաջ էր ընկել] Շավիղը նեղ էր և ոլորմաններ, Ուստան առաջն էր ընկած կայտառ և թեթև քայլերով, Հարությը հետևում էր նրան՝ հոդնածի պես: Նրանց ամեն մի քայլափոխից կամ կաքավներն էին թռչում իրենց թաքստոցից, կամ մի մողես [սահում քարերն ի վեր] սողում ժայռերի կողերով, կամ մի քար աղմուկով և հսկա թռիչքով գլորվում էր ձորն ի վար: Լեռների գեփյուռը ծաղիկների բույրերը հավաքած՝ թևին տալով սահում էր նրանց ընդառաջ, և սլանում հեռուները, երիներանգ թիթեռների բույլերը նրանց առաջն ընկած, ասես, ճամբա էին ցույց տալիս, երպէի բուրումնավետ ճամբան, որ չքնաղ ծաղիկների միջով տանում էր նրանց [լեռան] կապույտ բարձունքները:

Ուստան մերթ ետ էր դառնում, նայում էր հետևները, հիացական բացականչումներով Հարությի ուշքը դարձնում էր հավանած տեղերի վրա: Հարությը մեքենաբար հնազանդվում էր նրան. լուռ ու մունջ:

Նրանք նորից բարձրանում էին. որքան ավելի առաջ էին գնում, այնքան ավելի գեղեցիկ պատկերներ էին նկարվում նրանց առջև, ծաղիկներն ավելի գեղեցիկ ու թարմ էին լինում, և հանդիպող փոքրիկ աղբյուրները ավելի քաղցրահնչյուն և լուսաշողշող[1]:

Մի խումբ սիրուն և պստիկ թռչուններ արտապատառ հրճվանքով թռան դեպի Ուստա Կարոյին [հենց երևան ի վեր] այնքան մոտիկ և հանկարծ ծալ եկան դեպի երկինք, արևի ոսկի շողերը խմելու, [նրանց թևերի] որ նրանց թևերի ծայրը դիպավ նրա երեսին:

Ուստան ոգևորված գոչեց նրանց ետևից:

– Ձեզի մատա՛ղ, տոտիկներդ ուտեմ:

---

[1] *Ին-2000-ում՝* շողշողուն

Մի փոքր էլ բարձրանալուց հետո կանգ առան մի [լույս] աղբյուրի վրա, որ ժայռից բղխում էր լույսի պես, և ծիծաղում էր ու կարկաչում, պաղպաջուն ալիքները սփռելով սեզերի վրա:

Ուստան փափախը զարկեց գետին, ուսի պստիկ խուրջինը դրեց վար, արագի չիշը հանեց մեջից և դրեց աղբյուրի մեջ, ապա նստեց աղբյուրի գլուխը, թաչկինակով սրբեց քրտնած ճակատը. Հարությը նստեց նրա կողքին, Ուստան հանեց երկու պատրաստի պապիրոսներ, մեկը Հարությին տվեց, մեկն ինքն առավ, սկսեցին ծխել և հանգստանալ: Ուստան նայում էր վառված աչքերով իր շուրջը, վեր, վար:

Վերև Արճա-Առիճ լյառը լռանիստ հանգչում էր իր վիթխարի [գահերի և] արոտների վրա:

Երկիրը, որքան մարդու աչքը կտեսնի, բռնկված էր արևի տակ. օդը այնպես վճիտ էր ու բյուրեղային: Հորիզոնները այնքան հեռացել էին, որ ասես, աշխարքից դուրս, անծայր ծովերի [ափերի] վրա էին խփել իրենց անծայրածիր վրանի փեշերը (քղանցքները): Հեռուներից լուսափրփուր երազների մեջից Մասիսի [արծաթե թագը դվխին] ադամանդի գմբեթն էր նշմարվում, և Բարթող լեռների շղթան հսկա քարավանի պես ձգվում էր և [երկնքի մեջ] հեռուն, երկնքի մեջ աներևութանում... Ուստայի և Հարությի աչքերի առջև կամսարականների աշխարքն էր փռված, որի [մի կողմը Ախուրյանը] հենց ձախ կողքին Ախուրյանը տիտանյան [մեծ] մերկ սուրի պես պառկել էր և շողում էր ոսկեփողփող: Անսահման զմրուխտի պես էր բովանդակ աշխարհը:

Իրենց շուրջը լեռնային արոտները փայլում էին, և ծաղիկները դեռ մանկական հասակումն էին՝ չքեղ, նրբաթիթեղ և հրեղեն խաղերով օրորվում էին աննշմարելի

այուքերից հուզված: Մի աշխարհածավալ բուրմունք էր սփռված ամենուրեք, լեռը իր ժայռերով, ապառաժներով և ձորերով միասին [խնկարուրում էր] հսկա բուրվառի պես խնկում էր:

Հետևում թե մոտիկ փայլատակում էր [բնությ...] աշխարհը գույներով, բույրերով և շողքերով, մի աբանչելի քաղցր երաժշտություն էր տարածված օդի մեջ՝ ներդաշնակած ճպուռների, թռչունների, գևիլյուների և ապրյուրների ձայնարձակումով[1], թեև խորապես լուռ էր, անհուն լռություն:

Եվ այնպես թարմ ու գեղեցիկ և երիտասարդ ամեն բան, որ ասես, այսօր էր շինած այս հինավուրց աշխարհը. և այնպես ուրախ էր ու պայծառ, ասես, ոչ ցավ կար աշխարհում, ոչ չարիք, ո՛չ մարդ է մեռել և կամ պիտի մեռնի:

Ո՞վ է [հյուսել] ստեղծել այս անպարփակելի[2] կախարդանքը, ո՞վ է հյուսել այս գերահրաշ բանաստեղծությունը:

Ուստան հիացած նայում էր, նայում էր և չէր հագենում[3]: Ապա ինքն իրենից ելածի պես գոչեց...

– Սիրտս բլբուլ է, աշխարհը վարդ, [ու դինի] ես սիրահարված եմ աշխարքի վրա, ես հարբած եմ աշխարքի գինով:

Հարությը արձագանք չտվեց Կարոյի սրտաղեղումին, խուրջինը բացեց ու ուտելիքները փռեց թաշկինակի [սեղի] վրա:

---

1 *ՈՒԿ-2000-ում՝ ձայնարկում*

2 *ՈՒԿ-2000-ում՝ անպատկառելի*

3 *ՈՒԿ-2000-ում՝ հայտնում*

– Հարուէթ ջան, մեկ տես, մեկ տես,– հիացած ձայնեց[1] *Ուստան,– աշխարքը տեղոցտեղ*[2] *հրաշք է, հրաշք:*

– Ի՞նչ հրաշք, ամեն բան պատճառ ունի, [Աստված է ստեղծող պատճառը] մեննակ ինքը Աստված պատճառ չունի:[մեննակ ինքն է հրաշքը:]

– [Բա, էս հրաշք չէ, ի՞նչ է,] Ունի, չունի՝ խելքս չի հասնի, մեննակ ուննենա-չուննենա՝ հաշիվը[3] *մեկ է. ամեն բան հրաշք է, էս ի՞նչ է, մեկ [աչե] նայե, էս ճանճը ինչ-պես կթռնի, աղբյուրն ինչպես դետնեն կբխե, բա ջուրը հրաշք չէ՞, պստիկ սերմեն ծառ կելնի*[4]*, պտուղ կուտա. բա էս հողը հրաշք չէ, որ ամեն բան կբուսցնե, ինչ հրաշքի զորք ունի մեջը: Խելքե-մտքե դուրս բաներ են. մարդ որ կմտածե, թե ինչպես ամեն բան իր կարգին է, իր ժամա-նակին արևը կելնի, գարունը կուգա, ցորենեն ցորեն կլի-նի, ձիեն ձի, չա՛տ հետու չերթանք, մենք մարդկային մեծ հրաշք ենք – էս մեծ, մեծ աշխարքի մեջ, հարսին կպաչես 9 ամիս 9 օր լման [տղա] երեխա կուգա, աչքի տեղ աչք, քթի տեղ քիթ. բա մարդու խելքը, բա մարդու լեզուն, հրաշք է, հրաշք. թե մեծ բաները, արևն ու ծովերը, թե պստիկ բաները ծաղիկն ու լվերը: Կտեսնես աշխարքի չի-նողը ինչ մեծ հրաշագործ վարպետ է եղել. չի հավանի, գլուխդ թաղեմ ոչ, ափսոս ես...*

– Լավ, լավ, թող քո ասածը լինի, մեկ խմե հլա էս հրաշագործ արաղը, խելքդ ավելի ծաղկի...

Եվ Ուստին տվեց մի բաժակ օղի. Ուստան խմելով չա-րունակեց իր խոսքը.

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝* գոչեց

[2] *ՈՒԿ-2000-ում՝* տեղտեղ

[3] *ՈՒԿ-2000-ում՝* աշխարքը

[4] *ՈՒԿ-2000-ում՝* կլինի

— Ի՛նչ խոսք, որ արադն էլ է հրաշք. բա չես զարմանա, թե ինչպես կրնանն, որ մարդ կհարբի. ինձի[1] համար ամեն բան հրաշք է. թե ծնվելը, թե քնելը, թե զարթնելը, թե մեռնելը. ես մինչի օրս չկրցա իմանալ, թե երբ կքնեմ, երբ ու ինչպես արթուն վիճակեն քնի մեջ կմտնեմ, էդպես, Հարութ ջան, ամեն բան հրաշք է, մեռնակ միշտ կտեսննենք, սովորական կերևա մեզի: Կըսես պատճառ ունի. հրաշք չէ, մարդու ձեռքով շինված բաները հրաշք չե՞ն. հեռու չերթանք, հենց էս ժամացույցը...— և հանեց ծոցից ժամացույցը և զարմացքով նայում էր, որպես թե առաջին անգամն էր ժամացույց տեսնում:

Հարութը լռելյայն նրան մի պատառ հավի միս տվեց հացի հետ, Ուստան պատառը ափում բռնած նրան ոգևորությամբ հարեց:

— Ու ես կըսեմ, որ էս հրաշք-աշխարքը հեքիաթի ու երազի պես սիրուն է, դևղեցիկ, աննման, հավիտյան փառք տալու արժանի ու զարմանալի: Էդոր համար էլ մարդ կարոտով, աչքը ծակ կհետանա էս սիրուն աշխարքեն... Հարութ ջան, ինձի նայե, քեզի հետ եմ,— Հարութը հետաքրքրությամբ նայում էր Ուստային,— ինչ որ մեր հեքիաթների ու երազների մեջ կան հրաշք-բաներ, էնոնք էլ կան աշխարքի մեջ, ու ինչ հրաշք-բաներ որ կան աշխարքի մեջ, էնոնք էլ կան մեր հեքիաթների ու երազների մեջ: Թող մարդիկ ասեն, թե հեքիաթներն ու երազները սուտ են, [էդպես] էդով կուզեն ասել, թե աշխարքի հրաշք բաները սուտ են. խնդալու խոսք... ու քանի որ աշխարքը կա ու մենք կարող ենք տեսնել, բռնել [աշխարքի] էնոր հրաշք-բաները, կնշանակե էդոնք հաստատ կան, էլ սուտը ո՞րտեղ է. [սուտ չկա, սուտը մարդկանց]

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝ քեզի*

աչխարքի պես մեր սուտ համարվող հեքիաթները – երազները էլ դուտ ճշմարիտ են. քանի որ ձևած են ու կարած աչխարքի հեքիաթի ու հրաչքի վրա. ամեն բան ճիշտ է Աստծո աչխարքի մեջ, ամեն բան հեքիաթ է ու հրաչք: [Էս խոսքին դու ինչ կասես] Ի՞նչ կասեն Սողոմոն իմաստունը, Խիկարը ու Էփրեմվերդին, էս խոսքիս դու ի՞նչ կասես:

– Հավատամ ու խոստովանիմ,– քմծիծաղով ասաց Հարուքը:

– Ինչի՞ կվնդաս, ես քեզի խնդալու բան չըսի,– վիրավորված պատասխանեց Ուստան...

– Ջեմ խնդա, կարո չան, դու խոսքս թաղավորեցրիր:

– Ինչպե՞ս, ասա տեսնեմ...

– Կարո, դու սուտն ու ղորթը խառնել ես իրար գլխիդ մեջ, չինել ես մի սիրուն հեքիաթ, աչխարքն էլ մի կատարյալ, անպակաս հեքիաթ, ու հարսնեուն, քնֆ կենես, դարդակ ամանեն գինի կխմես, կհարբիս: Գնչ, տխուր բաների ձենը ականջիդ չի հասնի, արթուն, բաց աչքով երազի մեջ ես, ու չես դիտի, օրթե երազի մեջ ես: Ու իսկի չես զարմնի, որ իմանաս թե երազի մեջ ես եղել:

– Ջեմ հասկնա, ինչ կըսես, [պարզ ասա] հայերեն ասա, հասկանանք:

– Օրթե կուզեմ ասել թե, դրուստ է, Աստված մեծ վարպետ է եղել, [չինել է] լցրել է աչխարքը չատ սիրուն բաներով, [խոսքի օրինակ գինի, արագ, բլբուլ, ծաղիկ, դուռնա] մենակ հազար անգամ [ավելի չատ] էվելոք լցրել է չատ գնչ բաներով, դու աչխարքը քարվանիդ վրայեն կնայես, ու քեզի դրախտ կերևա: Օրթե ես աչխարքին սառը խելքի աչքով կնայեմ, կտեսնեմ ամեն գնչ պակասություննները, ու կըսեմ, ախ, օրթե Աստված ըլնեմ, էնպես աչխարք չինեմ, էնպես կատարյալ, որ հազար տա-

րի քննես, մազի չափ սխալ չգտնես քու ուզածդ հնբիաթով ծերեծներ լիքը:

– [Ամբարտավան] Մեծ խոսան Հարութ, ի՞նչ պակաս աշխարք է, մեկ նայե տես, սրտիդ ուզած բաները բոլորը կան – դինի, հարս, դուռնա,– ընդհատեց Ուստան:

– Տո, աչքերդ [օրթն հարբած չես] մեկ չորս բաց արա նայիր... էս է՝ աղքատություն, ցավ ու կակիծ, ծերություն ու մահացում. էսոնք են հնբիաթը, սիրուն երազները, սո՞ւտ կըսեմ. ասա, դու հարբած ես, [չես տեսնի] աչքիդ ամեն բան դեղեցիկ կերևա, սրտիդ ուզածի պես:

– Բեզի էլ քու սրտիդ պես – դեշ, դեշ...

– Ուստա Ջան, ես ու դու ջոկ-ջոկ մարդիկ ենք, բայց նորեն իրար շատ նման ենք. դու զարթուն ժամանակ երազ կտեսնես ու կհավատաս սիրուն սուտերին ու հնբիաթներին, ես էլ [երբ] օրթն կհարբեմ կամ կնկա գրկի մեջ եմ, էն ժամանակ, աշխարքը աչքիս հնբիաթի պես կդառնա, դեշ բաները կջնջվին, ուրիշ խոսքով՝ իմ չինած աշխարքը կտեսնեմ, հասկցա՞ր ասածս:

– Էդ վազուց եմ լսել,– կարճ կապեց Ուստան:

– Վազուց թե հիմի, ես [եղածը] ճշմարիտ կըսեմ, ու կավելցնեմ, Ուստա Ջան, օրթն գլխավոր բանը մեզի համար մեր երազն է, որ սուտ ու դեշ աշխարքն ավելի առավել է ու ճշմարիտ. մարդ առանց երազի չի կրնա ապրել. երազի մեջ մենք թագավոր ենք ու աշխարքի տեր. տես, երեխան որ երեխա է, ճիպոտը ձի կշինե, կհեծնի, կխոսի հետը, ոնց որ դու քարվանիդ հետ, հաշիվը մեկ է: Ինչպես որ քո քարվանիդ հետ. հաշիվը մեկ է. ինչպես որ քու քարվանդ է քեզի համար ճշմարիտ, էնպես էլ էդ ճիպոտն է ճշմարիտ ձի:

– Ես ինչ կըսեմ, դու ինչ կասես:

– Ուստա Ջան, ես էն կըսեմ, ինչ որ դու կըսես. ես կըսեմ, մահը էս աշխարքը կդարձնե երազ, հնբիաթ, սուտ,

կա ու չկա, աչքի-երևույթք. ա՛յ, օրթե ես էս թիթեռը բռնեմ մեռցնեմ, [կնչանակե նա] ոչինչ դարձնեմ, ասել է, որ էն կար ու հիմա չկա, եղել է, չի եղել, հնքիաթի խոսքի պես. էդպես էլ պիտի աչխարհը անցնի, ու եղածը չեղած դառնա, ղորթը սուտ. ու մարդն էլ էս աչխարքի վրա պիտի երթա, ոտքը դրած տեղն էլ չպիտի երևա, ասես, քու քարվանդ է, որ ոչ եկել է, ոչ [կերթա] գնացել, ոչ եղել է, ոչ էլ կա. ինձի համար ամեն բան հնքիաթ է, [երազաստեղծ կյանք, երազաստեղծություն] երազ է, սուտ է, մենակ մահն է ղորթը, հաստատը, ու քանի մահը կա — աչխարք չկա...

— [Մա՛հ, մա՛հ, գլուխս տարար] Մարդը մի անգամ կմեռնի, դու ամեն օր կմեռնես...— զայրացած ասաց Ուստան և չուզեցավ այլևս խոսք ասել, որ չկրկնվի դիչերվա տխուր խոսակցությունը: [Բաժակը լցրեց արաղով և քթի տակ մրթմրթալով, թե՝ նորեն քեֆս փչացրեց, մի կումով խմեց արաղը և] Գլուխը կախ սկսեց հաց ուտել, և աղբյուրի ջուրը խմել:

Հարությը մի պահ մոլորված նայում էր Ուստային, ապա ինքն էլ հետևեց նրան: Երբ վերջացրին ճաշը, Ուստան հավաքելով խուրջինը, ոտքի կանգնեց ասելով.

— Ել երթանք, քայլենք, տեսննենք ի՞նչ կա:

[Նրանք քայլում էին լեռնային արոտների վրայով, ծաղկահյուս գորգի][1]

Կեսօրից անց էր. ճանապարհը ձգվում էր լեռնային հարթ արոտների միջով. նրանք քայլում էին ծաղկահյուս գորգերի վրայով. մի բարակ հով էր գալիս, մայրական կաթի պես [քաղ<ցր>] մեղմանուշ, ծաղիկների չնչով օծված, սրբում-տանում էր մարդու սրտից ու մտքից բոլոր

---

[1] *Ալ լուսանցքում.* «[այստեղ գեղումը] գեղում պետք չէ»:

հոգսերն ու վշտոտ մտքերը, սակայն անզոր էր Հարությին [սիրելու] մոռացություն բերելու. կյանքի անցավոր և ժամանակավոր լինելը, ունայնությունը աշխարհը նրա աչքին դարձել էր ոչ իրական մի բան, մի խաբուսիկ երևույթ, մի ցույց վազանցուկ. [մի երազ՝ որ իսկույն պիտի ցնդի] հաճախ թվում էր նրան, թե նա, աշխարհը, մարդիկ, կյանքը, իրերը երազի մեջ է տեսնում, այնպես որ երբ աչքերը տրորեն, իսկույն պիտի ցնդին, ոչնչանան. ամենուրեք մահն էր տեսնում հսկայաձև ազռավի նման, սև թևերը տարածած երկրի և երկնքի վրա և որը երկաթեն անմաշելի կտուցով քրքրում է, քանդում ամեն ինչ. կամ մի թանձր [ծուխի անթափանց] ծովանման խավարի պես պատել է մահը աշխարհ բովանդակ, բոլոր կողմերով, և խեղդում է ամեն ինչ, [մի անլույս ծուխի պես] անթափանց, անլույս խավար, որի միջով միայն մի ոսկի ճառագայթ էր անցնում, հույսի մի շող, որ բոլորովին չմեռցներ Հարությին,— դա Հրեղենի սերն էր և նրան դառնելու հույսը — ախուր էր միշտ նրա հոգին, և այսօր էլ, բնության գեղեցկություններով ապրված և հուզված, ավելի ախուր էր: Սրտի հեծեծանքով հառաչեց նա կանգնելով դաշտի մեջ և Ուսասյի թևից քաշելով...

— Կարո, ես քեզի ասել եմ, օրթեն Հրեղենիս չգտնեմ, ես կխելառվեմ, ես կմեռնեմ, [աշխարքի] խառնոցները, դեղերը կվառեմ, գերանդին կառնեմ բոլոր կանանչ արտերը կքաղեմ, երկինք կպատռեմ...

Ասես, խեղդվողի կոկորդից էին հնչում նրա այս խռպոտ խոսքերը... Կարոն վախեցած նայեց նրա ջղային կրակով վառված աչքերի մեջ և ցավակցաբար ասաց, [բռնելով] ձգելով իր ձեռքը նրա [ուսին] պարանոցով:

— Հոգիդ ուտեմ, ինչ եղավ քեզի, ինչպես ես փոխվել, ասես Հարությը չես:

– Կարո [ջան], ես միշտ էն Հարութն եմ. ես էլ կտեսնեմ աշխարքի մեջ շատ սիրուն բաներ կան, օրթե կմտածեմ թե էդ սիրուն բաները, արևը, աստղերը, լուսնյակը, աղբյուրները, ծաղիկները, սերն ու գինին, պիտի անպատճառ մի օր գա, որ մեռնեն, անցնին, սրտես արյուն կկաթե: Աստված մարդուն էս լավ բաները կուտա, հետո գլխուն զարկե կառնի, ոնց որ երևխի ձեռքը խնձոր տաս ու էլի առնիս. [էդոր համար ես] մահի պատճառով աշխարքը համ շա՛տ կսիրեմ, համ շա՛տ կատեմ, աշխարքի սիրունությունը ինձի ավելի կտխրեցնե, ու մահն ավելի սարսափելի կդարձնե. ու մահի սարսափեն աշխարհ աչքիս ղվվելի, գանելի կդառնա:

– Հարութ ջան, արջը 40 խաղ գիտե, 40-ն էլ տանձ ու խնձորի մասին. դուն էլ մի գլուխ մահի մասին, ուրիշ բան չունես խոսելու, ծով աշխարքում էլ ուրիշ բան չունես տեսնելու, հերիք[1], ախբեր ջան:

Եվ մի պապիրոս նրան տալով թևն ընկած առաջ էին գնում:

– Կարո ջան, ինչ էնեմ, որ աշխարքի վրա մենակ մահը կտեսնեմ իշխան-իշխանապետ, ու գերեզմանը [ամենեն] մեն-մենակ օղորթ բանը ու Հավիտյանս Հավիտենից էլ օղորթ պիտի մնա և սուտ աշխարքը էնոր մեջ պիտի պարտկի Հավիտենանա: Ա՛խ, Կարո ջան, մահը միշտ մտքիս մեջն է, առավոտ կդարթնեմ, կնայեմ աշխարքին, կքաշվեմ, կհեռանամ, ասես թե աշխարքը սուտ է, աչքիս կերևա, էս է փչեմ, պիտի չքվի. սիրտս չի կպնի ոչ մի բանի, ինչ բանի վրա որ կնայեմ, ինձի էնպես կերևա, թե էս է հիմի պիտի մեռնի. սար ըլնի թե գետ, աստղ ըլնի թե մի ուրիշ բան. մահը դեմ երեսիս կանգնել է օր ու գիշեր:

---

[1] *Ին-2000-ում՝ հեքիաթ*

– Հարութ ջան, իմաստուն եղիր ու քանի քիչ մտածես մահի մասին, էնքան բախտավոր կըլնես, մեկ էլ որ աշխարքն ինչպես բոնես, էնպես կերթա. (սրտիդ պես է աշխարքը, ուրախ ես ու պարթ, աշխարքն էլ ուրախ է ու պայծառ, տխուր ես ու հուսահատ, աշխարհն էլ էդպես է – ավեր, ավերակ): Ուրախ բոնես՝ ուրախ կերթա, տխուր բոնես՝ տխուր: Կուզեմ ասել, թև քու ձեռքդ է:

– Չէ, կարո, մեր ձեռքը չէ. խելք պիտի չունեցած ըլնեինք, անբան ծնված, օրթն չիմանայինք աշխարքի ունն ու բունը, չքննեինք ու չգիտնայինք, թև մահը ընկած է բոլորիս հետևեն ու չուտ թև ուշ պիտի հասնի ու մեզ տակովն անի, ա՛յ, էս հավքերի ու ծաղիկների պես, միամիտ, միամիտ. օրթն էսոնք էլ գիտնային թև մահ կա, էլ [քաղցր] ուրախ չէին երգի, էլ անուշ հոտ չէին տա:

– Դու թևկուզ դրոց մարդ ես, Հարութ ջան, մենակ էն չգիտես, որ խելոք մարդը էն է, որ իր սրտին խոսք կհասկցնե, ցավին ու դեչ բաներին կհաղթե, ինքը կկանանչի և էլ ուրիշներին կկանաչեցնե...

Նրանք հասել էին մի լեռնային վճիտ վտակի վրա, որի ափերին մակաղած էին ոչխարները. կաթի և բրդի մի խառն հոտով լցվել էր օդը: Հովիվը մոտեցավ նրանց, խնդրեց որ նստեն և թարմ կաթ [տա] խմեն, [նրանց. հյուրասիրե նրանց] քարի վրա նստեցին նրանք, հովիվը կաթը բերեց: Ուստան նրան իրենց հերթին հյուրասիրեցին արաղով և պապիրոսով: Մի քիչ հետո, նրանք շարունակեցին ուղին. յայլան մոտիկից երևում էր մի [բլու<րի>] սառավայրի վրա փռված: Մի պահ լուռ էին, Ուստան ծաղիկներ էր քաղում ու [փունջ] փնջում, մի փունջ Հարութին տվեց, որը դժկամորեն առավ փունջը. մի քիչ հոտ քաշեց, ապա անդիտակից կերպով ձեռքում տրորում էր փունջը, [հետո ներքև նետեց:] և թերթերը մեկ-մեկ վայր էին ընկնում:

— Կարո, խոսք պիտի ասեմ, չնեղանաս, սրտիս դառնությունեն կխոսեմ, [միտքն է] լցված է սիրտս. Աստված ինչո՞ւ իրեն խոսքը չկատարեց, օրթե բոլոր արարածներին ասավ, թե աճեցեք ու բազմացեք, լցրեք աշխարհ. ապա ինչո՞ւ էնպես էրավ, որ իրար կուտեն. մեծը պստիկին, պստիկը մեծին, մարդը ամենքին ու ամենքը մարդուն, ամեն բնեն, ամեն քարեն ցավ ու արյուն կկաթե:

— Հարութ, հալա մեկ մտածիր թե էդոր վերջը ո՞ւր կերթար, թե իրար չուտեին. տո, դուռն երթիկ կլցվեր անասուններով, որդուններով, ճիճուններով, թռչուններով, իսկի խտխտալու տեղ չէր ըլնի, չունչ քաշելու ճար չէր ըլնի, բերանդ բանայիր պտի լցվեր ժժմունքներով: Վերջը նորեն իրար պտի ուտեին, հնար չկար:

— Թող Աստված աշխարքը չա՛ւ մեծ, մեծ անծայր չիններ, աճեին, լցվեին ու էլի հող մնար, իրեն ճեռքն էր, չէ՞.— էլ ինչ պետք կար իրար ուտելու, իրար տեղը բռնելու, ինչո՞ւ կյանքը ստեղծել ու մեռցնել, մեկ ճեռքով չինել, մեկէլով քանդել:

— Տո, Հարութ, դու էն բանի վրա զարմացիր,— ասաց Ուստան,— որ աշխարքի սկզբեն մինչև էսօր արարածները իրար կուտեն, կուտեն, բայց նորեն կա ու վերջ չունեն. ուտվողը ուտող է [ուտողը ուտող՝ ուտվող] և էլ ուտող ուտողի, բայց նորեն ախբոր պես իրար կողք-կողքի կան Աստծո կշեռքի վրա հավասար, [արևի] Աստծուն սիրելի, Աստծու արևին արժանի, կտեսնե՞ս: [Սերը կլցնե աշխարհի մեկ կողմեն, մահը կդատարկե մեկէլ կողմեն, սերը կլցնե, մահը կդատարկե, բայց հաղթողը միշտ նորեն սերն է: Աստված ամեն բան մեծ խելքով է չինել, մահն էլ պետք է, որ պառավ[ծառն]ներին [սրբե] ավլե տանի, նոր ծլերին տեղ բաց անե. ինչ կլիներ թե մահ չըլներ, պա-

ռամներով, փշած ծառերով կհոտեր աշխարհը, պարուն չէր ըլնի, ծափ-ծաղիկ պարուն:

– Թող ծերություն չըլներ, թող հավիտյան երիտասարդություն ըլներ, օրթե բարի Աստված էր:]

– Բա ուսումդի [տանջան...] չարչարանքը, բա մեռնելու ցավերն ու սարսափը, ինչո՞ւ համար է էս իրար մորթելը. կարելի է Աստծուն ուրախություն կրերև արարածների տանջանքը. և ի՛նչ խելք, ես չեմ հասկնա, որ Աստված էսքան զարմանալի բաներ է չինել մենակ հետո ավերելու համար. բա ախտոս չեն էս նշխուն հավքերը, ծաղիկները, [աստղերը] ձիերն ու մարալները, մարդ ու կնիկ, հարս ու երեխա:

– Հարութ ջան,– բաղդրությամբ ասաց Ուսուան,– ես դիտնակ ուսումնական մարդ չեմ, Աստծու առաջ ես մի հասարակ վարպետ եմ, ու չինած գործս դիտեմ, դիտեմ, թե էս քարն ինչո՞ւ էստեղ կդնեմ, էն քարն ինչո՞ւ էնտեղ. Աստված որ ստեղծել է էս հրաշք աշխարքը, արևով, աստղերով-ծովերով, հազար ու մեկ արարածներով, ի՞նչ է, չգիտես, ինչո՞ւ է արեր, ինչի՞ էս մեծ ծախսերը դուր պիտի կորեն. չէ, հոգիս, վարպետ մարդը իր չինած լավ գործի վրա կդողա, ոնց որ հերը իր չինած տղայի վրա. ինձի որ հարցնես, Աստված մեծ նպատակի համար է չինել, որ խելքերս չի հասնի:

– Ջար նպատակի համար:

[– Էդպես խոսք մի ասա, խեղճ ես:

– Օրթե Աստված բարի էր, թող ծերություն չըլներ, հավիտենական երիտասարդություն ըլներ, թող մահ չըլներ:

– Հարութ ջան, Աստված ամեն բան]

– Էդպես խոսք մի ասա, Աստված ամեն բան բարի նպատակի համար է չինել, մահն էլ պետք է, որ պատավ-

ներին ավելե տանի, նոր ծիլերին տեղ [տա] բաց անե. ինչ կըլներ, թե մահ չըլներ, պառավներով, փթած ծառերով կհոտեր աշխարհը, չէր նորոգվի ու դարուն չէր լինի, ծափ-ծաղիկ գարուն:

– Թող ծերություն չըլներ, թող Հավիտյան երիտասարդության ըլներ, արևի հետ ապրեինք, ապրեինք, թող մահ չըլներ:

– Հարութ ջան, վախենամ չա՛տ գնչ ըլներ, հլա մտածե, մարդ ապրի, ապրի 1000 տարի, էլի 1000 տարի, կհոգնի, կզզվի, կգանի ապրելուց, համը կելնի, կուզե մեռնել ու մահ չի գտնի: Հնքիաթի են մարդու պես, որ հոգին ծախել է սատանին, որ անմեռ մնա. ապրել է, ապրել է, զզվել է ապրելուց, ու վերջը Աստծուն խնդրել, [լացել] աղաչել է, որ մահ տա, հանգստանա:

– Էդ սուտ հնքիաթ է, Ուստա, օրթե մարդը [միշտ առող<ջ>] Հավիտյան երիտասարդ մնա, ուժով ու առողջ, իսկի կյանքեն չի կշտանա ու մեռնելն էլ մտքեն չի անցնե. թե չէ, հիմի ինչ, էս ինչ կյանք է, [միշտ մահի] խախուտ, սուտ ու փուտ հիմքի վրա չինված, գերեզմանի կերակուր, երկու օրվա հետ, Հավիտյան մահ: Ես անմահություն կուզեմ, կհասկնաս, անմահություն,– եղավ՝ Աստծուն փառք կուտամ, չեղավ – իսկի էլ չէ:

Ուստան դրեթե չէր լսում Հարութին, մտածում էր Հարութի աստծների վրա և յուրովի համաձայնում, թե իսկապես լավ կլիներ, որ..ծերություն ու մահ չլիներ, Հավիտյան երիտասարդ, հավիտյան առողջ, ուժեղ, զվարթ. բայց անկարելի բան էր պահանջում, անկարելի. ճակատագրի դեմ հակառակել անհնար է, դրածը չի ջնջվի, պիտի հաշտվել ճակատագրին, բայց ինչպես հաշտվել, ինչպե՞ս այդքան խոսք հասկացնել, համոզել... և գլխաքաշ,

մտորելով առաջ էր գնում, անդադուչարար ձեռքի փնջի ծաղիկները մեկ-մեկ վար թափելով:

Մեկ էլ հանկարծ Հարությը լսավեց [ուժով] Ուստայի ականջի մեջ.

– Ուստա, քեզի հետ եմ, աշխարքն ինչո՞ւ համար է, ինչո՛ւ:

Ուստան քնից արթնացածի պես աչքերը մեծ-մեծ բացեց և չփոթված հարցրեց.– Ի՞նչ, ի՞նչ:

– Աշխարքն ինչո՞ւ համար է:

– Մարդու համար է. որ վայելե, երջանիկ ըլնի:

– Մենակ է՞դ:

– Հա, երջանիկ ըլնի, ու երբ մարդ երեխայի պես երջանիկ ըլնի, էլ քեզի պես տխուր բաների վրա չի մտածե:

– Մարդն ինչո՞ւ համար է:

– Որ լավ գործեր անե. թե ինքը երջանիկ ըլնի և թե ուրիշներին երջանիկ դարձնե...

– Վերջը...

[– Աստուծո գիտնալիքն է, գիտնալիքն է...

– Մա՞հը...

– Մահի]

– Որ երջանիկ ըլնիս, վերջի [մահի] մասին չես մտածե: Աշխարքը աչքիդ դրախտ կըլնի...

– [Աշխարքը] Դրա՞խտ – աշխարքը ինձի համար կրակի վրա պղնձե մեկ աման է, ջրով լիքը, մարդիկ էլ ձկների պես էդ դրախտում կլողան, կպարեն, կխաղան, ու չգիտեն, որ չուտով ջուրը պիտի եռա,– մարդիկ էլ պիտի խաշվին, խաշվին, խաշվին. ըսել է՝ մարդկանց երջանկությունը չգիտնալու մեջ է: Առանց անմահության չկա երջանկություն, կարո, կարո[1]*:*

---

[1] *Ձախ լուսանցքում առանց տեղը նշելու.* «ինքն իրեն հետ»:

Եվ վշտով ու չարությամբ նայում էր Ուստա Կարոյի աչքերի մեջ: Ուստան աչքերը հեռացրեց նրանից և կտրուկ ասաց.

— Աստծու դործներին մի խառնվի, թե չէ մնացածը դիտես...

Եվ արագացրեց քայլերը. Հարությը քթի տակ անորոշ բառերով փնթփնթում էր, աշխատելով հասնել նրան:

Յայլային արդեն մոտեցել էին, մի քանի քայլ էր մնում. Ուստան հավաքեց իրան, փափախը չիտկեց, բեխերն ոլորեց և ձեռքի մի թափահարում, ասես, վանեց տխուր մտքերը հեռու և դարձավ Հարությին ասաց.

— Օրթի հասանք յայլեն, քիթ ու մռութդ բաց, ամպերդ քշե. հոդիդ կհանեմ թե մեկ էլ գլուխս տանիս. դիշերս քեֆ պիտի անեմ. հարս ու տղա գլուխս պիտի ժողովեմ, պարեմ ու խաղամ:

Դեպի երեկո էր թեքված օրը, երբ նրանք մտան տիկորցինների յայլան — ամառանոցը. մի սարահարթի վրա, կարկաչուն առվակի ափին փռված էին դյուղացիների անշուք խրճիթները, անտաշ քարերով, հողով, ճեմով մի կերպ չինված էին նրանք ամառը մի երկու-երեք ամսվա դործածության համար. կային և մի քանի վրաններ սև մազով հյուսված: Ամբողջ ամառանոցում տիրող տարրը երիտասարդ, միջին հասակի կանայք էին և մանր երեխաներ. [ամեն տուն ընտանիք ուներ] այր մարդ գրեթե չէր երևում. նրանք, որ առհասարակ երիտասարդներից էին կազմված լինում, ցերեկը դուրսն էին լինում ոչխարը և նախիրը արածացնելու համար, միայն երեկոյան էին ամառանոցը դառնում: Ջափահաս և մանավանդ ծերոն

մարդիկ բնակ չէին սար գալիս. ամառանոցը երիտասարդ, առույգ ուժերի վայր է, ուր անխոնջ գործում են յուղի, պանրի, [ձմռան պաշարը] տարվա պաշարը պատրաստելու համար:

Երգիհների առջև նոում էր աշխատանքը, բացօթյա օճախների վրա եփում էր կաթնաների մեջ կաթը, խնոցիները շառաչով գործում էին, կանայք մերկ ոտներով և հոլանի ձեռներով աշխատում էին, երգելով, ծիծաղելով, միմյանց հետ կատակելով. ամառանոցում անհամեմատ ազատ էին կանայք իրենց չարժուձևների մեջ, քան գյուղերում, տանը:

Ուստան և Հարութը դիմեցին Տերտերանց խրճիթը. Հարութի հորեղբայր Վարդան աղայի կնիկը, Եսթերը [Թոնիրի դրսի] դուրսը Թոնրի [վրա] շուրջը դառնում էր՝ մեծ չերեփը ձեռքին, հանդից վերադարձողների համար կերակուր էր չինում. Տերտերանց մյուս հարսներից, որ սարն էին եկել, զբաղված էին զանազան գործերով:

— Եսթեր քուրիկ, բարով տեսանք,— ասաց Ուստան, մոտենալով նրան և ձեռք տալով:

— Բարով եկաք, հազար բարի եկաք, ինչ լավ էրիք եկաք, ապրեք որ մեզի մտքերդ բերիք, Հարութ ջան, անունիդ մեռնիմ, կարոտցել էի քեզ,— և համբուրեց Հարութի ճակատը, Հարութն էլ նրա ձեռքը:

Եսթերը [Հարութից հազիվ մի] 40 տարեկանից [հազիվ] անց մի աշխույժ կին էր, [սակայն իր ամբողջ] հրամայական հայացքով, նահապետական մի մեծ մոր տպավորություն էր թողնում, ակնածելի և պատկառելի, ամառանոցում նա էր տանտիրուհին, բոլորը նրան էին հնազանդում:

— Ուստա ջան, գիտեմ, որ բերած կըլնես Հարութիս, էնոր թե մնար, իր հոլիկեն դուս չէր գար. էդոր համար քե-

դի էսօր լավ պիտի պատվեմ, վերի ոչխարի միս պիտի կերցնեմ, մեր Սիսակն է զարկել. ասես, ձեր գալը գիտեր:

– Բախտ ունենք, Եսթեր քույր, միտքս է դիշերս լավ քեֆ աննենք:

– Ուզածներիդ պես քեֆ արեք, հիմի ջահելները կուդան, գումար չենլիքը գլուխներիդ ժողվեցնեք. լավ պար խաղցող հարս ու տղաներ կան, տիկ, չվի փչողներ. թող ուրախանան ձեր պատճառով, ապրեք, զորանաք:

Տերտերանց ընտանիքը՝ մանր ու խոշոր, որոնք ամառանոցումն էին, եկան բարևեցին նրանց, [Հարուքը] հարսները համբուրում էին նրանց ձեռները, իսկ նրանք համբուրում էին փոքրերին, Հարուքը մեկ-մեկ հարցնում էր ամենի առողջության և տրամադրության մասին: Իր հարազատներին տեսնելով նրա սիրտը բացվեց, և ժպիտը միշտ փայլում էր նրա մշտաթախիծ դեմքի վրա: Ողջ տանեցիք ուրախ էին, որ Հարուքին տեսան: Երբ մնծերը ցրվեցին իրենց[1] գործերին, նրանք երեխաների հետ առավակի ընթացքով կամաց-կամաց քայլում էին ընդառաջ գնալու համար հոտին ու նախիրին, որոնց վերադարձի ժամը մոտ էր արդեն:

Արևը մայր էր մտնում. ոսկե ընդարձակ հորիզոնի վրա մանիշակագույն-ստվերամած լեռները բարակ նուրբ երիզներով[2] ձգվում էին այնպես գեղեցիկ ու գրավիչ, որ [Ուստան աչքը չէր հեռացնում այդ չքեղ տեսարանից] նույնիսկ Հարուքը ոգևորված դիմեց Ուստային...

– Ախ, չա՛տ սիրուն է, չա՛տ, չա՛տ, օրթե ջաղացս չա՛տ չսիրեի, հոլիկս էստեղ կչինեի:

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝* «տանեցիք ուրախ էին, որ Հարուքին տեսան: Երբ մնծերը ցրվեցին իրենց» *հատվածը բաց է թողնված:*

[2] *ՈՒԿ-2000-ում՝* երազներով

– [Ես էլ էն կմտքեմ,– ասաց Ուստան,– թե արևն էս-տեղ իր գործը պրծավ] Հա, էստեղ վերևը, արևի մոտիկ, ի՛նչ փառավոր արև է՝ կարմիր վարդ,– լուսթյուն, ապա չարունակեց,– էս է՝ արևը հիմի կերթա իր փառքն ուրիշ աշխարքների [տալու] վրա քցելու, օրհնությունը, չնորհքը, աչքը...

– Հա, Ուստա Ջան, կերթա[1] քո ներսի ու դրսի աշխարքներդ... վրա աչք ածելու:

– Ախ, երնեկ էր, մարդ արևի հետ երթար, միշտ լույս [տիրեր], տաք, միշտ վարդ ու ազոթրան...

– Ուստա Ջան, չըսե՞ս, հիմի քարվանիդ տեղ կուզես արևը հեծնել, ինչ ազահ մարդ ես:

Երեխաները լսեցին հոտի ոտքերի ձայնը, և ուրախ-ուրախ առաջ թռան. քիչ անց հսկա հոտը ծովանման տատանվելով և մայելով մոտե[նում էր]ցավ յայլային, և խռնվեց[2] խրճիթների առաջ, մի զվարթ իրարանցում ծավալվեց ամառանոցում. երեխաները ուրախ-ուրախ ճռվողյունով բռնում էին ոչխարների գլուխները, և իրենց մայրերն ու քույրերը թշ-թշալով կթում էին լուսեղեն կաթը: Ապա տեսնելու բան էր, թե ինչպես կիթից[3] հետո, բաց թողած գառները և ուլերը[4] մայելով ու մկըկալով հարձակվում էին իրենց [մորերի] ծնողների ստինքներին, ծծելու համար [մայրական] հարազատ կաթը, որ իրենց մայրերը՝ մարդկանց բաշխելուց հետո, նորից բավական պահել էին իրենց ձագուկների համար. անհագ ու անհամբեր ծծում էին ձագուկները՝ փոքրիկ գլուխները ա-

---

1 *ՈՒԿ-2000-ում՝* **գերեց**

2 *ՈՒԿ-2000-ում՝* **խառնվեց**

3 *ՈՒԿ-2000-ում՝* **կթելուց**

1 *ՈՒԿ-2000-ում՝* «և ուլերը» *բաց է թողնված*

մուր հարվածելով մայրերի կողերին, իսկ սրանք սիրով ու դորովով լիզում էին իրենց փոքրիկների քնքուշ մորթերը…

Մինչ այդ եկավ նախիրը ահագին բառաչով, և կրկնվեց նույն տեսարանը: Եկան Հարուքի հորեղբոր տղաները, ամենքը իրենից երիտասարդ, իրար գլուխ հավաքվեցին, ապա ծառաների հետ սեղան նստեցին: Ընթրիքից հետո, բոլորը թիկն տվին պատին, [արաղի չիշն] արաղը առաջներին, ծխում էին. երիտասարդ տղերք և կանայք և աղջիկներ՝ լսելով նրանց գալը, եկան ուրախ ժամանակ անցնելու: Ամենքին Ուստան մեկ-մեկ բարևում էր և հետները կատակում. կանայք սրտաբաց հայտնում էին իրենց ուրախությունը Հարուքին տեսնելու համար:

Կարմրադեմ ահագին լուսինը բարձրացավ արևելքից ու լեռ ու դաշտ ողողեց արծաթե քնքուշ լույսով:

— Եսթեր քույր,— ասաց Ուստան, արաղի բաժակը լցնելով,— բախտով ծերանաս, բարելի սեղան նստես յոթն թոռներով, կյանքիդ համար կխմեմ:

— Անուշնե՛ր,— ձայնեցին ամեն կողմից:

Ապա բաժակը տվեց Եսթերին:

— Ուստա ջան, չեմ կրնա խմե, մենակ, ես էլ Աստուծմեն կխնդրեմ, որ սրտիդ/մտքիդ խորհուրդը կատարե: Բարի հիշատակ մնաս…— և մի քիչ խմեց արաղից:

Ուստան ամենքին արաղ ներկայացրեց. որը խմում էր, որը ո՛չ:

Խմող կանանց մեջ մի երիտասարդ, սիրուն կին տեսավ, Հայրոյենց հարսը, որ առաջին հայացքով խածեց Ուստի սիրտը. Ուստան լուսնի լույսով զննում էր նրան, ամենեն կարկառունը նրա փարթամ կուրծքն էր, որ ասես, կրծկալը պատռել ուզում էր դուրս թռչել:

Ուստային թվաց, թե նրա ծծերի ցցված պտուկները երկու աչքերի պես՝ կարոտով, փափագով նայում են ուղակի իր վրա:

Բաժակը նորից տվեց նրան, որը նազ քաշելով խմեց: Կանայք [ծիծաղ...] բրբջալով ու նրա կուշտը բոթելով ասացին.

— Աղջի Նանո, կրակ չուտես, կհարփիս, [ինչպ...] դման կխմես...

— Ես լեղի չէ՞, ինչ կա որ...

— Լեղին թշնամուդ փորը ըլնի, քաղցրը — քու, Նանո քուրիկ. կուզես մեկ հատ էլ տամ:

— Տո՛ւր, վախցող չկա:

«Էս հարսը [բաներն չի] բո է չի վախնա, դործին կուգա»,— [առու ըլնի՝ կթռնի, լոր ըլնի՝ կրռնե] մտքում ասաց Ուստան և բաժակը լցրեց:

— [Եսթեր կինդ... Եսթեր] Եսթեր խանում, օղորմի հորն ու մորդ, երկեն արև որդուդ:

— Ուստա, դինավոր սուրբ Գևորգը մուրազդ տա:— Եվ մի կումով խմեց, ընդհանուր ծիծաղը [ծածկեց] փռեց բոլորի վրա:

[«Ինչ լավ միտքս հասկացավ, մուրազս էսօր՝ էս որ դու ես».— նորից մտքի մեջ խոսեց Ուստան:]

— Տղերք ջան,— դիմեց Ուստան երիտասարդներին,— ով որ չնորհք ունի՝ թող ցույց տա. տկզար, փողհար, թող առաջ գան, անուշ ձեն ունեցող թող խազ ասե. երկու անդամ աշխարհ գալու չենք, ուրախանանք:

Երիտասարդներից մեկը չվին հանեց դոակի միջից, սկսեց նվագել. երկու տղա երգով ձայնակցեցին նրան. մի երիտասարդ վազեց տիկը բերելու. քիչ անց երգ, չվի, տիկ խառնվել էին իրար և հարս ու աղջիկ Ուստան պարի էր քաշել, և պարում էին, [Նանո ձեռքը] նույնիսկ Հա-

րուքը պարի մեջ էր մտել և հաճույքով, ինքնամոռաց պարում էր:

Եսթերը նորից մի սեղան բացեց և խնդրեց, որ մի քիչ ուտեն, հանգստանան, նորից պարեն:

– Ջոքանչներս մեզի շատ կսիրե,– ասաց Ուստան,– վերի աչխարք հասանք:

– Ջունեցածդ ղոքանչները,– ծաղրեց Հայրոյենց Հարսը:

– Տեսար, Ուստա, Նանոն ինչ լավ տեղը դրավ,– ասաց Եսթերը,– կնիկ առեք, մարդու շարք մտեք, վրաներդ խոսող չլինի, Հարուքիս էլ խոսք հասկցրու, կարմիր-կանանչներդ էլ մեկտեղ կապենք:

– Եսթեր հարսիկ,– ասաց Հարուքը,– ես մաղոնս մաղել, մաղս պատին կախել եմ. [պսակի] կնկա համն առնողը էլ չի պսակվի: [կնիկն ինչ է որ]

– Հարուքը լավ ասավ...– և սակայն Ուստան չուզեցավ շարունակել իր միտքը:

– կնիկն ի՛նչ գեշ բան է, որ,– վիրավորված ասաց Եսթերը,– կնիկը չըլներ, դուք որտեղեն կըլնեիք:

[– կնկան չհավնող մարդը դուք եք մնացել]

– Ակաս-մակաս դուք էիք պակաս կնկան չհավնող, ամենեն մեծ տղամարդին ձեր չհավնած կնիկը իր ասեղի ծակեն կանցնե, դուք ո՞ւր կմնաք,– վրա բերեց Նանոն:

Բոլոր [ներկա...] չուրջիննները զվարթ ծիծաղեցին, Ուստան [ասաց] պատասխանեց.

– [Ամեն կնկա մասին չէ մեր խոսքը] կնիկ էլ կա, կնիկ. լավ [կնկա վրա չէ Հարուքի խոսքը] կնիկը գլխուս վրա տեղ ունի:

– Ջէ, կսխալիս, ամեն կնիկ կնկա նման է, [բան ունի՞ս, ասա] լավն ու գեշը չկա, ամենքն էլ գլխիդ վրա տեղ պիտի ուննենան:

[— Բան չունիմ, կարճ կապեց Ուստան, և նորից յարեց Ադամի բամբիռը:]

Նանոն հաղթականորեն հայացքը պտըտում էր բոլորի վրա և կանգ առավ նորից [Հարութի] կարոյի վրա, նրանից պատասխան ստանալով:

— Բարով եկար, քա չես իմացել, որ կնկա օխթը պորտը [քննեցինք] քննելեն, սատանա է դուրս [եկավ] եկել:

[Հարութը. — Ինչի էդքան հետու կերթաս, կնկա պորտի տակը հենց սատանա կա: Սատանան [հենց ինքը] հենց ամեն կնկա պորտի տակն է:]

— [Սխալ ես] Հրամերես, Հարութ [ջան, կնիկը հրեշտակ դուրս եկավ] մարդն է սատանա, կնիկը հրեշտակ է:

— Հրեշտակ, տո՛, Գալոյենց քոռ Ջաննոն էլ հրեշտակ է,— հարցրեց Հարութը:

— Հա՛, տեղոց տեղ:

— Ինչ տեսել էինք տեսել, քոռ հրեշտակ չէինք տեսել,— խնդալով ասաց Ուստան, և նրա զվարթ ծիծաղը վարակեց բոլորին, մանավանդ տղերանցը, որոնք իրար բոթելով ծիծաղում էին ու ծիծաղում:

Նանոն վիրավորված ու տաքացած վրա էր տալիս, բայց մարդ բան չէր հասկանում նրա արագահոս խոսքից:

Եսթերը խաղաղացնելու համար, հանգիստ ձևով ասաց.

— Ուստան ու Հարութը էն սատանեքը չեն, որ մի խաչակնքելով չքվեն.— տո, Սարո՛, տիկդ փչե, Ուստա, չահելներին պարի քաշե՛:

Ուստան վեր թռավ տեղից, փափախը կորզեց ծոծրակի վրա և հաշտ սրտով բռնեց Նանոյի ձեռքը և սկսեց պարը վարել: Երբեմն երբեմն, ամուր սեղմում էր Նանոյի ձեռքը [խորհրդավոր] բազմիմաստ խորհուրդով, և նայում

էր նրա դեմքին, սակայն լուսնի լույսի տակ անկարող էր լավ կարդալ նրա աչքերի լեզուն: Ուստան ոգևորված պարում էր, ոտքը գետին զարկում, թաշկինակը ճոճում օդի մեջ, Հարությը [նույնպես] նայելով նրան, ինքն էլ էր խանդավառվում, պարեցին, պարեցին, մինչև հոգնեցին և փռվեցին գետնի վրա, որը ծալապատիկ, որը կողքի վրա:

– Ուստա ջան, մի բան պատմե, ջահելները ուրախանան,– խնդրեց Եսթերը:

– Ի՞նչ պատմեմ, մխտքս բան չի գա,– ասաց Ուստան՝ ճակատի քրտինքը սրբելով և հևալով:

– Ուստա ջան, էն պատմե, թե ինչպես քու էշդ երեցփոխի [հերն] քեռին է եղել. չա՛տ խնդալու բան է,– ասաց երիտասարդներից մեկը:

– Տո, տղա, դու որտեղի՞ց գիտես էդ պատմությունը,– հարցրեց Ուստան:

– Էն ձմեռը, մերոնց օդեն պատմեցիր, մխտքդ չէ՞...

– Ուստա ջան, Ուստա՛, Ուստա, պատմե՛, պատմե՛, լսենք,– չորս կողմից թափվեցին թախանձով նրա վրա:

Ուստան բեխերը ոլորեց, հավաքեց իր հիշողությունը և սկսեց[1]:

«[Քարվանս կորցնելուց հետո, եկա, ընկա] Վաղուցվա բան է, էն ժամանակ եկա Ղարաբաղ. էհ, կապրեի մեկ գեղի մեջ, անունը [Սխտորաչեն] Ծմակաչեն, էստեղերի պես վարպետություն կընեի, ճակտիս քրտինքով կապրեի: Էդ գեղի տերտերը լավ մարդ էր, օրն ի բուն գեղացոց տները ման կուգար. կխոսեր, կխրատեր, կուտեր, կխմեր. ամիսներով ժամի դուռը չէր բանա, ժամ չէր անե, կասեր թե՝ ժամը մարդու սրտի մեջը պիտի ըլնի. մենակ կնունքի, պսակի, թաղման ժամանակ դուռը կբանար, մեկ էլ նա-

---

[1] Տողի դիմաց, այ լուսանցքում. «(Հարմար կապել...)»:

վակատիկ տոներին: Երեցփոխը էնոր վրա դանդատավոր եղավ քաղաք վարդապետին, թե ըսենց-ըսենց, տերտերը ժամ չի անե, հարբած մանե կուգա, նոր տերտեր կուզենք: Ու մեկ օր էլ հանկարծ մի վարդապետ եկավ քննությանե, տերտերին իրենե մոտ կանչեց, տերտերը հասկցավ բանի բունը, աչք չթերթած ժամ կերթա մի քիչ կարդի բերելու, ու ինչ կտեսնի, որ քնֆերդ գա,— մի ավանակ ժամի [երթիկը] մեջտեղը սատկած-ընկած վար, ձեռաց կքաշե պատի տակ ու վրեն ոսկեթել չուրջառով կծածկե: Հետև ներկայացավ վարդապետին, էն էլ ասավ թե, տերտեր, երթանք ժամը տեսննենք. վարդապետը երեցփոխով, դեղի իշխաններով, գնացին ժամ, ես էլ հետներն էի: Ներս մտանք, վարդապետը նայեց չորս կողմ, ամեն դին հող ու փոշին [սարդի հենքեր] մատիս հաստությամբ նստել էին, էլ սարդի հենքերը, էլ ես ինչ գիտեմ, ինչքան բաներ. վարդապետը աչքերը խոժոռեց տերտերի վրա, մեկել էնոր աչքին ընկավ պատի տակը ծածկված մի բան. Հարցուց ասավ,— Տերտեր, էս ի՞նչ է: Տերտեր դու տերտեր, բերանը բացեց ու տխուր ձենով ասավ թե՝ [երեցփոխ] ննջեցյալ է, Հայր սուրբ. վարդապետը, գյուղացիք թե՝ ով է, ով է. տերտերն էլ թե՝ Աստված մանկութ մեղքը երեսին չտա, մեր երեցփոխի քեռին է: Մենք մնացինք բերաններս բաց, երեցփոխի քեռին մի տարի կար, որ արևը ձեզ էր բաշխել: Գյուղացիք չուրջառը ետ տարան, իշու ոտները երևացին:

— Տո՛, կարգդ խռով մնա գլխիդ,— բարկացած ասավ վարդապետը,— մեղա Աստծո, մեղա՛ Աստծո. էդ ոնց կըլնի որ... — Կարդիդ մատաղ, Հայր Սուրբ,— ասավ տերտերը,— հետու ձեր սուրբ հարդնեն, էնոր քեռին ավանակ էր,— էդոնց ցեղն էլ էդպես է ու կա:

Երեցփոխը բարկությենեն մորուքը կքաշեր ու մատները կխածեր, բայց ժամասեր մարդ էր, չէր իշխնա ժամի

մեջ կռիվ բանար. մեկ էլ կքաշվեր վարդապետի մոտ տուր ու դմբոց սարքեր. տերտերին կրակ կտրած նայեց ու լռեց, ասենք [մի քիչ էլ կվախնար] տերտերն էլ վախ չուներ, գեղի մեջ շատվոր տուն էր, լավ փետ խաղցնող տղերք ունեին:

Ուստան լռեց ու սկսեց պապիրոս փաթաթել: Հանդիսականները լարված հետաքրքրությամբ հարցրին, թե ինչպես իմացար, որ քո էշն է:

– Հանգիստ կեցեք[1], խոսքիս վերջն առնք. վարդապետն որ դուրս եկավ ժամեն, գյուղացիների հետ լուսի տակ [տեսանք] քաշեցին ավանակը. տեսնեմ իմ կարիճ, աննման ավանակս. էդ օրերը էնոր կորցրել էի, սրա-նրա մեղքը կառնեի, թե գողացել-ծախել են, ինչու որ վրան հազար աչք կար. էման նշանավոր ավանակ էր, ոնց որ թագավորի ձի: Դա մի ասա, ավանակս ելել էր ժամի երթիկը արածելու և կլըմբռոզել էր ներս, ծածկը փթած ըլնելու պատճառով. հա, չմոռնամ ասել, որ ժամի [չինված էր սարի կռնակին,] մեկ կողմը սարն էր փորած մեջը մտած, մարդ ու անասուն հեչտ կերպով կրնային երթիկն ելնել, իջնել: Էդպես ընկել էր խեղճ ավանակս ու անոթի մնացել, սատկել: Բանը էստեղ չվերջացավ, ընկավ ողջ գեղ ու գավառի բերանը, թե, բա չեք ասի, Ուստա Կարոյի էշը հասարակ էշ չէր եղել, հապա Ծմակաշենի երեցփոխի Հռաքելի քեռին է: Ինչ երկարացնեմ, գլուխներդ ուռի, խեղճ երեցփոխը ամոթու չէր կարող ոտքը տնեն կամ գեղեն դուրս դնել. ամենքը վրան կխնդային, կասեին. նոր քեռուդ կողմեն դու ողջ ըլնես: Էդ մարդն էլ գիտեր թե ես եմ գյուղերը ճենճնել, սկսավ ոխ պահել իմ դեմ. երկինք-գետինք, էս արդար հացը վկա, ես անմասն էի էդ բաների մեջ: Հա, սկսավ ոխ պահել ու

---

[1] *ՈՒԿ-2000-ում՝ դիտեք*

Հետևևս [ընկնել] ման գալ, որ ինձի վնասե. դևհ, ես գարաբաղցու քացուց երպես մնջն էլ կվախնամ, [ուր մնաց արթուն աչխարքի մնջ] ինձի ժողվեցի, աչքս չորս արած գդուշ մնացի. ինչ անեմ, մենակ մարդ էի, օտարական, ընկեր բարեկամ չունեի, ինչպես էս կողմերս ունեմ, էսպես. մեկ օր էլ մի իրիկուն ձորի մնջ մեկը վրաս հրացան բացեց. Աստված էր տվել, չդիպավ, ոտքերիս միջով անցավ, տեսա՝ երեցփոխն էր. մեկ սատանի սև-սուր քար վեր առա, տուր թե կուտաս, չիտակ երեցփոխի [գլխի] քիթ ու բերնին. ձեռաց գլորման վար ընկավ [ձեռաց], մեռավ-չմեռավ չգիտեմ, ես փախա էն տեղերքեն, էն փախնելն էր, որ փախա. թե [մեռավ] մնայի [մեկ օր չէ մեկել օրը] օրվա մեկում երեցփոխի մարդիկ գլուխս կուտեին. ափսո՜ս էի. [կլներ]

— Բա, ինչ ծիծաղ, ի՜նչ խնդալու բան,— իրար վրա ասացին լսողները, որը փորը բռնած, որը կուրծքը՝ հրհռում էին ու ծիծաղում.— վա՜յ, քու տունը չքանդվի, Ուստա, գլխովդ ինչ բաներ են անցել:

— Վաղուց է, երեսիս հետ սիրտս չէր խնդացել...— բուռն ծիծաղին հազիվ վերջ տալով՝ ասաց Նանոն: Ուստա Կարոյին չա՜տ հաճելի թվեց Նանոյի այս [հայտնու...] խոսքը, ուզեցավ մի ուրիշ ավելի գլարթ պատմություն էլ չարահարել, երբ եսթերը տիրական շեշտով ասաց, ոսքի կանգնելով.

— Ուստա ջան, Աստված քեզի միշտ խնդումերես ուրախ սիրտ պահե. դևհ, հարս ու աղջիկ, դուռ ու դրկից, ձեզի որ մնա [մինչև լույս] կլուսացնենք, բան ու գործի տեր մարդիկ ենք, քննենք պիտի, քննենք, բարի գիշեր, Աստված ամենքի հետ:

Գիշերը գրեթե կիսվել էր. բոլորը ոտքի ելան և ցրվեցին. Ուստայի աչքը մնաց Նանո<յի> ետևից, որ կանանց խմբի հետ ծիծաղով ու աղմուկով հեռացան:

Կարոյի և Հարութի համար բացօդյա անկողին ճգեցին կողք-կողքի, ահագին դավով ջուրերը բարձերի մոտ, որ ծարավնան՝ խմեն: Պառկած անկողիններուն մեջ, մի պահ նրանք նայում էին երկնքին, ապա Հարութը խոսք բացեց.

– Ուստա Ջան, լավ քեֆ արիր, զարմանք մնացի ուրախությանդ վրա. միշտ 20 տարեկանի[1] սիրտ ունիս:

– Հարութ, լավ էր, ափսոս չո՛ւտ վերջացավ. աշխարքեն ի՛նչ պիտի տաննենք, մենակ քեֆ անելը կմնա [մարդու], թե հարուստ մարդ ըլնեի, էս տարի բոլոր սարերի գլխին դավուլ-զուռնա զարկել կուտայի ու մի գլուխ քեֆ կանեի, իսկի սհաթի չէի նայե, թե ուր եմ, ինչ եմ, իսկի ուրախությունից աչք չէի բանա:

– Ու մի օր էլ մահը կուգար, աչքերդ կբանա:

– Հարութ, Աստված վկա, դու կորած մարդ ես, միշտ հույսը կտրած մարդու բաներ կխոսիս. տո, մարդ մի քիչ էլ հույսով կապրի, մի քիչ էլ համբերելով, մի քիչ էլ իրեն խաբելով, հիվանդն որ հիվանդ է, հույս ունի, հավատ ունի. դու հենց մորե մերկ ես, մորե մերկ:

– Մարդ երեխա պիտի ըլնի, օրթե հավատա...

– Լավ է երեխա ըլնեմ ու հավատամ, ուրախ ապրեմ, քան թե քեզի պես ըլնեմ ու մահը սիրտս ամեն օր սուզ կապեմ. քեզի կասեմ, գլխավոր բանը հավատն է, ունիս՝ աշխարհը քուկդ է, չունիս, չծնված ըլնեիր, ավելի հաշիվ էր...– Եվ ձեռքը մեկնելով գավին, ջուրը քաշեց գլուխը, չուռ եկավ Հարութի հակառակ կողմը, «դիշեր բարի» ասաց և լռեց:

Հարութն էլ [ինչքան աշխատեց խոսել, չհաջողվեց] լռեց, և սուզվեց իր սրտի մեջ, իրեն հարց ու պատասխան տալով, խոսում էր իր սրտի հետ:

---

[1] ՈՒԿ-2000 – տարինների

– «Ուստան բաւ դլխաւոր բանը Հավատն է. դորթ կըսե. մարդիկ ձեռքով շինած կուռք կպաշտեն, կհավատան թե Աստված է, օրթե չհավատան, էլ Աստված չէ, քար ու փետ է. երնեկ իրեն՝ կարոյին. կհավատա իրեն հեքիաթներին, իրեն քարվանին, որ մեննակ խաղով ու խնդումով, ուրախութեամբ է բարձած՝ ցավ ու դարդ չունի տանելիք: Սիրտն ուզած ժամանակը, սիրտն ուզած տեղը կերթա, ուզենա դրախտ էլ կերթա, թևեր ունի՝ կթռնի: Ես էլ գիտեմ օրթե աշխարքը սիրուն է, մեննակ աչքիս գրող կերևա, [օրթե] երբ կմտածեմ, թե [էսօր կամ] հիմի կամ, քիչ ետև չկամ. երազի պես բան է կյանքը, միայն մի քիչ երկար երազ. ախ, երնեկ էնոր, որ չի մտածե. նորեն երնեկ կարոյին, որ իր սրտի ուզածին պես կմտածե. Ուստան աշխարքը իր սրտի պես է սարքել, ասես, աշխարքը չինել է իրեն համար, [բախտավոր է] ի՞նչպես է արել, որ էդպես է արել ու բախտավոր է. պարզ բան է. խաբել է իրեն.– աշխարքը աչքին [Հարանաւուն] հարանիք կերևա, իր հեքիաթները զուտ ճշմարիտ. օրթե չխաբեր իրեն, [ինչպես կրնար հավատա ամեն բան] աշխարքի ու իրեն հեքիաթների սուտը [կերևար իրեն] կտեսներ, ու չէր կրնա ապրի: Հավատալու համար պիտի խաբվիս, [կամ խաբվելու համար էլ պիտի] բանը խաբվելն է. ես կասեմ որ, ամեն մարդ կխաբվի, ամեն մարդ կուզե խաբվել, օրթե [չխաբվենն] մարդ չխաբվի, կսարսափի էս անտեր աշխարքի մեջ: Հասկցանք, [բախտ...] երջանկութիւնը խաբվելու մեջն է, ու իսկի չիմանաս թե խաբվել ես. էդտեղն էլ դուրս կուգա մարդու սրտով ուզած-շինված աշխարքը,– [երազի] երազը, ու մարդ կապրի իրեն շինած աշխարքի մեջ. ես էլ թե կարոյի, թե ուրիշների նման եմ, ես էլ կխաբեմ ինձի, մեննակ երբ կխմեմ ու խելքս կփսորի. էն ժամանակ Աստծո աշխարքը կչքվի,

իմս կուգա տեղը. հարբած խելքովս ու սրտովս կհավատամ իմ աշխարքին. էնտեղ՝ իմ աշխարքում միշտ արև կա, մահ չկա. հերս ողջ առողջ [մոտս] քովս է, Հրեղենիս հետ եմ. սարերը ավելի սիրուն, քարերը՝ ոսկե-մարջան, ամեն բան դրախտական. օրթե ես կրնամ հիմի կարոյին զարթնցնել ու ասել թե [գլխավորը] ղորթ է՝ գլխավորը հավատքն է, ավելի գլխավորը խաբվելն է, [բայց ամենեն] ուրտեղից երազը կծնի, բաց աչքով երազը, էն երազը, որ մարդ հաստատ կհամարե ու միշտ կապրի, իր սիրած երազը խաբվելն է՝ չիմանաս խաբելը, չիմանաս, թե խաբվել ես. չխմած ժամանակի երազն է գլխավորը, գլխավորը երազն է. ամեն մարդ երազի մեջ կապրի, երազը մեռավ — մարդը մեռավ. էն գլխավորը երազն է, երազն է, երազն է. [Ուստա] կարո, քեզի կըսեմ, ել, ինձի [նայե] լսե, երազն է, ղորթ, էդ է, էդ է...»

Հարուքը անվերջ կրկնում էր վերջին բառերը, գիտակցությունը քնի մթին ալիքների տակ մթագնում էր, մտքերը չփոթում իրար հետ, քանի գնում չփոթում, հալչում, ազատվում: Հարուքը քնեց:

Երազի մասին: — Հեղինակը[1]*:*

Ուստան լուսադեմից առաջ զարթնեց, ծարավ էր. խմած չոր արաղը այրում էր նրան. գավով ջուրը քաշեց

---

[1] *Այստեղ հեղինակը հավանաբար ծրագրել էր դնել իր «չեղումներից» մեկը երազի մասին (տե՛ս առաջաբանը):*

գլուխը, և գովացած [գլուխ] թիկն տվեց բարձերին: [Քունը չէր տանում] Աստղերը իրար հետևից մեկ-մեկ մարում էին, աղոթրանը կամաց-կամաց չառագունում էր. գոմի բաց դռնից լսվում էր կովերի հաճելի շունչը կամ որոճի ներդաշնակ ձայնը. քիչ հետո [ականջ դուրգուրից օդը լցվեց] թարմ օդի միջից հնչեց զարթնող թռչունների [ծլվլոցով] ծլվլոցը, որ քանի գնաց զորեղացավ, հյուսվեց նորանոր խաղերով ու երգերով, որ ձոնվում էին[1] ծագող արևի փառքին:

«Հեյ ջան, տեսնես էս հավքերը ի՞նչ անուշ դինի են խմել, ի՞նչ անմահական այգիների, որ էսպես քաղցր՝ սիրահարի երգ կըսեն»,— գրեթե բարձրաձայն խոսեց իրեն հետ Ուստան. և նկատելով, որ [գրեթե] ամառանոցում կյանքը զարթնել է, սկսեց հագնվել և միևնույն ժամանակ Հարութին արթնացրեց: Նախաճաշից հետո մնաս բարև ասին և բռնեցին վերադարձի ուղին: [Ճանապարհին] երբ իջնում էին [լեռնիվար] զառիվայրով և ամառանոցը աներևութանալու վրա էր, Ուստան երկար հայացք նետեց և թախիծով ասաց.

— Աչքս մնաց նուռս, Հարութ ջան, տեսա՞ր, ի՜նչ կտոր էր, ի՞նչ չաքար հարս էր Նանոն, 7 բեռ մոմ ունենամ, էնոր առաջը վառեմ, էլի քիչ է: [Եթե Սանամս չլիներ]

— Դու հոգի կուտաս էդ կնկան, էդոր մարդը տեսնես՝ կգանես[2], իշու մեկն է... [էդպես է, կարո ջան]

— Տո, [աչխարք էշերով լիքն, մենք ոտքով ման կուգանք] ծաղկի ընտիրը էշերը կուտեն (Փլավն ո՞ւմ է տված, փափագն ում):[Սանամս] Եսթեր քուրիկդ չըլներ,

---

[1] ՈՒԿ-2000-ում՝ ծնվում էին

[2] ՈՒԿ-2000-ում՝ կչահես

ես էրեկ էդ Հարսին դրախտ տարել-բերել էի. ի՞նչ կըսես, Հարութ, չէ՞ի կրնա:

– Կրնայիր, կարո, էն մեխ վերցնող տախտակ է. բայց դու էլ ի՛նչ կնկա մեռածն ես:

– Բա դո՞ւ ով ես, ես քեզի նո՞ր դիտեմ, մեռնեմ սուրբ փեշակիդ:

– Ես էնպես. էս աշխարքի կնիկները աչքիս պլիկ չարժեն, իմս ոսկի Հրեղեն է [մեռած եմ ու թաղած չեմ],– և ձայնին վշտոտ դույն տալով ավելացրեց.– օրթե Հրեղենս չեղավ – ես մեռած եմ ու թաղած չեմ:

– Տո, Հրեղենդ չեղավ, Անուշկին ունիս, թե որ ոսկի չէ Հրեղենիդ պես, ոսկեջրած է. ուրիշը էդ էլ չունի:

– Ինձի ուրիշի վրա մի չափե,– վիրավորված ասաց Հարութը,– ես կիսատ-պռատ բան չեմ սիրե:

Ուստան չհասկանալու տեղ դրեց նրա վիրավորանքը, և կես հեգնական, կես խրատական ասաց.

– Լավ, հիմիկ ու հիմիկ [Հրեղենդ] Անուշկեդ ոսկի հաչվե, մինչև Հրեղենիդ դտնենք. ի՛նչ էննենք, սիրուն Հարութս, (ձին չեղած տեղը էշը թագավոր է):

Հարութը այս խոսքի վրա բորբոքվեց, բարկացավ. Ուստան մեղմությամբ, քաղցրությամբ հանգստացրեց նրան, և խոսքը բերելով ուրիշ իրերի վրա, զվարթ պատմություններով, կատակներով Հարութին տարավ-հասցրեց ջաղացը:

Մյուս օրը կիրակի էր. Հարութի մայրը Հակոբիկի հետ, տերտերի մեծ տղայի կինը իր երկու երեխաներով Ջավուշին էլ հետներն առած եկան ջաղաց Հարութին այցի: Մայրը իր ձեռքով թխած գաթա էր բերել Հարութի համար: Ամբողջ օրը մնացին [Հարութի մոտ] ջաղացը, [ճաշեցին] կերան խմեցին միասին. Հարութի հագուստները նորոգեցին, պատռված տեղերը կարեցին, կարկտե-

ցին, խոսեցին, զրույց արին, և երեկոյան գոհ և ուրախ վերադարձան տուն. Հարութը, Կարոն, Զավուշը, Գոգորը մինչև գյուղ ճանապարհ դրին նրանց:

Այդ գիշեր էլ Ուստան մնաց Հարութի մոտ. երկուշաբթի առավոտ [ավանակը գոմից հանելով, պատրաստվեցին գնալ Նա...] պատրաստվեց գնալ Նախճվան, իր աթոռանիստ գյուղը: Հարութը ուզեց մի-երկու օր էլ պահել, Ուստան հայտնեց, թե անկարող է մնալ. գյուղերը կեսկատար գործեր ունի, անպատճառ պիտի լրացնե: Հարութը բավական տեղ ուղեկցեց նրան և Զավուշին. մնաց բարևի համբույրի ժամանակ հարցրեց Ուստային:

<...>[1]

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

Ա. ԳԼՈՒԽ
ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՊԱՏՎԻՆ
(էջ 79-120)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ 291-II, էջ 1-15:

Ձեռագրի անվանաթերթին գրված է. «Երապի աշխարհ. Ուստա Կարո և Օրթե-Հարութ: Վեպ: Ավ. Իսահակյան»: Երկրորդ անվանաթերթին գրված է «Ուստա Կարո. Գլուխներ Ա-ժ (10), 164 էջ, երկրորդ մշակում»: Ինքնագիրը մաքրագիր է և հեղինակի կողմից թվագրված է «1 մայիսի. 1919. Ժընև»: Հեղինակի «երկրորդ մշակում» հղումը ցույց է տալիս, որ այս մաքրագիր օրինակը վեպի երկրորդ տարբերակը ստեղծելու առաջին փորձն է: Այս բնագրի որոշ գլուխներ խմբագրական և կառուցվածքային փոփոխություններով 6 տարի հետո Իսահակյանը տպագրության է հանձնել Բոստոնի «Հայրենիք» ամսագրին: Ձեռագրի 1-ին էջին «1 մայիսի» նշումը հավանաբար ձեռագիրը մաքրագրել սկսելու օրն է: Այս մաքրագրի սևագիր տարբերակը պահվում է ԳԱԹ, ԻՓ 287ա-II, որը թվագրված չէ, սակայն բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ հատկապես այս ինքնագիրն է վեպի երկրորդ մշակման սկիզբը, ուստի այն գրվել է 1919 թ. մայիսի 1-ից առաջ: Այսպիսով, վեպի «երկրորդ մշակումն» ունի չորս բնագիր՝ սևագիրը, որ պարունակում է 6 գլուխ՝ Ա-Զ (ԻՓ 287-II, տարրերությունները նշանակել ենք B տառով), մաքրագիրը՝ Ա-ժ, որոնցից երեքը տրոհված են երկու գլխի, այսինքն մաքրագիր այս տարբերակը պարունակում է 13 գլուխ (ԻՓ 291-II, տարրերությունները նշանակել ենք C տառով), «Հայրենիք» ամսագրում տպագրված բնագիրը (տարբերությունները նշանակել ենք D տառով) և հետագայում՝ «Հայրենիք»-ում տպված բնագրերի

արտատպություններում կատարված հնդինակային ուղղումներով բնագրերը, որոնք գետեղվել են Իսահակյանի արձակի տարբեր հրատարակություններում:

Այս «երկրորդ մշակման» համար հիմք է հանդիսացել վեպի «առաջին մշակման» Բ. գլուխը «Ուստա Կարոն բախտանիների հետ քեֆ է անում Մրենու ձորում» վերնագրով (տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 7, էջ 34-41):

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1925, հունվար, N 3, էջ 1-8: Այնուհետև՝ ԵԺ 6, հ. 4 (եր. 1975) և ՈՒԿ-2000, որոշ կրճատումներով: Կրճատումները սույն հրատարակության մեջ վերականգնված են:

Տպագրվում է «Հայրենիքի» տեքստը ամբողջությամբ՝ հնդինակային ուղղումներով:

Էջ 79, տ. 4-5. *Հինավուրց Շիրակը, չատակեր Շարայի արտն ու կալը – Իսահակյանի աղբյուրը Խորենացու պատմությունն է, ըստ որի՝ Հայկի սերունդներից Արամայիսի որդին.* «Շարայ, պյոլոսածին եւ զչատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մատաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ: Վասն որոյ թուի արդարանալ առաստելին, որ ասի ի մէջ դեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»» (Խորենացի Ա, գլ. ԺԲ):

Էջ 79, տ. 6. *Ավերակ Մրենի տակ* – Մրեն – գյուղաքաղաք, որ գտնվում է Ախուրյան և Տիկոր գետերի հովտում, Բագարանից հյուսիս: Հայ մատենագրության մեջ բնակավայրի անունը առաջին անգամ հիշատակել է Ղազար Փարպեցին. «Եւ զերանելին երէցն Խորէն ի Մրենոյ» (Փարպ., ԻԳ): Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Դավիթ Սահառունին 7-րդ դարում Մրեն գյուղաքաղաքում կառուցում է «մեծապայծառ և գեղեցկայարմար» եկեղեցի (տե՛ս Ղուկաս Ինճիճեան, Սուրբ գրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 528-529):

Իսահակյանը ծոցատետրային գրառումներից մեկում նկարագրում է իր ժամանակի Մրենը.

«Մրեն. Արեւմտա-հարաւային կողմերում հոսում է Խնծկոնքից Տիկոռի գետակը: Մրենից արեւում է Մասիսը: Կաթողիկոն չինված է 614 թվին Դավիթ Սահառունու օրոք, նրա միջոցներով: Հրաշագեղ քանդակներով Անի քաղաքի աշնան ժամանակի վայր է եղել, աշնանանոց: Մրենի այդիներում, ամայի, վայրենացած, պտղատու ծառեր, և որթ խաղողի: Ջավուշը չամիչ էր հավաքում: Բսան գինու հնձաններ: Խաչքարերի մի պատ – 6 խաչքարով» (ԳԱԹ, ԻՖ, 772-II, թերթ 4):

Էջ 87, տ. 21-30. *Հովերն եկան չաղով-չողով ... Բարև տուր, անց ու գնա՛:* – «Սարերի հովին մեռնիմ» ժողովրդական երգի տարբերակներից է (տե՛ս «Գնար. ձայնագրեալ երգարան», ժողովեց և ձայնագրեց Ս. Դեմուրեան, Ս. Պետերբուրգ, 1907, էջ 36): Համմտ. օրինակ.

Լուսնակ, դու բանձրանց գնա,
Լույս տուր ու բանձրանց գնա,
Հեռու տեղ մի յան ունիմ,
Բարև տուր անցի գնա:

Էջ 90, տ. 5-6. *Հայը բանտեն չի վախենար, Հայը մահեն չի վախենար* – Տողերը «Բանտ» ռազմահայրենասիրական երգից են (տե՛ս «Ընդարձակ դրպանի երգարան», ազգային, յեղափոխական, սիրային, ժողովրդական եւ գեղջկական երգեր, 300 երգ, Հրատարակութիւն Պէրպէրեան դրատան, թիւ 5, Բոստոն, 1919, էջ 125-126):

Էջ 94, տ. 15-22. *Սիրելիս, մի հատիկ ես ... Ու քցեցիր երկրե-երկիր...* – Այս երկու չափածո քառատողը Իսահակյանի «Մի գլուխ անտիպ պոեմից» երկի «Տղայի տաղը» հատվածի տարբերակներից է (տե՛ս Վերածնունդ, կիսամսյա հանդես, Բ. տարի, թիվ 1-2, 1-14 Յունուարի, 1918, էջ 6-10), որը հետագայում միացվել է «Ալագյազի մանիներ» պոեմին, որպես Դ երգ (տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 4, եր., 2008, էջ 33-45): Մեջբերված հատվածի երկրորդ քառատողը բացակայում է պոեմի հայտնի բոլոր տարբերակներում:

Բ. ԳԼՈՒԽ

<Ա. տարբերակ>

<ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ>

(էջ 121-151)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 291-II, էջ 16-30:

Ձեռագրում ինքնագիրը վերնագրված չէ և վեպի Բ գլուխն է՝ հեղինակային լրացումներով և խմբագրումներով: Այս բնագրի նախնական գրառումը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 287ա-II, էջ 14-24՝ որպես դարձյալ վեպի Բ գլուխ: Այս տարբերակի լուսանցքներում հեղինակի կատարած հավելումներն ընդգրկված են 291-II-ի բնագրում, ինչը վկայում է, որ 291-II-ի բնագիրը արտագրված է 287ա բնագրից՝ որոշակի խմբագրումներով և կրճատումներով (տե՛ս տողատակին. բնագրային տարբերությունները նշված են B տառով):

«Ուստա Կարո» վեպի արխիվում (ԳԱԹ, ԻՑ, 425-II, թերթ 17) պահպանվել է այս գլխի գրվագային կառուցվածքը նկարագրող ծրագրային մի գրառում.

«Դ. ԳԼՈՒԽ

Մոտավորապես այսպես է լինելու.

Ովքեր էին Ուստան և Ջավուշը

1. Ուստա Կարոյի ծագումը

2. Ուստա Կարոյի բնույթը [սերերն ու] սովորույթները

3. Ուստան իբրև վարպետ

4. Ուստայի ժամացույցը

5. Ջավուշի ծագումը

6. Ջավուշի բնույթը (սովորույթներ չուներ աչքի ընկնող, և ո՛չ էլ սերեր)

7. Միրզան (էշը)»:

Տպագրվում է առաջին անգամ:

<ԳԼՈՒԽ Բ.>

<Բ. տարբերակ>

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ

(էջ 152-189)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 298-II:

Առաջին անգամ տպագրվել է՝ Եժ վեց հատորով, հ. 4, եր., 1975, էջ 205-240: Ըստ բնագիրը պատրաստող Ա.Ինճիկյանի. «Տպագրվում է 30-ական թթ. առաջին կեսին Փարիզում հիմնովին մշակված տեքստը՝ ինքնագրից»: Իրականում այս ինքնագիրն ավարտվում է մինչև Ջավուշի մասին հատվածի առաջին պարբերությունը: Մնացած հատվածը Ինճիկյանը լրացրել է այլ տարբերակից: Խնդրահարույց է նաև այս տարբերակի՝ Փարիզում գրված լինելու հանգամանքը: Ինճիկյանը այս եզրահանգումն արել է՝ նկատի ունենալով հավանաբար այն, որ գլխի այս տարբերակը գրվել է ֆրանսիական արտադրության տետրում: Այս տարբերակը ներկայացնելիս ուղղել ենք բոլոր սխալ ընթերցումները, հեղինակային չնչումները թողել ենք բնագրում՝ դնելով ուղղանկյուն փակագծերում՝ [ ]:

Ինքնագրի ձախ էջին հեղինակը հետևյալ գրառումն է կատարել.

«Ուստան 11 տարեկան որբացավ, 18 տարեկան վախավ գյուղից, 3 տարի հույների հետ, 2 տարի առանձին, 1 տարի Թավրիզ, 5 քարվան, 1 տարի էջմիածին, 8 Նախճվան. վեպի շրջանում, 38 տարեկան:

Ուստան և Ջավուշը իրար գտան, ուրեմն, 1896-ի մեջ, գարնանը, հայկական ջարդերի շրջանին: Ջավուշը փախել էր կամ 1895 թվի վերջերը, կամ 1896 թվի սկզբներին»:

Ե. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՋԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ

(էջ 190-226)

Ինքնագիրն անհայտ է: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», ամսագիր, 1925, N 6, էջ 27-42: Արտատպվում է «Հայրենիքից»:

<Գ. ԳԼՈՒԽ> Բ. ԳԼՈՒԽ
ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԵՎ ՋԱՎՈՒՇԻ ԴԱՐՁԸ ՆԱԽՃՎԱՆ
(էջ 227-249)

Գլխի երկու ինքնագիրը պահվում են ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 25-31 և ԳԱԹ, ԻՖ, 291-II, էջ 31-37:

Այս և հաջորդ գլուխը ինքնագրերում գլխաբաժանված չեն: Հեղինակը դրանք տրոհել է «Հայրենիքում» տպագրված բնագրում: Ինքնագրերում սա վեպի Գ. գլուխն է, իսկ «Հայրենիքում» Բ. գլուխը: Պատճառն այն է, որ Իսահակյանին չի բավարարել այս ինքնագրերում եղած Բ. գլուխը («Թե ովքեր էին Ուստա Կարոն և Ջավուշենց Փիլոսը», որը հետագայում նա հիմնովին վերաշարադրել և «Հայրենիքում» տպագրել է՝ որպես վեպի Ե. գլուխ («Հայրենիք», 1925, N 6, էջ 27-42): Այս տեղաշորոշության հետևանքով «Հայրենիքում» թյուրիմացաբար չեն փոխել ինքնագրի գլխակարգությունը և Բ. գլխից հետո տպագրված հաջորդ գլուխը թողել են ըստ ինքնագրի (գլխակարգված է «Դ. գլուխ» «Գ. գլուխ»-ի փոխարեն) և այդպես շարունակել տպագրությունը:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1925, N 4, էջ 22-26: Բնագրային տարբերություններ ներկայացվում են համապատասխանաբար՝ B = ԻՖ, 287ա-II, C = ԻՖ, 291-II և D = «Հայրենիք» (1925, N 4, էջ 22-26) տառերով:

Տպագրվում է «Հայրենիքի» բնագիրը՝ հեղինակային ուղղումներով:

<Դ. ԳԼՈՒԽ> Գ. ԳԼՈՒԽ
ՇԵԿՈՑԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ
(էջ 250-267)

Գլխի երկու ինքնագիր պահվում է ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 32-37 և ԳԱԹ, ԻՖ, 291-II, էջ 38-44:

Այս և նախորդ գլուխը ինքնագրերում գլխաբաժանված և վերնագրված չեն: Հեղինակը դրանք տրոհել է «Հայրենիքում» տպագրված բնագրում:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 26-29: Բնագրային տարբերություններ ներկայացվում են համապատասխանաբար B (=ԻՓ, 287ա-II), C (=ԻՓ, 291-II) և D (=«Հայրենիք», 1925, N 4, էջ 22-26) տառերով:

Տպագրվում է «Հայրենիքի» տեքստը՝ հեղինակային ուղղումներով:

Դ. ԳԼՈՒԽ

<Ա. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԺԱՄԱՑՈՒՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՑՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ>

(էջ 268-292)

Գլխի երկու ինքնագիր պահվում է ԳԱԹ, ԻՓ, 287ա-II, էջ 38-47 և ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 45-57:

Այս գլուխը ինքնագրերում վերնագրված չէ:

Առաջին անգամ տպագրվել է «Արեգ», 1922, N 8, էջ 469-475, «Մի գլուխ «Ուստա Կարո» անտիպ վեպից» ենթավերնագրով: Այնուհետև՝ «Ուստա Կարոյի ժամացույցը և վեճը գյումրեցի վաճառականների հետ» խորագրով, որպես վեպի Դ. գլուխ՝ «Հայրենիք», 1925, մարտ, N 5, էջ 25-32: Այս երկու տպագրված տարբերակների համար հիմք է հանդիսացել ԳԱԹ, ԻՓ, 291-II ինքնագիրը: Հեղինակը «Արեգին» տպագրության հանձնելիս գրեթե կիսով չափ է կրճատել բնագիրը («Արեգ»-ի բնագրի ծավալը 13635 նիշ է, իսկ «Հայրենիքի» բնագրի ծավալը՝ 23616 նիշ), ուստի և տպագիրների և ինքնագրերի բնագրային տարբերությունները ներկայացրել ենք ԳԱԹ, ԻՓ, 291-II և ԳԱԹ, ԻՓ, 287ա-II-ի ինքնագրերի համեմատությամբ: Այս ինքնագրերի բնագրային տարբերությունները ներկայացված են B տառով:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 269, տ. 12. *Վարդան Մամիկոնյանի, Դաշնակցության խմբապետների՝ Սերոբի, Անդրանիկի և Կուկունյանի խմբի –*

Աղբյուր Սերոբ (Սերոբ Վարդանյան), (1864-1899) – Հայ ազգային-ազատագրական շարժման հերոս, ֆիդայի:

Օզանյան Անդրանիկ (1865-1927) – Հայ զորահրամանատար, պետական գործիչ, ֆիդայապետ (Հայդուկապետ), նախկին դաշնակցական:

Կուկունյան Սարգիս (1863-1913) – Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ:

Էջ 275, տ. 17-18. *ի թոթափելն աստեղց, ըշտե գրած է Ավետարանի մեջ – Նկատի ունի Ղուկասի ավետարանի հետևյալ հատվածը.* «Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ արուեստս՝ առ ի մոլորեցուցանելոյ եթէ հնար լինէ իցէ եւ զընտրեալսն: Բայց դուք՝ զգոյշ եղերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն: Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի, եւ լուսին՝ ոչ տացէ զլոյս իւր. եւ աստեղք յերկնից թաւթափեսցին, եւ զաւրութիւնք յերկինս՝ շարժեսցին: Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք, եւ զաւրութեամբ՝ եւ փառաւք բազմաւք» (ԺԳ 22-25):

<ԳԼՈՒԽ Դ>

<Բ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

(Էջ 293-306)

Ինքնագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Արեգ», 1922, N 8, էջ 469-475, «Մի պլուս «Ուստա Կարո» անտիպ վեպից» ենթավերնագրով: «Արեգ»-ի տարբերակը, մանրակի փոփոխություններով արտատպվել է նաև՝ «Ընտիր երկեր», 1948, էջ , և եժ, 1951, հ. III, էջ 289-295: «Արեգ»-ի տարբերակը ներկայացնում ենք ըստ եժ, 1951-ի բնագրի:

էջ 294, տ. 9-10. *էսօր քեֆս աբբա Մարկոսի է – տե՛ս Իսահակյանի «Երանելին աբբա Մարկոս» պատմվածքը (ԵԺ 14 հատորով, հ. 5, Եր., 2014, էջ 221-238): Դարձվածը նշանակում է «քեֆը տեղն է»:*

Դ. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԺԱՄԱՑՈՒՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՑՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(էջ 307-325)

Ինքնագիրն անհայտ է:

Գլխի նախնական տարբերակի երկու ինքնագրեր պահվում են ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 38-47 և ԳԱԹ, ԻՖ, 291-II, էջ 45-57 (համեմատությունը տե՛ս սույն հրատարակության, էջ 268-292): Ինքնագրերում գլուխը վերնագրված չէ: «Ուստա Կարոյի ժամացույցը և վեճը գյումրեցի վաճառականների հետ» խորագրով առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1925, մարտ, N 5, էջ 25-32:

Արտատպվում է «Հայրենիք»-ից:

Ե.

<Ա. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑԸ ՍԱՆԱՄԱՑՐՆԵՐԻՆ>

(էջ 326-336)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 287ա-II, էջ 8-15:

Գլուխը ինքնագրում վերնագրված չէ. ԻՖ, 287ա-II-ում նշված է «Ե.»:

Իսահակյանի ծրագրային գրառումներում այս գլուխը գետեղված է «Հավելված գլուխների» մեջ:

«Ուստա Կարո» վեպի արխիվում (ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 9) պահպանվել է այս գլխի դրվագային կառուցվածքը նկարագրող ծրագրային մի գրառում.

«– Ուստան Նախճվան գնում է երեք ամառոր մոտ... ամենանն սրտածի մոտ չէ, մարդը տանն է լինում, որին չէր սիրում Ուստան:

Գնում է մյուսի մոտ, համբուրում է քնքուշ:

Գնում է երկրորդի մոտ – հաց է թխում:

Գնում է երրորդի մոտ, դուրը խնոյի է հարում մի կնոջ հետ, որոնք խոսում են, բամբասում ողջ գյուղը. Ուստային կարապով հայհոյանք է տալիս:

Գրել, որ Ուստային ամառորներից վիշտ է պատահել. մի անգամ մածուն, չոր սեր, նոր պանիր, կարապ»:

Տպագրվում է առաջին անգամ:

Ե. ԳԼՈՒԽ

<Բ. տարբերակ>

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑԸԸ ՍԱՆԱՄԱՑՐՆԵՐԻՆ>

(Էջ 337-358)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 291-II, էջ 58-75:

Գլուխը ինքնագրում վերնագրված չէ. ԻՑ, 291-II-ում՝ «Ե. Գլուխ»:

Տպագրվում է առաջին անգամ:

Ե. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՑԸԸ ՍԱՆԱՄԱՑՐՆԵՐԻՆ

(Էջ 359-399)

Ինքնագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», ամսագիր, 1925, N 9, էջ 15-29: «Հայրենիք»-ի տեքստը հեղինակային մասնակի ուղղումներով տպագրվել է՝ «Երևան», օրաթերթ, 1960, NN 151-152, 154-157, ապա՝ «Արձակ էջեր», 1963, էջ 543-567:

Տպագրվում է «Հայրենիք»-ի տեքստը հեղինակային ուղղումներով (ԳԱԹ, ԻՖ, 2172-II): «Հայրենիքի» բնագրային տարբերությունները նշված են D տառով:

Էջ 361, տ. 13-14. *Աչքն ընկավ հանկարծ Անդրանիկի պատկերին* – Իսահակյանը նկարագրել է Անդրանիկի հետևյալ լուսանկարը.



<Զ. ԳԼՈՒԽ> Ե. ԳԼՈՒԽ

(Ա. տարբերակ)

<ԾԵՐԵՐԸ>

(Էջ 400-403)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 291-II, էջ 76-78:

Գլուխը ինքնագրում վերնագրված չէ. ԻՖ, 291-II-ում նշված է «Ե. Գլուխ»: Այս գլուխը «Հայրենիքում» տպվածի նախնական, համառոտ տարբերակն է (համմտ. «Հայրենիք», 1925, N 10, էջ 19-22):

Տպագրվում է առաջին անգամ:

ԳԼՈՒԽ Զ.
(Բ. տարբերակ)
ԾԵՐԵՐԸ
(էջ 404-413)

Ինքնագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1925, N 10, էջ 19-22: Այնուհետև, մասնակի հավելումներով տարբերակը՝ «Արձակ էջեր», 1963 (էջ 568-573), որտեղից և արտատպվում է: «Հայրենիքի» բնագրի հետ բնագրային տարբերությունները նշանակել ենք D տառով:

<«ԾԵՐԵՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ԾԵՐԵՐԸ
(էջ 414)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լր, թերթ 1:
Տպագրվում է առաջին անգամ:

2. ԾԵՐԵՐԸ
(էջ 414)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լր, թերթ 3:
Տպագրվում է առաջին անգամ:

3. ՆԱԽՃՎԱՆԻ ԾԵՐԵՐԸ
(էջ 415)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լր, թերթ 4:
Տպագրվում է առաջին անգամ:

4. <Ի՞ՆՉ ՄԻՏՔ ՈՒՆԻ...>
(Էջ 415)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լբ, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

5. ՇԵՐԵՐԸ
(Էջ 415)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լբ, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

6. <ՇԵՐԵՐԻ ՀԱՏՎԱԾԸ ԳՐԵԼԻՍ...>
(Էջ 416)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լբ, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

7. <ՀՈՂԱԲՈՒՑՐ ՇԵՐՈՒՆԻՆԵՐ...>
(Էջ 416)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 221լբ, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

8. ԿԱՐՈՆ ԵՎ ՇԵՐԵՐԸ
(Էջ 416)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի Ֆ, 347-II, թերթ 17:
Տպագրվում է առաջին անգամ:

9. ԾԵՐԵՐԸ
(Էջ 417)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 414-II, թերթ 3:
Տպագրվում է առաջին անգամ:

10. ԾԵՐԵՐԸ
(Էջ 417)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 414-II, թերթ 4:
Տպագրվում է առաջին անգամ:

11. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԾԵՐԵՐԸ
(Էջ 418)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 414-II, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

12. ԾԵՐԵՐԸ
(Էջ 419)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 307-II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

13. <ԾԵՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ...>
(Էջ 420)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 331-II, թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

14. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԵՐԿՈՒ ԾԵՐՈՒՆԻ
(էջ 420)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 332-II, թերթ 35:
Տպագրվում է առաջին անգամ:

<Է. ԳԼՈՒԽ>
<ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ>
(էջ 421-433)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 79-90:
Ինքնագրում գլուխն անվերնագիր է և, ըստ ձեռագրի, չարունակում է «Ծերեր» գլխի բնագիրը, սակայն նոր էջից:

Հեղինակն այն չի գլխակարգել: Նկատի առնելով ինքնագրում «Ծերերը» գլխի վերջին էջում հեղինակի թողած մեծ բացատը (5 տող), ինչպես նաև բնագրի այս հատվածի նոր էջից սկսվելը, այն առանձնացրել ենք որպես առանձին գլուխ: Նկատի ենք ունեցել նաև, որ այս հատվածում պատումի թեման փոխված է և չի առնչվում «ծերության» թեմային: Ինքնագիրը մաքրագիր է, որոշ խմբագրումներով:

Տպագրվում է ինքնագրից: ԳԱԹ, ԻՓ, 287ա-II ինքնագրում, որը ԳԱԹ, ԻՓ, 291-II-ի նախնական տարբերակն է, այս և նախորդ՝ «Ծերերը» գլուխը բացակայում են:

Գլուխը վերնագրել ենք ըստ վեպի գրառումների հեղինակային ցանկի 9-րդ կետի. «Ռես Հոսեի երևումը» (տե՛ս ԳԱԹ, ԻՓ, 295-II): Ըստ մեկ այլ հեղինակային գրառման՝ այս գլուխը վերնագրված է «Ռես Հոսեի երևալը»:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 425, տ. 18. *Մ՛վ է էդ Գեորգ Ջավուշը* – Գևորգ Ջավուշ (Գեորգ Ղազարյան, 1870-1907) – հայ ազգային-ազատագրական չարժման հերոս, հայդուկապետ, ՀՅԴ անդամ:

Է. ԳԼՈՒԽ
<ԶՐՈՒՑՑ ԶԱՐԴԱՐ ԱՆԱՑԻ ՀԵՏ>
(էջ 434-447)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 91-103:

Առաջին անգամ «Զրույց Զարդար աղայի հետ» վերնագրով տպագրվել է Ավետիք Իսահակյան, «Ուստա Կարո», Եր., 2000, էջ 241-248: Ինքնագրում գլուխն անվերնագիր է, հեղինակը նշել է միայն՝ «Ի գլուխ»: Վերնագիրը դրել են կազմողները: Ինքնագիրը մաքրագիր է, որոշ խմբագրումներով, ջնջումներով: Նախորդ հրատարակության էական թյուրընթերցումները տրված են տողատակին:

Տպագրվում է ինքնագրից:

Ը. ԳԼՈՒԽ
<ՍՏԻ ՄԱՍԻՆ>
(էջ 448-461)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 104-116:

Գլուխն անվերնագիր է: Վերնագրել ենք ըստ գլխում արծարծված հիմնական թեմայի, քանի որ ասի մասին որոշ հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ համապատասխանում են այս գլխի բնագրային հատվածներին (տե՛ս ԳԱԹ, ԻՓ, 406-II և ԳԱԹ, ԻՓ, 407-II): «Ուստա Կարոյի» արխիվում պահպանվել է այս գլխի ծրագրային մի համառոտ գրառում վերնագրով.

«8<-ՐԴ> ԳԼՈՒԽ»

«Երեկոյան Ուստի մոտ եկավ սանահիրը նոր մկրտության համար և մնաց մոտը թեյի:

Լսել են պյուղացիք, որ մի պատրաստ մարդ է եկել – Ռեսը. եկան մի քանի հոգի:

Ռեսը պատմում է Պոլսից. Ուստան իր քարվանն է տանում – պատմություն: Դուրս գնալուս Տիրացուն, Տացուն, սանահները և ուրիշ հյուրեր իրար հարցնում են, թե Ուստան (կամ մեկն է հարց տալիս) եղե՞լ է արդյոք էդ տեղերը, և պաչտպանում են:

Մյուս օրը մկրտության, երբ տերտերը և Ադամ ամին խոսում են, դուրս գալիս – Ուստան, Քերոբը, Ռեսը, Տացուն, տիրացուն, վարժապետը – խոսում են ատի մասին և գտնում են նա անհրաժեշտ: Ուստան քնելուս մտածում է իր քարվանի մասին, իր ատերի մասին...» (ԳԱԹ, ԻՖ, 407-II, թերթ 23):

Ինքնագիրը գրված է սև մելանով, հետագայում հեղինակը մատիտով ուղղումներ և լրացումներ է կատարել:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 456, տ. 17-18. *ամենեն մեծ առաքյալը, Պետրոսը, երեք անգամ սուտ խոսաց, Քրիստոսին ուրացավ – տե՛ս* Մատթ. ԻՋ, 69-75, Մարկ. ԺԴ, 66-72, Ղուկ. ԻԲ, 54-62, Հովհ. ԺԸ, 15-18, 25-27:

Էջ 459, տ. 1-2. *Ալեքսանդրապոլի երկդասյան հայոց դպրոցում* – Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցը հիմնվել է 1840 թվականին: 1886-ից վերածվել է երկդասյան դպրոցի: Փակվել է 1912 թվականին:

Է. ԳԼՈՒԽ
ԲՈՒԼԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ
(Էջ 462-484)

Ինքնագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, օգոստոս, N 10, էջ 22-29, այնուհետև՝ եժ 6 հատորով, հ. 4, էջ 331-346: «Հայրենիք»-ի տեքստը հեղինակային ուղղումներով հետմահու տպագրվել է՝ «Արձակ էջեր», 1963, էջ 583-595, որտեղից և արտատպվում է:

Էջ 466, տ. 21-22. *Ճապոնները ռուսի թագավորի բուրդը լավըմ գզեր են* – նկատի ունի ռուս-ճապոնական պատերազմը (8 փետրվարի, 1904 – 5 սեպտեմբերի, 1905):

Զ. <ԳԼՈՒԽ>

<Ա. տարբերակ>

<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>

(էջ 485-499)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 287ա-II, էջ 16-26:

Հեղինակը չի վերնագրել այս գլուխը, այլ միայն գլխակարգել է՝ Զ.: Այս ինքնագիրը «Ակոռա տեր Մաթոսը և խաչավոր Ադամ ամին» գլխի նախնական տարբերակն է:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 485, տ. 3. *Ակոռա Տեր Մաթոսը* – Ակոռի – գյուղ Արարատյան նահանգի Մասյացոտն գավառում, կործանվել է 1840 թ. հուլիսի 2-ին Մեծ Մասիսի շրջանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից:

Էջ 492, տ. 18. *Լուսահոգի Ներսես կաթողիկոսն էր* – նկատի ունի Ներսես Ե. Աշտարակեցի ամենայն հայոց կաթողիկոսին (1770-1857):

Էջ 497, տ. 4. *Սոդոմ-Գոմորի կործանումն* – Տե՛ս Ծննդոց ԺԹ:

Էջ 497, տ. 9. *Սիբիլ* = Սիբիր:

Թ. ԳԼՈՒԽ

(Բ. տարբերակ)

<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>

(էջ 500-516)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291-II, էջ 117-134:

Ինքնագիրն անվերնագիր է, գրված է սև մելանով, հետագայում հեղինակը մատիտով ուղղումներ և լրացումներ է կատարել: Այս բնագիրը «Հայրենիքում» «Ակոռա Տեր Մաթոսը և խաչավոր Ադամ ամին» վերնագրով տպագրված գլխի նախնական տարբերակն է, որը հեղինակը հիմնովին վերամշակել է՝ նոր գրվածներ ավելացնելով և խմբագրելով հատկապես լեզվաոճական ձևերը և տպագրության հանձնել «Հայրենիք» ամսագրին (1925, N 11, էջ 16-28):

Տպագրվում է առաջին անգամ:

Ը. ԳԼՈՒԽ

<Գ. տարբերակ>

ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ

(էջ 517-550)

Ինքնագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», 1925, N 11, էջ 16-28:

Բաքվի «Կոմունիստ» օրաթերթը 1928 թ. 86-րդ համարում (էջ 4) «Խաչավոր Ադամ ամին» խորագրով տպագրել է «Մի հատված «Ուստա Կարո» վեպից» ենթավերնագրով՝ դրելով. «Բանաստեղծ Ավ. Իսահակյանը վերջացրել է իր «Ուստա Կարո» վեպը, որը փորձում է վերին աստիճանի պարզ և գեղարվեստական բովանդակությամբ տալ մեր նախընթաց՝ մինչպատերազմյան չրջանի ամբողջական պատկերը»: «Հայրենիք»-ի տեքստը, մասնակի հեղինակային ուղղումներով, տպագրվել է «Արձակ էջեր», 1963, էջ 596-616, որտեղից և արտատպվում է:

«Հայրենիքի» համեմատությամբ բնագրային տարբերությունները նշանակված են D տառով:

Էջ 530, տ. 17. *Ջարիք կարկառեալ գան ի Հիւսիսոյ* — Երեմ. Ջ 1:

Էջ 531, տ. 13-14. *եղև անկումն մեծ նրա, ինչպես եղավ Ջար-Հուլիանոսի և գեհենական Ներոնի — Ջար-Հուլիանոս* — Հուլիանոս Ուրացող — հռոմեական կայսր (361-363), Կոստանդիանոս Մեծի խորթ եղբոր՝ Հուլիոս Կոստանդոսի որդին: Հրովարտակեց բացել մեհյանները, պաշտել հեթանոսական աստվածներին: Հալածանքներ հարուցեց քրիստոնյաների դեմ, որի համար ստացավ «ուրացող» մականունը: Զոհվեց պարսիկների դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ 363 թ. հուլիսի 26-ին, 32 տարեկան հասակում (Аммиан Марцелин, История, кн. XXI, гл. I–IV, Киев. 1907): *Ներոն* — հռոմեական կայսր (37-68), որը ապստամբներից չսպանվելու համար ինքնասպան եղավ՝ կտրելով կոկորդը:

Էջ 535, տ. 15. *վեցհազարակ կկարդա — վեցհազարյակ — միջնադարյան հայ մատենագրության մեջ գուշակային բնագրերի ժողովածու:*

Էջ 537, տ. 4-5. *Ս. Հակոբը մեր Լուսավորչա հորքուրի տղան էր* — Հակոբ Մծբնա հայրապետը, ըստ տարբեր վարքագրությունների,

ապրուեցյամբ պարթև էր, Գրիգոր Լուսաւորիչի ազգականը: Նրա անունով պահպանվել է «Գիրք որ կոչի Զգօն արարեալ Սրբոյն Յակոբայ երից երանեալ Հայրապետին Մծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս սիովնի» (Կոստանդնուպոլիս, 1824) պավանարանական ճառերի ժողովածուն:

Էջ 544, տ. 20. *երանալ* = պննելով:

ԳԼՈՒԽ Ժ.
<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԾՊՆԻ ԳՆԱԼԸ>
(Էջ 551-568)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291, էջ 135-151:

Ինքնագիրն անվերնագիր է, գրված է սև մելանով, հետագայում հեղինակը սև և կարմիր մատիտով ուղղումներ և լրացումներ է կատարել:

Այս գլուխը վեպի առաջին տարբերակի «Ուստա Կարոյի Ծպնի գնալը, հոր շարելը, իր և Զավուշի ծագման մասին նոր պատմութիւններ, ծպնեցոց հետ կռվելը և հաշտվելը» գլխի (ԵԺ 14 հատորով, հ. 7, էջ 74-95) հիմնովին վերամշակումն է:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 561, տ. 22. *ձնվզ* = ջենովացի:

<ԳԼՈՒԽ ԺԱ.>
<ԾՊՆԻՈՒՄ>
(Էջ 569-582)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 291, էջ 151-164:

Ինքնագիրն անվերնագիր է, գրված է սև մելանով, հետագայում հեղինակը սև և կարմիր մատիտով ուղղումներ և լրացումներ է կա-

տարել: Այս գլուխն առանձնացրել ենք՝ նկատի ունենալով ինքնագրի 151-րդ էջի աջ լուսանցքում «Առավոտը վաղ, վեր կացան...» տողի դիմաց հեղինակի կատարած հղումը. «Այստեղ նոր գլուխ»: Պայմանականորեն վերնագրել ենք «Մալնիում», քանի որ նախորդ գլխի անմիջական շարունակությունն է:

Տպագրվում է առաջին անգամ:

<ՈՒՍՏԻ՝ ՏԻԿՈՐ ԳՆԱԼԸ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ ԺՂԼՎԵԼՈՒ>

ԳԼՈՒԽ

(էջ 583-622)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 365-II:

Առաջին անգամ որոշ կրճատումներով տպագրվել է ԵԺ 6 հատորով, հ. 4, էջ 416-447, այնուհետև նույնությամբ արտատպվել է **Ավետիք Իսահակյան**, Ուստա Կարո, Եր., 2000, էջ 193-214:

Ինքնագրում գլուխը վերնագրված չէ: Ա.Ինճիկյանը վերնագրել է՝ ըստ ԳԱԹ-ում արխիվը մշակողի կողմից առաջարկված պայմանական վերնագրի «Ուստան Տիկորում»: Իսահակյանը վերնագրի փոխարեն գրել է ԳԼՈՒԽ, առանց նշելու նրա տեղը և դիրքը վեպի կառուցվածքում: Առաջնորդվելով նախորդ գլխի հետևյալ հատվածի հղումով. *«— Մ՛ւր կերթանք, վարպետ ջան:/— Օրթե-Հարուքի քովը, մի քիչ ժղլվելու»*, գլուխը դրել ենք այստեղ՝ քանի որ այն պատումի անմիջական շարունակությունն է: Վեպի առաջին տարբերակում նույնպես Ուստա Կարոն Մալնիից հետո գնում է Հարութի ջաղացը՝ «ժղլվելու»: Ինճիկյանի դրած պայմանական վերնագիրը փոխել ենք ըստ վեպի առաջին տարբերակի:

Բնագրի սույն հրատարակության մեջ վերականգնված են նախորդ հրատարակություններում կրճատված բոլոր հատվածները, ինչպես նաև տողատակերում նշված են առավել էական, բովանդակությունը խաթարող սխալ ընթերցումները:

Այս պլուխը համապատասխանում է ծրագրային պրառումներում նշված «Հարութի մոտ. առաջին անգամ» պլխին:

Ամբողջութեամբ տպագրվում է առաջին անգամ:

<ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՐՈՒԹԻ>

(էջ 623-657)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 379-II:

Առաջին անգամ տպագրվել է եժ 6 հատորով, հ. 4, էջ 447-475, այնուհետև նուագութեամբ արտատպվել է Ավետիք Իսահակյան, Ուստա Կարո, Եր., 2000, էջ 215-235:

Ինքնագրում պլուխը վերնագրված չէ: Ա.Ինճիկյանը վերնագրել է «Հարութ»՝ ըստ ԳԱԹ-ում պահվող մշակողի կողմից առաջարկած պայմանական վերնագրի: Մենք հետևել ենք այս պլխին առնչվող Իսահակյանի ծրագրային պրառումներին, որոնք հիմնականում վերնագրված են «Կենսագրութեան Հարութի»:

էջ 624, տ. 11-12. ***Զամչյանի Հայոց պատմութեանն ու քերականութեանը*** *– տե՛ս* Միքայէլ Զամչեանց, Պատմութիւն Հայոց. Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, Հտ. Ա., Վենետիկ, 1784, Հտ. Բ., Վենետիկ, 1785, Հտ. Գ., Վենետիկ, 1786, Միքայէլ Զամչեանց, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779:

էջ 624, տ. 17. ***Խորենացի*** *– տե՛ս* Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865:

էջ 624, տ. 18. ***Փարբեցի*** *– տե՛ս* Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1873:

էջ 624, տ. 18. ***Ագաթանգեղոս*** *– տե՛ս* Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1835:

էջ 624, տ. 18. ***Եղիշե*** *– տե՛ս* Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցուածոց դրչագրաց, Վենետիկ, 1859:

Էջ 624, տ. 18. *Եզնիկ – տե՛ս* Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Կ. Պոլիս, 1869:

Էջ 624, տ. 18. *Վարք Սրբոց – տե՛ս* Ալեքսեան Մկրտիչ, «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց, որք կան ի հին տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց (հ. 1-12, Վենետիկ, 1810-1815):

Էջ 624, տ. 19-20. *Թ. Գեմբացի. «Ծաղագս նմանող լինելոյ Քրիստոսի»* – Թոմա Գեմբացի (1380-1471) ուշ միջնադարի գերմանա-հոլանդական մատենագիր: Նրա նշյալ երկը հայերեն թարգմանել է Մխիթար արբայի աշակերտ հ. Վրթանես վարդապետ Ասկերյանը, որն ունեցել է երկու հրատարակություն (Վենետիկ, 1786 և Վենետիկ 1853):

Էջ 624, տ. 20. *Դավիթ Անհաղթ – տե՛ս* Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող, Դաւիթ Անյաղթ, Մատենադրութիւնք, Վենետիկ, 1833:

Էջ 624, տ. 22. *Ժամագիրք – տե՛ս* Ժամագիրք Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Երուսաղեմ, 1866:

Էջ 624, տ. 22. *Մաշտոց – տե՛ս* Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ապդիս ըստ սահմանադրութեան Սուրբ եկեղեցւոյս Հայոց, Երուսաղեմ, 1879:

Էջ 624, տ. 22. *Շարականներ – տե՛ս* Շարակնոց, Երաժշտական երգեցմունք հոգևորականք աստուածայնոց և երջանկայ սրբոց վարդապետաց Հայոց թարգմանչաց, ղկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց, Կ. Պոլիս, 1826:

Էջ 624, տ. 22. *Այսմավուրք – տե՛ս* Յայսմաւուրք, ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր-Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834:

Էջ 626, տ. 2-3. *իմաստասիրութիւն է նմանութիւն Աստծոյ ըստ կարողութեան մարդկան – տե՛ս* «Դաւթի Եռամեծի եւ Անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի. Սահմանք եւ տրամատութիւնք իմաստասիրութեան», պրակք Դ (Մատենադիրք Հայոց, հ. 3, էջ 159):

ԷՂ 626, ա. 30-31. *գեղեցիկ ու մանկատի Սոմնացին, որ կարողացել է հափշտակել սիրուց հագեցված Սողոմոնին* – Աբիսակ Սոմնացու մասին պատմում է Սուրբ Գիրքը. «Եւ արքայ Դաւիթ ծերացեալ եւ անցեալ զաւուրսք, եւ ծածկէին զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր: Եւ ասեն ծառայք նորա. խնդրեսցին տեառն մերոյ արքայի աղջիկ մի կոյս, եւ կացցէ առաջի արքայի եւ եղիցի զարմանալ, եւ ննջեսցէ ընդ նմա եւ ջեռցի տէր մեր արքայ: Եւ խնդրեցին աղջիկ մի գեղեցիկ յամենայն սահմանսցն Իսրայելի, եւ գտին զԱբիսակ Սոմնացի, եւ ածին զնա առ արքայ: Եւ էր աղջիկն գեղեցիկ յոյժ, եւ ջեռուցանէր զարքայ եւ պաշտէր զնա, եւ արքայ ոչ գիտաց զնա» (Գ Թագ. Ա 1-4):

Սոմնացու գեղեցկութիւնը նկարագրված է «Երգ Երգոց» Զ գլխում.

«Գարձո զաչս քո յինէն, վասն զի զոքա սրարձեցուցին զիս:

Վարսք քո իբրեւ զերամակս այծից որք երեւեցան ի Գաղաադէ:

Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց որք ելանեն ի լուալեաց. ամենեքին երկուորիք են, եւ անծնունդ ոչ գոյ ի նոսա:

Իբրեւ զթել կարմիր շրթունք քո, եւ խաւսք քո գեղեցիկք:

Իբրեւ կեղեւ նռան այտք քո՝ բայց ի լռութիւնդ քումմէ:

Վաթսուն են թագուհիք, եւ ութսուն հարճք. եւ աւրիորդք որոց ոչ գոյ թիւ: Մի է աղաւնի իմ կատարեալ իմ. մի է մաւր իւրոյ ընտրեալ ծնողի իւրոյ:

Տեսին զնա դստերք՝ եւ երանեցին նմա. թագուհիքն եւ հարճք գովեցին զնա:

Դստերքն եւ թագուհիք տեսին զՀարանն, եւ երանեցին նմա:

Ո՞վ է սա որ երեւեալ է իբրեւ զառաւաւտ, գեղեցիկ իբրեւ զլուսին, ընտիր իբրեւ զարեգական. զարմանալի յաւրինեալ:

Փեսայն ցՀարանն ասէ: Ի պարտէզս ընդուզեացն իջի Հայել յարդիւնս վտակացն. տեսանել թէ ծաղկա՞լ իցէ որթ, թէ ծաղկա՞լ իցէ նոճ, թէ ծաղկա՞լ իցեն նռնենիք:

Հարան ցփեսայն ասէ: Անդ տացց զատինս իմ քեզ, ոչ ծանեաւ անձն իմ. եղ զիս իբրեւ զկառն Ամինադաբայ:

Դատերքն եւ թագուհիքն ցհարանն ասեն: Դարձիր Սոմնացիդ, դարձիր, դարձիր եւ տեսցուք մեք ի քեզ» (Երգ Զ, 4-12): Այս վերջին տողը Գրիգոր Նարեկացին օգտագործել է «Յարութեան» տաղում («Հաւուն, հաւուն»): Ըստ ուսումնասիրողների՝ Աբիսակ Սոմնացին նույն Սուլամիթան է՝ Սողոմոնի ամենասիրելի կինը, որի հանդեպ սերը Սողոմոնը նկարագրում է «Երգ Երգոցի» գլուխներում:

Էջ 635, տ. 12-14. *Որդի իմաստուն ... տրտմութիւն է մօր* – Առակ. ժ 1:

Էջ 638, տ. 27-28. *Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն է* – Առակ. Ա 7:

Էջ 639, տ. 8. «*Հավատամք ի մի Աստուածն*» – Արտահայտությունը «Հաւատոյ Հանգանակ»-ից է (տե՛ս ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղացւոյ, Մոսկուայ, 1853, էջ 2):

Էջ 639, տ. 8-9. «*Հրաժարիմք ի Սատանայէ*»-ն – Արտահայտությունը «Հրաժարիմք»-ից է (տե՛ս ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղացւոյ, Մոսկուայ, 1853, էջ 1):

Էջ 641, տ. 8-9. *չաբաթականներ* – 19-րդ դարավերջին 20-ի սկզբին Օսմանյան Կայսրությունում և Ռուսահայաստանում լայն տարածում գտած աղանդավորական շարժում:

Էջ 641, տ. 10. *Թոնդրակեցոց հին և մեծ աղանդի* – 9-11 դդ. Հայաստանում ձևավորված աղանդավորական շարժում:

Էջ 651, տ. 13 - էջ 652, տ. 12. *ունայնութիւն ունայնութեանց ... ամենայն ինչ ունայնութիւն է...* Խաչակյանը համատեղելով վերաշարադրել է Ժողովողի գրքի Ա և Բ գլուխները:

Էջ 653, տ. 15-16. «*չուն, որ կենդանի է, լաւ է, քան զառիւծ մեռեալ*» – Ժող. Թ 4:

Էջ 653, տ. 21-22. «*Եկ կեր ուրախութեամբ զհաց քո և արբ սրտիւ զուարճացելով զգինի քո...*» – Ժող. Թ 7:

Էջ 655, տ. 29. *ըստ Պղատոնի, «իմաստասիրութիւն է խոկումն մահու»* – Խաչակյանի աղբյուրը Դավիթ Անհաղթի տնքատն է. «Իսկ երկու սահմանքն վերաբերին ի Պղատոն, որք ի կատարմանէն են. այն որ ասեն, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու» (*տե՛ս* «Դաւթի

եւ Անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի. Սահմանք եւ տրամաւորութիւնք իմաստասիրութեան», պրակք Դ (Մատենադիրք Հայոց, հ. 3, էջ 162, 166):

Էջ 657, տ. 7-10. *Տուք արբեցուիւն տրտմեցելոց ... իւրեանց ոչ ևս յիշեսցեն* – Առակք, Լ.Ա. 6-7:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
(Էջ 658-664)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 292-II, էջ 1-5:

Հեղինակային թվագրմամբ գրվել է 1931 թ. ապրիլի 20-ին:

Ըստ Իսահակյանի մի գրառման. «Հարութի կենսագրության մեջ մի գլուխ կունենա ԻՆԺԵՆԵՐԸ վերնագիրը» (ԳԱԹ, ԻՓ, 431-II, թերթ 2): Ըստ այդմ՝ գլուխը վերնագիր ենք «Հարութի կենսագրությունը» գլխից հետո: Գլխին առնչվող հատվածական գրառումները պահվում են հիմնականում ԳԱԹ, ԻՓ, 403-II և 404-II և այլ գործահամարներով, որոնք արձանագրված են հիմնականում «Ինժենները» կամ «Ճարտարապետը» վերնագրերով:

Տպագրվում է առաջին անգամ:

<«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ» ԿԱՄ «ԻՆԺԵՆԵՐԸ»
ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ԻՐ ՋԱՂԱՑՈՒՄ
(Էջ 665-666)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 346-II, թերթ 14-15:

Տպագրվում է առաջին անգամ:

2. ԲՆՈՒԹԳՈՒՆԸ
(Էջ 666-668)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 402-II, թերթ 1-2:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 667, տ. 13-14. ***Բնազդի մասին, ինքնագիտակցության մասին, ապրելու կամքի մասին (Շոպենհաուերը)*** – նկատի ունի գերմանացի փիլիսոփա Արթուր Շոպենհաուերի (1788-1860) «Աշխարհը որպես կամք և պատկերացում» աշխատությունը: Իսահակյանի գրադարանում պահվում է Շոպենհաուերի այս երկի գերմաներեն հրատարակությունը (Die Welt als Wille und Vorstellung) (տե՛ս Ավ.Իսահակյանի տուն-թանգարան, ՄՄ, 8506):

3. ԲՆՈՒԹԳՈՒՆԸ
(Էջ 668-670)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 402-II, թերթ 5-6:
Տպագրվում է առաջին անգամ:

4. ԲՆՈՒԹԳՈՒՆԸ
(Էջ 670-671)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 402-II, թերթ 18:
Տպագրվում է առաջին անգամ:

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԱՆԻՈՒՄ
(Էջ 671-672)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 402-II, թերթ 21-22:
Տպագրվում է առաջին անգամ:

6. ԲՆՈՒԹՑՈՒՆ

(էջ 672-673)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 402-II, թերթ 23:
Տպագրվում է առաջին անգամ:

7. ԱՇԽԱՏԱՆՔԸ

(էջ 673-674)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 402-II, թերթ 41:
Տպագրվում է առաջին անգամ:

8. ՄԱՐԴԸ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԳԱՆՁԱՆ Է

(էջ 674)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 402-II, թերթ 46:
Տպագրվում է առաջին անգամ:

9. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(էջ 674-676)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 403-II, թերթ 1-3:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 675, տ. 6. *«Արարատ» ամսաթերթը* – Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պաշտոնական ամսագիրը: Լույս է տեսել 1868-1919 թթ.:

Էջ 675, տ. 6. *Վարք սրբոց* – տե՛ս Մկրտիչ վրդ. Ազգերեան, Լիակատար վարք և վկայարանութիւն սրբոց. Որք կան ի հին Տօնացոյցի Եկեղեցւոյ Հայաստանեայց, հ. 1-10, Վենետիկ, 1810-1814:

Էջ 675, տ. 7. *Պղնձե քաղաք – տե՛ս* Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք, Կ. Պոլիս, 1820:

10. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
ԲԱԳՐԱՆՈՒՄ
(Էջ 676-677)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

11. <Ո՞Ց ՊԻՏԻ ԳԼՈՒԽ ԹԱՓԵԼ...>
(Էջ 677-678)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

12. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 678-679)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 7-8:
Տպագրվում է առաջին անգամ:

13. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
ԲԱԳՐԱՆ
(Էջ 679)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 9:
Տպագրվում է առաջին անգամ:

14. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
(Էջ 679)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

15. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ՀԱՐՈՒԹԸ

(Էջ 679-680)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 11-12:
Տպագրվում է առաջին անգամ:

<ԵՐԲ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ...>

(Էջ 680)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 13:
Տպագրվում է առաջին անգամ:

17. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՄՏԱԾՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ

(Էջ 680-681)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:

18. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Էջ 681)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

19. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԻՆՔՆԻՆ

(Էջ 682)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 16:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 682, տ. 6. *Հանճարեղ Միստրալ* – Գաբրիելա Միստրալ (1889-1957) -չիլիացի բանաստեղծուհի, Նոբելյան մրցանակակիր:

20. ԲԱԳՐԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԽՈՐՀՈՒՄ ԷՐ
(Էջ 682)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 17:
Տպագրվում է առաջին անգամ:

21. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆ...>
(Էջ 682-683)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 18:
Տպագրվում է առաջին անգամ:

22. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻՆ ԱՍՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ
(Էջ 683-684)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 19-20:
Տպագրվում է առաջին անգամ:

23. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ
(Էջ 684-685)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 21:
Տպագրվում է առաջին անգամ:

24. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Ի՛Ջ 685)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 22:
Տպագրվում է առաջին անգամ:

25. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

(Ի՛Ջ 686)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 23:
Տպագրվում է առաջին անգամ:

26. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ

(Ի՛Ջ 686-687)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 24:
Տպագրվում է առաջին անգամ:

27. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ (ԲԱԳՐԱՆ)

(Է՛Ջ 687-688)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 25:
Տպագրվում է առաջին անգամ:

28. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ «ՆԱՐԵԿԸ»

(Ի՛Ջ 688)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 403-II, թերթ 27:
Տպագրվում է առաջին անգամ:

29. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Էջ 688-689)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 28:
Տպագրվում է առաջին անգամ:

30. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Էջ 689)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 403-II, թերթ 29:
Տպագրվում է առաջին անգամ:

31. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Էջ 689-690)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 314-II, թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:

32. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ ԱՍՈՒՄ Է...>

(Էջ 690)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 314-II, թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

33. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Էջ 691)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 314-II, թերթ 19:
Տպագրվում է առաջին անգամ:

34. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 691-692)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 314-II, թերթ 30:
Տպագրվում է առաջին անգամ:

35. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 692)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 313-II, թերթ 29:
Տպագրվում է առաջին անգամ:

36. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 692)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 353-II, թերթ 57:
Տպագրվում է առաջին անգամ:

37. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 693)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, թերթ 1:
Տպագրվում է առաջին անգամ:

38. <ԻՆԺԵՆԵՐԸ ՆԿԱՏԵՑ...>
(Էջ 693)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, թերթ 2:
Տպագրվում է առաջին անգամ:

39. ԻՆԺԵՆԵՐԸ
(էջ 693)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 3:
Տպագրվում է առաջին անգամ:

40. <ԵՎ ԽԱՎԱՐԸ...>
(էջ 693-694)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 4:
Տպագրվում է առաջին անգամ:

41. ԻՆԺԵՆԵՐԸ
(էջ 694)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

42. ԻՆԺԵՆԵՐԸ: ԻՆՃԻՆԵՐ ԸՍՏ ՀԱՐՈՒԹԻ
(էջ 694)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

43. <ԵՐԲ ԻՆԺԵՆԵՐԸ...>
(էջ 694-695)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

44. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻ...>
(Էջ 695)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

45. ՀԱՐՈՒԹԸ ՄՏԱԾՈՒՄ Է
(Էջ 695)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 9:
Տպագրվում է առաջին անգամ:

46. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՑ...>
(Էջ 696)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

47. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 697)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 11:
Տպագրվում է առաջին անգամ:

48. <ԻՆԺԵՆԵՐԻՑ ՀԵՏՈ...>
(Էջ 697)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 12:
Տպագրվում է առաջին անգամ:

49. <ԵՐԲ ԻՆՃԵՆԵՐԸ...>
(Էջ 697-698)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 13:
Տպագրվում է առաջին անգամ:

50. <ԱՑՍ ԲՈԼՈՐ ՑԱՎԵՐԻՆ...>
(Էջ 698-699)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:

51. <ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՑՈՒՆԸ...>
(Էջ 699-700)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

52. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 700)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 16:
Տպագրվում է առաջին անգամ:

53. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 700-702)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 17-18:
Տպագրվում է առաջին անգամ:

54. ՀԱՐՈՒԹ-ԻՆԺԵՆԵՐ
(Ւ, 702-703)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 404-II, թերթ 18-19:
Տպագրվում է առաջին անգամ:

55. ԻՆԺԵՆԵՐԸ
(Ւ, 703)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 404-II, թերթ 20:
Տպագրվում է առաջին անգամ:

56. ԻՆԺԵՆԵՐ
(Է, 704)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 404-II, թերթ 21:
Տպագրվում է առաջին անգամ:

Է, 704, տ. 18. ***Օգտվել Սպենսերի գաղափարներից*** – Հերբերտ Սպենսեր (1820-1903) – անգլիացի փիլիսոփա, պոզիտիվիզմի հիմնադիրներից: Սպենսերն իր աշխատություններում առանձնակի մանրամասնությամբ մշակել է էվոլյուցիոն տեսությունը՝ միատարրությունից բազմատարրություն տանող զարգացումները:

Է, 704, տ. 19. A. France. ***Էպիկուրի պարտեզը*** – Ա. Իսահակյանի տուն-թանգարանում պահվող գրողի գրադարանում (ՄՄ, 5883) առկա է Անատոլ Ֆրանսի այս երկի հրատարակությունը (Anatole France, Le jardin d'Epicure):

Է, 704, տ. 20. Biologie des Krieges – Պատերազմների կենսաբանությունը – Ա. Իսահակյանի տուն-թանգարանում պահվող գրողի գրադարանում (ՄՄ, 1791) առկա է այս երկի հրատարակությունը (**G. F. Nicolai**, Die Biologi des Krieges, Zürich, 1917):

57. <ՀԱՐՈՒԹԸ ԹԵ...>
(Էջ 704-705)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 22:
Տպագրվում է առաջին անգամ:

58. <ԹԵԵՎ ԻՆԺԵՆԵՐԸ...>
(Էջ 705)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 23:
Տպագրվում է առաջին անգամ:

59. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՆ...>
(Էջ 705-706)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 24:
Տպագրվում է առաջին անգամ:

60. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 707)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 25:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 707, տ. 8. ***Պանսպերմիա*** – Տեսություն երկրի վրա կյանքի առաջացման մասին, ըստ որի կենդանի օրգանիզմները կամ նրանց սաղմերը տիեզերական տարածության միջոցով հասել են երկիր: Այս վարկածը մշակել և շրջանառության մեջ է դրել շվեդ ֆիզիկոս և քիմիկոս **Սվանտե Ավգուստ Արենիուս** (1859-1927): Եզրույթը առաջին անգամ գործածել է հույն փիլիսոփա Անաքսագորասը մ.թ.ա 5-րդ դարում:

61. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 707-709)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 26, 29:
Տպագրվում է առաջին անգամ:

62. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 709-711)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 27:
Տպագրվում է առաջին անգամ:

63. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 711-712)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 28:
Տպագրվում է առաջին անգամ:

64. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 712-714)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 30:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 713, տ. 6-7. ***Կայենը ... սպանեց Աբելին*** – տե՛ս Ծննդոց Դ:

65. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 714-717)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 31:
Տպագրվում է առաջին անգամ:

66. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 717-719)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 32:
Տպագրվում է առաջին անգամ:

67. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 719-720)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 33-36:
Տպագրվում է առաջին անգամ:

68. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 720-722)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 37-38:
Տպագրվում է առաջին անգամ:

69. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 722)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 39-40:
Տպագրվում է առաջին անգամ:

70. ԱՍՏՎԱԾ
(Էջ 722-723)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, 404-II, թերթ 40:
Տպագրվում է առաջին անգամ:

71. ԻՆԺԵՆԵՐԸ

(Լ 723)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 41:
Տպագրվում է առաջին անգամ:

72. ԻՆԺԵՆԵՐԸ

(Լ 723)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 42:
Տպագրվում է առաջին անգամ:

73. ԻՆԺԵՆԵՐԸ

(Լ 724)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 43:
Տպագրվում է առաջին անգամ:

74. ԻՆԺԵՆԵՐԸ

(Լ 724–725)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 44:
Տպագրվում է առաջին անգամ:

75. ԻՆԺԵՆԵՐԸ

(Լ 725-726)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404–II, թերթ 45:
Տպագրվում է առաջին անգամ:

76. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 726)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404–II, թերթ 46:
Տպագրվում է առաջին անգամ:

77. <ՐՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵՐԵՎՍ...>
(Էջ 726–727)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404–II, թերթ 47:
Տպագրվում է առաջին անգամ:

78. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 727)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404–II, թերթ 48:
Տպագրվում է առաջին անգամ:

79. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 727)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404–II, թերթ 49:
Տպագրվում է առաջին անգամ:

80. ԻՆՃԵՆԵՐԸ
(Էջ 727)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404–II, թերթ 50:
Տպագրվում է առաջին անգամ:

81. ԻՆԺԵՆԵՐԸ ԱՍԱԾ –
(Էջ 728)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 51:
Տպագրվում է առաջին անգամ:

82. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 728)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 52:
Տպագրվում է առաջին անգամ:

83. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 729)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 53:
Տպագրվում է առաջին անգամ:

84. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 729-730)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 54:
Տպագրվում է առաջին անգամ:

85. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 730)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 55:
Տպագրվում է առաջին անգամ:

86. ԻՆԺԵՆԵՐ
(ԷՀ 730-731)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404-II, թերթ 56:
Տպագրվում է առաջին անգամ:
ԷՀ 731, տ. 6. **Lustgefun**ը – և **Lustgefühl**ը (գերմ.) – հաճույքը և հաճույքի ղգայումը:

87. ԻՆԺԵՆԵՐԸ
(ԷՀ 731)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404-II, թերթ 57:
Տպագրվում է առաջին անգամ:
ԷՀ 731, տ. 14. *«Թուրքերն անցել են այստեղից» – Վիկտոր Հյուգոյի* «L'Enfant» քանաստեղծութեյան առաջին տողն է. «Les turcs ont passé là. Tout est ruine et deuil» («Թուրքերն են անցել այստեղից: Շուրջբոլորը սուգ է և ավեր»:)

88. ԻՆԺԵՆԵՐԸ
(ԷՀ 731-732)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404-II, թերթ 58:
Տպագրվում է առաջին անգամ:

89. ԻՆԺԵՆԵՐԸ
(ԷՀ 732)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իֆ, 404-II, թերթ 59:
Տպագրվում է առաջին անգամ:

90. ԻՆԺԵՆԵՐԸ

(էջ 732)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 60:
Տպագրվում է առաջին անգամ:

91. ՀԱՐՈՒԹԸ-ԻՆԺԵՆԵՐԸ

(էջ 733)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 61:
Տպագրվում է առաջին անգամ:

92. ԻՆԺԵՆԵՐԸ

(էջ 733-734)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 62:
Տպագրվում է առաջին անգամ:

93. ԻՆԺԵՆԵՐԸ

(էջ 734)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 63:
Տպագրվում է առաջին անգամ:

94. ԻՆԺԵՆԵՐԸ

(էջ 735-737)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 64-65:
Տպագրվում է առաջին անգամ:

95. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 737-739)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, թերթ 66-68:
Տպագրվում է առաջին անգամ:

96. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 739-742)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, էջ 69-71:
Տպագրվում է առաջին անգամ:

97. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 743-744)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, էջ 72-73:
Տպագրվում է առաջին անգամ:

98. ՀԱՐՈՒԹ, ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 744-747)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 404-II, էջ 74-76:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 745, տ. 30-31. *ես մի բան գիտեմ, այն է՝ որ բան չգիտեմ* – ասույթը վերագրվում է Սոկրատեսին (մ.թ.ա. 469 - մ.թ.ա. 399):

99. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 748)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 442-II, թերթ 19:
Տպագրվում է առաջին անգամ:

100. <ԻՆԺԵՆԵՐԸ ՕՊՏԻՄԻՍՏ Է...>
(Էջ 748)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 376-II, թերթ 38:
Տպագրվում է առաջին անգամ:

101. <ՀԱՐՈՒԹԸ ԴԻՎԱԿԱՆ...>
(Էջ 748-749)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 382-II, թերթ 79:
Տպագրվում է առաջին անգամ:

102. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 749)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 384-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

103. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 749)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 384-II, թերթ 50:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 749, տ. 31. ***Ֆրեոյդիզմ*** – ավստրիացի հոգեբույժ, հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրոյդի (1956-1939) ուսուցությունը, ըստ որի մարդու վարքագծի կարգավորման կողմնորոշիչներից մեկը նրա սեռական կյանքն է:

104. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 750)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 737-II, ծոցատետր, թերթ 45բ:
Տպագրվում է առաջին անգամ:

105. <ՈՂՋ ՇՈՒՆԸ ԼԱՎ Է...>
(Էջ 750)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 737-II, ծոցատետր, թերթ 48ա:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 750, տ. 12. «*Ողջ շունը լավ է սատկած առյուծից*» – Հմմտ. ժող. թ 4 (Շուն որ կինդանի է՝ լաւ է քան զառեւծ մեռեալ):

106. <ՀԱՐՈՒԹԸ ՆԵՂ ՎԱՑՐԿՑԱՆՆԵՐՈՒՄ...>
(Էջ 750)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 737-II, ծոցատետր, թերթ 70ա:
Տպագրվում է առաջին անգամ:

107. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 751)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 326-II, թերթ 24:
Տպագրվում է առաջին անգամ:

108. ԻՆԺԵՆԵՐ
(Էջ 751)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 326-II, թերթ 28:
Տպագրվում է առաջին անգամ:

109. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 752-754)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 394-II, թերթ 2-3:
Տպագրվում է առաջին անգամ:

110. ԻՆԺԵՆԵՐ

(Էջ 754-755)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 433-II, թերթ 24:
Տպագրվում է առաջին անգամ:

111. ԻՆԺԵՆԵՐ

(Էջ 756-757)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 433-II, թերթ 25:
Տպագրվում է առաջին անգամ:

112. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ – ՀԱՐՈՒԹ

(Էջ 757-758)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 431-II, թերթ 46:
Տպագրվում է առաջին անգամ:

113. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ

(Էջ 758-762)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 441-II, թերթ 32-39:
Տպագրվում է առաջին անգամ:

114. ՀԱՐՈՒԹԻՆ ՏԱՆՋՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Որոնք ամենաէականն են մարդու համար:

(Էջ 762-763)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 438-II, թերթ 2:
Տպագրվում է առաջին անգամ:

115. <ԻՆԾԵՆԵՐԻ ՆՑՈՒԹԸ ԿԱԶՄԵԼԻՍ...>
(Էջ 763-764)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 433-II, թերթ 21:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 763, տ. 30. Philosephe-boysifhe (գերմ.) – Փիլիսոփա-տղա:

116. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 764)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 346-II, թերթ 13:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 764, տ. 29. *Իմաստասիրութիւն բարոյական Թեսաւրոսի* – նկատի ունի «Իմաստասիրութիւն բարոյական յօրինեալ յԷմմանուէլէ Թեսաւրոսէ ի մեծանուն Կոմսէ և ի պատուական Ասպետէ տէրութեանն Սաբաւդիոյ» դիրքը, որ թարգմանել է Հ. Վրթանէս վարդապետ Ասկերեանցը (Վենետիկ, 1793 և 1825):

117. ԻՆԾԵՆԵՐ
(Էջ 765)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 372-II, թերթ 59:
Տպագրվում է առաջին անգամ:

118. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 765-766)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 378-II, թերթ 13-14:
Տպագրվում է առաջին անգամ:

119. ՀԱՐՈՒԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՑՈՒՆԸ
(Էջ 767-768)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 378-II, թերթ 11-12:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 768, տ. 3-4. *ըստ Շոպենհաուերի. «Մարդը բնազանցական ապրած է»* – Արթուր Շոպենհաուերի հիմնադրած փիլիսոփայական մարդաբանության հիմունքներից մեկը: Շոպենհաուերը վճռականորեն հրաժարվեց մարդու մասին լուսավորչականության պատկերացումներից, ըստ որոնց մարդը բանական և հոգևոր աշխարհ ունեցող արարած է: Ըստ Շոպենհաուերի մարդու վարքագիծը կառավարվում է բնազանցական ուժերով և ենթագիտակցությամբ:

120. <ՇՐՋԻԿ ԿԱՑՄԱԿԸ ԵՐԲԵՔ...>
(Էջ 769-771)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 378-II, թերթ 15-18:
Տպագրվում է առաջին անգամ:

121. ԻՆԺԵՆԵՐԸ
(Էջ 772)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 361-II, թերթ 2:
Տպագրվում է առաջին անգամ:

122. ԱՍՏՄՈՒ ԵՎ ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՑԱՆ ՄԱՍԻՆ
(Էջ 772)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 424-II, թերթ 2բ:
Տպագրվում է առաջին անգամ:

123. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

(էջ 773)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 439-II, թերթ 49:

Տպագրվում է առաջին անգամ:

124. <ԻՆԺԵՆԵՐԸ...>

(էջ 774)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, վեցերորդ խմբալո-րում, թերթ 16:

Տպագրվում է առաջին անգամ:

ՀՐԵՂԵՆԻ ՄՈՏ. ԵՐԱՋ

(էջ 775-786)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 292-II, թերթ 7բ-10ա:

Հեղինակը ինքնագրի առաջին էջի վերին ձախ անկյունում նշել է. «Սկսեցի 1911 թ. 25 փետր<վարի>, Թիֆլիզ»: Հետևաբար այս գլուխը, ինչպես նաև մինչև ինքնագրի 61-րդ էջում ընդգրկված գլուխներն ու հատվածները, մաս են կազմում վեպի առաջին տարբերակի, որոնք սակայն հեղինակը չի ընդգրկվել վեպի առաջին տարբերակի բնագրում: Այդ գլուխները և հատվածները հետևյալներն են. 1. Աշխարհի տեսիլը (Բագրանում), էջ 6-8, 2. Կամսարականների աշխարհն, էջ 8-13, 3. Հարուքի հեքիաթը, էջ 14-16, 4. Արազի հոդում (3 օգոստոսի, 1910), էջ 17-18, 5. Աշխարհի տեսիլը, էջ 19-28, 6. Շեղումներ, էջ 29, 7. Կամսարականների աշխարհը, էջ 30, 8. Երբ Ուստեն Ղարս է գնում, էջ 31-32, 9. ***, էջ 33, 10. Ուստին ուղղված ոտանավոր, էջ 34: «Ուստա Կարոյի» արխիվում այս բնագրային միավորներին առնչվող բազմաթիվ հատվածական բնագրեր և ծրագրային հետագա

պրառումներ կան, ինչը վկայում է, որ հեղինակը պրանք ներառելու էր վեպի կառույցում՝ վերամշակելուց հետո:

Հետագայում Իսահակյանը չի մշակել և հրատարակել այս պլոտը, չնայած որ վեպի երկրորդ մշակման ծրագրային պրառումներում և վեպի պլոտների իր կազմած ցանկերում Հարութի երազների և տեսիլների առանձին թվարկումներ կան, ինչը վկայում է, որ նշյալ պլոտները պետք է վերամշակվեին՝ վեպի վերջնական բնագրում դետեղելու համար:

Առաջին անգամ տպագրվել է եժ 6 հատորով, հ. 4, էջ 475-482, այնուհետև նույնութեամբ արտատպվել է **Ավետիք Իսահակյան**, Ուստա Կարո, եր., 2000, էջ 235-240:

Ինքնագրում պլոտը վերնագրված է «Հրեղենի մոտ. երազ»: Տպագրված բնագրում վերնագրված է «Հարութը Հրեղենի մոտ»: «Հարութը» անունը վերնագրին ավելացրել է Ա.Ինճիկյանը:

Տպագրվում է ինքնագրից:

ՀԱՐՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԸ
(էջ 787-790)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իճ, 292-II, թերթ 4բ-5, արտադրութեյունը՝ ԳԱԹ, Իճ, 289-II, էջ 14-16:

Ինքնագրի աջ լուսանցքում, վերնագրի կողքին հեղինակը գրել է գրութեյան թվականը. «5 Հուլիսի, 1910»:

Տպագրվում է առաջին անգամ:

<«ԱՍՈՑԻ ՄԱՀԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

«Ուստա Կարո» վեպի ԳԱԹ-ում պահվող արխիվում «Ասոյի մահը» վերնագրով գլխի ամբողջական չարադրանք չկա: Ասոյի մասին պրառումների մի մասը Իսահակյանը խմբավորել է «Մահը և Ասո» վերտա-

ռուբյամբ թղթապանակում (ԳԱԹ, ԻՖ, 293-II), մյուս մասը ցրված է տարբեր թղթապանակներում: Պահպանված հատվածական բնագրերը և ծրագրային գրառումները ենթադրել են տալիս, որ այդ բովանդակությամբ գլուխը պիտի դրվեր «Ասոյի մահից հետո» գլխից առաջ: Ըստ այդմ՝ այստեղ ներկայացրել ենք «Ասոյի մահը» գլխին առնչվող հատվածական բնագրերը և ծրագրային գրառումները:

Իսահակյանի ծրագրային գրառումներում այս գլուխը դետեղված է «Հավելված գլուխների» մեջ և պետք է նկարագրեր «Թե ինչպես են մեռնում դյուղացիք» թեման՝ մահը, հոգեհանգիստը, հուղարկավորությունը, գյուղացիների վերաբերմունքն ու խոհերը մահվան ու հանդուցյալի մասին՝ բոլոր մանրամասնություններով:

«Ուստա Կարո» վեպի արխիվում (ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 9) պահպանվել է այս գլխի դրվագային կառուցվածքը նկարագրող ծրագրային մի գրառում. «Տիկոռ՝ Քերոբի պնդումի վրա Ուստան գնում է Ասոյի տունը. մտնում է այվանը՝ տնից լսվում են սոսկալի լաց ճայներ, կոծ. Ասոյի ծեր հայրը (Պուտոսի մոր նման): Այստեղ դնել «Թե ինչպես են մեռնում դյուղացիք» – կապերտի մեջ փաթաթած – դիեր. տանում են ժամ, թաղմանը չի գնում: Մահի մասին. խոսքեր, մխիթարանքներ, փիլիսոփայություններ: Ասոյի եղբորը, անորը, փեսին...»

1. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 791)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 293-II, թերթ 9:
Տպագրվում է առաջին անգամ:

2. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 791-792)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 293-II, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

3. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Ի՛Ջ 792)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 293-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

4. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Ի՛Ջ 792-793)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 293-II, թերթ 13:
Տպագրվում է առաջին անգամ:

5. ԱՍՈՑԻ ՄԱՀԻՆ
(Ի՛Ջ 793)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 293-II, թերթ 4:
Տպագրվում է առաջին անգամ:

6. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Ի՛Ջ 793-795)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 293-II, թերթ 12:
Տպագրվում է առաջին անգամ:

7. ԱՍՈՑԻ ՄԱՀՎԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՑՈՒՆԸ
(Ի՛Ջ 795-796)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 293-II, թերթ 1:
Տպագրվում է առաջին անգամ:

8. ՈՒՏԱՆ ԱՍՈՑԻ ՄԱՀԻՆ
(Էջ 796)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 293֊II, թերթ 2:
Տպագրվում է առաջին անգամ:

9. ՈՒՏԱՆ ԱՍՈՑԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ ԽՈՀԵՐ
(Էջ 796֊797)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 293֊II, թերթ 3:
Տպագրվում է առաջին անգամ:

10. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 797)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 293֊II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

11. ԿԱՐՈ֊ՀԱՐՈՒԹ
(Էջ 797֊798)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 293֊II, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

12. <ԵՐԲ ՀԱՐՈՒԹ ՄՈՏ...>
(Էջ 798)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 293֊II, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

13. ՀԱՐՈՒԹԸ
(Էջ 798)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 36:
Տպագրվում է առաջին անգամ:

14. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 798-799)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 404-II, թերթ 36:
Տպագրվում է առաջին անգամ:

15. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 799)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 447-II, թերթ 28:
Տպագրվում է առաջին անգամ:

16. <ԱՍՈՑԻ ՄԱՀԻ ԼՈՒՐԸ...>
(Էջ 799)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 442-II, թերթ 20:
Տպագրվում է առաջին անգամ:

17. ԱՍՈՑԻ ԴԻԱԿԸ
(Էջ 799)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 446-II, թերթ 5:
Տպագրվում է առաջին անգամ:

18. ՀՈՌԵՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ ԿՑԱՆՔԻ, ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ ԱՍՈՑԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

(Էջ 800-801)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 355-II, թերթ 8-9:
Տպագրվում է առաջին անգամ:

19. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՑԻ ՄԱՀԻ ԱՌԱՋ

(Էջ 801-802)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 364-II, թերթ 12:
Տպագրվում է առաջին անգամ:

20. ԵՐԵՔ ՏԱՊԱՆԱԳԻՐ

(Էջ 802-803)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 364-II, թերթ 13:
Տպագրվում է առաջին անգամ:

21. ԱՍՈՑԻ ԳԼԽՈՒՄ

(Էջ 803-804)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, անմշակ:
Տպագրվում է առաջին անգամ:

22. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ

(Էջ 804)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 371-II, թերթ 4:
Տպագրվում է առաջին անգամ:

23. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Ի՞Ջ 804-805)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 371-II, թերթ 9:
Տպագրվում է առաջին անգամ:

24. ԱՍՈՑԻ ՏԱՆԸ
(Ի՞Ջ 805-806)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 371-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

25. ԿԱՐՈՆ ԵՎ ԱՍՈՑԻ ՄԵՌԵԼԸ
(Է՞Ջ 806)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 374-II, թերթ 22:
Տպագրվում է առաջին անգամ:

26. ԿԱՐՈՆ ՄԵՌՆՈՂ ԱՍՈՑԻ ՄԱՍԻՆ
(Է՞Ջ 806-807)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 387-II, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

27. ԱՍՈՑԻ ՄԵՌԱԾ ՕՐԸ. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ
(Է՞Ջ 807)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՑ, 313-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

28. <ԱՍՈՑԻ ՄԱՀԻ ԱՌԹԻՎ...>
(Էջ 807)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 372֊II, թերթ 64:
Տպագրվում է առաջին անգամ:

29. ԱՍՈՆ
(Էջ 807֊808)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 414֊II, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

30. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԱՍՈՆ
(Էջ 8068)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 414֊II, թերթ 9֊10:
Տպագրվում է առաջին անգամ:

31. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 808֊809)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 430֊II, թերթ 29:
Տպագրվում է առաջին անգամ:

32. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 809)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 438֊II, թերթ 35:
Տպագրվում է առաջին անգամ:

33. <ՈՒՏԱՆ ՆԱԳԵԾ...>
(Էջ 809)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՁ, 316-II, թերթ 1:
Տպագրվում է առաջին անգամ:

34. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ
(Էջ 809)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՁ, 330-II, թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

35. <ՈՒՏԱՆ ԵՐԲ ԼՍԵԾ...>
(Էջ 809)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՁ, 364-II, թերթ 8:
Տպագրվում է առաջին անգամ:

ԱՍՈՑԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ
(Էջ 810-840)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՁ, 293-II:

Առաջին անգամ տպագրվել է Ավետիք Իսահակյան, Ուստա Կարո, բնագիրը հրատարակությամբ պատրաստեցին Աբաա Իսահակյանը և Ավիկ Իսահակյանը, Եր., 2000, էջ 249-265 (տողատակում՝ ՈՒԿ-2000):

Տպագրվում է ինքնագրից:

Էջ 811, տ. 28-30. *Մարդոյ՝ որպէս խոտոյ ... երևի տեղի նորա* – տե՛ս Սաղմ., ՃԲ 15:

Էջ 829. տ. 9-11. *Իսկ արդ եթէ դու ... ի հիմանէ տապալեսցի՞ն* – Հոբ, ԺԸ 4:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՐՈՒԹԻ ՀԵՏ ՋՐԱՂԱՑՈՒՄ

(Գլխի սկիզբը)

ՍԱՐԸ ԳՆԱԼՈՒ ԳԼՈՒԽԸ

(Է՟ 841-876)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՁ, 401ա-II:

Առաջին անգամ տպագրվել է ՈՒԿ-2000, էջ 265-283, «Սարը գնալը» վերնագրով: Ինքնագրի անվանաթերթային վերնագիրը անտեսվել է և գլուխը վերնագրվել է երկրորդ ննթավերնագրի մի հատվածով:

Ինքնագրի առաջին էջի վերին լուսանցքում հեղինակը երկու նշում է արել. «Այս գլխի մեջ չա՛տ է խոսվում մահի մասին. կրճատել. չա՛տ է բնության նկարագրությունը՝ կրճատել»: «Սարը գնում են մի օր հետո, ո՛չ մահի մյուս օրը, այդ օրը լուռ ու տխուր են անցկացնում, և պայմանավորվում գնալ»:

Ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՈՒՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ» ՎԵՊԻ
ԵՐԿՐՈՐԴ ՄՇԱԿՈՒՄԸ – *ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
Ա. ՎԵՊԻ ԿԱԶՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 5
Բ. «ՈՒՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ԱՐԽԻՎԸ 56
Գ. ՎԵՊԻ ՇԱՎՂԱԼԸ ԵՎ ԳԱՂԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՇՐԱԳՐԱՅԻՆ ԴՐԱՌՈՒՄՆԵՐԻ 63

ՈՒՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

ՍԵՂԱՆ ՈՒՏԱ ԿԱՐՈՅԻ ՊԱՏՎԻՆ 79 879
<ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ
ՁԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ> <Ա. տարբերակ> 121 882
<ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ
ՁԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ> <Բ. տարբերակ> 152 883
<ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ
ՁԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ> <Գ. տարբերակ> 190 883
ՈՒՏԱ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՁԱՎՈՒՇԻ ԴԱՐՁԸ ՆԱԽՃՎԱՆ 227 884
ՇԵԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ 250 884
<ՈՒՏԱ ԿԱՐՈՅԻ ԺԱՄԱՅՈՒՅՑԸ ԵՎ ՎՆՃԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ
ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ> <Ա. տարբերակ> 268 885
ՈՒՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ
<Բ. տարբերակ> 293 886

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՎԵՃԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ
ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ <Գ. տարբերակ> 307 887
<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ>
<Ա. տարբերակ> 326 887
<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ>
<Բ. տարբերակ> 337 888
ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐՆԵՐԻՆ>
<Գ. տարբերակ> 359 888
<ԾԵՐԵՐԸ> <Ա. տարբերակ> 400 889
ԾԵՐԵՐԸ <Բ. տարբերակ> 404 890
<«ԾԵՐԵՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ
ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>
1. ԾԵՐԵՐԸ 414 890
2. ԾԵՐԵՐԸ 414 890
3. ՆԱԽՃՎԱՆԻ ԾԵՐԵՐԸ 415 890
4. <ԻՆՉ ՄԻՏՔ ՈՒՆԻ...> 415 891
5. ԾԵՐԵՐԸ 415 891
6. <ԾԵՐԵՐԻ ՀԱՏՎԱԾԸ ԳՐԵԼԻՍ...> 416 891
7. <ՀՈՂԱԲՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻՆԵՐ...> 416 891
8. ԿԱՐՈՆ ԵՎ ԾԵՐԵՐԸ 416 891
9. ԾԵՐԵՐԸ 417 892
10. ԾԵՐԵՐԸ 417 892
11. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԾԵՐԵՐԸ 418 892
12. ԾԵՐԵՐԸ 419 892
13. <ԾԵՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ...> 420 892
14. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԵՐԿՈՒ ԾԵՐՈՒՆԻ 420 893
<ՌԵՍ ՀՈՍԵԻ ԵՐԵՎՈՒՄԸ> 421 893
<ԶՐՈՒՑՑ ՋԱՐԴԱՐ ԱՆԱՅԻ ՀԵՏ> 434 894
<ՍՏԻ ՄԱՍԻՆ> 448 894
ԲՈՒԼԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ 462 895
<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>
<Ա. տարբերակ> 485 896

<ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ>
<Բ. տարբերակ>.....500 896
ԱԿՈՌԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ
<Գ. տարբերակ>.....517 897
<ՈՒՏԱ ԿԱՐՈՑԻ ԾՊՆԻ ԳՆԱԼԸ>.....551 898
<ԾՊՆԻՈՒՄ>.....569 898
<ՈՒՏԻ՝ ՏԻԿՈՐ ԳՆԱԼԸ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹԻ
ՄՈՏ ԺՂԼՎԵԼՈՒ>.....583 899
<ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹԻ>.....623 900
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....658 904
<«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ» ԿԱՄ «ԻՆԺԵՆԵՐԸ» ԳԼԽԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>
1. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ԻՐ ՋԱՂԱՅՈՒՄ.....665 904
2. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ.....666 905
3. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ.....668 905
4. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ.....670 905
5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԱՆՒՈՒՄ.....671 905
6. ԲՆՈՒԹՅՈՒՆ.....672 906
7. ԱՇԽԱՏԱՆՔԸ.....673 906
8. ՄԱՐԴԸ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԳԱՋԱՆ Է.....674 906
9. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....674 906
10. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ.....676 907
11. <Ո՞ՆՑ ՊԻՏԻ ԳԼՈՒԽ ԹԱՓԵԼ...>.....677 907
12 ՀԱՐՈՒԹԸ.....678 907
13. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ԲԱԳՐԱՆ.....679 907
14. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....679 907
15. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ. ՀԱՐՈՒԹԸ.....679 908
16. <ԵՐԲ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ...>.....680 908
17. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՄՏԱԾՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ.....680 908
18. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....681 908
19. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԻՆՔՆԻՆ.....682 908

20. ԲԱԳՐԱՆ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԽՈՐՀՈՒՄ ԷՐ.....682 909
21. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆ...>.....682 909
22. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻՆ
ԱՍՈՒՄ Է ԲԱԳՐԱՆՈՒՄ.....683 909
23. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....684 909
24. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....685 910
25. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ.....686 910
26. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ.....686 910
27. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ (ԲԱԳՐԱՆ).....687 910
28. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ «ՆԱՐԵԿԸ».....688 910
29. ՀԱՐՈՒԹՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....688 911
30. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....689 911
31. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....689 911
32. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ ԱՍՈՒՄ Է...>.....690 911
33. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.....691 911
34. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՐՈՒԹԸ.....691 912
35. ԻՆԺԵՆԵՐԸ.....692 912
36. ԻՆԺԵՆԵՐԸ.....692 912
37. ԻՆԺԵՆԵՐԸ.....693 912
38. <ԻՆԺԵՆԵՐԸ ՆԿԱՏԵՑ...>.....693 912
39. ԻՆԺԵՆԵՐԸ.....693 913
40. <ԵՎ ԽԱՎԱՐԸ...>.....693 913
41. ԻՆԺԵՆԵՐԸ.....694 913
42. ԻՆԺԵՆԵՐԸ: ԻՆՁԻՆԵՐ ԸՍՏ ՀԱՐՈՒԹԻ.....694 913
43. <ԵՐԲ ԻՆԺԵՆԵՐԸ...>.....694 913
44. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻ...>.....695 914
45. ՀԱՐՈՒԹԸ ՄՏԱԾՈՒՄ Է.....695 914
46. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՑ...>.....696 914
47. ԻՆԺԵՆԵՐ.....697 914
48. <ԻՆԺԵՆԵՐԻՑ ՀԵՏՈ...>.....697 914
49. <ԵՐԲ ԻՆԺԵՆԵՐԸ...>.....697 915
50. <ԱՅՍ ԲՈԼՈՐ ՑԱՎԵՐԻՆ...>.....698 915

51. <ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ...>.....699 915
52. ԻՆԺԵՆԵՐԸ.....700 915
53. ԻՆԺԵՆԵՐԸ.....700 915
54. ՀԱՐՈՒԹ-ԻՆԺԵՆԵՐ.....702 916
55. ԻՆԺԵՆԵՐԸ.....703 916
56. ԻՆԺԵՆԵՐ.....704 916
57. <ՀԱՐՈՒԹԸ ԹԵ...>.....704 917
58. <ԹԵԵՎ ԻՆԺԵՆԵՐԸ...>.....705 917
59. <ՀԱՐՈՒԹԸ ԻՆԺԵՆԵՐԻՆ...>.....705 917
60. ԻՆԺԵՆԵՐԸ.....707 917
61. ԻՆԺԵՆԵՐԸ.....707 918
62. ԻՆԺԵՆԵՐԸ.....709 918
63. ԻՆԺԵՆԵՐԸ.....711 918
64. ՀԱՐՈՒԹԸ.....712 918
65. ԻՆԺԵՆԵՐԸ.....714 918
66. ԻՆԺԵՆԵՐԸ.....717 919
67. ԻՆԺԵՆԵՐԸ.....719 919
68. ԻՆԺԵՆԵՐ.....720 919
69. ԻՆԺԵՆԵՐԸ.....722 919
70. ԱՍՏՎԱԾ.....722 919
71. ԻՆԺԵՆԵՐԸ.....723 920
72. ԻՆԺԵՆԵՐԸ.....723 920
73. ԻՆԺԵՆԵՐԸ.....724 920
74. ԻՆԺԵՆԵՐԸ.....724 920
75. ԻՆԺԵՆԵՐԸ.....725 920
76. ԻՆԺԵՆԵՐԸ.....726 921
77. <ԲՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵՐԵՎՍ...>.....726 921
78. ԻՆԺԵՆԵՐԸ.....727 921
79. ԻՆԺԵՆԵՐԸ.....727 921
80. ԻՆԺԵՆԵՐԸ.....727 921
81. ԻՆԺԵՆԵՐԸ ԱՍԱՑ –.....728 922
82. ԻՆԺԵՆԵՐ.....728 922

83. ԻՆԺԵՆԵՐԸ 729 922
84. ԻՆԺԵՆԵՐ 729 922
85. ԻՆԺԵՆԵՐ 730 922
86. ԻՆԺԵՆԵՐ 730 923
87. ԻՆԺԵՆԵՐԸ 731 923
88. ԻՆԺԵՆԵՐԸ 731 923
89. ԻՆԺԵՆԵՐԸ 732 923
90. ԻՆԺԵՆԵՐԸ 732 924
91. ՀԱՐՈՒԹԸ-ԻՆԺԵՆԵՐԸ 733 924
92. ԻՆԺԵՆԵՐԸ 733 924
93. ԻՆԺԵՆԵՐԸ 734 924
94. ԻՆԺԵՆԵՐԸ 735 924
95. ԻՆԺԵՆԵՐԸ 737 925
96. ԻՆԺԵՆԵՐԸ 739 925
97. ԻՆԺԵՆԵՐԸ 743 925
98. ՀԱՐՈՒԹ, ԻՆԺԵՆԵՐ 744 925
99. ԻՆԺԵՆԵՐԸ 748 925
100. <ԻՆԺԵՆԵՐԸ ՕՊՏԻՄԻՍՏ Է...> 748 926
101. <ՀԱՐՈՒԹԸ ԴԻՎԱԿԱՆ...> 748 926
102. ԻՆԺԵՆԵՐԸ 749 926
103. ԻՆԺԵՆԵՐԸ 749 926
104. ԻՆԺԵՆԵՐԸ 750 926
105. <ՈՂՋ ՇՈՒՆԸ ԼԱՎ Է...> 750 927
106. <ՀԱՐՈՒԹԸ ՆԵՂ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐՈՒՄ...> 750 927
107. ԻՆԺԵՆԵՐ 751 927
108. ԻՆԺԵՆԵՐ 751 927
109. ՀԱՐՈՒԹԸ 752 927
110. ԻՆԺԵՆԵՐ 754 928
111. ԻՆԺԵՆԵՐ 756 928
112. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ – ՀԱՐՈՒԹ 757 928
113. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ 758 928
114. ՀԱՐՈՒԹԻՆ ՏԱՆՋՈՂ ՀԱՐՑԵՐԸ 762 928

115. <ԻՆԺԵՆԵՐԻ ՆՅՈՒԹԸ ԿԱԶՄԵԼԻՍ...> 763 929
116. ՀԱՐՈՒԹԸ 764 929
117. ԻՆԺԵՆԵՐ 765 929
118. ՀԱՐՈՒԹԸ 765 929
119. ՀԱՐՈՒԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....767 930
120. <ՇՐՋԻԿ ԿԱՅԾԱԿԸ ԵՐԲԵՔ...>.....769 930
121. ԻՆԺԵՆԵՐԸ.....772 930
122. ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀՈԳՈՒ
ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 772 930
123. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ 773 931
124. <ԻՆԺԵՆԵՐԸ...> 774 931
ՀՐԵՂԵՆԻ ՄՈՏ ԵՐԱԶ.....775 931
ՀԱՐՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԸ.....787 932
<«ԱՍՈՅԻ ՄԱՀԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ
ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>
1. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 791 933
2. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 791 933
3. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 792 934
4. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 792 934
5. ԱՍՈՅԻ ՄԱՀԻՆ..... 793 934
6. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 793 934
7. ԱՍՈՅԻ ՄԱՀՎԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 795 934
8. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀԻՆ.....796 935
9. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ ԽՈՀԵՐ.....796 935
10. ՀԱՐՈՒԹԸ.....797 935
11. ԿԱՐՈ-ՀԱՐՈՒԹ.....797 935
12. <ԵՐԲ ՀԱՐՈՒԹ ՄՈՏ...>.....798 935
13. ՀԱՐՈՒԹԸ.....798 936
14. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 798 936
15. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ.....799 936
16. <ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԼՈՒՐԸ...>.....799 936
17. ԱՍՈՅԻ ԴԻԱԿԸ 799 936

18. ՀՈՌԵՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ ԿՅԱՆՔԻ, ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ. ԱՍՈՅԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ 800 937
19. ՈՒՍՏԱՆ ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԱՌԱՋ 801 937
20. ԵՐԵՔ ՏԱՊԱՆԱԳԻՐ 802 937
21. ԱՍՈՅԻ ԳԼԽՈՒՄ 803 937
22. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 804 937
23. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 804 938
24. ԱՍՈՅԻ ՏԱՆԸ 805 938
25. ԿԱՐՈՆ ԵՎ ԱՍՈՅԻ ՄԵՌԵԼԸ 806 938
26. ԿԱՐՈՆ ՄԵՌՆՈՂ ԱՍՈՅԻ ՄԱՍԻՆ 806 938
27. ԱՍՈՅԻ ՄԵՌԱԾ ՕՐԸ. ՀԱՐՈՒԹԻ ՄՈՏ 807 938
28. <ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԱՌԹԻՎ...> 807 939
29. ԱՍՈՆ 807 939
30. ՈՒՍՏԱՆ ԵՎ ԱՍՈՆ 808 939
31. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 808 939
32. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 809 939
33. <ՈՒՍՏԱՆ ՆԱՅԵՑ...> 809 940
34. ԱՍՈՅԻ ՄԱՀԸ 809 940
35. <ՈՒՍՏԱՆ ԵՐԲ ԼՍԵՑ...> 809 940
ԱՍՈՅԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ 810 940
ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՐՈՒԹԻ ՀԵՏ ՋՐԱՂԱՑՈՒՄ (Գլխի սկիզբը)
ՍԱՐԸ ԳՆԱԼՈՒ ԳԼՈՒԽԸ 841 941

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 879

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԱՍՆՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ
ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ)
ԳԻՐՔ Ա.

Համակարգչային էջադրումը
ԳՈՒՐԳԵՆ ԴԱՍՊԱՐՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության :
Չափս՝ 60×84 1/16: Տպագրական մամուլ՝ 59, 25:
Տպաքանակ՝ 500:
Գինը՝ պայմանագրային:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
Թումանյան 12, 3,
(37410) 52 08 48
56 08 41
info@editprint.am





ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0681772

II
Ա11406



Մ. Սարյան. Արարատ. 1933 թ.
Գտնվում է Մ. Սարյանի տուն-թանգարանում